

ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐԿ

*Դասագիրք
տնտեսագիտական մասնագիտությունների
ուսանողների համար*

Գլխավոր խմբագիր՝
պրոֆեսոր **Լ.Յ. Բաղանյան**

ԵՐԵՎԱՆ 2007

Հրատարակության է երաշխավորել
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
գիտական խորհուրդը

ՀՏԴ 336(07)
ԳՄԴ 65.9(2)26g73
Ֆ 580

Գրախոսողներ՝

Երևանի պետական համալսարանի ֆինանսների և հաշվապահության
ամբիոն (տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Բոստանջյան)
Հայաստանի պետական ագրարային համալսարանի ֆինանսների
ամբիոն (տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Բայադյան)

Ֆ 580 **Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ**, Դասագիրք/ Լ. Բաղանյան, Վ. Աբգարյան,
Ա. Սալմազարյան և ուրիշներ,– Եր., Ձանգակ–97, 2007, 664 էջ:

Դասագրքում լուսաբանվում են ֆինանսների, դրամաշրջանառության և վարկի բովանդակությունը, խնդիրները, մեթոդաբանությունն ու մեթոդները, ֆինանսների էությունը, մակրո– և միկրոմակարդակով ձևավորվող դրամական ֆոնդերը, ֆինանսական համակարգը, նրա օղակների գործառնությունը, դրամական հոսքերի բաշխման գործընթացի ձևերն ու խնդիրները: Հատուկ ուշադրություն է դարձվում պետական ֆինանսների կազմակերպման, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական գործունեության լուսաբանման, վարկի ու վարկային հարաբերությունների դրսևորման ու կարգավորման, ինչպես նաև դրամաշրջանառության կազմակերպման ու կարգավորման և հաշվարկավճարային փոխհարաբերությունների պարզաբանման վրա:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» դասագիրքը գրված է կրթական չափորոշիչների նորագույն պահանջներով և կիրառելի է տնտեսագիտական բոլոր մասնագիտությունների համար: Այն անդրադառնում և լուսաբանում է համապատասխան մասնագիտությունների գրեթե բոլոր հիմնական հարցերը: Հեղինակները ֆինանսների, դրամաշրջանառության և վարկի նորագույն տեսությունների տեսանկյունից մտնելու են ՀՀ-ում իրականացվող ֆինանսական ու վարկային ժամանակակից քաղաքականությունը, ինչպես նաև ֆինանսների ու վարկի կառավարման արդի խնդիրները:

Դասագիրքը ուղղված է ոչ միայն տնտեսագիտական բուհերի ուսանողներին, այլև տնտեսության կազմակերպման և կառավարման բնագավառի մասնագետներին:

Ֆ $\frac{0605010204}{0003 (01) 2007}$ 2007

ԳՄԴ 65.9(2)26g73

ISBN 99930–2–773–1

. Լ. Բաղանյան և ուրիշներ, 2007 թ.
. «Ձանգակ–97» հրատ., 2007 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	6
--------------	---

Բաժին 1. Ֆինանսական համակարգ, դերը և էությունը

Գլուխ 1. Ֆինանսների բովանդակությունը	9
1.1. Ֆինանսների առաջացման նախադրյալները, էությունը և գործառույթները	9
1.2. Ֆինանսական համակարգ, ոլորտները և օղակները	17
1.3. Ֆինանսական քաղաքականություն	22
Գլուխ 2. Ֆինանսների կառավարում	28
2.1. Ֆինանսների կառավարման էությունը և մարմինները	28
2.2.1. Ֆինանսական կանխատեսումը և պլանավորումը	34
2.2.2. Ֆինանսական պլանավորումը տնտեսավարող սուբյեկտներում	37
2.2.3. Ֆինանսական կառավարման առանձնահատկությունները կորպորատիվ կազմակերպություններում	40
2.3. Ֆինանսական վերահսկողություն	49
Գլուխ 3. Ֆինանսական շուկաներ	53
3.1. Ֆինանսական շուկաների էությունը, հատվածները և գործառույթները	53
3.2. Դրամի շուկայի ֆինանսական գործիքները և մասնակիցները	60
3.3. Կասպիտալի շուկան, ֆինանսական գործիքները և մասնակիցները	64
3.4. Արժեթղթերի շուկան, հատվածները և գործառույթները	69
3.5. Արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելները	79
Գլուխ 4. Ֆինանսական ինստիտուտներ	83
4.1. Ֆինանսական ինստիտուտների ընդհանուր բնութագիրը	83
4.2. Ավանդային կազմակերպություններ և ապահովագրական ընկերություններ	90
4.3. Կենսաթոշակային հիմնադրամներ	95
4.4. Ներդրումային հիմնադրամներ	98

Բաժին 2. Պետական և տեղական ֆինանսներ

Գլուխ 5. Բյուջետային համակարգ	107
5.1. Բյուջեի էությունը և սոցիալ-տնտեսական նշանակությունը	107
5.2. ՀՀ պետական բյուջեի դերը բյուջետային համակարգում	114
5.3. ՀՀ տեղական ֆինանսական համակարգը և համայնքների բյուջեն	121
Գլուխ 6. ՀՀ բյուջետային գործընթացը	137
6.1. Միջբյուջետային հարաբերություններ	137
6.2. ՀՀ բյուջետային գործընթացները և դրանց կազմակերպումը	140
Գլուխ 7. ՀՀ պետական բյուջեի եկամուտները և ծախսերը	147
7.1. Հարկերը որպես պետական բյուջեի եկամուտների ձևավորման գլխավոր աղբյուր	147
7.2. Բյուջեի ոչ հարկային եկամուտները և տուրքերը	159
7.3. ՀՀ պետական բյուջեի ծախսերի բնութագիրը	164
Գլուխ 8. Բյուջետային բարեփոխումները և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը	183
8.1. Հայաստանի Հանրապետությունում իրականացված բյուջետային բարեփոխումները	183
8.2. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը	190
8.3. Ծրագրային բյուջետավորում	202
Գլուխ 9. Արտաբյուջետային սոցիալական հիմնադրամներ	215
9.1. Արտաբյուջետային հիմնադրամները, դրանց էությունը և դերը	215
9.2. ՀՀ-ում սոցիալական ապահովագրության համակարգի ձևավորումը և զարգացումը	219

9.3. Սոցիալական նշանակության արտաբյուջետային հիմնադրամների ձևավորման կարգը և աղբյուրները	230
9.4. Սոցիալական ապահովագրության արդյունավետության բարձրացման հեռանկարները ԳՅ-ում	237

Բաժին 3. Ձեռնարկությունների (կազմակերպությունների) ֆինանսները

Գլուխ 10. Արտադրական կազմակերպության ֆինանսների էությունը և կազմակերպման առանձնահատկությունները	257
10.1. Ձեռնարկության ֆինանսական հարաբերությունները, ֆինանսների կազմակերպման սկզբունքները և ֆունկցիաները	257
10.2. Ձեռնարկության դրամական ֆոնդերը և ֆինանսական ռեսուրսները	263
10.3. Ձեռնարկության պասիվների կառուցվածքը և սեփական ակտիվների շահութաբերությունը: Ֆինանսական լծակ	269
Գլուխ 11. Ձեռնարկության դրամական ծախսերը	284
11.1. Ձեռնարկության դրամական ծախսերի դասակարգումը	284
11.2. Արտադրանքի արտադրության և իրացման ծախսումները	285
11.3. Գործառնական լծակ, շահութաբերության շեմ, ֆինանսական կայունության պաշար	289
Գլուխ 12. Ձեռնարկության արտադրանքի իրացումից հասույթը և շահույթը	309
12.1. Հասկացություն գործառնական հասույթի մասին	309
12.2. Շահույթի տնտեսական բովանդակությունը, պլանավորումը և բաշխումը	312
Գլուխ 13. Ձեռնարկության շրջանառու կապիտալը	330
13.1. Շրջանառու կապիտալի տնտեսական բովանդակությունը	330
13.2. Շրջանառու կապիտալի կազմն ու կառուցվածքը	334
13.3. Շրջանառու կապիտալի կազմակերպումը և նորմավորումը	340
13.4. Շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարումը	348
Գլուխ 14. Ձեռնարկության հիմնական կապիտալը	355
14.1. Ներդրումները որպես հիմնական կապիտալի ձևավորման միջոց	355
14.2. Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրներն ու մեթոդները	367
Գլուխ 15. Միկրոնակարգակում ֆինանսական պլանավորման և բյուջետավորման էությունը, անհրաժեշտությունը և դերը	372
Գլուխ 16. Կազմակերպությունների սնանկացման գործընթացի կարգավորումը	383
16.1. Սնանկացման գործոնները և դրանց հավանականության գնահատման մեթոդական հիմքերը	383
16.2. Կազմակերպությունների անվճարունակության (սնանկացման) ընթացակարգերը	388
16.3. Կազմակերպությունների սնանկության դեպքում կայացվող որոշումները	391
Երրորդ բաժնի հավելվածներ	398

Բաժին 4. Վարկը և վարկային հարաբերությունները

Գլուխ 17. Վարկը, բանկերը և բանկային ծառայությունները	413
17.1. Վարկի անհրաժեշտությունը և ձևերը	413
17.2. Բանկերի բնութագիրը և դասակարգումը	417
17.3. ԳՅ Կենտրոնական բանկի դերը և խնդիրները	420
17.4. Առևտրային բանկերի հիմնադրման ընթացակարգը ԳՅ-ում	424
Գլուխ 18. Առևտրային բանկերի գործառնությունները	429

18.1. Առևտրային բանկերի պասիվային գործառնությունները	429
18.1.1. Առևտրային բանկերի սեփական միջոցների ձևավորումը և կառավարումը	430
18.1.2. Առևտրային բանկերի ներգրավված միջոցները	434
18.2. Առևտրային բանկերի ակտիվային գործառնությունները	440
18.2.1. Առևտրային բանկերի վարկային գործառնությունները	440
18.2.2. Առևտրային բանկերի ներդրումային գործառնությունները	462
Գլուխ 19. Առևտրային բանկերի գործունեության կարգավորումը	469
19.1. Բանկային ռիսկեր	469
19.1.1. Ռիսկերի տեսակները, դասակարգման առանձնահատկությունները	469
19.1.2. Ռիսկերի գնահատումը և կառավարումը	472
19.2. Բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվները	482
Գլուխ 20. Առևտրային բանկերի գործունեության գնահատումը և առողջացման գործընթացը	479
20.1. Բանկերի գործունեության վերլուծությունը և գնահատման ցուցանիշների համակարգը	479
20.2. Բանկային ռեյտինգները որպես բանկերի գործունեության գնահատման մեխանիզմներ	503
20.3. Բանկերի գործունեության գնահատման համակարգերը և դրանց համառոտ նկարագիրը	506
20.4. Գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը (CAMELS)	511
20.5. Առևտրային բանկերի առողջացման ընթացակարգը և հեռանկարային զարգացման ծրագրերը	521
20.6. Առևտրային բանկերի բյուջետավորումը	529
Գլուխ 21. Ապահովագրություն	537
21.1. Ապահովագրության տնտեսական բովանդակությունը	537
21.2. Ոչ կյանքի ապահովագրությունը և դրա տեսակները	540
21.3. Կյանքի ապահովագրության ընդհանուր դրույթներն ու տեսակները	550
21.4. Վերաապահովագրություն	557
21.5. Ապահովագրական կազմակերպության ֆինանսական մոդելը	559
21.6. Ապահովագրության գործի զարգացման հեռանկարները ՀՀ–ում	563
<i>ԲԱԺԻՆ 5. Դրամական և վճարահաշվարկային համակարգեր</i>	
Գլուխ 22. ՀՀ դրամական համակարգը	568
22.1. Փողի ծագումը և զարգացումը	568
22.1.1. Մետաղական փողեր: Թղթադրամներ և վարկային դրամներ	568
22.1.2. Բիմետալիզմ և մոնոմետալիզմ: Միջազգային արժույթային համակարգեր	573
22.2. ՀՀ դրամը, դրամաշրջանառությունը և դրամական համակարգը	584
22.3. ԿԲ–ի դրամավարկային քաղաքականության էությունն ու հիմնական ձևերը	595
Գլուխ 23. ՀՀ վճարահաշվարկային համակարգը	606
23.1. Անկանխիկ հաշվարկները և դրանց կազմակերպման սկզբունքները	606
23.2. ՀՀ վճարահաշվարկային համակարգի ձևավորումը	609
23.3. ՀՀ տարածքում կիրառվող վճարամիջոցները և հաշվարկի ձևերը	618
23.4. Բանկային պլաստիկ քարտերով հաշվարկների կազմակերպումը ՀՀ–ում	628
23.5. Միջազգային վճարահաշվարկային փոխհարաբերությունները	643
Հայաստանը թվերով (հավելվածներ)	657

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հասարակության կյանքում ապրանքադրամական հարաբերությունների առաջացումը և պետության գոյությունը այն նախապայմաններն են, որոնց հիմքի վրա ձևավորվել են ֆինանսական հարաբերություններն ու ֆինանսները. դրանք դրսևորվել ու դրսևորվում են շուկայական կառույցներին առնչվող ամենատարբեր ոլորտներում և օղակներում: Ժամանակակից շուկայական տնտեսությունն էլ ավելի է ընդլայնում ֆինանսների գործողության շրջանակները, մեծացնում նրա դերը պետական ու տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող սոցիալ–տնտեսական ծրագրերի եկամտային աղբյուրներով ապահովման գործում: Դրանից հետևում է, որ տնտեսության զարգացման վերաբերյալ ցանկացած մակարդակով որոշում կայացնելու և դրա կատարումն ապահովելու երաշխիքներ ունենալու համար պետական, տարածքային կառավարման մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների ամենակարևոր խնդիրներից մեկը ֆինանսավորման աղբյուրների բացահայտումը, դրանց ձևավորումն ու հավաքագրման արդյունավետ մեխանիզմների կիրառումն է: Ֆինանսական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը հատկապես կարևորվում են անցումային փուլում գտնվող երկրներում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսավարման վարչահրամայական համակարգի փլուզումը դրամական հարաբերությունների բազմազան ու բազմաբնույթ սպեկտրում պահանջում է ֆինանսավարկային նոր կառույցների ձևավորում և դրանց գործունեության օպերատիվ կառավարում ու վերահսկում, ինչն էլ ավելի է կարևորում հասարակական ամենատարբեր կառույցների ու շերտերի միջև ֆինանսական հարաբերությունների կարգավորումը: Չնայած տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության մեջ ինքնուրույն ու ազատ են, այնուամենայնիվ, նրանք իրենցից անկախ առնչվում են ամենատարբեր բնույթի ֆինանսական հարաբերությունների հետ, մասնավորապես՝ որպես արտադրող ու իրացնող (մատակարար–գնորդ) միմյանց, պետության ու ֆինանսավարկային կազմակերպությունների, հասարակության անդամների ու իրենց գործունեության անմիջական մասնակիցների հետ:

Այդ հարաբերությունները կարիք ունեն կարգավորման, ինչի նախադրյալը ֆինանսական հասկացությունների ճիշտ ըմբռնման, դրանց առաջացման ու դրսևորման օրինաչափությունների ընկալման մեջ է, որը պահանջում է նաև պետական ու իրավական կարգավորում: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել դրամական փոխհարաբերություններում դրսևորվող հասարակական, խմբային ու անհատական շահերը, համապատասխան մոտեցումներով ու գործիքներով օպտիմալացնելու ճանապարհով նպաստել հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը և ֆինանսական ռեսուրսների ավելացմանը:

Հասարակության մասշտաբով ֆինանսներն ունեն միմյանցից տարբեր ու առանձնահատուկ դրսևորումներ, որոնք վերջին հաշվով միտված են ապակենտրոնացված ու կենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման ու հասարակության պահանջների բավարարման խնդիրների լուծման գործին՝ մշտական ու ժամանակավոր բաշխման և վերաբաշխման հետ կապի ու միասնության մեջ, ինչը սույն դասընթացի ուսումնասիրության հիմնական առարկան է:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» դասագիրքը հնարավորություն

կընձեռի ֆինանսների և վարկի ոլորտում չմասնագիտացող ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել պետական ֆինանսների, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների վերաբերյալ, ինչպես նաև համակարգված պատկերացում կազմել բանկային գործի, մասնավորապես վարկավորման և հաշվարկների, կանխիկ դրամական շրջանառության, արժույթային և արժեթղթերի հետ կատարվող գործարքների մասին:

Դասագրքի հեղինակները, հիմք ընդունելով իրենց իսկ հեղինակությամբ 2003 թ. հրատարակված «Ֆինանսներ և վարկ» ուսումնական ձեռնարկի հիմնական դրույթները, փորձել են ընդհանրացնել ֆինանսների, դրամաշրջանառության ու վարկի տեսության վերջին նվաճումները Հայաստանի Հանրապետության ժամանակակից ֆինանսավարկային քաղաքականության իրացման գործում: Միաժամանակ, հեղինակները, հաշվի առնելով ոչ ֆինանսական մասնագիտությունների համար ընդունված ուսումնական չափորոշիչների պահանջները, դասագրքում լուսաբանել են անենատարբեր չափորոշիչներում պարունակվող բոլոր հարցերը:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» դասագիրքը հետևողական և քրտնաջան աշխատանքի արդյունք է, նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների համար: Շարադրված է դասընթացի ծրագրին համապատասխան, բաղկացած է հինգ բաժնից և 23 գլխից, որոնք ներկայացնում են ֆինանսների բովանդակությունը, պետական ու տեղական տարբեր մակարդակներում բաշխողական հարաբերությունների դրսևորումները, տնտեսավարող սուբյեկտներում դրանց առանձնահատկությունները՝ կապված ֆինանսական կազմավորման խնդիրների, մեթոդաբանության, կազմակերպող ու կարգավորող մարմինների գործառնությունների, ֆինանսաբյուջետային և դրամավարկային քաղաքականության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ունեցած դերի, ՀՆԱ-ի արտադրության, բաշխման և օգտագործման, արտաքին տնտեսական քաղաքականության խնդիրների լուծման ու բազմաթիվ այլ հարցերի հետ:

Ուսումնական դասագիրքը պատրաստվել է «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ուժերով, «Ֆինանսական ենթակառուցվածքներ» և «Արժեթղթերի շուկա» ամբիոնների վարիչների մասնակցությամբ: Ամբիոնը գոհունակությամբ է ընդունել ձեռնարկի վերաբերյալ արված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները:

Առանձնակի երախտագիտություն է հայտնում տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու. Սուվարյանին, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Արշակյանին, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Բայադյանին, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Բոստանջյանին՝ «Ֆինանսներ և վարկ» ձեռնարկի վերաբերյալ կատարած արժեքավոր դիտողությունների և բարեփոխմանը գործուն մասնակցություն ունենալու համար:

Արդյունքում կատարվել է դասագրքի կառուցվածքի էական բարելավում: Ավելի մեծ ուշադրություն է դարձվել ֆինանսական շուկաներին ու ինստիտուտներին, բյուջետային բարեփոխումներին ու միջնաժամկետ ծախսային ծրագրավորմանը, միկրոմակարդակով ֆինանսական պլանավորման և բյուջետավորման խնդիրներին, կազմակերպության սնանկացման գործընթացին: Նորովի է շարադրվել «Վարկը և վարկային հարաբերությունները» բաժինը, որին հատկացվել են լրացուցիչ գլուխներ: Ընդհանուր առմամբ ավելացվել են հինգ կարևոր նոր գլուխներ և տասնյակ դրվագներ:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» դասագրքի հեղինակներն են՝

տնտ. գիտ. թեկն., պրոֆեսոր Լ.Յ. Բաղանյան (առաջաբան, գլուխներ 10, 11, 12, 13, 14, 15, 17.1, 22),

տնտ. գիտ. թեկն., պրոֆեսոր Կ.Յ. Աբգարյան (գլուխներ 1, 2),

տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ. Սալնազարյան (գլուխներ 3, 4),

տնտ. գիտ. թեկն., ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի առաջին փոխնախարար Պ.Դ. Սաֆարյան (գլուխ 8),

տնտ. գիտ. թեկն., դոցենտ Յու.Դ. Ալավերդյան (գլուխներ 5, 6),

տնտ. գիտ. թեկն., դոցենտ Ս.Ս. Սուքիասյան (գլուխներ 17.4, 18.2.1, 18.2.2, 19.2, 20.4),

տնտ. գիտ. թեկն., դոցենտ Ռ.Ա. Սահակյան (գլուխներ 17.2, 17.3, 18.1.1, 18.1.2, 19.1.1, 19.1.2, 20.1, 20.2, 20.3, 20.5),

տնտ. գիտ. թեկն., դոցենտ Ա.Վ. Մաթևոսյան (գլուխներ 9, 16, 21),

տնտ. գիտ. թեկն., ասիստենտ Կ.Ա. Միքայելյան (գլուխ 7),

տնտ. գիտ. թեկն., դոցենտ Խ.Ա. Մխիթարյան (գլուխներ 22.1.1, 22.1.2, 22.3):

Ուսումնական ձեռնարկի շարադրանքի ընդհանուր գիտական ղեկավարումն ու խմբագրումը իրականացրել է պրոֆեսոր Լ.Յ. Բաղանյանը:

Ձեռնարկը շարադրվել է առ 2007թ. դրությամբ գործող օրենքների, օրենսդրական ակտերի, կանոնակարգերի ու կարգավորող որոշումների շրջանակներում:

ԳԼՈՒԽ 1

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1.1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ,
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

«Ֆինանսներ» հասկացությունը և «Ֆինանսներ» գիտությունը անցել են պատմական զարգացման որոշակի փուլերով: «Ֆինանսներ» հասկացության մասին առաջին հիշատակությունները, առանձին հեղինակների պնդումներով, կատարվել են դեռևս վաղ միջնադարում Իտալիայում, երբ միջազգային տարածում ստացան դրամական հարաբերությունները պետությունների ու ազգաբնակչության միջև¹:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ «Ֆինանսներ» հասկացությունը սկսել է կիրառվել 18-րդ դարի երկրորդ կեսից Ֆրանսիայում և ծագել է “finances” բառից, որը նշանակում է եկամուտ, վճարում²:

19-րդ դարի ֆինանսների գծով նշանավոր տեսաբան Կ. Լաուև արձանագրել է ֆինանսների տեսության զարգացման երեք փուլ: Առաջին փուլում ֆինանսների զարգացումը կատարվել է ոչ գիտական հիմքերի վրա և ընդգրկում է Հռոմեական կայսրությունից և Հին Հունաստանից սկսած մինչև միջին դարերը: Սրա էությունն այն է, որ պետությունը դիտվում էր սոսկ հասարակական կարիքները բավարարելու համար միջոցներ հավաքագրող մասնավոր անձ: Պետության եկամուտները ձևավորվում էին մի քանի աղբյուրներից, մասնավորապես պետական հողերից, հանքավայրերից, շուկայից օգտվելու դիմաց վճարվող միջոցներից: Պետական միջոցների ծախսերի ուղղությունները նույնպես սահմանափակ էին:

Ֆինանսների վերաբերյալ գիտելիքները, ըստ էության, կազմավորվեցին միջին դարերում՝ նախ՝ իտալական և ապա՝ անգլիական ու գերմանական տնտեսագետների (ժ. Գոբեն, Տ. Գոբս, Ու. Ժերի, Դ. Լոկ) կողմից:

18-րդ դարի երկրորդ կեսին ֆիզիոկրատները առաջ քաշեցին այն տեսակետը, որի համաձայն՝ պետական տնտեսությունը պետք է վարել ընդհանուր տնտեսական օրենքների համաձայն, որը հիմք ծառայեց ձևավորել ֆինանսական գիտությունը որպես ինքնուրույն ուղղություն: Դրա հիման վրա արդեն 19-րդ դարի վերջին ավարտական տեսք ստացավ ֆինանսների դասական տեսությունը: Այդ տեսության հա-

¹ “Финансы”, под ред. В.В. Ковалевой, М., 2001, с. 8.

² Советский энциклопедический словарь, М., 1985, с. 1485.

մաձայն՝ ֆինանսները իրենցից ներկայացնում են վարչական ու տնտեսական գիտելիքներ պետության և հանրային միությունների վերաբերյալ:

20-րդ դարի երկրորդ կեսը կարելի է համարել սկզբունքորեն նոր փուլի սկիզբ «Ֆինանսներ» գիտության զարգացման գործում: Հենց այդ ժամանակաշրջանում ձևավորվեց ֆինանսների նեոդասական տեսությունը: Այս տեսության համաձայն՝ պետության ֆինանսական հզորությունը որոշվում է տնտեսության մասնավոր հատվածի հզորությամբ, որի միջուկը կազմում են խոշոր կորպորացիաները: Դրան համապատասխան՝ պետական ֆինանսների եկամուտների հիմնական աղբյուրը հանդիսանում են այդ հատվածից ստացված շահույթը և կապիտալի շուկան:

Առավել ընդհանուր գծերով նեոդասական տեսությունը կարելի է ներկայացնել որպես ֆինանսական երեք տարրերի (ռեսուրսներ, հարաբերություններ, շուկա) կազմակերպում ու կառավարում:

Սակայն, անկախ «ֆինանսներ» հասկացության ծագման տեղից ու ժամանակաշրջանից, բոլոր դեպքերում այն կապված է նախ՝ ապրանքադրամական հարաբերությունների առաջացման ու ծավալման և ապա՝ պետությունների գոյության հետ: Ապրանքադրամական հարաբերությունների և ֆինանսների փոխկապվածությունն արտահայտվում է նրանով, որ առաջինը դրսևորվում է փողի միջոցով, ինչն էլ կազմում է ֆինանսների նյութական բազան: Սակայն ինքը՝ փողը, դեռևս չի հանդիսանում ֆինանսներ: Փողը հատուկ ապրանք է, որի միջոցով որոշվում և արտահայտվում է բոլոր ապրանքների արժեքը, և տեղի է ունենում դրանց շրջապտույտը: Փողը ֆինանսների ձևավորման առաջին նախապայմանն է: Դրա համար անհրաժեշտ է փողի որոշակի զանգվածի առկայություն: Ֆինանսների ձևավորման երկրորդ պարտադիր նախապայմանը արդեն կազմավորված փողի զանգվածի նպատակային օգտագործումն է: Ուստի մենք լիովին բաժանում ենք այն տնտեսագետների տեսակետը, ովքեր ֆինանսների հիմքին են վերագրում դրամական միջոցների նպատակային ֆոնդերը: Եվ քանի որ պատմականորեն հենց պետությունն է առաջին անգամ ձևավորել նպատակային դրամական ֆոնդեր իր բազմաբնույթ գործառույթները իրականացնելու համար, այդ պատճառով էլ ֆինանսների գոյությունը ապրանքադրամական հարաբերությունների առաջացման հետ միասին կապված է հենց պետության գոյության հետ: Այսպիսով՝ ֆինանսների ծագման առաջին փուլը ավարտվում է պետական ֆինանսների ձևավորմամբ, որն անվանում են նաև հանրային ֆինանսներ, այն է՝ պետության և նրա ստորին կառավարման մարմինների տնօրինությանը հանձնված դրամական միջոցներ: Հանրային ֆինանսներին բնորոշ էին որոշակի սկզբունքներ ու հատկանիշներ: Դրանց էր վերաբերում դրամական միջոցների հավաքագրման անվերադարձելիության, պարտադիր հարկադրական, բնային և վերաբաշխման անհրաժեշտությունը:

Ապրանքադրամական հարաբերությունների ձևավորման նախնական փուլում գրեթե բոլոր երկրներում տիրապետող էին պետությունների տրամադրության տակ հավաքագրվող կենտրոնացված դրամական ֆոնդերը: Սակայն հետագայում՝ ապրանքային արտադրության զարգացմանը զուգընթաց, հատկապես կորպորատիվ տիպի ազգային և վերազգային կազմակերպությունների ու կորպորացիաների ստեղծման արդյունքում առաջացան ու ծավալվեցին ապակենտրոնացված դրամական ֆոնդերը, որը պատմականորեն նշանավորվեց որպես ֆինանսների զարգաց-

ման նոր փուլ: Այդ փուլի առանձնահատկությունն այն էր, որ նոր որակ ու երանգ ստացավ պետական ֆինանսական քաղաքականությունը: Նոր պայմաններում պետությունները ստիպված էին հոգ տանել ոչ միայն հավաքագրված կենտրոնացված դրամական ֆոնդերի օգտագործման արդյունավետության մասին, այլև տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար վերարտադրությունը ծավալելու հնարավորություն ստեղծելու մասին: Այստեղից էլ առաջացավ հասարակական ներքին արդյունքի և ազգային եկամտի ստեղծման, օգտագործման ու բաշխման եղանակներ ստեղծելու անհրաժեշտություն:

20-րդ դարի երկրորդ կեսը, իրավամբ, կարելի է համարել ֆինանսների զարգացման նոր՝ երրորդ փուլը: Այս փուլի յուրահատկությունն այն է, որ ձևավորվեցին երկու ինքնուրույն դպրոցներ՝ արևմտյան և ռուսական, որոնց առաջացման հիմքում ընկած էր երկու՝ սկզբունքորեն միմյանցից տարբեր տնտեսակարգերի առկայությունը:

Կապիտալիզմի բուռն վերելքը 20-րդ դարի երկրորդ կեսին հանգեցրեց նրան, որ արևմտյան զարգացած երկրներում տեղի ունեցավ ֆինանսական համակարգի սերտաճում բանկային համակարգի հետ, որի արդյունքում պետական ֆինանսները սկսեցին ներկայացվել որպես դրամական միջոցների կառավարում կամ էլ, ավելի լայն իմաստով փողի հետ առնչվող գործարար հարաբերություններ¹: Ֆինանսների բնորոշման վերաբերյալ գրեթե նույնպիսի մոտեցում են ցուցաբերում նաև ժամանակակից արևմտյան տեսաբանները: Այսպես՝ Բոստոնի համալսարանի պրոֆ. Էվի Բոնդին և Հարվարդի համալսարանի պրոֆ. Կ. Մետոնը իրենց «Ֆինանսներ» համատեղ ծավալուն աշխատության մեջ ֆինանսները բնորոշում են որպես գիտություն, որը հնարավորություն է տալիս մարդկանց կառավարելու դեֆիցիտային դրամական ռեսուրսների մուտքերը և ծախսերը որոշակի ժամանակաշրջանի ընթացքում: Նրանց կարծիքով՝ ցանկացած ֆինանսական վճիռ պետք է ենթարկված լինի բիզնեսի շահին, և բիզնեսմենները այն կյանքի են կոչում ֆինանսական համակարգի օգնությամբ, ընդ որում ֆինանսների ուսումնասիրման անհրաժեշտությունը նրանք տեսնում են հասարակության անդամների կողմից իրենց գործնական խնդիրները լուծելու մեջ, որի համար որպես հիմք մատնանշում են հետևյալ հինգ, իրենց կարծիքով, ծանրակշիռ պատճառները.

- անձնական դրամական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- բիզնեսի աշխարհում գործունեության հաջողությունը,
- հետաքրքիր և շահավետ կարիերայի ապահովումը,
- գիտակցված քաղաքացիական վճիռների ընդունումը, ինչը հնարավորություն կտա ներգործելու երկրի տնտեսական քաղաքականության վրա,
- սեփական մտահորիզոնի ընդլայնումը²:

Ինչ վերաբերում է ապակենտրոնացված ֆինանսներին, ապա արևմտյան տեսաբանների ցուցաբերած պրակտիցիզմի ավելի քան ակնառու է. նրանք պարզապես

¹ Ив. Бернер и Жан-Клод Коллер, Толковый экономический и финансовый словарь, т. 1, с. 735, М., 1994.

² “Финансы”, издательский дом “Вильямс”, Москва, Санкт-Петербург-Киев, 2005, с. 38, 39.

Ֆինանսները դիտում են որպես միջոց նոր գործ սկսելու կամ բիզնեսի զարգացման համար¹:

Մեր կարծիքով՝ զուտ պրակտիկ նկատառումներով ֆինանսները որպես գիտություն ներկայացնելու հեղինակների տեսակետը հազիվ թե արդարացի է:

Ֆինանսների վերաբերյալ ռուսական դպրոցի ներկայացուցիչները, գործելով խորհրդային տնտեսավարման համակարգում և այդ պատճառով զրկված լինելով ֆինանսական բնույթի գործնական խնդիրներ լուծելուն մասնակից լինելու հնարավորությունից, իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացրին տեսական հարցերի ուսումնասիրությանը և գրանցեցին շոշափելի արդյունքներ: Նախ՝ ռուսական դպրոցին է պատկանում ֆինանսները որպես տնտեսական կատեգորիա ներկայացնելու առաջնությունը, որը հիմնավորվեց նրանով, որ առանց ֆինանսների չի կարող իրացվել հասարակական ներքին արդյունքը և սահմանվել համամասնություններ վերարտադրության գործընթացում, ինչը և նշանակում է, որ հասարակությունը չի կարող գոյատևել առանց ֆինանսների: Այնուհետև կատարվեց հաջորդ տրամաբանական քայլը՝ ֆինանսները ներկայացվեց որպես գիտություն այնքանով, որքանով նրանց տեսակետով այն արտահայտում է որոշակի արտադրական հարաբերություններ՝ դրամական հարաբերությունների տեսքով: Ռուսական դպրոցի ներկայացուցիչների բնորոշմամբ՝ ֆինանսներն իրենցից ներկայացնում են հասարակական ներքին արդյունքի և ազգային եկամտի ստեղծման, օգտագործման ու բաշխման հետ կապված հարաբերությունների ամբողջություն:

Սակայն այս բնորոշումը նույնպես կատարյալ չի կարելի համարել: Հարցն այն է, որ մարդկանց գիտակցության մեջ և միջազգային տնտեսավարման պրակտիկայում «ֆինանսներ» հասկացությունը, որպես կանոն, պատկերացվում է կոնկրետ և իրական փողի որոշակի զանգված: Դրան համապատասխան էլ հանընդհանուր ճանաչում են ստացել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ֆինանսական դրություն», «ֆինանսական ճգնաժամ», «ֆինանսական դեֆիցիտ» և այլն: Այս հասկացությունների էությունը ոչ մի կերպ հնարավոր չէ բացատրել դրամական հարաբերությունների միջոցով:

Նշված հակասությունը հաղթահարելու նպատակով առանձին տնտեսագետներ առաջ են քաշում այն միտքը, որ անհրաժեշտ է տարբերություն դնել «ֆինանսներ»՝ որպես գիտության, և «ֆինանսական ռեսուրսներ» հասկացությունների միջև²: Նման տեսակետը, մեղմ ասած, այնքան էլ իրատեսական չէ, քանի որ հենց ֆինանսական ռեսուրսներն են կազմում ֆինանսների նյութական բովանդակությունը, որով էլ պայմանավորված է նրա բուն գոյությունը՝ որպես տնտեսական կատեգորիա: Այս վիճակի առկայությունը պայմանավորված է նրանով, որ մինչ այժմ դեռևս չի գտնված «ֆինանսների» ճշգրիտ և բոլորի կողմից ընդունելի բնորոշում: Մեր կարծիքով՝ ֆինանսներն իրենցից ներկայացնում են նպատակային դրամական ֆոնդերի և դրանց ձևավորման ու օգտագործման գործընթացում առաջացած դրամական հարաբերությունների ամբողջություն: Այս բնորոշումը լիովին բավարարում է ինչպես արևմտյան, այնպես էլ ռուսական դպրոցի ներկայացուցիչների պահանջները, ինչպես նաև ֆինանսների մասին տնտեսավարման պրակտիկայում ձևավորված պատկերացումները:

¹ Оксфордский толковый словарь, М., 1995, с. 244.

² «Финансы, денежное обращение и кредит», учебник, под ред. Дробозиной, М., 1997, с. 64.

Ֆինանսների գործառույթները: Ֆինանսների էությունը դրսևորվում է նրա գործառույթների մեջ: Ներկայումս համընդհանուր ճանաչում է ստացել, որ ֆինանսներին բնորոշ են երկու գործառույթ՝

1. բաշխման և վերաբաշխման,
2. վերահսկողության:

Սակայն տարբեր հեղինակների կողմից առաջարկվում է ևս երրորդ և նույնիսկ չորրորդ գործառույթ: Այսպես՝ Վ.Վ. Իվանովը ֆինանսներին վերագրում է նաև կարգավորիչ գործառույթ¹: Ռուսական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ Վ.Գ.Բելոլիպեցկին ավելի հեռու է գնում: Նա ֆինանսների գործառույթները ստորաբաժանում է երկու մասերի՝

1. օբյեկտիվ ֆինանսական գործառույթ,
2. սուբյեկտիվ ֆինանսական գործառույթ:

Դրանցից յուրաքանչյուրը բաղկացած է, ըստ հեղինակի, մի քանի գործառույթներից: Այսպես՝ ազատ շուկայի պայմաններում, Վ. Գ. Բելոլիպեցկու կարծիքով, տնտեսության իրական հատվածում՝ ֆիրմաներում, օբյեկտիվ ֆինանսական գործառույթներին են վերագրվում.

- ֆիրմաների կենսագործունեության ապահովումը անհրաժեշտ դրամական միջոցներով,
- ֆիրմաների կենսագործունեության սպասարկումը դրամական միջոցներով,
- ֆինանսական համամասնությունների ապահովումը,
- վերարտադրական, ֆինանսական պլանավորումը:

Սուբյեկտիվ ֆինանսական գործառույթներին վերագրվում են ֆիրմաների կապիտալի նախատեսված կառուցվածքի աճը, կազմը, դրամական միջոցների ռացիոնալ օգտագործումը և այլն²:

Մի կողմ թողնելով այն իրողությունը, որ նշված գործառույթները մեծամասամբ մեկը մյուսի կրկնությունն են, նշենք, որ թվարկված գործառույթները առավելապես վերաբերում են ֆինանսների կառավարման բնագավառին, և այդ պատճառով չի կարելի ներկայացնել որպես գործառույթ:

Ինչպես արդեն նշվեց, ֆինանսների առաջին և գլխավոր գործառույթը բաշխումը և վերաբաշխումն են: Ֆինանսների միջոցով նախ բաշխվում և ապա վերաբաշխվում են հասարակական ներքին արդյունքը (ՀՆԱ) և ազգային եկամուտը: Ընդ որում, բաշխման գործընթացը հիմնականում տեղի է ունենում տնտեսության իրական հատվածում՝ արտադրության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների (ծեռնարկությունների, կազմակերպությունների, ֆիրմաների) միջոցով, ինչի արդյունքում կազմավորվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերը, որոնք ունեն նպատակային ուղղվածություն: Կենտրոնացված են կոչվում այն դրամական ֆոնդերը, որոնք ստեղծվում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով: Ապակենտրոնացված են կոչվում այն դրամական ֆոնդերը, որոնք ձևավորվում են տնտեսավարող սուբյեկտների մակարդակով: Արևմտյան երկրներում ապակենտրոնացված են կոչվում այն դրամական ֆոնդերը, որոնք ստեղծ-

¹ В.В. Иванов, Финансы, учебник, М., 2001, с. 13.

² В.Г. Белолипецкий, Финансы фирмы, учебное пособие, М., 1998, сс. 13–17.

վում են տնային տնտեսություններում: Ինչպես կենտրոնացված, այնպես էլ ապակենտրոնացված դրամական ֆոնդերի կազմավորման գործընթացը սկսվում է տնտեսության իրական հատվածից, երբ տնտեսավարող սուբյեկտները ձեռնամուխ են լինում դրամական հասույթի բաշխմանը: Ազատ շուկայի պայմաններում և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ տնտեսության իրական հատվածում (տնտեսավարող սուբյեկտների մոտ) դրամական հասույթի բաշխումը սկսվում է նրանով, որ նախ փոխհատուցվում է արտադրական գործընթացում սպառված նյութական շրջանառու ֆոնդերի արժեքը, և ձևավորվում է ավելացված արժեքը: Վերջինիս հաշվին ձևավորվում է առաջին կենտրոնացված դրամական ֆոնդը՝ հանձինս ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի: Ավելացված արժեքի մնացած ծավալից գոյանում է առաջին ապակենտրոնացված դրամական ֆոնդը՝ աշխատավարձի ֆոնդի տեսքով, և այդ ֆոնդի հետ կապված պարտադիր վճարումների միջոցով ստեղծվում է ևս մեկ կենտրոնացված դրամական ֆոնդ՝ արտաբյուջետային ֆոնդերի տեսքով (սոցիալական ապահովություն, կենսաթոշակային և այլն): Միաժամանակ կատարվում են ուղղակի հարկերի վճարումներ, բացի շահութահարկից, ինչի շնորհիվ լրացվում են պետական կենտրոնացված դրամական ֆոնդերը: Նշված դրամական ֆոնդերի ձևավորումից հետո տնտեսավարող սուբյեկտների մոտ դրամական հասույթի մնացած մասն իրենից ներկայացնում է ֆինանսական բրուտտո արդյունքը: Շարունակելով դրամական հասույթի բաշխման գործընթացը՝ այնուհետև ստեղծվում է ևս մեկ ապակենտրոնացված դրամական ֆոնդ՝ արդեն ամորտիզացիոն ֆոնդի տեսքով (ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներով հաշվարկված մաշվածքը), ինչի արդյունքում ստացվում է ֆինանսական նետոտո արդյունքը: Վերջինիս հաշվին լրացվում է կենտրոնացված դրամական ֆոնդը՝ շահութահարկի տեսքով, որը անցնում է պետության տրամադրության տակ՝ որպես պետական բյուջեի եկամտի աղբյուր, իսկ ֆինանսական նետոտո արդյունքի մնացած մասը իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտների զուտ շահույթը: Վերջինիս հաշվին ստեղծվում են ևս մի քանի ապակենտրոնացված դրամական ֆոնդեր: Դրանք են կուտակման ֆոնդը, սպառման ֆոնդը, ֆինանսական պահուստների ֆոնդը և այլն: Սրանով տնտեսության իրական հատվածում հասարակական ներքին արդյունքի և ազգային եկամտի բաշխումը կարելի է համարել ավարտված, որին հաջորդում է արդեն վերաբաշխման գործընթացը:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տնտեսավարող սուբյեկտների մոտ դրամական հասույթ գոյանում է ոչ միայն գործառնական (արտադրական), այլև ֆինանսական և ինվեստիցիոն գործունեությունից, որոնց ընդհանուր գումարն էլ որոշում է տնտեսավարող սուբյեկտների սեփական ֆինանսական ռեսուրսների ծավալը:

Ֆինանսների միջոցով տեղի է ունենում ոչ միայն տնտեսության իրական հատվածում ստեղծված սկզբնական եկամուտների բաշխումը, այլև ազգային եկամտի վերաբաշխման գործընթացը: Վերջինս կատարվում է երկու մեթոդով: Դրանք են՝

1. ֆինանսաբյուջետային մեթոդը,
2. բանկային վարկավորման մեթոդը:

Առաջին մեթոդի էությունն այն է, որ դրամական միջոցները տրամադրվում են անվերադարձելիության, իսկ երկրորդ մեթոդի դեպքում՝ վերադարձելիության սկզբունքով: Առաջին դեպքում վերաբաշխումը կրում է վերջնական բնույթ, իսկ երկրորդ

դեպքում՝ միջանկյալ բնույթ: Դրանով էլ պայմանավորված է ֆինանսական և վարկային համակարգերի միջև եղած էական տարբերությունը:

Ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման գործընթացին մասնակցում է նաև բնակչությունը: Բաշխման գործընթացին մասնակցում են այն չափով, որչափով նրանք ստանում են աշխատավարձ, ձեռնարկատիրական եկամուտներ և շահաբաժիններ: Վերաբաշխման գործընթացին բնակչության մասնակցությունը պայմանավորված է նրանով, որ կատարում են հարկային և այլ բնույթի պարտադիր վճարումներ՝ դրանով իսկ մասնակցելով պետության կենտրոնացված դրամական ֆոնդերի կազմավորմանը, ինչն էլ հանդիսանում է վերաբաշխման աղբյուր:

Ցանկացած երկրի համար ազգային եկամտի վերաբաշխումը պարտադիր պայման է, առանց որի պետությունը չի կարող կատարել երկրի առջև ծառայած հետևյալ խնդիրները.

1. ապահովել անարտադրողական ոլորտի կարիքները անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, որտեղ, ինչպես հայտնի է, ազգային եկամուտ չի ստեղծվում, բայց որի զարգացումը խիստ կարևոր նշանակություն ունի հասարակության համար,
2. իրականացնել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում երկրի առանձին ռեգիոնների միջև, ինչը կարևոր նշանակություն ունի ամբողջությամբ վերցրած տնտեսության զարգացման, ինչպես նաև բնակչության կենսապայմանների բարելավման համար,
3. ապահովել տնտեսության և հատկապես արդյունաբերության նոր՝ առաջավոր ճյուղերի զարգացման առաջնահերթությունները,
4. ամրապնդել երկրի պաշտպանունակությունը,
5. իրականացնել արդյունավետ սոցիալական քաղաքականություն:

Ինչպես դրամական հասույթի բաշխումը տնտեսավարող սուբյեկտների մակարդակում, այնպես էլ ազգային եկամտի վերաբաշխումը մակրոտնտեսական մակարդակում ուղեկցվում են բազմաբնույթ ֆինանսական հարաբերություններով, որոնք կրում են դրամական հարաբերությունների բնույթ: Այդ հարաբերությունները ծագում են.

- տնտեսավարող սուբյեկտների միջև, որոնք կապված են ապրանքանյութական արժեքների փոխադարձ մատակարարումների, արտադրանքի իրացման, մատուցած ծառայությունների ու կատարված աշխատանքների հետ,
- տնտեսավարող սուբյեկտների տնօրինության և հիմնադիրների միջև հիմնադիր կապիտալի ձևավորման, համալրման և օգտագործման, ինչպես նաև շահույթի բաշխման գործընթացում,
- տնտեսավարող սուբյեկտների աշխատողների միջև նպատակային դրամական միջոցների ձևավորման ու օգտագործման գործընթացում,
- տնտեսավարող սուբյեկտների և պետության, տեղական ինքնակառավարման մարմինների միջև տարբեր մակարդակների բյուջեների և արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման գործընթացում,
- տարբեր մակարդակների բյուջեների և արտաբյուջետային ֆոնդերի միջև,
- տնտեսավարող սուբյեկտների ու առևտրային բանկերի միջև և այլն:

Դրամական միջոցների ամբողջությունը, որը գտնվում է պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և բնակչության տրամադրության տակ, կազմում է երկրի ֆինանսական ռեսուրսները:

Ֆինանսների երկրորդ գործառույթը, ինչպես արդեն նշվել է, վերահսկողության գործառույթն է: Վերահսկողությունն իրականացվում է ինչպես միկրոտնտեսական, այնպես էլ մակրոտնտեսական մակարդակներում: Միկրոտնտեսական մակարդակում վերահսկողությունն իրականացնում են տնտեսավարող սուբյեկտների ու ֆիրմաների ֆինանսական ծառայությունները դրամական ֆոնդերի ձևավորման ու բաշխման ողջ գործընթացում: Վերահսկողության նպատակն է հետևել արտադրանքի արտադրության և իրացման գործընթացին, այն հաշվով, որպեսզի կատարվեն նախատեսված առաջադրանքները, ինչը հնարավորություն է տալիս ժամանակին և լրիվ ծավալով կազմավորել դրամական ֆոնդերը, արդյունավետ սպասարկել վերարտադրության գործընթացը, կատարել ֆինանսական պարտավորությունները պետության, առևտրային բանկերի և այլ տնտեսավարող սուբյեկտների հանդեպ: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծված ապահովել ֆինանսական կայունությունը և խուսափել ֆինանսական դժվարություններից:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ծառայությունների վերահսկողության կարևորագույն խնդիրներից մեկն էլ ուղղված է առևտրային հաշվարկի ամրապնդմանը և զարգացմանը:

Մակրոտնտեսական մակարդակում իրականացվում է ֆինանսաբյուջետային վերահսկողություն պետական ֆինանսական մարմինների կողմից: Վերջիններս վերահսկողություն են սահմանում, թե արդյոք ժամանակին և լրիվ ծավալով են տնտեսավարող սուբյեկտները կատարում իրենց պարտավորությունները պետական բյուջեի հանդեպ, և արդյոք կատարած վճարումները համապատասխանում են իրենց գործունեության արդյունքներին: Նման վերահսկողություն իրականացվում են ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչության, ինչպես նաև նրա տեղական մարմինների ծառայությունների կողմից:

Մակրոտնտեսական մակարդակում ֆինանսական վերահսկողության ձևերից մեկն էլ հանդիսանում է բանկային վերահսկողությունը, որն իրականացնում են առևտրային բանկերը: Բանկային վերահսկողությունը կատարվում է կազմակերպություններին ու ֆիրմաներին վարկային ռեսուրսներ տրամադրելու կապակցությամբ: Այս դեպքում վերահսկողությունն իրականացվում է վարկավորման հիմնական սկզբունքների (ժամկետայնության, վերադարձելիության, վճարելիության) պահպանմանը հետևելու ուղիով: Բանկային վերահսկողության արդյունավետությանը նպաստում է այն պարագան, որ վերջինս կատարվում է դրամական հաշվարկների օգնությամբ առևտրային բանկերի միջոցով:

Ֆինանսները կարևոր դեր են կատարում ցանկացած երկրի տնտեսության կայունության ապահովման ու զարգացման գործում: Դրանց միջոցով են տեղի ունենում հասարակական ներքին արդյունքի իրացումը, վերարտադրության համամասնությունների սահմանումը: Միկրոտնտեսական մակարդակում ֆինանսները նպաստում են տնտեսավարող սուբյեկտների արտադրության արդյունավետության բարձրացմանը և դրանով արագացնում կապիտալի շրջապտույտը: Մյուս կողմից՝ եկամտի ու ծախսերի հաշվեկշռվածության ապահովման ուղիով ամրապնդում ու զարգացնում են առևտրային հաշվարկը:

Մակրոտնտեսական մակարդակում ֆինանսները տնտեսական նախադրյալներ են ստեղծում սահմանելու օպտիմալ հարաբերակցությունն ազգային եկամտի սպառ-

ման ու կուտակման ֆոնդերի միջև, ինչից էլ կախված են ընդլայնված վերարտադրության տեմպերը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Ազատ շուկայի պայմաններում, հատկապես անցման փուլում գտնվող երկրներում, ֆինանսները նպաստում են սեփականության տարբեր ձևերի զարգացմանը և տնտեսավարման արդյունավետության բարձրացմանը:

Հասարակական արտադրության զարգացման ժամանակակից փուլում նոր պահանջներ են դրվում ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական քաղաքականության առջև, ինչը թելադրում է շարունակել ֆինանսական մեխանիզմի կատարելագործումը:

1.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՕՂԱԿՆԵՐԸ

Հասարակական ներքին արդյունքի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման գործընթացն ուղեկցվում է բազմաթիվ ու բազմաբնույթ դրամական հարաբերություններով: Միասեռ ու միատեսակ ուղղվածության դրամական հարաբերություններն ունեն յուրահատկություններ և որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Ֆինանսական կառավարման ու ֆինանսական քաղաքականության իրականացման առջև կանգնած խնդիրների արդյունավետ լուծումը թելադրում է, որ միատեսակ ու միատիպ դրամական հարաբերությունները խմբավորվեն ըստ առանձին օղակների, որոնք էլ իրենց ամբողջության մեջ կազմում են ֆինանսական համակարգը:

Ֆինանսների ցանկացած օղակ որոշակիորեն է ներգործում տնտեսության զարգացման գործընթացին այնքանով, որքանով ունի միայն իրեն յուրահատուկ գործառույթ: Դրամական հարաբերությունների միջև եղած առանձնահատկությունները հատկապես զգալի են ՀՆԱ–ի ու ազգային եկամտի բաշխման և վերաբաշխման գործընթացների միջև: Բաշխման գործընթացը, ինչպես արդեն նշվել է, տեղի է ունենում նյութական արտադրության ոլորտում, ինչն էլ հանդիսանում է կազմակերպությունների (ծեռնարկությունների) ֆինանսների սպասարկման օբյեկտը: Պետական բյուջեի միջոցով են հավաքագրվում պետության հիմնական կենտրոնական ֆոնդերը, և տեղի է ունենում միջոցների վերաբաշխում տնտեսության ճյուղերի, երկրի առանձին տարածաշրջանների, բնակչության խմբերի միջև:

Կազմակերպությունների (ծեռնարկությունների) ֆինանսները կազմում են ապակենտրոնացված ֆինանսների, իսկ պետական բյուջեն՝ կենտրոնացված ֆինանսների նյութական հիմքը:

Ֆինանսական համակարգը որպես դրամական հարաբերությունների առանձին ոլորտների կամ օղակների մեկ ամբողջություն են ներկայացնում առավելապես տնտեսագետ–ֆինանսիստների ռուսական դպրոցի ներկայացուցիչները: Այսպես՝ Լ.Ա. Դրոբոզինը ֆինանսական համակարգը ներկայացնում է որպես ֆինանսական հարաբերությունների տարբեր ոլորտների ամբողջություն¹, իսկ Վ.Վ. Իվանովը՝ դրամական հարաբերությունների կազմակերպման ձև²:

¹ Լ.Ա. Дробозин, Финансы, денежное обращение, кредит, учебник, М., 1997, с. 77.

² В.В. Иванов, Финансы, М., 2001, с. 14.

Ֆինանսական համակարգը այլ կերպ են ներկայացնում արևմտյան դպրոցի ներկայացուցիչները: Ամերիկյան հայտնի տնտեսագետ Վան Խորնն այդ համակարգը ներկայացնում է որպես մի շարք հաստատությունների ու շուկաների ամբողջություն¹: Ընդ որում, այդ հարաբերությունները առավելապես բաղկացած են տարբեր բնույթի բանկերից: Ընդհանրապես արևմտյան գրեթե բոլոր զարգացած երկրներում ֆինանսական և բանկային համակարգերը միահյուսված են և կազմում են մեկ միասնական համակարգ: Այսպես՝ վերևում արդեն հիշատակված Էվի Բոդիի և Կ. Մերտոնի տեսակետի համաձայն՝ ֆինանսական համակարգն իրենից ներկայացնում է շուկաների և այլ ինստիտուտների ամբողջություն, որոնք օգտագործվում են կնքելու ֆինանսական գործարքներ: Այդ համակարգն իր մեջ ներառում է բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ ֆինանսական գործիքների շուկան, ֆիրմաները, որոնք առաջարկում են ֆինանսական ծառայություններ, և այդ բոլոր հաստատությունների գործունեությունը կարգավորող մարմինները²: Գրեթե նույն տեսակետն է արտահայտում նաև մեկ այլ ամերիկյան հայտնի տնտեսագետ Վան Խորնը: Նա այդ համակարգը ներկայացնում է որպես մի շարք հաստատությունների ու շուկաների ամբողջություն³: Ընդ որում այդ համակարգը առավելապես բաղկացած է տարբեր բնույթի բանկերից: Ընդհանրապես արևմտյան գրեթե բոլոր շուկայական տնտեսություն ունեցող երկրներում ֆինանսական համակարգը բաղկացած է հետևյալ օղակներից.

1. պետական բյուջե,
2. արտաբյուջետային ֆոնդեր,
3. պետական վարկ,
4. ֆինանսական միջնորդների ֆինանսներ,
5. կազմակերպությունների (ձեռնարկությունների) ֆինանսներ,
6. տնային տնտեսությունների ֆինանսներ:

Սրանցից առաջին երեքը ներկայացնում են կենտրոնացված ֆինանսները: Դրանց ռեսուրսները ուղղվում են լուծելու մակրոտնտեսական բնույթի խնդիրներ: Մասնավորապես, ուղղվում են տնտեսության կայունացման ու զարգացման, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծմանը:

Կազմակերպությունների (ձեռնարկությունների) ֆինանսները, ինչպես նաև ապահովագրական ֆոնդերը իրենցից ներկայացնում են ապակենտրոնացված ֆինանսները և օգտագործվում են տնտեսության զարգացման, կարգավորման ու սոցիալական խնդիրների լուծմանը միկրոտնտեսական մակարդակում:

Ֆինանսական համակարգի առաջավոր օղակը հանդիսանում է պետական բյուջեն, որն իրենից ներկայացնում է պետության տարեկան ֆինանսական պլանը: Յուրաքանչյուր տարի կառավարության կողմից կազմված բյուջեի նախագիծը քննարկվում է երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում (ՀՀ–ում՝ Ազգային ժողովում), որի հաստատումից ու ընդունումից հետո ստանում է օրենքի ուժ:

Պետական բյուջեն պետության դրամական միջոցների ֆոնդերի կազմավորման ու օգտագործման տնտեսական հիմքն է, որի հիման վրա կենտրոնացվում է երկրի

¹ Նույն տեղում, էջ 13:

² “Финансы”, Издательский дом “Вильямс”, Москва, Санкт–Петербург, Киев, 2005, с. 38.

³ В.В. Иванов, “Финансы”, учебник, М., 2001. с. 13.

Ֆինանսական ռեսուրսների նշանակալից մասը, և նախանշվում են դրանց օգտագործման ուղղությունները:

Որպես պետության ֆինանսական պլան՝ պետական բյուջեն բաղկացած է եկամտային ու ծախսային մասերից, որոնք իրենց հերթին կազմված են բազմաթիվ ու բազմաբնույթ տարբեր նշանակության հոդվածներից: Ջարգացած արևմտյան երկրներում բյուջետային եկամուտների կազմն ու կառուցվածքը մոտավորապես գտնվում են միևնույն մակարդակի վրա: Եկամուտների կառուցվածքում հարկերը կազմում են ընդհանուր եկամուտների 75–85%–ը, սեփականության պետական հատվածից ստացվող հարկային մուտքերը՝ 5–8%–ը, արտաբյուջետային ֆոնդերից ստացվող մուծումները՝ 10–12%–ը:

Պետական բյուջեի ծախսային մասի ամենամեծ հոդվածը առողջապահությանը, կրթությանը, սոցիալական նպաստներին ուղղվող միջոցներն են, ինչպես նաև տեղական բյուջեներին տրվող սուբսիդիաները, որոնց ընդհանուր բաժինը տատանվում է 40–50%–ի սահմաններում:

Տնտեսական կարիքներին (ենթակառուցվածքներին ուղղվող կապիտալ ներդրումները, դոտացիաները՝ պետական ձեռնարկություններին, սուբսիդիաները՝ գյուղատնտեսությանը և այլն) տրամադրող միջոցները կազմում են 1–21%–ը: Ռազմական և արտաքին քաղաքականության ապահովման ծախսերը միասին կազմում են 10–20%–ը, կառավարման ծախսերը՝ 5–10%–ը, պետական պարտքի սպասարկմանը՝ 7–8%–ը¹:

Պետական բյուջեի եկամտային մասի կատարումը ցանկացած երկրի տնտեսության կայունության ապահովման գրավականն է: Հակառակ պարագայում առաջանում է բյուջեի դեֆիցիտ, այսինքն՝ ծախսերը գերազանցում են եկամուտները: Բյուջեի դեֆիցիտի ծածկումը պարտադիր պայման է ցանկացած երկրի համար: Գործնականում դեֆիցիտը ծածկվում է պետական արժեթղթերի վաճառքի ճանապարհով, ինչը հանգեցնում է պետության ներքին պարտքի առաջացմանը արտաքին փոխառությունների միջոցով կամ էլ թղթադրամի էմիսիայի միջոցով: Հայաստանի Հանրապետությունում բյուջեի դեֆիցիտի ծածկման համար օգտագործում են պետական կարծաժամկետ պարտատոմսերը, պետական սեփականության մասնավորեցումից ստացված միջոցները և արտաքին փոխատվությունները:

Ֆինանսական համակարգի երկրորդ օղակը արտաբյուջետային հատուկ ֆոնդերն են: Արտաբյուջետային ֆոնդերն ունեն խիստ նպատակային ուղղվածություն, որոնք կրում են ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական բնույթ: Մեծ է հատկապես զարգացած երկրներում: Բացի ավանդական սոցիալական ուղղվածության ֆոնդերից, որոնց քանակը սահմանափակ է, մեծ թիվ են կազմում տնտեսական նշանակության արտաբյուջետային ֆոնդերը: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում գործում են մոտավորապես երկու տասնյակի հասնող արտաբյուջետային ֆոնդեր, որոնցից միայն չորսն են սոցիալական բնույթի: ՀՀ–ում ներկայումս տնտեսական նշանակության արտաբյուջետային ֆոնդեր դեռևս չեն կազմավորվում:

¹ Ю.Ф. Симонов, Г.И. Иванов, Рефераты, Ростов на Дону, 2002, с. 11.

Սոցիալական նշանակության արտաբյուջետային ֆոնդերը կոչված են ընդլայնել բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների շրջանակները, բարելավել նրանց նյութական վիճակը և կենսապայմանները: Ինչ վերաբերում է տնտեսական նշանակության արտաբյուջետային ֆոնդերին, ապա դրանք կոչված են լրացուցիչ միջոցներ ապահովելու ուղիով նպաստել տնտեսության համար առաջնահերթ նշանակություն ունեցող ճյուղերի զարգացմանը:

Սոցիալական նշանակության ֆոնդերին են վերաբերում կենսաթոշակային ֆոնդը, սոցիալական ապահովության ֆոնդը, բնակչության զբաղվածության պետական ֆոնդը, պարտադիր բժշկական ապահովագրության ֆոնդը:

Ֆինանսական համակարգի երրորդ օղակը պետական ու մունիցիպալ վարկն է, թեև վերջինս որպես տնտեսական կատեգորիա, իր մեջ պարունակում է նաև վարկին բնորոշ հատկանիշներ: Պետական մունիցիպալ վարկը սպասարկում է ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային ֆոնդերի միջոցների օգտագործման գործընթացին և հանդես է գալիս որպես բյուջեի և արտաբյուջետային ֆոնդերի դեֆիցիտի ծածկման եղանակ:

Պետական ու մունիցիպալ վարկին բնորոշ է այն առանձնահատկությունը, որ վերջինս կրում է կամավոր բնույթ, ինչի շնորհիվ տարբերվում է «դասական ֆինանսական» հասկացությունից, իրականացվում է վերադարձելիության, վճարելիության սկզբունքով: Միաժամանակ, պետական ու մունիցիպալ վարկը տարբերվում է վարկի մյուս տեսակներից, քանի որ որպես ապահովման միջոց հանդես են գալիս ոչ թե կոնկրետ նյութական արժեքները, ինչպես ընդունված է բանկային վարկի դեպքում, այլև կառավարման համապատասխան մակարդակի ողջ ունեցվածքը: Բացի դրանից, պետական ու մունիցիպալ վարկը չունի կոնկրետ նպատակային բնույթ, թեև վերջին հաշվով նրա ուղղվածությունը հասկանալի է:

Պետական ու մունիցիպալ վարկն, ըստ էության, իրենից ներկայացնում է դրամական հարաբերություն մի կողմից պետության կամ մունիցիպալ մարմնի և մյուս կողմից իրավաբանական ու ֆիզիկական անձանց, արտասահմանյան պետությունների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջև՝ վարկ ստանալու կամ տրամադրելու առնչությամբ:

Պետական ու մունիցիպալ վարկը իրականացվում է արժեթղթերի էմիսիայի ու տեղաբաշխման, մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտներից ու արտասահմանյան պետություններից վարկ ստանալու ուղիով:

Պետական վարկի տրամադրումը կարող է իրականանալ նաև բյուջետային վարկի ու բյուջետային փոխատվությունների ձևով: Բյուջետային վարկն իրենից ներկայացնում է բյուջետային ծախսերի ֆինանսավորման ձև, որը տրամադրվում է իրավաբանական անձանց վերադարձելիության հիմունքներով:

Բյուջետային փոխատվությունները տրամադրվում են բյուջետային միջոցներից մեկ այլ բյուջեին վերադարձելիության կամ փոխհատուցման հիմունքներով վեց ամսից ոչ ավելի ժամկետով՝ ֆինանսական տարվա շրջանակներում: Անտոկոս բյուջետային փոխատվություններ, որպես կանոն, տրամադրվում են ստորադաս բյուջեի ժամանակավոր դրամարկղային ճեղքվածքը ծածկելու համար:

Ֆինանսական համակարգի նյութական հիմքը ապակենտրոնացված ֆինանսներն են, քանի որ այս ոլորտում է ձևավորվել պետության ֆինանսական ռեսուրսները:

րի չնշող մասը: Այդ ռեսուրսների մի մասը ֆինանսական վերաբաշխման մեխանիզմի միջոցով հետագայում կազմում է բոլոր մակարդակների բյուջեների և արտաբյուջետային ֆոնդերի ռեսուրսները:

Հասարակական արդյունքի և ազգային եկամտի բաշխումը և վերաբաշխումը տեղի են ունենում ֆինանսական մեխանիզմի միջոցով: Վերջինս իրենից ներկայացնում է ֆինանսական ռեսուրսների կազմավորման ու օգտագործման ձևերի, եղանակների ու մեթոդների ամբողջություն: Այս կապակցությամբ մեզ համոզիչ չի թվում տնտեսագիտական գրականության մեջ բերված ֆինանսական մեխանիզմի այն մեկնաբանությունը, որի համաձայն, վերջինս դիտվում է «...ֆինանսական հարաբերությունների կարգավորման ու պլանավորման կազմակերպման համակարգ...»: Ֆինանսական մեխանիզմը ոչ թե համակարգ է, այլ սոսկ միջոց է ծառայում դրամական հարաբերությունների պլանավորման ու իրականացման համար:

Ապակենտրոնացված ֆինանսների կազմում գլխավոր տեղը պատկանում է առևտրային կազմակերպություններին (ձեռնարկություններին): Վերջիններս են կազմում արտադրական ոլորտի հիմքը, որտեղ ստեղծվում են ՀՆԱ–ն և ազգային եկամտի հիմնական մասը:


Աշխարհի զարգացած երկրների ապակենտրոնացված ֆինանսների համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում, այսպես կոչված, ֆինանսական միջնորդների ֆինանսները: Դրանք հանդես են գալիս ինչպես ֆինանսական ինստիտուտների, այնպես էլ ֆինանսական շուկաների տեսքով: Դրանցից առաջինները հիմնականում զբաղված են տնտեսության մեջ առկա ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրման և դրա կարիքը զգացող իրավաբանական ու ֆիզիկական անձանց տրամադրման գործընթացով: Իսկ ֆինանսական շուկաները մասնագիտացված են ֆինանսական ակտիվների առք ու վաճառքի գործընթացի կազմակերպման մեջ:

Ժամանակակից զարգացած երկրներում ֆինանսական համակարգի այդ օղակում կենտրոնացված են վիթխարի ֆինանսական ռեսուրսներ, որոնք օգտագործվում են հիմնականում ինվեստիցիոն նպատակներով:

Շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, ֆինանսական միջնորդ կառույցներն ու ֆինանսական շուկաները սաղմնային վիճակում են և դեռևս նշանակալից դեր չեն խաղում ֆինանսական համակարգում:

Արևմտյան զարգացած երկրներում ապակենտրոնացված ֆինանսներին են վերաբերում նաև տնային տնտեսությունների ֆինանսները:

Այժմ սխեմատիկ ձևով ստորև ներկայացնենք Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կառուցվածքը:



Գծապատկեր 1.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը

1.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետության ֆինանսական քաղաքականությունը ողջ տնտեսական քաղաքականության միջուկն է: Ավելին՝ ֆինանսական քաղաքականության իրականացման միջոցով են դրսևորվում պետության տնտեսական քաղաքականության արդյունքները:

Տնտեսագիտական մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն պետության ֆինանսական քաղաքականության մի քանի բնորոշումներ: Առանձին հեղինակներ «ֆինանսական քաղաքականությունը» ներկայացնում են որպես «ֆինանսական հարաբերությունների օգտագործմանն ուղղված պետական միջոցառումների ամբողջություն, որն իրականացնում է պետությունը իր ֆունկցիաները կատարելու համար»¹: Մեկ այլ բնորոշմամբ՝ ֆինանսական քաղաքականությունն իրենից ներկայացնում է պետական ֆինանսական ռեսուրսների կազմավորմանն ու ֆի-

¹ Л.А. Дробозин, Финансы, денежное обращение, кредит, 1997, с. 89.

նանսավորմանն ուղղված հարկաբյուջետային և այլ ֆինանսական գործիքների և ինստիտուտների ամբողջությունն՝ ելնելով պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական ու տակտիկական նպատակներից: Գոյություն ունի նաև պետության ֆինանսական քաղաքականության ևս մեկ բնորոշում, որի հեղինակներն այն ներկայացնում են «որպես պետության սոցիալ–տնտեսական քաղաքականության բաղադրիչ, որի միջոցով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճ երկրի ֆինանսական համակարգի բոլոր օղակներում»²:

Մեր կարծիքով վերոհիշյալ բնորոշումներից և ոչ մեկը լիովին չի բավարարում մեկնաբանելու ֆինանսական քաղաքականության էությունը: Առաջին բնորոշման թերությունն այն է, որ նախ անհասկանալի է, թե ինչ է նշանակում «ֆինանսական հարաբերությունների օգտագործմանն ուղղված պետական միջոցառումների ամբողջությունն» արտահայտությունը: Բացի դրանից, եթե, այնուամենայնիվ, նման մեկնաբանությունն իրենից ինչ–որ իմաստ է ներկայացնում, որքանով հաշվի չեն առնված միկրոտնտեսական մակարդակում իրականացվող միջոցառումները, որոնք կատարվում են պետության կողմից սահմանված եղանակներով ու մեթոդներով: Առավել ևս կատարյալ չէ ֆինանսական քաղաքականությունը որպես պետական ֆինանսական ռեսուրսների կազմավորմանն ու ֆինանսավորմանն ուղղված հարկաբյուջետային և այլ ֆինանսական գործիքների ու ինստիտուտների ամբողջությունն ներկայացնելու երկրորդ բնորոշումը: Այստեղ թերությունն արտահայտվում է նրանում, որ «հարկաբյուջետային և այլ ֆինանսական գործիքներն ու ինստիտուտները» ոչ թե արտացոլում են ֆինանսական քաղաքականության բովանդակությունը, այլ ընդամենը միջոց են ծառայում, այն էլ ոչ լրիվ, այդ քաղաքականությունն իրականացնելու համար:

Առավել համոզիչ է թվում ֆինանսական քաղաքականության երրորդ բնորոշումը, որի համաձայն այն ներկայացվում է «որպես պետության սոցիալ–տնտեսական քաղաքականության մաս», որի միջոցով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճ ֆինանսական համակարգի բոլոր օղակներում: Այս բնորոշման առավելությունն այն է, որ ֆինանսական քաղաքականությունը դիտվում է երկրի սոցիալ–տնտեսական քաղաքականության համակարգում: Սակայն մեզ ճիշտ չի թվում ֆինանսական քաղաքականությանը սոսկ ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճի խնդիրներին ծառայեցնելը: Ֆինանսական ռեսուրսների աճի ապահովումը միայն միջոց է երկրի սոցիալ–տնտեսական քաղաքականությունից բխող խնդիրների լուծման համար, ինչին կոչված է ֆինանսական քաղաքականությունը: Պետական ֆինանսական քաղաքականության հիմնական առանցքը պետք է լինի ապահովել բավարար պայմաններ երկրի սոցիալ–տնտեսական զարգացման, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Բացի պետական ֆինանսական քաղաքականությունից, գոյություն ունի նաև տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես կազմակերպությունների (ծեռնարկությունների) կողմից իրականացվող ֆինանսական քաղաքականություն: Այդ քաղաքականությունը միտված է բիզնեսի զարգացմանը, ինչը հանդիսանում է ֆինանսական մենեջերի գործունեության հիմնական խնդիրը: Ֆինանսական քաղաքականու-

¹ Финансы, 2001, М., с. 23, под. ред. В.В. Ковалева.

թյան գլխավոր նպատակն է ապահովել տնտեսավարող սուբյեկտների կենսագործունեությունը մրցակցային պայքարում, ինչը հնարավորություն է տալիս խուսափել սնանկացման վտանգից և խոշոր ֆինանսական կորուստներից: Դրան հասնելու կարևոր նախադրյալ է արդյունավետ ինվեստիցիոն քաղաքականության իրականացումը, որը հանդիսանում է կազմակերպությունների (ծեռնարկությունների) ֆինանսական քաղաքականության կարևոր բաղադրիչը: Սա հնարավորություն է տալիս նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի արմատավորման միջոցով շարունակ նորացնել թողարկվող արտադրանքի կառուցվածքը, իջեցնել ինքնարժեքը, որոնց արդյունքում կստեղծվեն լուրջ նախադրյալներ հաղթող դուրս գալու մրցակցային պայքարում, բարձրացնել կազմակերպության (ծեռնարկության) շուկայական արժեքը և հասնել բարձր ֆինանսական արդյունքի:

Ֆինանսական քաղաքականության առաջնահերթությունները շարունակ կարող են փոփոխվել՝ ելնելով շուկայական իրադրության փոփոխություններից: Նման փոփոխությունների կանխատեսումը ֆինանսական մեներջերի աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկն է, ինչը հիմք է հանդիսանում կարծաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական քաղաքականության հայեցակարգերը մշակելու համար:

Ներկայումս ՀՀ պետական ֆինանսական քաղաքականությունը դեռևս չունի երկրի տնտեսության զարգացման ու բնակչության սոցիալական խնդիրները լուծելու ուղղվածություն, որն այդ քաղաքականության գլխավոր նպատակն է: Այս պարագան հիմնականում պայմանավորված է հանրապետության ֆինանսական ռեսուրսների սահմանափակ ծավալով:

Վերջին տարիներին հանրապետության ֆինանսական քաղաքականությունն առավելապես ուղղված է տնտեսության կայունության ապահովմանը, պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը և տնտեսության աճի նախադրյալների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո անցած 12 տարիներին պետության ֆինանսական քաղաքականությունն ուղղվել է երկրի սոցիալ-տնտեսական կարգի արմատական վերափոխման, շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդիրների լուծմանը: Դրան համապատասխան ձևավորված նոր ֆինանսական մեխանիզմի կիրառման շնորհիվ շուկայական հարաբերությունները գործնականում արմատավորվեցին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում ու ոլորտներում: Թեև այդ գործընթացը դեռևս շարունակվում է, սակայն ակնհայտ է, որ շուկայական հարաբերություններին այլընտրանք հանրապետությունում գոյություն չունի: Սակայն ակնհայտ է նաև այն իրողությունը, որ հանրապետությունում իրականացված ողջ տնտեսական և հատկապես ֆինանսական քաղաքականությունը չի կարելի համարել արդյունավետ: Շուկայական հարաբերությունների արմատավորմանը միտված տնտեսական ու սոցիալական վերակառուցման գործընթացում թույլ տրվեցին խոշոր սխալներ, բացթողումներ, որոնք զգալի վնաս հասցրին երկրի տնտեսությանը: Պետական ֆինանսական քաղաքականության գործընթացում այսօր էլ բացակայում է հաշվեկշռվածությունը:

Պետության ֆինանսական քաղաքականությունը սերտորեն կապվում է դրամավարկային քաղաքականության հետ: Դա պայմանավորված է նրանով, որ դրամական զանգվածը, լայն իմաստով, փոփոխական մեծություն է ֆինանսական քաղաքականության տեսակետից այն չափով, ինչ չափով գոյություն ունի փոխադարձ

կապ մի կողմից տնտեսության ակտիվության և զննորի մակարդակի տատանումների և մյուս կողմից դրամական էմիսիայի վրա հսկողություն սահմանելու պետության ձգտման միջև: Բացի դրանից, տնտեսության կայունացման քաղաքականությունը ենթադրում է դրամական գործիքների օգտագործում ինֆլյացիոն ճնշումը կարգավորելու համար, ինչը բնորոշ է վերջին տարիների ՀՀ ֆինանսավարկային քաղաքականությանը: Մյուս կողմից դրամական քաղաքականության գործընթացում կարևոր գործոն է հսկողությունը՝ տնտեսության մեջ որպես դրամական զանգված սահմանափակելու միջոց՝ վարկը օգտագործելու նկատմամբ: Սակայն ինֆլյացիոն ճնշումը թուլացնելուն ուղղված վարկային քաղաքականության արդյունավետությունը կապված է վարկային ռեսուրսների աճի տեմպի անկման հետ, ինչը հանգեցնում է անցանկալի հետևանքների, մասնավորապես եկամուտների կորստի: Այստեղից հետևում է, որ հավասարակշռված ֆինանսական քաղաքականությունը ենթադրում է սերտ փոխգործակցություն դրամավարկային քաղաքականության հետ:

Պետական ֆինանսական քաղաքականության կարևոր բաղադրիչներ են նաև բյուջետային, հարկային, ինվեստիցիոն, սոցիալական և մաքսային քաղաքականությունները:

Բյուջետային քաղաքականությունը հանդես է գալիս որպես պետության ֆինանսական քաղաքականության ավանդական հիմնական օղակը: Նույնիսկ ֆինանսների դասական տեսությունը ֆինանսները միանշանակ ներկայացնում էր որպես պետության ունեցվածք: Այդ պատճառով մինչև 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը պետությունների ֆինանսական քաղաքականությունն ուղղված էր միայն բյուջետային հավասարակշռության ապահովմանը:

20-րդ դարից սկսած՝ աստիճանաբար բարձրացավ պետության դերը երկրի տնտեսության զարգացման գործում, ինչը եականորեն փոխեց ֆինանսական քաղաքականության ավանդական ուղղվածությունը: Բյուջետային հավասարակշռությունը այլևս չէր սահմանափակվում միայն երկրում կարգ ու կանոնի և իշխանության մարմինների աշխատանքի ապահովման խնդիրների լուծմամբ: Պետական ծախսերի անշեղ աճը մի կողմից և տնտեսության զարգացման առաջնահերթությունների գիտակցումը մյուս կողմից բարձրացրին բյուջետային քաղաքականության դերն ու նշանակությունը: Բյուջետային քաղաքականությունը բախվեց այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտության հետ, ինչպիսիք են բյուջեի ծավալի, դեֆիցիտի չափի, ինվեստիցիոն ներդրումների ու օբյեկտների սահմանումը և այլն, որոնք ազդեցություն են գործում տնտեսության զարգացման ընթացքի վրա: Բյուջետային քաղաքականության մեջ խաչաձևվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր անհետաձգելի հիմնահարցերը:

ՀՀ բյուջետային քաղաքականությունը հիմնված է ընդունված բյուջետային օրենսդրության և այլ օրենսդրական ակտերի վրա, որոնք էլ որոշում են երկրի բյուջետային կառուցվածքի ձևը և բյուջետային գործընթացը: Բյուջետային քաղաքականությունը դրսևորվում է բյուջեի ծախսային մասի կառուցվածքի, տարբեր մակարդակի բյուջեների միջև այդ ծախսերի բաշխման, ինչպես նաև բյուջեի դեֆիցիտի ծածկման աղբյուրի, պետական պարտքի կառավարման ձևերի ու մեթոդների մեջ: Նշված խնդիրների լուծման բնույթից է կախված բյուջետային քաղաքականության սոցիալ-տնտեսական ուղղվածությունը:

Ֆինանսական քաղաքականության կարևոր բաղադրիչներից է հարկային համակարգի արդյունավետ կառավարումը: Հարկերն իրենցից ներկայացնում են պետության կողմից իրավաբանական ու ֆիզիկական անձանցից անփոխհատույց ու պարտադիր գանձվող միջոցներ հասարակական ծախսերի ֆինանսավորման համար:

Շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում կիրառվում են բազմաթիվ, տարատեսակ հարկեր և հարկադրման օբյեկտներ, և սահմանված են ոչ միատեսակ փոխահարաբերություններ հարկատուների և հարկային մարմինների միջև: Սակայն միջազգային պրակտիկան մշակել է հարկային համակարգի կառուցվածքի, հարկադրման որոշակի սկզբունքներ: Առաջին սկզբունքն այն է, որ հարկերը ստորաբաժանվում են ուղղակի և անուղղակի հարկերի: Ուղղակի հարկերի գանձումը միանգամայն է և կատարվում է համապատասխան սուբյեկտների եկամուտներից և սեփականությունից, իսկ անուղղակի հարկերի գանձումը՝ իրավաբանական անձանց գործունեության շրջանառությունից:

Հարկային համակարգի կառուցվածքի հաջորդ կարևոր սկզբունքը վերաբերում է հարկերի հորիզոնական և ուղղահայաց կառուցվածքի հավասարությանը: Հորիզոնական հավասարությունը նշանակում է, որ իրավաբանական ու ֆիզիկական անձինք, որոնք գտնվում են տարբեր տնտեսական պայմաններում, պետք է վճարեն միատեսակ հարկեր: Ինչ վերաբերում է ուղղահայաց հավասարությանը, ապա այն ենթադրում է, որ հարուստները պետք է վճարեն համամասնորեն ավելի մեծ գումար, քան աղքատները:

Հարկային համակարգի կառուցվածքի սկզբունքների շարքին են դասվում նաև հարկերի գանձման եղանակների պարզությունը, հարկերից խուսափելու անհնարիությունը և այլն:

Հարկերին բնորոշ են երկու հիմնական գործառույթներ՝ ֆիսկալ և տնտեսական: Առաջինի իմաստն այն է, որ հարկերի միջոցով պետությունը ապահովում է բյուջեի եկամտային մասի կատարում: Իսկ երկրորդ գործառույթի միջոցով պետությունը խրախուսում է տնտեսության զարգացումը: Հարկերի ֆիսկալ և տնտեսական գործառույթների իրականացման միջև օպտիմալ հավասարակշռության ապահովումը հարկային և, հետևաբար, նաև ֆինանսական քաղաքականության առանցքային հարցերից մեկն է:

Պետության ֆինանսական քաղաքականության կարևոր օղակներից մեկն էլ ինվեստիցիոն քաղաքականությունն է: Այդ քաղաքականությունը կոչված է ստեղծելու բարենպաստ պայմաններ հայրենական ու արտասահմանյան ինվեստիցիաների ներգրավման և դրանք տնտեսության իրական հատվածի զարգացմանն ուղղելու համար: Ինվեստիցիոն նման քաղաքականությունը հատկապես կարևորվում է շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող երկրի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար: Այս պարագան պայմանավորված է նրանով, որ անցման գործընթացը պահանջում է տնտեսության արմատական վերակառուցում, որը հնարավոր չէ իրականացնել առանց բավարար կապիտալ ներդրումների առկայության:

Ֆինանսական քաղաքականության կարևոր բնագավառներից է նաև սոցիալական քաղաքականությունը, որն ուղղված է բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը: Այդ բնագավառի կարևոր ոլորտների մեջ են մտնում մասնավորա-

պես բնակչության համար սպառողական զամբյուղին համապատասխան բավարար կենսաթոշակների, պետական ապահովության, զբաղվածության ֆոնդերի ստեղծումը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սոցիալական հրատապ խնդիր է աղքատության հիմնահարցի լուծումը:

Պետական ֆինանսական քաղաքականության ոչ պակաս կարևոր ոլորտ է մաքսային քաղաքականությունը: Վերջինս կոչված է վերահսկողություն իրականացնել երկրի պետական սահմանով կատարվող գույքի և կապիտալի տեղափոխման վրա: Մաքսային քաղաքականության միջոցով սահմանափակվում կամ ընդլայնվում է երկրի ներքին շուկա մուտք գործող ապրանքների և ծառայությունների ծավալը, ինչպես նաև խրախուսվում կամ կասեցվում են ապրանքների արտահանումը և ներմուծումը: Դրանով իսկ մաքսային քաղաքականության միջոցով նույնպես տեղի է ունենում վերաբաշխման գործընթաց տնտեսավարող սուբյեկտների ու պետության միջև: Մաքսային քաղաքականությունը սերտորեն առնչվում է բյուջետային քաղաքականության հետ, այնքանով, որքանով մաքսային տուրքերը և վճարումները պետական բյուջեի եկամտի կարևոր աղբյուր են:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են ֆինանսները, և ինչո՞ւ են դրանք անհրաժեշտ:
2. Ֆինանսները ի՞նչ դեր են կատարում, և ո՞րն է դրանք պատմականությունը:
3. Որո՞նք են ֆինանսների առաջացման նախադրյալներն ու պայմանները:
4. Գլխավորապես ո՞ր ոլորտում են դրսևորվում ֆինանսական հարաբերությունները:
5. Բնութագրել ֆինանսների բովանդակությունը կազմող ֆինանսական հարաբերությունները:
6. Որո՞նք են ֆինանսների բաշխման ֆունկցիայի դրսևորման փուլերը:
7. Ո՞րն է ֆինանսների վերահսկողության ֆունկցիան:
8. Ի՞նչ է նշանակում ֆինանսական համակարգ: ՀՀ-ում այն ինչպիսի՞ օղակներից է կազմված:
9. Ի՞նչ է ուսումնասիրում ֆինանսական գիտությունը և ինչպիսի՞ էվոլյուցիոն փոփոխություն է կրել:
10. «Ֆինանսական քաղաքականություն» հասկացությունը և դրսևորման մեխանիզմները:

ԳԼՈՒԽ 2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2.1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

Ֆինանսական կառավարումը երկրի տնտեսության զարգացման բաղադրիչներից մեկն է: Եվ քանի որ այն իրենից ներկայացնում է տնտեսական–սոցիալական ուղղված նպատակային գործունեություն, ապա ֆինանսական կառավարումը ենթադրում է դրա համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հավաքագրման և արդյունավետ օգտագործման մեխանիզմի կազմակերպում: Ուստի, ֆինանսական կառավարման էությունը դրսևորվում է ֆինանսական համակարգի տարբեր սուբյեկտների միջև ֆինանսական ռեսուրսների բաշխման ու վերաբաշխման գործընթացի, ինչպես նաև դրան ուղեկցող դրամական հարաբերությունների իրականացումը կազմակերպելու մեջ:

Ինչպես ցանկացած կառավարում, այնպես էլ ֆինանսական կառավարումն ունի իր օբյեկտները և սուբյեկտները: Ֆինանսական կառավարման օբյեկտներ են տարբեր տեսակի դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի կազմավորման ու օգտագործման գործընթացը և դրան ուղեկցող բաշխողական հարաբերությունները:

Պետական ու մունիցիպալ ֆինանսների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների համար որպես կառավարման սուբյեկտներ հանդես են գալիս ֆինանսական հատուկ ծառայությունները (ֆինանսական ապարատները): Նույնը վերաբերում է նաև ֆինանսական համակարգի մյուս օղակներին: Ֆինանսական կառավարման հիմքում ընկած են ֆինանսական համակարգի միջև եղած բաշխողական փոխհարաբերությունները: Վերջիններս սահմանում է պետությունը, և ֆինանսական կառավարման խնդիրն է դրանք անշեղորեն կենսագործել ու կառավարել:

Ֆինանսական փոխհարաբերությունները պետության և ֆինանսական համակարգի տարբեր օղակների միջև ունեն իրենց առանձնահատկությունները: Այսպես՝ պետության փոխհարաբերությունները տնտեսավարող սուբյեկտների ու տնային տնտեսությունների միջև միջնորդվում են ամենից առաջ հարկային համակարգի, պետության կողմից կարգավորվող վարկային հարաբերություններով ու ֆինանսական շուկայի միջոցով: Պետության և արտաբյուջետային ֆոնդերի փոխհարաբերությունները իրականացվում են կենսաթոշակային ֆոնդի, զբաղված բնակչության եկամուտների կարգավորման մեխանիզմի միջոցով:

Ազգային եկամտի վերաբաշխման գործընթացում առաջացած փոխհարաբերությունները տնտեսական գրականության մեջ ներկայացվում են որպես ֆինանսների պետական կարգավորման անուղղակի մեթոդ¹: Դրանց շարքին են դասվում, մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցության հավասար պայմանների ստեղծումը, գների պետական կարգավորումը, արդյունավետ հարկային ու

¹ “Финансы”, учебник, М., 2001, с. 37, под. ред. В.В. Ковалева.

մաքսային քաղաքականությունը, ապահովագրական գործի և կապիտալի շուկայի զարգացման աջակցումը և այլն:

Գոյություն ունեն նաև ֆինանսների պետական կարգավորման ուղղակի մեթոդներ, որոնք կրում են վարչական բնույթ: Դրանցից հիշատակության են արժանի գանազան տեսակի հարկային արտոնությունները, հարկադրանքները, տույժ ու տուգանքները, սոցիալական ոլորտում բնակչության անապահով խավերի համար կիրառվող սոցիալական երաշխիքներն ու ֆինանսական պաշտպանությունը, ինչպես նաև ձեռնարկատիրական և մի քանի այլ տեսակի գործունեության գծով պարտադիր արտոնագրման համակարգը:

Ֆինանսական կառավարումը իրականացվում է տարբեր մակարդակներում: Պետական ֆինանսական կառավարումը անմիջականորեն վերաբերում է պետական ֆինանսներին: Բոլոր զարգացած երկրներում պետական ֆինանսական կառավարումը կարգավորվում է ֆինանսական օրենսդրության միջոցով, որը սահմանվում է երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից: Դրանց շարքում հատկապես կարևորվում են պետական բյուջեի գործընթացի կազմակերպումը, հարկային օրենսդրությունը, պետական ներքին ու արտաքին պարտքի սպասարկման կարգը և այլն:

Պետական ֆինանսական կառավարման հիմնական նպատակն է տնտեսության տարբեր ոլորտների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների միջև հարաբերական հավասարակշռության, առանց դեֆիցիտի պետական ու տեղական բյուջեների, ազգային տարադրամի կայունության ապահովումը, որոնք երկրի ֆինանսական հարաբերությունների հիմնական կողմնորոշիչներն են:

Ֆինանսական հարաբերությունների բովանդակությունը կազմում են ֆինանսական գործառնությունները, որոնց ամբողջությունը արևմտյան տեսաբանները ներկայացնում են որպես «ֆինանսական գործ»: Վերջինիս նշանակությունն այն է, որ նա ընդունակ է իրականացնելու դրամական միջոցների փոխանակություն, վերակազմավորում և ստեղծում: Յենց այդ գործառնությունների գործընթացում առաջացած հարաբերություններն էլ ներկայացնում են ֆինանսական գիտության ոլորտը: Վերջինս ուսումնասիրում է այն գործոնները, որոնք հանգեցնում են պարտքային պարտավորությունների առաջացմանը, որոշում դրանց բաժինը շրջանառության մեջ, ապահովում դրանց փոխանակությունը:

Ֆինանսական գործառնություններն ունեն յուրահատկություններ կառավարման բոլոր մակարդակներում, ինչով էլ պայմանավորված է տարբեր ֆինանսական մարմինների գոյությունը:

Խոշոր արտադրական գործունեությամբ մասնագիտացված տնտեսավարող սուբյեկտներում գոյություն ունեն ֆինանսական ծառայություններ, որոնց պարտականությունների մեջ են մտնում հաշվեկշռի գործառնությունները ֆինանսական ցուցանիշների միջոցով ներկայացնելը և դրամական միջոցներով դրանց ապահովումը: Ինչ վերաբերում է ֆինանսական կառավարման պետական մարմիններին, ապա այստեղ գոյություն ունեն երկու խոշոր ստորաբաժանումներ՝ հարկաբյուջետային, որոնք վերահսկում են դրամական միջոցների կազմավորման ու դրանց ծախսման նկատմամբ սահմանված կարգի պահպանմանը, և գանձապետարանը, որի միջոցով ապահովվում է եկամուտների ու ծախսերի հավասարակշռությունը: Մյուս տնտեսական կազմակերպությունների շարքում գոյություն ունեն մասնագիտացված հաստա-

տուբյուրներ, որոնք մատուցում են ֆինանսական բնույթի ծառայություններ, մասնավորապես՝ կապիտալի հավաքագրում ու վերաբաշխում, այսինքն՝ ֆինանսական շրջանառության կազմակերպում:

Արևմտյան զարգացած երկրներում կապիտալի վերաբաշխման գլխավոր գործիք է վարկը, որի հիմնական ֆունկցիան փողի ստեղծումն է: Այդ պատճառով բանկերը համարվում են յուրօրինակ ֆինանսական ինստիտուտ: Արևմուտքում բանկային գործունեությունն իր մեջ ընդգրկում է երեք ֆունկցիա՝ վարկ, կուտակում և ֆինանսական օգնություն:

Ֆինանսական կառավարման ոլորտներից մեկն էլ ֆինանսական շուկան է, որը վերջին հաշվով հանգում է կապիտալի շուկային: Վերջինս արժեթղթերի բաժանորդագրման ձևով իրականացնում է դրանց առաջարկի, պահանջարկի և փոխանակության գործընթաց:

Ֆինանսների կառավարման արևմտյան փորձը ցույց է տալիս, որ հաճախ կամ վերանում է փոխադարձ սերտ կապը ֆինանսական ու տնտեսական երևույթների միջև, կամ էլ դրանք հակադրվում են միմյանց: Այդ պարագան բացատրվում է նրանով, որ տարբեր են առաջադրված նպատակները, քաղաքականությունը իրականացնողների պրոֆեսիոնալ վարքագիծը:

Ֆինանսական կառավարման գործընթացում առաջնահերթ խնդիր է տնտեսության մեջ հավասարակշռության ապահովումը, իսկ տնտեսական կառավարման խնդիր է տնտեսական աճը: Պետական կառավարման մակարդակում ֆինանսների նախարարությունը կարող է հանուն դրամական կայունության զոհաբերել տնտեսական աճին հասնելու նպատակը, ինչը էկոնոմիկայի նախարարության առաջնահերթ խնդիրն է: Այստեղից արևմտյան տնտեսավարման պրակտիկայում ձևավորվել է մի տեսակետ, որ ֆինանսիստը զգույշ է, իսկ տնտեսագետը՝ համարձակ: Նույն երևույթը նկատվում է նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կառավարման գործընթացում: Ֆինանսիստներին մեղադրում են կամ ավելորդ զգուշության մեջ, որի արդյունքում փլուզվում է նախատեսված ծրագիրը, կամ էլ անզուգուշության մեջ, որը վտանգի տակ է դնում ծրագրի կատարումը: Ձևավորվել է տեսակետ, որի համաձայն՝ ֆինանսական կառավարման աշխարհը ռիսկի բնագավառն է, իսկ գործընթացը ծնում է աղմկահարույց իրավիճակներ:

Այնուամենայնիվ, ֆինանսական կառավարման գործընթացն իրականացվում է հնարավորությունների չափանիշների սահմաններում: Սա նշանակում է, որ հաշվի են առնվում ֆինանսական երևույթների առավելագույն ներգործության սահմանները տնտեսական գործառնությունների վրա, ինչն ապահովվում է կառավարման գործընթացում:

Բացի դրանից, ֆինանսական կառավարումը սահմանում է խաղի կանոններ, որը պետք է պահպանեն, երբ հարկ է լինում գնահատել իրադրությունը: Ընդ որում, ցանկացած տնտեսական իրադրության գնահատումը պետք է կատարվի և արտահայտվի ֆինանսական ցուցանիշների միջոցով:

Արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ֆինանսների նախարարության և էկոնոմիկայի նախարարության հաճախակի դարձած համատեղումը կամ դրանց անջատումը գործնականում առաջացնում են տարբեր բնույթի խնդիրներ: Դրանց համատեղումը առաջ է բերում կառավարության կազմում կառավարություն

ստեղծելու ռիսկ: Իսկ այդ նախարարությունների անջատ գոյությունը հանգեցնում է նրան, որ որոշակիորեն բարձրանում է ֆինանսների նախարարության կշիռը: Ֆինանսական ռեսուրսների միջոցով վերջինս կարգավորում է երկրի տնտեսական կյանքի ընթացքը, որը նպատակամղված է ստեղծել ներդաշնակություն ազգային տնտեսության մեջ:

Ֆինանսների ընդհանուր կառավարումը ցանկացած երկրում իրականացնում է իշխանության բարձրագույն մարմինը: Քանի որ առանձին երկրներում տարբեր է պետական կառուցվածքը, այդ պատճառով էլ օրենսդիր մարմինները հանդես են գալիս տարբեր կազմավորումների տեսքով: ԱՄՆ–ում բարձրագույն մարմնի դերում հանդես է գալիս Կոնգրեսը, Անգլիայում՝ պառլամենտը, Գերմանիայում՝ Բունդեսթագը, Ֆրանսիայում՝ Ազգային ժողովը, Ռուսաստանի Դաշնությունում՝ Դաշնային ժողովը, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ Ազգային ժողովը:

Ֆինանսների կառավարմանը, որպես կանոն, մասնակցում են պետական ու գործադիր իշխանության տարբեր մարմիններ: ԱՄՆ–ում նման մարմինների դերում հանդես են գալիս ֆինանսների նախարարությունը, ինչպես նաև նախագահին առընթեր գործող վարչաբյուջետային վարչությունը: Միաժամանակ, ֆինանսների նախարարության հետ միասին բյուջեի կատարմանը մասնակցում է նաև մաքսային ծառայությունը: Անգլիայում կառավարման գործադիր մարմին է գանձապետարանը: Վերջինիս վրա է դրված ոչ միայն պետական բյուջեի մշակման ու կատարման պարտականությունը, այլև վերահսկողությունը պետական ձեռնարկությունների կողմից միջոցների օգտագործման նկատմամբ: Ֆրանսիայում ֆինանսների կառավարումն իրականացնում է Էկոնոմիկայի, ֆինանսների և բյուջեի նախարարությունը: Այս նախարարության վրա են դրված պետական բյուջեի մշակումը և կատարման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև հարկերի ու գանձույթների հավաքագրումը:

Պետական ֆինանսները կառավարելիս միանգամայն այլ կառուցվածք ունի Ռուսաստանի Դաշնությունը: Այստեղ գլխավոր իշխանական կառուցվածքի դերում հանդես են գալիս Դաշնային ժողովը, նախագահը և կառավարությունը: Հենց սրանց վրա է դրված բյուջեի հաստատման ու կատարման պարտականությունը:

Գրեթե նոր կառուցվածք գոյություն ունի ՀՀ–ում: Այստեղ նույնպես ֆինանսական կառավարումն իրականացնում են Ազգային ժողովը, նախագահը, ֆինանսների ու Էկոնոմիկայի նախարարությունը:

Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսական կառավարման ապարատը բաղկացած է հետևյալ մարմիններից. Ազգային ժողովի ֆինանսաբյուջետային հանձնաժողովը, ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունը և նրա տեղական մարմինները, ՀՀ կենտրոնական բանկը, հարկային պետական տեսչությունը, ՀՀ մաքսային կոմիտեն, արժեթղթերի հանձնաժողովը, պետական գույքի նախարարությունը, սոցիալական նշանակության արտաբյուջետային ֆոնդերը:

Գործադիր իշխանության կազմում ֆինանսների կառավարման հիմնական պարտականությունները ՀՀ–ում դրված է ֆինանսների ու Էկոնոմիկայի նախարարության վրա: Վերջինիս պարտականությունների մեջ են մտնում պետական ֆինանսական քաղաքականության մշակումը և իրացումը, պետական բյուջեի նախագծի կազմումն ու կատարումը, բյուջետային ու արտաբյուջետային ֆոնդերի միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ֆինանսա-

կան շուկայի զարգացման ապահովումը: Այս խնդիրների կենսագործման նպատակով Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունում ստեղծված են համապատասխան ստորաբաժանումներ:

Դրանցից առավել կարևորներն են բյուջետային գործընթացի կառավարման վարչությունը, բյուջետային ծախսերի ֆինանսավորման վարչությունը, ֆինանսական շուկայի զարգացման և արժութային կարգավորման վարչությունը, ֆինանսական վերահսկողության ու աուդիտի վարչությունը, միջազգային ֆինանսական համագործակցության բաժինը, պետական ռեզերվների վարչությունը, պետական եկամուտների քաղաքականության վարչությունը, պետական տուրքի կառավարման վարչությունը, գանձապետական համակարգի ներքին աուդիտի վարչությունը և այլն:

Պետական գանձապետարանի հիմնական խնդիրներն են ՀՀ բյուջեի կատարման և վերահսկման կազմակերպումը, բյուջեի եկամուտների ու ծախսերի կառավարումը, պետական արտաբյուջետային ֆոնդերի միջոցների հավաքագրման ու կատարման ընթացքի ապահովումը, պետական ֆինանսական ռեսուրսների ծավալի կարճաժամկետ կանխատեսումը և օպերատիվ կատարումը, ՀՀ ԿԲ-ի հետ մեկտեղ պետական ներքին ու արտաքին պարտքի կառավարումը և սպասարկումը, օրենսդիր և գործադիր մարմիններին ֆինանսական գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելը, ինչը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում ունենալ հանրապետության բյուջետային համակարգի վիճակի մասին:

ՀՀ Ազգային ժողովի կազմավորած վերահսկիչ պալատը պետական ֆինանսական վերահսկողության մարմինն է: Նրա հիմնական խնդիրների մեջ է մտնում հանրապետության բյուջեի և արտաբյուջետային ֆոնդերի բյուջեների ծավալի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության կազմակերպումը. պալատը որոշում է պետական միջոցների ծախսերի և պետական սեփականության օգտագործման արդյունավետությունը, իրականացնում է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների նախագծերի, պետական իշխանության մարմինների նորմատիվային և իրավական ակտերի ֆինանսական փորձաքննություն, պարբերաբար տեղեկատվություն մատուցում Ազգային ժողովին պետական բյուջեի կատարման և կատարված վերահսկողական աշխատանքների արդյունքների մասին:

Ֆինանսական կառավարման կարևորագույն մարմիններից է ՀՀ հարկային պետական ծառայությունը: Նրա կենտրոնական ապարատի և տարածքային տեսչությունների միջոցով իրականացվում է հսկողություն հանրապետության ողջ տարածքում, այն հաշվով, որպեսզի լիովին ու սահմանված ժամկետում իրավաբանական ու ֆիզիկական անձինք կատարեն իրենց հարկային պարտավորությունները: Միաժամանակ, հատկապես տարածքային տեսչությունները հետևում են հարկային օրենսդրության դրույթների պահպանման ընթացքին և, դրան համապատասխան, ստուգում բյուջեին ու արտաբյուջետային ֆոնդերին կատարած մասհանումների ճշտությունը:

Ֆինանսական կառավարման մարմին է նաև ՀՀ մաքսային վարչությունը, որի հիմնական ֆունկցիան մաքսային մարմինների կողմից գանձվող հարկային մուտքերի ապահովումն է փաստաթղթային և այլ բնույթի հարկային ստուգումների միջոցով: Հանրապետության մաքսային վարչությունն ունի չորս տարածքային ստորաբաժանումներ, որոնք տեղաբաշխվում են ՀՀ պետական սահմանի երկայնքով: Մաք-

սային վարչության հիմնական խնդիրներն են՝ իրականացնել հարկային ստուգումներ, թե ինչպես են կատարվում մաքսային մարմինների կողմից կատարված գանձումները, հարկերի հաշվարկման և վճարման հետ կապված փաստաթղթերի ստուգումները, հետևել մաքսային օրենսդրության պահպանմանը և դրա խախտման դեպքում տույժ ու տուգանքների գանձմանը:

Ֆինանսների կառավարումը իրականացվում է նաև տնտեսավարող սուբյեկտների մակարդակով: Ֆինանսական կառավարման գլխավոր նպատակը արտադրական կազմակերպություններում կամ ֆիրմաներում տնտեսական հավասարակշռության, ֆինանսական կայունության ապահովումն է: Դրան հասնելու պարտադիր պայմաններն են՝ անհրաժեշտ մակարդակի վրա պահել կազմակերպությունների ու ֆիրմաների վճարունակությունը, հաշվեկշռի իրացվելիությունը, ինչպես նաև բարձր վարկունակությունը, ինչի արդյունքում ձեռք կբերվի բարձր շահութաբերություն: Սակայն նշված պայմանների ապահովումը գործնականում չափազանց դժվար խնդիր է, թեև շատ ցանկալի է, քանի որ միայն այս դեպքում է ստեղծվում ներդաշնակ տնտեսություն:

Արևմտյան ֆինանսական տեսաբանները նույնիսկ նշում են, որ ընդհանրապես ներդաշնակ տնտեսություն անհնար է պատկերացնել ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական մակարդակներում: Այս պարագան բացատրվում է նրանով, որ գոյություն ունեն որոշակի հակադրություններ այնպիսի ֆինանսական կատեգորիաների միջև, ինչպիսիք են իրացվելիությունը, եկամտաբերությունը և ռիսկը: Այս պայմաններում ակտիվների զնահատման չափանիշը հետին պլան է մղվում, քանի որ առաջնահերթ խնդիրը դառնում է գոյատևումը: Հենց նշված բարդ խնդիրների լուծումն էլ հանդիսանում է կազմակերպությունների (ձեռնարկությունների) ու ֆիրմաների ֆինանսական կառավարման օբյեկտը: Այդ նպատակով գոյություն ունի հատուկ ֆինանսական մեներջերային դեպարտամենտ, որը գլխավորում է մեներջերը:

Տնտեսավարող սուբյեկտների ու ֆիրմաների ֆինանսատնտեսական գործունեությունը տեղի է ունենում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրում: Արևմտյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ցանկացած ֆիրմայի հաջողությունը զգալի չափով (50%–ով) պայմանավորված է ֆինանսական մեներջերի աշխատանքների արդյունավետությունից: Հետևաբար, երբ առավելագույնս օգտագործվեն կառավարման արդյունավետության բոլոր հնարավորությունները, ապա նույնիսկ ամենաանբարենպաստ արտաքին միջավայրը չի կարող բացառել բիզնեսի հաջողությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ կազմակերպությունների ու ֆիրմաների արտաքին միջավայրին հարմարվելու ընդունակությունը զգալի չափով նպաստում է նրանց տնտեսական զարգացմանը: Սա բավականին բարդ խնդիր է, որի լուծումը նախ և առաջ կախված է կազմակերպությունների ու ֆիրմաների ղեկավարության մարտավարական ու ռազմավարական նպատակներից:

Արևմտյան երկրների ֆինանսական մեներջերների գործունեության պրակտիկան ցույց է տալիս, որ ֆիրմաների շահութաբերության մակարդակը ուղղակի կապի մեջ է ռիսկի մակարդակի հետ: Որքան բարձր է ռիսկի մակարդակը, այնքան մեծ է ակնկալվող շահույթի ծավալը: Սակայն այս հավասարակշռության ապահովումը սերտորեն կապված է եկամտի հնարավոր կորստի ռիսկի ապահովագրության հետ: Բոլոր

դեպքերում ֆիրմաների գործունեության հաջողությունը պայմանավորված է ֆինանսական կայունությամբ, որի ապահովումը չափազանց բարդ հիմնախնդիր է: Այդ բարդությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց առկայությունը անխուսափելի է ֆինանսատնտեսական գործունեության գործընթացում: Այս կապակցությամբ նախ նշենք, որ տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ծառայությունների առջև կանգնած կարևոր խնդիրներից մեկը առնչվում է ֆինանսավորման սեփական ու փոխառու միջոցների միջև օպտիմալ հարաբերակցություն սահմանելու հետ, այն հաշվով, որպեսզի ապահովվի ակնկալվող շահութաբերության մակարդակը: Այնուհետև պետք է նկատի ունենալ, որ մշտական ֆինանսական հավասարակշռության ապահովումը հաճախ չի կարող լուծվել նախատեսված իրական ժամկետի սահմաններում: Սա պայմանավորված է նրանով, որ նույնիսկ կարճաժամկետ ֆինանսավորման ընթացքում կարող են տեղի ունենալ տարբեր բնույթի անկանխատեսելի երևույթներ, մասնավորապես՝ օպերատիվ լուծում պահանջող ռիսկեր: Մյուս կողմից իրական ժամանակաշրջանում ծախսերի ծավալն ու կառուցվածքը, որպես կանոն, փոփոխվում են, որոնց իրական արդյունքները ֆինանսական ծառայությանը հայտնի են դառնում շատ ավելի ուշ:

Ֆինանսական հավասարակշռության պահպանումը նախատեսված ժամանակահատվածում բարդանում է նրանով, որ մշտապես փոփոխվում է նաև արտաքին միջավայրը, որին հարմարվելու համար պահանջվում է ժամանակ, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ: Իսկ ժամանակի կորուստը հանգեցնում է հավանական հաջողության կորստի:

Ֆինանսական հավասարակշռության ապահովման ոչ պակաս կարևոր հիմնախնդիր է ակտիվները մշտապես իրացվելի վիճակում պահելը: Իրացվելիության ընդհանուր, պարտադիր չափանիշն այն է, որ ակտիվները ֆիրմայի հաշվեկշռում հարկավոր է պահել մինչև այն պահը, քանի դեռ հնարավոր է դրանք իրացնել առանց կորստի:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ ֆինանսական մեներջերի գործառույթներն ու խնդիրները բազմազան են, սակայն գլխավոր խնդիրը հանգում է ֆինանսական հավասարակշռության ապահովմանը ընթացիկ ժամանակահատվածում և առաջիկա հեռանկարում:

Ֆինանսական կառավարման համար որպես գործիքներ են ծառայում պլանավորումը, վերահսկողությունը և տեղեկատվության ապահովումը:

2.2.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

«Պլան» հասկացությունն իրենից ներկայացնում է կանխատեսումների ու տնտեսական նպատակների ամբողջություն, որին հասնելու համար տրամադրվում են որոշակի միջոցներ: Այս բնորոշումը հավասար չափով կիրառելի է ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական մակարդակներում: Սակայն «պլանը» ավելի շատ համապատասխանում է երկրի մակարդակով մակրոտնտեսական ծրագրավորմանը: Հանդիսանալով կարևոր գործիք՝ պլանը ծառայում է կառավարում իրականացնելու գործողության, նպատակի:

Պլանավորումը կարելի է ներկայացնել որպես տնտեսական զարգացման կազմակերպում՝ ելնելով առաջադրված նպատակին հասնելու հնարավորին չափ օպտիմալ ուղուց և համապատասխան միջոցներից: Պլանավորման սահմանումը հիմնվում է կանխատեսումների ու ծրագրավորման մեթոդների վրա և նպատակաուղղված է որոշակի տնտեսական արդյունքներ ձեռք բերելուն: Այն հավասար չափով կիրառելի է ինչպես պետական մարմինների, այնպես էլ կազմակերպությունների կառավարման գործընթացներում: Դրա իրականացումը ենթադրում է լայն ու ճշգրիտ գիտելիքներ:

Ընդունված է, որ ֆինանսական պլանավորումը պետք է ունենա երեք ուղղություն՝ տարածքային, ճյուղային և ֆունկցիոնալ: Տարածքային պլանավորումը ենթադրում է տարածքային պլանային մարմինների գործողությունների փոխկապվածություն: Ելուղային պլանավորման գործընթացում որոշվում է ֆինանսական ռեսուրսների բաշխման խնդիրը՝ ելնելով պետական առաջադրանքների կատարման առաջնահերթություններից: Ինչ վերաբերում է ֆունկցիոնալ պլանավորմանը, ապա այս փուլում որոշվում են տնտեսության և ոչ արտադրական ոլորտի զարգացման ու հավասարակշռության խնդիրները, ինչպես նաև սոցիալական բնույթի ու ներքին և արտաքին առևտրին վերաբերող հարցերը:

Մակրոտնտեսական մակարդակում ֆինանսական պլանավորումը իրենից ներկայացնում է ազգային տնտեսության զարգացման պլանի վերջին՝ ամփոփ փուլը: Նկատի ունենալով ֆինանսական համակարգի տարբեր օղակների հարաբերական առանձնացվածությունը՝ մշակվում են առանձին ֆինանսական պլաններ այդ համակարգի յուրաքանչյուր սուբյեկտի համար:

Ֆինանսական պլանավորման հիմնական օբյեկտը ֆինանսական ռեսուրսներն են, որոնք բաշխվում են ֆինանսական համակարգի սուբյեկտների միջև: Դրանց ամբողջությունը կազմում է երկրի ֆինանսական պլանավորման միասնական համակարգը: Հայաստանի Հանրապետության ֆինանսական պլանների համակարգում գլխավոր տեղը պատկանում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներին, որոնց մեջ արտացոլվում են դրամական միջոցների ֆոնդերի կազմավորման ու օգտագործման ուղղությունները: Դրանք նպատակամղված են ֆինանսական ռեսուրսներով ապահովելու այն խնդիրների լուծումը, որոնք բխում են պետական ու մուլտիցիպալ կառավարման գործառնությունների իրականացման պահանջներից:

Սովորաբար բյուջեն կազմվում է մեկ տարվա կտրվածքով, որը կարող է ստորաբաժանվել ավելի կարճ ժամանակահատվածների: Գործնականում, երբ բյուջետային հաշվարկները կազմվում են որևէ կատեգորիայի եկամուտների ու ծախսերի նկատմամբ, բյուջետային ժամանակաշրջանը պետք է համապատասխանի եկամուտների ստացման ու ծախսերի կատարման ժամկետներին:

Կանխատեսումների անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի բյուջետային գործընթացն իր մեջ ընդգրկի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարային խնդիրներ: Այս հիմնախնդիրների լուծումը շոշափում է բյուջեի ու պլանի փոխհարաբերության հարցեր: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ինչպես բյուջեն, այնպես էլ պլանը հետապնդում են միևնույն՝ ապագա տնտեսության զարգացումը կարգավորելու նպատակ: Թեև բյուջեն ու պլանը հենվում են տարբեր մեթոդների վրա, դրանց միջև փոխկախվածության դրսևորումները զնալով ավելի ակնհայտ են դառնում: Սակայն դրանց միջև գոյություն ունեն մեթոդական բնույթի

տարբերություններ: Երբ պլանավորման դեպքում միջին և երկարաժամկետ կանխատեսումները առանձին դժվարություն չեն ներկայացնում, ապա բյուջեի հնարավորությունները ժամանակի տեսակետից սահմանափակվում են հաշվապահական հաշվառման խստությամբ և պարտադիր կատարման անհրաժեշտությամբ: Պլանը թույլ է տալիս կատարել հեռանկարային կանխատեսումներ, ինչը անհնար է բյուջետային համակարգի դեպքում, քանի որ ֆինանսական ռեսուրսները սահմանափակված են մեկ տարվա շրջանակներում:

Վերջին տարիներին արևմտյան զարգացած երկրներում տեղի է ունենում կանխատեսումների մշակած երկու տիպերի մոտեցման միտում: Հատկապես այդ միտումը կա ինվեստավորման գործընթացում, որտեղ բյուջեն աստիճանաբար ազատվում է կանխատեսումների տարեկան շրջանակներից և բերվում է դեպի ծրագրերի հաստատման պրակտիկան: Իրենց հերթին պլան մշակողներն ավելի ու ավելի են ջանքեր գործադրում, որպեսզի իրենց կանխատեսումները ավելի իրատեսական ու պարտադիր լինեն, կանխատեսումները կատարում են տարեկան կտրվածքով, ինչը ավելի է մոտեցնում բյուջետային կանխատեսումներին: Ներկայումս զարգացած երկրներում կիրառվող ազգային հաշիվներում գնալով ավելի մեծ չափով են օգտագործում կանխատեսումների երկու տիպերը: Պլանի և բյուջեի կանխատեսումների դժվարին զուգակցման միջոցով թե մեկը և թե մյուսը լուծում են իրենց առանձնահատուկ, բայց փոխկապակցված խնդիրները: Այս իրավիճակում հենց բյուջետային համակարգին է վիճակված հաշվի առնել հիմնական ֆինանսական համամասնությունների ապահովման անհետաձգելի պահանջները: Մյուս կողմից գնալով ավելի է մեծանում պետության դերը անմիջականորեն բյուջետային քաղաքականության իրականացման գծում, որը տարբեր տարիների ավելի մեծ չափով է արտացոլվում պետական քաղաքականության առանձին ոլորտներում:

Հայաստանի Հանրապետությունում տարբեր մակարդակների բյուջեները մշակվում են՝ ելնելով տնտեսության զարգացման տարբեր ոլորտներում պետական քաղաքականության առաջնահերթություններից՝ հիմք ընդունելով պետական չափորոշիչների պահպանմանը վերաբերող օրենսդրական պահանջները, ֆինանսական ծախսերի իրականացման նորմատիվային ակտերը: Ընդ որում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հետ մեկտեղ ձևավորվում են նաև արտաբյուջետային ֆոնդեր: Դրամական միջոցները մշակած ֆոնդերում արտացոլվում են եկամուտների ու ծախսերի համապատասխան նախահաշիվներում: Վերջիններս, ըստ էության, հանդիսանում են արտաբյուջետային ֆոնդերի ֆինանսական պլան:

Համապետական և տարածքային մարմիններում ֆինանսական պլանավորման համակարգերի մեջ ընդգրկվում են հեռանկարային ֆինանսական հաշվեկշիռների, ինչպես նաև բնակչության եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի մշակումը և իրացումը:

Հեռանկարային ֆինանսական պլանավորման նպատակն է ապահովել տնտեսական ու սոցիալական զարգացման այն խնդիրները, որոնք բխում են ֆինանսական քաղաքականության ծրագրից: Ընդ որում, հաշվի են առնվում կանխատեսումների իրականացման հնարավոր բացասական հետևանքները և դրանց հաղթահարման ուղիները:

Հեռանկարային ֆինանսական պլանավորումը մշակվում է երեք տարվա կտր-

վածքով, որից առաջին տարում կազմվում է բյուջե: Սյուս երկու տարիները դիտվում են որպես պլանային ժամանակաշրջան, որի ընթացքում հետևում են առաջադրված տնտեսական քաղաքականության իրական հետևանքներին: Հեռանկարային ֆինանսական պլանը, որպես կանոն, յուրաքանչյուր տարի ճշգրտվում է՝ ելնելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշներից, ընդ որում, պլանային ժամանակաշրջանը մշակվում է մեկ տարով:

Ֆինանսական ռեսուրսների հաշվեկշիռն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության, տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ու ծախսերի ամբողջություն: Հաշվեկշիռը կազմելու հիմք են ընդունվում նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռի փաստացի կատարողական ցուցանիշները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները, որոնք հիմք են ծառայում բյուջեի նախագիծը կազմելու համար: Պետության ամփոփ ֆինանսական հաշվեկշիռը կազմվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից: Սրա դերն այն է, որ հնարավորություն է ստեղծվում կապակցել ազգային տնտեսության մեջ նյութական ու ֆինանսական համամասնությունները, հանրագումարի բերել ֆինանսավարկային համակարգի բոլոր օղակների դրամական միջոցները, ինչը թույլ է տալիս սահմանել կանխատեսված միջոցառումների իրականացման անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները: Միաժամանակ, որոշվում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների պահանջները, կատարվում են կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական հաշվարկներ:

Ֆինանսական պլանավորման ու կանխատեսումների կարևոր հատվածներից մեկն էլ բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն է: Բնակչության դրամական եկամուտները ձևավորվում են հիմնականում աշխատավարձից ու պարգևատրումներից, սոցիալական բնույթի վճարումներից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից, ինչպես նաև սոցիալական տրանսֆերտներից (պետական կենսաթոշակներ, զանազան տեսակի նպաստներ և այլն): Ինչ վերաբերում է ծախսերին, ապա դրանք ստորաբաժանվում են սպառողական ծախսերի, հարկերի ու այլ պարտադիր վճարների, դրամական կուտակումների և խնայողությունների:

Բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն օգտագործվում է երկրի կանխիկ դրամաշրջանառությունը, մանրածախ ապրանքաշրջանառությունը, հարկային մուտքերը և վարկային ռեսուրսները պլանավորելու համար:

2.2.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կառավարման արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է դրամական հոսքերի, դրամական հարաբերությունների և դրանց առնչվող գործընթացների ֆինանսական պլանավորման մակարդակով: Ֆինանսական պլանավորումը բավականին դժվար, աշխատատար գործընթաց է, որն ամփոփում է տնտեսավարող սուբյեկտները

րի գրեթե բոլոր ծառայությունների գործունեության արդյունքները: Ֆինանսական պլանավորման գլխավոր խնդիրն այն է, որ առաջիկա տնտեսական ժամանակաշրջանում հիմնավորի կազմակերպությունների գործունեության ռազմավարությունը ապրանքային, ֆինանսական, տեղեկատվական և այլ շուկաներում այն հաշվով, որպեսզի պահպանվի օպտիմալ հավասարակշռություն եկամտաբերության և իրացվելիության մակարդակների միջև: Գործնականում եկամտաբերության բարձրացումը կապված է տնտեսավարող սուբյեկտների արտադրության ծավալների մեծացման ու նոր շուկաների նվաճման հետ, որը ձեռք է բերվում ինվեստիցիաների շնորհիվ և ուղեկցվում է իրացվելիության մակարդակի իջեցումով: Այս հակասության լուծումը ֆինանսական մեներջերի աշխատանքի գլխավոր խնդիրն է: Եթե կազմակերպությունների ընթացիկ իրացվելիությունը, վճարունակությունը և, հետևաբար, ֆինանսական կայունության ապահովումը հիմնականում վերաբերում են կառավարման տակտիկական խնդիրներին, ապա եկամտաբերության շարունակական բարձրացումը հանդիսանում է ռազմավարական խնդիր: Այս խնդրի լուծման դժվարությունն այն է, որ տնտեսավարող սուբյեկտները լավագույն դեպքում կարող են միայն հետաձգել ներդրումները, բայց չկատարել չեն կարող:

Ֆինանսական պլանավորման նշանակությունն այն է, որպեսզի մշակվեն կոնկրետ ֆինանսական ցուցանիշներ ինչպես ռազմավարական, այնպես էլ մարտավարական խնդիրների լուծման համար, ֆինանսական ռեսուրսներով ապահովվեն արտադրական պլանով նախատեսված տնտեսական զարգացման համամասնությունները, հնարավորություն ստեղծվի իրականացնել նախատեսված ինվեստիցիոն ծրագրերը մրցակցության պայմաններում:

Տնտեսավարող սուբյեկտներում ֆինանսական պլանավորման հիմնական խնդիրներն են ֆինանսական ռեսուրսներով ապահովել արտադրական, ինվեստիցիոն և ֆինանսական գործունեությունը, որոշել ինվեստիցիոն ներդրումների ծավալը և ֆինանսավորման աղբյուրները, կատարել դրամական հոսքերի դիսկոնտավորում, սահմանել ռացիոնալ ֆինանսական փոխհարաբերություններ պետական բյուջեի, առևտրային բանկերի և այլ տնտեսավարող սուբյեկտների հետ, հսկողություն սահմանել կազմակերպության ֆինանսական դրության, վճարունակության և վարկունակության նկատմամբ, ինչպես նաև պահպանել բաժնետերերի և այլ կրեդիտորների շահերը:

Ֆինանսական պլանավորման միջոցով հնարավորություն է ստեղծվում ապահովելու կազմակերպությունների նյութական ու ֆինանսական ռեսուրսների միջև հավասարակշռություն նախատեսված ծախսերը դրանց իրականացման իրական հնարավորությունների հետ համաչափելու միջոցով: Ֆինանսական պլանի հողվածները կապված են կազմակերպությունների արտադրանքի արտադրության, տեխնիկական զարգացման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության այլ բնագավառների հիմնական ցուցանիշների հետ և դրանով ներգործում են կազմակերպության ողջ գործունեության վրա:

Ֆինանսական պլանները լինում են ռազմավարական կամ երկարաժամկետ, ընթացիկ կամ կարճաժամկետ:

Ռազմավարական ֆինանսական պլանը մշակվում է՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտների բիզնեսի զարգացման շահերից: Սակայն հաշվի է առնվում նաև երկրում

իրականացվող պետական ֆինանսական քաղաքականությունը, մասնավորապես՝ հարկային և մաքսային, ինչպես նաև ինֆլյացիոն գործընթացը:

Ռազմավարական պլանի մեջ արտացոլվում են առաջիկա հեռանկարում կազմակերպությունների համար անհրաժեշտ ինվեստիցիոն միջոցների ծավալը և դրանց օգտագործման ժամկետները, ֆինանսական ռեսուրսների հնարավոր աղբյուրները և դրանց իրականացման արդյունքում ակնկալվող արտադրության շահութաբերության մակարդակը:

Հեռանկարային ֆինանսական պլանավորումը կարևոր նշանակություն ունի որոշելու ընդլայնված վերարտադրության տեմպերը և համամասնությունները կազմակերպությունների հիմնական նպատակների իրացման գործում: Ժամանակակից պայմաններում այն ընդգրկում է մեկից երեք տարի ժամանակաշրջան, թեև նման ժամանակահատվածը պայմանական է, քանի որ կախված է տնտեսական կայունությունից և ֆինանսական ռեսուրսների ծավալի կանխատեսման հնարավորություններից: Հեռանկարային պլանավորումը կազմակերպությունների տնտեսական զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասն է: Այդ պատճառով նրա հիման վրա որոշվում է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական քաղաքականությունն ըստ ֆինանսական գործունեության կոնկրետ ուղղությունների: Մասնավորապես, որոշվում է հարկային, ամորտիզացիոն, շահաբաժնային քաղաքականությունը և այլն:

Ֆինանսական ռազմավարական քաղաքականությունը մշակելիս կարևոր նշանակություն ունի ռիսկի գործոնը հաշվի առնելը:

Տնտեսավարող սուբյեկտներն իրականացնում են նաև ընթացիկ ֆինանսական պլանավորում, որը ռազմավարական պլանավորման բաղկացուցիչ մասն է և մշակվում է՝ ելնելով կոնկրետ ցուցանիշներից՝ հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք կատարվել են նախորդ ժամանակաշրջանում:

Ընթացիկ ֆինանսական պլանավորման հիմնական խնդիրն է որոշել ֆինանսական ռեսուրսների ծավալը, որը հնարավորություն կտա իրականացնել արտադրական, ինվեստիցիոն, մարքեթինգային, գիտահետազոտական գործունեություն, լուծել սոցիալական բնույթի հարցեր: Այդ նպատակով պլանավորվում են արտադրանքի արտադրության և իրացման ինքնարժեքը, դրամական հոսքերը, շահույթի ծավալը և ինվեստիցիաներից ակնկալվող եկամտաբերությունը:

Ընթացիկ ֆինանսական պլանավորման գործընթացում նախ՝ հետազոտում ու վերլուծում են կազմակերպությունների ֆինանսական արդյունքները և ապա՝ մշակվում ֆինանսական հաշվետվությունների կանխատեսումների տարբերակներ՝ օպերատիվ պլաններում տեղի ունեցած փոփոխությունների հիման վրա: Այնուհետև որոշվում են ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջները, որոնք անհրաժեշտ են պլանային առաջադրանքների կատարման համար, կանխատեսվում են ֆինանսավորման աղբյուրները և դրանց կառուցվածքը:

Ազատ շուկայի պայմաններում ֆինանսական պլանավորումը ընդգրկվում է բիզնես-պլանի կազմի մեջ և հանդիսանում է նրա վերջին ամփոփ բաժինը: Ընդ որում, ֆինանսական պլանը բիզնես-պլանի կազմում մշակվում է մի քանի ուղղություններով: Ամենից առաջ կանխատեսվում է վաճառքի ծավալը, և մշակվում են շուկաների նվաճման նախագծային ցուցանիշներ: Այնուհետև սահմանվում են տարեկան դրամական հոսքերը և ֆինանսական արդյունքները, անհրաժեշտ ինվեստիցիաների ծա-

վալը և ֆինանսավորման աղբյուրները: Պլանավորման գործընթացն ուղեկցվում է տարբեր տեսակի հաշվարկներով (արտադրանքի ինքնարժեքի, շահույթի, դրամական միջոցների շարժի և այլն):

Ընթացիկ ֆինանսական պլանը կազմվում է եռամսյակային կտրվածքով, ինչը հնարավորություն է տալիս սահմանել օպերատիվ հսկողություն պլանային ցուցանիշների կատարման նկատմամբ:

Ֆինանսական պլանավորումը ստեղծագործական գործընթաց է, քանի որ ֆինանսական ցուցանիշները փոխկապակցվում են կազմակերպությունների գործունեության բոլոր բնագավառների ցուցանիշների հետ:

2.2.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՒՎՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շուկայական հարաբերություններով պայմանավորված տնտեսական վերափոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց և աստիճանական իր զարգացումն ստացավ տնտեսական սուբյեկտների կապիտալի օգտագործման նոր՝ առավել արդյունավետ համակարգ՝ հանձինս կորպորատիվ կառույցների: Դրանով նպաստավոր պայմաններ են ստեղծվում ֆինանսական ռեսուրսների կենտրոնացված կառավարման, նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման համար, որը տանում է կազմակերպությունների (ծեռնարկությունների) ինվեստիցիոն գրավչության և շահութաբերության բարձրացմանը:

Կորպորատիվ կառույցներն իրենցից ներկայացնում են այնպիսի ձեռնարկչատիրական կազմակերպություններ, որոնք թույլ են տալիս ստեղծել գործընկերային փոխհարաբերություններ պետության ու կազմակերպությունների (ծեռնարկությունների) միջև, փոքր ու մեծ բիզնեսի միջև, տարբեր տնտեսվարական սուբյեկտների միջև:

Աշխարհում կորպորացիան բնորոշվում է որպես անհատների ամբողջական միավորում, որոնք նպատակադրվել են համատեղ ուժերով ու ջանքերով իրականացնել ընդհանուր նպատակներ հետապնդող գործունեություն՝ իրավաբանական անձի կարգավիճակով: Կորպորացիան՝ որպես իրավաբանական անձ, իրավունք ունի իր տրամադրության տակ ունենալ սեփականություն, օգտվել փոխատվություններից, կնքել պայմանագրեր տնտեսական ու ֆինանսական գործարքներ կատարելու համար:

Կորպորացիաների մասին առաջին հիշատակումները կապված են XVII դարի հետ: Դրանց համաձայն՝ դրանք ստեղծվել են Ամստերդամում և Լոնդոնում բաժնետիրական ընկերությունների տեսքով: Այսօր էլ ամբողջ աշխարհում կորպորացիաները ստեղծվում են մեծ մասամբ բաժնետիրական ընկերությունների ձևով: Հայաստանի Հանրապետությունում նույնպես շուկայական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց գործող արտադրական ձեռնարկություններն ու կազմակերպությունները աստիճանաբար վերածվեցին բաժնետիրական կազմակերպությունների՝ կորպորացիաներին բնորոշ կազմակերպչական կառուցվածքի հատկանիշներով: Այնպես որ ՀՀ-ում գործող բաժնետիրական ընկերությունների տեսքով

կազմավորված ձեռնարկություններն (կազմակերպությունները) ու ֆիրմաները, ըստ էության, հանդես են գալիս որպես կորպորատիվ կառույցներ: Ուստի տնտեսվարական սուբյեկտների կազմի մեջ մտնում են նաև կորպորատիվ կառույցները:

Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ կորպորացիան անցել է ձևավորման ու զարգացման տևական ժամանակաշրջան: Կորպորացիայի պարզ ձևը հանդիսանում է, այսպես կոչված, անհատական տիրապետում, որը առանձնանում է նրանով, որ բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է մեկ անձի, ընտանիքի կամ բաժնետերերի նեղ խմբի: Անհատական տիրապետման առանձնահատկությունն այն է, որ ֆիրմայի բոլոր ակտիվները և պարտավորությունները հանդիսանում են միաժամանակ նրա տիրոջ անձնական ունեցվածքը և պարտավորությունը: Անհատ սեփականատերն ունի անսահմանափակ պարտավորություն և պատասխանատվություն ֆիրմայի պարտքերի և պարտավորությունների գծով: Սա նշանակում է, որ եթե ֆիրման ի վիճակի չէ վճարել պարտքերը և բավարարել կրեդիտորների պահանջները, ապա կարող է կալանք դրվել նրա ցանկացած ունեցվածքի վրա:

Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ շատ ֆիրմաներ իրենց գործունեությունը որպես կորպորացիա սկսում են անհատական սեփականատերերի կարգավիճակով: Յետագայում իրենց գործունեությունն աստիճանաբար ընդլայնելուն և ամրապնդելուն զուգընթաց փոխում են իրենց կազմակերպչական կառուցվածքը: Սակայն քիչ չեն նաև դեպքերը, երբ անհատական սեփականատերերը մինչև վերջ իրենց գոյության ընթացքում մնում են ֆիրմայի փակ սեփականատերը:

Անհատական սեփականատերերի կարգավիճակը Արևմուտքում դիտվում է որպես բիզնեսի կազմակերպման երեք ձևերից մեկը: Բիզնեսի կազմակերպման երկրորդ ձևը կոչվում է ընկերություն: Վերջինս հանդիսանում է ֆիրմայի երկու և ավելի սեփականատերերի սեփականություն: Նրանք հանդես են գալիս որպես գործընկերներ և համատեղ են տիրապետում ֆիրմայի կապիտալը: Ֆինանսական կառավարումը դրսևորվում է նրանով, որ վաղօրոք կնքվում են, այսպես կոչված, գործընկերային համաձայնագրեր, որտեղ նշվում են, թե ինչպես պետք է ընդունվեն տնտեսական և ֆինանսական վճիռները, ինչպես պետք է բաշխվեն ֆիրմայի շահույթը, և ծածկվի վնասը: Եթե համաձայնագրերում այլ բան չի նախատեսվում, ապա բոլոր գործընկերները, ինչպես անհատական տիրապետման դեպքում, կրում են անսահմանափակ պատասխանատվություն պարտավորությունների գծով: Սակայն հնարավոր է նախատեսել սահմանափակ պատասխանատվություն առանձին գործընկերների համար: Ընդ որում առնվազն գործընկերներից մեկը կկոչվի գլխավոր գործընկեր, որն էլ կկրի անսահմանափակ պատասխանատվություն ֆիրմայի պարտավորությունների գծով: Մնացած գործընկերները, որոնց անվանում են նաև կոմմանտներ, չեն մասնակցում ամենօրյա վճիռների ընդունմանը, որոնք վերաբերում են ֆիրմայի գործունեությանը: Վերջինս մտնում է գլխավոր գործընկերոջ իրավասության մեջ:

Բիզնեսի կազմակերպման դասական եղանակը համարվում է կորպորացիան: Ի տարբերություն անհատ սեփականատերի կարգավիճակի, որը ՅՅ-ում կարելի է նմանեցնել անհատ ձեռներեցի կարգավիճակին, ինչպես նաև ընկերության կարգավիճակին, կորպորացիան հանդիսանում է բիզնեսի կազմակերպման առավել կատարյալ ձև: Այն հանդես է գալիս որպես ինքնուրույն իրավաբանական անձ և գործում է անկախ իր սեփականատերերից:

Կորպորացիայի կառավարումն իրականացվում է հիմնադիր փաստաթղթերի հիման վրա: Բաժնետերերը իրավունք ունեն ստանալու կորպորացիաների ցանկացած եկամտի մի մասը՝ դիվիդենդների տեսքով՝ համաձայնորեն ելնելով իրենց ունեցած բաժնետոմսերի քանակից: Նոր կորպորացիա կազմակերպելիս նախաձեռնող խմբի կողմից հրավիրվում է հիմնադիր ժողով, որն էլ ընդունում է կորպորացիայի կանոնադրությունը, որի մեջ նշվում է ֆիրմայի անվանումը, ընտրում է տնօրենների խորհուրդը նշանակալից բաժնետերերի կազմից: Վերջինս էլ իր հերթին նշանակում է գործադիր տնօրեն կորպորացիայի գործերը կառավարելու համար: Սովորաբար մեկ բաժնետոմսը ունի մեկ ձայն բաժնետերերի ժողովում: Սակայն Արևմուտքում գոյություն ունեն բաժնետոմսերի տարբեր կարգեր, որոնք ապահովում են ձայների տարբեր իրավունքներ:

Կորպորատիվ կառույցներն ունեն կազմակերպչական որոշակի առավելություններ բիզնեսի կազմակերպման մյուս ձևերի նկատմամբ: Առաջին, թերևս ամենակարևոր առավելությունն այն է, որ նրա բաժնետոմսերը կարող են փոխանցվել այլ սեփականատերերի՝ առանց խախտելու ֆիրմայի բնականոն գործունեությունը: Մյուս առավելությունն արտահայտվում է նրանում, որ բաժնետերերը ունեն սահմանափակ պատասխանատվություն, ինչը նշանակում է, որ եթե կորպորացիան ի վիճակի չէ վճարելու պարտքերը, ապա կրեդիտորները իրավունք ունեն կալանք դնել կորպորացիայի ակտիվների վրա, բայց ոչ բաժնետերերի անձնական ունեցվածքի վրա:

Ավանդաբար Արևմուտքում ձեռնարկությունների, կոմպանիաների, տնտեսական միավորումների, առևտրային կազմակերպությունների համար որպես ամենաընդհանուր անվանում հանդես է գալիս ֆիրման, բայց վերջինս միաժամանակ դիտվում է տնտեսական գործունեության սուբյեկտ կամ, ինչպես ԶԳ-ում է ընդունված, տնտեսավարական սուբյեկտ: Ընդ որում այդ տնտեսավարական սուբյեկտի հիմնական ֆունկցիան է ապրանքների արտադրությունը կամ ծառայությունների մատուցումը, ինչը ԶԳ-ում մեծ մասամբ կատարում են արտադրական ձեռնարկությունները (կազմակերպությունները): Փաստորեն, կորպորացիաների տնտեսական հիմքը կազմում է ֆիրման: Արևմուտքում ֆիրմայի մակարդակով ֆինանսների բնագավառը ընդունված է անվանել կորպորատիվ ֆինանսներ:

Արտադրական գործընթացն իրականացնելու համար ցանկացած ֆիրմայի անհրաժեշտ է ունենալ բավարար ծավալի կապիտալ: Անհրաժեշտ է ստեղծել շենքեր, կառույցներ, ձեռք բերել մեքենաներ ու սարքավորումներ և այլ անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ամբողջությունը կոչվում է ֆիզիկական կապիտալ: Իսկ դրանք ձեռք բերելու համար բաժնետոմսերի, պարտատոմսերի, փոխառվածությունների ամբողջությունը կրում է «ֆինանսական կապիտալ» անվանումը:

Ցանկացած ֆիրմայի առաջնահերթ խնդիրն է որոշել, թե ինչպիսի բիզնեսով է ցանկանում զբաղվել: Այդ գործընթացը կոչվում է ռազմավարական պլանավորում: Եվ քանի որ ռազմավարական պլանավորումը կապվում է եկամուտների ու ծախսերի գնահատման հետ՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը, ապա այն վերաբերում է ֆինանսական կառավարման բնագավառին:

Կորպորացիաներում ֆինանսական կառավարման կարևոր բնագավառներից մեկը հանդիսանում է շինարարության պլանի կազմումը, որը հիմնականում հանգում է

ինվեստիցիաների պլանավորմանը: Դրա համար ելակետ են ծառայում ինվեստիցիոն նախագծերը: Ինվեստիցիաների պլանավորումն այն է, որպեսզի որոշվեն յուրաքանչյուր նոր ինվեստիցիոն նախագծի հիմնական մոտեցումները, դրանց գնահատումը, առավել շահավետ մտահղացումների ընտրությունը և դրանց իրացման եղանակների մշակումը:

Ֆինանսական կառավարման հաջորդ փուլը վերաբերում է դրանց ֆինանսավորման կազմակերպմանը:

Կարևոր խնդիր է հանդիսանում կապիտալի օպտիմալ կառուցվածքի սահմանումը, որի համար ելակետ է ընդունվում ոչ թե առանձին ինվեստիցիոն նախագիծը, այլ ամբողջությամբ վերցրած կորպորացիան (ֆիրման): Կորպորացիայի կապիտալի կառուցվածքի գործընթացը սկսվում է ֆիրմայի գործունեության ֆինանսական պլանի մշակումով, որից հետո կարելի է ձեռնամուխ լինել ֆինանսական աղբյուրների օպտիմալ կառուցվածքի մշակմանը:

Մասամբ կապիտալի կառուցվածքից է կախված կորպորացիաների առանձին ստորաբաժանումների (ֆիրմաների, կոմպանիաների) գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը: Նախ պետք է նշել, որ բաժնետերերը, որպես կանոն, ֆիրման կառավարելու համար իրենց ներկայացուցիչներին են ընտրում դիրեկտորների (տնօրենների) խորհրդում, ինչն արդեն վերահսկողություն է նշանակում: Բացի դրանից, նրանք հնարավորություն ունեն հետևելու բոլոր այն պայմանագրերում և համաձայնագրերում նախատեսված պայմանների պահպանմանը, որոնք կնքվում են կրեդիտորների հետ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու համար, ինչն իր մեջ վերահսկողության տարրեր է պարունակում:

Կորպորացիաների ֆինանսատնտեսական գործունեության հաջողությունը զգալի չափով պայմանավորված է նրանով, թե ինչպես են կառավարում շրջանառու կապիտալը: Ֆինանսական դեպարտամենտների և մենեջերի խնդիրն է շարունակ հետևել, թե ինչպես են կառավարվում երկարաժամկետ պլանով նախատեսված ցուցանիշները և դրանցից բխող ընթացիկ ֆինանսական պլանի ցուցանիշները: Ֆինանսական կառավարման կարևորագույն խնդիրն է, կորպորացիան և նրա առանձին ստորաբաժանումներն իրենց ամենօրյա գործունեությունն իրականացնելու համար չունենան դրամական միջոցների պակաս և, մյուս կողմից, կուտակված միջոցները օգտագործեն ինվեստավորման նպատակով:

Բոլոր դեպքերում շրջանառու կապիտալի կառավարման և այդ թվում նաև ֆինանսավորման արդյունավետությունը զգալի չափով պայմանավորված են այնպիսի գործոններով, ինչպիսիք են ձեռնարկատիրական գործունեության կառավարման համակարգը, հարկային քաղաքականությունը, մրցակցային միջավայրը: Առանց նշված գործոնները հաշվի առնելու ոչ մի ֆինանսական վճիռ հաջողություն չի կարող ունենալ:

Գործնականում բոլոր վճիռները, որոնք ընդունում են կորպորացիաները այս կամ այն ձևով, հանդիսանում են ֆինանսական այնքանով, որքանով դրանք կապված են առաջիկա եկամուտների և ծախսերի տարբեր տարբերակների գնահատման ու ընտրության հետ: Խոշոր կորպորացիաների զրեթե բոլոր կառավարչական անձնակազմերը՝ սկսած տնօրեններից և վերջացած բոլոր ներքին ստորաբաժանումներով (արտադրական, մարքեթինգ և այլն), օգտվում են ֆինանսական դեպարտամենտի մասնագետների ծառայություններից:

Ֆինանսական մենեջերի ֆունկցիաները կորպորացիաներում բաղկացած են մի շարք հատվածներից: Դրանք են.

- երկարաժամկետ և կարճաժամկետ ֆինանսական պլանների կազմում,
- ապահովումը կապիտալով,
- դրամական ֆոնդերի կառավարում,
- հաշվապահական հաշվառման վարում,
- ակտիվների պաշտպանություն,
- հարկերի գծով գործարքների կառավարում,
- ինվեստորների հետ փոխհարաբերությունների վարում և կարգավորում,
- տեղեկատվական համակարգի կառավարում:

Քանի որ կորպորացիաների կառավարչական անձնակազմը որոշում են բաժնետերերը նրանց կողմից ընտրված տնօրենների խորհրդի միջոցով, ապա մենեջերների առաջնահերթ խնդիրն է իրականացնել այնպիսի քաղաքականություն և ընդունել այնպիսի վճիռներ, որոնք հնարավորինս համապատասխանեն բաժնետերերի շահերին: Սակայն մենեջերը նաև պարտավոր է պահպանել օրենքը, հարգել էթիկական նորմերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նպաստել տարբեր բնույթի սոցիալական խնդիրների լուծմանը, եթե դրանց լուծումը չի պահանջում մեծ ծախսեր, որոնք կվնասեն բաժնետերերի շահերին:

Արևմտյան փորձը ցույց է տալիս, որ եթե նույնիսկ հնարավոր լինի սահմանափակել կորպորատիվ մենեջերների գործունեության ոլորտները, ընդհուպ մինչև բացառապես բաժնետերերի շահերին ծառայելը, միևնույնն է, մենեջերների նպատակների իրականացման հստակ սահմաններ ուրվագծել հնարավոր չէ: Այս պարագան պայմանավորված է նրանով, որ կորպորատիվ ֆինանսական կառավարումն ունի մի շարք միայն այս ոլորտին հատուկ առանձնահատկություններ:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ կորպորատիվ կառույցներում կառավարումը բաժանված է նրա սեփականության իրավունքից: Սկզբունքորեն մենեջերները կարող են բաժնետերերի հետ քննարկել ցանկացած բիզնեսի հետ առնչվող ցանկացած վճիռ, այդ թվում նաև ապրանքների արտադրության ծավալի, նրա տեսական, ծառայության մատուցելու և այլ բնույթի հարցեր: Սակայն նման պարագայում բաժնետերերը կկորցնեն բավականաչափ ժամանակ, ինչը նրանց համար ձեռնտու չէ բոլոր տեսակետներից: Ուստի նրանք գերադասում են կառավարման պարտականություններ դնել հմուտ, փորձված, պրոֆեսիոնալ մենեջերների վրա: Բացի դրանից, մանավանդ խոշոր կորպորացիաներն ունեն բազմահազար բաժնետերեր, որոնց բաժնետոմսերը շարունակ ձեռքից ձեռք են անցնում, որը և հանգեցնում է նրան, որ անընդհատ փոփոխվում է սեփականատերերի կազմն ու կառուցվածքը: Այդ պատճառով մենեջերների հիմնական խնդիրը կախված չի կորպորացիաների սեփականատերերի կազմից ու կառուցվածքից:

Մյուս կարևոր առանձնահատկությունը, որը վերաբերում է կորպորացիաների ֆինանսական կառավարման բնագավառին, այն է, որ բիզնեսում արդյունավետության հասնելու համար հաճախ անհրաժեշտ է միավորել շատ իրավաբանական և ֆիզիկական անձանց ֆինանսական ռեսուրսները, որոնք հետաքրքրված են միայն դիվիդենդներ ստանալու հանգամանքով: Ոչ պակաս նշանակություն ունի նաև այն պարագան, որ ինվեստորներն իրենց միջոցները ներդնում են միաժամանակ տարբեր

Ֆիրմաներում՝ նպատակ ունենալով հնարավոր ռիսկերից առաջացած կորուստները փոխհատուցելու, ինչը պրակտիկորեն անհնար է առանց սեփականության իրավունքի անջատմանը կառավարման գործընթացից: Եվ վերջապես, սեփականության իրավունքի և կառավարման տարանջատման դեպքում տեղի է ունենում տեղեկատվական ծախսերի խնայողություն:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ կորպորատիվ կառույցներում կառավարման ֆունկցիայի առանձնացումը սեփականության իրավունքից առավել մեծ չափով է համապատասխանում բիզնեսի կազմակերպման կորպորատիվ ձևին, քանի որ թույլ է տալիս ապահովել ֆիրմայի, կոմպանիայի բնականոն գործունեությունը բավականին հաճախ տեղի ունեցող սեփականատերերի կազմի ու կառուցվածքի փոփոխության պայմաններում:

Կորպորացիաներում ֆինանսական կառավարման արդյունավետությունը զգալի չափով պայմանավորված է նրանով, որ զգալի ֆինանսական ռեսուրսներ է կենտրոնացվում բաժնետիրական ընկերությունների կանոնադիր կապիտալում, ինչը հնարավորություն է տալիս իրացնելու մեծածավալ ինվեստիցիոն նախագծեր, որը հնարավոր չէ կատարել փոքր ու միջին կապիտալի պայմաններում: Մյուս կողմից դա հնարավորություն է տալիս կորպորացիաների միջոցները դարձնել առավել պակաս ռիսկային, այնքանով, որքանով սահմանափակ պատասխանատվությունը թույլ է տալիս վերացնել բաժնետերերի գույքային պատասխանատվությունը անհաջող կոմերցիոն գործունեության դեպքում: Եթե կորպորացիաներին անհրաժեշտ է լրացուցիչ սեփական կապիտալ, ապա նրանք իրավունք ունեն թողարկել նոր բաժնետոմսեր և այդ ճանապարհով ընդգրկել այլ ինվեստորներ: Արևմուտքում խոշոր կորպորացիաները ունեն հարյուրհազարավոր բաժնետերեր:

Ժամանակակից պայմաններում արևմտյան զարգացած երկրներում ձեռնարկչատիրական կորպորատիվ ձևը հանդիսանում է հիմնականը, և գնալով ընդլայնվում են դրանց գործունեության մասշտաբները: Այսպես՝ մասնագետների զնահատմամբ՝ ներկայումս արտասահմանում հաշվվում են քառասուն հազար միջճյուղային միավորումներ, որոնք ունեն կորպորատիվ կառույցների հատկանիշներ: Դրանք ընդգրկում են մոտ 180 հազար բաժանմունքներ 150 երկրներում: Ընդգրկում են զարգացած երկրների արդյունաբերական արտադրանքի և առևտրի մինչև 50%–ը, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի մոտ 80%–ը¹: Գործնականում կապիտալի կենտրոնացումը և համակենտրոնացումը ելակետային բազա են հանդիսանում կորպորատիվ կառույցների ձևավորման ու զարգացման համար:

Կորպորատիվ կառույցների բուռն զարգացմանը և ծավալմանը զուգահեռ արևմտյան զարգացած երկրներում առաջ եկան կազմակերպչական նոր միավորումներ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է հոլդինգներին և ֆինանսարդյունաբերական խմբերին, որոնք հանդես են գալիս կորպորատիվ կառույցների հատկանիշներով: Դրանց ուղղությամբ ինչպես ԱՊՀ տարածքում (հատկապես Ռուսաստանում) ու մասնավորապես ՀՀ–ում միայն առաջին քայլերն են կատարվում:

Հոլդինգները այնպիսի կորպորատիվ կառույցներ են, որոնք կառավարում կան վերահսկում են այլ ձեռնարկությունների (կազմակերպությունների), կոմպանիաների գոր-

¹ В.В. Бочаров, В.Е. Леонтьев, Корпоративные финансы, изд. “Питер”, Санкт–Петербург, Москва, Харьков, Минск, 2002, с. 29.

ծունեությունը: Միջազգային պրակտիկայում հոլդինգային կոմպանիան առաջատար տեղ կարող է զբաղեցնել միայն այն դեպքում, եթե տիրապետում է բաժնետոմսերի ծրարի զգալի մասը: Ընդ որում ինքը՝ հոլդինգային կոմպանիան, կարող է և չտիրապետել սեփական արտադրական պոտենցիալի և չզբաղվել արտադրական կամ կոմերցիոն գործունեությամբ: Այդ պատճառով միջազգային պրակտիկայում գոյություն ունի երկու տիպի հոլդինգ: Դրանցից մեկը կոչվում է զուտ հոլդինգ, եթե չի զբաղվում արտադրական, կոմերցիոն կամ բանկային գործունեությամբ, իսկ մյուսը՝ խառը հոլդինգ, երբ ինքն է զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ տարբեր ոլորտներում:

Երկրորդ հզոր կորպորատիվ կառույցները, ինչպես արդեն նշվեց, կոչվում են ֆինանսարդյունաբերական խմբեր (ՖԱԽ): Սրանց բնորոշ հատկանիշը արտահայտվում է նրանում, որ երկրի մակարդակով գրանցված իրավաբանորեն անկախ ձեռնարկությունների (կազմակերպությունների), ֆինանսական և ինվեստիցիոն ինստիտուտների խումբ է, որոնց մասնակիցները միավորել են իրենց նյութական ռեսուրսները և կապիտալը: Որպես ՖԱԽ-ի գլխամասային կազմակերպություն կարող են հանդես գալ արդյունաբերական ստորաբաժանումները, ինչպես նաև բանկերը և ֆինանսական կոմպանիաները:

Հոլդինգային կոմպանիաների առանձնահատկությունն այն է, որ հնարավորություն է տալիս մենեջերին իրեն ենթարկել նույնիսկ այնպիսի կոմպանիաների, որոնց կապիտալը շատ անգամ գերազանցում է սեփական կապիտալը: Այդ նպատակով հոլդինգները ձգտում են ձեռք բերել ուրիշ ֆիրմաների հսկիչ ծրարները և դրանով հնարավորություն են ստանում իրենց ներկայացուցիչները նշանակել տնօրենների խորհրդում: Փաստորեն այլ կոմպանիաների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար, այսպես կոչված, մայր հոլդինգը լայնորեն օգտագործում է սեփական մասնակցությունը այլ ֆիրմաների կապիտալում:

Հոլդինգային կառույցների հաջողությունը զգալի չափով պայմանավորված է նրանով, որ նշանակալից ֆինանսական կորուստներ հոլդինգի ցանկացած մասնակցի մոտ չեն առաջանում: Ըստ էության տեղի է ունենում ռիսկի չեզոքացում, այնքանով, որքանով հոլդինգի ներսում յուրաքանչյուր առանձին վերցրած կոմպանիա հանդիսանում է ինքնուրույն իրավաբանական անձ, և դրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունները առանձնանում են մյուսների պարտավորություններից:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ հաճախ է տեղի ունենում երկու և ավելի կոմպանիաների միաձուլում: Այդ նպատակով դրանցից շատերը կնքում են համաձայնագրեր միմյանց հետ և դրանց հիման վրա ստեղծում են այսպես կոչված կորպորատիվ այլանս, որը, ըստ էության, ձուլում է նշանակում:

Այլանսները գործնականում հանդես են գալիս տարբեր ձևերով: Համաձայնագրեր կնքելու համար օբյեկտ կարող են հանդիսանալ արտահանման միասնական շուկայի օգտագործումը, համատեղ սեփականությունը, տարբեր բնույթի գործառնությունները:

Շատ հզոր կորպորատիվ տիպի կառույցներ իրականացնում են արտասահմանյան գործառնություններ և այդ պատճառով կոչվում են տրանսազգային կոմպանիաներ (ՏԱԿ)՝ նկատի ունենալով, որ արտասահմանյան բաժանմունքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը չափազանց դժվար խնդիր է, այդ պատճառով մասնագետների համալրումը նպատակահարմար է կատարել տեղական կադրերով:

Գլխավոր հոլդինգը տրանսազգային կոմպանիաների համար առաջադրում է մոտավորապես հետևյալ գործառույթները.

- մշակում է տնտեսական, արտադրական և մարքեթինգային ռազմավարություն որոշակի ժամանակահատվածի համար,
- իրականացնում է բաժանմունքների միասնական ֆինանսական քաղաքականություն,
- կատարում է խոշոր մասշտաբի գիտահետազոտական աշխատանքներ:

Արևմտյան զարգացած երկրներում տրանսազգային կորպորացիաների ծագումը պայմանավորված է նրանով, որ հրատապ են դառնում իրացման նոր շուկաների որոնումը և յուրացումը, մասնավորապես՝ հունքի, էներգոռեսուրսների նոր աղբյուրների որոնումը: Դրա համար մղվող պայքարը քաղաքական բնույթ է ստանում: Պակաս կարևոր չէ նաև պայքարը նոր տեխնոլոգիաների համար: Չպետք է աչքաթող անել կորպորացիաների բազմաբնույթ գործունեություն իրականացնելու անհրաժեշտությունը, ինչը թույլ է տալիս չեզոքացնել անբարենպաստ իրադրության հետևանքով առաջացած հնարավոր կորուստները:

Մեծ հաշվով կորպորացիաների ֆինանսական կառավարման գործընթացը նպատակամղված է նրան, որպեսզի թույլ չտրվեն նրա մեջ մտնող առանձին օղակների սննկացում կամ ֆինանսական կորուստներ, առաջատար դիրք գրավեն մրցակցային պայքարում և մաքսիմալի հասցնեն «ֆիրմայի զնի» մակարդակը: Այս խնդրի իրականացման համար ելակետ է ծառայում Արևմուտքում բավականին տարածված «ֆիրմայի զնի» մաքսիմալացման տեսությունը: Սրա կողմնակիցները գտնում են, որ գոյություն ունեցող ոչ մի չափանիշ (վաճառքի ծավալ, շահույթ, շահութաբերություն և այլն) չի կարող դիտվել արդյունավետության չափանիշ, երբ հարկ է լինում ընդունել ֆինանսական և ինվեստիցիոն վճիռներ: Ընդ որում, ընդունվող վճիռների համար ելակետային չափանիշ են դիտվում կորպորացիաների սեփականատերերի եկամուտների մաքսիմալացումը, բաժնետիրական կապիտալի շուկայական արժեքի բարձրացումը: Ենթադրվում է, որ այդ նպատակին չի կարող ծառայել շահույթի մաքսիմալացման խնդիրը հետևյալ երկու պատճառներով.

1. Ժամանակի ընտրության ոչ հստակությունը,
2. շահույթի մեծության հավանական բնույթը՝ բազմաթիվ գործոններից կախվածությունը:

Դրանցից առաջինի հիմնավորման համար առաջ է քաշվում այն պարագան, որ ինվեստիցիոն ցանկացած տարբերակի դեպքում արտադրական գործընթացը բաղկացած է մի քանի ժամանակահատվածներից, և հայտնի չէ, թե դրանցից որի դեպքում է անհրաժեշտ մաքսիմումի հասցնել շահույթի մեծությունը: Իսկ ինչ վերաբերում է շահույթի հավանական բնույթին, նշվում է, որ եթե ապագա եկամուտները և ծախսերը հանդիսանում են անորոշ ցուցանիշներ, ապա ոչ մի նշանակություն չունի «մաքսիմում շահույթ» հասկացությունը, եթե ինքը՝ շահույթը, հանդիսանում է հավանական մեծություն¹: Ենթադրվում է, որ սեփական կապիտալի արժեքի մաքսիմալացման չափանիշի ընտրության դեպքում նշված թերությունները չեզոքացվում են: Ի տարբերություն շահույթ ցուցանիշի՝ բաժնետիրական կապիտալի ընթացիկ շուկա-

¹ Эви Боди, Роберт К. Мертон, Финансы, изд. “Вильямс”, Москва, Санкт–Петербург, Киев, с. 59, 2005.

յական արժեքը կարելի է որոշել բավականին ճշգրիտ: Ուստի բաժնետերերի եկամուտները մաքսիմալացնելու կարգը հանդիսանում է ֆինանսական մեներջերների հիմնական խնդիրը ֆիրմաների ապագա եկամուտների ու ծախսերի անորոշության պայմաններում: Փաստորեն շահույթ ցուցանիչի միջոցով հնարավոր չէ լուծել կորպորացիաների առջև ծառայած տակտիկական խնդիրները:

Կորպորացիաների ֆինանսական կառավարման կարևոր բաղադրիչներից են ֆինանսական քաղաքականության մշակումը և իրականացումը, ինչը պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործման ռազմավարական և տակտիկական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնք նախատեսվում են կորպորացիաների հիմնադիր փաստաթղթերում և հատկապես կանոնադրության մեջ: Դրանց շարքին են դասվում կորպորացիայի դիրքի ուժեղացումը ապրանքային շուկայում, նախատեսված վաճառքի ծավալի ապահովումը, ակտիվների և սեփական կապիտալի ծավալների մեծացումը, վճարունակության և լուծարելիության ապահովումը, բաժնետերերի բարեկեցության բարձրացումը:

Ընդհանուր առմամբ կորպորացիաներում ֆինանսական կառավարման օբյեկտ են հանդիսանում կապիտալը և դրամական հոսքերը, որոնք ունեն ռազմավարական նշանակություն, այնքանով, որքանով դրանց բավարար մակարդակն է հիմնականում որոշում կորպորացիաների մրցունակության մակարդակը և տնտեսական պոտենցիալը: Միջազգային տնտեսվարական պրակտիկան ցույց է տալիս, որ եթե կորպորացիայի սեփական կապիտալի ծավալը գերազանցում է ընդհանուր կապիտալի 60%–ը, իսկ դրամական հոսքերի մնացորդը դրական է, ապա մեծ հնարավորություն ունի ընդգրկելու լրացուցիչ դրամական ռեսուրսներ ֆինանսական շուկայից: Հենց այդ նպատակին պետք է ուղղված լինի կորպորացիաների ֆինանսական ռազմավարությունը, որի միջոցով էլ հեռանկարում հնարավոր կլինի լուծել խոշորածավալ խնդիրներ: Այդ ռազմավարական խնդիրների մշակման գործընթացում կանխատեսվում են ֆինանսների զարգացման հիմնական նոտիվները, ձևավորվում դրանց օգտագործման առաջնահերթությունները, մասնավորապես՝ ֆինանսական հարաբերությունները պետության հետ (հարկային քաղաքականություն), այլ տնտեսվարական սուբյեկտների հետ:

Ելնելով ռազմավարական խնդիրները լուծելու անհրաժեշտությունից՝ կորպորացիաները որոշում են իրենց արտադրական ու ֆինանսական գործունեության նպատակներն ու խնդիրները: Ֆինանսական ռազմավարության բաղկացուցիչ մասը կազմում է հեռանկարային ֆինանսական պլանավորումը, որը պետք է կողմնորոշված լինի իրականացնելու կորպորացիաների գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշները, ինչպիսիք են վաճառքի ծավալը, շահույթը և շահութաբերությունը, ֆինանսական կայունությունը և վճարունակությունը:

Ինչ վերաբերում է կորպորացիաների ֆինանսական տակտիկական խնդիրներին, ապա դրանք ուղղված են լուծելու մասնավոր այն խնդիրները, որոնք պայմանավորված կլինեն կոնկրետ տվյալ փուլի զարգացման առանձնահատկություններով:

Ֆինանսական քաղաքականությունը պետք է վարվի պրոֆեսիոնալ մակարդակով: Բնականաբար ֆինանսական մեներջերը պետք է տիրապետի բոլոր անհրաժեշտ տեղեկատվություններին, որոնք վերաբերում են կորպորացիաների ռազմավարությանը և տակտիկային:

2.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կառավարման կարևորագույն ֆունկցիաներից մեկը վերահսկողությունն է: Այն իրենից ներկայացնում է ֆինանսական օրենսդրության և ֆինանսական կարգապահության պահպանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն կառավարման բոլոր մակարդակներում: Ֆինանսական վերահսկողության գործընթացում գնահատվում է ֆինանսական գործառնությունների իրականացման օրինականությունը, և անհրաժեշտության դեպքում ցույց են տրվում թերություններն ու բացթողումները շտկելու ուղիները:

Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի ինչպես պետական ֆինանսական վերահսկողություն, այնպես էլ ոչ պետական ֆինանսական վերահսկողություն:

Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնում են հանրապետության նախագահի, կառավարության անձնակազմի վերահսկողական ծառայությունները, Ազգային ժողովի վերահսկիչ պալատը, ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը և մաքսային պետական կոմիտեն:

Պետական ֆինանսական վերահսկողությունը կոչված է իրացնելու պետության ֆինանսական քաղաքականությունը ֆինանսական օրենսդրության, ֆինանսական կարգապահության պահպանման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների նպատակային օգտագործման միջոցով, ինչի շնորհիվ ապահովվում է ֆինանսական հավասարակշռություն երկրում: Պետական ֆինանսական վերահսկողությունը դրսևորվում է ամենից առաջ բոլոր մակարդակների բյուջեների և արտաբյուջետային ֆոնդերի մշակման, հաստատման և կատարման գործընթացներում: Վերահսկողություն է սահմանվում նաև պետական կազմակերպությունների ու հաստատությունների և պետական բանկերի ֆինանսական գործունեության նկատմամբ:

Ոչ պետական ֆինանսական վերահսկողության ոլորտի մեջ է մտնում կազմակերպությունների ներքին վերահսկողությունը, որն իրականացնում են ֆինանսական ծառայությունները: Վերջինների հիմնական ֆունկցիան է հետևել դրամական ռեսուրսների ձևավորման ու օգտագործման, սեփական ու փոխառու միջոցների միջև օպտիմալ հարաբերակցության և ֆինանսական կայունության ապահովման գործընթացներին և այլն:

Ոչ պետական վերահսկողություն են իրականացնում նաև առևտրային բանկերը, որոնք շահագրգռված են տրամադրված վարկային ռեսուրսների նպատակային ու արդյունավետ օգտագործման խնդրում, ինչը երաշխավորում է պահպանելու վարկի մարման ժամկետները: Ոչ պետական վերահսկողության ձևերից մեկն էլ անկախ աուդիտորական վերահսկողությունն է: Տնտեսավարող սուբյեկտների նշված բոլոր տեսակի վերահսկողությունների վերջնական նպատակը հանգում է ֆինանսական ռեսուրսների ձևավորման, բաշխման ու օգտագործման համար սահմանված նորմատիվային ակտերի ու մեթոդների կիրառման օրինականության, ֆինանսական կարգապահության պահպանմանը: Հետևաբար, ֆինանսական վերահսկողությունը հանդես է գալիս որպես ֆինանսական կառավարման կարևոր օղակ:

Ֆինանսական վերահսկողության օբյեկտը, վերջին հաշվով, ֆինանսական ռե-

սուրսների կազմավորման ու բաշխման գործընթացն է, որի ընթացքում ստեղծվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական միջոցների ֆոնդեր: Այդ գործընթացում առաջանում են բազմաթիվ ֆինանսական ցուցանիշներ, որոնք հանդես են գալիս որպես ֆինանսական վերահսկողության առարկաներ: Այդ ցուցանիշների շարքին են դասվում տարբեր մակարդակների բյուջեների եկամուտները և ծախսերը, հարկային վճարումները, տնտեսավարող սուբյեկտների եկամուտները և դրանց շրջանառության ծախսերը, ինքնարժեքը, շահույթը: Շուկայական տնտեսավարման պայմաններում ֆինանսական վերահսկողության առարկա են նաև տնային տնտեսությունների եկամուտներն ու ծախսերը: Քանի որ նշված ցուցանիշներից շատերը հաշվարկային են, այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար ստուգելու դրանց հավաստիությունը և համապատասխանությունը գործող նորմատիվային ակտերին: Բացահայտված թերությունների, անճշտությունների ու բացթողումների համար կիրառվում են զանազան հարկադրանքներ, տույժեր ու տուգանքներ, ինչը նպաստում է ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Ֆինանսական վերահսկողություն իրականացվում է ֆինանսական կառավարման տարբեր ոլորտներով, և այդ պատճառով հետապնդվող նպատակները բազմաբնույթ են: Դրա կազմակերպման բնույթից է շատ բանով կախված ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը: Միջազգային շուկայական պրակտիկան նշակել է ֆինանսական վերահսկողության որոշակի սկզբունքներ, որոնցից առավել կարևորներն են վերահսկողության անկախությունը, օբյեկտիվությունը, հրապարակայնությունը, ինչպես նաև այն իրականացնողների մասնագիտական պատրաստվածությունը: Ֆինանսական վերահսկողության անկախությունը դրսևորվում է նրանում, որ վերահսկող մարմինները պետք է ունենան ֆինանսական ինքնուրույնություն, մասնավորապես, սրանք պետք է ունենան լիազորությունների ավելի երկար ժամկետ, քան պառլամենտական մարմինները: Օբյեկտիվության և իրազեկության սկզբունքը ենթադրում է սահմանված օրենսդրության ու չափորոշիչների անշեղ պահպանում, իսկ հրապարակայնությունը նախատեսում է վերահսկողության արդյունքների հրապարակում մամուլի միջոցով:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում առկա են ֆինանսական վերահսկողության պարտադիր, նախնական կամ ընթացիկ, պետական ու բյուջետային ձևերը: Պարտադիր վերահսկողությունն իրականացնում են պետական մարմինները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներով: Մասնավորապես, սրան են վերաբերում հարկային ստուգումները, տարեկան ֆինանսական հաշվետվության պարտադիր աուդիտը, որը ՀՀ-ում տարածվում է բոլոր բաժնետիրական ընկերությունների վրա:

Նախնական վերահսկողությունն իրականացվում է պետական բյուջեի քննարկման և ընդունման փուլում, իսկ տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ ֆինանսական պլանների, բյուջետային կազմակերպություններում՝ եկամուտների ու ծախսերի նախահաշիվների գործընթացներում: Նախնական վերահսկողության ընթացքում որոշվում է տարբեր մակարդակների բյուջեների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական պլանների ցուցանիշների հիմնավորվածությունը, ինչը թույլ է տալիս վերհանել հնարավոր անճշտությունները, եկամուտների ավելացման հնարավորությունները, կանխել ֆինանսական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը:

Ընթացիկ վերահսկողությունը տեղի է ունենում բոլոր մակարդակների բյուջեներ

րի, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական պլանների կատարման ընթացքում: Դրանով ստեղծվում է ֆինանսական կարգապահություն ֆինանսատնտեսական գործունեության գործընթացում, և պարբերաբար կատարվում է այդ գործընթացի վերլուծություն:

Հետագա վերահսկողությունը, որպես կանոն, իրականացվում է բոլոր մակարդակների բյուջեների կատարման հաշվետվությունների քննարկման ու հաստատման ընթացքում՝ դրանով իսկ ամփոփելով բյուջետային տարվա արդյունքները: Նույն կանոնակարգը կիրառվում է նաև տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ ֆինանսական պլանների ցուցանիշների կատարման արդյունքները քննարկելիս:

Պետական վերահսկողությունը, որը կատարում են պետական իշխանության մարմինները, նպատակ ունի պարզել, թե որքանով է պահպանվում պետության ֆինանսական քաղաքականության իրացումը:

Ֆինանսական վերահսկողությունն իրականացնելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ: Այդ մեթոդների դերում հանդես են գալիս ստուգումները, հետազոտությունները, ֆինանսական վիճակի վերլուծությունը, դիտարկումը, վերստուգումները:

Ստուգումները կատարվում են այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում պարզելու ֆինանսական գործունեության այս կամ այն ցուցանիշները: Դրա համար օգտագործվում են տնտեսավարող սուբյեկտների հաշվետու ցուցանիշների հավաստիությունը և կատարված ծախսերի վերաբերյալ փաստաթղթերը: Խախտումներ հայտնաբերելիս միջոցառումներ են մշակվում դրանք վերացնելու համար:

Հետազոտություն իրականացվում է կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության առանձին բնագավառների վիճակը որոշելու համար, որպեսզի հնարավորություն ստեղծվի սահմանել առաջիկա զարգացման ուղիները: Ֆինանսական վերահսկողությունը կատարվում է ֆինանսական առանձին գործառնությունների կտրվածքով, որպեսզի պարզվի, թե ինչքանով է դրանց իրականացումը համապատասխանում գործող օրենսդրությանը և դրանից բխող նորմատիվային ակտերին: Եթե պարզվում է, որ դրանք չեն պահպանվել, ապա կարող են կիրառվել ֆինանսական և այլ կարգի հարկադրանքներ:

Դիտարկումները շարունակական վերահսկողության ձև են, որոնց հիմնական նպատակն է հսկել, թե ինչպես են օգտագործվում ֆինանսական ռեսուրսները տնտեսավարող սուբյեկտների կողմից և պետական հաստատություններում ու կազմակերպություններում այն հաշվով, որպեսզի շարունակ դրանց ֆինանսական դրությունը գտնվի բավարար մակարդակի վրա:

Ֆինանսական դրության վերլուծությունը կոչված է համակողմանիորեն ուսումնասիրելու տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական գործունեությունը: Վերլուծության նպատակն է գնահատել ֆինանսական գործունեությունն ամբողջությամբ վերցրած և նրա առանձին բաղադրիչները՝ իրացվելիությունը, վարկունակությունը, ֆինանսական կայունությունը:

Առավել տարողունակ է ռևիզիան, որը տարածված ու արդյունավետ ֆինանսական վերահսկողության ձև է: Այն ընդգրկում է սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության բոլոր բնագավառները: Ռևիզիայի իրականացումը աշխատատար է և պահանջում է երկար ժամանակ: Այդ պատճառով էլ ռևիզիան լինում է լիակատար, մասնակի, թեմատիկ և ամբողջական:

Լիակատար ռեզիդիայի դեպքում ստուգվում են տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև բյուջետային և այլ կազմակերպությունների, հիմնարկությունների, հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեության բոլոր բնագավառները: Մասնակի ռեզիդիա է կատարվում, որպեսզի պարզվեն նշված սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության առանձին բնագավառները: Թեմատիկ ռեզիդիա կատարվում է մի շարք տնտեսավարող սուբյեկտների կտրվածքով և նպատակ է հետապնդում պարզելու ֆինանսատնտեսական գործընթացում գոյություն ունեցող տիպական թերություններն ու իրավախախտումները: Ինչ վերաբերում է ամբողջական ռեզիդիային, ապա այս դեպքում ստուգվում է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության բոլոր կողմերը (արտադրական, տեխնիկական, մարքեթինգային, իրացման, ֆինանսատնտեսական և այլն): Ամբողջական ռեզիդիայի հիմնական նպատակն է պարզել արտադրանքի արտադրության գործընթացի նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ֆինանսական կարգապահության պահպանման վիճակը և այլն:

Տնտեսական ու ֆինանսական գործառնությունների ընդգրկման առումով ռեզիդիան լինում է համընդհանուր և ընտրովի: Համընդհանուր ռեզիդիայի դեպքում ստուգվում են տնտեսավարող սուբյեկտների առանց բացառության բոլոր գործառնությունները: Ընդ որում, ստուգվում են բոլոր սկզբնական փաստաթղթերը, որոնք կազմվել են ստուգվող ժամանակաշրջանում: Ինչ վերաբերում է ընտրովի ռեզիդիային, ապա դրա էությունն այն է, որ ստուգվում են սկզբնական փաստաթղթերը ժամանակի որոշակի ժամանակահատվածի կտրվածքով:

Ռեզիդիայի ցանկացած տեսակ իրականացնելու համար կազմվում ու հաստատվում է ծրագիր, որի մեջ ցույց են տրվում ռեզիդիայի նպատակը, օբյեկտը և հիմնական հարցերը: Ռեզիդիայի արդյունքների հիման վրա կազմվում է ակտ, որը պաշտոնական փաստաթուղթ է, և մշակվում են միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է ֆինանսական կառավարման օբյեկտը, դրա էությունը, և ի՞նչ խնդիրներ է կատարում:
2. Ֆինանսական կառավարման մարմինները Հայաստանում, դրանց ֆունկցիաները և կազմակերպման կառուցվածքը:
3. Պլանավորումը որպես ֆինանսական կառավարման կարևորագույն գործիք: Ֆինանսական պլանների տիպերը, մոդելները և տարբեր մակարդակով իրականացման առանձնահատկությունները:
4. Ի՞նչ է նշանակում ֆինանսական վերահսկողություն, որո՞նք են դրա իրականացման մարմինները ՀՀ-ում, ինչպիսի՞ ձևեր ու մեթոդներ կան:

ԳԼՈՒԽ 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ

3.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Տնտեսավարման ներկա պայմաններում արտադրության և սպառման միջև ընկած է մի հսկայածավալ ոլորտ՝ յուրահատուկ օրինաչափությունների, ենթակառուցյունների, ինստիտուցիոնալ կառույցների, մասնակիցների և շրջանառող գործիքների ամբողջությամբ հանդերձ, որն իրենից ներկայացնում է շուկան:

Շուկան որպես այդպիսին բնութագրելու նպատակով անհրաժեշտ է այն դիտարկել երկու տեսանկյունից: Մի կողմից՝ որպես տնտեսական կատեգորիա (հիմնական հասկացություն, ճանաչողական ընդհանրացում), իսկ մյուս կողմից՝ որպես դրա դրսևորման կոնկրետ ձև: Որպես տնտեսական կատեգորիա՝ շուկան հարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է ապրանքներ, ծառայություններ, ֆինանսական և այլ ակտիվներ վաճառողների ու դրանք գնողների միջև¹:

Որպես դրսևորման կոնկրետ ձև՝ շուկան մեխանիզմ է, վայր, ինստիտուտ կամ կազմակերպություն, որը, համախմբելով առանձին ապրանքների գնորդներին (պահանջարկի ներկայացուցիչներ) և վաճառողներին (առաջարկողներ), ապահովում է այդ հարաբերությունների իրացումը²: Այս տեսանկյունից դիտարկելով (որպես դրսևորման ձև) շուկան շատ բազմազան է, ունի շատ տարատեսակներ և, կախված տարբեր բնութագիրներից, ամենատարբեր դասակարգումներ: Առավել ընդհանուր դասակարգմամբ տարբերակում ենք ապրանքային, աշխատանքային և ֆինանսական շուկաները:

Այս հիմնական դասակարգման հիմքում ընկած է այն առանցքային սկզբունքը, թե ինչն է հանդիսանում գործարքի առարկան կամ այլ կերպ ասած՝ ինչ է գնվում և վաճառվում շուկայում: Այսպիսով՝ ավելի քան հանրահայտ է, որ ապրանքային շուկաներում գնվում և վաճառվում են ապրանքներ և ծառայություններ, իսկ փողն այստեղ հանդես է գալիս որպես շրջանառության և վճարման միջոց: Աշխատանքային շուկաներում գնվում և վաճառվում է «աշխատուժ ապրանքը»³, և փողն այստեղ ծառայում է որպես վարձատրության միջոց, պարզապես կամ այլ կերպ՝ վճար: Ինչպես տեսնում ենք, այս երկու շուկաներում էլ փողն հիմնականում ծառայում է որպես վճարման միջոց: Իսկ երբ շուկայում որպես առք ու վաճառքի առարկա հանդես է գալիս փողը, շուկան կոչվում է ֆինանսական:

¹ Շուկայի մնամ բնորոշումները հաճախ օտարծվում են օրենքներում – այլ փաստաթղթերում: Օրինակ «Արժեթղթերի շրջանառության մասին» 1993 թ. ընդունված ՀՀ օրենքում նշվում էր, որ «արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման – շրջանառության առնչությամբ առաջացող հարաբերությունների համակարգ է»:

² Նման բնորոշում տրվում է, օրինակ, հետ–յալ աշխատությունում. Макконелл К.Р., Брю С.Л., Экономикс: Принципы, проблемы и политика, в 2–х томах, пер. с англ., 2–го изд., т. I, М., “Республика”, 1992, с. 61.

³ Տնտեսա իտական ղականության մեջ առկա են նա– տեսակետներ, թե աշխատանքի շուկայում գնվում – վաճառվում է «աշխատանքը» կամ «աշխատանքի ծառայությունը»: Նպատակ չունենալով հետազոտել այս խնդիրը՝ այնուամենայնիվ՝ տնում ենք, որ թե «աշխատուժը», թե «աշխատանքը» կամ թե «աշխատանքի ծառայությունը», որը կարող է դիտարկվել աշխատանքի շուկայում որպես ղործարքի առարկա, պետք է նախապես «ապրաքայնանա», այսինքն՝ հանդես ա որպես ապրանք:

Ֆինանսական շուկայի տարբեր հատվածներում որպես գործարքի առարկա կարող են հանդես գալ ֆինանսական տարբեր գործիքները՝ արժեթղթերը, ապահովագրական պոլիսները, ամենատարբեր ֆինանսական պարտավորություններն ու իրավունքները, արտարժույթը և այլն, սակայն դրանք փոխհարաբերությունների միայն արտաքին կողմն են, դրսևորման ձևը, քանի որ իրականում այդ հարաբերությունների հիմքում զնվում և վաճառվում է փող: Օրինակ՝ ֆինանսական շուկայում պետությունը վաճառում է կարծաժամկետ կամ երկարաժամկետ պարտատոմսեր, իսկ ներդրողները զնում են դրանք: Իրականում պետությունը բյուջեի պակասուրդի ծածկման կամ այլ ծախսերի իրականացման նպատակով զնում է փող, իսկ ներդրողները վաճառում են այն:

Ֆինանսական շուկան իրեն բնորոշ հարաբերություններով, յուրահատուկ օրինաչափություններով, ենթակառույցների, ինստիտուցիոնալ կառույցների, մասնակիցների և շրջանառող գործիքների ամբողջությամբ տնտեսական աճի ապահովման գործունակ և հզոր համակարգ է: Դեռ ավելին՝ տնտեսության շուկայավարման պայմաններում «խնայողություններ – ներդրումներ – տնտեսական աճ» շղթայի փոխադարձ կապն ու գործողությունը դրսևորվում են ֆինանսական շուկայում և իրականացվում են վերջինիս գործառույթների շնորհիվ:

Ֆինանսական շուկայի ընդհանուր բովանդակությունը և հատվածները մանրամասն ու տպավորիչ կարելի է տալ զծապատկերով (տես զծապատկեր 3.1.): Ինչպես զծապատկերն է արտացոլում, տնտեսության մեջ ցանկացած ժամանակահատվածում առկա են անձինք, որոնք հնարավորություն ունեն և պատրաստ են իրենց դրամական միջոցները վաճառել: Ֆինանսական շուկայում դրանք կոչվում են ավելցուկային բյուջե ունեցող անձինք (ԱՐՈՒԱ), որոնք շուկայում ձևավորում են դրամական միջոցների նկատմամբ առաջարկը: Դրանք կարող են լինել քաղաքացիները (քաղաքացիների միջոցները իրենցից ներկայացնում են ընտանեկան խնայողությունները և կազմում են արտադրություն ներգրավող ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը), ընկերությունները, պետությունը, տարածքային կառավարման մարմինները, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները և այլն: Ավելցուկային բյուջե ունեցող անձինք ֆինանսական շուկայում վաճառում են իրենց իսկ սեփական միջոցները և այդ պատճառով էլ կոչվում են հիմնական, իրական կամ առաջնային վաճառողներ՝ անկախ նրանից, թե ում են վաճառում դրանք՝ անմիջապես զնորդներին, թե ֆինանսական միջնորդներին:


Մյուս կողմից՝ տնտեսության մեջ միշտ առկա են անձինք, որոնք այս կամ այն պատճառներով ունեն դրամական միջոցների պակաս և ցանկություն ունեն դրանք զնելու: Ֆինանսական շուկայում դրանք կոչվում են պակասուրդային բյուջե ունեցող անձինք (ՊՐՈՒԱ), որոնք ձևավորում են դրամական միջոցների նկատմամբ պահանջարկը: Այդ անձինք նույնպես կարող են լինել քաղաքացիները, ընկերությունները, այդ թվում ֆինանսական և բանկային կազմակերպությունները, պետությունը, տարածքային կառավարման մարմինները, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները, այլ պետությունները և այլն: Պակասուրդային բյուջե ունեցող անձինք դրամական միջոցները զնում են վերջնական սպառման, իրենց կարիքների բավարարման նպատակով, դրանք միջոցների վերավաճառման նպատակ չեն հետապնդում և ձևավորում են հիմնական, իրական պահանջարկը, որն էլ դառնում է

տնտեսության մեջ իրական ներդրումներ կան էլ գնում է վերջնական սպառման (քաղաքացիների և պետական որոշ ծախսերի դեպքում):

Դրամական միջոցները ֆինանսական շուկայում վաճառողներից գնողներին կարող են անցնել հիմնականում երկու եղանակով: Առաջին դեպքում դրամական միջոցները հիմնական վաճառողներից՝ դրանց սեփականատերերից, հիմնական գնորդներին են անցնում անմիջականորեն, այսինքն՝ ֆինանսական փոխհարաբերությունները ձևավորվում են անմիջականորեն վաճառողների և գնողների միջև: Երկրորդ դեպքում դրամական միջոցները սեփականատերերից վերջնական սպառողներին են անցնում ֆինանսական հատուկ ինստիտուցիոնալ կառույցների՝ խնայողական և առևտրային բանկերի, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների և այլնի միջոցով, որոնք կոչվում են ֆինանսական միջնորդներ: Փաստորեն, ֆինանսական միջնորդները մի կողմից հավաքագրում են դրամական միջոցները հիմնական, իրական վաճառողներից և մյուս կողմից դրանք տարբեր ձևերով տրամադրում են վերջնական, իրական սպառողներին: Այս դեպքում ֆինանսական փոխհարաբերությունները ձևավորվում են մի կողմից իրական վաճառողի և ֆինանսական միջնորդի, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական միջնորդի և վերջնական գնորդի՝ սպառողի միջև:

Ֆինանսական շուկայի այն հատվածը, որն ընդգրկում է ֆինանսական միջնորդների հետ կապված հարաբերությունների համակարգը, կոչվում է փոխատվական կապիտալի շուկա (տե՛ս գծապատկեր 3.1.): Շուկայի այս հատվածը շատ կարևոր նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, ինչը բացատրվում է նաև ֆինանսական միջնորդ կառույցների գործունեությամբ, որոնք ապահովում են մշտական ֆինանսական հոսքեր առաջնային, ընտանեկան, փոշիացած, կարճաժամկետ խնայողություններից դեպի իրական հատված, դեպի իրական ներդրումներ: Բացի այդ, փոխատվական կապիտալի շուկայում ձևավորվում է կապիտալի շուկայական գինը, այսինքն՝ այն, թե ինչ կարող է նստել միավոր դրամական միջոցը վերջնական սպառողի վրա՝ իհարկե, կախված ժամկետներից և տրվող իրավունքների համախմբից: Միաժամանակ շուկայի այս հատվածում առաջնային վաճառողները հաճախ կոչվում են փոխատուներ, իսկ վերջնական գնողները՝ փոխառուներ:

Իսկ ֆինանսական շուկայի այն հատվածում, որտեղ դրամական միջոցները վաճառողներից գնողներին են անցնում առանց ֆինանսական միջնորդների՝ անմիջականորեն, որպես ֆինանսական գործիքներ ծառայում են արժեթղթերը, և շուկայի այս հատվածը, որն ընդգրկում է արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և շրջանառության հետ կապված փոխհարաբերությունների համակարգը, իրենից ներկայացնում է արժեթղթերի շուկան (տե՛ս գծապատկեր 3.1.):



Գծապատկեր 3.1. Ֆինանսական շուկայի հատվածները

Ֆինանսական շուկայի այս հատվածում դրամական միջոցներ գնողները կոչվում են արժեթղթեր թողարկողներ, իսկ վաճառողները՝ արժեթղթերում ներդրողներ: Ներդրումային արժեթղթերի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի շնորհիվ թողարկողները ֆինանսական շուկայից և ավելի կոնկրետ՝ ներդրողներից հավաքագրում են դրամական միջոցներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ «արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, զույթային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր են միայն այն ներկայացնելիս»¹: Բերված բնորոշումը բավականին լայն է և ընդհանուր: Այդ կապակցությամբ և, ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման առանձնահատկություններից, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով տրվում է արժեթղթի մեկ այլ սահմանում. «Արժեթուղթ է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և արժեթղթերի մասին այլ օրենքներով նախատեսված ցանկացած ինվեստիցիոն (ներդրումային), վճարային կամ տիտղոսային արժեթուղթը ինչպես նաև շահույթի բաշխման համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը կամ մասնակցություն վկայող փաստաթուղթը, օպցիոնը, ֆյուչերսը կամ ածանցյալ այլ արժեթուղթը, արժեթղթի ձեռքբերման նախապատվության իրավունքը, դեպոզիտային հավաստագիրը կամ ստացականը՝ անկախ դրանց ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), ինչպես նաև ցանկացած ներդրումային համաձայնություն, որը ներառում է վերը նշված արժեթղթերի հատկանիշներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը, կապիտալի (միջոցների) ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած այլ փաստաթուղթ՝ անկախ դրա ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), ինչպես նաև արժեթղթի նկատմամբ իրավունքը կամ նման իրավունքի կամ դրանում բաժնի կամ մասնակցության վկայականը, հավաստագիրը, ստացականը կամ նման այլ փաստաթուղթ՝ անկախ դրանց ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), եթե դրանցով նախատեսված իրավունքների իրականացումը կամ փոխանցումը հնարավոր են միայն դրանք ներկայացնելիս կամ հատուկ գրանցամատյաններում (սովորական կամ համակարգչային) դրանց ամրագրման դեպքում: Արժեթուղթ է նաև այն փաստաթուղթը, անկախ դրա ձևից, որն այդպիսին է համարվում գործարար շրջանառության սովորույթների համաձայն»²:

Մեծ են արժեթղթերի դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործում: Արժեթղթերի և հատկապես բաժնետոմսերի միջոցով ֆինանսական միջոցները անմիջականորեն արտադրություն, բաժնետիրական ընկերություն հասցնելը արտադրության ֆինանսավորման կատարյալ եղանակ է և ֆինանսական շուկայի կարևորագույն խնդիր, որի ճիշտ կազմակերպումն ու լուծումը տնտեսական աճի ապահովման կարևոր գրավականն են: Փաստորեն արժեթղթերի շուկայի շնորհիվ փոշիացած ֆինանսական ներդրումները վեր են ածվում իրական ներդրումների և ապահովում են տնտեսական աճ:

Այսպիսով՝ դրամական միջոցները հիմնական վաճառողներից վեջնական գնող-

¹ ՀՀ քաղաքացիական օրենս իրք, հոդված 146:

² «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, հոդված 4:

ներին հասցնելու եղանակից կախված՝ ֆինանսական շուկան հատվածավորվում է փոխատվական կապիտալի և արժեթղթերի շուկաների:

Բացի այդ, ֆինանսական շուկան հատվածավորվում է նաև դրամի և կապիտալի շուկաների: Ֆինանսական շուկայի այն հատվածը, որտեղ դրամական միջոցները վաճառվում են մինչև մեկ տարի ժամկետով, կոչվում է դրամի շուկա, իսկ այն հարաբերությունների համակարգը, որի պայմաններում դրամական միջոցները վերջնական սպառողներին են տրվում մեկ տարուց ավել ժամկետով, կոչվում է կապիտալի շուկա:

Ինչպես երևում է գծապատկեր 3.1–ից, դրամի շուկան իր մեջ ներառում է հատվածներ և փոխատվական կապիտալի, և արժեթղթերի շուկաներից, այն է՝ մինչև մեկ տարի ժամկետով ֆինանսական պարտավորությունները: Նույնը պետք է ասել կապիտալի շուկայի համար, որն ընդգրկում է նշված հատվածների մեկ տարուց ավելի ժամկետով ֆինանսական հարաբերությունները:

Ֆինանսական շուկաները բազմազան են և դասակարգվում են նաև բազմաթիվ այլ բնութագրիչներից ելնելով: Սասնավորապես, դրանք կարող են լինել առաջնային կամ երկրորդային, բորսային կամ արտաբորսային, սփոթ (ընթացիկ) կամ ժամկետային, արժութային, միջբանկային վարկերի, բաժնետոմսերի, պետական կարճաժամկետ պարտատոմսերի, մունիցիպալ պարտատոմսերի, ապահովագրական պոլիսների, լիզինգային շուկաների և այլն:


Ֆինանսական շուկաներում բոլոր այլ շուկաների նման տեղի են ունենում միանման գործընթացներ: Անձինք այստեղ վաճառում և գնում են, սակարկում և բանակցություններ են վարում, վճարում և առաքում են և, վերջապես, շահում և կորցնում են:

Հատկապես կարևորվում են ֆինանսական շուկայի դերն ու նշանակությունը շուկայական հարաբերություններին անցած ետխորհրդային պետությունների համար: Բանն այն է, որ խորհրդային, կենտրոնացված կառավարման համակարգի պայմաններում պետությունն իրեն համապատասխան կառույցների՝ պետբանկի և պետբյուջեի միջոցով պլանավորված կարգով իրականացնում էր արտադրության իրականացման համար խիստ կենսական ֆինանսական միջոցների ինչպես հավաքագրում, այնպես էլ բաշխում, վերաբաշխում և արդյունքում նաև արտադրության ֆինանսավորում: Փաստորեն, դրամական միջոցների վերջնական սպառողները, այդ թվում նաև արտադրության հիմնական օղակը՝ ձեռնարկությունը, ֆինանսական միջոցների հավաքագրման նման հոգսեր չունեին:

Բոլորովին այլ է խնդիրը շուկայական հարաբերությունների պայմաններում: Պետությունն այս դեպքում ձերբազատվում է տնտեսավարող սուբյեկտների կառավարման և ֆինանսավորման հիմնախնդիրներից, և փաստորեն պակասորդային բյուջե ունեցող անձինք ֆինանսական միջոցների հայթայթման նպատակով մուտք են գործում ֆինանսական շուկա: Այսպիսով՝ ֆինանսական շուկայի ամենակարևոր գործառույթն այն է, որ իրար է միացնում գնողներին և վաճառողներին: Սակայն դրա հետ մեկտեղ ֆինանսական շուկաները կատարում են շատ կարևոր այլ գործառույթներ և, ինչպես դրամական միջոցների վաճառողների, այնպես էլ գնողների համար ապահովում մի շարք առավելություններ: Այսպես, օրինակ՝ եթե տնտեսությունում ֆինանսական շուկաները չեն գործում, ապա անձանց կողմից իրենց հետագա սպառումների համար կատարած խնայողությունները անգործության են մատնվում, և շատ հաճախ նման խնայողություններին պատկերավոր ասում են «ներքնակի տակ» կամ «գուլ-

պայում»։ Մինչդեռ ֆինանսական զարգացած շուկաները հնարավորություններ են ընձեռում վաճառել խնայողությունները հետագա աճ ապահովելու նպատակով, այսինքն՝ անձինք կարող են ներդնել իրենց դրամական միջոցները բանկում կամ այլ ֆինանսական ինստիտուտում և դրա դիմաց ստանալ տոկոսներ կամ այլ եկամուտ։ Նման ներդրումները տնտեսագիտական գրականության մեջ և գործնականում կոչում են ֆինանսական ներդրումներ։ Դրանք բոլոր այն ներդրումներն են, որոնք կատարվում են ֆինանսական գործիքներում, մասնավորապես բանկային ավանդներում, տարբեր արժեթղթերում, ապահովագրական պոլիսներում և այլն։ Փաստորեն, առանց ֆինանսական շուկաների և ներդրումների փողը կարող է լիարժեք իրականացնել իր արժեչափի, վճարման և փոխանակման միջոցի գործառույթները միայն և խնայողությունների, կուտակումների դեպքում միջոցների աճ չի կարող ապահովել։

Դրամական միջոցների խնայողությունները ֆինանսական շուկաների առկայությամբ և առանց դրանց կարելի է պատկերավոր ներկայացնել գծապատկերի միջոցով (տե՛ս գծապատկեր 3.2.)։



Գծապատկեր 3.2. Ընթացիկ և ապագա սպառումների ծավալները ֆինանսական շուկաների առկայությամբ և առանց դրանց

Այսպիսով՝ առանց ֆինանսական շուկաների գործողության անձը կարող է իր ամբողջ միջոցները՝ 100,0 հազար դրամ, խնայել և սպառել ապագայում, մինչդեռ ֆինանսական շուկաների առկայության պայմաններում նա ապագայում կարող է սպառել ավելին. օրինակ՝ փոխատվական կապիտալի 10%–ի դեպքում՝ 110,0 հազար դրամ ($100 \times 0.1 + 100 = 110$): Սակայն իրական կյանքում անձինք չեն կարող գոյատևել առանց սպառման և կարողանում են հետագա սպառումների համար խնայել իրենց դրամական միջոցների մի մասը միայն, մասնավորապես մեր օրինակում դրամական միջոցների 30% խնայողության դեպքում նա կարող է հետագայում սպառել 33,0 հազար դրամ [$30(1 + 0,1) = 33,0$]:

Բացի այդ, զարգացած ժամանակակից ֆինանսական շուկաները բնութագրվում են ոչ միան խնայողությունների հավաքագրումով, այլև փոխառությունների, վարկերի տրամադրումով, որի շնորհիվ անձինք կարող են ավելացնել ոչ միայն իրենց ապագա, այլև ընթացիկ (ներկա) սպառման ծավալները: Մասնավորապես, եթե անձն ունի պարբերական կայուն եկամուտ, ենթադրենք՝ ամսական 100,0 հազար դրամ, ապա փոխատվական կապիտալի 10%-ի պայմաններում կարող է իր սպառումը հետագայում, ինչպես նաև ներկայում ավելացնել՝ օգտվելով ֆինանսական շուկայի ծառայություններից: Այսպես՝ նա կարող է իր առաջին եկամուտը՝ 100,0 հազար դրամ, ներդնել և առաջին ժամանակաշրջանի վերջում ստանալ 110,0 հազար դրամ, որը երկրորդ եկամտի հետ կկազմի 210,0 հազար դրամ: Այսպիսով՝ նրա առավելագույն սպառումը երկրորդ ժամանակաշրջանի սկզբին կարող է կազմել 210,0 հազար դրամ:

Միաժամանակ, անձը ֆինանսական շուկայում կարող է օգտվել փոխառություններից և ավելացնել իր սպառման ծավալները նաև ներկայում: Այսպես՝ նկատի ունենալով, որ հաջորդ պարբերաշրջանում անձն ունի 100,0 հազար դրամ եկամուտ, դրա երաշխիքով կարող է վերցնել փոխառություն, մեր օրինակում՝ մինչև 90,9 հազար դրամ $[100,0 / (1 + 0,1)]$: Վերջինս էլ, գումարվելով տվյալ անձի ներկա ստացված եկամտի հետ, նրա ներկա սպառումը կարող է հասցնել մինչև 190,9 հազար դրամի:

Այսպիսով՝ ֆինանսական գործուն շուկայի առկայության պայմաններում անձինք կարող են կարգավորել իրենց սպառումների և կուտակումների ծավալները՝ որոշակի գումարներ ուղղելով ֆինանսական ներդրումներին կամ կատարելով փոխառություններ, արդյունքում ավելացնել ինչպես ապագա, այնպես էլ ներկա սպառման ծավալները:

Վերը բերված գործընթացները կարելի է ներկայացնել մաթեմատիկորեն: Մեր օրինակում ապագայում սպառման ծավալները (U_w) կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$U_w = 100,0 + (100,0 - U_0)(1 + 0,1),$$

որտեղ՝ U_0 – ն տվյալ ժամանակաշրջանի եկամտից կատարված ընթացիկ սպառումն է:

Նույնանման մոտեցմամբ կարելի է հաշվարկել նաև փոխառության միջոցով ավելացված ներկա սպառման ծավալները (U_0)՝

$$\hat{e}_\varphi = 100,0 + \frac{\hat{o}}{1 + 0,1},$$

որտեղ Φ –ն ֆինանսական շուկայից ներգրավված փոխառության ծավալն է:


3.2. ԴՐԱՄԻ ՇՈՒԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՆ

Դրամի շուկայի կարևոր նշանակությունն այն է, որ առևտրային բանկերը, ֆինանսական և այլ բնույթի ընկերությունները ճշգրտում են իրենց ակտիվների իրացվելիությունը, հետևապես նաև գնահատում դրանք: Ճշգրտման եղանակները կարող են տարբեր լինել, մասնավորապես փոխառությունների տեղաբաշխմամբ, վարկերի տրամադրմամբ, կարճ ժամկետով միջոցների ներդրմամբ և այլն:

Տնտեսավարման ներկա պայմաններում ֆինանսական շուկայի կարևոր հատվածը դրամի շուկան է: Դրամի շուկան իր հերթին ստորաբաժանվում է մի քանի առանձին շուկաների, որտեղ կատարվում է առանձին կոնկրետ պարտավորությունների և ֆինանսական գործիքների առք ու վաճառքը: Դրանց թվին են դասվում, օրինակ, պետական կարծաժամկետ պարտատոմսերի, միջբանկային վարկերի, արտարժույթի, բանկային հավաստագրերի, առևտրային արժեթղթերի, մուրհակների շուկաները և այլն:

Դրամի շուկաները տնտեսության մեջ ունեն շատ կարևոր նշանակություն: Դրանք ֆինանսավարկային և այլ կազմակերպություններին ապահովում են իրենց ակտիվների իրացվելիության ճշգրտման համար արդյունավետ ֆինանսական գործիքներով: Տնտեսավարող ցանկացած անձ, ֆինանսական ինստիտուտ, առևտրային կամ արդյունաբերական կազմակերպություն կամ պետական կառույց ժամանակ առ ժամանակ առնչվում են իրենց ակտիվների իրացվելիության կառավարման խնդիրների հետ: Պատճառն այն է, որ դրամական միջոցների մուտքերի ժամկետները շատ հաճախ չեն համընկնում ծախսերի կատարման ժամկետների հետ: Նման անհամապատասխանությունը արդյունավետ կերպով կարգավորվում է դրամի շուկայի օգնությամբ և միջոցով: Օրինակ, եթե որևէ կազմակերպություն ունի ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ, որոնց ծախսումը կատարվելու է հետո, ապա դրանք սովորական հաշվարկային կամ ցպահանջ հաշիվներում պահելը արդյունավետ չէ արժեզրկման և տնտեսական պայմանների փոփոխության պատճառով: Բացի այդ, նշված դրամական միջոցները կարող են բերել տոկոսային եկամուտ: Ուստի անձը կարող է իր դրամական միջոցներն ուղղել դրամի շուկա՝ ներդնելով դրանք բանկային հավաստագրերում, կարծաժամկետ փոխառություններում կամ առևտրային արժեթղթերում կամ էլ դրամի շուկայի ֆինանսական այլ գործիքներում, և ստանալ որոշակի եկամուտ:

Գծապատկեր 3.3–ում բերվում է դրամի շուկայի միջոցով ակտիվների իրացվելիության կառավարման ընդհանուր սխեման: Միաժամանակ բերվում է նաև այն դեպքը, երբ, ընդհակառակը, տնտեսավարող անձն ունի դրամական միջոցների պակաս, և ինքն է դիմում դրամի շուկա դրանք ներգրավելու նպատակով: Մասնավորապես, եթե որևէ ֆինանսական կազմակերպություն, օրինակ՝ ապահովագրական ընկերություն կամ կենսաթոշակային հիմնադրամ, որևէ կոնկրետ ժամանակահատվածում ունի դրամական միջոցների խիստ անհրաժեշտություն (դիցուք՝ ապահովագրման ընկերության դեպքում տեղի է ունեցել ապահովագրական պատահար, իսկ ընկերության միջոցները, ինչպես հայտնի է, տեղաբաշխված են), ապա այն կարող է դիմել դրամի շուկայի ծառայություններին և հարթել ֆինանսական լարվածությունը: Այս դեպքում անձը կարող է դիմել դրամական շուկայի կարծաժամկետ փոխառություններին, մասնավորապես՝ մեր օրինակում թողարկել առևտրային արժեթղթեր կամ կարծաժամկետ պարտատոմսեր, ինչպես նաև դիմել բանկային վարկին:



Գծապատկեր 3.3. Դրամական միջոցների ավելցուկի և պակաստրոլի կարգավորումը դրամի շուկայի միջոցով

Այսպիսով, ինչպես երևում է նաև գծապատկեր 3.3–ից, դրամի շուկաները տնտեսության մեջ կատարում են յուրահատուկ կուտակիչի դեր. դրանք մի կողմից իրենցում կուտակում են տնտեսավարող սուբյեկտների ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և մյուս կողմից տրամադրում այն անձանց, որոնք ժամանակավորապես դրանց կարիքն ունեն, ինչի շնորհիվ էլ հնարավորություններ են ընձեռում տնտեսավորող անձանց ճշգրտելու իրենց իրացվելի ակտիվների ծավալները:

Նշված կարևոր գործառույթների իրականացման համար դրամի շուկայի ֆինանսական գործիքները պետք է ունենան համապատասխան բնութագրեր, որոնցից անրաժեշտ է առանձնացնել հետևյալը՝

- ա) չվճարումների ցածր ռիսկը,
- բ) դրանց արժեքի տատանման ցածր ռիսկը,
- գ) բարձր իրացվելիությունը,
- դ) գործարքային ցածր ծախսերը:

Եվ որպեսզի ֆինանսական գործիքը կարողանա աշխույժ շրջանառություն կատարել դրամի շուկայում, այն պետք է օժտված լինի վերը նշված բնութագրիչներով, ունենա ստանդարտ վավերագրեր ու պայմաններ, իսկ դրանց թողարկողները պետք է ունենան ֆինանսատնտեսական լավ ցուցանիշներ և բարձր վարկանիշ:

Աղյուսակ 3.1–ում և 3.2–ում համապատասխանաբար բերվում են զարգացած շուկա ունեցող երկրների դրամի շուկայի ֆինանսական հիմնական գործիքների բնութագրիչների և դրամի շուկայի հիմնական մասնակիցների գործառույթները ֆինանսական հիմնական գործիքներով:

Աղյուսակ 3.1.

Դրամի շուկայի ֆինանսական հիմնական գործիքների բնութագրիչները*

Ֆինանսական որոժիքները	Մարման միջին ժամկետը	Իրացվելիությունը	Չվճարման ռիսկը
1. Պետական կարճա-ժամկետ պարտատոմսեր – մինչ– մեկ տարի մարմանը այլ արժեթղթեր	13–ից մինչ– 52 շաբաթ	Բարձր	Բացակայում է
2. Ֆեդերալ որժակալու-թյունների (FNMA, FHLC – այլն) մինչ– մեկ տարի մարման տ–ողությամբ արժեթղթերը	Մինչ– 1տարի	Լավ	Շատ ցածր
3. Խոշոր ընկերություն-ների առ–տրային ար-ժեթղթեր մինչ– 270 օր մարման տ–ողությամբ (առանց ապահովվածու-թյան)	1–ից մինչ– 270 օր	Սահմանափակ	Ցածր
4. Բանկային փոխանցե-լի վկայա թեր (խոշոր բանկերի)	14–ից 120 օր	Լավ	Ցածր
5. Բանկերի ակցեպտով մուրհակներ (խոշոր ըն-կերությունների պար-տավորություններ բան-կային երաշխիքով)	30–ից 180 օր	Լավ	Ցածր

* 3.1. – 3.2. աղյուսակները բերվում են Կիդուэлլ Դ.Ս., Петерсон Բ.Լ., Блекуэлլ Դ.Ս., Финансовые институты, рынки и деньги, СПб., Изд. “Питер”, 2000, էջեր 68, 69:

Աղյուսակ 3.2.

Դրամի շուկայի հիմնական մասնակիցների գործառնությունները
ֆինանսական հիմնական գործիքներով

Ֆինանսական հիմնական գործիքները	Ֆեդերալ ռեզերվային համակար.		Գանձապետարան		Առ-տրային բանկեր		Ներդրում. բանկեր, դիլերներ, բրոկերներ		Ընկերություններ	
	Ա.	Պ.	Ա.	Պ.	Ա.	Պ.	Ա.	Պ.	Ա.	Պ.
1. Պետական պարտատոմսեր	+			+	+		+			+
2. Ֆեդերալ ործակալությունների արժեթղթեր	+				+		+			+
3. Բանկային փոխանցելի վկայա ղեր							+	+		+
4. Առ-տրային արժեթղթեր							+	+		+
5. Բանկային ակցեստով մուրհակներ	+				+		+	+		+

Ա. – ակտիվային,
Պ. – պասիվային գործառնություններ

Ինչպես երևում է աղյուսակ 3.2–ից, առևտրային բանկերը դրամի շուկայում միաժամանակ հանդիսանում են և որպես գլխավոր թողարկողներ, և որպես գլխավոր ներդրողներ:

Դրամի շուկայի պետական կարգավորումն իրականացվում է բանկային համակարգը կարգավորող լիազորված պետական մարմնի կողմից՝ կենտրոնական կամ ազգային բանկերի կողմից: Մեր հանրապետությունում այն իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, իսկ, օրինակ, ԱՄՆ–ում՝ Ֆեդերալ ռեզերվային համակարգի կողմից, մի շարք այլ երկրներում՝ ազգային բանկերի կողմից:

3.3. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ֆինանսական շուկայի հաջորդ կարևոր հատվածը՝ կապիտալի շուկան, ինչպես նշվեց վերևում, ընդգրկում է ֆինանսական երկարաժամկետ հարաբերությունների համակարգը: Կապիտալի շուկայի դերն ու նշանակությունը հասարակական արտադրության ֆինանսավորման գործում այն է, որ այն արտադրության հիմնական օղակներին, մասնավորապես տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին ապահովում է երկարաժամկետ ֆինանսական միջոցներով կամ, այլ կերպ ասած, կապիտալով: Վերջինս հնարավոր է իրականացնել շնորհիվ կապիտալի շուկայի ֆինանսական գործիքների, մասնավորապես բաժնետոմսերի և պարտատոմսերի: Օրինակ՝ պարտատոմսերի միջոցով ընկերությունները կարող են ներգրավել միջնա-

ժամկետ և երկարաժամկետ միջոցներ՝ կախված թողարկման պայմաններից, իսկ բաժնետոմսերի միջոցով, մասնավորապես սովորական, ընդգրկված միջոցներն անժամկետ են:

Բաժնետոմսերի թողարկման շարժառիթները տարբեր են: Տնտեսավարող անձինք և հատկապես ընկերությունները կազմակերպում են արտադրություն, հայթայթում են համապատասխան արտադրության միջոցներ, շենքեր, շինություններ, սակայն հնարավորություն չունեն ամբողջությամբ վճարել դրա դիմաց: Մեկ այլ դեպքում նշված անձինք ուղղակի ցանկություն չունեն միայնակ իրականացնել տվյալ գործունեության ֆինանսավորումը և միայնակ կրել տվյալ արտադրության հետ կապված ռիսկը, հետևաբար ներգրավում են այլ անձանց՝ դրամական միջոցներով հանդերձ: Երկու դեպքում էլ այլ անձանց միջոցների ներգրավումը հնարավոր է դառնում այդ ներդրողին որոշակի իրավունքներ տալու միջոցով: Թերևս այդ է պատճառը, որ կապիտալի շուկան հաճախ կոչվում է իրավունքների շուկա: Դրանք այն բոլոր իրավունքներն են, որոնք տալիս են կապիտալի շուկայի հիմնական ֆինանսական գործիքները՝ սովորական բաժնետոմսերը, իրենց սեփականատերերին և կայանում են հետևյալում:

Առաջին՝ ստացվող եկամուտներից մասնաբաժնի (շահութաբաժնի) ստացում, այսինքն, եթե տնտեսավարող անձը՝ թողարկողը, տվյալ գործունեությունից ստանում է եկամուտ, ապա նա պարտավորվում է դրա համապատասխան մասը տրամադրել՝ վճարել, ներգրավված կապիտալի դիմաց:

Երկրորդ՝ տվյալ գործունեության կառավարմանը մասնակցելու իրավունք. այն է՝ թողարկողի բարձրագույն մարմնի՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի, որոշումների կայացման ընթացքում ներդրողն ունի իր ներդրումներին համապատասխան ձայնի իրավունք:

Երրորդ՝ նախապատվության իրավունք, որի էությունն այն է, որ ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման, այսինքն՝ նոր բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման դեպքում նախկին ներդրողներին իրավունք է վերապահվում առաջնահերթ կարգով ձեռք բերել իրենց բաժնեմասերին համապատասխան նոր բաժնետոմսեր՝ պահպանելով իրենց բաժնեմասի տեսակարար կշիռը ներգրավված կապիտալի կառուցվածքում:

Չորրորդ՝ ներդրողներն իրավունք ունեն ծանոթանալու թողարկողի տնտեսական գործունեության առևտրային գաղտնիք չհանդիսացող ֆինանսական և այլ հաշվետվությունների հետ:

Հինգերորդ՝ թողարկողի լուծարումից հետո մնացորդային գույքից մաս ստանալու իրավունք. այսինքն՝ թողարկողի լուծարումից և օրենսդրությամբ սահմանված առաջնահերթ բոլոր պարտավորությունները կատարելուց հետո բաժնետերն ունի մնացորդային գույքից իր մասնաբաժնին համապատասխան մաս ատանալու իրավունք:

Ստանալով նման իրավունքներ՝ փաստորեն ներդրողները դառնում են տվյալ թողարկողի հիմնադիրները կամ ուղղակի բաժնետերերը, և թերևս այդ է պատճառը, որ բաժնետերերով ներգրավված միջոցները սեփական են:

Բացի այդ, սովորական բաժնետոմսերով ներգրավված միջոցները, ֆինանսական այդ գործիքների առանձնահատկության և արժեթղթերի երկրորդային շուկաների շնորհիվ անժամկետ են: Այսինքն, եթե բաժնետերը՝ ներդրողը, որոշակի ժամկետից

հետո ցանկանում է ազատվել բաժնետոմսերից և վերադարձնել իր դրամական միջոցները, ապա դրա համար նա թողարկողին չի դիմում, այլ դիմում է կապիտալի երկրորդային շուկա և վաճառում է դրանք այլ ներդրողի: Հենց այս շուկայի գոյության շնորհիվ էլ բաժնետոմսերով հավաքագրված միջոցները դառնում են անժամկետ:

Ներդրողների կողմից արժեթղթերում կատարվող ներդրումները, կապիտալի շուկայում նույնպես, տեղի են ունենում որոշակի դրդապատճառներից ելնելով: Դրանք այն անձինք են, որոնք ունեն դրամական միջոցներ, չունեն համապատասխան հմտություններ կամ միջոցներ արտադրության կազմակերպման համար: Կամ էլ դրանք այն անձինք են, որոնք չեն ցանկանում իրենց ամբողջ կապիտալը ներդնել մեկ թողարկողի արժեթղթերում և, գնելով տարբեր թողարկողների արժեթղթեր, ձևավորում են փաթեթ՝ դիֆերսիֆիկացնելով ներդրումային ռիսկը: Այս պայմաններում ներդրողները նպատակ են հետապնդում լավագույն հարաբերակցություն ապահովել ռիսկի և եկամտաբերության միջև, այն է՝ ռիսկի որոշակի մակարդակի պայմաններում ապահովել առավելագույն եկամուտ կամ որոշակի եկամուտի պայմաններում ապահովել նվազագույն ռիսկ: Անհրաժեշտ է նկատել նաև, որ նշված հարաբերակցության ապահովման հնարավորությունը կապիտալի շուկայի գործառույթներից մեկն է:

Կապիտալի շուկայի մյուս կարևոր ֆինանսական գործիքը՝ պարտատոմսը, հնարավորություն է ընձեռնում թողարկողներին ներգրավելու ֆինանսական փոխառու միջոցներ: Այսինքն՝ որոշակի ժամկետից հետո այդ միջոցները պետք է վերադարձվեն, ինչպես նաև դրանց դիմաց պետք է կատարվի վճարում պարտատոմսի թողարկման որոշմամբ նախատեսված պայմաններով ու կարգով:

Տնտեսական ընկերությունների կողմից թողարկվող պարտատոմսերը կոչվում են կորպորատիվ պարտատոմսեր, դրանք բազմազան են՝ կախված թողարկման ժամկետներից, վճարման պայմաններից, ինչպես նաև դրանց ապահովվածության աստիճանից: Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընկերությունները կարող են թողարկել՝

- ա) ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
- բ) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
- գ) առանց ապահովման պարտատոմսեր:

Վճարման պայմաններից կախված՝ ընկերությունների պարտատոմսերը կարող են լինել փոխարկելի, փոփոխական կուրսով, շահույթի բաշխմանը մասնակցությամբ, ինչպես նաև նպատակային:

Փոխարկելի պարտատոմսերը իրավունք են տալիս իրենց սեփականատերերին թողարկման որոշմամբ սահմանված ժամկետում այդ պարտատոմսերը մարել՝ դրանք փոխանակելով այլ արժեթղթերով, սովորաբար սովորական բաժնետոմսերով:

Փոփոխական կուրսով պարտատոմսերի դեպքում փոխատվական կապիտալի շուկայական կուրսի փոփոխությունից ներդրողներին պաշտպանելու նպատակով դրանց եկամտի տոկոսադրույքը կապվում է փոխատվական կապիտալի շուկայական կուրսի հետ:

Շահույթների մասնակցությամբ պարտատոմսերի դեպքում, եթե ընկերությունն ապահովում է ավելի բարձր շահութաբերություն, քան պարտատոմսի տոկոսադ-

րույքն է, ապա դրանց տրվում է լրացուցիչ եկամուտ այն չափով, որչափով շահութաբաբերության մակարդակը գերազանցում է պարտատոմսերի տոկոսադրույքը: Օրինակ, եթե տվյալ պարտատոմսերով նախատեսված է վճարել տարեկան 12% եկամուտ, մինչդեռ ընկերության տնտեսական գործունեության տարեկան արդյունքներով ապահովվել է 18% շահութաբաբերություն, ապա այդ պարտատոմսերին վճարվում է նաև 6% (18–12) լրացուցիչ եկամուտ:

Նպատակային են կոչվում այն պարտատոմսերը, որոնց մարումն իրականացվում է ոչ թե դրամական միջոցներով, այլ ապրանքներով կամ ծառայություններով: Օրինակ՝ բնական գազ մատակարարող ընկերությունը կարող է թողարկել պարտատոմսեր, հավաքագրել դրամական միջոցներ և դրանք թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում մարել՝ բնական գազ մատակարարելով:

Կապիտալի շուկայից ներգրավված սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությունն իրենից ներկայացնում է թողարկողի կապիտալի կառուցվածքը, որի ճիշտ կառավարումն անմիջականորեն կապված է կապիտալի շուկայի հետ և պատկանում է վերջինիս կարևոր գործառնությունների թվին: Թողարկողների կապիտալի կառուցվածքի որոշման նպատակով անհրաժեշտ է ցուցաբերել որոշակի մոտեցումներ, հաշվի առնելով, որ կապիտալի կառուցվածքի փոփոխության տվյալ պայմաններում բացահայտվում են փոխառու կապիտալի օգտագործման հնարավորությունները ֆինանսական լծակի ներգործության ուժի միջոցով: Ֆինանսական լծակի ուժի բարձրացումը ենթադրում է շահույթի աճ փոխառու կապիտալի հաշվին: Փոխառու կապիտալը մի կողմից ավելացնում է ֆինանսական ծախսերը, մյուս կողմից մեծացնում է բաժնետոմսերին ընկնող շահույթը: Շահութահարկի բարձր նորմայի դեպքում ընկերությունը շահագրգռված է լինում օգտագործել փոխառու կապիտալը, եթե ֆինանսական լծակի դիֆերենցիալը դրական է:

Ինչպես արդեն նշվել է, կապիտալի շուկայի հիմնական մասնակիցները, որոնք ապահովում են շուկան ֆինանսական գործիքներով և դրամական միջոցներով, թողարկողներն ու ներդրողներն են, որոնք կարող են լինել տնտեսավարող անենատարբեր անձինք, ինչպես նաև պետությունը, տարածքային մարմինները, քաղաքացիներն ու ընտանեկան տնտեսությունները: Բացի նշված մասնակիցներից, կապիտալի շուկայում գործունեություն են իրականացնում և թողարկողներին ու ներդրողներին ծառայություններ են մատուցում անձինք, որոնք կոչվում են կապիտալի շուկայի մասնագիտացված (պրոֆեսիոնալ) մասնակիցներ: Դրանք կարող են լինել բրոքերային, դիլերային ընկերությունները, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչները, արժեթղթերի պահառուները և օրենքով սահմանված այլ անձինք:

«Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բրոքերն այն անձն է, որը բրոքերային ընկերության կազմում, նրա անունից կամ այլ կերպ այլ անձանց հաշվին (հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա) իրականացնում է արժեթղթերով գործարքներ կատարելու գործունեություն (բրոքերային գործունեություն): Իսկ դիլերն այն անձն է, որն իրականացնում է արժեթղթերով առք ու վաճառքի գործունեություն (դիլերային գործունեություն) իր հաշվին:

Արժեթղթերի հավատարմագրային կառավարումը, որն իրականացնում են ինվեստիցիոն կառավարիչները, պարզապաճարի դիմաց իր տիրապետմանը հանձնված

այլ անձին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձի օգտին (շահառու) կառավարչի անունից

ա) արժեթղթերի,

բ) արժեթղթերում ներդրումներ կատարելու համար նախատեսված դրամական միջոցների,

գ) հավատարմագրային կառավարման արդյունքում ստացված արժեթղթերի ու դրամական միջոցների կառավարումն է:

Կապիտալի շուկայում պահառուների գործունեությունն իր մեջ ընդգրկում է արժեթղթերի պահպանության, պահառության և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործառնությունները: Ժամանակակից շուկաներում դրանք իրականացվում են դեպոզիտարային կազմակերպությունների կողմից:

Շուկայավարման կարևոր խնդիրներից մեկը կապիտալի շուկայի կարգավորումն է: Կապիտալի շուկայում պետության դերը, ընդհանուր առմամբ, կարելի է քննարկել երկու տեսանկյունից. առաջին՝ պետությունը՝ որպես կապիտալի շուկայի կարգավորող և վերահսկող, որի դեպքում պետությունն իրականացնում է համակարգի կարգավորում և հսկողություն «դրսից», և երկրորդ՝ պետությունը՝ որպես կապիտալի շուկայի, այսպես կոչված, մասնակից (թողարկող կամ ներդրող), որի դեպքում պետությունն իրականացնում է համակարգի վրա ազդեցություն «ներսից»՝ որպես համակարգի տարր:

Տարբեր երկրներում, կախված տվյալ երկրի զարգացման տնտեսական և քաղաքական պայմաններից և ժամանակից, պատմականորեն ձևավորվել են կապիտալի շուկայի պետական կարգավորման տարբեր մոդելներ (ձևեր):

Մոդելներից մեկն այն է, որ պետությունը ֆոնդային շուկայի կարգավորումն իրականացնում է առավելապես պետական մարմինների միջոցով, և միայն շատ քիչ մասն է, որ տրվում է այսպես կոչված ինքնակարգավորվող կազմակերպություններին (ԻԿ), կապիտալի շուկայի մասնակիցների կողմից ստեղծված միավորումներին (ասոցիացիաներին), օրինակ՝ Ֆրանսիան:

Երկրորդը կարելի է անվանել ապակենտրոնացված պետական կարգավորում: Այս դեպքում պետությունը առավելագույն հնարավորության սահմաններում կարգավորման գործառնությունները հանձնում է ինքնակարգավորվող միավորումներին և շուկայի մասնակիցների նկատմամբ կոշտ սահմանափակումային քաղաքականություն չի վարում: Սակայն այս դեպքում պետությունն իրեն իրավունք է վերապահում անմիջականորեն միջամտելու ինքնակարգավորվող մարմինների գործունեությանը: Նմանօրինակ մոդել է կիրառում Մեծ Բրիտանիան:

Ջարգացած բազմաթիվ երկրներում կապիտալի շուկայի կենտրոնացված և ապակենտրոնացված կարգավորումը տարբեր համամասնություններով և ձևերով, այս կամ այն չափերով զուգակցվում է:

Տարբեր երկրներում կապիտալի շուկայի կարգավորումը իրականացվում է պետական տարբեր մարմինների կողմից՝ ֆինանսների նախարարության, ֆինանսների նախարարության և կենտրոնական բանկի, ինչպես նաև անկախ հանձնաժողովների միջոցով և այլն:

Կապիտալի զարգացած շուկա ունեցող երեսուն երկրներից մոտ 50%–ում այդ շուկան կարգավորվում է անկախ հանձնաժողովների միջոցով (ԱՄՆ մոդել): Այդ հանձնաժողովները կազմվում են կառավարության, կենտրոնական բանկի, արժեթղ-

թերի շուկայի մասնակիցների ներկայացուցիչներից և պատասխանատվություն են կրում շուկայի կարգավորման և զարգացման համար: Մոտ 15% երկրներում այդ պատասխանատվությունը կրում է ֆինանսների նախարարությունը, և 15 % երկրներում խառը մոդել է, որի դեպքում արժեթղթերի շուկայի կարգավորման լծակները գտնվում են տարբեր գերատեսչությունների ձեռքին, մասնավորապես ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի և այլն¹:

Որոշ երկրներում գործում է կապիտալի շուկայի կարգավորման բանկային մոդելը, որի դեպքում շուկայի կարգավորման պատասխանատվությունը դրվում է կենտրոնական բանկի կամ բանկային վերահսկողություն իրականացնող մարմնի վրա, եթե այն առաձնացված է կենտրոնական բանկից (օրինակ՝ Գերմանիա, Ավստրիա, Բելգիա): Այս հարցում յուրահատուկ մոտեցում է դրսևորված Շվեյցարիայում, որտեղ ֆոնդային շուկայի վերահսկման միասնական պետական մարմին չկա, և այն իրականացվում է տարածքային մարմինների միջոցով:

ՀՀ-ում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (2000թ.) ներդրվեց կապիտալի շուկայի կարգավորման ապակենտրոնացված մոդելը, իսկ որպես պետական կարգավորող լիազորված մարմին՝ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովը, որի օրենքով սահմանված խնդիրներն ու գործառույթները հանգում էին հետևյալին՝

առաջին ապահովել արժեթղթերում ներդրողների պաշտպանվածությունը, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորումն ու պահպանումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանները,

երկրորդ իր խնդիրներն իրականացնելու նպատակով կարգավորել և վերահսկել Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերով կատարվող գործարքների շուկան և դրա մասնակիցներին՝ սահմանելով կարգավորման և վերահսկողության քաղաքականությունը օրենքին համապատասխան:

ՀՀ-ում ֆինանսական շուկայի կարգավորման և վերահսկման միասնական մարմնի ստեղծման նպատակից ելնելով՝ 2006 թվականից ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը լուծարվեց, և նրա օրենքով սահմանված բոլոր իրավասությունները փոխանցվեցին ՀՀ կենտրոնական բանկին, որի արդյունքում հանրապետությունում փաստորեն գործում է կապիտալի շուկայի կարգավորման բանկային մոդելը:

3.4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ, ՀԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Արժեթղթերի շուկան ֆինանսական շուկայի առանցքային հատվածն է: Այն իր մեջ ներառում է ֆինանսական շուկայի բոլոր այն հարաբերությունները, որտեղ դրամական միջոցների առք ու վաճառքը արտացոլվում, ձևակերպվում է արժեթղթերով: Ընդհանուր առմամբ, որպես տնտեսական կատեգորիա, որպես ճանաչողական ընդհանրացում՝ այն կարելի է բնութագրել հետևյալ կերպ. արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկմամբ, տեղաբաշխմամբ և շրջանառությամբ պայմանավորված

¹ Миркин Я.М., Ценные бумаги и фондовый рынок, М., “Перспектива”, 1995, с. 456–457.

հարաբերությունների համակարգ է: Որպես դրսևորման կոնկրետ ձև՝ արժեթղթերի շուկան կարող է հանդես գալ որպես վայր, ինստիտուտ, մեխանիզմ, կազմակերպություն և այլն:

Որպես ֆինանսական շուկայի հատված, ինչպես ցույց տրվեց վերևում, արժեթղթերի շուկան ընդգրկում է փողը վաճառողներից գնողներին անցման անմիջական, առանց ֆինանսական միջնորդների (ֆինանսական ինստիտուտների) մասնակցությամբ հարաբերությունները:

Արժեթղթերի շուկայի նշանակությունն այն է, որ վերջինիս միջոցով տնտեսավարող անձինք, թողարկելով արժեթղթեր և հատկապես բաժնետոմսեր և պարտատոմսեր, կազմավորում են իրենց սեփական և փոխառու կապիտալը: Այդ է պատճառը, որ հաճախ նաև արժեթղթերի շուկան անվանում են ֆոնդային շուկա: Ինչ վերաբերում է արժեթղթերի և կապիտալի շուկաների համեմատությանը, ապա դրանք ֆինանսական շուկայի տարբեր հատկանիշներով առանձնացված հատվածներ են (տե՛ս գծապատկեր 3.1.), սակայն գործնականում կապիտալի շուկան այդպես էլ կոչում են՝ արժեթղթերի շուկա: Ավելին՝ հաճախ նաև օրենսդրորեն (այդ թվում նաև «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով) արժեթղթերի շուկայի կարգավորման ոլորտում կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի ժամկետով ֆինանսական գործիքները չեն ներառվում: Եվ ընդհակառակը, ինստիտուցիոնալ ներդրողների կողմից ներդրումների կատարման իմաստով ՄՊԸ–ների բաժնեմասերը, տնտեսական ընկերակցությունների փայամասերը համարվում են արժեթղթեր, մասնավորապես ներդրումային (ինվեստիցիոն) արժեթղթեր:

Արժեթղթերի շուկան ցանկացած երկրի շուկայի կարևոր բաղկացուցիչն է: Դրա զարգացման տեմպերն ու աստիճանը վկայում են տվյալ երկրի տնտեսության, ինչպես նաև ամբողջ հասարակության զարգացածության աստիճանի մասին: Այդ են վկայում նաև քիչ թե շատ զարգացած երկրներում անընդհատ հաշվարկվող և հրապարակվող բորսայական ինդեքսները, որոնք իրենց բովանդակությամբ փաստորեն տնտեսության զարգացման հայելին են ու բնութագրիչը:

Մեծ է արժեթղթերի, հատկապես ածանցյալ, դերն ու նշանակությունը նաև ապրանքային շուկաների կազմակերպման գործում: Ներկայումս ապրանքային գրեթե բոլոր բորսաներում ակտիվ շրջանառություն են կատարում այդ ապրանքների հիմքի վրա կազմված ֆյուչերսները և օպցիոնները, առանց որոնց գործնականում հնարավոր չէ որոշել կան կանխատեսել տվյալ ապրանքների գները: Արդյունքում տվյալ ապրանքների շուկաները վերածվում են ածանցյալ արժեթղթերի շուկաների:


Արժեթղթերի շուկաները նույնպես բազմատեսակ են և ունեն բազմաթիվ դասակարգումներ: Հիմնականում արժեթղթերի շուկաները դասակարգվում են արժեթղթերի կոնկրետ տեսակներից և բնույթից կախված, սակայն դրանք դասակարգվում են նաև ըստ այլ հատկանիշների:

Օրինակ՝ կախված այն բանից, թե արժեթղթերի վաճառքից գոյացած դրամական միջոցները որտեղ են հոսում (թողարկողին, թե ոչ), շուկաները լինում են առաջնային և երկրորդային: Դրանք միաժամանակ ձևավորում և ներկայացնում են արժեթղթերի շուկայի հիմնական հատվածները:

Առաջնային շուկաներում արժեթղթերը տեղաբաշխվում են հիմնական, իրական գնողների, հաճախ նաև ֆինանսական միջնորդների կողմից, և ներգրավված դրա-


մական միջոցները մուտք են լինում դեպի դրանց հաշիվներ: Ֆինանսական գործիքները առաջնային շուկաներում գտնում են իրենց առաջին տերերին, առաջին ներդրողներին: Այսպիսով՝ առաջնային շուկաների կարևոր նշանակությունն այն է, որ պակասուրդային բյուջե ունեցող անձինք ֆինանսական շուկայից հավաքագրում են դրամական միջոցներ (դա հստակ ներկայացվել է գծապատկեր 3.4–ում):

Տեղաբաշխված արժեթղթերի հետագա առք ու վաճառքը (շրջանառությունը) իրենից ներկայացնում է երկրորդային շուկան: Առաջին ներդրողները հաճախ ցանկանում են օտարել իրենց ձեռք բերած ֆինանսական գործիքները՝ արժեթղթերը:



Գծապատկեր 3.4. Արժեթղթերի առաջնային շուկայի կառուցվածքը:

Դա կարող է տեղի ունենալ, երբ շուկայում տվյալ ֆինանսական գործիքի շուկայական գինն աճել է, կամ էլ հաճախ ներդրողներին անհապաղ դրամական միջոցներ են անհրաժեշտ լինում: Այդ պատճառով արդեն տեղաբաշխված ֆինանսական գործիքները դուրս են գալիս երկրորդային շուկա: Այս դեպքում և ֆինանսական գործիքները, և դրանց դիմաց տրվող դրամական միջոցները մեկ ներդրողից անցնում են մեկ այլ ներդրողի: Գծապատկերով այն ներկայացվում է հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 3.5):



Գծապատկեր 3.5. Արժեթղթերի երկրորդային շուկայի կառուցվածքը:

Երկրորդային շուկաները տնտեսության մեջ շատ կարևոր դեր են կատարում: Նախ դրանք ապահովում են ֆինանսական գործիքների իրացվելիությունը, այսինքն՝ շնորհիվ այդ շուկաների ներդրողներն իրենց ֆինանսական գործիքները առաք և առանց կորուստների կարող են վերածել դրամական միջոցների: Երկրորդ իրացվելիության շնորհիվ ներդրողները դրամական միջոցների անհրաժեշտության դեպքում այդ ֆինանսական գործիքները թողարկողին չեն ներկայացնում ետգնման, որի արդյունքում էլ ապահովվում է ֆինանսական միջոցների վաճառքի երկարաժամկետությունը, իսկ բաժնետոմսերի դեպքում՝ նաև անժամկետությունը: Երրորդ՝ երկրորդային շուկաների միջոցով ձևավորվում է ֆինանսական գործիքների շուկայական, իրական գինը: Եվ, վերջապես, չորրորդ՝ այս շուկաների շնորհիվ է, որ գործում են նաև առաջնային շուկաները ինչպես սկզբնական, այնպես էլ լրացուցիչ թողարկումների դեպքում: Օրինակ, եթե ներդրողը վստահ չլինի, որ անհրաժեշտության դեպքում չի կարող իրացնել տվյալ ֆինանսական գործիքը, ապա դժվար թե իրականացնի ներդրում այդ գործիքների տեղաբաշխման ընթացքում: Միաժամա-

նակ երկրորդային շուկաներում ֆինանսական գործիքների աշխույժ շրջանառության ու դրանց նկատմամբ եղած պահանջարկի դեպքում է միայն, որ թողարկողները կատարում են լրացուցիչ տեղաբաշխումներ և ֆինանսական շուկայից ներգրավում լրացուցիչ դրամական միջոցներ:

Երկրորդային շուկաներում է, որ ձևավորվում և շրջանառություն է կատարում սպեկուլյատիվ կապիտալը: Օրինակ, եթե ընկերությունը թողարկել և տեղաբաշխել է 10 000 հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 միավոր արժեքով, ապա ներգրավված կապիտալը կկազմի 1 000 000 միավոր (10 000 x 100): Իսկ երբ երկրորդային շուկայում բաժնետոմսի շուկայական գինը հասնում է մինչև 120 միավորի, ապա շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի ընդհանուր գինը՝ կապիտալացումը, կկազմի 1 200 000 միավոր (10 000 x 120): Թողարկողի ստացած և շրջանառության մեջ գտնվող գումարների տարբերությունը՝ 200 000 միավորը, իրենից ներկայացնում է սպեկուլյատիվ կապիտալը, որը շրջանառություն է կատարում երկրորդային շուկայում և կազմում է այդ բաժնետոմսերը վերավաճառողների եկամուտը:

Արժեթղթերի շուկաները դասակարգվում են նաև բորսայինի և արտաբորսայինի: Բորսային են կոչվում այն շուկաները, երբ ֆինանսական գործիքների առք ու վաճառքը կատարվում է հատուկ մասնագիտացված կազմակերպություններում՝ ֆոնդային բորսաներում: «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ֆոնդային բորսան ինքնակարգավորող կազմակերպություն է, որը որոշակի տեղում, օրենքով և այլ իրավական ակտերով ու իր կանոններով սահմանված կարգով կազմակերպում է արժեթղթերով հրապարակային առևտուր և իրականացնում է արժեթղթերի գնանշում:

Ֆոնդային բորսաներն ապահովում են արժեթղթերի առք ու վաճառքի մի շարք կարևոր առավելություններ:

Առաջին արժեթղթերի առք ու վաճառքի իրականացման համար որոշակի տեղի և ժամկետների սահմանում: Դա նշանակում է, որ ֆոնդային բորսաներն իրենց կանոններին համապատասխան նշանակում են արժեթղթերով հրապարակային առևտրի վայրն ու սակարկությունների կազմակերպման ժամկետները: Ներդրողներն ու արժեթղթերի գնորդները հստակ գիտեն՝ երբ և որտեղ կարող են իրականացնել իրենց նպատակները և օգտվել բորսայի ծառայություններից: Դրանով էլ ֆոնդային բորսաները կարողանում են ապահովել արժեթղթերով առևտրի կենտրոնացում և մշտական գործող, կայուն շուկա:

Երկրորդ՝ արժեթղթերի շուկայական, իրական գների ձևավորում: Ֆոնդային բորսաներում առևտուրն իրականանում է աճուրդների կազմակերպմամբ: Երկակի աճուրդների անցկացման շնորհիվ միաժամանակյա աճուրդ է կազմակերպվում ինչպես գների բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ, որի արդյունքում գնողի համար ապահովվում է ամենացածր, իսկ վաճառողի համար՝ ամենաբարձր գինը, որն էլ իրենից ներկայացնում է շուկայում տվյալ պահին ձևավորված իրական գինը:

Երրորդ՝ արժեթղթերի և առևտրի մասնակիցների ընտրություն: Որպեսզի արժեթղթերը թույլատրվեն բորսայի սակարկություններին, թողարկողները պետք է իրենց մի շարք ցուցանիշներով բավարարեն բորսայի կողմից սահմանված պահանջներին և գրանցվեն բորսայում, այսինքն՝ ցուցակվեն, որը ֆինանսական գրականության մեջ կոչվում է լիստինգ, իսկ ներկայացվող պահանջները՝ լիստինգի պահանջներ: Կիրա-

ռելով ցուցակման համակարգը՝ բորսան իրականացնում է լավագույն թողարկողների լավագույն արժեթղթերի ընտրություն, հնարավորություն ընձեռում բացահայտել առավել որակյալ և ապահով արժեթղթերը և բարենպաստ պայմաններ ստեղծում շուկայի կարգավորման համար: Իրենց կողմից սահմանված կանոնների և տնտեսական ու բարոյական մի շարք չափանիշների հիման վրա բորսաներն ընտրում են մաս առևտրի մասնակիցներին և միայն դրանց թույլատրում մասնակցել բորսայի սակարկություններին:

Չորրորդ՝ սակարկությունների և գործարքների թափանցիկության ապահովումը: Բորսաները պարտավոր են օրենքով և իրենց կանոններով սահմանված կարգով բացահայտել և հրապարակել բորսային առևտրի վերաբերյալ տեղեկությունները: Դրանք են՝ սակարկություններին թույլատրված արժեթղթերի և մասնակիցների ցուցակը, արժեթղթերի առավելագույն և նվազագույն գները, ինչպես նաև միջին գինը, արժեթղթերի նկատմամբ առավելագույն և նվազագույն առաջարկն ու պահանջարկը, գործարքների կնքման ժամկետներն ու դրանց կատարման պայմանները, արժեթղթերի գների մանիպուլյացիայի սահմանափակման, մասնակիցների նկատմամբ պատժամիջոցների կիրառման կարգն ու պայմանները և այլն: Բորսան պարտավոր է ապահովել իր ծառայություններից օգտվող միևնույն դասի բոլոր անձանց համար տեղեկությունների հավասար հասանելիություն:

Հինգերորդ՝ բորսայում կնքված գործարքների կատարման երաշխիքի ապահովում: Ֆոնդային բորսաներն ապահովում են գործարքների կատարման երաշխիքներ, քանի որ. ա) ցուցակման (լիստինգի) միջոցով նրանք ընտրում են ֆինանսապես կայուն և շահույթով աշխատող թողարկողների արժեթղթերը՝ դրանով ապահովելով վաճառվող և գնանշվող արժեթղթերի հուսալիությունը, բ) բորսայի կողմից հաստատված կարգով կոշտ պայմաններ են կիրառում գործարքների կնքման, գրանցման և կատարման նկատմամբ, որի շնորհիվ առևտրի մասնակիցներն ավելի վստահ և ապահով են զգում իրենց, գ) իրենց հաշվարկային պալատների միջոցով ստեղծում են երաշխիքային և պահուստային հիմնադրամներ՝ գործարքների կատարումը երաշխավորելու նպատակով, իսկ, օրինակ, աժանցյալ արժեթղթերի շուկաներում, դեռ ավելին, հաշվարկային պալատն ինքն է ծառայում որպես երաշխավորող. գնողի համար հանդես է գալիս որպես վաճառող, վաճառողի համար՝ որպես գնող:

Ֆինանսական գործիքների մնացած բոլոր շուկաները կոչվում են արտաբորսային: Դրանք լինում են բորսայակից, կազմակերպված համակարգչային, սակավ կարգավորվող և չկարգավորվող (այսպես կոչված՝ «փողացային» կամ «սև»):

Բորսայակից շուկաները ստեղծվում են ֆոնդային բորսաների կողմից և գտնվում են դրանց ընդհանուր ղեկավարման ու կարգավորման ներքո: Որպես կանոն, այս շուկաները արժեթղթերի թողարկողների նկատմամբ ներկայացնում են ցուցակման համեմատաբար ցածր պահանջներ, այստեղ շրջանառություն են կատարում համեմատաբար փոքր և միջին ընկերությունների արժեթղթերը, իսկ բորսաները, կատարելով ընդհանուր վերահսկողություն, գնանշում և պահպանելով առևտրի կանոնները, հիմքեր են ստեղծում այդ արժեթղթերի բորսաներ մուտք գործելու համար:

Արտաբորսային առևտրի կազմակերպման ժամանակակից կարևոր կառույցներից են կազմակերպված համակարգչային շուկաները: Դրանք կարգավորվող շուկաներ են, որոնք ունեն արժեթղթերի և առևտրի մասնակիցների սակարկություններին

թույլատրելու իրենց կարգն ու պայմանները, գործարքների և հաշվարկների իրականացման պահանջները և այլն: Այստեղ ուղղակի սակարկություններն իրականացվում են համակարգչային տեխնիկայի միջոցով, որն առևտրի բոլոր մասնակիցների համար ապահովում է տեղեկատվության և գործարքներին մասնակցելու հավասար հնարավորություններ, ինչպես նաև երկակի աճուրդների կազմակերպման շնորհիվ՝ իրական գների ձևավորում: Արտաբորսային առևտրի կազմակերպման նման օրինակ է ԱՄՆ արժեթղթերի դիլերների ազգային ասոցիացիայի կողմից ստեղծված ավտոմատ գնանշման համակարգչային համակարգը (NASDAQ), արտաբորսային ավտոմատ առևտրի կանադական համակարգը (COATC), Սինգապուրի ֆոնդային բորսայի ավտոմատ գնանշման և առևտրի համակարգը (SESDAQ) և այլն:

Սակավ կարգավորվող և չկարգավորվող շուկաներն հիմնականում աչքի են ընկնում ապակենտրոնացվածությամբ, արժեթղթերի ցուցակման, առևտրի մասնակիցների որակավորման պահանջների, գնանշման, գործարքների գրանցման և հաշվարկների իրականացման կանոնների, հետևաբար նաև կարգավորման ու վերահսկողության բացակայությամբ: Սակավ կարգավորվող շուկայի օրինակներ կարող են ծառայել, թեկուզ, մասնագիտացված անձանց կողմից ստեղծվող շուկաները («հենախոսային» շուկաները):

Դրամի շուկաներում արտաբորսային առևտուրը հիմնականում իրականացվում է դիլերների կողմից, որի արդյունքում էլ ձևավորվում են նաև դիլերային շուկաները: Դիլերները, սահմանելով պահանջարկի, ինչպես նաև առաջարկի գները, հանդես են գալիս որպես, այսպես կոչված, «շուկայի ստեղծողներ» (market maker): Դրանք ֆինանսական գործիքներով գործարքները կատարում են իրենց միջոցներով և իրենց անունից, այսինքն՝ կրում են իրենց վրա ֆինանսական ռիսկերը: Բացի այդ, դիլերները պարտավոր են հրապարակել, բացահայտել իրենց կողմից գնվող և վաճառվող ֆինանսական գործիքների գները, ինչպես նաև դրանց վերաբերյալ էական պայմանները (օրինակ՝ գնման և վաճառքի ժամկետները, ակտիվների նվազագույն և առավելագույն ծավալները և այլն):

Արժեթղթերի շուկաները դասակարգվում են նաև գործարքների կնքման և կատարման ժամկետներից կախված: Այդ տեսանկյունից դրանք տարբերակվում են սփոթ (ընթացիկ) և ժամկետային շուկաների:

Սփոթ շուկաներում գործարքի կնքումը, վճարումը և գործարքի առարկա հանդիսացող ակտիվների առաքումը կատարվում են միաժամանակ, անմիջապես: Միաժամանակ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, օրինակ՝ տարաժամկետ վճարում և այլն, իսկ «անմիջապես» արտահայտությունը կարող է նշանակել վճարում երկու կամ երեք օրվա կամ էլ մեկ շաբաթվա ընթացքում՝ կապված տվյալ շուկայի կողմից վճարումների և առաքումների իրականացման պայմանների հետ: Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ սփոթ շուկաները կոչվում են նաև «կանխիկ վճարումներով շուկաներ»:

Ժամկետային շուկաներում գործարքների կնքումը, դրանց վճարումն ու գործարքի առարկայի առաքումը, որպես կանոն, տեղի են ունենում ապագայում, որոշակի՝ պայմանագրում նշված ժամկետներում: Նշված շուկաների թվին են դասվում ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոն շուկաները:

Ֆորվարդային շուկաների ֆինանսական գործիքները ֆորվարդային պայմանա-

գրերն են: Այն համաձայնագիր է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար ուրոշակի եզրավճարի դիմաց) սահմանված ժամկետներում, սահմանված քանակով, որպես կանոն, գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում արժեթուղթ կամ արժույթ: Դրանք սովորաբար կնքվում են բորսայից դուրս:

Ֆորվարդային պայմանագրերի միջոցով կողմերն ապահովագրում են իրենց շուկայի կոնյունկտուրայի անբարենպաստ փոփոխություններից: Օրինակ՝ բնական գազ մատակարարող ընկերությունը ներմուծվող գազի դիմաց վճարումներ կատարում է յուրաքանչյուր ամիս ԱՄՆ դոլարով, մինչդեռ ներքին շուկայում մատակարարված գազի դիմաց վճարները հավաքագրում է դրամով: Որպեսզի դրամ-դոլար փոխարժեքի փոփոխություններից, այս դեպքում բարձրացումից ընկերությունը չտուժի, ապա այն դոլար վաճառող որևէ կազմակերպության հետ կնքում է դրամով դոլար գնելու ֆորվարդային պայմանագիր մեկամսյա ժամկետով և սովյալ գործարքի համար կայունացնում է փոխարժեքը: Դոլար վաճառող կողմը նույնպես ապահովագրում է իրեն, բայց այս անգամ՝ փոխարժեքի անկումից: Ֆինանսական պրակտիկայում նման գործարքների կնքումը կոչվում է հեջավորում: Տնտեսավորող անձինք հեջավորում կատարում են նաև ֆինանսական այլ գործիքներով, այդ թվում նաև ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերով:

Ֆյուչերսային շուկաներում որպես ֆինանսական գործիքներ ծառայում են ֆյուչերսային պայմանագրերը: Դրանք համաձայնագրեր են, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար ուրոշակի եզրավճարի դիմաց) սահմանված ժամկետներում, սահմանված քանակով և սահմանված գնով մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում արժեթուղթ կամ արժույթ: Ֆյուչերսային պայմանագրերը կնքվում և շրջանառություն են կատարում բորսաներում:

Ֆյուչերսային պայմանագրերի միջոցով կողմերը (ներդրողները) պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքների գների բարձրացումից և իջեցումից շահույթի ստացման նպատակ են հետապնդում: Օրինակ, եթե կողմը ենթադրում է, որ ուրոշակի ժամկետից հետո ոսկու գինն աճելու է, ապա այն ֆյուչերսային պայմանագրում ընտրում է գնողի դիրքը, որը ֆինանսական գրականության մեջ կոչվում է «երկար դիրք», և, ընդհակառակը, եթե կարծում է, որ գները նվազելու են, ընտրում է վաճառողի դիրքը կամ, այսպես կոչված, «կարճ դիրք»: Քանի որ ֆյուչերային պայմանագրերի կողմերի նպատակը շուկայական գների փոփոխությունից շահույթի ստացումն է, ապա այդ պայմանագրերի ճնշող գերակշռությունը չի կատարվում, այլ բորսային կողմից սահմանված պայմաններով և ժամկետներում «դիրքերը փակվում» են: Այս շուկաները լավ կազմակերպված, բարձրիրացվելի շուկաներ են, որտեղ առևտրի կազմակերպման և գործարքների ամբողջ ծանրությունը իրենց վրա են կրում բորսաների հաշվարկային պալատները: Դրանք նաև երաշխավորում են գործարքների կատարումը՝ հանդիսանալով վաճառողի համար որպես գնող, իսկ գնողի համար՝ որպես վաճառող կողմ: Միաժամանակ ֆյուչերսային շուկաներում բորսաներն իրականացնում են ֆյուչերսային պայմանագրերի գնանշում, որի հիման վրա բորսայի հաշվարկային պալատները կատարում են նաև ֆյուչերային առևտրի քլիրինգն ու վերջնահաշվարկը:

Անցյալ դարի 80-ական թվականներից բուռն զարգացում ստացան նաև օպցիոն

շուկաները, որտեղ որպես ֆինանսական գործիքներ հանդես են գալիս օպցիոն պայմանագրերը: Օպցիոնը համաձայնագիր է, որով մի կողմը (սովորաբար որոշակի եզրավճարի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետներում ձեռք բերել կամ վաճառել սահմանված քանակով որևէ ապրանք, արժույթ և արժեթուղթ, այդ թվում՝ ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագրեր:

Փաստորեն, օպցիոն պայմանագրի մի կողմը կամ, ինչպես կոչում են ֆինանսական շուկայում, օպցիոն գնողը կամ օպցիոն վաճառողը ստանձնում է օպցիոնում նշված ակտիվի նշված ժամկետում գնելու կամ վաճառելու պարտավորություն, իսկ մյուս կողմը ստանում է օպցիոնում նշված նույն պայմաններով տվյալ ակտիվի վաճառելու կամ գնելու իրավունք: Օրինակ՝ ներդրողը գնել է օպցիոն, որը նրան իրավունք է տալիս երեք ամիս հետո այդ օպցիոնը վաճառողից ձեռք բերել որևէ ընկերության 100 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10 000 դրամ արժեքով, և այդ իրավունքի համար նրան վճարել է յուրաքանչյուր բաժնետոմսի համար 100 դրամ եզրավճար՝ ընդամենը 10 000 դրամ (100 x 100): Այսպիսով, եթե ժամկետի ավարտից հետո շուկայում տվյալ բաժնետոմսերի գինն ավելի բարձր լինի, քան օպցիոնում նշված գինը, ապա ներդրողը կիրացնի իր իրավունքը, կգնի բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրի համար սահմանված 10 000 դրամ գնով և կստանա այդ գերազանցումը կազմող մասի չափով շահույթ՝ հանած 10 000 դրամ արդեն մուծված եզրավճարը: Իսկ եթե շուկայական գինն ավելի ցածր է, ապա նա չի օգտվի այդ իրավունքից, քանի որ ավելի է ժամ տվյալ բաժնետոմսերը կարող է ձեռք բերել շուկայից: Փաստորեն նա ռիսկի է դիմում միայն վճարած եզրագումարի չափով:

Կախված օպցիոնով տրվող իրավունքից՝ այն լինում է կանչի («քոլ») և դրման («փութ»): Առաջինը օպցիոն գնողին տվյալ ակտիվը գնելու իրավունք է տալիս, իսկ երկրորդը՝ վաճառելու:

Մինչև 1970–ական թվականները օպցիոն շուկաները հիմնականում արտաբորսային էին: Այնուհետև, օպցիոն պայմանագրերի էական պայմանների (ակտիվների, ծավալների, առաքման ժամկետների) ստանդարտացումը լայն հնարավորություններ ընձեռնեց օպցիոնների բորսայական առևտրի կազմակերպման ու զարգացման համար:

Նկատի ունենալով, որ ժամկետային շուկաների ֆինանսական հիմնական գործիքները ածանցյալ արժեթղթեր են, ժամկետային շուկաները կոչվում են նաև ածանցյալների շուկաներ: Այս շուկաներում ֆինանսական գործիքներ (ածանցյալներ) գնողները և վաճառողները, կախված իրենց առաջադրված նպատակներից, բաժանվում են հետևյալ խմբերի՝ սպեկուլյանտների, հեջավորողների և արբիտրաժյորների: Սպեկուլյանտներն այն անձինք են, որոնք նպատակ են հետապնդում ստանալ շահույթ ապագայում ակտիվների գների փոփոխություններից, այդ պատճառով նրանք ակտիվները ձեռք են բերում վերավաճառելու համար: Հեջավորողները, ընդհակառակը, նպատակ են հետապնդում ապագայում կորուստներ չկրել իրենց կողմից գնվող կամ վաճառվող ակտիվների գների փոփոխություններից, այդ պատճառով էլ կնքվող պայմանագրերում ֆիքսում են տվյալ ակտիվների գները: Իսկ արբիտրաժյորներն այն անձինք են, որոնք շահույթ են ստեղծում միևնույն ակտիվների վերավաճառքից, երբ տարբեր շուկաներում առաջացել է այդ ակտիվների գների տարբերություն:

Կախված տարածքային ընդգրկումից՝ արժեթղթերի շուկաները դասակարգվում են նաև ներքին և միջազգային շուկաների: Ներքին շուկաների բնորոշ առանձնա-

հատկությունն այն է, որ դրանցում շրջանառություն են կատարում ներքին թողարկողների ֆինանսական գործիքները, և դրանց առք ու վաճառքին որպես կանոն մասնակցում են տնտեսավարող ներքին անձինք: Ֆինանսական միջազգային շուկաներում և ֆինանսական գործիքները, և առք ու վաճառքի մասնակիցները տարածքային ոչ մի պատկանելիության չեն ենթարկվում: Այդպիսի շուկաների օրինակ են եվրոդոլարի կարծաժամկետ շուկաները, եվրոպարտատոմսերի երկարաժամկետ շուկաները, ԼԻՖՖԵ–ն, Չիկագոյի, Սինգապուրի բորսաները և այլն:

Արժեթղթերի շուկաները դասակարգվում են նաև դրանցում շրջանառություն կատարող ֆինանսական գործիքների տեսակից կախված և տարբերակվում են բաժնետոմսերի, պետական կարծաժամկետ պարտատոմսերի, մուլտիցիպալ պարտատոմսերի, շուկաների և այլն:

Իսկ կախված, օրինակ, գնագոյացման առանձնահատկություններից՝ արժեթղթերի շուկաները լինում են մրցակցային, օլիգոպոլ և մենաշնորհային: Մրցակցային շուկաներում առկա են մեծ թվով վաճառողներ և գնողներ, որի շնորհիվ ակտիվների գները ձևավորվում են զուտ մրցակցության արդյունքում: Օլիգոպոլ շուկաներում առկա են քիչ թվով վաճառողներ, որոնք շատ լավ տիրապետում են գնագոյացման քաղաքականությանը և զգայուն են միմյանց նկատմամբ, որի շնորհիվ կարողանում են վերահսկել շուկայում ակտիվների գների կազմավորմանը: Մենաշնորհային շուկաներում առկա է մենաշնորհ գնող կամ վաճառող, որտեղ բացակայում է մրցակցությունը, և արժեթղթերի գները սահմանվում են հիմնականում մենաշնորհային կարգով:

Հասարակության տնտեսական կյանքում արժեթղթերի շուկայի դերն ու նշանակությունը բնութագրվում են դրա գործառույթներով, որոնք հիմնականում հանգում են հետևյալին:

Առաջին՝ ֆինանսական, ածանցյալ արժեթղթերի շուկաներում նաև այլ ակտիվների գների ձևավորում: Արժեթղթերի շուկաների շնորհիվ գնողների և վաճառողների մրցակցության, ինչպես նաև սակարկությունների արդյունքում ֆինանսական ակտիվները ստանում են իրենց շուկայական գները կամ, այսպես կոչված, գնամշակում են, որն էլ հիմք է ծառայում այդ ակտիվների գնահատման և հաշվառման համար:

Երկրորդ՝ արժեթղթերի իրացվելիության ապահովում: Այս գործառույթն իրականացվում է արժեթղթերի առք ու վաճառքի կազմակերպման միջոցով, որի արդյունքում էլ այդ արժեթղթերի սեփականատերերը կարողանում են դրանք արագ և առանց էական կորուստների վերածել դրամական միջոցների: Վերջինս կարևոր լծակ է տնտեսավարող անձանց համար իրենց ֆինանսական հոսքերի կարգավորման գործում, այսինքն, եթե անհապաղ դրամական միջոցների անհրաժեշտություն է առաջանում, նրանք կարող են հեշտությամբ իրացնել այդ ֆինանսական գործիքները:

Երրորդ՝ տնտեսության մեջ ամենատարբեր անձանց մոտ, այդ թվում ընտանեկան տնտեսություններում, փոշիացած դրամական միջոցները, որոնք առանձին–առանձին ներդրումների համար ոչինչ են, արժեթղթերի շուկայի ֆինանսական գործիքների և կառույցների շնորհիվ համախմբվում են՝ կազմելով հսկայածավալ կապիտալներ, որոնք կենսական անհրաժեշտություն ունեն ներդրումների համար: Օրինակ՝ ընտանեկան տնտեսությունը, որը տարեկան կարող է խնայողություններ կուտակել 100–200 հազար դրամի սահմաններում, չի կարող հետաքրքրություններ ունենալ կամ էական աղբյուր լինել 20 տարվա մարման ժամկետ և մեկ կամ երկու միլիոն

դրամ անվանական արժեք ունեցող պարտատոմսերի համար: Մինչդեռ ներդրումային տարբեր արժեթղթերի և ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների շնորհիվ դրանք հավաքագրվում, համախմբվում և դառնում են խոշորածավալ դրամական միջոցներ:

Չորրորդ՝ կարճաժամկետ տրամադրվող դրամական միջոցները, այսպես կոչված «կարճ փողերը», որոնք նույնպես ներդրումների համար էական նշանակություն չեն կարող ունենալ, արժեթղթերի շուկայի ֆինանսական գործիքների ու ինստիտուցիոնալ կառույցների շնորհիվ կարող են դառնալ երկարաժամկետ ներդրումներ կամ «երկար փողեր»: Վերջինս, ինչպես նշվեց վերևում, հնարավոր է շնորհիվ ներդրումային արժեթղթերի և երկրորդային շուկաների, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառույցների՝ բանկերի, ներդրումային, կենսաթոշակային հիմնադրամների և այլն, ֆինանսական միջնորդային գործունեության:

Յինգերորդ՝ արժեթղթերի շուկայի շնորհիվ ֆինանսական ներդրումները վերափոխվում (տրանսֆորմացվում) են իրական ներդրումների: Ֆինանսական ներդրումներն իրենցից ներկայացնում են բոլոր այն ներդրումները, որոնք կատարվում են ֆինանսական ակտիվներում, այդ թվում ավանդային հավաստագրերում, պետական կարճաժամկետ պարտատոմսերում (ՊԿՊ), բաժնետոմսերում, ածանցյալ արժեթղթերում և այլն: Ներդրողներն ունեն իրենց տնտեսական շահերը, և նրանց հետաքրքրում է ներդրված միջոցների չվերադարձման ռիսկը, ֆինանսական գործիքի իրացվելիությունը, ինչպես նաև ստացվող եկամտի մեծությունը: Այլ հավասար պայմաններում ֆինանսական ակտիվներում ներդրողներին իրական ներդրումները քիչ են հետաքրքրում: Իրական ներդրումներն այն ներդրումներն են, որոնք մուտք են գործում արտադրություն՝ դառնալով հաստոցներ, հոսքային գծեր, բարձր տեխնոլոգիա և այլն, և ստեղծում են եկամուտ: Այդ տեսանկյունից էլ դրամական միջոցների գնողներն էլ ունեն իրենց ուրույն տնտեսական շահերը: Դրանք են դրամական միջոցների ներգրավման ցածր ծախսերը կամ, այլ կերպ ասած, կապիտալի գինը, երկար ժամկետը և համապատասխան ծավալները: Փաստորեն արժեթղթերի շուկաները, զուգակցելով և համապատասխանեցնելով դրամական միջոցների վաճառողների և գնողների շահերը, անհրաժեշտ պայմաններ են ստեղծում ֆինանսական ներդրումները իրական ներդրումների վերափոխման համար:

Վեցերորդ՝ արժեթղթերի շուկաները բաժնետիրական (կորպորատիվ) կառավարման հիմքեր են ստեղծում: Դրանք կարողանում են ապահովել ընկերությունների թափանցելիությունը և հնարավորություններ ընձեռնում բազմաթիվ բաժնետերերին ընկերությունների կառավարմանը մասնակցելու գործում: Ավելին՝ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի արժեթղթերի շուկաներում ազատ շրջանառության շնորհիվ հասարակության ցանկացած անդամ համապատասխան դրամական միջոցների և ցանկության առկայության դեպքում կարող է ձեռք բերել բաժնետոմսեր և դրանցով մասնակցել այդ ընկերությունների կառավարման գործընթացներին: Փաստորեն, այսպիսով, ստեղծելով բաժնետոմսերի ազատ շրջանառելի, թափանցիկ և մրցակցային շուկաներ, պետությունը կարող է կենսագործել տնտեսության դեմոկրատականացում, այն պետք է իրական տնտեսական հիմքը դառնա ամբողջ հասարակության դեմոկրատականացման համար:

3.5. ԱՐԺԵՔՐՅԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Արժեթղթերի շուկային վերաբերող հիմնախնդիրներն իրենց ազգային և միջազգային, ներքին և արտաքին ներդրումների առումով այնքան կարևոր են, որ ներկայումս դուրս են եկել առանձին երկրի կարգավորման առարկա լինելու շրջանակներից: Այդ շուկայի ձևավորման ու կարգավորման հարցերը միշտ գտնվում են միջազգային ու միջպետական տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում, որոնք իրենց հանձնարարականներն ու չափորոշիչներն են ներկայացնում: Նման կազմակերպություններից են «30–ի խումբը» (G30), «Արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգադրիչների միջազգային ընկերությունը» (ISSA), «Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպությունը» (IOSCO), «Ֆոնդային բորսաների միջազգային ֆեդերացիան» (FIBV), «Միջազգային գործառնությունների ասոցիացիան» (IOA) և այլն:

Կարևորելով արժեթղթերի առևտրի միջազգային խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը՝ նշված կազմակերպությունների ընդհանուր նպատակն է.

- ա) միասնականացնել միջազգային տնտեսության ֆինանսական կարգավորման հիմնահարցերի լուծման մոտեցումները,
- բ) գնահատել մասնավոր և հանրային հատվածների որոշումների ազդեցությունը միջազգային ֆինանսական հարաբերությունների վրա,
- գ) ուսումնասիրել շուկայի քաղաքականությունը որոշող անձանց տնօրինության տակ գտնվող լուծումների տարբերակները,
- դ) իջեցնել ներդրումների հետ կապված միջազգային համակարգային ռիսկերը:

Առաջադրված նպատակներից ելնելով՝ նշված կազմակերպությունները արժեթղթերի շուկաներին ներկայացնում են որոշակի առաջարկություններ, հանձնարարականներ և չափորոշիչներ: Մասնավորապես, IOSCO–ն մշակել է արժեթղթերի շուկայի արդյունավետ կարգավորման ընդհանուր դրույթներ պարունակող մի շարք սկզբունքներ, որոնք վերաբերում են կարգավորող պետական մարմնի, ինքնակարգավորվող կազմակերպությունների աշխատանքներին, կարգավորման բնագավառում համագործակցելուն, արժեթղթերի թողարկողներին, կոլեկտիվ ներդրումային սխեմաներին, շուկայական միջնորդներին, երկրորդային շուկայի գործառնություններին և այլն: Այդ սկզբունքներն արդեն ընդհանուր ճանաչում են գտել, մի մասն արդեն արտացոլվել է ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերին և արժեթղթերի շուկային վերաբերող օրենքներում, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ԱՊՀ անդամ երկրների միջխորհրդարանական գազաթաժողովի կողմից 2001թ. նոյեմբերի 24–ի 18–րդ պլենար նիստում ընդունված օրինակելի օրենքում:

Արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելի ձևավորման համար հատկապես կարևորվում են «30–ի խմբի» հանձնարարականները (թվով 9–ը), որոնք վերաբերում են քլիրինգային ու վերջնահաշվարկային համակարգի արդյունավետությանը, համակարգային ռիսկերի իջեցմանը, և որոնք ընդունելի ու կարևոր համարվեցին ինչպես նոր ձևավորվող, այնպես էլ արդեն կայացած շուկաների համար: Ամենահամառոտ կերպով այդ հանձնարարականները կարելի ներկայացնել այսպես.


- 1) շուկայի ուղղակի մասնակիցների միջև գործարքների մանրամասն, լրիվ ստուգումը պետք է կատարվի T+1 ժամկետում (գործարքի կնքման հաջորդ օրվա ընթացքում),
- 2) շուկայի անուղղակի մասնակիցները պետք է մասնակցեն գործարքների ստուգման մանրամասներին և հաստատեն դրանք,

- 3) արժեթղթերի կենտրոնացված դեպոզիտարիայի ստեղծում և շուկայի մասնակիցների (ուղղակի, անուղղակի) մասնակցության ապահովում,
- 4) արժեթղթերով կատարվող գործարքների արդյունքում դրամի և արժեթղթերի հոսքերի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում փոխադարձ հոսքերի հաշվանցման (netting) համակարգի կիրառում,
- 5) բոլոր գործարքներում «արժեթղթերի առաքում վճարման դիմաց» սկզբունքի կիրառում,
- 6) արժեթղթերով գործարքների, ինչպես նաև արժեթղթերի փաթեթի սպասարկման վճարումները պետք է հետևողականորեն կատարվեն բոլոր ֆինանսական գործիքների և շուկաների համար՝ կիրառելով «գործարքների կնքման օրը ստացված միջոցներով» սկզբունքը,
- 7) բոլոր շուկաներում պետք է ընդունվի «լողացող հաշվարկների» համակարգը, իսկ վեջնահաշվարկը պետք է կատարվի T+3 ժամկետում (գործարքի կնքման երրորդ աշխատանքային օրը),
- 8) արժեթղթերի ձևով տրամադրվող և ստացվող վարկավորումը պետք է խրախուսել որպես արժեթղթերով կատարվող գործարքների վերջնահաշվարկի արագացման մեթոդի և վերացնել օրենսդրական խոչընդոտները,
- 9) արժեթղթերով կատարվող գործարքների Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից մշակված ստանդարտ ֆորմատների ընդունում և միջազգային գործարքներում արժեթղթերի նույնականացված համարակալումների (ISIN) օգտագործում:

Հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների հանձնարարականները և շուկայավարման կարևոր սկզբունքները՝ արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ կառուցվածքով (տե՛ս գծապատկեր 3.6.), որն արևմտյան տնտեսագետները հաճախ անվանում են նաև «շուկայի ճարտարապետություն»։ Այստեղ շուկան տրոհվում է երկու հիմնական ինքնակարգավորվող և մրցակցային ենթահամակարգերի:

Առաջինի մեջ պետք է ներառել շուկայում կենտրոնացված գործունեության տեսակների իրականացումը, որոնց հիմնական կրողներն են կենտրոնական դեպոզիտարային, կենտրոնական առևտրային և կենտրոնական քլիրինգային համակարգերը: Ժամանակակից շուկաներում այդ համակարգերն ստեղծվում են ինքնակարգավորվող կազմակերպությունների (ԻԿԿ) կարգավիճակով, որոնց անդամակցում են արժեթղթերի առևտրով զբաղվող մասնագիտացված գրեթե բոլոր մասնակիցները: Վերջինս հնարավորություն է տալիս դրանց ձևափոխվելու ոչ առևտրային անդամակցությունների (մեկ անդամ մեկ ձայն սկզբունքով), ինչի շնորհիվ էլ այս կազմակերպությունները վերաճում են շուկայական կարևոր ենթակառույցների:

Ինչ վերաբերում է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման գործունեությանը, ապա այն կարող է լինել ինչպես ինքնակարգավորվող, այնպես էլ մրցակցային շուկայում: Միջազգային պրակտիկայում հանդիպում են երկուսն էլ, սակայն այստեղ անհրաժեշտ է քննության առնել հետևյալ հանգամանքը. եթե մյուս կենտրոնացված գործունեություն իրականացնող անձիք ծառայություններ են մատուցում իրեց հիմնադիրներին (շուկայի մասնագիտացված մասնակիցներին), ռեեստրը ծառայություններ է մատուցում թողարկողներին: Հետևաբար շուկայում այդ ծառայությունների մատուցման գնագոյացման խնդիրներ են առաջանում:



Գծապատկեր 3.6. Արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելը – կառուցվածքը

ՀՀ-ում արժեթղթերի շուկայի ճարտարապետությունը նույնպես կառուցվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան և միջազգային խորհրդատուների մասնակցությամբ, սակայն այն ունի դրսևորման որոշակի առանձնահատկություններ: Առաջին՝ ինքնակարգավորվող շուկայում գործում են ընդամենը երկու կազմակերպություններ՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, որը համատեղում է դեպոզիտարային, ռեեստրավարի և քլիրինգի ու վերջնահաշվարկի ծառայությունները, և Հայաստանի ֆոնդային բորսան (ՀՖԲ), որը զբաղվում է միայն առևտրի կազմակերպմամբ: ՀՀ-ում ռեեստրավարի ծառայությունները մատուցվում են կենտրոնացված կարգով, սակայն այդ կազմակերպության՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հետ կապ չունեցող անձանց՝ տարբեր բաժնետիրական ընկերություններին: Թերևս այդ է պատճառը, որ գործնականում թողարկողները դժգոհություն են արտահայտում ռեեստրի կենտրոնացված վարման կապակցությամբ: Երկրորդ՝ ՀՖԲ-ում մինչև առևտրային համակարգ հայտերի ներկայացումը մասնակիցները պարտավոր են նախապես դեպոնացնել գործարքի առարկա հանդիսացող և արժեթղթերը, և դրամական միջոցները: Ճիշտ է, այս դեպքում գրեթե բացառվում է գործարքի չկատարման ռիսկը, և այն կատարվում է գործարքի հետ մաժամանակ (T+0), սակայն շուկայի աշխուժացման դեպքում վերջինս կարող է խոչընդոտել մասնակիցների ֆինանսական ապահովվածությունը և բացառել սպեկուլյատիվ նպատակներով գործարքների կնքումը: Երրորդ՝ ՀՀ արժեթղթերի շուկայում բացակայում են շուկայի կայացման համար շատ կարևոր նշանակություն ունեցող ինվեստիցիոն հիմնադրամները և ինվեստիցիոն ընկերությունները:

Այդուհանդերձ, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում արժեթղթերի շուկայի ճարտարապետությունը կայացել է:

Արժեթղթերի շուկայի ճարտարապետության կարևոր հիմնախնդիրներ են մնում պետական կարգավորման և վերահսկման մարմնին վերաբերող դրույթները: Պետական կարգավորման միասնական համակարգի ներդրմամբ հնարավորություններ են ստեղծվում ՀՀ ֆինանսական շուկայում լուծել հետևյալ հիմնախնդիրները՝ ա) շուկայի տարբեր հատվածների զարգացման մակարդակների համահարթեցում, բ) ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների (ֆինանսական միջոցառողների) ամբողջականության և լրիվության ապահովում, գ) ֆինանսական բոլոր գործիքների, ինչպես նաև շուկայում գործունեության բոլոր տեսակների ամբողջականության ստեղծում:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է ֆինանսական շուկայի ընդհանուր բովանդակությունը, և որո՞նք են դրա բնորոշ գծերը:
2. Ի՞նչ հատվածների է տարանջատվում ֆինանսական շուկան:
3. Ի՞նչ գործառույթներ է կատարում ֆինանսական շուկան:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում դրամի շուկան, որո՞նք են դրա ֆինանսական գործիքները և մասնակիցները:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում կապիտալի շուկան, որո՞նք են դրա ֆինանսական գործիքները և մասնակիցները:
6. Ի՞նչ է արժեթղթերի շուկան, ի՞նչ հատվածների է տարանջատվում և ի՞նչ գործառույթներ է իրականացնում:
7. Որո՞նք են արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկաների էությունն ու նշանակությունը:
8. Ներկայացնել արժեթղթերի շուկայի ժամանակակից մոդելը, ենթակառույցները և տալ դրա նկատմամբ ներկայացվող պահանջները:

ԳԼՈՒԽ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

4.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ֆինանսական ինստիտուտները կամ, ինչպես ֆինանսական գրականության մեջ են կոչում, ֆինանսական միջնորդները ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներ են, որոնք ուղղակիորեն միջնորդություն են իրականացնում դրամական միջոցների առաջնային վաճառողների և վերջնական սպառողների միջև (առանձին դեպքերում՝ նաև այլ ֆինանսական միջնորդների միջև), հավաքագրելով իրական (ընտանեկան տնտեսությունների) խնայողություններից դրամական մեծածավալ հիմնադրամներ՝ ուղղորդում են դեպի իրական ներդրումներին: Ժամանակակից ֆինանսական շուկաներում որպես ֆինանսական միջնորդներ հանդես են գալիս առևտրային և խնայողական բանկերը, ներդրումային (ինվեստիցիոն) և կենսաթոշակային հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, վարկային միությունները և այլն:

Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցները ֆինանսական շուկայի յուրահատուկ միջնորդներ են, որոնք ակտիվորեն մասնակցում են դրամական միջոցների իրական խնայողությունների հավաքագրմանը, սակայն դրանց նպատակը ֆինանսական միջոցների սպառումը չէ, այլ դրանց վերավաճառքն է կամ, այլ կերպ ասած, դրանց ուղղորդումը վերջնական, իրական ներդրումներին: Ֆինանսական միջնորդները մի կողմից իրականացնում են տնտեսության մեջ առկա, փոշիացած դրամական միջոցների հավաքագրում և մյուս կողմից դրանք վաճառում են պակասուրդային բյուջե ունեցող անձանց, իրականացնում են ներդրումներ, այսինքն՝ դրամական միջոցները վաճառողներից գնողներին են հասցնում միջնորդավորված ձևով: Հիմնականում սա է պատճառը, որ ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներ կատարվող ներդրումները ֆինանսական շուկայում կոչվում են անուղղակի ներդրումներ: Որպես կանոն, անուղղակի ներդրումներ կատարող անձինք հանդես են գալիս քաղաքացիները, որոնք ֆինանսական շուկա են ուղղում ընտանեկան խնայողությունները: Վերջինս պայմանավորված է մի շարք դրդապատճառներով:

Նախ՝ չնայած որ իրական ներդրումների հիմնական աղբյուրը ընտանեկան խնայողություններն են, այնուամենայնիվ դրանք իրենց ներդրումային բնութագրիչներով փոքր ծավալներով, կարճ ժամկետներով և առաջարկվող տոկոսադրույքներով, ինչպես նաև դրանց սեփականատերերի տնտեսական շահերով, չեն համապատասխանում իրական ներդրումների պահանջներին: Ֆինանսական միջնորդներն իրենց գործունեության արդյունքում ֆինանսական մի շարք գործիքների օգնությամբ վերափոխում են իրենց ֆինանսական պարտավորությունները (հավաքագրած ֆինանսական միջոցները) և դրանք համապատասխանեցնում են իրական ներդրումների բնութագրիչներին և վերջնական սպառողների շահերին: Մասնավորապես, դրանց հավաքագրած ֆինանսական միջոցները դառնում են ավելի գրավիչ անհրաժեշտ ծավալների, ժամկետների, ինչպես նաև տոկոսադրույքների (գնի) տեսանկյունից: Վերջինս սերտորեն կապված է գործարքային (տրանսակցիոն) ծախսերի հետ, քանի

որ գործարքների կնքման և գրանցման անհրաժեշտ ծախսերն ու տուրքերը փոքր ծավալների պատճառով ուղղակի դառնում են անհիմաստ¹: Հաճախ ֆինանսական միջնորդները թողարկում և տեղաբաշխում են իրենց սեփական արժեթղթերը և դրանց շնորհիվ հավաքագրում դրամական միջոցներ: Իսկ, օրինակ, ինվեստիցիոն հիմնադրամների գործունեությունն ամբողջությամբ հանգում է դրան, այն է՝ սեփական արժեթղթերով դրամական միջոցների հավաքագրում և այլ թողարկողների արժեթղթերում ներդրում:

Այդ կերպ ֆինանսական միջնորդները ստեղծում են իրենց սեփական, այսպես կոչված, «ֆինանսական արտադրանքը»՝ ֆինանսական գործիքների ձևով, որոնք իրենց ծավալներով, ժամկետներով, իրացվելիությամբ, իհարկե նաև գնով, տարբերվում են իրենց կողմից հավաքագրած ֆինանսական միջոցների բնութագրերից:

Տնտեսության մեջ ֆինանսական միջնորդների գործունեության բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, որոնք բնութագրում են դրամական միջոցների շարժը ավելցուկային բյուջե ունեցող անձանցից (ԱԲՈՒԱ) դեպի ֆինանսական միջնորդ կառույցներ (ՖՄԿ) և այնուհետև դեպի վերջնական սպառող, այսինքն պակասուրդային բյուջե ունեցող անձիք (ՊԲՈՒԱ):

Օրինակ առաջին. քաղաքացին կամ ընտանեկան տնտեսությունը (ԱԲՈՒԱ) ավանդադրում է իր դրամական միջոցները առևտրային կամ խնայողական բանկում (ՖՄԿ), որն էլ իր հերթին վարկեր է տրամադրում տնտեսավարող անձանց կամ այլ ընտանեկան տնտեսությունների (ՊԲՈՒԱ):

Օրինակ երկրորդ. քաղաքացիները կամ ընտանեկան տնտեսությունները (ԱԲՈՒԱ) ձեռք են բերում ներդրումային հիմնադրամի (ՖՄԿ) բաժնետոմսերը, վերջինս էլ իր հերթին ներդրումներ է կատարում արդյունաբերական բաժնետիրական կամ սահմանափակ ընկերությունների (ՊԲՈՒԱ) կողմից թողարկած արժեթղթերում:

Օրինակ երրորդ. քաղաքացիները (ԱԲՈՒԱ) գնում են ապահովագրական (կյանքի) ընկերության (ՖՄԿ) պոլիսներ, իսկ ապահովագրական ընկերությունն իր հերթին ներդրումներ է կատարում տարբեր բնույթի ընկերությունների (այդ թվում նաև այլ ֆինանսական միջնորդների, մասնավորապես առևտրային բանկերի), ինչպես նաև պետության (ՊԲՈՒԱ) կողմից թողարկած արժեթղթերում և ֆինանսական այլ գործիքներում:


Օրինակ չորրորդ. ընկերությունները, այդ թվում նաև ֆինանսական միջնորդ կառույցները (ԱԲՈՒԱ) ձեռք են բերում առևտրային բանկերի կամ ֆինանսական այլ կառույցների (ՖՄԿ) արժեթղթեր, մասնավորապես բանկային (ավանդային) վկայագրեր կամ առևտրային արժեթղթեր, իսկ վերջիններս էլ իրենց հերթին տրամադրում են վարկեր ընտանեկան տնտեսություններին (ՊԲՈՒԱ):

Ջարգացած շուկա ունեցող երկրներում ֆինանսական միջնորդության նման օրինակները շատ բազմազան ու տարատեսակ են, մինչդեռ ՀՀ-ում ներկայումս ամենատարածված ու զերակշռող ձևը առևտրային բանկերի կողմից իրականացվող ֆինանսական միջնորդային գործունեությունն է: ՀՀ-ում գործող ապահովագրական

¹ Օրինակ՝ նման իրավիճակ է առաջացել ՀՀ-ում մասնակի անհատույց սեփականաշնորհման արդյունքում բազմաթիվ ԲԸ-ներում: Շատ բաժնետերերի բաժնետոմսերի ընդհանուր արժեքն այնքան ցածր է, որ դրանց սեփականության իրավունքի լրացման ծախսերը՝ երազանցում են վերջիններիս, որն էլ խոչընդոտում է դրանց օտարմանը կամ այլ՝ ործարքների կատարմանը:

ընկերությունները կյանքի ապահովագրությամբ գրեթե չեն զբաղվում, ինչ վերաբերում է ներդրումային և կենսաթոշակային ոչ պետական հիմնադրամներին, ՅՅ ֆինանսական շուկայում դրանք ընդհանուր առմամբ չկան:

Ֆինանսական միջնորդ կառույցների գործառնությունների ընդհանուր կառուցվածքը գծապատկերով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տես գծապատկեր 4.1.):



Ա. – ակտիվային, Պ. – պասիվային գործառնություններ

Գծապատկեր 4.1. ՖՄԿ–ների գործառնությունների ընդհանուր կառուցվածքը ավելցուկային և պակասուրդային բյուջե ունեցող անձանց հետ

Անուղղակի ներդրումների դրդապատճառներից մեկն էլ այն է, որ քաղաքացիները (ընտանեկան տնտեսությունները), տիրապետելով որոշակի դրամական միջոցների, դժվարանում են իրականացնել ներդրումային ճիշտ որոշումներ, քանի որ նրանք սովորաբար համապատասխան մասնագիտական հմտություններ չունեն, և նրանց համար բարդ է օգտվել ֆինանսական տեղեկատվություններից, մասնավորապես ընթերցել ու հասկանալ թողարկողների ֆինանսական, շահույթների ու վնասների վերաբերյալ հաշվետվությունները և այլն:

Ընտանեկան տնտեսությունների ֆինանսական միջնորդներին դիմելու հաջորդ դրդապատճառը ֆինանսական ռիսկերի առկայությունն է: Դրամական միջոցների առաջնային վաճառողներն այստեղ առնչվում են հետևյալ ռիսկերի հետ՝ արժուքային փոխարժեքի փոփոխության ռիսկ, տոկոսների (եկամտի) չստանալու ռիսկ, տվյալ ֆինանսական գործիքի իրացվելիության ռիսկ և վերջապես ներդրումների կորստի ռիսկ: Փաստորեն, նրանք դիմում են ֆինանսական միջնորդներին մեղմացնելու կամ դրանց փոխանցելու դրամական միջոցների ուղղակի ներդրումների հետ կապված ռիսկերը:

Ահա, այս տեսանկյունից ելնելով, ընտանեկան տնտեսություններն ունեն դրամական միջոցներ, սակայն չգիտեն որտեղ և ինչպես իրականացնել ներդրումներ, իսկ շատ հաճախ էլ, ինչպես արդեն նշել ենք, դրանք չեն համապատասխանում իրական ներդրումների պահանջներին: Եվ, ընդհակառակը, ֆինանսական միջնորդները մասնագիտացված են, գիտեն այդ ամենը, տիրապետում են ներդրումային որոշումների կայացման որոշակի հմտությունների, սակայն չունեն բավարար ֆինանսական միջոցներ: Այդ պատճառով ֆինանսական շուկայում գործունեության և ծառայություն-

ների մատուցման տարբեր տեսակներով, ինչպես նաև օգտագործելով զանազան ֆինանսական գործիքներ, նրանք դրամական միջոցներ են հավաքագրում առաջնային վաճառողներից՝ կրելով որոշակի պարտավորություններ:

Մասնագիտացվածության և կոնկրետ գործունեության իրականացման շնորհիվ ֆինանսական միջնորդները գտնվում են լավ դիրքում: Նրանք, քաջատեղյակ լինելով վերջնական, իրական սպառողների պահանջներին և դրանց թողարկած ֆինանսական գործիքների բնութագրերին, կարողանում են ապահովել մի շարք առավելություններ, որոնք հետևյալն են.

առաջին՝ կայացնում են լավագույն ներդրումային որոշումներ և իրենց հավաքագրած դրամական միջոցներն ուղղում են հուսալի և բարձր եկամտաբեր ոլորտներ, այդ թվում կոնկրետ ընկերություններ,

երկրորդ՝ ձևավորում են ներդրումների արդյունավետ և օպտիմալ փաթեթներ. «արդյունավետ». այսինքն՝ սահմանված ռիսկի դեպքում ապահովում են առավելագույն եկամուտ կամ սահմանված եկամտի դեպքում՝ նվազագույն ռիսկ, «օպտիմալ». նույնամանա ներդրումների տարբերակներից ընտրում են լավագույնը,

երրորդ՝ իրականացնում են ներդրումների դիվեսիֆիկացիա, այն է՝ ներդրումային փաթեթները կազմավորում են այնպես, որ այնտեղ ներառվեն տարբեր բնույթի, տարբեր եկամտաբերության, տարբեր թողարկողների և տարբեր ռիսկայնության ֆինանսական ակտիվներ, այնպես որ, եկամտաբերության (ռիսկայնության) առունով դրանք պետք է գտնվեն բացասական կոռելյացիայում. եթե մի ակտիվի եկամտաբերությունը (ռիսկայնությունը) նվազում է, մյուսինը պետք է աճի և ընդհակառակը,

չորրորդ՝ նվազեցնում են ներդրումների հետ կապված ռիսկերը. փաստորեն իրականացնելով առաջին երեք կետերում նշված գործողությունները՝ ֆինանսական միջնորդներն էապես նվազեցնում, մեղմացնում, հաճախ նաև իրենց վրա են վերցնում ներդրումների հետ կապված ֆինանսական ռիսկերը:

Ամփոփելով ամհրաժեշտ է նշել, որ ֆինանսական միջնորդներն, ապահովելով բարձր եկամտաբերություն, ցածր ռիսկ և որակյալ ներդրումներ, իրենց թողարկած ֆինանսական գործիքներն օժտում են բարձր իրացվելիությամբ, որի շնորհիվ էլ կարողանում են ավելի շատ ֆինանսական միջոցներ հավաքագրել ֆինանսական շուկայից:

Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների գործունեության առանձնահատկություններից ելնելով էլ կարելի է բնութագրել դրանց հիմնական գործառնությունները ֆինանսական շուկայում:

Նախ ֆինանսական միջնորդ կառույցների նշանակությունը և հիմնական գործառնությունն այն է, որ ընտանեկան տնտեսությունների իրենց բնութագրիչներով և նպատակներով տարբեր առաջնային խնայողությունները համապատասխանեցնում են վերջնական, իրական սպառողներին ամհրաժեշտ ներդրումների բնութագրիչների հետ՝ ստեղծելով ֆինանսական յուրահատուկ «ապրանքներ», ֆինանսական գործիքներ՝ ծավալային, ժամկետային, իրացվելիության, ռիսկայնության և գնային համապատասխան բնութագրիչներով: Դրանով էլ ֆինանսական միջնորդ կառույցները կազմավորում են դրամական միջոցների կայուն հոսքեր դրամական միջոցների իրական վաճառողներից դեպի իրական սպառողները և նպաստում են իրական ներդրումների կայացմանը:

Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների հաջորդ երկու գործառնությունները

բովանդակությամբ վերաբերում են ֆինանսական շուկայի գործառնություններին, սակայն քանի որ դրանք անմիջականորեն իրականացվում են ինստիտուցիոնալ կառույցների կողմից, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ վերջիններին: Դրանք են «մանր, փոշիացած փողերից» «խոշոր փողերի» և «կարճ փողերից» «երկար փողերի» կազմավորման գործառնությունները: Փաստորեն ֆինանսական բոլոր միջնորդներն էլ իրենց ֆինանսական գործիքների շնորհիվ իրականացնում են այս գործառնությունները: Նրանք սեփական ֆինանսական գործիքներով՝ բանկային (ավանդային) վկայագրերով, բաժնետոմսերով, ապահովագրական պոլիսներով, կենսաթոշակային վճարներով, հավաքագրելով դրամական միջոցներ և ստեղծելով համապատասխան դրամագլուխներ, ուղղորդում են ֆինանսական հոսքերը իրական, վերջնական սպառողներին արդեն վերափոխված պարամետրերով: Ֆինանսական շուկաներն իրենց հերթին այս գործառնությունների ճնշող մասն իրականացնում են ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների շնորհիվ և միջոցով:

Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների մյուս գործառնություններն անմիջականորեն կապված են վերը նշվածների հետ և, բնութագրելով այդ ինստիտուտների առավելությունները, հետևյալն են.

Առաջին՝ փոխառության գումարների մասնատում: Դրա էությունն այն է, որ իրական խոշոր ներդրումների համար միջոցներ հայթայթելու նպատակով ֆինանսական միջնորդ կառույցները հնարավորություն ունեն թողարկել մանրատված, շատ փոքր անվանական արժեքներով ֆինանսական գործիքներ և տեղաբաշխել դրանք: Այս գործառնությամբ հատկապես կարևոր է փոքր ներդրողների համար, որոնք փաստորեն իրենց քիչ գումարներով հնարավորություններ չունեն ուղղակի ներդրումներ կատարելու, իսկ վերջիններիս ներդրումները հայտնի է, թե ինչպիսի կարևորություն ունեն տնտեսական աճի ապահովման գործում:

Երկրորդ՝ դրամական միջոցների վերադարձման ճկուն համակարգի ստեղծում: Այս գործառնության բովանդակությունը երկարաժամկետ կապիտալ ներդրումների ապահովումն է: Իրականում ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցները թողարկում են ֆինանսական գործիքներ մարման մեկ, երկու օր ժամկետից սկսած (առևտրային արժեթղթեր և այլն) ընդհուպ մինչև երեսուն և ավելի տարի ժամկետով (երկարաժամկետ պարտատոմսեր): Փաստորեն այս գործառնության շնորհիվ, ինչպես տեսնում ենք, արտադրության ֆինանսավորման համար օգտակար ու հասանելի են դառնում ամենակարճ ժամկետ ունեցող դրամական փոխառությունները:

Երրորդ՝ չվճարումների ռիսկի նվազեցում: Այս գործառնությամբ ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներն ի վիճակի են կատարել, քանի որ դրանց ֆինանսական միջոցները (պասիվներ՝ սեփական ֆինանսական գործիքներ) և ակտիվները (այլ թողարկողների ֆինանսական գործիքներ) ձևավորվում են բազմաթիվ և տարբեր տնտեսավարող անձանցից, հետևաբար ֆինանսական միջնորդներն ի վիճակի են արդյունավետ կառավարել ֆինանսական ռիսկերը՝ կապված ինչպես սեփական, այնպես էլ այլ թողարկողների արժեթղթերի հետ: Չանրահայտ է, որ եթե ներդրումների փաթեթում տարբեր ակտիվների գներն ու եկամտաբերությունները քիչ են կապված միմյանց հետ, ապա փաթեթի արժեքն համեմատաբար ավելի կայուն է: Այդ տեսանկյունից ֆինանսական միջնորդները, իրականացնելով սեփական ակտիվների դի-

վերսիֆիկացում, կարողանում են թողարկել երկրորդային շուկաներում բարձրի-րացվելի ֆինանսական գործիքներ, որոնք ավելի քիչ ռիսկային են:

Զորորդ՝ բարձր իրացվելիության ապահովում: Այս գործառնությունը էապես կապված է նախորդի հետ և հիմնվում է ավելցուկային բյուջե ունեցող անձանց և հատկապես տնային տնտեսությունների բազմաքանակ լինելու հանգամանքի վրա: Փաստորեն նշված անձանց դրամական միջոցների ծախսելու պահանջները անընդ-հատ տարբերվում են իրարից, իսկ առանձին անձանց դրամական միջոցների մուտ-քերն ու դրանց ծախսելու ժամկետները շատ հաճախ չեն համընկնում, որի ար-դյունքում ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցների մոտ առաջանում են «կա-յուն պասիվներ»: Դրա շնորհիվ ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցները կարող-անում են ցանկացած ժամկետի, նույնիսկ վաղաժամկետ, վճարել այս կամ այն ֆի-նանսական գործիքներով պարտավորությունները և դրա արդյունքում ստեղծել ու պահպանել սեփական ֆինանսական գործիքների բարձրիրացվելի երկրորդային շուկա: Վերջինս ապահովվում է նաև ֆինանսական միջնորդների ֆինանսական գոր-ծիքների թողարկման գործարքային ցածր ծախսերի շնորհիվ:

Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցները, նվազեցնելով իրենց կողմից թո-ղարկած ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկերը և ներդրումներ կատա-րելով այլ թողարկողների ֆինանսական գործիքներում, միաժամանակ առնչվում են որոշակի ռիսկերի հետ: Խնդիրն այն է, որ ֆինանսական ինստիտուտների գործու-նեության նպատակը իրենց ակտիվների արժեքի աճն է, վերջին հաշվով՝ շահույթի ստացումը, որն էլ նրանք իրականացնում են իրենց հավաքագրած դրամական մի-ջոցներն ավելի բարձր եկամտաբերություն ունեցող ոլորտներում և ֆինանսական գործիքներում ներդնելով: Մինչնդեռ հանրահայտ է, որ բարձր եկամտաբերությունը կապված է բարձր ռիսկի հետ, որին էլ պետք է մեծ ուշադրություն դարձնեն ֆինան-սական ինստիտուտները: Եվ ոչ միայն դրանք, այլև այդ ոլորտները կարգավորող պետական մարմիններն ու ինքնակարգավորվող կազմակերպությունները: Ֆինան-սական ինստիտուցիոնալ կառույցներին ամենօրյա գործունեության ընթացքում առ-նչվող ռիսկերը հետևյալներն են:

Առաջինը ներդրումների հետ կապված տոկոսների, ինչպես նաև մայր գումարի չվճարումների ռիսկն է: Ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցը պետք է մշտա-պես նկատի ունենա, որ իր կողմից կատարվող ներդրումները վարկառուի տնտեսա-կան դրության վատթարացման պատճառով հնարավոր է, որ չվերադառնան, որն էլ կարող է հանգեցնել ինստիտուցիոնալ կառույցի չվճարումներին՝ իրենց բացասա-կան հետևանքներով հանդերձ: Դա թերևս ֆինանսական միջնորդների գործունեու-թյան գերխնդիրներից մեկն է: Եվ, որպեսզի ներդրումների չվճարման ռիսկը հասցվի նվազագույնի, անհրաժեշտ է մինչև տվյալ փոխառուին դրամական միջոցներ տրա-մադրելը խոր վերլուծության ենթարկել դրա ֆինանսական վիճակը, միջոցների ծախսման ուղղություններն ու դրանց արդյունավետությունը և միայն դրանից հետո կատարել ներդրումներ: Իսկ կատարված ներդրումներից հետո անընդհատ հետևել փոխառուի գործերի ընթացքին, որպեսզի խուսափել ներդրված միջոցների հավա-նական կորուստներից: Բացի այդ, շատ կարևոր է այստեղ կիրառել ներդրումների փաթեթի դիվերսիֆիկացիա:

Երկրորդը, որի հետ առնչվում են ֆինանսական միջնորդները, տոկոսադրույքնե-

րի փոփոխության ռիսկն է: Ֆինանսական շուկայում փոխառված կապիտալի տոկոսադրույքի փոփոխությունը կարող է ծանր ֆինանսական վիճակի հասցնել ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներին: Մասնավորապես, կարող է ստացվել, որ ինստիտուցիոնալ կառույցների ներդրումներից ստացվող տոկոսներն ավելի ցածր լինեն, քան այն տոկոսները, որոնք տվյալ պահին շուկայում առաջարկում են առաջնային վաճառողները: Նման իրավիճակ ստեղծվեց ՀՀ-ում 1993–1995 թվականների ընթացքում, երբ փոխառված կապիտալի շուկայական տոկոսադրույքը տարեկան ավելի քան 150%-ից (1993թ.) նվազեց մինչև տարեկան 30–36%-ի (1995թ.): Արդյունքում բազմաթիվ ֆինանսական կառույցներ սնանկացան՝ չկարողանալով կատարել ստանձնած պարտավորությունները և վճարել իրենց թողարկած ֆինանսական գործիքները: Այդ առումով նման դեպքերում ֆինանսական միջնորդները պետք է կիրառեն տոկոսային ճկուն քաղաքականություն և օգտագործեն ավելի արդյունավետ ֆինանսական գործիքներ (այս օրինակում՝ մասնավորապես փոփոխական կուրսով պարտատոմսեր կամ բանկային վկայագրեր):

Երրորդը ակտիվների իրացվելիության անկման ռիսկն է: Այս ռիսկի բովանդակությունն այն է, որ ֆինանսական միջնորդն ի վիճակի չի լինում կառավարել ֆինանսական հոսքերը, այսինքն՝ ապահովել դրամական միջոցների ժամանակին վճարումները իր մուտքերի հաշվին: Այս ռիսկերը մասնավորապես բնորոշ են առևտրային և խնայողական բանկերին, ապահովագրական ընկերություններին (ինչպես կյանքի, այնպես էլ ընդհանուր ապահովագրության դեպքում), կենսաթոշակային հիմնադրամներին: Այդ պատճառով նշված ինստիտուտները պետք է ապահովված լինեն իրացվելի ակտիվներով և ավանդների հանկարծակի, ժամկետից շուտ պահանջի (առևտրային բանկեր), հաճախորդների դժբախտ պատահարների, մահացությունների (ապահովագրական ընկերություններ) դեպքում, կարողանան կատարել դրամական վճարումներ: Հակառակ դեպքում ֆինանսական միջնորդը կարող է ընկնել ծանր ֆինանսական վիճակի մեջ՝ ընդհուպ մինչև դրա սնանկացումը:

Ինչպես տնտեսավարող բոլոր անձինք, այդ թվում նաև ֆինանսական միջնորդ կառույցները իրենց վրա կրում են նաև ընդհանուր ռիսկերի ազդեցությունը, որոնցից կարելի է առանձնացնել ազգային արժույթի փոխարժեքի փոփոխության, երկրային, քաղաքական ռիսկերը և այլն:

Ձարգացած ֆինանսական շուկաների պայմաններում ներկայումս գործում են բազմաթիվ ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ տեսակների մեջ: Դրանք են՝ ա) ավանդային (դեպոզիտային) կազմակերպությունները, բ) ապահովագրական ընկերությունները, գ) կենսաթոշակային հիմնադրամները, դ) ներդրումային կազմակերպությունները: Նշված տեսակներից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները, որոնք տարբեր երկրներում, կախված տվյալ երկրի իրավական մոդելից («Անգլոամերիկյան» կամ «Մայրցամաքային»), ինչպես նաև պատմանակորեն ձևավորված շուկայական հարաբերություններից և կառույցներից, տարբեր են թե՛ իրենց տարատեսակներով և թե՛ կառուցվածքով: Սակայն, չնայած այդ առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց խմբերին, ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցները բոլորն էլ կատարում են մի շատ կարևոր և հիմնական գործառնություն՝ հավաքագրում են ֆինանսա-

կան միջոցներ առաջնային, հիմնական ներդրողներից և ուղղորդում դրանք վերջնական սպառողներին, այն է՝ իրական ներդրումներին: Գիշտ է, ինստիտուցիոնալ կառույցի յուրաքանչյուր տեսակ միաժամանակ մատուցում է իր հաճախորդներին ծառայությունների որոշակի համախումբ, օրինակ՝ կենսաթոշակային ապահովում, դժբախտ դեպքերից և պատահարներից ապահովագրում և այլն, սակայն բոլոր այս գործողությունները հետապնդում են մեկ նպատակ՝ տնտեսության մեջ առկա ֆինանսական միջոցների հավաքագրում և, վերջին հաշվով, իրական ներդրումներին ուղղորդում:

4.2. ԱՎԱՆՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական ինստիտուտների ամենագործուն և տարածված տեսակը ավանդային կազմակերպություններն են, որոնց թվին են դասվում առևտրային բանկերը, վարկախնայողական ինստիտուտները (հիփոթեքային բանկերը), վարկային միությունները:

Ավանդային կազմակերպությունները ֆինանսական միջնորդություն են իրականացնում ավանդների ընդունման միջոցով: Այս կազմակերպություններն իրենց դրամական միջոցները հավաքագրում են ավանդային և խնայողական հաշիվների բացման և վարման միջոցով, և այդ ծառայությունների էժան և հասու լինելու շնորհիվ քաղաքացիների զգալի մասը անմիջականորեն օգտվում է դրանցից: Թերևս այդ է պատճառը, որ ավանդային կազմակերպությունների գործունեությունը խիստ կարգավորվում և վերահսկվում է պետության կողմից: Ավանդների դիմաց տրվող եկամուտները շատ հաճախ երաշխավորվում են ապահովագրական կազմակերպությունների կողմից, իսկ վերջիններիս կայունությունն ու հուսալիությունն իրենց հերթին երաշխավորվում են պետության կողմից: Դրա շնորհիվ էլ ավանդների կորստի ռիսկը դառնում է գրեթե զրոյական, իսկ իրացվելիությունը՝ շատ բարձր, քանի որ դրանք կարող են վերադարձվել հենց առաջին պահանջով:

Հավաքագրած դրամական գումարներն ավանդային կազմակերպություններն օգտագործում են որպես վարկային միջոցներ՝ տրամադրելով դրանք ամենատարբեր փոխառուների, մասնավորապես քաղաքացիների, ձեռներեցների, տարբեր բնույթի ընկերությունների, ինչպես նաև պետական կազմակերպությունների: Միաժամանակ այդ միջոցների բարձր իրացվելիության և դիվերսիֆիկացման նպատակներով դեպոզիտային կազմակերպությունները դրանք ներդնում են տարբեր արժեթղթերում՝ ձևավորելով ներդրումների հուսալի և արդյունավետ փաթեթներ: Ավանդային կազմակերպությունների եկամուտները կազմավորվում են իրենց ակտիվների փաթեթների եկամտից և մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարներից:

Ֆինանսական շուկաներում գործունեության արդյունքում ավանդային կազմակերպություններն առնչվում են մի քանի լուրջ հիմնախնդիրների հետ, որոնցից հիմնականներն են ակտիվների և պարտավորությունների համապատասխանությունը, տոկոսադրույքի ռիսկը և ակտիվների իրացվելիությունը:

Ակտիվների և պարտավորությունների համապատասխանությունը ավանդային կազմակերպության կարևորագույն խնդիրներից է, որն ուղղակիորեն կապված է դրա եկամտի գոյացման հետ: Վերջինս փաստորեն կազմավորվում է ակտիվների դիմաց ստացվող և պարտավորությունների դիմաց տրվող տոկոսների տարբերությունից, որը ֆինանսական գրականության մեջ կոչվում է սպրեդ, իսկ ստացվող եկամուտը՝ սպրեդի եկամուտ (spread income) կամ տոկոսային (մարժային) շահույթ: Սպրեդից ստացվող եկամուտը պետք է այնքան լինի, որ կարողանա ծածկել ավանդային կազմակերպության կողմից կատարված ծախսերը և միաժամանակ ապահովել ներդրված կապիտալի համար բավարար շահույթ: Յետևաբար կազմակերպության կառավարիչները ձգտում են մի կողմից ներգրավել էժան դրամական միջոցներ, իսկ մյուս կողմից դրանք թանկ վաճառել, որի արդյունքում էլ առաջանում է տոկոսային ռիսկի հիմնախնդիրը:

Տոկոսային ռիսկի գործողությունը կապված է նաև դրամական միջոցների ներգրավման և փոխատվության (վարկերի տրամադրման) ժամկետների տարբերության հետ, երբ այդ ընթացքում փոխատվական կապիտալի տոկոսադրույքն աճում կամ նվազում է: Այսպես, եթե կազմակերպությունը ներգրավում է դրամական միջոցներ կարճաժամկետ ֆինանսական գործիքներով և տրամադրում վարկեր երկարաժամկետ, ապա շուկայում տոկոսադրույքի բարձրացման դեպքում կրում է վնաս, իսկ իջեցման դեպքում՝ ստանում շահույթ: Եվ ընդհակառակը, եթե կազմակերպությունը ներգրավում է դրամական միջոցներ երկարաժամկետ ֆինանսական գործիքներով և տրամադրում է կարճաժամկետ վարկեր, ապա շուկայում տոկոսադրույքի բարձրացման դեպքում շահում է, իսկ իջեցման դեպքում կրում է վնասներ: Բերենք մեկ օրինակ: Դիցուք կազմակերպությունը ներգրավում է կարճաժամկետ փոխառություն տարեկան 10% դրույքաչափով (հասկանալի է, որ փոխատվական կապիտալի միջին տոկոսադրույքը նույնպես 10% է) և տրամադրում է եռամյա կամ հնգամյա ժամկետով փոխատվություններ տարեկան 12% դրույքաչափով, այսինքն՝ առկա է 2% սպրեդ կամ տոկոսային եկամուտ: Սակայն, երբ մեկ տարի անց փոխատվական կապիտալի տոկոսադրույքն աճում և դառնում է, ենթադրենք, 11%, ապա կազմակերպությունը ստիպված ներգրավում է դրամական միջոցներ 11%–ով, և քանի որ նրա տրամադրած փոխատվությունները երկարաժամկետ էին և կազմում էին 12%, ապա սպրեդը նվազում և դառնում է 1%, այսինքն՝ կազմակերպության եկամուտը նվազում է կիսով չափ, և այն փաստորեն կրում է վնասներ, որոնք կարող են հասցնել նրան ընդհուպ միջև սնանկացում: Յետևաբար ավանդային կազմակերպությունները անընդհատ ուշադրության տակ պետք է պահեն տոկոսային ռիսկը և ակտիվների փաթեթի դիվերսիֆիկացման շնորհիվ չեզոքացնեն դրա ազդեցությունը:

Հաջորդ կարևոր հիմնախնդիրը ավանդային կազմակերպության ակտիվների իրացվելիությունն է, որը կապված է կազմակերպությունում ներդրված միջոցների ժամկետից շուտ ետ վերցնելու հետ: Խնդիրն այն է, որ, օրենսդրության համաձայն, ավանդատուներն իրենց խնայողական կամ ավանդային հաշիվներում ներդրված գումարները կարող են պահանջել ցանկացած պահի, մինչդեռ ավանդային կազմակերպությունն իր հերթին այդ դրամական միջոցներն արդեն տեղաբաշխել է և հնարավորություններ չունի դրանք անմիջապես ետ վերադարձնելու, որի պատճառով

այն կարող է հայտնվել ֆինանսական հոսքերի անբավարարության իրավիճակում: Յետևաբար ներդրումային փաթեթների ձևավորման ժամանակ ավանդային կազմակերպությունները պետք է միշտ ուշադրության կենտրոնում պահեն այս հանգամանքը և այնտեղ ներառեն նաև բարձրիրացվելի ակտիվներ, որոնք ցանկացած պահի առանց էական կորուստների կարելի է վերածել դրամական միջոցների: Նշված հիմնախնդիրը նաև պետական կարգավորման կարևոր բաղկացուցիչ է: Այդ պատճառով կարգավորման պետական լիազորված մարմինը պահանջներ է սահմանում ավանդային կազմակերպությունների իրացվելի ակտիվների, դրանց կառուցվածքի և ընդհանրապես ամբողջ ակտիվներում դրանց նվազագույն չափերի նկատմամբ:

ՀՀ ֆինանսական շուկայում ավանդային կազմակերպություններից գործնականում տարածված են միայն առևտրային բանկերը, որոնց խնդիրների, գործառույթների, գործունեության տեսակների և այլ մանրամասներ բերվում են սույն գրքի 18-րդ գլխում:

Ավանդային կազմակերպության մյուս տեսակը՝ վարկախնայողական ինստիտուտը, հատուկ մասնագիտացված ֆինանսական միջնորդ է, որ հիմնականում հավաքագրում է ավանդային կամ խնայողական, ինչպես նաև զանազան ժամկետային սպառողական հաշիվներով դրամական միջոցներ: Այդ միջոցները հիմնականում օգտագործվում են քաղաքացիներին երկարաժամկետ հիպոթեքային վարկեր տրամադրելու համար, մասնավորապես անշարժ գույքի, այդ թվում նաև բնակարանների ձեռքբերման նպատակով: Միաժամանակ ձեռք բերվող անշարժ գույքը ծառայում է որպես գրավ: Վարկային միությունները յուրահատուկ ֆինանսական միջնորդներ են, որոնց հիմնադիրները (անդամները) հիմնականում նաև իրենց վարկառուներն են: Դրանց անդամները բացում են խնայողական գրքույկներ (հաշիվներ), և հավաքագրված միջոցները, որպես կանոն, օգտագործում են իրենք:

Վարկային միություններն ստեղծվում են ընդհանուր պահանջներ ունեցող սպառողների կամ ընկերությունների, ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների անդամների կողմից և իրենց կողպերատիվ հիմունքների շնորհիվ կարող են ազատվել որոշ հարկատեսակներից (մասնավորապես եկամտահարկից և այլն):

Նշված երկու տեսակները ՀՀ-ում գրեթե չկան: Դրա հիմնական պատճառն այն է, որ, առաջին, ՀՀ օրենսդրության համաձայն, առևտրային բանկերին թույլատրվում է իրականացնել ավանդային կազմակերպությունների գործունեության տեսակների գրեթե ամբողջ սպեկտրը և, երկրորդ, որ առայսօր բացակայում է նշված կազմակերպությունների վերաբերյալ համապատասխան օրենսդրությունը:

Ներկայումս ՀՀ ֆինանսական շուկայում ավանդային կազմակերպություններից գործնականում առավել տարածված ու լայնածավալ գործունեություն են իրականացնում առևտրային բանկերը, և բավականին զգալի են դրանց դերն ու նշանակությունը ՀՀ-ում: Որպես կայացած ֆինանսական միջնորդների՝ վերջիններիս գործունեությունը ՀՀ ֆինանսական շուկայում վերջին տարիներին բնութագրվում է այսպիսի տվյալներով (տե՛ս աղյուսակ 4.1.).

Աղյուսակ 4.1.

ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը
ֆինանսական շուկայում 2000–2005 թթ.* (նլն դրամ)

	2000	2001	2002	2003	2004	2005
1. ՀՀ առևտրային բանկերի քանակը, այդ թվում՝ – խնամակալության որժընթացում տնվողները	31 4	30 7	25 5	20 1	20 0	21 0
2. Փաստացի լրացված կանոնադրական կապիտալը	29547	28910	32735	36769	40135	60298
3. Ֆինանսական շուկայից ներդրված միջոցները (ընդամենը). այդ թվում՝ – ավանդներ (ֆիզիկական, իրավաբանական անձինք – բանկեր)	202702 97791 29562	171324 80530 22821	186483 78535 13957	232036 182881 16339	262206 226981 22936	322773 261339 12854
4. Միջոցների օտարժույթի ֆինանսական շուկայում (ընդամենը). այդ թվում՝ – վարկեր տնտեսությանը – ներդրումներ պետական արժեթղթերում – ներդրումներ այլ արժեթղթերում – լիզինգ, ֆակտորինգ	214367 92262 27375 1062 5804	184228 64237 21068 9332 4380	201000 76885 30874 4299 1625	232036 100757 31331 462 4119	200677 132326 36596 3962 4762	272070 184023 65577 999 3782
5. Շահույթ (վնաս)	-3881	-541	3464	7096	1325	12005

Ֆինանսական միջնորդների հաջորդ տեսակը ապահովագրական ընկերություններն են: Դրանք ֆինանսական միջնորդներ են, որոնք որոշակի վճարի դիմաց իրականացնում են պայմանագրով նախատեսված ֆինանսական փոխհատուցում որոշակի ռեպերի (պատահարների) տեղի ունենալու ժամանակ:

Ֆինանսական զարգացած շուկաներում գործում են ապահովագրական երկու տեսակի ընկերություններ՝ կյանքի ապահովագրության և գույքի ու դժբախտ դեպքերից ապահովագրության: Վերջիններս ֆինանսական շուկայում կոչվում են նաև ընդհանուր ապահովագրության ընկերություններ: Ապահովագրական խոշոր ընկերությունները, որպես կանոն, նշված երկու տեսակներով էլ զբաղվում են:

* Աղյուսակը կազմված է ՀՀ ԿԲ-ի հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Աղյուսակ 4.2.

ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը
ֆինանսական շուկայում 2000–2005 թթ. (մլն դրամ)

	2000	2001	2002	2003	2004	2005
1. ՀՀ ործող (լիցենզավորված) ԱԸ քանակը	25	25	23	22	36	24
2. ԱԸ կանոնադրական կապիտալների հանրա-ուժարը	1550.0	1769.2	1773.5	1798.5	2478.8	4208.0
3. Ֆինանսական շուկայից ԱԸ ներ-րա-ված միջոցները (ընդամենը). այդ թվում՝	1335.3	2117.8	2506.8	2657.1	3908.6	4641.5
– ոչ կյանքի (ընդհանուր) ապա-հովա-րություն	1314.7	2102.0	2490.7	2643.8	3889.1	4636.9
– կյանքի ապահովա-րություն	20.6	15.8	16.1	13.3	19.5	4.6
4. Ապահովա-րական պահուստը (ընդամենը).	764.2	853.4	1028.3	1270.4	1892.2	3705.9
5. Ապահովա-րական հատկացումներ (ընդամենը).	362.8	133.6	177.3	454.8	444.6	525.4
6. ԱԸ կատարած ներդրումները (ընդամենը՝). այդ թվում՝	–	2222.5	2061.5	4238.2	6357.1	10024.7
– բանկային ավանդներում՝	–	218.0	252.5	290.1	456.1	1887.7
– հիմնական միջոցներում (մնա-ցորդային արժեք)՝	–	925.6	849.1	804.6	860.4	1083.0
– պետական արժեթղթերում ՝	–	0.8	117.3	156.2	–	375.6
– ոչ պետ. արժեթղթերում ՝	–	123.4	287.5	–	–	–
– ապահովա-րողների դրամա-կան միջոցներ	164.4	575.6	259.0	168.3	1024.3	779.7
– տրամադրված փոխառություններ	–	–	–	–	–	1621.4
– այլ ներդրումներում՝	–	339.1	296.1	–	–	1978.4
7. Շահույթ (վնաս)	237.0	248.2	208.8	119.3	150.5	297.0

** Աղյուսակում այդ տվյալների արտացոլված չլինելը պայմանավորված է նման հաշվետվությունների ներկա-յացման բացակայությամբ:

*) Աղյուսակը կազմված է ՀՀ ՖԷՆ ապահովագրական տեսչության հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Իրականում ապահովագրական ընկերության գործառույթը ռիսկի կրելն է, որի միջոցով էլ նրանք ֆինանսական շուկայից հավաքագրում են դրամական միջոցներ: Այնուհետև, հավաքագրած դրամական միջոցները ապահովագրական ընկերու-թյունները ֆինանսական տարբեր գործիքների օգնությամբ վերափառառում (տեղա-բաշխում) են ֆինանսական շուկայում: Իհարկե, ֆինանսական միջոցների մի մասը, կախված պատահարների տեղի ունենալուց, ուղղվում է պայմանագրերով նախա-տեսված փոխհատուցումներին:

Այսպիսով՝ ապահովագրական ընկերությունները ֆինանսական յուրահատուկ կառույցներ են, որոնք իրականացնում են դրամական միջոցների առք ու վաճառք իրենց վրա որոշակի ռիսկեր կրելու միջոցով¹:

ՀՀ ֆինանսական ներկայումս ձևավորված շուկայում ապահովագրական ընկերությունները երկրորդ կազմակերպություններն են, որոնք հանդես են գալիս որպես ֆինանսական ինստիտուտներ, ֆինանսական միջնորդներ, և դրանց գործունեությունը վերջին տարիներին բնութագրվում է հետևյալ տվյալներով (տե՛ս աղյուսակ 4.2.):

4.3. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Քաղաքացիների (ընտանեկան տնտեսությունների) փոշիացած դրամական միջոցների հավաքագրման և տնտեսության մեջ դրանց ուղղորդման ֆինանսական ինստիտուցիոնալ կառույցներից են կենսաթոշակային հիմնադրամները:

Կենսաթոշակային հիմնադրամը կազմակերպություն է, որի գործունեության նպատակը, կենսաթոշակային սխեմայի համաձայն, կենսաթոշակային հիմնադրամի մասնակիցներին կենսաթոշակային վճարումների իրականացումն է: Կենսաթոշակային սխեման կենսաթոշակային հիմնադրամի կողմից սահմանված կենսաթոշակային հատկացումների և կենսաթոշակային վճարումների պայմանների և ընթացակարգերի ամբողջությունն է:

Ջարգացած շուկաներում լայն տարածում ունեն կենսաթոշակային սխեմաների երկու հիմնական տեսակ. դրանք են կենսաթոշակային սահմանված հատկացումներով և սահմանված վճարումներով սխեմաները: Ներկայումս գործում են նաև խառը սխեմաներով կենսաթոշակային հիմնադրամները, որոնք համատեղում են վերը նշված երկու տեսակները:

Կենսաթոշակային հիմնադիրներ կամ հատկացումներ կատարողներ կարող են լինել գործատուները (իրենց աշխատողների համար), պետական մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք՝ իրենց սեփական կենսաթոշակների համար: Դրանից կախված էլ կենսաթոշակային հիմնադրամները լինում են պետական և ոչ պետական:

Կենսաթոշակային հիմնադրամի մասնակիցներն այն անձինք են, որոնք կատարում են կամ ի շահ որոնց կատարվում են կենսաթոշակային հատկացումները, ինչպես նաև կենսաթոշակային պայմանագրի համաձայն նրանք իրավունք ունեն ստանալու կենսաթոշակ:

Կենսաթոշակային հատկացումը կենսաթոշակային հիմնադրամի մասնակցի կամ նրա օգտին այլ անձի կողմից կենսաթոշակային պայմանագրի համաձայն վճարման ենթակա գումարն է: Որպես կանոն, կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական միջոցները ձևավորում են գործատուների և/կամ աշխատողների հատկացումներից, պետական հիմնադրամների դեպքում նաև պետական մարմինների կողմից:

Սահմանված հատկացումներով սխեմաներում գործատուները հատկացումներ են կատարում միայն սխեմայի մասնակիցների օգտին: Այս դեպքում հատկացումներ

¹ Ապահովա-րական ընկերությունների վերաբերյալ ավելի մանրամասն բերվում է սույն յրթի 21–րդ լուխում:

րի գումարները կախված են լինում աշխատողների աշխատավարձի մեծությունից կամ գործատուի շահույթից: Հետևաբար նաև գործատուն կենսաթոշակների մակարդակների վերաբերյալ որևէ երաշխիք չի տալիս կամ պատասխանատվություն չի կրում: Փաստորեն կենսաթոշակների չափերը որոշվում են հիմնադրամի ակտիվների մեծությունից ելնելով: Վերջինս իր մեջ ընդգրկում է նաև հիմնադրամի ներդրումների շնորհիվ ստացվող եկամուտները և կախված է ներդրումների փաթեթի արդյունավետությունից: Այդ է պատճառը, որ նման սխեմաներում կենսաթոշակային հիմնադրամի մասնակիցները կրում են ներդրումային ամբողջ ռիսկը:

Սահմանված վճարումներով սխեմաներում գործատուն պարտավորվում է թոշակի անցած աշխատողին (կենսաթոշակային հիմնադրամի մասնակցին) ապահովել սահմանված չափերով կենսաթոշակի պարբերաբար վճարում: Նման սխեմաներում, որպես կանոն, կենսաթոշակների չափը որոշվում է աշխատողի աշխատանքային ստաժից և աշխատավարձից կախված, իսկ վճարման ամբողջ պատասխանատվությունը կրում է գործատուն: Հետևաբար այս դեպքում գործատուն իր վրա է վերցնում հիմնադրամի միջոցների ներդրումային ռիսկը:

Սահմանված վճարումներով սխեմաները կարող են լինել ապահովագրված և առանց ապահովագրության: Ապահովագրված սխեմաների դեպքում կենսաթոշակային հատկացումների հաշվին ձեռք են բերվում կայմքի ապահովագրությամբ ընկերությունների պարբերաբար վճարումներով ապահովագրական պոլիսներ: Փաստորեն, այս դեպքում ապահովագրական ընկերությունն իր վրա է վերցնում կենսաթոշակների վճարման երաշխիքն ու ռիսկը:

Երկրորդ դեպքում նման միջոցներ չեն կիրառվում, սակայն այս սխեմաներում որպես կանոն հիմնադրամների հավաքագրած միջոցները կառավարվում են հատուկ մասնագիտացված ինվեստիցիոն կառավարիչների կողմից, որոնք կարող են լինել բանկեր կամ այլ մասնագիտացված կազմակերպություններ:

Այսպիսով՝ կենսաթոշակային հիմնադրամները հավաքագրում են ֆինանսական միջոցներ և դրանց դիմաց պարտավորվում ապահովել կենսաթոշակային վճարումներ: Հավաքագրված ֆինանսական միջոցները կենսաթոշակային հիմնադրամը եկամուտներ ստանալու նպատակով տեղաբաշխում է՝ կազմավորելով ներդրումների փաթեթ: Ներդրումները հիմնականում կատարվում են ընկերությունների բաժնետոմսերում և բաժնեմասերում, ֆիքսված եկամուտով արժեթղթերում, դրամական ակտիվներում, անշարժ գույքում, ներդրումային երաշխավորված պայմանագրերում, անուիտետներում և այլն: Օրինակ՝ ԱՄՆ կենսաթոշակային հիմնադրամների ակտիվները 1991թ. բաշխվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

Սահմանված հատկացումներով հիմնադրամների դեպքում՝

- 23,9%—ը ներդրվել է ընկերությունների բաժնետոմսերում,
- 17,6%—ը՝ բաժնետոմսերում և այլն բաժնային ակտիվներում,
- 11,5%—ը՝ ֆիքսված եկամուտով ակտիվներում,
- 7,7%—ը՝ դրամի շուկայի ֆինանսական գործիքներում,
- 3,3%—ը՝ ներդրումային երաշխավորված պայմանագրերում և
- 6,3%—ը՝ այլ ակտիվներում,

Սահմանված վճարումներով հիմնադրամների դեպքում՝

- 45,7%—ը ներդրվել է բաժնատոմսերում և բաժնեմասերում,

- 35,8%—ը՝ ֆիքսված եկամուտով ակտիվներում,
- 6,2%—ը՝ դրամի շուկայի ֆինանսական գործիքներում,
- 3,9%—ը՝ անշարժ գույքում,
- 2,3%—ը՝ ներդրումային երաշխավորած պայմանագրերում և
- 6,1%—ը՝ այլ ակտիվներում¹:

Կենսաթոշակային հիմնադրամի ակտիվների կառավարումը, որն ինչպես երևում է բերված տվյալներից, լուրջ հիմնախնդիր է և գտնվում է հիմնադրամների, ինչպես նաև կարգավորող պետական մարմինների ուշադրության կենտրոնում:

Ընդհանուր առմամբ հիմնադրամների ակտիվների կառավարումը կարող է լինել երեք տեսակի՝ ա) երբ հիմնադիրներն իրենք են կառավարում (ներքին կառավարում), բ) երբ ակտիվների կառավարումը հանձնվում է մեկ կամ մի քանի մասնագիտացած կառավարչի (արտաքին կառավարում) և գ) երբ երկուսն էլ համատեղվում են (խառը կառավարում): Կենսաթոշակային հիմնադրամի կառավարիչը հատուկ մասնագիտացված և լիցենզավորված իրավաբանական անձ է, որը պայմանագրի հիման վրա հիմնադրամի օգտին և նրա անունից իրականացնում է հիմնադրամի ակտիվների կառավարումը: Կառավարիչը պատասխանատվություն է կրում հիմնադրամի ակտիվների արդյունավետ կառավարման համար, և նրա վարձատրությունը պետք է կախված լինի հիմնադրամի ակտիվների արժեքից: Միաժամանակ կառավարչին օրենսդրորեն պետք է արգելվի՝ ա) օգտագործել հիմնադրամի ակտիվները նրա կենսաթոշակային ապահովման գործունեության իրականացման հետ առնչություն չունեցող նպատակներով, բ) անհատույց օտարել կենսաթոշակային ակտիվները և գ) կենսաթոշակային ակտիվներով կատարել գործարքներ իր հետ փոխկապված անձանց հետ:

Նույն սկզբունքներով խոշոր կենսաթոշակային հիմնադրամները իրենց ակտիվների պահպանությունը կարող են հանձնել պահատվության: Կենսաթոշակային հիմնադրամի ակտիվների պահառուն հատուկ մասնագիտացված և լիցենզավորված իրավաբանական անձ է, որը, պայմանագրի համաձայն, իրականացնում է հիմնադրամի ակտիվների պահպանությունը, պահառությունը և դրանց հաշվառման ու փոխանցման գործառույթները: Բացի այդ, պահառուի վրա օրենսդրորեն կարող են դրվել որոշակի պարտավորություններ հիմնադրամի ակտիվների չափերի ու կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ կարգավորող պետական մարմիններին տեղեկատվության իրազեկման մասին: Մասնավորապես կենսաթոշակային ակտիվների պահառության ընթացքում պահառուն պարտավոր է բացահայտել ակտիվների կազմին ու կառուցվածքին օրենսդրությամբ ներկայացվող պահանջների խախտումները և անմիջապես գրավոր ծանուցել կենսաթոշակային հիմնադրամի խորհրդին, ակտիվների մասնագիտացված կառավարչին և կարգավորող պետական լիազորված մարմնին, կամ, եթե կենսաթոշակային զուտ ակտիվների արժեքը մեկ տարվա ընթացքում նվազում է 30% և ավելի, ապա պահառուն այդ մասին պետք է անհապաղ գրավոր ծանուցի կենսաթոշակային հիմնադրամի խորհրդին և կարգավորող պետական լիազորված մարմնին:

¹ St'iu Faboocci Փ., Управление инвестициями, пер. с англ., М., ИНФРА, М., 2000, с. 180.

Ներկայումս ՀՀ ֆինանսական շուկայում կենսաթոշակային հիմնադրամների գործունեությունը շատ սահմանափակ է: Գործում է մեկ պետական կենսաթոշակային հիմնադրամ: Ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամներ ՀՀ-ում չկան, քանի որ առայսօր բացակայում է դրանց վերաբերյալ օրենսդրությունը:

4.4. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Ֆինանսական շուկայի ինստիտուցիոնալ կարևորագույն կառույցներից են նաև ինվեստիցիոն հիմնադրամները: Դրանք հավաքագրում են դրամական միջոցներ ներդրողներից և կատարում են վերաներդրումներ դրամի, կապիտալի շուկայի ֆինանսական գործիքներում և ինվեստիցիոն հիմնադրամների համար թույլատրելի այլ ակտիվներում: Ինվեստիցիոն հիմնադրամները հավաքագրում են դրամական միջոցներ՝ թողարկելով սեփական բաժնետոմսեր, և այդ բաժնետոմսերից ստացված դրամական միջոցներով ձևավորում են արժեթղթերի դիվերսիֆիկացված փաթեթներ: Փաստորեն, ինվեստիցիոն հիմնադրամները իրենց թողարկած բաժնետոմսերի շնորհիվ ներդրումներ են կատարում այլ թողարկողների բաժնեմասերում, պարտատոմսերում և ֆինանսական այլ գործիքներում:

Ինվեստիցիոն հիմնադրամներում ներդրողները կարող են իրենք ուղղակիորեն ներդրումներ կատարել այլ թողարկողների արժեթղթերում, սակայն այս դեպքում նրանք ունեն մի շարք առավելություններ, որոնք հետևյալն են: Առաջինը դիվերսիֆիկացիայի հնարավորությունն է: Օրինակ՝ առանձին ներդրողը իր կապիտալով նման հնարավորություն չունի, մինչդեռ ինվեստիցիոն հիմնադրամները, հավաքագրելով մեծածավալ կապիտալներ, ստեղծում են արժեթղթերի դիվերսիֆիկացված փաթեթներ և իրենց ներդրողներին ապահովում են կայուն և բարձր եկամուտ: Երկրորդը ներդրումային բարձրորակ մասնագետների, կառավարիչների ծառայություններից օգտվելն է: Եթե առանձին ներդրողը դիմեր նման մասնագետների ծառայություններին, ապա դա զգալի թանկ կլիներ նրա համար, մինչդեռ այս դեպքում առանձին ներդրումների համար կառավարման ծախսերը դառնում են չնչին: Երրորդը կապված է գործարքային ցածր ծախսերի հետ, քանի որ ինվեստիցիոն հիմնադրամների բաժնետոմսերի ձեռքբերումը ներդրողների համար և հարմար է, և էժան, մինչդեռ հիմնադրամի ներդրումների փաթեթում ընդգրկված արժեթղթերի ձեռքբերումը կապված է ժամանակի ու ֆինանսական միջոցների զգալի ծախսերի հետ:

Պատմականորեն ինվեստիցիոն հիմնադրամները ծագել են Եվրոպայում (Բելգիայում) 1822 թ., իսկ ԱՄՆ-ում տարածվել են 19-րդ դարի վերջերին: Սկզբնական շրջանում բոլոր ինվեստիցիոն հիմնադրամները փակ տիպի էին, սակայն ներկայումս ֆինանսական շուկաներում գործում են երեք տիպի ինվեստիցիոն հիմնադրամներ՝ փակ, բաց և փայտիիրական:

Փակ ինվեստիցիոն հիմնադրամները բաց բաժնետիրական ընկերություններ են և ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Ինչպես բոլոր բաժնետիրական ընկերությունները, դրանք թողարկում են որոշակի թվով հայտարարված բաժնետոմսեր, սահմանված կարգով՝ թողարկման ազդագրի գրանցումով և հրապարակումով, տեղաբաշխում դրանք, որը կազմում է դրանց դրամագլուխը, և հետագայում այդ բաժ-

նետոմսերը ետ չեն գնում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Փակ հիմնադրամների բաժնետոմսերը գնվում և վաճառվում են ֆոնդային բորսաներում և ստանում համապատասխան գնանշում: Այսինքն՝ բաժնետոմսերի գինը որոշվում է առաջարկի և պահանջարկի հիման վրա: Այդ պատճառով փակ ինվեստիցիոն հիմնադրամների բաժնետոմսերի արժեքը կարող է շեղվել հիմնադրամների զուտ ակտիվների արժեքից (ԶԱԱ), որը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնադրամի ակտիվների հանրագումար արժեքից հանվում են դրա պարտավորությունները (պարտքերի արժեքը), և մնացորդը բաժանվում է տեղաբաշխված բաժնետոմսերի թվի վրա:

Այն դեպքում, երբ բաժնետոմսերի շուկայական արժեքը ցածր է հիմնադրամի ԶԱԱ-ից, կոչվում են դիսկոնտային բաժնետոմսեր, իսկ երբ բարձր է, պարզևատրային: Վերջին ժամանակներում ֆինանսական շուկաներում տարածում են գտել նաև փակ ինվեստիցիոն հիմնադրամներ, որոնք գործում են որոշակի նախանշված ժամկետներում, որից հետո բաժնետոմսերը ետ են գնվում, և հիմնադրամը լուծվում է: Նման հիմնադրամները կոչվում են ժամկետային հիմնադրամներ (տրաստներ): Դրանք իրենց գործունեության ժամկետի ավարտից հետո վերադարձնում են ներդրողներին կատարված ներդրումները, ինչպես նաև տալիս են որոշակի եկամուտ, սակայն ավելի բարձր, քան գանձապետական պարտատոմսերի դիմաց տրվող միջին եկամուտն է: Ժամկետային հիմնադրամները իրենց ներգրաված ֆինանսական միջոցները, որպես կանոն, ներդնում են պարտատոմսերում: Ֆինանսական գրականության մեջ դրանց հաճախ անվանում են «սինթետիկ պարտատոմսեր», սակայն, ի տարբերություն պարտատոմսերի, դրանց եկամուտները կախված են հիմնադրամի ներդրումների փաթեթի կառավարման արդյունավետության կարևորությունը նաև այն է, որ դրանք նախօրոք նպատակադրվում և հայտարարում են ներդրողներին վճարել որոշակի սահմանված եկամուտ, որը, ինչպես հայտնի է, չի սահմանվում մյուս հիմնադրամների դեպքում:

Բաց ինվեստիցիոն հիմնադրամները, որոնց հաճախ ֆինանսական գրականության մեջ անվանում են փոխադարձ հիմնադրամներ (mutual fund), ի տարբերություն փակ հիմնադրամների, իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: Դրանց բաժնետոմսերի քանակը թողարկման որոշումներով չի սահմանափակվում և անընդհատ վաճառվում ու ետ են գնվում հիմնադրամի կողմից:

Բաց ինվեստիցիոն հիմնադրամները պարտավոր են միշտ գնանշել իրենց բաժնետոմսերը՝ սահմանելով և հրապարակելով դրանց վաճառքի և գնման գները: Փոխադարձ հիմնադրամների բաժնետոմսերի արժեքը որոշվում է նույն սկզբունքով, ինչ փակ հիմնադրամների դեպքում: Բանաձևով այն կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$\frac{\text{Մեկ բաժնետոմսի ընկնող զուտ ակտիվների արժեքը}}{=} \frac{\text{Ակտիվների շուկ. արժեք} - \text{Պարտավորութ. արժեք}}{\text{Շրջանառության մեջ տնվող բաժնետոմսերի թիվ}}$$

Հիմնադրամի բաժնետոմսերը ներդրողներին առաջարկվում են մեկ բաժնետոմսին ընկնող զուտ ակտիվների արժեքով: Սակայն բաժնետոմսերի իրացման հետ

կապված ծախսերի ծածկման նպատակով առաջարկի կամ ետզման գներին ավելացվում են որոշակի կոմիսիոն վճարներ (վերադիրներ):

Փոխադարձ ինվեստիցիոն հիմնադրամների մեծ թափով զարգացման պատճառն այն է, որ ներդրողը ցանկացած ժամանակ կարող է իր բաժնետոմսերը վերադարձնել և ստանալ բաժնետոմսին ընկնող ՋԱԱ–ն, ինչը չի կարելի անել փակ հիմնադրամների համար:

Ինվեստիցիոն հիմնադրամների հաջորդ տեսակը փայատիրական ինվեստիցիոն հիմնադրամներն են, որոնք ֆինանսական գրականության մեջ կոչվում են փայատիրական տրաստներ: Դրանք թողարկում են սահմանափակ քանակի բաժնեմասեր (փայեր), այսպես կոչված փայատիրական վկայագրեր (սերտիֆիկատներ), որոնք տեղաբաշխվում են, և դրանցով հավաքագրվում են հիմնադրամի ֆինանսական միջոցները:

Ֆիքսված դրամագլուխ ունենալու պահով սրանք նման են փակ տիպի հիմնադրամներին, սակայն միևնույն ժամանակ, ինչպես բաց տիպի հիմնադրամների բաժնետոմսերը, դրանց վկայագրերը կարող են ետ գնվել և վաճառվել, սակայն միայն հիմնադրամի կազմակերպչի կողմից: Բացի այդ, փայատիրական հիմնադրամները սովորաբար ունենում են գործողության ժամկետ, որից հետո դրանք լուծարվում են, իսկ վկայագրերը՝ ետ գնվում:

Փայատիրական հիմնադրամները, որպես կանոն, բավարարվում են միայն սահմանափակ թվով վկայագրերի թողարկումով և լրացուցիչ թողարկումներ չեն կատարում: Հավաքագրված միջոցները հիմնադրամի կողմից ներդրվում են գանձապետական պարտատոմսերում, պետական փոխառություններում, կորպորատիվ և մուլտիցիպալ պարտատոմսերում, հազվադեպ նաև արտոնյալ բաժնետոմսերում ու դրամի շուկայի ֆինանսական գործիքներում: Հիմնադրամի ներդրումների փաթեթում ընդգրկված արժեթղթերի վերաբերյալ նշվում է նաև տրաստային պայմանագրում, այդ պատճառով ձեռք բերված արժեթղթերը չեն վերավաճառվում, և դրանք պահվում են մինչև հիմնադրամի գործողության ժամկետը լրանալը: Դրանք կարող են վաճառվել միայն բացառիկ դեպքերում, երբ տվյալ արժեթղթերի վարկանիշը շուկայում սաստիկ նվազել է: Շնորհիվ դրա այս հիմնադրամներն ունեն առավելություն. դրանց կառավարման ծախսերն անհամեմատ էժան են:

Փայատիրական հիմնադրամների հաջորդ առավելությունն այն է, որ ներդրողներն արդեն գիտեն, թե ինչ արժեթղթերով է կազմավորված հիմնադրամի ներդրումների փաթեթը, և վստահ են, որ այն չի կարող փոփոխվել, որն էլ հնարավորություն է տալիս մշտապես պատկերացում կազմել սպասվող եկամտաբերության մասին: Նշված հիմնադրամների թողարկած ֆինանսական գործիքները երկրորդային շուկա չեն ձևավորում, սակայն, ինչպես արդեն նշվեց, ներդրողներն առանձին դեպքերում իրենց փայերը կարող են վաճառել հիմնադրամին:

Ինվեստիցիոն հիմնադրամների բոլոր տիպերի համար կարևոր հիմնախնդիր են հավաքագրած ակտիվների, ինչպես նաև ներդրումային փաթեթների կառավարումը և պահառության կազմակերպումը, որն էլ ամրագրվում է օրենսդրորեն: Ինվեստիցիոն հիմնադրամը պարտավոր է պայմանագիր կնքել հատուկ լիցենզավորված կառավարչի հետ՝ հիմնադրամի ամբողջ գույքի կառավարման, իսկ հատուկ լիցենզավորված պահառուի հետ՝ դրա պահառության համար: Միաժամանակ ինվեստիցիոն

հիմնադրամը կարող է ունենալ իր կառուցվածքային կառավարման մարմինները՝ բաժնետերերի ընդհանուր ժողով և տնօրենների խորհուրդ:

Ներկայումս ՀՀ-ում ինվեստիցիոն հիմնադրամների գործունեությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 1994թ. սեպտեմբերի 30-ի «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» թիվ 469 որոշումով, որով սահմանվում է, որ ինվեստիցիոն հիմնադրամը իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն է, որը՝


- ա) առավելագույն զբաղված է կամ նախատեսում է առավելագույն զբաղվել արժեթղթերում ներդրումներ, վերաներդրումներ կատարելով կամ արժեթղթերի առևտրով,
- բ) տիրում է «ինվեստիցիոն արժեթղթերի», որոնց արժեքը գերազանցում է իր բոլոր միջոցների արժեքի 40%-ը,
- գ) իր թողարկած արժեթղթերն իրացնում է սեփականաշնորհման սերտիֆիկատներով:

Միաժամանակ սահմանվում է, որ «ինվեստիցիոն արժեթղթեր» են համարվում բոլոր արժեթղթերը, այդ թվում տնտեսական ընկերակցությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերը, բացառությամբ այն արժեթղթերի, որոնք ներկայացնում են թողարկողի բաժնեմասերի ավելի քան 50%-ը և պատկանում են մեկ անձի:

Նշված որոշման համաձայն՝ ինվեստիցիոն հիմնադրամը փակ տիպի, երեք իրավաբանական անձանցից (ինվեստիցիոն հիմնադրամ, ինվեստիցիոն կառավարիչ և ինվեստիցիոն պահառու) կազմավորվող մոդել է (տես գծապատկեր 4.2.):

Ինվեստիցիոն հիմնադրամը պետք է հիմնադրվի որպես բաց բաժնետիրական ընկերություն՝ ՀՀ օրենսդրության համապատասխան¹: Հիմնադրամի կանոնադրությամբ և բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ որպես ղեկավար մարմիններ այն կարող է ունենալ բաժնետերերի ընդհանուր ժողով և վարչություն (տնօրենների խորհուրդ)՝ դրանց համար նախատեսված իրավունքներով ու պարտականություններով հանդերձ:

¹ Չնայած որ ՀՀ կառավարության նույն որոշման 1.1. կետում նշվում է, որ ինվեստիցիոն հիմնադրամը «իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն է», այդուհանդերձ որոշման 2.1. կետով պահանջվում է, որ այն «պետք է հիմնադրվի որպես բաց բաժնետիրական ընկերություն»: Մեր կարծիքով, դա չպետք է դիտարկել որպես հակասություն, այլ որ 1.1. կետով հասկացություններում տրվում է ինվեստիցիոն հիմնադրամների բնորոշումը ընդհանրապես, իսկ 2.1. կետում մասնավորեցվում, կոնկրետացվում է տվյալ որոշմամբ կանոնակարգվող, երեք իրավաբանական անձանցից կազմավորվող հիմնադրամի մոդելը:



Գծապատկեր 4.2. Սերրումային (ինվեստիցիոն) հիմնարամի (փակ տիպի) ընդհանուր կառուցվածքը

Հիմնադրամի կենսագործունեության հետ կապված մնացած բոլոր հարցերը հիմնադրամի հետ կնքվող «կառավարման պայմանագրով» դրվում են ինվեստիցիոն կառավարչի վրա (նշված որոշմանը կցվում է նաև հիմնադրամի «կառավարման օրինակելի պայմանագիրը»): Այդ պայմանագրի համաձայն՝ կառավարիչը պարտավոր է իրականացնել հիմնադրամի ամբողջ կառավարումն ու տնտեսական գործունեությունը, մասնավորապես.

- ա) ներկայացնել հիմնադրամը բոլոր այն ընկերություններում, որոնցում նա կատարել է ներդրումներ,
- բ) հիմնադրամի անունից իրացնել նրան պատկանող այլ ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ բաժնետիրոջ բոլոր իրավունքները, ներառյալ այդ ընկերությունների բաժնետերերի ժողովներում քվեարկությունը և դրանց խորհուրդների անդամների նշանակումը,
- գ) ապահովել հիմնադրամին գրասենյակներով, աշխատակազմով ու նրա գործունեության կազմակերպման պայմանագրով նախատեսված այլ հարմարություններով,
- դ) կազմակերպել հիմնադրամի վարչության նիստերը և բաժնետերերի ընդհանուր ժողովները, ուղարկել դրանց օրակարգերն ու անցկացման մասին ծանուցումները,
- ե) իրականացնել հիմնադրամի արժեթղթերի տեղաբաշխումը և շահաբաժինների վճարումը,
- զ) ապահովել հիմնադրամի ներդրումների կառավարման համար անհրաժեշտ պայմանագրային փաստաթղթերի պատրաստումը,
- է) սահմանված կարգով հաշվարկել և հրապարակել հիմնադրամի միջոցների զուտ արժեքը և պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ:

Նույն որոշմամբ սահմանվում է նաև, որ հիմնադրամը պարտավոր է իրեն գույքի պահառության նպատակով նշանակել պահառու, որը կարող է լինել բանկ կամ ֆինանսական այլ կազմակերպություն և ի վիճակի է կատարել պահառության օրինակելի պայմանագրով պահառուի համար նախատեսված բոլոր պարտականությունները և որի համար ունի պետական մարմիններից ստացած համապատասխան լիցենզիա (նշված որոշմանը կցվում է նաև հիմնադրամի գույքի «պահառության օրինակելի պայմանագիրը»): Հիմնադրամի և պահառուի միջև կնքվում է պահառության պայմանագիր, որով վերջինս պարտավորվում է իրականացնել հիմնադրամի ամբողջ գույքի ապահով պահպանությունը, հանդես գալ որպես հիմնադրամի ֆինանսական գործակալ և մատուցել պայմանագրով նախատեսվող ծառայությունները, մասնավորապես իրականացնել բաժնետոմսերի կամ այդ արժեթղթերը ներկայացնող այլ փաստաթղթերի ֆիզիկական պահպանությունը, վարել առանձին հաշիվ հիմնադրամի կանխիկ միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և այլ գույքի պահպանության համար, որում չեն կարող պահվել պահառուի կամ երրորդ անձի կանխիկ միջոցները, արժեթղթերը կամ այլ գույքը:

Միաժամանակ նշված որոշմանը կցվում են նաև «Ինվեստիցիոն հիմնադրամի օրինակելի կանոնադրությունը», «Ինվեստիցիոն հիմնադրամի օրինակելի ազդագիրը», որը պարունակում է մանրամասն դրույթներ հիմնադրամի հիմնադիրների, լիցենզավորման և ստեղծման, կանոնադրական դրամագլխի (կապիտալի), բաժնե-

տոմսերի տեղաբաշխման և հետզման, անկախ վերահսկիչների, տեղեկատվության հրապարակման և, որ հատկանշական է, սահմանափակումների վերաբերյալ: Բերվող սահմանափակումների համաձայն՝ ինվեստիցիոն հիմնադրամին արգելվում է.

- 1) ձեռք բերել որևէ անձի ձայնի իրավունք տվող արժեթղթերը, եթե դրա հետևանքով ինվեստիցիոն հիմնադրամն ու իր հետ փոխկապված խումբը կունենան այդ անձի՝ ձայնի իրավունք տվող արժեթղթերի ընդհանուր թվի ավելի քան 40%–ը,
- 2) ներդնել իր զուտ միջոցների ավելի քան 10%–ը որևէ մեկ անձի թողարկած արժեթղթերում,
- 3) ներդրում կատարել այլ ինվեստիցիոն հիմնադրամների կողմից թողարկած արժեթղթերում,
- 4) ներդրում կատարել տվյալ ինվեստիցիոն հիմնադրամի բաժնետոմսերի ավելի քան 5%–ը ունեցող որևէ անձում,
- 5) պարտավորվել վաճառել իր սեփականությունը չհանդիսացող արժեթղթերը,
- 6) փոխառնել դրամ կամ ստանալ որևէ տեսակի վարկ,
- 7) տալ ցանկացած տեսակի երաշխավորագրեր կամ գրավականներ,
- 8) իր կառավարչի, պահառուի, անկախ վերահսկիչների կամ վերջիններիս հետ փոխկապված որևէ անձի նկատմամբ հանդես գալ որպես սեփականատեր կամ վարկատու:

Միակ ինվեստիցիոն հիմնադրամը, որը գործել է 33–ում, հիմնադրվել է նշված ուղղումն ընդունելուց երկու տարի հետո միայն¹, ինչն էլ ուներ իրեն յուրահատուկ հետևյալ պատճառները.

- ա) հիմնադրամի մոդելի բարդությունը (փակ տիպի երեք իրավաբանական անձի մասնակցությամբ, որը շատ դժվարությամբ էր ընկալվում և հիմնադիրների, և ներդրողների կողմից),
- բ) բանկային համակարգի ակտիվ մասնակցությունը մասնավորեցման գործընթացին և հատկապես սեփականաշնորհման սերտիֆիկատների առք ու վաճառքին,
- գ) սերտիֆիկատային ինվեստիցիոն հիմնադրամների համար սերտիֆիկատների անվանական և շուկայական գների խիստ անհամապատասխանությունը,
- դ) ռիսկի խիստ բարձր մակարդակը՝ կապված և մոդելի ընտրության, և տնտեսության վիճակի հետ:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ ինվեստիցիոն հիմնադրամների և ընդհանրապես ֆինանսական ինստիտուցիոնալ բոլոր կառույցների իրավական կարգավորման դրույթները պետք է ամրագրվեն համապատասխան օրենքներով, ինչն ինվեստիցիոն հիմնադրամների դեպքում պահպանված չէ: Այդ տեսանկյունից այսօր 33 ֆինանսական շուկայի զարգացման համար խիստ կենսական նշանակություն ունի ներդրումային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության ընդունումը, որը պետք է ներառի դրույթներ ոչ միայն հիմնադրամների, այլև ներդրումային ընկերությունների (ներդրումային բանկերի) գործունեության կարգավորման վերաբերյալ:

¹ Նշված ինվեստիցիոն հիմնադրամը սերտիֆիկատային էր, այն որո՞՞նց շատ կարճ մոտ երկու տարի, այնուհետև՝ վերակազմավորվեց ներդրումային ընկերության, այնուհետև՝ լուծարվեց:

Այսպիսով, ամփոփելով ֆինանսական շուկաների և ինստիտուցիոնալ կառույցների դերն ու նշանակությունը տնտեսավարման շուկայական պայմաններում, անհրաժեշտ է նշել, որ դրանց առկայությունը, ամբողջականությունը և հստակ գործողությունը տնտեսության լիակատար շուկայականացման հիմնական նախադրյալներն են:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ֆինանսական ինստիտուտները, և ո՞րն է դրանց ընդհանուր բնութագիրը:
2. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում ֆինանսական ինստիտուտները:
3. Որո՞նք են ավանդային կազմակերպությունների բնորոշ գծերը, ի՞նչ տեսակներ կան և ի՞նչ գործառույթներ են իրականացնում:
4. Ո՞րն է ապահովագրական ընկերությունների գործունեության բովանդակությունը որպես ֆինանսական ինստիտուտների, և ի՞նչ տեսակներ կան:
5. Ի՞նչ գործունեություն են իրականացնում կենսաթոշակային հիմնադրամները ֆինանսական շուկայում, և ի՞նչ տեսակներ կան:
6. Ի՞նչ գործունեություն են իրականացնում ներդրումային հիմնադրամները ֆինանսական շուկայում, և ի՞նչ տեսակներ կան:
7. Ներկայացնել ներդրումային հիմնադրամի ընդհանուր կառուցվածքը և տալ յուրաքանչյուր բաղադրատարրի գործառույթները:

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (1995թ. հուլիսի 5)
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 15 մայիսի, 1998:
3. «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, 2000:
4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, 2001:
5. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:
6. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, 1996:
7. «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, 1996:
8. «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ կառավարության 30.09.94 թիվ 469 որոշումը:
9. Լ.Հ.Բադանյան, Կարծաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպություններում, Երևան, «Տնտեսագետ» հր., 2000:
10. Բրեթ Մ., Ինչպես է աշխատում փողը. Եր., «Նոյյան տապան», 1997:
11. Սալմազարյան Ա.Բ., Արժեթղթերի շուկայի ներդրումային գործառույթների իրականացումը և արդյունավետությունը, Երևան, «Մակմիլան Արմենիա» 2000 թ.:
12. Ֆինանսներ և վարկ, ուսումնական ձեռնարկ, Լ.Հ.Բադանյանի խմբագրությամբ, Եր., 2003:
13. ՂևվնդրՏՉօռ ՎպվպԴՁՎպվՑ ցփպովՈՍ, տՏՊ. ԲպԴՈՍՓՈկպթ Թ.հ. հՑՏ՛վՏՉՏռ, ԾՏրՍՉՈ, ՌջԴ. “կպԴրտպՍՑՈՉՈ”, 1997, ր. 574.
14. Ղևվնվրո, ցփպովՈՍ, տՏՊ. ԲպԴ. Թ.Թ. ԽՏՉՈսպՉՏռ, ԾՏրՍՉՈ, ՌջԴ. “Ղևվնվրո ՌրՑՈՑՈրՑՈՍՈ” 1997, ր. 333.
15. Ղևվնվրո տԲպԴտԲՆՈ՛ՑՈ՛, ցփպովՈՍ, տՏՊ. ԲպԴ Ժ.Թ.ԽՏսփՈվՏռ, ԾՏրՍՉՈ, ՌջԴ. “ՇԺԼՉԼ”, 1998, ր. 400.
16. Թ.թ.ըպսՏսցտպՓՍՈռ, Ղևվնվրո ԻՌԻՎօ, ՍցՐր սպՍՓՈռ, ԾՏրՍՉՈ, 1998, ր. 310.
17. Ը.Ժ. ՍպԲպՎպՑ, Հ.հ.հՈռՎցսՈվ, Ղևվնվրո տԲպԴտԲՆՈ՛ՑՈ՛ռ ցփպովՏպ տՏրՏՈՈկպ, ԾՏրՍՉՈ, ՌջԴ. “ԼԺՂԸ–Ծ”, 1998, ր. 330.
18. Խ.թ. ԽՏստՈվՏ, Թ.Ծ. ԾՈՐՏփՍՈվՈ, ՂևվնվրՏՉօպ տսՈվօ տԲպԴտԲՆՈ՛ՑՈ՛ռ, ԾՈվրՍ,

1997.

19. Թ.Թ. ըՏփորՏՉ, ԾպՅՏՊօ ԻնվոլյորՏՉՈվո՛ր՝ ՈվՉպրՅՈՓՈՏվՅՈ ՊայՅպսՖվՏրՅՈ տրՒպՒտրՈ՛ՅՈռ, ԾՏրՍՉՈ, ՌջՊ. “Ղնվոլյոն Ռ յՅՈՅՈրՅՈՍՈ”, 1998.
20. Թ.Թ. ըՏփորՏՉ, Թ.ժ.խպՏվՖՅպՉ, ԽՏՐտՏՐՈՅՈՉվոյ Ինվոլյոն, ցփպոլՏպ տՏրՏ-ռոնպ, ՌջՊ. “ԿՈՅպՐ”, ԽՈվՍՅ–ԿպՅպՐոցՐչ, ԾՏրՍՉՈ, ԾՈվրՍ, 2002, յ. 528.
21. “ՂնվոլյորՏՉՈ՛ր յրրՅպվՈ Ռ ՖՍվՏվՏվՈՍՈ”, տՏՊ. ՐպՊ. Թ.Թ. ժպրՅպՐՏՉՈ Ռ ժ.Խ.ԽպսՅՏ-ՉՈ, ԾՏրՍՉՈ, ՌջՊ. “Ղնվոլյոն Ռ յՅՈՅՈրՅՈՍՈ”, 2004, յ. 428.
22. ԸՉՈ ըՏՊՈ, ՅՏոպՐՅ Խ. ԾպՐՅՏվ, Ղնվոլյոն, ՌջՊ. “ԹՈնՖՎր”, ԾՏրՍՉՈ, ԽՈվՍՅ–Կպ-ՅպՐոցՐչ, ԽՈպՉ, 2005, յ. 583.
23. ԾՈՍՍՏվպսս Խ.Յ., ըՐ՛ր Խ.Ը., ԸՍՏվՏվՈՍր, ԿՐՈվՓՈնո, տրՏոսպվօ Ռ տՏոնՅՈՍՈ, Չ 2 Յ., տպՐ. յ Ովչս., 2–չՏ ՌջՊ., Յ. 1, Ծ., 1991.
24. ՍՈՐտ ժ., ԸսպՍրՈվՊպՐ Ք., ըՖռսՈ ժՉ., ԼվՉպրՅՈՓՈՐ, տպՐ. յ Ովչս., Ծ., 1997.
25. ըցՐպվՈվ Ը.ժ., ՅօվՍՈ տրՏՈջՉՏՊվօ ԻնվոլյորՏՉօն ՌվրՅՐցվպլՅՏՉ, Ծ., 1996.
26. ԾՈՐՍՈվ Չ.Ծ., Ըպվվօյ ոցվՈչՈ Ռ ԻՏվՊՏՉօն ՐօվՏՍ, Ծ., “ԿպՐոտպՍՅՈՉՈ”, 1995.
27. ՅօվՏՍ Փպվվօ ոցվՈչ, ցփպոլրՍ, տՏՊ ՐպՊ. ՔՈնսվՏՉՈ Թ.Ը. Ռ ՊՐ., Ծ., “Ղնվոլյոն Ռ յՅՈՅՈրՅՈՍՈ”, 1996, յ. 352.
28. ՂրպվՍ ժՉ. ՂՈՏՓՈՐ, ժտրՈՉսպվՈյ ՌվՉպրՅՈՓՈ՛ՎՈ, Ծ., “ԼվՐՈ–Ծ”, 2000.
29. ԽՈՊցՖսս ժ.Խ., ԿպՅպՐՏվ Յ.Խ., ըսպՍցՖսս ժ.ժ., ՂնվոլյորՏՉօյ ՌվրՅՈՅցՅօ, ՐօվՍՈ Ռ ՊպվՖչՈ, ԽԿռ., ՌջՊ. “ԿՈՅպՐ”, 2000.
30. Թ.Թ. ըՏփորՏՉ, ՂնվոլյորՏՉՏպ ՎՏՊպսՈՐՏՉՈվՈյ, ցփպոլՏպ տՏրՏոնպ, ԽՈվՍՅ–Կպ-ՅպՐոցՐչ, 2000.
31. Teweles R., Bradley S., Teweles M. The Stock Market, 6th Edition, John Wiley & Sons, Inc, 1992.
32. Ritter L.S., Silber W.L. Principles of Money, Banking and Financial Markets. – New York.: Basic Books, Inc., 1974.

ԳԼՈՒԽ 5

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

5.1. ԲՅՈՒՋԵԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բյուջե» տերմինը առաջացել է անգլիական “Budget” բառից, որը նշանակում է պայուսակ: Բառացի նման թարգմանությունը չի բնորոշում բյուջեի էությունը և տնտեսական բովանդակությունը:

Ցանկացած հասարակարգում բյուջեն տվյալ պետության դրամական միջոցների համապետական ֆոնդի գոյացման և օգտագործման հիմնական ֆինանսական պլանն է (եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը): Հայաստանի Հանրապետության բյուջեն դրամական միջոցների կենտրոնացված ֆոնդի գոյացման և օգտագործման հիմնական ֆինանսական պլանն է: Երբ խոսքը վերաբերում է Հայաստանի բյուջեին, ապա դա ասելով հասկանում ենք միայն այն ֆինանսական ռեսուրսները, որոնք անմիջականորեն դրվում են հանրապետության իշխանության կենտրոնական և տեղական մարմինների տրամադրության տակ և նրանց կողմից ուղղվում տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակներին: Նշանակում է բյուջեն չի ընդգրկում հանրապետության ամբողջ ֆինանսական ռեսուրսները (ծեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների տրամադրության տակ եղած ֆինանսական, բնակչության դրամական միջոցների ու խնայողությունների, բանկային վարկերի, ապահովագրական մարմինների ռեսուրսները):

Հանրապետության ֆինանսական, վարկային և դրամաշրջանառության հանկարգերի կարգավորման գործում բյուջեի դերը էական է: Բյուջեն հանրապետության ֆինանսավարկային համակարգի գլխավոր և առաջատար օղակն է: Այն Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ձեռքում ծառայում է որպես մակրոնակարգակով ֆինանսական կառավարման գործնական լծակ: Բյուջեն վճռական դեր է խաղում հանրապետության ամբողջ տնտեսության մակարդակով արժեքային համամասնությունների ձևավորման ու կարգավորման, ինչպես նաև էկոնոմիկայի վերակառուցման և կառուցվածքային փոփոխությունների գործնական խնդիրների լուծումը անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու գործում: Բյուջեի միջոցով է հանրապետության կառավարությունն իրականացնում ֆինանսական ներգործություն գիտատեխնիկական առաջընթացի խթանման, տնտեսական և սոցիալական նոր ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման, ինչպես նաև ա-

ռանձին ժամանակահատվածներում էկոնոմիկան ճգնաժամից դուրս բերելու և կա-
յունացնելու, ֆինանսներն առողջացնելու և դրամաշրջանառությունը կարգավորե-
լու ծրագրերի մշակման ու կենսագործման վրա:

Հայաստանի Հանրապետության բյուջեն կարևոր դեր է խաղում նրա տարածքում
ստեղծված հասարակական ամբողջական արդյունքի, մասնավորապես ազգային ե-
կամտի բաշխման ու վերաբաշխման գործում: Հանրապետության ողջ ֆինանսական
ռեսուրսների, այդ թվում բյուջեի եկամուտների գոյացման գլխավոր աղբյուրը ազ-
գային եկամուտն է: Հայաստանի բյուջեում կենտրոնացվում է հանրապետությունում
ստեղծված ազգային եկամտի որոշակի մասը, որն ուղղվում է տնտեսության զար-
գացման, սոցիալ-մշակութային միջոցառումների իրականացման, հանրապետու-
թյան պաշտպանության և պետական իշխանության ու կառավարման ապարատի
պահպանման ծախսերի ֆինանսավորմանը:

Ստեղծված հասարակական ամբողջական արդյունքը բաժանվում է երկու մասի՝
փոխհատուցման ֆոնդի և ազգային եկամտի: Սպառված արտադրության միջոցները
մարմնավորում են առարկայացած աշխատանքի ծախսումները (հումք, նյութեր, վա-
ռելիք, էլեկտրաէներգիա, ամորտիզացիա և այլն), և հասարակական ամբողջական
արդյունքի այդ մասը փոխհատուցման ֆոնդն է: Վերջինս չի կարող հասարակության
կողմից ուղղվել հիմնական ու շրջանառու ֆոնդերի, պետության պաշարների և պա-
հուստային ֆոնդերի ավելացմանը կամ անձնական սպառման ֆոնդերի աճին¹:

Հասարակական ամբողջական արդյունքի այն մասը, որ մնում է փոխհատուցման
ֆոնդը հանելուց հետո, կազմում է ազգային եկամուտը: Բնափրային տեսքով ազգա-
յին եկամուտը բաղկացած է.

- ա) տարվա ընթացքում արտադրված սպառման առարկաներից, որոնք օգտա-
գործվում են մարդկանց անձնական պահանջումները բավարարելու հա-
մար (ազգային եկամտի գերակշիռ մասը՝ երեք քառորդից ավելին),
- բ) նոր արտադրված արտադրության միջոցներից, որոնք օգտագործվում են ընդ-
լայնված վերարտադրության ապահովման նպատակների համար:

Ապրանքադրամական հարաբերությունների օբյեկտիվ առկայության պայմաննե-
րում ազգային եկամուտը, անկախ նրա բնափրային տեսքից, ընդունում է արժեքա-
յին (դրամական) ձև և իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում (տ-
վորաբար մեկ տարվա ընթացքում) կենդանի աշխատանքով ստեղծված նոր արժե-
քը: Արժեքային կառուցվածքի տեսանկյունից ազգային եկամուտը բաղկացած է
անհրաժեշտ աշխատանքով ստեղծված արդյունքի արժեքից և հավելյալ աշխա-
տանքով ստեղծված արդյունքի արժեքից: Առաջինն օգտագործվում է աշխատողնե-
րի գոյության պայմանների վերարտադրության, իսկ երկրորդ մասը՝ արտադրության
ընդլայնման և հասարակական մյուս պահանջումների բավարարման հետ կապ-
ված ծախսերը ֆինանսավորելու համար:

Ազգային եկամուտը նախքան վերը նշված նպատակների համար օգտագործելը
ենթարկվում է բաշխման ու վերաբաշխման: Ազգային եկամտի բաշխման կամ եր-
բեմն, ինչպես ընդունված է ասել, սկզբնական բաշխման ժամանակ նյութական ար-

¹ Բացառությամբ փոխհատուցման ֆոնդի կազմի մեջ մտնող հիմնական արտադրական ֆոնդերի
մշակվածքի արժեքի (ամորտիզացիոն ֆոնդից), որի մի մասը, ինչպես հայտնի է, օ-տա-ործվում է որ-
պես հիմնական ֆոնդերի աճի (ընդլայնված վերարտադրության) ֆինանսավորման աղբյուր:

տադրության ոլորտում զբաղված աշխատողները ստանում են իրենց եկամուտները աշխատավարձի և զանազան տեսակի դրամական վճարումների տեսքով, իսկ ձեռնարկությունները և տնտեսական կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) իրենց եկամուտները՝ զուտ եկամտի, շահույթի և այլնի տեսքով: Ազգային եկամտի բաշխումից գոյանում են նաև պետության եկամուտները՝ հանձինս պետական ու ոչ պետական ձեռնարկությունների կողմից բյուջե մուծվող շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և այլ տեսակի վճարների:

Ազգային եկամուտը, բացի բաշխումից, ենթարկվում է նաև հետագա վերաբաշխման, որում վճռական դերը պատկանում է բյուջեին: Ազգային եկամտի վերաբաշխման օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է նախ և առաջ ոչ արտադրական ոլորտի (լուսավորություն, առողջապահություն, գիտություն, սոցիալական ապահովություն, երկրի պաշտպանություն և անվտանգության ապահովում, պետական իշխանության ու կառավարման ապարատի պահպանում) գոյությամբ, որտեղ, որպես կանոն, եկամուտներ չեն ստացվում կամ էլ ստացվում են չնչին չափերով, բայց նրա առկայությունը կապված է հսկայական ծախսերի հետ: Ուստի, բյուջեի միջոցով նյութական արտադրության ոլորտում ստեղծված ազգային եկամտի վերաբաշխման հիման վրա ձևավորվում են դրամական միջոցների անհրաժեշտ կենտրոնացված ֆոնդեր, որոնք ուղղվում են ոչ արտադրական ոլորտի պահպանման ծախսերը ֆինանսավորելուն: Այնուհետև, արտադրության առանձին ճյուղերի և տնտեսական շրջանների դրամական կուտակումները մի շարք պատճառներով գումարային արտահայտությամբ չեն համընկնում նրանցում նախատեսվող ծախսերը ֆինանսավորելու պահանջին: Բյուջեի միջոցով տնտեսության որոշ ճյուղերում և վարչատարածքային շրջաններում նոր ստեղծված արդյունքը վերաբաշխելու հիման վրա ֆինանսական անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում տնտեսության առանձին ճյուղերի ու շրջանների նորմալ կենսագործունեությունն ապահովելու համար: Եվ վերջապես, ազգային եկամտի վերաբաշխման անհրաժեշտությունը թելադրված է ընդհանուր հանրապետական նշանակության սոցիալ-տնտեսական միջոցառումների ֆինանսավորման պահանջով:

Ազգային եկամտի վերաբաշխման հիման վրա բյուջեի եկամուտների ձևավորման լրացուցիչ աղբյուրներ են ոչ պետական՝ կոոպերատիվ, վարձակալական, բաժնետիրական, մասնավոր-անհատական, համատեղ ձեռնարկություններից, սպառնույթներից և հասարակական կազմակերպություններից, գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից գանձվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և զանազան այլ տեսակի վճարումները: Բացի այդ, ազգային եկամտի վերաբաշխման փուլում բնակչությունն իր անձնական եկամուտների (աշխատավարձի և այլ եկամուտների) և անհատական աշխատանքային ու ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող մյուս եկամուտների հաշվին եկամտահարկի, զանազան տեսակի ուրիշ հարկերի ու տուրքերի, ինչպես նաև կամավոր մուծումների տեսքով վճարումներ է կատարում բյուջեին և ֆինանսավարկային համակարգի մյուս օղակներին:

Այսպիսով՝ բյուջեի եկամուտները ձևավորվում են ազգային եկամտի ինչպես բաշխումից, այնպես էլ վերաբաշխումից: Միևնույն ժամանակ, պետական սեփականություն հանդիսացող տնտեսության որոշ ճյուղերի ու ձեռնարկությունների ստեղծման

ու զարգացման և հատկապես սոցիալ-մշակութային հիմնարկների ծախսերը հոգալու համար պահպանվում է բյուջեից անվերադարձ ֆինանսավորման կարգով դրամական հատկացումների կատարման օբյեկտիվ անհրաժեշտությունը: Ազգային եկամտի վերաբաշխումով ավարտվում է նրա բաշխումը լայն առումով և դրանով իսկ գոյանում են պետության, մասնավորապես բյուջեի, սեփականության տարբեր շերտերի եկամուտները: Եթե ազգային եկամտի բաշխման փուլում եկամուտների տերերը միայն նյութական արտադրության գործընթացի անմիջական մասնակիցներն են (արտադրական ձեռնարկությունները, նրանցում զբաղված աշխատողները և պետությունը), ապա վերաբաշխման փուլում եկամուտներ են ստանում նաև ոչ արտադրական ոլորտի հիմնարկների աշխատողները և հասարակության մյուս անդամները՝ աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների, կրթաթոշակների և այլնի տեսքով: Ազգային եկամտի վերաբաշխումով արտադրական և ոչ արտադրական ոլորտի աշխատողները միաժամանակ լրացուցիչ եկամուտներ են ստանում բյուջեից և ֆինանսավարկային համակարգի մյուս օղակներից կատարվող զանազան վճարումների և արտոնությունների ձևով:

Հայաստանի Հանրապետության ազգային եկամուտը և ամբողջ ֆինանսական ռեսուրսները գումարային արտահայտությամբ գերազանցում են նրա բյուջեն, սակայն, ինչպես արդեն նշվել է, հանրապետության ամբողջ ֆինանսավարկային և դրամաշրջանառության համակարգերի կազավորումն իրականացվում է բյուջեի միջոցով: Գործնականում այդ կարգավորումը տեղի է ունենում նախ և առաջ նյութական արտադրության ճյուղերի եկամուտների և ծախսերի հաշվեկշիռները (ֆինանսական պլանները) կազմելու գործընթացում, երբ որոշվում է, թե նշված ճյուղերը որքան դրամական միջոցներ պետք է վճարեն բյուջեին և որքան գումարի ֆինանսավորում ստանան նրանից: Վճարումների և ֆինանսավորման գումարները որոշելիս ամենից առաջ, հաշվարկվում են նյութական արտադրության ճյուղերի ձեռնարկությունների եկամուտների և ծախսերի չափերը: Բյուջեն նյութական արտադրության ճյուղերի ձեռնարկություններից ստանում է իր ռեսուրսների (եկամուտների) գերակշռող մասը, միաժամանակ նյութական արտադրության որոշ ճյուղերի և ձեռնարկությունների (հատկապես պետական սեփականություն հանդիսացող ճյուղերի ձեռնարկությունների) զարգացման ծախսերը ֆինանսավորելու համար բյուջեից հատկացվում են (սահմանափակ չափով) որոշակի դրամական միջոցներ: Բյուջեն նյութական արտադրության ճյուղերից ստանում է ավելի շատ դրամական միջոցներ, քան ֆինանսավորում է դրանց, և դա հասկանալի է:

Եթե նյութական արտադրության ճյուղերի ձեռնարկություններն իրենց ընթացիկ պահպանման և հետագա զարգացման ծախսերը (ինքնարժեքի հատուցման, արտադրության ընդլայնման, սոցիալական զարգացման) հոգում են հիմնականում սեփական դրամական եկամուտների, բանկային վարկերի և, մասամբ, բյուջետային ֆինանսավորման գումարների հաշվին, ապա ոչ նյութական արտադրության ոլորտի հիմնարկությունների ընթացիկ պահպանման և ցանցի ընդլայնման ծախսերը ֆինանսավորվում են գերազանցապես բյուջեից: Նշված հիմնարկությունները, որպես կանոն, եկամուտներ չեն ստանում և բյուջեին վճարումներ չեն կատարում: Ի տարբերություն նյութական արտադրության ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների, որոնց եկամուտների ու ծախսերի պլանավորումը և բյուջեի հետ ու-

նեցած փոխհարաբերությունները կազմավորվում են ֆինանսական պլանների միջոցով, ոչ նյութական արտադրության ոլորտի հիմնարկությունների փոխհարաբերությունը բյուջեի հետ կարգավորվում է հիմնականում մեկ այլ փաստաթղթով՝ նախահաշվով: Այդ կապակցությամբ առաջանում է տնտեսության հետ բյուջեի փոխհարաբերության երկրորդ՝ նախահաշվային ձևը: Նախահաշիվների (անհատական և ամփոփ) կազմման միջոցով որոշվում են բյուջեից ֆինանսավորվող հիմնարկությունների և դրանք միավորող նախարարությունների, գերատեսչությունների մակարդակով պահանջվող ծախսերի չափերը և տեսակները: Տնտեսության հետ բյուջեի ունեցած նախահաշվային փոխհարաբերության եղանակը կարևոր նշանակություն ունի բյուջետային պլանավորման գործընթացը կազմակերպելու գործում, քանի որ նրա միջոցով են որոշվում բյուջեի ծախսերի ֆինանսավորման զգալի գումարները:

Բյուջեն սերտորեն կապված է բանկերի և վարկային պլանների հետ: Բանկային մարմիններից առաջնակարգ տեղը պատկանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը ապահովում է հարկերից և զանազան վճարումներից ստացվող միջոցները ժամանակին բյուջեի հաշիվներին փոխանցելու, ինչպես նաև տնտեսական և սոցիալական զարգացման ծախսերի բյուջետային ֆինանսավորումն իրականացնելու գործառնությունները: Բյուջեի ժամանակավորապես ազատ դրամական եկամուտների գումարները կենտրոնական բանկի կողմից օգտագործվում են որպես կարճատև վարկավորման ռեսուրսների աղբյուր և հաշվի են առնվում վարկային պլանները կազմելու և կատարելու ժամանակ: Մյուս կողմից, կենտրոնական բանկը, հանրապետության մասնագիտացված մյուս բանկերը, ինչպես նաև ոչ պետական բաժնետիրական, առևտրային և կոոպերատիվ հիմունքներով գործող զանազան տեսակի բանկերն իրենց գործունեությունից ստացվող շահույթից պարտադիր կարգով հարկեր են վճարում բյուջեին:

Բյուջեն սերտ փոխհարաբերությունների մեջ է ֆինանսական կենտրոնացված հատուկ ֆոնդերի, մասնավորապես ապահովագրական և պետական կենսաթոշակային ապահովության ֆոնդերի ձևավորման և օգտագործման հետ:

Ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ապահովագրական ֆոնդերը ձևավորվում են ունեցվածքի, կյանքի և այլ նպատակներով ապահովագրության համար բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) և քաղաքացիների պարտադիր ու կամավոր ապահովագրական վճարների հաշվին, որոնք օգտագործվում են տարերային աղետների, դժբախտ դեպքերի ու պատահարների հետևանքով առաջացած վնասների հատուցման ծախսերը ֆինանսավորելու համար: Ապահովագրական մարմիններն իրենց գործունեությունից ստացվող եկամուտներից շահութահարկ են վճարում բյուջեին:

Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային ապահովության ֆոնդը թեպետ չի մտնում հանրապետության բյուջեի կազմի մեջ, բայց նշված ֆոնդի ձևավորման և օգտագործման գործում բյուջեն ակտիվ դեր է խաղում: Կենսաթոշակային ապահովության ֆոնդը մասամբ ձևավորվում է նաև բյուջեից կատարվող հատկացումների հաշվին: Բոլոր ձեռնարկությունները և կազմակերպությունները, ներառյալ բյուջետային հիմնարկությունները, պարտադիր կարգով մասնակցում են պետական կենսաթոշակային ապահովության ֆոնդի ձևավորմանը՝ աշխատողների աշխատանքի վարձատրության ընդհանուր ֆոնդի նկատմամբ սոցիալական ապա-

հովազրության նպատակներով կատարվող հատկացումների միջոցով: Հասկանալի է, որ նշված ֆոնդին բյուջետային հիմնարկությունների կողմից կատարվող սոցալ մասհանումների ֆինանսավորման աղբյուրը բյուջեից կատարվող հատկացումներն են: Բացի դրանից, բյուջեից զգալի ֆինանսական միջոցներ են հատկացվում նաև կենսաթոշակների (ծերության, հաշմանդանության, կերակրողին կորցնելու դեպքում), ինչպես նաև սոցիալական ապահովության հիմնարկությունների ապարատի պահպանման ծախսերը ֆինանսավորելու համար:

Բյուջեն ակտիվ ներգործություն է ունենում նաև դրամաշրջանառության կարգավորման գործընթացի վրա: Օրգանական փոխադարձ կապ գոյություն ունի բյուջեի և դրամաշրջանառության միջև: Այսպես՝ բյուջեի ծախսային մասում նախատեսվում են ոչ արտադրական ոլորտի (լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության և այլնի) աշխատողների աշխատավարձի ու բնակչությանը վճարվող կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների և զանազան տեսակի վճարումների գումարները, որոնք իրենց հերթին ընկած են բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի, կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հիմքում:

Հայաստանի բյուջեն սերտորեն կապված է նաև հանրապետությունում կազմվող վճարային հաշվեկշռի հետ, որը բխում է ինքնուրույն արտաքին առևտրական (ներմուծման–արտահանման) գործունեության ֆինանսական հարաբերությունների կարգավիճակից:

Այսպիսով՝ ՀՀ բյուջեն չնայած ընդգրկում է հանրապետության ֆինանսական ռեսուրսների միայն համընդհանուր կենտրոնացված պետական ֆոնդը, բայց նրա միջոցով կարգավորվում են ամբողջ ֆինանսավարկային ռեսուրսների ձևավորման ու օգտագործման, ինչպես նաև դրամաշրջանառության ու արտաքին տնտեսական գործունեության համամասնությունները: Դրանում են արտահայտվում Հայաստանի Հանրապետության բյուջեի՝ որպես նրա հիմնական ֆինանսական պլանի էությունը և տնտեսական նշանակությունը:

Հայաստանի անկախ պետականության ստեղծման, տնտեսական ինքնուրույնության և շուկայական էկոնոմիկային անցման պայմաններում նրա ֆինանսավարկային համակարգի առաջատար օղակի՝ բուջեի էության ու բյուջետային համակարգի, ինչպես նաև եկամուտների ու ծախսերի կառուցվածքներում կատարվող որակական ու քանակական լուրջ տեղաշարժերի ուսումնասիրությունը ներկայումս ձեռք է բերել տեսական ու գործնական կարևոր նշանակություն: Դա թելադրված է տնտեսական ու քաղաքական նոր պայմաններում հանրապետության ֆինանսավարկային ողջ համակարգի վերակառուցման և ինքնուրույն ֆինանսաբյուջետային քաղաքականության ծրագրի մշակման անհրաժեշտությամբ:

Հայաստանի անկախացման ու շուկայական էկոնոմիկայի ստեղծման և զարգացման պայմաններում հանրապետության ֆինանսաբյուջետային նոր քաղաքականության իրականացման երաշխիքը տնտեսության ապապետականացման ու մասնավորեցման գործընթացն է, որի հետևանքով առաջանում և գործում են սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ձեռնարկություններ և կազմակերպություններ: Դրան համապատասխան՝ հանրապետության բյուջեի եկամուտները ձևավորվում են նրա տարածքում գտնվող և աշխատող բոլոր ձեռնարկությունների, տնտեսական

կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործունեությունից ստացվող դրամական եկամուտներից¹:

Մինչև մասնավորեցման գործընթացի ավարտը բյուջեում եկամուտներ են ստացվելու նաև ապապետականացումից ու մասնավորեցումից: Եսկան փոփոխություններ են կատարվում հանրապետության բյուջեի եկամուտների ու ծախսերի կազմում և տնտեսության հետ նրա ունեցած ֆինանսական փոխհարաբերությունների համակարգում: Օրինակ՝ 1992 թվականից վերացվել են շրջանառության և վաճառքից գանձվող հարկերի տեսակները, ու դրանց փոխարեն մտցվել են ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլ նոր տեսակի հարկեր ու վճարներ, որոնք զգալի տեսակարար կշիռ ունեն հանրապետության բյուջեի եկամուտների կառուցվածքում:

Էկոնոմիկայում շուկայական հարաբերությունների զարգացման, տնտեսության ինքնակառավարման ու ինքնաֆինանսավորման սկզբունքների արմատավորման պայմաններում ոչ միայն պահպանվում, այլև ուժեղանում է հանրապետության բյուջեի եկամուտների տարածքային սկզբունքով ձևավորման կազմում հարկերի ու այլ վճարումների տեսքով ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների մուծումների դեր կատարելու միտումը: Նոր պայմաններում եկամուտների գծով հանրապետության բյուջեի և տնտեսության միջև ֆինանսական փոխհարաբերությունների սահմանումը և բյուջետային քաղաքականության մշակումը կարևորվում են մի կողմից բյուջեի եկամուտների ժամանակին, լրիվ չափով կատարելու և տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրով նախատեսված ծախսերի պետական ֆինանսավորումն ապահովելու, իսկ մյուս կողմից տնտեսության զարգացումը խթանելու և արտադրության արդյունավետությունը բարձրացնելու վրա ֆինանսաբյուջետային ակտիվ ներգործությունն ուժեղացնելու գործնական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Ընդ որում, եկամուտների ձևավորման ուղղությամբ հանրապետության ֆինանսաբյուջետային նոր քաղաքականության մշակման հիմքում ընկած են ձեռնարկության, շուկայական էկոնոմիկային անցնելու, տնտեսության ապապետականացման և մասնավորեցման, տեղական ինքնակառավարման և, հատկապես, հարկերի ու տուրքերի և բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած օրենքները: Այդ կապակցությամբ ներկայումս առավել կարևոր գործնական նշանակություն են ձեռք բերել հարկային հստակ մեխանիզմի մշակման, նրա անընդհատ կատարելագործման և հարկային ձկուն քաղաքականության իրականացման հարցերը:

Ինչ վերաբերում է ՀՀ բյուջեի ծախսերին, ապա դրանք կարելի է բաժանել հետևյալ խոշոր խմբերի.

- տնտեսության զարգացման,
- սոցիալ-մշակութային միջոցառումների և գիտության,
- պաշտպանության,
- կառավարման ապարատի պահպանման,
- այլ ծախսեր (հանրապետության պետական գանձարանի ձևավորման ծախսեր, պահեստային ֆոնդեր և այլ միջոցառումների ծախսեր):

¹ ԽՍՀՄ-ի ոլորտային ընթացքում Հայաստանում եղած բազմաթիվ արտադրական ձեռնարկություններ իրենց եկամուտներից վճարումներ էին կատարում ոչ թե հանրապետության, այլ միութենական բյուջեին:

Տնտեսության զարգացման հատվածով ֆինանսավորվում են արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի համակարգերի զարգացման ծախսերը:

Սոցիալ-մշակութային միջոցառումների և գիտության ֆինանսավորումն ընդգրկում է լուսավորության, մշակույթի, առողջապահության, ֆիզկուլտուրայի, սոցիալական ապահովության և գիտության զարգացման ծախսերը, որոնք գերակշիռ տեղ են գրավում հանրապետության բյուջեի ծախսերի ընդհանուր կառուցվածքում և ունեն բարձր տեմպերով աճի միտում: Պաշտպանության ծախսերի մեջ մտնում են զորամասերի անձնակազմի պահպանման, զենքի, զինամթերքի ձեռքբերման և կապիտալ ներդրումների ծախսերը: Կառավարման ապարատի պահպանման ծախսերի մեջ մտնում են հանրապետության գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների, դատական իշխանության և իրավապահ մարմինների, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների ապարատի պահպանման ֆինանսավորման ծախսերը:

5.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՐԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ

Բյուջետային համակարգը յուրաքանչյուր պետության կազմի մեջ մտնող բոլոր տեսակի բյուջեների ամբողջությունն է:

Բյուջետային համակարգի կառուցվածքն ամբողջովին համապատասխանում է տվյալ երկրի պետական կառուցվածքին:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի կառուցվածքը որոշվում է նրա պետական կառուցվածքով և վարչատարածքային բաժանմամբ: Հանրապետության բյուջետային համակարգի կառուցվածքի և բյուջետային հարաբերությունների հարցերը կարգավորվում են նրա Սահմանադրությամբ և ֆինանսաբյուջետային հատուկ օրենսդրական ակտերով:

Մինչև 1991 թ. նախկին Խորհրդային Միության բոլոր միութենական հանրապետությունների պետական բյուջեները, այդ թվում Հայկական ԽՍՀ պետական բյուջեն, մտնում էին ԽՍՀՄ պետական բյուջեի կազմի մեջ: Ներկայումս գոյություն չունի «ԽՍՀՄ պետական բյուջե» հասկացությունը, քանի որ նախկին միութենական հանրապետությունների պետական բյուջեները ձևավորվում են ինքնուրույնաբար՝ որպես ինքնուրույն պետությունների առանձին պետական բյուջեներ, և գործում են անկախ:

Հայաստանի ներկայիս պետական կառուցվածքին և վարչատարածքային բաժանմանը համապատասխան՝ նրա բյուջետային համակարգը բաղկացած է պետական բյուջեից և համայնքների բյուջեներից: Տեղական բյուջեների համակարգի մեջ մտնում են քաղաքների և գյուղերի ինքնուրույն բյուջեները: Բոլոր մակարդակների բյուջեները հիմնված են միասնական ֆինանսական, դրամական և հարկային քաղաքականության վրա: Հայաստանի Հանրապետության պետական և տեղական բյուջեները միավորվում են հանրապետության բյուջետային համակարգում, և վերջինիս ծավալը՝ որպես հաշվարկային մեծություն, սահմանում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Հանրապետության բյուջետային համակարգի միասնականությունը ապահովված է բյուջեների նախագծերի կազմման ընդհանուր սկզ-

բունքներով, եկամուտների և ծախսերի բյուջետային դասակարգման, հաշվառման ու հաշվետվության համակարգի համասեռությամբ, ինչպես նաև բյուջեների դրամարկղային կատարման ընդհանրությամբ:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի գլխավոր օղակը պետական բյուջեն է: Այսպես՝ ԽՍՀՄ պետական բյուջեի կազմի մեջ մտած Հայաստանի 1990թ. պետական բյուջեով հանրապետության տնտեսության, սոցիալ-մշակութային միջոցառումների և գիտության զարգացման ֆինանսավորման նպատակով կատարված փաստացի ծախսերի 69%—ը բաժին է ընկել հանրապետական բյուջեին: Հանրապետության քաղաքական և տնտեսական ինքնուրույնության գործընթացը սկսվելու պայմաններում ԽՍՀՄ պետական բյուջեի համակարգից անկախ գործող նրա 1991 թ. համար կազմված ու հաստատված ամփոփ բյուջեի ամբողջ ծախսերի ֆինանսավորման գերակշռող մասը (81,5%) նախատեսված էր իրականացնել պետական բյուջեով:

Հայաստանի պետական բյուջեն վճռական դեր է խաղում սոցիալ-տնտեսական, պաշտպանության, գիտության զարգացման բնագավառներում ընդհանուր հանրապետական նշանակություն ունեցող միջոցառումների ծախսերը ֆինանսավորելու գործում:

Պետական բյուջեն առաջնակարգ դեր է կատարում նաև Հայաստանի տարածքում ստեղծված ֆինանսական ռեսուրսները առանձին ռեզիդենտների ու քաղաքների միջև վերաբաշխելու գործում, որի հիման վրա հնարավոր է ապահովել նրանց էկոնոմիկայի և մշակույթի համակողմանի զարգացումը: Գործնականում նշված խնդիրը լուծվում է պետական բյուջեի և տեղական բյուջեների միջև եկամուտներն ու ծախսերը բաշխելու սահմանված կարգի և մեթոդների միջոցով, որը որոշում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

Մինչև 1991թ. բյուջետային համակարգի առանձին օղակների (միութենական, հանրապետական և տեղական բյուջեների) միջև եկամուտները և ծախսերը բաշխվում էին՝ ելնելով իշխանության կենտրոնական, հանրապետական և տեղական մարմինների ֆունկցիաներից, ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների և հիմնարկությունների գերատեսչական ենթակայությունից և այն կարգից, որը սահմանված էր բյուջետային օրենսդրությամբ: Հայաստանի Հանրապետական բյուջեի եկամուտները ձևավորվում էին միութենական—հանրապետական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների շրջանառության հարկի և շահույթից կատարվող մի քանի տեսակի վճարների (ֆոնդավճարի, հաստատագրված—ռենտային վճարների, շահույթի ազատ մնացորդներից մասհանումների), ինչպես նաև բյուջետային օրենսդրությամբ սահմանված ուրիշ եկամուտների հաշվին: Այդ ժամանակ հանրապետության տարածքում գտնվող միութենական ենթակայության ձեռնարկությունները և տնտեսական կազմակերպությունները իրենց շահույթից (եկամտից) վճարումներ չէին կատարում ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական բյուջեներին:

Հանրապետության տարածքում ստացվող որոշ տեսակի եկամուտներ (շրջանառության հարկ, բնակչությունից գանձվող եկամտահարկ, պետական 3 տոկոսանոց ներքին շահող փոխառության պարտատոմսերի իրացումից եկամուտներ) համարվում էին միութենական բյուջեի եկամուտներ, որոնցից հանրապետական բյուջեին կատարվող մասհանումների չափերը սահմանում և հաստատում էին միութենական

իշխանության գործադիր և օրենսդիր մարմինները: Նման պարագայում իշխանության հանրապետական և տեղական մարմինների մոտ, ինչպես հարկն էր, չէր ստեղծվում անհրաժեշտ տնտեսական շահագրգռվածություն բյուջեի բոլոր տեսակի եկամուտների գծով իրական պլաններ կազմելու, ներքին ռեզերվները լիովին բացահայտելու և նշված պլանները կատարելու ու գերակատարելու գործում: Հանրապետական և տեղական բյուջեների եկամուտների ձևավորման ոչ լիարժեք կախվածությունը նրա տարածքում ստացվող բյուջետային եկամուտներից վնաս էր հասցնում և չէր նպաստում հանրապետության ինքնակառավարման ու ինքնաֆինանսավորման սկզբունքների արմատավորմանը:

Հայաստանի անկախ պետականության ստեղծման, տնտեսական ինքնուրույնության արդի պայմաններում հանրապետության բյուջետային համակարգի մեջ մտնող պետական և տեղական բյուջեները ձևավորվում են նրա տարածքում ստացվող բյուջետային բոլոր եկամուտների հաշվին: Հայաստանի տարածքում գտնվող նախկին միութենական բոլոր ձեռնարկությունները, տնտեսական կազմակերպությունները և հիմնարկությունները անցել են հիմնականում հանրապետական իշխանության մարմինների ենթակայության ներքո:

Դրան համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների աղբյուրները դասակարգվում են՝

- ա) հարկային եկամուտների և տուրքերի,
- բ) ոչ հարկային եկամուտների,
- գ) եկամուտների՝ կապիտալի գործառնություններից,
- դ) մուտքերի՝ պաշտոնական տրանսֆերտներից:

Հարկային եկամուտներ և տուրքեր են՝

- ավելացված արժեքի հարկը,
- ակցիզային հարկը,
- շահութահարկը,
- եկամտահարկը,
- գույքահարկը,
- հողի հարկը,
- հաստատագրված վճարները,
- մաքսային տուրքը,
- պարզեցված հարկը,
- բնօգտագործման և բնապահպանության վճարները,
- պետական տուրքը:

Ոչ հարկային եկամուտներ են՝

- ա) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը,
- բ) դիվիդենդները և շահաբաժինները.
- գ) պետական ձեռնարկությունների և գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները.

- դ) պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսները)։
- ե) բռնագրավված, տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը։
- զ) պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող եկամուտները։
- է) իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը,
- ը) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները։
- թ) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը՝ բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի։

Կապիտալի գործառնություններից եկամուտներ են՝

- ա) պետությանը պատկանող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքերը։
- բ) պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը։
- գ) պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը։
- դ) պետական սեփականություն համարվող հողի և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը։

Պաշտոնական տրանսֆերտներ են՝

- ա) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած տրանսֆերտները։
- բ) այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները։

ԽՍՀՄ–ի վերացումով Հայաստանի տարածքում գտնվող միութենական մի շարք ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների, ինչպես նաև սոցիալ–մշակութային և գիտական հիմնարկությունների հանձնումը իշխանության հանրապետական մարմինների տնօրինությանը ինքնըստինքյան պահանջեց, որպեսզի նախկինում միութենական բյուջեից ֆինանսավորվող հիշյալ ձեռնարկությունների ու կազմակերպությունների ծախսերը մտցվեն պետական բյուջեով ֆինանսավորվող ծախսերի կազմի մեջ։ Իսկ այդ հարցերի քննարկումը սերտորեն առնչվում է ծախսերի գծով նոր պայմաններում պետական բյուջեի և տնտեսական ու սոցիալական ոլորտների միջև ֆինանսական փոխհարաբերությունների սահմանման և բյուջետային ֆինանսավորման նոր քաղաքականության իրականացման հետ։

Նախկինում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում գերակշռում էին տնտեսության (ընդունված էր անվանել ժողովրդական տնտեսության) զարգացման ֆինանսավորման նպատակով կատարվող ծախսերը։ Այսպես՝ Հայաստանի 1990թ. պետական բյուջեի ծախսերի մեջ հիշյալ նպատակով ֆինանսավորման ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 53,5%, իսկ հանրապետական բյուջեի ծախսերում՝ 60,4%։ Տնտեսության զարգացման հատվածով ֆինանսավորված ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 35,8%։

Զնայած նշված գործոնների ազդեցությանը՝ առաջիկայում, կարծում ենք, որ պետական բյուջեն պահպանելու է իր որոշակի դերը ընդհանուր հանրապետական նշանակություն ունեցող առավել կարևոր և առաջադիմական ճյուղերի առաջնահերթ զարգացման ծախսերի ֆինանսավորումն ապահովելու գործում: Նախ՝ տնտեսության ապապետականացման և մասնավորեցման սկզբնատարիներում և հետագայում էլ պահպանվելու է պետական սեփականության առկայությունը՝ իհարկե, համեմատաբար ցածր տեսակարար կշռով: Պետական սեփականություն են մնալու մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց զարգացման ծախսերը պետք է ֆինանսավորվեն նաև պետական բյուջեի միջոցների հաշվին: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ սկզբնական փուլում հանրապետությունում գործող կոոպերատիվ, վարձակալական, բաժնետիրական և համատեղ ձեռնարկությունները դեռևս չեն կարող վճռորոշ դեր խաղալ տնտեսավարման ողջ համակարգում: Երկրորդ՝ առաջիկայում կարևորվելու է պետական բյուջեի դերը նաև հանրապետության էկոնոմիկայի կառուցվածքը բարելավելու և վերապրոֆիլավորելու (ներհանրապետական կոոպերացիայի ուժեղացում, արտահանրապետական ոչ արդյունավետ կապերից հրաժարում, տնտեսության կայունության ապահովում և այլն), ինչպես նաև նրա տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծախսերի ֆինանսավորման գործում: Երրորդ՝ հանրապետության առանձնահատուկ պայմաններից ելնելով, աղետի գոտում վերականգնման համար պահանջվող հսկայական կապիտալ ներդրումների իրականացման, փախստականների խնդրի լուծման, շրջակա միջավայրի պահպանման հետ կապված անհետաձգելի ծախսերը ֆինանսավորելու համար նույնպես կարևոր է լինելու պետական բյուջեի դերը: Այնուհետև, գյուղատնտեսության ոլորտում արմատական շրջադարձը, որը կապված է հողի մասնավորեցման միջոցով գյուղացիական անհատական ու կոլեկտիվ տնտեսությունների ստեղծման հետ, առաջադրել է ագրոարդյունաբերական համալիրի ֆինանսավորման ու վարկավորման նոր պահանջներ: Զողային ռեֆորմի և հողասեփականաշնորհման Հայաստանի Հանրապետության օրենքների կիրառումով էականորեն կրճատվել են պետական և տեղական բյուջեներից տրվող միջոցները գյուղատնտեսության զարգացման ծախսերը ֆինանսավորելու համար: Դա մասամբ պայմանավորված է նաև հանրապետության էկոնոմիկայի ներկայիս ճգնաժամային վիճակի, ֆինանսական անառողջ դրության և բյուջեի զգալի դեֆիցիտի առկայությամբ: Հանրապետության 2006թ. պետական բյուջեի դեֆիցիտի գումարը նախատեսված է 69.8 մլրդ դրամ, այսինքն՝ ծախսերը 14.5%–ով գերազանցելու են եկամուտները:

Եթե բյուջեի եկամուտները և ծախսերը հավասարակշռված չեն, այսինքն՝ ծախսերը գերազանցում են եկամուտները, ապա այն դեֆիցիտային է: Եվ եթե բյուջեի դեֆիցիտը (ճեղքվածքը) լրացվում է վարկային միջոցների էմիսիայի, այսինքն՝ թղթադրամի ոչնչով չապահովված լրացուցիչ թողարկման հաշվին, ապա դա իր հերթին առաջացնում է դրամի արժեզրկում: Նշանակում է՝ բյուջեի դեֆիցիտը բացասաբար է անդրադառնում տնտեսության զարգացման, դրամաշրջանառության կայունացման, ֆինանսական առողջացման, հետևաբար, բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:

Բյուջեի դեֆիցիտի հաղթահարման ուղիներից են եկամուտների ավելացումը

կամ ծախսերի կրճատումը: Սակայն եկամուտների ավելացումը և ծախսերի կրճատումը չի կարելի իրականացնել արհեստական ձևով: Այսպես՝ բյուջեի եկամուտները չի կարելի ավելացնել ապրանքների գների և հարկերի դրույքների մեխանիկական բարձրացման հաշվին, քանի որ այն առաջ է բերում բնակչության կենսամակարդակի իջեցում և սոցիալական լարվածության ուժեղացում: Անհրաժեշտ է փնտրել բյուջեի դեֆիցիտի հաղթահարման ու վերացման առավել իրատեսական ուղիներ: Այդպիսի ուղիներից են տնտեսության բոլոր ճյուղերի ճգնաժամից դուրսբերումը և զարգացման կայունության ապահովումը, աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա ապրանքների թողարկման անընդհատ աճը, ինքնարժեքի իջեցումը և եկամուտների ավելացումը:

Բյուջետային ֆինանսավորման փոխարեն նախատեսված է պետության կողմից ուժեղացնել նորաստեղծ գյուղացիական տնտեսություններին վարկային ֆոնդի հաշվին զեղչ տոկոսներով կամ անտոկոս վարկավորման ձևով ցույց տրվող ֆինանսական օգնությունը: Չնայած վերոհիշյալ հանգամանքներին՝ մեր կարծիքով, առաջիկայում, բացի վարկավորումից, անհրաժեշտ է պետության կողմից հնարավորություններ փնտրել ու նաև ուղղակի բյուջետային ֆինանսավորման կարգով որոշակի օգնություն ցույց տալ հանրապետության մակարդակով ագրոարդյունաբերական համալիրի պետական ծրագրային զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական տեխնիկայի, սերմերի, թունաքիմիկատների ձեռքբերման ու մատակարարման, մթերքների գնումների կազմակերպման, պահեստավորման ու վերամշակման, ոռոգման կառույցների ստեղծման, հողային ու հիդրոմելիորատիվ աշխատանքների իրականացման, գյուղատնտեսական գիտության զարգացման և կադրերի պատրաստման ծախսերը հոգալու համար:

Ներկայումս, առավել քան երբևէ, ուժեղացել է էկոնոմիկայի և բյուջեի սոցիալական ուղղվածությունը, որն իր արտահայտությունն է գտնում սոցիալ-մշակութային միջոցառումների համար հանրապետության բյուջետային համակարգի տարբեր օղակների միջոցով ծախսերի ֆինանսավորման զուամարների աճի միտում ունենալու մեջ: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության 2006թ. բյուջեով սոցիալ-մշակութային միջոցառումների և գիտության զարգացման ծախսերի ֆինանսավորման տեսակարար կշիռը նրա ընդհանուր կառուցվածքում, ինչպես արդեն նշել ենք, բարձրացել և կազմել է 39,7%:

Սոցիալական ոլորտի զարգացման վրա չեն կարող տարածվել շուկայական էկոնոմիկայի հարաբերություններն այնպիսի պահանջներով և ընդգրկման մասշտաբներով, ինչպիսիք որ դրանք տարածվում են նյութական արտադրության ոլորտի վրա: Այդ մասին է վկայում նաև շուկայական էկոնոմիկային անցած և տասնամյակների ընթացքում հարուստ փորձ կուտակած արտասահմանյան երկրների օրինակը: Դեռ ավելին՝ շուկայական էկոնոմիկային անցման, տնտեսության ապապետականացման և մասնավորեցման գործընթացներն օբյեկտիվորեն ծնում են սոցիալական նոր հիմնախնդիրներ՝ կապված բնակչության զբաղվածության ու սոցիալական պաշտպանվածության (գործազրկություն, գների բարձրացում և այլն) խնդիրների առաջացման հետ, որոնց լուծումը անհրաժեշտաբար պահանջում է պետության կողմից կենտրոնացված ֆինանսական քաղաքականության իրականացման ուժեղացում: Այդ բոլորն իրենց ազդեցությունն են թողնում ինչպես պետական, այնպես էլ

տեղական բյուջեներով սոցիալ-մշակութային միջոցառումների ծախսերի ֆինանսավորման ուղղությունների և գումարների աճի վրա: Պահանջվում է զգալիորեն ավելացնել պետական սոցիալական ծրագրերի իրականացման համար բյուջետային միջոցների հատկացումները, որոնց հաշվին կարող է նաև բարձրացվել սոցիալական ոլորտի (կրթության, առողջապահության, մշակույթի և այլն) աշխատողների աշխատավարձը, ինչպես նաև բնակչության որոշ խավերին վճարվող կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների և սոցիալական այլ վճարումների չափերը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ տնտեսավարման նոր պայմաններում էական փոփոխություններ են կատարվում սոցիալական ոլորտի էկոնոմիկայի և ֆինանսների կազմակերպման ու կառավարման բնագավառներում: Շուկայական հարաբերությունների պայմաններում սոցիալական ոլորտի կենսագործունեությունն ապահովելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պահանջվում է այդ ոլորտի ֆինանսավորման նորագույն ձևերի և մեթոդների սահմանում: Այսպես՝ կրթության և առողջապահության ոլորտների վերակառուցումը և նրանց ձեռնարկությունների, կազմակերպությունների, ինչպես նաև բնակչության սեփական դրամական եկամուտների հաշվին զուգահեռ վճարովի բարձրագույն կրթության և բուժման մասնավոր ու կոոպերատիվ համակարգերի ներդրումը առաջ է բերում նշված ոլորտների պահպանման ու զարգացման ծախսերի բյուջետային ֆինանսավորման կրճատման միտում: Այնուհետև, կիրառական գիտահետազոտական աշխատանք կատարող գիտական հիմնարկները լրիվ ինքնաֆինանսավորման սկզբունքներին փոխադրելու քաղաքականությունը փոփոխություն է առաջացնում ամբողջությամբ վերցրած գիտության ծախսերի ֆինանսավորման կարգավիճակում, այսինքն՝ կրճատվում է գիտության զարգացման ծախսերի բյուջետային ֆինանսավորումը:

Վերոհիշյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ամբողջությամբ վերցրած ընդհանուր կրթության, այդ թվում նաև բարձրագույն կրթության, առողջապահության ու ֆունդամենտալ ուղղություններ ունեցող գիտության ճյուղերի զարգացման ծախսերի նկատմամբ առաջիկայում նույնպես անհրաժեշտ է պահպանել պետական մենաշնորհի կարգավիճակը և նշված ծախսերը ֆինանսավորել գերազանցապես պետբյուջեի միջոցների հաշվին:

Հայաստանի պետական բյուջեով ֆինանսավորվում են նաև հանրապետական ենթակայության պետական իշխանության և կառավարման մարմինների (նախարարների խորհրդի, Ազգային ժողովի, դատական իշխանության ու իրավապահ մարմինների և որոշ նախարարությունների) ապարատի պահպանման ծախսերը: Տնտեսավարման նոր պայմաններում թեպետ դանդաղ, բայց որոշակիորեն տնտեսության կառավարման ողջ համակարգում տեղի ունեցող կամ սպասվելիք արմատական փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնելու բյուջետային համակարգի տարբեր օղակների, մասնավորապես պետական բյուջեով կատարվող գործադիր և օրենսդիր մարմինների, նախարարությունների գերատեսչությունների ապարատի պահպանման ծախսերի ֆինանսավորման վրա: Այսպես՝ տնտեսության մասնավորեցման, կառավարման համակարգի ապակենտրոնացման ու ժողովրդավարացման բնույթի փոփոխությունները նպաստելու են պետական կառավարման կենտրոնացված մարմինների քանակի կրճատմանը և դադարեցնելու են դրանց ուժեղացման միտումը: Դրանով իսկ էական նախադրյալներ են ստեղծվելու կառավարման ապարա-

տի էժանացման, ճկունացման և կատարելագործման նպատակով սխտեմատիկ միջոցառումներ իրականացնելու ու բյուջետային ֆինանսավորման ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Հայաստանի անկախ պետականության ստեղծումով պետական բյուջեում նախատեսվում են նաև ծախսեր հանրապետության արտաքին տնտեսական գործունեության հետ կապված միջազգային ծրագրերի ֆինանսավորման համար: Եվ, վերջապես, հանրապետության պաշտպանության ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են միայն պետական բյուջեից:

Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը սովյալ տարվա պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուր է: Պետական բյուջեի ծախսային մասում կառավարության պահուստային ֆոնդը ներկայացվում է առանձին հոդվածով:

Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել սովյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծախսերի 5%-ը:

Պահուստային ֆոնդի միջոցներից ծախսերը կատարվում են կառավարության որոշումների հիման վրա:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, որոնց հատկացման կարգը սահմանվում է ֆինանսական համահարթեցման մասին օրենքով:

5.3. ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ

Տնտեսության կառավարման նախկին համակարգի պայմաններում վճռական դեր էին խաղում պետական բյուջեն, ձեռնարկությունների և կազմակերպությունների ֆինանսները, ինչպես նաև պետական ապահովագրությունը և սոցիալական ապահովությունը:

Տնտեսության տարածքային ոչ լիարժեք ինքնակառավարումը և վերջինիս ձևական բնույթ կրելը հանգեցրել էին տեղական ֆինանսական համակարգի դերի անտեսման: Տնտեսագիտական գրականության մեջ երկար ժամանակ տեղ չէին գտնում «տեղական ֆինանսներ» հասկացության մասին տեսական և, հատկապես, տեղական տնտեսության զարգացման ու ինքնակառավարման բնագավառում դրանց ունեցած գործնական նշանակության հարցերի գիտական վերլուծությունները: Այդ էր պատճառը, որ տարածաշրջանի (ռեգիոնի) ֆինանսական ռեսուրսների բովանդակության և քանակական սահմանագծումների մասին չկար հստակ պատկերացում:

Վերոհիշյալ հանգամանքների պատճառով է, որ (եթե հաշվի չառնենք տեղական բյուջեների համակարգը) տարածքների (ռեգիոնների) ֆինանսական ռեսուրսների շարժի մասին ամբողջական վիճակագրական տեղեկություններ ներկայումս գոյություն չունեն: Տնտեսագիտական հետազոտություններում տարածքային կտրվածքով ֆինանսական ռեսուրսների ձևավորման ծավալի որոշմանը նվիրված մեթոդաբանա-

կան ու մեթոդական մշակումները նույնպես բացակայում են: Մինչդեռ առանց այդ մշակումների և յուրաքանչյուր վարչական տարածքի գծով ֆինանսական ամբողջ ռեսուրսների ձևավորման, բաշխման ու օգտագործման վերաբերյալ վիճակագրական ճշգրիտ տվյալների հնարավոր չէ հիմնավորել և լուծել տեղական ինքնակառավարման ֆինանսական ողջ համակարգի վերակառուցման արդիական խնդիրները:

Տնտեսական բարեփոխումների և, հատկապես, էկոնոմիկայի կառավարման համակարգի ապակենտրոնացման և ժողովրդավարացման ներկա պայմաններում առավել չափով կարևորվում է Հայաստանի տնտեսության տեղական (տարածքային) ինքնակառավարման նշանակությունը: Վերջինս հանրապետության տնտեսության կառավարման ողջ համալիրի բաղկացուցիչ և, միաժամանակ, ինքնուրույն մասն է: Այն կոչված է տեղերում առկա նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների բազայի հիման վրա ապահովել ինչպես վարչատարածքային առանձին միավորումների (գավառների, մարզերի, առանձին քաղաքների, գյուղական վայրերի), այնպես էլ, ամբողջությամբ վերցրած, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի կատարումը: Այդ պայմաններում, բնական է, որ առավել չափով բարձրացել է տեղական ֆինանսական համակարգի՝ որպես հանրապետության տնտեսության տեղական (տարածքային) ինքնակառավարման ու զարգացման ապահովման կարևոր միջոցի դերը:

Տարածքային կտրվածքով ֆինանսական բոլոր ռեսուրսների ծավալի որոշման հարցում կան տարբեր տեսակետներ: Որոշ տնտեսագետներ վարչատարածքային միավորների տեղական ֆինանսական ռեսուրսների քանակական շրջանակները սահմանազծում են դրանց տեղական բյուջեներով և տարածքներում տեղաբաշխված տեղական նշանակության ձեռնարկությունների և կազմակերպությունների տրամադրության տակ գտնվող ապակենտրոնացված դրամական ֆոնդերով: Մեկ ուրիշ խումբ հեղինակներ տարածքի (ռեզիդնի) ֆինանսական ռեսուրսներ ասելով հասկանում են յուրաքանչյուր վարչական տարածքում տեղաբաշխված բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների (անկախ գերատեսչական ենթակայությունից և սեփականության ձևերի պատկանելությունից) գործունեությունից ստացված վերջնական ֆինանսական արդյունքները և, բացի այդ, տարածքի ֆինանսական ռեսուրսների մեջ մտցնում են նաև այն դրամական միջոցները, որոնք ձևավորվում են աշխատավարձի ֆոնդի վերաբաշխման հիման վրա՝ հարկերի և բնակչության այլ վճարումների տեսքով: Եվ, վերջապես, երրորդ խումբը տարածքի (ռեզիդնի) ֆինանսական ռեսուրսների ծավալը դիտում է որպես յուրաքանչյուր վարչատարածքային ձեռնարկություններում ստեղծված եկամուտների և դրսից ներգրավվող (պետական բյուջեից հատկացվող և վերադաս կազմակերպություններից ու հանրապետական նշանակության արտաբյուջետային ֆոնդերից վերաբաշխման կարգով ստացվող) միջոցների ամբողջական գումար:

Մեր կարծիքով՝ տնտեսության տեղական ինքնակառավարման ֆինանսական համակարգը ներառում է համայնքների բյուջեները, իշխանության տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա ձեռնարկությունների ու կազմակերպությունների ֆինանսները, տեղական նշանակության զանազան տեսակի արտաբյուջետային կամ, ինչպես ընդունված է անվանել, հատուկ նշանակության հաշիվներում հավաքագրվող դրամական ֆոնդերը: Վերջիններիս մեջ մտնում են՝

- տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման ժամանակ իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպած միջոցառումների իրականացումից ստացված լրացուցիչ եկամուտները և խնայված ֆինանսական ռեսուրսները,
- ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների կամավոր դրամական մուծումները և քաղաքացիների հանգանակություններից ստացվող միջոցները,
- տեղական նշանակության փոխառության պարտատոմսերի, դրամաիրային վիճակախաղերի տոմսերի և այլ արժեթղթերի իրացումից ու զանազան տեսակի աճուրդների կազմակերպումից ստացվող եկամուտները,
- արտադրանքի, աշխատանքների ու ծառայությունների գների (սակագների) բարձրացման հետևանքով տեղական ենթակայության ձեռնարկությունների անհիմն կարգով ստացված շահույթի (եկամուտների) դիմաց գանձված տուգանքները,
- տեղական խորհուրդների տարածքներում համապատասխան հսկիչ մարմինների կողմից վարչական խախտումների համար գանձված տուգանքների և տույժերի գումարները,
- զանազան այլ տեսակի տեղական արտաբյուջետային եկամուտները և միջոցները:

Ելնելով տնտեսության ինքնակառավարումը կատարելագործելու արդիական պահանջներից՝ ներկայումս նոր խնդիրներ են առաջադրվում տեղական ֆինանսական համակարգի դերի բարձրացման, տարածքների (ռեզիոնների) ֆինանսական ռեսուրսների ձևավորման բազայի ընդլայնման ու ծախսերի ֆինանսավորման իրավական կարգավիճակի փոփոխությունների գծով: Այդ խնդիրների լուծմանը կարելի է հասնել տարբեր ուղիներով՝ իշխանության հանրապետական և տեղական մարմինների միջև (հօգուտ վերջիններիս) ֆինանսական միջոցների ուղղակի պարզ վերաբաշխմամբ, տեղական եկամուտներում ձեռնարկությունների և բնակչության դրամական միջոցների լրացուցիչ ներգրավմամբ կամ էլ միջոցների բաշխման խառը տարբերակների օգտագործմամբ:

Վերը նշված խնդիրների լուծման պատասխանները ստանալու նպատակով կարևոր գործնական նշանակություն են ձեռք բերել նախ վարչական տարածքների ֆինանսական ներուժի (ֆինանսական առկա կամ սպասվելիք կարողության) ցուցանիշի բնութագրումը և վերլուծությունը: Մյուս կողմից տնտեսական ոչ փակ կարգավիճակի առկայության պայմաններում յուրաքանչյուր տարածքի (ռեզիոնի) ֆինանսական ներուժը կախված է ոչ միայն նրանում ստեղծվող ֆինանսական ռեսուրսների չափերից, այլև տարածքից դուրս եկող և դրսից ստացվող (ներգրավվող) ֆինանսական միջոցների չափերից: Ինչ խոսք, կենտրոնական տեղը պատկանում է տվյալ վարչական տարածքում ստեղծվող ֆինանսական միջոցներին, քանի որ վերջիններին հաշվին են հիմնականում ձևավորվում բնակչության, ձեռնարկությունների, պետական և տեղական բյուջեների եկամուտները: Այդ պատճառով էլ վարչական տարածքի ֆինանսական ներուժի վերլուծության ելակետ պետք է հանդիսանա նրանում ստեղծվող ֆինանսական ռեսուրսների ծավալի որոշումը:

Տարածքներում (ռեզիոններում) ստեղծվող ֆինանսական ռեսուրսների ներուժի

ծավալի հաշվարկման համար անհրաժեշտ է օգտագործել դրանցում տեղաբաշխված արտադրական և ոչ արտադրական (սոցիալական) ոլորտների ձեռնարկությունների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևերից և գերատեսչական ենթակայությունից) գործունեության վերջնական արդյունքներն ամփոփող այնպիսի մի ցուցանիշ, ինչպիսին համախառն ազգային արդյունքն (ՀԱԱ) է: Վերջինս հաշվարկվում է որպես արտադրական ոլորտի ձեռնարկությունների զուտ արտադրանքի (ազգային եկամտի), ոչ արտադրական ոլորտի եկամուտների, ինչպես նաև տարածքի արտադրական և ոչ արտադրական ոլորտների ձեռնարկությունների ու կազմակերպությունների հաշվեկշիռներում գտնվող ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի հաշվարկված գումար:

Ինչ խոսք, հանրապետության տարբեր ռեգիոնների ֆինանսական ռեսուրսների ներուժի ծավալը և կառուցվածքը միմյանցից խիստ տարբերվում են: Վերջիններիս վրա ազդում են տնտեսական և բնական բազմաթիվ գործոններ: Դրանցից են, օրինակ, արտադրության տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները (գերակշռում են վերամշակող արդյունաբերական, հանքարդյունաբերական և ագրարային–հումքային ճյուղերը), տնտեսության տարածքային զարգացման մակարդակը և դրա սպասվելիք աճի տեմպերը, բնակչության ժողովրդագրական վիճակը, ներդրումային քաղաքականության, գների համակարգը և այլն:

Տարածքի ֆինանսական ներուժի կառուցվածքը կարելի է ներկայացնել սխեմայի տեսքով (տես գծապատկեր 5.1.):

Տարածքների ֆինանսական ներուժը ձևավորվող եկամուտները, ըստ նպատակային օգտագործման կամ ամրակցման հատկանիշի, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ եկամուտներ, որոնք նախանշված են կոնկրետ նպատակների օգտագործման համար, և երկրորդ՝ ունիվերսալ բնույթի եկամուտներ: Առաջին խումբ եկամուտների շարքին դասվում են աշխատավարձի ֆոնդի միջոցները, սոցապահովագրության և այլ նպատակային հատկացումները (բժշկական ապահովագրության, ունեցվածքի, անձնական կյանքի և այլ նպատակների համար ապահովագրական հատկացումներ) և մաշվածքի հատկացումները: Նշված դրամական ֆոնդերի միջոցներն օգտագործվում են աշխատողներին աշխատավարձի, բնակչության առանձին խավերին կենսաթոշակների և զանազան նպաստների վճարման, բուժապասարկման, ապահովագրական հատուցումների, ինչպես նաև հիմնական ֆոնդերի վերարտադրության ծախսերը հոգալու համար:

Իսկ երկրորդ խումբ եկամուտներին վերաբերում են շահույթը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, որոնք օգտագործվում են արտադրության զարգացման զանազան կարիքների, աշխատողների նյութական խրախուսման, սոցիալական ենթակառուցվածքների նյութական խրախուսման, նշված ենթակառուցվածքների և պետական բյուջետային համակարգի եկամուտների ձևավորման համար:

Հարկ է նշել, որ տարածքային կտրվածքով, մուլտիսկ ըստ նպատակային օգտագործման կամ ամրակցման հատկանիշի, եկամուտների վերոհիշյալ դասակարգումը դարձյալ հնարավորություն չի ընձեռելու յուրաքանչյուր վարչական տարածքի շրջանակներում փաստացի ֆինանսական ներուժի ցուցանիշը ճշտորեն գնահատելու համար: Դրան խանգարում է ամենից առաջ ստեղծված ֆինանսական ռեսուրսների միջտարածքային վերաբաշխման օբյեկտիվ անհրաժեշտության և անխուսափելիու-

թյան փաստը: Այսպես, օրինակ, ապրանքների գնումների և զանազան ծառայու-
թյուններից օգտվելու համար տվյալ տարածքում ստացվող աշխատավարձն ու
բնակչության անձնական այլ եկամուտները ծախսվում են նաև մյուս տարածքնե-
րում և ընդհակառակը:

Գծապատկեր 5.1.

Ցուցանիշներ	Բացարձակ ուժարով (մլն դր)	% –ներով ընդհանուր հանրա-ուժարի նկատմամբ
<p>Տարածքի (քաղաքի, յուղի) ֆինանսական ներուժը. այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • աշխատավարձի ֆոնդ • սոցապահովա թության – այլ նպա- տակային հատկացումներ • տարածքի ձեռնարկությունների – կազ- մակերպությունների դրամական կու- տակումներ ու եկամուտներ՝ ընդամենը <p>որից՝</p> <ul style="list-style-type: none"> • շահույթ • ավելացված արժեքի հարկ • ակցիզային հարկ • ամորտիզացիոն մաշվածքի հաշ- վարկում • այլ դրամական կուտակումներ – ե- կամուտներ 		

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ տարածքային ֆինանսական ռե-
սուրսների շարժի վերլուծությունը չի կարող սահմանափակվել տվյալ վարչական
տարածքում ստացվող եկամուտների օգտագործման միայն նպատակային և ունի-
վերսալ հատկանիշների բնութագրմամբ: Դրանից հետո հաջորդ տրամաբանական
քայլը պետք է հանդիսանա տարածքի ֆինանսական ներուժի հաշվեկշռի կազմումը:
Վերջինս հնարավորություն կտա պատասխանել հետևյալ մի շարք հարցերին: Նախ,
թե տվյալ վարչական տարածքում ստեղծված ֆինանսական ռեսուրսների որ մասն
է մնում տեղում, և որքանը՝ դուրս գալիս տարածքի սահմաններից: Երկրորդ՝ պար-
զել տվյալ վարչական տարածքից դուրս եկող ֆինանսական ռեսուրսների կառուց-
վածքը: Երրորդ՝ որոշել, թե ովքեր են օգտագործվող ֆինանսական ռեսուրսների
տնօրինողները: Չորրորդ՝ բնութագրել տեղական բյուջեի գործնական դերը վարչա-
կան տարածքի ֆինանսական ռեսուրսների օգտագործման գործընթացում: Հինգե-
րորդ՝ բացահայտել վարչական տարածքի ֆինանսական ռեսուրսների, հատկապես
տեղական բյուջեի եկամուտների ավելացման լրացուցիչ աղբյուրները:

Տնտեսության կառավարման ապակենտրոնացված համակարգին անցնելն ան-
խուսափելիորեն առաջադրել է տարածքային կտրվածքով ամփոփ ֆինանսական
հաշվեկշիռների մշակման և դրանք վարչական տարածքների (քաղաքների, գյուղե-
րի) սոցիալ–տնտեսական զարգացման համալիր ծրագրերի բաղկացուցիչ մասը
դարձնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Այդպիսի հաշվեկշիռների կազմման և
օգտագործման միջոցով հնարավոր կլինի իրականացնել յուրաքանչյուր վարչական

տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի արժեքային ընդհանուր կապերի ստուգումը և ապահովել ծրագրվող ժամանակամիջոցում տեղական իշխանության մարմնի կողմից նախատեսվող ծախսերի և առկա ամբողջ ֆինանսական ռեսուրսների միջև անհրաժեշտ համամասնությունների ձեռքբերումը: Եվ վերջապես, որն ամենակարևորն է, տարածքային ամփոփ ֆինանսական հաշվեկշիռները կնպաստեն տեղական բյուջեների նախագծերի կազմման աշխատանքների բարելավմանը:

Տնտեսության տեղական (տարածքային) ինքնակառավարման ֆինանսական համակարգում առաջատար տեղը պատկանում է տեղական բյուջեներին: Վերջիններս արտացոլում են ֆինանսական այն ռեսուրսները, որոնք անմիջականորեն ու լրիվությամբ դրվում են պետական իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրության տակ և նրանց կողմից ուղղվում տարածքների(գյուղերի, քաղաքների և այլնի) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման ֆինանսավորման նպատակներին: Տեղական բյուջեները չեն ընդգրկում վարչական տարածքների ամբողջ ֆինանսական ռեսուրսները՝ իշխանության կենտրոնական ու տեղական կառավարման մարմիններին ենթակա ձեռնարկությունների և կազմակերպությունների տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցները:

Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքին և վարչատարածքային բաժանմանը համապատասխան՝ նրա ներկայիս բյուջետային համակարգը բաղկացած է պետական բյուջեից և տեղական (համայնքների) բյուջեներից:

Շուկայական հարաբերություններին անցման պայմաններում տնտեսության զարգացման վրա պետության ազդեցությունը և միջամտությունն ապահովվում են հիմնականում այնպիսի կենտրոնական ֆինանսական լծակների միջոցով, ինչպիսիք են հարկային և բյուջետային համակարգերը: Փորձը ցույց է տալիս, որ շուկայական ինքնակարգավորումը դեռևս բավարար պայման չէ տնտեսության զարգացման, առավել ևս՝ հասարակության սոցիալական խնդիրների լուծման համար:

Ներկայումս ՀՀ-ում բյուջետային ու հարկային համակարգերի ազդեցության ուժեղացումը բխում է շուկայական հարաբերությունների զարգացման, տնտեսության ապապետականացման ու սեփականության մասնավորեցման գործընթացների հետևանքով պետության տնտեսական դերի որոշակի թուլացման, կառավարման նախկին վարչահրամայական մեթոդներից հրաժարման անհրաժեշտությունից: Վերը նշված գործընթացների լիակատար ավարտից հետո առավել չափով է կարևորվելու հանրապետության բյուջետային ողջ համակարգի՝ այդ թվում նրա բաղկացուցիչ մասը կազմող տեղական բյուջեների համակարգի, որպես մակրոտնտեսական ու տարածքային մակարդակներով պետական կարգավորման ֆինանսական լծակների դերը: Հանրապետության իշխանության կենտրոնական և տեղական կառավարման մարմինների ձեռքում պետական ու տեղական բյուջեները ծառայելու են որպես կարևոր ֆինանսական լծակներ տնտեսության ճյուղային և տարածքային վերականգնման, սոցիալական նոր ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման հիմնախնդիրների լուծման գործում:

Քանի որ ներկա դրությամբ ՀՀ-ում լիարժեք կարգով ստեղծված չեն շուկայական էկոնոմիկայի բոլոր նախադրյալները, ուստի, հանրապետության բյուջետային համակարգը՝ որպես տնտեսության վրա նպատակաուղղված ազդեցության ու պետա-

կան կարգավորման ֆինանսական լծակ, առայժմ պասիվ դեր է կատարում: Իրականացնելով պետական եկամուտների անհրաժեշտ գումարների հավաքագրման և ծախսերի ֆինանսավորումն ապահովելու ֆունկցիան՝ բյուջետային համակարգը դեռևս շոշափելի ազդեցություն չի ունենա հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակի բարելավման վրա: Ակնհայտ է, որ ՀՀ-ում պետական հարկային մուտքերը վերջին տարիներին (1992 թվականից սկսած) չեն ծածկել պետական ծախսերի ֆինանսավորման պահանջը, որի պատճառով հանրապետության բյուջետային համակարգը, հատկապես պետական բյուջեն, 1992–2006 թվականներին դեֆիցիտային է եղել: ՀՀ-ում տնտեսության շուկայական հարաբերություններին անցման փուլի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության բյուջետային և հարկային համակարգերի վերակառուցման հիմնախնդիրներից են տնտեսության կառուցվածքային ճգնաժամի հաղթահարումը, սոցիալական հրատապ խնդիրների լուծումը և մասնավոր ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Հանրապետության բյուջետային համակարգը 1992–2006 թթ. արձագանքել է և շարունակում է արձագանքել մի շարք օբյեկտիվ պատճառներով (պատերազմ, տնտեսական շրջափակում և այլն) տնտեսական կյանքում առկա բացասական երևույթների՝ արտադրության ճգնաժամ, ֆինանսական կարգապահության անկում, ձեռնարկությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հսկայական աճ, ինվեստիցիոն ակտիվության բացակայություն, դրամի արժեզրկում և այլն: Գոյություն ունեն նաև սուբյեկտիվ պատճառներ, որոնք անցման շրջանում խանգարել են և շարունակում են այժմ էլ խանգարել հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վրա բյուջետային համակարգի ազդեցության ակտիվության բարձրացմանը: Նախ՝ հանրապետության տնտեսության շուկայական հարաբերություններին անցման փուլի համար մշակված չեն բյուջետային նոր քաղաքականության, հետևաբար՝ պետական ֆինանսական կարգավորման ժամանակակից սկզբունքները: Երկրորդ՝ լուծված չեն նոր պայմաններում պետական և տեղական բյուջեների փոխհարաբերությունները կարգավորող մեխանիզմների մշակման ու կիրարկման հարցերը: Երրորդ՝ ՀՀ կառավարման նոր համակարգի պայմաններում դեռ իրավաբանորեն կարգավորված չեն պետական և տեղական բյուջեների գործընթացները (նշված բյուջեների կազմման, քննարկման, հաստատման, կատարման և հսկողության գործընթացները):

Տարածքային սկզբունքով տեղական բյուջեների եկամուտների ձևավորման և դրանց եկամտային բազայի ամրապնդման հարցերի կարգավորումը թելադրված է տեղերում պետական արտադրական ձեռնարկությունների և սոցիալ-մշակութային օբյեկտների գործունեությունը տնօրինելու ասպարեզում իշխանության տեղական կառավարման մարմինների տնտեսական ու ֆինանսական իրավունքների մեծացման արդի պահանջով: Իսկ գործնականում այդ խնդիրների լուծումն առնչվում է մի կողմից՝ տարածքներում նշված օբյեկտների սեփականությունն իշխանության պետական ու տեղական կառավարման մարմինների միջև հստակորեն բաժանելու, իսկ մյուս կողմից՝ այդ օբյեկտների ու համապատասխան բյուջեների (պետական և տեղական բյուջեների) միջև ֆինանսական փոխհարաբերությունների իրավական կարգավիճակը որոշելու հետ: Դա միաժամանակ նշանակում է, որ առաջիկայում ոչ միայն չի բացառվելու, այլև անհրաժեշտ է դառնալու տարածքներում եղած հանրա-

պետական ենթակայության որոշ ձեռնարկություններ և հատկապես սոցիալական ու լրրոտի օբյեկտներ (չհաշված ապապետականացված և մասնավորեցված ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկությունները) օրենսդրությամբ իշխանության տեղական կառավարման մարմինների ենթակայությանը հանձնելու և տեղական համապատասխան բյուջեների հետ ֆինանսական փոխհարաբերությունների մեջ մտցնելու միտումը:

Տնտեսության ինքնակառավարման սկզբունքների արմատավորումը և այդ գործում իշխանության տեղական կառավարման մարմինների պատասխանատվության բարձրացումը նոր պահանջներ են առաջադրում տեղական բյուջեների համակարգի ստորադաս օղակների, հատկապես գյուղական բյուջեների դերի մեծացման, դրանց եկամուտների ձևավորման ծախսերի ֆինանսավորման նոր կարգավիճակի սահմանման հարցում: Մանավանդ, ինչպես արդեն նշվել է, հանրապետության տեղական բյուջեների համակարգի միջոցով կատարվող ծախսերի միայն ամնշան մասն է, որ ֆինանսավորվում է գյուղական և քաղաքային բյուջեներից: Դա բացատրվում է նրանով, որ գյուղական ու քաղաքային վայրերում սոցիալ-մշակութային հիմնարկների ու միջոցառումների ծախսերը վերջին տարիներին ֆինանսավորվել են հիմնականում պետական բյուջեից:

ՀՀ գյուղական և քաղաքային վայրերում ներկայումս սեփականության խառը ձևերով (կոոպերատիվ, անհատական, մասնավոր, պետական) անհատական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսությունների, կենցաղային, կոմունալ, գյուղատնտեսական հումքի վերամշակման, ինչպես նաև լայն սպառման ապրանքների թողարկման զանազան տեսակի արտադրական ձեռնարկությունների և կազմակերպությունների ստեղծման ու զարգացման միտումը իրական նախադրյալներ է ստեղծում իշխանության գյուղական կառավարման մարմինների ֆինանսական բազայի ընդլայնման ու ամրապնդման համար: Դրա հետ կապված՝ հնարավորություններ են ստեղծվում գյուղական և քաղաքային վայրերում սոցիալ-մշակութային հիմնարկությունների (հանրակրթական, նախադպրոցական, կուլտուր-լուսավորչական հիմնարկություններ, հիվանդանոցներ և այլն) ծախսերի ֆինանսավորումն իրականացնել ոչ թե պետական բյուջեներից, այլ առաջին հերթին՝ գյուղական և քաղաքային բյուջեներից: Հասկանալի է, որ մի շարք օբյեկտիվ պատճառներով (շահութաբեր ձեռնարկությունների բացակայություն, բնակլիմայական, ռազմավարական և այլն) հանրապետության որոշ թվով գյուղական և քաղաքային բնակավայրեր չեն կարող իրենց տարածքային եկամուտներով ծածկել սեփական բյուջեներով նախատեսվող ծախսերը: Հետևաբար, վերադաս բյուջեներից հետագայում նույնպես անհրաժեշտություն կզգացվի եկամուտների վերաբաշխման հիման վրա լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնել նշված ստորադաս բյուջեներին: Եվ վերջապես, ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների ու հիմնարկությունների, ինչպես նաև առանձին քաղաքացիների կամավոր փողային մուծումների (հանգանակությունների), գյուղական ու քաղաքային վայրերում դրամահիրային վիճակախաղերի տոմսերի և մյուս արժեթղթերի իրացման ու այլ միջոցառումների հաշվին գյուղական իշխանության կառավարման մարմինները կարող են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ հավաքագրել իրենց արտաբյուջետային ֆոնդերում և դրանք ծախսել նշված վայրերի սոցիալական ոլորտի,

կոմունալ–կենցաղային կարիքների, փողոցների բարեկարգման և այլ տեղական բնույթի միջոցառումների ծախսերը ֆինանսավորելու համար:

Համայնքների բյուջեների ձևավորման հիմնական սկզբունքներն են՝

- ա) համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը,
- բ) պահուստային ֆոնդի ստեղծումը՝ որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ծախսերի աղբյուրի և կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական երաշխիք,
- գ) համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը. յուրաքանչյուր բյուջետային տարվա համար համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների (միջոցների) հանրագումարը,
- դ) խնայողությունները, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը,
- ե) արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը,
- զ) հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը բյուջեի հողվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով,
- է) հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

Համայնքների բյուջեները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանությունը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում են հետևյալ բաղկացուցիչ մասերի.

- ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե),
- բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

Համայնքի բյուջեի բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը պետք է հաշվեկշռված լինի:

Համայնքների բյուջեների վարչական մասը (վարչական բյուջեն) ներառում է եկամուտների գծով՝ համայնքների բյուջեների օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտներ, այդ թվում՝

- հարկային եկամուտները և տուրքերը.
- ոչ հարկային եկամուտները.
- պաշտոնական տրանսֆերտները:

Հարկային եկամուտներ և տուրքեր են՝

- ա) հողի հարկը,
- բ) գույքահարկը,
- գ) եկամտահարկը,
- դ) օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից մասհանումները,

- ե) պետական տուրքը, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, նշված ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար,
- զ) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, բացառությամբ օրենքով պետական բյուջե մուտքագրվող հարկերի գծով հաշվարկվող տուգանքների և տույժերի,
- է) տեղական տուրքերը,
- ը) համայնքի բյուջե օրենքով մուտքագրվող այլ հարկերը:

Ոչ հարկային եկամուտներն են՝

- ա) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները,
- բ) տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա բյուջետային հիմնարկությունների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները,
- գ) վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կիրառած պատժամիջոցներից եկամուտները,
- դ) տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա ձեռնարկությունների տրամադրության տակ մնացած շահույթներից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները,
- ե) տեղական վճարները,
- զ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով գանձվող և համայնքների բյուջեների եկամուտներին հաշվանցման ենթակա այլ տեղական վճարները,
- է) անշարժ գույքի, այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցները, որոնք ուղղվում են՝

Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում տեղաբաշխված գույքի մասնավորեցումից ստացվող մուտքերի 30%–ի չափով.

Հայաստանի Հանրապետության մարզերում գտնվող համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների ֆինանսավորմանը՝ համայնքի վարչական տարածքում տեղաբաշխված անշարժ գույքի, այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող մուտքերի 30%–ի չափով.

Երևան քաղաքում տեղակայված անշարժ գույքի, այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բացված հատուկ հաշվին:

Ընդ որում, նշված միջոցները կարող են ուղղվել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցված ծրագրերի ֆինանսավորմանը:

Պաշտոնական տրանսֆերտներ, հատկացումներ են՝

ա) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները,

բ) այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները:

Ծախսերի գծով՝ օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը, այդ թվում՝

ա) ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ,

բ) պաշտպանության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում,

գ) հասարակական կարգի պահպանության և անվտանգության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում,

դ) կրթություն և գիտություն,

ե) առողջապահություն.

զ) սոցիալական ապահովություն և ապահովագրություն,

է) մշակույթ, սպորտ և կրոն,

ը) բնակարանային-կոմունալ տնտեսություն,

թ) վառելիքաէներգետիկ համալիր,

ժ) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն,

ժա) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն,

ժբ) տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն,

ժգ) համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ,

ժդ) համայնքի բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող այլ ծախսեր:

Համայնքների բյուջեների ֆոնդային մասը (ֆոնդային բյուջեն) ներառում է

մուտքերի գծով՝

ա) պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները),

բ) կապիտալ ծախսերի ֆինանսավորման այլ աղբյուրներից նպատակային հատկացումները,

գ) տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա ծառայությունների տրամադրության տակ մնացած շահույթներից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները,

դ) համայնքային սեփականություն համարվող, այդ թվում տիրազուրկ, ժառանգության իրավունքով կամ նվիրատվության ձևով տեղական ինքնակառավարման մարմնի, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկության տնօրինմանն անցած գույքի օտարումից մուտքերը,

ե) վարկերը և փոխառությունների ձևով ներգրավված միջոցները, այդ թվում տե-

ղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը սահմանում է կառավարությունը,

- զ) վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումները,
- է) բաժնետիրական ընկերությունների, ֆինանսական հաստատությունների, բանկերի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների դիմաց ստացվող շահաբաժինները, ներդրված դեպոզիտների դիմաց ստացվող տոկոսային եկամուտները:

Ծախսերի գծով՝ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կապիտալ ծախսերը, այդ թվում՝

- ա) կապիտալ շինարարություն,
- բ) կապիտալ վերանորոգման ծախսերը,
- գ) վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների մարման ծախսերը,
- դ) ապրանքանյութական արժեքների պահուստների ձևավորման ծախսերը:

Համայնքների բյուջեներից տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին: Պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Համայնքների բյուջեներում նախատեսվում է պահուստային ֆոնդ, որը համայնքի տվյալ տարվա բյուջեում չնախատեսված, ինչպես նաև ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե) կատարվող հատկացումների, համայնքների բյուջեների կողմից վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ստանձնած պարտքային պարտավորությունների կատարման ապահովման ֆինանսական աղբյուր է: Համայնքների բյուջեների պահուստային ֆոնդն առանձին հոդվածով ներկայացվում է վարչական մասում (վարչական բյուջեում): Համայնքի պահուստային ֆոնդի և համայնքի բյուջեի վարչական մասի (վարչական բյուջեի) հաշվարկային եկամուտների հարաբերակցությունը սահմանվում է համայնքի տվյալ տարվա բյուջեով և չի կարող գերազանցել տվյալ բյուջետային տարվա համայնքի բյուջեի վարչական մասի (վարչական բյուջեի) հաշվարկային եկամուտների 30%-ը:

Համայնքի պահուստային ֆոնդից վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների օգտագործման դիմաց վճարների (տոկոսների) ընդհանուր գումարը չի կարող գերազանցել համայնքի տվյալ տարվա պահուստային ֆոնդի միջոցների 20%-ը: Պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի գծով ֆինանսավորումն իրականացվում է համայնքի ավագանու որոշումների հիման վրա:

Համայնքների բյուջեների վարչական մասում (վարչական բյուջեում), որպես եկամտի առանձին տեսակ, նախատեսվում են պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման եռամյա

ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Կառավարության կամ նրա լիազորած պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ: Բացառություն են տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերը:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարը աշխատակազմի համապատասխան ծառայություններին, բյուջետային հիմնարկություններին տալիս է հրահանգներ բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվարկման ու ներկայացման համար, մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը ապահովում է եկամուտների ու ծախսերի հաշվարկը Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանած համապատասխան ձևերով:

Բյուջետային հիմնարկությունները մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 15-ը համայնքի ղեկավարին են ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով: Համայնքի ղեկավարը մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները, կազմում համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում պետական բյուջեի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում կամ մինչև պետական բյուջեի հաստատումը: Համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանու նիստում ներկայացնում է համայնքի ղեկավարը: Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի մասին որոշման նախագծի քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով: Քննարկումներից հետո համայնքի ղեկավարը կարող է մինչև մեկ շաբաթ ժամանակ վերցնել ներկայացված նախագծի մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատելու բյուջեն:

Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը: Համայնքի ավագանին, ղեկավարի ներկայացմամբ, համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը: Պետական բյուջեի հաստատումից հետո համայնքների մինչ այդ հաստատված բյուջեներում երկշաբաթյա ժամկետում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան մարզպետին: Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին, և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ օրենքով սահմանված կարգով պաշտոնանկ անելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունելու դեպքում մարզպետը հարցը ներկայացնում է կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով: Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ օրենքով սահմանված կարգով պաշտոնանկ անելու դեպքում համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն քսան օրվա ընթացքում: Այն քննարկվում և հաստատվում է սույն օրենքով նախատեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում: Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Համայնքի բյուջեի հաստատումից հետո համայնքի ղեկավարը սահմանում է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, հաստատում բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ կատարել բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված չափաքանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առա-

ջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի եկամուտները կամ ավելացնում ծախսերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացքը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ սույն օրենքի համաձայն: Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը, սույն օրենքի համաձայն, կառավարության սահմանած կարգով իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ իր տեղական գանձապետական բաժանմունքների միջոցով:

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բյուջետային պաշտոնատար անձինք համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15–ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին: Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին ներկայացնում է բյուջետային տարին ավարտվելուց հետո՝ հաջորդ տարվա բյուջեի եռամսյակային կատարման վերաբերյալ հաղորդման հետ միասին:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մայիսի 1–ը: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն չի ներկայացվում, կամ կառավարությունը ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, մնան որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունելու դեպքում համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման վերաբերյալ ավագանին ընդունում է համապատասխան որոշում:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ֆինանսական հասկացություն է «բյուջեն» և ինչո՞վ է կապված պետության հետ:
2. Որո՞նք են բյուջեի սոցիալ–տնտեսական գործառույթները:
3. «Բյուջետային համակարգը» ի՞նչ հասկացություն է և ինչպիսի՞ օղակներից է կազմված:
4. Ո՞րն է պետական բյուջեի առանձնահատուկ դերը բյուջետային համակարգում:
5. Համայնքի բյուջեն ի՞նչ դեր ունի տեղական ինքնակառավարման ոլորտում:
6. Ինչո՞վ է կարգավորվում ՀՀ բյուջետային համակարգը. մեկնաբանել համապատասխան օրենքը:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

6.1. ՄԻՋԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տարբեր մակարդակի բյուջեների միջև եկամուտների ու ծախսերի բաշխումն արտահայտում է բյուջետային կարգավորման բուն էությունը և, միաժամանակ, հանրապետության բյուջետային համակարգի գործընթացի (պետական ու տեղական բյուջեների նախագծերի կազմման, քննարկման, հաստատման, կատարման ու վերահսկողության) բաղկացուցիչ մասն է: Բյուջետային կարգավորման հիմքում ընկած է եկամուտների ու ծախսերի օրենսդրոն բաշխումը պետական և համայնքների բյուջեների միջև: Հարկ է նշել, որ ՀՀ–ում ներկա դրությամբ բյուջետային կարգավորման տնտեսահիրավական մեխանիզմները դեռևս ամբողջությամբ մշակված չեն: Տարբեր մակարդակի բյուջեների միջև եկամուտների ու ծախսերի բաշխումն իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ յուրաքանչյուր տարվա համար կազմած հանրապետության պետական բյուջեի հաստատման ժամանակ, բացառությամբ տեղական հարկերի ու տուրքերի, որոնք «ՀՀ–ում հարկերի ու տուրքերի մասին» օրենքով կարող են սահմանվել վարչատարածքների ինքնակառավարման մարմինների կողմից:

ՀՀ բոլոր քաղաքացիները, անկախ իրենց ապրելու բնակավայրից և ազգային պատկանելությունից, պետական սոցիալական ծառայություններից (ընդհանուր կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և այլն) օգտվելու իրավունք ունեն: Ընդ որում, հանրապետության տնտեսապես թույլ զարգացած հեռավոր ու բարձրլեռնային շրջանների բնակիչներն այդ իրավունքներից օգտվում ու շարունակելու են օգտվել այն չափերով, ինչ որ զարգացած կենտրոնական տնտեսական շրջանները (դեռ ավելին, սոցիալական արդարության ապահովման և մարդկանց շահագրգռելու նպատակներով պահանջվում է տնտեսապես թույլ զարգացած հեռավոր ու բարձրլեռնային շրջաններում կատարել նաև հավելյալ ծախսեր), չնայած վերոհիշյալ շրջաններում բյուջետային եկամուտները չեն ծածկում դրանց ծախսերի ֆինանսավորման պահանջը: Ուստի, նշված շրջանների սոցիալական ոլորտի ծախսերի ֆինանսավորման պահանջն այսուհետև ևս պետք է բավարարվի առաջին հերթին տարբեր մակարդակների բյուջեների միջև եկամուտների բաշխման ու վերաբաշխման միջոցով ստացվող դրամական ռեսուրսների հաշվին: Այդ կապակցությամբ ներկա պայմաններում առանձնակի նշանակություն է ձեռք բերել հանրապետության տարբեր վարչատարածքների մակարդակով (հատկապես ծախսերի անհրաժեշտ չափերը որոշելու համար) գիտականորեն հիմնավորված ֆինանսական, այդ թվում բյուջետային ծախսերի նոր շերտավորված նորմաների ու նորմատիվների մշակման անհրաժեշտությունը: Մյուս կողմից հանրապետության վարչատարածքների կողմից սոցիալ–տնտեսական ծրագրերի մշակումը խթանելու և բյուջեների եկամուտների ու ծախսերի հաշվարկները դյուրացնելու նպատակով խիստ անհ-

րաժեշտություն է դարձել տեղական բյուջեներին պետական հարկերից ու եկամուտներից մասհանումների նորմատիվների սահմանումը՝ ավելի տևական ժամանակահատվածի (2–5 տարիների) համար:

Ելնելով պետական բյուջեի և տեղական բյուջեների միջև եկամուտների բաշխումից, ինչպես նաև տեղական բյուջեներով կատարվող ծախսերի, դրանց ամրակցված սեփական եկամուտների և ընդհանուր հանրապետական հարկերից մասհանումների միջոցով ստացվող եկամուտների հարաբերակցությունից՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կառավարության հանձնարարությամբ որոշում է դուտացիաների, սուբվենցիաների ու սուբսիդիաների չափերը, որոնք պետական բյուջեից հատկացվում են առանձին տեղական բյուջեներին:

Դոտացիան ֆինանսական օգնության կամ օժանդակության ձև է, ըստ որի՝ այն տրվում է անհատույց կարգով առանձին տեղական բյուջեներին դրանց եկամուտների ու ծախսերի միջև գոյություն ունեցող ճեղքվածքը (դեֆիցիտը) փակելու համար՝ չառանձնացնելով դրա օգտագործման ուղղությունները (նպատակները): Դա նշանակում է, որ տեղական բյուջեները տնօրինող մարմինները (տեղական խորհուրդները) իրենք են որոշում դոտացիոն գումարների օգտագործման ուղղությունները:

Սուբվենցիան ֆինանսական օգնության այնպիսի ձև է, որը թեև տրվում է անհատույց, բայց, որպես կանոն, կապիտալ ներդրումների կոնկրետ ծրագրեր ֆինանսավորելու համար: Դոտացիայի համեմատությամբ սուբվենցիայի օգտագործման կոնկրետ նպատակայնությունն այն դարձնում է հիմնավորված, իսկ կիրառումը՝ հեշտ վերահսկելի: Այլ նպատակով օգտագործելու դեպքում սուբվենցիոն գումարները ենթակա են վերադարձման:

Սուբսիդիան ֆինանսական օժանդակության այնպիսի ձև է, որը վերադաս բյուջեից տրվում է ստորադաս բյուջեին նույնպես անհատույց կարգով և որոշակի նպատակի համար. այն հատկացնելիս սովորաբար հիմք է ընդունվում սոցիալական բնույթի (մշակույթի, առողջապահության, ընդհանուր կրթության և այլն) ֆինանսավորման ծրագրերի կատարումը: Ոչ նպատակային օգտագործման դեպքում սուբսիդիաները ենթակա են վերադարձման: Նշենք, որ սուբսիդիաները, որոնք կարևոր նշանակություն ունեին նախկին ԽՍՀՄ միութենական բյուջեից միութենական հանրապետությունների բյուջեները ֆինանսավորելու համար, ՀՀ-ում առայժմ կիրառում չունեն: Նկատի ունենալով կենտրոնացված նպատակային ու բյուջետային քաղաքականության անցկացման կարևորությունը՝ մեր կարծիքով, դոտացիայի համեմատությամբ սուբսիդիան կարելի է ֆինանսական օժանդակության առավել արդյունավետ ձև համարել:

Ընդհանուր առմամբ տվյալ ֆինանսական տարվա համար յուրաքանչյուր տեղական բյուջեի ծախսերին ուղղվող դոտացիայի ծավալը հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից, ինչպես արդեն նշվել է, որոշվում է՝ հիմք ընդունելով քաղաքի կամ գյուղի բյուջեի ծախսերի չափը և սեփական (ամրակցված) եկամուտների կանխատեսվող գումարը: Հասկանալի է, որ յուրաքանչյուր քաղաքի կամ գյուղի բյուջեի ծախսերի ծրագրային ծավալի գնահատման ցուցանիշը որոշվում է նախորդ տարիների կատարողականի և հաջորդ տարվա համար սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի առաջադրանքների հիման վրա: Սակայն պարզ է, որ ներկա դրությամբ, առանց պետական բյուջեից ստացվող ֆինան-

սական միջոցների, տեղական բյուջեները միայն սեփական եկամուտներով չեն կարող բավարարել տեղերի սոցիալ–տնտեսական զարգացման ծախսերի ֆինանսական պահանջը:

Ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը ձևավորվում է հատկապես Երևան քաղաքի տարածքում տեղաբաշխված ձեռնարկությունների, կազմակերպությունների (ամկախ սեփականության ձևերից) ու բնակչության եկամուտներից գանձվող հարկերի և զանազան վճարումների հաշվին:

ՀՀ տեղական բյուջեների կարգավորման մեխանիզմի կատարելագործման համար անհրաժեշտ են՝

- օրենսդրորեն հստակ սահմանազատել իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակները և տեղական բյուջեներից կատարվող ծախսերի ֆինանսավորման ոլորտները: Այդ հարցում պարզություն մտցրեց «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքը.
- պլանավորել տեղական բյուջեներն ըստ ընթացիկ ծախսերի բյուջեի («ընթացիկ բյուջեի») և ըստ կապիտալ ներդրումների բյուջեի («ընդլայնված բյուջեի»), որը հնարավորություն կտա առավել արդյունավետ ձևով կողմնորոշվել պետական բյուջեից տեղական բյուջեներին ֆինանսական միջոցներ հատկացնելու ոլորտները ճշտորեն ընտրելու գործում.
- տեղական բյուջեների համակարգի յուրաքանչյուր օղակի համար ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ճշտորեն հաշվառել «ընթացիկ բյուջեի» սահմանային ծավալը, որը պետք է իր մեջ ամփոփի նվազագույն այն անհրաժեշտ ծախսերը, որոնց մի մասը սեփական եկամուտների անբավարարության դեպքում պետք է ֆինանսավորվի պետական բյուջեից տրվող սուբսիդիաների (դոտացիաների) հաշվին.
- նախապես որոշել ծախսերի այն ոլորտները (բնակարանային–կոմունալ տնտեսություն, տեղական կառավարման ապարատի պահպանում և այլն), որոնք կարող են ֆինանսավորվել տեղական բյուջեների սեփական եկամուտների հաշվին.
- պետական բյուջեից սուբսիդիաներ հատկացնել տեղական բյուջեներին՝ առողջապահության, ընդհանուր կրթության և սոցիալական այլ ծրագրերի ծախսերը ֆինանսավորելու համար: Ընդ որում, այդ հատկացումները պետք է կատարվեն հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ֆինանսական նորմաների ու նորմատիվների համաձայն.
- ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված տարածքային (ռեգիոնալ) տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերի շրջանակներում պետական բյուջեից սուբսիդիաներ հատկացնել տեղական բյուջեներին՝ կապիտալ ներդրումների առաջնահերթ ուղղությունների ծախսերը ֆինանսավորելու համար:

Այսպիսով՝ ՀՀ տարբեր մակարդակի բյուջեների միջև եկամուտները և ծախսերը բաշխվում են՝ ելնելով իշխանության կենտրոնական ու տեղական կառավարման մարմինների սոցիալ–տնտեսական ու մյուս ֆունկցիաներից, ձեռնարկությունների ու կազմակերպությունների գերատեսչական (հանրապետական ու տեղական) ենթակայությունից և այն կարգից, որը սահմանված կլինի բյուջետային ու տեղական

ինքնակառավարման օրենսդրություններով: Այնուհետև, բյուջետային կարգավորման գործընթացով եկամտի միևնույն տեսակը (օրինակ, ավելացված արժեքի հարկը, շահութահարկը և այլն) կարող է մուտք լինել և պետական բյուջե, և տեղական բյուջեներ, իսկ միևնույն բնույթի ծախսը կարող է կատարվել թե պետական բյուջեից և թե տեղական բյուջեներից (օրինակ՝ տնտեսության զարգացման, սոցիալ-մշակութային միջոցառումների ծախսերը և այլն), բայց, իհարկե, տարբեր տեսակարար կշիռներով: Կան նաև եկամուտների և ծախսերի այնպիսի տեսակներ (մաքսային վճարներ, ակցիզային հարկ, երկրի պաշտպանության, միջազգային ծրագրերի ծախսեր և այլն), որոնք բացառապես անցնում են պետական բյուջեով:

Բյուջետային կարգավորման միջոցով լուծվում է բոլոր տեսակի բյուջեների եկամուտների և ծախսերի հավասարակշռումն առանց դեֆիցիտի: Իշխանության տեղական ինքնակառավարման մարմիններում առաջանում է նյութական շահագրգռվածություն ոչ միայն իրենց տեղական բյուջեների եկամուտների, այլև պետական բյուջեի գծով հարկերի ու եկամուտների (հատկապես տեղական բյուջեներին մասհանվող ընդհանուր հանրապետական հարկերի ու եկամուտների) պլանները կատարելու և գերակատարելու գործում, տնտեսական նախադրյալներ են ստեղծվում իշխանության հանրապետական ու տեղական կառավարման մարմինների շահերի փոխկապակցվածության և փոխադարձ ֆինանսական օգնության ապահովման համար:

6.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բյուջետային գործընթացը ընդգրկում է բյուջեների կազմման, քննարկման, հաստատման և կատարման փուլերը, որոնք, ըստ էության, արտահայտում են բյուջետային պլանավորման բուն բովանդակությունը ու միմյանց հետ սերտորեն շաղկապված են: Ավելի կոնկրետ՝ բյուջետային գործընթացի միջոցով լուծվում են մի շարք գործնական խնդիրներ: Նախ՝ դրա միջոցով որոշվում են բյուջետային առանձին օղակների (պետական և տեղական բյուջեների) եկամուտների ընդհանուր ծավալը, կոնկրետ տեսակները և ձևավորման աղբյուրները: Երկրորդ՝ սահմանվում են բյուջետային հատկացումների բաշխման և օգտագործման ուղղությունները ըստ տնտեսական ու սոցիալական առանձին բնագավառների, գերատեսչությունների, վարչատարածքային շրջանների և ծախսերի ֆինանսավորման օբյեկտների: Երրորդ՝ բյուջեի եկամուտները բաշխվում են նրա առանձին օղակների (պետական և տեղական բյուջեների) միջև այն հաշվով, որպեսզի ապահովվի հանրապետության բոլոր բյուջեների եկամուտների և ծախսերի հավասարակշռությունը: Չորրորդ՝ նախագծվում և որոշվում են պետական և տեղական բյուջեների պահեստային (ռեզերվային) ֆոնդերի ստեղծման չափերը: Եվ, վերջապես, բացահայտվում են իշխանության հանրապետական և տեղական մարմինների կենտրոնացված պետական ֆինանսական ռեսուրսների ֆոնդի ավելացման բոլոր հնարավոր ռեզերվները, ինչպես նաև իրականացվում է դրամով հսկողությունը հանրապետության տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների և բյուջետային հիմնարկությունների ֆինանսատնտես-

սական ողջ գործունեության նկատմամբ:

Պետական և տեղական բյուջեների նախագծերը կազմվում են պլանավորվող տարվա Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի ցուցանիշների, ամփոփ ֆինանսական հաշվեկշռի, գիտատեխնիկական կանխատեսումների, սահմանված հարկերի դրույքների, գների մակարդակի, ծախսերի նորմաների և նորմատիվների հիման վրա: Այսպես՝ բյուջեի եկամուտներից՝ շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, բնակչությունից գանձվող հարկերի գումարները որոշելու հիմք են տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի (պլանի) այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են արտադրանքի թողարկումը, իրացումը, աշխատավարձի ֆոնդը, ինքնարժեքը, շահույթը, ապրանքաշրջանառությունը, տրանսպորտի, կոմունալ և կենցաղային ձեռնարկությունների սպասարկումների, կապի և ուրիշ ձեռնարկությունների գծով աշխատանքների ու ծառայությունների ծրագրված առաջադրանքները: Այնուհետև, բյուջեի ծախսերով նախատեսվող կապիտալ ներդրումների ֆինանսավորման չափը սահմանվում է՝ ելնելով պլանային տարվա տնտեսական ու սոցիալական ծրագրով ընդունված ներդրումների ծավալից: Իսկ սոցիալ-մշակութային հիմնարկությունների պահպանման ու միջոցառումների իրականացման համար բյուջեում նախատեսվող ֆինանսավորման ծախսերը որոշվում են այդ հիմնարկությունների ցանցի և կոնտինգենտի ծավալման կարևորագույն ցուցանիշների (աշակերտների, դասարանների թիվը դպրոցներում, ուսանողների թիվը բուհերում, մահճակալների քանակը հիվանդանոցներում և այլն) հիման վրա, որոնք նույնպես սահմանվում են պլանային տարվա տնտեսական ու սոցիալական զարգացման պետական ծրագրով: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, որ բյուջեն տնտեսական ու սոցիալական զարգացման պետական ծրագրի ցուցանիշների սուկ թվաքանական արդյունքն է:

Բյուջետային պլանավորման գործընթացն ունի ինքնուրույն նշանակություն՝ չօգտագործված նյութական ու ֆինանսական ներքին ռեզերվների հայտնաբերման և դրանք հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման կարիքներին լրացուցիչ կարգով ծառայեցնելու համար: Պետական և տեղական բյուջեների կազմման, քննարկման, հաստատման ու կատարման գործընթացի փուլերում ճշգրտվում, փոփոխության են ենթարկվում հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման պետական ծրագրի առանձին ցուցանիշները, մեկ անգամ ևս ստուգվում են այդ ծրագրի առանձին բաժինների հաշվեկշռային կապակցությունները:

1991 թ. սկսած էական տեղաշարժեր են կատարվել հանրապետության բյուջետային գործընթացում, քանի որ պետական և տեղական բյուջեներն անկախ են, ու նրանց նախագծերի կազմման, քննարկման և, մասնավորապես, հաստատման աշխատանքները չեն կանոնադրվում իշխանության որևէ վերադաս մարմնի կողմից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ժողովրդավարացման սկզբունքներն աստիճանաբար արմատավորվում են տեղական բյուջեների ձևավորման գործընթացում, քանի որ նշված բյուջեների նախագծերի կազմման համար վերադաս ֆինանսական մարմնի՝ հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տեղերին այլևս հիմնական (հսկիչ) ցուցանիշներ (եկամուտների վճարման և ծախսերի լիմիտավորման չափեր) չեն իջեցվում, և պատգամավորնե-

րի մարզային, քաղաքային ու գյուղական խորհուրդներն ինքնուրույն կազմում, քննարկում և հաստատում են իրենց համապատասխան վարչատարածքային տեղական բյուջեները:

Շուկայական էկոնոմիկային անցնելու գործընթացը նոր պահանջներ է առաջադրում նաև բյուջետային համակարգի առանձին օղակների եկամուտների ու ծախսերի գծով ցուցանիշների պլանավորման մեթոդաբանական և մեթոդական աշխատանքների կատարելագործման նկատմամբ: Պետբյուջեի եկամուտների ձևավորման մեխանիզմի կատարելագործումը սերտորեն առնչվում է հարկային քաղաքականության իրականացման և հարկերի մասին հանրապետության գործադիր ու օրենսդիր մարմինների կողմից ընդունված որոշումների և օրենքների հետ, որը պահանջում է հատուկ ուսումնասիրություն: Ինչ վերաբերում է բյուջետային համակարգի առանձին օղակներով (պետական և տեղական) ֆինանսավորվող ծախսերի պլանավորման գործընթացին, ապա հանրապետության էկոնոմիկայի զարգացման սոցիալական ուղղվածությունն ուժեղացնելու պայմաններում գործնական լուծում պահանջող խնդիր է դարձել սոցիալական ոլորտի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով սոցիալ-մշակութային հիմնարկների պահպանման ու միջոցառումների իրականացման համար կատարվող բյուջետային ֆինանսավորման ծախսերի տնտեսագիտորեն հիմնավորված նոր նորմաների մշակումը:

Հարցն այն է, որ ներկայումս հանրապետության առանձին ռեզիոնների մակարդակով ծախսերի անհրաժեշտ չափերը որոշելու համար չկան գիտականորեն հիմնավորված ֆինանսական, այդ թվում բյուջետային ծախսերի նորմաներ և նորմատիվներ: Միաժամանակ հայտնի է, որ Սահմանադրությամբ բոլոր քաղաքացիները, անկախ բնակավայրից և ազգային պատկանելիությունից, ունեն կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակութալուսավորչական և բազմաթիվ այլ սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունք:

Վերոհիշյալ խնդիրների լուծումն օբյեկտիվորեն պահանջում է, որ սոցիալ-մշակութային միջոցառումների իրականացման և հիմնարկությունների պահպանման ծախսերն այսուհետև սահմանվեն՝ ելնելով բնակչության մեկ շնչին ընկնող ծախսերի գիտականորեն հիմնավորված նորմատիվներից՝ միաժամանակ հաշվի առնելով շուկայական հարաբերությունների ազդեցությունը սոցիալական ոլորտում: Հանրապետության առանձին ռեզիոնների ֆինանսական դրության որոշակի չափով համահարթեցումը ենթադրում է ըստ առանձին բնագավառների կիրառել բնակչության մեկ շնչին ընկնող սոցիալ-մշակութային միջոցառումների ծախսերի միջինացված նորմատիվների հաշվարկներ: Ընդ որում, որոշ ռեզիոնների համար, օբյեկտիվ գործոններով թելադրված, բացառված չեն բնակչության մեկ շնչին ընկնող վերը նշված ծախսերի նորմաները հանրապետական միջին նորմաներից շեղվելու հնարավոր դեպքեր: Բացի դրանից, ներկայումս անհրաժեշտություն է առաջացել նաև սոցիալ-մշակութային հիմնարկություններում, ինչպես, օրինակ՝ նախադպրոցական (մանկապարտեզ, մանկամտուր և այլն) մեկ երեխային, դպրոցում՝ մեկ աշակերտին կամ դասարանին, բուհում՝ մեկ ուսանողին ընկնող ֆինանսական ու բյուջետային ծախսերի նորմաների վերազնահատման ու վերանայման խնդրի լուծումը:

Հայաստանի Հանրապետության բյուջեի էության, բյուջետային համակարգի և գործընթացի հարցերը սերտորեն կապված են բյուջետային օրենսդրության, մաս-

նավորապես բյուջետային իրավունքի հետ:

Ի տարբերություն բյուջետային իրավունքի ֆինանսական իրավունքը արտահայտում է ոչ միայն պետության, այլև ձեռնարկությունների, կազմակերպությունների (սեփականության ձևերից կախված), վարկային հիմնարկությունների (բանկերի) և ապահովագրական մարմինների ֆինանսական, դրամարկղային, հաշվարկային ու վճարային հարաբերությունների հետ կապված իրավական նորմերը: Մինչդեռ բյուջետային իրավունք ասելով պետք է հասկանալ օրենսդրական փաստաթղթերով (օրենք, հրամանագիր) իշխանության օրենսդիր բարձրագույն մարմնի, սլյալ դեպքում՝ հանրապետության ամբողջությունը, որով որոշվում են բացառապես իրավասությունների բյուջետային համակարգի էության, նրա կազմի մեջ մտնող տարբեր տեսակի բյուջեների կազմման, քննարկման, հաստատման ու կատարման հարցերը:

ՀՀ իշխանության հանրապետական մարմնի և համայնքների ֆինանսաբյուջետային իրավունքներն ըստ էության կանխորոշվում են Սահմանադրությամբ: Սակայն Սահմանադրությունում այդ հարցերի մասին նշվում է ընդհանուր հիմունքներով: Հետևաբար հարկ է լինում ընդունել նաև լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին նոր օրենքը, որն ընդունվել է 1997թ., մշակված է շուկայական էկոնոմիկային անցնելու ներկա փուլի համար և բնութագրում է հանրապետության քաղաքական անկախության, տնտեսական ինքնուրույնության և ինքնաֆինանսավորումն ապահովելու գործընթացներում նրա պետբյուջեի նորովի ֆունկցիաների կատարման հարցերը: Նրանում հստակորեն արտացոլված են հանրապետության տնտեսական և քաղաքական նոր կարգավիճակի պայմաններում բյուջետային համակարգի էության, կառուցվածքի ու սկզբունքների (միասնության, ժողովրդավարության և հանրապետության բոլոր վարչատարածքային շրջանների էկոնոմիկայի և սոցիալական ոլորտների համակողմանի զարգացումն ապահովելու) մասին: Ըստ միասնության սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը միավորում է պետական բյուջեն և հանրապետության վարչատարածքային միավորումների տեղական բյուջեները: Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի կառուցվածքի միասնության սկզբունքը բխում է հանրապետությունում ստեղծվող նոր տնտեսական, քաղաքական կարգերի և էկոնոմիկայի համալիր զարգացման միասնությունից:

Ժողովրդավարության սկզբունքի իրացումը գործնականորեն իր լուծումն է ստանում պետական և տեղական բյուջեների կազմման, քննարկման ու հաստատման գործընթացներում, որոնց կարգավիճակը նույնպես հստակորեն ձևակերպված է հանրապետության բյուջետային համակարգի մասին նոր օրենքում: Այդ կարգավիճակի բովանդակությունն արտահայտվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի կազմի մեջ մտնող բոլոր բյուջեների նախագծերի կազմման, քննարկման ու հաստատման գործընթացներում նախատեսվում է ժողովրդավարության սկզբունքների իրական ապահովում: Այսպես՝ պետական բյուջեի կազմման, քննարկման և հաստատման աշխատանքների կարգը սահմանում ու տնօրինում են հանրապետության բարձրագույն գործադիր և օրենսդիր (նախարարների խորհուրդ, Ազգային ժողով) մարմինները: Պատգամավորների մարզային, քաղաքա-

յին և գյուղական մարմինները, ինչպես արդեն նշել ենք, ինքնուրույն կազմում և հաստատում են իրենց տարածքների տեղական բյուջեները: Այնուհետև, օրենքում նշվում է այն մասին, որ բյուջեների (պետական բյուջեի և տեղական բյուջեների) նախագծերը կազմվում են ֆինանսական պլանների և ծախսերի նախահաշիվների (բյուջետային հիմնարկների համար) հիման վրա և այդ աշխատանքներին մասնակից են դարձվում բազմաթիվ ձեռնարկություններ, կազմակերպություններ, հիմնարկություններ, նախարարություններ, գերատեսչություններ, ինչպես նաև համայնքների բաժիններ: Բացի դրանից, հանրապետության պետբյուջեի նախագիծը քննարկվում է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդում, այն նաև վերջնականորեն քննարկվում և հաստատվում է հանրապետության Ազգային ժողովի նստաշրջանում: Տեղական բյուջեների նախագծերը քննարկվում և հաստատվում են տեղական համայնքների նստաշրջաններում: Ընդ որում, նախքան նստաշրջաններում քննարկելը և հաստատելը բյուջեների նախագծերը մանրամասնորեն քննարկվում և հավանության են արժանանում հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմիններին կից մշտական գործող ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովների կողմից: Նստաշրջաններում պատգամավորներն իրենց կարծիքն են արտահայտում բյուջեների նախագծերով նախատեսված եկամուտների ու ծախսերի վերաբերյալ, կատարում են դիտողություններ, քննադատում են դրանց կազմման գործընթացում տեղ գտած թերությունները: Նստաշրջանի հաստատած բյուջեն հանրապետության նախագահի կողմից ստորագրվելուց հետո օրենք է, և նրա կատարումը՝ պարտադիր: Բյուջետային ժամանակաշրջանը հանրապետությունում սահմանվում է մեկ տարի՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ, այսինքն՝ բյուջետային տարին մեզ մոտ հանընկնում է օրացուցային տարվան:

Ժողովրդավարության սկզբունքի հետ սերտորեն կապված է հանրապետության վարչատարածքային բոլոր շրջանների էկոնոմիկայի և սոցիալական ոլորտների համակողմանի զարգացումն ապահովելու սկզբունքը: Յուրաքանչյուր վարչատարածքային տեղական մարմինն ունի սեփական բյուջե և օժտված է իր տարածաշրջանում տնտեսական ու սոցիալական բնագավառների զարգացման որոշակի իրավունքներով: Ինքնակառավարման խնդիրների լուծումն առաջադրում է բարձրացնել իշխանության տեղական մարմինների դերը ֆինանսաբյուջետային հարցերի լուծման բնագավառում: Այդ կապակցությամբ բյուջետային համակարգի մասին օրենքը նախադրյալներ է ստեղծում, և սահմանված է եկամուտներն ու ծախսերը հանրապետության բյուջետային համակարգի առանձին օղակների միջև բաշխելու այնպիսի կարգավիճակ, ըստ որի՝ հնարավոր է դառնում համայնքներում իրականացվող տնտեսական և սոցիալական ոլորտների զարգացման միջոցառումների ֆինանսավորման համար անհրաժեշտ եկամտային աղբյուրների ապահովումը: Նման կարգավիճակը չի բացառում նաև, որ վարչատարածքային տեղական միավորումները միաժամանակ իրենց մասնակցությունն ունենան ընդհանուր հանրապետական նշանակության տնտեսական և սոցիալական զարգացման միջոցառումների ֆինանսավորմանը:

Բոլոր վարչատարածքային շրջանների էկոնոմիկայի ու սոցիալական ոլորտների համակողմանի զարգացումն ապահովելու սկզբունքների հիման վրա կառուցված Հայաստանի Հանրապետության բյուջետային նոր համակարգը կոչված է լուծելու հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերով նախա-

տեսվող միջոցառումների ֆինանսավորումը, ընդհանուր հանրապետական նշանակություն ունեցող ծախսերի ու միջոցառումների ֆինանսավորմանը տեղերի մասնակցության ապահովումը և նրանց ֆինանսական փոխադարձ օգնությունը:

Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում հստակորեն սահմանազատված են պետական և տեղական բյուջեներին ամրացվող եկամուտների ու ծախսերի կոմկրետ տեսակները: Դա բացատրվում է նրանով, որ բյուջետային եկամտի միևնույն աղբյուրներից մասհանումները տարբեր չափերով ուղղվում են և պետական, և տեղական բյուջեների ծախսերի ֆինանսավորմանը: Միաժամանակ, միևնույն բնույթի ծախսերը (օրինակ՝ տնտեսության զարգացման, սոցիալ-մշակութային միջոցառումների, կառավարման ապարատի պահպանման և այլն) ֆինանսավորվում են տարբեր բյուջետային օղակներից, բայց, իհարկե, տարբեր տեսակարար կշիռներով: Նախատեսված են նաև եկամուտների ու ծախսերի տեսակներ, որոնք ամրացվում են միայն պետական կամ տեղական բյուջեներին: Նշված է այն մասին, որ բյուջեների եկամուտները զոյանում են հիմնականում սեփականության տարբեր ձևերին պատկանող և իրավաբանական անձ հանդիսացող բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների կողմից կատարվող հարկային և ոչ հարկային վճարումների և մասամբ՝ բնակչությունից գանձվող հարկերի, տուրքերի ու կամավոր մուծումների հաշվին:

Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում առանձնակի տեղ է հատկացված տեղական բյուջեների կարգավիճակի հարցերին: Նշված օրենքով զգալիորեն ընդլայնված են տեղական մարմինների բյուջետային իրավունքները՝ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հաշվին նոր ծախսեր կատարելու բնագավառում: Տեղական մարմինների բյուջետային իրավունքների կարևորագույն հարցերից է օրենքի այն դրույթը, ըստ որի՝ տեղական բյուջեների կատարման ժամանակ լրացուցիչ ստացված եկամուտները տեղական մարմինների կողմից հատկացվում են տնտեսական և սոցիալական միջոցառումների ֆինանսավորմանը: Օրենքի նշված դրույթը լիովին ընդգծված և ամրապնդված է, քանի որ այն մեծ կարևորություն է ձեռք բերում իշխանության տեղական մարմինների մախաձեռնության ծավալման գործում: Նշված օրենսդրությամբ յուրաքանչյուր տեղական մարմին հանդես է բերում շահագրգռվածություն եկամուտների նոր աղբյուրներ փնտրելու, դրանց պլանային գումարները գերակատարելու, բյուջեի ընդլայնելու և լրացուցիչ միջոցառումների համար ծախսերի հնարավոր ֆինանսավորում կատարելու բնագավառներում: Այդ կապակցությամբ կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև միջոցների օգտագործման վերաբերյալ օրենքում նախատեսված այն դրույթը, ըստ որի՝ տեղական բյուջեների ծախսերի խնայողության շնորհիվ դրանք մնում են տեղական մարմինների տրամադրության տակ և վերջիններիս հայեցողությամբ ծախսվում են լրացուցիչ միջոցառումների ֆինանսավորման համար:

Բյուջետային օրենսդրությամբ են որոշվում նաև բյուջետային պահեստային (ռեզերվային) ֆոնդերի ձևավորման և օգտագործման կարգավիճակի հարցերը: Այսպես՝ պետական բյուջեում նախատեսվում և հաստատվում է հանրապետության նախարարների խորհրդի պահեստային ֆոնդը, որը կոչված է տարվա ընթացքում՝ բյուջեի կատարման ժամանակ, օգտագործելու չնախատեսված անհետաձգելի մի շարք միջոցառումների ծախսերը ֆինանսավորելու համար: Այնուհետև, բացի եկամուտների ընդհանուր գումարից, պետական և տեղական բյուջեներում, ի հաշիվ տարվա

սկզբի բյուջետային չօգտագործված ազատ մնացորդների, կազմվում և հաստատվում են նաև դրամարկղային շրջանառու միջոցները: Վերջիններս յուրատեսակ ռեզերվ են բյուջեների ծախսերի անխափան ֆինանսավորումն ապահովելու համար:

Բյուջետային համակարգի մասին օրենքում շարադրված են նաև բյուջեների կատարման կարգավիճակի հարցերը: Ընդգծված է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դրամարկղային կատարման պատասխանատվությունը դրված է ՀՀ կենտրոնական գանձապետարանի վրա: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով պետական բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման նկատմամբ հսկողությունն ու պատասխանատվությունը դրված են հանրապետության հարկային պետական ծառայության և ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության մարմինների վրա: Հանրապետության պետբյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը առանձին կարգով քննարկվում և հաստատվում է Հայաստանի Ազգային ժողովի կողմից: Բյուջետային օրենսդրությամբ առանձնակի ուշադրություն է դարձվում բյուջետային կարգապահության ամրապնդման հարցերին, քանի որ բյուջեների եկամուտների և ծախսերի կատարումը տեղի է ունենում ոչ թե ինքնաբերաբար, այլ այդ գործընթացը կարգավորվում է որոշակի իրավական նորմերի միջոցով: Այսպես՝ բյուջեների հասանելիք գումարների ժամանակին մոբիլիզացումը և գանձման կազմակերպումը կատարվում են պարտադիր վճարումների ձևով: Այդ գումարների ոչ ժամանակին և ոչ լրիվ վճարումը կամ թաքցումը հանգեցնում են պետական իրավական սանկցիաների կիրառման (տույժերի, տուգանքների կիրառում, դատական պատասխանատվության ենթարկում և այլն): Բյուջեներից պետական միջոցները բաց են թողնվում ոչ թե ըստ ծախսերի հաստատված պլանների, այլ այդ պլանների փաստացի կատարման աստիճանի: Բյուջեների նախագծերի հաստատման ու կատարման հաշվետվությունների մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները (որոշումները) հրապարակվում են մամուլում:

Սրանք են այն հիմնադրույթները, որոնք շարադրված են շուկայական էկոնոմիկային անցնելու ներկա փուլի համար Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում: Ելնելով յուրաքանչյուր պլանային տարվա տնտեսական ու սոցիալական զարգացման առանձնահատկություններից՝ Հայաստանի կառավարությունը, այդ օրենքին համապատասխան, որոշում է կայացնում տվյալ պլանային տարվա հանրապետության պետբյուջեի կազմման կարգի, ժամկետների և յուրահատկությունների մասին:

Պիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը ի՞նչ օղակներից է կազմված, որո՞նք են դրանց դրսևորման ոլորտները:
2. Ի՞նչ է նշանակում բյուջետային կարգավորում և ինչո՞վ է պայմանավորված:
3. Ինչպե՞ս է իրականացվում բյուջետային օղակների հաշվեկշռումը, ի՞նչ է դեֆիցիտը և ինչպե՞ս է ծածկվում, ի՞նչ է նշանակում համահարթեցում:
4. Որո՞նք են բյուջետային պլանավորման խնդիրները և գործընթացի կազմակերպման փուլերը:
5. Ի՞նչ է նշանակում ՀՀ պետական բյուջեի մասին օրենք: Ո՞վ է ընդունում, և ի՞նչ բովան-

դակություն ունի այն:

ԳԼՈՒԽ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

7.1. ՀԱՐԿԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐ

Հարկերը և դրանց տեսակները պատմականորեն առաջացել են դասակարգերի և պետության ծագման հետ միաժամանակ: Պատմական վաղ շրջաններում հարկերը գանձվել են գլխավորապես բնամթերային (պարեն, հանդերձանք բանակի և նավատորմի համար և այլն) ձևով: Հետագայում՝ ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետ, ծավալվել և տիրապետող է դարձել հարկերի դրամական ձևը: Ջարգացած կապիտալիստական երկրներում բյուջեի եկամուտների 60–70%–ը ձևավորվում է հարկերի և տուրքերի միջոցով:

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Բոլոր ժամանակներում պետությունների տնտեսական հիմքը հանդիսացել են հարկերը: Վերջիններս յուրաքանչյուր պետության եկամուտների գլխավոր աղբյուրներից են, որոնք ուղղվում են նրա արտաքին և ներքին ֆունկցիաների (բանակ, պետական ապարատ և այլ ինստիտուտներ, ազգային ծրագրեր) իրականացման ծախսերի ֆինանսավորմանը:

Հարկային համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում նաև տուրքը և դրա տեսակները: Տուրքը հիմնականում իրավաբանական և պետական այլ ծառայությունների դիմաց քաղաքացիներից ու կազմակերպություններից գանձվող վճար է: Տուրքերը գանձվում են դատարան տրված հայցադիմումների, նոտարական գործողությունների, անուսնության, անուսնալուծության, անվան, ազգանվան և հայրանվան փոփոխությունների, անձնագրերի տրման ու գրանցման, տուրքային գանձման գանազան փաստաթղթեր տալու համար: Առավել տարածված են դրոշմատուրքերը, փոստային, դատական և ժառանգման տուրքերը: Պետական սահմանի վրայով անցկացվող (ներմուծվող, արտահանվող) ապրանքների համար գանձվում են մաքսատուրքեր (մաքսեր):

Ըստ բովանդակության ու գանձման եղանակի՝ հարկերը լինում են ուղղակի և անուղղակի:

Ուղղակի հարկերով հարկվում են գույքը (ուճեցվածքը) և եկամուտները: Դրանցից կարելի է նշել, օրինակ, գույքահարկը, հողի հարկը, շահութահարկը, եկամտա-

հարկը և այլն: Անուղղակի հարկերից են ակցիզային հարկը, ավելացված արժեքից հարկը և այլն, որոնք գանձվում են լայն սպառման ապրանքների վաճառքից, աշխատանքներից ու ծառայություններից՝ ապրանքների գների և ծառայությունների սակագների բարձրացման միջոցով:

Հարկին և հարկերի համակարգին բնորոշ են մի շարք հատկանիշներ, որոնք դրանց տարբերում են պետության մյուս՝ ոչ հարկային եկամուտների գանձման մեթոդներից: Հարկին բնորոշ են պարտադիր, անհատույց, նախապես սահմանված որոշակի չափերով (դրույքներով) ու ժամկետներով եկամուտներից պետությանը վճարումներ կատարելու հատկանիշներ: Ելնելով այդ հատկանիշներից՝ առաջանում է հարկային համակարգի մեխանիզմների մշակման ու գործնականում կիրառելու անհրաժեշտություն: Հարկային համակարգի մեխանիզմների հիմքում ընկած են «հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող», «հարկի օբյեկտ կամ աղբյուր», «հարկային միավոր» և «դրույքաչափ», «հարկի վճարման ժամկետ» և «հարկային արտոնություններ» հասկացությունները: Այժմ համառոտակի բնութագրենք այդ հասկացություններից յուրաքանչյուրի էությունը:

Հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող ասելով հասկանում ենք իրավաբանական և ֆիզիկական այն անձանց (ծեռնարկություններ, կազմակերպություններ, քաղաքացիներ), որոնք օրենսդրությամբ պարտավոր են պետությանը վճարել սահմանված հարկերը:

Հարկի օբյեկտ և աղբյուր են գույքը (ուճեցվածքը), եկամուտը, աշխատավարձը, շահույթը, ապրանքները, աշխատանքները, ծառայությունները, բնական ռեսուրսները և այլ օբյեկտները:

Հարկային միավոր ասելով հասկանում ենք հարկման ենթակա օբյեկտի այն միավորը, որի նկատմամբ սահմանվում են հարկի դրույքաչափերը (օրինակ՝ շահութահարկի գծով՝ հարկվող շահույթի գումարը, քաղաքացիներից գանձվող եկամտահարկի՝ հարկվող անսակառ աշխատավարձի կամ տարեկան եկամտի չափը, հողի հարկի՝ հետտարով, մետրով հողատարածության չափը և այլն): Հարկի դրույքաչափը սահմանվում է հարկային միավորի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ գումարներով: Հարկի դրույքները լինում են պրոգրեսիվ, ռեգրեսիվ, համամասնական և հաստատուն: Պրոգրեսիվ դրույքները բարձրանում, իսկ ռեգրեսիվները իջնում են եկամտի կամ գույքի (հարկման օբյեկտի) արժեքի ավելացմանը համապատասխան: Հարկի համամասնական դրույքները սահմանվում են միասնական տոկոսաչափով, իսկ հաստատուն դրույքները՝ բացարձակ գումարով՝ անկախ եկամտի չափից: Տուրքերը գանձվում են կայուն գումարով կամ հայցագնի բազայի (բազայի) նկատմամբ տոկոսներով և բազմապատիկով:

Հարկի վճարման ժամկետները (ամենօրյա, հնգօրյա, տասնօրյա, ամենամսյա, եռամսյա, տարեկան) սահմանվում են ելնելով վճարման ենթակա հարկի գումարների չափերից, դրանց վճարման հաճախականությունից և պետական ծախսերի ֆինանսավորման անընդհատությունն ապահովելու պահանջից: Հարկային արտոնություններ ասելով հասկանում ենք հարկի սուբյեկտներին կամ հարկ վճարողներին հարկումից մասնակի կամ լրիվ ազատումը: Օրենսդրությամբ սահմանված են հարկային հետևյալ արտոնությունները՝ հարկվող օբյեկտի նվազեցում, հարկի նվազեցում, հարկի հաշվարկման ու վճարման ժամկետային արտոնության սահմանում, հարկի

դրույքաչափի նվազեցում և այլն:

Բյուջեի եկամուտների ձևավորման ժամանակ պետության ֆինանսական հարաբերությունները ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների և բնակչության հետ ներկայումս կառուցված են հիմնականում հարկային սկզբունքների վրա: Դրա հետ կապված՝ հարկը և հարկային համակարգը հանդես են գալիս որպես ֆինանսական համակարգի առանձին ու ինքնուրույն օղակ: Մեր հանրապետությունում 1992թ. սկսած ձևավորվել է հարկային նոր համակարգ, և իրականացվում է հարկային ինքնուրույն քաղաքականություն: Հանրապետությունում հարկային քաղաքականության իրականացման առանձնահատկությունների, հարկային համակարգի կառուցվածքային սկզբունքների, վճարվող հարկերի տեսակների, սահմանվող արտոնությունների ու հարկման մյուս պահանջների հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի» մասին օրենքով, որը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Ըստ այդ օրենքի՝ հանրապետությունում սահմանվել են հետևյալ հարկերը և տուրքերը. շահութահարկ՝ իրավաբանական անձանց (ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների) շահույթից, եկամտահարկ՝ ֆիզիկական անձանց (քաղաքացիների) եկամտից, ակցիզային հարկ՝ առանձին ապրանքների իրացումից, ավելացված արժեքից հարկ՝ ապրանքների և ծառայությունների իրացման շրջանառությունից, հողի հարկ՝ սեփականատիրոջ հողի համար, գույքահարկ՝ գույքի որոշակի տեսակների համար, մաքսեր(մաքսատուրքեր)՝ արտահանվող և ներմուծվող ապրանքների համար, տեղական հարկեր և տուրքեր, այլ հարկեր և տուրքեր:

Նշված հարկերը և տուրքերը վճարվում են պետական բյուջե, տեղական բյուջեներ, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ արտաբյուջետային ֆոնդեր: Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը դրված է հարկ վճարողների վրա: Իսկ այդ պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային պետական ծառայության մարմինները: Այսպես՝ սահմանված ժամկետներում նախատեսված հարկերը չմուծելու, ինչպես նաև հարկվող օբյեկտը թաքցնելու կամ հարկման ենթակա եկամուտները պակաս ցույց տալու դեպքերում սահմանված են տույժեր, տուգանքներ և այլ պատժամիջոցներ, որոնք կիրառում են հարկային պետական տեսչության մարմինները հարկ վճարողների նկատմամբ:

Հարկային ճիշտ քաղաքականության վարումը, հարկերի ու հարկային համակարգի ճկուն մեխանիզմների մշակումը և կիրառումն ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու քաղաքական նշանակություն: Հարկերը և հարկային համակարգը կոչված են մի կողմից ապահովելու բյուջեի եկամուտների ժամանակին և լրիվ չափով համալրումը կայուն ֆինանսական միջոցներով, իսկ մյուս կողմից՝ մեծապես խթանելու պետության տնտեսական ու սոցիալական առաջընթացը: Երբ ձևավորվում է հարկերի ոչ օպտիմալ մակարդակ, այսինքն՝ դրանց չափերի տնտեսագիտորեն չհիմնավորված մեծացում, ապա դա բացասաբար է անդրադառնում ինչպես արտադրողների շահագրգռվածության բարձրացման ու ձեռնարկատիրական նախաձեռնության զարգացման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի վրա:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը սերտորեն առնչվում է հարկային քաղաքականության կատարելագործման հետ: Տնտեսությունը բարդ և առավել շարժուն օրգանիզմ է: Դա օբյեկտիվորեն պահանջում է տնտեսության զարգացման կոնկրետ ժամանակաշրջանի առանձնահատկություններից բխող հարկային յուրովի քաղաքականության մշակում և անընդհատ կատարելագործում: Էկոնոմիկայի շուկայացման առանձնահատկություններով պայմանավորված՝ հարկերի գանձման մեխանիզմներում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխությունները և հարկային ճկուն համակարգի ստեղծումը դառնում են անխուսափելի: Դա նշանակում է, որ ժամանակի ընթացքում հնարավոր է վերացվեն որոշ հարկեր, կամ մտցվեն նոր հարկերի տեսակներ, փոփոխություններ կատարվեն հարկերի դրույքաչափերի, հարկային արտոնությունների սահմանման բնագավառներում և այլն: Այդ բոլոր հարցերի գործնական լուծման իրավասությունը պատկանում է իշխանության բարձրագույն գործադիր և, հատկապես, օրենսդիր մարմիններին: Հարկային քաղաքականության կատարելագործման գործընթացը կրում է մշտական և շարունակական բնույթ:

Ցանկացած երկրում, հատկապես շուկայական տնտեսության ուղին նոր թևակոխած երկրներում, տնտեսության արդյունավետ կառավարման հիմնական մեխանիզմը, մյուս հավասար պայմաններում, կարգավորում է պետական բյուջեն իր եկամուտների ու ծախսերի մակարդակով և դրանց հարաբերակցությամբ: Դա առավել կարևոր է Հայաստանի համար, քանի որ անկախացումից հետո երկրի տնտեսությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հայտնվեց տնտեսական ու սոցիալական աղետալի ճգնաժամային վիճակում, որի հաղթահարման գործում բացառիկ դերը պատկանում է անհրաժեշտ քանակությամբ հավաքագրված բյուջեի եկամուտներին ու կատարված ծախսերին և դրանց միջև առաջացած հարաբերակցության փոփոխություններին:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների խոշորացված խմբերով կազմի և կառուցվածքի փոփոխությունները բնութագրվում են ստորև բերված թիվ 7.1. աղյուսակի տվյալներով.

Աղյուսակ 7.1.

ՀՀ պետական բյուջեի ամբողջ և հարկային եկամուտների կառուցվածքի փոփոխությունը

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Ը ն դ ա մ ե ն ը եկամուտներ – րանտներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Ը ն դ ա մ ե ն ը եկամուտներ, այդ թվում՝	54,7	79,5	90,3	90,3	90,5	92,6	95,5	95,2	92,5	82,7	95,5	97,3
Հ ա ռ կ ա յ ի ն եկամուտներ	44,1	60,1	70,6	82,6	71,4	78,3	83,5	80,0	81,2	72,7	82,4	83,5
Գրանտներ	45,3	20,5	9,7	9,7	9,5	7,4	4,5	4,8	7,5	17,3	4,5	2,7

Տվյալներից երևում է, որ 1999թ. պետական բյուջեի բոլոր եկամուտները ամբողջ եկամուտների կառուցվածքում կազմել են 92.6%, իսկ 2005թ.՝ 97,3%, ապա հարկային եկամուտները համապատասխանաբար՝ 78.3% և 83,5%:

Ըստ հարկատեսակների գումարային ու կառուցվածքային փոփոխությունները բերված են թիվ 7.2. աղյուսակում:

Աղյուսակ 7.2

ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմը 1996–2005 թթ. (մլն դրամ)

	1996	1997	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Ը ն դ ա մ ե ն ը եկամուտներ – ղանտներ, այդ թվում՝	99581,9	132290,6	174399,2	172132,8	193577,9	228317,9	292035,3	302249,1	364433,7
Հ ա ր կ ա յ ի ն եկամուտներ	70335,0	107691,2	143316,0	143661,5	154872,3	185437,4	212232,8	50119,1	304257,1
Ուղղակի հարկեր	25556,0	31281,0	39386,8	33766,5	27768,1	29988,0	34500,4	52355,9	73177,1
Անուղղակի հարկեր	32843,0	55718,0	89947,2	92917,5	110558,2	130340,0	146873,1	158559,9	185420,7
Մ ք ս ա յ ի ն տուրք	5876,0	10597,6	7718,2	8683,3	9793,8	9691,8	10723,9	12483,2	16489,5
Ոչ հարկային եկամուտներ	19575,0	10512,8	14220,1	11064,7	13873,7	10915,2	10864,6	12394,2	20710,2
Գրանտներ	9671,0	14086,6	7289,8	8503,1	9309,0	17019,0	50479,6	13717,5	9875,4

Եթե 1999 թ. նկատմամբ բոլոր եկամուտները 2005թ. հանրապետությունում աճել են 2.1 անգամ, ուղղակի հարկերը՝ 1.8 անգամ, ապա անուղղակի հարկերը ավելացել են 2.1 անգամ: Անուղղակի հարկերի նման աճը գերազանցում է ոչ միայն ընդհանուր մուտքերը, այլև ուղղակի հարկերի դինամիկան, որը բնակչության սոցիալական շերտավորման, նրա գնողունակության մակարդակի խիստ կրճատման պատճառ է հանդիսացել:

Շահութահարկ: Շահութահարկը ուղղակի հարկերի համակարգում կարևոր մշանակություն ունի: Դա հարկ վճարողների կողմից սահմանված կարգով և չափով հարկվող շահույթից պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ է հաշվետու տարում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ա-

վելացմանը: Սեփական կապիտալ է ակտիվների և պարտավորությունների տարբերությունը: Պարտավորություն է հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Եկամուտ չեն մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, համատեղ գործունեության նպատակով միավորող միջոցները, արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարները, ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը միաժամանակ նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով:

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20% դրույքաչափով:

Այսպիսով, «Շահութահարկի մասին» օրենքով հատուկ սահմանվել է հարկի գանձման համար պարտադիր սահմանադրական պահանջ, որով առաջին անգամ յուրաքանչյուր հարկատուի առջև օրենքով պարտավորություն դրվեց, որ հարկատուները համապատասխան ժամկետում որպես հարկ վճարողներ պարտավոր են հաշվառման կանգնել հարկային մարմիններում: Բացի դրանից, տեղեկություն է տրվում հարկ վճարողների, հարկվող օբյեկտի, հարկվող շահույթի հաշվարկման մեխանիզմի, շահութահարկի դրույքաչափերի, սահմանված արտոնությունների, հարկի վճարման ժամկետների, կանխավճարների գանձման կարգի մասին և այլն:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում շահութահարկը ընդհանուր հարկային եկամուտների մեջ 2004թ. կազմել է 10%-ից մի փոքր ավել (9.4% – 2002թ., 8.3% – 2003 թ. և միայն 15.3% – 2005թ.):

Եկամտահարկ: Եկամտահարկը հարկային համակարգում իր նշանակությամբ, արտադրության, աշխատողների գործունեության խթանման ու նրանց իրական եկամուտների ավելացման տեսակետից կարևոր դեր ունի: Դա նույնպես հարկ վճարողների կողմից սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Որոշ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա և այլն) բյուջեի ամենախոշոր եկամտային աղբյուրը եկամտահարկի գծով մուտքերն են: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ եկամտահարկը 2005թ. կազմել են 26,6 մլրդ դրամ: Ստացված եկամտահարկի գումարի ավելի քան 88.7%–ը կազմել են աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 2,4%–ը ձեռնարկատիրական գործունեությունից և 8.9%–ը այլ եկամուտներից կատարվող գանձումները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած վերջին տարիներին ամբողջ հարկային համակարգի, այդ թվում նաև եկամտահարկի գծով ընդունվել է հարկային

բարեփոխումների փաթեթ, այնուամենայնիվ, դիտարկվող ժամանակաշրջանում ընդհանուր ուղղակի հարկային եկամուտների, այդ թվում նաև եկամտահարկի գծով փաստացի մուտքերը նախորդ տարիների նկատմամբ ունեցել են անկման միտում:

Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է: Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Քաղաքացիներից գանձվող եկամտահարկը պորոգեսիվ հարկ է, որի հաշվարկումը կատարվում է հարկային դրույքաչափերի հստակ սանդղակով, այն գործողության մեջ է դրվել 2001թ. հունվարի 1–ից:

Եկամտահարկի դրույքաչափերը

Ամսական հարկվող եկամտի չափը*	Հարկի ռումարը
Մինչ– 80 000 դրամ	Հարկվող եկամտի 10%–ը
80 000 դրամից ավելի	8000 դրամին ռումարած 80 000 դրամը՝ երազանցող ռումարի 20%–ը

Հարկային նոր դրույքաչափերի ընդունումը եկամտահարկի գանձման գծով չի կարելի առաջադիմական համարել, քանի որ գնալով մեծանում են աղքատությունը, արտագաղթը, հասարակության սոցիալական շերտավորումը, երբ 2003–2006 թթ. բյուջեների հիմքում դրված է աղքատության կասեցման խնդիրը, և կրճատվում են ուղղակի հարկերի գծով եկամուտները:

ԱԱՀ: Ավելացված արժեքից հարկը անուղղակի հարկ է, որը գանձվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ԱԱՀ վճարողներն են ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից օրենքով և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվում է ԱԱՀ հանրապետության տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց

* Հարկվող եկամուտը որոշելիս հանվում է նա– 20 000 դրամ չհարկվող նվազա-ումը (տես «Եկամտահարկի մասին օրենք», լուխ 4, հոդված 14):

կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է օրենքով սահմանված չափերը:

ԱԱՀ վճարող համարվում են այն անձինք, որոնք՝

- գերազանցել են «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան սահմանային չափերը,
- «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ չեն համարվում կամ դադարում են համարվել պարզեցված հարկ վճարողներ,
- միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով և հաստատագրված վճարով հարկվող գործունեություն (ԱԱՀ-ով հարկվող գործունեության մասով):

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող բոլոր գործարքների ամբողջ արժեքը (չրջանառությունը):

ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով՝

1. ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:
2. ԱԱՀ վճարող անձանց կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերանշակման կամ նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերանշակման կամ նորոգման արժեքը, որը, որպես հատուցում, պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց.
3. սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելը.
4. հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում՝ միջնորդավճարը՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ ուրիշ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ.
5. փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար՝ օրենքով սահմանված կարգով հիմք ընդունելով այդ ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման պահին դրանց կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի.
6. ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկի գումարը:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների

հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույքաչափը) ԱԱՀ–ի գումարը որոշվում է 16.67% հաշվարկային դրույքաչափով:

ԱԱՀ–ի գրոյական դրույքաչափով հարկումը գործարքների իրացման շրջանառության (հարկվող շրջանառություն) նկատմամբ ԱԱՀ–ի գրոյական դրույքաչափի կիրառումն է: Առանձին դեպքերում, հատկապես արտահանվող ապրանքների համար, կիրառվում է ԱԱՀ–ի գրոյական դրույքաչափը:

Ջրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ–ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Ալցիզային հարկ: Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում նշանակալի մուտքեր ապահովող երկրորդ հարկատեսակը ալցիզային հարկն է, որը 2005 թ. ապահովել է հարկային եկամուտների 16.1%–ը:

Ալցիզային հարկը անուղղակի հարկ է: Այն վճարում են ենթակալցիզային ապրանքներ (գարեջուր, խաղողի և այլ գինիներ, նավթամթերքներ և այլն) ներմուծող կամ արտադրող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Հարկման օբյեկտն են ենթակալցիզային ապրանքների ներմուծումը ՀՀ և ՀՀ տարածքում արտադրողների կողմից դրանց օտարումը: Հարկման բազան ենթակալցիզային ապրանքների քանակն է (ծավալը)՝ արտահայտված չափման բնաիրային միավորներով, որի նկատմամբ դրույքաչափերով հաշվարկվում է հարկի գումարը: Օրինակ՝ գարեջրի մեկ լիտրի համար՝ 70 դրամ, հուն նավթի և նավթամթերքների մեկ տոննայի համար՝ 27 000 դրամ:

ՀՀ կառավարությունը կարող է սահմանել որոշ ենթակալցիզային ապրանքների դրոշմավորման կարգ: Նշենք նաև, որ օրենքով կարող են սահմանվել ալցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

ՀՀ ներմուծվող ենթակալցիզային ապրանքների համար հարկ վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում. վճարողները հարկային մարմիններին հաշվարկ չեն ներկայացնում, իսկ արտադրվող ենթակալցիզային ապրանքների համար. յուրաքանչյուր ամիս՝ մինչև դրան հաջորդող ամսվա 15–ը, համապատասխան հարկային տեսչություն ներկայացնում են հաշվարկ:

Ուղղակի հարկերից են **գույքահարկը** և **հողի հարկը**, որոնք բնույթով ստատիկ հարկեր են և օրենքով ամրագրված են տեղական բյուջեների հարկային եկամուտների:

Գույքահարկ վճարողներ են ՀՀ–ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ–ից դուրս ստեղծված կազմակերպությունները, հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք՝ քաղաքացիությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ ԿԲ և ՀՀ ՏԻՄ–երի և հիմնարկների:

Հարկվող օբյեկտ են շենքերը և շինությունները, փոխադրամիջոցները: Հարկման բազան հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունն է կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է հար-

կի գումարը: Մասնավորապես շինությունների համար հարկման բազա է գնահատված կադաստրային արժեքը դրամական արտահայտությամբ, փոխադրամիջոցների համար՝ քաշող շարժիչի հզորությունը (ծիաուժ կամ կիլովատ):

Գույքահարկի հաշվարկման համար հարկման բազայի նկատմամբ սահմանված են հետևյալ դրույքաչափերը.

- Շինությունների գծով (բացառությամբ հասարակական և արտադրական նշանակության շենքերի, որոնց համար նախատեսված է հարկման բազայի նկատմամբ միասնական 0.3% տարեկան դրույքաչափ),

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
Մինչ– 3 մլն դրամը ներառյալ	Հարկման բազայի 0%–ը
3 մլն դրամից մինչ– 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ ռումարած հարկման բազայի 3 մլն դրամը՝ երազանցող ռումարի 0.1%–ը
10 մլն դրամից մինչ– 20 մլն դրամը ներառյալ	7100 դրամ ռումարած հարկման բազայի 10 մլն դրամը՝ երազանցող ռումարի 0.2%–ը
20 մլն դրամից մինչ– 30 մլն դրամը ներառյալ	27100 դրամ ռումարած հարկման բազայի 20 մլն դրամը՝ երազանցող ռումարի 0.4%–ը
30 մլն դրամից մինչ– 40 մլն դրամը ներառյալ	67100 դրամ ռումարած հարկման բազայի 30 մլն դրամը՝ երազանցող ռումարի 0.6%–ը
40 մլն դրամից ավելի	127100 դրամ ռումարած հարկման բազայի 40 մլն դրամը՝ երազանցող ռումարի 1%–ը

- Ավտոտնակների համար՝ հարկման բազայի 0.2%–ը,
- Փոխադրամիջոցների գծով՝
 1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով.
 - մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - 1–ից մինչև 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
 - 121–ից մինչև 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ,
 - ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ,
 - 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր մեկ ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ.
 - 2. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - 1–ից մինչև 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
 - 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:
 - 3. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

4. Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

5. Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100%–ով:

Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է 10%–ի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50%–ը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

6. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20–րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

7. Փոխադրամիջոցների հարկման բազան կիլովատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

Կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջանը եռամսյակն է, ֆիզիկական անձանց համար՝ օրացուցային տարին:

Հողի հարկ վճարողներն են հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները: Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտը հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտն է, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատման արժեքը:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար դրույքաչափը սահմանվում է հարկվող օբյեկտի 15%–ի չափով, ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար բնակավայրի ներսում՝ 1%, բնակավայրից դուրս՝ 0.5% (տես համապատասխան օրենքի 5–րդ հոդվածը):

Ձեռնարկությունները հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի մեկը ներկայացնում են հաշվարկներ հարկային մարմիններին, իսկ քաղաքացիները և գյուղացիական տնտեսությունները հարկը հաշվարկում են ինքնուրույն՝ հիմք ընդունելով հարկային մարմինների կողմից մինչև սեպտեմբերի մեկը իրենց հանձնված վճարման ծանուցագրերը: Հաշվարկված հարկի գումարները բյուջե են վճարվում մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15–ը և հաջորդ տարվա ապրիլի 15–ը, իսկ ձեռնարկությունները՝ եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաշվետու եռամսյակի 25–ը:

Մաքսատուրք: Մաքսատուրքերը ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

2005 թ. ներմուծվող ապրանքների արժեքներից պետական բյուջե մաքսատուրք է գանձվել 16.5 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր հարկային եկամուտների 5.4%–ը:

Տարբերվում են մաքսատուրքի հետևյալ տեսակները.

1. Մաքսատուրքեր ըստ գործառնության բնույթի, որի մեջ ներառվում են.

- արտահանումը. տուրքերը վճարվում են ՀՀ մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար,
- ներմուծումը. տուրքերը վճարվում են ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար,
- սեզոնային գործարքներ. տուրքերը վճարվում են տարվա որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ ՀՀ մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար:

2. Մաքսատուրքեր ըստ հաշվարկման մեթոդների, որի մեջ մտնում են.

- արժեքայինը (ադվալորային). հաշվարկվում են տոկոսներով՝ հարկման ենթակա ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ,
- յուրահատուկը (հաստատագրված). հաշվարկվում են կայուն դրույքաչափերով՝ հարկման ենթակա ապրանքների չափման միավորի նկատմամբ,
- խառը. գուգակցվում են արժեքային և յուրահատուկ մաքսատուրքերը:

ՀՀ տնտեսության շահերը պաշտպանելու և տնտեսական գործունեությունը խրախուսելու նկատառումից ելնելով՝ կարող են սահմանվել նպատակային մաքսատուրքեր, որոնք լինում են.

- հակազդման. կիրառվում են ի պատասխան ՀՀ-ի հանդեպ առանձին անձանց, պետությունների կամ նրանց միությունների խտրական գործողությունների,
- խրախուսական. կիրառվում են առանձին երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի նվազեցնելու միջոցով դրանց ծավալների աճը խթանելու նպատակով:

Մաքսատուրքերի դրույքաչափերը սահմանվում են 10%, կարող են կիրառվել նաև գրոյական դրույքաչափեր:

Արտահանման դեպքում բոլոր ապրանքատեսակների նկատմամբ կիրառվում է մաքսատուրքի միայն գրոյական դրույքաչափ:

Ներմուծման դեպքում, ելնելով ապրանքների բնույթից, կիրառվում է 0 կամ 10% դրույքաչափով մաքսատուրք: Վերջիններս հիմնականում սահմանված են սննդամթերքի և Հայաստանի Հանրապետության տարածքում համարժեք արտադրություն ունեցող ապրանքատեսակների համար:

Հաստատագրված վճարներ: Հաստատագրված վճարը պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ին և շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող պարտադիր և անհատույց վճար է: Վճարողներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Հարկվող օբյեկտ են գործունեության օրենքով սահմանված տեսակները: Հարկման բազան այդ գործունեության տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների արտադրյալն է դրամական արտահայտությամբ: Հարկատուն վճարը հաշվարկում է ինքնուրույն և վճարում մինչև հաջորդող ամսվա 15-ը:

2005 թ. ընթացքում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 13.0 մլրդ դրամ:

Բնօգտագործման և բնապահպանական վճարներ: Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարների օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց օրենքով պետական բյուջե վճարվող վճարն է:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողները ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

Վճարողները ֆիզիկական և իրավաբանական անձինք են: Բնապահպանական վճարի տեսակներն են՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար,
- արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու համար,
- շրջակա միջավայրին վնաս պատճառելու համար:

Բնօգտագործման վճարի տեսակներն են՝

- ջրօգտագործման համար,
- պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար,
- կենսապաշարների օգտագործման համար:

Բնապահպանական վճարների դրույթաչափերը սահմանվում են օրենքով, իսկ բնօգտագործմանը՝ կառավարության կողմից:

2005 թ. բնապահպանական և բնօգտագործման դիմաց կատարված վճարումներից պետական բյուջե է մուտքագրվել 4.8 մլրդ դրամ կամ նախատեսվածից 20.5%–ով պակաս: Նշված մուտքերից, մասնավորապես, 1 մլրդ դրամ գումարը գանձվել է մաքսային մարմինների կողմից: Նախորդ տարվա համեմատ՝ այս եկամուտների անկումը հիմնականում բացատրվում է 2000 թ. բենզինի ներմուծման համար գանձվող բնապահպանական վճարի ակցիզային հարկով (հաստատագրված վճարով) փոխարինմամբ:

7.2. ԲՅՈՒՋԵԻ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԸ

Ոչ հարկային եկամուտներ: Պետական բյուջե հավաքագրվող ոչ հարկային եկամուտներն են.

- ա) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը,
- բ) պետական մարմինների, դրանց ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները,
- այդ թվում՝
 - պետական ձեռնարկությունների ու գույքի վարձակալության և օգտագործման վարձավճարները.
 - պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարները.
- գ) դիվիդենտները և շահաբաժինները, այդ թվում՝

- պետությանը պատկանող արժեթղթերի շրջանառությունից ստացվող շահաբաժինները.
- բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում բյուջեների ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված շահաբաժինները և դիվիդենդները.
- բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդները.
- դ) պետության տված վարկերի օգտագործման դիմաց ստացվող վճարները (տոկոսները), այդ թվում՝
 - ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները.
 - ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները.
 - տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները.
- ե) բռնագրավված, տիրազուրկ, նվիրատվության կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը,
- զ) իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից պատժամիջոցներից մուտքերը,
- է) օրենքով և իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները,
- ը) նախընտրական հիմնադրամի միջոցներից մուտքերը,
- թ) չպարզված գումարները:

Ոչ հարկային եկամուտները 2005թ. կազմել են 20.7 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 6.8 %-ը: Էականորեն պակասել է 33 կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը: Այն 1999թ. 13.9 մլրդ դրամից 2004թ. իջել է 2.1 մլրդ դրամի կամ կրճատվել է 6.6 անգամ:

2005թ. ոչ հարկային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմել նաև դիվիդենդները և շահաբաժինները՝ 1.2 մլրդ դրամ, բռնագրավված, տիրազուրկ, նվիրատվության կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը՝ 1.4 մլրդ դրամ, իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 1.2 մլրդ դրամ և պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները՝ 3.0 մլրդ դրամ:

Ոչ հարկային եկամուտներն ապահովել են 2005թ. ամբողջ բյուջետային եկամուտների 5.7%-ը նախորդ տարվա 4.1%-ի դիմաց: Ոչ հարկային եկամուտների գծով 2005 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 12.4 մլրդ դրամ: Վերջինս հիմնականում պայմանավորված է 33 կենտրոնական բանկի շահույթից լրացուցիչ մուտքով, որը տարեկան ծրագրով նախատեսված 3.1 մլրդ դրամի փոխարեն կազմել է 7.3 մլրդ դրամ: Կենտրոնական բանկի կողմից կատարված լրացուցիչ մասհանումը, պետական բյուջեի մասին օրենքի համաձայն և 33 կառավարության որոշմամբ, ուղղվել է նախորդ տարիների պարտքերի մարմանը, ընթացիկ տարվա նպաստների ֆինանսավորմանը և պահուստային ֆոնդի համալրմանը: Բացի այդ, փաստացի ցուցանիշում ներառված են նաև 33 պետական եկամուտների նախարարության և մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդերի միջոցները շուրջ 2 մլրդ դրամի չափով: Վերոհիշյալ գումարները հաշվի

չառած՝ ոչ հարկային եկամուտների մակարդակը 9.9%–ով զիջում է ծրագրային ցուցանիշը: Վերջինիս հիմնական պատճառ է հանդիսացել դիվիդենդների և շահաբաժինների թերակատարումը շուրջ 65%–ով: Բացի այդ, Հայաստանի նկատմամբ Վրաստանի ունեցած պետական պարտքի սպասարկման հետաձգման հետ կապված 2001 թվականին վճարվել է նախատեսված գումարի միայն 52.6%–ը: Թերակատարման հաջորդ հիմնական պատճառը բռնագրավված, տիրագուրկ, նվիրատվության կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերի անբավարար մակարդակն էր, որոնք 62.7%–ով զիջել են ծրագրով նախատեսված ցուցանիշը:

Հաշվետու տարում պետությանը պատկանող անշարժ գույքի վարձակալության ոլորտը կանոնակարգելու և միասնական քաղաքականություն վարելու նպատակով ձեռնարկված միջոցառումները նպաստեցին պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչի շնորհիվ արձանագրվեց բյուջետային եկամուտների զգալի աճ: Կառավարության որոշմամբ՝ պետական հիմնարկների տարածքների և գույքի վարձակալության գործառույթի կենտրոնացումը ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության իրավասության ներքո տվեց իր արդյունքները. դրանք 24.3%–ով գերազանցեցին նախորդ տարի ստացված եկամուտը և շուրջ 6%–ով ծրագրված ցուցանիշը: Ծրագրով նախատեսված եկամուտների գերակատարում է արձանագրվել նաև իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գծով, որը կազմել է 8% (առանց ՊԵՆ խրախուսման ֆոնդի):

Կապիտալի գործառնություններից եկամուտներ: 2005 թ. կապիտալի գործառնություններից պետական բյուջե է մուտքագրվել 12.4 մլրդ դրամ կամ բյուջեի ընդհանուր եկամուտների 3.4 %–ը: Նշված մուտքերի գերակշիռ մասը՝ 1.3 մլրդ դրամ, ստացվել է պետական սեփականություն համարվող հողերի վաճառքից, որով էլ պայմանավորված, նախորդ տարվա համեմատ գրանցվել է մուտքերի զգալի աճ: Դրանք գրեթե ամբողջությամբ (98.4%–ով) ապահովել են ծրագրային ցուցանիշը: 257.1 մլն դրամ է մուտքագրվել պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից, որոնց գծով հաշվետու բյուջեում մուտքեր չէին նախատեսվել: Նշված գումարի հիմնական մասը՝ 200 մլն դրամի չափով, ստացվել է «Հայխնայբանկում» պետական բաժնետոմսերի օտարումից: Աշխատանքներ են տարվում պետական գույքի օտարման գործընթացի կանոնակարգման, գործող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ, որոնք նաև նախադրյալներ կստեղծեն հետագայում բյուջետային մուտքերի ավելացման համար:

Պետական տուրք: Պետական տուրքը, պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար (հողված 7) ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ՀՀ պետական բյուջե մուծվող պարտադիր գանձույթ է: Վճարողներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք: Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթական գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը: Այն հաշվարկում և գանձում են սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք:


ՀՀ-ում պետական տուրք զանձվում են՝

1. դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու զանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար,
2. նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար,
3. քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար,
4. ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար,
5. հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,
6. պետական գրանցման համար,
7. մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար,
8. գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար,
9. ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար,
10. լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Պետական տուրքից ստացված միջոցները 2005 թ. կազմել են 17.3 մլրդ դրամ: Պետական տուրքերից ստացվող մուտքերը Հայաստանի Հանրապետությունում ունեն աճի միտում: Պետական բյուջեի եկամուտներում պետական տուրքի տեսակարար կշիռը վերջին տարիներին մոտ 5%-ի սահմաններում պահպանվող մակարդակից բարձրացել է 7.2%-ի:

ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրավորվել է 412.4 մլրդ դրամի չափով, որը գերազանցում է 2005 թվականի համար հաստատված մուտքերի մակարդակը 16.3%-ով: 2006 թ. բյուջետային եկամուտները կազմելու են տվյալ տարվա համար ծրագրավորվող ՀՆԱ-ի 17.2%-ը: Բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերն ու տուրքերը՝ 88.3%, ոչ հարկային եկամուտները կապահովեն ընդհանուր բյուջետային մուտքերի 1.8%-ը, իսկ կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտներն ու տրանսֆերտները՝ համապատասխանաբար 0.2%-ը և 9.0%-ը:

Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի ընթացիկ եկամուտները (հարկային եկամուտներ, պետական տուրքեր և ոչ հարկային եկամուտներ) ծրագրավորվել են 371.5 մլրդ դրամի չափով, որը 2005 թվականի համար հաստատված մակարդակը գերազանցում է 43.7 մլրդ դրամով կամ 11.8%-ով: Ընթացիկ եկամուտների գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտները:



Գծապատկեր 7.1. ՀՀ պետական բյուջեի 2006 թվականի ընթացիկ եկամուտների կառուցվածքը

Պետական բյուջեի եկամտային մասի 9.0%-ը կամ 37.2 մլրդ դրամը ապահովվել է արտաքին պաշտոնական տրանսֆերտների հաշվին: 2001 թվականն աչքի է ընկնում բարձր ցուցանիշով, եթե դիտարկենք նախորդ տարիներին գրանտների ստացման դինամիկան, ինչը միշտ եղել է պետական բյուջեի համալրման հիմնախնդիրներից: Արտաքին պաշտոնական տրանսֆերտների բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ և Հունաստանի կառավարությունների կողմից նախորդ տարի ստացված և չիրացված ցորենի իրացումից եկամուտների մուտքագրմամբ, ինչպես նաև Նիդեռլանդների կառավարության կողմից 2.2 մլրդ դրամի չափով դրամաշնորհի տրամադրմամբ, որը պետական բյուջեով նախատեսված չէր: Մասնավորապես, ԱՄՆ կողմից տրամադրված ցորենի իրացումից մուտքը նախատեսված 2.7 մլրդ դրամի դիմաց կազմել է 4.2 մլրդ դրամ, հունական ցորենից՝ 345 մլն դրամ: Չինաստանի կառավարության տրամադրած տրակտորների իրացումից նախատեսված 5 մլն դրամի փոխարեն հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 9 մլն դրամ: Եվրամիության աջակցությամբ հանրապետությունում իրականացվող Պարենային ապահովության ծրագրի շրջանակներում նախատեսված 9.5 մլն եվրո դրամաշնորհն ամբողջությամբ չի հատկացվել, և նախատեսված 4.7 մլրդ դրամի դիմաց պետական բյուջեի փաստացի մուտքը կազմել է ընդամենը 2.5 մլրդ դրամ, ինչի հետևանքով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ չեն իրականացվել: Հայաստանի կողմից Եվրախորհրդի հետ կնքված բացառիկ ֆինանսական օգնության վերաբերյալ փոխհամաձայնության հուշագրի համաձայն՝ նախնական վճարումների չիրականացման պատճառով Եվրամիության կողմից չի տրամադրվել 5.5 մլն եվրո (2.7 մլրդ դրամ) դրամաշնորհը:

Տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի հետ մեկտեղ նկատվում է արտաքին պաշտոնական աղբյուրներից տրամադրվող օգնության ծավալների անկում և արդյունքում՝ բյուջեի եկամուտների մեջ դրանց տեսակարար կշռի նվազում: Այս երևույթը կարելի է դրական համարել, քանի որ վկայում է տնտեսության աստիճանական վերականգնման և զարգացման մասին:

7.3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2006 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմելու են 482.2 մլրդ դրամ, որը 18.2%-ով գերազանցում է 2005 թվականի հաստատված ցուցանիշը: Ծախսերի ամբողջ ծավալի 68.7%-ը կամ 331.1 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 27.8%-ը կամ 134 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսերին:


Աղյուսակ 7.3.

ՀՀ 2002–2006 թթ.պետական բյուջեի փաստացի կատարողականը ըստ տնտեսագիտական դասակարգման (մլն դրամ)

Ծախսային հոդվածների անվանումները	2002	2003	2004	2005	2006
ՀՆԱ (մլն դրամ)					
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	262327	312523	333943	417506	482194
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ.	219366	222296	262812	329135	331103
այդ թվում՝					
<i>պետական մարմինների, դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձ</i>	20559	13736	24241	32891	34386
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	15740	11398	9835	9933	10315
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	8176	14523	18074	14676	15744
ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ.	47346	41751	50146	72421	83625
այդ թվում՝					
<i>պարտադիր սոցիալական ապահովարության վճարներ</i>	6142	2235	2503	3345	3663
	761	1063	1097	1120	9451
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳԼՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	127546	140887	160517	199213	187033
ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ.	32610	83629	60592	75262	134045
այդ թվում՝					
ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	29608	75427	37283	43833	62189
ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ ՀԱՆԱԾ ՄԱՐՈՒՄԸ	10349	6598	10539	13109	17046
այդ թվում՝					
<i>ներքին վարկավորում՝ հանած մարումը</i>	1256	2827	585	138	1306
<i>արտաքին վարկավորում՝ հանած մարումը</i>	9094	94256	11124	12971	15740

Գծապատկեր 7.2.

Պետբյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հիմնական խմբերի



1. Ընդհանուր բնույթի պետական ծառայություն:
2. Պաշտպանություն:
3. Հասարակական կարգի պահպանություն, ազգային անվտանգություն և դատական գործունեություն:
4. Կրթություն և գիտություն:
5. Առողջապահություն:
6. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն:
7. Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն:
8. Բնակարանային-կոմունալ տնտեսություն:
9. Վառելիքային և էներգետիկ համալիր:
10. Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն:
11. Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն:
12. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ:
13. Տնտեսական այլ ծառայություններ:
14. Հիմնական խմբին չդասվող ծախսեր:

Ուժային համակարգի ծախսերը (պաշտպանություն, ազգային անվտանգություն և այլն) կկազմեն 110.7 մլրդ դրամ կամ բյուջեի 23.0%–ը:

Ծախսերը սոցիալական ոլորտի ծրագրերի վրա, որոնք ներառում են առողջապահությունը, կրթությունը, մշակույթը և այլ բնագավառները, կազմում են 191.2 մլրդ դրամ կամ բյուջեի 39.8%–ը:

Պետական պարտքի սպասարկման ծախսերը, որոնք ներառված են 14–րդ խմբում (հիմնական խմբին չդասվող ծախսեր), կազմում են 10.3 մլրդ դրամ կամ բյուջեի 2.1%–ը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58–րդ հոդվածի պահանջով համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հիմք ունենալով նախորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4%–ը: 2006 թվականին համայնքների բյուջեներին դոտացիաներ տրամադրելու նպատակով պետական բյուջեով նախատեսվում է շուրջ 14.7 մլրդ դրամ հատկացումներ:

ՀՀ բյուջեով իրականացվող սոցիալական և տնտեսական ծրագրերը պետության հոգածության կարևոր ոլորտ են:

Կրթության բնագավառը առավել կարևոր և առաջնային բնագավառներից է, ուստի կրթական համակարգի պահպանումն ու զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական, պետք է պետական ու ազգային կարևորագույն խնդիր համարվի: 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը կազմում են 82.3 մլրդ դրամ, ինչը 2005 թվականի մակարդակը գերազանցում է 25%–ով, որը հիմնականում պայմանավորված է տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն ենթախմբի ծախսերի աճով՝ 16.8 մլրդ դրամով: Դպրոցներում շուրջ 50 հազար մանկավարժական դրույքների միջին աշխատավարձը կբարձրացվի 20%–ով:

Շարունակվելու են բարեփոխումները, որոնք նախատեսված են ՀՀ կրթության զարգացման 2001–2005 թվականների պետական ծրագրով: Բարեփոխումները ուղղված են ուսումնական հաստատությունների կազմակերպարարական տեսակի հստակեցմանը, համակարգի կառավարման ձևի և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը: 2007 թվականի վերջին հանրակրթական շուրջ 1000 դպրոցների ֆինանսավորումը կատարվելու է նոր կարգով՝ ըստ աշակերտների թվի: Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի՝ նախատեսվում է մինչև 2007 թվականը հանրակրթական բոլոր դպրոցների աստիճանական անցումը ըստ աշակերտների թվի ֆինանսավորման:

Բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում պահպանվելու է տնտեսության առանձին բնագավառների զարգացման, հիմնարար, կիրառական և հասարակական գիտությունների գծով մասնագետների պատրաստումը:

Պետության կողմից գիտության ֆինանսավորումը կիրականացվի բազային, նպատակային–ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ձևերով:

Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեով առողջա-

պահության ոլորտի ծախսերի մակարդակը ձևավորելիս նկատի է առնվել երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

Առողջապահության ծախսերը 2006 թվականին նախատեսված են 39.4 մլրդ դրամի չափով, որը գերազանցում է 2005 թվականի ծախսերը 7.2 մլրդ դրամով:

Հատկացումները նախատեսվում է ուղղել՝

- հիվանդանոցային բուժօգնությանը՝ 14.6 մլրդ դրամ,
- առաջնային (ամբուլատոր–պոլիկլինիկական) բուժօգնությանը՝ 14.3 մլրդ դրամ,
- հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը՝ 1.9 մլրդ դրամ,
- առողջապահության այլ ծառայություններին և ծրագրերին՝ 1.4 մլրդ դրամ:

Հիվանդանոցային օգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսի համար նախատեսվում է 7 300 դրամ, որը 2002 թվականի համանման տվյալի դիմաց աճել է 21.7%–ով: Բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել հիվանդանոցներում՝ մինչև 30 000 դրամ, պոլիկլինիկաներում՝ 27 700 դրամ: Առաջնային խնդիր է առողջապահությանը վերաբերող օրենսդրական դաշտի բարելավումը, հանրապետության առողջապահության քաղաքականության մշակումը, 2003 թվականին «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Երկարաժամկետ քաղաքականության առումով 2007 թվականին ներդրման շարունակական ընթացքի մեջ կլինի ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար փոխարինելու է ներկայիս համեմատաբար ուռճացված ամբուլատոր–պոլիկլինիկական համակարգին: Ընտանեկան բժշկության համակարգի ձևավորմանը զուգընթաց ներկայիս խոշոր պոլիկլինիկաների մի մասը վերածվելու է հիվանդանոցային բուժօգնության կենտրոնների հետ սերտորեն փոխկապակցված կոնսուլտացիոն–ախտորոշիչ տարածքային կենտրոնների:

Սոցիալական ապահովության բնագավառի համար ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի գերակշռող մասը կազմում են պետական նպաստներ բնակչությանը: Դրանց վճարման համար նախատեսվում է 27.0 մլրդ դրամ: Պետք է նշել, որ աղքատության ընտանեկան նպաստի համակարգը, հանդիսանալով սոցիալական պաշտպանության միջև այժմ գործող համակարգերից առավել հասցեագրվածը, դեռևս կատարելագործման կարիք ունի:

2006 թվականին Հայաստանի տնտեսության առանձին ծյուղերում և սոցիալական ոլորտում մի շարք ծրագրերի իրականացման նպատակով միջազգային ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից նախատեսվում է ներգրավել վարկային միջոցներ: Իրականացվող 22 ծրագրերի համար ակնկալվող վարկային հատկացումների ընդհանուր գումարը կկազմի մոտ 45.6 մլրդ դրամ (77.8 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ կառավարության կողմից վարկային ծրագրերին տրվող գումարը կկազմի մոտ 3.5 մլրդ դրամ (6.0 մլն ԱՄՆ դոլար):

Վարկային ծրագրերով կատարվող ֆինանսավորման հաշվին իրականացվելու են հետևյալ կարևորագույն միջոցառումները.

- Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը, ջրմուղ–կոյուղու ծառայությունների արդյունավետության բարձրացումը, կառավարման կատա-

րելագործունը, պետական բնակարանային շինարարության քաղաքականության քարտեզի խումբները,

- համայնքային մակարդակի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վերականգնման իրականացումը, համայնքային և տեղական կազմակերպություններին ծրագրեր պատրաստելու և իրականացնելու ասպարեզում աջակցելը, նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Շինարարության բնագավառում նախատեսվում է կառուցել 17 կրթական հիմնարկ երևանում և տարբեր մարզերում, վերակառուցել 3 հիվանդանոց, 12 ջրագիծ և այլ ծրագրեր,
- ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը: Նախատեսվում է առավել վտանգ ներկայացնող 20 պատվարների վերականգնում և մնացած բոլոր 60 ջրամբարների վիճակի ուսումնասիրում,
- կատարել ճանապարհաշինարարական աշխատանքներ Վանաձոր–Ստեփանավան, Կապան–Քաջարան, Գյումրի–Բավրա և Սպիտակ–Գյումրի ուղղություններով, մի շարք կամուրջների վերականգնման աշխատանքներ, սարքավորումների պահեստամասերի ձեռքբերում, երկաթուղու գծահատվածների նորոգում,
- ոռոգման համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնում ու վերակառուցում, հանրապետության երեք առավել արդյունավետ ոռոգման համակարգերում մեխանիկական եղանակը ոռոգման ինքնահոս եղանակով փոխարինելը,
- մասնավոր ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող ձեռնարկությունների զարգացումը,
- «Լինսի» հիմնադրամի վարկավորման ծրագրով Հայաստանի Հանրապետությունում աջակցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը՝ վարկերի տրամադրման միջոցով:

Սպառման ֆոնդերի ձևավորման հիմնական աղբյուրը բյուջեից սոցիալ–մշակութային միջոցառումների ֆինանսավորմանը հատկացվող միջոցներն են: Այդ միջոցների հաշվին են ապահովում բնակչության մեծ մասի անվճար ուսուցումը, բուժ-սպասարկումը, մանկական նախադպրոցական հիմնարկների պահպանումը, զանազան կենսաթոշակների ու թոշակների և նման կարգի այլ վճարումները:

Տնտեսության զարգացման և ՀՆԱ–ի անընդհատ ավելացման բազայի վրա տարեցտարի պետք է աճեն սոցիալ–մշակութային միջոցառումների ֆինանսավորման հատկացումները:

2006 թ. պետական բյուջեից կրթության և գիտության համակարգին հատկացվել է 82.3 մլրդ դրամ, առողջապահությանը՝ 39.4 մլրդ դրամ, սոցիալական ապահովագրությանը և ապահովությանը՝ 55.9 մլրդ դրամ, մշակույթին, տեղեկատվությանը և սպորտին՝ 13.6 մլրդ դրամ 2005 թ. համապատասխանորեն՝ 60.8, 31.1, 44.1 և 10.4 մլրդ դրամի դիմաց (տե՛ս աղյուսակ 9):

Սոցիալ–մշակութային միջոցառումների ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական միջոցների հատկացումը, միաժամանակ, պահանջում է խնայողաբար և արդյունավետ օգտագործում: Իսկ վերջինս շատ բանով կախված է ծախսերի խելա-

ցի ու գիտականորեն հիմնավորված պլանավորումից:

Սոցիալ-մշակութային միջոցառումների գծով ծախսերի պլանավորումը կատարվում է բյուջետային հիմնարկների ցանցի և կոնտինգենտի գործնական ցուցանիշների և ծախսերի սահմանված նորմաների հիման վրա: Այդ հիմնարկների պահպանման և գործունեության ընդլայնման համար բյուջեից բաց թողնվող միջոցների գումարը կոնկրետ պետք է որոշվի նախահաշիվների միջոցով: Նախահաշիվն այն հիմնական փաստաթուղթն է, ուր ցույց են տրվում պլանային տարում եռամսյա կտրվածքով տվյալ բյուջետային հիմնարկի պահպանման համար բյուջետային հատկացումների ամբողջ գումարը և օգտագործման կոնկրետ ուղղությունները:

Սոցիալ-մշակութային միջոցառումների ծախսերի կազմում կարևոր տեղը պատկանում է կրթությանը և գիտությանը, որին բյուջեից կատարվող հատկացումների ավելացումն ապահովում է նոր դպրոցների, մանկական նախադպրոցական հիմնարկների և այլ օբյեկտների կառուցումը, ինչպես նաև գործող ցանցի պահպանումը:

Հայտնի է, որ կրթությունը Հայաստանում ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Ներկայումս պետական ու ազգային կարևորագույն խնդիր են համարվում կրթության համակարգի պահպանումը և զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:

Հայաստանի կրթության համակարգը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև հետբուհական: Կրթության ոլորտի ճյուղերի թվում կարևոր տեղերից մեկը պատկանում է երեխաների նախադպրոցական դաստիարակության համակարգին: Մանկական նախադպրոցական հիմնարկների տարածված ցանցի առկայությունը շատ մայրերի հնարավորություն է ընձեռում զբաղվելու հանրօգուտ աշխատանքով, բարձրացնելու իրենց կրթական և կուլտուրական մակարդակը, ակտիվ մասնակցություն ունենալու հասարակական-քաղաքական կյանքին: Նախադպրոցական կրթության ոլորտում գործում են շուրջ 800 համայնքային և 20 գերատեսչական հաստատություններ: Այդ հիմնարկների թիվը 1991թ. համեմատությամբ նվազել է 34.0%-ով: Զգալիորեն կրճատվել է նաև երեխաների ընդգրկվածությունը: Ընդգրկվածությունը նվազել է 18%-ով: Այսօր Հայաստանում գործում են նաև ոչ պետական մանկապարտեզներ: Նախադպրոցական հիմնարկների ցանցն այժմ բավականին անհամաչափ է տեղաբաշխված:

Մանկական նախադպրոցական հիմնարկների ծախսերի հիմնավորված նորմաների սահմանումը հնարավորություն է տալիս ներգործել նախահաշիվային կարգով ֆինանսավորվող բյուջետային հիմնարկությունների ծախսերի ծավալի ու կառուցվածքի վրա, միատեսակ չափով բավարարել դրամական միջոցների նկատմամբ նշված հիմնարկների պահանջը: Կրթական համակարգի ծախսերի զգալի բաժինը կազմում են ընդհանուր կրթության ծախսերը: Վերջինիս մեջ գերակշռող հանրակրթական դպրոցների պահպանման ծախսերն են:

Պետական հանրակրթական դպրոցներում սովորողների քանակը 1991թ. համեմատությամբ նվազել է 4,2 %-ով: Հանրապետությունում գործում են նաև ոչ պետական դպրոցներ, որտեղ սովորում են 2700 աշակերտ:

Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում: Մասնագետներ են պատրաստում 127 մասնագիտությունների գծով: Համակարգում գոր-

ծում է 77 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որոնցում ուսանում են 28 048 սովորող և 62 ոչ պետական ՄՍՈՒՀ: ՄՍՈՒՀ-ների թիվը 1991թ. համեմատությամբ աճել է 13,2%-ով, իսկ ուսումնառուների թվաքանակը նվազել է 31%-ով:

Յուրաքանչյուր պետություն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում տնտեսության համար բարձրորակ մասնագետների պատրաստմանը, և վճռական դերը պատկանում է բարձրագույն ուսումնական հաստատություններին: Համակարգում գործում է 16 պետական և 73 ոչ պետական բուհ: Պետական բուհերի թիվը 1991թ. համեմատությամբ աճել է 14,2 %-ով: Պետական բուհերում սովորում է 42 525, ոչ պետական բուհերում՝ շուրջ 20 000 ուսանող: Պետական բուհերում սովորողների թվաքանակը 1991 թվականի համեմատությամբ նվազել է 35,7%-ով: Պետական բուհերի ուսանողների միայն 40%-ն է սովորում անվճար հիմունքներով:

Հայաստանի կրթության համակարգը հիմնականում ֆինանսավորվում է պետբյուջեից: Կրթության ֆինանսավորումը կազմում է բյուջեի շուրջ 15 %-ը կամ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ընդամենը 3%-ը: Նշենք, որ 1991թ. այն կազմել է ՀՆԱ-ի 7,2%-ը: Բյուջեի կառուցվածքում կրթության ֆինանսավորումը տրված է ըստ մակարդակների և գործառնական դասակարգման: Ֆինանսավորման ներհամակարգային բաշխումը խիստ անհամաչափ է:

1996 թ. պետական նախադպրոցական հիմնարկները հանձնվել են տեղական ինքնակառավարման մարմիններին, և ներկայումս դրանց ֆինանսավորումը իրականացվում է համայնքային բյուջեներից:

Հանրապետության 204 դպրոց 2001թ. սեպտեմբերի 1-ից ֆինանսավորվում է ըստ աշակերտների թվաքանակի՝ ելնելով մեկ աշակերտի համար սահմանված չափից:

Հայաստանի հանրակրթությունը ֆինանսավորվում է հիմնականում պետբյուջեից, իսկ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական ֆինանսավորումը կազմում է կրթության պետբյուջեի 12%-ը և ուսումնական հաստատությունների ընդհանուր ծախսերի շուրջ 30%-ը, մնացած 70%-ը կազմում են արտաբյուջետային միջոցները: Միջին մասնագիտական կրթության մասնաբաժինը կրթության բյուջեում կազմում է 4%-ը:

Ոչ պետական ուսումնական հաստատությունները պետական հատկացումներ չեն ստանում: Անբավարար ֆինանսավորումը կրթության համակարգի ճգնաժամային իրավիճակի գլխավոր պատճառներից է: Վերջին տարիներին կրթության պետական ֆինանսավորումը տատանվում է ՀՆԱ-ի 2-2,5 %-ի շրջանակներում, ինչը կազմում է միջազգային ցուցանիշի մոտ կեսը:

Կրթության համակարգի ֆինանսական ծանր վիճակը սրվում է նաև այն պատճառով, որ «Բյուջեի մասին» ՀՀ օրենքով կրթության համար նախատեսված պետական միջոցների մի մասը չի հատկացվում առաջացնելով տարեցտարի կուտակվող պարտքեր, իսկ վճարումներն էլ կատարվում են պարբերաբար ուշացումներով:

Բյուջետային միջոցների սուղ պայմաններում առանձնահատուկ կարևորություն ունի դրանց արդյունավետ օգտագործումը: Ներկայումս առկա բյուջետային ու արտաբյուջետային միջոցները բաշխվում և օգտագործվում են ոչ արդյունավետ, չհամակարգված և անհամապատասխան միջազգային պրակտիկային՝ ինչպես ըստ կր-

թուրքյան մակարդակների, այնպես էլ ըստ ծախսատեսակների: Ծնողների կողմից կատարվող ներդրումները ևս կրում են չհամակարգված բնույթ:

Կրթության համակարգի պետական ֆինանսավորման ներկա կառուցվածքը դեռևս կրում է խորհրդային նորմերի ազդեցությունը, չնայած փոփոխվում է շուկայական հարաբերությունների զարգացմանը համընթաց: Կրթության համակարգի ֆինանսական վիճակի բարելավման համար անհրաժեշտ է՝

- բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- արտաբյուջետային միջոցների ներգրավում և դրանց ծավալի ընդլայնում,
- հարկային բարենպաստ քաղաքականություն,
- ֆինանսավորման նոր ձևի համակարգային ներդրում (սովորողների թվի հաշվարկով),
- ֆինանսավորման գիտական հիմնավորված նորմաների մշակում,
- վճարովի հիմունքով սովորողներին արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկերի հատկացում,
- պետական բյուջեով կրթական համակարգի համար նախատեսվելիք ծախսերի ծավալը մոտ տարիներին հասցնել ՀՆԱ–ի առնվազն 4,0 %–ի,
- կրթության համակարգի ռացիոնալացում,
- նյութատեխնիկական և ուսումնամեթոդական հիմքի բարելավում,
- բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կազմակերպությունների համար կադրերի պատրաստում պայմանագրային հիմունքներով՝ ֆինանսական փոխհատուցմամբ,
- կրթության կառուցվածքային վերադասավորում և վերակազմավորում շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան:

Պետական բյուջեից գումարներ են հատկացվում նաև գերատեսչական հիմնարկների ֆինանսավորման համար: Այդ հիմնարկների պահպանման ծախսերը հատկացվում են կառավարության կողմից: Գիտության ծախսերի ընդհանուր կազմում առանձնացվում են գիտահետազոտական հիմնարկների աշխատողների աշխատավարձի ֆոնդը, բայց առանց աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի ցուցանիշների: Վերջիններս սահմանվում են իրենց՝ գիտահետազոտական հիմնարկների կողմից:

Գիտության ոլորտին պետական հատկացումները խիստ անբավարար են գիտական ներուժի բնականոն վերականգնման համար: Հանրապետության գիտական առկա ներուժը երկրի հետագա զարգացման հիմքերից է: Երկրի հետագա զարգացման նպատակներին իսկապես ծառայելու համար գիտական համակարգում անհրաժեշտ են որոշ բարեփոխումներ (հարկային արտոնություններ, ֆինանսավորման մրցութային արդյունավետ կարգի սահմանումը և այլն):

Հիմնարար գիտության թեմատիկ ֆինանսավորումը թույլ կտա ինչ–որ կերպ ռացիոնալացնել պետական բյուջեից հատկացվող սուղ միջոցների բաշխումը, եթե ավելի հիմնավորված դառնա ֆինանսավորվող թեմաների փորձաքննության անցկացումը:

2006–2009թթ. միջնաժամկետ հատվածում կրթության և գիտության բնագավառում պետությունը պետք է որդեգրի հետևյալ քաղաքականությունը.

- պետական բյուջեից այս ոլորտին ուղղվող ծախսերի ծավալը պակաս չպետք է

լինի ՅՆԱ–ի 4,5%–ից,

- գիտության բնագավառում ֆինանսավորումը 1%–ից պետք է հասցնել նվազագույնը 3% մակարդակի՝ միջոցների հիմնական մասը ուղղելով գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացմանը,
- գիտության ոլորտում առավել մեծ տեղ պետք է տալ այն հետազոտությունների ֆինանսավորմանը, որոնք կիրառական նշանակություն ունեն:

Սոցիալապես և տնտեսապես զարգացող հասարակությունը պայմաններ է ստեղծում ազգի առողջական բավարար մակարդակի համար: Առողջապահության բնագավառի գործառույթներն են առողջության պահպանումը, վերականգնումը և ամրապնդումը, հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը, մայրերի և երեխաների պաշտպանությունը, դեղորայքի ապահովումը, առողջ կենսակերպի արմատավորումը: Վերջին տարիների սոցիալ–տնտեսական ձևափոխությունների արդյունքում Հայաստանի բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշները հիմնականում ունեցել են բացասական միտումներ: Բժշկական ծառայություններից օգտվելու միջին ծախսերի գումարը անհամեմատելիորեն բարձր են բնակչության միջին եկամուտներից և գրեթե անմատչելի բնակչության մոտ կեսը կազմող աղքատների համար: Պետական բյուջեից առողջապահության բնագավառ ուղղվող ծախսերի մակարդակը բավականին ցածր է: Վերջին տարիներին բյուջեից առողջապահության բնագավառին հատկացվող միջոցները ավելացել են:

Հայաստանի առողջապահության բյուջեն չի գերազանցում ՅՆԱ–ի 2%–ը, իսկ զարգացած երկրներում առողջապահական ծախսերին է ուղղվում ՅՆԱ–ի 7 %-ը: Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի երկրներում 1997 թ. մեկ շնչի հաշվով կատարված ծախսերը կազմել են 123 ԱՄՆ դոլար, իսկ Հայաստանում համապատասխան ցուցանիշը կազմել է 7 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 7.4.

Տարբեր երկրներում պետական բյուջեի ծախսերը
առողջապահության բնագավառում

(% ՅՆԱ–ի նկատմամբ)¹

	Ադրբեջան	Վրաստան	Արլ. եվ. - ԱՊՀ	ՕԵԸ երկրներ	Զար աջող երկրներ
1995–97 թթ.	0.7	1.2	4.5	6.2	2.2

Աղյուսակ 7.5

ԱՊՀ երկրներում առողջապահության ծախսերի
կառուցվածքի համեմատականը

	Ադրբեջան	Վրաստան	Ղրղըզստան	Սուլդովա	Տաջիկստան
2002 թ.	5.8 %	4.2 %	11.2 %	12.1 %	6.5 %

Առողջապահության բնագավառում պետական ծախսերն ուղղվում են հիվանդա-

¹ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Եր–ան, 2003 թ., էջ 30:

նոցային, առաջնային (ամբուլատոր–պոլիկլինիկական) բուժօգնության պետական ծրագրերի, հիգիենիկ–հակահամաճարակային ծառայության պահպանման, ինչպես նաև առողջապահական այլ ծառայությունների ու ծրագրերի ֆինանսավորմանը: Պետք է նշել, որ առողջապահության բյուջետային հատկացումների գերակշռող մասն ուղղվում է հիվանդանոցային բուժօգնությանը, բայց ավելի արդյունավետ կլինի, եթե բյուջետային միջոցների մեծ մասը վերաբաշխվի բնակչության աղքատ խավերի համար ավելի մատչելի առողջության առաջնային պահպանման օղակի օգտին: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի նման փոփոխության հիմնական աղբյուրներն են ներքին աղբյուրներից եկամուտների հավաքագրումը և արտաքին աղբյուրներից ստացվող ծրագրային աջակցությունը: Ինչպես աշխատավարձի, այնպես էլ կապիտալ ծախսերի առումով մախ և առաջ կարևորվում է առաջնային բուժօգնության հիմնարկներում (հատկապես գյուղական բնակավայրերի) իրավիճակի բարելավումը: Ներկայումս առողջապահական համակարգի ծառայությունների առաջարկի ու պահանջարկի միջև առկա է զգալի խզում: Առողջապահությանը հատկացված ոչ բավարար բյուջետային միջոցները հաճախ ուղղվում են զգալիորեն ուռճացած և Հայաստանի բնակչության կարիքները գերազանցող բուժփիմնարկների ցանցի պահպանմանը՝ հասանելի ռեսուրսների սղության պայմաններում հանգեցնելով առողջապահական ծառայությունների անհարկի կրկնօրինակմանը:

Բժշկական ապահովագրության հիմնահարցը առողջապահության համակարգի զարգացման և բարեփոխումների կարևորագույն տարրերից մեկն է, ընդ որում այն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես առողջապահության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ներգրավելու միջոց, այլև բնակչության համար բժշկական օգնությունը առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքները սերմանելու և ռեսուրսների նպատակային օգտագործումն ու բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու երաշխիք: Արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը հիմք է տալիս ընդունելու, որ ներկայումս գոյություն ունեն առողջապահական համակարգի կազմակերպման կամ ծառայությունների իրականացման չորս հիմնական մոդելներ, «մանալիտ՝ ամբողջովին պետական», «մրցակցային պետական», «ապահովագրական» և «մասնավոր»¹: Հայաստանի Հանրապետությունում համակարգի կառավարման փոփոխումը իրականացվում է երկու ուղղություններով՝ ապակենտրոնացում և մի շարք գործառնությունների պետության ձեռքում կենտրոնացում²: Ներկայումս 50–ից ավելի երկրներում պարտադիր բժշկական ապահովագրության վրա հիմնված և «ապահովագրական բժշկություն» անվանվող առողջապահական համակարգերը ամենաարդյունավետն են, քանի որ համեմատաբար նվազ ծախսումներով ապահովում են որակյալ բուժօգնության մատուցում: Նշենք, որ ԱՄՆ–ի առողջապահական համակարգում իրականացվող բարե-

¹ Privatization of Public Sector Activities with a special focus on telecommunications,energy, health and communiti services.Unated nations, New York, 1999,p.110

² Հայաստանի Հանրապետությունում առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության հայեցակար :

փոխումների շրջանակներում այժմ դրվում է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման հարցը:

Առողջապահական համակարգի ապակենտրոնացումը հնարավորություն կտա բարձրացնել ներդրումային ակտիվությունն այս ոլորտում, իսկ պետական բյուջեի համար թեթևացնել համակարգի պահպանման բեռը, ավելացնել մուտքերը վճարովի ծառայությունների մատուցման և հարկերի հաշվին:

Առողջապահության բնագավառում առաջիկայում պետք է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- պետական բյուջեից հատկացվող միջոցները պետք է կազմեն ՀՆԱ–ի մինչև 3%–ը,
- բյուջետային հատկացումների աճը ուղղել բժիշկների և միջին բժշկական անձնակազմի աշխատավարձի բարձրացմանը, որակյալ դեղորայքով և համապատասխան նյութերով, արդիական սարքավորումներով ապահովմանը:

Սոցիալական պաշտպանության քաղաքականության էությունը պետության կողմից սոցիալական ռիսկերի կառավարումն է՝ դրանց նվազեցման նպատակով: Սոցիալական ռիսկերի կառավարման գաղափարախոսությունը ելնում է նրանից, որ անհատների, ընտանիքների, համայնքների բարեկեցությունը ենթակա է բազմաթիվ ռիսկերի, որոնք կարող են ծագել տարբեր աղբյուրներից, ինչպես բնածին երկրաշարժ, ջրհեղեղ, հիվանդություններ և այլն, այնպես էլ գործազրկություն, շրջակա միջավայրի վատթարացում, պատերազմ և այլն: Այդ հանգամանքները հիմք են հանդիսանում սոցիալական ռիսկի կառավարման ոլորտում պետության ներգրավման համար: 2002 թվականին սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտի ծախսերը կազմել են 23.8 մլրդ դրամ՝ մոտ 12%–ով պակաս լինելով բյուջեի տարեկան ծրագրով նախատեսված ծախսերի ցուցանիշից: Միաժամանակ, 2001 թ. փաստացի կատարված ծախսերի համեմատ այս ծախսերը նվազել են 8.8%–ով: Հիմնականում ծախսերի նվազման պատճառ էր հանդիսացել բնակչությանը տրամադրվող աղքատության ընտանեկան նպաստների գծով ծախսերի նվազումը: Իսկ 2003–2006թթ. սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտին հատկացվող միջոցները շարունակաբար աճել են՝ 2003 թ. կազմելով 29,3 մլրդ դրամ, 2004թ.՝ 35,0 մլրդ դրամ, 2005թ.՝ 44,1 մլրդ դրամ: 2006 թվականին պետական բյուջեով հաստատվել է 55,9 մլրդ դրամ (տե՛ս աղյուսակ 7.12.):

Աղյուսակ 7.6.

Տարբեր երկրներում համախմբված բյուջեի ծախսերը սոցիալական ապահովության բնագավառում

(% ՀՆԱ –ի նկատմամբ)¹

	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Արլ. եվ. երկրներ	OECD երկրներ
1995–97 թթ.	2.2	1.3	2.7	4.6	6.2

Աղյուսակ 7.7.

¹ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Եր–ան, 2003 թ., էջ 30:

ԱՊԶ երկրներում սոցապահովագրության և սոցապահովության ծախսերի կառուցվածքի համեմատականը

	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Ղրղզստան	Սլովակա	Տաջիկստան
2002 թ.	17.9%	16.0%	10.6%	14.7%	11.2%	15.6%

Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգը ներառում է պետական կենսաթոշակային ապահովագրության համակարգը և պետական կենսաթոշակային ապահովության համակարգը: Պետական կենսաթոշակային ապահովագրության համակարգում կենսաթոշակները հիմնված են պարտադիր սոցիալական վճարների վրա և կազմում են աշխատանքային կենսաթոշակների համակարգը (տե՛ս աղյուսակ 7.8.):

Աղյուսակ 7.8.

Ապահովագրական կենսաթոշակ ստացողների թվաքանակի դինամիկան¹
(հազար մարդ)

	2001	2002	2003	2004
Ընդամենը կենսաթոշակառուներ, այդ թվում՝	493.8	485.5	487.9	486.0
տարիքային	316.0	308.1	316.7	320.5
հաշմանդամության	66.7	68.2	71.7	75.0
կերակրողին կորցրած	14.5	14.3	14.4	14.8
երկարամյա աշխատանքի համար	19.1	19.5	14.5	16.8
մասնակի	–	–	–	1.2
արտոնյալ	73.7	72.4	64.4	57.7

Պետական կենսաթոշակային ապահովության համակարգը ներառում է սոցիալական կենսաթոշակների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի և արտակարգ իրավիճակների հրամանատարական և շարքային անձնակազմին վճարվող կենսաթոշակները: Սոցիալական կենսաթոշակների թվին պետք է դասել նաև զինծառայության հետ կապված կենսաթոշակները (ներառյալ հայրենական պատերազմի հաշմանդամներին և նրանց հավասարեցված անձանց, զինծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին, զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող կենսաթոշակները), քանի որ դրանք հիմնված չեն պարտադիր սոցիալական վճարների վրա: Զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացողների թիվը վերջին տարիներին կազմել է մոտ 20 հազար մարդ:

2004թ. սոցիալական կենսաթոշակ է ստացել 44 672 մարդ, որը կազմել է կենսա-

¹ Տվյալներ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի համապատասխան փաստաթղթից:

թոշակառուների ընդհանուր թվաքանակի 8.3%–ը (տե՛ս աղյուսակ 7.9.)

Աղյուսակ 7.9.

Սոցիալական կենսաթոշակ ստացողների թվաքանակի դինամիկան

(մարդ)

	2001	2002	2003	2004	2005
Սոցիալական կենսաթոշակ ստացողների թվաքանակը, այդ թվում՝	47094	46675	45258	44672	44858
ծերության	9426	8720	7818	6953	6279
հաշմանդամության	19840	20010	19126	20028	29889
մանկուց հաշմանդամ	8298	8668	9215	8775	8566
կերակրողին կորցրած կենսաթոշակառուների ընտանիքներ	9530	9277	9099	8916	8690

Ներկայումս կենսաթոշակային համակարգը հիմնականում ֆինանսավորվում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվին: Պետական բյուջեից ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ներքին գորքերի, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հրամանատարական անձնակազմի և շարքային զինծառայողների կենսաթոշակները, իսկ 2003թ. սկսած՝ նաև սոցիալական կենսաթոշակները, որոնց համար 2003թ. պետական բյուջեով նախատեսվել է 2 մլրդ դրամ, 2004թ.՝ մոտ 3 մլրդ դրամ, իսկ 2005թ.՝ 2.6 մլրդ դրամ: Պարտադիր սոցիալական վճարները նաև մի շարք այլ սոցիալական ծրագրերի (պետական զբաղվածության ծրագիր, ներառյալ գործազրկության նպաստներ, կենսաթոշակառուների թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում, հիվանդության և մայրության նպաստներ) ֆինանսավորման աղբյուր են: Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը բարձրացնելու երեք հնարավոր ուղիներից՝ պարտադիր սոցիալական վճարներ մուծողների քանակը ավելացնելու, ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցներից կենսաթոշակներ ստացողների քանակը կրճատելու և վճարների չափը բարձրացնելու, որպես հիմնականը ընտրված է երկրորդը: Թոշակառուների թիվը բնակչության ընդհանուր կազմում բավականաչափ մեծ է: Աշխարհում տարեցտարի բնակչության թվի տեսակարար կշիռը թեքվում է դեպի թոշակային տարիք ունեցողները, և նկատվում է դրանց հարաբերական աճ, չնայած Հայաստանի ներկայիս կենսաթոշակային համակարգի կարևոր հատկանիշներից մեկը տարիքային կենսաթոշակառուների թվաքանակի տարեցտարի շարունակվող նվազումն է: Այսպես՝ կենսաթոշակառուների թիվը 2001–2004թթ. կրճատվել է 12.6 հազարով (տե՛ս աղյուսակ 7.10.):

Աղյուսակ 7.10.

Աշխատավարձ, կենսաթոշակ հարաբերակցությունը ԶԶ–ում

	2001	2002	2003	2004	2005
Ընդամենը կենսաթոշակառուներ	552.9	543.6	543.7	540.3	540.224
Տնտեսությունում զբաղվողների թվաքանակը մեկ կենսաթոշակառուի հաշվով (մարդ)	2.3	2.0	2.0	2.1	2.1
Ամսական կենսաթոշակի միջին չափը (դրամ)	4574	5748	7452	8672	9724.0
Ամսական աշխատավարձի միջին չափը (դրամ)	24483	27324	34783	41976	63.000
Միջին կենսաթոշակ /միջին աշխատավարձ	0.2	0.2	0.2	0.2	0.15

Կենսաթոշակառուների քանակի կրճատման միտումը հնարավորություն կտա պահպանել կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը, եթե պահպանվեն պարտադիր սոցիալական վճարների ներկայիս դրույքները, և էականորեն չպակասի ԶԶ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին արդյունավետ մուծումներ կատարողների թիվը: Պաշտոնապես զբաղված ճանաչված անձանցից 40%–ից պակասն են սոցիալական մուծումները կատարում, մինչդեռ այդ ցուցանիշը, օրինակ, Սլովենիայում 1997թ. հավասար է եղել 84.3%–ի, իսկ ԱՄՆ–ում՝ 91.4%–ի: Այսպիսով՝ մուծումներ կատարողների ավելացման խնդրի լուծումը անհատականացված կենսաթոշակային համակարգին անցնելու մեջ է, որտեղ կենսաթոշակի չափը ուղղակի կախվածության մեջ կդրվի ստացված աշխատավարձից և կատարված սոցիալական վճարներից:

Թոշակային համակարգը Հայաստանում շարունակում է մնալ ոչ կենսունակ՝ կապված այն բանի հետ, որ միջին կենսաթոշակ/միջին աշխատավարձ ցուցանիշը ԶԶ–ում չի գերազանցել 25%–ը, իսկ ԽՍՀՄ–ի գոյության վերջին տարիներին կազմում էր 50%: Չնայած վերջին տարիներին կենսաթոշակների չափի բարձրացումը շարունակվել է, և 2004թ. միջին կենսաթոշակի չափը կազմում է 8672 դրամ (աճը նախորդ տարվա միջինի համեմատ՝ 16.4%), այնուամենայնիվ, թոշակները Հայաստանում ներկայումս ամենափոքրերից են ԱՊՀ երկրներում, միջին կենսաթոշակը չի ապահովում սպառումը նույնիսկ նվազագույն պարենային զամբյուղի մակարդակով: Այսպիսով՝ ԶԶ կենսաթոշակային համակարգը, որը ներկայումս կենսաթոշակներով ապահովում է բնակչության մոտ 17%–ին, դիտարկվում է որպես հանրապետության սոցիալական կառուցվածքի հիմնաքար, մինչդեռ զործող կենսաթոշակային համակարգից դժգոհ են բոլորը, կենսաթոշակները գնողունակության տեսակետից խիստ ցածր են, իսկ ապահովագրական վճարումներ կատարողների համար ապահովագրական վճարների դրույքաչափերը բարձր են, և իրականում վճարվող աշխատավարձերը չեն հայտարարագրվում:

Նշենք, որ պետական կենսաթոշակային համակարգի վերափոխումներն անհրա-

Ժեշտաբար ենթադրում են նաև լրացուցիչ (կամավոր) կենսապահովագրության համակարգի ներդրում և զարգացում: Դրա համար անհրաժեշտ են պետության աջակցության և հսկողության ապահովում, քանի որ առանց հստակ երաշխիքների համակարգի և պետության կարգավորիչ դերի ամբայության այս համակարգը չի կարող ձևավորվել: Աշխարհի բազմաթիվ երկրների կենսաթոշակային համակարգերում տեղի ունեցող փոփոխությունները վկայում են տարեցների եկամուտների աջակցման գործում ոչ պետական հիմնադրամներից տրվող կենսաթոշակների աճող նշանակության մասին:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները պետք է տարվեն հետևյալ ուղղությամբ.

- բյուջեից կենսաթոշակային ապահովությանը տրամադրվող միջոցների ավելացում մինչև ՀՆԱ–ի 3.5–4% նպատակակետը,
- կենսաթոշակառուների թվի կրճատմանը զուգընթաց պարտադիր սոցիալական վճարներ կատարողների թվի ավելացում՝ արդյունքում ակնկալելով համակարգի ծանրաբեռնվածության գործակիցը 1–ից իջեցնել մինչև 0.5 նպատակակետը,
- միջին կենսաթոշակ, միջին աշխատավարձ հարաբերակցության բարձրացում,
- նվազագույն կենսաթոշակի և նվազագույն սպառողական զամբյուղի համապատասխանեցում,
- կենսաթոշակների միջին չափի ավելացում՝ սոցիալական արդարության սկզբունքի պահպանությամբ, այսինքն՝ բարձրացումը պետք է իրականացվի ի հաշիվ աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա համար տրվող հավելումների,
- աշխատավարձի ֆոնդի իրական չափի հաշվառում:

Այս համակարգի ֆինանսական բարելավման մի քանի ուղիներ կան, և դրանց հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- կառավարման համակարգի բարելավում, լիազորությունների և պատասխանատվության հստակ սահմանում,
- ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- կամավոր կենսաապահովագրության համակարգի արմատավորում:

1999թ. հունվարի 1–ից 77 կառավարության որոշմամբ ներդրված ընտանեկան նպաստի համակարգը հանդիսանում է աղքատության և անհավասարության կրճատման բավական արդյունավետ գործիք¹: Ընտանեկան նպաստի նախատեսվող ծավալները և դրանք ստացող տնային տնտեսությունների քանակը պայմանավորված են շատ աղքատ բնակչության քանակի կրճատման հրամայականով, որը և ընտանեկան նպաստների ներդրման հիմնական պատճառն էր:

Մյուս կողմից, շատ աղքատ տնային տնտեսությունների կրճատման հետևանքով կրճատվում է նաև նպաստառու տնտեսությունների քանակը, որը հնարավորություն է տալիս այդ կրճատումների հաշվին էականորեն բարձրացնել նպաստ-

¹ «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման – վճարման կար ի մասին» թիվ 562 որոշում:

ների չափերը. 1999 թ.՝ 21.1 մլրդ դրամ և 230 հազ. ընտանիք, 2003 թ.՝ 12.4 մլրդ դրամ և 179 հազ. ընտանիք, իսկ 2004թ.՝ 16.1 մլրդ դրամ և 140 հազ. ընտանիք: 2004 թ. ընտանեկան նպաստի միջին չափը կազմել է 8 960 դրամ՝ նախորդ տարվա 6 319 դրամի փոխարեն, իսկ նպաստի չափի աճը նախորդ տարվա համեմատ կազմում է ավելի քան 41.8%: Ընտանեկան նպաստների պետական քաղաքականությունը պետք է նախատեսի նպաստառու ընտանիքների քանակի պարբերաբար համապատասխանեցում շատ աղքատ տնային տնտեսությունների քանակին: Այդ հանգամանքը պահանջում է, որ սոցիալական ծառայությունները նաև իրենք բացահայտեն աղքատներին: Ընտանեկան նպաստների քաղաքականության բնագավառում պետք է նախատեսվեն նաև հետևյալ միջոցառումները.

1. «Ընտանեկան նպաստների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով կարգավորվելու են ընտանեկան նպաստների հետ կապված բոլոր այն հարցերը, որոնք ներկայումս կարգավորվում են կառավարության որոշումներով և ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ենթաօրենսդրական ակտերով,
2. տեղեկատվության ստացման օպերատիվության բարձրացում, սոցիալական ծառայությունների տեղեկատվական բազաների ցանցի ստեղծում,
3. նպաստների հարցերով բողոքարկման գործող համակարգի բարեփոխում ստեղծելով պարզ, մատչելի, թափանցիկ և արդարացի համակարգ,
4. ընտանեկան նպաստների նշանակման և վճարման վերահսկման (մոնիտորինգի) գործուն մեխանիզմների մշակում, կոռուպցիայի և հնարավոր սուբյեկտիվիզմի կանխարգելում:

Մշակույթը դիտվում է որպես սոցիալական խմբերի և կառույցների, աշխարհընկալման, վարքերի, հմտությունների, մշակութային ժառանգության մի ամբողջություն: Մշակույթի բնագավառը հիմնարար նշանակություն ունի անհատի ու հասարակության հոգևոր, ազգային արժեքների պահպանման ու զարգացման գործում: Պետական բյուջեից միջոցներն ուղղվում են հանրային հեռուստատեսության, ռադիոյի և հրատարակչության ֆինանսավորմանը և մարզերում մշակութային և արվեստի կենտրոնների պահպանմանը: Վերջին տարիներին այս բնագավառում բյուջետային հատկացումները ավելացել են: Համեմատականը այլ երկրների հետ ներկայացված է աղյուսակ 7.11.–ում:

Աղյուսակ 7.11.

ԱՊՀ երկրներում պետական ծախսերի կառուցվածքի համեմատականը մշակույթի ոլորտում

	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Դրոզդստան	Մոլդովա	Տաջիկստան
2002 թ.	3.2%	2.7%	2.5%	2.2%	2.1%	0.0%

2004 թվականին մշակույթի բնագավառում ծախսերը կազմել են 8.5 մլրդ դրամ՝ 3.7%–ով ավել լինելով բյուջեի տարեկան ծրագրով նախատեսված ծախսերի ցուցանիշից: Միաժամանակ, 2003 թ. փաստացի կատարված ծախսերի համե-

մատ այս ծախսերը ավել են եղել մոտ 15%–ով: 2005 թվականին պետական բյուջեով հաստատվել է, 2004 թվականի համեմատ, ֆինանսավորման ևս 23.5% աճ (մոտ 2 մլրդ դրամ), 2006 թվականին հաստատվել է 13.6 մլրդ դրամ (տե՛ս աղյուսակ 9)

Այս բնագավառում անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

- աշխատանքներ պետք է տարվեն մշակույթի տների և գրադարանների վերանորոգման ու կահավորման, ինչպես նաև տեղեկատվական ծառայությունների ստեղծման ուղղությամբ,
- ոլորտում պետք է նախատեսվի մշակութային կազմակերպությունների կառավարման և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում,
- անհրաժեշտ է ապահովել ազգային մշակութային արժեքների շարունակական պահպանում:

Ազգային ինքնության ամրապնդման, Հայաստանի քաղաքակրթական իմիջի բարձրացման, ինչպես նաև մշակութային զբոսաշրջության հեռանկարայնության քարոզչության առումով կարևոր ավանդ կունենան քաղաքակրթական նշանակություն ունեցող պատմամշակութային մի քանի հուշարձանների մասնակցային պեղումները, վերականգնումն ու ցուցադրությունը: Այսպիսով՝ անհրաժեշտ է իրականացնել մշակութային համակարգերի վերակազմավորման, մշակութային հիմնարկների խնդիրների հստակեցման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով դրանց կազմափրավական կարգավիճակների վերանայման աշխատանքները:

Կառավարության սոցիալական ծախսերի կատարումը միշտ մնացել է բյուջեի կատարման ամենախոցելի մասը: Պակաս եկամուտների և դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների անբավարարության պայմաններում պետության կողմից հատկացվող միջոցները միշտ չէ, որ արդյունավետ կերպով ուղղվել են բնակչության լայն զանգվածների, հատկապես սոցիալական անապահով խավերի հոգսերի թեթևացմանը: Գոյություն ունեն սոցիալական քաղաքականության մի քանի միջոցառումներ, որոնք պետությունը կարող է և պարտավոր է իր պատասխանատվությամբ իրականացնել անհապաղ և ամենամոտ ժամանակներում: Գնահատելով ներկա իրավիճակը և նպատակ ունենալով սոցիալական քաղաքականությունը համապատասխանեցնել ու ծառայեցնել տարբեր ոլորտների ներդաշնակ զարգացմանը, բնակչության սոցիալական պաշտպանվածության հիմնախնդիրների աստիճանական լուծմանը՝ կարևոր է դառնում կառավարության տրամադրության տակ գտնվող միջոցների անբավարարության պայմաններում սոցիալական զարգացման այն առաջնահերթ ուղղությունների ճիշտ ընտրությունը, որոնք կորոշեն բյուջետային հատկացումների հիմնական նպատակաուղղվածությունը: Մի քանի անհետաձգելի միջոցառումներ, որոնցով շահագրգռված է ողջ բնակչությունը, պետությունը պարտավոր է գործի դնել սուղ ֆինանսական ռեսուրսները մոբիլիզացնելու, առավել արդյունավետ օգտագործելու միջոցով:

Աղյուսակ 7.12.

Սոցիալ–մշակութային ոլորտի ծախսերը 2001–2006 թվականներին

Ցուցանիշներ	Փաստացի կատարողական					Պլան
	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.
ՀՆԱ (մլրդ դրամ)	1175.5	1362.5	1623.3	1893.4	2288.0	2400.7
Սոցիալ–մշակութային ոլորտի ծախսերը (մլրդ դրամ)	74.245.2	74.787.1	97.793.5	115.609.7	146.460.7	191.186.0
<i>Տոկոս ՀՆԱ–ի նկատմամբ</i>	6.3	5.5	6.0	6.1	6.4	8.0
<i>Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում</i>	31.5	28.6	31.4	34.6	35.1	39.7
1. Գիտություն – կրթություն (մլն դրամ)	27.068.5	28.745.8	34.849.3	47.445.5	60.827.5	82.283.2
<i>Տոկոս ՀՆԱ–ի նկատմամբ</i>	2.3	2.1	2.1	2.5	2.7	3.4
<i>Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում</i>	11.5	11.0	11.2	14.2	14.6	17.1
2. Առողջապահություն (մլն դրամ)	15.745.6	15.955.8	19.598.6	24.691.2	31.079.7	39.435.2
<i>Տոկոս ՀՆԱ–ի նկատմամբ</i>	1.3	1.2	1.2	1.3	1.4	1.6
<i>Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում</i>	6.7	6.1	6.3	7.4	7.4	8.2
3. Սոցապահովա րություն – սոցապահովություն (մլն դրամ)	26.108.5	23.792.0	29.255.1	34.987.5	44.145.9	55.869.9
<i>Տոկոս ՀՆԱ–ի նկատմամբ</i>	2.2	1.7	1.8	1.8	1.9	2.3
<i>Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում</i>	11.1	9.1	9.4	10.5	10.6	11.6
4. Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ – կրոն (մլն դրամ)	5.322.6	6.293.5	14.090.5	8.485.5	10.407.6	13.597.7
<i>Տոկոս ՀՆԱ–ի նկատմամբ</i>	0.5	0.5	0.9	0.5	0.5	0.6
<i>Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ</i>	2.2	2.4	4.5	2.5	2.5	2.8

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկել և մեկնաբանել բյուջեի կարևորագույն եկամուտները, ցույց տալ դրանց դերը:
2. Ի՞նչ է նշանակում հարկը, որո՞նք են ՀՀ-ում կիրառվող հիմնական հարկատեսակները, ինչպե՞ս են դրանք դասակարգվում:
3. Որո՞նք են պետական բյուջեի ընթացիկ եկամուտները, ինչպիսի՞ կազմ ու կառուցվածք ունեն դրանք ՀՀ-ում:
4. Որո՞նք են անուղղակի հարկերը, ՀՀ-ում դրանք ինչպե՞ս են հաշվարկվում և գանձվում:
5. Ինչպիսի՞ ուղղակի հարկեր կան ՀՀ-ում, դրանց հիմնական տեսակները, ինչպե՞ս են հաշվարկվում:
6. Որո՞նք են բյուջեի ոչ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը:
7. Պետության և տեղական ինքնակառավարման մարմինների ֆունկցիաների կատարման համար ինչպիսի՞ ծախսեր են պահանջվում, և ՀՀ-ում դրանք ի՞նչ խմբերի են բաժանվում:
8. Որո՞նք են պետական բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման խմբերը:
9. Ի՞նչ է նշանակում բյուջեի կատարման գործընթաց, և որո՞նք են առաջնահերթություն ունեցող ծախսերի տեսակները:

ԳԼՈՒԽ 8

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

8.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Հանրապետության անկախությունը հռչակելուց հետո Հայաստանի Հանրապետությունում ծավալված տնտեսական բարեփոխումները չչրջանցեցին նաև հարկաբյուջետային բնագավառը: Եվ դա պատահական չէր, քանի որ երկրի տնտեսական և քաղաքական կայունությունը և բնականոն զարգացումը մեծապես և սերտորեն կապված են պետության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և հրապարակային գոյացման, հաշվառման, ծրագրավորման, օգտագործման և վերահսկողության գործընթացների հետ:

Այդ գործընթացները կանոնակարգելու և դրանց իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ հանրապետությունում ձեռնարկվել են գանազան բարեփոխումներ, որոնց շարքից հատուկ առանձնացման արժանի են կատարված հետևյալ քայլերը.

1. *Ձևավորվեց հարկաբյուջետային համակարգի հիմք ծառայող իրավական բազան:* Դրան էականորեն նպաստեց 1995 թվականին համաժողովրդական հանրաքվեի միջոցով հանրապետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումը: Հայաստանի Հանրապետության ֆինանսաբյուջետային իրավունքներն ըստ էության կանխորոշված էին ՀՀ Սահմանադրությամբ, որը հանդիսացավ բյուջետային իրավունքի հիմնադիր ակտը: Հենց Սահմանադրության մեջ ամրագրվեցին կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքների հիմունքները: Ժամանակի ընթացքում Սահմանադրությունում ամրագրված հիմնադրույթներն իրենց զարգացումը ստացան ընդունված տարբեր օրենսդրական ակտերում:

Հարկաբյուջետային գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացքն ու արդյունքները մեծապես կախված են այդ գործընթացը կարգավորող հստակ և ամբողջական օրենսդրական հիմքերի առկայությունից: Մասնավորապես, օրենսդրորեն պետք է լուծում ստանային հետևյալ հիմնական խնդիրները.

- ա) սահմանազատվեին օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների գործառույթները և սահմանվեին փոխհարաբերությունները հարկաբյուջետային գործընթացում,
- բ) սահմանազատվեին և սահմանվեին գործադիր իշխանության մարմինների իրավասությունները և պատասխանատվությունները հարկաբյուջետային գործընթացի շրջանակներում,
- գ) սահմանազատվեին կենտրոնական և տեղական իշխանության մարմինների գործառույթները և պատասխանատվությունները, ինչպես նաև սահմանվեին փոխհարաբերությունները հարկաբյուջետային գործընթացում,

դ) սահմանվեին իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից համապատասխան բյուջեներ վճարման ենթակա հարկերի և պարտադիր այլ վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը, հարկման օբյեկտները և վճարողները, հաշվարկման և վճարման կարգերը, հարկային արտոնությունների տրամադրման դեպքերը և կարգերը,

ե) սահմանվեին տնտեսվարող սուբյեկտների իրավասությունները և պատասխանատվությունները իրենց հարկային պարտավորությունների կատարման բնագավառում:

Հիմք ընդունելով Սահմանադրությունը՝ մշակվեցին և ընդունվեցին հարկային օրենքները, բյուջետային համակարգի, տեղական ինքնակառավարման, ֆինանսական համահարթեցման, զանձապետական համակարգի, գնումների, վերահսկիչ պալատի, ստուգումների մասին օրենքները, ինչպես նաև Ազգային ժողովի գործունեության կանոնակարգը սահմանող օրենքը: Կառավարության և պետական կառավարման հանրապետական մարմինների կողմից ընդունվեցին նաև վերը նշված օրենքների կիրարկումն ապահովող բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր:

Արդյունքում ձևավորվեց հարաբերությունների մի ամբողջական իրավական դաշտ, որը սահմանում է հարկաբյուջետային գործընթացի մասնակիցներին, կարգավորում է նրանց միջև նշված գործընթացի շրջանակներում առաջացող իրավահարաբերությունները, սահմանազատում և սահմանում նրանց իրավասությունները և պատասխանատվությունները:

Բյուջետային հարաբերությունների սահմանման և կարգավորման ոլորտում անչափ կարևոր քայլ հանդիսացավ 1997 թվականին «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Դիտարկենք այդ օրենքով կարգավորվող հիմնական հարցերը:

Նախ և առաջ հարկ է նշել, որ նշված օրենքը սահմանում է բյուջետային համակարգը և կանոնակարգում բյուջետային գործընթացը, ընդ որում այդ օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ բյուջետային համակարգի բոլոր մակարդակների վրա:

Նշված օրենքում տրվել են ՀՀ բյուջետային համակարգի մաս կազմող բյուջեների ընդհանուր սահմանումը, այդ համակարգի հիմքում դրվող սկզբունքները: Մասնավորապես բյուջետային ծրագրավորման հիմք են հանդիսանում հետևյալ սկզբունքները.

- ա) բյուջեների հաշվեկշռվածության սկզբունքը, ըստ որի՝ բյուջեով նախատեսված ելքերի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի բյուջեով նախատեսված մուտքերի ընդհանուր ծավալը,
- բ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածության սկզբունքը, ըստ որի՝ բյուջետային ելքերն ամբողջությամբ պետք է ծածկվեն բյուջետային մուտքերով,
- գ) բյուջեների իրատեսության սկզբունքը, որը նշանակում է համապատասխան տարածքի (երկրի, համայնքի) սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման ցուցանիշների հավաստիությունը և բյուջետային մուտքերի ու ելքերի հաշվարկման իրատեսությունը,
- դ) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը, որը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել

բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ նախատեսված արդյունքի կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալի օգտագործմամբ լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից,

ե) բյուջեների հրապարակայնության սկզբունքը, որը նշանակում է հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը, բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, բյուջեների նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկություն հասարակության և զանգվածային լրատվության միջոցների համար,

զ) բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը, որը նշանակում է, որ բյուջետային միջոցներն օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ, ընդ որում բյուջետային միջոցների հատկացման ժամանակ օրենսդրության շրջանակներից դուրս ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բյուջեով նախատեսված միջոցների հասցեագրվածության խախտմանը կամ այդ միջոցների ուղղմանը բյուջեով չնախատեսված նպատակներին, որակվում է որպես օրենսդրության խախտում:

Վերը նշված օրենքով տրվել են սահմանումներ բյուջետային օրենսդրությունում օգտագործվող այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են բյուջետային եկամուտները, ծախսերը, մուտքերը և ելքերը, դեֆիցիտը և հավելուրդը, բյուջեի տարեսկզբի մնացորդը, ընթացիկ և կապիտալ ծախսերը, բյուջետային վարկերը և փոխատվությունները, բյուջետային երաշխիքները, բյուջետային գործընթացը ՀՀ համախմբված բյուջեն:

Առանձին գլուխներ նվիրված են պետական բյուջեին, պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին և համայնքների բյուջեներին: Այդ գլուխներում տրվել է բյուջետային գործընթացի ընդհանուր նկարագրությունը՝ հաշվի առնելով վերջինիս իրականացման առանձնահատկությունները համակարգի տարբեր մակարդակներում, ինչպես նաև նույն մակարդակի բաղկացուցիչ մաս կազմող տարբեր օղակներում:

Մասնավորապես, մանրամասն ներկայացվել են բյուջեների կազմման և քննարկման գործընթացները, վերջինիս մասնակիցները, նրանց դերերը, գործընթացի իրականացման փուլերը և ժամկետները: Օրենքը սահմանում է բյուջեների նախագծերի ներքին կառուցվածքը, իսկ պետական բյուջեի կազմման հետ կապված՝ նաև պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կառուցվածքը և այդ փաստաթղթերին ներկայացվող բովանդակային պահանջները: Օրենքը հստակ սահմանում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվող տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի, ինչպես նաև համայնքների ավագանիների կողմից ընդունվող տվյալ տարվա համայնքի բյուջեի ձևաչափերին ներկայացվող նվազագույն պահանջները:

Օրենքով հստակ սահմանազատված են կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների տնօրինման իրավասությունները: Մասնավորապես, օրենքը սահմանում է պետական, պարտադիր սոցիալական ապահովագրության և համայնքների բյուջեների եկամուտների, ինչպես նաև այդ բյուջեների դեֆիցիտների ֆինանսավորման նպատակով ներառվող հնարավոր աղբյուրներ:

րը, ինչպես նաև ըստ առանձին բյուջեների որոշ մուտքերի մասհանման սահմանաչափերը:

Օրենքը սահմանում է նաև համապատասխան բյուջեներից կատարվելիք ծախսերի հնարավոր ընդհանուր ուղղությունները: Ընդ որում, հարկ է նշել, որ համայնքների բյուջեների դեպքում օրենքի այդ դրույթները գործում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքի ղեկավարի և ավագանու անդամների լիազորությունների շրջանակներում: Բյուջեներից իրականացվող ծախսերի ուղղությունները սահմանելու հետ մեկտեղ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է դրանց առանձին տեսակների գծով բյուջեներում նախատեսվելիք սահմանաչափերի առավելագույն (օրինակ՝ պահուստային ֆոնդի դեպքում) կամ նվազագույն (ճանապարհների ընթացիկ նորոգման և պահպանման, համայնքներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների դեպքերում) սահմանները:

Պատշաճ խորությամբ են ներկայացվել պետության կողմից համայնքներին տրվող հատկացումների տեսակների և բնույթի վերաբերյալ դրույթները:

Առանձին ներկայացված են համապատասխան բյուջեների կատարման գործընթացները, վերջիններիս մասնակիցները, նրանց դերերը: Սահմանվել են նաև բյուջետային դասակարգման խոշորացված տարրերը, և սահմանվել է այն մարմինը, որն իրավասու է սահմանել դասակարգման մանրամասները և կիրառման կարգը: Օրենքով սահմանված են տարեկան հաշվետվություն կազմելու և այն համապատասխան ներկայացուցչական մարմնին ներկայացնելու ժամկետները, այդ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները: Օրենքում կարևորվել է նաև բյուջեների կատարման նկատմամբ հսկողությանը և վերահսկողությանը վերաբերող հարցերը: Վերարտադրելով Սահմանադրությամբ սահմանված այն դրույթը, որով ներկայացուցչական մարմիններին վերապահվել է իրավասություն համապատասխան բյուջեների կատարման նկատմամբ իրականացնել վերահսկողություն, օրենքը կարգավորել է նաև կառավարության լիազորությունները ինչպես հսկողության (պետական բյուջեի դեպքում), այդպես էլ վերահսկողության (համայնքների բյուջեների դեպքում) բնագավառներում: Օրենքով սահմանված են նաև բյուջետային գործընթացի հրապարակայնությունն ապահովող դրույթներ:

Հատկանշական է, որ այս օրենքը գործում է մի շարք այլ օրենքների՝ բյուջետային գործընթացը կանոնակարգող և այս օրենքը լրացնող առանձին դրույթների հետ զուգահեռ: Նման օրենքների շարքին կարելի է դասել.

- «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, որի ամբողջ երկու գլուխներ կանոնակարգում են բյուջետային գործընթացի իրականացումը Ազգային ժողովում:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որով հստակեցվեց և առավել թափանցիկ և հրապարակային դարձվեց պետական գնումների կազմակերպման և իրականացման ընթացակարգը, նախադրյալներ ստեղծվեցին ապահովելու պետության և համայնքների համար տնտեսապես շահավետ պայմաններով գնումների կատարման, գնումների ընթացակարգերի կազմակերպման միասնական կանոնների կիրառման, պետական կարգավորան և միջճյուղային համակարգման համար: Նշված օրենքը նպաստեց նաև բյուջեների կատարման հրապարակայնության և թափանցիկության բարելավմանը:

• «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին գանձապետական համակարգը, հստակեցվեցին և կանոնակարգվեցին գանձապետական համակարգի՝ բյուջեների կատարման բնագավառում գործունեության ընթացակարգերը: Բացի այդ, նշված օրենքը ուժեղացրեց ուղղակի կապը գանձապետարանի և գերատեսչությունների միջև՝ գերատեսչության գլխավոր ֆինանսիստի նոր ինստիտուտի ներդրմամբ: Գլխավոր ֆինանսիստը, ըստ այս օրենքի պահանջների, պետք է համակարգի համապատասխան գերատեսչության ֆինանսական գործունեության հետ կապված բոլոր հարցերը, հետևի գերատեսչության ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությանը գործող նորմերին, ապահովի ներքին աուդիտի և հաշվետվական համակարգերի ներդրումը՝ միաժամանակ պարտավոր լինելով կատարել ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հանձնարարությունները՝ ըստ էության հանդես գալով վերջինիս ներկայացուցչի դերում այդ գերատեսչությունում:

• «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգեց կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները հանրապետության շուրջ հազար համայնքների բյուջեներին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման բնագավառում, ինչպես նաև հստակեցրեց համայնքների բյուջեներին դոտացիաների հատկացման գործոնները և դոտացիաների չափերի հաշվարկման մեխանիզմը:

• Տեղական ինքնակառավարման բնագավառում հարաբերությունները կարգավորող կարևորագույն օրենքներից մեկը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որում իրենց զարգացումը ստացան Սահմանադրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման հիմնադրույթները, ձևակերպվեց «տեղական ինքնակառավարում» հասկացությունը, սահմանվեցին հանրապետությունում տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքները, սահմանվեցին տեղական ինքնակառավարման մարմինների դերերը կառավարման համակարգում, կանոնակարգում ստացան համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունները, սահմանազատվեցին վերջիններիս իրավասությունների և պարտականությունների շրջանակները, ընդլայնված ձևով ներկայացվեցին համայնքի ավագանու հանդեպ համայնքի ղեկավարի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հանրության առջև հաշվետու լինելու մասին դրույթները: Նշված օրենքով ընդհանուր առմամբ կանոնակարգում ստացան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, սահմանվեցին համայնքային սեփականության գույքի գոյացման աղբյուրները, ինչպես նաև դրանց տեսակները: Այդ օրենքով սահմանում տրվեց նաև «համայնքային բյուջե» հասկացությանը, ուրվագծվեցին համայնքների բյուջեների ձևավորման հիմնական աղբյուրները, համայնքների բյուջեների քննարկման, հաստատման, կատարման և վերահսկողության իրականացման ընթացակարգերի ընդհանուր դրույթները: Օրենքով ամրագրվեց տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը ստեղծելու իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող միջհամայնքային միավորումներ՝ որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և ծախսերը նվազեցնելու նպատակով:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, հանդես գալով որպես բյուջետային բնագավառում

հարաբերությունները սահմանող առանցքային օրենք, հանդիսանում է հենքային այլ օրենքներում այդ բնագավառին վերաբերող դրույթների նախատեսման դեպքում դրանով իսկ ապահովելով բյուջետային օրենսդրությունում համանման դրույթների համահունչ լինելը:

2. Սկսվեցին պետական կառավարման համակարգի բարեփոխումները:

Անցումային ժամանակաշրջանի դժվարությունները և ինստիտուցիոնալ խնդիրների բազմազանությունը թույլ չտվեցին, որպեսզի պետական կառավարման համակարգում (ներառյալ դատաիրավական համակարգը) ընթացող բարեփոխումները տային արագ և շոշափելի արդյունքներ: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն այլ ոլորտների, այս բնագավառում բարեփոխումներն սկսվեցին իրականացվել համեմատաբար ավելի ուշ և իրենց վրա կրում էին նախկին կենտրոնացված կառավարման համակարգի ազդեցությունը: Այս ամենը բացասաբար է անդրադարձել պետական կառավարման համակարգի արդյունավետության վրա: Քաղաքականության իրականացման, որոշումների կայացման գործընթացում շարունակում է բարձր մնալ կենտրոնացվածության աստիճանը (բացակայում է թափանցիկությունը, չի գործում հաշվետվելիության արդյունավետ համակարգ, չի ապահովվում քաղաքացիական հասարակության լիարժեք մասնակցությունը):

Հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության տեսանկյունից դեռևս ցածր են դրանց մատուցման որակը և մատչելիությունը բնակչության, հատկապես աղքատ շերտերի համար: Հանրային կառավարման և դատաիրավական համակարգի անկատարությունը, անցումային այլ հիմնախնդիրների հետ զուգակցված, պայմանավորեցին սովետային տնտեսության և կոռուպցիայի երևույթի տարածումը Հայաստանում:

Հանրային կառավարման համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարությունը վերջին տարիներին որդեգրել է բարեփոխումների նոր ռազմավարություն, որն իրականացվում է հետևյալ երեք ուղղություններով՝

- պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներ,
- քաղաքացիական ծառայության ներդրում,
- ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներն ընթացել են «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա, որի արդյունքում, սկսած 2002 թվականից, իրականացվել և ներկայումս շարունակվում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների և պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացը: Կառավարությանն առընթեր պետական կառավարման մի շարք հանրապետական մարմիններ, ինչպես նաև նախարարությունների ենթակայության առանձին պետական հիմնարկներ վերակազմակերպվել են նախարարությունների աշխատակազմերում գործող առանձնացված ստորաբաժանումների՝ զետեսչությունների և տեսչությունների, իսկ առանձին մարմիններ էլ վերակազմա-

կերպվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Այսինքն՝ կառավարչական գործառույթներ իրականացնող մարմինները տարանջատվել են պետական գործառույթներ իրականացնող մարմիններից: Բացի այդ, ստեղծվել են պետական կառավարման նոր մարմիններ, հստակեցվել են նախարարությունների կանոնադրական խնդիրները, և միասնականացվել են նրանց աշխատակազմերի կառուցվածքը:

Քաղաքացիական ծառայության ոլորտում բարեփոխումներն իրականացվել են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և մի շարք այլ իրավական ակտերի հիման վրա: Ըստ դրանց՝ քաղաքացիական ծառայողները տարանջատվել են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական և տեխնիկական սպասարկում իրականացնողներից, սահմանվել են քաղաքացիական ծառայության մուտքի և ծառայությունից ազատվելու հավասար պայմանները, ապահովվել են մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները, քաղաքացիական ծառայության կառուցվածքում, հրապարակայնությունը, հստակեցվել են քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պատասխանատվության սահմանները և քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը: Հարկ է հիշատակել, որ ընդունվել է նաև «Համայնքնային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է համանման նորմեր տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների համար:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների կարևորագույն ուղղություններից մեկը, որը նաև ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրի հիմնական միջոցառումներից մեկն է, պետական ծառայողների աշխատավարձերի կարգավորումն ու բարձրացումն է, որն իրականացվում է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:

3. *Իրավական դաշտում վերը նշված ձեռքբերումների և պետական կառավարման համակարգի բարեփոխումների հետ հանդերձ բյուջետային գործընթացի կազմակերպման և իրագործման բնագավառում ի հայտ եկան նաև մի շարք հիմնախնդիրներ:* Այսպես՝ կառավարության կողմից 2002–2003թթ. ընթացքում կատարվեց 1997–2001թթ. ժամանակահատվածում իրականացված պետական ծախսերի ուսումնասիրություն, որը, մասնավորապես, պետական բյուջեների նախագծերի կազմման բնագավառում բացահայտեց հետևյալը.

- բյուջետային փաստաթղթերում չեն նշվում նպատակները, իրականացվող միջոցառումները և ակնկալվող արդյունքները,
- չնայած այն հանգամանքին, որ բյուջետային համակարգի մասին օրենքը բավականին մեծ դեր է նախատեսում ճյուղային նախարարությունների համար, իրականում նրանց դերը բյուջետային գործընթացում խիստ սահմանափակ է:

Բյուջետային հատկացումների հարցում ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության խնդիրը հստակ չէ,

- կառավարությունը չի մասնակցում տարեկան պետական բյուջեի պատրաստման աշխատանքներին մինչև պետական բյուջեի նախագծի պատրաստ լինելը, ինչը բավական ուշ է, որպեսզի այն ունենա ռազմավարական դեր,
- պետական բյուջեն չի ներառում այն ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են անկանխիկ արտաքին դրամաշնորհների և նախարարությունների սեփական միջոցների հաշվին,
- տարեկան բյուջեները չեն պատրաստվում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիման վրա: Տարեկան պետական բյուջեի նախագիծը պատրաստելուց առաջ ճյուղային պետական կառավարման մարմինների համար ծախսերի սահմանաքանակներ չեն սահմանվում,
- բյուջետային հատկացումները խստորեն սահմանվում են ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման տարրերի: Գյուղային պետական կառավարման մարմինների ղեկավարները օժտված են այդ մարմինների գծով սահմանված հատկացումների օգտագործման ուղղություններում փոփոխություններ կատարելու նվազ իրավասություններով: Բյուջեները և դրանց կրճատումները հիմնականում պարտադրվում են վերևից: Պետական ծառայությունների մատակարարման համար պատասխանատու պաշտոնյաները չունեն բյուջեների սեփականության զգացողություն,
- ամբողջ պետական (բյուջետային) հատվածում ծրագրերի ծախսերի ծավալները բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով սահմանված նորմերի և նորմատիվների կիրառմամբ որոշելը նպաստում է հանրային ծառայությունների մատուցման անարդյունավետությանը:

8.2. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. Ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման անհրաժեշտությունը:

Ամփոփելով կառավարության կողմից 2002–2003 թթ. ընթացքում կատարված պետական ծախսերի իրականացման վերը նշված ուսումնասիրությամբ պետական բյուջեների նախագծերի կազմման բնագավառում բացահայտված հիմնական թերությունները՝ դրանք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- ոլորտային քաղաքականությունների մշակման լիազորությունները «դե-ֆակտո» ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում կենտրոնացված լինելու պայմաններում ճյուղային պետական կառավարման մարմինների մոտ թույլ է շահագրգռվածությունը իրենց ոլորտային քաղաքականությունները մշակելու և արդյունավետ իրականացնելու համար, ինչպես նաև անորոշ է այդ մարմինների պատասխանատվությունը նշված գործառույթների արդյունավետության ապահովման համար,
- հստակեցված չէ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության դերը պետական բյուջեի նախագծի կազմման գործում,

- պետական բյուջեի նախագծի ձևավորման համակարգում թույլ է կապը նախորդ տարիների բյուջեներում ընդգրկված և առաջիկա տարիներին նախատեսվելիք ծրագրերի միջև, որը պայմանավորված է անցումային շրջանի տնտեսություններով պետությունների համար բնորոշ զարգացման համալիր և ոլորտային՝ հետևողականորեն իրագործվող և վերանայվող միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրավորման համակարգի ձևավորման նախնական ժամանակաշրջանում առաջացող բարդություններով: Նշվածը ոչ միայն բարդացնում էր տվյալ տարում երկրի զարգացման ուղղությունների որոշումն ու դրանց շրջանակում ներդրության ծրագրերի ընտրության չափանիշների սահմանումը, այլև բացասականորեն է ազդում ինչպես այդ ծրագրերի, այնպես էլ պետական բյուջեի ամբողջ նախագծի հիմնավորվածության, իշխանությունների կողմից վարվող քաղաքականության կանխատեսելիության և հանրության համար մատչելիության, թափանցիկության և հրապարակայնության մակարդակի վրա,
- բացակայում էր փոխադարձ կապը կառավարության կողմից ընդունված քաղաքականությունների և պետական բյուջեներում դրանց իրագործմանն ուղղված ծրագրերի գծով նախատեսվող հատկացումների ծավալների միջև, որը հաճախակիորեն (հատկապես կառավարության կողմից նախապես ընդունված քաղականության իրագործման սցենարով նախատեսվածի դիմաց տվյալ տարվա պետական բյուջեով հատկացումների ծավալը պակաս չափով նախատեսելու դեպքում) հանգեցրել է քաղաքականության ծախսողմանը կամ անարդյունավետ ձևով իրականացմանը:

Արդյունքում առաջ եկան հետևյալ խնդիրները.

- ոլորտային քաղաքականությունների մշակման և իրականացման բնագավառում բյուջետային գործընթացի ապահովման կենտրոնացման խնդիրը: Այսինքն՝ անհրաժեշտություն դարձավ ոլորտային քաղաքականությունների մշակման գործընթացների իրականացման ծանրության կենտրոնը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից տեղափոխել ճյուղային համապատասխան պետական կառավարման մարմիններ. նկատի ունենալով, որ իրենք, ավելի քաջատեղյակ լինելով իրենց ոլորտներում առկա իրավիճակին, հիմնախնդիրներին և դրանց լուծման եղանակներին, առավել հիմնավորված ոլորտային քաղաքականության մշակման և դրա շրջանակներում իրականացվելիք ծախսային ծրագրերի կազմման համար բավարար կարողությունների տեր են հանդիսանում: Նշվածը հիմք կհանդիսանար նաև այդ ծրագրերի իրականացման ընթացքում պատշաճ արդյունքների հասնելու գործում ճյուղային մարմինների պատասխանատվությունը բարձրացնելու և հստակեցնելու համար: Դա հիմք կհանդիսանար նաև պետական բյուջեի նախագծի մշակման ընդհանուր գործընթացում ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության դերի փոփոխմանը՝ ճյուղային մարմիններին քաղաքականություն առաջարկողի դիրքերից անցում կատարելով ճյուղային մարմինների կողմից մշակված քաղաքականությունների, ինչպես նաև դրա հիման վրա կազմված բյուջետային հայտերի ռազմավարական վերլուծողի և այդ կապակցությամբ կառավարությանը՝ որպես ճյուղային մարմինների ընդդիմախոս, համապատասխան խորհրդատվություն տրամադրողի դիրքերին,
- բյուջետային գործընթացի իրականացման արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության մակարդակի բարձրացման համար հստակ նախադ-

րյալներ ստեղծելու նպատակով բյուջետային միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրավորման գործընթացը ներդնելու և զարգացնելու խնդիրը,

- պետական (բյուջետային) հատվածում ծրագրերի ծախսերի ծավալները բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով սահմանված նորմերի և նորմատիվների կիրառմամբ որոշելը նպաստում է հանրային ծառայությունների մատուցման անարդյունավետությանը:

Բ. Որո՞նք են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման ներդրման նպատակը և ճանապարհը:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ պետական հատվածի ֆինանսական ռեսուրսների կառավարման և միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակների և քաղաքականության գերակայությունների որոշման գործընթացների փոխհամաձայնեցումը հնարավոր է ապահովել միայն դրանք դիտարկելով և, հետևաբար, իրականացնելով որպես մեկ ամբողջական գործընթացի տրամաբանորեն մեկը մյուսին հաջորդող և փոխլրացնող փուլեր: Ընդ որում, այդ գործընթացի ընդհանուր կառավարման արդյունավետության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է, որ այդ երկու փուլի իրականացումն էլ դիտարկվի որպես բոլոր կառավարման մարմինների համար պարտադիր և շարունակական գործառույթ: Դրա հետ մեկտեղ ոչ պակաս կարևոր են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կարգավիճակը և այդ ծրագրի ու պետական բյուջեի նախագծի ցուցանիշների համապատասխանությունն ապահովելու ուղղությամբ լծակների (հրապարակայնություն, հաշվետվողականություն) ստեղծման հարցերը:

Վերը նշված հարցերի առավել արդյունավետ ձևով կարգավորման ձևը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացի ներառումն է ընդհանուր բյուջետային գործընթացում: Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացը, օրենսդրորեն ճանաչվելով որպես ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ անբախտելի լրացուցիչ մաս, դրանով իսկ օժտվում է բյուջետային գործընթացին բնորոշ բոլոր իրավական ատրիբուտներով, որի շնորհիվ ստանում է որոշակիացում ժամանակի և տարածության մեջ գործելու համար:

Գ. Որո՞նք են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման ներդրման առավելությունները բյուջետավորման մինչ այդ գործող միայն մեկ տարվա համար կատարվող ծրագրավորման համեմատությամբ:

Նշված համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս.

- նախադրյալներ ստեղծել, որպեսզի տարեկան պետական բյուջեին վերաբերող որոշումներն ընդունվեն՝ հաշվի առնելով ոչ թե մեկ տարվա, այլ միջնաժամկետ տնտեսական և հարկաբյուջետային հեռանկարը, և, հետևաբար, հիմնված լինեն ֆինանսական հնարավորությունների առավել իրատեսական գնահատման վրա,
- սահմանել միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և նպատակները,

որոնք կծառայեն որպես հիմք եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի և պարտքի վերաբերյալ կառավարության որոշումների համար՝ պարբերաբար վերահսկելու նշված նպատակների իրականացման ուղղությամբ աշխատանքների ընթացքը,

- ապահովել ավելի մեծ որոշակիություն պետական կառավարման մարմինների համար՝ սահմանելով ծախսերի կողմնորոշիչ չափաքանակները առաջիկա երեք տարիների կտրվածքով,
- մեծացնել պետության տնտեսական և հարկաբյուջետային դիրքին վերաբերող տեղեկատվության մատչելիությունը և թափանցիկությունը՝ հնարավորություն տալով բոլոր շահառուներին, այդ թվում՝ հանրությանը, խորհրդարանին, ներդրողներին ու միջազգային կազմակերպություններին, ավելի լավ հասկանալի (ա) ընդհանուր ռազմավարական գերակայությունները, որոնց հիման վրա մշակվելու է առաջիկա տարվա պետական բյուջեի նախագիծը, (բ) պետության հարկաբյուջետային դիրքը և այն պարամետրերն ու սահմանափակումները, որոնց շրջանակներում մշակվելու է առաջիկա տարվա պետական բյուջեի նախագիծը և (գ) կառավարության քաղաքականության վերաբերյալ որոշումների ազդեցությունը հետագա տարիների ծախսերի վրա,
- հայտնել խորհրդարանին և մյուս շահառուներին պետական բյուջեի հետ կապված՝ կառավարության մտադրությունների մասին ավելի վաղ փուլում,
- մեծացնել կառավարության հաշվետվողականությունը խորհրդարանին՝ քաղաքականության իր ծրագրի և ընդհանուր հարկաբյուջետային կառավարման հարցերի ուղղությամբ:

Դ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման ներդրման բնագավառում հանրապետությունում իրականացված միջոցառումները

Սկսած 2000 թվականից՝ կառավարությունը ձեռնամուխ եղավ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման գործընթացի իրականացմանը: Ընդ որում, եթե մինչև 2002 թվականը նշված աշխատանքները իրականացվում էին բացարձակապես նակրոմակարողակով, ապա 2002 թվականին գործընթացի մեջ ներգրավվեց 4 ճյուղային պետական կառավարման մարմին (սոցիալական ապահովության, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունները և ջրային տնտեսության պետական կոմիտեն), որոնց կողմից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ կատարվեցին փորձնական աշխատանքներ նշված ոլորտների 33 2003–2005թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գծով: Կուտակված փորձի հիման վրա, սկսած 2003 թվականից, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավվեցին բոլոր պետական կառավարման մարմինները: Նշվածին մեծապես նպաստեց նաև այդ ժամանակահատվածում կառավարության կողմից հասարակության լայն շրջանակի ներգրավմամբ նախապատրաստված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի առկայությունը, որով սահմանվեցին կառավարության ռազմավարական գերակայությունները և գործողությունների ծրագիրը մինչև 2015 թվականը: Դրա հետ մեկտեղ ձեռնարկվեցին քայլեր այսուհետև պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենսդրական հիմքերի վրա կառուցելու ուղղությամբ: Բյուջետային գործընթացի թափանցիկության բարելավման, բյուջետավորումը ծրագրային

հիմքերի վրա կառուցելու կառավարության ձգտումը անհրաժեշտ դարձրեց «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը՝ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման, հաստատման և հրապարակման աշխատանքները բյուջետային գործընթացում որպես վերջինիս առանձին բաղկացուցիչ փուլ ամրագրելու, նշված ծրագիրը որպես պետական բյուջեի նախագծի մշակման հիմք սահմանելու, այդ կապակցությամբ բյուջետային օրացույցն ընդլայնելու և ավելի ճկուն դարձնելու, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմը և դրա հետ կապված այլ դրույթներ սահմանելու նպատակով (վերը նշված օրենքում հիշյալ փոփոխությունները և լրացումները կատարվեցին 2003 թվականի ապրիլին):

Արդյունքում.

- պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման փուլում կառավարության ռազմավարական ծախսային գերակայությունների մասին տեղեկացումը ավելի վաղ փուլում ավելի մեծ որոշակիություն ստեղծեց պետական կառավարման մարմինների համար ուղորտային քաղաքականությունների մշակման, իսկ կառավարության կողմից պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատումը անհրաժեշտ հիմք հանդիսացավ նաև նրանց առաջիկա տարվա բյուջետային հայտերի մշակման համար: Օրենքով սահմանվեցին պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացի մասնակիցները, նրանց միջև բաշխվեցին գործառույթները և պատասխանատվության շրջանակները, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացը սկսելու և ծրագիրը հաստատելու ժամկետները,
- մեծացավ պետության տնտեսական և հարկաբյուջետային դիրքին վերաբերող տեղեկատվության մատչելիությունը և թափանցիկությունը բոլոր շահառուների, այդ թվում՝ հանրության, Ազգային ժողովի, ներդրողների ու միջազգային կազմակերպությունների համար: Ապահովվեց ավելի մեծ որոշակիություն հանրության համար կառավարության նպատակների և ծրագրերի գծով առաջիկա երեք տարիների կտրվածքով,
- Ազգային ժողովը և մյուս շահառուները ավելի վաղ փուլում (մինչև առաջիկա տարվա բյուջեի նախագիծը հրապարակելը) հնարավորություն ստացան ծանոթանալու պետական բյուջեի նախագծի հետ կապված կառավարության մտադրություններին,
- պետական բյուջեի նախագծի մշակման համար օրենսդրորեն սահմանվեցին ծրագրային հենքեր,
- մեծացավ կառավարության հաշվետվողականությունը Ազգային ժողովին՝ ընդհանուր հարկաբյուջետային քաղաքականության իր ծրագրի կառավարման հարցերի գծով:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը համակարգելու և ռազմավարական ղեկավարում իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ դեռևս 2002 թվականին ստեղծվեցին և մինչ օրս գործում են.

- ՀՀ վարչապետի ղեկավարությամբ՝ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդը, որի կազմում ընդգրկված են մի շարք հանգուցային պետական կառավարման մարմինների

(Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, պաշտպանության նախարարություն, հարկային պետական ծառայություն, մաքսային պետական կոմիտե, սոցիալական ոլորտի նախարարություններ, տարածքային կառավարման նախարարություն) ղեկավարները, ինչպես նաև կենտրոնական բանկի նախագահը և Ազգային ժողովում մեծամասնություն կազմող կուսակցությունները ներկայացնող պատգամավորները (Ազգային ժողովում այդ կուսակցությունների ֆրակցիաների առաջարկությամբ),

- ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալի ղեկավարությամբ՝ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքները համակարգող խումբը, որի կազմի մեջ մտնում են մի շարք պետական մարմինների ղեկավարների տեղակալները:

Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման համակարգը ներդնելուց հետո անցած ժամանակահատվածում կառավարությանը հիմնականում հաջողվել է ապահովել պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված ցուցանիշների պահպանումը պետական բյուջեների նախագծերում:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի ավելի սերտ կապն ապահովելու նպատակով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից պետական կառավարման մարմիններին օրենքի պահանջի համաձայն տրամադրվող հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի մշակման մեթոդական ցուցումներում, օրենքին համապատասխան, նշված է պահանջ, որպեսզի այդ մարմինները իրենց առաջիկա տարվա բյուջետային հայտերը մշակելիս պարտադիր ղեկավարվեն վերջիններիս կողմից կարգավորվող ոլորտներում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված քաղաքականություններով և նախանշված գերակայություններով, ինչպես նաև բյուջետային հայտի հաշվարկները կազմելիս որպես հիմք ընդունեն պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված ցուցանիշները (այդ թվում՝ նաև ծախսային առավելագույն սահմանաչափերը):

Ե. Ի՞նչ է իրենից ներկայացնում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը տրամադրում է մի մեխանիզմ, որով կառավարությունը կայացնում է իր հիմնական որոշումները իրականացվելիք հարկաբյուջետային քաղաքականության մասին, որոնցով էլ պետք է ուղղորդվի առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը: Մասնավորապես, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացի արդյունքում կառավարությունը սահմանում է.

- երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները կամ նպատակները այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են պետական բյուջեի եկամուտները, ծախսերը, պակասուրդի մակարդակը և պետական պարտքը:
- կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները. հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը՝ կառավարությունը որոշում է ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար,

պակասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար,

- ռազմավարական ծախսային գերակայությունները. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի նախապատրաստման գործընթացն ուղղորդվի մշակված քաղաքականություններով,
- ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները, որոնցով պետական կառավարման մարմինները պետք է առաջնորդվեն համապատասխան տարիների համար ծախսային ծրագրերի գծով իրականացվելիք միջոցառումները նախատեսելիս,
- պետական մարմինների կողմից իրականացվող քաղաքականության նպատակները և դրանց իրագործման համար կիրառվող ռազմավարությունը. դրանով իսկ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացը հնարավորություն է տալիս պետական մարմինների ղեկավարներին ներգրավել պետության ռազմավարական նպատակների և ծրագրերի մշակման գործընթացում՝ պետական մարմինների մակարդակով:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կազմում է կառավարությունը յուրաքանչյուր տարի՝ ծրագրի հաստատման տարվա հաջորդող երեք տարվա համար: Նշված ծրագրի մշակման փուլն սկսվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակման օրը: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումն իրականացվում է օրենքով և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Պետական կառավարման մարմինների համար պետական միջնաժամկետ ծախսերի մշակման գործընթացում անհրաժեշտ ուղղություն տալու նպատակով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մշակում և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում պետական մարմիններին է տրամադրում միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են պետական մարմինների կողմից մշակվող ոլորտային միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները, այդ նախագծերի ներկայացման կարգը, ինչպես նաև տեղեկություններ առաջիկա երեք տարում կառավարության հարկաբյուջետային սկզբունքների, կարծաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշների և ռազմավարական ծախսային գերակայությունների վերաբերյալ:

Կարևորելով միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման գործընթացի իրականացումը, վերջինիս ընթացքը այս կամ այն պետական մարմնի կատարողական կարգապահությունից կախման մեջ չդնելու նկատառումով և շեշտադրելով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության՝ որպես ծրագրի ամբողջական տեսքով կազմման համար պատասխանատու պետական օղակի դերը, օրենսդիրը սահմանել է, որ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ոլորտային միջնաժամկետ ծախսերի

ծրագրերի չներկայացման դեպքում դրանք, ըստ անհրաժեշտության և հնարավորության, կազմում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Միաժամանակ հստակ սահմանվել է նաև այդ նախարարության որպես ճյուղային պետական կառավարման մարմինների միջնաժամկետ ծրագրային հայտերի վերլուծողի դերը, որի կատարման համար ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն օրենքով իրավասություն է վերապահվել պետական մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումը բաղկացած է հետևյալ երեք ենթափուլերից.

• **Ենթափուլ 1.** Հարկաբյուջետային քաղաքականության և ռազմավարական նպատակների սահմանում. այս փուլը ներառում է ընդհանուր քաղաքականության նպատակների սահմանումը (որոնք ուղղորդում են բյուջետային ամբողջ գործընթացը), ներառյալ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները և ռազմավարական գերակայությունները: Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքները համակարգող խմբի առաջարկությամբ, սահմանվում են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքում դրվելիք հարկաբյուջետային սկզբունքները, կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները՝ հիմք ընդունելով տնտեսության զարգացման և բյուջետային մուտքերի կանխատեսումները: Որոշվում են նաև ընդհանուր ռազմավարական ծախսային գերակայություններն ավելի լայն սոցիալական և տնտեսական նպատակների համատեքստում:

Այս գործընթացը հնարավորություն է տալիս պետական բյուջեի միջոցներն ուղղել պետական մարմինների ծրագրային ռազմավարական գերակայություններին, ինչն էլ իր հերթին կնպաստի հանրապետությունում տնտեսական և սոցիալական խնդիրների լուծմանն ու հեռանկարային նպատակների իրագործմանը:

• **Ենթափուլ 2.** Ոլորտների քաղաքականությունների և ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների մշակում. սա այն փուլն է, երբ պետական մարմինները պետք է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնեն իրենց պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրային հայտերը, որոնք իրենից ներկայացնում է ոլորտի կամ պետական մարմնի երեք տարվա ծախսային ռազմավարությունը: Այս հայտերի, դրանց վերաբերյալ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության եզրակացությունների և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքները համակարգող խմբում տեղի ունեցող քննարկումների հիման վրա համակարգող խումբը բարձրագույն խորհրդին ներկայացնում է յուրաքանչյուր ոլորտի և պետական մարմնի գծով ծախսային ծրագրերի ֆինանսավորման միջնաժամկետ կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկությունները:

• **Ենթափուլ 3.** Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքների ավարտում. այս փուլում կայացվում են որոշումներ յուրաքանչյուր ոլորտի և պետական մարմնի համար ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների սահմանման վերաբերյալ, և ճշգրտվում են կառավարության

հարկաբյուջետային և ծախսային ռազմավարությունները: Դրանց հիման վրա յուրաքանչյուր պետական մարմին պետք է ավարտուն տեսքի բերի (համապատասխանեցնի) վերը նշված որոշումներին) իր պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրային հայտը և ներկայացնի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացի շրջանակներում կատարվելիք աշխատանքների արդյունքում կառավարությունն օրենքով պարտավորեցված է մինչև հունիսի 20-ը հաստատելու և Ազգային ժողովին մինչև հուլիսի 1-ը ի գիտություն ներկայացնելու առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

Այս կապակցությամբ հարկ է առանձին անդրադառնալ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կարգավիճակին: Չնայած այն հանգամանքին, որ նշված ծրագիրը հանդիսանալու է հիմք Ազգային ժողովի կողմից հաստատվող մի այնպիսի փաստաթղթի մշակման համար, ինչպիսին պետական բյուջեն է, նշված ծրագիրը կառավարության փաստաթուղթն է, քանի որ այն արտահայտում է ոչ թե Ազգային ժողովի, այլ կառավարության ռազմավարությունը:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ կապված ի՞նչ դեր ունի Ազգային ժողովը: Ինչո՞ւ է ավելի գերադասելի, որպեսզի նշված ծրագիրը հաստատի կառավարությունը:

Միջազգային պրակտիկայում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հաստատման հարցը՝ խորհրդարանի թե կառավարության կողմից, չունի միանշանակ պատասխան, և յուրաքանչյուր երկրում այդ խնդիրն իր լուծումն է ստացել՝ ելնելով տվյալ երկրի ավանդույթներից և իրավական դաշտի պահանջներից: Կան երկրներ, որոնցում դա կառավարության իրավասությունն է (ինչպես, օրինակ՝ Ավստրալիայում), կան նաև այդպիսիք, որոնցում այդ իրավասությունը վերապահված է խորհրդարանին (ինչպես, օրինակ՝ Իտալիայում): Հայաստանի Հանրապետությունում այդ հարցադրումների պատասխանը բխում է Սահմանադրության 74-րդ հոդվածից, ըստ որի՝ յուրաքանչյուր նոր կառավարության կազմավորվելուց հետո Ազգային ժողովում արդեն իսկ քննարկվում է այդ կառավարության կողմից խորհրդարան ներկայացված ծրագրին հավանության տալու հարցը: Խորհրդարանի հավանությանն արժանացած տվյալ կառավարության գործունեության ծրագիրն ըստ էության հիմք է հանդիսանում այդ կառավարության կողմից հետագայում ավելի մանրամասնեցված տեսքով ընդունվող բոլոր ռազմավարական ծրագրերի համար, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում: Ուստի Ազգային ժողովում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու և դրանով իսկ այն Ազգային ժողովի ծրագիր դարձնելու փոխարեն առավել գերադասելի է, մեծացնելով խորհրդարանի իրազեկության աստիճանը կառավարության այդ ծրագրի վերաբերյալ, Ազգային ժողովին հնարավորություն ընձեռել առավել արդյունավետ կերպով իրականացնել այդ ծրագրի իրագործման ընթացքի վերահսկման դերը:

Ինչպես արդեն նշվեց, այս ծրագիրը կառավարության ռազմավարական մտադրությունները շարադրող փաստաթուղթ է: Հետևաբար, նպատակահարմար է, որ Ազգային ժողովն ուսումնասիրի այն՝ հնարավորություն տալով կառավարությանը ծանոթանալու Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի կարծիքներին այդ ծրագրի վերաբերյալ՝ հետագայում դրանք ըստ անհրաժեշտության պետական

բյուջեի նախագծի մշակման ժամանակ հաշվի առնելու նպատակով: Դրա հետ հանդերձ ուսումնասիրելով կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված պետական բյուջեի նախագիծը՝ խորհրդարանի անդամները կկարողանան լիովին գնահատել, թե որքանով են կառավարության կողմից տվյալ տարում ընդունված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ցուցանիշներն արտահայտված պետական բյուջեի նախագծում, և դրանով արդյոք հնարավոր է պատշաճ կերպով ապահովել առաջիկա տարվա համար նշված ծրագրով նախատեսված կառավարության ռազմավարական նպատակների նվաճումը: Ըստ էության, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և առաջիկա տարում այդ ծրագրի իրականացման գծով կառավարության կողմից պետական բյուջեի նախագծի տեսքով ներկայացված մանրամասնեցված առաջարկությունների նկատմամբ Ազգային ժողովն իր վերջնական դիրքորոշումը կհայտնի պետական բյուջեի նախագծի ընդունման հարցի քննարկումների արդյունքներով՝ ընդունելով կառավարության կողմից առաջարկված առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքը կամ մերժելով այն:

Բյուջետային գործընթացի ընդհանուր ընթացքի թափանցիկության և հրապարակայնության տեսանկյունից առանցքային նշանակություն ունի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակման հարցը: Մասնավորապես՝

- հանրության համար. այն էապես կնպաստի պետական ծախսերի մասին իրազեկմանը և կարող է նաև օգնել կառավարելու հանրության ակնկալիքները՝ առկա ռեսուրսների պայմաններում կոնկրետ ծրագրերի իրագործելիության ուղղությամբ,
- Ազգային ժողովի համար. կբարելավի պետական բյուջեի նախագծի շուրջ քննարկումների որակը: Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մատչելի լինելը հնարավորություն կտա խորհրդարանին ավելի լավ պատկերացում կազմել կառավարության ռազմավարական նպատակների և առաջիկա տարվա պետական բյուջեի հետ կապված՝ հարկաբյուջետային խնդիրների շուրջ՝ դրանով իսկ քննարկումների ժամանակ ուշադրությունը սևեռելով էական հարցերի ուղղությամբ,
- արտաքին աշխարհի համար. կառավարության հարկաբյուջետային և քաղաքական մտադրությունների մասին տեղեկատվության առավել մեծ թափանցիկությունը և կշռադատված ռազմավարության վկայության առկայությունը կմեծացնի վստահությունը կառավարության և ընդհանրապես երկրի նկատմամբ,
- պետական կառավարման մարմինների համար. կօգնի բարելավել ապագա միջնաժամկետ ծրագրերի որակը, քանի որ կմեծանա թե քաղաքական պաշտոնյաների և թե պետական մարմինների աշխատակազմերի շահագրգռվածությունն առաջադրելու քաղաքականության արժանահավատ առաջարկներ և իրատեսական կանխատեսումներ, որոնք կարող են դիմանալ հասարակության քննադատությանը:

Ձ. Ինչպիսի՞ կառուցվածք և բովանդակություն ունի ԴԴ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

- ԴԴ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը.
- հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մաս,
 - ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մաս:
- Բովանդակային առումով ԴԴ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերը

նշված մասերին ներկայացվող պահանջները հետևյալն են.

1. Հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը պետք է պարունակի տեղեկություններ՝

- ա) կառավարության երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների, եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի (պակասուրդի) կամ հավելուրդի և պարտքի գծով կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշների և ժամկետանց պարտքերի վերաբերյալ,
- բ) հարկաբյուջետային նպատակների իրագործման ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած հարկաբյուջետային նպատակների և/կամ ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ,
- գ) միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով մակրոտնտեսական, եկամուտների և ծախսերի ուղղությամբ կանխատեսումների վերաբերյալ,
- դ) կարևոր տնտեսական և այլ ենթադրությունների վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները,
- ե) կառավարության ռազմավարական գերակայությունների վերաբերյալ՝ դրանց կարևորության հիմնավորմամբ,
- զ) հիմնական հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ:

2. Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասը պետք է պարունակի յուրաքանչյուր ոլորտի (և պետական կառավարման բոլոր մարմինների) համար հետևյալ տեղեկությունները՝

- ա) այն արդյունքները, որոնց կառավարությունը ցանկանում է հասնել տվյալ ոլորտում ծախսեր կատարելու միջոցով,
- բ) ծախսային գործոնները, այդ թվում՝ ակնկալվող ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական միտումները, որոնք կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում կազդեն տվյալ ոլորտում իրականացվելիք ծախսերի վրա,
- գ) կառավարության ծախսային գերակայությունները կանխատեսվող ժամանակաշրջանում, այդ թվում՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծով նախատեսվելիք,
- դ) տվյալ ոլորտում արտաքին ֆինանսական աջակցության չափերը:

Ինչպե՞ս են կանոնակարգված կառավարության գործողություններն իր կողմից ընդունված և հրապարակված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված գերակայություններում և ցուցանիշներում ժամանակի ընթացքում որոշ գործոնների ազդեցության տակ փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում:

Անշուշտ նախընտրելի է, որ կառավարության կողմից իր պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված հարկաբյուջետային նպատակները և քաղաքականության գերակայությունները ժամանակի ընթացքում համեմատաբար հաստատուն մնան: Սակայն հնարավոր է, որ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատումից հետո մինչ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հաս-

տատունն ընկած ժամանակահատվածում կառավարությունն արտաքին կամ ներքին գործոններով պայմանավորված միջնաժամկետ ծրագրի մշակման ժամանակ անկանխատեսելի հանգամանքների ուժով պարտադրված լինի փոփոխություններ կատարել իր որոշ գերակայություններում կամ ցուցանիշներում: Բյուջետային գործընթացի իրականացման թափանցիկության շահերից ելնելով՝ կարևոր է, որ կառավարությունը բացատրի հանրությանը նման փոփոխությունների կատարման հիմքերը և դրանց հետագա ազդեցությունը: Նման դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի պարտադրում կառավարությանը փոխելու իր կողմից արդեն իսկ ընդունված միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, սակայն պահանջում է, որ պետական բյուջեի նախագծում ներկայացվի բացատրություն այդ ծրագրում տեղ գտած ցանկացած էական փոփոխության մասին, որն իր արտացոլումն է գտել խորհրդարան ներկայացված առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում: Նշվածը հնարավորություն է ընձեռում ընթերցողին հասկանալու կապը կառավարության կողմից նույն տարվա տարբեր ժամանակահատվածներում (մեկը՝ հուլիսին, մյուսը՝ հոկտեմբերին) հրապարակված այդ երկու փաստաթղթերի միջև:

Անշուշտ, անհրաժեշտության դեպքում տվյալ տարում ընդունված միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված ցուցանիշները պետական բյուջեի նախագծի մշակման ավարտական փուլում պետք է նորացվեն, և խորհրդարան ներկայացվող պետական բյուջեի նախագիծը պետք է արտացոլի ճշգրտված տվյալներ: Նորացված տվյալներ բնականաբար պետք է կիրառվեն նաև հաջորդ տարում կառավարության կողմից ընդունվող հերթական պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում:

Է. Ի՞նչ պրորլեմներ կան:

Չնայած հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացի իրականացման բնագավառում արձանագրվել է զգալի առաջընթաց, որի շնորհիվ այդ բնագավառում մեր հանրապետությունում ձևավորված համակարգը ճանաչվել է ԱՊՀ տարածքում առավել արդյունավետ գործողներից մեկը, այնուամենայնիվ, դա դեռևս ամբողջապես չի հանել առկա խնդիրները քաղաքականությունների մշակման, գերակայությունների որոշման, քաղաքականության ֆինանսական գնահատման, վերլուծության, քաղաքականության և ծրագրերի կատարման մոնիտորինգի և հաշվետվության բնագավառներում:

Մասնավորապես, ներկայումս ոչ բոլոր պետական մարմինների կողմից պատրաստվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրային հայտերի որակն է համապատասխանում ներկայացված պահանջներին: Նշված հայտերի որակի բարելավումը ուղղակիորեն կախված է ռազմավարական ծրագրավորման գործընթացի զարգացումից պետական մարմինների ներսում, ինչպես նաև ծախսերի քաղաքականության վերլուծության և գերակայությունների սահմանման համար պատշաճ հմտությունների ձեռքբերումից: Մյուս կողմից դեռևս կարիք կա զարգացնելու պետական մարմինների կողմից մշակվող միջնաժամկետ ծախսերի ծրագրային հայտերի վերլուծության գծով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կարողությունները: Մակրոտնտեսական կանխատեսումների կատարման մեթոդաբանությունը նույնպես կատարելագործման կարիք ունի: Դեռևս ներդրված չեն քաղաքակա-

նության և ծրագրերի կատարման մոնիտորինգի և հաշվետվության համակարգերը:

Ը. Որո՞նք են հետագա անելիքները:

Վերը նշված պրոբլեմների առկայությունը կանխորոշում է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բնագավառում բարեփոխումների զարգացման նպատակով առաջիկայում անհրաժեշտ անելիքները: Մասնավորապես.

- անհրաժեշտ է շարունակել պետական մարմինների մասնագետների համար միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման հայտերի կազմման գծով հմտությունների զարգացման նպատակով ուսուցողական դասընթացների անցկացումը,
- վերլուծել պետական մարմիններում միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացում մասնակցող ստորաբաժանումների միջև այդ աշխատանքներում ծառայողական փոխկապվածության արդյունավետությունը և ձեռնարկել միջոցներ այն բարելավելու ուղղությամբ,
- շարունակել զարգացնելու պետական մարմինների կողմից մշակվող միջնաժամկետ ծախսերի ծրագրային հայտերի վերլուծության, ինչպես նաև մակրոկանխատեսումների գծով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնագետների կարողությունները,
- մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի ինտեգրումը բյուջետային գործընթացում՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ինչպես նաև վերջինիս առանձին ոլորտային մասերի կատարման ընթացքը և դրանց համար պատասխանատու պետական մարմինների գործունեության արդյունքները պետական բյուջեով նախատեսվող ծրագրերի գծով սահմանած ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման տեսանկյունից գնահատումն ապահովելու համար,
- բյուջետավորման ավանդական մեթոդներից աստիճանական անցում կատարել արդյունքների վրա հիմնված ծրագրային բյուջետավորման մեթոդներին:

8.3. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Ի՞նչ են իրենից ներկայացնում ծրագրային բյուջետավորման մեթոդները: Ինչո՞ւ է անհրաժեշտ ծրագրային բյուջետավորման մեթոդների կիրառումը, որո՞նք են այդ մեթոդների առավելությունները բյուջետավորման մինչ այդ գործող մեթոդների համեմատությամբ:

Միջազգային փորձը վկայում է այն մասին, որ պետական ծախսերի արդյունավետությունը բարձրացնել միայն ի հաշիվ կառավարչական տեխնոլոգիաների կատարելագործման, շրջանցելով բյուջետային գործընթացը, հնարավոր չէ: Բուջետային գործընթացի կատարելագործումն էլ, իր հերթին, սերտորեն կապված է պետական կառավարման բնագավառում իրականացվող բարեփոխումների ընթացքի հետ:

Տարիներ շարունակ համրապետությունում ձևավորված պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման հիմքում դրված էին ծրագրի իրականացման համար պահանջվող, հատկացված և օգտագործման ռեսուրսների ցուցանիշները (թեև վերջին տարիներին դրան զուգահեռ սկսեցին կիրառվել նաև մի շարք ոչ ֆինանսական ցուցանիշներ): Նման ցուցանիշները և դրանց համադրումները ի վիճա-

կի չեն եղել տալ լիարժեք տեղեկատվություն ինչպես վերլուծողին, այնպես էլ որոշումներ ընդունող քաղաքական պաշտոնյաներին ծրագրի նպատակների, դրանց հասնելու համար առաջարկվող ուղիների, սպասվելիք արդյունքների և ընդհանրապես ծրագրի տնտեսական և սոցիալական արդյունավետության մասին: Ուստի և պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման և դրա հիման վրա ռազմավարական որոշումների որակը բարելավելու տեսանկյունից անչափ կարևորվում է պետական գործառույթների իրականացման համար տրամադրվող ֆինանսական (բյուջետային) ռեսուրսների ծախսման ցուցանիշների դիտարկումից անցում կատարելը ծրագրի շրջանակներում իրականացվող գործունեության և ստացվող արդյունքների դիտարկմանը, քանի որ դա հնարավորություն է ընձեռում արդեն այլ դիրքերից քննության առնել պետական մարմինների կողմից ներկայացվող բյուջետային հայտերով առաջարկվող ծրագրերի իրականացման համար պահանջված որևէ ծախսատեսակի ֆինանսավորման նպատակով հատկացումների նախատեսման անհրաժեշտության հարցը կամ գնահատել արդեն իսկ հատկացված միջոցների օգտագործման արդյունավետությունը: Այսինքն՝ բյուջետային ծրագրերի կազմման և կատարման ժամանակ դրանց ներկայացման ձևաչափը պետք է արտացոլի ոչ այնքան ծրագրային ծախսերի կառուցվածքը ըստ դրանց տեսակների (աշխատանքի վարձատրություն, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումներ և այլն), որքան այդ ծրագրերի կամ որևէ գործունեության իրականացումից սպասվելիք կամ ստացված արդյունքները: Նման մոտեցումների կիրառումը նախատեսող բյուջետավորման մեթոդները ընդհանրացված կրում են «ծրագրային բյուջետավորում» անվանումը, իսկ կախված կիրառվող մեթոդների զարգացման աստիճանից՝ միջազգային պրակտիկայում տարբերում են ծրագրային բյուջետավորման հետևյալ տեսակները. «ծրագրանպատակային», «պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» և «նպատակների կառավարում»:

Այս նյութի շրջանակներում ներկայացնենք «ծրագրա–նպատակային», «պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» և «նպատակների կառավարում» բյուջետավորման մեթոդների յուրահատկությունները:

«Ծրագրանպատակային բյուջետավորում» անվանումը կրող մեթոդը այնպիսի բյուջետային ծրագրավորման մեթոդ է, որը կապում է կատարված ծախսերը այդ ծախսերի կատարումից սպասվող արդյունքների, ինչպես նաև սոցիալական և տնտեսական աղյուսակների հետ: Չնայած այն հանգամանքին, որ այս մեթոդի սահմանման մեջ այն ներկայացված է որպես բյուջետային ծրագրավորման մեթոդ, սակայն միայն ծրագրավորման բնագավառով այս մեթոդի առանձնահատկությունները չեն սահմանափակվում: Ծրագրանպատակային բյուջետավորման մեթոդը ազդեցություն է ունենում բյուջետային գործընթացի բոլոր փուլերի վրա, որի հետևանքով ծրագրանպատակային բնույթ են ստանում և բյուջեի կատարումը, և վերջինիս ընթացքի նկատմամբ վերահսկողությունը: Բյուջետավորման վերը նշված մեթոդի սահմանումը շատ պատկերավոր է ներկայացվել Ֆ.Ս.Սոշերի «Program Budgeting: Theory and Practice with Particular Reference to the U.S. Department of the Army» աշխատության մեջ, այն է՝ «Քաղաքագետի և իրավագետի համար ծրագրանպատակային բյուջետավորումը նշանակում է բյուջետային հայտերի ներկայացում և վերլուծում այնպիսի ձևով, որը ապահովում է հանրությանը առավել արդյունավետ ընտ-

րություն: Պետական պաշտոնյայի համար դա, վերը նշվածից բացի, նշանակում է ավելի մեծ ճկունություն և դիրքափոխման ազատություն, ինչպես նաև ավելի մեծ անձնական պատասխանատվություն և մեծ պահանջկոտություն ենթակամների հանդեպ: Նախարարությունների և գերատեսչությունների համար դա կարող է նշանակել ավելի մեծ ինքնուրույնություն, ճկունություն որոշումների ընդունման գործում և մեծ պատասխանատվություն հատկացված ֆոնդերի օգտագործման համար: Հաշվապահի համար ծրագրանպատակային բյուջետավորումը կապվում է հաշվեգրման մեթոդի, ընթացիկ և կապիտալ գործառնությունների գծով հաշիվների տարանջատման, շրջանառու միջոցների առանձնացված հաշվառման և հաշվառման այլ յուրահատուկ տեխնոլոգիաների օգտագործման հետ»:

«Ծրագրանպատակային» բյուջետավորման մեթոդի կիրառման շրջանակներում պետական կառավարման մարմինների կողմից մշակված բյուջետային հայտերին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- յուրաքանչյուր մարմնի գծով ֆինանսավորման համար առաջարկվող գումարների մասին բոլոր տվյալները անհրաժեշտ է ներկայացնել ծրագրերի, ենթածրագրերի և գործունեության տեսակների կտրվածքով,
- ծախսումների տեսակների կտրվածքով ծախսերի կառուցվածքի մասին տվյալները նույնպես պետք է տրամադրվեն, սակայն դրանք պետք է ներկայացվեն որպես ծրագրի էլեմենտներ՝ հանդիսանալով ոչ թե որպես ֆինանսավորման գծով հանձնարարական, այլ որպես վերջնական նպատակին հասնելու միջոց: «Պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» բյուջետավորման մեթոդի կիրառման դեպքում պետական կառավարման մարմինները պետք է.

- վերլուծեն իրենց կողմից կատարվող գործունեության բոլոր տեսակները,
- խմբավորեն այդ գործունեության տեսակները ըստ սոցիալ–նշանակալի որոշակի նպատակների հասնելուն ուղղորդված ծրագրերի,
- կառուցել նպատակին հասնելու խնդիրների և միջոցառումների ստորակարգություն, հասցնել այն մինչև բազային էլեմենտների – գործունեության ավանդական տեսակների, որոնք բյուջետավորման այս համակարգում ստացել են «ծրագրի էլեմենտներ» անվանումը,
- յուրաքանչյուր ծրագրի իրագործման համար պահանջվող ծախսումների ընդհանուր ծավալը գնահատելու նպատակով գնահատել յուրաքանչյուր ծրագրի էլեմենտի կատարման համար պահանջվող ծախսումների ծավալը:

Բյուջետավորման այս մեթոդի կիրառման շրջանակներում բյուջետային հայտի նշակման համար յուրաքանչյուր պետական կառավարման մարմին պետք է.

- ձևակերպի իր գործունեության երկարաժամկետ նպատակները՝ համաձայնեցնելով այդ նպատակները պետական քաղաքականության նպատակների հետ,
- առաջարկի իր գործունեության երկարաժամկետ նպատակներին հասնելու մի քանի տարբերակներ,
- բյուջետային հայտում ներկայացնի այդ նպատակներին հասնելու մի քանի տարբերակներ և դրանց համապատասխանող ֆինանսավորման տարբերակներ:

«Պլանավորում–ծրագրավորում–բյուջետավորում» բյուջետավորման մեթոդի կիրառման շրջանակներում պետական կառավարման մարմնի գործունեության ցանկալի արդյունքը որոշվում է իր կողմից մատուցված ծառայությունների ծավա-

լով, իսկ այդ մարմնի ծրագրերի համախումբը պետք է կապի յուրաքանչյուր ծրագրով նախատեսված արդյունքները պետական քաղաքականության երկարաժամկետ նպատակների հետ:

Օպտիմալ բյուջետային որոշումների կայացման համար անհրաժեշտ է համեմատել սպասվող ծախսումները և արդյունքները, որի համար անհրաժեշտ է սովորել չափել պետական մարմինների գործունեության սոցիալական արդյունավետությունը, ինչն իր հերթին ենթադրում է բավականին բարդ անալիտիկ գործիքների օգտագործում, որն իր հերթին անխուսափելիորեն հանգեցնում է մասնագետների որակավորման բարձրացման անհրաժեշտության առաջացման:

Ծրագրային ստորակարգությունների կառուցման ժամանակ յուրաքանչյուր պետական կառավարման մարմին պետք է կատարի հետևյալ քայլերը.

- ձևակերպի սոցիալ–նշանակալի այն նպատակները, որոնց հասնելուն է ուղղված այդ մարմնի գործունեությունը,
- որոշակիացնի հանրային նշանակալի նպատակների իրականացման համար այդ մարմնի խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման համար կոնկրետ ղեկավարների պատասխանատվությունը,
- որոշի դրված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը:

Պետական մարմինն իր խնդիրները պետք է ձևակերպի իր կողմից մատուցվող այդ մարմնի ստեղծման նպատակներին համապատասխանող բյուջետային ծառայությունների հասկացություններով:

Յուրաքանչյուր ծրագրային ստորակարգություն իր մեջ պետք ներառի երեք ենթամակարդակ.

- **առաջին ենթամակարդակ՝** ծրագրեր. միևնույն լայն ձևակերպված սոցիալ–նշանակալի նպատակին հասնելուն ուղղված գործունեության տեսակներ,
- **երկրորդ ենթամակարդակ՝** ենթածրագրեր. սոցիալ–նշանակալի նպատակին հասնելու շրջանակներում մասնավոր խնդիրների լուծմանն ուղղված գործունեության տեսակներ,
- **երրորդ ենթամակարդակ՝** ծրագրային էլեմենտներ. պետական մարմնի կողմից սահմանված նպատակներին հասնելու համար կատարման ենթակա որոշակի միջոցառումներ (աշխատանքներ և ծառայություններ):

Օրինակ՝ կրթության և գիտության նախարարության ծրագրային ստորակառուցվածքը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

- սոցիալ–նշանակալի նպատակ՝ կրթություն,
- ծրագրեր՝ ընդհանուր, մասնագիտական, բարձրագույն,
- ենթածրագրեր՝ ընդհանուր կրթության ծրագրի գծով՝ ցերեկային ուսուցման դպրոցներ, երեկոյան ուսուցման դպրոցներ, հատուկ դպրոցներ, դպրոց–ինտերնատներ,
- ենթածրագրերի էլեմենտներ՝ ընդհանուր կրթության ենթածրագրի գծով՝ նյութատեխնիկական բազայի պահպանում, ուսումնական գործընթացի ապահովում (աշխատավարձ, դասագրքեր), դասատուների որակավորման բարձրացում:

«Նպատակների կառավարում» անվանումը կրող բյուջետավորման համակարգը «Պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» բյուջետավորման մեթոդի որոշ չափով զարգացած՝ պետական մարմնի առջև դրված նպատակներին հասնելու

համար այդ մարմնի բոլոր ծառայողների պատասխանատվության բարձրացնող բյուջետային ծրագրավորման համակարգ է: Այդ համակարգում մարմնի ղեկավարը պատասխանատու էր երկրի ղեկավարի կողմից առաջ քաշած ազգային, համապետական նշանակության նպատակներին հասնելու համար, իսկ ծառայողները՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված՝ ղեկավարների հետ համատեղ ձևակերպված առանձին խնդիրների լուծման համար: Ինչպես և «պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» բյուջետավորման մեթոդի կիրառման ժամանակ պետական մարմնի գործունեության արդյունքը որոշվում էր մատուցված ծառայությունների ծավալի ցուցանիշներով, սակայն այստեղ նաև անհրաժեշտ է գնահատել նվաճած արդյունքների սոցիալական նշանակալիությունը: Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում այդ մեթոդը քննարկվում էր ոչ այդքան ինչպես բյուջետային ծրագրավորման մեթոդ, որքան պետական կառավարման մարմինների ընթացիկ գործունեության կառավարման, կատարվող աշխատանքի՝ առանց ռեսուրսների վերաբաշխման արդյունավետության բարձրացման մեթոդ: Այս մեթոդի կիրառմամբ պետական մարմինները ծրագրավորվող տարվա համար իրենց նպատակների ձևակերպման ժամանակ պետք է հաշվի առնեին այն պահանջը, որ նպատակների իրագործումը չպետք է պահանջի եղածի համեմատությամբ ռեսուրսների ավելացում:

Պետական կառավարման մարմինների կողմից ձևակերպվող նպատակները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.

- լինեն սոցիալ–նշանակալի,
- քանակական չափելի,
- իրագործելի առանց լրացուցիչ ռեսուրսների,
- մեկ տարվա ընթացքում կատարման ենթակա:

Հիմնական նպատակներից բացի, պետական կառավարման մարմինները պետք է որոշեն այն ենթանպատակները, որոնց իրականացումը կհանգեցնի հիմնական նպատակների նվաճմանը: Այսինքն, ըստ էության, անհրաժեշտ է կառուցել «պլանավորում – ծրագրավորում – բյուջետավորում» բյուջետավորման մեթոդի շրջանակներում կիրառվող ծրագրային ստորակարգություններին համանման նպատակների ստորակարգություններ: Վերը նշված նպատակների ստորակարգությունները պետք է ընդգրկեն պետական մարմնի բոլոր ստորաբաժանումները, որպեսզի բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կազմեն, թե ինչպես է իրենց աշխատանքը նպաստում ամբողջ կազմակերպության նպատակների նվաճման գործին: Նման ընթացիկության առկայությունը պետք է նպաստի տարբեր ստորաբաժանումների գործողությունների համաձայնեցվածության բարձրացման և պորբլեմների, դրանց առաջացման վաղ ժամանակահատվածում հայտնաբերման և աշխատակիցների պատասխանատվության բարձրացմանը:

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ ինչպիսի՞ առավելություններ ունի վերը նշված ծրագրային բյուջետավորման մեթոդների կիրառումը:

Անշուշտ, պետական բյուջեի նախագծի ներկայացումը ծրագրերի և գործունեության տեսակների կտրվածքով զգալիորեն կբարելավի բյուջետային տեղեկատվության ընթերցելիությունը, կնպաստի կառավարության կողմից մշակվող բյուջեի առավել ընդգրկուն քաղաքական փաստաթղթի վերածելու գործին, այսինքն՝ մի փաստաթղթի, որը կկապի պետական քաղաքականության նպատակները պետական

ծախսերի հետ և ցույց կտա, թե ինչպես են ծրագրավորվող պետական ծախսերը կապված պետական քաղաքականության մատակերի իրականացման հետ: Նշվածը հնարավորություն կընձեռի մասնաճյուղի մասնաճյուղի հետևյալ հանրային ծառայությունների ֆինանսավորումը, որոնց տրամադրման քանակը, որակը, արժեքը, ժամանակը և տեղը առավելապես համապատասխանում են հանրության կարիքներին և տրված ռեսուրսային սահմանափակումների պայմաններում բնորոշվում են սոցիալական արդյունավետության առավելագույն ցուցանիշներով:

Այդ մեթոդների կիրառումը անհրաժեշտ կդարձնի պետական մարմիններին հստակեցնել իրենց առջև դրվող հիմնական մատակերը և սահմանել այդ մատակերի նվաճման համար հնարավոր մի քանի այլընտրանքային ուղի: Դրանով իսկ բարձրանում է պետական ծախսերի մասին ընդունվող որոշումների հիմնավորվածության մակարդակը: Կախված այն բանից, թե ինչպես կարող են ազդել ծրագրերի ֆինանսավորման տարբեր մակարդակներ պետական ծախսերի սոցիալական և տնտեսական արդյունավետության վրա, հնարավորություն է ընձեռվում կրճատել ծախսերը՝ չկրճատելով ծրագրերը:

Վերը նշված մեթոդները կնպաստեն ինչպես պետական մարմինների՝ որպես այդպիսիք, այնպես էլ այդ մարմինների ղեկավարների ու տարբեր մակարդակների աշխատակիցների պատասխանատվությունների սահմանմանը և ըստ առանձին մատակերի և խնդիրների սահմանազատմանը, որն իր հերթին կհանգեցնի պետական ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Հանրության առջև պետական մարմնի պարբերական հաշվետվողականությունն իր գործունեությունում նվաճած արդյունքների վերաբերյալ հնարավորություն կընձեռի հանրությանը իրատեսորեն գնահատել տվյալ մարմնի գործունեությունը:

Նշված մեթոդների կիրառումը հնարավորություն է ընձեռում քննադատաբար վերախնամատվորել միջոցների ծախսման տարեցտարի պահպանվող ուղղությունները և հրաժարվել ծախսերի որոշակի տեսակներից, որոնք կատարվում էին առանց այդ ծախսերի պատշաճ սոցիալ-տնտեսական հիմնավորման:

Բյուջետային որոշումները կայացվում են հաշվի առնելով ոչ միայն առօրյա, այլև ավելի տևական ժամանակահատվածներում հնարավոր հետևանքները:

Հնարավորություն է ընձեռվում առավել իրատեսորեն գնահատել պետության ֆինանսական վիճակը՝ իր տրամադրության տակ առկա ռեսուրսների մասին ավելի ընդգրկուն տեղեկատվություն ունենալու շնորհիվ: Նշվածը հատկապես կարևոր նշանակություն ունի ապագա ռիսկերի կառավարման տեսանկյունից:

Հարկ է նշել նաև, որ բյուջետավորման նշված բարեփոխումը օգտակար կերպով և տրամաբանորեն լրացնում է ՄԺԾԾ բարեփոխումները՝ բարձրացնելով ծրագրերի և դրանով իսկ՝ բյուջեի կազմման և կատարման գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ծրագրային բյուջետավորման զանազան մեթոդներից յուրաքանչյուրին անցումը կապված է պետական մարմիններում իրականացվող աշխատանքների ծավալների ավելացման և նոր՝ անծանոթ, բարդ խնդիրների լուծման անհրաժեշտության հետ, որը կարող է զգալի խոչընդոտ հանդիսանալ այդ բարեփոխումները սկսելու և ծավալելու համար: Վերը նշված բյուջետավորման մեթոդների ներդրման ճանապարհին անհրաժեշտ կլինի հաշվի առնել պետական ծա-

ռայոյողների մոտ նոր մեթոդների ներդրման համար անհրաժեշտ խթանների և պետական մարմիններում կատարվող աշխատանքի արդյունքի ունիվերսալ ինդիկատորների բացակայության, ինչպես նաև բյուջետային գործընթացի և օրենսդրության փոփոխությունների կատարման նպատակահարմարության իմաստավորման և պետական հատվածում կառավարման սկզբունքների փոփոխման (այսինքն՝ կառավարման վարչարարական մեթոդներից անցում տեղերից առաջարկվող տնտեսական նախաձեռնությունների լայն կիրառմանը) անհրաժեշտության հանգամանքները, որոնք լրացուցիչ խոչընդոտ կհանդիսանան այդ մեթոդների ներդրման գործում:

Ուստի, վերը նշված բյուջետավորման մեթոդներից յուրաքանչյուրի ներդրումը, ինչպես ցանկացած բարեփոխում, պահանջում է լուրջ և երկարաժամկետ նախապատրաստական աշխատանքների իրականացում: Դա ներառում է.

- պետական մարմինների տարբեր մակարդակի մասնագետների և ղեկավար անձնակազմի, լայնածավալ և պարբերական վերապատրաստման կազմակերպում, որը հնարավորություն կընձեռի նրանց ծանոթանալու այդ մեթոդներին, տիրապետելու այդ մեթոդների կիրառման ժամանակ առաջադրվող նոր պահանջներին բավարար ունակություններ դրսևորելու համար անհրաժեշտ գանազան անալիտիկ գործիքներին, ինչպես նաև հասկանալու այդ մեթոդների կիրառման առավելությունները,
- բյուջետավորման նոր մեթոդներին համապատասխանող բյուջեի կատարման, աուդիտի, հաշվետվողականության և վերահսկողության՝ հետևողականորեն իրար փոխլրացնող համակարգերի մշակում և ներդրում,
- վերը նշվածի իրագործման համար համապատասխան խորհրդատվական և ֆինանսատեխնիկական ապահովման առկայություն:

Հարկ է նշել, որ ծրագրային բյուջետավորման վերը նշված մեթոդները չեն հանդիսանում քարացած դոգմաներ և ենթարկվում են էվոլյուցիոն փոփոխությունների: Ուստի և, յուրաքանչյուր պետություն, ելնելով իրեն բնորոշ առանձնահատկություններից, ինքն է որոշում բարեփոխումների շրջանակը, դրանց նախապատրաստման և իրականացման տևողությունը և ուղղվածությունը:

Ծրագրային բյուջետավորման ներդրման բնագավառում հանրապետությունում իրականացված միջոցառումները.

2001 թվականից սկսած՝ կառավարությունը ձեռնամուխ է եղել նախապատրաստական աշխատանքներ կատարել բյուջետավորման՝ մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսներ) վրա հիմնված մեթոդից արդյունքների վրա հիմնված մեթոդին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Արդյունքում 2002, 2003 և 2004 թվականների պետական բյուջեների նախագծերի կազմում (2003 թ.՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում, իսկ 2002 և 2004 թթ.՝ կառավարության այդ տարիների բյուջետային ուղերձներում) ներառվել են սոցիալական ոլորտներում (կրթություն, առողջապահություն և սոցիալական ապահովություն) այդ տարիների պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ծախսային ծրագրերի ակնկալվելիք արդյունքների ցուցանիշները:

2003 թվականին կառավարությունը մշակել է ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագիր: Այս գործողությունների ծրագիրը հաշվի է

առնում այն փաստը, որ ծախսային ծրագրի արդյունավետ կառուցվածքը հիմք է հանդիսանում հաջող ծրագրային բյուջետավորման և քաղաքականության և բյուջեների կապի համար:

Համաձայն այս գործողությունների ծրագրի՝ պահանջվում է, որ բոլոր պետական մարմինները վերափոխեն իրենց ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում: Դրա նպատակն է կառավարությանն ավելի արդյունավետ տեղեկատվություն ներկայացնել այն ծառայությունների կամ ուղղակի արդյունքների վերաբերյալ, որոնք տրամադրվելու են բյուջետային գումարների դիմաց: Ծրագրերի վերափոխումով և դրանց ֆինանսական զնահատականը տալով ըստ ծառայությունների՝ կառավարությունն ավելի լավ տեղեկատվություն կունենա մատուցվող ծառայությունների արժեքի վերաբերյալ: Սա կօգնի կառավարությանը, որպեսզի այն ավելի լավ հասկանա ծառայությունների մատուցման համար կատարվող ծախսային որոշումների հնարավոր հետևանքները և այդպիսով կօգնի ռեսուրսներն ուղղել այն ոլորտներին և միջոցառումներին, որոնք լավագույնս կնպաստեն ՀՀ կառավարության նպատակների իրականացմանը: Այսպիսով՝ այս տեղեկատվությունը շատ կարևոր է, որպեսզի ուժեղանա քաղաքականության և բյուջեների միջև կապը Հայաստանում: Այս խնդիրն ավելի կարևոր է դառնում, քան անցյալում, քանի որ իրագործման փուլում է ԱՀՌԾ–ն և ավելացել են քաղաքական պահանջները՝ կառավարության միջոցառումների, ձեռք բերված արդյունքների և հաշվետվողականության միջև կապերի թափանցիկության առումով: Նման պահանջները Ազգային ժողովի և, հենց իսկ, կառավարության կողմից ընդգծում են այս բարեփոխումների անհրաժեշտությունը:

Այս մոտեցումը 2003–2004 թթ. փորձնականորեն կիրառվել է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (ԱՄՀՆ)՝ ըստ գործողությունների ծրագրի պահանջների, իսկ սկսած 2004 թվականից՝ այն կիրառվում է նաև երեք այլ նախարարություններում՝ առողջապահության, կրթության և գիտության, ինչպես նաև մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություններում: Համաձայն գործողությունների ծրագրի՝ ԱՄՀՆ–ի ծրագրերի նոր կառուցվածքը հրատարակվել է ՀՀ 2005–2007 թթ. ՄԺԾԾ–ում և ներառվել է ՀՀ 2005թ. պետական բյուջեի մասին օրենքում, իսկ վերոնշյալ երեք նախարարությունների նոր կառուցվածքը՝ ՀՀ 2006–2008 թթ. և 2007–2009թթ. ՄԺԾԾ–ում և ՀՀ 2006 թ. պետական բյուջեում:

Ներկայումս ընթանում են աշխատանքներ ծրագրերի իրականացման արդյունքների ցուցանիշների և համապատասխան հաշվետվությունների ձևերի մշակման և փորձարկման գծով:

Վերը նշված աշխատանքների առավել արդյունավետ կատարումը կազմակերպելու նպատակով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ուսուցման կենտրոնում իրականացվող դասընթացների միջոցով պետական կառավարման մարմինների աշխատակիցների շրջանում տարածվում են բյուջետավորման նոր մեթոդների կիրառման գծով գիտելիքները: Այս ուղղությամբ դասընթացների անցկացումը նախատեսվում է ներառել նաև ուսուցման կենտրոնի առաջիկա տարիների ուսումնական ծրագրերում:

Ներկայումս վերը նշված միջոցառումների կատարմանը զուգահեռ սկսվել են քննարկումներ արդյունքների վրա հիմնված բյուջետային ծախսային ծրագրերի գան-

ծապետական կատարման ու դրա վերաբերյալ հաշվետվողականության ապահովման հարցերի շուրջ: Մասնավորապես նպատակ է դրվել պետական հատվածում ծրագրային բյուջետավորման ներդրման հետ կապված համապատասխանեցնել բյուջեների կազմման և բյուջեների կատարման ու հաշվետվությունների գործող համակարգերը, ինչը ենթադրում է պետական բյուջեի կազմում, կատարում և հաշվետվությունների ներկայացում՝ հիմնվելով արդյունքների վրա:

Միաժամանակ հարկ է նշել, որ ներկայումս քննարկման փուլում է պետական բյուջեի նախագծի ներկայացման ընդհանուր ձևաչափի վերափոխման խնդիրը: Պետական բյուջեի նախագծի ներկայացման վերափոխված ձևաչափը պետք է ապահովվի, որպեսզի վերջինում, բացի ծրագրերին ուղղվելիք ֆինանսական ռեսուրսների, պարզորոշ ներկայացվի նաև ծրագրերը բնորոշող ոչ ֆինանսական տեղեկատվությունը, այն է՝ ծրագրի նպատակը, վերջինիս հասնելու համար իրականացվելիք միջոցառումները և մատուցվելիք ծառայությունները, ծրագրի իրականացումից սպասվելիք արդյունքները և նրանց շահառուները: Փորձական աշխատանքներն արդեն սկսվել են սոցիալ-մշակութային ոլորտի վերը նշված նախարարություններում:

Ելուղային պետական մարմինների կողմից իրագործվող ծրագրերի արդյունավետ կատարումն առկա ռեսուրսների սահմաններում ապահովելու համար այդ ծրագրերի իրականացման համար հատկացված ռեսուրսների վերաբաշխման գործում պետական մարմինների իրավասությունները ընդլայնելու նպատակով, սկսած 2002 թվականից, փորձնական կարգով, բյուջետային օրենսդրությամբ թույլատրվել է, ծրագրի հաջող կատարման անհրաժեշտությունից ելնելով, կառավարության կողմից սահմանված կարգով առանց սահմանափակման վերաբաշխել ծրագրի գծով օրենքով սահմանված հատկացումները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների: Դրա հետ մեկտեղ զգալի արագացվել է տվյալ պետական կառավարման մարմնի կողմից իրականացվող տարբեր ծրագրերի միջև հատկացումների վերաբաշխման գործընթացը (նախկինում այն կարող էր կատարվել միայն կառավարության որոշմամբ, իսկ ներկայումս՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համաձայնեցված):

Ի՞նչ պրոբլեմներ կան

Առկա պրոբլեմները կարելի է բաժանել երկու խմբի՝ *տեխնիկական* և *համակարգային* բնույթի:

ա) Տեխնիկական պրոբլեմներ:

Ծրագրային բյուջետավորման ներդրումը նախատեսում է, որպեսզի բոլոր պետական մարմինները վերաձևակերպեն իրենց ծախսային ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում՝ ապահովելով ծրագրի իրականացման նպատակով կատարվող բոլոր ծախսերի բաշխումը ծրագրի միջև: Դրանք պետք է ընդգրկեն ոչ միայն այն ծախսերը, որոնք ուղղակիորեն հատկացվում են ծրագրին, այլև անուղղակի ծախսերը (ծրագրերի գոյություն ունեցող կառուցվածքով, պետական մարմինների կենտրոնական ապարատի աշխատակազմի ինչպես քաղաքականություն մշակող, մոնիտորինգ իրականացնող, այնպես էլ ծառայություններ մատուցող ստորաբաժանումների գծով ծախսերը՝ աշխատավարձ,

կոմունալ սպասարկման և պահպանման ծախսեր, խմբավորված են պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատների պահպանման ծախսերի գծով ծրագրերում): Որպեսզի ծառայությունների վրա հիմնված ծրագրերն արտացոլեն այդ ծառայությունների մատուցման համար կատարված բոլոր ծախսերը, որոնք ավանդորեն խմբավորվել են կենտրոնական ապարատի պահպանման ծախսերի գծով ծրագրերում, դրանք պետք է բաշխվեն ծառայությունների վրա հիմնված ծրագրերի միջև:

Սակայն բյուջեների կատարման ավտոմատացման ներկայիս պայմաններում ՀՀ պետական բյուջեն միայն ծրագրային դասակարգմամբ հաստատելը լուրջ բարդություններ կարող է առաջ բերել բյուջեների կատարման և հաշվետվությունների ներկայացման առումով: Խոսքը վերաբերում է բյուջեներից իրականացվող վճարումների նկատմամբ գանձապետական համակարգի կողմից ներկայումս իրականացվող նախնական հսկողության և բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ պետական մարմինների կողմից գանձապետարան ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության գնահատման գործառույթների թուլացմանը կամ վերացմանը: Միաժամանակ, միայն ծրագրային դասակարգմամբ բյուջեն հաստատելու պայմաններում էապես կաճեն գանձապետական համակարգի, պետական մարմինների և մատակարարների միջև իրականացվող գործառույթների ծավալները, քանի որ մեկ ծախսատեսակը մի քանի ծրագրերի միջև բաժանելը կստեղծի լրացուցիչ աշխատանք: Ուստի հարցը կարգավորելու նպատակով ներկայումս կիրառվում է հետևյալ «ժամանակավոր» մոտեցումը:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ժամանակ բյուջեների կատարման և հաշվետվությունների ներկայացման ոլորտում առաջ եկող խնդիրների կարգավորման նպատակով վերը նշված նախարարությունների ծրագրերը հաստատվում են երկու ձևաչափերով.

ա) Ձևաչափ N 1. Ծառայությունների վրա հիմնված ծրագրերի գործող դասակարգմամբ հաստատում ըստ ծախսերի գործառական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգումների, որտեղ կենտրոնական ապարատի պահպանման ծախսերը բաշխված չեն ծրագրերի միջև: Այս դասակարգումը օգտագործվում է բյուջեների կատարման, դրամական հոսքերի կառավարման, վերահսկման և հաշվետվությունների ներկայացման նպատակով:

բ) Ձևաչափ N 2. Հաստատվում է ծառայությունների վրա հիմնված ծրագրերի նոր կառուցվածք, որտեղ կենտրոնական ապարատի (ներկայումս միայն ծառայություններ մատուցող՝ պետական կառավարման հանրապետական մարմինների կենտրոնական ապարատների կառուցվածքի բաղկացուցիչ մաս կազմող գործակալությունների գծով) պահպանման ծախսերը բաշխվում են այլ ծրագրերի միջև: Այս ձևաչափն օգտագործվում է պետական բյուջեի մասին որոշումների կայացմանը աջակցելու նպատակով և հիմք է հանդիսանում եռամսյակային և տարեկան մոնիտորինգի և հաշվետվության համար:

Վերոհիշյալ երկու ձևաչափերը մեկը մյուսով պայմանավորված և սերտորեն փոխկապակցված են:

Այս մոտեցմամբ պետական բյուջեի հաստատումն առանձնացնում է պետական

բյուջեի կատարման, դրամական հոսքերի կառավարման և հաշվետվությունների ներկայացման նպատակով ծախսային ծրագրերի դասակարգումը (1–ին ձևաչափ) պետական բյուջեի պլանավորման և հաշվետվության համար օգտագործվող ծախսային ծրագրերի դասակարգումից (2–րդ ձևաչափ):

Բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների համար ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններն ու զանձապետարանը պետք է կիրառեն 1–ին ձևաչափը: Միաժամանակ, հիմք ընդունելով 1–ին ձևաչափով ներկայացված հաշվետվությունները և պետական բյուջեի մասին օրենքով սահմանված 1–ին ձևաչափից 2–րդ ձևաչափին անցման սկզբունքները, պետական կառավարման հանրապետական մարմինները պետք է ինքնուրույն հաշվարկեն և կազմեն նույն հաշվետվությունները 2–րդ ձևաչափով և ներկայացնեն զանձապետարան: 2–րդ ձևաչափով ներկայացված հաշվետվությունների արժանահավատության համար ողջ պատասխանատվությունը պետք է վերապահվի այն ներկայացնող պետական մարմիններին, քանզի զանձապետարանը չունի և չի կարող ունենալ այդ հաշվետվությունների արժանահավատության գնահատման համապատասխան գործիքներ:

Խնդիրն այն է, որ բյուջետային ծրագրերի երկու ձևաչափով ներկայացման այս եղանակը, նույնիսկ ընդամենը չորս նախարարությունների գծով, ինչպես դա արվում է ներկայումս, բավականին աշխատատար է, իսկ ամբողջական փաստաթուղթը, ըստ էության, բարդընթեռնելի: Վիճակն էլ ավելի կվատթարանա այն դեպքում, երբ այդ եղանակով բյուջետային ծրագրերի ներկայացմանը կանցնեն բոլոր պետական կառավարման մարմինները: Ուստի, մոտակա ժամանակահատվածում անհրաժեշտություն է դառնալու պետական բյուջեի նախագծի ներկայացման վերափոխված մի այնպիսի ձևաչափի մշակման ու ներդրման, որը կապահովի, որպեսզի վերջինում, բացի ծրագրերին ուղղվելիք ֆինանսական ռեսուրսների, պարզորոշ ներկայացվի նաև ծրագրերը բնորոշող ոչ ֆինանսական տեղեկատվությունը:

Դրա հետ մեկտեղ նոր մեթոդի կիրառումը կպահանջի դրան օժանդակող տեղեկատվական նոր համակարգի ստեղծում, որը կհավաքագրի և կհաշվառի տվյալներ տարբեր պետական կառավարման մարմինների ստացված նպատակների, խնդիրների և միջոցառումների, հաստատված քանակական և որակական արդյունավետության ցուցանիշների մասին, ինչպես նաև ծրագրերի վերլուծության և գնահատման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

բ) Համակարգային բնույթի պրոբլեմներ:

Ծրագրային բյուջետավորման մեթոդի կիրառմամբ ծրագրերի ձևավորման գործընթացը ենթադրում է, որ

- պետական կառավարման մարմիններում պետք է տիրապետվեն և զարգանան քաղաքականության նպատակները պետական ծախսերի հետ կապելու ունակություններ: Դրա հետ մեկտեղ այդ մարմիններին անհրաժեշտ կլինի հստակեցնել իրենց առջև դրվող հիմնական նպատակները և սահմանել այդ նպատակների նվաճման համար հնարավոր այլընտրանքային ուղիներ: Այդ իսկ պատճառով բոլոր պետական կառավարման մարմիններն այդ պահին պետք է

գինված լինեն այդ մեթոդի կիրառման համար միասնական ունիվերսալ այնպիսի մեթոդաբանությամբ, որը մի կողմից իր մեջ կամփոփի ներկայումս կատարվող փորձնական աշխատանքներում կուտակված և ընդհանրացված փորձը, իսկ մյուս կողմից այդ մարմինների համար կհանդիսանա որպես պարզ ու հասկանալի ուղեցույց,

- համանման ուղղվածություն պետք է ունենան նաև բյուջետային գործընթացի, դրան հաջորդող մյուս կարևորագույն փուլերը՝ բյուջեի կատարումը, վերջինիս նկատմամբ աուդիտը, հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը և վերահսկողությունը: Առանց այդ շղթայի բոլոր օղակների՝ ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխանեցված գործունեության անհնարին է դառնում ճիշտ գնահատել ծրագրի իրականացման թույլ և ուժեղ կողմերը, ծրագրի ընթացքը, ծրագրային արդյունքների և նպատակների նվաճման մասին տեղեկատվության հավաստիությունը, ինչպես նաև ծրագրի իրականացման արդյունավետությունը: Հետևաբար, նման պայմաններում անհնարին է դառնում նաև ժամանակին արձագանքել տվյալ ծրագրի ընթացքին խոչընդոտող հանգամանքների առաջացման դեպքում, որն էլ ավելի կդժվարացնի և կխճճի ծրագրի հետագա իրականացումը: Ուստի, բյուջետային գործընթացի բոլոր փուլերի ծրագրային բյուջետավորման մեթոդով տրված նույն «ալգորիթմով» փոխհամաձայնեցված աշխատանքի ապահովման խնդիրը դիտարկվում է որպես իր լուծումը պահանջող կարևորագույն համակարգային խնդիր: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ կլինի պետական մարմիններում ներքին պլանավորման, մոնիթորինգի և հաշվետվության համակարգերի ստեղծում և ներդրում, դրանց կիրառման արդյունքում ձեռք բերվելիք փորձի կուտակումն ու ամփոփումը և դրա հիման վրա այդ համակարգերի հետագա կատարելագործում:

Որո՞նք են հետագա անելիքները

Վերը նշված պրոբլեմների առկայությունը կանխորոշում է ծրագրային բյուջետավորման ներդրման գծով բարեփոխումների զարգացման նպատակով առաջիկայում անհրաժեշտ անելիքները: Մասնավորապես.

- ծրագրային բյուջետավորման մեթոդների ներդրման անհրաժեշտության և վերջինիս առավելությունների մասին բացատրական աշխատանքի հետ հանդերձ անհրաժեշտ կլինի մշակել այդ մեթոդի կիրառման համար միասնական ունիվերսալ մեթոդաբանություն և շարունակել պետական մարմիններում ծրագրային բյուջետավորման մեթոդների կիրառման ունակությունների զարգացման գծով ուսուցման զանազան եղանակների հաջորդական անցկացումը,
- անհրաժեշտ կլինի մշակել և կիրառության մեջ դնել պետական կառավարման մարմինների կողմից բյուջետային հայտերի, ինչպես նաև պետական բյուջեի նախագծի ներկայացման և հաստատման, ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխանող նոր ձևաչափեր,
- անհրաժեշտ կլինի համալիր միջոցներ ձեռնարկել ծրագրային բյուջետավորման փուլին հաջորդող բյուջետային գործընթացի բոլոր մյուս փուլերում (բյուջեի կատարում, վերջինիս նկատմամբ աուդիտի իրականացում, հաշվետվությունների կազմում, ներկայացում և վերահսկողություն) իրականացվող համապատասխան գործառույթների՝ ծրագրային բյուջետավորման սկզբունքներին

համաձայնեցված իրականացման կազմակերպումն ապահովելու համար,
– ըստ փորձնական նախարարություններում բարեփոխումների իրականացման դրական ընթացքի՝ աստիճանաբար ընդլայնել բարեփոխումներով ընդգրկվող պետական մարմինների շրջանակը:

Ամփոփելով վերը ներկայացվածը կարելի է ասել, որ ծրագրային բյուջետավորման սկզբունքների հիման վրա պետական ծախսերի կառավարումն ի վիճակի է բարձրացնել պետական ծախսերի կատարման արդյունավետությունը՝ հանրության համար իրականում կարևոր ուղղություններում ռեսուրսների կենտրոնացման շնորհիվ: Ծրագրային բյուջետավորման մեթոդների կիրառմանն անցումը, ինչպես վկայում է միջազգային փորձը, բարդ և բավականին երկարատև գործընթաց է: Անցման տևողությունը կապված է զանազան կազմակերպչական, տեխնիկական և այլ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, և այն նպատակահարմար է իրականացնել փուլ առ փուլ՝ սկզբից մի քանի նախարարություններում՝ նոր մեթոդի ներդրման արդյունքում ստացված դրական փորձն աստիճանաբար տարածելով այլ պետական կառավարման մարմինների վրա: Դրա հետ հանդերձ, ինչպես միշտ, բարեփոխման իրականացման հաջողության գրավականներից մեկը պետական կառավարման մարմիններում պատշաճ պատրաստված՝ բարեփոխումն առաջ տանող անձնակազմի առկայությունն է:

Հարկ է նշել, որ բյուջետային գործընթացում ծրագրային բյուջետավորման սկզբունքների կիրառման արդյունքում կատարվող փոփոխությունների մեծ մասն ուղղված է ոչ թե բյուջետային գործընթացի տեխնիկական կատարելագործմանը, այլ պետության կողմից մատուցվող ծառայությունների ֆինանսավորման բարելավմանը: Դրա արդյունքում բյուջետային գործընթացի առանձին փուլեր ավանդականի նկատմամբ կարող են դառնալ ավելի աշխատատար և տևական: Միաժամանակ, բյուջետավորման վերը նշված նոր մեթոդները ենթադրում են ոչ միայն բյուջետային գործընթացի առանձին փուլերի բովանդակության և տևողության ճշգրտում, այլև հաշվառման սկզբունքների փոփոխություն (դրամարկղային սկզբունքով հաշվառումից հաշվեգրման սկզբունքով հաշվառման անցում), ինչպես նաև բյուջետային ծրագրավորմամբ ընդգրկվող ժամանակահատվածի երկարացում (երկարաժամկետ բյուջետավորմանն անցում):

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպիսի՞ բյուջետային բարեփոխումներ են իրականացվել ՀՀ-ում 1995–2005 թթ.:
2. Որո՞նք են միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման անհրաժեշտությունը, նպատակը, առավելությունները:
3. Ի՞նչ է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացը:
4. Ինչպիսի՞ մեթոդներ են կիրառվում ծրագրային բյուջետավորման գործընթացում:

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

9.1. ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ

Պետական և ոչ պետական արտաբյուջետային հիմնադրամների ձևավորման անհրաժեշտությունը թելադրվում է հասարակության գործունեության սոցիալ-տնտեսական բնույթի կարևոր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, ցանկացած պետության համար չափազանց կարևոր խնդիր է կայուն կենսաթոշակային պետական համակարգի ձևավորումը, ինչպես նաև բժշկական և սոցիալական ապահովագրությունը, ավտոճանապարհային կոմունիկացիաների զարգացումը, բնապաշտպանական խնդիրների լուծումը և այլն:

Արտաբյուջետային հիմնադրամները հանդես են գալիս որպես երկարատև ժանկետի համար կանխատեսվող, կայուն որակով դրամական միջոցներ, որոնք օգտագործվում են հատուկ նշանակության կամ տնտեսական բնույթի ծրագրերի ֆինանսավորման համար: Դա իրականացվում է գործադիր և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

Արտաբյուջետային հիմնադրամների համար բնութագրական է եկամուտների աղբյուրների հստակ սահմանազատումը, որը հնարավորություն է տալիս ճիշտ կանխատեսել այդ հիմնադրամների ծավալը, նախատեսել ծախսման նպատակները և ուղղությունները:

Բոլոր զարգացած երկրների հանրային ֆինանսների համակարգում արտաբյուջետային հիմնադրամները զբաղեցնում են կարևոր տեղ:

Արտաբյուջետային հիմնադրամների նախատիպ են հանդիսացել հատուկ հիմնադրամները, որոնք առաջացել են բյուջեից ավելի վաղ՝ պետության կողմից կոնկրետ խնդիրների լուծման նպատակով: Դրանք, որպես կանոն, կրել են ժամանակավոր բնույթ, ընդ որում թիվը և ծավալները աճել են պետության առջև ծագած խնդիրների ավելացմանը զուգընթաց:

Ժամանակակից պայմաններում արտաբյուջետային հիմնադրամներն իրենցից ներկայացնում են ազգային եկամտի վերաբաշխման մեխանիզմ, իսկ հաճախ նաև համախառն ներքին արդյունքի մասի նպատակ հետապնդելով պաշտպանել բնակչության առանձին սոցիալական խմբերի շահերը, լուծել տնտեսական բնույթի կոնկրետ խնդիրներ:

Արտաբյուջետային հիմնադրամների քանակի ավելացումը և դրանցում կուտակված միջոցների միագումար ծավալի աճը համարվում են տնտեսապես զարգացած երկրների բնութագրական առանձնահատկությունը: Դա նախ և առաջ բացատրվում է սոցիալական, էկոլոգիական խնդիրների լուծման, տարբեր տարածաշրջաններում բնակչության կյանքի պայմանների հավասարեցման հարցերում պետության դերի մեծացմամբ:

Արտաբյուջետային հիմնադրամները պատմականորեն ձևավորվել են երկու ուղիով.

1. բյուջեից որոշակի, կարևորություն ներկայացնող ծախսերի առանձնացումը և դրանց ֆինանսավորման համար հատուկ հիմնադրամների ստեղծումը,
2. սեփական եկամուտների աղբյուրների հաշվին հիմնադրամի ձևավորումը:

Արտաբյուջետային հիմնադրամները միշտ ունեցել են խիստ նպատակային նշանակություն և վերահսկվում են բյուջեից անկախ: Արտաբյուջետային հիմնադրամների միջոցները գտնվում են պետական կամ մունիցիպալ սեփականության կազմում: Երբ այդ հիմնադրամներում եկամուտները ավելի են, քան ծախսերը, ավելցուկային միջոցները, մասնակիորեն, մի շարք երկրներում օգտագործվում են վերադարձելիության սկզբունքով՝ բյուջեի դեֆիցիտը ծածկելու նպատակով:

Հիմնադրամների մեծ մասը ստեղծվում է ազգային եկամտի վերաբաշխման գործընթացում հատուկ հարկերի, փոխառությունների, ինչպես նաև բյուջեից կատարվող ընթացիկ տրանսֆերտների միջոցով: Բյուջետային միջոցները կարող են փոխանցվել արտաբյուջետային հիմնադրամներին սուբսիդիաների և սուբվենցիաների կամ հարկային եկամուտներից հատկացումների ձևով:

Այսպիսով՝ արտաբյուջետային հիմնադրամների ստեղծումը երկրի ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման և օգտագործման յուրահատուկ ձև է համապետական, տնտեսական նշանակության պահանջումներին կամ տարածաշրջանային նշանակության խնդիրների ֆինանսավորման համար: Այդ հիմնադրամները տարբերվում են ըստ իրավական վիճակի և ստեղծման նպատակների:

Ըստ իրավական վիճակի՝ արտաբյուջետային հիմնադրամները լինում են պետական և տեղական: Պետական հիմնադրամները գտնվում են կենտրոնական իշխանության մարմինների, իսկ տեղական հիմնադրամները՝ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինման տակ:

Ըստ նպատակաուղղվածության՝ արտաբյուջետային հիմնադրամների միջոցների օգտագործման ուղղությունները ստորաբաժանվում են սոցիալական (հաճախ դրանց անվանում են նաև սոցիալական ապահովագրության ֆոնդ) և տնտեսական ֆոնդերի: Առաջինը նախատեսված է հիմնականում սոցիալական բնույթի խնդիրների համար, իսկ երկրորդն ունի տնտեսական ուղղվածություն:

Արտաբյուջետային հիմնադրամները՝ որպես ինստիտուցիոնալ կառույցներ, համարվում են ինքնուրույն ֆինանսական, իսկ հաճախ նաև ֆինանսավարկային հաստատություններ և, մասնավորապես, նպատակ ունենալով ստանալ լրացուցիչ եկամուտներ, հանդես են գալիս խոշոր ներդրողների կարգավիճակով նախ և առաջ պետական արժեթղթերի շուկայում: Արտաբյուջետային հիմնադրամների ձևավորման իրավական հիմքը պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համապատասխան օրենքներն ու նորմատիվ ակտերն են:

Մի շարք երկրներում (այդ թվում նաև անցումային) սոցիալական նշանակության հիմնադրամներին վերաբերում են.

1. կենսաթոշակային հիմնադրամը,
2. սոցիալական ապահովագրության հիմնադրամը,
3. պարտադիր բժշկական ապահովագրության ֆեդերալ կամ տարածքային հիմնադրամները,
4. զբաղվածության պետական հիմնադրամը:

Այդ հիմնադրամները կոչված են ապահովելու քաղաքացիների սահմանադրա-

կան իրավունքները կենսաթոշակ ստանալու, հիվանդության, հաշմանդանության, խնամողին կորցնելու, առողջության պահպանման և բժշկական օգնության, գործազրկությունից պաշտպանելու դեպքերում և այլն:

Կենսաթոշակային հիմնադրամ

Կենսաթոշակային հիմնադրամը ՀՀ-ում ինքնուրույն ֆինանսավարկային հաստատություն է:

Հիմնադրամի դրամական միջոցները կան այլ ակտիվները համարվում են պետական սեփականություն:

Կենսաթոշակային հիմնադրամի գլխավոր խնդիրն է երկրի տարածքում գործող օրենսդրության, միջպետական և միջազգային պայմանագրերի հիման վրա, պետական թոշակների, աշխատանքային, զինվորական և սոցիալական նպաստների, ներառյալ երեխաների խնամքի, կերակրողին կորցնելու համար նպաստների վճարումներ կատարելը:

Ջարգացած երկրներում յուրաքանչյուր ապահովագրված անձի համար կենսաթոշակային հիմնադրամը բացում է անհատական հաշիվ՝ մշտական ապահովագրական համարով: Տրվում է ապահովադրին համապատասխան հաշվառման քարտ: Այն անձը, որը նոր է ընդունվում աշխատանքի, ստանում է աշխատատեղից ապահովագրական վկայագիր: Անչափահասները չեն համարվում կենսաթոշակային պետական հիմնադրամի սուբյեկտներ, բացառությամբ նրանց, որոնք կորցրել են կերակրողին: Պետական կենսաթոշակային ապահովագրության վկայագրերը պահպանվում են ապահովագրված անձանց մոտ: Այդ անձի վերաբերյալ փոփոխությունները անմիջապես գրանցվում են նրա անհատական հաշվառման հաշվում:

Գործատուները ներկայացնում են տվյալներ բոլոր այն անձանց վերաբերյալ, որոնք, ըստ աշխատանքային պայմանագրի, աշխատում են իրենց մոտ, և որոնց համար նրանք վճարում են ապահովագրավճարներ: Տվյալները, որպես կանոն, ներկայացվում են տարածաշրջանային տեղական սոցապ. մարմիններին: Այն քաղաքացիները, որոնք ինքնուրույն են կատարում ապահովագրավճարները, իրենք են ներկայացնում տվյալները իրենց գրացման տեղական սոցապ. բաժին:

Սոցիալական ապահովագրության հիմնադրամ

Սոցիալական նշանակության արտաբյուջետային հիմնադրամներից է նաև սոցիալական ապահովագրության հիմնադրամը: Այն նախատեսվում է պետական ապահովագրման միջոցները տնօրինելու և օրենքով նախատեսված նպատակով ծախսելու համար և հանդես է գալիս որպես մասնագիտացված ֆինանսավարկային հաստատություն՝ տվյալ պետության կառավարությանն առընթեր:

Հիմնադրամի տրամադրության տակ գտնվող դրամական միջոցները և այլ գույքը, ինչպես նաև գերատեսչությունների կողմից հիմնադրամին կցված առողջարանները, համարվում են պետական սեփականություն: Հիմնադրամի դրամական միջոցները չեն մտնում պետական և տեղական բյուջեների կազմի մեջ:

Հիմնադրամի բյուջեն և կատարողականի հաշվետվությունը հաստատվում են օրենսդիր մարմնի կողմից:

Տվյալ պետության վարչատարածքային բաժանումը պայմանավորում է նաև սոցիալական ապահովագրության հիմնադրամի կառուցվածքը:

Սոցիալական ապահովագրության հիմնադրամը, նրա տարածաշրջանային և

կենտրոնական բաժանմունքները համարվում են իրավաբանական անձինք, ունեն բանկերում ընթացիկ և այլ հաշիվներ:

Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնադրամ

Ջարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ առողջապահական հիմնախնդիրների արդյունավետ լուծման խթաններից մեկը բժշկական ապահովագրության կիրառումն է: Այդ պայմաններում ապահովագրությունը նպատակաուղղված է ինչպես պետության, այնպես էլ կազմակերպությունների և բնակչության միջոցներով հատուկ հիմնադրամի ստեղծմանը: Բժշկական սոցիալական ապահովագրությունը՝ որպես սոցիալական ապահովագրության քաղաքականության մի ոլորտ, ոչ միայն երաշխավորում է հասարակության անդամներին սոցիալական օգնություն և ծառայությունների տրամադրում, այլև քաղաքացիների՝ սոցիալական ռիսկի այնպիսի գործոններից պաշտպանություն, որոնցից են հիվանդությունը, աշխատունակության կորուստը, դժբախտ պատահարները և այլն: Նշենք, որ միջազգային գործընթացում տարբերվում են բժշկական ապահովագրության պարտադիր և կամավոր ձևերը: Վերջինիս մասին մանրամասն շարադրված է ստորև:

Պետության կողմից պարտադիր բժշկական ապահովագրության կիրառման դեպքում ձևավորվում է արտաբյուջետային պարտադիր բժշկական ապահովագրության հիմնադրամը: Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնական նպատակը հիվանդների և անապահով խավի բուժսպասարկման ծախսերի փոխհատուցումն է:

Առողջապահության տարբեր համակարգեր ունեցող երկրներում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումն իրականացվել և զարգացել է երկու ընդհանուր ուղիներից մեկով: Համաձայն առաջին ուղու՝ աշխատող բնակչության համար հատուկ ստեղծված ապահովագրական նախագծերից երկրի բարեկեցության աճին համընթաց անցում է կատարվել դեպի ազգային համակարգի հետ աստիճանական միավորման: Այդ ուղիով շարժվել են ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան և այլն:

Պարտադիր բժշկական ապահովագրության երկրորդ ուղին պետության կողմից վերահսկվող և ֆինանսավորվող առողջապահության ազգային համակարգից անցումն է ապահովագրության հաշվին ֆինանսավորվող համակարգին: Այս ուղին մեծ կիրառություն է գտել անցումային տնտեսություն ունեցող Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև ԱՊՀ երկրներում: Այս երկրներում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը հաճախ ներդրվել է գոյություն ունեցող բյուջետային ֆինանսավորման համակարգին զուգընթաց՝ առողջապահության ոլորտը լրացուցիչ միջոցներով ապահովելու նպատակով: Անցումային տնտեսություն ունեցող երկրներում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը հիմնականում ֆինանսավորվում է աշխատավարձի ֆոնդից գանձվող հարկի հաշվին:

Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնադրամը պետական ոչ առևտրային ֆինանսավարկային հաստատություն է: Այն նպատակ է հետապնդում կուտակել ֆինանսական միջոցներ պարտադիր բժշկական ապահովագրության համար:

Զբաղվածության պետական հիմնադրամ

Արտաբյուջետային հիմնադրամներից է նաև զբաղվածության հիմնադրամը: Այդ հիմնադրամի միջոցները նախատեսվում են պետության կողմից ազգաբնակչության զբաղվածության քաղաքականության մշակման և համապատասխան միջոցառում-

ների իրականացման համար: Ջբաղվածության պետական հիմնադրամի ձևավորման աղբյուրներն են.

1. գործատուների կողմից կատարվող պարտադիր վճարները,
2. բյուջետային հատկացումները,
3. քաղաքացիների և կազմակերպությունների կամավոր վճարները,
4. այլ մուտքերը:

Ջբաղվածության պետական հիմնադրամին միջոցների պարտադիր վճարողներ համարվում են միայն գործատուները՝ ձեռնարկությունները, կազմակերպությունները, հաստատությունները և այլ տնտեսավարող սուբյեկտները: Իրավաբանական անձ չհամարվող ձեռնարկատերերը, անհատական տնտեսություններում վարձու աշխատողներ օգտագործող քաղաքացիները, նոտարները, փաստաբանները, արվեստագետները զբաղվածության պետական հիմնադրամին վճարող սուբյեկտներ չեն հանդիսանում: Այդ հիմնադրամին միջոցների վճարումից ազատվում են նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև նրանց կանոնադրական նպատակով ստեղծված սեփական կազմակերպությունները, ձեռնարկությունները, հաստատությունները:

Որպես կանոն, զբաղվածության պետական հիմնադրամին վճարումներ կատարվում են ամսական կտրվածքով: Հաշվարկի համար բազային մեծություն է աշխատանքի վարձատրության գումարը (աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ):

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ԱՊՀ երկրներից շատերում զբաղվածության պետական հիմնադրամը զարգացման անհրաժեշտ մակարդակ չունի և ենթակա է արմատական բարեփոխումների:

Ջբաղվածության պետական հիմնադրամի միջոցները ծախսվում են հետևյալ նպատակներով.

1. զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացման,
2. գործազուրկներին նյութական օժանդակություն ցույց տվող ծրագրերի ֆինանսավորման,
3. զբաղվածության ծրագրերի տեղեկատվական օժանդակության:

9.2. ՀՀ–ՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո արտաբյուջետային հիմնադրամները անմիջականորեն ենթարկվեցին կառուցվածքային փոփոխությունների, ինչը պայմանավորված էր նախ և առաջ ֆինանսական համակարգում իրականացված բարեփոխումներով:

Սոցիալական ապահովագրության բնագավառում խորհրդային տարիներին ընդունված օրենքներին, որոնց համաձայն միջոցները հավաքագրվում էին պետական բյուջեի միջոցով և ծախսվում էին նույնպես բյուջեով, փոխարինելու եկան նոր մոտեցումներ, նոր օրենսդրական դաշտ, ինչպես նաև ձևավորվեցին ՀՀ սոցիալական ապահովագրության և ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամները: Դրանց ստեղծման գաղափարն այն էր, որպեսզի, խուսափելով սոցիալական ծրագ-

րերի բյուջեից մնացորդային եղանակով ապահովման պրակտիկայից, ստեղծվել արդյունավետ համակարգ սոցիալական ապահովագրության միջոցների հավաքագրման և բաշխման համար:

Իհարկե, ՀՀ կայացման փուլում սոցիալական ապահովագրության տեսակետից կարևոր են արտաբյուջետային մման հիմնադրամների ստեղծումը և սոցիալական ապահովագրության վերաբերյալ նոր օրենսդրության մշակումը:

Այս փաստը հատկապես հրատապ էր նրանով, որ Հայաստանի Հանրապետության հռչակման ժամանակահատվածում տնտեսական անկումը և արժեզրկումը հասել էին ահռելի չափերի: Մյուս կողմից, բնակչության կենսամակարդակի իջեցումը և նոր սոցիալական անապահով խմբերի ձևավորումը ավելի շատ միջոցներ էին պահանջում սոցիալական ապահովագրության միջոցառումների անցկացման համար: Ինչպես և յուրաքանչյուր նորանկախ ու անցումային ժամանակաշրջան ապրող պետության, Հայաստանի Հանրապետությանը նույնպես բնորոշ էր մեկը մյուսին փոխարինող և լրացնող մի շարք օրենսդրական ակտերի և նորմերի ընդունումը: 1992 թվականի հուլիսի 1–ին ընդունվեց «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքը, որը կարելի է համարել Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության համակարգը կարգավորող առաջին օրենքը: Մասնավորապես, առանձնահատկություններից մեկն այն էր, որ սոցիալական ապահովագրության միջոցները հավաքագրվում և օգտագործվում էին 2 հիմնադրամների միջոցով՝ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի և ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 584 որոշմամբ հաստատվել էր «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցների կազմավորման և ծախսման կարգի մասին» կանոնադրությունը, որով և հիմնականում կարգավորվում էին ՀՀ սոցիալական ապահովագրության ֆինանսները: Այսպես, այդ կանոնադրության համաձայն, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցները կազմավորվում են պետական սոցիալական ապահովագրության մուծումներից, ուղեգրերի արժեքի փոխհատուցման գումարներից և օրենսդրությամբ սահմանված այլ եկամուտներից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) պարտավոր էին հիմնադրամում գրանցվել որպես ապահովադիրներ, որի համար ներկայացվում էին համապատասխան տեղեկություններ և պետական սոցիալական ապահովագրության մուծումներ էին կատարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պետական սոցիալական ապահովագրության մուծումները կատարվում էին անկախ աշխատանքային պայմանագրի տեսակից, բոլոր աշխատողների աշխատանքի վարձատրմանն ուղղված միջոցներից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված միանվազ բնույթի վճարումների ու փոխհատուցումների: Ապահովադիրները պետական սոցիալական ապահովագրության մուծումների հաշվին նախահաշվով նախատեսված ծախսերը կատարելուց հետո մնացած գումարները սահմանված ժամկետում փոխանցում են հիմնադրամին:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 584 որոշմամբ հաստատվել էր նաև «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության հիմնադրամից քաղաքացիներին պետական սոցիալական ապահովագրու-

թյան նպաստներով ապահովման կարգի մասին» կանոնադրությունը, որը հետագայում ենթարկվել է որոշ փոփոխությունների:

Այս կանոնադրության համաձայն, ինչպես արդեն նշել ենք, և ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ՝ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամից պետական սոցիալական ապահովագրության ձևով տրվում էին հետևյալ նպաստները՝ ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի, երեխայի ծննդյան միանվագ, թաղման:

Նշված նպաստներ ստանալու իրավունք են ունեցել ձեռնարկություններում, հիմնարկներում ու կազմակերպություններում, անկախ սեփականության ձևից, աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք՝ ապահովագրիչները, որոնք ենթակա են պետական սոցիալական ապահովագրության, և որոնց համար սահմանված կարգով մուծումներ են կատարվել սոցիալական ապահովագրության հիմնադրամին: Ընդ որում, նպաստները տրվում էին, եթե դրանց ստանալու իրավունքն առաջացել էր աշխատելու ժամանակաշրջանում:

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտական–տեխնիկական ուսումնարանների, կադրերի պատրաստման ու վերապատրաստման դպրոցների և դասընթացների, արտադրությունից կտրված սովորողները, կլինիկական օրդինատորները, դոկտորանտները, ասպիրանտները, անկախ պետական սոցիալական ապահովագրության մուծումների կատարումից, օգտվում են միայն երեխայի ծննդյան և թաղման նպաստների իրավունքից: Չաշխատող և չսովորող մայրերին տրվում է միայն երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ անկախ պետական սոցիալական ապահովագրության մուծումներից:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում էր հիվանդության պատճառով (վնասվածքի հետևանքով) աշխատունակությունը կորցնելու դեպքում, ընդ որում, մասնագիտական հիվանդության և արտադրական խեղման հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարվում էր ապահովագրի միջոցների հաշվին:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում էր աշխատունակությունը կորցնելու առաջին օրվանից մինչև այն վերականգնելը կամ բժշկական աշխատանքային փորձաքննության հանձնաժողովի կողմից հաշմանդամության խումբ սահմանելը կամ խմբի վերանայելը: Պրոթեզավորման դեպքում նպաստը տրվում էր ստացիոնարում գտնվելու ժամանակահատվածի համար:

Նշենք նաև, որ կարգում մանրամասն ներկայացված էին նպաստի այս տեսակի ստանալու այլ պայմանները:

Աշխատող կանանց հղիության և ծննդաբերության նպաստը տրվում էր 140 օր, իսկ բարդ ծննդաբերության դեպքում՝ 155 օր, զույգ և ավելի երեխա ունենալու դեպքում՝ 180 օր: Նպաստի այս տեսակի համար սահմանված էին նաև այլ պայմաններ:

Ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը տրվում էր ծնողներից մեկին՝ հիվանդանալու դեպքում երեխայի խնամքի համար:

Նպաստի այս տեսակը, կախված պայմաններից, տրամադրվում էր 7–ից մինչև 21 օր տևողությամբ:

Ժամանակավոր անաշխատունակության, հղիության, ծննդաբերության ու ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները հաշվարկվում էին աշխատողի վաս-

տակի նկատմամբ: Ընդ որում, վաստակի մեջ մտցվում էին աշխատանքի վարձատրության բոլոր այն տեսակները, որոնց նկատմամբ հաշվարկվել ու կատարվել էին սոցիալական ապահովագրության վճարներ:

Նպաստը հաշվարկվում էր ժամանակավոր անաշխատունակությունը, հղիությունը և ծննդաբերության ու ընտանիքի հիվանդ անդամի խնամքը սկսվելու ամսվան նախորդող 3 օրացուցային ամիսների միջին ամսական վաստակից ելնելով:

Ելնելով միջին ամսական հաշվարկային աշխատավարձից՝ որոշվում էր ամսական, դրա հիման վրա էլ՝ օրական նպաստի չափը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը տրվում էր յուրաքանչյուր երեխայի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թաղման նպաստները տրվում էին ձեռնարկություններում, հիմնարկներում ու կազմակերպություններում, անկախ սեփականության ձևից, աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձանց, որոնց համար սահմանված կարգով մուծումներ են կատարվել սոցիալական ապահովագրության հիմնադրամին, և բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտական–տեխնիկական ուսումնարանների, կադրերի պատրաստման ու վերապատրաստման դպրոցների և դասընթացների, արտադրությունից կտրված սովորողների, կլինիկական օրդինատորների, դոկտորանտների, ասպիրանտների և նրանց խնամքի տակ գտնվող անձանց մահվան դեպքում:

Նշենք նաև, որ ՀՀ կառավարության 1993թ. մարտի 10–ի թիվ 95 որոշմամբ սահմանվել էր նաև «Անհատ ձեռներեցությամբ, գիտական ու ստեղծագործական գործունեությամբ և անհատական գյուղացիական տնտեսությամբ զբաղված անձանց պետական սոցիալական ապահովագրության նպաստներով ապահովման կարգի մասին» կանոնադրությունը, համաձայն որի՝ նրանց համար ևս նախատեսված էին նման նպաստների տեսակներ:

Նշված կարգում, որոշ առանձնահատկություններով հանդերձ, հիմնականում սահմանված էին նույն դրույթները, ինչ նախատեսված էին վարձու աշխատողների, ուսանողների և վերը նշված այլ կոնտինգենտի համար:

«ՀՀ կենսաթոշակային հիմնադրամը» հիմնադրվել է 1991թ. հոկտեմբերին՝ որպես նախկին ԽՍՀՄ–ի համաձայն հիմնադրամի իրավահաջորդ: 1992թ. հունվարի 24–ի ՀՀ կառավարության թիվ 52 որոշմամբ, «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, գործազուրկ քաղաքացիների նպաստների վճարումը հիմնադրամի վրա դնելու կապակցությամբ ՀՀ կենսաթոշակային հիմնադրամը վերանվանվեց «ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի»:

Համաձայն հիմնադրամի կանոնադրության և ՀՀ օրենսդրության՝ հիմնադրամի միջոցները ծախսվում էին հետևյալ ուղղություններով.

- կենսաթոշակների վճարում, այդ թվում տարիքային, արտոնյալ պայմաններով տարիքային, հաշմանդամության, երկարամյա ծառայության, կերակրողին կորցնելու դեպքում՝ աշխատանքային կենսաթոշակներ, ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում՝ սոցիալական կենսաթոշակներ,
- զբաղվածության և գործազրկության ծրագրերի իրականացում, այդ թվում գործազրկության նպաստների, վերապատրաստման և աշխատանքի աջակցման այլ ծրագրերի ֆինանսավորում,

- միջազգային նմանատիպ հիմնադրամների միությունների անդամակցության վճարներ,
- հիմնադրամի ապարատի վարձատրության և պահպանման այլ ծախսեր,
- ՀՀ նախագահի հրամանագրերով և ՀՀ կառավարության որոշումներով նաև սահմանվում էին պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափերը և կենսաթոշակների և նպաստների վճարման չափերը:

Այսպես՝ 1992 թվականի հունվարի 4–ին հրապարակվել է ՀՀ նախագահի հրամանագիրը «Պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափերի և կենսաթոշակների նվազագույն չափի մասին»: 1993 թվականի հունվարի 25–ին ստորագրվել է ՀՀ նախագահի հրամանագիրը «Պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափերի մասին»: Համաձայն այդ հրամանագրի՝ 1993 թվականի հունվարի 1–ից պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափը բոլոր գործատուների համար սահմանվել էր 37%՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի նկատմամբ: Ընդ որում ՀՀ կառավարության 1993 թվականի փետրվարի 9–ի թիվ 30 որոշման համաձայն՝ 37%–ը բաշխվում էր հետևյալ հարաբերակցությամբ՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի 35%–ը փոխանցվում էր Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամ, իսկ 2%–ը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության հիմնադրամ: Նշենք, որ այն ժամանակվա գործող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 6–ի օրենքի 9–ա հոդվածի համաձայն՝ սահմանվել էր նվազող սանդղակ՝ 1996թ.՝ 35%, 1997թ.՝ 34%, 1998թ.՝ 33%, 1999թ.՝ 32%, 2000թ.՝ 31%:

Հաշմանդամների հասարակական կազմակերպություններից, ձեռնարկություններից, դրանց տնտեսական միավորումներից, հիմնարկներից, ուսումնական հաստատություններից, որտեղ աշխատողների թվաքանակի ոչ պակաս 50%–ը հաշմանդամներ են, զանձվող պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափը սահմանված էր 4.7%՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի նկատմամբ:

Վարձու աշխատողների համար զանձվող պետական սոցիալական ապահովագրության մուծումների դրույքաչափը սահմանված էր նրանց աշխատավարձի 1%–ի չափով, որն ուղղվում էր Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամ: Ընդ որում այն ժամանակվա գործող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 6–ի օրենքի համաձայն՝ նախատեսվել էր նշված տոկոսը յուրաքանչյուր տարի ավելացնել 0.3 կետով՝ 2010 թվականին հասցնել 5.5%–ի, իսկ 2011 թվականից սկսած՝ 5.8%–ի:

Նշվածից երևում է, որ սոցիալական ապահովագրության զարգացման այդ փուլում նախատեսվում էր աստիճանաբար վերաբաշխել սոցիալական ապահովագրության մուծումների բեռը՝ ընդհանուր նվազումների ներքո նրա կառուցվածքում ավելացնելով վարձու աշխատողների մուծումների չափը:

Ամհատ ձեռներեցների, այդ թվում անհատական կապալով, գիտական և ստեղծագործական աշխատանքով և գյուղացիական տնտեսությամբ զբաղված անձանց

համար սահմանված էին պարտադիր սոցիալական ապահովագրության մուծումներ նրանց եկամտի 10%–ի չափով:

ՀՀ կառավարության հերթական որոշումներից էր 1995 թվականի հուլիսի 6–ի թիվ 469 որոշումը: Այս որոշումն ուղղված էր սոցիալական վճարների հավաքագրման բազայի ընդլայնմանը և հիմք է հանդիսացել կենսաթոշակների հաշվարկման նպատակով ապահովագրվածի ընդհանուր եկամուտների առավել ամբողջական և ճշգրիտ ընդգրկման համար:

Նշված որոշման համաձայն՝ կենսաթոշակների հաշվարկման համար անհրաժեշտ ընդհանուր վաստակում ներառվում էին եկամուտների բոլոր տեսակները, բացառություն էին կազմում այն եկամուտները, որոնք առաջացել էին նպաստների, թոշակների, բարեգործական կազմակերպությունների օգնության, վնասի փոխհատուցման, գործազրկության նպաստներից, ալիմենտներից և դոնորության դիմաց ստացված միջոցներից:

Ինչպես տեսնում ենք, տվյալ ժամանակի սոցիալական ապահովագրության համակարգի եկամուտները ձևավորվում և օգտագործվում էին երկու հիմնադրամների միջոցով՝ գոյանալով միևնույն աղբյուրներից: Նրանց ծախսային ուղղվածությունը և կոնտինգենտը (սոցիալական խմբերը) նույնպես նույնն էին: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ այդ երկու հիմնադրամները միավորվեցին, և ստեղծվեց մեկ՝ ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամ, որը 1998 թվականի հոկտեմբերի 28–ի ՀՀ կառավարության թիվ 656 որոշմամբ վերանվանվեց որպես ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ:

Այս ոլորտը կարգավորող մյուս կարևոր օրենքն է «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 30–ին: Օրենքի գործողության ընթացքում կատարվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ, որոնք պայմանավորված էին տնտեսական իրավիճակի փոփոխություններով և սոցիալական ապահովագրության ֆինանսական խնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ:

1997 թվականի օգոստոսի 5–ին ընդունվեց ՀՀ կառավարության թիվ 321 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի գործունեության բարելավման միջոցառումների մասին»:

Նշված որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի կառավարման մարմինը հիմնադրամի խորհուրդն է, որի կազմում են ՀՀ սոցիալական ապահովության նախարարը (նախագահ), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, ՀԱՄԽ–ի նախագահը և հիմնադրամի նախագահը: Նույն որոշմամբ միաձուլվեցին և հիմնադրամի կազմում սկսեցին գործել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակային ապահովության և հիմնադրամի տարածքային կենտրոնները:

1997 թվականի մարտի 27–ին ընդունվեց ՀՀ կառավարության թիվ 184 որոշումը՝ «Սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերի իրականացման աշխատանքները կանոնակարգելու մասին»:

Նշված որոշումով դադարեցվեց «ՀՀ սոցիալական ապահովության հիմնադրամի» գործունեությունը և վերջինիս միջոցով վարձու աշխատողների, ինչպես նաև անհատ ձեռներեցների, գիտական և ստեղծագործական գործունեությամբ զբաղ-

վողների, գյուղատնտեսական նպատակներով հող օգտագործող անձանց ժամանակավոր անաշխատունակության, հղիության ու ծննդաբերության, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի, երեխայի ծննդի միանվագ, թաղման նպաստների վճարումը:

Նշենք նաև, որ չնայած սոցիալական ապահովագրության միջոցները հավաքագրվում էին այդ հիմնադրամի միջոցով, սակայն թոշակառուների և նպաստառուների հաշվառումը և նրանց դրամական վճարումները իրականացվում էին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոնների միջոցով: Նշված հանգամանքը նույնպես բարդացնում էր սոցիալական ապահովագրության համակարգի աշխատանքները և լրացուցիչ խճճվածություն ստեղծում: Այդ նպատակով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով, կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոններն անցան սոցիալական ապահովագրության հիմնադրամի ենթակայության տակ:

Հետհամայնավարական շրջանում Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության պետական քաղաքականությունը շարունակում էր հիմնվել խորհրդային վերջին տարիներին արմատավորված խմբային հասցեականության սկզբունքի վրա, երբ սոցիալական աջակցության նպատակով առանձնացված միջոցները գլխավորապես ուղղվում էին ավանդականորեն խոցելի համարվող մի շարք սոցիալական խմբերի՝ հաշվի չառնելով այդ խմբերին պատկանող անհատների միկրոմիջավայրի (ընտանիքի) իրական անապահովության աստիճանը:

Չուզահեռաբար գործում էր նաև կրկին խորհրդային տարիների սոցիալական աջակցության համակարգին բնորոշ արտոնությունների համակարգը (անվճար կամ զեղչով տրանսպորտային, բժշկական, կենցաղային սպասարկումներ ու ծառայություններ, արտոնյալ պայմաններով բնակարանի, ավտոմեքենայի, շարժական և անշարժ այլ գույքի, առողջարանային ուղեգրերի ստացման, արտամրցութային կարգով կրթություն ստանալու և այլ իրավունքներ): Խորհրդային տարիներին այդ ծառայությունների ճնշող մեծամասնությունը ֆինանսավորվում էր այն ժամանակվա սոցիալական աջակցության համակարգի փոքր մասը կազմող հասարակական սպառման հիմնադրամների հաշվին:

ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի եկամուտների կառուցվածքը բերված է թիվ 9.1 աղյուսակում:

Ինչպես տեսնում ենք, տարիների ընթացքում ֆինանսական աղբյուրների կառուցվածքը գրեթե չի փոխվել, եթե հաշվի չառնենք, որ, սկսած 1998թ., զինծառայողների թոշակները վճարվում են սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցով՝ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումների հաշվին: Աղյուսակից երևում է, որ պետական բյուջեից զինծառայողների թոշակների համար հատկացվող գումարները տարեցտարի աճել են: 1997թ. դրանք կազմել են սոցիալական ապահովագրության հիմնադրամի 6.0%-ը, իսկ 2001թ.՝ արդեն 17.1%-ը, 2005թ.՝ 23.1%-ը: Ընդ որում, 1997թ. հատկացումները բյուջեից կատարվել են միայն շարքային զինծառայողների թոշակների համար: Պետական բյուջեից միջոցները հատկացվել են նաև աշխատանքի խեղման վնասի փոխհատուցման և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված թոշակների գծով, սակայն վերջինս կազմել է բավականին քիչ գումար:

ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի եկամուտների կազմը ըստ բովանդակության ու տնտեսագիտական դասակարգման (մլրդ դրամով)

Եկամուտներ	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի	Փաս-տացի
Ընդամենը եկամուտներ, այդ թվում	29,5	29,1	36,9	37,4	42,4	47,1	56,2	66,1	82,8
I. Պարտադիր սոցապ. վճարներ, այդ թվում՝	28,8	26,7	31,4	31,5	34,9	39,2	44,7	50,8	63,7
ա. ործատուների կողմից	28,4	23,8	28,1	28,3	31,8	34,9	
բ. վարձու աշխատողներից	–	1,9	2,9	2,7	2,5	3,7	
· հնքնուրույն աշխատանք զբաղված անձանց եկամուտներից	0,1	0,35	0,2	0,2	0,3	0,32	
դ. յուղացիական տնտեսություններից	0,4	0,62	0,28	0,25	0,21	0,22	
II. ՀՀ պետական բյուջեի հատկացումներ	–	1,8	3,6	5,8	7,2	7,8	11,3	15,1	19,1
III. Բանկային հաշվի մնացորդ – տոկոսավճար	–	0,54	0,026	0,024	0,041	–			
IV. Բյուջետային վարկ – ամուտքեր	0,73	–	1,8	–	0,19	–	0,19	0,13	

Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների գերակշռող մասը հավաքագրվում է գործատուների կողմից աշխատավարձի հիմնադրամի նկատմամբ հաշվարկված սոցիալական ապահովագրական վճարներից, որոնց ծավալը 1997թ. կազմել է 28.3 մլրդ դրամ (պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների 98.3%–ը), իսկ 2001թ. հավաքագրվել 31,8 մլրդ դրամ (պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների 91.1%–ը: Վարձու աշխատողների մասնակցությունը ըստ տարիների կազմել է 1998 թ.՝ 1.9 մլրդ դրամ, 1999թ.՝ 3.0 մլրդ դրամ, 2000թ.՝ 3.1 մլրդ դրամ և 2001թ.՝ 2.5 մլրդ դրամ կամ համապատասխանաբար սոցիալական ապահովագրական վճարների 7.3, 8.9, 8.4 և 7.3%–ը: 1999–2001 թթ. բացարձակ և տոկոսային մեծությամբ նախատեսված է եղել վարձու աշխատողների եկամտից գանձվող սոցիալական ապահովագրական վճարների ավելացում, որը հիմնականում պայմանավորված էր աշխատավարձի հիմնադրամին ուղղվող միջոցների և միջին աշխատավարձի աճով: Ինչ վերաբերում է ընդհանուր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին, ապա դրանք 1997–2005 թթ. ընկած ժամանակահատվածում զգալիորեն աճել են, որը մասնավորապես կազմել է 2,21 անգամ:

Սոցիալական վճարումների հավաքագրման ցածր մակարդակի և հաշվարկի ոչ իրական հիմքի պատճառով ոչ գյուղատնտեսությունից, ոչ էլ անհատ ձեռներեցներից հավաքագրված գումարները չեն ծածկում գյուղացիների և անհատ ձեռներեցների

թոշակների վճարման ծախսերը: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում 11.12.02 թ. կատարված փոփոխությունների համաձայն, սկսած 2003թ., նախատեսվել է ընդհանրապես միջոցներ չհավաքագրել գյուղացիական տնտեսություններից, որը ենթադրում է նաև չհաշվառել գյուղացիների աշխատանքային ստաժն ու նրանց դուրս բերել աշխատանքային թոշակառուների ցանկից: Սա կնշանակի, որ աստիճանաբար գյուղացիները կդասվեն սոցիալական թոշակառուների շարքին, քանի որ 2003թ. սկսած՝ սոցիալական թոշակառուների թոշակների համար անհրաժեշտ գումարների համար ֆինանսական աղբյուր են հանդիսանալու պետական բյուջեի միջոցները: Այնուամենայնիվ, նշված մոտեցումը իր մեջ պարունակում է թերություններ, որոնցից է նաև այն, որ համարվելով երկրի ՀՆԱ-ի որոշակի մասի ստեղծող և, դրանով իսկ, երկրի պետական բյուջեի եկամուտների զգալի մասի ձևավորման մասնակից՝ գյուղատնտեսության ոլորտի աշխատողները զրկվելու են աշխատանքային կենսաթոշակներից, այսինքն՝ ապահովագրական հիմքի վրա ապագա եկամտի կորուստների փոխհատուցման իրական չափից: Կարծում ենք, խնդիրը պետք է կարգավորել պետական բյուջեի հաշվին, սակայն, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում է, կարելի էր հստակեցնել պետական բյուջեի այն աղբյուրները, որոնցից գոյացած միջոցները կարող են ուղղվել գյուղացիների աշխատանքային և սոցիալական կենսաթոշակների համար: Արդարացի չէ նաև գյուղացիներին ընդհանրապես դուրս թողնելը աշխատանքային կենսաթոշակառուների կազմից:

Շատ երկրներում, ինչպես ցույց է տալիս փորձը, պետությունն իր անմիջական մասնակցությունն է ցուցաբերում հատուկ պահուստային հիմնադրամների ստեղծմանը: Սա առավել քան կարևոր է անցումային տնտեսություն ունեցող երկրների համար: Նշված պահուստահիմնադրամի անհրաժեշտությունը կարևորվում է հատկապես այն ժամանակ, երբ նախատեսվում է անցում կատարել զուտ ապահովագրական հիմքի վրա թոշակների վճարմանը: Նշված պահուստահիմնադրամը ընդհանրապես բացակայում է սոցիալական ապահովագրության հիմնադրամի ներկայիս կառուցվածքում, այնինչ նման պահուստաֆոնդ նախատեսված է գրեթե բոլոր երկրների նմանատիպ հիմնադրամներում: Ընդ որում, այդ պահուստահիմնադրամները ձևավորվում են ինչպես հիմնադրամների ներքին ռեսուրսների, այնպես էլ պետության միջոցների հաշվին: Միայն անհատական հաշվառման համակարգի ներդրումը բավարար չէ ապահովագրական հիմքի վրա թոշակային համակարգին անցնելու համար, քանի որ աշխատավարձերի փոփոխության, սղաճի և տնտեսական զարգացման նման տեմպերը ապագայում կպահանջեն ավելի մեծ գումարներ թոշակների վճարման համար, քան կհավաքագրվի յուրաքանչյուր ապահովագրված անձի անհատական հաշվին:

Ընդհանուր առմամբ, նշված թերություններից բացի, ՀՀ-ում չեն կատարվում ակտուարային հաշվարկներ սոցիալական ապահովագրության եկամտային մասի կառուցվածքի նախագծման ժամանակ: Սա առավել քան կարևոր է և պետք է հիմք ծառայի ինչպես համակարգի ներկայիս խնդիրների, այնպես էլ երկարաժամկետ զարգացման ծրագրի կարգավորման համար:

Կարծում ենք, ակտուարային հաշվարկները պետք է հիմք հանդիսանան սոցիալական ապահովագրության համակարգի ապագա զարգացման հնարավորությունները գնահատելու համար: Գիշտ է, ակտուարային հաշվարկներով տնտեսական

աճի, սղաճի և տնտեսական զարգացման տարբեր սցենարների դեպքում դժվար է ճշգրիտ կանխատեսումներ կատարելը, սակայն դա հնարավորություն կտա մշակել միջոցառումների իրականացման ծրագիր վատագույն սցենարի դեպքում:

Ինչպես տեսնում ենք թիվ 9.2 աղյուսակի տվյալներից, վերջին 9 տարիների ընթացքում թոշակային ծախսերը ԶԶ–ում աճել են շուրջ 2,16 անգամ, սակայն թոշակառուների կենսամակարդակի վրա դա գրեթե ազդեցություն չի թողել: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, կենսաթոշակային ծախսերը կազմում են սոցիալական ապահովագրության ծախսերի ամենամեծ տոկոսը (1997–2005թթ.՝ համապատասխանաբար 87.7%, 85.8%, 76.6%, 76.9%, 75.4%, 75.5%, 72.7%, 68,2% և 71,4%): Հարաբերական առումով նվազումը պայմանավորված է նրանով, որ զինծառայողների թոշակների ֆինանսավորումը սկսած 1998թ. նույնպես կատարվել է հիմնադրամի միջոցով: Այստեղ, ինչպես արդեն նշել ենք, ամենամեծ ծավալը զբաղեցնում են կենսաթոշակները:

Աղյուսակ 9.2

ԶԶ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ծախսերը ըստ բովանդակության և տնտեսական դասակարգման (մլրդ դրամով)

Ծախսեր	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի
Ընդամենը ծախսեր	29,5	29,1	37,3	37,4	41,3	47,1	55,7	64,8	78,5
Կենսաթոշակային ապահովարություն	25,9	24,9	28,5	28,7	31,1	35,6	40,5	44,2	56,1
ԶԶ պետբյուջեի միջոցների հաշվին վճարվող կենսաթոշակներ	–	1,8	3,7	5,9	7,3	7,8	11,3	14,9	13,2
Սոցիալական ապահովարության առանձին պետծրա րեր	1,0	0,85	1,1	1,2	1,4	1,2	
Զբաղվածության ծրա րեր	0,8	0,8	1,3	0,6	0,4	1,4	0,433	0,389	7,98
Անդամակցության վճարներ	0,004	0,004	0,01	0,008	0,009	0,14	0,005	0,006	
Համակար ի պահպանման ծախս	0,42	0,58	0,69	0,72	0,8	0,89	1,14	1,49	1,1
Բյուջ. վարկի մարում	0,89	–	1,7	0,08	0,15	–			
Այլ ծախսեր	0,45	0,02	0,09	0,05	–	–	2,19	3,13	0,12

«Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները հաստատելու մասին» ԶԶ կառավարության 1999թ. դեկտեմբերի 2–ի թիվ 734 որոշմանը կից հավելված 3–ում ներկայացվել են մի քանի վիճակագրական տվյալներ կենսաթոշակառուների թվաքանակի վերաբերյալ: Այսպես՝ 1995 թվականին կենսաթոշակառուների 641 852 ընդհանուր թվաքանակից 559 906–ը կազմում են աշխատանքային կենսաթոշակառուները, 65 847–ը՝ սոցիալական կենսաթոշակառուները, 16 099–ը՝ զինվորական ծառայության հետ կապված 228

կենսաթոշակառուները: 1999 թվականին կենսաթոշակառուների 583 047 ընդհանուր թվաքանակից 524 783–ը կազմում են աշխատանքային կենսաթոշակառուները, 48 149–ը՝ սոցիալական կենսաթոշակառուները, 22 598–ը՝ զինվորական ծառայության հետ կապված կենսաթոշակառուները: Ընդ որում, 1995–2001թթ. նրանց վճարվող թոշակների միջին չափը չի գերազանցել 4 530 դրամը, այդ թվում աշխատանքային կենսաթոշակառուներինը՝ 4 361 դրամը, սոցիալական կենսաթոշակառուներինը՝ 3 416 դրամը և զինծառայության հետ կապված կենսաթոշակառուներինը՝ 9 761 դրամը: Հատկանշական է, որ կենսաթոշակառուների ընդհանուր թվաքանակի 60.4%–ը կազմում են կանայք:

Ինչպես տեսնում ենք, զինծառայողների թոշակների միջին չափը գերազանցում է քաղաքացիների թոշակի միջին չափը կրկնակի անգամ, սա յուրահատուկ է զարգացող և անցումային տնտեսություն ունեցող պետություններին, հատկապես նրանց, որոնք ունեցել են սոցիալիստական կարգեր: Այդ համակարգերում զինծառայողների համար մշտապես կիրառվել և կիրառվում են որոշակի արտոնություններ ինչպես թոշակային տարիքի, այնպես էլ թոշակի չափերի առումով: Նման մոտեցումը բնորոշ է նաև մի շարք զարգացած տնտեսություն ունեցող երկրների:

Սոցիալական կենսաթոշակառուների թոշակների տարեկան ծախսը 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունում կազմել է շուրջ 2.0 մլրդ դրամ, իսկ միջին թոշակը հասել է 4 100 դրամի: Ինչպես տեսնում ենք, թեև տարեցտարի թոշակների վճարման համար ծախսվող գումարները աճում են, սակայն թոշակների չափը չի բավարարում անգամ հացի խնդրի կարգավորմանը, որն արդեն իսկ բավարար է փաստելու թոշակների ցածր արդյունավետության մասին:

Սոցիալական ապահովագրության հատուկ ծրագրերով հիվանդության թերթիկներով և հղիության ու ծննդաբերության նպաստների գումարները սոցիալական ապահովագրության հիմնադրամի ծախսերում չեն գերազանցել 3%–ը: Այս նպատակներով նախատեսված գումարները, ի տարբերություն թոշակային ծախսերի, կրում են ժամանակավոր կամ միանվագ բնույթ:

Հաջորդ խոշոր ծախսային ուղղությունը զբաղվածության ծրագրերի իրականացումն է, այդ թվում նաև գործազրկության նպաստների տրամադրումը: Ի տարբերություն կենսաթոշակների՝ գործազրկության նպաստները ժամանակավոր բնույթ են կրում և միջին հաշվով չեն գերազանցում մեկ տարին: Այնուամենայնիվ, գործազրկության նպաստները ավանդաբար համարվել են սոցիալական ապահովագրության համակարգի անբաժանելի մասը: Նույնիսկ մի շարք երկրներում ձևավորվել են հատուկ հիմնադրամներ:

2000թ. դեկտեմբերի վերջին ՀՀ սոցիալական ապահովագրության նախարարության Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման են կանգնել 177.3 հազ. չզբաղված քաղաքացիներ, որոնցից 86.8 %–ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Քաղաքային բնակավայրերում գործազուրկ բնակչության թվաքանակը կազմել է 145.9 հազ. մարդ, այդ թվում՝ Երևանում՝ 45.2 հազ. մարդ, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ համապատասխանաբար 26.9 և 12.6 հազ. մարդ:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.7 %–ը: Վերջիններիս տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում ունի աճի միտում:

9.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պետության կարևորագույն ֆունկցիաներից մեկը հասարակության տարբեր խավերի սոցիալական պաշտպանվածության իրականացումն է: Արդեն իսկ հին քաղաքակրթություններում գործում էին որոշակի կանոններ, որոնք կարգավորում էին սոցիալական օգնության գործընթացները: Շուկայական տնտեսության ձևավորման վաղ շրջաններում գերակայող էր եկեղեցիների միջոցով իրականացվող սոցիալական օգնության ֆունկցիան: Հետագայում շուկայական հարաբերությունների զարգացման, համակենտրոնացման և բնակչության շարժունակության մեծացման պայմաններում սոցիալական օգնությունը եկեղեցական ինստիտուտներից անցնում է քաղաքացիական կառույցներին:

Տվյալ պարագայում քաղաքացիական ծառայությունները պարտադրված էին լուծելու սոցիալական օգնության հասցեականության և կարիքավորության աստիճանի որոշման հետ կապված որոշակի հիմնախնդիրներ:

Արևմտյան սոցիալ-տնտեսական գրականության մեջ պետության կողմից մարդուն և հասարակությանը սոցիալական երաշխիքների տրամադրման բարձրագույն մակարդակը անվանվել է «սոցիալական անվտանգություն»: Խորհրդային տարիներից սկսած՝ տվյալ հասկացությունը արտահայտվում է «Սոցիալական ապահովություն» տերմինով:

Սոցիալական պաշտպանության ժամանակակից համակարգն ընդգրկում է հետևյալ հիմնական բաղկացուցիչները՝ պետական օգնության ավանդական ձևը, պետական սոցիալական երաշխիքների առկայությունը, ներառյալ որոշակի կատեգորիայի բնակչության համար սահմանված սոցիալական արտոնությունները և սոցիալական ապահովագրությունը՝ պետական պարտադիր և կամավոր-կորպորատիվ:

Սոցիալական ապահովվածությունը՝ որպես բնակչության սոցիալական պաշտպանության ձև, հանդես է գալիս բնակչության սոցիալապես խոցելի, կարիքավոր մասին սոցիալական բարիքների տրամադրման միջոցով: Սոցիալական օգնության ծառայությունների միջոցով պետությունը իրականացնում է նվազագույն եկամտի երաշխիքի հայեցակարգ՝ որպես ապրելու իրավունքի սահմանադրական դրույթի կենսագործում: Ապահովության սկզբունքի բնորոշ գիծն այն է, որ սոցիալական ծառայությունները մատուցվում են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անկախ ծառայություններ ստացողների անհատական վճարումներից:

Սոցիալական ապահովագրությունը տնտեսապես ակտիվ բնակչությանը տարբեր տեսակի վտանգներից՝ աշխատունակության և եկամտի կորստի, սոցիալական պաշտպանության ձև է, որը հիմնված է վնասի փոխհատուցման կոլեկտիվ համերաշխության սկզբունքի վրա: Գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ապահովվում է արտաբյուջետային հատուկ ապահովագրության ֆինանսական միջոցներով, որը գոյանում է աշխատողների և գործատուների նպատակային հատկացումների, մասամբ նաև պետության հաշվին: Սոցիալական ապահովագրության վճարների մեծությունը պայմանավորվում է աշխատողների (ապահովագրվողների) աշխատանքային ներդրումների ծավալով և ապահովագրական

ստաժի տևողությամբ: Սակայն, ի տարբերություն մասնավոր այլ ապահովագրության, սոցիալական պարտադիր ապահովագրությունը համարժեքության սկզբունքը զուգորդում է վտանգի և կոլեկտիվ համերաշխության սկզբունքների միասնության հետ:

Տվյալ պետության տնտեսական զարգացման մակարդակից և ֆինանսական հնարավորություններից կախված՝ ինչպես սոցիալական ապահովությունը, այնպես էլ սոցիալական ապահովագրությունը, ըստ երկրների, իրականացվում են տարբեր ձևերով, տարբեր կառույցների ու մեխանիզմների միջոցով:

Սոցիալական ապահովության բնույթն ու ծավալը անմիջական կախվածության մեջ են երկրի տնտեսության արդյունավետությունից, ֆինանսական հզորությունից, ուստի, նույնիսկ միևնույն մոդելի դեպքում սոցիալական ապահովության ուղղությամբ կատարվող ծախսերը ըստ երկրների տարբեր են: Տնտեսապես թույլ զարգացած երկրներում սոցիալական ապահովության համակարգերը, նույնիսկ միայն ֆինանսական հնարավորություններից ելնելով, կարող են ապահովել սոցիալական երաշխիքների հարաբերական ցածր մակարդակ: Տնտեսության արդյունավետության բարձրացումը հնարավոր է դարձնում ընդլայնել սոցիալական ապահովության տեսակները, մեծացնել ցուցաբերվող օգնության չափերը, կատարելագործել գործող համակարգը:

Սոցիալական ապահովագրության խնդիրների կարգավորումը շատ հաճախ կազմակերպվում է համապատասխան հիմնադրամների ստեղծման միջոցով: Վերջիններս կարող են լինել խիստ մասնագիտացված՝ ճյուղային կամ ֆունկցիոնալ, ինչպես նաև ունիվերսալ, ինչը հիմնականում պայմանավորված են բնակչության թվաքանակով և տնտեսական աճով: Այս հիմնադրամները կարող են լինել պետական կառույցներ կամ առևտրային կազմակերպություններ:

Ապահովության, այդ թվում սոցիալական աջակցության նպաստների համակարգը, գործազրկության և զբաղվածության խնդիրները կարգավորվում են մեծամասամբ պետական կառույցների՝ նախարարությունների միջոցով: Այս ոլորտի կառավարումը իրականացվում է պետական կառավարման համակարգի միջոցով՝ ի տարբերություն սոցիալական ապահովագրության համակարգի, որի կառավարումը շատ հաճախ իրականացվում է կոլեգիալ և դեմոկրատական սկզբունքների հիման վրա ինչպես վարձու աշխատողների ներկայացուցիչների՝ արհեստակցական միությունների, այնպես էլ գործատուների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցչությամբ:

Սոցիալական ապահովության զարգացման ընթացքում մշտապես անհրաժեշտություն է առաջանում կատարելագործել նաև սոցիալական ապահովության ձևերը: Աստիճանաբար՝ հասարակության և տնտեսության զարգացմանը զուգահեռ, ավելի շատ գերիշխում են դրամական փոխհատուցումների և դրամատվությունների ձևերը, և, դրան հակառակ, նվազում են բնաիրային տեսքով բաշխվող բարիքները և արտոնությունների ու ծառայությունների ձևով տրամադրվող աջակցության և ապահովագրության տեսակները: Չնայած դրան՝ բոլոր պետություններում և ժամանակներում այս երկու ավանդական ձևերն էլ գործել են միաժամանակ՝ լրացնելով կամ փոխարինելով մեկը մյուսին: Բնական է, որ դրամական տեսքով ստացվող թոշակները և նպաստները ավելի ունիվերսալ միջոց են դրանք

ստացողների համար, քանի որ այս դեպքում սոցիալական ապահովության շրջանակում տրամադրվող միջոցները չեն սահմանափակվում կոնկրետ ծառայության ձեռքբերումով, այլ նպատակաուղղվում են սոցիալական այն կարիքների բավարարմանը, որոնք առավել կարևորվում են թոշակառուի կամ նպաստառուի կողմից տվյալ ժամանակաշրջանում և կոնկրետ պահին: Սակայն, դրա հետ մեկտեղ, պարզ է, որ կան ծառայություններ և սոցիալական աջակցության ձևեր, որոնք ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման տեսանկյունից նպատակահարմար է իրականացնել ծառայությունների մատուցման տեսքով, օրինակ՝ որոշ բժշկական ծառայություններ և այլն: Միաժամանակ փաստ է, որ շուկայական հարաբերությունների պայմաններում և տնտեսապես զարգացած շատ երկրներում ավելի հաճախ կիրառվում է դրամական փոխհատուցումների համակարգը: Կարևորվում են նաև դրամական միջոցների այն ծավալները, որոնք ուղղվում են սոցիալական ապահովության կարիքների բավարարմանը: Բնական է, որ յուրաքանչյուր թոշակի և նպաստի տեսակ, որը տրամադրվում է քաղաքացիներին, պետք է ծառայի որոշ կարիքների բավարարմանը, այսինքն՝ կենսաթոշակները պետք է համապատասխանեն կենսական նվազագույն պահանջներին, ընտանեկան նպաստները՝ ընտանիքի նվազագույն կենսամակարդակի ապահովմանը: Փաստորեն, այն ծավալները, որոնք ուղղվում են սոցիալական խմբերին, պետք է համապատասխանեն տնտեսությունում ձևավորված սպառողական գներին:

Հասկանալի է, որ այն միջոցների ծավալները, որոնք ուղղվում են սոցիալական ապահովության կարիքներին, անմիջական կապի մեջ են միջոցների գոյացման աղբյուրների և ֆինանսավորման ծավալների հետ: Ուստի, կարևոր է, որպեսզի հստակ տարանջատվեն այն աղբյուրները, որոնք ծառայելու են ապահովագրական հիմքի վրա տրվող փոխհատուցումներին՝ կենսաթոշակներ, նպաստներ, և ոչ ապահովագրական հիմքի վրա տրվող նպաստներին: Այսինքն՝ անհրաժեշտ պահանջներից մեկը սոցիալական արդարության և տնտեսական հավասարակշռության ապահովումն է:

Սոցիալական ապահովության ֆինանսական միջոցների ներկայիս վիճակը հստակեցնելու համար նպատակահարմար է նախ և առաջ անդրադառնալ միջազգային փորձին: Բոլոր երկրներում ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները և դրանց հաշվին կատարվող ծախսերն ունեն գրեթե նույն կազմը: Տարբերությունները հիմնականում պայմանավորված են յուրաքանչյուրի աղբյուրի կամ ծախսային ուղղվածության տեսակարար կշռով: Այս տեսանկյունից պարզ և հասկանալի մոտեցումը կլինի այն, որ յուրաքանչյուր ծախսային ուղղություն կամ թոշակի ձև ունենա իր համապատասխան ֆինանսական աղբյուրը: Անհրաժեշտ է նաև ճշգրտել, թե սոցիալական ապահովագրության համակարգը ինչ նպատակ պետք է հետապնդի՝ ապահովի նվազագույն թոշակների չափը, այդ թոշակները ինչ պահանջներ պետք է բավարարեն, թե նպատակը պետք է լինի եկամտի կորստի փոխհատուցումը ապահովագրական հիմքի վրա՝ յուրաքանչյուրի կուտակման միջոցներին համապատասխան: Արտասահմանյան երկրներում սոցիալական ապահովագրության միջոցների գոյացման աղբյուրների կառուցվածքը 1970 և 1988 թթ. կտրվածքով ներկայացված է ստորև բերվող թիվ 9.3 աղյուսակում:

Աղյուսակ 9.3

Արտասահմանյան մի շարք երկրներում սոցիալական ապահովագրության միջոցների գոյացման աղբյուրների կառուցվածքը 1970 և 1988 թթ. (տոկոսային հարաբերությամբ ըստ տարիների)*

Երկիր	Ապահովա ղված-ների մուծումներ		Չեռնարկատե-րերի մուծումներ		Պետական բյուջե		Կապիտալից մուտքեր – այլ մուտքեր	
	1970	1988	1970	1988	1970	1988	1970	1988
Ավստրիա	25.0	27.7	38.5	42.3	32.2	27.5	4.3	2.5
Բել իա	24.0	25.7	49.7	47.1	22.4	25.5	3.9	1.7
Կանադա	6.7	10.1	10.4	15.8	73.7	63.3	9.3	10.8
Շվեյցարիա	38.1	41.3	31.9	28.1	13.1	11.2	16.9	19.4
Գերմանիա	21.8	27.5	34.9	36.7	40.8	33.7	2.4	1.9
Իսպանիա	65.2	51.7	24.7	23.1	9.5	24.4	0.4	0.5
Ֆինլանդիա	9.4	8.0	40.5	43.1	45.5	43.2	4.6	5.7
Ֆրանսիա	19.3	26.6	60.3	52.6	18.9	18.1	1.5	2.7
Մեծ Բրիտանիա	18.0	17.3	33.5	29.2	38.5	41.3	10.0	12.3
Յունաստան	37.4	30.8	34.1	32.7	23.8	30.5	4.7	6.0
Իտալիա	23.3	16.0	56.2	13.0	12.7	58.0	7.8	12.3
Յնդկաստան	39.7	25.4	55.5	56.4	0.2	1.2	4.6	16.8
Ճապոնիա	28.5	26.4	31.2	30.0	30.0	28.4	10.4	15.3
Մարոկկո	12.0	10.0	86.8	72.6	0	0	1.2	17.4
Մեքսիկա	21.3	20.2	64.1	71.2	107	4.5	3.9	4.1
Հոլանդիա	50.5	57.6	41.6	37.9	6.3	3.8	1.6	0.8
Նորվե իա	28.3	30.5	38.8	44.9	32.2	23.7	0.7	0.9
Պորտու ալիա	18.6	20.3	52.4	49.4	26.0	25.6	3.0	4.7
Շվեդիա	0	0	51.9	72.6	42.2	189.1	5.9	9.3
ԱՄՆ	24.4	30.6	30.3	35.6	42.4	31.0	2.9	2.8

Ինչպես տեսնում ենք թիվ 9.3 աղյուսակից, այս հարցում որևէ ստանդարտ գոյություն չունի, և յուրաքանչյուր երկիր դրսևորում է իր մոտեցումը: Սակայն գրեթե բոլոր երկրներում, որպես օրինաչափություն, զգալի է պետության մասնակցությունը բյուջետային միջոցներով:

Սոցիալական ապահովագրության ֆինանսական աղբյուրներում հիմնականը սոցիալական հարկն է: Որոշ երկրներում նախատեսված են դրա դրույքաչափերի ներքին սահմաններ: Օրինակ՝ Գերմանիայում և Ճապոնիայում այդ սահմանից ցածր եկամուտ ունեցողները սոցիալական ապահովագրական վճարի մուծումներ չեն կատարում և մասնակի են օգտվում թոշակային իրավունքից: Դեպքեր կան, երբ որոշ տարիքից ցածր և բարձր աշխատակիցների համար վճարներ չեն զանձվում: Առանձին երկրներում, օրինակ՝ Ղորդանանում, հունվարի 1–ի դրությամբ ֆիքսվում է աշ-


խատողների աշխատավարձը, և, անկախ վերջինիս փոփոխությունից, այն հիմք է հանդիսանում սոցիալական ապահովագրական վճարների համար: Շատ երկրներում սահմանվում է նաև աշխատավարձի վերին սահման, որից ավելի մասի համար սոցիալական ապահովագրական վճար չի մուծվում: Այդ չափը Եվրոպայում հաճախ միջին աշխատավարձը գերազանցում է 100 կամ 200 անգամ: Նշենք, որ մի շարք երկրներում յուրաքանչյուր տարի տարիքի հետ աճում են նաև սոցիալական ապահովագրական վճարների հատկացումների տոկոսադրույքները:

Գործատուների և վարձու աշխատողների սոցիալական վճարների դրույքաչափերը նույնպես ըստ երկրների տարբեր են: Օրինակ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում գերակայող մասը վճարվում է գործատուների կողմից, Հարավային Ամերիկայում (Բոլիվիա, Չիլի, Պերու) մեծ մասը վճարվում է վարձու աշխատողների կողմից:

Մի շարք երկրներում կան նաև տարիքային, սեռային և ըստ աշխատանքի բնույթի տարբերություններ: Նշված տարբերության հիմք կարող է հանդիսանալ նաև աշխատանքի տեսակը: Օրինակ՝ Շվեյցարիայում գործատուները ավելի շատ են վճարում տարեց աշխատակիցների և կանանց համար: Բուլղարիայում տարբեր մասնագիտության անձինք սոցիալական ապահովագրական վճարներ են կատարում տարբեր դրույքներով: Իրաքում վառելանյութի բնագավառում գործատուների կողմից վճարվող սոցիալական ապահովագրական վճարների դրույքաչափը գերազանցում է մնացած բնագավառների սոցիալական ապահովագրական վճարների չափերը: Իսկ Չիլիում, օրինակ, մինչև 10% սոցիալական ապահովագրական վճարները պարտադիր են, որից ավելի աշխատակիցները կարող են կամավոր մուծումներ կատարել: Կիրառվում է նաև պրոգրեսիվ դրույքաչափ (օրինակ՝ Եգիպտոսում, Միացյալ Թագավորությունում): Կան երկրներ, որոնք օգտագործում են ներքին և վերին սահմանների համար հաստատագրված վճարներ:

Գծապատկեր 9.1

Գործատուների և վարձու աշխատողների կողմից վճարվող սոցիալական վճարների սահմանված տոկոսադրույքները մի շարք երկրներում (տոկոսային արտահայտությամբ)



Այսօր սոցիալական ապահովագրական վճարների հավաքագրումը և վճարումը իրականացվում են մեծամասամբ երկու մոդելների օգնությամբ. առաջինը զուտ ապահովագրական մոդելն է, երկրորդը՝ նվազագույն թոշակների ապահովման մոդել-

ԼԸ:

ՀՀ-ում պարտադիր սոցիալական ապահովագրության հիմնադրամի եկամուտները ապահովող միջոցների հաշվարկային տոկոսադրույքները բերված են թիվ 9.4 աղյուսակում:

Աղյուսակ 9.4

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերը

Տարեթիվը	Գործատուներ	Վարձու աշխատողներ	Գյուղացիական տնտեսություն վարողներ	Անհատ ձեռնարկատերեր
1997 թ.	37% (ամսական), որից 35%-ը կենսաթոշակային ֆոնդ, 2%-ը` ՀՀ սոցապահովա րության ֆոնդ	1%	Ամսական կադաստրային եկամտի 1.5%	Տարեկան եկամտի 18%
1998 թ. 01.01	մինչ– 8000 դր. – 32%, 8001–16000 դր. – 27%, 16001–ից ավելի –22%,	3%	Կադաստրային եկամտի 12% (ոչ ավելի նվազա ույն աշխատավարձի 156 պատիկը մեկ տարվա ընթացքում)	Տարեկան եկամտի 20%, բայց ամսական նվազա ույն աշխատավարձի մեկուկեսից ոչ պակաս – 13-ից ոչ ավելի
1999 թ. 01.01	28% ամսական ա) ոչ պակաս 2 500 դրամից բ) ոչ ավել 20000 դրամից	3%, բայց ոչ ավելի 2500 դրամից	Կադաստրային եկամտի 12% (ոչ ավելի 150000 դրամից)	Տարեկան եկամտի 20%, (յուրաքանչյուր ամիս ոչ պակաս 1500 դրամից – ոչ ավելի 20000 դրամից)
2000 թ. 01.08–ից	28% ամսական, բայց ոչ պակաս 5000 դր – ոչ ավելի ա) մինչ– 200000 դրամ աշխատավարձի տիրույթում 20000 դրամից բ) (20000 դրամ+աշխատավարձի 200000 դրամը երազանցող մասի 28%, բայց ոչ ավելի 30000 դրամ)	3%, բայց ոչ ավելի 2500 դրամից	Կադաստրային եկամտի 12% (ոչ ավելի 150000 դրամ)	Տարեկան եկամտի 20% (յուրաքանչյուր ամիս ոչ պակաս 1500 դրամից – ոչ ավելի 20000 դրամից)
2001 թ. 01.01	ա) մինչ– 20000 դրամ աշխատավարձի տիրույթում 5000 դրամ բ) 20000–100000 5000+20000 դրամը երազանցող մասի 15%–ը բ) 100000 դրամից ավելիի դեպքում 17000+100000 դրամը երազանցող մասի 5%–ը դ) պարզեցված հարկ վճարողների համար 6000 դրամ	3%	Կադաստրային եկամտի 5% (ոչ ավելի 60000 դրամ)	Տարեկան եկամտի ա) մինչ– 1200000 դրամը 15%, բ) 1200000 դրամից ավելիի դեպքում 180000 դրամ+1200000 դրամը երազանցող ունարի 5%–ը
2003 թ.	ա) մինչ– 20000 դրամի աշխատավարձի տիրույթում 5000 դրամ բ) 20000–100000 5000+20000 դրամը երազանցող մասի 15%–ը բ) 100000 դրամից ավելիի դեպքում 17000+100000 դրամը երազանցող մասի 5%–ը դ) պարզեցված հարկ վճարողների համար 6000 դրամ	3%	–	Տարեկան եկամտի ա) մինչ– 1200000 դրամը 15%, բայց ոչ պակաս 60000 դրամից բ) 1200000 դրամից ավելիի դեպքում 180000 դրամ +1200000 դրամը երազանցող ունարի 5%–ը

Ինչպես տեսնում ենք, 1997–2001թթ. 5 անգամ փոխվել են սոցիալական ապահովագրական վճարների տոկոսադրույքները, սակայն գործատուների և վարձու աշ-

խատողների եկամուտներից վճարվող գումարները գրեթե չեն փոխվել, մնացել են 28.0 մլրդ դրամի սահմաններում: Այստեղ բացառությունը թերևս 1998թ.–ն է, երբ այս գծով հավաքագրվել է 23.2 մլրդ դրամ և 2001թ., երբ հավաքագրվել է 34.9 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ 2006թ. հունվարի 1–ից սահմանվեց սոցիալական ապահովագրական վճարների տոկոսադրույքների նոր սանդղակ գործատուների համար, որը ունի հետևյալ տեսքը.

- ա) մինչև 20 000 դրամի աշխատավարձի տիրույթում՝ 7 000 դրամ,
- բ) 20 000 – 100 000 դրամը՝ 7 000 + 20 000 դրամը գերազանցող մասի 15%–ը,
- գ) 100 000 դրամից ավելիի դեպքում՝ 19 000 + 100 000 դրամը գերազանցող մասի 5%–ը,
- դ) պարզեցված հարկ վճարող իրավաբանական անձանց համար սահմանվել են նույն դրույքաչափերը, որոնք նախատեսված են սովորական հարկային դաշտում գործունեություն իրականացնողների համար:

Ժամանակի ընթացքում բոլոր զարգացած երկրներն էլ կանգնում են սոցիալական միջոցառումների ֆինանսավորման միջոցների անբավարարության խնդրի առջև:

Այս ֆոնի վրա Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության ֆինանսական աղբյուրների ձևավորման գործում ակնհայտ են դառնում նաև մի շարք թերություններ: Նախ, հաշվի առնելով մեր երկրի տնտեսական ներուժը և սոցիալական խնդիրները, անհամեմատ քիչ են այն միջոցները, որոնք ուղղվում են սոցիալական ապահովագրության հիմնադրամների ձևավորմանը: Դա գլխավորապես պայմանավորված է հիմնական մուծումներ կատարողների՝ գործատուների և վարձու աշխատողների միջև մուծումների բեռի անհավասար բաշխմամբ, ինչը հատկապես սրվում է գործատուների կողմից սոցիալական մուծումների կատարման գործում շահագրգռվածության բացակայությամբ: Գործատուները հաճախ թաքցնում են աշխատողների թվաքանակը և նրանց վճարվող իրական աշխատավարձերի գումարը, որով արհեստականորեն նվազեցվում է սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկային բազան: Մյուս կողմից, սոցիալական ապահովագրության հիմնադրամի մուտքերի հավաքագրման գործում մինչ օրս չկա միասնական հաշվառման բազա, որի ստեղծումը հնարավորություն կտա հաշվառել յուրաքանչյուրի կողմից իր օգտին կատարված սոցիալական վճարների չափը, ինչի հիման վրա էլ հնարավոր կլինի որոշել նրանց հետագա հատկացվելիք թոշակի չափը:

Սոցիալական ապահովագրության վճարների հավաքագրումը և աշխատող թոշակառուներին վճարումները նույնպես պահանջում են հստակեցում: Ներկայումս այդ կատեգորիայի թոշակառուներն իրենց աշխատանքային գործունեության ընթացքում շարունակում են կատարել սոցիալական ապահովագրության վճարներ այն դեպքում, երբ թոշակային իրավունքի համար հիմք հանդիսացող նրանց ընդհանուր աշխատանքային ստաժի հաշվարկումը դադարեցվում է թոշակի անցնելու պահից: Սովորաբար աշխատանքային գործընթացում ընդգրկված թոշակառուների աշխատանքային ստաժը գերազանցում է երեսուն տարին: Ստացվում է այնպես, որ միջին հաշվով նրանց կողմից կատարված սոցիալական ապահովագրական վճարների և նրանց վճարված թոշակների չափը հավասար գումար է կազմում (որոշ դեպքերում սոցիալական ապահովագրական վճարի գումարները գերազանցում են թոշակի չա-

փը), իսկ նրանց աշխատանքային ստաժը չի ավելացվում: Նման մոտեցումը չի համապատասխանում շուկայական հարաբերությունների ոգուն և հակասում է ապահովագրական սկզբունքներին: Միջազգային փորձը այս առումով հետևյալն է. աշխատանքային գործընթացի մեջ ընդգրկված թոշակառուների սոցիալական ապահովագրական վճարների հավաքագրումը դադարեցվում է, և նրանց աշխատանքային ստաժը չի հաշվարկվում թոշակային իրավունքի տեսանկյունից, և թոշակները վճարվում են 50–100%–ի չափով: Կան երկրներ, որոնք շարունակում են գանձել սոցիալական ապահովագրական վճարներ, միևնույն ժամանակ թոշակային իրավունքից հետո, շարունակում են հաշվառել աշխատանքային ստաժը և աշխատավարձի ցուցանիշը թոշակառուի հետագա թոշակի բազան ճշգրտելու նպատակով:

Հարկավոր է նաև հստակեցնել պետական բյուջեի մասնակցության չափը արտոնյալ պայմաններով վճարվող թոշակների լրացուցիչ ֆինանսավորման հարցում: Խնդիրներից մեկն էլ հատուկ պահուստների ձևավորումն է, որոնք պետք է ծառայեն ապահովագրական հիմքի վրա թոշակների վճարման համակարգին սահուն անցնելուն:

9.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ԴԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԴԴ–ՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ոլորտի ներկայումս ձևավորված իրավիճակը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է մոտ ապագայում իրականացնել լուրջ բարեփոխումներ: Ուսումնասիրվող ոլորտում ձևավորված միտումները բավականին հաջող են ձևակերպվել ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 2–ի թիվ 734 «Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները հաստատելու մասին» որոշման մեջ, որով և շեշտվել են Հայաստանում սոցիալական ապահովագրության և, մասնավորապես, կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները: Նշված որոշմամբ փաստորեն մեկ անգամ ևս շեշտվում են բնագավառում առկա խնդիրները, պետության կողմից դրանց գիտակցումը և այդ ուղղությամբ իրականացվելիք բարեփոխումների անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում կատարված հասարակական–քաղաքական և սոցիալ–տնտեսական արձատական փոփոխությունները առաջ են քաշել սոցիալական ոլորտը դրանց համապատասխանեցնելու հրամայականը: Հայաստան ներգաղթեց առավելապես կենսաթոշակային տարիքի և դրան մոտ բնակչությունը, իսկ արտագաղթեց հիմնականում աշխատունակ տարիքի բնակչությունը: Այս իրադարձությունները խախտեցին բնակչության սեռատարիքային համամասնությունը: Զգալիորեն ավելացավ 60 և ավելի տարիք ունեցող բնակիչների թիվը, որը մեծացրեց աշխատանքային տարիք ունեցող բնակչության սոցիալական ծանրաբեռնվածությունը և լրացուցիչ դժվարություններ ստեղծեց կենսաթոշակային ապահովության համակարգի համար: 1999 թվականի հունվարի 1–ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուների թիվը կազմում էր 583.0 հազ. մարդ, որոնց մոտ 70%–ը 60–ից ավելի բարձր տարիք ունեցողներն են: Տնտեսության մեջ զբաղվածների և կենսաթոշակառուների թվի հարաբերակցությունը՝ համակարգի

բեռնվածության գործակիցը, պաշտոնական տվյալներով կազմում է 2.3:1 (ճշգրտված փորձագիտական գնահատումներով՝ 1.9:1), իսկ արդյունավետ վճարումներ կատարողների և կենսաթոշակառուների թվի հարաբերակցությունը՝ 1:1: Նման հարաբերակցության դեպքում անգամ ամենազարգացած երկրների սոցիալական ապահովագրության համակարգը չի կարող արդյունավետ գործել:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության միջին կենսաթոշակը (մոտ 12 880 դրամ) չի ապահովում կենսաթոշակառուի զոյամիջոցի անգամ նվազագույնը, իսկ համակարգի փոխհատուցման գործակիցը (միջին կենսաթոշակի հարաբերությունը միջին աշխատավարձին) կազմում է ընդամենը 0,23¹: Այս ցուցանիշը ԽՍՀՄ-ի գույության վերջին տարիներին կազմում էր 0,5:

Բավականին ցածր մակարդակ ունեն մաս տրամադրվող նպաստները, որոնց միջոցով հազիվ թե լուծվում է «սև հացի» խնդիրը:

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի փոփոխությունը ևս մեծ ազդեցություն ունի կենսաթոշակային միջոցների ձևավորման վրա: Աշխատուժի գինը հանրապետության աշխատանքի շուկայում բավականին ցածր է, որը բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում հանգեցնում է աշխատավարձի ծավալի նվազմանը: Եթե 1985 թվականին եկամուտների կառուցվածքում աշխատավարձի բաժինը կազմում էր 76%, 1992–1993 թվականներին՝ 56–58%, ապա 1995–1996 թվականներին՝ արդեն 35–40%: Եկամուտներում աշխատավարձի տեսակարար կշռի նվազմանը զուգընթաց աճել է սոցիալական բնույթի այն եկամուտների բաժնեմասը (մարդասիրական օգնություն, դրամական փոխանցումներ արտերկրում բնակվող հարազատներից, բարեգործություն և այլն), որից սոցիալական վճարներ չեն գանձվում: Վիճակը բարդանում է նաև նրանով, որ միջին աշխատավարձի չափը բավականին ցածր է և չի բավարարում անգամ նվազագույն կենսամինիմումի ապահովմանը: Բավականին մեծ է նաև վարձու այն աշխատողների թիվը, որոնք օրինական գրանցում չունեն և սոցիալական մուծումներ չեն կատարում: Շատ դեպքերում իրական աշխատավարձերը թաքցվում են:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային օրենսդրության մեջ գործում են բավականին վաղ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու բազմաթիվ արտոնություններ: Այդ պատճառով հանրապետությունում կենսաթոշակի անցնելու միջին տարիքն արդեն երկար տարիներ սահմանվածից բավականին ցածր է: Խնդրի լուծումը հիմնականում այն է, որ նման արտոնյալ պայմաններում կենսաթոշակային իրավունքը չի ապահովված սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում լրացուցիչ ֆինանսական ներդրումներով:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններից մեկը ստվերային տնտեսությունն է: Դա էականորեն սահմանափակում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի սոցիալական վճարներ գանձելու հնարավորությունը, որն էլ առաջ է բերում հիմնադրամի ֆինանսական միջոցների անբավարարություն: Այն պայմանավորված է նաև հիմնադրամին ապահովադիրների ունեցած ժամկետանց պարտ-

¹ Գործակցի հաշվարկման հիմքում վերցվել է ՀՀ-ում միջին աշխատավարձը 2006թ. դրությամբ 56 000 դրամի սահմաններում՝ ըստ ԱՎԾ-ի տվյալների:

քերով: Ստվերային տնտեսության առկայությունը նաև դժվարացնում է իրական կարիքավորների բացահայտման գործընթացը, և ուղղակի եկամուտների հայտարարագրման ճանապարհով գրեթե անհնարին է տարբերել աղքատ ընտանիքները:

1999 թվականի հունվարի 1–ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական կենսաթոշակ էր ստանում կենսաթոշակառուների 8.3%–ը, այսինքն նրանք, ովքեր համակարգի միջոցների գոյացման գործում անհրաժեշտ մասնակցություն չեն ունեցել, իսկ դրա վճարման համար ծախսվող գումարը կազմում է կենսաթոշակների վճարմանը ուղղված միջոցների 6%–ը: Նշված խնդիրն իր մասնակի կարգավորումը ստացել է «2003թ. ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի ընդունումով, որի համաձայն սոցիալական թոշակները ֆինանսավորվելու են պետական բյուջեի միջոցներից:

Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքում վերջին 4–5 տարում նվազման միտում ունեն սոցիալական ոլորտին տրամադրվող միջոցները, իսկ սոցիալական ապահովությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշիռը տատանվում է 3.0–4.5%–ի սահմաններում:

ՀՀ սոցիալական ապահովագրության վիճակը պայմանավորված է նաև այն օրենքներով և նորմատիվ ակտերով, որոնցով առաջնորդվում և կարգավորվում է ՀՀ սոցիալական ապահովագրության ոլորտի գործունեությունը: Այս առումով կարևորվում են «ՀՀ քաղաքացիական կենսաթոշակային ապահովության մասին», «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքները: Համաձայն «ՀՀ քաղաքացիական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ գործող օրենքի՝ սահմանված են պետական կենսաթոշակների հետևյալ տեսակները՝

I. ապահովագրական (աշխատանքային).

- ա. տարիքային,
- բ. արտոնյալ պայմաններով տարիքային,
- գ. երկարամյա ծառայության,
- դ. հաշմանդամության,
- ե. կերակրողին կորցնելու դեպքում,
- զ. մասնակի,

II. սոցիալական.

- ա. ծերության,
- բ. հաշմանդամության,
- գ. կերակրողին կորցնելու դեպքում:

Տարիքային կենսաթոշակներ: Տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը (կանանց համար օրենքը սահմանում է որոշակի արտոնություն): 2002թ. տարիքային կենսաթոշակ է ստացել 392.6 հազ. մարդ, որը կազմում է ընդհանուր կենսաթոշակառուների 70%¹: 2003թ.² համապատասխանաբար 383.7 հազ. և

¹ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2003թ. բյուջեն, «Հայաստանի բյուջե-տային վերլուծությունների» ծրագիր, «Շիրակի Ղուզ», Եր–ան, 2003թ., 12 էջ:

² Տարածքային կենտրոնում ըստ կենսաթոշակների տեսակների կենսաթոշակառուների թվաքանակի – կենսաթոշակների միջին չափերի մասին» տեղեկանք (2002, 2003թթ.), սոցիալական ապահովագրության վարչություն:

³ «Ըստ կենսաթոշակների տեսակների՝ կենսաթոշակառուներին վերաբերող վարչական վիճակա թա-կան տվյալների մասին տեղեկանք» ՀՀ կառավարության թիվ 350–Ն որոշման N 2 հավելված, N 3 հավելված, N 4 հավելված, 18, 03.2004թ.:

70.5%², իսկ 2004թ. հուլիսի դրությամբ՝ 320.8 հազ. և 60.2 %³:

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակներ: Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն

- 1) 55 տարին լրացած անձը՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում, որից 15 տարին՝ առանձնապես վնասակար և ծանր պայմաններում (կանայք կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն ըստ սահմանված սանդղակի):
- 2) 59 տարին լրացած անձը՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում, որից 20 տարին՝ վնասակար, ծանր պայմաններում (դարձյալ օրենքով սահմանված սանդղակի համաձայն):
- 3) Հիպոթեզային թզուկության (լիլիպուտ) հիվանդ անձը՝ 45 տարին լրանալու և 20 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում:

2002 թ. արտոնյալ պայմաններով կենսաթոշակ են ստացել 24.6 հազ. մարդ (ընդհանուրի 4.5 %-ը), այդ թվում՝ ըստ 1–ին ցուցակի՝ 9.5 հազ., իսկ ըստ 2–րդ ցուցակի՝ 15.1 հազ.: 2003թ.՝ համապատասխանաբար՝ 64.4 հազ. (ընդհանուրի 11.8 %-ը), 8.8 հազ., 12.4 հազ., իսկ 2004թ. հուլիսի դրությամբ՝ 59.6 հազ. (ընդհանուրի 11.1 %-ը), 8.5 հազ., 11.4 հազ.:

Կարծում ենք, ճշգրտված չեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակներ նշանակելու մեխանիզմները, որի հետևանքով արտոնյալ կենսաթոշակառուների թիվը հաճախ արհեստականորեն աճում է: Նման թերություններից խուսափելու համար, մեր կարծիքով, ավելի արդարացի կլիներ հստակացնել դրանց ֆինանսավորման աղբյուրները՝ նկատի ունենալով նաև համապատասխան գործատուների մասնակցությունը տվյալ գործում:

Երկարամյա ծառայության կենսաթոշակներ: Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն քաղաքացիական ավիացիայի հետևյալ աշխատողները.

- 1) թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմի անդամները՝ 45 տարեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձինք՝ 20 տարվա ստաժի դեպքում: Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած այս անձանց կենսաթոշակ նշանակվում է միայն այն դեպքում, երբ նրանք ազատվում են թռիչքային աշխատանքներից.
- 2) բորտօպերատորները և բորտուղեկցորդները՝ 45 տարեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում: Իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձինք՝ 20 տարի ծառայած լինելու դեպքում.
- 3) օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայության անձնակազմի անդամները՝ 50 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 15 տարին անմիջականորեն զբաղված են եղել օդային երթևեկության կառավարման աշխատանքներով.
- 4) ինժեներատեխնիկական անձնակազմի անդամները՝ 55 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 20 տարին զբաղվել են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներով: Այս կենսաթոշակները 2002թ. կազմել են 19.1 հազ. մարդ կամ ընդհանուրի 3.4%-ը, 2003թ. կազմել են՝ համապատասխանաբար՝ 18.09 հազ., 3.3%-ը, 2004թ. հուլիսի դրությամբ՝ 17.3 հազ., 3.3%-ը:

Կենսաթոշակի չափը ձևավորվում է նրա հիմնական և ապահովագրական մասերի գումարից: Ապահովագրական մասը հաշվարկվում է մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի և անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական ապահովագրական հաշիվներում արտացոլվող տեղեկատվության հիման վրա: Նշված կենսաթոշակների չափը հաշվարկվում է հետևյալ ձևով.

$$Կ = Դ + (n \times Ա) \times Գ + Վ/S, \text{ որտեղ՝}$$

Կ–ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Դ–ն՝ հիմնական կենսաթոշակի չափը՝ 4250 դրամ (սահմանվող նոր չափը չի կարող պակաս լինել նախկինից).

Ա–ն՝ մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը (180 դրամ), որը չի կարող պակաս լինել նախկին արժեքից,

Գ–ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը (անձնական գործակիցը հաշվարկվում է կենսաթոշակառուի փաստացի ստաժի և օրենքով սահմանված ստաժի (25 տարի) հարաբերությամբ. ընդ որում, 25 տարին գերազանցող ապահովագրական ստաժի յուրաքանչյուր տարվա համար գործակիցը սահմանվում է 0.02),

Վ–ն՝ անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների ընդհանուր գումարի մասին տվյալն է, որը գործնականում դեռևս չի կիրառվում,

S–ն՝ կենսաթոշակառու դառնալու պահին կանանց և տղամարդկանց կյանքի սպասվելիք միջին տևողությունն է (ըստ ամիսների), որը յուրաքանչյուր տարի հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

Բանաձևում արտահայտված բազային կենսաթոշակի և ստաժի համար տրվող հավելման չափերի դինամիկան բերված է թիվ 9.5 աղյուսակում:

Աղյուսակ 9.5¹

Սահմանված բազային կենսաթոշակի և ստաժի համար տրվող հավելման չափերի շարժընթացը

¹ «Բազային կենսաթոշակների չափերն ու ապահովա րական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 707–Ն որոշում, 13.06.2003թ. (փոփոխություն՝ 09.09.2004թ., N 1265–Ո):

	01.01. 1996	01.09. 1996	01.01. 1997	01.10. 1997	01.04. 1999	01.01. 2002	01.10. 2002	01.01. 2003	13.06. 2003	01.10. 2004
Բազային կենսաթոշակի չափը (դրամ)	2200	2200	2200	2200	2860	3000	3000	3000	3000	3000
Ստաժի հավելումը 1 տարվա համար (դրամ)	15	25	35	45	60	60	80	100	140	160

Հաշմանդանության կենսաթոշակ: Հաշմանդանության կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդան ճանաչված անձին, այն դեպքում, երբ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով՝ անկախ ապահովագրական ստաժից, և ընդհանուր հիվանդության հետևանքով, եթե հաշմանդանություն սահմանելու ժամանակ անձն ունեցել է մինչև 5 տարի ապահովագրական ստաժ:

Հաշմանդանության հիմնական կենսաթոշակի չափը կազմում է առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 120%–ը, երկրորդ խմբի համար՝ 100%–ը, երրորդ խմբի համար՝ 80%–ը: Հաշմանդանության կենսաթոշակառուները 2002թ. կազմել են 66.8 հազ. մարդ կամ ընդհանուր թվի 12%–ը, 2003թ. համապատասխանաբար կազմել են՝ 71.6 հազ., 13.2%–ը, իսկ 2004 թ. հուլիսի դրությամբ՝ 74.07 հազ., 13.9%–ը:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակներ: Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն ընտանիքի հետևյալ անդամները.

- 1) 18 տարին լրացած երեխան, եղբայրը, քույրը և թոռը, ընդ որում, եղբայրը, քույրը և թոռը, եթե չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում.
- 2) անուսինը կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա զբաղված է մահացած կերակրողի՝ 8 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով և չի աշխատում:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը հիմնական կենսաթոշակի չափով նշանակվում է ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին՝ ավելացնելով մահացած կերակրողի հաշվարկված կենսաթոշակի ապահովագրական մասը հետևյալ չափերով¹. մեկ խնամարկյալին՝ 50 %-ի չափով, երկու խնամարկյալին՝ 90 %-ի չափով, երեք խնամարկյալին՝ 120 %-ի չափով, չորս և ավելի խնամարկյալին՝ 150 %-ի չափով:

Երկկողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր երեխայի կենսաթոշակը նշանակվում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկին ավելացնելով յուրաքանչյուր ծնողի հաշվարկված կենսաթոշակի ապահովագրական մասը:

2002թ. այս խմբի կենսաթոշակառուները կազմել են 14.4 հազ. մարդ կամ ընդհանուր կենսաթոշակառուների 2.6%–ը, 2003թ. կազմել են համապատասխանաբար՝ 14.4 հազ., 2.6%–ը, իսկ 2004 թ. հուլիսի դրությամբ՝ 14.7 հազ., 2.8%–ը:

Մասնակի կենսաթոշակներ: Մասնակի կենսաթոշակի իրավունք ունեն 55 տարին

¹ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված Ազ-ային ժողովի կողմից 19.11.2002թ. (փոփոխություն՝ 11.05.2004թ., ՀՕ–72–Ն):

լրացած անձինք, ովքեր մինչև աշխատատեղերի ատեստավորման հիման վրա ցուցակներ հաստատել են աշխատել են առանձնապես վնասակար, ծանր պայմաններում և ձեռք են բերել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժի առնվազն կեսը, սակայն նրանց այդ կենսաթոշակի իրավունքը տվող արտադրությունները, աշխատանքները, մասնագիտությունները և պաշտոնները չեն ընդգրկվել նոր ցուցակներում:

Մասնակի կենսաթոշակի իրավունք ունեն մաս ինչպես 55 տարին լրացած կրթության, մշակույթի որոշակի կատեգորիաների աշխատողները, որոնք ունեն 12 տարվա մասնագիտական ապահովագրական ստաժ, այնպես էլ 50 տարին լրացած և 12 տարվա մասնագիտական ապահովագրական ստաժ ձեռք բերած թատերական կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասանները:

2003 թ. մասնակի կենսաթոշակառուների թիվը կազմել է 496 մարդ, իսկ 2004 թ. հուլիսի դրությամբ՝ 862 մարդ^[23]:

Ընդհանուր առմամբ 2002թ. 33-ում բոլոր կենսաթոշակառուների թիվը կազմում էր 543.6 հազ. մարդ, որից 485.4 հազ.-ը՝ ապահովագրական կենսաթոշակառուներ, 2003թ.՝ համապատասխանաբար 542.7 հազ., 487.9 հազ., իսկ 2004թ. հուլիսի դրությամբ՝ 532.6 հազ., 487.5¹:

Բացի կենսաթոշակառուների վերոհիշյալ տեսակներից, գոյություն ունի մաս զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվող պետական կենսաթոշակ, որը սահմանվում է առանձին օրենքով^[21]:

Ձինծառայողներին տրամադրվում են հետևյալ պետական կենսաթոշակները.

1. երկարամյա ծառայության.
2. հաշմանդամության.
3. սոցիալական կենսաթոշակ զինծառայողների ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու դեպքում:

Ձինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին նշանակված պետական կենսաթոշակների վճարումը իրականացվում է 33 պետական բյուջեից:

2002թ. զինծառայող կենսաթոշակառուների թիվը կազմում է 20.9 հազ. մարդ, որից 9.5 հազ.-ը՝ կրկնակի կենսաթոշակառու, 2003թ.՝ 19.2 հազ., որից 8.6 հազ.-ը՝ կրկնակի, իսկ 2004 թ. հուլիսի դրությամբ՝ 18.1 հազ. կենսաթոշակու, որից 8.09 հազ.-ը՝ կրկնակի²:

Ձինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ: Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքից օգտվում են այն զինծառայողները, որոնք ծառայությունից արձակվելու պահին ունեն 20 և ավելի տարվա ստաժ, ինչպես մաս տարիքի, առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու պահին (50 տարին լրանալու դեպքում) ունեն 25 և ավելի տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ, որից 12 տարի 6 ամիսը

¹ «Ըստ տարիների կենսաթոշակառուների թվաքանակի – կենսաթոշակների միջին չափերի մասին» տեղեկանք (1997–2004թթ. համար), Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ, 07.02.03թ.:

² «33 հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 33 օրենքը՝ ընդունված Ազ.ային ժողովի կողմից, 29.05.1993թ.:

կազմում է զինվորական ծառայությունը:

Երկարամյա ծառայության կենսաթոշակը նշանակվում է 20 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցողներին ամսական դրամական բավարարման 70 %-ի չափով, իսկ 20 տարուց ավելի ծառայած յուրաքանչյուր տարվա համար ավելանում է ամսական դրամական բավարարման 2 %-ի չափով:

Տարիքի, առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվածներին նշանակվում է կենսաթոշակ ամսական դրամական բավարարման 65%-ի չափով: 25 տարուց ավելի աշխատած և զինվորական ծառայության հետ չկապված յուրաքանչյուր 1 տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակն ավելանում է ամսական դրամական բավարարման 1%-ի, իսկ 12,5 տարուց ավելի ծառայած յուրաքանչյուր տարվա համար՝ 2%-ի չափով: Բոլոր դեպքերում կենսաթոշակը չի կարող գերազանցել ամսական դրամական բավարարման չափը և ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 50%-ի չափից:

Ձինծառայողների հաշմանդամության կենսաթոշակ: Այս կենսաթոշակը նշանակվում է աշխատունակության լրիվ կամ մասնակի կորստի հետևանքով հաշմանդամ ճանաչելու դեպքում, եթե հաշմանդամությունը առաջ է եկել զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում:

Ձինծառայողների հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է՝

- I խմբի հաշմանդամներին ամսական դրամական բավարարման 70%-ի չափով, բայց ոչ պակաս օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 150%-ի չափից.
- II խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման 60%-ի չափով, բայց ոչ պակաս նվազագույն աշխատավարձի 100%-ի չափից.
- III խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման 40%-ի չափով, բայց ոչ պակաս նվազագույն աշխատավարձի 75%-ի չափից:

Սոցիալական կենսաթոշակ զինծառայողների ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու դեպքում: Այս կենսաթոշակը նշանակվում է զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի այն անաշխատունակ անդամներին, որոնք գտնվել են նրա խնամքի տակ:

Այս դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում է հետևյալ չափերով՝

1. յուրաքանչյուր երեխային՝ կերակրողի դրամական բավարարման 40%-ի չափով, բայց ոչ պակաս օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 60%-ի չափից.
2. երկու ծնողներին կորցրած կամ զոհված միայնակ ծնողի զավակներից յուրաքանչյուրին՝ կերակրողի դրամական բավարարման 60%-ի չափով, բայց ոչ պակաս օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 80%-ի չափից.
3. ընտանիքի յուրաքանչյուր անաշխատունակ անդամին՝ կերակրողի դրամական բավարարման 30%-ի չափով, բայց ոչ պակաս օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 50%-ի չափից:

Կենսաթոշակները հաշվարկելիս որպես ամսական դրամական բավարարման

(փաստացի) չափ ընդունվում է զինվորական ծառայությունից արձակվելու կամ կենսաթոշակի իրավունքի առաջացման պահին նախորդող ամսում զինծառայողի ստացած դրամական բավարարումը:

ՀՀ կենսաթոշակային համակարգը ներկայացված է ստորև բերվող թիվ 9.6 աղյուսակում:

Աղյուսակ 9.6

Կենսաթոշակառուների թվաքանակը ըստ տարիների (հազ. մարդ)

Կենսաթոշակի տեսակը	01.01. 1998	01.01. 1999	01.01. 2000	01.01 2001	01.01 2002	01.07. 2002	01.01. 2003	01.01 2004	01.01 2005
Ընդհանուր կենսաթոշակառուների թիվը, այդ թվում՝	587,7	574,6	568,1	560,0	552,9	547,6	543,6	543,7	540,3
ապահովա դական կ/թ թիվը	526,3	516,3	509,7	501,7	493,7	488,5	485,4	487,8	486,0
սոցիալական կ/թ թիվը	50,7	47,9	47,4	46,6	47,0	47,2	46,6	45,2	44,6
Զինծառայողների կ/թ թիվը, այդ թվում՝	23,2	22,5	23,0	22,8	22,2	21,6	20,9	19,2	17,3
կրկնակի կ/թ	12,4	12,2	12,1	11,1	10,1	9,8	9,4	8,6	7,7

Օրենքի հիմնական նորամուծություններից մեկն այն է, որ կենսաթոշակները հաշվարկվում են ոչ թե ապահովագրվածի մուծումներին և աշխատանքային ներդրումներին համարժեք, ինչը սոցիալապես արդարացված և տնտեսապես արդյունավետ մոտեցում է, այլ բազային (սոցիալական) կենսաթոշակներին ավելացնելով աշխատանքային ստաժին տրվող հավելումները: Ընդ որում, այստեղ նույնպես պարբերաբար վերանայվել են հավելումների չափերը: Այսպես՝ 1996–1999 թվականներին հավելման չափերը համապատասխանաբար յուրաքանչյուր տարվա համար սահմանվել են 10, 25, 35, 45, 60 դրամ, իսկ բազային կենսաթոշակի չափը՝ 2200 դրամ: ՀՀ կառավարության 1999թ. մարտի 18–ի թիվ 162 որոշմամբ նույն տարվա ապրիլի 1–ից բազային կենսաթոշակի չափը սահմանվել է 2860 դրամ և ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 12–ի թիվ 1092 որոշմամբ յուրաքանչյուր տարվա համար հավելման չափը սահմանվեց 60 դրամ՝ անկախ աշխատանքային ստաժից: 2002թ. հունվարի 1–ից բազային թոշակի չափը սահմանվեց 3000 դրամ: Յուրաքանչյուր տարվա հավելման չափը 2002թ. հոկտեմբերի 1–ից ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 12–ի թիվ 1462 որոշմամբ սահմանված է 80 դրամ, իսկ 2003թ.՝ 100 դրամ: Նույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունքը ձեռք է բերվում առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի դեպքում: Գործնականում, երբ թոշակների չափերը սահմանվում են ոչ թե յուրաքանչյուրի ներդրումներին և աշխատավարձին համաչափ, այլ աշխա-

տանքային ստաժի հիման վրա, չի գործում սոցիալական արդարության սկզբունքը: Միևնույն ժամանակ խախտվում է նաև տնտեսական հավասարակշռվածության սկզբունքը, այսինքն՝ թոշակի վճարումը իրականացվում է հաշվի չառնելով սոցիալական հիմնադրամին վերջինիս կատարած ներդրումների և մասնակցության չափերը: Թեև այդ դրույթը ավելի շատ պարտադրված քայլ է և կապված է պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության բյուջետային միջոցների սղության հետ, սակայն չի կարելի անտեսել այն տնտեսական սկզբունքները, որոնք գործում են ապահովագրական ընդհանուր հիմքի վրա փոխհատուցումների վճարման և շուկայական հարաբերությունների պայմաններում: Հատկապես պետք է հաշվի առնել, որ վերջիվերջո տնտեսական օրինաչափությունների անտեսումը ապագայում հակադարձ և բացասական արդյունքների է բերում, ինչի վկայությունն է այսօրվա թոշակների նվազագույն չափը: Նշված խնդրի կարգավորման ուղիներից մեկը պետք է լինի անհատական սոցիալական ապահովագրության հաշվառումը, որն արդեն իսկ նախատեսվում է ներդնել «Անհատական ծածկագրման մասին» օրենքի ընդունմամբ:

Նույն օրենքով կանոնակարգվում են նաև քաղաքացիների կենսաթոշակային տարիքները:

Այսպես՝ տղամարդկանց թոշակային տարիքը 1996 թվականին սահմանված 60.5 տարեկանից յուրաքանչյուր տարի ավելացվում է 0.5 տարով և սկսած 2005 թվականից՝ դառնում է հաստատուն տարիք՝ 63 տարեկան: Կանանց համար մոտեցումը նույնն է՝ 1996 թվականի 50.5 տարեկանից յուրաքանչյուր տարի ավելացվում է 0.5 տարով և սկսած 2011 թվականից՝ դառնում է հաստատուն տարիք՝ 63 տարեկան:

Գործող օրենքով նախատեսված է նաև արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքը: Այստեղ նույնպես յուրաքանչյուր տարի նախատեսված է ավելացնել այդ իրավունքից օգտվելու համար սահմանված տարիքը՝ յուրաքանչյուր տարի կես տարվա չափով: Ընդ որում, առանձնապես վնասակար և ծանր պայմաններում առնվազն 15 տարի աշխատած կանանց համար 2011 թվականից այն սահմանված է 53 տարի, իսկ տղամարդկանց համար՝ 58 տարի, վնասակար պայմաններում առնվազն 20 տարի աշխատած կանանց համար 2005 թվականից այն սահմանված է 55 տարի, իսկ տղամարդկանց համար՝ 60 տարի:

Նախատեսված են նաև երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ:

Միանշանակ է, որ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական լուրջ հիմնահարցերից է թոշակի և աշխատավարձի խիստ ցածր մակարդակը: 4500–5000 դրամ թոշակը գործող զենքի պայմաններում չի լուծում կենսաթոշակառուի կամ նպաստառուի անգամ սննդի խնդիրը, ուր մնաց սոցիալական նվազագույնի բավարարումը:

Հայաստանի սոցիալական ոլորտում լայնորեն կիրառվել է նաև նպաստների համակարգը: 1999 թվականից մինչ այդ գոյություն ունեցող բազմաթիվ և տարատեսակ նպաստներին ու փոխհատուցումներին փոխարինեց նպաստի որակապես տարբեր մի այլ տեսակ՝ սոցիալական աջակցությունը: ՀՀ կառավարության

1997թ. դեկտեմբերի 9–ի թիվ 562 «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» որոշման համաձայն՝ առավել կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով հաստատվեց ընտանեկան նպաստի վճարման կարգը: Փաստորեն նպաստի նշված տեսակը տրամադրվում էր ոչ թե այս կամ այն սոցիալական խմբին պատկանող անձանց, այլ ուղղված էր կոնկրետ ընտանիքին: Ընտանեկան նպաստի համակարգը սկսեց գործել 1999թ. հունվարի 1–ից: ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 865 որոշմամբ ընտանեկան նպաստի բազային չափը սահմանվել է 3500 դրամ, և ընտանիքի յուրաքանչյուր անդամին տրվող հավելման չափը՝ 1300 դրամ: Հետագայում՝ 2000 թվականի հուլիս ամսվանից, ընտանեկան նպաստի բազային չափը սահմանվել է 3000 դրամ, իսկ 2002 թ. հուլիս ամսվանից՝ 4000 դրամ:

Ընտանեկան նպաստների և մինչև 2 տարեկան երեխա խնամող մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող նպաստների ֆինանսավորման աղբյուրը ՀՀ պետական բյուջեն է:

Բացի ընտանեկան նպաստներից, ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվում մինչև 2 տարեկան երեխա խնամող գործազուրկ մայրերին տրվող նպաստների համար: Յուրաքանչյուր տարի այս նպաստից օգտվում է մոտավորապես 10.8 հազ. մարդ և այդ նպատակով ծախսվում է մոտ 350 մլն դրամ:

Բարեկեցությունը՝ իբրև տնտեսագիտական հասկացություն, ունի բավականին լայն ընկալում: Այդ տեսակետից հասկանալի է, որ տվյալ հասկացության և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) միջև դրսևորվում է պատճառահետևանքային հարաբերություն: Բնակչության արտադրական գործունեության ծավալայնությունը անառարկելիորեն պայմանավորում է նրա կենսակերպի ցուցանիշը: Իհարկե, չպետք է պնդել, որ համախառն ներքին արդյունքը ի վիճակի է ընդգրկելու ժողովրդի տնտեսական զբաղմունքին վերաբերող բոլոր կողմերը: Օրինակ՝ բնակարանային հսկա ծավալ կազմող բնագավառը, բանջարանոցներն ու հողամասերը, որտեղ իրականացվում են նորոգման, մշակման և այլ կարգի ամենաբազմազան աշխատանքներ, որոնք հիմնականում իրականացվում են սեփականատերերի կողմից, հնարավոր չէ արտահայտել ՀՆԱ–ի մեջ: Նույնը կարելի է ասել սովետային տնտեսության մասին: Այն նույնպես չի նպաստում ազգային եկամտի (ԱԵ) ավելացմանը և հաշվի չի առնվում ՀՆԱ–ի ընդհանուր ծավալում, քանի որ հովանավորչություն ձեռք բերած գործատուները թաքցնում են իրենց եկամուտները և շահագրգռված չեն բնակչության բարեկեցության բարձրացմամբ: Հետևապես՝ ժողովրդի ապահովության բարձրացման համար անհրաժեշտ է ՀՆԱ–ում հաշվի առնել դրան նպաստող շատ տարբեր ազդակներ. միաժամանակ բացառել այն բոլոր գործոնները, որոնք խոչընդոտում են սոցիալական բարեկեցության վերընթացին: Այսինքն՝ պետությունը պետք է որոշակի միջոցառումներ ձեռնարկի սոցիալական սուր խնդիրները մեղմելու ուղղությամբ:

Շուկայական մեխանիզմին պետության միջամտությանը դեմ արտահայտվող

¹ Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Եր–ան, 2002թ., 384 էջ:

նույնիսկ ամենասարմատական կողմնակիցները գտնում են, որ սոցիալական քաղաքականությունն անհրաժեշտ է մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման, բնակչության անապահով խավերին օգնություն ցույց տալու, աղքատության մակարդակը իջեցնելու և հասարակության նվազագույն բարեկեցությունն ապահովելու համար¹:

Իշխանության նեկայացուցիչների սոցիալական քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը բնակչության միջև ունեցվածքի անկողմնակալ բաժանումն է, այն հաշվով, որպեսզի որոշակի միջոցառումների կիրառմամբ արմատապես կրճատվի նրա եկամուտների անհավասարությունը, որի հետևանքով ապահովվի ժողովրդի կենսակերպի անհրաժեշտ նվազագույն մակարդակ:

Ըստ տնտեսագիտության կարևոր դրույթներից մեկի՝ կյանքի մակարդակը սահմանվում է, առաջին հերթին, նյութական պահանջմունքներով. սննդի, հագուստի, բնակարանների, առաջին անհրաժեշտության ապրանքների, առողջապահության, կրթության, աշխատանքի և հանգստի պայմանների բավարարման աստիճանով: Պարզ է՝ նշված բնագավառներից մի քանիսը կապված են հոգևոր ուլորտի հետ, այնուամենայնիվ, դրանց պահանջմունքների բավարարումը դարձյալ հիմնականում շահկապվում է նյութական բարիքների հետ:

Սոցիալական պաշտպանությունը հայկական մենաշնորհի չէ: Այն կրում է միջազգային բնույթ, և նրա ձեռնարկումների ամբողջական կառուցվածքի հիմքում ընկած են մարդու իրավունքների Յճակագրի բոլոր հիմնական պահանջները, ըստ որոնց՝ մարդկային կյանքը համարվում է հասարակության համար ամենաբարձր արժեքը: Այդ իսկ պատճառով ամեն մի քաղաքակիրթ երկրի պարտքն է հովանավորության տակ վերցնել իր քաղաքացիներին տնտեսական ու սոցիալական բևեռացումներից, ցնցումներից, որոնք կարող են սկիզբ առնել աշխատանքի կորստի, եկամուտների կտրուկ անկման, հաշմանդամության, ծերության, հիվանդության շարժառիթներից ելնելով: Այս առաքելությունից դրդված՝ անհրաժեշտ է ակտիվ տնտեսական, հատկապես տեղական ռեսուրսները տնտեսական շրջանառության մեջ ընդգրկելու բանական քաղաքականությամբ նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, աշխատուժի նվազագույն արժեքը և աշխատավարձի նվազագույն մակարդակը, ինչպես նաև նվազագույն կենսաթոշակների, նպաստների չափերը հասցնել գոնե նվազագույն կենսամակարդակին, կասեցնել աշխատուժի հետագա ապաորակավորման ընթացքը, ինչպես նաև պաշտպանել սեփական արտադրողների շահերը և հովանավորչական քաղաքականությամբ խթանել մանր գործարարությունը, մեղմել հասարակության ցցուն բևեռացման ընթացքը:

Տնտեսության վերականգնման, բնակչության կենսամակարդակի բարձրացման նշված հիմնախնդիրներին զուգընթաց անչափ կարևոր է նաև պետության սոցիալական քաղաքականության կատարելագործումը, որով էլ պայմանավորվում է երկրի ոչ հարուստ ռեսուրսների նպատակային ու ճիշտ օգտագործումը:

Սոցիալական այդպիսի քաղաքականության իրագործման համար, ինչպես նշվել է նախորդ պարագրաֆներում, տարբեր ժամանակներում կիրառվել են բնակչության սոցիալական պաշտպանության տարբեր համակարգեր, որոնք, հաջորդելով մեկը մյուսին, անընդհատ կատարելագործվում են: Այս առումով ավելի արդիական է սոցիալական քարտերի ներդրման համակարգը, որը շրջանառության մեջ է մտել «Սո-

ցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (24.09.2003թ.):

Այս օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող և բնակվող օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու փախստականի կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվող սոցիալական ապահովության քարտեր հատկացնելու, կիրառելու և սոցիալական քարտի համարի կիրառման հետ կապված հարաբերությունները:

Սոցիալական քարտը, որի համարը եզակի է և փոխփոխման ենթակա չէ, քաղաքացիներին հատկացվող մի փաստաթուղթ է, որով երաշխավորվում է քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը: Սոցիալական քարտերի համակարգի ստեղծման նպատակը տեղեկատվական համակարգում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացումը (իդենտիֆիկացումը), օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության փոխանակման գործընթացների կանոնակարգումը, բարելավումը և քաղաքացու անհատական տվյալների գաղտնիության ապահովումն է:

Սոցիալական քարտերի տեղեկատվական բազան այդպիսի քարտեր ստացած քաղաքացիների անհատական տվյալների ամբողջությունն է, որը ձևավորվում է քաղաքացիների ներկայացրած և համապատասխան պետական կառավարման մարմինների տրամադրած տվյալների հիման վրա¹:

Այս համակարգի արմատավորումը, համոզված ենք, որոշակի հստակություն կարող է մտցնել քաղաքացու և պետության, ինչպես նաև գործատուի ու վարձու աշխատողի փոխհարաբերությունները արդարամտորեն կարգավորելու գործընթացում:

Սրանով իսկ հնարավորություն կստեղծվի, թեկուզ նվազագույն չափով, ուշադրություն բևեռել մարդու շահադիտական վարքագծի և հասարակական արժեքների միջև աստիճանաբար խորացող հակասությանը, որը խոչընդոտում է տնտեսության ընդհանուր արդյունավետությանը և, ընդհակառակը, խթանում գործարարությանը, որ վերջինս ավելի շատ կողմնորոշվի դեպի ստվերային հատվածը՝ իհարկե, խախտելով հարկային ու կարգավորող այլ օրենքները:

Շուկայական հարաբերություններ ստեղծած երիտասարդ հայկական պետության կայացման համար այս քայլը, անտարակույս, նպաստելու է պետական կառավարման առավել արդյունավետ համակարգի ձևավորմանը, որը դրական ներգործություն կունենա ստվերային տնտեսության ու չարաշահումների մակարդակների արմատական նվազեցման վրա: Դրանով, միաժամանակ, կայուն հող կստեղծվի, որպեսզի մեր քաղաքացիական հասարակությունը շրջադարձ կատարի իր օտարվածությունից դեպի հանրային կառավարման ոլորտը և մասնակցի հասարակական ու տնտեսական համապատասխան վճիռների կայացմանը:

Ակնհայտ է նաև համակարգի ներդրման գործնական նշանակությունը: Դրա կի-

¹ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված Ազ. ային ժողովի կողմից, 24.09.2003թ.:

րառման հենց առաջին ամիսների ընթացքում բացահայտվեցին նախկին համակարգի մի շարք թերություններ, որոնք կապված էին շատ թոշակառուների՝ կրկնակի թոշակների հատկացման հետ: Աչքաթող չպիտի անել նաև սոցիալական քարտերի տրամադրման մեխանիզմների ոչ հստակությունը հատկապես որոշակի խմբի հաշմանդամների համար:

Սոցիալական քարտերի համակարգի ներդրումը կարևոր է նաև բնակչության որոշակի շերտերի անապահովության սահմանն ու հասցեականությունը բնորոշելու հարցերում: Պարզապես դրանով հիմք է ստեղծվում անցում կատարելու աղքատության գծի անուղղակի սահմանումից դեպի եկամուտների ուղղակի գնահատումը: Այսինքն՝ ընտանիքի անապահովության գնահատման համար չափանիշ է ընդունվում ոչ թե բալային համակարգը, այլ միայն ընտանիքի անդամների ունեցած եկամուտը: Իհարկե, ընտանեկան նպաստների հասցեականության հարցում առաջնորդվել միայն սոցիալական քարտերի համակարգի հուսալիությանը, արդարացի չէր լինի: Այս խնդրում իրենց բացառիկ դերն ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Առաջին հերթին սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների և դրանց կից ստեղծված սոցիալական աջակցության խորհուրդների անդամները պարտադիր կերպով պիտի համագործակցեն բնակիչների հետ, այցելեն նրանց բնակարանները, հայտնաբերեն նրանց կարիքները, մտահոգող հարցերը, գնահատեն նրանց սոցիալական վիճակը, համագործակցեն համայնքի ղեկավարության և հասարակական կազմակերպությունների հետ: Սոցիալական ոլորտի ամեն մի աշխատող սերտ կապեր պիտի հաստատի հատկապես նոր արմատավորված համատիրությունների ղեկավարների հետ, քանի որ վերջիններս ավելի են քաջատեղյակ իրենց բնակիչների սոցիալական վիճակին: Նրանց ներկայացրած տեղեկատվությունը, անկասկած, կարող է վճռական դեր խաղալ անապահով ընտանիքների հայտնաբերման ու հաշվառման գործում: Բնակչության հետ տեղական ինքնակառավարման մարմինների այսպիսի շփումը, համագործակցությունը շահեկան են ոչ միայն անապահովության բացահայտման առումով, այլև այն ունի առավելապես բարոյահոգեբանական նշանակություն: Չէ՞ որ մարդը կարող է աղքատ լինել, սակայն չունենալ աղքատի զգացողություն, և ընդհակառակը՝ ոչ աղքատը կարող է ունենալ աղքատի զգացողություն:

Մատնանշված միջոցառումների, առանձնապես սոցիալական քարտերի ներդրման գործընթացի խելացի օգտագործումը կօգնի նաև հաշվառված նպաստառու ընտանիքների ցուցակների թեթևացմանը: Իսկ դրանցից առաջացած դրամական և այլ կարգի միջոցները դարձյալ կուղղվեն անապահով ընտանիքներին, ինչն էլ, թեկուզ նվազագույն չափով, դրականորեն կներգործի վերջիններիս սպառողական զամբյուղի պարունակության վրա: Սակայն արդարության դեմ չմեղանչելու համար պիտի շեշտել, որ վերջին տասնհինգ տարվա ընթացքում այդ զամբյուղի պարունակությունը մեր բնակչության բացարձակ մեծամասնության համար, մեղմ ասած, բարեհամբույր չի եղել: Դրանում համոզվելու համար բերենք հետևյալ տվյալները (տես թիվ 9.7 աղյուսակը):

Աղյուսակ 9.7¹

Նվազագույն պարենային զամբյուղի էներգետիկայի (կկալ) արժեքը (2004թ–ի տվյալներով)

Սննդամթերք	1 կ –ի արժեքը դրամով	100 ր–ի արժեքը դրամով	100 ր–ի կիլոկալորիան (կկալ)	Օրական սպառումը մեկ շնչի հաշվով (րամ)	Ընդամենը (կկալ)	Մեկ շնչի հաշվով օրական սպառված սննդամթերքի արժեքը
1 Սպիտակ հաց	200	20	226	150	339	30
2 Ա– հաց	200	20	190	150	285	30
3 Տավարի միս	1500	150	187	100	187	150
4 Ձուկ	500	50	107	100	107	50
5 Կաթնեղեն	300	30	61	200	122	60
6 Ձու (1 հատ)	50	100	80	50	40	25
7 Յուղ	1050	105	766.5	20	153.3	21
8 Խնձոր	350	35	46	100	46	35
9 Պանիր	1000	100	298	100	298	100
10 Կարտոֆիլ	120	12	83	100	83	12
11 Կաղամբ	200	20	28	100	28	20
12 Սոխ	300	30	43	50	21.5	15
13 Շաքարավազ	250	25	374	50	187	12.5
14 Բրինձ	400	40	323	20	64.6	8
15 Ձավար	300	30	326	12	39	3.6
16 Մակարոն	500	50	332	30	99.6	15
Ընդամենը					2100	587.1

Բերված թվերից բավական է վերցնել երկու տվյալ՝ օրական մեկ շնչի հաշվով օգտագործվող սննդամթերքի անհրաժեշտ էներգետիկան ու դրա դրամական արժեքը, և պարզ կդառնա նպաստառուների վիճակը: Եթե նպաստառու մեկ անձը մեկ օրում 2100 կիլոկալորիա ստանալու համար պիտի ծախսի 587.1 դրամ, իսկ մեկ ամսում՝ 17613 (587.1x30), մինչդեռ այդ նույն անձի մեկ ամսվա նվազագույն նպաստի չափը կազմում է 4500 դրամ, ապա պարզ կդառնա նրա կենսակերպը: Պարզապես մեկ անձի նպաստի ամսական նվազագույն չափը կազմում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքի 25.5%–ը (4500/17613 x 100): Այդ ցուցանիշի համեմատությունը 2002թ–ի նույն ցուցանիշի հետ ցույց է տալիս, որ իրավիճակը ոչ թե բարելավվում, այլ ընդհակառակը՝ գնալով ավելի է խորանում (տե՛ս թիվ 9.8 աղյուսակը):

¹ Օրական մեկ շնչի հաշվով օ տա ործվող սննդամթերքի կալորիաների ու դրամական արժեքի տվյալները հիմնված են հեղինակների ուսումնասիրությունների վրա (2004թ–ի ներքո):

Ընտանեկան նպաստը և պարենային զամբյուղը 2002–2005թթ.

Ցուցանիշներ	Տարիները			
	2002	2003	2004	2005
Նպաստի միջին ամսական չափը, դրամ (ընտանիքի հաշվով)	6760	7605	9418	
Նպաստի ամսական նվազա-ույն չափը 1 շնչի հաշվով, դրամ	4000	4000	4500	
Աղքատության պարենային իժը ամսական մեկ շնչի հաշվով, դրամ	7516	7741.6	17613	
Աղքատության ընտանեկան նպաստի ամսական նվազա-ույն չափը նվազա-ույն պարենային զամբյուղի նկատմամբ, %	53.2	51.6	25.5	

Այսպիսով՝ 2002 թ. նպաստի ամսական նվազագույն չափը կազմել է նվազագույն պարենային զամբյուղի արժեքի 51.6 %-ը: Դրությունը ավելի ողբերգական կդառնա, եթե նշված նվազագույն պարենային զամբյուղի արժեքին ավելացվեն նաև ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների (հագուստ, վառելիք, կահույք, կենցաղային էլեկտրասարքեր, դեղամիջոցներ, տրանսպորտ, կոմունալ ծառայություններ, կրթություն, բժշկություն և այլն) նվազագույն սպառման ծախսերը: Արդյունքում կստացվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, որը կկազմի 28732.5 դրամ ($17613 \times 100/61.3$): Սա նշանակում է, որ բնակչության մի հսկա զանգված գտնվում է ֆիզիոլոգիական նորմերից մի քանի անգամ ցածր պայմաններում: Մինչդեռ հայտնի է, որ զեմոհիմնադրամի պահպանությունն իրականացվում է մարդկանց ապահովելու, այդ մակարդակը բարելավելու միջոցով: Դա համապետական խնդիր է և շոշափում է համազգային շահեր¹:

Սոցիալ–տնտեսական նման իրավիճակի տևական երկարաձգումը կարող է հանգեցնել նաև ավելի աղետալի հետևանքների: Տնտեսական հարաբերություններից վտարված ու մեկուսացված անհատը կորցնում է իր արժանապատվությունը, հեղինակությունը ինչպես հարազատների, այնպես էլ շրջապատի միջավայրում: Նա աստիճանաբար մոռացության է տալիս ազգային ավանդույթները, մասնագիտական ձեռքբերումները, բարեկրթական չափանիշները և ինքնաբերաբար բռնում է ազգային խզման կործանարար ուղին:

Ցանկացած համակարգի արդյունավետություն նախ և առաջ որոշվում է նրանում իրականացված ներդրումների դիմաց ստացված փոխհատուցման մակարդակով: Այս մոտեցման համաձայն՝ քաղաքացիների կենսաթոշակները պետք է համահունչ լինեն նախ՝ վերջիններիս կողմից կատարվող վճարներին և երկրորդ՝ համապատասխանեն այն նվազագույն պահանջներին, որոնք ներկայացվում են կենսաթոշակներ

¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը – տեղաշարժերը XIX–XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր–ան, 2001թ., էջ 323:

րին՝ կապված մարդու կենսական նվազագույն պահանջների բավարարման հետ: Արդյունավետության խնդիրները պետք է համահունչ լինեն նաև այս բնագավառի վերաբերյալ ընդունված միջազգային համաձայնագրերի և բանաձևերի պահանջներին: Դա ենթադրում է, որ մեր հանրապետությունում գործող սոցիալական ապահովագրության համակարգը նույնպես պետք է համապատասխանեցվի միջազգային նվազագույն ստանդարտների պահանջներին: Կարևոր է նաև թոշակների և նպաստների արդյունավետության գնահատումը պետական համախմբված ֆինանսների տեսանկյունից, օպտիմալ հարաբերակցության ապահովումը պետության կողմից այդ նպատակով ծախսվող միջոցների, թոշակների և այլ փոխհատուցումների միջև:

Սոցիալական ապահովագրության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու գործընթացը նախ և առաջ պետք է ելնի բնակչության տարիքասեռային կազմից՝ հաշվի առնելով բյուջետային հնարավորությունները, տնտեսության զարգացման նակարդակը, ժողովրդագրական փոփոխությունները, շուկայական զարգացած տնտեսություն ունեցող պետությունների փորձը: Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակների անբավարար չափերը մշտապես մտահոգում են հասարակությանը, թերահավատություն առաջացնում ապագայում եկամտի կորստի դեպքում սոցիալական ապահովագրության վճարների հաշվին բավարար կենսամակարդակ ապահովելու հանդեպ: Նախ և առաջ պետք է վերականգնվի այդ վստահությունը, որն էլ հնարավորություն կտա բարձրացնել ինչպես յուրաքանչյուրի պատասխանատվությունը սոցիալական ապահովագրական վճարների ճիշտ հաշվարկման և հավաքագրման գործում, այնպես էլ այն դարձնել շահավետ և գրավիչ: Դա նշանակում է, որ այս բնագավառում նախատեսվող բոլոր փոփոխությունները պետք է հիմնված լինեն անձի, հասարակության և պետության փոխշահավետ համագործակցության վրա, ինչը կհավասարակշռի անհատի և հասարակության շահերը: Տվյալ պարագայում անհրաժեշտ է ընտրել սոցիալական ապահովագրության աշխարհում գործող մոդելներից մեկը.

- ապահովագրական հիմքի վրա վճարվող կենսաթոշակային համակարգը, երբ յուրաքանչյուրի կողմից կատարված սոցիալական վճարների միջոցով հավաքագրված գումարների հաշվին և դրա սահմաններում վճարվում են թոշակներ և նպաստներ;
- նվազագույն կենսաթոշակների ապահովման մոդելը, որը ենթադրում է որոշ չափով շեղվել ապահովագրական սկզբունքներից, ավելի շատ նախատեսել վերաբաշխման գործիքների և նվազագույն թոշակների ապահովումը: Այս համակարգի ընտրությունը ենթադրում է, որ պետք է սահմանվեն նվազագույն կենսական և սոցիալական զամբյուղների չափերը, որոնց համապատասխան վճարվեն թոշակները:

Կենսաթոշակների և նպաստների արդյունավետության բարձրացման տեսակետից նպատակահարմար է նաև ՀՀ-ում այդ երկուսի կոմբինացված մոդելի կիրառումը՝ վերջնանպատակ ունենալով աստիճանաբար անցում կատարել միայն ապահովագրական հիմքի վրա գործող թոշակային համակարգին: Շուկայական տնտեսության պայմաններում այն ավելի քան արդարացված է և համապատասխանում է տնտեսական այն հարաբերություններին, որոնք առաջ են գալիս հասարակության կողմից ազգային արդյունքի ստեղծման և վերաբաշխման ընթացքում:

Խոսելով կենսաթոշակների մասին՝ պետք է միաժամանակ հաշվի առնել նաև սոցիալական ապահովագրության շրջանակներում վճարվող այլ նպաստների և փոխհատուցումների (հատկապես գործազրկության նպաստների) հարցը:

Գործազրկության համար վճարվող նպաստների չափը այսօր ավելի փոքր է, քան կենսաթոշակի չափը, որը, մեր կարծիքով, անարդարացի է: Սա արդյունք է այն բանի, որ եթե նկատվել է թոշակների որոշ կայուն աճ, ապա գործազրկության նպաստների չափը վերանայվել է միայն մեկ անգամ՝ 1999 թվականին: Քանի որ գործազրկության նպաստի տրամադրումը օրենքով նախատեսվում է մեկ տարուց ոչ ավելի ժամկետով, որից հետո ենթադրվում է, որ անձը պետք է վերականգնի իր աշխատանքը, ուստի նպաստի չափը պետք է սահմանվի վերջին աշխատավարձի ոչ պակաս քան 75%–ի չափով, կամ այն պետք է հավասար լինի կենսական մվազագույն սանդղակին: ՀՀ–ում նախընտրելի առաջին տարբերակն է, քանի որ բխում է միջազգային կոնվենցիաների պահանջներից: Այն հնարավորություն կտա, որպեսզի գործազուրկը ստիպված չլինի գնալ ավելի ցածր որակավորման աշխատանքի, այլ փնտրի համապատասխան աշխատանք:

Սոցիալական ապահովագրության ֆինանսական համակարգի և պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև յուրաքանչյուրի թոշակների և նպաստների ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման տեսակետից շատ կարևոր է կամավոր սոցիալական ապահովագրությունը, որը մեր հանրապետությունում պետք է հանդես գա որպես լրացուցիչ թոշակի ապահովման համակարգ: Նման համակարգը երկար տարիներ արդյունավետ գործում է գրեթե բոլոր զարգացած պետություններում: Որոշ երկրներում սոցիալական ապահովագրության համակարգը իրականացվում է միայն մասնավոր կառույցների միջոցով:

Ինչպես միջազգային կոնվենցիաներով, այնպես էլ զարգացած երկրների ապահովագրական համակարգերով սոցիալական ռիսկերի շարքին, որը նույնպես պահանջում է ապահովագրություն, պատկանում է աշխատողների բժշկական ապահովագրությունը: Այս ռիսկի տեսակը Հայաստանի Հանրապետությունում ընդգրկված չէ սոցիալական ապահովագրության համակարգում: Բացառություն կարելի է համարել սոցիալական ապահովագրության համակարգի միջոցների հաշվին հաշմանդամներին տրամադրվող բժշկական ծառայությունը և ուղեգրերը: Ճիշտ է, այս հարցը որոշ չափով կարգավորվում է պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվող մի շարք բուժօժանայությունների ձևով, սակայն այն ոչ միշտ է համապատասխանում հաշմանդամների կարիքներին:

Վերը թվարկված բոլոր մոտեցումները հնարավորություն կտան ինչպես մոտ ապագայում, այնպես էլ հեռանկարում բարձրացնել սոցիալական ապահովագրության կենսաթոշակների և նպաստների արդյունավետությունը: Ի վերջո, յուրաքանչյուր ոք պետք է կարողանա տարբերել սոցիալական աջակցության շրջանակում տրամադրվող նպաստները և բարեգործական վճարները կենսաթոշակներից, հասարակությունում հստակ տարանջատվել սոցիալական ապահովագրության ներքո տրամադրվող կենսաթոշակները և նպաստները սոցիալական աջակցության շրջանակում տրամադրվող օգնություններից, ճիշտ ընկալել սոցիալական ապահովագրության դերն ու նշանակությունը և ֆինանսական աղբյուրների բովանդակությունը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված արտաբյուջետային հիմնադրամների հասարակական անհրաժեշտությունը:
2. Ի՞նչ նպատակով են ծախսվում արտաբյուջետային հիմնադրամները:
3. Որո՞նք են աշխարհում գոյություն ունեցող սոցիալական հիմնադրամների տեսակները, դրանք ի՞նչ դեր են կատարում ՀՀ–ում:
4. Ինչպիսի՞ զարգացում է ունեցել ՀՀ սոցիալական համակարգի ձևավորումը, և ի՞նչ սոցիալական հիմնադրամներ են գործում:
5. ՀՀ–ում կենսաթոշակների ի՞նչ տեսակներ կան, որո՞նք են դրանց մեծությունը պայմանավորող ցուցանիշներն ու պայմանները:
6. Թվարկել ՀՀ–ում կիրառվող նպաստների տեսակները:
7. Սոցիալական հիմնադրամների ձևավորման ինչպիսի՞ կարգ գոյություն ունի ՀՀ–ում, որո՞նք են դրանց աղբյուրներն ու վճարողները:
8. Ինչպիսի՞ կարգ է գործում ՀՀ–ում աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման համար:
9. Ինչպիսի՞ մեխանիզմ է կիրառվում ՀՀ–ում սոցիալական քարտերի ուղղությամբ:
10. Ինչպիսի՞ մոտեցումներ կարող են կիրառվել հանրապետությունում սոցիալական ապահովագրության կենսաթոշակների և նպաստների արդյունավետությունը բարձրացնելու առումով:

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (2006թ.)
2. ՀՀ քաղաքային օրենսգիրքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 15 մայիսի, 1998 թ.:
3. «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակների ապահովության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված Ազգային ժողովի կողմից, 06.12.1995թ.:
4. «ՀՀ–ում սոցիալական ապահովության քարտերի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության N1783–Ն որոշում, 24.12.2003թ.:
5. «ՀՀ–ում սոցիալական ապահովության քարտերի համարների կիրառումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության N 963–Ն որոշում, 25.06.2004թ.:
6. ՀՀ ֆինանսների վիճակագրություն 2000–2004թթ., Վիճ. ժողովածու (ՀՀ ԱՎԾ), Երևան, 2005թ.:
7. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24 հունիսի, 1997թ.:
8. «ՀՀ կառավարության 2006–2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 777–Ն որոշումը, 1 հունիսի, 2005թ.:
9. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը, 24 նոյեմբերի, 1998թ.:
10. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 7 մայիսի, 2002թ.:
11. 2006թ. պարզեցված պետական բյուջեն, Տնտեսական զարգացման և հետազոտական կենտրոն, ՀԿ, «Բյուջետային վերլուծության» ծրագիր, Երևան, 2006թ.:
12. ՀՀ հարկային օրենքները, Պաշտոնական վերահրատ. փոփոխությունները և լրացումները կատ. են 2006թ. հունվարի 16–ի դրությամբ, Երևան, 2006թ.:
13. Հարկեր, տուրքեր և վճարներ, ՀՀ կառ. առընթ. հարկ. պետ. ծառ., «ՀՄՏ» ՓԲԸ, խմբ. խորհ.՝ Ա. Ալվաերդյան և ուրիշներ, Երևան, 2006թ.:
14. «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված Ազգային ժողովի կողմից, 01.01.1997թ.:
15. Ի.Ա. Ավետիսյան, Տնտեսավարման ֆինանսավարկային համակարգը, «Տնտեսագետ», Երևան, 1993թ.:
16. «Ֆինանսներ և վարկ», ուսումնական ձեռնարկ պրոֆ. Լ. Բադալյանի խմբագրությամբ, Երևան, «Չանգակ–97», 2003թ.:

17. Յու.Դ. Ալավերդյան, Ի.Ա. Ավետիսյան, ՀՀ ֆինանսավարկային համակարգը, «Հայաստան», 1996թ.:
18. Յու.Դ. Ալավերդյան, Բյուջետային հիմնարկների պլանավորման և ֆինանսավորման հարցեր, «Տնտեսագետ», Երևան, 1997:
19. Յու. Ալավերդյան, Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը, ուս. ձեռնարկ, Եր., «Տնտեսագետ», 2003:
20. Բոստանջյան Վ., «Բյուջետային համակարգի մասին օրենքի նախագծի մշակման սկզբունքները, «Ֆինանսներ և բանկեր», N9, Երևան, 1997:
21. Հարությունյան Տ.Վ., Հարկման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ–ում, Երևան, 2006թ.:
22. Հայկ Մելիքյան, Հայաստանի հարկային օրենսդրություն, Երևան, 2005թ.:
23. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում. XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001թ., 480 էջ:
24. Զարգացման պլանավորման և բյուջետավորման համակարգեր, ներկա և ապագա տեսականը, Մ. Թումասյան, Երևան, 2006 թ.:
25. ԴՌՎՈՎՐՈ, ԳԻՎՈՎՈՍ, տՏՊ.ՐԱՊՊ. հ.Լ.ԽցՍԲՈՎՈ, Թ.Ը.ԽԱՍՏՉՈ, Ծ., “ՄՍՎՏՎՈՒՅ”, 2006.
26. ԴՌՎՈՎՐՈ Ռ ՍՐԱՊՈՒՑ ԳԻՎՈՎՈՍ, տՏՊ.ՐԱՊՊ. Ծ.Թ. ՀՏՎՈՎՏՉՐՍՏՃՏ, ք.ժ.ըպսՏչսՈՅՉՏՉՏ, Ծ., “ԹՕՐՔԱՅ ՏՈՐՈՅՉՉՈՎՈՎՈՎ”, 2006.
27. ԴՌՎՈՎՐՈ ՍՐԱՊՈՒՑ, ԳԻՎՈՎՈՍ ՊՍ՝ ՉԳՏՉ, Կ.Լ. ԹՏԻՐՈՎ, Ը.Խ. ժԱՔՈՑՏ, Ծ., 2005չ.
28. ԺՏԻՏՊՈ Ռ ՐՈՐԱՏՊՈ Չ ՆԳԼՀՆԱՑԱՎՐՍՎ Ռ ՎՈՍՏՃՏՉՎ ԳԻՎԱՅԱ, Ծ.Խ.ԽՏՏՏՉՈ, Ծ.Թ. ԽՏՏՏՉՈ, Ծ., ԴՌՎՈՎՐ. չՈՅԱՑՈ, 2005չ.
29. ԴՌՎՈՎՐՈ ՊԱՎԱՋՎՏԱ ՏՈՐՈՅՎՈՎ, ԽՐԱՊՈՒՑ, ք.Ծ. ԽՏՏՈՆՍՉՈ, Ծ., 2005չ.
30. ԿՐՏՈՍԱՎՈ չՏՐԳՊՈՐՏՉՎՎՈՆ Ո՞ՊՁԱՑՎՈՆ տՏՈՑՈՍՈ, Ը.Թ.ձԱՍՈՎ, Ծ., 2004չ.
31. ՔՐՈՋՊՈՎՐՍՏ–տՐՈՉՏՉՕԱ ՊՏՃՏՏՐՕ: ՎՈՍՏՃՏՏՈՍՁԱՎՈՎ ՉՕՏՈՑ, Լ.Խ. ԼՉՈՎԱՉ, Ծ., 2005չ.
32. ժՈՍՏՃՏՏՈՍՁԱՎՈՎ ՐՐՊՈՎԱՐՍՈՒ ԻՆՉՈՎԱՐՍՈՒ սՈՓ, Չ.Ժ.ԽՏՐՈՎՈՎ, Խ.Ը.ՇՐՈՎՈՎ, Խ.Ք.ՉՈՐՈՎՈՎ, ԽՈՎՍՑ–ԿԱՑԱՐՈՆԳՆ, “ՉՈՅՎԱՐ–տՐԱՐՐՈ”.
33. ժՈՍՏՆՐ Ռ ՎՈՍՏՃՏՏՈՍՁԱՎՈՎ, Չ.Ղ. ՇՏՍՈՎՈ, Ծ., 1998չ.
34. ժՈՍՏՆՐ, Ժ.Ք.ՃԱՐՎՈՍ Ռ ՊՐԳՆԱ, Ծ., 1998չ.
35. ժՈՍՏՆՐ Ռ ՎՈՍՏՃՏՏՈՍՁԱՎՈՎ Չ ՀՏՐՐՈՒ, Խ.Կ. ԿՍԳՎՈՎ, Ծ., 1996չ.
36. ժՈՍՏՃՏՉՕԱ ՐՈՐՑԱՎՈ ՐՈՅՉՈՒ ՐՑՐՈՎ ՎՈՐՈ, Թ.Ը. ԾԱՔԱՐՍՏՉՈ, 1995 չ.
37. ԹՏԱՆՎ ժ. Ը., շՏՎՐՍՈՆ ՏՈՑ (ՐԱՔԱՎՈ՞ ՖՍՎՏՎՈՎԱՐՍՈՒ տՐՏՈՍԱՎ), Ծ., “ՄՍՎՏՎՈՍՈ”, 1998, 255 թ.
38. Lienert J., Marciniak P., Swiderski K., “Macroeconomic accounting and analysis in transition economies”, International Monetary fund, 1997, p. 183.

ԳԼՈՒԽ 10

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**10.1. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ**

Կազմակերպությունը (ձեռնարկությունը) արտադրության ոլորտում ինքնուրույն տնտեսական սուբյեկտ է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, արտադրում է ապրանքներ, մատուցում ծառայություններ, կատարում աշխատանքներ, կարող է զբաղվել տնտեսական գործունեության տարբեր տեսակներով, որոնց նպատակն է շահույթի ստացումը և կապիտալի աճը (ավելացումը): Նա կարող է իրականացնել գործունեության որևէ տեսակ կամ միաժամանակ բոլոր տեսակները:

Ձեռնարկությունների և կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ձևավորվում են տնտեսական կապեր իրենց գործընկերների (կոնտրագենտների) հետ՝ մատակարարների ու գնորդների, համատեղ գործունեության գործընկերների, միավորումների, ֆինանսավարկային համակարգի, որի արդյունքում առաջանում են ֆինանսական հարաբերություններ: Այդ հարաբերությունները կապված են արտադրանքի արտադրության ու իրացման կազմակերպման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ֆինանսական ռեսուրսների ձևավորման, ինվեստիցիոն գործունեության իրականացման հետ: Ֆինանսական հարաբերությունների նյութական հիմքը փողն է, իսկ առաջացման անհրաժեշտ պայմանը՝ դրամական միջոցների իրական շարժը, որի արդյունքում ձևավորվում և օգտագործվում են դրամական միջոցների կենտրոնացված ու ապակենտրոնացված ֆոնդերը:

Ձեռնարկության ֆինանսները ֆինանսական կամ դրամական հարաբերությունների այն համախումբն են, որոնք առաջանում են հիմնական ու շրջանառու կապիտալի, ձեռնարկության դրամական ֆոնդերի ձևավորման և օգտագործման ընթացքում:

Ձեռնարկությունների ֆինանսական հարաբերությունները ըստ տնտեսական բովանդակության կարող են ձևավորվել հետևյալ ուղղություններով՝

1. Հիմնադիրների միջև ձեռնարկությունը ստեղծելու պահին՝ կապված կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի ձևավորման հետ, ինչը նախասկզբնա-

կան աղբյուր է արտադրական ֆոնդերի կազմավորման և ոչ նյութական ակտիվների համար.

2. Ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև՝ կապված արտադրանքի արտադրության ու իրացման և նոր ստեղծվող արժեքի ձևավորման հետ: Դրանց վերաբերում են հունքի, նյութերի, ապրանքների մատակարարների ու զնորդների միջև ֆինանսական հարաբերությունները.
3. Ձեռնարկությունների ու նրանց ստորաբաժանումների՝ մասնաճյուղ, բաժին, արտադրամաս, միջև ծախսերի ֆինանսավորման, շահույթի և մյուս աղբյուրների վերաբաշխման հարաբերությունները.
4. Ձեռնարկությունների և աշխատողների միջև եկամուտները բաշխելու և օգտագործելու, բաժնետոմսերի թողարկման ու բաշխման, տոկոսների, շահաբաժինների վճարման, հարկապահման և այլ դրամական հարաբերությունների հետ կապված.
5. Ձեռնարկությունների և ֆինանսական համակարգի միջև, հարկերի վճարման տարբեր բյուջետային մակարդակների պարտադիր այլ մուծումների, արտաբյուջետային ֆոնդերին հատկացումների, տույժ ու տուգանքների հետ կապված.
6. Ձեռնարկությունների և ապահովագրական ընկերությունների միջև ապահովագրման, վճարներ կատարելու և փոխհատուցում ստանալու հետ կապված.
7. Այլ բնույթի դրամական հարաբերություններ (վերադաս, ձեռնարկության ստորաբաժանումներ, ներդրումային կազմակերպություններ և այլն):

Թվարկված խմբերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և դրամական ոլորտը: Սակայն դրանք բոլորը կրում են երկկողմանի բնույթ, և նյութական հիմքը դրամական միջոցների շարժն է, որով ուղեկցվում են սեփական և դրա կազմում կանոնադրական կապիտալի ձևավորումը, սկսվում և ավարտվում է ձեռնարկության միջոցների շրջապտույտը, դրամական ֆոնդերի ու ռեզերվների ստեղծումը և ծախսումը:

Գործնականում ֆինանսական հարաբերությունների թվարկված տեսակները, ընդհանրությունների և բովանդակության հիմքի վրա կարելի է արտահայտել խոշորացված 4 խմբերով՝

1. այլ ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ.
2. ձեռնարկության ներսում.
3. վերադաս կազմակերպությունների հետ (միավորում, գերատեսչություն, ֆինանսաարդյունաբերական խումբ, հոլդինգ),
4. ֆինանսավարկային համակարգի հետ (բյուջե, արտաբյուջետային ֆոնդ, բանկ, ապահովագրություն, բիրժա, տարբեր ֆոնդեր):

Ֆինանսների բովանդակության մասին առավել ամբողջական պատկերացում է ստացվում նրա ֆունկցիաների միջոցով:

Առևտրային կազմակերպությունների ֆինանսների ֆունկցիաները նույնն են, ինչ համապետականինը կամ ֆինանսներինը ընդհանրապես: Տնտեսագետների մեծամասնությունը ընդունում է երկու ֆունկցիա՝ բաշխման և վերահսկողության:

Բաշխման ֆունկցիայի միջոցով տեղի է ունենում նախասկզբնական կապիտալի ձևավորում, արտադրության մեջ դրա ավանսավորում, վերարտադրություն, եկամուտների և ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմնական համամասնություններ:

րի ստեղծում, որով ապահովվում է առանձին ապրանքարտադրողների, տնտեսավարող սուբյեկտների և պետության շահերի օպտիմալ զուգակցումը:

Ֆինանսների բաշխման ֆունկցիայի հետ է կապված առևտրային կազմակերպությունների ստացած եկամուտների բաշխման ու վերաբաշխման միջոցով դրամական ֆոնդերի ձևավորումը: Դրանց են վերաբերում կանոնադրական կապիտալը կամ ֆոնդը, լրացուցիչ կապիտալը, պահուստային ֆոնդը, կուտակման, սպառման, արժույթային և այլ ֆոնդերը:

Բաշխման հարաբերությունները շոշափում են ինչպես հասարակության շահերը ամբողջությամբ, այնպես էլ առանձին տնտեսավարող սուբյեկտների, նրանց աշխատողների, բաժնետերերի, վարկային ու ապահովագրական ինստիտուտների շահերը: Ուստի առաջնահերթ խնդիր է դրանց օպտիմալ կազմակերպումը, ինչին նպաստում է ֆինանսների վերահսկողության ֆունկցիան:

Ֆինանսների վերահսկողության ֆունկցիայի օբյեկտիվ հիմքը արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման ծախսերի, դրամական եկամուտների ու ֆոնդերի արժեքային հաշվառումն է: Այս ֆունկցիայի կատարումը կապված է տարբեր խթանների և սանկցիաների, ինչպես նաև ցուցանիշների կիրառման հետ: Երբ ձեռնարկությունը ժամանակին լուծում է բյուջեի, բանկերի, մատակարարների հանդեպ պարտավորությունները, դրանով իսկ բարելավում է իր վերջնական արդյունքը, բարձրացնում արտադրության ու միջոցների օգտագործման արդյունավետությունը: Հակառակ դեպքում չի կարող խուսափել տույժ–տուգանքներից, ֆինանսական վիճակի լարվածությունից: Ֆինանսական վերահսկողության ձևերից մեկը տարբեր ֆինանսական ցուցանիշների օգտագործումն է, որոնցից գլխավորը ձեռնարկությունում միջոցների առկայության կայունությունն է: Հենց դրանում է արտահայտվում վերահսկողության և բաշխման ֆունկցիաների փոխկապվածությունը, դա էլ ըստ էության դրամով վերահսկողություն է: Մյուս ֆինանսական ցուցանիշներին վերաբերում են մատակարարներին, բանկին, բյուջեին, աշխատողներին պարտքը, շրջանառու կապիտալով ապահովվածությունը, շահույթը, վնասը, իրացվելիությունը, վճարունակությունը և այլն:

Ֆինանսների ֆունկցիաները ցանկացած կազմակերպություն, ձեռնարկությունում պետք է ծառայեն ֆինանսական ռազմավարության երեք կարևորագույն խնդիրների կատարմանը՝

1. ձեռնարկությանը ապահովել անհրաժեշտ դրամական միջոցներով և դրա հիման վրա կայունություն և իրացվելիություն.
2. շահութաբերության ապահովում և առավելագույն շահույթի ստացում.
3. իր աշխատողների ու սեփականատերերի նյութական և սոցիալական պահանջների բավարարում:

Արտադրության ոլորտի առևտրային ձեռնարկությունների ֆինանսական հարաբերությունները կառուցվում են որոշակի սկզբունքների պահպանմամբ: Այդ սկզբունքները առավելապես կապված են հիմնական տնտեսական գործունեության հետ և կիրառվում են ֆինանսական հետևանքների բարելավման նպատակով: Դրանք գլխավորապես վերաբերում են տնտեսական ինքնուրույնությանը, ինքնաֆինանսավորմանը, նյութական շահագրգռվածությանը, նյութական պատասխանատվությանը:

Տնտեսական ինքնուրույնության սկզբունքը գործնականում չի կարող իրացվել առանց ֆինանսական ինքնուրույնության և անկախության: Գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները ինքնուրույն որոշեն տնտեսական գործունեության (բիզնեսի) ոլորտը, ֆինանսավորման աղբյուրները, շահույթ կորզելու նպատակով դրամական միջոցների ներդրման ուղղությունները: Շուկան թելադրում և խթանում է առևտրային կազմակերպություններին կապիտալը ներդնելու նոր ոլորտների որոնումը, պահանջարկին համապատասխան ճկուն արտադրությունների կազմակերպումը: Լրացուցիչ շահույթ ստանալու նպատակով առևտրային կազմակերպությունները կարող են կատարել կարճաժամկետ ու երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ այլ ձեռնարկությունների, պետական արժեթղթեր ձեռք բերելու, այլ տնտեսավարող սուբյեկտների կանոնադրական կապիտալի ձևավորմանը մասնակցելու միջոցով:

Տեսականորեն և նաև գործնականում լրիվ տնտեսական ինքնուրույնություն լինել չի կարող, քանի որ պետությունը մասնակցում է դրանց գործունեության առանձին բնագավառների կարգավորմանը: Օրենսդրորեն սահմանվում են բյուջեի հետ փոխհարաբերությունները, բոլոր տիպի ու սեփականության ձևի առևտրային կազմակերպությունները վճարում են անհրաժեշտ հարկերը, մասնակցում արտաբյուջետային ֆոնդերի ձևավորմանը: Պետությունը ընդհանուր գծերով որոշում է նաև անորտիզացիոն քաղաքականությունը:

Ինքնաֆինանսավորման սկզբունքի իրացումը ձեռնարկատիրական գործունեության հիմնական պայմաններից մեկն է: Դրանով է ապահովվում տնտեսավարող սուբյեկտների մրցունակությունը: Դա նախ և առաջ նշանակում է արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման վրա կատարված ծախսերի լիակատար փոխհատուցում, արտադրության զարգացման համար ներդրում իրականացնել սեփական միջոցների հաշվին և միայն անհրաժեշտությունից ելնելով օգտվել բանկային ու առևտրային վարկերից:

Նյութական շահագրգռվածության սկզբունքը որպես օբյեկտիվ անհրաժեշտություն ապահովվում է ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակով շահույթի ստացման ձգտումով: Ձեռնարկատիրական գործունեության արդյունքների նկատմամբ շահագրգռվածությունը դրսևորվում է ոչ միայն մասնակիցների, այլև պետության կողմից: Առանձին աշխատողների մակարդակով այդ շահագրգռվածության իրացումը կարող է ապահովվել աշխատանքի բարձր վարձատրությամբ: Ձեռնարկության համար այդ սկզբունքը կարող է իրացվել պետական օպտիմալ հարկային քաղաքականության, անորտիզացիոն նպատակահարմար նորմատիվների և զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելու միջոցով: Կազմակերպությունը ինքը դրան կարող է նպաստել նոր ստեղծված արժեքի սպառման ու կուտակման ֆոնդերի միջև բաշխելու գործում հիմնավորված համամասնություն պահպանելու միջոցով: Պետության շահերին համապատասխանում են արտադրության ընդլայնումը, շահութաբերության բարձրացումը և հարկային կարգապահության պահպանումը:

Նյութական պատասխանատվության սկզբունքը նշանակում է պատասխանատվության որոշակի համակարգի առկայություն ֆինանսատնտեսական գործունեության բոլոր բնագավառներում, կոնկրետ մեթոդներով ու ազդեցության միջոցներով:

Պայմանագրային պարտավորությունները չկատարող, հաշվարկային կարգապահություն չպահպանող, վարկերը ժամանակին չմարող, հարկային կարգապահությանը չենթարկվող ձեռնարկությունները պետք է կրեն ֆինանսական պատասխանատվություն, վճարեն տույժ, տուգանք, ենթարկվեն հարկադրանքի, ի վերջո ընկնեն սնանկացման գործընթացի մեջ: Ձեռնարկության առանձին աշխատողների հանդեպ կիրառվում է տուգանքի համակարգը՝ խոտան թույլ տալու և այլ խախտումների համար պարգևից զրկում, աշխատանքից ազատում և այլն: Այս սկզբունքը ներկա իրադրությունում իրացվում է առավել ամբողջությամբ:

Ջարգացած շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունների ֆինանսների կազմակերպումը կարող է կառուցվել երեք հիմնարար սկզբունքների վրա: Դրանք են պլանայնությունը, առևտրական հաշվարկի մեթոդով տնտեսավարումը և ֆինանսական ու նյութական պահուստների ստեղծումը:

Պլանայնությունը՝ որպես հիմնարար սկզբունք, տարածվում է ամբողջ գործունեության վրա՝ սկսած հումքի, նյութերի, ապրանքների, ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման շուկայից, արտադրության ու իրացման գործոնները կանխատեսելուց մինչև թողարկվող արտադրանքի վերջնական սպառողների բացահայտումը: Ի վերջո, բիզնեսի մեջ հաջողության են հասնում և մրցակցությանը դիմանում են ընթացիկ և հեռանկարային, գիտականորեն հիմնավորված բիզնես ծրագիր ունեցող կազմակերպությունները, որոնցում ֆինանսական հոսքերի մասին կա իրական պատկերացում, և դրանք բաշխվում ու ծախսվում են բիզնեսի շահերից ելնելով:

Արտադրական կազմակերպության ֆինանսական պլանը պետք է արտացոլի ոչ միայն դրամական հոսքերի ամբողջական ու ժամանակագրական ծավալը, այլև արտահայտի դրանում «եկամուտ» հանդիսացող մուտքերի մեծությունը, որոնց զգալի մասը հանդես է գալիս որպես դրամական կուտակում՝ աղբյուր դառնալով բյուջեի եկամուտների ու շահույթի ձևավորման: Միանշանակ է, որ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացածության ներկա աստիճանով, փոխհարաբերությունների կարգավորման օրենսդրական անկատար դաշտի և ֆինանսական ցածր կարգապահության պայմաններում ֆինանսական պլանավորումը պետք է կառուցվի «եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի» տեսքով, որի ելակետը ֆինանսական ռեսուրսներն են ու դրանց օգտագործման պլանային ուղղությունները: Այն ունի 3 բաժին՝ եկամուտներ և մուտքեր, ծախսեր ու հատկացումներ, փոխհարաբերություն բյուջեի հետ:

Առևտրական հաշվարկը շուկայական տնտեսություններին հատուկ տնտեսավարման մեթոդ է և տնտեսավարկից արմատապես տարբեր: Այս մեթոդի կիրառման հիմնական պայմանը ազատ մրցակցության առկայությունն է: Գործունեության ոլորտը, արտադրանքի բնույթը, քանակական ու որակական ցուցանիշները որոշում է ձեռնարկությունը, պետության միջամտությունը նվազագույն է: Ինչ արտադրել, ում համար և որքան խնդիրը լուծվում է շուկայական գործոնների թելադրանքով, միայն թե ապահովի գործունեության ծախսերի փոխհատուցում և միջին շահութաբերությանը համապատասխան շահույթի ստացում: Առևտրական հաշվարկի գործողության մեխանիզմը նախատեսում է մի շարք արմատական պահանջների ապահովում, որոնցից կարևորագույնները հետևյալն են՝

- Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպիչները ներդրողների հետ

համատեղ ստեղծում են որոշակի մեծության հիմնադիր կապիտալ, որը, ավանսավորվելով գործունեության մեջ, ստանում է ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների տեսք, ձևավորում է ձեռնարկության արտադրանք թողարկելու և ծառայություն մատուցելու արտադրական կարողությունը: Հիմնադիր կապիտալը տվյալ օղակի շրջանակներում մշտապես շրջանառվում է, այլ ոչ թե ծախսվում և ամեն անգամ շրջապտույտն ավարտելուց հետո նույն ծավալով, իսկ շահութաբեր գործունեության դեպքում ավելացված վերադառնում է ելման վիճակին: Այդ կապիտալի ապահովության համար ձեռնարկության տնօրինությունը պատասխանատվություն է կրում կոնկրետ մարմնի առջև և, միաժամանակ, ֆինանսական արդյունքներով պետք է ապահովի դրա սիստեմատիկ աճը:

- Փոխանակային բոլոր հարաբերությունները կազմակերպվում են վճարովիության սկզբունքով, դրանք ամրագրվում են կնքվող տնտեսական պայմանագրերով, և կատարման գործընթացը ուղեկցվում է ֆինանսական սանկցիաների կիրառմամբ:
- Իրացման համար նախատեսված արտադրանքի և մատուցվելիք ծառայությունների և աշխատանքների բոլոր տեսակների համար սահմանվում և կիրառվում է գների ու սակագների այնպիսի մակարդակ, որը արտադրության ու իրացման ընդունված պարամետրերը ապահովելու պայմաններում ոչ միայն փոխհատուցի գործառնական ծախսերը ամբողջությամբ (փոփոխում և հաստատում), այլև առաջացնի տվյալ իրադրության միջին շահութաբերությանը համապատասխան շահույթ:
- Ձեռնարկության գործունեության ընդլայնումը, տեխնիկական վերազինումը և վերակառուցումը իրականացվում են ֆինանսավորման սեփական աղբյուրների հաշվին՝ առաջին հերթին հենվելով շահույթի կուտակվող մասի և ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի վրա: Վարկը և փոխառու այլ աղբյուրները ներգրավվում են հատկապես սեփական միջոցների ժամանակավոր պակասը լրացնելու նպատակով:
- Արտադրության մասնակիցներն ու կազմակերպիչներն իրենց պարտականությունները կատարելու համար նյութապես խրախուսվում են: Խրախուսման չափերը կախվածության մեջ են դրվում կարևորագույն ցուցանիշների գծով ձեռք բերված մակարդակներից և հատկապես զուտ շահույթի և նրա սպառմանն ուղղված մասի մեծությունից. խանդավառությունը էական դեր չի խաղում:
- Ձեռնարկության գործունեության արդյունքների և վարկանիշի գնահատումը, վարկավորման պայմանները և անկանխիկ հաշվարկների կատարման ձևի ընտրությունը կապվում են ֆինանսական գնահատող ցուցանիշների կատարման և շրջանառու կապիտալով ապահովվածության հետ:

Արտադրական ձեռնարկությունների ֆինանսական ու նյութական ռեզերվներով ապահովվածությունը թելադրվում է ձեռնարկատիրական գործունեության պայմաններով, դրանցում կատարված ներդրումների ու ծախսերի ժամանակին ու լրիվ կամ մասնակի չփոխհատուցման որոշակի ռիսկի առկայությամբ:

Շուկայական տնտեսության պայմաններում ռիսկի հետևանքներն ընկնում են կանավոր և ինքնուրույն տարաբնույթ գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վրա: Գործնականում ֆինանսական ներդրումների ոչ լրիվ վերադարձման կամ նախատեսվածից պակաս շահույթ ստանալու հնարավոր ռիսկայնություն

գոյություն ունի բոլոր բնագավառներում, որի հաղթահարման հետևանքները մեղմելու, գործունեության վրա բացասական ազդեցությունը թուլացնելու ուղիներից մեկը ֆինանսական և նյութական պահուստներ ստեղծելն է, որոնք կոչված են նաև տնտեսավարման կրիտիկական պահերին ֆինանսական դրությունը ամրացնելուն:

Ֆինանսական պահուստներ կարող են ստեղծվել բոլոր կազմակերպատիրական տիպի ու սեփականության ձևի ձեռնարկություններում զուտ շահույթից՝ հաշվի առնելով առկա հնարավորություններն ու պայմանները, իսկ նյութական պահուստները գլխավորապես վերաբերում են արտադրական պաշարներին (հումք, նյութեր, վառելիք և այլն) ու ձևավորվում են գործունեության ընթացիկ պահանջների անխափան բավարարման պահեստային և այլ մնացորդները գերազանցող ծավալով:

Ձեռնարկության ֆինանսները կառավարվում են ֆինանսական մեխանիզմի միջոցով, ինչը տնտեսական մեխանիզմի մաս է և իրենից ներկայացնում է առավելագույն շահույթ ստանալու նպատակ հետապնդող ֆինանսների կառավարման ձև ու մեթոդ:

Ֆինանսական կառավարման համակարգն իր մեջ ընդգրկում է ֆինանսական մեթոդները, գործիքները, իրավական, ինֆորմացիոն-մեթոդալոգիական ապահովվածությունը:

Ֆինանսական մեթոդներ են ֆինանսական պլանավորումը, ֆինանսական հաշվառումը, ֆինանսական վերլուծությունը, ֆինանսական կարգավորումն ու վերահսկողությունը, դրանց օգնությամբ է հնարավոր դառնում ֆինանսական հարաբերությունների ազդեցությունը տնտեսական գործընթացների վրա և ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը:

«Ֆինանսական գործիքներ» հասկացության մեջ մտնում է ցանկացած կոնտրակտ կամ փաստաթուղթ, որը կողմերից մեկի համար պարտավորության վկայագիր է, և վաճառելու դեպքում վաճառողը ստանում է ֆինանսավորում: Ֆինանսական գործիքներն ընդգրկում են ինչպես առաջնային գործիքները՝ դեբիտորական ու կրեդիտորական պարտք, բաժնետոմս, պարտատոմս, մուրհակ, այնպես էլ ածանցյալ գործիքները՝ ֆինանսական օպցիոն, ֆյուչերս, ֆորվարդ, տոկոսային և արժութային սվոպներ:

Ֆինանսական ակտիվը կարող է լինել դրամական միջոցների, դրանց կամ այլ ֆինանսական ուրիշ կազմակերպություններից ակտիվների ստացման իրավունք, այլ կազմակերպություններում կապալի բնույթի գործիքներ և այլն:

Ֆինանսական գործիքների հետ կապված գործարքները մշտապես ուղեկցվում են ռիսկով, որոնց մեջ աչքի ընկնողներն են գնային, արժութային, տոկոսային, շուկայական, վարկային, իրացվելիության, դրամական հոսքի ռիսկերը:

10.2. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ձեռնարկության դրամական ֆոնդերի ձևավորումը սկսվում է կազմակերպման պահից և հանդիսանում է նրա գործունեության կարևոր կողմերից մեկը: Ամեն մի կազմավորվող ձեռնարկություն գործող օրենսդրության պահանջների համաձայն ստեղծում է կանոնադրական կապիտալ: Դրա նվազագույն ծավալը սահմանված է օրենսդրությամբ, կախվածության մեջ է սեփականության ձևից, և ներկայացվում է ձեռնար-

կուրսյան գույքի այն մեծությունը, որով երաշխավորվում են կրեդիտորների շահերը:

Կանոնադրական կապիտալը ձեռնարկության սեփական միջոցների հիմնական նախասկզբնական աղբյուրն է: Դա է, որ ձևավորում է հիմնական ու շրջանառու կապիտալը, որոնք էլ իրենց հերթին ուղղվում են արտադրական ֆոնդերի ձեռքբերմանը, ի վերջո ստեղծվում է ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների անհրաժեշտ ծավալը:

Սեփական կապիտալը գործնականում ձեռնարկության բոլոր ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Սեփական կապիտալն իր հերթին բաժանվում է հաստատուն ու փոփոխուն մասերի: Առաջինը կանոնադրական կապիտալն է, երկրորդը ձեռնարկության ֆինանսական արդյունքից ածանցվող միջոցներն են՝ լրացուցիչ կապիտալ, պահուստային կապիտալ, վերաբաշխված շահույթը, հատուկ ֆոնդերը:

Լրացուցիչ կապիտալը առաջանում է մի քանի աստիճաններով՝ ոչ ընթացիկ ակտիվների արժեքի մեծացում վերագնահատման պատճառով (բաժնետոմսերի վաճառքի գնի գերազանցում անվանական արժեքի և վաճառքի ծախսերի գումարին), արտադրական նպատակով անհատույց ստացված նյութական և դրամական արժեքներ:

Ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքը և նպատակը շահույթն է: Հարկային վճարումներից հետո ձևավորվում է շահույթի մի այնպիսի գումար, որպիսին մնում է ձեռնարկության տրամադրության տակ, որից էլ ձևավորվում են պահուստային կապիտալը (ֆոնդը) և նմանատիպ այլ ֆոնդեր, ինչպես նաև կուտակման ու սպառման ֆոնդերը:

Պահուստային կապիտալի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում նախատեսված է օրենսդրությամբ: Դրա առաջացման աղբյուրը շահույթից կատարվող հատկացումներն են, իսկ մեծությունը պետք է պակաս չլինի կանոնադրական կապիտալի 15%-ից և չգերազանցի 25%-ը: Այս ֆոնդը նախատեսված է հաշվետու տարվա վնասը ծածկելու, շահույթը անբավարար լինելու պայմաններում շահաբաժիններ վճարելու և այլ նպատակների համար:

Պահուստի առկայությունը կարևոր պայման է նաև ձեռնարկության ֆինանսական կայունությունն ապահովելու համար:

Զբաշխված շահույթը ուղղվում է հատուկ ֆոնդերի ձևավորմանը՝ կուտակման, սպառման և այլ նպատակային ֆոնդեր:

Կուտակման ֆոնդը այն դրամական միջոցներն են, որոնք նախատեսվում են արտադրության զարգացման և ընդլայնման համար: Դրանց օգտագործումը կապվում է ինչպես հիմնական արտադրության զարգացման, այնպես էլ շահույթ կորզելու նպատակով ֆինանսական ներդրումների հետ:

Սպառման ֆոնդը դրամական այն միջոցներն են, որոնք ուղղվում են կոլեկտիվի սոցիալական կարիքներին, ոչ արտադրական օբյեկտների ֆինանսավորմանը, միանվագ խրախուսումներին, փոխհատուցում և օգնություն վճարելուն:

Արժուքային ֆոնդը ձևավորվում է օտարերկրյա արժույթով արտադրանքի իրացում կատարող և արժույթով հասույթ ստացող կազմակերպությունների մոտ:

Անորոշիչացիան (ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք) ստեղծվում է կապիտալի օգտագործման գործընթացում. վերաբերում է ոչ ընթացիկ ակտիվներին, տեսականորեն նախատեսված է նրանց պարզ վերարտադրությունը ֆինանսավորելու հա-

նար:

Ձեռնարկության ֆինանսական ռեսուրսները ներկայացնում են սեփական դրամական եկամուտների և մուտքերի ամբողջությունը, որը նախատեսված է ձեռնարկության ֆինանսական պարտավորությունները կատարելու և արտադրության զարգացման հետ կապված ծախսերը ֆինանսավորելու համար:

Այս հասկացության շրջանակներում պետք է տարբերել «կապիտալ» հասկացությունը՝ որպես ֆինանսական ռեսուրսի բաղադրիչ, որն ավանսավորված է արտադրության մեջ և շրջապտույտի ավարտից հետո եկամուտ է բերում, այլ կերպ՝ հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների փոխակերպված ձևը:

Ձևավորման աղբյուրների հետ կապված ռեսուրսները բաժանվում են սեփականի (ներքին) և ներգրավվածի (արտաքին):

Առևտրական հաշվարկի սկզբունքով գործող արտադրական ձեռնարկություններն ունեն որոշակի ինքնուրույնություն և անկախություն գործունեության կազմակերպման ու իրականացման գործում: Դրանց ինքնուրույնության և ֆինանսական գործունեության կարևորագույն կողմերից մեկը տարբեր բնույթի դրամական ֆոնդերի ձևավորումն ու օգտագործումն են: Կերջիններիս միջոցով են ապահովվում տնտեսական գործունեության պահանջները դրամական անհրաժեշտ միջոցների նկատմամբ, արտադրության ընդլայնումը, գիտատեխնիկական առաջընթացը, նոր տեխնիկայի յուրացումն ու ներդրումը, աշխատողների նյութական խրախուսումը, վճարումները բյուջեին և այլն:

Տնտեսական պրակտիկայում ընդունված է դրանք բաժանել չորս խմբերի՝

- I. սեփական միջոցների ֆոնդեր,
- II. փոխառու միջոցների ֆոնդեր,
- III. ներգրավված միջոցների ֆոնդեր,
- IV. օպերատիվ (ընթացիկ) դրամական ֆոնդեր:

Դրամական միջոցների ֆոնդերի առաջին խումբն ունի ուղենշային նշանակություն. դրա հաշվին է գլխավորապես ձևավորվում արտադրական պտտեցիալը և արտահայտվում սեփական կապիտալի մեծությունը: Այն ներառում է՝

- կանոնադրական կապիտալը,
- լրացուցիչ կապիտալը,
- պահուստային կապիտալը,
- ինվեստիցիոն ֆոնդը,
- արժուքային ֆոնդը և այլն:

Օպերատիվ ֆինանսատնտեսական գործունեությունը գործնականում չի կարող ընթանալ առանց դրամական միջոցների նկատմամբ պահանջի տատանումների: Հաճախ դրամական հոսքերի ստացման և ծախս կատարելու անհրաժեշտության ժամկետները չեն համընկնում, ինչը բխում է արտադրական կապիտալի շրջապտույտի առանձնահատկություններից: Մշտապես առաջանում է կամ միջոցների նկատմամբ ժամանակավոր պահանջ, կամ ժամանակավոր ավելցուկ: Առաջին դեպքում ներգրավվում են փոխառու աղբյուրներ, և ձևավորվում հետևյալ ֆոնդերը՝

- բանկային վարկեր,
- առևտրական վարկեր,
- ֆակտորինգ,
- լիզինգ,

• կրեդիտորներ և այլն:

Միաժամանակ, տնտեսական արդյունքի հաշվին բյուջեի և բանկերի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո կուտակվում են ներտնտեսական ապակենտրոնացված միջոցներ՝ աշխատողների, բաժնետերերի ներտնտեսական կարիքները հոգալու համար՝ ձևավորելով հետևյալ ֆոնդերը՝

- սպառման ֆոնդեր,
- հաշվարկներ շահաբաժինների գծով,
- գալիք ժամանակաշրջանի եկամուտներ,
- առաջիկա վճարումների և ծախսերի պահուստ,
- այլ ֆոնդեր:

Ձեռնարկությունները ընթացիկ գործառնության արդյունքներով պարբերաբար բավարարում են առավել ժամկետային և առաջնահերթ պահանջները հետևյալ օպերատիվ ֆոնդերի հաշվին՝

- աշխատանքի վարձատրության,
- շահաբաժինների վճարման,
- բյուջեին և սոցապին վճարումների,
- այլ վճարումների:

Ինչպես նշվեց, բաժնետիրական ընկերություններում բացառիկ է սեփական միջոցների ֆոնդի նշանակությունը:

Ձեռնարկությունը կազմակերպվելիս պետք է ձևավորի կանոնադրական ֆոնդ (կապիտալ), որի հաշվին էլ գոյանում են հիմնական ու շրջանառու միջոցները (ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներ): Այդ ֆոնդը արտացոլում է ձեռնարկության կողմից թողարկված բաժնետոմսերի գումարը, որը փոփոխության է ենթարկվում տարեկան արդյունքներով: Ըստ էության, կանոնադրական կապիտալը արտահայտում է իր կրեդիտորների շահերը երաշխավորող ներդրումների նվազագույն չափը և որոշվում է գործող օրենսդրական պահանջներից ելնելով: Որպես դրամական միջոցների առաջին ֆոնդ՝ կանոնադրական կապիտալը արտացոլվում է հաշվեկշռի պասիվում՝ ակտիվում ունենալով նյութական կրողներին՝

Ակտիվ	Պասիվ
– ոչ ընթացիկ ակտիվներ	– կապիտալ – պահուստներ
– ընթացիկ ակտիվներ	– երկարաժամկետ պասիվներ
– վնասներ	– կարճաժամկետ պասիվներ
Հաշվեկշիռ	Հաշվեկշիռ

Կանոնադրական կապիտալի հետ սերտորեն կապված է «զուտ ակտիվներ» հասկացությունը, որը, լայն առումով, սեփական միջոցներն են:

Ձեռնարկատիրական գործունեության կառավարման կարևորագույն բնագավառներից մեկը դրամական հոսքերի կարգավորումն է:

Ֆինանսական պլանավորման համար բացառիկ նշանակություն ունի դրամական հոսքերի կանխատեսվող ծավալը, որն արտահայտում է ձեռնարկության դրամական

մուտքերը և ելքերը: Դրանք ամփոփվում են աղյուսակի տեսքով և բովանդակությամբ նման են նախկինում գործող օրացուցային պլանին: Միաժամանակ, շուկայական էկոնոմիկայի պայմաններում դրամական մուտքերի ճիշտ կանխատեսումը և դրամական ելքերի ուղղությունների՝ ըստ ժամկետների որոշումը շատ կարևոր են կազմակերպության ընթացիկ նորմալ գործունեությունը ապահովելու և լուծարելիության վիճակը գնահատելու համար:

Դրա նշանակությունը մեծ է նաև մատակարարների, բյուջեի և այլ մարմինների հանդեպ պարտավորությունները ժամանակին կատարելու համար:

Ջարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների մեծ մասում դրամական հոսքերի աղյուսակը ներկայացվում է մի քանի ձևով՝ ապահովվելով նույն բովանդակությունը: Դրանում բերվում են դրամի սկզբնական մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, դրամի մուտքերը, դրամի ելքերը և մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Դրամի սկզբնական մնացորդը նույնպես կանխատեսվող մեծություն է, քանի որ պլանավորումը, սովորաբար, կատարվում է պլանավորվող ժամանակաշրջանին նախորդող ամիսներին, ընթացիկ տարին չավարտված: Եթե ձեռնարկությունը նոր կազմակերպվող չէ, ապա կանխատեսումը կատարվում է՝ ելնելով պլանավորվող ժամանակաշրջանին նախորդող տարվա տարեվերջի մնացորդից՝ համապատասխան ճշգրտումներով:

Կազմակերպության նորմալ տնտեսական գործունեության պայմաններում դրամական մուտքերի հիմնական մասը կազմում է գործառնական գործունեությունից ստացվող հասույթը: Այն, այլ կերպ, կարելի է անվանել մուտքեր վաճառքից: Այս խմբի մուտքերի մեջ մտնում են տվյալ տարվա արտադրանքի իրացումից հասույթը, ինչպես նաև նախկինում ապառիկ վաճառված ապրանքների դիմաց ստացվող մուտքերը (դեբիտորական պարտքերի մարումը): Այս ցուցանիշի պլանավորման դժվարությունն այն է, որ հնարավոր չէ ճշգրիտ կանխատեսել գնորդների կողմից կատարվող վճարումների պարբերականությունը և ժամկետները: Այս ցուցանիշի կանխատեսումը համեմատաբար բարդ է շուկայական էկոնոմիկային անցման առաջին փուլում, երբ իրացման գները և շուկան անկայուն են, կա հաճախակի տատանումների հնարավորություն:

Մուտքերի հաջորդ խումբը ձևավորվում է ներդրումային գործունեությունից ստացված եկամուտներից: Այս խմբի մեջ մտնում են հիմնական միջոցների (ոչ ընթացիկ ակտիվների), երկարաժամկետ ֆինանսական ներդրումների, անավարտ շինարարության վաճառքից հասույթը, ինչպես նաև երկարաժամկետ ֆինանսական ներդրումների հետ կապված շահաբաժինները:

Դրամական հոսքերի երրորդ խումբը ֆինանսական գործարքներից ստացվող մուտքերն են.

1. Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ,
2. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ,
3. Արժեթղթերի էմիսիայից մուտքեր,
4. Նպատակային ֆինանսավորում:

Դրամական ելքերը նույնպես բաժանվում են 3 խմբի՝ հիմնական, ներդրումային և ֆինանսական գործունեության ապահովման հետ կապված:

Ֆինանսական դրությունը լիարժեք հնարավոր չէ գնահատել առանց այդ հոսքե-

որը վերլուծելու: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների մեծ մասն ունի շրջանառու միջոցների ճեղքվածք, թեև դրանցից շատերը աշխատում են շահույթով: Գոյություն ունի դրամական միջոցների հոսքի հասկացություն, որը ներառում է ձեռնարկության ստացած և վճարած միջոցների ամբողջությունը: Դրամական միջոցների հոսքը կապված է կոնկրետ ժամանակաշրջանի հետ և իրենից ներկայացնում է բոլոր ստացումների և վճարումների ամբողջությունը: Համաշխարհային պրակտիկայում դրամական հոսքերը անվանվում են «քեշ ֆլո»: Երբ ելքը գերազանցում է մուտքերը, կոչվում է նեգատիվ քեշ ֆլո, հակառակ դեպքում՝ պոզիտիվ: Օգտագործվում է նաև «դիսկոնտավորված կամ վերահաշվարկված քեշ ֆլո» արտահայտությունը:

Դրամական հոսքերը բխում են ձեռնարկությունների գործունեության կոնկրետ բնագավառներից, որպիսիք սովորաբար երեքն են՝ հիմնական գործունեություն, ինվեստիցիոն գործունեություն, ֆինանսական գործունեություն:

Արտադրական ձեռնարկությունների համար գլխավորը հիմնական (գործառնական) գործունեությունն է, որտեղ **հոսքերն են՝**

- ապրանքային արտադրանքի և ծառայությունների իրացումից հասույթը,
- դեբիտորական պարտքերի մարումից մուտքերը,
- նյութական արժեքների վաճառքից (փոխանակումից) մուտքերը,
- գնորդների ավանսային (կանխավճարային) մուծումները:

Ելքերն են՝

- մատակարարներին վճարումները,
- աշխատավարձի վճարումները,
- բյուջեին և արտաբյուջետային ֆոնդերին վճարումները,
- վարկերի մարումը և տոկոսավճարները,
- սպառման ֆոնդից վճարումները,
- կրեդիտորական պարտքերի մարումը:

Ներդրումային գործունեության մուտքերն են՝

- հիմնական ֆոնդերի (ոչ ընթացիկ ակտիվների) վաճառքը,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումների վաճառքը,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումների շահաբաժինները:

Ելքերն են՝

- արտադրության զարգացման համար կապիտալ ներդրումները,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումները:

Ֆինանսական գործունեությունից մուտքերն են՝

- կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները,
- երկարաժամկետ վարկերն ու փոխառությունները,
- արժեթղթերի էմիսիայից մուտքերը,
- նպատակային ֆինանսավորումը:

Ելքերն են՝

- կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի մարումը,
- շահաբաժինների վճարումը:

10.3. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇԱՐՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼՃԱԿ

Արտադրական ձեռնարկության կապիտալը՝ որպես գործունեության մեջ ներդրված (ավանսավորված) զուևար, կարող է կազմված լինել բազմաթիվ աղբյուրներից, որոնք բաժանվում են ներքինի և արտաքինի: Բնականաբար, այդ կապիտալի կառավարման ընթացքում խնդիր է առաջանում՝ ներքին թե արտաքին, որն է ավելի կարևոր, նախապատվությունը որ խնդրին տալ: Կապիտալի, նույնն է թե պասիվների կառուցվածքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով վերլուծություն կատարելիս շատ կարևոր է ֆինանսավորման ներքին ու արտաքին աղբյուրները տարբերակելը: Ձեռնարկության ձևավորման կամ զարգացման ներքին ֆինանսավորումը ապահովվում է նրա եկամուտների հաշվին: Դա ներառում է այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են չբաշխված շահույթը, հաշվարկված, բայց չվճարված աշխատավարձը, կրեդիտորական պարտքերը: Երբ ձեռնարկությունը զարգացման համար ներդնում է շահույթի մի մասը, նշանակում է՝ օգտագործում է ներքին աղբյուր: Ֆինանսավորման արտաքին աղբյուրներն ի հայտ են գալիս, երբ ձեռնարկությունը ներգրավում է կրեդիտորների կամ բաժնետերերի միջոցները: Եթե կազմակերպությունը շենք է կառուցում կամ սարքավորում է ձեռք բերում փոխառության թողարկման կամ բաժնետոմսերի իրացման հետևանքով ստացված միջոցների հաշվին, նշանակում է՝ օգտագործում է արտաքին ֆինանսավորում:

Աշխարհում ընդունված է սեփական աղբյուրներին զուգահեռ կիրառել բիզնեսի ֆինանսավորման արտաքին աղբյուրների հինգ տեսակ.

- **Փոխառություններ** բարեկամներից ու հարազատներից: Այդպիսի «ընտանեկան» ֆինանսավորման կազմակերպական ձևը հարմար է կիրառման համար, այն դեպքում, երբ բիզնեսը սկսվում է ձեռնարկության տեսքով և մոտ ապագայի հեռանկարները բավականաչափ անորոշ են: Նման դեպքում հաջողությունները մեծապես պայմանավորված են ձեռներեցի որակով, բնականաբար, պահանջվող միջոցները կարող են հատկացվել նրան անձամբ ճանաչող և վստահող մարդիկ:

- **Կապալ:** Կապալատուն կապալառուին ներկայացնում է որոշակի իրական ակտիվներ՝ գրասենյակ, պահեստ, սարքավորում, որը պարտավորվում է որոշակի ժամանակահատվածում նրան կատարել վճարում, ըստ էության, կապալը ֆինանսավորում է փոխառու աղբյուրների ներգրավմամբ:

- **Սովորական բաժնետոմսերը** որպես ֆինանսավորման մեթոդ ձեռնարկությունները օգտագործում են այն դեպքերում, երբ դրանք կազմակերպվում են բաժնետիրական ընկերությունների տեսքով: Որպես ֆինանսավորման արտաքին աղբյուր՝ դրանք օգտագործվում են հատկապես ձեռնարկությունը բաց բաժնետիրական ընկերություն դառնալու պահին կամ էլ եթե ուզում է զգալիորեն ընդլայնել իր բիզնեսը:

- **Վարանտով պարտքային պարտավորություն:** Վարանտներն իրենցից ներկայացնում են «կոլլ» օպցիոն, որպիսին սեփականատիրոջը իրավունք է տալիս ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսերը (ակցիա) գնել հաստատագրված

զնով: Դրանք կցվում են պարտքային պարտավորություններին, եթե ընկերությունը նախատեսում է պարտքը մարելուց առաջ ձեռք բերել նոր բաժնետիրական կապիտալ:

• **Դեբիտորական պարտքի ֆակտորինգի** դեպքում ընկերությունը կողմնակի կազմակերպության հետ կարող է կնքել պայմանագիր իր դեբիտորական պարտքը սպասարկելու մասին՝ զեղչով իր դեբիտորական պարտքը վաճառել: Վերջին հաշվով ֆակտորինգային կազմակերպությունը հնարավորություն է տալիս դրամական միջոցներ ստանալ ակտիվները վաճառելու, այլ ոչ թե փոխառությունների և նոր բաժնետոմսերի թողարկման ճանապարհով:

Արտադրական ձեռնարկությունների ակտիվների ձևավորումը ֆինանսավորող գլխավոր աղբյուրը պատմականորեն եղել և մնում է սեփական կապիտալը: «Սեփական կապիտալ» հասկացությունն իրենից ներկայացնում է ձեռնարկությունում առկա ակտիվների (հիմնական ֆոնդեր, շրջանառու ֆոնդեր, շրջանառության ֆոնդեր) և արտաքին պարտավորությունների տարբերությունը: Գործնականում դրամեծությունը կարող է որոշվել միայն հաշվարկային ձևով՝ հաշվապահական հաշվեկշռի տվյալներով:

Սեփական կապիտալը ստորաբաժանվում է հաստատունի (կանոնադրական) և փոփոխականի: Ձեռնարկությունն իր կանոնադրական կապիտալի հաշվին ֆինանսավորում է ակտիվների մշտական մնացորդները՝ հիմնական և շրջանառու սեփական կապիտալը, որպիսիք գտնվում են անընդհատ շարժման գործընթացի մեջ և շրջապտույտի փուլերից կախված՝ ընդունում են տարբեր ձևեր: Դրանք ունեն նյութական տարբեր կրողներ:

Կապիտալի փոփոխումն մասը շատ բաներով կախված է ձեռնարկության գործունեության ֆինանսական արդյունքներից, որոնց հաշվին գոյանում են պահուստային և լրացուցիչ կապիտալները, չբաշխված շահույթը:

Ձեռնարկության հիմնական կապիտալը նյութականորեն ներկայացնում է ակտիվների մի մասը՝ ոչ ընթացիկ ակտիվներում ներդրումները, երկարաժամկետ անավարտ ներդրումները (ինվեստիցիաներ), ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվները, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները:

Շրջանառու կապիտալը ընդհանուր կապիտալի այն մասն է, որը ներդրվում է ձեռնարկության ընթացիկ ակտիվների մեջ: Այս կապիտալի մի մասը ավանսավորվում է արտադրության ոլորտում և ձևավորում է շրջանառու արտադրական ֆոնդերը, մյուսը գտնվում է շրջանառության ոլորտում և ձևավորում է շրջանառության ֆոնդը: Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներով դրանք միասին կազմում են ընթացիկ ակտիվները:

Ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների մեջ կատարվող ամբողջ ներդրումները ձեռնարկությունների ինվեստիցիաներն են, որոնց ձևավորման բուլոր հնարավոր աղբյուրները հետևյալն են՝

- տնտեսավարող սուբյեկտի սեփական միջոցներ.
- արժեթղթերի էմիսիայի, իրավաբանական ու ֆիզիկական անձանց փայավճարների ստացման ճանապարհով դրամական միջոցների ներգրավում.
- բանկի երկարատև ու կարճատև վարկեր.
- օտարերկրյա ներդրողների միջոցներ.

- արտաբյուջետային ֆոնդերի միջոցներ.
- այլ աղբյուրներ:

Բոլոր աղբյուրների մեջ հիմնական տեղը պատկանում է սեփական միջոցներին: Դա ընդգրկում է հիմնադիրների նախասկզբնական մուծումները և ֆինանսատնտեսական արդյունքներով ստացված դրամական միջոցների մի մասը:

Սեփական կապիտալի մեջ կանոնադրական կապիտալի չափը որոշում են բաժնետիրական ընկերության հիմնադիրները: Կանոնադրական կապիտալի չափը չպետք է պակաս լինի բաց ԲԸ գրանցման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից: Այդ չափին համապատասխան՝ թողարկում են բաժնետոմսեր, և դրանք, հիմնադիրների կողմից ներդրված (վճարված) կապիտալին համապատասխան, բաժանվում են հիմնադիրների միջև: Բաժնետոմսերը լինում են սովորական և արտոնյալ: Սրանցից հիմնականը սովորական բաժնետոմսերն են, որոնց քանակը ընդհանուր բաժնետոմսերի մեջ չպետք է 75 %-ից պակաս լինի: Սովորական բաժնետոմսերի տերերը մասնակցում են բաժնետիրական ընկերության կառավարման աշխատանքներին: Յուրաքանչյուր մեկ սովորական բաժնետոմսը նրա տնօրինողի համար ապահովում է մեկ ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերը ազատ կերպով վաճառվում են արժեթղթերի շուկայում շուկայական գնով: Սովորական բաժնետոմսերը նրա տնօրինողին բերում են տարեկան եկամուտ շահաբաժնի տեսքով, որի չափը պայմանավորված է բաժնետիրական ընկերության ստացած զուտ շահույթի մեծությամբ և որոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ինչ վերաբերում է արտոնյալ բաժնետոմսերին, ապա սրանց տնօրինողները չունեն ձայնի իրավունք և չեն կարող մասնակցել ընկերության կառավարման աշխատանքներին: Արտոնյալ բաժնետոմսերն իրենց տնօրինողներին բերում են շահաբաժին, որի չափը տոկոսային մեծությամբ սահմանված է արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Արտոնյալ բաժնետոմսերի եկամուտը երաշխավորված է: Այն վճարվում է բաժնետիրական ընկերության զուտ շահույթի հաշվին: Այն դեպքում, երբ այդ շահույթը չի բավարարում, կան ընկերությունը հաշվետու տարում վնասով է աշխատել, ապա վճարը կատարվում է պահուստային կապիտալի հաշվին, որը նույնպես սեփական կապիտալի մասն է կազմում: Այս իմաստով արտոնյալ բաժնետոմսերի տարատեսակ կարող ենք անվանել բաժնետիրական ընկերության կողմից բաց թողնվող ու իրացվող փոխառությունների պարտատոմսերը, որոնք դրանց տնօրինողներին բերում են եկամուտ տոկոսի տեսքով:

Բաժնետիրական ընկերության սեփական կապիտալի մեջ մտնում է նաև էմիսիոն եկամուտը: Դա առաջանում է այն ժամանակ, երբ ընկերությունը որոշում է ընդունում լրացուցիչ կապիտալ ձևավորել նախկինում թողարկված և դեռևս չտեղաբաշխված ու չվճարված սովորական արժեթղթերը շուկայում վաճառելով, եթե դրանց շուկայական գինը բարձր է անվանական արժեքից կամ էլ այդ նույն պայմանով՝ թողարկել և վաճառել նոր սովորական արժեթղթեր: Սովորական արժեթղթերի անվանական արժեքի ու այդ արժեթղթերի շուկայական գնի տարբերությունը կազմում է էմիսիոն եկամուտը, որի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտացոլվում է հաշվեկշռի մեջ որպես սեփական կապիտալ:

Ձեռնարկության միջոցների ձևավորման աղբյուրները և դրանց նյութական կրողները ամբողջությամբ արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում և պատկեր-

ված են թիվ 10.3.1 աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 10.3.1

ԸՆթացիկ ակտիվներ				Ոչ ընթացիկ ակտիվներ				
Քաշվելիչի	Լուծարելի ակտիվներ							
	Դրամական միջոցներ, այդ թվում՝ դրամարկդ, հաշվարկային հաշիվ, արտարժուքային հաշիվ – այլն	Ընթացիկ դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ նորոգների, բյուջեի, աշխատավարձի – այլնի ծով	Ընթացիկ ֆինանսական ներդրումներ, այդ թվում՝ ներդրումներ արժեթղթերի դեպոզիտների – այլնի տեսքով					Պաշարներ, այդ թվում՝ նյութեր, անավարտ արտադրություն, արտադրանք – այլն
Պարտավորություններ							Սեփական կապիտալ	Խվտ
Քաշվելիչի	Ընթացիկ պարտավորություններ					Երկարա՝ժամ. ֆին. պարտավոր.	Այդ թվում՝ կանոնադրական կապիտալ, էմիսիոն եկամուտ, ոչ ընթացիկ նյութական ակտիվների – ոչ նյութական ակտիվների վերանահատումից արժեքի աճ, նախորդ տարիների չբաշխված շահույթ, հաշվետու տարվա զուտ շահույթ – այլն	
	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր, այդ թվում՝ մատակարարների, բյուջեի, սոցապահովա՝րության, աշխատավարձի, ստացված կանխավճարների, ռո՝ծառնական վարձակալության, տույժերի ու տու՝անքների ծով – այլն	Կարճաժամկետ ֆինանսական պարտավորություններ, կարճաժամկետ բանկային վարկերի, կարճաժամկետ փոխառությունների – այլնի ծով				Այդ թվում՝ երկարա՝ժամկետ բանկային վարկերի, փոխառությունների, ֆինանսական վարձակալության – այլ պարտավորությունների վճարներ		

Հիմնական ու շրջանառու կապիտալի ձևավորումը ձեռնարկատիրական գործունեություն սկսելու օբյեկտիվ նախադրյալն է: Այդ գործունեության արդյունքը արտահայտվում է պատրաստի արտադրանքի թողարկման, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման մեջ, որի պարտադիր պահանջը շահույթ ստանալն է՝ դրանց իրացումից հասույթի գերազանցումը արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերին (ինքնարժեքին):

Ֆինանսատնտեսական գործունեության համար կարևոր նշանակություն ունի ակտիվների ձևավորման աղբյուրների նպաստավոր կառուցվածքը: Տվյալ էֆեկտը առաջանում է տնտեսական ընդհանուր շահութաբերության և փոխառու աղբյուրների ներգրավման գնի (վարկային միջին դրույքի) տարբերության հետևանքով: Այլ կերպ՝ ձեռնարկությունը պետք է ապահովի այնպիսի տնտեսական շահութաբերության մակարդակ, որը բավարար լինի գոնե վարկի դիմաց տոկոսները վճարելու համար: Այդ պարագայում տնտեսական շահութաբերությունը կհամապատասխանի սեփական միջոցների արդյունավետությանը, և ֆինանսական լծակի էֆեկտի մասին խոսք լինել չի կարող: Երբ տնտեսական շահույթի և վարկի գնի միջև տարբերությունը դրական է, ֆինանսական լծակը կարող է դրսևորում ստանալ, և արդյունքում դրա ազդեցության հետևանքով սեփական միջոցների շահութաբերությունը կունենա ավելի բարձր մակարդակ:

Ասվածը առարկայական դարձնելու նպատակով բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք՝ միաժամանակ գործում են երկու ձեռնարկություններ՝ Ա և Բ: Երկուսն էլ ունեն շահութաբերության 30% մակարդակ: Սակայն դրանցից մեկը, դիցուք Ա-ն, գործունեությունն իրականացնում է միայն իր սեփական միջոցներով, առանց վարկերի և փոխառու այլ աղբյուրների ներգրավման, իսկ մյուսը՝ Բ-ն, այս կամ այն չափով օգտվում է փոխառու աղբյուրներից: Համարենք, որ Ա ձեռնարկության ընդհանուր ակտիվների գումարը 20.000 հազ. դրամ է և ունի նույնքան պասիվներ՝ լրիվությամբ ձևավորված սեփական աղբյուրներով:

Ընդունենք նաև, որ Բ ձեռնարկությունը ևս ունի նույն մեծության ակտիվներ՝ 20.000 հազ. դրամ, որի կեսը ձևավորվել է սեփական աղբյուրներով, մյուս կեսը՝ 10.000 հազ. դրամը՝ փոխառու աղբյուրներով: Ենթադրենք, որ նշված երկու ձեռնարկությունների ներդրումների (ավանսավորված գումարի) շահագործման արդյունքում ձեռք է բերվել 6.000 հազ. դրամի զուտ արդյունք (շահույթ):

Գործնականում հնարավոր է, որ կոնկրետ ժամանակաշրջանի համար այդ ձեռնարկությունները հարկատու լինեն կամ չլինեն: Այն դեպքում, երբ դրանք հարկատու չեն և գտնվում են յուրահատուկ արտոնյալ հարկային դաշտում, Ա ձեռնարկությունը 6.000 հազ. դրամի շահույթ ստանում է միայն սեփական միջոցները գործունեության մեջ ներդնելու հետևանքով, այնքանով, որ նրա ամբողջ ակտիվները ծածկվում են բացառապես սեփական աղբյուրներով: Այս ձեռնարկության շահութաբերությունը կկազմի 30% $\left(\frac{6.000 \times 100}{20.000} \right)$, որը ամբողջությամբ կվերաբերի սեփական միջոցներին:

Երկրորդ՝ Բ ձեռնարկությունը նույնպիսի արդյունք է ձեռք բերել նաև օգտագործելով փոխառու աղբյուրներ: Բնականաբար, պարտավոր է ստացված արդյունքի հաշվին նախ և առաջ վճարել տոկոսներ վարկատուներին և կատարել այլ հնարավոր ծախսեր՝ կապված գրավի և ապահովագրության հետ: Փոխառու աղբյուրների

ներգրավման հետ կապված՝ ծախսերի մեծությունը անմիջական կախվածության մեջ է որոշակի տնտեսական պայմաններից, մասնավորապես՝ տոկոսային քաղաքականության բնագավառում ստեղծված վիճակից և ռիսկերի դրսևորման աստիճանից, որոնք խիստ փոփոխական են, հատկապես շուկայական հարաբերությունների անցումային ժամանակաշրջանում:

Կոնկրետ դեպքում, եթե ընդունենք, որ այդ ծախսերի միջին տարեկան մակարդակը (դրույքը) հավասար է 20%–ի, ապա երկրորդ ձեռնարկության հարկադիր ֆինանսական ծախսերը կկազմեն 2.000 հազ. դրամ (10.000 x 20:100): Սեփական միջոցների արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվող շահույթը այս դեպքում կկազմի ոչ թե 6.000, այլ 4.000 հազ. դրամ (6.000–2.000), իսկ դրանց շահագործման շահութաբերությունը՝ 40% (4.000 x 100:10.000):

Այսպիսով՝ հավասար մեծության ակտիվներ ունեցող այս երկու ձեռնարկությունները, ապահովելով 30% տնտեսական շահութաբերության մակարդակ, կբնութագրվեն սեփական միջոցների տարբեր աստիճանի շահութաբերությամբ, որը արդյունք է պասիվների կառուցվածքային տարբերության: Այդ տարբերությունը տվյալ պարագայում հավասար է 10 տոկոսային կետի (40–30) և արդյունք է ֆինանսական լծակի արդյունավետության դրսևորման:

Այսպիսով՝ ֆինանսական լծակի արդյունավետությունն իրենից ներկայացնում է սեփական միջոցների շահագործման շահութաբերության այն լրացուցիչ աճը, որը ապահովվում է փոխառու աղբյուրները զործունեության մեջ ներգրավելու հետևանքով, թեև վերջինները կրում են վճարովի բնույթ:

Դժվար չէ նկատել, որ Բ ձեռնարկությունում ակտիվների մի մասը, ապահովելով 30% շահութաբերություն, ընդհանուր առմամբ պահանջում է 20% ծախս: Այդ ընթացքում սեփական աղբյուրների (միջոցների) շահութաբերությունը աճում է, խոսքը վերաբերում է հենց սեփական միջոցներին, որոնց օգտագործումը կապված չէ լրացուցիչ ֆինանսական ծախսերի հետ, բայց ունի որոշակի ռիսկայնություն թերևս ցանկացած բաժնետիրական ընկերությունում, ՍՊԸ–ներում և ձեռնարկություններում՝ անկախ իրավակազմակերպական ձևից, բացառությամբ անհատական արտադրության:

Այժմ ընդունենք, որ մեր ձեռնարկությունները գտնվում են որոշակի հարկային դաշտում և շահույթի հետ կապված պարտավորություններ ունեն պետության հանդեպ: Ըստ տրամաբանության՝ արդյունքները պետք է բնութագրվեն ցուցանիշների նույնպիսի մակարդակներով, չէ՞ որ վարկի գինը և հարկերը ձեռք բերված տնտեսական արդյունքից պարտադիր հանումներ են և բոլորի համար անխուսափելի են: Իրականում, ինչպես երևում է թիվ 10.3.2 աղյուսակի տվյալներից, սեփական միջոցների զուտ շահութաբերությունը կունենա տարբեր մակարդակներ:

* Պայմանականորեն շահութահարկի միջին դրույքը ընդունվում է 20% (1/5):

Սեփական միջոցների զուտ շահութաբերության հաշվարկը

Ցուցանիշներ	Ձեռնարկությունները	
	Ա	Բ
1. Ներդրումների շահա՝ործման զուտ արդյունքը (շահույթը), հ. դր.	6.000	6.000
2. Փոխառու աղբյուրների ֆինանսական ծախսերը, հ. դր.	–	2.000
3. Հարկման ենթակա շահույթը, հ. դր.	6.000	4.000
4. Շահութահարկի՝ ումարը (1/5), հ. դր	1.200*	800
5. Ջուտ շահույթը, հ. դր.	4.800	3.200
6. Սեփական միջոցների զուտ շահութաբերությունը, %	24,0 (4.800 × 100 : 20.000)	32 (3200 × 100 : 10.000)

Բ ձեռնարկության սեփական միջոցների զուտ շահութաբերությունը 8.0 տոկոսային կետով բարձր է Ա ձեռնարկության զուտ շահութաբերությունից պասիվների այլ կառուցվածքի պատճառով, թեև երկու դեպքում էլ շահութահարկ վճարելուց հետո տնտեսական արդյունավետության ցուցանիշը նկատելիորեն նվազում է:

Ասվածի արդյունքում, ի վերջո, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

- Այն ձեռնարկությունները, որոնք գործունեության մեջ օգտագործում են միայն սեփական միջոցներ, հարկումից հետո կունենան զուտ շահութաբերություն՝ ձեռք բերված տնտեսական արդյունավետության 4/5 մակարդակի չափով:
- Փոխառու աղբյուրներ գործունեության մեջ ներգրաված ձեռնարկություններում սեփական միջոցների օգտագործման շահութաբերությունը ավելանում կամ պակասում է պասիվների կառուցվածքում սեփական ու փոխառու միջոցների հարաբերակցությունից, վարկային տոկոսի մակարդակից կախված չափերով: Գործում է ֆինանսական լծակի արդյունավետության ուժը՝ $ՍՄՇ=4/5 ՏՇ+ՖԼԱ$.

ՍՄՇ – սեփական միջոցների շահութաբերություն,

ՏՇ – տնտեսական շահութաբերություն,

ՖԼԱ – ֆինանսական լծակի արդյունավետություն:

Օպերատիվ տնտեսական գործունեության ընթացքում ձեռնարկությունների ֆինանսական ծառայությունների կարևորագույն խնդիրներից մեկը ֆինանսական լծակի արդյունավետության իրացման մեխանիզմի այնպիսի ընտրությունն է, որը հնարավոր է դարձնում շահութահարկի հետևանքով առաջացող վնասի վերականգնումը կամ ձեռք բերված տնտեսական շահութաբերության համեմատությամբ սեփական միջոցների զուտ շահութաբերության իջեցման մեղմացումը: Այդ նպատակով շատ կարևոր է ֆինանսական լծակի արդյունավետության մեխանիզմի գործողության առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Ձեռնարկու-

թյունը, բոլոր դեպքերում, պետք է հասնի տնտեսական շահութաբերության այնպիսի մակարդակի, որը բավարար լինի գոնե փոխառու միջոցների դիմաց տոկոսների վճարման համար:

Հաշվարկներում սխալներից խուսափելու համար փոխառու աղբյուրների գինը՝ վարկի միջին տոկոսը, ոչ թե ուղղակիորեն վերցվում է համապատասխան վարկային պայմանագրերից, այլ որոշվում է՝ ելնելով փաստացի կատարված ֆինանսական ծախսերից (բոլոր վարկերի գծով) և ուսումնասիրվող ժամանակաշրջանում օգտագործվող ամբողջ փոխառու աղբյուրների գումարից՝ ըստ հետևյալ մոտեցման՝

$$i_{\text{ØĐ}} = \frac{\text{öüİ} \times 100}{\text{ö²¶}}$$

- ՎՄՀԴ – վարկային միջին հաշվարկային դրույք,
- ՓՖԾ – փաստացի ֆինանսական ծախսեր,
- ՓԱԳ – փոխառու աղբյուրների ընդհանուր գումար:

Այնուհետև անհրաժեշտ է որոշել ֆինանսական լծակի արդյունավետության գլխավոր կողմնորոշիչը՝ դիֆերենցիալը: Տվյալ հարաբերությունների մեջ «դիֆերենցիալ» հասկացությունն իրենից ներկայացնում է ձեռք բերված տնտեսական շահութաբերության և փոխառու աղբյուրների միջին գնի (տոկոսային դրույքի, գրավային և այլ ծախսերի) տարբերությունը: Մեր օրինակում այն հավասար է 10–ի (30–20): Շահույթի հարկման արդյունքում դիֆերենցիալը արտահայտվում է սկզբնականի 4/5 մասով, այն է՝ 4/5 (ՏՇ–ՍՄՄՇ), այսինքն՝ տնտեսական շահութաբերության և սեփական միջոցների միջին շահութաբերության տարբերության 4/5:

Ֆինանսական լծակի արդյունավետության ազդեցության ուժը դրսևորվում է ֆինանսական լծակի ուսի (դիրքի) միջոցով: Դա արտահայտում է փոխառու և սեփական միջոցների հարաբերությունը և կարևոր ազդեցություն ունի ֆինանսական լծակի ազդեցության արդյունավետության վրա: Նշված տարրերը կիրառելու պայմաններում ստացվում է հետևյալ բանաձևը.

$$\text{ՖԼԱ} = 4/5 \text{ դիֆերենցիալ } \text{Բ ՖԼՈՒ} \text{ (ֆինանսական լծակի ուս) կամ՝}$$

$$\text{ՖԼԱ} = 4/5(\text{ՏՇ} - \text{ՎՄՀԴ}) \times \frac{\text{ՓՄ (փոխառու միջոցներ)}}{\text{ՍՄ (սեփական միջոցներ)}}:$$

Նախորդ հաշվարկների արդյունքները տեղադրելով՝ կստանանք հետևյալ արդյունքը՝

$$\text{ՖԼԱ} = 4/5(30-20) \text{ Բ } \frac{10.000}{10.000} = 8.0:$$

Ստացված թիվը համընկնում է սկզբնական հաշվարկի արդյունքին:

Բերված բանաձևը լայն հնարավորություն է ընձեռում հարկային բեռի հաստատուն մնալու պայմաններում լուրջ ուշադրություն դարձնել տոկոսային միջին դրույքի ու փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության հարցում նպատակահարմար վարիացիաների իրականացմանը: Փոխառու աղբյուրներն ավելացնելու պայմաններում պարտքի սպասարկման ֆինանսական ծախսերը կծանրացնեն տոկոսային դրույքը, ինչը տնտեսական շահութաբերության կայունության պայմաններ

րուն կհանգեցնի դիֆերենցիալի իջեցման: Լծակի ուսը մեծացնելու պարագայում ևս տոկոսային ծախսերը կավելանան, արդյունքում դիֆերենցիալը կիջնի, լծակի ուսը կբարձրանա:

Ընդունենք, որ F ձեռնարկությունում պասիվների կառուցվածքը դարձել է 3:1 (փոխառու աղբյուրներ՝ 15.000 հազ. դր., սեփական՝ 5.000 հազ. դր., ընդամենը՝ 20.000 հազ. դր.): Դրա հետ կապված՝ վարկի միջին տարեկան դրույքը բարձրացել և հասել է 24%–ի: Այդ դեպքում ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը կկազմի՝ $\Phi LU = 4/5(30-24) F 3 = 14.4\%$:

Տվյալ արդյունքը այս ձեռնարկությունում ավելի լավ է, քան նախորդը (8,0), սակայն դիֆերենցիալի իջեցումը անխուսափելիորեն մեծացնում է բանկի ռիսկը: Անկասկած, նոր վարկային պայմանագիրը ձեռնարկության համար միանգամայն չափավետ է:

Այսպիսով՝ որպես ընդհանրացում կարող ենք արձանագրել հետևյալը՝

- եթե նոր փոխառությունների հաշվին կատարվող ներդրումները ձեռնարկության համար ապահովում են ֆինանսական լծակի արդյունավետության բարձրացում, նշանակում է՝ դրանք նպատակահարմար ու շահավետ են.
- վարկատուի տեսանկյունից որքան մեծ է դիֆերենցիալը, այնքան փոքր է ռիսկը և ընդհակառակը:

Պրակտիկ աշխատանքի ընթացքում օրինական հարց կարող է ծագել. տվյալ ձեռնարկությունում ի՞նչ կարող է տեղի ունենալ վարկերի հետագա թանկացման դեպքում: Հաշվարկները ցույց են տալիս, որ ֆինանսական լծակի արդյունավետության նախկին մակարդակը պահպանելու համար հարկ կլինի ֆինանսական լծակի ուսը համապատասխան չափով մեծացնել: Սովորաբար վարկի տոկոսադրույքի՝ մեկ կետով բարձրանալը պահանջում է կրկնակի ավելացնել փոխառու և սեփական միջոցների հարաբերակցությունը:

Տեսականորեն հնարավոր է այնպիսի պահի առաջացում, երբ դիֆերենցիալը փոքր է զրոյից և ունի բացասական արժեք: Այդ դեպքում ֆինանսական լծակի արդյունավետությունը կաշխատի հակառակ ուղղությամբ, և ձեռնարկությունը կունենա բացասական արդյունք: Բացասական դիֆերենցիալ ունեցող ձեռնարկությունները շրջապատի համար չեն կարող որոշակի հետաքրքրություն ներկայացնել: Ցանկացած ներդրող, ունենալով շահույթ կամ շահաբաժին ստանալու կողմնորոշում, չի կարող հրապուրվել նման ձեռնարկության արժեթղթերի ձեռքբերումով: Միաժամանակ, բացասական դիֆերենցիալով ընկերությունների արժեթղթերը չեն կարող բարձր կուրս ունենալ: Խելամիտ և փորձառու ֆինանսական կառավարիչը չի փորձի ամեն զնով բարձրացնել ֆինանսական լծակի ուսը, այլ կձգտի այն նպատակահարմար ձևով կարգավորել դիֆերենցիալից կախվածության շրջանակներում:

Գործնականում պարզելով, որ փոխառու աղբյուրների շահագործումից ստացվող հատուցումը գերազանցում է դրանց ներգրավման ֆինանսական ծախսերը՝ կարող ենք համապատասխան մոտեցումներ մշակել ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների կանխատեսման և ձեռնարկության ֆինանսական պլանների կազմման ուղղությամբ: Փորձառու ֆինանսիստը հստակորեն պատկերացնում է, որ ֆիրմայի ապագան հիմնված է այսօրվա ցուցանիշների և վաղվա ներդրումային քաղաքականության վրա: Նույնիսկ փոխառու և սեփական աղբյուրների առկա բա-

ընդհանուր հարաբերակցությունը չպետք է անհոգություն անաջացնի վաղվա տնտեսական շահութաբերության, վարկային տոկոսադրույքի, հետևաբար և դիֆերենցիալի մակարդակի առնչությամբ: Ինքնին, վարկային պարտավորությունների առկայությունը բարիք կամ չարիք չէ, այն թե՛ զարգացման և թե՛ ռիսկայնության պոտենցիալ կրող է: Ընդգրկելով փոխառու միջոցների բավարար ծավալ՝ ձեռնարկությունը կարող է արագորեն լուծել առաջացած խնդիրները: Հարցն այն չէ, որ ֆինանսիստն իր գործողություններով բացառի բոլոր կարգի ռիսկերը, այլ այն է, որ կարողանա ընդունել խելացի հաշվարկված ռիսկերը դիֆերենցիալի սահմաններում: Ընդհանրապես դիֆերենցիալը բացասական չպետք է լինի, քանի որ դա կարևոր է նաև բանկի համար: Նմանատիպ ձեռնարկությունները վարկունակների թվին կարող են չդասվել: Իհարկե, գործնականում ձեռնարկությունների գործունեության առանձին փուլերում բացառություններ հնարավոր են: Երբեմն անհրաժեշտ է լինում սկզբում զարկ տալ ֆինանսական լծակին և ապա թուլացնել, այլ դեպքերում՝ պահպանել չափավորություն փոխառու աղբյուրների ավելացման գործում:

Արևմտյան տնտեսագետների կարծիքով՝ գործունեության բարվոք դաշտ ունեցող ֆիրմաների համար նախընտրելի է փոխառու աղբյուրների 30–50% տեսակարար կշիռը: Դա նշանակում է, որ ֆինանսական լծակի արդյունավետությունը օպտիմալ կարող է լինել ակտիվների տնտեսական շահութաբերության 1/3–ից 1/2–ի սահմաններում: Այդ պարագայում ֆինանսական լծակի արդյունավետությունն ի վիճակի է փոխհատուցել հարկային զանձումները և ապահովել սեփական միջոցների բավարար եկամտաբերություն ու մեղմել բաժնետիրական ռիսկը:

Կատարված ուսումնասիրություններն ու հաշվարկները հիմնված են ձեռնարկությունների պասիվների կառուցվածքի այն դեպքի վրա, երբ դրանք բաղկացած են ընդամենը երկու տարրերից՝ սեփական և փոխառու աղբյուրներից: Իրականում հնարավոր են նաև այլ դեպքեր: Շատ հաճախ բաժնետիրական ընկերություններում ամխուսափելիորեն դրամական հոսքերի ձևավորման ու օգտագործման մշտական ուղեկիցներ են դերիտորական և կրեդիտորական պարտքերը: Մատակարարներին, բյուջեին, սոցիալական ապահովագրությանը, վարկային և այլ կազմակերպություններին պարտքեր են ունենում գրեթե բոլորը: Դա թեև կրում է ժամանակավոր բնույթ, սակայն մասնակցում է պասիվների ձևավորմանը և առանձին դեպքերում էականորեն փոխում է նրա կառուցվածքը: Բնականաբար, որպես ներգրավված, շատ դեպքերում անվճար աղբյուր՝ չի կարող չանդրադառնալ ընդհանուր արդյունավետության, հատկապես սեփական ակտիվների շահութաբերության վրա: Գործնականում այն իր ուղղակի կամ անուղղակի անդրադարձն է ունենում ֆինանսական լծակի արդյունավետության վրա:

Ձեռնարկությունների կրեդիտորական պարտքերի կազմը կարող է լինել տարբեր: Հիշեցնենք, որ դրանք հիմնականում արդյունք են հաշվարկվածարային փոխհարաբերությունների և գլխավորապես վերաբերում են ապրանքների, աշխատանքների, աշխատավարձի, սոցիալական և այլ ապահովագրությունների, ներհամակարգային, դուստր կազմակերպությունների, արժեթղթերի հետ կապված հաշվարկներին:

Կրեդիտորական պարտքերի դերը շրջանառու միջոցների աճի հարցում գործնականում էական է: Թե այն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ վարկային միջոցներից օգտվող ձեռնարկության սեփական միջոցների շահութաբերության վրա,

ցույց են տալիս ստորև կատարվող հաշվարկները: Մեր ձեռնարկության համար հաշվեկշիռի կազմը ներկայացնենք հետևյալ կտրվածքով.

Աղյուսակ 10.3.3

Կազմակերպության պասիվների կազմը

Սեփական աղբյուրներ	10.000 հազ. դր.
Փոխառու աղբյուրներ որից՝	12.000 հազ. դր.
– վարկեր	10.000 հազ. դր.
– կրեդիտորական պարտքեր	2.000 հազ. դր.
Ընդամենը պասիվներ	22.000 հազ. դր.
Ակտիվ	22.000 հազ. դր.

Ընդունենք նաև, որ տնտեսական արդյունքները նույնն են. տնտեսական շահույթը՝ 6.000 հազ. դր., վարկային միջոցների ներգրավման ֆինանսական ծախսերը՝ 2.000 հազ. դր. (10.000 ₪ 20:100), տնտեսական շահութաբերությունը՝ 30%:

Հիշեցնենք, որ ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը, առանց կրեդիտորական պարտքերը հաշվի առնելու, կազմել է 8.0.

$$\left[\ddot{u}\dot{E}^2 = 4/5(30 - 20.0) \times \frac{10.000}{10.000} \right] :$$

Այժմ, ելնելով ձևավորված աղբյուրների կառուցվածքից, անհրաժեշտ է կատարել վերահաշվարկ՝ բանաձևի բոլոր տարրերի գծով: Արդյունքում ակտիվների ընդհանուր տնտեսական շահութաբերությունը հարկ կլինի որոշել՝ ելնելով ակտիվների ընդհանուր գումարից, որը նախկինից ավելի է 2.000 հազ. դրամով: Շահույթի գումարը անփոփոխ մնալու պայմաններում տնտեսական շահութաբերության մակարդակը կիջնի.

$$i\mathcal{P} = \frac{6.000 \times 100}{22.000} = 27.1 :$$

Զգալիորեն կպակասի նաև վարկի միջին հաշվարկային դրույքը: Կարելի է կազմել ներգրավված աղբյուրների գծով կատարված ֆինանսական ծախսերի հարաբերությունը ոչ միայն վարկերին, այլև ընդհանուր փոխառություններին.

$$i\mathcal{D}, = \frac{2.000 \times 100}{12.000} = 16.7 :$$

Այս երկու ցուցանիշների փոփոխությունները որոշակի անդրադարձ կունենան ֆինանսական լծակի արդյունավետության վրա: Ֆինանսական լծակի ուսը կբարձրանա և կհասնի 1,2-ի $\left(\frac{12.000}{10.000} \right)$:

Ֆինանսական լծակի էֆեկտի մակարդակը, բնականաբար, կբարձրանա՝ $4/5(27,1 - 16,7) \text{ ₪ } 1,2 = 9,98$: Ըստ էության, տեղի է ունենում դիֆերենցիալի և ֆինանսական լծակի ուսի միաժամանակյա բարձրացում, ինչը դրական է անդրադառ-

նուն ֆինանսական լծակի էֆեկտի վրա:

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ ֆինանսական կառավարման հարցերով զբաղվող ծառայության և վարկավորող բանկի առնչությամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը. բոլոր հանգամանքներում վարկերի ներգրավման (վարկ հատկացնելու) խնդիր լուծելիս, առկա պայմանները հաշվի առնելու պարագայում, ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը պարզելու համար ձեռնարկության պասիվների կազմից պետք է բացառել կրեդիտորական պարտքի գումարը:

Մինչև այժմ կատարված հաշվարկներն ու քննարկումները հանգեցնում են այնպիսի հետևության, որ ներդրումների շահագործման հետևանքով ստացվող զուտ արդյունքի և ֆինանսական լծակի ուժի արդյունավետության համար բացառիկ նշանակություն ունի միջոցների ձևավորման աղբյուրների կառուցվածքը: Սովորաբար, գործունեության մեջ ավանսավորվող կապիտալը ձևավորվում է բնութիվ տարբեր մի շարք աղբյուրների հաշվին, որոնց մեջ առավել կարևոր դեր ու տեղ ունեն սեփական, փոխառու և ներգրավված միջոցները: Ընդհանուր առմամբ, դրանք դասակարգվում են ներքին ու արտաքին ֆինանսավորման:

Արդյունաբերական արտադրությունը, թողարկվող արտադրանքի ծավալը և ֆինանսական հետևանքները կախվածության մեջ են մի շարք գործոններից՝ տեխնիկական հագեցվածությունից և դրա վիճակից, աշխատուժից, կապիտալի շուկայից, արտադրության բնույթից, իրացման պայմաններից և այլն: Այդ և նմանատիպ բոլոր գործոնների միջև պետք է լինի փոխադարձ կապ և հավասարակշռություն: Հայաստանի պայմաններում արդյունաբերությունը, ամբողջությամբ վերցրած, կրում է որոշակի ֆինանսական դժվարություններ, միաժամանակ առկա է իրացման շուկայի սահմանափակվածությունը: Շուկայի տարողությունը բնութագրվում է ինչպես սպառողների գնողունակությունը ապահովող միջոցների գոյությամբ, այնպես էլ առաջարկվող գների մակարդակով: Բավարար գնողունակության պայմաններում որքան ցածր են գները, այնքան մեծ է շուկայի տարողությունը և ընդհակառակը: Արտադրանքի էժանացումը միաժամանակ նշանակում է շուկայի ընդլայնում: Այդ խնդիր լուծման ուղիներից մեկը սերիական արտադրության կազմակերպումն է, որը ինքնարժեքի իջեցման միջոցով ընդլայնում է իրացման շուկան, իսկ դրա համար պահանջվում է լրացուցիչ կապիտալի ավանսավորում:

Բիզնեսը միշտ սկսվում է փողից, անընդհատ պահանջում է նորանոր միջոցներ և նպատակ է հետապնդում դրանք բազմապատկելու: Ի վերջո, գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման և ցանկալի մեծության եկամուտներ ստանալու համար ձեռնարկությունը պետք է ունենա միջոցների աղբյուրների ռացիոնալ կառուցվածք, ինչը սերտորեն կապված է նաև վարվող դիվիդենդային քաղաքականության հետ: Միջոցների աղբյուրների անհրաժեշտ կառուցվածքի բնորոշման և խելամիտ դիվիդենդային քաղաքականության մշակման միջև կապը դրսևորվում է նրանով, որ սեփական միջոցների զուտ շահութաբերության բավականաչափ բարձր մակարդակ ձեռք բերելը և դիվիդենդների մեծությունը կախված են միջոցների աղբյուրների կառուցվածքից, ինչն էլ իր հերթին կախված է սեփական միջոցների զուտ շահութաբերությունից և դիվիդենդների համար բաշխվող շահույթի հանդեպ սահմանված նորմաներից: Կասկածից վեր է, որ սեփական միջոցների բարձր շահութաբերությունը հնարավորություն է ընձեռում ավելի շատ չբաշխված շահույթ ունենալ արտադրության ընդլայնման, հետևա-

բար և սեփական միջոցների աճի համար: Այսպիսով՝ արտաքին՝ վարկերի, ակցիաների էմիսիայի և ներքին՝ չբաշխված շահույթի հաշվին կատարվող ֆինանսավորումներն իրար հետ սերտորեն կապված են: Իհարկե, դա չի նշանակում, թե դրանք կարող են իրար փոխարինել: Գործնականում պարտքային պարտավորություններով միջոցների ներգրավումը ոչ մի դեպքում չպետք է անտեսի, առավել ևս սահմանափակի սեփական միջոցների ներգրավումն ու օգտագործումը: Միայն սեփական աղբյուրների բավականաչափ խոշոր ծավալի առկայության դեպքում են հնարավոր ձեռնարկության իրական զարգացումն ու նրա անկախության ամրապնդումը, ինչպես նաև բաժնետերերի կողմից ձեռնարկության հետ կապված ռիսկերը կիսելու իրողությունը, գործընկերների, մատակարարների, գնորդների և կրեդիտորների վստահությունը վայելելը:

Գործնական կյանքում փոխառու աղբյուր հատկացնող բանկային հիմնարկը, քննարկելով իրեն դիմած ձեռնարկության հաշվեկշիռը, առաջին հերթին ուշադրություն է դարձնում սեփական և փոխառու աղբյուրների հարաբերակցությանը: Հստակորեն իմանալով, որ կրիտիկական վիճակում վարկի ապահովվածության համար հիմք կարող են հանդիսանալ միայն սեփական միջոցները՝ բավականաչափ սեփական միջոցներ ունենալու պայմաններում ֆինանսական լծակի ուսի ավելացումը կարող է չուղեկցվել դիֆերենցիալի նկատելի իջեցմամբ:

Սեփական աղբյուրների դերի մասն գնահատականը ոչ մի դեպքում չպետք է նսեմացնի փոխառու աղբյուրների նշանակությունը ձեռնարկության համար: Արևմտյան երկրների պրակտիկայում ընդունված է ձեռնարկությունների պասիվ կառուցվածքում վարկերի բաժինը պահել մինչև 40% մակարդակի վրա, որին համապատասխանում է ֆինանսական լծակի ուսի 067 ցուցանիշը: Այս դեպքում, սովորաբար, ֆինանսական շուկայում տվյալ ձեռնարկության ակցիաները ստանում են առավելագույն գնահատական (կուրս):

Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների մեջ ավանսավորված միջոցների կազմի և կառուցվածքի խնդիրների, դրանց ռացիոնալ կառուցվածքի ձևավորման ուսումնասիրությունն ու տարբերակի ընտրությունը բխում են նրանից, որ գտնվի սեփական ու փոխառու միջոցների այնպիսի հարաբերակցություն, որի պայմաններում ձեռնարկության բաժնետոմսերն ունենան առավելագույն արժեք: Դա իր հերթին հնարավոր է դառնում ֆինանսական լծակի արդյունավետության բավականաչափ, բայց ոչ չափազանց բարձր մակարդակի պայմաններում: Սովորաբար, գործարար աշխարհում պարտքերի մակարդակը ներդրողների համար դիտվում է որպես զգայուն ինդիկատոր ձեռնարկության բարեկեցությունը գնահատելու համար: Փոխառու աղբյուրների չափազանց մեծ տեսակարար կշիռը սնանկացման մեծ ռիսկի կրողն է: Հակառակ պարագայում, երբ դրանց բաժինը պասիվներում շատ ցածր է, սնանկացման ռիսկը խիստ նվազում է, սակայն ներդրողների շրջանում տպավորություն է ստեղծվում, թե ձեռնարկությունը ակտիվություն չի դրսևորում առավելագույն շահույթ ապահովելու համար և ստանալով դիվիդենդի համեստ գումար՝ ձգտում է բաժնետոմսերի արագ իրացման, ինչը իրականում իջեցնում է ձեռնարկության արժեքը:

Ըստ գործարարության միջազգային փորձի՝ հասուն, երկարատև գործունեություն ծավալած ֆիրմաների և ընկերությունների պարագայում, արժեթղթերի նոր թողարկումները ներդրողների կողմից գնահատվում են որպես նեգատիվ ազդանշան, իսկ փոխառու միջոցների ներգրավումը՝ որպես բարենպաստ կամ չեզոք:

Գործնականում գոյություն ունի ձեռնարկությունների արտաքին ֆինանսավորման չորս եղանակ՝

- բաժնետոմսերի փակ բաժանորդագրություն,
- վարկերի և փոխառությունների ձևով միջոցների ներգրավում,
- բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն,
- նշված երեք եղանակների համակցություն:

Առաջին դեպքում, սովորաբար, բաժանորդագրությունը իրականացվում է նախկին ներդրողների միջև, որպես կանոն, շուկայական կուրսից ցածր գներով, և ձեռնարկությունը կորուստ է կրում: Եթե այդ եղանակը ընդունելի չի համարվում նախկին ներդրողների չցանկանալու կամ միջոցների անբավարարության պատճառով, ընտրությունը կատարվում է երկրորդի և երրորդի միջև՝ որպես չափանիշ համարելով ձեռնարկության նկատմամբ վերահսկողությունը կորցնելու ռիսկը նվազագույնի հասցնելը: Բոլոր չորս եղանակներն էլ ունեն դրական ու բացասական կողմեր: Օրինակ՝ արժեթղթերի փակ բաժանորդագրության դեպքում դրական է, որ ձեռնարկության նկատմամբ վերահսկողությունը պահպանվում է, ֆինանսական ռիսկը էականորեն չի ավելանում: Սակայն ֆինանսավորման ծավալը սահմանափակ է, միջոցների ներգրավման արժեքը բարձր է շուկայական կուրսից:

Վարկային պարտավորությունների ձևով ֆինանսավորման դեպքում ևս դրական է այն, որ վերահսկողությունը պահպանվում է, ներգրավվող միջոցների արժեքը հարաբերականորեն ցածր է, բայց աճում է ֆինանսական ռիսկը, վերադարձման (փոխհատուցման) ժամկետները սահմանափակված են:

Բաց բաժանորդագրության պայմաններում ֆինանսական ռիսկը չի աճում, հնարավոր է չսահմանափակվող ժամկետներով խոշոր միջոցների ներգրավում: Դրա կողքին հնարավոր են ձեռնարկության նկատմամբ վերահսկողության թուլացում կամ կորուստ, ներգրավվող միջոցների բարձր արժեք:

Համակցված եղանակի դեպքում կարող են դրսևորվել առաջին երեքի թերություններն ու առավելությունները այն մասշտաբով ու չափերով, ինչպիսին դրանց բաժինն է ընդհանուր ներգրավումների մեջ:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է կատարել հետևություն միջոցների ներգրավման նպատակահարմարության մասին.

1. Այն դեպքում, երբ ներդրումների շահագործման զուտ արդյունքը միավոր արժեթղթի հաշվով մեծ չէ, իսկ ֆինանսական լծակի դիֆերենցիալը բացասական է, սեփական միջոցների շահութաբերությունն ու դիվիդենդների մակարդակը՝ ցածր, ավելի նպատակահարմար է բաժնետոմսեր թողարկելու ճանապարհով ավելացնել սեփական միջոցները, քան օգտվել վարկերից:
2. Երբ ներդրումների շահագործման զուտ արդյունքը յուրաքանչյուր միավոր արժեթղթի հաշվով մեծ է, իսկ այդ ընթացքում ֆինանսական լծակի դիֆերենցիալը ավելի հաճախ դրական է, սեփական միջոցների զուտ շահութաբերությունն ու դիվիդենդները բարձր են, ապա ավելի նպատակահարմար է վարկերից օգտվելը, քան սեփական միջոցների ավելացումը:

Բերված երկու կանոնները գործում են սեփական միջոցների զուտ շահութաբերության, պասիվների այս կամ այն կառուցվածքի պայմաններում միավոր բաժնետոմսին բաժին ընկնող զուտ շահույթի համեմատական վերլուծության և ներդրում-

ների շահագործման կրիտիկական (շեմային) զուտ արդյունքի հաշվարկների շրջանակներում:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է արտադրական կազմակերպության ֆինանսների բովանդակությունը, ի՞նչ դրամական հարաբերություններ է ներառում:
2. Որո՞նք են ձեռնարկության ֆինանսների ֆունկցիաները, դրանց օբյեկտը և ոլորտը:
3. Ինչպիսի՞ դրամական ֆոնդեր են ստեղծվում և ֆինանսական ռեսուրսներ ձևավորվում արտադրական կազմակերպություններում:
4. Որո՞նք են առևտրային հաշվարկով գործող կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման սկզբունքները:
5. Ո՞րն է կազմակերպության պասիվների բովանդակությունը և ի՞նչ աղբյուրներով է համալրվում:
6. Ի՞նչ կապ կա ակտիվների ձևավորման աղբյուրների կառուցվածքի և սեփական ակտիվների շահութաբերության միջև:
7. Ի՞նչ է նշանակում ֆինանսական լծակ, դրա ուժը ինչո՞վ է պայմանավորված, և ինչպե՞ս կարելի է կառավարել:

ԳԼՈՒԽ 11

ՁԵՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

11.1. ՁԵՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ցանկացած բնույթի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ձեռնարկությունները անվերապահորեն կատարում են դրամական ծախսեր: Դրանց բնույթը, կազմն ու կառուցվածքը կախված են բազմաթիվ գործոններից: Մասնավորապես կարևոր դեր են կատարում տնտեսավարման կազմակերպարկական ձևը, ճյուղային պատկանելիությունը, ապրանքների ու կապիտալի շուկայում տնտեսավարող սուբյեկտների գրաված դիրքը, ներդրումային, ֆինանսական ու հաշվարկային քաղաքականությունը, ինչպես նաև օրենսդրորեն հարկային, վարկային, ապահովագրական և ֆոնդային ոլորտներում սահմանված կանոններն ու սկզբունքները:

Ըստ տնտեսական բովանդակության՝ բոլոր դրամական ծախսերը կարող են բաժանվել երեք խմբի՝ ծախսումներ, որոնք կապված են շահույթ կորզելու հետ, շահույթ կորզելու նպատակ չհետապնդող ծախսումներ, հարկադիր ծախսեր:

1. Շահույթ կորզելու նպատակին ծառայող ծախսերը ներառում են արտադրության սպասարկող անձնակազմի, արտադրանքի իրացման, աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման, ներդրումային ծախսերը:
2. Շահույթ կորզելու նպատակին չվերաբերող ծախսեր են սպառողական, բարեգործական ու հումանիտար բնույթի ծախսերը: Դրան կարելի է վերագրել ձեռնարկության աշխատողների խրախուսական վճարները, ոչ պետական ապահովագրական ֆոնդերին հատկացումները, սոցիալ-մշակութային ոլորտի զարգացման ծախսերը:
3. Հարկադիր ծախսեր են հարկերը և հարկային վճարումները, պետական արտաբյուջետային ֆոնդերին հատկացումները, պարտադիր ապահովագրության, պահուստների ստեղծման, տույժ-տուգանքների ծախսերը:

Անմիջականորեն շահույթի ստացման խնդրի հետ կապված ծախսումները կազմված են նյութական ծախսերից, աշխատավարձից, վերադիր ծախսերից ու ներդրումներից:

Նյութական ծախսերն ընդգրկում են հումքի, հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների, վառելիքի ու էներգիայի ձեռքբերման դիմաց վճարումները, տարայի, պահեստամասերի, արագամաշ առարկաների, արտադրական բնույթի ծառայությունների վրա կատարված ծախսերը: Սովորաբար ծախսերի տվյալ խմբերը ձեռնարկության ընդհանուր ծախսումների մեջ ունեն բարձր տեսակարար կշիռ: Դրանց կառուցվածքը էապես պայմանավորված է ճյուղային պատկանելիությամբ: Օրինակ՝ նյութատար ճյուղերում և շինարարությունում հիմնական ծանրությունն ընկնում է հումքի և նյութերի գնումների վրա, տրանսպորտում՝ վառելիքի ու պահեստամասերի վրա: Այս խմբի ծախսերի ձևավորումը և ծավալը ուղղակիորեն կապված են շահույթի հետ, դրանց մակարդակով են պայմանավորված ձեռնարկության կայունությունն ու դիրքը շուկայում, արտադրանքի մրցունակությունը:

Նյութական ծախսերի փոխհատուցման համար ձեռնարկությունները պարտավոր են կատարել երկու պայման՝

1. արտադրանքը պետք է իրացվի,
2. արտադրանքի իրացումից հասույթը պետք է ժամանակին մուտք լինի ձեռնարկության դրամական հաշիվներին:

Նյութական ծախսերի որոշման հիմքը դրանց ձեռքբերման գինն է՝ առանց անուղղակի հարկերը հաշվի առնելու: Նյութական արժեքների հաշիվ վճարման պահանջագրում (հարկայն հաշվում) արտացոլված ձեռքբերման գինը կազմում է դրանց ելակետային ինքնարժեքը: Դրան գումարվում են փոխադրամթերման և պահպանման ծախսերը:

Աշխատանքի վարձատրության ծախսերն իրենցից ներկայացնում են ձեռնարկության աշխատողների դրամական և բնամթերային վճարումների ամբողջությունը: Ծախսերի այս խումբը բազմաշերտ է: Դրա մեջ մտնում են աշխատանքի վարձատրության ֆոնդը ձևավորող բոլոր ծախսերը, նյութական օգնությունը, պարգևավճարները, լրացուցիչ արձակուրդի համար վճարումները, միանվագ նպաստները, փոխհատուցման և այլ վճարները:

Վերադիր ծախսերի խումբը վերաբերում է վարչակառավարչական, կապալի, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի, օժանդակ արտադրության վրա կատարվող ծախսերին:

Ինվեստիցիաները ներառում են սեփական արտադրության ծավալը ընդլայնելու, ֆինանսական շուկայում շահույթ ստանալու նպատակով կատարվող կապիտալ ներդրումները: Դրանց բնույթը և կառուցվածքը կախված են ձեռնարկության որդեգրած կապիտալ ներդրումների քաղաքականությունից:

11.2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԸ

Առևտրական հաշվարկով գործող բոլոր արտադրական ձեռնարկությունների դրամական կուտակումների և, հատկապես, շահույթի ձևավորման գլխավոր աղբյուրը արտադրանքի իրացումից ստացվող հասույթն է: Ավելի կոնկրետ՝ հասույթի այն մասը, որը մնում է տվյալ իրացման վրա կատարված նյութական, աշխատանքային և դրամական ծախսերը փոխհատուցելուց հետո: Այդ կապակցությամբ, տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտի կարևորագույն խնդիրներից մեկն է առավելագույն փոքր ծախսումներով ավելի մեծ գումարի շահույթի ստացումը:

Արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսումներն են որոշում ինքնարժեքի մակարդակն ու կառուցվածքը:

Ձեռնարկությունները ըստ ամենայնի շահագրգռված են շուկայական պահանջարկ ունեցող համապատասխան կառուցվածքի բարձրորակ արտադրանքի արտադրության ու իրացման գործում, ինչը անդրադառնում է շահույթի մեծության վրա, որը այլ հավասար պայմաններում ուղղակի կախվածության մեջ է այդ արտադրանքի իրացման ծավալից:

Որպես զուտ եկամտի հիմնական մասի դրամական արտահայտություն՝ շահույթը իրենից ներկայացնում է համապատասխան գներով արտադրանքի իրացումից զուտ

հասույթի և նրա լրիվ ինքնարժեքի տարբերությունը: Բնականաբար, շահույթի ծավալի աճը առաջին հերթին կախվածության մեջ է արտադրության ծախսումների կրճատումից և իրացման ծավալների ընդլայնումից:

Ինչպես նշվեց, արտադրանքի արտադրության ու իրացման ծախսերը, որոնք ձևավորում են ինքնարժեքը, բազմազան են ու բնույթով տարբեր: Դրանք կազմված են արտադրության համար օգտագործվող բնական ռեսուրսների, հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, վառելիքի, էներգիայի արժեքից, հիմնական ֆոնդերի մաշվածքի, աշխատանքային, շահագործման այլ ծախսերի մեծությունից, ինչպես նաև արտաարտադրական (կոմերցիոն) ծախսերից:

Արտադրության ծախսումների կազմն ու կառուցվածքը պայմանավորված են արտադրանքի բնույթով, արտադրության պայմաններով, նյութական ու աշխատանքային ծախսումների հարաբերակցությամբ և այլ նորմաներով:

Իրենց տնտեսական բովանդակությամբ և արտադրությանն ու իրացմանը մասնակցելու առանձնահատկություններով արտադրության ծախսերը ընդունված է ամփոփել հինգ խմբերում՝ նյութական ծախսեր, աշխատանքի վարձատրության ծախսեր, հատկացումներ սոցիալական կարիքներին, հիմնական ֆոնդերի (ոչ ընթացիկ ակտիվների) մաշվածք և այլ ծախսումներ:

Նյութական ծախսումների խումբը ամենաբազմազանն ու ծավալունն է: Ներառում է գնովի հումքն ու նյութերը. դրանց վերաբերում են հիմնական և օժանդակ նյութերը, կոմպլեկտավորող իրերն ու կիսաֆաբրիկատները, բոլոր տեսակի վառելիքը, տարան, վերանորոգման պահեստամասերը, արագամաշ առարկաները, էներգիայի բոլոր տեսակները և այլն:

Այս խմբում արտացոլվող նյութական ռեսուրսների արժեքը ձևավորվում է դրանց ձեռքբերման գներից, առանց ավելացված արժեքից հարկի, վերադիրներից և կոմիսիոն վճարներից, ինչպես նաև ապրանքային բորսաներին, բրոքերներին, մաքսային ծառայություններին վճարումներից և կողմնակի կազմակերպություններին փոխադրման, պահպանման և այլ ծախսերից:

«Աշխատանքի վարձատրության ծախսերը» բավականաչափ բազմազան են: Այստեղ ներառվում են աշխատավարձի վճարումները՝ ըստ վարձատրության համակարգի, պարգևատրային ընդունված ձևերի, փոխհատուցման բնույթի վճարումները, անվճար սննդի, կոմունալ-բնակարանային ծառայությունների, արտահագուստի, արձակուրդի փոխհատուցման և բազմաթիվ այլ ծախսեր:

Պետք է նկատի ունենալ, որ ձեռնարկության աշխատողներին տրվող բոլոր վճարումները ներառվում են արտադրանքի ինքնարժեքի մեջ, բացառությամբ աշխատանքի վարձատրության այն ծախսերի, որոնք պարգևների, նյութական օգնության, կանանց լրացուցիչ արձակուրդի, ուղեգրերի և որոշ այլ վճարների գծով տրվում են հատուկ ֆոնդերի և նպատակային ստացումների հաշվին:

Արտադրության ու իրացման ծախսերի մեջ մտնող հաջորդ ծախսային խումբը սոցիալական կարիքների համար հատկացումներն են՝ վճարումները պետական սոցիալական ապահովագրության, կենսաթոշակային, զբաղվածության, ապագայում նաև պարտադիր բժշկական ապահովագրության ֆոնդերին:

Այդ հատկացումների չափերը որոշվում են ինքնարժեքի մեջ ներառվող աշխատավարձի ֆոնդի նկատմամբ սահմանված նորմատիվներով:

Արտադրանքի ինքնարժեքին վերաբերող ծախսերի մեջ բավականաչափ մեծ են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի հետ կապված ամորտիզացիայի հատկացումները: Ըստ օգտակար շահագործման տարիների՝ այդ ծախսերի մեծությունը կարող է ունենալ տարբեր արտահայտություն՝ կախված մաշվածքի հաշվարկման համար կիրառվող եղանակներից:

Շատ ավելի բազմազան են արտադրության ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի հինգերորդ՝ «Այլ ծախսումները»: Նախ և առաջ այդ խմբին են վերաբերում հարկերի և տուրքերի որոշ տեսակներ, արտադրական ֆոնդերին վերաբերող գույքի և աշխատավորների առանձին կատեգորիաների պարտադիր ապահովագրության, հայտնագործությունների և գյուտերի, ռացիոնալիզատորական մշակումների, գործուղումների, հակահրդեհային և պահակային ապահովության, կադրերի պատրաստման և վերապատրաստման, ստացված վարկերի դիմաց վճարվող տոկոսային, վարձակալության, ոչ նյութական ակտիվների մաշվածքի հետ կապված և որոշ այլ ծախսեր:

Ֆինանսական կառավարման գործում շահույթի մաքսիմալացման և աճի տեմպերի արագացման հարցում ընդունվում է երկու մոտեցում:

Շահույթի ծավալի մաքսիմալացման խնդիրը լուծելու համար առավել արդյունավետ է արտադրանքի իրացումից հասույթի համադրումը սահմանային ծախսումների հետ: Այդ նպատակով արտադրության ու իրացման ծախսերի դասակարգումն իրականացվում է ըստ արտադրության ծավալից կախվածության հատկանիշի: Տվյալ մոտեցման պայմաններում ձեռնարկության ընդհանուր ծախսումների մեծությունը ինչպես արտադրական, այնպես էլ արտաարտադրական, անկախ այն հանգամանքից, թե դրանք մասնակցում են ինքնարժեքի ձևավորմանը թե ֆինանսական արդյունքների գոյացմանը, ստորաբաժանվում է երեք խմբի.

1. Փոփոխում (կամ համամասնական) ծախսումների, որոնք ավելանում կամ պակասում են արտադրության ծավալին համամասնորեն: Տեսականորեն դրանք գլխավորապես վերաբերում են հումքի և նյութերի ծախսին (գնումներին), էլեկտրաէներգիայի սպառմանը, տրանսպորտային, առևտրակոմիսիոն և այլ ծախսումներին, ինչպես նաև հիմնական աշխատավարձին, սոցիալական հատկացումներին և այլն:

Ձեռնարկչատիրության պրակտիկայում իրացումից հասույթի և փոփոխում ծախսերի տարբերությունը կարող է դրսևորվել ավելի մեղմ ձևով՝ ծախսերը արտադրության աճի տեմպերի համեմատ երբեմն համամասնորեն չավելանալու պատճառով: Օրինակ՝ հումքի գնումների ծավալը նկատելիորեն մեծանալու դեպքում մատակարարները հաճախ ձեռնարկության նկատմամբ կիրառում են գնային զեղչեր, արդյունքում արժեքային արտահայտությամբ հումքի ծախսերը աճում են արտադրության ավելացման տեմպերից պակաս չափերով:

2. Հաստատում (ոչ համամասնական կամ հաստատագրված) ծախսումներ, որպիսիք արտադրության ու իրացման ծավալի աճի տեմպերին անմիջականորեն չեն հետևում: Այդպիսի ծախսեր են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը (ամորտիզացիան), վարկային տոկոսների գումարը, վարչակառավարչական ապարատի պահպանման ծախսերը և այլն:

Հաստատում ծախսերը կախված չեն արտադրանքի իրացումից ստացվող հասույթից այնքան ժամանակ, քանի դեռ արտադրության հետագա աճի շահերը չեն պահանջում արտադրական կարողությունների ընդլայնում, աշխատողների և կա-

ռավարման ապարատի անձնակազմի ավելացում: Ի տարբերություն փոփոխումի՝ հաստատուն ծախսերի մեծ մասը արտադրության ծավալները փոքրանալու պայմաններում այնքան էլ հեշտությամբ հնարավոր չէ կրճատել: Իրականում, գործունեության ծավալները կրճատվելու պայմաններում ձեռնարկությունները ստիպված են անորոշիզացիա հաշվարկել նախկին չափերով, տոկոսներ վճարել նախկինում ստացված վարկերի դիմաց, պահել վարչակառավարչական ապարատ և հաշվարկել աշխատավարձ, իրականացնել սպասարկման ծախսեր, քանի որ այդ անձնակազմը միանգամից կրճատել հնարավոր չէ:

Բացի այդ առանձին ծախսեր մի ձեռնարկության համար կարող են համարվել փոփոխուն, մյուսների համար՝ հաստատուն: Ավելի ստույգ՝ աշխատանքի վարձատրության գործավարձային ձևի դեպքում աշխատավարձը փոփոխուն ծախս է, իսկ կայուն դրույքի դեպքում՝ հաստատուն:

3. Խառը ծախսեր, որոնք միաժամանակ պարունակում են հաստատուն և փոփոխուն տարրեր: Նման ծախսերի օրինակ կարող են հանդիսանալ փոստ-հեռագրային, ընթացիկ վերանորոգման, գործուղումների և այլ ծախսերը: Ընդհանուր հաշվարկներ կատարելիս դրանք կարելի է անտեսել: Իսկ կոնկրետ խնդիրներ պարզելիս, եթե պահանջվում է որոշակի ճշգրտություն, հարկ է լինում դրանցում որոշել փոփոխուն և հաստատունի բաժինը և համամասնորեն հաշվի առնել խմբերում:

Ուսումնասիրվող խնդիրը չբարդացնելու նպատակով կարելի է նաև վերացարկման միջոցով բացառել ավելացված արժեքի հարկը և միանգամից ելակետ ընդունել զուտ հասույթը և շահութահարկը:

Ի՞նչ նպատակ է հետապնդում ծախսերի նման դասակարգումը: Իրացումից հասույթի համադրումը գումարային, ինչպես նաև փոփոխուն և հաստատուն ծախսերի հետ օգտագործվում է շահույթի մաքսիմալացման և նրա աճի առավել բարձր տեմպ ապահովելու հաշվարկներում: Այս առումով էլ ծախսումների նման դասակարգումը օգնում է շահույթի մաքսիմալացման և աճի առավել բարձր տեմպերի ապահովման խնդրի լուծմանը՝ կապված դրանց հարաբերական կրճատման հետ: Բացի այդ, այդպիսի դասակարգումը հնարավորություն է ստեղծում պատկերացում կազմել ծախսերի փոխհատուցելիության և ձեռնարկության ֆինանսական կայունության պաշարի մասին շուկայական պայմանների վատացման և այլ դժվարությունների հարուցած բարդություններին դիմակայելու համար:

Գրաֆիկորեն տվյալ արտադրական ծրագրի ծավալի պայմաններում փոփոխուն գումարային ծախսերի վարքը դրսևորվում է հորիզոնական առանցքի նկատմամբ որոշակի թեքություն ունեցող ուղիղ գծի տեսքով և կախվածության մեջ է միավոր արտադրանքի վրա փոփոխուն ծախսերի մեծությունից: Որքան թեքման անկյունը փոքր է, այնքան բիզնեսի համար պայմանները նպաստավոր են:

Հաստատուն ծախսերը բոլոր այն ժամանակահատվածներում (արտադրական ծրագրի ծավալից կախված), երբ չի պահանջվում դրանց ավելացման թռիչք, արտահայտվում են հորիզոնական գծի տեսքով: Օրինակ՝ նշված ծախսերն ընդունենք 12000 հազ. դրամ: Այդ գումարը արտադրության ծավալի որոշակի սահմաններում աճի կամ նվազման դեպքում կմնա հաստատուն, սակայն կփոխվի միավոր արտադրանքի վրա նման ծախսերի հարաբերական մեծությունը:

Խառը ծախսերը, ինչպես ասվեց, ներառում են փոփոխունի և հաստատունի

տարրեր: Այդպիսիք են, մասնավորապես, էլեկտրաէներգիայի ծախսը, որը օգտագործվում է ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ընդհանուր կարիքների համար, կայուն դրույք ունեցող վաճառողների աշխատավարձը և այլն: Վերլուծություն կատարելիս դրանք հարկավոր է սկզբնական հաշվառման տվյալներով տարանջատել:

Փոփոխություն և հաստատուն ծախսերի մեջ խառը տարանջատված ծախսերը հաշվի առնելով՝ ստացվում է նախատեսված արտադրական ծրագրի ընդհանուր արժեքը (ինքնարժեքը): Այդ երկու խմբերի՝ արտադրական ծրագրի ծավալային փոփոխության հետ կապված վարքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաստատուն և փոփոխություն ծախսերը, միավոր արտադրանքի հաշվով, անփոփոխ (կայուն) են միայն որոշակի ժամանակի ընթացքում, արտադրության ու իրացման համապատասխան ծավալների դեպքում:

Այժմ կոնկրետ հաշվարկներով ցույց տանք փոփոխություն և հաստատուն ծախսերի վարքագիծը արտադրության ու իրացման ծավալների փոփոխության դեպքում:

Ընդունենք, որ հաստատուն ծախսերի 12 մլն ծավալը անփոփոխ է մնում արտադրանքի 0–4 հազար միավոր արտադրության ու իրացման սահմաններում: Երբ արտադրության ծավալը մեծանում է, գումարային փոփոխություն ծախսերը աճում են միավորի հաշվով, ծախսը մնում է նույնը՝ անփոփոխ: Ծավալը նվազելու դեպքում գումարայինը պակասում է, միավորինը՝ մնում նույնը: Այդ ընթացքում հաստատուն ծախսերը դրսևորում են հետևյալ վարքագիծը: Արտադրության ծավալի մեծանալու դեպքում գումարայինը մնում է անփոփոխ, միավորի հաշվով նվազում է: Կրճատվելու դեպքում գումարայինը չի փոխվում, միավորի հաշվով աճում է:

Ընդունենք նաև, որ արտադրանքի թողարկման 0–4 դիապազոնի սահմաններում, երբ հաստատուն ծախսերը էական փոփոխության չեն ենթարկվում, պլանավորված է թողարկել 2 հազար միավոր արտադրանք՝ նախատեսելով 12000 հազ. հաստատուն և 28000 հազ. փոփոխություն ծախսեր: Միավորի հաշվով, հաստատուն ծախսերը կազմում են 6000 (12 մլն/2 հազ.), իսկ փոփոխություն ծախսերը՝ 14000 (28 մլն/2 հազ.): Եթե հաջորդ ժամանակաշրջանի համար նախատեսվել է 4000 միավոր արտադրանք, կամ փաստացի թողարկվել է այդքան, ապա փոփոխություն ծախսերի ընդհանուր գումարը կհասնի 56000 հազ. դրամի՝ միավորի հաշվով դարձյալ մնալով 14000, իսկ հաստատուն ծախսերը կմնան 12000 հազ., բայց միավոր արտադրանքի հաշվով կպակասեն կրկնակի և կկազմեն 3000 դրամ:

Ծախսերի վարքագծի նման փոփոխությունը ֆինանսական պլանավորման ժամանակ պետք է անպայման հաշվի առնել. դա անտեսելը բիզնեսի համար կարող է ճակատագրական լինել:

11.3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԼԾԱԿ, ՀԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԼՇԱՐ

Ձեռնարկությունների և ֆիրմաների ֆինանսական պլանավորման առավել արդյունավետ մոտեցումներից մեկը գործառնական վերլուծությունն է, որը այլ կերպ կոչվում է «ծախսեր–ծավալ–շահույթ» վերլուծություն, ինչը բացահայտում է բիզնեսի հետևանքների կապը արտադրության ծախսերի և ծավալների հետ: Այդ վերլուծություն-

նր պարզաբանում է ձեռնարկության դրամական շրջապտույտի բոլոր փուլերում ֆինանսական կառավարողի առջև ծառայող հարցերը: Գործառնական վերլուծության համար ի վերջո հանգուցային են գործառնական լծակի, ֆինանսական կայունության պաշարի և շահութաբերության չեմի հարցերը, որոնք, ի տարբերություն արտաքին վերլուծության, ձեռնարկության համար առևտրային գաղտնիք են: Սիաժամանակ, գործառնական վերլուծությունը կառավարչական հաշվառման բաղկացուցիչ մասն է:

Կոնկրետ ժամանակաշրջանում, սովորաբար մեկ տարում, ձեռնարկության մասշտաբով ձևավորվող հասույթը (կանխիկ և անկանխիկ դրամական զանգվածը) իր վրա է կրում արժեթղթերի, ներդրողների, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի փոփոխության ազդեցությունը: Մյուս կողմից, այդ հասույթի հաշվին ծածկվում են աշխատավարձի, հումքի և նյութերի, փոփոխում վերադիր և հիմնական միջոցների (ոչ ընթացիկ ակտիվների) մաշվածքի ծախսերը (բոլորը միասին՝ գործառնական լծակ), վճարվում են հարկերը, և մնում է տնտեսական արդյունքը:

Ձեռնարկչատիրական գործունեության ընթացքում գործառնական (արտադրական, տնտեսական) լծակի գործողությունը արտահայտվում է այն բանում, որ արտադրության ու իրացումից հասույթի ցանկացած փոփոխություն ուղեկցվում է շահույթի ավելի արագ փոփոխությամբ:

Գործողությունը ցույց տալու համար վերցնենք հետևյալ օրինակը: Համարենք, որ կոշիկի արտադրության ձեռնարկությունում արտադրանքի իրացումից հասույթը առաջին տարում 40000 հազ. դրամ է: Արտադրության ընդհանուր ծախսերը կազմել են 36000 հազ. դրամ, որից փոփոխունը՝ 30000 հազ., հաստատունը՝ 6 հազ.:

Նշանակում է՝ շահույթը կազմել է 4000 հազ. դրամ (40000–36000): Պատկերացնենք, թե հասույթը աճում և հասնում է 46000 հազ. դրամի (15%): Նույնպիսի տեմպերով 15%–ով կավելանան փոփոխուն ծախսերը և կկազմեն 34500 հազ. դրամ (30000 + 4500): Հաստատուն ծախսերը փոփոխություն չեն կրում և մնում են 6000 հազ. դրամի մակարդակին: Գումարային ծախսերը այդ փոփոխությունների արդյունքում կհավասարվեն 40500 հազ. դրամի (34500 + 6000), իսկ շահույթը նախկին 4000 հազարի փոխարեն կդառնա 5500 հազ. դրամ կամ, նախորդի համեմատությամբ, 37,5%–ով ավելի: Ստացվում է, որ իրացումից հասույթը ավելացել է ընդամենը 15%–ով, իսկ շահույթը՝ 37,5%–ով:

Այս ամենի արմատները փոփոխում և հաստատուն ծախսերի ծավալի և կառուցվածքի մեջ են, ուստի կարելի է մշակել այդ ծախսերի տնտեսման խելամիտ մոտեցումներ:

Լուծելով շահույթի աճի առավելագույն տեմպի ապահովման խնդիրը՝ կարող ենք օգտագործել ոչ միայն փոփոխում, այլև հաստատուն ծախսերի ավելացման կամ պակասեցման հնարավորությունը և դրա արդյունքում որոշել շահույթի աճի տեմպը: Ընդունելով, որ փոփոխուն ծախսերը 15%–ով ավելանալուն զուգընթաց 2%–ով աճելու են նաև հաստատուն ծախսերը, կհանդգվենք, որ շահույթի աճի տեմպը մասամբ կնվազի և կկազմի 34,5% (հասույթ՝ 46000, փոփոխուն ծախսեր՝ 34500, հաստատուն ծախսեր՝ 6000+120, շահույթ՝ 5380, աճի տոկոս՝ 34,5%):

Ձեռնարկությունների ֆինանսական պլանավորման ժամանակ գործառնական լծակի ազդեցության ուժը որոշելու համար կատարվող պրակտիկ հաշվարկներում օգտագործվում է, այսպես կոչված, համախառն մարժայի հարաբերական հասկացու-

թյունը: Համախառն մարժայի մակարդակն իրենից ներկայացնում է իրացումից ստացված հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերության հարաբերությունը հասույթին: Համախառն մարժան իրացումից հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերությունն է: Այդ ցուցանիշը տնտեսագիտական գրականության մեջ կոչվում է ծածկման գումար: Նկատի է առնվում հաստատուն ծախսերի փոխհատուցումը հասույթի հաշվին: Բոլոր դեպքերում, ձեռնարկության համար ցանկալի է մարժայի այնպիսի տարբերակ, որը ոչ միայն ծածկի հաստատուն ծախսերը, այլև ձևավորի որոշակի շահույթ:

Ասվածը հիմք ընդունելով՝ որոշվում է գործառնական լծակի ազդեցության ուժը, որը հավասար է համախառն մարժայի և շահույթի հարաբերությանը՝

$$\eta \dot{E} \dot{\Delta} \delta = \frac{\Delta \dot{\Delta} \dot{\Delta}}{\tau} :$$

Մեր կողմից ընդունված պայմանների դեպքում ձեռնարկության գործառնական լծակի ուժը կազմում է 2,5 [(40000 – 30000) : 4000]: Դա նշանակում է, որ իրացումից հասույթի հնարավոր 15% աճի պայմաններում շահույթը կավելանա 37,5%–ով (2,5 x 15), հասույթը 8%–ով պակասելու դեպքում շահույթը կնվազի 20%–ով (2,5 x 8):

Շարունակության մեջ, եթե գործառնական լծակի ուժը մեկնաբանենք որպես համախառն մարժայի տոկոսային փոփոխություն, վաճառքից հասույթի ֆիզիկական ծավալի տվյալ տոկոսային փոփոխության պայմաններում բերված բանաձևը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$\eta \dot{E} \dot{\Delta} \delta = \frac{\Delta \dot{\Delta} \dot{\Delta} : \tau}{\Delta \dot{\Delta} : \delta} ,$$

Թ–ն իրացման ֆիզիկական ծավալն է:

Գործառնական լծակի ազդեցության ուժի բանաձևը հնարավորություն է տալիս պարզել, թե համախառն մարժան, նույնն է թե՛ ինվեստիցիաների շահագործման նետտո արդյունքը, որքանով է զգայուն արտադրանքի իրացման ֆիզիկական ծավալի փոփոխության հանդեպ:

Երբ իրացումից հասույթը նվազում է, գործառնական լծակի ազդեցության ուժը մեծանում է: Հասույթի՝ ամեն մի տոկոսով պակասելը հանգեցնում է ավելի ու ավելի բարձր տոկոսով շահույթի իջեցման:

Հակառակ գործընթացի պայմաններում, երբ հասույթը սկսում է ավելանալ, իսկ շահութաբերության շենը (ծախսերի ինքնափոխհատուցման կետը) հաղթահարվում է, գործառնական լծակի ուժը պակասում է, հասույթի ամեն մի տոկոս աճին հետևում է շահույթի ավելի ու ավելի պակաս տոկոսով ավելացում, միաժամանակ հաստատուն ծախսերի բաժինը նրանց ընդհանուր գումարի մեջ նվազում է:

Իրացումից հասույթի շահերից ելնելով կամ այլ տնտեսական պատճառներով, երբ հարկ է լինում հաստատուն ծախսերը որոշակիորեն ավելացնել, ձեռնարկությունը հարկադրաբար պետք է անցնի շահութաբերության նոր շեն: Շահութաբերության շենից մի փոքր անց գործառնական լծակի ազդեցության ուժը կունենա առավելագույն մեծություն, ապա աստիճանաբար կթուլանա և այդպես կշարունակվի մինչև հաստատուն ծախսերի նոր թափով ավելանալը և շահութաբերության շենի նորից հաղթահարումը:

Այդ ամենը, ի վերջո, դրական դեր կարող է ունենալ և օգտակար լինել ձեռնարկության ֆինանսական կառավարման համար: Կանխատեսվում են շահույթի տարեկան մեծությունը և շահութահարկի գումարը: Մշակվում է ձեռնարկության կոմերցիոն քաղաքականության հայեցակարգը: Հասույթի դիմամիկայի հոռետեսական կանխատեսումների դեպքում չի կարելի հաստատուն ծախսերը ուռճացնել այնքան, որքան գործառնական լծակի ազդեցության հզոր ուժի հետևանքով շահույթի կորուստը հասույթի ամեն մի տոկոսով պակասեցման պայմաններում կարտահայտվի բազմակիորեն ավելի գումարով: Այնուհանդերձ, եթե ձեռնարկությունը համոզվածություն ունի, որ առաջիկայում իր արտադրանքի նկատմամբ շուկայական պահանջարկը բարձրանալու հետևանքով հնարավոր է ծավալները մեծացնել, այնքան էլ հետևողականություն պետք չէ հաստատուն ծախսերը տնտեսելու հարցում, քանի որ հաստատուն ծախսերի մեծ բաժինը ապահովում է շահույթի աճի բարձր տեմպ:

Այդ ամենը մեզ համոզում է, որ գործառնական լծակի ազդեցության ուժը արտահայտում է նաև ձեռնարկչատիրական գործունեության ռիսկի աստիճանը. գործնականում որքան մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը, այնքան բարձր է ձեռնարկչատիրական ռիսկը: Սակայն ապացուցված է և ճշմարիտ, որ ով ռիսկի չի դիմում, նա հաջողության չի հասնում:

Հիմա, այդ ամենի հիման վրա, փորձենք որոշել ձեռնարկության ֆինանսական կայունության պաշարը, այլ կերպ՝ ապահովության սահմանը: Դրա համար նախապես անհրաժեշտ է իմանալ «շահութաբերության շեն» հասկացության բովանդակությունը, այլ կերպ՝ կրիտիկական (վտանգավոր), «մեռյալ» կետերը, ինքնափոխհատուցման, բեկման կետը:

Շահութաբերության շենը իրացումից հասույթի այնպիսի ծավալ է, որի առկայությամբ ձեռնարկությունը արդեն վնաս չի ունենա, բայց չի ունենա նաև շահույթ: Համախառն մարժան ճշգրտությամբ բավարարում է հաստատուն ծախսերը ծածկելուն, և շահույթը հավասարվում է զրոյի:

Աղյուսակ 11.3.1

Տվյալներ շահութաբերության շենը որոշելու համար

N	Ցուցանիշներ	հազ. դրամ	տոկոսներով՝ հասույթի նկատմամբ
1.	Իրացումից փաստացի հասույթը	40000	100 կամ 1
2.	Փոփոխուն ծախսեր	30000	75 կամ 0.75
3.	Համախառն մարժա	10000	25 կամ 0.25
4.	Հաստատուն ծախսեր	6000	
5.	Շահույթ	4000	

Համաձայն ընդունված կանոնների՝ շահույթը հավասար է համախառն մարժայի և հաստատուն ծախսերի տարբերությանը, հետևաբար, շահութաբերության շենը որո-

շելիս այդ տարբերությունը պետք է հավասար լինի զրոյի: Կամ նույնն է, թե՛ շահույթը հավասար է շահութաբերության շեմի և համախառն մարժայի հարաբերական արտահայտության արտադրյալի ու հաստատուն ծախսերի տարբերությանը, որը տվյալ դեպքում պետք է հավասար լինի զրոյի.

$$\zeta = \zeta \zeta \times \text{ՀՀՄ} - \text{Հծ} = 0,$$

$\zeta \zeta$ – շահութաբերության շեմ, ՀՀՄ – համախառն հարաբերական մարժա:

Այստեղից բխում է, որ շահութաբերության շեմը հավասար է հաստատուն ծախսերի և համախառն հարաբերական մարժայի հարաբերությանը.

$$\text{ԽԽ} = \frac{\text{ԾԻ}}{\text{ԾԾԶ}}:$$

Մեր օրինակում ձեռնարկության շահութաբերության շեմը կկազմի՝ $6000 : 0.25 = 24000,0$ հազ. դրամ: Նշանակում է՝ իրացումից հասույթի մեծությունը 24000 հազ. դրամի հասնելու պահից սկսած ձեռնարկությունը վերջապես հասնում է և՛ փոփոխում, և՛ հաստատուն ծախսերի փոխհատուցման: Ավելի մանրամասն արտահայտելու համար ընդունենք, որ հասույթի փաստացի մեծությունը արդյունք է հետևյալ բաղադրամասերի. միավոր արտադրանքի գինը՝ 8000 դրամ, իրացման ծավալը հատերով՝ 5000, հաստատուն ծախսերը՝ 6000 հազ., փոփոխում ծախսերը՝ 30000 հազ. դրամ (միավորի հաշվով՝ 6000 դրամ):

Իրացումից հասույթը՝ որպես քանակի և միավորի գնի արտադրյալ, կազմում է 40000 հազ. դրամ (5000×8000):

Ուղղակի հաստատուն ծախսերը 6000 հազ. լինելու պայմաններում գումարային (հաստատուն և փոփոխում) ծախսերի մեծությունը հավասար է հաստատուն ծախսերի և ընդհանուր քանակի ու միավորին ընկնող փոփոխում ծախսերի արտադրյալի գումարին, մեր օրինակում՝ $6000 + 5000 \times 6000$ հազ. = 36000 հազ. դրամ:

Շահութաբերության շեմը, ըստ վերևում կատարված հաշվարկի, 24000 հազ. դրամ հասույթի գումարն է, որը համապատասխանում է 3000 միավորին: Նման քանակությունը ապահովում է հաստատուն և փոփոխում ծախսերի լրիվ փոխհատուցում. 3001 միավոր իրացնելու պահից սկսած՝ ձեռնարկությունը կստանա շահույթ: Իրոք՝

$$(3000 \times 8000) - [(3000 \times 6000) + 6000000] = 0, \\ 24000000 - 18000000 - 6000000 = 0:$$

Ասվածի արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրակացության և օգտակար գործողությունների կատարման.

- հաշվելով, թե տվյալ գնի պայմաններում շահութաբերության շեմը արտադրանքի թողարկման (իրացման) ինչպիսի ծավալի (քանակի) է համապատասխանում՝ կստանանք արտադրության ծավալի կրիտիկական, շեմային կետը, որից պակաս արտադրելը ձեռնարկության համար ձեռնտու չէ, վերջինս անխուսափելիորեն վնաս կկրի: Սովորաբար կիրառվում են հետևյալ բանաձևերը.

$$\text{Շենային քանակը} = \frac{\text{Տվյալ ապրանքի շահութաբերության շենը}}{\text{իրացման ինը}},$$

մեր օրինակում՝ $24000000 : 8000 = 3000$:

$$\text{Շենային քանակը} = \frac{\text{Հաստատուն ծախսեր}}{\text{միավորի ին - միավորի փոփոխուն ծախսեր}},$$

մեր օրինակում՝

$$\text{ՇՔ} = \frac{6000000}{8000 - 6000} = 3000 :$$

Դժվար չէ նկատել, որ բերված երկու բանաձևերով ստացված արդյունքները կհամընկնեն միայն այն դեպքերում, երբ խոսք է գնում մեկ անուն արտադրանքի թողարկման մասին, որը պետք է միայն իր վաճառքից ստացված հասույթով լրիվությամբ ծածկի ինչպես փոփոխուն ծախսերը, այնպես էլ հաստատուն ծախսերի ամբողջությունը ձեռնարկության մասշտաբով:

Գործնականում, որպես կանոն, ձեռնարկությունները արտադրում և իրացնում են մեկից ավելի արտադրատեսակներ, ունեն լայն տեսականի՝ իրենց համապատասխան պարամետրերով և հաստատուն ծախսերի բաժնեմասերով: Ուրեմն, եթե տեսականին կազմված է մեկից ավելի արտադրատեսակներից, ապա շահութաբերության շեն (անվնասաբերություն) ապահովող արտադրության ծավալը որոշելիս պետք է ելնել հասույթի ձևավորմանը յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից և նրան բաժին ընկնող հաստատուն ծախսերի մեծությունից: Հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր արտադրատեսակի համար առանձին՝ ելնելով հետևյալ բանաձևից.

$$\text{Ապր. շենային քանակը} = \frac{\text{Ընդ. հաստ. ծ. x Տվ. ապր. տես. կշ. իրացման մեջ}}{\text{Ապրանքի ին - միավորի փոփոխուն ծախս}} :$$

Հաղթահարելով շահութաբերության շենը՝ ձեռնարկությունը ձեռք է բերում համախառն մարժայի լրացուցիչ գումար ստանալու հնարավորություն՝ կապված դրանից ավելի թողարկված ամեն մի միավոր ապրանքի թողարկման հետ: Բնականաբար, կծևավորվի շահույթի որոշակի զանգված՝ համապատասխան քանակին համամասնական: Անհրաժեշտություն է առաջանում կանխատեսել շահույթի տվյալ զանգվածը, որը որոշելու համար ելակետ կարող են ծառայել շահութաբերության շենը գերազանցող թողարկման ծավալը և յուրաքանչյուր միավորի մարժայի տեսակարար կշիռը համախառն մարժայի մեջ: Շահույթի այդ, հետևաբար և ցանկալի գումարը իրենից ներկայացնում է շահութաբերության շենից վեր արտադրանքի թողարկման (իրացման) ծավալի և վաճառքի ենթակա յուրաքանչյուր միավոր ապրանքին ընկնող մարժայի արտադրյալը՝

$$\tau = \Delta^2 \vartheta \times \frac{\Theta \vartheta}{i^2 \vartheta},$$

DUՔ – շահութաբերության շենից ավելի արտադրանքի թողարկում,

ՎԱՔ – վաճառվող ապրանքների ընդհանուր քանակ:

Ինչպես արդեն համոզվել ենք, գործառնական լծակի ազդեցության ուժը առավելագույն է շահութաբերության շեմի մոտակայքում և աստիճանաբար թուլանում է դրանից հեռանալուն, իրացման ծավալի և շահույթի զանգվածի ավելացմանը զուգընթաց այնքան, որքան նրանց գումարի մեջ հաստատուն ծախսերի տեսակարար կշիռը նվազում է:

Այժմ հնարավոր է որոշել ֆինանսական կայունության պաշարը՝ որպես շահութաբերության շեմից բխող հասկացություն: Կարող ենք այդ անել նախորդ հաշվարկներում օգտագործված և նոր պայմանական տվյալների հիման վրա: Ենթադրենք, թե մեր ընդունած ընդհանուր 40000 հազ. դրամ իրացումը կազմված է երկու անուն ապրանքներից՝ x և y, և դրանց հետ կապված ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը (աղյուսակ 11.3.2):

Աղյուսակ 11.3.2

Ելակետային տվյալների շահութաբերության շեմի և ֆինանսական կայունության պաշարի հաշվարկի համար

N	Ցուցանիշները	X ապրանք	Y ապրանք	D	Ընդամենը
1.	Իրացումից հասույթը	18000 հ.դ. (1.0)	22000 հ.դ. (1.0)	1	40000 հազ.
2.	Փոփոխուն ծախսերը	16000 հ.դ. (0.89)	14000 հ.դ. (0.64)	0.75	30000 հազ.
3.	Համախառն մարժան	2000 հ.դ. (0.11)	8000 հ.դ. (0.36)	0.25	10000 հազ.
4.	Հաստատուն ծախսերը երկուսը միասին			–	6000 հազ.
5.	Շահույթը երկուսը միասին			–	4000 հազ.

Շահութաբերության շեմը տվյալ պարագայում հավասար է 24000 հազ. դրամի (6000:0,25): Փաստացի հասույթի և շահութաբերության շեմի տարբերությունը կազմում է ֆինանսական կայունության պաշարը: Երբ հասույթի ծավալը իջնում է շահութաբերության շեմից ցածր մակարդակի, ձեռնարկության ֆինանսական դրությունը վատթարանում է, առաջանում է լուծարելի ակտիվների դեֆիցիտ:

Կոնկրետ թվերով՝ ֆինանսական կայունության պաշարը հավասար է 16000 հազ. դրամի (40000–24000): Դա հաճախ արտահայտվում է տոկոսներով՝ ընդհանուր հասույթի նկատմամբ, որը տվյալ դեպքում 40% է: Սա նշանակում է, որ ձեռնարկությունը կարող է դիմանալ հասույթի փաստացի մակարդակի 40% կամ 16000 հազ. դրամի անկման, առանց լուրջ ֆինանսական դժվարություն կրելու և վտանգավոր հետևանքների:

Մեր օրինակում իրացումից հասույթի 40 միլիոն դրամի գումարը ձևավորվում է վաճառված երկու ապրանքներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր շահութաբերության շեմը, որը գործնականում հաշվարկելը բավականաչափ կարևոր է բիզնեսի մեջ կողմնորոշվելու համար: Առանձին ապրանքատեսակների հաշվով շահութաբերության շեմը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ կոնկրետ դրանց վերաբերող

հաստատուն ծախսերի գումարը, ինչը մեր օրինակում արտահայտված է երկուսի համար մեկ թվով և կազմում է 6000 հազ. դրամ:

Բաշխումը ըստ ապրանքատեսակների կատարվում է ընդհանուր հասույթի ապահովման գործում դրանց ունեցած դերից ելնելով: Տվյալ դեպքում X ապրանքին բաժին է ընկնում ընդհանուր հասույթի 45%–ը (18000 x 100 : 40000), իսկ Y–ին՝ 55%–ը (22000 x 100 : 40000):

Նշված տոկոսներին համապատասխան՝ հաստատուն ծախսերը բաշխվում են երկու ապրանքատեսակների միջև (համամասնական մոտեցմամբ): Արդյունքում կստանանք, որ x ապրանքին պետք է վերագրել 2700 հազ. դրամի հաստատուն ծախս՝

$$\frac{6000 \times 45}{100}, \text{ իսկ } y\text{-ին՝ } 3300 \text{ հազ. դրամի՝ } \frac{6000 \times 55}{100} : \text{ Այսպիսով, } x \text{ տեսակի ապրանքի}$$

շահութաբերության շեմը կկազմի 24545(2700 : 0.11), իսկ y ապրանքինը՝ 9167(3300 : 0.36) հազ. դրամ:

Այս թվերը համեմատելով վերևում բերված աղյուսակի թվերի հետ՝ կտեսնենք, որ x ապրանքատեսակը, որի ծավալը ընդհանուր հասույթի մեջ 18000 հազ. դրամ է (45%), իր շահութաբերության շեմին դեռևս չի հասել, իսկ y տեսակը (22000 հազ. կամ 55%) վաղուց է հատել շահութաբերության շեմը և տվել է 4700 հազ. դրամի շահույթ, որից 700 հազ. դրամը տրամադրվել է 1–ին ապրանքի արտադրության ու իրացման վնասը ծածկելու նպատակին [18000 – (16000 + 2700)], իսկ 4000 հազ. դրամը արտացոլվել է ընդհանուր արդյունքում՝ որպես շահույթ: Ստացվում է, որ y ապրանքը բնութագրվում է շահութաբերության ավելի ցածր շեմով, ծախսերը արագ են փոխհատուցվում, այլ հավասար պայմաններում ունի գերակայություն, արտադրությունն ավելի ձեռնտու է, քան x–ինը: Սակայն գործնականում x ապրանքի արտադրությունից լրիվ հրաժարվելը կնշանակի հաստատուն ծախսերի փոխհատուցման ամբողջ ծանրությունը դնել y–ի վրա և 6000 հազ. դրամը լրիվությամբ փոխհատուցել նրա հասույթից:

Այդ դեպքում նրա շահութաբերության շեմը կավելանա և կհասնի մինչև 16670 հազ. դրամի $\left(\frac{6000 \cdot \tilde{N}^{3\%}}{0.36}\right)$. համարյա կրկնապատկվում է: y ապրանքատեսակի արտա-

դրության նման աճ ապահովելն այնքան էլ հեշտ գործ չէ, նրա ֆինանսական ամբողջական պաշարը միայնակ արտադրության պայմաններում բավականին կապակասի: Երկուսի միաժամանակյա արտադրությունը ապահովում է շահութաբերության շեմից շատ ավելի հասույթ և 40% ֆինանսական ամբողջական պաշար (16000 հազ. դրամ). միաժամանակ x ապրանքը հաստատուն ծախսերի բեռի մի մասը վերցնում է իր վրա: Մյուս կողմից, տեսականու և դրա կառուցվածքի հետ կապված խնդիրները սերտորեն առնչվում են պահանջարկի և շուկայական իրադրության հետ, ինչը անտեսել չի կարելի առօրյա գործունեությունը իրականացնելիս:

Գործնականում հնարավոր է, որ ձեռնարկության ղեկավարությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ ապրանքատեսակի շուկայական պահանջը մեծ է, նպատակահարմար չի գտնում առաջինի արտադրությունը ծավալել և, նույնիսկ, համարձակվում է այն արտադրությունից լրիվ հանել ու շեշտը դնել y–ի ընդլայնման վրա, x արտադրանքի դադարեցման հետևանքով ազատված միջոցները

ուղղել կամ y -ի ավելացմանը, կամ խնայել: Խնայելը կապված է պորբլեմների հետ, քանի որ արտադրության ու իրացման ծավալների մեծացումը որոշակի փոփոխություն պահանջում է նաև փոփոխուն ծախսերի աճ և հաստատուն ծախսերի թռիչք:

Այսպիսով՝ ձեռնարկության ֆինանսական վիճակի, գրավչության, հուսալիության և ընդհանրապես իմիջի համար կարևոր է իմանալ հետևյալը. եթե ձեռնարկությունը ունի 10%-ից ոչ պակաս ֆինանսական ամրություն, գործառնական լծակի ազդեցության բավարար ուժ, ակտիվների տնտեսական շահութաբերության բարձր մակարդակ, դիֆերենցիալի նորմալ և ֆինանսական լծակի ուսի հանգիստ մակարդակ, ապա դա կհետաքրքրի ներդրողներին, կրեդիտորներին, ապահովագրական ընկերություններին և այլոց:

Առևտրային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար կարևորագույն խնդիր է տվյալ կապիտալ ծախսումների պայմաններում առավելագույն շահույթի ստացումը, ինչը ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել ծախսերի այնպիսի կոմբինացիա, որի դեպքում հնարավոր բոլոր տարբերակներից շահույթը ամենամեծն է: Ինչպես արդեն ասվել է, գործառնական լծակի ազդեցության ուժը ուղղակիորեն կախված է հաստատուն ծախսերի հարաբերական մեծությունից: Խոշոր ծավալի արտադրական ֆոնդեր (ոչ ընթացիկ ակտիվներ) ունեցող ձեռնարկություններում բավականաչափ մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը:

Տնտեսական անկայունության, գնորդների գնողունակության անկման և ինֆլյացիայի բարձր տեմպերի պայմաններում այդպիսի ձեռնարկությունների համար առաջանում է շահույթի ծավալների արագ անկման պոտենցիալ վտանգ: Նշված պատճառներով իրացման ծավալների մասնակի կրճատումներն անգամ հնարավոր են դարձնում անցումը վնասաբերության: Ինքնարժեքի կազմում փոփոխուն ծախսերի ցածր մակարդակը, բնականաբար, միավոր արտադրանքի հաշվով նրա հարաբերական փոքրությունը անդրադառնում են համախառն մարժայի գործակցի և մյուս գործոնների վրա: Ծախսերի կառուցվածքի ընտրության տարբերակների առկայության պայմաններում օգտակար է ունենալ բարձր փոփոխուն և ցածր հաստատուն ծախսերի հարաբերական մակարդակ:

Գործնականում նման մոտեցումը միանշանակ չէ: Առավելություններ ու թերություններ կան ցանկացած տարբերակի դեպքում. ընտրությունը պետք է պայմանավորված լինի ձեռնարկության ֆինանսական նպատակներից, ելակետային վիճակից ու այլ հանգամանքներից:

Շարադրվածի արդյունքում կատարվող հետևությունների մեջ համոզվելու և գործնականորեն հիմնավորելու համար կատարենք հաշվարկ մի քանի տարբերակով:

Աղյուսակ 11. 3.3

Արդյունքի հաշվարկ, երբ իրացումը աճում է, և հաստատուն ծախսերը մնում են անփոփոխ

N	Ցուցանիշները	Տարբերակները			
		I	II	III	IV
1.	Հասույթը իրացումից (հազ. դրամ)	40000	44800 (+12%)	50176 (+12%)	56197 (+12%)
2.	Փոփոխումն ծախսերը (հազ. դրամ)	30000	33600 (+12%)	37632 (+12%)	42148 (+12%)
3.	Համախառն մարժա (հազ. դրամ)	10000	11200	12544	14044
4.	Հաստատուն ծախսերը (հազ. դրամ)	6000	6000	6000	6000
5.	Շահույթը (հազ. դրամ)	4000	5200	6544	8044
6.	Շահույթի աճը (տոկոսներով)	–	30	26	23
7.	Գործառնական լծակի ազդեցության ուժը	2,5	2,3	1,9	1,7
8.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ)	24000	24000	24000	24000
9.	Ֆինանսական կայունության պաշարը (հազ. դրամ – %)	16000 40%	20800 46,4%	26176 52,2%	32197 57,3%

Հաշվարկի տվյալներից երևում է, որ իրացումից հասույթի՝ ըստ տարիների հավասարապես աճելու պայմաններում, երբ հաստատուն ծախսերը մնում են անփոփոխ, ինչպես շահույթը, այնպես էլ ֆինանսական կայունության (ամրության) պաշարը տարեցտարի դրսևորում են աճի տեմպերի նվազման միտում: Եթե իրացումը 12%–ով ավելանալու դեպքում երկրորդ տարվա շահույթի աճը կազմում է 30%, երրորդ տարում իրացման աճի նույնպիսի տեմպը ապահովում է շահույթի 26, հաջորդ տարում՝ 23%–ի ավելացում: Միաժամանակ աստիճանաբար թուլանում է գործառնական լծակի ազդեցության ուժը. առաջին տարի՝ 2,5, երկրորդ տարի՝ 2,3, երրորդ տարի՝ 1,9 և չորրորդ տարի՝ 1,7:

Աղյուսակ 11.3.4

Արդյունքի հաշվարկ, երբ իրացումը մնում է նույնը, հաստատուն ծախսերը աճում են

N	Ցուցանիշները	Տարբերակները			
		I	II	III	IV
1.	Իրացումից հասույթը (հազ. դրամ)	40000	40000	40000	40000
2.	Փոփոխումն ծախսեր (հազ. դրամ)	30000 (075)	30000 (075)	30000 (075)	30000 (075)
3.	Համախառն մարժա (հազ. դրամ)	10000 (025)	10000 (025)	10000 (025)	10000 (025)
4.	Հաստատուն ծախսեր. • ումարը՝ հազ. դրամ • աճի %՝ առաջին տարբ. նկատմ.	6000	6120 2	6900 15	7200 20
5.	Շահույթը (հազ. դրամ)	4000	3880	3100	2800
6.	Գործառնական լծակի ազդեցության ուժը	2,5	2,57	3,23	3,57
7.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ)	24000	24480	27600	28800
8.	Ֆինանսական կայունության պաշարը. • (հազ. դրամ) • %՝ հաս–ի նկատմ.	16000 40	15520 38,8	12400 31,0	11200 28,0

Պարզվում է, որ առաջին տարում ձեռնարկությունը հաղթահարել է շահութաբերության շեմը, ստանում է բավականաչափ շահույթ և ունի ֆինանսական կայունության հուսալի պաշար՝ 24000 հազ. դրամ կամ հասույթի 40%–ին հավասար: Երկրորդ տարում հաստատուն ծախսերի աննշան (2%) աճը համզեցրել է շահույթի որոշ նվազման և գործառնական լծակի ազդեցության ուժի մեծացման: Ֆինանսական կայունության պաշարը կրճատվել է, սակայն լուրջ հետևանքներ չեն առաջացել: Հաջորդ տարում հաստատուն ծախսերը ավելացել են ավելի մեծ չափերով, արդյունքում շահութաբերության շեմը նկատելիորեն բարձրացել է, իսկ շահույթը՝ նվազել, գործառնական լծակի ուժը էլ ավելի է մեծացել: Գրեթե նույնպիսի տեղաշարժեր են առաջացել նաև չորրորդ տարբերակում: Այնուամենայնիվ, ձեռնարկությունը շարունակում է մնալ շահութաբեր և ունի ֆինանսական կայունության բավարար պաշար (28%), հաստատուն ծախսերի տեղաշարժը առայժմ լուրջ բացասական հետևանքներ չի առաջացրել:

Մեզ համար արդեն որոշակի է, որ շահութաբերության շեմի վրա ազդում են երեք կարևորագույն գործոններ: Դրանք են արտադրանքի (ապրանքի) իրացման գինը, միավոր արտադրանքի հաշվով՝ փոփոխուն ծախսերի մեծությունը և հաստատուն ծախսերի ամբողջական գումարը: Հաստատուն ծախսերի մակարդակը ձեռնարկչատիրական ռիսկի պոտենցիալ է, և վերջինս ուղիղ համեմատական է ծախսերի մակարդակին: Միաժամանակ, որքան բարձր են հաստատուն ծախսերը, այնքան մեծ են շահութաբերության շեմն ու ձեռնարկչատիրական ռիսկը: Նշված երեք գործոնների միջև փոխադարձ կապը բնութագրվում է հետևյալ կերպ.

N	Գործոնները	Գործոնի փոփոխությունը	Շահութաբերության շեմը
1.	Իրացման ինը	Բարձրանում է, Իջնում է	Բարձրանում է, Իջնում է
2.	Միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերը	Բարձրանում է, Իջնում է	Բարձրանում է, Իջնում է
3.	Հաստատուն ծախսերի ամբողջական ումարը	Բարձրանում է, Իջնում է	Բարձրանում է, Իջնում է

Ինչպես արդեն ասվել է, հաստատուն ծախսերն իրենց բնույթով և առանձնահատկություններով կրում են ուղղակի և անուղղակի հատկանիշներ: Մի մասի մեծությունը կոնկրետ արտադրատեսակների համար պարզ է և հեշտ որոշվող, օրինակ՝ այն սարքավորումների ամորտիզացիան (մաշվածքը), որոնք անմիջականորեն մասնակցում են հենց տվյալ արտադրանքի պատրաստմանը, վարպետների, արտադրամասի պետի, արտադրամասի պահպանման ծախսերը և այլն: Անուղղակի հաստատուն ծախսերը վերաբերում են ընդհանուր ձեռնարկությանը՝ ղեկավարության դրույքները, հաշվային ապարատի և այլ ծառայությունների պահպանումը, վարչական շենքերի մաշվածքը, գիտահետազոտական, ինժեներական մշակումների ծախսերը և այլն:

Այս տիպի ծախսերը կոնկրետ արտադրատեսակներին վերագրելը բավականաչափ բարդ է: Շատ դեպքերում որպես ունիվերսալ մոտեցում է ընտրվում ընդհանուր իրացման մեջ ունեցած համամասնությունը:

Գործառնական վերլուծության հիմնական պահանջներից մեկը ուղղակի և անուղղակի ծախսերի միավորումն ու կոնկրետ արտադրատեսակների ծախսերին վերագրելն է, ըստ որի էլ հաշվարկվում է միջանկյալ մարժան: «Միջանկյալ մարժան» հասկացությունը վերաբերում է իրացումից ստացվող այն արդյունքին, որը ձևավորվում է ուղղակի փոփոխումն և ուղղակի հաստատուն ծախսերը հասույթից փոխհատուցելուց հետո: Միջանկյալ մարժան միջին դիրք ունի համախառն մարժայի և շահույթի միջև: Ցանկալի է, որ այն կարողանա ծածկել (փոխհատուցել) հաստատուն ծախսերի ավելի ու ավելի մեծ մասը և իր մասնաբաժինն ունենա շահույթի ձևավորման գործում:

Երբ միջանկյալ մարժան ծածկում է զոնե ձեռնարկության հաստատուն ծախսերի մի մասը, տվյալ ապրանքատեսակի տեսականու կազմում թողնելը արդարացվում է, միաժամանակ այն ապրանքները, որոնք հաստատուն ծախսերի մեծ բաժին են ներառում, համարվում են նախընտրելի: Առաջին հայացքից անառարկելի թվացող այս կանոնը բոլոր դեպքերում կարիք ունի թվային հիմնավորման, քանի որ կան որոշ նրբություններ.

- Տարբերություն կա անվնասաբերության և շահութաբերության շեների միջև: Կոնկրետ ապրանքատեսակի անվնասաբերության շենը (կետը) հասույթի այն ծավալն է, որն ամբողջությամբ ծածկում է փոփոխումն և ուղղակի հաստատուն ծախսերի ողջ զումարը: Միջանկյալ մարժան այդ դեպքում հավասար է զրոյի: Եթե բոլոր քայլերը կատարելուց հետո միջանկյալ մարժան չի ունենա զոնե զրոյական արժեք, տվյալ արտադրատեսակը արտադրությունից պետք է հանել կամ չնախատեսել.

$${}^2_i \tau = \frac{\text{ձօՕՕՅՐՇ ՆՅԷԻՅԻՁՕՄ ԻՅԷՅճ (ձՁՁ)}}{\text{ՉՇՅԻՁճՇ ՆՅՍՅԷՅԷՄ ՍճճԱՅ (ՉՁՁ)}} :$$

- Ապրանքի շահութաբերության շենը իրացումից հասույթի այն ծավալն է, որը ծածկում է ոչ միայն փոփոխումն և ուղղակի հաստատուն ծախսերը, այլև տվյալ ապրանքին վերաբերող անուղղակի հաստատուն ծախսերը, ընդ որում, տվյալ ապրանքի իրացումից շահույթ չկա, հավասար է զրոյի.

$$\tau_{\text{ՆՅ}} = \frac{\text{ձօՕՕՅՐՇ \cdot ՅԻՁՁՕՕՅՐՇ ՆՅԷԻՅԻՁՕՄ ԻՅԷՅճ (ձՁՁ)}}{\text{ՉՇՅԻՁճՇ ՆՅՍՅԷՅԷՄ ՍճճԱՅ (ՉՁՁ)}} ,$$

$$\tau_{\text{ՆՅՍ}} = \frac{\text{ձօՕՕՅՐՇ \cdot ՅԻՁՁՕՕՅՐՇ ՆՅԷԻՅԻՁՕՄ ԻՅԷՅճ (ձՁՁ)}}{\text{ՉճճԱՅՍՇ իՍՇՅԷՅՁճ ՆՅԷՁՁՍԱՉՍՁՅՁՅ}} :$$

Նախորդ հաշվարկների տվյալները համալրելով մեկ լրացուցիչ ցուցանիշով՝ անուղղակի հաստատուն ծախսեր՝ պայմանականորեն 1800 հազար, հաշվարկենք անվնասաբերության կետը և շահութաբերության շենը մեր ձեռնարկության համար:

- Եվ այսպես՝ ելակետային տվյալներն են՝
- իրացման գինը 8000 դրամ,
 - իրացման ծավալը 5000 հատ,

- տարեկան հասույթը 40000 հազ. (8000 x 5000),
- միավորի փոփոխումն ծախսերը 6000 դրամ,
- համախառն մարժան 10000(8000 – 6000)x5000,
- համախառն մարժայի գործակիցը 025(10000:40000),
- ուղղակի հաստատումն ծախսերը 6000 հազ.,
- միջանկյալ մարժան 4000 հազ. (10000 – 6000),
- միջանկյալ մարժայի բաժինը
հասույթի կազմում 01(4000 : 40000),
- անուղղակի հաստատումն ծախսերը 1800 հազ.,
- շահույթ 2200 հազ.:

Լուծում

- Անվմասաբերության կետը = $6000 : 10000/5000=3000$, նշանակում է՝ այս ապրանքը հաստատումն ծախսերի լրիվ փոխհատուցում կատարում է 3001–րդ քանակի վաճառքից սկսած: Այդ ծավալի իրացումից կստացվի՝
- հասույթ $8000 \times 3000 = 24000$ հազ. դր.,
- փոփոխումն ծախսեր $6000 \times 3000 = 18000$ հազ. դր.,
- համախառն մարժա 6000 հազ. դր.,
- շահութաբերության շեմը $(6000 + 1800)/025 = 31200$ հազ. դր.:

Արտադրանքի տեսականին մեկից ավելի ապրանքատեսակներից կազմված լիցելու պայմաններում գործառնական վերլուծության միջոցով կատարվում է առավել ձեռնտու տեսակի ընտրություն: Ընդունենք, որ ձեռնարկությունը հնարավորություն ունի ընտրություն կատարել 3 տիպի հաստոցների միջև և իրականացնել պատվեր՝ հենվելով առկա հետևյալ տվյալների վրա՝

- գումարային ծախսեր 36000 հազ.,
- գումարային փոփոխումն ծախսեր 30000 հազ.,
- որից՝ I տիպի հաստոց 12000 հազ.,
II տիպի հաստոց 12000 հազ.,
III տիպի հաստոց 6000 հազ.,
- գումարային ուղղակի հաստատումն ծախսեր 6000 հազ.,
- որից՝ I տիպի հաստոց 1000 հազ.,
II տիպի հաստոց 2000 հազ.,
III տիպի հաստոց 3000 հազ.,
- անուղղակի հաստատումն ծախսեր 1800 հազ.

Կազմենք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 11.3.5

Նախընտրելի տարբերակի հաշվարկ

N	Վերլուծության ցուցանիշները	Հաստոցների տիպը			Ընդամենը
		I	II	III	
1.	Իրացումից հասույթը (հազ. դրամ)	16 000	16 000	8 000	40.000
2.	Փոփոխուն ծախսեր (հազ. դրամ)	12 000	12 000	6 000	30 000
3.	Համախառն մարժան՝ 1–2	4 000	4 000	2 000	10 000
4.	Համախառն մարժայի բաժինը հասույթի մեջ՝ 3:1	025	025	025	025
5.	Ուղղակի հաստատուն ծախսեր (հազ. դրամ)	1 000	2 000	3 000	6 000
6.	Ուղղակի փոփոխուն – հաստատուն ծախսերի ումարը (2 + 5)	13 000	14000	9 000	36 000
7.	Միջանկյալ մարժան (3 – 5)	3 000	2 000	– 1 000	4 000
8.	Միջանկյալ մարժայի բաժինը հասույթի մեջ (7:1)	0,188	0.125	–	–

Աղյուսակի տվյալների վերլուծությունից հետո այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նախընտրելի են II և III տարբերակները, քանի որ դրանց համախառն մարժան անհամեմատ բարձր է: Ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ հատկապես III–ում, որից ակնկալվում էր բարձր շահութաբերություն, ուղղակի հաստատուն ծախսերը բավականաչափ մեծ են, որի հետևանքով սպասվող շահութաբերությունը արտահայտվել է բացասականորեն: Առաջին տիպի հաստոցների համախառն մարժան թեև պակաս է, սակայն ուղղակի հաստատուն ծախսերի աննշան լինելու պատճառով միջանկյալ մարժան մոտավորապես համընկնում է երրորդի հետ:

Ակնհայտ է, որ երկրորդի նույնատիպ ցուցանիշը մյուսների՝ 0 125, 0188–ի և բացասականի համեմատ առաջատար է, ուստի ընտրությունը ընկնում է նրա վրա:

Հայաստանի Հանրապետության տնտեսական բնագավառի աշխատողների, ուսումնագիտական անձնակազմի և արտադրական ձեռնարկությունների համար վերը շարադրվածը այնքան նոր, ոչ սովորական և անհրաժեշտ է, որ առաջանում է ուսումնագործնական իրադրությունների և խնդիրների վերաբերյալ բացատրությունների և լուծումների ներկայացման կարիք:

Համոզված ենք, որ ստորև բերվող մի քանի խնդիրների լուծումներ կնպաստեն տեսական նյութի յուրացմանը:

Օրինակ 1

Ընդունենք, որ ձեռնարկության ղեկավարությունը, ելնելով շուկայական պահանջարկի հնարավորությունից, որոշել է իրացման ծավալը 10%–ով ավելացնել և 40 միլիոն դրամից հասցնել 44 միլիոնի՝ պահպանելով նախկինում մյուս ցուցանիշների ձևավորված պարամետրերը: Ելակետային տարբերակում ընդհանուր փոփոխուն ծախսերը կազմել էին 30000 հազ. դրամ, հաստատուն ծախսերը՝ 6000 հազ. դրամ, իսկ շահույթը՝ 4000 հազ. դրամ: Պահանջվում է որոշել շահույթի զումարը հասույթի նախատեսված նոր ծավալի դեպքում՝ ավանդական մեթոդով, գործառնական վերլուծությամբ՝ ելնելով գործառնական լծակից, կատարելով արդյունքների համեմատություն:

Լուծում

1. Փոփոխություն ծախսերի գումարը ուղղակի կախվածության մեջ է արտադրության ծավալից, հետևաբար այն կավելանա համամասնորեն՝ 10%-ով և կկազմի 33000 հազ. դրամ ($30000 + 30000 \times 10\%$):

Հաստատուն ծախսերը կմնան նույն մակարդակին, ինքնարժեքը կդառնա 39000 հազ. դրամ ($33000+6000$), իսկ շահույթը կարտահայտվի 5000 հազ. դրամով՝ նախորդ 4000 հազ. դրամի դիմաց:

2. Գործառնական լծակի ուժը, որը իրենից ներկայացնում է համախառն մարժայի հարաբերությունը շահույթին, կունենա հետևյալ մակարդակը՝

Համախառն մարժան հավասար է 10000 հազ. դրամի ($40000 - 30000$), շահույթը՝ 4000 ($40000 - 30000 - 6000$), գործառնական լծակի ուժը՝ $2,5[(10000:4000)$ կամ նույնն է թե՛ ($40000-30000$) : ($40000-30000-6000$)]: Նշանակում է՝ իրացումից հասույթի 10% ավելացումը բերում է շահույթի 25%-ի աճ ($10 \times 2,5$), և շահույթը պետք է կազմի 5000 հազ. դրամ ($4000 + (4000 \times 25\%)/100$):

Հաշվարկների արդյունքները համընկնում են:

Օրինակ 2

Օգտագործելով առաջին օրինակի և հետևյալ աղյուսակի տվյալները՝ որոշել գործառնական վերլուծության հանգուցային ցուցանիշները, մեկնաբանել, թե շահութաբերության շեմից հասույթի հեռանալուն զուգընթաց ինչպես են փոփոխվում գործառնական լծակի ազդեցության ուժը և ֆինանսական կայունության պաշարը:

1.	Համախառն մարժան՝ իրացումից հասույթ-փոփոխություն ծախսեր (հումք, նյութեր, փոփոխություն աշխատավարձ, այլ փոփոխություն ծախսեր)	Ա Բ
2.	Համախառն մարժայի՝ որժակիցը (համախառն մարժան : իրացումից հասույթին) – նույնը տոկոսներով (համախառն մարժայի տոկոս : հասույթ) x 100	Գ
3.	Հաստատուն ծախսեր՝ դրույթները, կայուն աշխատավարձը, վարձակալական վճարներ, հարկեր, էլեկտրաէներ՝ յայի, ազի, ջրի վարձ, հեռախոսավարձ, փոստային ծառայություններ, ապահովա՝ թություն, վերանորո՝ում, ո՞վազդ, վարկի տոկոսներ, ամորտիզացիոն հատկացումներ, այլ հաստատուն ծախսեր	Դ
4.	Շահութաբերության շեմը՝ հաստատուն ծախսեր : համախառն մարժայի՝ որժակից (Դ:Գ)	Ե
5.	Ֆինանսական կայունության պաշար՝ ումարով՝ իրացումից հասույթ-շահութաբերության շեմ (Ա-Ե)	Զ
6.	Շահույթը՝ ֆինանսական կայունության պաշար x համախառն մարժայի՝ որժակից (ԶxԳ)	Է
7.	Գործառնական լծակի ազդեցության ուժը՝ համախառն մարժա : շահույթ (Բ:Է)	Ը

Լուծում

N	Ցուցանիշները	Ելակետային տարբերակ	10% աճի տարբերակ
1.	Հասույթ իրացումից (հազ. դրամ)	40000	44000
2.	Փոփոխումն ծախսեր (հազ. դրամ)	30000	33000
3.	Համախառն մարժան (հազ. դրամ)	10000	11000
4.	Համախառն մարժայի րոժակիցը (3:1)	0,25	0,25
5.	Հաստատուն ծախսեր (հազ. դրամ)	6000	6000
6.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ) (5:4)	24000	24000
7.	Ֆինանսական անրության պաշարը (հազ. դրամ) (1–6)	16000	20000
8.	Ֆինանսական կայունության պաշարի տոկոսը (7x100:1)	40%	45,5%
9.	Շահույթը (7x4)	4000	5000
10.	Գործառնական լծակի ազդեցության ուժը (3:9)	2,5	2,2

Հետևություն

Իրացումից հասույթի շահութաբերության շեմից դրական շեղմանը զուգընթաց գործառնական լծակի ազդեցության ուժը թուլանում է (գործակիցը իջնում է), իսկ ֆինանսական կայունության պաշարը մեծանում է: Դա հետևանք է ինչպես ամբողջական հասույթի, այնպես էլ միավոր արտադրանքի վրա ծախսումների կազմում հաստատուն ծախսերի բաժնի հարաբերական կրճատման:

Օրինակ 3

Ձեռնարկության վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները (տե՛ս ստորև բերված աղյուսակը). իրադրությունից ելնելով՝ իրացումից հասույթը կրճատվելու է 25%–ով, շահութահարկի դրույթը 25% է:

1.	Իրացումից հասույթը (հազ. դրամ)	30000
2.	Փոփոխումն ծախսերը (հազ. դրամ)	21000
3.	Համախառն մարժան (հազ. դրամ)	9000
4.	Հաստատուն ծախսերը (հազ. դրամ)	6000
5.	Շահույթը (հազ. դրամ)	3000
6.	Սեփական միջոցները	12000
7.	Երկարատև վարկերը (հազ. դրամ)	3000
8.	Կարճատև վարկերը (հազ. դրամ)	1200
9.	Վարկային տոկոսի միջին տարեկան դրույթը	25%

Պահանջվում է որոշել՝

- շահութաբերության ինչպիսի մակարդակ է հնարավոր պահպանել,
- իրացումից որ տոկոսով հասույթի կրճատվելու պայմաններում ձեռնարկությունը կիջնի շահութաբերության շեմի մակարդակին,
- հաստատուն ծախսերը որքանով է անհրաժեշտ պակասեցնել, որպեսզի ձեռնարկությունը պահպանի սպասվող շահույթի 75%–ը,
- ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը:

Լուծում

Գործառնական լծակի ազդեցության ուժը այս ձեռնարկությունում 3 է (9000:3000), նշանակում է՝ իրացումից հասույթի 25% կրճատվելու պայմաններում շահույթը կպակասի 75%–ով (25 x 3), և կպահպանվի սպասվող շահույթի միայն 1/4–ը, եթե մյուս պայմանները մնան անփոփոխ:

Գործառնական լծակի ուժը 3 լինելու պարագայում ձեռնարկությունը գրոյական շահույթ կունենա իրացման ծավալը 33% կրճատվելու պայմաններում (100:3):

Գործնականում որքան մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը, այնքան անթույլատրելի է հասույթի՝ բարձր տոկոսով իջեցումը:

Իրացումից հասույթի 25%–ով կրճատման պայմաններում շահույթի 75%–ը՝ պահպանելու հարցը որոշելիս պետք է ելնել գործառնական լծակի ազդեցության բանաձևից՝ ԳԼՈՒ = համախառն մարժա : շահույթ կամ՝

$$\text{Պ Էձօ} = \frac{\text{Ծ}^3\text{եի}^3\text{իձօ}^{\text{Մ}} \quad \text{ի}^3\text{Է}^{\text{ե}} + \text{Բ}^3\text{Նձօ}^{\text{Ս}}\text{Ա} \quad \text{ի}^3\text{Ս}}{\text{Բ}^3\text{Նձօ}^{\text{Ս}}\text{Ա}} \quad \frac{1 + \text{Ն}^3\text{եի}^3\text{իձօ}^{\text{Մ}} \quad \text{ի}^3\text{Է}^{\text{ե}}}{\text{Բ}^3\text{Նձօ}^{\text{Ս}}\text{Ա}}$$

այստեղից՝ հաստատուն ծախսերը = (ԳԼՈՒ – 1) x շահույթ:

Յետևաբար, որպեսզի պահպանվի սպասվող շահույթի 75%–ը՝ 2250 հազ. դրամը, անհրաժեշտ է, որ հաստատուն ծախսերը չգերազանցեն (3 – 1) x 2250 գումարը, այն է՝ 4500 հազ. դրամը, որը 1500 հազարով կամ 25%–ով պակաս է ելակետայինից:

Ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը՝

$$\text{սԷ}^2 = (1 - \text{Ն}^3\text{ի}^{\text{Շ}} \quad \text{ի}^{\text{ձօ}}\text{Ս}) \times (\text{ի}^{\text{Բ}} - \text{ի}^{\text{ՓԾ}}) \times \frac{\text{օ}^{\text{Փ}}}{\text{ե}^{\text{Փ}}} :$$

Տվյալ դեպքում շահույթը 3000 հազ. դրամ է, վարկի դիմաց տոկոսագումարը՝ 840 հազ., ընդամենը՝ 3840000, որն իրենից ներկայացնում է ներդրումների շահագործման տնտեսական արդյունքը, այսինքն՝ շահույթը հարկումից և վարկային տոկոսների վճարումից առաջ:

Ներդրումների շահագործման զուտ արդյունքը հարաբերելով հաշվեկշռի գումարին՝ կստանանք շահութաբերությունը (ՏՇ).

$$\text{ի}^{\text{Բ}} = \frac{3840000 \times 100}{12000000 + 3000000 + 1200000} = 23,7\% :$$

Յետևաբար՝ ֆինանսական լծակի արդյունավետությունը՝

$$\text{սԷ}^2 = 4 / 5(23,7 - 25) \times \frac{3200000}{12000000} = 4 / 5 \times 1,3 \times 0,27 = -0,181 :$$

Ստացվում է, որ ֆինանսական լծակի դիֆերենցիալը բացասական է (– 0.13), փոխառու աղբյուրների ֆինանսական ծախսերը ծանրացնում են հաստատուն ծախսերը և մեծացնում գործառնական լծակի ազդեցության ուժը, ինչը նշանակում է, որ մեծ է ձեռնարկչատիրական ռիսկը:

Օրինակ 4.

Մեր վերլուծության օբյեկտ ձեռնարկությունը արտադրում է տարեկան 100000 գույգ կոշիկ: Միավորի իրացման գինը 3000 դրամ է, փոփոխուն ծախսերի միջին մեծությունը՝ 2000 դրամ գույգի համար, հաստատուն ծախսերը՝ 40000 հազ. դրամ:

Պահանջվում է կատարել շահույթի վերլուծություն գործառնական լծակի տարրերի 10%–ով փոփոխության պայմաններում:

Դեպք 1. Գինը բարձրանում է 10%–ով, մյուս տարրերը մնում են անփոփոխ: Կուենանք հետևյալ պատկերը՝

– գինը (միավորի)	3000
– միջին փոփոխուն ծախսերը	2000
– իրացումից հասույթը	(100x3000)300000 հազ. (100%)
– փոփոխուն ծախսերը	(100x2000)200000 (66,7)
– համախառն մարժան	100000 (33,3)
– հաստատուն ծախսերը	40000 (13,3)
– շահույթը	60000 (20%)
– նոր գինը	(3000+(3000x10)/100) 3300
– նոր հասույթը	(100x3300) 330000 հազ. (100%)
– փոփոխուն ծախսերը	200000 (60,6)
– համախառն մարժան	130000 հ.դ. (39,4)
– հաստատուն ծախսերը	40000 հ.դ. (12,1)
– շահույթը	90000 հ.դ. (27,3)

Այժմ որոշենք, թե իրացման ինչպիսի ծավալ կպահանջվի նախկին մեծության՝ 60 մլն–ի չափով շահույթ ստանալու համար.

$$\frac{100000 \text{ Ն}^1.}{0,394} = 76911$$

կայուն արդյունք ապահովող իրացումը՝

$$D_0 = \frac{\text{Ծ}^3\text{Ս}^3\text{Է}^3\text{Ե}^3\text{Ե}^3\text{Յ} \quad \text{Ս}^3\text{ճ}^3\text{Ա}^3\text{Ս}^3\text{Շ} \text{ »Է}^3\text{Ղ}^3\text{Ղ}^3}{\text{Ծ}^3\text{Ս}^3\text{Է}^3\text{Ե}^3\text{Ե}^3\text{Յ} \quad \text{Ս}^3\text{ճ}^3\text{Ա}^3\text{Ս}^3\text{Շ} \quad \text{Յ}^3\text{ճ}^3 \cdot \text{ճ}^3\text{ճ}^3\text{Ղ}^3\text{Շ}^3} : \text{Յ}^3\text{ճ}^3 \cdot \text{Շ}^3\text{Յ}^3 :$$

N	Ցուցանիշները	Իրացման ծավալը՝ 100 հազ. հատ, ինը՝ 3300 դր.		Անփոփոխ արդյունքի իրացման ծավալը՝ 76911 հազ. հատ, ինը՝ 3000 դր.	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	330,0	100,0	253,8	100,0
2.	Փոփոխուն ծախսերը	200,0	60,6	153,8	60,8
3.	Համախառն մարժան	130,0	39,4	100,0	39,2
4.	Հաստատուն ծախսերը	40,0	12,1	40,0	15,7
5.	Շահույթը	90	27,3	60,0	23,5

Այսպիսով՝ իրացման գնի 10%–ով բարձրացումը փոխհատուցում է իրացման ծավալի մոտավորապես 25%–ով իջեցումը կամ շահույթը ավելացնում է 50%–ով:

Դեպք 2. Իրացման ծավալը և հաստատուն ծախսերը մնում են նույնը, փոփոխուն ծախսերը պակասում են 10%–ով.

- իրացումից հասույթը 300 մլն,
- նոր փոփոխուն ծախսերը 180 մլն (60%),
- համախառն մարժան 120մլն (40%),
- հաստատուն ծախսերը 40 մլն (13,3%),
- շահույթը 80 մլն (26,7%):

Որոշենք նախկին արդյունքը ապահովող իրացման ծավալը՝

$$(100մլն : 04) : 3000 = 75000 \text{ գույգ:}$$

N	Ցուցանիշները	Իրացման ծավալը՝ 100 հազ. հատ		Անփոփոխ արդյունքի իրացման ինը՝ 3000 դր.	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	300	100	250	100
2.	Փոփոխուն ծախսերը	180	60	150	60
3.	Համախառն մարժան	120	40	100	40
4.	Հաստատուն ծախսերը	40	13,3	40	16
5.	Շահույթը	80	26,7	60	24

Կայուն արդյունք ապահովող իրացման ծավալը՝ փոփոխուն ծախսերը պակասեցնելու դեպքում՝

$$\frac{\text{«ՔՆ»ԻՐԱՇՊԿԱՆ ՈՒՍՏԱՆՈՒՄԻ ԾԱՄԱՐՈՒՄԻ ԾԱՎԱԼԻ 17\% - ՈՎ ԳՐԱԳԵԼԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԸ ԱՎԵԼԱԳՆՈՒՄ Է 33\% - ՈՎ:}}{\text{ՈՒՍՏԱՆՈՒՄԻ ԾԱՄԱՐՈՒՄԻ ԾԱՎԱԼԻ 10\% - ՈՎ ԳՐԱԳԵԼԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԸ ԱՎԵԼԱԳՆՈՒՄ Է 26,7\% - ՈՎ:}} : \text{ՇՊԿԱՆ ԾԱՎԱԼԻ 3000 ՄԼՆ:}$$

Հետևաբար, փոփոխուն ծախսերի 10%–ով կրճատումը փոխհատուցում է իրացման ծավալի 17%–ով նվազելը կամ շահույթը ավելացնում է 33%–ով:

Դեպք 3. Իրացման գինը և փոփոխուն ծախսերը մնում են նույն մակարդակին, հաստատուն ծախսերը նվազում են 10%–ով:

Սկզբնական շահույթի մակարդակը ապահովելու համար (60 մլն), հաստատուն ծախսերը պակասելու պայմաններում պահանջվում է համախառն նոր մարժա, որը պետք է կազմի 96 մլն դրամ: Կայուն արդյունք ապահովող իրացումը հաստատուն ծախսերը փոխվելու դեպքում հավասար է՝

$$\frac{\text{ՈՒՍՏԱՆՈՒՄԻ ԾԱՄԱՐՈՒՄԻ ԾԱՎԱԼԻ 17\% - ՈՎ ԳՐԱԳԵԼԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԸ ԱՎԵԼԱԳՆՈՒՄ Է 33\% - ՈՎ:}}{\text{ՈՒՍՏԱՆՈՒՄԻ ԾԱՄԱՐՈՒՄԻ ԾԱՎԱԼԻ 10\% - ՈՎ ԳՐԱԳԵԼԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԸ ԱՎԵԼԱԳՆՈՒՄ Է 26,7\% - ՈՎ:}} : \text{ՇՊԿԱՆ ԾԱՎԱԼԻ 3000 ՄԼՆ:}$$

$$\frac{96}{0,333} : 3000 = 96100:$$

N	Ցուցանիշները	Իրացումը՝ 100000 գույ․		Անփոփոխ ծավալ ապահովող իրացումը՝ 96100	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	300	100	288,3	100
2.	Փոփոխումն ծախսերը	200	66,7	192,2	66,7
3.	Համախառն մարժան	100	33,3	96,0	33,3
4.	Հաստատուն ծախսերը	36	12,0	36,0	12,5
5.	Շահույթը	64	21,3	60,0	20,8

Ձեռնարկությանը կարելի է խորհուրդ տալ ավելացնել իրացման ծավալը, քանի որ գործառնական լծակի ուժը 1,7 է (100 : 60), և 10% իրացման աճը կհանգեցնի շահույթի 17%–ով ավելացմանը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են բիզնեսի կազմակերպման ու իրականացման դրամական ծախսերը, ի՞նչ խմբերի են բաժանվում:
2. Արտադրանքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող ծախսերը. ի՞նչ կազմ ունեն, ի՞նչ խմբերի են բաժանվում ծրագրից կախվածության հետ կապված:
3. Ինչպե՞ս է կանխատեսվում կամ հաշվարկվում իրացվող արտադրանքի ինքնարժեքը:
4. Ի՞նչ է նշանակում գործառնական լծակ, ի՞նչ ցուցանիշներով է պայմանավորված դրա ուժը և ի՞նչ կապի մեջ է շահույթի հետ:
5. Ցույց տալ անվնասաբերության կետը և շահութաբերության շեմը, գործառնական վերլուծության միջոցով դրանց արդյունավետ կառավարումը և շահույթի մաքսիմալացումը:
6. Ի՞նչ է նշանակում ֆինանսական կայունության պաշար արտադրական կազմակերպությունում:

ԳԼՈՒԽ 12

ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԸ

12.1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ապրանքային արտադրանքի իրացումից հասույթը այն գլխավոր աղբյուրն է, որի հաշվին փոխհատուցվում է դրա արտադրության ընթացքում սպառված արտադրության միջոցների արժեքը, վճարվում են արտադրության աշխատողների աշխատավարձը և սոցիալական ապահովագրության հատկացումները, կոմերցիոն և այլ դրամական ծախսերը, ինչպես նաև անուղղակի հարկերը (ակցիզներ, ավելացված արժեքի հարկ): Հասույթի պլանային մեծությունը հաշվարկվում է կոմերցետ ժամանակաշրջանի, սովորաբար տարվա կտրվածքով: Դրա վրա ազդող կարևորագույն գործոնները չորսն են՝

- իրացվող ապրանքային արտադրանքի ֆիզիկական ծավալը (փոփոխությունը),
- իրացվող արտադրանքի տեսականու կառուցվածքը,
- իրացվող արտադրանքի որակը,
- իրացման գնի տեսակը և մակարդակը:


Թվարկված գործոններից երկուսը իրացումից հասույթի և գործառնական գործունեության շահույթի վրա անդրադառնում են ուղղակիորեն: Այսպես՝ մյուս գործոնները անփոփոխ մնալու պայմաններում որքանով (անգամ, տոկոս) ավելանա կամ պակասի իրացման ծավալը, մույնքանով (անգամ, տոկոս) համապատասխան ուղղությամբ կփոխվի նաև հասույթը, հետևաբար և շահույթը: Նույն կերպ իրացման գնի բարձրացումը կամ իջեցումը անմիջական փոփոխություն են առաջացնում հասույթի գծով: Հատկապես ձեռնարկության մեծածախ գնի (ինքնարժեք + շահույթ) դեպքում ուղղակի ազդեցությունը ավելի ցայտուն է, քանի որ այն չի պարունակում անուղղակի հարկերի տարրեր և ճշգրտման անհրաժեշտություն չունի:

Մյուս երկու գործոնների ազդեցությունը հասույթի մեծության վրա անուղղակի է: Գրեթե միշտ ֆիրմաները չեն սահմանափակվում մի տեսակի արտադրանքի արտադրությամբ ու իրացմամբ, բնականաբար, ձևավորվում է որոշակի տեսականու կազմ և կառուցվածք: Տեսականու մեջ մտնող արտադրատեսակները բնութագրվում են գնային ու շահութաբերության տարբեր մակարդակներով: Հետևաբար, եթե միևնույն իրացման ֆիզիկական ծավալի մեջ ավելանում կամ պակասում է բարձր գին ունեցող ապրանքների բաժինը, փոխվում է հասույթի գումարը: Կառուցվածքային փոփոխություններն այս բնագավառում արտահայտություն են գտնում գնի միջին մակարդակի մեջ. մշանակում է՝ տվյալ իրացման ծավալը միջին գնի փոփոխության հետևանքով կապահովի ավելի կամ պակաս մեծության հասույթ:

Իրացվող արտադրանքի որակը և դրա փոփոխությունները մույնպես ուղղակի անդրադառնալ չեն կարող և հասույթի վրա ազդում են իրացման միջին գնի տարբերության միջոցով:

Տնտեսավարման, մասնավորապես, ֆինանսական կառավարման ընթացքում գործածվում են հասույթի երկու հասկացություններ՝ ընդհանուր և գուտ: Ընդհանուր հասույթը արտահայտվում է բաց թողման գներով՝ ներառելով արտադրանքի արտադրության ու իրացման ծախսերը, շահույթը, ակցիզային հարկը (ենթակցիզային ապրանքների դեպքում) և ավելացված արժեքի հարկը: Հայաստանի Հանրապետության «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի համաձայն, ապրանքների իրացման համար դուրս են գրվում հարկային հաշիվներ՝ կիրառելով բաց թողման գինը (գնի կառուցվածքը տե՛ս ստորև բերված աղյուսակում) և արդյունքում ձևավորվում է ընդհանուր (համախառն) հասույթը: Իրացումից հասույթը համապատասխան գներով գործնականում կարող է հաշվարկվել տարբեր մեթոդներով, ինչը պայմանավորվում է տնտեսավարման շուկայական վիճակով, պայմանագրերի առկայությամբ, շուկա մտնելու ուղիներով և այլն:

Իրացման գների կառուցվածքը



Հասույթի պլանի հաշվարկման ավանդական մեթոդի համաձայն՝ արտադրանքը իրացված է համարվում, երբ հաշիվը վճարվել է, և գումարը մուտք է եղել հաշվարկային հաշվին կամ դրամարկը: Այդ առնչությամբ էլ «հասույթ» հասկացությունը նույնացվում է այն գումարի հետ, որը իրացված արտադրանքի և մատուցված ծառայությունների դիմաց մուտք է լինում կամ ձեռնարկության համապատասխան հաշվին, կամ դրամարկը: Գործնականում, ինչպես արդեն նշվել է նախորդ գլուխներում, կարող է կիրառվել նաև այլ կարգ՝ հասույթը կապելով առաքումների և հաշվարկային փաստաթղթերի ներկայացման կամ կոնկրետ ժամկետի հետ:

Տնտեսավարման և, հատկապես, ձեռնարկչատիրական գործունեության փորձը ցույց է տվել, որ սովորաբար արտադրանքի արտադրության ու իրացման տարեկան գումարները չեն համընկնում: Իրացումը կարող է տեղի ունենալ ոչ միայն տվյալ տարում արտադրված ապրանքային արտադրանքի, այլև նախորդ տարիներից փոխանցված մնացորդների հաշվին, կամ ապրանքային արտադրանքի մի մասը կարող է մնալ որպես տարեվերջի մնացորդ և անցնել հաջորդ տարվա պաշարների մեջ:

Հետևաբար, տարեկան իրացման և հասույթի պլանային մեծությունը կախվածությամբ մեջ է երեք ցուցանիշներից՝ տարեսկզբի դրությամբ մնացորդներից (պահեստներում, առաքված, դեռևս չվաճառված և գնորդներին ի պահ հանձնված), տարեկան ապրանքային արտադրանքից և պլանային տարվա վերջի դրությամբ դարձյալ նշված հողվածների գծով չիրացված մնացորդներից: Ընդունված է տարեսկզբի չիրացված մնացորդները անվանել մուտքագրվող, տարեվերջինը՝ ելքագրվող: Այստեղից՝ տարեկան հասույթի պլանը.

$$h_h = U_1 + U - U_2,$$

U_1 – մուտքագրվող մնացորդ,

U_2 – ելքագրվող մնացորդ,

U – ապրանքային արտադրանքի պլան:

Վերոհիշյալ մնացորդները և ապրանքային արտադրանքը ձեռնարկությունների հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլվում են ինքնարժեքով, սովորաբար առանց արտաարտադրական (կոմերցիոն) ծախսերը ներառելու, հետևաբար, հասույթի պլանը հաշվարկելիս դրանք պետք է արտահայտվեն գներով՝ ելնելով կոնկրետ իրադրությունից՝ կա՛մ ձեռնարկության մեծածախ, կա՛մ բացթողման գնից: Իհարկե, ի վերջո, ձեռնարկության համար կարևորագույնը մեծածախ գինն է, որը փոխհատուցում է արտադրության ու իրացման բոլոր ծախսերը և ձևավորում շահույթը: Ապրանքային արտադրանքը համապատասխան գնով արտահայտելու ելակետը թողարկվող արտադրանքի (ծառայությունների) քանակային կազմն է և շուկայական սպասվող գների մակարդակը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի գները ազատականացված են (բացառությամբ սահմանափակ թվով ապրանքների), ուստի դրանք թելադրվում են շուկայի կողմից և պարզվում են մարքեթինգային հետազոտության միջոցով: Իրացման ենթակա ապրանքային արտադրանքի կազմը ձևավորող տեսականու քանակների և սպասվող գների արտադրյալների հանրագումարը կարտահայտի ապրանքային արտադրանքը համապատասխան գներով: Մուտքագրվող մնացորդի գներով արտահայտված արժեքը որոշվում է վերահաշվարկի գործակցի միջոցով: Գործակիցը այս դեպքում իրենից ներկայացնում է նախորդ ժամանակաշրջանի ապրանքային արտադրանքի (համապատասխան գներով) և դրա ինքնարժեքի հարաբերությունը: Նույնպիսի մոտեցմամբ վերահաշվարկվում է նաև ելքագրվող մնացորդը, միայն այն տարբերությամբ, որ վերահաշվարկի գործակցի համար հիմք են ընդունվում պլանային տվյալները:

Այս մոտեցումներից ելնելով՝ կատարենք իրացումից հասույթի պլանի հաշվարկ երեք տարբերակով.

- իրացումը կատարվում է ձեռնարկության մեծածախ գնով,
- իրացումը կատարվում է բացթողման գնով, և ապրանքը ենթաակցիզային չէ,
- իրացումը կատարվում է բացթողման գնով, ապրանքը ենթաակցիզային է, և հարկի դրույթը սահմանված է 50%:

Աղյուսակ 12.1.1.

Իրացումից հասույթի պլանի հաշվարկ (թվերը պայմանական են)

N	Ցուցանիշները	Տարբերակ I	Տարբերակ II	Տարբերակ III
1.	Ապրանքային արտադրանքը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	36000	36000	36000
2.	Ապրանքային արտադրանքը իրացման մեթոդով (հազ. դրամ)	40000	48000	72000
3.	Մուտքա-րվող մնացորդը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	4000	4000	4000
4.	Մուտքա-րվող մնացորդը մեծ արտահայտելու դրժակիցը (պայմանական)	1,21	–	–
5.	Մուտքա-րվող մնացորդը իրացման մեթոդով (հազ. դրամ)	4840	5808	8712
6.	Ելքա-րվող մնացորդը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	5000	5000	5000
7.	Ելքա-րվող մնացորդը մեծ արտահայտելու դրժակիցը (տող 2 : տող 1)	1,11	–	–
8.	Ելքա-րվող մնացորդը իրացման մեթոդով (հազ. դրամ)	5550	6660	9990
9.	Իրացումից հասույթի պլանը (հազ. դրամ) (2 + 5 – 8)	39290	47148	70722

Առաջին տարբերակի դեպքում ստացված արդյունքը ամբողջությամբ ներկայացնում է գործառնական գործունեության զուտ հասույթը և գործնականում ուղղվում է ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի փոխհատուցման և տնտեսական հետևանքների՝ շահույթի ձևավորմանը: Երկրորդ դեպքում հանդես է գալիս համախառն հասույթը, որից զուտ հասույթին անցնելու համար պահանջվում է առանձնացնել ավելացված արժեքի հարկը: Տվյալ պարագայում զուտ հասույթը հավասար է՝ $47186 \text{ Բ} \cdot 100 / (100 + 20) = 39290$:

Երրորդ տարբերակում համախառն հասույթը ավելի ամբողջական է, ներառում է երկու անուղղակի հարկերը: Դրա կազմում զուտ հասույթի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$A_{\text{ն}} = \frac{70722 \cdot 100 \cdot 100}{120 \cdot 150} = 39290 :$$

12.2. ՇԱՐՈՒԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ

Շուկայական հարաբերությունների ազատականացման պայմաններում, երբ ձեռնարկչատիրական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է սեփականության տարբեր ձևերի համատեղ գոյության ու զուգորդության հիման վրա, տնտեսավարման հիմնական մեթոդը առևտրային հաշվարկն է: Առևտրային հաշ-

վարկի դրսևորման հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ որպես գործունեության նպատակ (արտադրական, առևտրական, սպասարկման և այլն) հռչակվում է շահույթի ստացումը:

Ազատ մրցակցությունը հնարավոր է դարձնում և գործողության մեջ է դնում «ավանսավորված հավասարամեծ կապիտալը պետք է ապահովի հավասար շահույթ» պահանջի իրականացումը: Այս առումով խիստ մեծանում է շահույթի դերը բիզնեսի՝ որպես ֆինանսական արդյունքի գլխավոր հետևանքային ցուցանիշի իրականացման գործում:

Գործնականում շահույթը իրենից ներկայացնում է սեփականության ցանկացած ձևի ձեռնարկությունների կողմից ստեղծված կուտակումների որոշակի մասի դրամական արտահայտություն: Որպես տնտեսագիտական հասկացություն՝ այն բնութագրում է ձեռնարկչատիրական գործունեության ֆինանսական հետևանքը: Այս տեսանկյունից էլ շահույթը համարվում է արտադրության արդյունավետության, արտադրված արտադրանքի ծավալի ու որակի, աշխատանքի արտադրողականության ու ինքնարժեքի մակարդակի փոփոխության հետ կապված կարևոր ցուցանիշ՝ միաժամանակ ունենալով առևտրային հաշվարկի հստակեցման, գիտատեխնիկական առաջադիմության, սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսավորման անփոխարինելի աղբյուրի դեր: Ձուգահեռաբար, շահույթը ոչ միայն ներտնտեսական կարիքների ապահովման աղբյուր է, այլև բյուջեի եկամուտների և արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման ռեսուրս:

Շուկայական տնտեսության պայմաններում շահույթը ձեռք է բերում բազմանշանակ դեր: Բանն այն է, որ բաժնետիրական, մասնավոր և այլ տիպի ձեռնարկությունները, ստանալով լայն ինքնուրույնություն և անկախության հնարավորություն, իրավունք ունեն որոշելու, թե բյուջեի վերաբերմամբ պարտականությունները կատարելուց հետո իրենց տրամադրության տակ մնացած շահույթից ո՞ր նպատակի համար և որքան հատկացնել:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օրենսդրությունը համապատասխան պայմաններ է ապահովում շահույթ ստանալու նպատակով ձեռնարկությունների նախաձեռնությունները ինքնուրույն իրականացնելու համար: Դա դրսևորվում է նրանում, որ որպես տնտեսական սուբյեկտ՝ նրանք ազատորեն իրականացնում են իրենց տնտեսական գործունեությունը, լիիրավ տնօրինում են թողարկվող արտադրանքը և զուտ շահույթը:

Արտադրական ձեռնարկություններում «ֆինանսական արդյունք» հաշվի միջոցով գործունեության հետևանքները գնահատելիս օգտագործվում են «համախառն շահույթ», «այլ գործառնություններից, արտասովոր դեպքերից ստացվող շահույթ» հասկացությունները, ինչպես նաև զուտ շահույթ հարկումից առաջ և հարկումից հետո ցուցանիշները: «Ֆինանսական արդյունք» 331 հաշվի կրեդիտում ամփոփվում են բոլոր եկամուտները, որոնց տարբերությունն էլ ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի համախառն շահույթը:

Գործառնական շահույթը, լինելով ձեռնարկության գործունեության վերջնական ֆինանսական արդյունք, իրենից ներկայացնում է եկամուտների ընդհանուր զումարի և արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերի տարբերությունը: Ավելի ճշգրիտ՝ գործառնական գործունեության շահույթը՝ բացարձակ արտահայտությամբ, ապրանքային արտադրանքի իրացումից զուտ հասույթի և

լրիվ ինքնարժեքի դրական տարբերությունն է: Միանգամայն պարզ է, որ շահույթը, լինելով ֆինանսական վերջնական արդյունք, իր մեծությամբ պայմանավորված է գործունեության հետ կապված բազմաթիվ գործոններով: Մասնավորապես, նրա ավել կամ պակաս ծավալով դրսևորվելը կապված է ներդրված կապիտալի, ընդգրկված աշխատուժի, արտադրանքի թողարկման ու իրացման, կատարված ծախսումների ծավալների հետ: Այս առումով էլ, շահույթի տվյալ գումարից ելնելով, հնարավոր չէ միանշանակ պատկերացում կազմել գործունեության արդյունավետության վերաբերյալ, քանի որ պարամետրերը տարբեր են: Արդյունավետությունը գնահատելու համար զուգահեռաբար օգտագործվում է շահութաբերությունը:

Եթե շահույթը արտահայտվում է բացարձակ գումարով, ապա շահութաբերությունը արտադրության արդյունավետության հարաբերական ցուցանիշ է և եկամտաբերությունը բնութագրում է որոշակի ելակետի (բազայի) նկատմամբ տոկոսներով: Ձեռնարկությունը համարվում է շահութաբեր, եթե արտադրանքի իրացումից ստացվող զուտ հասույթը բավարար է ոչ միայն արտադրության ու իրացման ծախսերը փոխհատուցելու, այլև շահույթ ստանալու համար, և որքան մեծ է շահույթի գումարը այլ հավասար պայմաններում, այնքան բարձր է շահութաբերությունը: Շահութաբերությունը կարող է հաշվարկվել տարբեր ձևերով ու տարբեր ելակետի նկատմամբ, բայց բոլոր դեպքերում հենվելով շահույթի (համախառն կամ զուտ) վրա:

Նախքան շուկայական էկոնոմիկային անցնելը վերջին 20–25 տարիներին շահութաբերությունը որոշվել է որպես շահույթի տոկոսային հարաբերություն արտադրական ֆոնդերի նկատմամբ կամ ըստ ծախսումների (շահույթի տոկոսային հարաբերություն լրիվ ինքնարժեքին): Ազատ շուկայական հարաբերություններն այս ցուցանիշի նկատմամբ առաջադրում են նոր պահանջներ՝ ընդլայնելով նրա շրջանակները և տալով նոր բովանդակություն:

Այժմ արտադրության ոլորտում շահութաբերությունը կարող է որոշվել համարիչում ունենալով համախառն շահույթը, շահույթը տոկոսները վճարելուց հետո, շահույթը տոկոսները և հարկերը վճարելուց հետո, իսկ հայտարարում՝ ընդհանուր կապիտալը, սեփական կապիտալը, փոխառու կապիտալը, իրացումը վաճառքի գներով, ինքնարժեքով, ակտիվների ընդհանուր գումարը, ոչ ընթացիկ ակտիվները, ոչ ընթացիկ ակտիվների մնացորդային արժեքը և այլն:

Այնուհանդերձ, ձեռնարկության ֆինանսական ցուցանիշների կազմում՝ որպես շահութաբերության գործակիցներ, նախընտրելի են՝

- հաշվեկշռային շահութաբերության նորման,
- զուտ շահութաբերության նորման,
- ակտիվների շահութաբերության նորման,
- ոչ ընթացիկ զուտ ակտիվների շահութաբերությունը:

Հաշվեկշռային շահութաբերության նորման՝

$$P'_1 = \frac{\text{Ծ}^3\text{Բ}^1 \times \text{Ն}^3\text{Յ}^3\text{Ս} \text{ Ը}^3\text{Ն}^3\text{Ն}^3\text{Ս}^3}{\text{Վ}^3\text{ճ}^3\text{Օ}^3 \text{ Ն}^3\text{ճ}^3\text{ճ}^3\text{Ս}^3}$$

Չուտ շահութաբերության նորման՝

$$P'_2 = \frac{\text{Վ}^3\text{ճ}^3\text{Օ}^3 \text{ Բ}^3\text{Ն}^3\text{ճ}^3\text{Ս}^3}{\text{Վ}^3\text{ճ}^3\text{Օ}^3 \text{ Ն}^3\text{ճ}^3\text{ճ}^3\text{Ս}^3}$$

Ակտիվների շահութաբերության նորման՝

$$P'_3 = \frac{1/4 \text{ օճի } \text{Թ}^3 \text{ Ն օճ օՒ Թ}}{2 \text{ րի } \text{Շ րի } \text{Յ} \text{ րի } \text{Շ} \cdot \text{օճ օՒ}^3 \text{ րի} :$$

Ոչ ընթացիկ զուտ ակտիվների շահութաբերություն՝

$$P'_4 = \frac{1/4 \text{ օճի } \text{Թ}^3 \text{ Ն օճ օՒ Թ}}{\text{օճ օՒ } \text{Ա } \text{Մ Թ}^3 \text{ օճ րի } \text{օՒ րի } \text{Շ րի } \text{Շ} \cdot \text{Ս } \text{Մ}^3 \text{ օճ րի }^3 \text{ օՒ } \text{Շ } \text{րի } \text{Թ} \text{ րի}^3 \text{ րի} :$$

Շահութաբերության բոլոր ցուցանիշները կարող են արտահայտվել տոկոսների կամ գործակիցների միջոցով:

Այսպիսով՝ շահույթը թեև ինքնին բնութագրում է ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունավետությունը՝ բացարձակ գումարով, իրական պատկերացում չի տալիս այդ մասին: Ընդհանրապես բացառված չէ, որ տեխնիկատնտեսական ցածր ցուցանիշներ ունեցող, բայց մեծ ծավալի ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվներ (կապիտալ) տնօրինող ու ավելի շատ աշխատողներ ներգրաված ձեռնարկություններն ունենան անհամեմատ մեծ գումարի շահույթ, քան ավելի լավ աշխատող, բայց փոքր չափեր ունեցող ձեռնարկությունները: Մինչդեռ մասնակիցների (բաժնետերեր, ներդրողներ, տնօրինություն և այլն) համար խիստ կարևոր է, թե ստացվող շահույթի յուրաքանչյուր միավորը ինչ է նստում իրենց վրա, ինչ ծավալի միջոցներ ու ակտիվներ են զբաղեցված, ինչպիսին են առարկայացած և կենդանի աշխատանքային ծախսումները: Այս տեսակետից էլ կարևորվում է շահութաբերության ցուցանիշի դերը:

Շահույթը՝ որպես սեփականության տարբեր ձևերի հիմքի վրա գործող ձեռնարկությունների դրամական կուտակումների հիմնական մասը արտահայտող ցուցանիշ, իր վրա կրում է գործունեության բոլոր բնագավառներում տեղի ունեցող ամենատարբեր փոփոխությունների ազդեցությունը: Շատ զգայուն է հատկապես իրացման ծավալի, արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսերի, դրանց կառուցվածքի, արտադրանքի կազմի ու կառուցվածքի և, հատկապես, գների նկատմամբ:

Նրա ելակետային ծավալը և փոփոխությունը (աճը, նվազելը) արդյունք են որոշակի պարամետրերի և դրանցում կատարվող տեղաշարժերի, որպիսիք դրսևորվում են կոնկրետ գործոնների տեսքով: Այդ գործոնները բաժանվում են երկու խմբի՝ ձեռնարկության տնտեսական գործունեությամբ պայմանավորված և դրանից անկախ: Առաջին խմբին վերաբերում են գործառնական գործունեության հիմնական արդյունք հանդիսացող ապրանքային արտադրանքի արտադրության ու իրացման ծավալի, դրա լրիվ ինքնարժեքի, տեսականու կառուցվածքի, որակական կազմի փոփոխությունները, իսկ երկրորդին՝ իրացման շուկայական գների, ծառայությունների սակագների և ավելացված արժեքի հարկի դրույքի (այն ապրանքների համար, որոնք իրացվում են կարգավորվող գներով և ԱԱՀ-ի փոփոխությանը ուղղակիորեն չեն առնչվում) փոփոխությունները:

Շահույթի աճի համար ազատ շուկայի պայմաններում կարևորագույն գործոն է արտադրանքի արտադրության ու իրացման ծավալների աճը:

Գիտատեխնիկական մշակումների ներդրման արդյունքում աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու, հետևաբար, ինքնարժեքի իջեցումը, որակական բարեփոխումները ձեռնարկչատիրական գործունեության զարգացման պայ-

մաններում օբյեկտիվ նախադրյալներ են առաջացնում թվարկված գործոնները արդյունավետ կիրառելու համար:

Տնտեսավարման բոլոր եղանակների պայմաններում ձեռնարկությունների դրամական կուտակումների ձևավորման գլխավոր աղբյուրը արտադրանքի իրացումից հասույթն է, կոնկրետ այն մասը, որը մնում է այդ արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարված նյութական, աշխատանքային և դրամական ծախսերը հանելուց հետո: Ուստի, ամեն մի տնտեսավարող սուբյեկտի համար կարևոր խնդիր է մեծ ծավալի շահույթի ստացումը առավելագույն փոքր ծախսումներով կիրառելով խնայողության խստագույն ռեժիմ ծախսումների նկատմամբ և բարձրացնելով ներդրումների շահագործման արդյունավետությունը: Արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսումները ձևավորում են ինքնարժեքի մակարդակն ու կառուցվածքը: Իրացումից հասույթը հաշվարկվում է գործող շուկայական գներով և շուկայի թեւադրանքով, այն դառնում է ցանկացած ձեռնարկության գործունեության ամենակարևոր ցուցանիշներից մեկը: Իրականում այդ ցուցանիշն է բաժնետերերի շրջանում բավարար շահագրգռվածություն առաջացնում ոչ այնքան արտադրանքի արտադրության քանակային, որքան իրացման ծավալի ավելացման ուղղությամբ: Դա նշանակում է արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք բավարարում են սպառողների պահանջները և ունեն մեծ պահանջարկ:

Շուկայական բարձր պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության ու իրացման ծավալների աճը անմիջականորեն անդրադառնում է շահույթի մեծության վրա, ինչը այլ հավասար պայմաններում ուղիղ համեմատական է հասույթի աճին:

Եվ այսպես, այնքանով, որքանով շահույթի գումարը հավասար է իրացումից զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի տարբերությանը, նրա աճը նախ և առաջ կախվածության մեջ է ինքնարժեքի իջեցումից և հասույթի ավելացումից:

Իրացվող արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող արտադրության ու իրացման ծախսերը կազմված են արտադրությունում օգտագործվող բնական ռեսուրսների, նյութերի, վառելիքի, էներգիայի, աշխատանքային ռեսուրսների, ոչ ընթացիկ ակտիվների սպառման արժեքից և այլ ծախսերից: Դրանց կազմը և կառուցվածքը պայմանավորված են կոնկրետ արտադրության բնությով և ռեզլամենտավորվում են ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքով:

Գործնականում շահույթի վրա ազդող գործոնները և ձևավորման մեխանիզմի պարամետրերը այնպիսին են, որ լիակատար հնարավորություն կա այն կանխատեսելու:

Ձեռնարկչատիրական գործունեության զարգացման համար շահույթի դերի բարձրացումը անհրաժեշտ է դարձնում բոլոր մակարդակներով ճիշտ պլանավորումը և, կախված այն հանգամանքից, թե որքանով է իրական պլանի հաշվարկը, ֆինանսատնտեսական գործունեության օպերատիվ ընթացքը կունենա համապատասխան զնախատական:

Շահույթի պլանի տնտեսական հիմնավորվածությունը բացառիկ կարևոր է ներտնտեսական կարիքների ֆինանսավորումը ժամանակին իրականացնելու, ներդրումներ ապահովելու, սեփական շրջանառու միջոցների աճը լրացնելու, աշխատավարձ և այլ վճարումներ կատարելու և, հատկապես, բյուջեի ու մատակարարների հանդեպ պարտավորությունները մարելու համար: Հետևաբար, բոլոր օղակներում

շահույթի ճիշտ պլանավորումը ելակետային նշանակություն ունի ոչ միայն ձեռնարկչատիրական գործունեության նորմալ ընթացքի, այլև մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման համար:

Շահույթի պլանավորումը, որպես կանոն, իրականացվում է ըստ բնագավառների, առանձին՝ ապրանքային արտադրանքի իրացումից և առանձին-առանձին՝ այլ արտադրանքի և ոչ ապրանքային ծառայությունների, ոչ ընթացիկ ակտիվների իրացման ու արտաիրացումային եկամուտների և ծախսերի գծով:

Հատուկ ուշադրություն է դարձվում առաջին բնագավառի՝ որպես գործառնական գործունեության ֆինանսական վերջնական արդյունքի և ձեռնարկությունների դրամական կուտակումների հիմնական ձևի վրա: Ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանավորման համար գործնականում օգտագործվում են մի քանի եղանակներ: Ելնելով արտադրության կոնկրետ պայմաններից, տեսականու կառուցվածքից, բավարար տվյալներից՝ ձեռնարկությունները կարող են օգտվել մեկ կամ մի քանի եղանակներից, կատարել արդյունքների համեմատություն և կողմնորոշվել:

Ձեռնարկությունների, ֆիրմաների և այլ օղակների մակարդակով շահույթի պլանավորման ավանդական մեթոդները երկուսն են՝ ուղղակի հաշվարկի կատարման եղանակ և տնտեսական կամ անալիտիկ եղանակ: Հայաստանի Հանրապետության տնտեսավարման գործընթացում նոր և ավելի առաջավոր եղանակ կարելի է համարել, այսպես կոչված, գործառնական լծակի ազդեցության ուժի միջոցով ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանի խոշորացված հաշվարկի կատարման եղանակը, որի մասին մանրամասն շարադրվել է նախորդ գլուխներում:

Ուղղակի հաշվարկի էությունն այն է, որ շահույթի գումարը որոշվում է իրացվող արտադրանքի կոնկրետ տեսակների համար առանձին-առանձին՝ որպես ձեռնարկության մեծածախ գնի և լրիվ ինքնարժեքի տարբերություն: Իսկ եթե իրացումը կատարվում է բացթողման գներով, ապա համապատասխանորեն համվում է ավելացված արժեքի հարկը, ենթակազմիցային ապրանքների դեպքում՝ ակցիզային և ավելացված արժեքի հարկերը:

Շահույթի պլանավորման այս մեթոդը առավելապես կիրառվում է արդյունաբերության այն ճյուղերում և ձեռնարկություններում, որտեղ արտադրանքի թողարկման տեսականին բազմազան չէ, և ինքնարժեքի առաջադրանք նախատեսվում է յուրաքանչյուր տեսակի համար: Արտադրանքի թողարկման լայն անվանացանկ ունեցող ձեռնարկությունների համար այս եղանակի օգտագործումը կապված է լրացուցիչ դժվարությունների հետ, երբեմն նույնիսկ հնարավոր չէ կիրառել, և գործողության մեջ են դրվում այլ եղանակներ:

Իրականացման տեխնիկայով ուղղակի հաշվարկը բավականաչափ պարզ ու մատչելի է, ապահովում է ճշգրիտ արդյունք, բայց ունի որոշակի թերություններ: Մասնավորապես, հաշվարկված պլանային շահույթի գումարը և հաշվարկի մեխանիզմը պատկերացում չեն տալիս դրա վրա ազդող գործոնների ազդեցության չափի վերաբերյալ, հնարավոր չէ իրական պատկերացում կազմել այն մասին, թե նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ շահույթի բացարձակ աճը որ չափով, ինչ գործոնի ազդեցության արդյունք է, որ մասն է պայմանավորված գործունեության բարելավմամբ, որը՝ անկախ գործոնների փոփոխությամբ:

Հաշվարկը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$\tau = (\emptyset \times \text{Պ}) - (\emptyset \times \text{Ա},$$

որտեղ՝

t –ն՝ իրացումից շահույթի գումարն է,

Ք –ն՝ իրացման ծավալը՝ բնեղեն արտահայտությամբ,

Գ –ն՝ իրացման գինը՝ առանց ակցիզային և ավելացված արժեքի հարկի,

Ի –ն՝ միավոր արտադրանքի պլանային լրիվ ինքնարժեքը:

Իրացումը քանակային և գումարային արտահայտությամբ որոշելու համար ապրանքային արտադրանքից բացի օգտագործվում են նաև փոխանցվող մնացորդները: Թեև հաշվարկի տեխնիկան շատ պարզ ու հեշտընկալելի է, պայմանական տվյալներով այն ցուցադրենք ծավալուն տեսքով՝

Աղյուսակ 12.2.1.

Ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանի հաշվարկը

N	Արտադրանքի անվանումը	Պլանային թողարկումը	Միավորի իրացման ինը՝ առանց անուղղակի հարկերի	Միավորի պլանային լրիվ ինքնարժեքը	Ապրանքային թողարկումը (հազ. դրամ)		Շահույթ՝ 6-7 (հազ. դրամ)
					Գներով 3x4	Ինքնարժեքով 3x5	
Չամենատեղի արտադրանք							
1.	Կոշիկ տղամարդու	2000	8000	6200	16000	12400	3600
2.	Կոշիկ կանացի	4000	9000	7100	36000	28400	7600
3.	Կոշիկ երեխայի	1500	3000	2200	4500	3300	1200
Ընդամենը		–	–	–	56500	44100	12400
Ոչ համենատեղի արտադրանք							
1.	Կոշիկ տնային	500	4000	3800	2000	1900	100
2.	Կոշիկ սպորտային	2200	6600	5900	14520	12980	1540
Ընդամենը		–	–	–	73020	58980	14040
Մուտքա ՝ րվող մնացորդ		–	–	–	2190	1440	750
Ելքային մնացորդ		–	–	–	1800	1380	420
Ընդամենը՝ ապրանքային արտադրանքի իրացումից		–	–	–	73410	59040	14370

Անալիտիկ մեթոդով շահույթի պլանավորումը համեմատաբար աշխատատար է և հիմնված է մի շարք հաշվարկների վրա: Այն իրականացվում է երեք փուլով: Առաջին փուլը նախապատրաստական է և վերաբերում է բազիսային (ելակետային) շահութաբերության հաշվարկին, որն իրականացվում է նախորդ տարվա փաստացի շահույթի և իրացման փաստացի լրիվ ինքնարժեքի միջոցով: Երկրորդ փուլում պլանով նախատեսված համեմատելի ապրանքային արտադրանքը արտահայտվում է նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով, և, ելնելով բազիսային շահութաբերությունից, որոշվում է տվյալ իրացման ծավալի պայմաններում ստացվող շահույթի մեծությունը, երբ բազիսային տարվա շահույթը ձևավորած բոլոր գործոնները մնում են անփոփոխ:

Երրորդ փուլում հաշվի են առնվում պլանային ժամանակաշրջանում շահույթի վրա ազդող գործոնների փոփոխությունների հետևանքները՝ դրական կամ բացասական ազդեցությունը՝ հետևյալ հաջորդականությամբ՝

- ինքնարժեքի իջեցում (բարձրացում),
- տեսականու կառուցվածքային տեղաշարժեր,
- որակի բարձրացում (իջեցում),
- գների փոփոխություն,
- ԱԱՀ դրույթի փոփոխություն (հաստատուն գներով իրացվող ապրանքների և ծառայությունների համար),
- հաշվարկ ոչ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի վերաբերյալ,
- մուտքագրվող մնացորդներին վերաբերող շահույթի հաշվարկ,
- ելքագրվող մնացորդների շահույթի որոշում,
- իրացումից շահույթի պլանի ամփոփ հաշվարկ:

Սովորաբար հաջորդ տարվա շահույթի պլանավորումը սկսվում է ընթացիկ տարվա վերջին, այդ պատճառով օգտագործվում են անցած ժամանակաշրջանի փաստացի և մնացած ժամանակաշրջանի ճշտված պլանային տվյալները (սպասվող կատարողականը):

Ելակետային շահութաբերությունը որոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները:

Հաշվետու տարվա շահույթն ընդունվում է տարեվերջին գործող գների մակարդակին համապատասխան, այսինքն, եթե անցած ժամանակաշրջանի ընթացքում տեղի է ունեցել գների կամ ավելացված արժեքի հարկի դրույթի փոփոխություն, որը անդրադարձել է փաստացի շահույթի վրա, ապա դրանց ազդեցությունը հաշվի է առնվում ըստ ամբողջ ժամանակաշրջանի՝ անկախ փոփոխությունը տեղի ունենալու ժամկետից:

Այնքանով, որ այդ փոփոխված գործոնները հաջորդ (պլանային) տարվա ընթացքում շահույթի վրա անդրադառնալու են լրիվ 12 ամիս, ելակետային շահութաբերությունը ճիշտ լինելու համար ազդեցության չափերը պարտադիր պետք է վերցվեն հաշվետու ամբողջ տարվա կտրվածքով: Օրինակ, եթե հոկտեմբերի 1–ից նկատվել է գների բարձրացում, և արդյունքում շահույթը ավելացել է, ապա բարձրացումը պետք է տարածել մինչև հոկտեմբեր ընկած ամբողջ ժամանակաշրջանի վրա, հակառակ դեպքում փաստացի շահույթը չի կարող ելակետ լինել բազիսային շահութաբերության համար:

Բազիսային շահութաբերության հաշվարկը ցույց տանք կոնկրետ տվյալների միջոցով:

Պայմանականորեն ընդունենք, որ ընթացիկ տարվա ապրանքային արտադրանքի իրացումից սպասվող հասույթը կազմում է 40000 հազ. դրամ, իրացման լրիվ ինքնարժեքը՝ 36000 հազ. դրամ, իսկ շահույթը՝ 4000 հազ. դրամ, ըստ վերլուծության արդյունքների՝ հոկտեմբերի 1-ից տեղի է ունեցել իրացման գների բարձրացում, որը մինչև տարվա վերջը շահույթի վրա անդրադարձել է 1200 հազ. դրամով:

Պարզվել է նաև, որ իրացումը և շահույթի ստացումը ըստ ամիսների բաշխված են մոտավորապես հավասար չափերով: Պլանային տարվա համար նախատեսված է իրացման ծավալի 10% աճ և ինքնարժեքի 4% իջեցում:

Տվյալ պարագայում բազիսային շահութաբերությունը որոշելուց առաջ հարկավոր է ճշգրտել ելակետային շահույթը, այն է՝ արտացոլել նաև այն ազդեցությունը, որպիսին կլինեն, եթե արտադրանքը նոր, բարձրացված գներով իրացվեր տարեսկզբից սկսած: Այդ դեպքում, ըստ համամասնական մոտեցման, մեկ ամսվա ազդեցությունը եղել է 400 հազ. դրամ (1200 : 3), հետևաբար մինչև փոփոխությունը ընկած 9 ամիսների պայմանական ազդեցությունը կլինեն 3600 հազ. դրամ (400 × 9), իսկ շահութաբերության ելակետ ճշտված շահույթը՝ 7600 հազ. դրամ (4000 + 3600): Այստեղից՝ շահույթի պլանավորման համար ընդունվող ելակետային շահութաբերությունը՝

$$P' = \frac{7600 \times 100}{36000} = 21,1\% :$$

Նկատենք, որ շահույթը գների փոփոխության հետ կապված չճշգրտելու դեպքում շահութաբերությունը կկազմեր 10% (4000 × 100/40000) կամ 2 անգամ պակաս: Պատկերացնենք, որ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթը այդ մակարդակով հաշվելու դեպքում սխալվելու հավանականությունը բավականաչափ մեծ է:

Այժմ, ունենալով բազիսային շահութաբերության մակարդակը, որպեսզի որոշենք տվյալ (պլանային) իրացման պայմաններում ստացվելիք շահույթի (իրացման ծավալի ազդեցության) գումարը, անհրաժեշտ է պլանային իրացումը արտահայտել նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով: Քանի որ կա ինքնարժեքի իջեցման առաջադրանք (4%), շահութաբերությունը որոշված է նախորդ տարվա փաստացի ինքնարժեքի նկատմամբ, որի հետ պլանային ինքնարժեքը համեմատելի չէ: Այսպիսով, ըստ տվյալների, հաջորդ տարվա իրացման պլանը համապատասխան (անուղղակի հարկերից մաքրված) գներով նախատեսվում է 44000 հազ. դրամ [40000 + (40000 × 10)/100], իսկ ինքնարժեքով՝ 38016 հազ. դրամ: Հետևաբար, պլանային իրացումը նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով արտահայտելու դեպքում կստանանք՝ 39600(38016 × 100/(100-4)), իսկ իրացման պլանային ծավալի հաշվին սպասվող շահույթի գումարը (շահույթի վրա ազդող բոլոր գործոնները նախորդ տարվա մակարդակին մնալու պայմաններում) կկազմի 8356 հազ. դրամ (39600 × 21.1/100):

Ստացված 8356 հազ. դրամը շահույթի այն մեծությունն է, որի վրա, հաշվի առնելով վերը թվարկված գործոնների փոփոխության դրական կամ բացասական ազդեցությունը, կծնավորվի ապրանքային արտադրանքի իրացումից կամ գործառնական գործունեությունից շահույթի պլանը: Այստեղից էլ շահույթի պլանավորման անալի-

տիկ եղանակի պահանջն է՝ կատարել այդ գործոնների փոփոխության ազդեցության հաշվարկ: Սկսենք ինքնարժեքից:

Մեր դեպքում նախատեսված է ինքնարժեքի իջեցման առաջադրանք (4%), հետևաբար, գործոնի ազդեցությունը դրական է: Ազդեցության չափը կարող ենք որոշել երկու ձևով՝ կամ որպես պլանային իրացման նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով արտահայտված գումարի և ինքնարժեքի պլանի տարբերություն, կամ ելնելով ինքնարժեքի իջեցման առաջադրանքից: Երկու դեպքում էլ կստանանք նույն արդյունքը՝

1. $39600 - 38016 = 1584$ հազ. դրամ,
2. $39600 \times 4/100 = 1584$ հազ. դրամ:

Ապրանքային ու նաև իրացվող արտադրանքի տեսականու կառուցվածքը շահույթի մեծությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկն է: Ոչ միշտ է, որ տեսականու մեջ ընդգրկված արտադրատեսակներն ունեն գների, ինքնարժեքի և շահութաբերության միատեսակ պարամետրեր: Ավելի հաճախ դրանք շահութաբերության մակարդակներով շատ տարբեր են: Հասկանալի պատճառներով տեսականու կազմում նախատեսվող փոփոխություններն առաջ են բերում կառուցվածքի, հետևաբար և միջին շահութաբերության փոփոխություն: Իրացման միևնույն ծավալի դեպքում նույնիսկ շահույթի գումարը, դրա հետ կապված, կարող է ավելանալ կամ պակասել: Վերջին հաշվով, այս գործոնի ազդեցությունը դրսևորվում է շահութաբերության միջին գործակցի փոփոխության միջոցով: Այս դեպքում շահութաբերության գործակիցը հավասար է՝ տոկոսային թվի հարաբերությունը հարյուրի, իսկ տոկոսային թիվը համապատասխան տեսակի (խմբի) տեսակարար կշռի և նախորդ տարվա փաստացի անհատական շահութաբերության արտադրյալն է: Անհատական գործակիցների գումարը արտահայտում է միջին շահութաբերության մակարդակը:

Շահութաբերության միջին մակարդակի փոփոխությունը ինչպես փաստացի, այնպես էլ պլանով նախատեսված տեսականու կառուցվածքի համար կարող է որոշվել հետևյալ բանաձևով.

$$\pm P' = \left(P'_1 \times \frac{\pm S_1}{100} \right) + \left(P'_2 \times \frac{\pm S_2}{100} \right) + \dots + \left(P'_m \times \frac{\pm S_m}{100} \right)$$

կամ

$$\pm P' = \sum \frac{\hat{a} \times P'_0}{100} - \sum \frac{\hat{\phi} \times P'_0}{100} ,$$

որտեղ՝

- P'_1, P'_2, \dots, P'_m –ը՝ համապատասխան արտադրատեսակների նախորդ տարվա փաստացի շահութաբերությունն է,
- S_1, S_2, \dots, S_m –ը՝ համապատասխան արտադրատեսակների տեսակարար կշիռն է ընդհանուր իրացման մեջ,
- $S_{\text{պ}}$ –ն՝ կոնկրետ արտադրատեսակների տեսակարար կշիռն է պլանային տեսականու կառուցվածքում,
- $S_{\text{ֆ}}$ –ն՝ կոնկրետ արտադրատեսակների տեսակարար կշիռն է նախորդ տարվա փաստացի տեսականու կառուցվածքում,
- P'_0 –ն՝ նախորդ տարվա փաստացի շահութաբերությունն է՝ ըստ տեսակների (խմբերի):

Միջին շահութաբերության փոփոխության ազդեցությունը շահույթի վրա որոշելու համար օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\pm \tau = T \times \frac{\pm P'}{100},$$

որտեղ՝

t – Գ՝ շահույթի փոփոխությունն է,

T – Գ՝ ապրանքային արտադրանքի իրացումն է լրիվ ինքնարժեքով,

P՝ – Գ՝ պլանային և փաստացի շահութաբերության տարբերությունն է:

Բավականաչափ լայն տեսականի ունեցող ձեռնարկություններում նախապես կատարվում է խմբավորում՝ ըստ շահութաբերության հատկանիշի: Կատարենք կոնկրետ հաշվարկ՝ ելնելով բերված տվյալներից, ընդունելով նաև, որ նախորդ տարվա իրացումը տեսականու վրա բաշխված է հետևյալ կերպ. կոշիկ տղամարդու՝ 9900, կոշիկ կանացի՝ 11880 և կոշիկ երեխայի՝ 17820 հազ. դրամ: Կազմենք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 12.2.3

Շահույթի վրա տեսականու ազդեցության հաշվարկ

N	Արտադրանքի անվանումը (խումբը)	Նախորդ տարի			Պլանային տարի		
		տես. կշիռ	շահութաբ.	շահ. ործ.	տես. կշիռ	շահութաբ.	շահ. ործ.
1.	Կոշիկ տղամարդու	25	5	1,25	28	5	1,4
2.	Կոշիկ կանացի	30	10	3,0	64	10	6,4
3.	Կոշիկ երեխայի	45	15	6,75	8	15	1,2
		100	x	11,0	100	x	9,0

Այսպիսով, ըստ հաշվարկի տվյալների, արտադրանքի տեսականու կառուցվածքում նախատեսված տեղաշարժերը հանգեցնելու են միջին շահութաբերության՝ 2 տոկոսային կետով իջեցման (9–11), ինչը, անկասկած, հաջորդ տարվա տնտեսական արդյունքի վրա կունենա բացասական ազդեցություն և շահույթի պլանը կնվազեցնի 792 հազ. դրամով (39600x2/100): Նման տեղաշարժը թեև, վերջին հաշվով, ցանկալի չէ, սակայն տեղի է ունենում ձեռնարկության կամքից անկախ, շուկայի թելադրանքով:

Շահույթի պլանի վրա իր դրական կամ բացասական անդրադարձը կարող է ունենալ նաև համեմատելի ապրանքային արտադրանքի որակի փոփոխությունը: Իրացվող արտադրանքի որակական բարեփոխումները կապված են լրացուցիչ ծախսերի իրականացման հետ, ինչը, վերջին հաշվով, իր անդրադարձը շահույթի վրա կարող է ունենալ ինքնարժեքի միջոցով: Բարձր որակը ապահովում է մեծ պահանջարկ և բարձր իրացվելիություն, միաժամանակ՝ դրական արդյունք: Նյութական արտադրության ոլորտում որակական փոփոխությունները կարող են արժեքային դրսևորում ստանալ կոնկրետ արտադրատեսակների իրացման զգերի վրա անհատական վերադիրներ նախատեսելու կամ ամբողջ իրացման ծավալը միջին տեսա-

կային գնով արտահայտելու միջոցով: Առաջին դեպքում կատարվում է ուղղակի հաշվարկ. փաստացի և պլանային իրացումը արտահայտվում են համապատասխան գներով, տարբերությունը ընդունվում է որպես այդ գործոնի ազդեցություն:

Երկրորդ դեպքում, երբ արտադրանքը գնահատվում է տեսակներով (սորտերով), և նախատեսված են տեսակային գներ, հիմք է ընդունվում տեսակայնության միջին գործակիցների փոփոխությունը: Ելնելով նախորդ տարվա արտադրանքի փաստացի որակական կազմից և պլանային տարվա՝ նույն արտադրատեսակների համար նախատեսվածից, որոշվում են տեսակայնության միջին գործակիցներ (փաստացի և պլանային), որոնց տարբերությունը ցույց է տալիս որակի իջեցումը կամ բարձրացումը նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ: Տեսակայնության գործակից որոշման ավանդական բանաձևը հետևյալն է՝

$$i\text{ՕԾ} = \frac{2.000 \times 100}{12.000} = 16.7$$

որտեղ՝

$Կ, Կ_1, Կ_2, Կ_3$ – ը՝ համապատասխանորեն բարձր, առաջին, երկրորդ և երրորդ տեսակների կշիռն է ընդհանուր իրացման մեջ,

$Գ, Գ_1, Գ_2, Գ_3$ – ը՝ համապատասխան տեսակների գներն են՝ հարաբերական արտահայտությամբ (առաջին տեսակի գինը ընդունվում է 100, մյուսները այդ գնի նկատմամբ տոկոսներով):

Այս գործոնի ազդեցությունն ավելի ընկալելի դարձնելու համար կատարենք հաշվարկ հետևյալ օրինակի տվյալներով: Ընդունենք, որ մեր ձեռնարկության պլանային ու փաստացի իրացումը և տեսակային գները ունեն հետևյալ պատկերը.

Աղյուսակ 12.2.4

Տեսակայնության գործակից հաշվարկ

Տեսակները	Իրացման ումարդ ինքնարժեքով		Տեսակարար կշիռը		Իրացման ինը	
	փաստ.	պլան.	փաստ.	պլան.	բացարձակ	հարաբ.
I տեսակ	24800	26000	68,9	65,6	8500	100
II տեսակ	10600	9000	29,4	22,7	7000	82,4
III տեսակ	600	4600	1,7	11,7	6500	76,5
Ընդամենը	36000	39600	100	100	x	x

Այստեղից՝ տեսակայնության միջին գործակիցը նախորդ տարվա փաստացի կառուցվածքի պայմաններում կկազմի՝

$$K_{\phi} = \frac{68,9 \times 100 + 29,4 \times 82,6 + 1,7 \times 76,5}{100} = 94,48,$$

իսկ պլանով նախատեսվածի դեպքում՝

$$K_{\text{պլ}} = \frac{65,6 \times 100 + 22,7 \times 82,4 + 11,7 \times 76,5}{100} = 93,26 :$$

Պարզվում է, որ դրական տեղաշարժերը նույնպես շահույթի վրա բացասական ազդեցություն են ունենալու, քանի որ տեսակայնության գործակիցը նվազելու է 1,18 կետով (93,26–94,48): Ազդեցության գումարը կկազմի 467 հազ. դրամ:

Անալիտիկ եղանակով շահույթի պլանավորման ընթացքում հաշվի առնվող հաջորդ գործոնը գների փոփոխությունն է: Ազատականացված գների պայմաններում դրանց մակարդակը նախապես ֆիքսված ու կայուն չէ, տատանումները կրում են ընթացիկ բնույթ և թելադրվում են շուկայական պայմաններով: Այնքանով, որ գները փոխվում են հաճախակի, շահույթը պլանավորելիս այս գործոնը չպետք է շրջանցվի: Ուղեցույց են համարվում մարքեթինգային հետազոտությունների արդյունքով կատարվող կանխատեսումները: Շահույթի վրա գների փոփոխության ազդեցությունը դրսևորվում է տվյալ իրացման ծավալի գործող ու սպասվող գներով՝ զուտ հասույթի տարբերության չափով: Երբ հասույթը ձևավորվում է անուղղակի հարկեր ներառող գներով (բացթողնման գին ակցիզով և ԱԱՀ–ով), այն նախապես պետք է այդ հարկերից զտել:

Հաշվարկը ցույց տանք օրինակի վրա՝ նախապես ընդունելով, որ սպասվում է տղամարդու կոշիկի գնի 20% բարձրացում, կանանց կոշիկի գնի 15% իջեցում, մյուս արտադրատեսակների գնի փոփոխություն չի սպասվում:

Աղյուսակ 12.2.5

Շահույթի պլանի վրա գների փոփոխության ազդեցության հաշվարկ

Արտադրանքի անվանումը	Իրացման պլան. ծավ. (զույ.)	Բացթողման ինը		Զուտ հասույթը (հ.դ.)		Տարբերություն 6–5 (հ.դ.)
		Գործող	Սպասվող	Գործողներ 2×3:120	Սպասվողներ 2×4:120	
Կոշիկ տղամարդու	2000	9600	11520	16000	19200	+3200
Կոշիկ կանացի	4000	10800	10759.15	36000	358639	-1361
						-1839

Գների փոփոխության ազդեցությունը շահույթի վրա ստացվում է դրական՝ 1819 դրամ:

Արդեն ասվել է, որ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթը որոշվում է ուղղակի հաշվարկի միջոցով՝ որպես զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի տարբերություն: Մեր օրինակում այդ արտադրանքի տեսականին սահմանափակ է՝ ընդամենը երկու անուն, որոնց իրացումից պլանային հասույթը նախատեսված է 16520 հազ. դրամ (2000+14520), իսկ ինքնարժեքը՝ 14880 հազ. դրամ (1900+12980): Արդյունքում այս գործոնի ազդեցությունը շահույթի պլանի վրա դրական է և կազմելու է 3520 հազ. դրամ:

Շահույթի պլանավորման ուղղակի եղանակի արդյունքներով մեզ համար պարզվել են նաև փոխանցվող մնացորդների մեջ առկա շահույթի գումարները և՛ մուտքագրվող մնացորդինը՝ 750 հազ. դրամ (դրական), ելքագրվողինը՝ 420 հազ. դրամ (բացասական): Ի վերջո, անալիտիկ եղանակով շահույթի պլանավորման վերջնական արդյունքի ամփոփ հաշվարկը կունենա հետևյալ պատկերը.

**Անալիտիկ եղանակով ապրանքային արտադրանքի իրացումից
շահույթի պլանի ամփոփ հաշվարկը**

N	Շահույթի վրա ազդող ռոժոնները	Ազդեցության ուժ- մարը (հազ. դրամ)
1.	Համեմատելի ապրանքային արտադրանքի իրացման ծավալի ազդեցությունը	8356
2.	Ինքնարժեքի փոփոխության ազդեցությունը	1584
3.	Տեսականու կառուցվածքի փոփոխության ազդեցությունը	- 792
4.	Իրացվող արտադրանքի որակի փոփոխության ազդեցությունը	- 467
5.	Իրացման մեթոդի փոփոխության ազդեցությունը	- 1839
6.	Ոչ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթը	3520
7.	Մուտքա ռվոլ մնացորդի հաշվով շահույթը	750
8.	Ելքա ռվոլ մնացորդի հաշվով շահույթը	- 420
9.	Ապրանքային արտադրանքի իրացումից (ռոժառնական) շահույթի պլանը	14370

Ձեռնարկչատիրական գործունեության հիմնական նպատակի՝ շահույթի ստացման գործում սովորաբար գլխավոր դերը պատկանում է գործառնական բնագավառին, սակայն, շատ հաճախ, գործնականում շահույթ է ստացվում նաև այլ գործունեությունից: Այդ առումով կարևոր խնդիր է շահույթի կազմը որոշելը: Ձեռնարկչատիրության ընդհանուր գործունեությունից ստացվող շահույթի ընդհանուր ծավալն իրենից ներկայացնում է **համախառն շահույթը**: Վերջինիս մեծության վրա ազդում է ձեռնարկության գործունեությունից կախված և անկախ գործոնների մի ամբողջություն:

Համախառն շահույթի կազմում առաջին հերթին հաշվի է առնվում հիմնական գործունեության շահույթը, որը գլխավոր դեր ունի: Դրա կազմի մեջ ընդգրկվում է այլ ոչ ապրանքային արտադրանքի և ծառայությունների իրացումից շահույթը, որը, մասնավորապես, վերաբերում է օժանդակ գյուղատնտեսական, ավտոտրանսպորտային և այլ տնտեսություններին, որոնք գտնվում են հիմնական ձեռնարկության հաշվեկշռում:

Համախառն շահույթի մեջ մտնում են նաև ոչ ընթացիկ ակտիվների և այլ գույքի իրացումից հասույթը, մնացորդային արժեքի և իրացման հետ կապված ծախսերի տարբերությունը (շահույթ): Վերջապես, համախառն շահույթը ներառում է արտաիրացումային եկամուտներն ու ծախսերը ևս, այսինքն՝ արտաիրացումային հետևանքները:

Այլ իրացումից շահույթը (օժանդակ գյուղատնտեսական տնտեսության, ավտոտնտեսության, ոչ արդյունաբերական ծառայության, կապիտալ շինարարության ու կապիտալ նորոգումների համար և այլն) պլանավորվում է ուղղակի հաշվարկի մեթոդով: Միայն տվյալ արտադրանքի և ծառայությունների խիստ ցածր տեսակարար կշռի դեպքում է, որ շահույթը պլանավորվում է՝ ելնելով ծավալից և հաշվետու ժամանակաշրջանի շահութաբերության մակարդակից:

Այլ իրացման արդյունքը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական:

Արտաիրացումային հետևանքների ավանդական հողվածներն են տուգանքները,

տույժերը և այլն, որոնք հաշվարկվում են՝ ելնելով նախորդ տարիների փորձից և կոնկրետ պայմաններից: Ինչ վերաբերում է այնպիսի հողվածներին, եկամուտներին, ինչպիսիք են այլ ձեռնարկությունների գործունեությանը բաժնային մասնակցության եկամուտները, գույքը վարձակալության տալը, արժեթղթերի դիմաց տոկոսները, դրանք պլանավորվում են՝ ելնելով տվյալ տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկչատիրական գործունեության զարգացման կանխատեսումներից:

Եթե պայմանականորեն ընդունենք, որ այլ արտադրանքի և ծառայությունների իրացումից նախատեսված է 2600 հազարի շահույթ, արտաիրացումային հետևանքներ (դրական)՝ 1400 հազար դրամ, ապա մեր ձեռնարկության համախառն շահույթի պլանը կկազմի 18370 հազ. դրամ (14370 + 2600 + 1400):

Ձեռնարկչատիրական գործունեության մեջ ներգրավված անձանց, նաև հասարակության համար շահույթի պլանավորման գործընթացը, ի վերջո, չի ավարտվում միայն տարեկան սպասվելիք ծավալը որոշելով: Վերջնական արդյունքում նրանց և պետությանը հետաքրքրում է և առավելապես շահագրգռված են իրենց մասնաբաժիններով, դրա հաշվին իրականացվելիք հնարավոր միջոցառումների ծավալով: Բնականաբար, ներդրողները առավել հետամուտ են զուտ շահույթի այն մասին, որը բաշխվելու է շահաբաժինների ձևով, գործընթացն իրականացնողները զուտ շահույթի հաշվին արտադրության մեջ ներդրումների, աշխատողները՝ սոցիալական բարեփոխումների, վարձատրության բարձրացմանն ուղղվող մասով, պետությունը՝ գլխավորապես շահութահարկով ու այլ վճարումներով: Յետևաբար, շահույթի պլանավորումը դեռևս շարունակվում է դրա օգտագործման ու ծախսման ուղղությունները մշակելիս: Բնականաբար, շահույթի բաշխումն ու օգտագործումը դիտվում են որպես կարևոր տնտեսական գործընթացներ, որոնցով ապահովվում են ձեռնարկատերերի կարիքների բավարարումը և հանրապետության բյուջեի որոշակի եկամուտների ձևավորումը: Շահույթի բաշխման մեխանիզմի նկատմամբ հիմնական պահանջը, բոլոր ժամանակներում և հատկապես շուկայական էկոնոմիկայի դեպքում, եղել և մնում է տնտեսավարման արդյունավետության բարձրացմանը ամեն կերպ նպաստելը:

Հասարակական արտադրության օբյեկտիվ պայմաններից կախված՝ շահույթի բաշխման մեխանիզմը մշտապես ենթարկվել է փոփոխությունների և համարվել է տնտեսական ռեֆորմների կենտրոնական հարցերից մեկը: Դրա կարևորագույն խնդիրներից մեկը, ինչպես նախքան շուկայական հարաբերություններին անցնելը, այնպես էլ դրանց զարգացման պայմաններում, համարվել և համարվում է պետական բյուջե կենտրոնացվող և տնտեսավարող սուբյեկտների տնօրինմանը թողնվող մասերի միջև օպտիմալ հարաբերակցության ստեղծումը:

Ձեռնարկությունների, կազմակերպությունների համատարած սեփականաշնորհման արդյունքում տնտեսավարող սուբյեկտներն իրավունք են ձեռք բերում ստացած շահույթն իրենց հայեցողությամբ օգտագործելու, բացառությամբ այն մասի, որը ենթակա է պարտադիր նվազեցումների և հարկադրման՝ գործող օրենսդրությամբ համապատասխան: Տրամաբանորեն, բոլոր մասնակիցների համար անհրաժեշտություն է դառնում շահույթի բաշխման հստակ համակարգի գոյությունը նախ և առաջ զուտ շահույթի ձևավորմանը նախորդող փուլում, այսինքն՝ պետք է նախօրոք ու պարզորոշ հայտնի լինի, թե տնտեսական զուտ արդյունքի որ մասը նրանք կարող են լիիրավ տնօրինել և ինչպիսի մեխանիզմով:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների շահույթի բաշխումը հիմնականում կանոնակարգվում է «Շահութահարկի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ-ի մեջ մտնող որոշ երկրների, որտեղ շահութահարկով հարկման ենթակա շահույթի մեծությունը որոշվում է համախառն շահույթից օրենսդրությամբ նախատեսված որոշակի հանումներ կատարելու ճանապարհով՝ Հայաստանի Հանրապետության վերը նշված օրենքը նախատեսում է բոլորովին այլ մոտեցում:

«Շահութահարկի մասին» օրենքով հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և տվյալ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Տպավորություն է ստեղծվում, որ հարկվող շահույթը հանդես է գալիս շահույթից անկախ: Եվ իրոք այդպես է, փաստորեն, համախառն (հաշվեկշռային) շահույթը բոլորովին այլ՝ հարկվող շահույթի հետ առնչություն չունեցող մեծություն է և ծառայում է միայն որպես հարկի վճարման աղբյուր: Համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունը, ըստ էության, միջանկյալ արտահայտություն է, բովանդակությամբ գործառնական շահույթի (իրացումից զուտ հասույթի և արտադրության ու իրացման ծախսերի տարբերություն) հետ կարող է նույնական չլինել: Այս առումով պարզ չէ նաև, թե չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ, տուրքեր և այլն) վճարման աղբյուրը շահույթն է, թե իրացումից հասույթը:

Համախառն եկամուտը, գործող օրենքի իմաստով, ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի կողմից ստացված բոլոր եկամուտների ամբողջությունը՝ անկախ դրանց ստացման աղբյուրից: Մասնավորապես, եկամուտ են համարվում արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, ընթացիկ ու ոչ ընթացիկ ակտիվների իրացումից հասույթը, փոխատվությունների, վարձակալության դիմաց ստացված վճարները, ռոյալթիները, շահաբաժինները, ապահովագրական, վնասի փոխհատուցման, պարտքերի, տույժ ու տուգանքների, հայցային վաղեմությունը կորցրած կրեդիտորական պարտքերի դիմաց փոխհատուցումներն ու եկամուտները և այլն: Գործնականում եկամուտ չեն համարվում միայն մասնակիցների կանոնադրական կապիտալում կատարած ներդրումները և արտաթույթի վերագնահատման դրական տարբերությունը:

Նվազեցումները հստակորեն բաժանվում են երեք խմբի՝ ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ: Ծախսերի թվին են դասվում նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի ծախսերը, ապահովագրական, չփոխհատուցվող հարկերի վճարները, փոխառու միջոցների տոկոսները, կոմերցիոն ու այլ ծախսերը:

Ինչպես արդեն նշվել է, շահութահարկը վճարելուց հետո մնում է ձեռնարկության զուտ շահույթը, որը կազմակերպությունը տնօրինում է ինքնուրույնաբար: Իր հայեցողության տակ մնացող զուտ շահույթը կարող է օգտագործվել տարբեր խնդիրներ լուծելու համար՝ ձեռնարկչատիրական գործունեության հետագա զարգացման, ներտնտեսական այլ պահանջների բավարարման: Ոչ մի կազմակերպություն, ընդհուպ նաև պետությունը, իրավունք չունի միջամտելու այդ շահույթի օգտագործման ուղղություններին: Սեփական շահույթի օգտագործման առաջնայնությունները որոշվում են շուկայական պայմաններից ելնելով: Մրցակցության հետագա զարգացումը պահանջ է դնում արտադրության ընդլայնման, կատարելագործման, տեխնիկական հագեցման, աշխատողների նյութական ու սոցիալական պահանջների բավարար-

ման, ինչը և դառնում է գլխավոր կողմնորոշող գործոնը: Ջուտ շահույթը ներկա պայմաններում սեփական շրջանառու կապիտալի լրացման ամենանպատակահարմար աղբյուրն է, միաժամանակ ուղղվում է նաև հիմնական միջոցների ձեռքբերման, շրջանառու միջոցների պակասը լրացնելու համար ստացած փոխառությունների մարման և ժամկետանց վարկերի դիմաց տոկոսների վճարման նպատակներին:

Արտադրության ընդլայնման, տեխնիկական հագեցման, արդիականացման և այլ միջոցառումներին զուգընթաց ձեռնարկության զուտ շահույթը կարող է ծախսվել նաև կոլեկտիվի սպառողական ու սոցիալական կարիքների բավարարման նպատակով՝ ի վերջո բաժանվելով կուտակման և սպառման ֆոնդերի: Բոլոր դեպքերում ձեռնարկությունների համար կարևոր խնդիր է սպառման ու կուտակման ֆոնդերին շահույթից տրվող հատկացումների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը՝ չանտեսելով պահուստներին հատկացում կատարելու անհրաժեշտությունը (ֆինանսական ռեզերվ, ռիսկային ֆոնդ), իսկ բաժնետիրական ընկերություններում նաև շահաբաժինների ֆոնդի ձևավորումը:

Սեփականության բաժնետիրական ձևը ենթադրում է ակցիաների, փոխառությունների և այլ արժեթղթերի բացթողում: Դրանք նպաստում են ընդհանուր եկամտաբերության բարձրացմանը և պահանջում են որոշակի բաժնետիրական եկամտի մակարդակ՝ շահաբաժինների տեսքով: Բաժնետոմսերի տեսակով պայմանավորված՝ կարող են ձևավորվել եկամտաբերության տարբեր մակարդակներ: Արտոնյալ բաժնետոմսերի դեպքում եկամտաբերության մակարդակը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը նախապես ֆիքսվում են և, անկախ զուտ շահույթի գումարից, ենթակա են պարտադիր վճարման: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դեպքում շահաբաժինների չափը պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին հերթին այն կախված է ստացված զուտ շահույթի գումարից, ապա՝ դրանից շահաբաժիններին հատկացնելու հնարավորությունից՝ կապված ավելի առաջնահերթ ծախսեր կատարելու անհրաժեշտության հետ, ինչպես նաև թողարկված բաժնետոմսերի ընդհանուր քանակի մեջ արտոնյալ բաժնետոմսերի բաժնի և դրանց եկամտաբերության մակարդակից:


Օրինակ՝ ընդունենք, որ ձեռնարկությունը թողարկել և իրացրել է 3000 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 1000 դրամ արժեքով: Արտադրանքի իրացումից զուտ հասույթը 40000 հազ. դրամ է, իսկ համախառն շահույթը՝ 4000 հազ. դրամ: Շահույթից բյուջեին ընդհանուր վճարումները կազմել են 800 հազ. դրամ: Այս դեպքում ձեռնարկության զուտ շահույթը կկազմի 3200 հազ. դրամ (4000 – 800), որի 30%–ը ուղղվում է շահաբաժինների վճարմանը: Հետևաբար, սովորական բաժնետոմսերի շահաբաժիններին հատկացվող զուտ շահույթը, ըստ բանաձևի, կունենա հետևյալ արտահայտությունը՝

$$\frac{1}{4}b' = \left(\frac{1}{4}b \times b_i \right) - \left(\frac{22\theta}{100} \times b_i \right) = \frac{3200 \times 30}{100} = 960 :$$

Քանի որ տվյալ ձեռնարկությունը արտոնյալ բաժնետոմսեր բաց չի թողել, զուտ շահույթի 30%–ը լրիվությամբ բաշխվում է սովորական ակցիաների վրա: Արդյունքում բաժնետոմսերի շահութաբերությունը կլինի 32%:

Արտադրական կազմակերպությունների շահույթի օգտագործման ամբողջական պատկերը հստակորեն արտահայտում է ստորև բերվող գծապատկերը:

Հաշվեկշռային շահույթի բաշխման ընդհանուր գծապատկերը



Փիտեկիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է արտադրական կազմակերպության արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հասույթի բովանդակությունը:
2. Որո՞նք են հասույթի մեծությունը պայմանավորող գործոնները:
3. Ո՞րն է շահույթի բովանդակությունը՝ որպես գործունեության նպատակի և արդյունավետության (ֆինանսական հետևանքի) ցուցանիշի:
4. Որո՞նք են շահույթի վրա ազդող գործոնները, և շահույթի ինչպիսի՞ ընկալումներ կան:
5. Որո՞նք են շահույթի պլանավորման եղանակները, ցույց տալ դրանց մեխանիզմներն ու առանձնահատկությունները:
6. Որո՞նք են շահույթի օգտագործման ուղղությունները արտադրական կազմակերպություններում:

ԳԼՈՒԽ 13

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԸ

13.1. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկատիրական ցանկացած գործունեություն իրականացնող կազմակերպություն, անկախ սեփականության ձևից, իրավական կարգավիճակից և ծրագրի ծավալից, անհրաժեշտաբար պետք է նախապես ավանսավորի համապատասխան մեծության կապիտալ, որն առարկայանում է արտադրական շենքերի, կառույցների, մեքենա–սարքավորումների, հարմարանքների, գործիքների, հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, վառելիքի, այլ նյութական արժեքների մեջ՝ մասամբ մնալով դրամական ձևի տեսքով:

Արտադրական գործունեության մեջ օգտագործվող միջոցները արտադրությանը մասնակցելու առանձնահատկություններով և օգտակար շահագործման տևողությանը տարբեր են: Եթե շենքերը, կառույցները, հոսքային գծերը, սարքավորումներն ու մեքենաները արտադրության գործընթացին մասնակցում են տևական ժամանակաշրջանում, ապա հումքը, հիմնական ու օժանդակ նյութերը, վառելիքը և այլ ընթացիկ ակտիվներ արտադրական գործընթացին իրենց մասնակցությունն ավարտում են շրջապտույտի մեկ փուլի ընթացքում, ընդ որում սպառվում են ամբողջությամբ և նորից արտադրական գործընթացի մեջ կարող են մտնել լրիվությամբ վերականգնվելուց և համարվելուց հետո:

Հասարակական կապիտալի շարժումը ամբողջական ընթացք է ստանում հիմնական, շրջանառու և շրջանառության կապիտալների շրջապտույտների միասնության մեջ: Կապիտալի նման ստորաբաժանումը բխում է նրա առանձին մասերի՝ հասարակական ամբողջական, համախառն ներքին և համախառն ազգային արդյունքի արտադրության գործընթացում կատարած ֆունկցիոնալ դերից: Մասնավորապես, արտադրական կապիտալը հիմնականի և շրջանառուի դասակարգելը պայմանավորվում է դրանց նյութական կրողների՝ ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների արժեքը նոր արդյունքին փոխանցելու տարբերություններով, շրջապտույտի տևողությամբ (օգտակար օգտագործման ժամանակով) և արտադրության մեջ կատարած ֆունկցիոնալ դերով:

Արտադրության միջոցները, անկախ արտադրության իրականացման հասարակական–տնտեսական պայմաններից, միշտ ստորաբաժանվում են աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկաների: Արտադրության կապիտալիստական եղանակի պայմաններում աշխատանքի միջոցներն ու առարկաները հանդես են գալիս հիմնական ու շրջանառու կապիտալի ձևով: Արտադրական ֆոնդերը կազմում են արտադրության նյութական հիմքը, իսկ շրջանառու ֆոնդերը սպասարկում են արդյունքի շրջանառության և բաշխման գործընթացը:

Շրջանառու միջոցները միաժամանակ կազմակերպության ունեցվածքի բաղկացուցիչ մասերից են: Դրանց դրությունը և օգտագործման արդյունավետությունը հաջող գործունեության կարևոր նախապայմաններից են: Շուկայական հարաբերու-

թյունների զարգացումը առաջ է բերում դրանց կազմակերպման նոր պայմաններ և պահանջներ: Բարձր ինֆլյացիան, չվճարումները և այլ ճգնաժամային երևույթներ կազմակերպություններին դրդում են փոփոխության ենթարկել շրջանառու միջոցների առնչությամբ տարվող քաղաքականությունը, փնտրել համալրման նոր աղբյուրներ, դիտարկել օգտագործման արդյունավետության բարձրացման նոր ուղիներ:

Արտադրության անընդհատության ապահովման պայմաններից մեկը արտադրության միջոցների պարբերական նորացումն է, որն էլ իր հերթին որոշում է վերջիններիս շարժի անընդհատությունը: Շրջանառության մեջ շրջանառու միջոցները հաջորդաբար ընդունում են դրամական, արտադրական և ապրանքային ձևեր, ինչն էլ համապատասխանում է դրանց՝ արտադրական և շրջանառության ֆոնդերի բաժանմանը:

Արտադրական ֆոնդերի նյութական կողմեր են արտադրության միջոցները, որոնք ստորաբաժանվում են աշխատանքի առարկաների և աշխատանքի միջոցների: Պատրաստի արտադրանքը դրամական միջոցների և հաշվարկների մեջ գտնվող միջոցների հետ միասին գոյացնում է շրջանառության ֆոնդերը:

Արտադրական ֆոնդերի շրջապտույտը սկսվում է հունքի, նյութերի, վառելիքի և այլ միջոցների գնմանն ուղղված արժեքի ավանսավորումից (դրամական տեսքով)՝ շրջապտույտի առաջին փուլ: Արդյունքում դրամական միջոցները շրջանառության ոլորտից անցնում են արտադրության ոլորտ: Այս դեպքում արժեքը չի ծախսվում, քանի որ շրջապտույտի ավարտից այն վերադառնում է: Առաջին փուլի եզրափակումով ընդհատվում է ապրանքային շրջանառությունը, բայց ոչ շրջապտույտը:

Շրջապտույտի երկրորդ փուլը կատարվում է արտադրության գործընթացում, որտեղ աշխատուժը իրականացնում է արտադրության միջոցների օգտագործումը՝ ստեղծելով նոր ապրանք, որն իր մեջ կրում է փոխանցված և նոր ստեղծված արժեքը: Ավանսավորված արժեքը նորից փոխում է իր ձևը՝ արտադրականից անցնելով ապրանքայինի:

Շրջապտույտի երրորդ փուլը ներառում է արտադրված պատրաստի արտադրանքի իրացումը և դրամական միջոցների ստացումը: Այս փուլում շրջանառու միջոցները նորից անցնում են կատարում արտադրության ոլորտից շրջանառության ոլորտ: Ընդհատված ապրանքային շրջանառությունը վերականգնվում է, և արժեքը ապրանքային ձևից վերածվում է դրամականի: Ավարտելով մեկ շրջապտույտ՝ շրջանառու միջոցները մտնում են մյուսի՝ նորի մեջ, և, այդպիսով, իրականացվում է դրանց անընդհատ պտույտը: Շրջանառու միջոցների անընդհատ շարժը արտադրության և շրջանառության անխափան գործընթացի հիմքն է:

Արտադրական ֆոնդերի շրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ ավանսավորվող արժեքը ոչ միայն հաջորդաբար ընդունում է տարբեր ձևեր, այլև անընդհատ և որոշակի չափով մնում է այդ ձևերում:

Կազմակերպությունների ֆոնդերի շրջապտույտը կարող է կատարվել միայն որոշակի՝ դրամական տեսքով ավանսավորված արժեքի առկայության դեպքում: Ստեղծվող շրջապտույտի մեջ՝ այն հաջորդաբար փոփոխում է միայն իր ֆունկցիոնալ ձևը: Դրամական տեսքով՝ նշված արժեքը իրենից ներկայացնում է տվյալ օղակի շրջանառու միջոցները:

Շրջանառու միջոցները հանդես են գալիս նախ և առաջ որպես արժեքային կատեգորիա: Դրանք նյութական արժեքներ չեն այն առումով, որ դրանցից հնարավոր

չէ ստանալ պատրաստի արտադրանք: Հանդես գալով որպես արժեք՝ դրամական տեսքով, շրջանառու միջոցներն արդեն շրջապտույտի ընթացքում ընդունում են անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի, արտադրական պաշարների տեսք: Ի տարբերություն ապրանքանյութական արժեքների՝ շրջանառու միջոցները չեն ծախսվում, չեն սպառվում, այլ ավանսավորվում են՝ մի պտույտի ավարտից հետո դուրս գալով և մտնելով մյուսի մեջ: Ավանսավորման պահը շրջանառու միջոցների էական և տարբերիչ գծերից մեկն է, քանի որ կարևոր դեր է խաղում դրանց տնտեսական սահմանների կայացման գործում:

Շրջանառու միջոցների ավանսավորման ժամանակավոր չափանիշ է ոչ թե եռամսյակային կամ տարեկան ֆոնդերի ծավալը, այլ մեկ շրջապտույտը, որից հետո դրանք համալրվում և մտնում են հաջորդի մեջ: Շրջանառու միջոցների էության դիտարկումը ենթադրում է շրջանառու ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի ուսումնասիրություն: Շրջանառու միջոցների բաղադրիչները (նյութական կրողները)՝ շրջանառության ֆոնդերը և շրջանառու ֆոնդերը, գոյություն ունեն միասնության և փոխկապվածության մեջ, բայց դրանց միջև կան նաև էական տարբերություններ:

Նախ՝ շրջանառու միջոցները մշտապես գտնվում են գործունեության բոլոր աստիճաններում: Արտադրական պաշարները, լինելով շրջանառու ֆոնդերի մի մասը, անցնում են արտադրության գործընթաց, վերածվում պատրաստի արտադրանքի և առաքվում սպառման: Շրջանառու ֆոնդերն ամբողջությամբ օգտագործվում են արտադրության ընթացքում՝ իրենց արժեքը փոխանցելով պատրաստի արտադրանքին: Դրանց շրջանառվող գումարը կարող է տարվա ընթացքում տասնյակ անգամ գերազանցել շրջանառու միջոցների գումարը՝ ապահովելով յուրաքանչյուր պտույտի կատարման ժամանակ վերամշակում կամ աշխատանքի առարկաների նոր խմբաքանակների օգտագործում, որոնք մնում են տնտեսության մեջ՝ իրականացնելով փակ շրջապտույտ:

Շրջանառու ֆոնդերն իրենց ուղղակի մասնակցությունն են ունենում նոր արժեքի ստեղծմանը, իսկ շրջանառու միջոցները՝ անուղղակի՝ շրջանառու ֆոնդերի միջոցով:

Եթե շրջանառու միջոցներն ուղղակի և անուղղակի մասնակցեին նոր արտադրանքի ստեղծմանը, ապա դրանք աստիճանաբար կնվազեին և պտույտի ավարտի պահին պետք է վերանային: Շրջանառու ֆոնդերը, իրենցից ներկայացնելով սպառողական արժեք, հանդես են գալիս միայն արտադրական տեսքով:

Բերված պարագաները ստեղծում են շրջանառու միջոցների և շրջանառու ֆոնդերի շրջանառելիության տարանջատման օբյեկտիվ անհրաժեշտություն:

Շրջանառու միջոցների և շրջանառության ֆոնդերի համեմատությունը, որը շրջանառելիության փուլում շրջանառու միջոցների ֆունկցիոնալ ծնն է, հանգեցնում է հետևյալ արդյունքների. կազմակերպությունների ֆոնդերի շրջապտույտը ավարտվում է արտադրանքի (ծառայություն, աշխատանք) իրացման գործընթացով: Տվյալ գործընթացի նորմալ իրականացման համար դրանք հիմնական և շրջանառու ֆոնդերի հետ մեկտեղ պետք է տնօրինեն նաև շրջանառության ֆոնդերը:

Շրջանառության ֆոնդերի պտույտը անխզելիորեն կապված է շրջանառու արտադրական ֆոնդերի պտույտի հետ և կազմում է դրանց շարունակությունն ու եզրափակումը: Կատարելով շրջապտույտ՝ այս ֆունկցիաները միախլուսվում են՝ ստեղծելով մեկ ընդհանուր պտույտ, որի ընթացքում աշխատանքի առարկաների վրա փո-

խանցված շրջանառու ֆոնդերի արժեքը անցում է կատարում արտադրության ոլորտից շրջանառության ոլորտ, իսկ ավանսավորված արժեքի չափով շրջանառության ֆունկցիայի արժեքը՝ շրջանառության ոլորտից արտադրության ոլորտ: Այսպես իրականացվում է ավանսավորված միջոցների միասնական պտույտը, որն անցնում է տարբեր ֆունկցիոնալ ձևերով և վերադառնում էլակետային դրամական ձևին: Շրջանառու միջոցները, կատարելով շրջապտույտ, արտադրության ոլորտից, որտեղ գործում են որպես շրջանառու ֆոնդեր, անցում են կատարում շրջանառության ոլորտ, որտեղ գործում են որպես շրջանառության ֆոնդեր:

Շրջանառու միջոցների բնորոշումը՝ որպես շրջանառու արտադրական ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի ստեղծվող պաշարների մեջ ավանսավորված դրամական միջոցներ, չի արտացոլում այս կատեգորիայի ամբողջ տնտեսական բովանդակությունը: Այն հաշվի չի առնում, որ դրամական միջոցների որոշակի գումարի ավանսավորման հետ մեկտեղ կատարվում է լրացուցիչ ապրանքի, արժեքի՝ այդ պահուստներում ավանսավորման գործընթաց: Այդ իսկ պատճառով շահութաբեր կազմակերպություններում ֆոնդերի շրջապտույտի ավարտից հետո ստացված շահույթից ավանսավորված շրջանառու միջոցների գումարը աճում է որոշակի չափով: Ոչ շահութաբեր օղակներում ավանսավորված շրջանառու միջոցների գումարը ֆոնդերի պտույտից հետո նվազում է՝ կապված կրած վնասների հետ:

Շրջանառու միջոցները հաճախ նույնացվում են դրամական միջոցներին, մինչդեռ դրանք ուղղակի իմաստով դրամական միջոցներ կոչելն անթույլատրելի է: Այն միջոցները, որոնք առարկայացած են արտադրության կամ շրջանառության մեջ, պետք է նույնացնել փողի հետ: Ամբողջական արժեքը ավանսավորվում է դրամական ձևերում և, անցնելով արտադրության և շրջանառության գործընթացները, նորից ընդունում է այդ ձևը: Դրամական միջոցները հանդես են գալիս որպես միջոցների շարժի միջնորդող օղակ:

Այսպես՝ շրջանառու միջոցներն իրենցից ներկայացնում են դրամական ձևով ավանսավորված արժեք, որը դրսևորվում է շրջանառու արտադրական ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի անհրաժեշտ, նվազագույն պաշարների պլանաչափ ձևավորման և օգտագործման համար, ինչը ապահովում է արտադրական ծրագրի և հաշվարկների ժամանակին իրականացումը:

Ընդհանրապես շրջանառու միջոցները կատարում են երկու ֆունկցիա՝

1. արտադրական,
2. հաշվարկային:

Կատարելով առաջին ֆունկցիան՝ շրջանառու միջոցներն ավանսավորվում են շրջանառու արտադրական ֆոնդերում, արտադրությանը տալիս են նյութաիրային բովանդակություն, ապահովում են արտադրական գործընթացի անընդհատությունը և իրենց արժեքը ամբողջությամբ փոխանցում նոր արդյունքին՝ ապրանքային արտադրանքին: Արտադրության ավարտից հետո շրջանառու միջոցներն անցնում են շրջանառության ոլորտ շրջանառության ֆոնդերի տեսքով, որտեղ կատարում են երկրորդ ֆունկցիան՝ շրջապտույտի ավարտը և շրջանառու միջոցների՝ ապրանքային ձևից դրամականի վերածվելը:

Արտադրական կազմակերպությունների աշխատանքի համաչափությունը և բարձր արդյունավետությունը պայմանավորված են շրջանառու միջոցներով ապա-

հովվածությամբ: Նյութական միջոցների պաշարների ստեղծման նպատակով ավանսավորվող միջոցների անբավարարությունը կարող է հանգեցնել արտադրության կրճատման, արտադրական ծրագրի թերակատարման: Պաշարների մեջ միջոցների ավելորդ կուտակումը, որն ավելի մեծ է, քան իրական պահանջը, հանգեցնում է ռեսուրսների սառեցման, դրանց ոչ արդյունավետ օգտագործման:

Քանի որ շրջանառու միջոցներն իրենց մեջ ներառում են ինչպես նյութական, այնպես էլ դրամական ռեսուրսներ, դրանց օգտագործման արդյունավետությունից և կառավարումից կախված է ոչ միայն նյութական արտադրության գործընթացը, այլև սուբյեկտների ֆինանսական կայունությունը:

13.2. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններում շրջանառու միջոցները դրսևորվում են որոշակի կազմով ու կառուցվածքով: Կազմը և կառուցվածքը ընդհանուր տեսքով ցույց են տրված հաշվային պլանում և հաշվապահական հաշվեկշռում: Մաքուր շրջանառու կապիտալն իրենից ներկայացնում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ կրեդիտորական պարտքի տարբերությունը.

$$\text{ՇԿ} = \text{ԸԱ} - \text{ԿՊ},$$

ուստի, վերջինիս բաղադրիչների կառուցվածքում կատարված ցանկացած փոփոխություն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում դրա չափերի ու որակի վրա: Որպես կանոն, մաքուր շրջանառու կապիտալի նորմալ աճը դիտվում է որպես դրական փոփոխություն, սակայն կարող են լինել նաև ոչ դրական փոփոխություններ: Օրինակ՝ դրա աճը անհուսալի դեբիտորների ավելացման հաշվին հազվի թե բավարարի ֆինանսական մենեջերին:

Շրջանառու կապիտալի հիմնական բաղադրիչներից մեկը ձեռնարկության արտադրական պաշարներն են, որոնք իրենց հերթին ներառում են՝

- հումքը և նյութերը,
- անավարտ արտադրությունը,
- պատրաստի արտադրանքը և այլն:

Քանի որ կազմակերպությունը միջոցներ է ներդնում պաշարների ստեղծման համար, ապա պաշարների պահպանման ծախսերը կապված են ոչ միայն պահեստային ծախսերի, այլև ապրանքների փչացման, հնացման ռիսկի հետ, ինչպես նաև կապիտալի ժամանակավոր արժեքի հետ, այսինքն՝ շահույթի այն նորմայի, որը կարող էր ստացվել ռիսկի նույն աստիճանով ներդրումային այլ հնարավորությունների արդյունքում:

Այս կամ այն ծավալով ընթացիկ ակտիվների պահպանման տնտեսական և արտադրակազմակերպչական արդյունքները կրում են յուրահատուկ բնույթ տվյալ տիպի ակտիվների համար: Օրինակ՝ պատրաստի արտադրանքի մեծ պաշարները (կապված վաճառքի ենթադրվող ծավալի հետ) կրճատում են ապրանքի նկատմամբ դեֆիցիտի առաջացման հնարավորությունը հանկարծակի մեծ պահանջարկի դեպքում: Հումքի և նյութերի բավականին մեծ պաշարները «փրկում են» արտադրական գործընթացի ընդհատումից կամ այլ թանկարժեք փոխարինող նյութերի գնումից՝

համապատասխան պաշարների հանկարծակի չբավարարման դեպքում: Հունքի և նյութերի գնման պատվերների մեծ քանակը թեև հանգեցնում է բավականաչափ պաշարների ստեղծմանը, բայց և այնպես ունի որոշակի իմաստ. կազմակերպությունը կարող է հասնել մատակարարներից գների իջեցման (քանի որ մեծաքանակ պատվերները սովորաբար ենթադրում են որոշակի արտոնություններ, որոնք, որպես կանոն, ներկայացվում են զեղչերի տեսքով): Նույն պատճառով նախընտրելի է ունենալ պատրաստի արտադրանքի բավականաչափ պաշարներ, ինչը հնարավորություն է ընձեռում շուկայի աճող պահանջները ապահովելու համար, որի արդյունքում հենց ինքը, որպես կանոն, գնորդներին առաջարկում է զեղչեր: Ֆինանսական մեներջերի խնդիրն է՝ պարզել պաշարների պահպանման հետ կապված ծախսերն ու հնարավոր արդյունքը և կազմել նորմալ հաշվեկշիռ:

Դեբիտորական պարտքը շրջանառու կապիտալի կարևոր բաղադրիչներից է: Երբ մի ձեռնարկություն ապրանք է վաճառում մյուսին, դա դեռ չի նշանակում, որ վճարումը կատարվելու է անմիջապես: Մատակարարված ապրանքների դիմաց չվճարված (կամ վճարման ենթակա) հաշիվները կազմում են դեբիտորական պարտքի մեծ մասը: Դեբիտորական պարտքի յուրահատուկ տարր են ստացման մուրհակները՝ իրենց էությանը՝ արժեթղթեր: Ֆինանսական մեներջերի խնդիրներից մեկը գնորդների անվճարունակության ռիսկի աստիճանի որոշումն է, կասկածելի պարտքերի կանխատեսելի ռեզերվի հաշվարկը, ինչպես նաև երաշխավորագրերի ներկայացումը փաստացի կամ պոտենցիալ անվճարունակ գնորդների հետ աշխատանքի վերաբերյալ:

Դրամական միջոցները և արժեթղթերը ընթացիկ ակտիվների առավել լիկվիդային մասն են՝ շրջանառու կապիտալի բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցներին վերաբերում են՝

- դրամը դրամարկղում,
- դրամը հաշվարկային և դեպոզիտային հաշիվներում:

Արժեթղթերը՝ կարճաժամկետ ֆինանսական ներդրումները, ներառում են՝

- այլ ձեռնարկությունների արժեթղթեր,
- պետական պարտատոմսեր և այլն:

Արժեթղթերի և կանխիկ միջոցների միջև ընտրություն կատարելիս ֆինանսական մեներջերը լուծում է արտադրականին համարժեք խնդիր: Մշտապես գոյություն ունեն դրամական միջոցների մեծ պաշարների ստեղծման հետ կապված առավելություններ. դրանք թույլ են տալիս կրճատել կանխիկության պակասի ռիսկը և ընձեռում են պահանջների բավարարման հնարավորություն: Մյուս կողմից, ժամանակավորապես ազատ, չօգտագործվող դրամական միջոցների պահպանման հետ կապված ծախսերը ավելի շատ են, քան արժեթղթերում կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հետ կապված ծախսերը (մասնավորապես, դրանք կարելի է պայմանականորեն ընդունել չստացված շահույթի չափով) հնարավոր կարճաժամկետ ֆինանսավորման դեպքում: Այսպիսով՝ ֆինանսական մեներջերը պետք է լուծի կանխիկ միջոցների օպտիմալ պաշարների վերաբերյալ խնդիրները:

Ընթացիկ պարտավորություններին վերաբերում է կարճաժամկետ կրեդիտորական պարտքը, նախ և առաջ բանկային փոխատվությունը և այլ ձեռնարկությունների չվճարած հաշիվները: Շուկայական հարաբերությունների պայմաններում փոխատվությունների հիմնական աղբյուր են ծառայում առևտրային բանկերը: Որպես

կանոն, բանկերը պարտապանից պահանջում են ապրանքանյութական արժեքներով վարկերի ապահովվածություն: Երկրնտրանքային տարբերակ է դեբիտորական պարտքի մի մասը որոշակի զիջումով ֆինանսական կազմակերպությունների տրամադրելը: Հետևաբար, որոշ ձեռնարկություններ կարող են կարճաժամկետ ֆինանսավորման հիմնախնդիրները կարգավորել իրենց ընթացիկ ակտիվների գրավադրման, իսկ մյուսները՝ դրանց մասնակի վաճառքի ճանապարհով:

Շրջանառու կապիտալի նյութական կրողներ հանդիսացող ընթացիկ ակտիվները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) նոր ստանդարտներով արտացոլվում են Հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկի երկրորդ դասի հաշիվներում:

Դաս 2-ի 2.1. հաշիվը վերաբերում է պաշարներին: Պաշարները ներառում են նյութերը (2.1.1), աճեցվող և բույր կենդանիները (2.1.2), արագամաշ առարկաները (2.1.3), անավարտ արտադրությունը (2.1.4), արտադրանքը (2.1.5), ապրանքները (2.1.6):

Այդ դասի 2.2 հաշիվը վերաբերում է գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերին, 2.4-ը՝ ընթացիկ ֆինանսական ներդրումներին, 2.5-ը՝ դրամական միջոցներին, 2.6-ը՝ այլ ընթացիկ ակտիվներին:

Պաշարների խմբի նյութեր ենթախումբը (2.1.1) ընդգրկում է՝

- հումք և նյութեր,
- գնովի կիսաֆաբրիկատներ, համալրող շինվածքներ և դետալներ,
- վառելիք,
- տարա և տարային նյութեր,
- պահեստամասեր,
- շինանյութեր,
- գյուղատնտեսական նշանակության նյութեր,
- վերամշակման հանձնված նյութեր,
- այլ նյութեր հողվածները:

Արտադրանք (2.1.5) ենթախմբի մեջ մտնում են՝

- պատրաստի արտադրանքը,
- սեփական արտադրության կիսաֆաբրիկատները,
- կոնսիդնգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված արտադրանքը,
- բեռնված արտադրանքը:

Ապրանքներ (2.1.6) ենթախումբը ներառում է՝

- ապրանքներ պահեստում,
- ապրանքներ մանրածախ առևտրում,
- տարա և տարանյութ,
- կոնսիդնգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված ապրանքներ,
- բեռնված ապրանքներ,
- այլ ապրանքներ հողվածները:

Համաձայն ՀՀՀՀ ստանդարտ 2-ի՝ պաշարներ են համարվում այն ակտիվները, որոնք՝

- պահպանվում են սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում վաճառքի համար,
- արտադրության ընթացքում են և նախատեսված են վաճառքի համար,
- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրան-

քի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Ըստ նշված ստանդարտի՝ պաշարներն ընդգրկում են՝

- ապրանքներ, ներառյալ կազմակերպությունների կողմից գնված և վաճառքի համար պահվող ապրանքները, հողակտորը և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք նախատեսված են արտադրության ընթացքում օգտագործելու համար,
- արագամաշ առարկաները:

Պաշարների մեջ ներառվող բոլոր ակտիվները գնահատվում են ինքնարժեքով և իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Ինքնարժեքը պետք է ներառի ձեռքբերման ծախսերը, արտադրանքի վերամշակման ծախսումները և պաշարները տվյալ վայր բերելու հետ կապված այլ ծախսերը: Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումները, կոմիսիոն վճարները, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման–բեռնաթափման ու այլ ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման հետ:

Վերամշակման ծախսերը ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, օրինակ՝ արտադրական անձնակազմի աշխատավարձը: Դրանք ընդգրկում են նաև պատրաստի արտադրանքի վրա բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսերը, որոնք իրականացվում են արտադրության ընթացքում: Հաստատուն արտադրական վերադիր ծախսերի բաշխումը կատարվում է՝ ելնելով արտադրական սարքավորումների նորմատիվային հզորությունից՝ անկախ հզորությունների փաստացի օգտագործումից: Փոփոխուն արտադրական ծախսերը միավոր արտադրանքի վրա բաշխվում են ելնելով արտադրական հզորությունների փաստացի օգտագործման մակարդակից: Տեսականու բազմազանության դեպքում, երբ դրանք արտադրվում են համատեղ, վերամշակման ծախսերը դրանց վրա բաշխվում են ռացիոնալ և համամասնական սկզբունքներով:

Պաշարների ինքնարժեքը, սովորաբար, արտադրված ապրանքների և ծառայությունների համար պետք է հաշվարկվի կոնկրետ ինքնարժեքի որոշման ճանապարհով (կալկուլյացիա), ինչը ընդունելի չէ պաշարների մեծ միավորների առկայության դեպքում: Նման հանգամանքներում օգտագործվում է պաշարների մնացորդի ընտրության մեթոդը, ըստ որի՝ ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (ՖԻՖՕ), «Վերջինը մուտք՝ առաջինը ելք» ՎՄԱԵ (ԼԻՖՕ) կամ միջին կշռված արժեքի բանաձևով:

Գործող ստանդարտի համաձայն՝ արագամաշ առարկաներին վերաբերում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Այդ ակտիվների շարքն են դասվում, օրինակ, պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշիկները, անկողնային պարագաները, այլ գույքը: Արագամաշ առարկաների արժեքը

ծախսումների համապատասխան հաշիվներին դուրս է գրվում շահագործման հանձնելու պահին:

ՀՀՀՅ ստանդարտ 2–ում ընդգրկված ընթացիկ ակտիվների խմբերն ու տարրերը բնութագրում են շրջանառու կապիտալի կազմը, իսկ դրանց՝ ընդհանուր շրջանառու կապիտալի մեջ ունեցած տեսակարար կշիռները արտահայտում են կառուցվածքը: Կազմը նույնատիպ գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպություններում գրեթե նույնն է, իսկ կառուցվածքային տարբերությունները բավականաչափ մեծ են՝ հատկապես ըստ արտադրության ճյուղերի պատկանելության կազմակերպությունների, ինչը պայմանավորված է արտադրության առանձնահատկություններով, թողարկվող արտադրանքի բնույթով և մատակարարման–իրացման, հաշվարկների կազմակերպման պայմաններով:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանառու կապիտալի նյութական կրողների մեջ իրենց ծավալով ամենախոշորը, նշանակությամբ ու դերով ամենակարևորը հումքը և նյութերն են, որոնք կազմում են թողարկվող արտադրանքի հենքը: Դրանց պահանջվող ծավալի ու կառուցվածքի պաշարների առկայությունը արտադրական ծրագրի կատարման գլխավոր նախադրյալներից մեկն է: Միաժամանակ, հումքի, հիմնական նյութերի և գնովի կիսաֆաբրիկատների որակական հատկանիշը անմիջականորեն անդրադառնում է արտադրվող արդյունքի սպառողական արժեքի վրա, հետևաբար, պայմանավորում է նաև այն գները, որոնցով դրանք կարող են իրացվել: Իրենց արժեքով հումքը և նյութերը ձևավորում են արտադրության ծախսերի գերակշռող մասը՝ կազմելով փոխանցվող արժեքի ամենավճռական տարրերից մեկը: Ընթացիկ ակտիվների այս խումբը արդյունաբերական ձեռնարկությունների շրջանառու միջոցների թվում իր տեսակարար կշռով կազմում է 35–40%:

Ընթացիկ ակտիվների մեջ բավականաչափ մեծ է նաև արտադրության վրա կատարված ծախսումների բաժինը, հատկապես անավարտ արտադրության և սեփական արտադրության կիսաֆաբրիկատների: Ընդհանուր առմամբ այն գերազանցում է 20%–ը, իսկ ծանր մեքենաշինությունում՝ ավելի քան 35–40%–ը:

Շրջապտույտի անընդհատությունն ապահովելու համար ամեն մի արտադրական կազմակերպություն զուգահեռաբար պետք է ունենա շրջանառության ֆոնդերի որոշակի ծավալ, ինչի մեծությունը և կառուցվածքը պայմանավորված են տվյալ արտադրության ու իրացման ծավալով, նյութական արժեքների ստացման ու ապրանքների իրացման դրվածքով, հաշվարկավճարային փոխհարաբերությունների զործընթացով և այլն: Շրջանառության ֆոնդերն ընդգրկում են վաճառքի համար նախատեսված արտադրանքի ու ապրանքների լայն շրջանակ, դրամարկղում ու բանկային հաշիվներում դրամական միջոցները, դեբիտորական պարտքերը և այլն: Այս խմբի կազմն իր արտացոլումն է գտնում ՀՀՀՅ ստանդարտ 2–ի պաշարներ խմբում՝ հաշվառվելով 2–րդ դասի 2.1.5, 2.1.6, 2.2 հաշիվներում:

Վերարտադրական գործունեության մեջ շրջանառու միջոցների դրամական ձևը կատարում է առանձնահատուկ դեր: Դա դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն մյուս ֆունկցիոնալ ձևերի, միայն տվյալ ձևով են ապահովվում փոխհարաբերությունները միմյանց, բյուջեի, սոցիալական մարմինների, վարկային համակարգի, աշխատողների և այլ կազմակերպությունների հետ: Հենց այդ ձևում գտնվող ակ-

տիվներով են կատարվում միջոցների հետագա բաշխումն ու վերաբաշխումը նաև ներտնտեսական կարիքների կուտակման ու սպառման պահանջների բավարարման նպատակով: Թեև, ընդհանրապես, ազատ դրամական միջոցների բաժինն ընդհանուր շրջանառու միջոցների մեջ կազմում է 5–6%, սակայն ներկա, լրիվ չձևավորված ու կանոնակարգված շուկայական հարաբերությունների պայմաններում ավելացել է դրանց ծավալն, ու մեծացել է դերը՝ հատկապես միջտնտեսական փոխհարաբերությունների իրականացման գործում: Տնտեսական մարմինների ազատ դրամական միջոցների առաջացման պատճառները կապված են ընթացիկ ակտիվների շրջապտույտի առանձնահատկությունների հետ. մասնավորապես, կարևոր գործոն է միջոցների ստացման և ծախսման ժամկետների միմյանց չհամապատասխանելը:

Ինչպես ասվեց, արտադրության տարբեր ճյուղերում շրջանառու կապիտալի կառուցվածքը միատեսակ չէ: Այն տարբեր է նույնիսկ միևնույն ճյուղի նույնատեսակ արտադրանք թողարկող ձեռնարկություններում: Տարբերությունները պայմանավորված են արտադրանքի և ճյուղի կոնկրետ առանձնահատկություններով, կազմակերպությունների տեխնիկական զինվածության ու մասնագիտացման աստիճանով, կիրառվող տեխնոլոգիայով, իրացման ու հաշվարկների կազմակերպման պայմաններով և այլն:

Ամբողջության մեջ սովորական պայմաններում ընթացիկ ակտիվների ավելի քան 3/4–ը կազմում են ապրանքանյութական արժեքները, որոնցում էլ գլխավորը պաշարներն են: Այս առումով էլ ֆինանսական մեներջերի կողմից շրջանառու կապիտալի մեջ ավանսավորվող գումարի մեծությունը որոշելիս հատուկ ուշադրություն է դարձվում տվյալ և այլ կանխատեսելի ընթացիկ ակտիվների պահանջը որոշելուն:

Շրջանառու միջոցները, լինելով կազմակերպությունների գործունեության իրականացման կարևորագույն գործոն և ունեցվածքի բաղկացուցիչ մաս, ֆինանսական կառավարման հիմնական ոլորտներից մեկն են հատկապես սկզբնական օղակներում: Շրջանառու միջոցների դրությունը և օգտագործման արդյունավետությունը ֆիրմաներում նախ և առաջ պայմանավորված են դրանց պահանջի կանխատեսման և գործունեության մեջ միջոցների ավանսավորման հաշվարկների հավաստիությամբ: Այս բնագավառի կառավարման անհրաժեշտությունն ու դերը չափազանց մեծ են հատկապես անցումային ժամանակաշրջանի համար, երբ ռիսկերը խիստ մեծ են, կորուստ կրելու հավանականությունը՝ բարձր:

Շրջանառու միջոցների պահանջի պլանավորումը միկրոմակարդակով ֆինանսական պլանավորման բնագավառներից մեկն է և պետք է գտնվի տնտեսավարող սուբյեկտների և պետական համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Մինչդեռ ինչպես միկրոմակարդակով ֆինանսական պլանավորումը, այնպես էլ նրա այս բնագավառը Հայաստանի Հանրապետությունում լրիվ անտեսված են: Արտադրական–ֆինանսական ծրագրի ցուցանիշներն են իրական այն ելակետերը, որոնց վրա կառուցվում են մակրոտնտեսական հետևանքները, հատկապես բյուջեի եկամուտները, հակառակ պարագայում ամեն ինչ որոշվում է աչքաչափով, ինչը գործնականում դրսևորվել է պետական բյուջեի կազմման ընթացքում:

Կազմակերպության ծրագրի անխափան կատարման համար կարևոր է ոչ միայն շրջանառու միջոցների ծավալը, այլև կառուցվածքը, ակտիվների այն նվազագույն մնացորդը, որն անհրաժեշտ է տվյալ արտադրական ծրագրի իրակա-

նացման համար: Ակտիվների և դրանց ձևավորման աղբյուրների մեծությունը պետք է բխի արտադրական ծրագրի պարամետրերից և լինի օպտիմալ, ինչը հնարավոր է ապահովել միայն կոնկրետ պլանավորում (նորմավորում) իրականացնելու միջոցով:

13.3. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Շրջանառու միջոցների կազմակերպումը ֆինանսական կառավարման բնագավառներից մեկն է: Այն իրականացվում է որոշակի սկզբունքներով և օրինաչափություններով: Գլխավոր պահանջն այն է, պլանավորվող կամ գործունեության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում ընթացիկ ակտիվների մեջ ավանսավորված միջոցների օպտիմալ քանակությունը լինի այնպիսին, որ լիովին բավարարի արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ պաշարների ստեղծման և որոշակի ծախսեր կատարելու պահանջները: Ազատ շուկայի պայմաններում շրջանառու կապիտալի ռացիոնալ կազմակերպումը հենվում է դրանց ձևավորման ու օգտագործման բնագավառում կազմակերպությունների լայն ինքնուրույնության վրա: Բնականաբար, ֆիրմաներն իրենք են որոշում միջոցների նկատմամբ ընդհանուր պահանջը, ընթացիկ ակտիվների նյութական խմբերի մեծությունը, ըստ բնագավառների բաշխվածությունը և ձևավորման աղբյուրները: Առևտրական հաշվարկը և շահույթ հետապնդելու հանգամանքը նրանց զրկում են սխալվելու իրավունքից, շեղումները չպետք է գերազանցեն թույլատրելի սահմանները, չպետք է առաջացնեն լրացուցիչ ծախս կատարելու և ընդունված ծրագիրը ձախողելու ռիսկ: Այդ տրամաբանությամբ՝ բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառու միջոցների ճիշտ կազմակերպումն ու կառավարումը դրանց արդյունավետության օգտագործման գրավականներից կարևորագույնն են:

- Շրջանառու միջոցների կառավարումը կոչված է լուծելու հետևյալ խնդիրները՝
- ընթացիկ ակտիվների կազմի և կառուցվածքի սահմանում,
 - դրանց նկատմամբ ընդհանուր պահանջի որոշում,
 - շրջանառու միջոցների ձևավորման աղբյուրների նախատեսում,
 - շրջանառու միջոցների տնօրինման և մանևրելու հնարավորությունների բացահայտում,
 - միջոցների արդյունավետ օգտագործման և պահպանման ապահովության կանխատեսում:

Շրջանառու միջոցների նյութական կրողների գերակշիռ մասը կազմում են աշխատանքի առարկաները և դրսևորվում են պաշարների ձևով: Բացի այդ, զգալի բաժին ունեն նաև որոշ աշխատանքի միջոցներ՝ արագամաշ առարկաներ, գործիքներ, փոխարինող հարմարանքներ, պահեստամասեր, արտահագուստ, կոշիկ և այլն: Այս ամենը արտադրական ծրագրի մեծության հետ ունի ուղղակի առնչություն, զգայուն է նրա նկատմամբ և փոփոխվում է վերջինիս փոփոխությանը համամասնորեն: Թեև դրանց գծով պաշարների մեծությունը կախվածության մեջ է նաև արտաքին բազմաթիվ գործոններից, այնուհանդերձ, կանխատեսելի են և կարող են ճշգրտությամբ պլանավորվել:

Տեսականորեն շրջանառու միջոցները կանխատեսվելու առումով ստորաբաժանվում են նորմավորվողի և չնորմավորվողի: Տնտեսավարման հայրենական պրակտիկան ավանդաբար նախընտրում է առանձին խմբերի ու տարրերի գծով պաշարների պլանային նորմաների ու նորմատիվների սահմանումը: Չնորմավորվող շրջանառու միջոցների պահանջը որոշվում է օպերատիվ տվյալների հիման վրա:

Ամեն դեպքում սեփական շրջանառու միջոցների պահանջի որոշումը իրականացվում է նորմավորման միջոցով:

Նորմավորման նպատակն է որոշել շրջանառու միջոցների այն ռացիոնալ ծավալը, որն անհրաժեշտ է արտադրության և շրջանառության ոլորտների նորմալ գործունեությունն ապահովելու համար:

Շրջանառու միջոցների նորմավորումն իրականացվում է դրամական արտահայտությամբ: Վերջիններիս նկատմամբ պահանջի որոշման հիմքում դրված են պլանավորվող ժամանակաշրջանի ընթացքում թողարկվող արտադրանքի ծավալը և արտադրության ծախսումների նախահաշիվը: Միաժամանակ, արտադրության ոչ սեզոնային ճյուղերի ձեռնարկությունների համար որպես հաշվարկների հիմք օգտագործվում են չորրորդ եռամսյակի տվյալները, որտեղ արտադրանքի ծավալը, որպես կանոն, տարեկան ծրագրում ամենամեծն է: Արտադրության սեզոնային բնույթի կազմակերպությունների համար օգտագործվում են արտադրության ամենափոքր ծավալ ունեցող եռամսյակի տվյալները, քանի որ շրջանառու միջոցների սեզոնային պահանջը նպատակահարմար է ապահովել բանկերի կարճաժամկետ փոխատվությունների հաշվին:

Նորմատիվի որոշման գլխավոր ցուցանիշը նորմավորվող շրջանառու միջոցների միջին օրական ծախսն է՝ դրամական արտահայտությամբ: Ըստ կոնկրետ պաշարների՝ միջին օրական ծախսը հաշվարկվում է՝ ելնելով արտադրության ծախսերի հաշվետվության համապատասխան հոդվածներից: Անավարտ արտադրության վրա ծախսերը սահմանվում են՝ ելնելով համախառն կամ ապրանքային արտադրանքից, պատրաստի արտադրանքի գծով՝ ապրանքային արտադրանքի արտադրական ինքնարժեքից:

Նորմավորման ընթացքում սահմանվում են մասնակի և ամբողջական նորմատիվներ:

Նորմավորման գործընթացը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից: Նախ և առաջ մշակվում են պաշարի նորմաներ՝ նորմավորվող շրջանառու միջոցների յուրաքանչյուր տարրի գծով: Նորման հարաբերական մեծություն է, որը համապատասխանում է շրջանառու միջոցների յուրաքանչյուր տարրի ընթացիկ պաշարին: Որպես կանոն, նորմաները սահմանվում են պաշար-օրերի տեսքով:

Պաշարների նորման կարող է սահմանվել նաև տոկոսներով՝ որոշակի բազայի նկատմամբ:

Ի վերջո, շրջանառու միջոցների ամբողջական նորմատիվն իրենից ներկայացնում է ապրանքանյութական արժեքների պլանային այն նվազագույն պաշարների դրամական արտահայտությունը, որն անհրաժեշտ է տվյալ ծրագրի պայմաններում ձեռնարկության նորմալ տնտեսական գործունեությունն ապահովելու համար:

Ավանդաբար օգտագործվում են շրջանառու միջոցների նորմավորման հետևյալ հիմնական մեթոդները՝

1. ուղղակի հաշվարկի մեթոդ,
2. անալիտիկ հաշվարկի մեթոդ,
3. գործակցային մեթոդ:

Ուղղակի հաշվարկի մեթոդի էությունն այն է, որ նախ՝ որոշվում է ընթացիկ ակտիվների յուրաքանչյուր տարրի մեջ ավանսավորվող շրջանառու միջոցների մեծությունը, ապա՝ դրանք գումարելով՝ նորմատիվի ընդհանուր գումարը:

Անալիտիկ հաշվարկի մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ պլանավորվող ժամանակաշրջանում կազմակերպության գործունեության մեջ էական կառուցվածքային փոփոխություններ չեն նախատեսվում, և հիմնականում պահպանվում են նախորդ ժամանակաշրջանի պայմանները: Այս դեպքում շրջանառու միջոցների նորմատիվի հաշվարկն իրականացվում է խոշորացված ձևով՝ հաշվի առնելով արտադրության և նորմավորվող շրջանառու միջոցների մեծության ծավալների աճի հարաբերակցությունը նախորդ ժամանակաշրջանում:

Գործակցային մեթոդի կիրառման դեպքում նորմատիվը որոշվում է բազիսային ժամանակաշրջանի նորմատիվի ճշգրտման միջոցով՝ հիմնականում ելնելով համախառն արտադրանքի պլանային աճի տեմպերից:

Նորմավորման պրակտիկան ցույց է տվել, որ առավել նպատակահարմար է օգտվել ուղղակի հաշվարկի մեթոդից: Քանի որ արդյունքները շատ ավելի հավաստի են, ուստի հնարավոր է կատարել նասնակի և ամբողջական նորմատիվների առավել ճշգրիտ հաշվարկներ:

Ապրանքանյութական արժեքների պաշարների ձևավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (նորմատիվի) որոշման սկզբունքային բանաձևը հետևյալն է՝

$$\text{ՖՄ (կամ նորմատիվը)} = N (\text{նորմա}) \times U (\text{օրական սպառում}):$$

Օգտագործվող հումքի, հիմնական նյութերի և գնովի կիսաֆաբրիկատների՝ ըստ անվանացանկի միջին օրական ծախսը հաշվարկվում է դրանց՝ համապատասխան եռամսյակի ծախսերի գումարի և եռամսյակի օրերի թվի հարաբերությամբ:

Պաշարների նորմաների որոշումը նորմավորման առավել բարդ և կարևոր մասն է: Պաշարների նորման կազմվում է ըստ նյութերի յուրաքանչյուր խմբի և տեսակի: Եթե օգտագործվում են հումքի և նյութերի շատ տեսակներ, ապա նորման սահմանվում է ըստ հիմնական տեսակների:

Պաշարների նորման՝ օրերով, ըստ հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների, սահմանվում է՝ ելնելով տրանսպորտային, տեխնոլոգիական, նախապատրաստական, ընթացիկ պահեստային և ապահովագրական պաշարների ստեղծմանը անհրաժեշտ ժամանակից:

Տրանսպորտային պաշարները անհրաժեշտ են այն դեպքում, երբ ճանապարհին բեռների շարժման արագությունը գերազանցում է դրանց հաշվարկային փաստաթղթերի ստացման ու վճարման արագությունը: Մասնավորապես, տրանսպորտային պաշարները նախատեսվում են նյութերի դիմաց նախնական վճարման պայմանով փոխհարաբերությունների դեպքում:

Տրանսպորտային պաշարը, սովորաբար, նախատեսվում է գնորդ կազմակերպությունների մոտ: Դրա անհրաժեշտությունը հետևանք է այն բանի, որ ապրանքանյութական արժեքների և դրանց վճարման փաստաթղթերի շարժումը ժամանակի առումով միմյանց չեն համընկնում, հատկապես այլ քաղաքային մատակարարումների

դեպքում: Դրա հետևանքով հայտնի ժամանակի ընթացքում ընթացիկ ակտիվների որոշակի մասը տվյալ կազմակերպության շրջանառությունից դուրս է գալիս առանց համապատասխան փոխհատուցման: Այսպես, երբ մատակարարը գնորդին ապրանքներ է առաքում, դրանք նրա շրջանառությունից դուրս են գալիս, իսկ գնորդը նախքան ստանալը այդպիսիք օգտագործել չի կարող: Բնականաբար, երկուսն էլ ունենում են շրջանառու միջոցների նկատմամբ լրացուցիչ պահանջ. մատակարարը առաքումից մինչև դրանց արժեքը վճարելու, գնորդը հարկային հաշիվը վճարելու պահից մինչև ապրանքները նշանակման վայրը հասնելու տևողության սահմաններում:

Գործնականում արդյունաբերական կազմակերպությունները հույսեր և գնովի կիսաֆաբրիկատներ ստանում են բազմաթիվ մատակարարներից: Տարբեր մեծություններով են արտահայտվում բեռների և հաշվարկային փաստաթղթերի վազքի տևողությունները: Բնականաբար, հարկ է լինում համապատասխան խմբերի գծով տրանսպորտային պաշարի նորմաները որոշել ըստ կոնկրետ մատակարարների և, ապա, ելնելով ընդհանուր մատակարարումների մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշռից, դուրս բերել միջին նորման:

Այնքանով, որ լայն անվանացանկի դեպքում նման մոտեցումը շատ աշխատատար է, բացի այդ, պլանավորման նախօրյակին բավարար տվյալներ ձեռք բերել հնարավոր չէ, ուստի, շատ հաճախ տրանսպորտային պաշարի միջին նորման որոշվում է՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանում բեռների՝ ճանապարհին վճարված միջին մնացորդներից: Սկզբնական հաշվառման տվյալներով՝ մնացորդները անհրաժեշտ ճշտումներ կատարելուց հետո հարաբերում են համապատասխան խմբի օրական պահանջի (ծախսի) վրա և ստանում տրանսպորտային պաշարի նորման: Այդպիսի հաշվարկ կազմվում է այդ խմբի մեջ մտնող բոլոր տարրերի համար, և ապա, դարձյալ հաշվի առնելով ընդհանուր ստացումների մեջ դրանց տեսակարար կշռներն ու անհատական նորմաները, որոշվում է միջին նորման:

Յուրաքանչյուր հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների և վաճառքի նպատակով ձեռք բերվող ապրանքների պաշարներ ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմայի հաջորդ բաղկացուցիչ տարրը դրանց ընդունման, բեռնաթափման, տեսակավորման և պահեստավորման համար պահանջվող ժամանակն է: Այդ պահանջը կոչվում է նախապատրաստական և ստեղծվում է, քանի որ ձեռնարկությունները ստացված հումքը, նյութերը և ապրանքները անմիջապես օգտագործել և վաճառել չեն կարող, որոշակի ժամանակ է պահանջվում վերը նշված գործողությունները կատարելու համար: Նախապատրաստման հետ կապված յուրաքանչյուր գործառնության տևողությունը սահմանվում է՝ ելնելով գործող կամ ձևավորված տեխնիկական նորմաներից կամ կատարելով ժամանակաչափում:

Առանձին դեպքերում նախապատրաստական պաշարից զատ սահմանվում է տեխնոլոգիական պաշարի նորմա: Երբեմն, առանձին արտադրություններում ստացված ընթացիկ ակտիվները (հումքը, նյութերը, կիսաֆաբրիկատները) հնարավոր չէ անմիջապես հիմնական արտադրություն բաց թողնել, անհրաժեշտորեն պահանջվում է կիրառել տեխնոլոգիական գործընթացներ (չորացում, հնացում, հասունացում, խմորում, քերմանշակում և այլն): Տեխնոլոգիական պաշարի նորմայի մեծությունը պայմանավորված է երկու գործոններով՝ տվյալ գործընթացի տևողությանը և դրանով անցման ենթակա մասի ընդհանուր ծախսի մեջ ունեցած տեսա-

կարար կշռով: Դա հավասար է՝ $\frac{t \times d}{100}$ (t–ն տեխնոլոգիական գործընթացի միջին

տևողությունն է, իսկ d–ն՝ դրանով անցնող մասի տեսակարար կշիռը): Կարող է լինել նաև այլ մոտեցում այդ նորմայի որոշման համար: Մասնավորապես, հնարավոր է տվյալ խմբի համար սահմանել մասնակի նորմատիվ և, հարաբերելով ընդհանուր օրական ծախսին, ստանալ տեխնոլոգիական պաշարի նորման: Օրինակ, եթե արտադրության ծախսումների նախահաշվով այդ խմբի տվյալ եռամսյակի ընդհանուր ծախսը նախատեսված է 270 մլն դրամ, որի 30%–ը պարտադիր ենթակա է տեխնոլոգիական մշակման՝ 60 օր տևողությամբ, ապա առաջին ձևով տեխնոլոգիական պաշարի նորման կկազմի՝ $\tau = \Delta^2 \varnothing \times \frac{\text{Ծ}\varnothing}{\text{Է}^2 \varnothing}$: Երկրորդի դեպքում հարկավոր է հաշվել այդ խմբի համար շրջանառու միջոցների մասնակի նորմատիվը, ինչը հավասար է

օրական ծախսի և նորմայի արտադրյալին՝ $\frac{(270 \times 30) \times 60}{100 \times 90} = 54 \text{ ԱԷՄՊՊ} :$

Նորման նույնպես կկազմի 18 օր $\left(54 : \frac{270}{90} \right)$:

Շրջանառու միջոցների նորմատիվային պաշարների մեջ, սովորաբար, ավելի մեծ է ապրանքային մնացորդների ընթացիկ պաշարի բաժինը, որի պահանջը որոշելը համեմատաբար աշխատատար է: Հունքի և նյութերի ընթացիկ պահեստային պաշարը նրանց մշտական անհրաժեշտ մնացորդն է, որը լրիվ նախապատրաստված է արտադրական գործընթացի մեջ մտնելու կամ վաճառքը կազմակերպելու համար: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում հնարավոր չէ կազմակերպել և ապահովել դրանց ամենօրյա ստացումը: Այդ պաշարները կոչված են ապահովելու արտադրության կամ վաճառքի անխափան գործընթացը: Առևտրական հաշվարկի տեսանկյունից՝ ընթացիկ պաշարները պետք է լինեն նվազագույն, եթե հնարավոր է՝ օպտիմալ: Բոլոր դեպքերում արտադրական ու առևտրական կազմակերպությունների համար ձեռնտու է նյութերի ու ապրանքների ամենօրյա ստացումը: Հաճախակի ստանալու դեպքում փոքրանում է դրանց միջակայքը, պակասում ընթացիկ պաշարների մեջ ավանսավորվող գումարը, բնականաբար, շրջանառու միջոցների նկատմամբ պահանջը, կրճատվում են պահեստավորման ու պահպանման ծախսերը, հետևաբար մեծանում է գործառնական ակտիվությունը:

Ընթացիկ պաշարների մեծությունը կապված է կոնկրետ ծախսերի կատարման հետ (պահպանում, սպասարկում), որի մինիմիզացումը ներկայացնում է օպտիմալացման խնդիր և պետք է լուծվի նորմավորման ընթացքում:

Արտադրական պաշարների գծով դա մատակարարվող հումքի, նյութերի և այլնի օպտիմալ մեծության որոշումն է: Գործնականում, որքան մեծ է մեկ խմբաքանակի ստացման ծավալը, այնքան հարաբերականորեն փոքր են նրա տեղավորման ծախսերը (փոխադրում, ընդունում), սակայն դա կանխորոշում է պաշարի միջին ծավալի մեծ լինելը: Եթե հումքը զնվի ամիսը մեկ անգամ, ապա պաշարի միջին մեծությունը կլինի 30 օրվա պահանջի չափով, իսկ երկու անգամի դեպքում՝ 15 օրվա:

Մատակարարման մեկ խմբաքանակի մեծ ծավալով ստացման դեպքում (ամիսը 1 անգամ) սպասարկման ծախսը մշանակենք ΔS_1 , իսկ երկու անգամի դեպքում (երբ

ծավալը կրկնակի նվազում է՝ DS_2 : Այս դեպքում մատակարարման միավորի օպտիմալ մեծության հաշվարկը սպասարկման ծախսերի մինիմիզացման պայմաններում՝ $DS_1 + DS_2 = \min$, կատարվում է հետևյալ բանաձևով (Ուիլսոնի մոդել)։

$$\varnothing_{\text{մ}} = \sqrt{\frac{2 \times \hat{A} \hat{a} \times \hat{A} \hat{f}_1}{\hat{A} \hat{f}_2}}$$

Մ_{օս} – մատակարարման օպտիմալ ծավալ,

Ը_պ – ընթացիկ պաշարի մեծություն,

Ը_{S₁} – ամիսը մեկ անգամ ստանալու դեպքում միավորի սպասարկման ծախս,

Ը_{S₂} – ամիսը երկու անգամ ստանալու դեպքում միավորի սպասարկման ծախս:

Որպես կանոն, ընթացիկ պահեստային պաշարի գծով շրջանառու միջոցների նորման հունքի և նյութերի խմբերի համար ընդունվում է մատակարարումների միջին միջակայքի 50%–ի չափով:

Դա հիմնավորվում է նրանով, որ կազմակերպություններում բոլոր նյութերի և ապրանքների պաշարները չեն կարող միաժամանակ լինել առավելագույն: Այդ պաշարները կայուն մեծություն չեն. մատակարարման պահին հասնում են առավելագույնի և հաջորդի նախօրյակին իջնում են նվազագույնի: Միաժամանակ նկատի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ խմբի մեջ մտնող տարրերից մեկի պաշարը որոշակի պահի կարող է լինել առավելագույն, մյուսներինը՝ նվազագույն որոշ մասի գծով միջին պաշար ունենալու պայմաններում: Այն դեպքում, երբ կազմակերպությունը օգտագործում է սահմանափակ տեսականու նյութեր, և մատակարարների թիվը ևս սահմանափակ է, ընթացիկ պաշարի համար կարող է նախատեսվել ավելի բարձր նորմա, ընդհուպ մինչև այդ միջակայքի 100%–ի չափով:

Այսպիսով՝ կարելի է հավաստել, որ ընթացիկ պահեստային պաշարի նորման հավասար է երկու հաջորդական մատակարարումների միջև ընկած ժամկետի կեսին:

Հունքի, հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների և ձեռք բերվող այլ ապրանքների պաշար ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմայի վերջին տարրի՝ ապահովագրական պաշարի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ, սովորաբար, շրջանառու միջոցների նորմավորումը կատարվում է՝ ելնելով պլանային և նախատեսված տնտեսական պայմանագրերի ցուցանիշներից: Գործնականում բոլորովին էլ բացառված չեն մատակարարների կողմից ապրանքանյութական արժեքների առաքման ժամկետների խախտումներ կամ իրենց մեղքով, կամ տրանսպորտի և այլ պատճառներով: Տվյալ բնագավառի ռիսկերի հետ կապված բացասական հետևանքները կանխելու և գործունեության նորմալ ընթացքը ապահովելու համար կազմակերպություններում պետք է ստեղծվի լրացուցիչ երաշխիքային (ապահովագրական) պաշար: Քանի որ ապահովագրական պաշար ստեղծելու անհրաժեշտությունը կապված է պատահական գործոնների հետ, ուստի դրա մեծությունը կանխատեսելը որոշակի դժվարություն է ներկայացնում:

Այսպիսով՝ ընթացիկ նյութական ակտիվների նշված կարևորագույն խմբերի համար արտադրական պաշարի ընդհանուր նորման իրենից ներկայացնում է նշված հինգ նորմաների գումարը, իսկ նորմատիվը՝ դրա և եռամսյակի արտադրական ծրագրով նույն խմբի համար նախատեսված օրական ծախսի արտադրյալը:

Արտադրական կազմակերպությունների նյութական պաշարների կազմում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն օժանդակ նյութերը: ՀՀՀՀ նոր ստան-

դարտներով ընթացիկ ակտիվների կազմում այդպիսիք թեև առանձնացված չեն, սակայն նորմավորման ընթացքում չեն կարող նույնացվել մյուս նյութերի ու ապրանքների հետ, այնքանով, որ ձևավորման ու օգտագործման գործընթացի տարբերությունները բավականաչափ մեծ են: Դրանց անվանացանկը գրեթե բոլոր արտադրական կազմակերպություններում շատ լայն է: Այդ պատճառով էլ նորմավորման նպատակով օժանդակ նյութերը պետք է ստորաբաժանել երկու խմբի՝ մեծ չափով օգտագործվողի և փոքր (աննշան) չափով օգտագործվողի: Առաջին խմբի նորմատիվը կարելի է որոշել հումքի և հիմնական նյութերի համար կիրառվող մեթոդով: Երկրորդ խմբի նորմատիվային պահանջը նպատակահարմար է հաշվել ավելի պարզ ձևով:

Փոքրարժեք և արագամաշ առարկաների խումբը ՀՀՀ նոր ստանդարտներով արտացոլվում է «Արագամաշ առարկաներ» 2.1.3 հաշվում: Դրանք դրսևորվում են լայն անվանացանկով և կարող են ունենալ տարբեր ուղղվածություն՝

- ընդհանուր նշանակության առարկա և հարմարանք,
- արագամաշ տնտեսական գույք,
- հատուկ արտահագուստ և կոշիկեղեն,
- հատուկ գործիքներ,
- արտադրական տարա և այլն:

Միաժամանակ, այդ խմբերը կարող են գտնվել պահեստներում և շահագործման մեջ: Վերջիններիս գծով նորմատիվ չի կարող նախատեսվել, քանի որ շահագործման հանձնելիս դրանց լրիվ արժեքը դուրս է գրվում համապատասխան ծախսային հոդվածին: Պահեստային մնացորդների պահուստները հաշվարկվում են՝ ելնելով կամ կազմակերպության անձնակազմի միջին ցուցակային թվից և անձնակազմի մեկ անդամի համար նախատեսված նորմայից (դրամով)՝ որպես դրանց արտադրյալ (ընդհանուր նշանակության գույք, արտահագուստ, կոշիկեղեն և այլն), կամ 1000 միավոր արտադրանքի հաշվով (ծեռնարկության մեծածախ գներով) արագամաշ առարկաների նորման բազմապատկելով պլանային տարվա համապատասխան ցուցանիշով (պահեստամասեր, գործիքներ, արտադրական տարա և այլն):

Շրջանառու միջոցների նյութական կրողների երկրորդ խտրագույն խումբը անմիջական արտադրության գործընթացում գտնվող ընթացիկ ակտիվներն են՝ անավարտ արտադրությունը և գալիք ժամանակաշրջանի ծախսերը, որպիսիք շրջանառու միջոցների մեջ կազմում են ավելի քան 25%՝ արդյունաբերությունում, մինչև 40%՝ խոշոր մեքենաշինությունում:

Արտադրական կազմակերպությունների անավարտ արտադրության համար շրջանառու միջոցների պահանջը (նորմատիվը) արտահայտում է դրամական միջոցների այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է ծախսված ընթացիկ ակտիվները, աշխատավարձը, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը և այլ արտադրական ծախսերը ավանսավորելու համար:

Այս բնագավառի միջոցների նկատմամբ պահանջի ձևավորման գործում ուրույն է ծախսումների ռեժիմի դերը: Գործնականում արտադրության միևնույն ծավալի և նույն տևողության պայմաններում անավարտ արտադրությունում միջոցների միջին մնացորդը, հետևաբար և շրջանառու միջոցների նկատմամբ պահանջը կարող է արտահայտվել ավելի կամ պակաս գումարով, եթե տվյալ արտադրությունը բնութագրվում է ծախսումների կատարման տարբեր ռեժիմով: Երբ ինքնարժեքի մեջ ներառ-

վող ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում արտադրության սկզբին, փոքր մասը՝ հետագա օրերին կամ վերջին, անավարտ արտադրությունում միջոցների միջին մնացորդը կարտահայտվի ավելի մեծ գումարով, քան հակառակ դասավորության դեպքում: Անավարտ արտադրության հետ կապված շրջանառու միջոցների նորմատիվը որոշելիս այս հանգամանքը հաշվի է առնվում արտադրության ծախսումների աճի կամ ինքնարժեքի գործակցի միջոցով: Ծախսումների աճի գործակիցը, ըստ էության, իրենից ներկայացնում է անավարտ արտադրության մեջ ավանսավորված (ծախսված) միջոցների միջին մնացորդի հարաբերությունը ընդհանուր ինքնարժեքին (ծախսերին): Սովորաբար, անավարտ արտադրության մեջ ավանսավորված միջոցները, ավանսավորման օրից կախված, ունեն այնտեղ մնալու տարբեր տևողություն: Բնականաբար, առաջին օրերին կատարվածները մնում են ավելի երկար, և եթե նրանց բաժինը ավելի մեծ է, միջին մնացորդը կունենա բարձր մակարդակ:

Ծախսումների աճի գործակցի հաշվարկման համար կարող են ցուցաբերվել տարբեր մոտեցումներ, ինչը պայմանավորված է ծախսերի՝ ըստ օրերի հավասար կամ անհավասարաչափ բաշխվածությամբ ձեռնարկ հստակ հայտնի լինելու հանգամանքով և այլն: Այսպես, օրինակ, եթե արտադրության սկզբին կատարվող որոշակի մեծության միանվագ ծախսերի պարագայում հետագա ծախսերը, ըստ մնացած օրերի, բաշխված են հավասարաչափորեն, գործակիցը կարող է որոշվել միանվագ ծախսերի և հետագա ծախսերի կեսի գումարը բաժանելով ընդհանուր ծախսերին.

$$K = \frac{\emptyset + 0,5\emptyset}{\emptyset + \emptyset} \quad (\text{Մ-ն միանվագ ծախսերն են, Յ-ն՝ հետագա ծախսերը}):$$

Եթե նշված պահանջը ապահովված չէ, կարող է օգտագործվել հետևյալ ալգորիթմը՝

$$K = \frac{\sum_{i=1}^m S_i t_i}{\sum S \times t} = \frac{S_1 t_1 + S_2 t_2 + \dots + S_m t_m}{(S_1 + S_2 + \dots + S_m) t}$$

Հնարավոր է կիրառել նաև հետևյալ սկզբունքը. ըստ օրերի՝ անավարտ արտադրության վրա ծախսված միջոցների աճողական մնացորդների հանրագումարը բաժանել ընդհանուր ծախսի և տևողության արտադրյալին:

Պատրաստի արտադրանքի և իրացման ենթակա ապրանքների պաշարներ ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմատիվային պահանջը արդյունք է այն բանի, որ, սովորաբար, դրանք արտադրելուց և ձեռք բերելուց անմիջապես հետո իրացնել հնարավոր չէ: Ժամանակ է պահանջվում համապատասխան խմբաքանակի հասցնելու, փաթեթավորելու, տրանսպորտային միջոցներին բեռնելու, փաստաթղթերով ձևակերպելու և առաքելու համար: Թվարկված գործառնությունների կատարման տևողությունն ընդունվում է որպես նորմա, իսկ նորմայի և օրական թողարկվող արտադրանքի ծավալի (ինքնարժեքով արտահայտված) արտադրյալը ներկայացնում է նորմատիվի գումարը:

Հսկիչ մեթոդը շրջանառու միջոցների պլանավորման ավանդական մոտեցումներից մեկն է, որը լայնորեն օգտագործվել է միավորումների և գերատեսչությունների մակարդակով: Տվյալ մեթոդը կիրառելիս ամբողջ շրջանառու միջոցները բաժանվում են երեք խմբի: Խմբավորման հատկանիշը արտադրական ծրագրի հետ ունեցած կապի ուղղակի կամ անուղղակի լինելն է:

Ինչպես գործունեությանը վերաբերող ծախսերը, այնպես էլ դրանց իրականացման նյութական ու դրամական հիմքերը լինում են ուղղակի փոփոխական, ուղղակի և անուղղակի հաստատուն: Այս դեպքում հումքը, նյութերը, վառելիքը, տարան, անավարտ արտադրությունը, պատրաստի արտադրանքը արտադրական ծրագրի փոփոխությանը արձագանքում են անմիջականորեն, և դրանց պաշարները, նաև ծախսը, ավելանում կամ պակասում են նույն համամասնությամբ, եթե սահմանափակող այլ գործոններ չկան: Արագամաշ առարկաները, գործիքները, վերանորոգման պահեստամասերը ծրագրի փոփոխությանը կարող են արձագանքել պակաս չափերով. նրանց աճի տեմպը միշտ հետ է մնում ծրագրի տեմպից: Իսկ զալիք ժամանակաշրջանի ծախսերը հնարավոր է բոլորովին կապ չունենան ծրագրի և բազմաթիվ այլ ցուցանիշների հետ: Ուստի, առաջին խմբի շրջանառու միջոցների նորմատիվը որոշելու համար ելակետ է ընդունվում նախորդ ժամանակաշրջանի նորմատիվը և համախառն, ապրանքային կամ իրացվող արտադրանքի աճի տեմպը: Նոր նորմատիվը ստացվում է նախորդը համապատասխան տեմպերով ավելացնելու ճանապարհով: Եթե փոփոխություն է նախատեսված շրջանառու միջոցների այս խմբի շրջանառելիության ցուցանիշի մեջ (արագացում, դանդաղում), ապա հաշվի է առնվում դրա ազդեցությունը ևս:

Գործնական կիրառություն կարող է ունենալ հետևյալ բանաձևը.

$$a\ddot{U} = \frac{\ddot{U} \times \alpha}{100} \left(1 - \frac{\alpha}{100} \right),$$

ՊՆ –ն՝ պլանային ժամանակաշրջանի նորմատիվն է,

ԱՏ –ն՝ համախառն արտադրանքի աճի տեմպը,

Ա –ն՝ շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման տոկոսը:

Բանաձևի առաջին մասը արտահայտում է այդ խմբի ընթացիկ ակտիվների պաշար ստեղծելու համար շրջանառու միջոցների պահանջը՝ առանց արագացումը հաշվի առնելու, երկրորդը՝ իրական պահանջը շրջապտույտի նախատեսված ցուցանիշների պայմաններում:

13.4. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Շրջանառու կապիտալի ծավալը, նրա ձևավորման աղբյուրների կազմն ու կառուցվածքը անմիջականորեն պայմանավորված են ընթացիկ ակտիվների կառավարման գործընթացով: Արդեն հայտնի է, որ կազմակերպությունների ակտիվները ստորաբաժանվում են ոչ ընթացիկի (հիմնական միջոցները, հողը, շենքերը, կառույցները, սարքավորումները, այլ հիմնական միջոցներ) և ընթացիկի: Ոչ ընթացիկ ակտիվները համարվում են դժվարիրացվելի այն առումով, որ դրամական ձևի վերադառնալու համար պահանջվում է երկար ժամանակ և, նաև, լրացուցիչ ծախսերի կատարում: Ընթացիկ ակտիվները, իրենց հերթին, դրամի վերածվելու հնարավորության ավել կամ պակաս արագության առումով կարող են լինել դանդաղ և արագ իրացվելի: Միաժամանակ, հիմնական՝ ոչ ընթացիկ ակտիվները և ընթացիկ ակտիվների այն մասը, որը բավականաչափ երկար ժամանակի (տարվա) ընթացքում մնում

է անփոփոխ մակարդակի վրա, կախվածության մեջ չեն սեզոնային տատանումներից, կազմում են կայուն ակտիվները, մյուսները՝ ոչ կայունը:

Այս ամենի ձևավորման աղբյուրները կազմում են կազմակերպության պասիվները, որոնք բաժանվում են սեփականի և փոխառուի: Սեփական միջոցները, երկարաժամկետ փոխառությունները ամփոփվում են մշտական, իսկ կարճաժամկետ վարկերը, փոխառությունները, կրեդիտորական պարտքը և երկարաժամկետ վարկերի մի մասը (որոնց մարման ժամկետը լրանում է ընթացիկ տարում)՝ ընթացիկ (փոփոխուն) պասիվներում:

Ընթացիկ ակտիվների և ընթացիկ պասիվների տարբերությունը կազմում է կազմակերպության **զուտ շրջանառու կապիտալը**: Այլ կերպ դա անվանում են աշխատող կապիտալ, իսկ ավանդական տերմինաբանությամբ՝ սեփական շրջանառու միջոցներ (ՍՇՄ): Դժվար չէ նկատել, որ զուտ շրջանառու կապիտալը հնարավոր է որոշել հաշվեկշռի տվյալներից: Հետևություն է կարելի է հանդգնել, որ զուտ շրջանառու կապիտալը ձեռնարկության սեփական շրջանառու միջոցներն են:

Ընթացիկ ակտիվների և ծածկման սեփական աղբյուրների տարբերությունը հարկ է լինում ֆինանսավորել պարտավորությունների հաշվին՝ կրեդիտորական պարտքերով, եթե դա էլ չբավարարի, պետք է դիմել կարճաժամկետ փոխառություններին: Դրանով ձևավորվում է «ընթացիկ ֆինանսական պահանջ» հասկացությունը (ԸՖՊ): Գործնականում ընթացիկ ֆինանսական պահանջը ձեռնարկություններում հետևյալն է՝ ընթացիկ ակտիվների (առանց դրամական միջոցների) և կրեդիտորական պարտքի տարբերությունը կամ նույնն է թե՛ արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի և դեբիտորական պարտքերի մեջ ավանսավորված միջոցների և կրեդիտորական պարտքերի տարբերությունը կամ զուտ շրջանառու ակտիվների այն մասը, որ ծածկված չէ սեփական աղբյուրներով, երկարատև վարկերով և կրեդիտորական պարտքերով: Կարելի է ասել նաև, որ դա սեփական շրջանառու միջոցների ճեղքվածքն է կամ նույնն է թե՛ կարճատև վարկի նկատմամբ պահանջը:

ԸՖՊ-ն կարելի է հաշվարկել ինչպես գումարային արտահայտությամբ, այնպես էլ հասույթի նկատմամբ տոկոսներով (ընթացիկ ֆինանսական պահանջ \times 100: հասույթի միջին մեծություն): Եթե արդյունքը, ասենք, լինի 50%, նշանակում է ԸՖՊ-ն համարժեք է նրա տարեկան շրջանառության կեսին. 180 օրվա ընթացքում կազմակերպությունն աշխատում է միայն նրա համար, որ ծածկի ԸՖՊ-ն: Միանգամայն բնական ձգտում է առաջանում առևտրական վարկի հաշվին գնորդների հանդեպ պարտավորությունները մարելու ուղղությամբ: Հնարավոր է, որ գործնականում դրա հետևանքով, յուրաքանչյուր տվյալ պահին դրամական միջոցները լինեն արտադրության անընդհատությունն ապահովելու պահանջից ավելի, իսկ ԸՖՊ-ն ունենա բացասական մեծություն: Նման արդյունքի հասնելու խնդիրը գործնականում լուծվում է շրջանառու կապիտալի կառավարման միջոցով, ինչը պահանջում է խելամիտ հաշվարկների կատարում:

Բնականաբար, այս պայմաններում հիմնական ուշադրությունը պետք է սևեռվի ակտիվների ռացիոնալ կառավարմանը՝ կենտրոնանալով պաշարների և դեբիտորական պարտքերի շրջապտույտի արագացման խնդիրների վրա, ձգտելով երկարացնել կրեդիտորական պարտքերի մարման ժամանակաշրջանը գործարար էթիկայի սահմաններում: Այժմ անդրադառնանք ԸՖՊ-ի կրճատման այն հնարավորություններին, որոնք վերաբերում են ֆինանսների և իրացման առնչություններին:

Ապրանքների թանկ գնման և էժան վաճառքի սկզբունքը այս առնչությամբ լրիվ համապատասխանում է Դյուպոնի մեծ բանաձևին. գնորդներին գների զեղչերի հատկացում հաշվարկների ժամկետների երկարացման դիմաց, վեքսիլների (մուրհակների) հաշվառում և ֆակտորինգ. ահա այն ուղիները, որոնք տանում են ԸՖՊ–ի կրճատման:

Ըստ Դյուպոնի բանաձևի՝ զուտ շահութաբերությունը հավասար է զուտ շահույթ x 100: ակտիվներին: Այն վերափոխենք՝ բազմապատկելով շրջանառություն: շրջանառություն արտահայտությամբ (շրջանառություն : շրջանառություն = 1), որով շահութաբերության մակարդակը չի փոխվի, սակայն ի հայտ կգան շահութաբերության երկու կարևոր բաղադրիչներ՝ առևտրական մարժան և տրանսֆորմացիայի գործակիցը: Եվ այսպես՝

$$\text{ՆՔ} = \frac{\frac{1}{2}\text{ձՕԻ} \text{ Բ}^3\text{ՆձՕՍ\AA}}{\text{ՅԻՇԻՄ}^{\text{ճ}}}\times 100\times \frac{\text{ԲճՇ}^3\text{Մ}^3\text{ճձՕ\AA} \text{ ՍձՕՄ}}{\text{ԲճՇ}^3\text{Մ}^3\text{ճձՕ\AA} \text{ ՍձՕՄ}}$$

Ձևափոխելով կստանանք.

$$\frac{\frac{1}{2}\text{ձՕԻ} \text{ Բ}^3\text{ՆձՕՍ\AA}}{\text{ԲճՇ}^3\text{Մ}^3\text{ճձՕ\AA} \text{ ՍձՕՄ}}\times 100\times \frac{\text{ԲճՇ}^3\text{Մ}^3\text{ճձՕ\AA} \text{ ՍձՕՄ}}{\text{ՅԻՇԻ}} = \text{ՉՑ} \times 100 \times \text{KS} :$$

Առևտրական մարժան ցույց է տալիս, թե որքան շահույթ է բերում շրջանառության որոշակի միավորը (ասենք՝ 1000 դրամը): Ըստ էության, դա շրջանառության շահութաբերությունն է, եթե արտահայտվի տոկոսներով, կամ վաճառքի, կամ իրացված արտադրանքի զուտ շահութաբերությունը: Տրանսֆորմացիայի գործակիցը ցույց է տալիս, թե միավոր ակտիվը որքան շրջանառություն է ապահովում, այլ կերպ՝ բնութագրում է միավոր ակտիվի շրջանառելիությունը (պտույտների թիվը):

Միանգամայն ակնհայտ է, որ բավականաչափ ծավալի շրջանառություն ապահովելը խոսում է ձեռք բերվող նվաճումների մասին: Սակայն այստեղ կարևոր է ձեռքբերման «գիմը» (գործունեության մեջ զբաղված ակտիվների գումարը):

Օրինակ, եթե 12 մլն դրամի շահույթ ստանալու համար ձեռք բերված 40 մլն դրամի շրջանառության պայմաններում գործել են 60 մլն դրամի ակտիվներ, նշանակում է առևտրական մարժան միանգամայն զոհացուցիչ է և ապահովում է 30 տոկոս **շահութաբերություն** $\frac{12 \text{ ՍԷՂ}100}{40 \text{ ՍԷՂ}}$ **ու լրիվությամբ չեզոքացնում է տրանսֆորմացիայի**

գործակցի ցածր մակարդակը (40 մլն : 60 մլն = 067): Ստացվում է, որ յուրաքանչյուր միավոր շրջանառության համար օգտագործվում են 1,5 միավոր ակտիվներ. տնտեսական շահութաբերությունը կկազմի 20%՝ $\left(\frac{12\times 100}{60}\right)$:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ վաճառքի ցածր շահութաբերության դեպքում անհրաժեշտ է շեշտը դնել կապիտալի շրջապտույտի արագացման վրա: Միաժամանակ, ցածր գործարար ակտիվությունը (շրջապտույտի դանդաղությունը) կարելի է փոխհատուցել միայն արտադրության ու իրացման ծախսերի կրճատման կամ գների բարձրացման հաշվին:

Մասնավոր տնտեսական շահերից ելնելով՝ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պարտավոր է կոնկրետ պայմաններին համապատասխան սահմանափակել կամ ընդլայնել էժան գնումները, թանկ վաճառքը՝ ձգտելով կայուն և մեծ իրացման ծավալի՝ անվերապահորեն ենթարկվելով տնտեսավարման սկզբունքներին: Հա-

ճախ տնտեսապես շահում են այն գործարարները, որոնք շրջանառության արագացման ճանապարհով համեմատաբար մեծ ծավալի իրացում և շահույթ են ապահովում թանկ զենելու և էժան վաճառելու սկզբունքով՝ միաժամանակ ստեղծելով մատակարարների ու գնորդների կայուն շրջանակ:

Ջարգացած շուկայական տնտեսության պայմաններում պարտավորությունները ժամկետից շուտ մարելու կամ մարումը երկարաձգելու հետ կապված՝ լայնորեն կիրառվում է մասնակիցների կողմից գնային գեղջեր հատկացնելու մեխանիզմը: Ամեն մի կոնկրետ դեպքում պետք է որոշվի համաձայնվելու կամ հրաժարվելու «գինը»: Առաջարկվող գեղջից «հրաժարվելու գինը» կախված է բանկային վարկի տոկոսադրույթից. ո՞րն է ավելի ձեռնտու՝ գնորդի վճարումը հետաձգելը, պահանջը բանկային վարկով լրացնելը, թե՞ առաջարկելով որոշակի գեղջ՝ ստացումը արագացնելը: Պատասխանը կարող է տալ արդյունքը կշռելը: Կոնկրետ իրադրությունից ելնելով՝ կշռենք այլընտրանքային հնարավորությունները.

$$\text{Չրաժարման ինը} = \frac{\text{Ձեղջի\%} \times 100}{100 - \text{գեղջի\%}} \times \frac{360 \text{ օր}}{\text{Վճարումը կատարելու առավելա-տ-ողություն} - \text{Ձեղջ տալուց հետո ընդունվող տ-ողություն}}$$

Շրջանառու կապիտալի կազմակերպման ու կառավարման հետ կապված բոլոր հարցերը, ի վերջո, նպատակաուղղված են դրա օգտագործման արդյունավետության բարձրացման խնդրին, որն էլ, իր հերթին, հետադարձ ազդեցություն ունի ֆինանսական ռեսուրսների գործունեության մեջ ավանսավորման ծավալի վրա:

Կազմակերպությունների շրջանառու կապիտալի արդյունավետ օգտագործման խնդիրներն առավել կարևորվում են շուկայական հարաբերություններին անցման արդի փուլում և բնութագրվում են տնտեսական ցուցանիշների որոշակի համակարգով՝ վերջին հաշվով հանգելով շրջանառելիությանը: Շրջանառելիության բարձրացումը տվյալ արտադրական ծրագրի կատարման համար պահանջում է ավելի պակաս շրջանառու միջոցներ, ինչը այլ կարիքների բավարարման համար ռեսուրսի աղբյուր է:

Շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման արդյունքում շրջանառությունից միջոցների ազատումը կարող է լինել բացարձակ և հարաբերական:

Բացարձակ ազատում տեղի ունի, եթե շրջանառու միջոցների փաստացի կամ պլանային պահանջն ավելի պակաս է, քան եղել է նախորդ ժամանակաշրջանում արտադրության և իրացման ծավալները պահպանելու կամ ավելացնելու պայմաններում:

Շրջանառու միջոցների հարաբերական ազատումը այն դեպքն է, երբ կազմակերպության արտադրության ծավալի աճը շրջանառու միջոցների նկատմամբ պահանջի համեմատ ունի առաջանցիկ տեմպ:

Շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության վրա ազդող գործոնները բազմաթիվ են և կարող են լինել արտաքին ու ներքին:

Արտաքին գործոններին կարելի է դասել.

- ա) ընդհանուր տնտեսական դրությունը,
- բ) հարկային օրենսդրությունը,
- գ) վարկերի ստացման պայմանները և տոկոսային քաղաքականությունը,
- դ) նպատակային ֆինանսավորման հնարավորությունները,

ե) բյուջեից ֆինանսավորվող ծրագրերին մասնակցությունը և այլն:

Հիմնականում այս գործոններն են որոշում այն սահմանները, որոնցով կարելի է մանևրել շրջանառու միջոցների ռացիոնալ շարժը իրականացնելիս:

Տնտեսության զարգացման ժամանակակից փուլում շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը և վիճակը պայմանավորված են հետևյալ համազանքներով՝

- ա) չվճարումների ճգնաժամ,
- բ) հարկերի բարձր մակարդակ,
- գ) բանկային վարկերի բարձր տոկոսադրույքներ և այլն:

Արտադրված արտադրանքի իրացման ճգնաժամը և չվճարումները հանգեցնում են շրջանառու միջոցների շրջանառելիության դանդաղեցմանը: Հետևաբար, անհրաժեշտ է արտադրել այնպիսի արտադրանք, որը կարելի է բավականին արագ և շահավետ իրացնել՝ ընդհատելով կամ էականորեն կրճատելով այն արտադրանքի արտադրությունը, որի նկատմամբ չկա բավարար ընթացիկ պահանջարկ. դրանով միաժամանակ կանխվում է կազմակերպությունների ակտիվներում դեբիտորական պարտքերի ուճնացումը:

Շրջանառու կապիտալի շրջանառելիության գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

1. Շրջանառելիության գործակիցը՝

$$\hat{I}_g = \frac{\Delta \mathcal{A}}{\Delta \hat{I}}, \tag{1}$$

Δ_2 –ը շրջանառելիության գործակիցն է (պտույտների թիվը),

ՀԻ –ն՝ արտադրանքի, ծառայությունների, աշխատանքների իրացումից հասույթը,

ՇԿ –ն՝ շրջանառու կապիտալի միջին մեծությունը:

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս որոշակի ժամանակահատվածի ընթացքում շրջանառու կապիտալի կատարած պտույտների քանակը:

2. Մեկ պտույտի տևողությունը՝

$$t = \frac{\Delta \hat{I} \times T}{\Delta \mathcal{A}} \cdot \frac{T}{\hat{I}_2} \tag{2}$$

t –ն՝ շրջանառու կապիտալի շրջանառելիության ժամանակաշրջանի տևողությունն է (օրերով),

T –ն՝ հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվն է:

3. Շրջանառու կապիտալի ամրացման բեռնվածության գործակիցը՝

$$\hat{I}_\mu = \frac{\Delta \hat{I}}{\Delta \mathcal{A}}: \tag{3}$$

Շրջանառու միջոցների ամրացման գործակիցը ցույց է տալիս մեկ դրամ իրացված արտադրանքին բաժին ընկնող շրջանառու միջոցների մեծությունը:

Առևտրային կազմակերպությունները շրջանառելիության ցուցանիշների հաշվարկի ժամանակ օգտագործում են ապրանքների իրացման ցուցանիշները՝ վաճառքի գներով իրացումից հասույթի փոխարեն:

Ասվածը ավելի ընկալելի դարձնելու համար կատարենք վերոհիշյալ ցուցանիշների հաշվարկ (տվյալները պայմանական են):

Շրջանառու միջոցների շրջանառելիության ցուցանիշների հաշվարկ

Ցուցանիշներ	Նախորդ ժամանակաշրջան	Պլանային ժամանակաշրջան	Շեղումը
1. Արտադրանքի, աշխատանքների – ծառայությունների իրացումից հատույթը (հազ. դր.)	125960	271380	145420
2. Շրջանառու միջոցների միջին մնացորդը (հազ. դր.)	28990	38630	+10040
3. Շրջանառելիության որոշակիցը (տող 1: տող 2)	4,406	7,025	+ 2,619
4. Մեկ պտույտի տողությունը (360 : տող 3)	81,7	51,3	– 30,4
5. Բեռնվածության որոշակիցը (տող 2 : տող 1)	0,22	0,14	– 0,08

Ըստ բերված տվյալների՝ շրջանառու միջոցների շրջանառելիությունը պլանային ժամանակաշրջանում արագանալու է 2,6 պտույտով, կամ տևողությունը կրճատվելու է ավելի քան 30 օրով, ինչը բավականաչափ դրական երևույթ է և շրջանառությունից կազատի մեծ ծավալի միջոցներ: Շրջանառու կապիտալի նկատմամբ պլանային պահանջի կրճատմանը զուգընթաց բարելավվում են նաև գործունեության մյուս ցուցանիշները և ֆինանսական դրությունը:

Շրջապտույտի արագացման հետևանքով շրջանառությունից միջոցների ազատման գումարը կարելի է հաշվել երկու եղանակով.

1. Օգտվելով հետևյալ բանաձևից՝

$$DՇՄ = ՇՄ_2 - ՇՄ_1 \text{ և } K, \text{ որտեղ՝}$$

DՇՄ – ն ազատման գումարն է,

ՇՄ₁, ՇՄ₂–ը՝ կազմակերպության շրջանառու միջոցների միջին տարեկան մեծությունն է՝ համապատասխանորեն նախորդ և պլանային ժամանակաշրջաններում,

K –ն համախառն արտադրանքի պլանային աճի գործակիցն է, կոնկրետ դեպքում՝ բերված աղյուսակի տվյալներով, շրջանառությունից միջոցների հարաբերական ազատման գումարը կկազմի 21586 հազ. դրամ (38630 – 28990 Բ 2,15):

2. Ելնելով հետևյալ բանաձևից՝

$$DՇՄ = (t_1 - t_0) \text{ և } h_0, \text{ որտեղ՝}$$

t₁, t₀ –ն շրջանառու միջոցների մեկ պտույտի տևողությունն է համապատասխան ժամանակաշրջաններում,

h₀ –ն արտադրանքի օրական իրացման ծավալն է՝ ըստ պլանի:

Գործնականում կարելի է օգտվել նաև ավանդաբար տասնյակ տարիների ընթացքում կիրառված մեթոդից, ըստ որի՝

$$\Delta P \emptyset = \frac{K_{\text{Б1}}}{K_{\text{Б0}}} \times P \emptyset',$$

որտեղ՝

K_{21} և K_{20} –ն համապատասխանորեն նախորդ և պլանային շրջանառելիության գործակիցներն են,

ՇՄԲ – ն շրջանառու միջոցների բազիսային ժամանակաշրջանի պահանջը:

Ասվեց նաև, որ շրջապտույտի արագացումը դրականորեն է անդրադառնում նաև շահույթի գումարի վրա: Դրա հետևանքով շահույթի աճը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$\Delta P = P_0 \times \frac{K_{\text{Б1}} - K_{\text{Б0}}}{K_{\text{Б0}}} - P_0,$$

C_0 – ն բազիսային ժամանակաշրջանի փաստացի շահույթն է:

Եթե այս դեպքում բազիսային ժամանակաշրջանի փաստացի շահույթը ընդունենք 12000 հազ. դրամ, ապա տվյալ օրինակում շրջանառու միջոցների շրջապտույտի նախատեսված արագացումը շահույթի պլանի վրա կանդրադառնա դրականորեն՝ 7128 հազ. դրամ գումարով $\left(12000 \times \frac{7,025}{4,406} - 12000\right)$:

Շրջանառու միջոցների շրջապտույտի տևողության և մյուս ցուցանիշների մակարդակը արդյունք է ֆունկցիոնալ տարբեր ձևերում գտնվող ընթացիկ ակտիվների օգտագործման վիճակի, ուստի անհրաժեշտ է արդյունավետությունը գնահատել ըստ խմբերի և պարզել յուրաքանչյուրի ազդեցությունը ընդհանուր ցուցանիշի և տեղ գտած դրական ու բացասական շեղումների վրա: Առանձնակի ուշադրություն է դարձվում արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի շրջանառելիությանը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում շրջանառու կապիտալ, որո՞նք են դրա նյութական կրողները:
2. Որո՞նք են ընթացիկ ակտիվները, նշել դրանց կազմը և կառուցվածքը:
3. Ի՞նչ սկզբունքներով է կազմակերպվում շրջանառու կապիտալը, և ինչպե՞ս կարելի է կանխատեսել նրա նկատմամբ կազմակերպության ընդհանուր պահանջը:
4. Որո՞նք են շրջանառու կապիտալի արդյունավետության ցուցանիշները:
5. Ինչպե՞ս է իրականացվում շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարումը, և որո՞նք են ընթացիկ ֆինանսական պահանջի արդյունավետ կարգավորման մեթոդները ձեռնարկություններում:

ԳԼՈՒԽ 14

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

14.1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

«Ինվեստիցիա» հասկացությունը, ըստ էության, նշանակում է երկարատև ֆինանսական ներդրումներ, որոնց արդյունքում ձևավորվում են եկամուտ (շահույթ) ստանալու հիմնական գործիքները և նախապայմանները: Հետևաբար, այն կարելի է ընկալել որպես դրամական միջոցներ, բանկային նպատակային հատկացումներ, մասնաբաժիններ, բաժնետոմսերի, այլ արժեթղթեր, որոնք ուղղվում են տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների, շենքերի ու կառույցների, լիցենզիաների, ապրանքային նշանների, ինտելեկտուալ արժեքների, սեփականության իրավունքի և այլ երկարաժամկետ օգտագործման ակտիվների ձևավորման ու ձեռնարկչատիրական գործունեության մեջ ներդնելու նպատակներին՝ եկամուտ (շահույթ) ստանալու ակնկալությամբ:

Ինվեստիցիոն գործունեությունը կարող է բնութագրվել որպես ներդրումներ իրականացնելուն ուղղված պրակտիկ գործողությունների ամբողջություն, որի արդյունքում ձևավորվում և վերարտադրվում են կազմակերպությունների ոչ ընթացիկ ակտիվները (հիմնական ֆոնդերը): Ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման և վերարտադրության հիմնական ձևը կապիտալ ներդրումներն են:

Տեսականորեն կապիտալ ներդրումներ են գործունեության մեջ ավանսավորվող դրամական միջոցների այն գումարները, որոնք ուղղված են նոր ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման (կառուցում, ձեռքբերում), գործողների տեխնիկական վերագինման, վերակառուցման ու ընդլայնման միջոցառումներին:

Կապիտալ ներդրումներն ունեն որոշակի ուղղություն ու կառուցվածք, որը պայմանավորված է տվյալ երկրի տնտեսական–քաղաքական վիճակով, պետության կողմից վարվող ինվեստիցիոն քաղաքականությամբ: Անցումային ժամանակաշրջանի էկոնոմիկան ուղեկցվում է կապիտալ ներդրումների՝ ըստ ուղղությունների և սեփականության ձևի անընդհատ փոփոխություններով: Հայաստանի Հանրապետությունում ինվեստիցիոն գործընթացը հասարակական վերարտադրության ամենատուժած բնագավառներից մեկն է. պետության և ինվեստորների կողմից հստակ որոշված չեն դրանց առաջնային նշանակության ուղղությունները, մեծ են ներդրումների հետ կապված ռիսկերը, չկա բարենպաստ հարկային ու տնտեսական դաշտ: Արդյունքում իրական ոլորտում կատարվող ներդրումները (բոլոր աղբյուրների հաշվին) կրճատվել են մեծ չափերով: Համեմատաբար բարվոք է ոչ արտադրական ոլորտում կատարվող կապիտալ ներդրումների վիճակը, որտեղ կրճատման տեմպերը, արդյունաբերության համեմատությամբ, նկատելիորեն ցածր են:

Ինվեստիցիոն գործունեությունը բավականաչափ բարդ գործընթաց է և ունի բազմաթիվ մասնակիցներ: Սուբյեկտներն են ներդրողները, պատվիրատուները, աշխատանքներ կատարողները, արդյունքը տնօրինողները, ինչպես նաև մատակարարները, մի շարք իրավաբանական անձինք (բանկային, ապահովագրական, միջնորդ կազմակերպություններ, ֆոնդեր) և այլ մասնակիցներ: Այլ խոսքով՝ ներդրումա-

յին գործունեության սուբյեկտներ կարող են հանդիսանալ իրավաբանական ու ֆիզիկական անձինք, այդ թվում արտասահմանյան, ինչպես նաև պետությունը և միջազգային կազմակերպությունները: Ներդրողները՝ որպես տվյալ գործընթացի սուբյեկտ, իրականացնում են իրենց սեփական, փոխառու և ներգրավված միջոցների ավանսավորում ինվեստիցիաների մեջ՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը: Ինվեստիցիոն գործընթացում որպես պատվիրատու կարող են հանդես գալ ինվեստորները, ինչպես նաև ընդունված նախագծի իրականացման համար նրանց կողմից երաշխավորված ցանկացած իրավաբանական ու ֆիզիկական անձ:

Ինվեստիցիոն գործընթացի արդյունքը տնօրինում է ներդրողը, ինչպես նաև այլ իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Այդպիսիք կարող են լինել պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, արտասահմանյան կառավարությունները, միջազգային կազմակերպությունները. վերջին հաշվով նրանք, ում համար ստեղծվում է տվյալ օբյեկտը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գործունեության օբյեկտ կարող են հանդիսանալ.

- նոր ստեղծվող և արդիականացվող հիմնական ու շրջանառու ֆոնդերը (ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվները) տնտեսության բոլոր ոլորտներում,
- արժեթղթերը (բաժնետոմսեր, փոխառություններ և այլն),
- նպատակային դրամական ավանդները,
- գիտատեխնիկական արդյունքը և սեփականության այլ օբյեկտները,
- գույքային և ինտելեկտուալ սեփականության իրավունքը:

Ներդրումային օբյեկտները նույնն են նաև արտասահմանյան ներդրողների համար, եթե չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

Ընդհանրապես իրական ներդրումային ոլորտի հիմնական բնագավառի, մասնավորապես նաև Հայաստանի Հանրապետությունում կապիտալ ներդրումների ուղղվածությունը հիմնական և շրջանառու արտադրական ֆոնդերն են: Այս ոլորտը միավորում է պատվիրատու–ներդրողի, կապալառուի, նախագծողների, սարքավորումների մատակարարների և մյուս մասնակիցների գործունեությունը: Կապիտալ ներդրումների արդյունքում ձևավորվող արտադրանքի նյութաիրային բովանդակությունը դրսևորվում է ոչ ընթացիկ ակտիվների միջոցով: Համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման մասին օրենքի՝ այդ գործընթացը և արդյունքը հաշվառվում են ստանդարտ 9–ում, 11–ում և 16–ում:

Թիվ 9 ստանդարտը վերաբերում է հետազոտության և զարգացման ծախսումներին: Նպատակն է՝ սահմանել դրանց հաշվապահական հաշվառման մոտեցումները, որոշել, թե այդ ծախսումները երբ պետք է ճանաչվեն որպես ակտիվ և երբ՝ որպես ծախս: Հետազոտություն են համարվում նոր գիտական ու տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու նպատակով կատարվող սկզբնական և ծրագրված ուսումնասիրությունները: Դրանց բնորոշ օրինակներն են՝

- գործունեությունը նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով,
- հետազոտությունների կամ գիտելիքների արդյունքի կիրառության որոնումը,
- այլընտրանքային արտադրատեսակների կամ տեխնոլոգիաների որոնումը,
- հնարավոր նոր կամ կատարելագործված արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքների ձևավորումը և նախագծումը:

Ձարգացումը վերաբերում է հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառմանը, որն ուղղված է նոր և առավել կատարելագործված նյութեր, սարքավորումներ, արտադրատեսակներ, տեխնոլոգիաներ, համակարգեր արտադրելու, ծրագիր կամ նախագիծ կազմելու միջոցառումներին: Օրինակ՝

- արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքի գնահատումը,
- արտադրանքի փորձամուշի նախագծումը, կառուցումը և փորձարկումը,
- գործիքների նախագծումը՝ նոր տեխնոլոգիայի կիրառմամբ,
- փորձարարական գործարանի նախագծումը, կառուցումը և գործարկումը:

Հետազոտության և զարգացման ծախսումներն ունեն կոնկրետ բաղադրիչներ, որոնք անմիջականորեն կապված են դրանց առնչվող աշխատանքների հետ և կարող են հիմնավորված կերպով վերագրվել գործունեության այդ տեսակին: Համաձայն տվյալ ստանդարտի՝ ներառվում են այդ աշխատանքներում զբաղված աշխատողների վարձատրության ծախսերը և ծառայողական այլ վճարումները, օգտագործված նյութերի ու ծառայությունների արժեքը, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը, պատենտների և լիցենզիաների ամորտիզացիան, այլ ուղղակի և վերադիր ծախսերը:

Երբ հավանական է, որ կատարված ծախսումները ապագայում կտան տնտեսական եկամուտ (շահույթ), և միաժամանակ կարող են ճշգրտորեն գնահատվել դրանք, ճանաչվում են որպես ակտիվ:

Ձարգացման ծախսերը որպես ակտիվ ճանաչվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում են:

Ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են հաշվապահական հաշվառման առաջին դասի հաշիվներում (11, 13, 14 և 15): Դրանք բաժանվում են չորս խոշոր խմբերի՝

1. ոչ ընթացիկ նյութական ակտիվներ,
2. ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ,
3. ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ,
4. այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

Ոչ ընթացիկ նյութական ակտիվները ներառում են հիմնական միջոցները (111), դրանց մաշվածությունը (112), ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցները (113), հողամասերը (114), բնական ռեսուրսները (115), անավարտ ոչ ընթացիկ ակտիվները (117), երկարաժամկետ վարձակալված հիմնական միջոցները (118):

Հիմնական միջոցների նյութաիրային կազմը բնութագրվում է շենքերի, կառույցների, փոխանցող հարմարանքների, մեքենա-սարքավորումների, տրանսպորտային միջոցների, արտադրական ու տնտեսական գույքի, գործիքների, բազմամյա տնկարկների, բանող ու մթերատու անասունների ու այլ ակտիվների միջոցով:

Երկրորդ խմբի ոչ նյութական ակտիվները ներառում են կազմակերպչական ծախսերը, լիցենզիաները, ֆիրմայի գինը (գուղվիլ), արտոնագրերը, ապրանքային նշանները, ծրագրային ապահովումը, հողի և բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը և այլ ոչ նյութական ծախսերը:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները ներառում են բաժնետոմսերը և բաժնեմասերը, պարտատոմսերը, հատկացված փոխառությունները և այլ ֆինանսական երկարաժամկետ ներդրումները:

Այլ ոչ ընթացիկ ակտիվներն ունեն սահմանափակ անվանացանկ, գլխավորապես վերաբերում են հետաձգված ծախսումներին և հետաձգված հարկերին:

Թվարկված չորս խմբերն, իրենց համապատասխան տարրերով, արտահայտում են ոչ ընթացիկ ակտիվների կազմը, իսկ դրանց ընդհանուր ակտիվների՝ այս խմբի մեջ ունեցած տեսակարար կշիռները՝ կառուցվածքը:

ՀՀ ստանդարտ 16–ը հատուկ սահմանումներ է տալիս ոչ ընթացիկ ակտիվների հիմնական խմբերի բովանդակության, օգտակար ծառայության տևողության, մաշվածքի հաշվառման, սկզբնական ու զուտ արժեքի ճանաչման վերաբերյալ:

Հիմնական միջոցների, նույնն է թե՛ հիմնական կապիտալի նյութական կրողները կազմակերպությունների ակտիվների կարևորագույն մասերից մեկն են: ՀՀՍ 16–ի տերմիններն օգտագործվում են հետևյալ իմաստներով. հիմնական միջոցները այն ակտիվներն են, որոնք կազմակերպություններում առկա են արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակով օգտագործելու համար՝ ավելի քան մեկ տարի ժամկետով: Այս ձևակերպումը, ավանդաբար օգտագործվող մարքայան ձևակերպման համեմատ, ունի բավականաչափ նեղ բովանդակություն: Ըստ էության, անտեսվում են արտադրական ու այլ բնույթի գործունեությանը մասնակցելու առանձնահատկությունները և արժեքը նոր արդյունքին փոխանցելու ձևերն ու մեխանիզմը: Տարբերիչ գլխավոր հատկանիշ է դիտվում օգտակար ծառայության տևողությունը: Մինչդեռ «ոչ ընթացիկ ակտիվ» (հիմնական ֆոնդեր) հասկացության սահմանումից պետք է երևա, որ դրանք գործունեությանը (արտադրական, իրացման և այլ) մասնակցում են տևական ժամանակաշրջանի ընթացքում, մինչև վերջնական դուրս գրվելը պահպանում են իրենց նյութաիրային սկզբնական ձևը (ի տարբերություն ընթացիկ ակտիվների) և արժեքը նոր արդյունքին փոխանցում են մաս–մաս՝ փաստացի մաշվածքին համապատասխանող չափերով:

Արտադրական ձեռնարկություններում հիմնական կապիտալի վերարտադրությունը կարող է իրականացվել կամ ուղղակի ներդրումների, կամ հիմնական կապիտալի նյութական կրող հանդիսացող օբյեկտը որպես կանոնադրական կապիտալին մուծում կազմակերպությանը հանձնելը և կամ իրավաբանական ու ֆիզիկական անձանց անհատույց հատկացնելը: Հիմնական կապիտալի ընդլայնված վերարտադրության գլխավոր մեթոդը ուղղակի ներդրումներն են (կապիտալ ներդրումները):

Ուղղակի ներդրումներն իրենցից ներկայացնում են հիմնական կապիտալի նոր օբյեկտների ստեղծման վրա կատարված ծախսումները, ինչպես նաև գործող օբյեկտների ընդլայնումը, վերակառուցումը, տեխնիկական վերազինումը:

Այդ ուղղություններով կատարված ծախսերի միջև հարաբերակցությունը կոչվում է **ուղղակի ներդրումների վերարտադրողական կառուցվածք**:

Նոր շինարարությանը վերաբերում են նոր հրապարակների վրա կառուցվող օբյեկտների ծախսերը:

Ընդլայնում ասելով հասկացվում է ձեռնարկության երկրորդ և հաջորդ հերթերի, լրացուցիչ արտադրությունների, գոյություն ունեցող արտադրությունների հիմնական նշանակության արտադրամասերի ընդլայնումը:

Վերակառուցումն իրենից ներկայացնում է ձեռնարկության լրիվ կամ մասնակի վերասարքավորումը (առանց գործող արտադրամասերի ընդլայնման և նորերի կառուցման) բարոյապես ու ֆիզիկապես մաշված սարքավորումների ու մեխանիզմների նորով փոխարինմամբ, արտադրության ավտոմատացմամբ և անհամաձայնություն-

ների վերացմամբ: Վերակառուցման արդյունքում ձեռք է բերվում արտադրության ծավալի մեծացում, տեսականու ընդլայնում, որակի բարձրացում նոր ժամանակակից տեխնոլոգիայի բազայի վրա:

Տեխնոլոգիական վերազինումը ընդգրկում է ժամանակակից տեխնիկական պահանջների մակարդակով առանձին տեղամասերի վերազինման համալիր միջոցառումների ամբողջությունը, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, ավտոմատացման, արդիականացման, հին սարքավորումները նորով փոխարինելու ճանապարհով:

Թվարկված և այլ կազմակերպական միջոցառումների նպատակը աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի թողարկման ծավալի աճի, որակի բարելավման ապահովումն է:

Ուղղակի ներդրումների տեխնիկական կառուցվածքը ձևավորվում է երեք հիմնական տարրերից՝ սարքավորումների ձեռքբերում, ծախսումներ շինարարական մոնտաժային աշխատանքների վրա, նախագծմանախահաշվային աշխատանքներ: Այդ ուղղություններով կատարվող ծախսերի հարաբերակցությունը բնութագրում է ուղղակի կապիտալ ներդրումների տեխնոլոգիական կառուցվածքը:

Բնականաբար, ոչ ընթացիկ ակտիվները շահագործման (օգտագործման) ընթացքում աստիճանաբար մաշվում են և ամեն տարի կորցնում սկզբնական արժեքի համապատասխան մասը, որի չափով և ավելանում են գործուներության ծախսերը: Նոր ստանդարտներով անտեսվում է անորտիզացիայի՝ որպես ֆինանսական հասկացության այն ձևակերպումը, ըստ որի՝ անորտիզացիան մաշվածքի դրամական արտահայտությունն է: «Մաշվածություն» հասկացությանը տրվում է դրամական բովանդակություն և հանգեցվում ակտիվի արժեքի օգտակար ծառայության՝ տարիների վրա պարբերական բաշխվող գումարի: Այլ կերպ՝ «Մաշվածության գումարը ակտիվի սկզբնական արժեքի կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարի և մնացորդային արժեքի տարբերությունն է»:

Օգտակար ծառայությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը: Օգտակար ծառայությունը կարող է չափվել նաև արտադրանքի կամ աշխատանքների և ծառայությունների որոշակի ծավալով, որպիսին ակնկալվում է ապահովել ակտիվի օգտագործման միջոցով, շահագործման ամբողջ տևողության ընթացքում՝ ըստ նրա մեջ մտնող տարիների:

Ոչ ընթացիկ ակտիվները գնահատվում են սկզբնական, մնացորդային (զուտ) և վերագնահատման արժեքներով:

Սկզբնական (պատմական) արժեքը կարող է մեկնաբանվել երկու ձևով՝

1. ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների գումար (հատուցման իրական արժեք),
2. ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ կողմերի համաձայնությամբ որոշված վճարվելիք դրամական միջոցների գումար (հատուցման իրական արժեքը՝ ակտիվի ձեռքբերման պահի դրությամբ):

«Իրական արժեք» արտահայտությունը այն գումարն է, որով ակտիվն առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրագել և պատրաստական կողմերի միջև:

Վերագնահատման արժեքը ակտիվի այն արժեքն է, որը որոշվում է դրա վերագնահատման արդյունքում:

Մնացորդային արժեքը այն զուտ գումարն է, որը կազմակերպությունը ակնկալում է ստանալ ակտիվից՝ դրա օգտակար ծառայության վերջում՝ դուրսգրման սպասվող ծախսերը հանելուց հետո: Մինչև սույն ստանդարտի ներդրումը «մնացորդային արժեք» (զուտ արժեք) հասկացությունը ծառայության ընթացքում ընկալվել էր որպես սկզբնական արժեքի և փաստացի հաշվարկված մաշվածքի (ամորտիզացիայի) տարբերություն, իսկ ծառայության վերջում՝ լուծարային (չամորտիզացված) արժեքի գումար:

Գործնականում գործածվում է նաև «արժեզրկումից կորուստներ» հասկացությունը, որն արտահայտում է այն գումարը, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Այստեղից էլ՝ հաշվեկշռային արժեքը արտացոլում է այն գումարը, որով ակտիվը ճանաչվում է և ներառվում հաշվեկշռի մեջ՝ մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո: Մինչև այս ստանդարտների կիրառումը «հաշվեկշռային արժեք» արտահայտությունը նույնացվել է «մնացորդային արժեքի» հետ, իսկ ոչ վաղ անցյալում՝ «սկզբնական արժեքի» հետ:

«Հիմնական միջոցներ» հասկացությունը հավաքական մեծություն է և ձևավորվում է ճանաչված միավորների արժեքը գումարելու միջոցով: Հիմնական միջոցների միավորների ճանաչումները կապված են կոնկրետ պայմանների առկայության հետ: Մասնավորապես, պետք է ակնկալվի, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և արժեքը կարելի է հստակորեն գնահատել:

Հիմնական միջոցների միավորը, եթե համապատասխանում է ակտիվ ճանաչելու չափանիշներին, պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումները, ակտիվը՝ նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս:

Ոչ ընթացիկ ակտիվները օգտակար շահագործման ընթացքում, նաև շահագործումից դուրս (անգործության վիճակում), ենթարկվում են մաշվածքի և աստիճանաբար կորցնում են իրենց սկզբնական արժեքը: Միջազգային չափանիշներով՝ ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը ընդունվում է որպես դրանց շահագործման ամբողջ տևողության ընթացքում ամորտիզացման ենթակա գումարից կատարվող պարբերական հատկացում: Ամորտիզացման ենթակա գումար է ոչ ընթացիկ ակտիվի հաշվեկշռային և մնացորդային արժեքների տարբերությունը:

Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի պատճառ կարող են ճանաչվել հետևյալ գործընթացները՝

- ա) ոչ ընթացիկ ակտիվների օգտագործումը (շահագործումը),
- բ) օգտակար ժամանակի լրանալը,
- գ) ոչ ընթացիկ ակտիվի «ծերանալը» (տեխնոլոգիաների, տեխնիկայի, շուկայական պահանջարկի փոփոխվելու հետ նաև բարոյապես մաշվելը),
- դ) աղքատացումը (հանքային պաշարները):

Մաշվածքի հաշվարկման ու հաշվառման նպատակն է սկզբնական արժեքը օգտակար շահագործման բոլոր տարիների վրա համապատասխան ձևով բաշխելու միջոցով ձևավորել փոխհատուցման նույնքան եկամուտ, շահույթ և վնաս՝ հաշվետվության ձևում արտացոլելով որպես ծախս: Ոչ վաղ անցյալում հիմնական միջոցների մաշվածքը այն հիմքն էր, որին համապատասխան՝ ստեղծվում էր դրանց պարզ վե-

րարտադրության համար նպատակային աղբյուր: Շուկայական հարաբերությունների կայացած համակարգ ունեցող երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս, մաշվածքի հաշվարկումը ոչ ընթացիկ գործող ակտիվները նորով փոխարինելու համապատասխան դրամական ֆոնդ ստեղծելու նպատակ չի հետապնդում: Փաստորեն, դա տվյալ ակտիվի արժեքի՝ ըստ նրա օգտագործման ժամկետների բաշխման պարզ մեթոդ է (այն ժամկետների, որոնց ընթացքում ստացվում է եկամուտ): Գործնականում իրատեսական էլ չէ մաշվածքը ոչ ընթացիկ համապատասխան ակտիվը նորով փոխարինելու բավարար աղբյուր համարելը, քանի որ ինֆլյացիայի և այլ պատճառներով չի կարող լրիվ փոխհատուցվել: Բնականաբար, մաշվածք հաշվարկելը չի դիտվում որպես ոչ ընթացիկ ակտիվի պահպանման կամ նորով փոխարինելու եղանակ: Սակայն հաշվարկված ու կուտակված մաշվածքի և կապիտալ ներդրումների, ինչպես նաև հարկվող շահույթի միջև պետք է գոյություն ունենա որոշակի կապ և փոխպայմանավորվածություն, ինչպես Ռուսաստանի Դաշնությունում է: Հակառակ դեպքում մաշվածքի գումարը կարող է ընդհանուր եկամուտների մեջ լրիվ դիմադրվել՝ դրսևորվելով միայն որպես չհարկվող շահույթ և ոչ ավելին:

Համաձայն ՀՀ ստանդարտ 16–ի՝ հիմնական միջոցի միավորի մաշվածության գումարը պետք է պարբերաբար բաշխվի ակտիվի օգտակար ծառայության ամբողջ տևողության ընթացքում: Մաշվածքի հաշվարկման ընդունելի մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որով կազմակերպությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտը (շահույթ): Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված մաշվածության գումարը պետք է ճանաչվի որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Քանի որ ակտիվի մեջ առարկայացած տնտեսական շահույթը օգտագործվում է կազմակերպության կողմից, ուստի ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է, դրանով իսկ այդ օգտագործումը արտացոլվում է մաշվածությանը վերագրելու միջոցով:

Միանշանակ է, որ հիմնական միջոցների միավորի մեջ առարկայացած տնտեսական շահույթը կազմակերպությունն սպառում է գլխավորապես ակտիվի օգտագործման միջոցով: Սակայն այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեխնիկական հնացածությունը (բարոյական մաշվածությունը ևս), անգործության ընթացքում առաջացած մաշվածությունը, հաճախ ակնկալվող տնտեսական շահույթի նվազման պատճառ են դառնում: Հետևաբար, այդ հանգամանքներն ու գործոնները պետք է հաշվի առնվեն ոչ ընթացիկ ակտիվի օգտակար ծառայության տևողությունը որոշելիս: Մասնավորապես, պետք է հաշվի առնել՝

- կազմակերպության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը՝ հիմք ու ելակետ ընդունելով ակնկալվող հզորությունը և արտադրանքի ֆիզիկական ծավալը.
- արտադրական գործոններից (հերթափոխերի թիվ, վերանորոգման ու սպառման, անգործության վիճակում մնալու տևողություն և այլն) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը.
- արտադրությունում կատարվող տեղաշարժերի, բարեփոխումների, տվյալ ակտիվի օգտագործմանը ստացվող արտադրանքի ու ծառայությունների նկատմամբ շուկայական պահանջարկի նվազման հետևանքով առաջացած տեխնիկական հնացածությունը.
- ակտիվի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումները:

Գործող օրենսդրությունը թույլ է տալիս հիմնական միջոցների օգտակար ծառայության տևողությունը որոշել կազմակերպությունների կողմից՝ ելնելով ակնկալվող օգտակարությունից: Ակտիվների կառավարման քաղաքականությունը կազմակերպություններին թույլ է տալիս ակտիվները դուրս գրել նախատեսված ժամանակից շուտ կամ դրանց մեջ առարկայացած տնտեսական շահույթը ոչ լրիվ ստանալուց առաջ: Ուստի, հնարավոր է, որ օգտակար ծառայության ժամկետը լինի ավելի կարճ, քան նրա տնտեսական ծառայության տևողությունն է:

Հողամասերը, շենքերն ու շինությունները դիտվում են որպես առանձնահատուկ ակտիվներ և հաշվառվում են առանձին–առանձին, նույնիսկ այն դեպքերում, երբ ձեռք են բերվում միասին: Հողամասերը, որպես կանոն, ունեն շահագործման անսահմանափակ տևողություն, բնականաբար, դրանց նկատմամբ մաշվածք չի հաշվարկվում: Շենքերն ու շինությունները մաշվող ակտիվներ են:

Տնտեսավարման պրակտիկայում կարող են կիրառվել մաշվածքի հաշվարկման բազմաթիվ մեթոդներ ու մոտեցումներ: Կազմակերպությունները, մաշվածքի կառավարման իրենց ընդունած քաղաքականությունից ելնելով, կարող են օգտվել ցանկացած մեկ կամ մի քանի մեթոդներից: Գործնականում ավելի հաճախ կիրառվում են հետևյալ մեթոդները՝

1. գծային կամ հավասարաչափ հաշվարկման,
2. մնացորդի նվազեցման,
3. տարիների (միավորների) գումարի,
4. վերագնահատման:

Մաշվածքի հավասարաչափ հաշվարկման մեթոդը ավանդական եղանակ է, ունի լայն տարածում և համատարած կիրառվել է նախկին ԽՍՀՄ տնտեսության բոլոր ճյուղերում: Իրականացման տեխնիկան շատ պարզ է: Մաշվածքի գումարը, ըստ օգտակար շահագործման տարիների, բաշխվում է հավասար մասերով և արտահայտվում է կայուն չափերով՝ ըստ ամբողջ ժամանակաշրջանի: Ամորտիզացիոն հատկացումների տարեկան գումարը որոշելու համար պահանջվում է ունենալ համապատասխան ակտիվի սկզբնական արժեքը, նրա օգտակար շահագործման տևողությունը՝ արտահայտված տարիներով և, անհրաժեշտության դեպքում, նաև մնացորդային արժեքի գնահատականը: Օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\text{Տարեկան ամորտիզացիան} = \frac{\text{Սկզբնական արժեք} - \text{մնացորդային արժեք}}{\text{Օտակար շահագործման տարիների թիվ}}:$$

Մաշվածքի գծային հաշվարկի օրինակ. բաժնետիրական ընկերությունը հաշվետու տարվա հունվարի 1–ին ձեռք է բերել սարքավորում՝ 24 մլն դրամ արժեքով, որը մտնում է այլ հիմնական միջոցների խմբի մեջ և ունի 5 տարվա օգտակար շահագործման ժամկետ: Ակնկալվում է, որ տվյալ սարքավորումը մնացորդային արժեք չի ունենալու:

$$\text{Այս դեպքում՝ տարեկան մաշվածքը հավասար է } \frac{24000 \text{ Ն}^{3\%}}{5} = 4800 \text{ Ն}^{3\%} \cdot 1\text{ր}^3\text{Ս} :$$

Եթե կազմակերպությունն ակնկալեր, որ շահագործման ժամկետը լրանալուց հետո տվյալ սարքավորումը հնարավոր է վաճառել 4 մլն դրամով, ապա հաշվարկման ենթակա տարեկան ամորտիզացիայի գումարը կարտահայտվեր 4000 հազ. դրամով.

$$\frac{24 \text{ Ն}^{3\%} - 4000 \text{ Ն}^{3\%}}{5} :$$

Սովորաբար ամորտիզացիոն հատկացումներ կատարվում են աշխատած լրիվ ամիսների համար: Բնականաբար, եթե այդ սարքավորումը ձեռք բերվեր տվյալ տարվա հոկտեմբերի 1–ին, առաջին տարում ամորտիզացիա կհաշվարկվեր 3 ամսվա համար (տարեկանի 1/4–ի չափով):

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հիմնական միջոցները, ըստ օգտակար շահագործման տևողության, դասակարգվում են 5 խմբի՝ 1–20 տարի (1, 3, 5, 10, 20 տարվա) ամորտիզացիայի տևողությամբ: Դրանից էլ ելնելով՝ ամորտիզացիայի տարեկան պլանային մեծությունը հաշվարկելու համար կատարվում է խոշորացված հաշվարկ: Նախ՝ պարզվում է համապատասխան խմբին վերաբերող ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան մնացորդը, այնքանով, որ տարվա ընթացքում կարող է լինել շարժ՝ հների դուրսգրում, նորերի ձեռքբերում: Շարժի ժամկետները ոչ միշտ են համընկնում օրացուցային տարվա սկզբին, և կարիք է առաջանում միջինացման:

Ըստ օգտակար շահագործման տևողության՝ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կարելի է հաշվարկել տարբեր մոտեցումներով: Առավել կիրառելի մեթոդները 3–ն են՝

1. միջին ժամանակագրական,
2. հիմնական միջոցների ապրանքային հաշվեկշռի,
3. միջին թվաբանական:

Միջին ժամանակագրական մեթոդի դեպքում ելակետ են ընդունվում բոլոր ամիսների կամ եռամսյակների սկզբի մնացորդները. առաջին ամսվա կամ եռամսյակի սկզբի մնացորդի կեսին ավելացվում են մյուս բոլոր ամիսների մնացորդները, տարեվերջի մնացորդի կեսը և բաժանվում 12–ի (ամիսների թվին): Օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\bar{\varnothing} = \left[\frac{\varnothing_1}{2} + \varnothing_2 + \dots + \varnothing_{12} + \frac{\varnothing_{12}}{2} \right] : 12,$$

որտեղ՝

$\bar{\varnothing}$ –ն ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացման ենթակա արժեքն է,

$U_1, U_2 \dots U_{12}$ –ը՝ համապատասխանորեն ամիսների սկզբի դրությամբ մնացորդն է՝ սկզբնական արժեքով,

U_{12} –ն տարեվերջի դրությամբ մնացորդն է:

Երկրորդ մեթոդը հիմնված է ապրանքային հաշվեկշռի սկզբունքի վրա՝ տարեսկզբի մնացորդին ավելացվում է տարվա ընթացքում գործարկման ենթակա ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը, և հանվում դուրսգրման (օտարման) ենթակա մասի միջին տարեկան արժեքը՝ ըստ հետևյալ բանաձևի՝

$$\bar{\varnothing} = \varnothing_0 + \frac{\varnothing_1 t}{12} - \frac{\varnothing_2 (12 - t)}{12},$$

որտեղ՝

U_0 –ն տարեսկզբի դրությամբ առկա ակտիվների սկզբնական արժեքն է,

U_1 – ը պլանային ժամանակաշրջանում շահագործման հանձնվող ոչ ընթացիկ ակտիվների սկզբնական արժեքն է,

Մ₂ – ը պլանային ժամանակաշրջանում դուրսգրման ենթակա ակտիվների սկզբնական արժեքն է,

t – n պլանային ժամանակի շահագործման (աշխատելու) ամիսների թիվն է:

Ինչպես նշվեց, սովորաբար վերցվում են լրիվ ամիսները: Երբ շարժը (գործարկումը, դուրսգրումը) նախատեսված է եռամսյակներով, ընդունված է առաջին եռամսյակում շահագործման հանձնվելիք ակտիվների աշխատած ամիսների թիվը վերցնել 10, մյուսներինը՝ համապատասխանաբար 7, 4, 1 ամիս: Դուրսգրման դեպքում ընդհակառակը՝ առաջին եռամսյակինը՝ 1, երկրորդինը՝ 4, երրորդինը՝ 7 և չորրորդինը՝ 10:

Օրինակ՝ ընդունենք, որ բաժնետիրական ընկերության 5 տարվա օգտակար շահագործման ժամկետ ունեցող ակտիվների տարեսկզբի մնացորդը 60 մլն դրամ է, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների սկզբին համապատասխանաբար 58, 66 և 78, իսկ տարեվերջին՝ 80 մլն դրամ: Այս դեպքում ամորտիզացիայի ենթակա ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը կկազմի.

$$\bar{\theta} = \left(\frac{60}{2} + 58 + 66 + 78 + \frac{80}{2} \right) : 12 = 68 \text{ ՍԷՄ}^{\text{ԳՅԱ}} :$$

Այժմ ընդունենք, որ տարեսկզբի մնացորդը կազմում է 60 մլն դրամ, նախատեսված է II եռամսյակում ձեռք բերել 32 մլն դրամի ակտիվներ, իսկ չորրորդում՝ դուրս գրել 12 մլն դրամի ակտիվներ: Այս դեպքում մաշվածքի հաշվարկման համար ելալետ համարվող ոչ ընթացիկ ակտիվների գումարը՝ $\bar{\theta}$ –ն, կկազմի.

$$A_{\bar{\theta}} = \frac{70722 \cdot 100 \cdot 100}{120 \cdot 150} = 39290$$

Մաշվածքը հաճախ արտահայտվում է տոկոսներով՝ սկզբնական արժեքի նկատմամբ: Օրինակ՝ զծային եղանակով ամորտիզացիա հաշվարկելու դեպքում, եթե ծառայության տևողությունը 5 տարի է, և նախատեսվում է մնացորդային արժեքի գրոյական մնացորդ, ամորտիզացիայի տարեկան նորման կլինի 20% (100 : 5):

Մնացորդի նվազեցման մեթոդը լայն կիրառություն չունի: Հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ոչ ընթացիկ ակտիվի շահագործումից ակնկալվող եկամտի ավելի մեծ բաժին ստանալ առաջին տարիներին: Այս մեթոդը կիրառելիս ակտիվի շահագործման առաջին տարիներին ամորտիզացիոն հատկացումները բարձր են, քան ավելի ուշ ժամկետներում: Շահագործման առաջին տարում ամորտիզացիայի տարեկան տոկոսը հաշվարկվում է սկզբնական արժեքի, հետագա տարիներին՝ զուտ հաշվեկշռի արժեքի նկատմամբ: Հետագա տարիների ամորտիզացիոն հատկացումների հաստատագրված տոկոսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Հանգանակ} = 1 - \left(\frac{\text{ՅՆՎՎՎՎ} \quad \text{ՍՅՅՅՅՅ} \text{ՍՅՅՅՅՅ}}{\text{ՅՆՎՎՎՎ} \quad \text{ԵՄՄՄՄՄ} \text{ՅՅՅՅՅՅ}} \right) \times 100 :$$

Շահագործման ընթացքում և դուրսգրման պահին ակտիվի զուտ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը հավասար է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածքի տարբերությանը: Եթե ընդունենք, որ նշված օրինակում ձեռք բերված 24 մլն արժուողությամբ ակտիվի մաշվածքի հաշվարկը նպատակահարմար է կատարել մնացորդի նվազեցման մեթոդով, ապա, ըստ շահագործման հինգ տարիների, այն կկազմի՝

Տարիներ	Մաշվածքի ումարը	Ամորտիզացիոն հատկացումներ	Կուտակված մաշվածք
1	20% × 24000 հազ.	4800 հազ.	4800
2	20% × (24000 – 4800)	3840	8640
3	20% × (24000 – 8640)	3072	11712
4	20% × (24000 – 11712)	2458	14170
5	20% × (24000 – 14170)	1966	16136

Պարզ երևում է, որ ըստ տարիների ամորտիզացիոն հատկացումները նվազում են, և վերջում մնում է որոշակի չամորտիզացված գումար՝ 7864 հազ. դրամ (24000–16136): Դժվար չէ նկատել նաև, որ այս մեթոդը կապված է որոշ բարդությունների հետ: Մասնավորապես, եթե մնացորդային արժեք չի նախատեսվում, մաշվածքի տոկոսը պետք է հավասար լինի 100–ի: Իսկ եթե ակտիվի արժեքը լրիվ չի ամորտիզացվում, և մնում է մնացորդային արժեք, դրույքը ստանում է ավելի բարձր արտահայտություն:

Երկրորդ դեպքում, ըստ տարիների մաշվածքի, դրույքները կունենան հետևյալ չափերը. առաջին տարի՝ 20% $\left(1 - \frac{15380}{24000}\right) \times 100$, երկրորդ տարի՝ 36% $\left(1 - \frac{15380}{24000}\right) \times 100$, երրորդ տարի՝ 39% $\left(1 - \frac{15380}{24000}\right) \times 100$, չորրորդ տարի՝ 59% $\left(1 - \frac{15380}{24000}\right) \times 100$:

Գործնականում կարող է հարց ծագել, թե որ ակտիվների համար է նպատակահարմար մաշվածքը նվազեցման եղանակով հաշվելը: Այդ հարցին պատասխանելիս պետք է նկատի ունենալ, որ գոյություն ունեն ոչ ընթացիկ ակտիվների տեսակներ, որոնք օգտակար շահագործման առաջին փուլում կորցնում են արժեքի ավելի մեծ մասը, մասնավորապես՝ ավտոմեքենաները, հաշվողական տեխնիկայի որոշ տեսակներ: Բացի այդ, կան ակտիվներ, որոնց շահագործումն առաջին տարիներին ավելի քիչ ծախս է պահանջում, քան որոշակիորեն մաշվելուց հետո: Ուստի, հարմար է մաշվածքը հաշվարկել նվազեցումների մեթոդով, այնքանով, որ մաշվածքի գումարը և շահագործման ու պահպանման ծախսերը կարող են մինյանց ծածկել: Այնուհանդերձ, բոլոր դեպքերում մաշվածքը պետք է դիտել որպես ակտիվի արժեքի՝ ըստ տարիների բաշխվածության գումար, այլ ոչ թե ակտիվի գնահատում:

Ըստ տարիների (միավորների) մաշվածքի գումարի հաշվարկման մեթոդի՝ ամորտիզացիոն հատկացումների մեծ մասը նույնպես բաժին է ընկնում սկզբի տարիներին: Ըստ էության, դա նախորդի տարատեսակն է: Այլ կերպ՝ այս մեթոդը կոչվում է 78–ի կանոն՝ ելնելով այն հանգամանքից, որ ամսական հաշվարկի ժամանակ մեկ տարին ձևավորվում է 78 միավորից (12 + 11 + ... + 1 = 78): Հաճախ այս մեթոդը կիրառվում է մաշվածքի ամսական մեծությունը հաշվելու նպատակով: Տարիների գումարը պայմանավորված է օգտակար շահագործման տևողությամբ: Որքան այն երկար է, այնքան գումարը մեծ է: Շահագործման տարիների ցանկացած թվի դեպքում տարիների գումարը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

Տարիների գումարը՝ $SQ = n(n + 1)/2$, որտեղ՝ n –ը տարիների թիվն է:

Օրինակ՝ շահագործման ժամկետի 5 տարվա դեպքում տարիների գումարը հավասար է 15–ի $[5(5 + 1)/2]$, 15 տարվա դեպքում՝ 120–ի $[15(15 + 1)/2]$:

Եթե ընդունենք, որ նախորդ օրինակի 24000 հազ. դրամի ընթացիկ ակտիվի մաշվածքը որոշված է հաշվարկել տարիների գումարի մեթոդով, իսկ ծառայության ժամկետը նույնն է՝ 5 տարի, ապա տարիների գումարը կլինի 15 (5+4+3+2+1), և ըստ տարիների հաշվարկվող մաշվածքի մեծությունը կկազմի.

$$1\text{-ին տարի՝ } \frac{5 \times 24000}{15} = 8000$$

$$2\text{-րդ տարի՝ } \frac{5 \times 24000}{15} = 8000$$

$$3\text{-րդ տարի՝ } \frac{5 \times 24000}{15} = 8000$$

$$4\text{-րդ տարի՝ } \frac{5 \times 24000}{15} = 8000$$

$$5\text{-րդ տարի՝ } \frac{1 \times 24000}{15} = 1600$$

Ընդամենը՝ 24000:

Կուտակված մաշվածքը ըստ տարիների համապատասխանաբար կունենա հետևյալ պատկերը՝ 8000, 14400, 19200, 22400 և 24000:

Վերագնահատման մեթոդով մաշվածքի հաշվարկումը կառուցված է ակտիվների վերագնահատված արժեքի վրա, ինչը տարբեր է հաշվապահական հաշիվներում արտացոլվածից: Վերագնահատումից հետո ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի գումարը պետք է հաշվարկվի նոր արժեքից ելնելով: Այնքանով, որ վերագնահատումից հետո ձևավորված արժեքը հաճախ նախկինից մեծ է, տարեկան մաշվածքի գումարը մեծանում է: Առաջին հայացքից դա կարող է տարօրինակ թվալ. հետագա տարիների մաշվածքը մեծ է սկզբնական տարիների մաշվածքից: Բայց, նկատի ունենալով, որ մաշվածքի հաշվարկը ակտիվի արժեքի դուրսգրումն է շահագործման տարիների վրա, արժեքի մեծացումը անխուսափելիորեն ավելացնում է նաև տարեկան մաշվածքի գումարը, որը միանգամայն ընկալելի է:

Մաշվածքի հաշվարկման ժամանակ ոչ գծային մեթոդների կիրառման արտասահմանյան փորձը (մասնավորապես ԱՄՆ–ում) նախատեսում է պակասեցվող մնացորդի որոշման բազմակիություն: Կրկնակի պակասեցման պրակտիկայի ժամանակ տարեկան մաշվածքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$U = U_w * N * 2,$$

որտեղ՝ U_w – ն ոչ ընթացիկ ակտիվի մնացորդային արժեքն է տարեսկզբին

N – ը մաշվածքի նորման է շահագործման ամբողջ տևողության ընթացքում

2 – ը հաշվարկման բազմակիությունն է:

Մաշվածքի ոչ գծային հաշվարկի օրինակ (ըստ նախորդ օրինակի՝ սկզբնական արժեքը 24 մլն դրամ է, ծառայության տևողությունը՝ 5 տարի).

Մնացորդային արժեքը ժամանակաշրջանի սկզբին, հազ. դրամ	Մաշվածքի ումարը, հազ. դրամ	Մնացորդային արժեքը ժամանակաշրջանի վերջին, հազ. դրամ
24000	$24000 * 20\% * 2 = 9600$	14400
14400	$14400 * 20\% * 2 = 5760$	8640
8640	$8640 * 20\% * 2 = 3456$	5184
5114	$5114 * 20\% * 2 = 2074$	3110
3110	$3110 * 20\% * 2 = 1244$	1866

Այս մոտեցման պայմաններում հաշվարկի ոչ գծայնությունը զգալիորեն բարձրանում է, իսկ մնացորդային արժեքը (որպես մաշվածք չհաշվարկված) կրճատվում է մեծ չափերով՝ 7864 հազ. դրամից իջնելով 1866 հազ.դրամի (32.7%–ից 7.7%–ի):

Մաշվածքի հաշվապահական հաշվառման կանոնները, նրա հաշվարկման մեթոդի հետ կապված, փոփոխության չեն ենթարկվում: Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումը ձևակերպվում է՝ դեբետ՝ ոչ ընթացիկ ակտիվների արժեք, կրեդիտ՝ դրամարկղ: Յուրաքանչյուր տարվա վերջում մաշվածքը կարգավորվում է:

Դեբետ՝ հաշվետվություն շահույթի և վնասի մասին՝ մաշվածք:

Կրեդիտ՝ ոչ ընթացիկ ակտիվներ՝ կուտակված մաշվածք:

Ակտիվի սկզբնական արժեքը, առանց մաշվածքի, պետք է գրանցվի ամեն տարվա հաշվեկշռում: Մաշվածքի դեպքում աղբյուրի արժեքն ամեն տարի պակասեցվում է տարվա կուտակված մաշվածքի չափով: Ամեն տարի շահույթի և վնասի հաշվետվության մեջ ծախսի տեսքով արտացոլվում է տարեկան ամորտիզացիայի գումարը, և դրանով իսկ ոչ ընթացիկ ակտիվի արժեքը ամենօրյա ծախսի ձևով բաշխվում է ըստ շահագործման տարիների:

14.2. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք իրենց էությանը դրամական միջոցների այն ամբողջությունն են, որոնք ավանսավորվում են ոչ ընթացիկ ակտիվների մեջ և ձևավորում կազմակերպության հիմնական կապիտալը:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության՝ կապիտալ ներդրումները ՀՀ տարածքում կարող են ֆինանսավորվել հետևյալ աղբյուրներով՝

- սեփական ֆինանսական ռեսուրսներ և ներտնտեսական (շահույթ, կուտակված մաշվածք, պահուստներ, սեփական կապիտալ շինարարության շահույթ), ապահովագրական փոխհատուցումներ և այլ ներքին աղբյուրներ,
- փոխառու ֆինանսական միջոցներ (բանկային ու բյուջետային վարկեր, փոխառություններ և այլն),
- ներգրավված ֆինանսական միջոցներ (արժեթղթերի վաճառքից մուտքեր, բաժնեմասային և այլ մուծումներ, քաղաքացիների, աշխատանքային կոլեկտիվի անդամների և իրավաբանական անձանց այլ վճարումներ),

- պետական բյուջեից ինվեստիցիոն հատկացումներ, արտաբյուջետային ֆոնդերից մասհանումներ,
- օտարերկրյա ներդրողների միջոցներ:

Ինվեստիցիաների և դրանց կարևորագույն մասը կազմող կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են նաև այլ հատկանիշներից ելնելով: Դրանց ամբողջությունը կարելի է բաժանել ներքին և արտաքին, վերադարձվող և անվերադարձ աղբյուրների: Իսկ ձևավորման առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր է բաժանել 3 խմբի՝ ներքին ռեսուրսներ, հիմնական գործունեությունից բխող աղբյուրներ և արտաքին աղբյուրների հաշվին ներգրավվող միջոցներ: Դասակարգման վերջին մոտեցումը հատկապես վերաբերում է գործող այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են տեխնիկական վերազինման, վերակառուցման և ընդլայնման միջոցառումներ տնտեսավարական եղանակով՝ սեփական կապիտալ շինարարության կազմակերպման միջոցով:

Սեփական ֆինանսական ռեսուրսների բավարարությունը հնարավոր է դարձնում ինքնաֆինանսավորման ապահովումը: Աղբյուրների այս խմբի մեջ գլխավոր տեղը պատկանում է գործառնական շահույթին: Ինչպես արդեն նշվել է, շահույթը զուտ եկամտի որոշակի մասի դրամական արտահայտությունն է: Բյուջեի հանդեպ պարտավորությունները և այլ պարտադիր վճարումները կատարելուց հետո կազմակերպության տնօրինությունը մնացած զուտ շահույթը կարող է ծախսել իր նախընտրած ուղղություններով, այդ թվում ինվեստիցիոն նպատակով՝ կուտակման և նույնպիսի այլ ֆոնդեր ստեղծելու ճանապարհով:

Գործնականում շահույթից կապիտալ ներդրումներին կատարվող հատկացումների գումարի մեծությունը նախ և առաջ պայմանավորված է զուտ շահույթի ծավալով, առաջնահերթություն ունեցող այլ պահանջների ամկայությամբ, ուրիշ միևնչև շահույթը ներգրավելը աղբյուրների ամկայությամբ, ինչպես նաև փոխատվական հարաբերությունների պայմաններով (ֆինանսական լծակի դիֆերենցիալ, ֆինանսական լծակի դիրք, վարկի հաշվարկային միջին տոկոսադրույք, տնտեսական շահութաբերության մակարդակ):

Ինվեստիցիաների երկրորդ խոշորագույն աղբյուրը ամորտիզացիոն հատկացումներն են (կուտակված մաշվածքը), ինչը ՀՀՀՅ կիրարկման պայմաններում իր բնույթով գրեթե նույնացվում է շահույթի հետ: Ձեռնարկություններում մաշվածքի արժեքի կուտակումը տեղի է ունենում պարբերաբար (ամեն ամիս), այն դեպքում, երբ հիմնական ֆոնդերը արտադրական յուրաքանչյուր պարբերաշրջանից հետո նյութական փոխհատուցում չեն պահանջում: Արդյունքում ձևավորվում են ազատ դրամական միջոցներ, և արտադրության ծախքերի մեջ ներառված մաշվածքը փոխհատուցվում է իրացումից ստացված հասույթից: Տրամաբանական է այդ ազատ դրամական միջոցները հիմնական կապիտալի վերարտադրությանն ուղղելը:

Հայաստանի Հանրապետությունում, ըստ էության, իրականացվում է ոչ ընթացիկ ակտիվների արագացված ամորտիզացիա: Ընդհանրապես, արագացված ամորտիզացիան՝ որպես տնտեսական խթանման միջոց, իրականացվում է 2 եղանակով:

Առաջին դեպքում արհեստականորեն կրճատվում են ակտիվների շահագործման ժամկետները, և համապատասխանորեն բարձրանում է տարեկան նորման: Արդյունքում այդ ձևով հաշվարկված ամորտիզացիան օգտագործվում է ֆիզիկապես ու բա-

րոյապես հնացած տեխնիկան նորով փոխարինելու նպատակով: Ամորտիզացիոն մեծ հատկացումների հետևանքով կազմակերպություններում պակասում է հարկվող շահույթի, հետևաբար՝ շահութահարկի գումարը:

Արագացված ամորտիզացիայի երկրորդ եղանակը համատարած կիրառություն չունի: Առանց շահագործման ժամկետների՝ պետականորեն սահմանված նորմատիվները կրճատելու, առանձին ճյուղերի կազմակերպություններին թույլ է տրվում մի քանի տարիների ընթացքում ամորտիզացիոն հատկացումներ կատարել բարձրացված չափերով՝ հետագա տարիներին դրանք պակասեցնելու պայմանով:

Կապիտալ ներդրումների և, ընդհանրապես, ինվեստիցիոն գործունեության համար ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում կարևորագույն աղբյուր է արժեթղթերի թողարկումը: Վերջինս նպաստում է կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված միջոցները խոշոր կապիտալ ներդրումների նպատակով կենտրոնացնելուն՝ դրանով իսկ թեթևացնելով բյուջետային, գերատեսչական և ֆինանսավորման այլ աղբյուրների հոգսը:

Արժեթղթերի միջոցով կապիտալ ներդրումների համար կարող են հավաքագրվել նաև բնակչության՝ ապրանքային ծածկույթ չունեցող միջոցները: Միաժամանակ հարկ է նշել, որ ինվեստիցիաների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում վերջին տարիներին նկատելիորեն նվազել է բանկային երկարատև վարկերի բաժինը, ինչը վարկի հաշվարկային դրույթի բավականաչափ բարձր լինելու և վարկավորման մեխանիզմի բարդության հետևանք է: Այդ պատճառով էլ կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների մեջ կարևոր դեր է ձեռք բերում արժեթղթերի թողարկումը:

Արժեթուղթը փաստաթուղթ է, որը հաստատում է դրա տիրոջ սեփականատիրական իրավունքը համապատասխան կազմակերպության գույքի, դրամական միջոցների նկատմամբ: Արժեթղթերը իրավունք են տալիս եկամուտ ստանալ շահաբաժինների ձևով, ինչպես նաև ստեղծում են դրամական և այլ իրավունքները ուրիշ անձանց փոխանցելու հնարավորություն: Ֆինանսական պրակտիկայում արժեթղթերի շարքն են դասվում միայն նրանք, որոնք կարող են հանդիսանալ առք ու վաճառքի առարկա և համաչափ կամ միանվագ եկամտի ստացման աղբյուր: Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների համար անենակարևոր արժեթղթի տեսակը բաժնետոմսն է: Դա այնպիսի արժեթուղթ է, որը ձեռք բերողին (տնօրինողին) իրավունք է տալիս մասնակցելու բաժնետիրական ընկերության աշխատանքներին, նրա շահույթին (եկամուտներին), լուծարվելու դեպքում՝ նաև մնացած գույքի բաշխմանը:

Կազմակերպությունների ակտիվների, հետևաբար նաև կապիտալ ներդրումների ձևավորման աղբյուրների կազմում չափազանց մեծ է բանկային վարկի դերը: Հայտնի է, որ բանկային վարկը արտահայտում է փոխառուի և փոխատուի միջև փոխհատուցման և վերադարձելիության սկզբունքով իրականացվող դրամական հարաբերությունները, որտեղ կարևոր դեր ունի վարկային տոկոսը: Սովորաբար վարկը ներգրավվում է այն բնագավառներում, որտեղ ապահովվում է արագ արդյունք՝ շահույթի և եկամտի ստացում, ինչը հատուկ է Հայաստանի Հանրապետության ժամանակակից պայմաններին: Պրակտիկան ցույց է տալիս, որ այն ձեռնարկությունների համար, որոնք հնարավորություն ունեն ընդլայնելու պահանջարկ ունեցող արտադրանքի թողարկումը, վարկի ներգրավումն ավելի ձեռնասու է, քան արժեթղթերի թողարկումը:

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ՝ բանկային վարկի օ-

բյեկտները տարակարգված չեն. այդպիսիք կարող են լինել գործունեության հետ կապված ամենատարբեր պահանջները: Իրավաբանական ու ֆիզիկական անձանց կապիտալ ներդրումների առնչությամբ վարկի օբյեկտ կարող են ծառայել հետևյալ ծախսերը՝

- արտադրական ու ոչ արտադրական օբյեկտների կառուցումը, ընդլայնումը, վերակառուցումը և տեխնիկական վերազինումը,
- շարժական ու անշարժ գույքի՝ մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, շենքերի, կառույցների ձեռքբերումը,
- համատեղ կազմակերպությունների ստեղծումը,
- գիտատեխնիկական արդյունքի, անհատական արժեքների և սեփականության այլ օբյեկտների ստեղծումը և այլն:

Բանկի ու փոխառուի միջև վարկային հարաբերությունների կարգավորման գլխավոր փաստաթուղթը վարկային պայմանագիրն է: Որպես կանոն, այն ներառում է հետևյալ պայմանները՝ տրվող վարկի գումարը, դրա օգտագործման և վերադարձման կարգն ու ժամկետները, վարկային դրույքը, պարտավորության ապահովման ձևը, բանկին ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Վերոհիշյալ նպատակների համար վարկի հատկացումը իրականացվում է կազմակերպության կողմից այնպիսի փաստաթղթերի ներկայացման դեպքում, որոնք հաստատում են նրա վարկունակությունը և միջոցառման վարկավորման հնարավորությունը: Ըստ հանրապետության առևտրային բանկերի համակարգում ձևավորված մեխանիզմի՝ այդ ցանկը պարտադիր ընդգրկում է՝

- կազմակերպության ստեղծման կանոնադրությունը,
- կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը վերջին հաշվետու ժամկետի դրությամբ՝ հարկային տեսչության կողմից հաստատված,
- միջոցառման տեխնիկատնտեսական հիմնավորումը (արդյունավետություն, ծախսերի փոխհատուցման հաշվարկներ),
- կազմակերպության ֆինանսական դրությունը և վարկունակությունը հաստատող այլ փաստաթղթեր:

Տնտեսավարման պրակտիկայում սովորաբար վարկի ներգրավումը դիտվում է որպես կապիտալ ներդրումների ֆինանսավորման նախահաշվի հաշվեկշռող աղբյուր: Դրանից բխում է, որ կարճաժամկետ զարգացման պլանով նախատեսված կապիտալ շինարարության ընդհանուր նախահաշվային արժեքին համապատասխան աղբյուրների ծավալը նախատեսելիս առաջնահերթ հաշվի են առնվում ներքին ռեսուրսները, հիմնական գործունեության հետ կապված աղբյուրները, ներքին այլ ապակենտրոնացված ռեսուրսները, իսկ վարկի նկատմամբ պահանջը որոշվում է որպես նախահաշվային արժեքի և թվարկված աղբյուրների ընդհանուր գումարի տարբերություն:

Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ են միջոցների ներգրավման նոր մեթոդներն ու գործիքները: Ոչ ընթացիկ ակտիվների մեջ ինվեստիցիայի ամենաարդյունավետ մեթոդներից մեկը Հայաստանի Հանրապետությունում առայժմ լայն տարածում չստացած լիզինգն է: Լիզինգը մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, նաև արտադրական նշանակության կառույցների երկարաժամկետ վարձակալությունն է: Լիզինգային բոլոր գործարքները կարելի է բաժանել երկու տիպի՝ օպերատիվ լիզինգ և ֆինանսական լիզինգ, երկուսն էլ՝ լրիվ ինքնափոխհատուցումով:

Օպերատիվ լիզինգը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով. մասնավորապես, վարձատուն վարձակալությանը տրված ոչ ընթացիկ ակտիվների փոխհատուցելիությունը չի կապում միայն մեկ վարձակալի հետ, ժամկետը լրիվությանը չի ընդգրկում գույքի ֆիզիկական մաշվածքի տևողությունը, գույքի փչանալու կամ կորստի ռիսկը նա է կրում, ժամկետը լրանալուց հետո վերադարձվում է, վաճառվում կամ սեփականատիրոջ կողմից տրվում է ուրիշ վարձակալի:

Ֆինանսական լիզինգը նախատեսում է վարձակալության ամբողջ տևողության ընթացքում կայուն մեծության վարձավճարի գանձում այնպիսի չափերով, որն ապահովի դրանց լիակատար ամորտիզացիա և հաստատագրված լիզինգային շահույթ: Ֆինանսական լիզինգն ունի մի քանի տարատեսակներ՝ լիզինգ սպասարկումով, լեֆերջ-լիզինգ, ծրարով լիզինգ:

Առաջին դեպքն ուղեկցվում է վարձակալի կողմից սարքավորումների սպասարկման ու պահպանման որոշակի ծախսումների պարտավորություններով: Ծրարով լիզինգը տարբերվում է նրանով, որ շենքերը և կառույցները տրվում են վարկով, իսկ սարքավորումները՝ վարձակալական պայմանագրով:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է հիմնական կապիտալի բովանդակությունը, ի՞նչ դեր է կատարում այն բիզնեսի իրականացման գործում:
2. Որո՞նք են հիմնական կապիտալի նյութական կրողները, ցույց տալ դրանց կազմը և կառուցվածքը:
3. Ինչպե՞ս է կատարվում ոչ ընթացիկ ակտիվների գնահատումը, հաշվառումը և մաշվածքի հաշվարկը:
4. Որո՞նք են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի հաշվարկման ժամանակակից եղանակները:
5. Ի՞նչ է նշանակում ինվեստիցիա: Որո՞նք են կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները:

ԳԼՈՒԽ 15

ՄԻԿՐՈՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ

Հասարակության կտրվածքով համախառն ներքին արդյունքի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման գործընթացն ուղեկցվում է բազմաթիվ ու բազմաբնույթ դրամական հարաբերություններով: Ֆինանսական կառավարման ու ֆինանսական քաղաքականության արդյունավետ իրականացման խնդիրներից է միատեսակ ու միատիպ դրամական հարաբերությունները ըստ առանձին օղակների խմբավորումը, կանխատեսումը և հասարակության կարիքների բավարարման նպատակին ծառայությունը: Տվյալ գործընթացին մասնակցող ֆինանսների ցանկացած օղակ որոշակիորեն ներգործում է տնտեսության զարգացման վրա: Դրամական հարաբերությունների միջև եղած առանձնահատկությունները հատկապես զգալի են ՀՆԱ–ի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման գործընթացներում: Նախնական բաշխման գործընթացը տեղի է ունենում նյութական արտադրության ոլորտում, ինչն էլ հանդիսանում է կազմակերպությունների ֆինանսների սպասարկման օբյեկտը: Միևնույն ժամանակ հիմնականում պետական բյուջեի միջոցով են հավաքագրվում պետության կենտրոնացված ֆոնդերը, և տեղի է ունենում միջոցների վերաբաշխում տնտեսության ճյուղերի, երկրի առանձին տարածաշրջանների, բնակչության սոցիալական խմբերի միջև: Այս գործընթացը ենթադրում է ֆինանսական համակարգի տարբեր սուբյեկտների միջև ֆինանսական ռեսուրսների բաշխման ու վերաբաշխման, ինչպես նաև դրան ուղեկցող դրամական հարաբերությունների իրականացման արդյունավետ կազմակերպում, որն անհնար է առանց այդ ռեսուրսների և դրանց ձևավորման աղբյուրների կանխատեսման ու պլանավորման:

Վերը նշվածից ելնելով՝ գրականության մեջ և գործնականում կիրառվող ֆինանսական պլանների բազմազանությունը կարելի է ամփոփել երկու հիմնական խմբերի մեջ.

1. կենտրոնացված ֆինանսական պլաններ (պետական բյուջեն, համայնքների բյուջեները, պետական արտաբյուջետային ֆոնդերը),
2. ապակենտրոնացված կամ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական պլաններ:

Այս համակարգում ելակետայինը կազմակերպությունների ֆինանսական պլաններն են, քանի որ այստեղ է ստեղծվում ազգային եկամուտը, ձևավորվում և բաշխվում շահույթը՝ ֆինանսական ռեսուրսների մյուս տեսակները:

Միկրոմակարդակով ֆինանսական պլանավորումն իրականացվում է առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից: Միկրոմակարդակով ֆինանսական պլանավորումը բավականին դժվար, աշխատատար գործընթաց է, որն ամփոփում է տնտեսավարող սուբյեկտների գրեթե բոլոր ծառայությունների (կառուցվածքային ստորաբաժանումների) գործունեության արդյունքները: Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած տնտեսավարող սուբյեկտ կարելի է դիտարկել որպես սո-

ցիալ–տնտեսական բարդ համակարգ, որը միջոցների հոսքերը վերածում է ապրանքների կամ ծառայությունների, որոնց առաջարկի և պահանջարկի իրացումը ապահովում է հիմնական նպատակների իրականացումը:

Այսպիսով՝ ձեռնարկության ֆինանսները, լինելով ֆինանսական հարաբերությունների ընդհանուր համակարգի մի մասը, արտահայտում են ձեռնարկություններում եկամուտների ձևավորման, բաշխման և օգտագործման գործընթացները: Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կառավարման արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է դրամական հոսքերի, դրամական հարաբերությունների և դրանց առնչվող գործընթացների ֆինանսական հետևանքների կանխատեսման մակարդակով: Այս գործընթացները կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության: Արտադրական կազմակերպությունների համար շուկան մշտապես առաջադրում է ինչպե՞ս իրականացնել գործունեությունը, որպեսզի հնարավոր լինի խուսափել վնասներից և ռիսկերից, ստանալ առավելագույն եկամուտ հարցը: Հավերժական «ի՞նչ, ինչպե՞ս, ե՞րբ արտադրելու» ազատ շուկայական տնտեսության անորոշության պայմաններում անլուծելի թվացող հիմնախնդիրը գործնականում հնարավոր է լուծել միայն ձեռնարկության գործունեության, այն իրականացնելու միջավայրի ամբողջական վերլուծության և ապագա քայլերի կանխատեսման ու պլանավորման միջոցով:

Կազմակերպության հիմնադրման պահին, ինչպես նաև գործունեության առաջին տարիներին, մեծ նշանակություն ունի ֆինանսների կառավարման ինվեստիցիոն կողմը, հետագայում աստիճանաբար առաջնային նշանակություն են ստանում հեռանկարային վերլուծության, կանխատեսման, գործունեության արդյունավետության բարձրացման և պլանավորման խնդիրները:

Գրականության մեջ պլանավորումը սահմանվում է որպես կառավարման գործընթացի բաղկացուցիչ տարր, որն ուղղված է հնարավոր տարբերակների միջից օպտիմալի ընտրությանը և կիրառմանը: Այն մարդկանց գործունեություն է, որը, հիմնվելով հետազոտության և վերլուծության վրա, հնարավորություն է տալիս ընդունել այնպիսի որոշումներ, որոնք առավելագույնս նպաստեն կազմակերպության ապագա տարբեր նպատակների իրականացմանը:

Այս ենթատեքստում կառավարման գործընթացը կարելի է ներկայացնել որպես կազմակերպությունների նպատակների իրագործմանն ուղղված հիմնական ու կոնկրետ կառավարման սուբյեկտների կողմից իրականացվող գործունեություն:

Արտադրական կազմակերպության տեսանկյունից պլանավորման էությունն այն է, որ կանխատեսվում են ապագա բոլոր այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն արտադրական գործընթացի սկզբից մինչև վերջ՝ հաշվի առնելով նաև հնարավոր այն տարբերակները, որպիսիք կարող են առաջանալ գործողությունների իրականացման ընթացքում, և տրվեն համապատասխան լուծումներ:

Ֆինանսական պլանավորման միջոցով միաժամանակ հիմնավորվում են արժեքային համամասնությունները, ֆինանսական միջոցների հոսքերը, և պարզվում են պլանային ժամանակաշրջանի կարևորագույն ֆինանսական ցուցանիշները:

Ֆինանսական պլանավորման նպատակները գործնականում բխում են ֆինանսական քաղաքականության ուղղություններից: Դրանցում առաջնային կարող է լինել՝ վաճառքի ծավալների, շահույթի և ձեռնարկության արժեքի մաքսիմիլացումը:

Առևտրական կազմակերպության ֆինանսական քաղաքականությունն ընդգրկում է ռազմավարական նպատակների և խնդիրների ամբողջությունը և դրանց իրականացման մեխանիզմները հիմնական գործունեության բնագավառում:

Արտադրական առևտրային կազմակերպություններում դրա բաղադրիչներն են.

- դրամական հոսքերի վերլուծությունը և պլանավորումը,
- ֆինանսավորման արտաքին միջոցների ներգրավման ռազմավարության ընտրությունը,
- շրջանառու միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի կառավարումը,
- հաշվային և հարկային քաղաքականության մշակումը,
- ծախսերի կառավարումը և վերահսկողությունը, ամորտիզացիոն քաղաքականության ընտրությունը:

Գործնականորեն **ֆինանսական պլանավորման խնդիրները** որոշվում են ձեռնարկության ֆինանսական և ներդրումային քաղաքականությամբ: Գործնականում այդպիսի խնդիրներն են.

1. անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովել արտադրական, ինվեստիցիոն և ֆինանսական գործունեությունը,
2. չափորոշիչներ սահմանել կապիտալի օպտիմալ կառուցվածքի ձևավորման և օգտագործման արդյունավետության գնահատման համար,
3. ֆինանսական արդյունավետ հարաբերություններ հաստատել գործընկերների հետ,
4. վերահսկողություն սահմանել ձեռնարկության ֆինանսական դրության, իրացվելիության և վարկունակության նկատմամբ,
5. պաշտպանել ձեռնարկության բաժնետերերի և այլ ներդրողների շահերը,
6. կատարել կառավարչական որոշումների հետևանքների կանխատեսում,
7. սահմանել շահույթի և ֆինանսական այլ միջոցների օգտագործման արդյունավետ ուղիներ:

Ամբողջականացնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ միկրոնակարգակոմ ֆինանսական պլանավորումն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական ռեսուրսների շարժի և համապատասխան ֆինանսական հարաբերությունների հիմնավորման գիտական գործընթաց:

Նրա հիմնական օբյեկտը պետության կամ ցանկացած տնտեսական մարմնի ֆինանսական գործունեությունն է, ընդ որում, դրանով որոշվում են ֆինանսական ռեսուրսների շարժը, դրանք միջնորդավորող ֆինանսական հարաբերությունները և արժեքային համամասնությունները: Ֆինանսական պլանավորումը հարկ է քննարկել որպես պետության, տնտեսության սուբյեկտների առանձին օղակների կողմից իրականացվող նպատակասլաց գործողություն, որն ուղղված է տնտեսական ու սոցիալական որոշումների ընդունմանը:

Ֆինանսական պլանավորման միջոցով է հնարավորություն ստեղծվում ապահովել կազմակերպությունների նյութական ու ֆինանսական ռեսուրսների միջև հավասարակշռություն՝ նախատեսված ծախսերը դրանց իրականացման իրական հնարավորությունների հետ համաչափելու միջոցով: Ֆինանսական պլանի հողվածները կապված են կազմակերպությունների արտադրանքի արտադրության, տեխնիկա-

կան զարգացման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության այլ բնագավառների հիմնական ցուցանիշների հետ և դրանով ներգործում են կազմակերպության ողջ գործունեության վրա:

Ֆինանսական պլանավորումը՝ որպես պլանային առաջադրանքների մշակման սուբյեկտիվ գործընթաց, պետք է հիմնվի օբյեկտիվ պայմանների, տնտեսական օրենքների և օրինաչափությունների վրա:

Շուկայական տնտեսության պայմաններում, գնորդի պահանջարկին հանդիման, հանդես է գալիս ձեռնարկությունների կողմից ներկայացվող առաջարկը: Իր հերթին, ձեռնարկությունն իր գործունեությունն իրականացնելու նպատակով ներկայացնում է պահանջարկ այլ արտադրողների, նրանցից գնում է աշխատուժ, նյութեր, սարքավորումներ և այլ ակտիվներ: Ժամանակակից տեխնիկայի զարգացումը, դրան ուղեկցող կապիտալի օգտագործման բնույթի փոփոխությունը հանգեցրել են նրան, որ սպառողների պահանջարկը սահմանվի նախօրոք՝ ամիսներ, իսկ երբեմն նաև տարիներ առաջ: Նման իրավիճակում որոշելով, թե ինչպիսի պահանջարկ ունի սպառողը, և ինչ է պատրաստ նա գնելու՝ կազմակերպությունը պետք է անի ամեն բան՝ իր կողմից թողարկվող արտադրանքի գինը սպառողի համար ընդունելի դարձնելու: Այսպիսով՝ ձեռնարկությունը պետք է վերահսկողություն իրականացնի և արտադրանքի նկատմամբ, որը պատրաստվում է վաճառել, և այն ակտիվների նկատմամբ, որը նա պատրաստվում է գնել օբյեկտիվորեն, ազատ շուկայի փոխարեն պետք է օգտվի պլանավորումից:

Ինչպես արդեն նշվել է, միկրոմակարդակով ֆինանսական պլանավորումը, տնտեսավարման այլ մեթոդների և գործիքների հետ միասին, մեծ չափով կախված է այն տնտեսական համակարգից, որում գործում է ձեռնարկությունը:

Վարչահրամայական տնտեսության պայմաններում պլանավորման գործում գլխավոր դեր էին խաղում նախարարությունները և գերատեսչությունները: Այդ ժամանակաշրջանում տնտեսության ցանկացած ճյուղ սխեմատիկորեն կարելի է պատկերել շուռ տված ծառի տեսքով, որի «բունը» կազմում էր նախարարությունը, որը այնուհետև բաժանվում էր կազմակերպությունների, ձեռնարկությունների, որոնք ճյուղավորվում էին հստակ ձևավորված ենթահամակարգերի: Ընդ որում, ամենահիմնական ցուցանիշների գծով պլանային հիմնական խնդիրները սահմանվում և «իջեցվում» էին բնից դեպի ճյուղերը:

Նման կառավարման համակարգն ունի իր առավելությունները և թերությունները: Մասնավորապես, այստեղ կենտրոնացված կարգով որոշվում էին մատակարարները, գնորդները, ծավալները, գները և այլն, հստակորեն վերահսկելով պլանի կատարումը և սահմանված նորմատիվներին համապատասխանությունը: Այս ժամանակաշրջանում փորձ էր արվում ուշադրություն դարձնել ոչ միայն ընդհանուր վերահսկողության, այլև տեղական մակարդակով վերլուծության և պլանավորման խնդիրներին: Սակայն իրականում կառավարման ապարատի գործունեության այս կողմը ավելի շատ ձևական բնույթ ուներ, քանի որ պլանային առաջադրանքները նախատեսվում էին վերևից, կազմակերպությանը մնում էր միայն սահմանված ցուցանիշների մանրամասնեցման և նրանց կատարման համար միջոցների ապահովման գործընթացը:

Ձեռնարկությունների գործունեությունը պլանավորվում էր հնգամյա ժամկետներ

րով: Տարեկան ֆինանսական պլանները սահմանվում էին «հսկիչ» թվերի հիման վրա վերադաս կազմակերպությունների կողմից՝ ձեռնարկություններին տալով իրականացնողի դեր: Ձևականորեն ֆինանսական պլանները հաստատվում էին կազմակերպության անմիջական ղեկավարության կողմից՝ հիմնական ցուցանիշները համաձայնեցնելով վերադաս կազմակերպությունների հետ՝ իրացման ծավալ, արտադրանքի անվանացանկ, շահույթ և այլն:

Շուկայական տնտեսությունը՝ որպես ավելի բարդ սոցիալ-տնտեսական համակարգ, պահանջում է որակապես տարբեր մակարդակի ֆինանսական պլանավորում, քանի որ բոլոր տեսակի բացասական հետևանքների և սխալների դեպքում պատասխանատվություն է կրում հենց ինքը՝ ձեռնարկությունը: Այս դեպքում պլանավորման բնույթն արմատապես փոխվում է:

Կազմակերպությունը շուկայական տնտեսության պայմաններում կարող է գոյատևել միայն կանոնավոր կերպով ձևավորվող շահույթի հաշվին: Դրա համար այն պետք է այնպես իրականացնի իր գործունեությունը, որ ստացվող եկամուտները գերազանցեն ծախսերը: Մրցակցության առկայության պայմաններում եկամուտների ստացումը ռիսկային է այն իմաստով, որ եթե բիզնեսի որևէ ճյուղ համարվում է իրապուրիչ, ապա այնտեղ անվերապահորեն փորձում են մտնել մրցակիցները: Այդ իսկ պատճառով առաջնային նշանակություն են ստանում հեռանկարային վելուծությունը, կանխատեսումը և գործունեության պարամետրերի ճիշտ ընտրությունը:

Բացի դրանից, մատակարարների և գնորդների հետ գործարար կապերի հաստատումը կատարվում է ձեռնարկության կողմից: Այս պարագայում կարևոր է չսխալվել համապատասխան գործընկերոջ ընտրության հարցում, քանի որ սխալը կարող է բացասական ազդեցություն ունենալ ձեռնարկության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունները հանդիպում են ևս մեկ խնդրի՝ ինվեստիցիաների աղբյուրների որոնման և դրանց արդյունավետ կազմակերպման ու ներգրավման խնդրին: Խոսքը գնում է ինչպես ձեռնարկության միջոցներով ձևավորված ինվեստիցիաների, այնպես էլ արտաքին աղբյուրներով ֆինանսավորման մասին, որոնք ուղղվում են ձեռնարկության շրջանառու և հիմնական կապիտալների համալրմանը:

Այսպիսով՝ շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական ցուցանիշներն առաջնային դեր են ստանում ձեռնարկության գործունեության գնահատման գործում, իսկ ֆինանսական պլանավորումը սկսում է որոշիչ դեր խաղալ ընդհանուր պլանավորման մեջ, այնքանով, որ ցանկացած գործունեություն արդարացված է միայն այն դեպքում, եթե երկարաժամկետ կտրվածքով վնասաբեր չէ:

Ֆինանսական պլանավորումը՝ որպես պլանային առաջադրանքների մշակման սուբյեկտիվ գործընթաց, պետք է հիմնվի օբյեկտիվ պայմանների, տնտեսական օրենքների և օրինաչափությունների վրա: Դրանց ազդեցությամբ են որոշվում ֆինանսական ռեսուրսների շարժի ուղղությունները, ֆինանսական պլանների բովանդակությունը, ինչպես նաև այդ գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:

Ձեռնարկությունների ֆինանսական պլանները՝ կախված նրանց կազմման համար ելակետ ծառայող գործունեության ժամկետներից, լինում են հեռանկարային, միջնաժամկետ, ընթացիկ և օպերատիվ:

Հեռանկարային պլանավորումն իրականացվում է 3–5 տարի ժամանակաշրջանով: Այն ներառում է ձեռնարկության ֆինանսական ռազմավարության մշակումը և ֆինանսական գործունեության կանխատեսումը: Ֆինանսական ռազմավարության մշակումն իրենից ներկայացնում է ֆինանսական պլանավորման հատուկ ոլորտ, քանի որ լինելով ընդհանուր ռազմավարության մի մասը՝ այն պետք է համահունչ լինի սահմանված ընդհանուր նպատակներին: Այլ խոսքով՝ ռազմավարական պլանավորման միջոցով սահմանվում են զարգացման երկարաժամկետ նպատակները, իրականացվում է այլընտրանքային տարբերակների որոնում, դրանցից լավագույնի ընտրություն և դրա հիման վրա ձեռնարկության զարգացման ռազմավարության որոշում: Ֆինանսական ռազմավարությունը ենթադրում է երկարաժամկետ նպատակների և դրանց հասնելու լավագույն տարբերակի ընտրություն, որի հիման վրա սահմանվում է ձեռնարկության ֆինանսական քաղաքականությունը ֆինանսական գործունեության կոնկրետ ուղղություններով՝ հարկային, ամորտիզացիոն, էմիսիոն և այլն:

Հեռանկարային պլանավորման հիմքը հանդիսանում է կանխատեսումը: Կանխատեսումը (հունական prognosis – կանխատեսում) ստացված տվյալների և գիտության նվաճումների հիման վրա «որոշակի իրադարձությունների կամ գործընթացների զարգացման մեջ փոփոխությունների նախնամացությունն է»: Ի տարբերություն պլանավորման՝ կանխատեսման խնդիրն է միայն հնարավոր փոփոխությունների նախանշումը:

Ընթացիկ ֆինանսական պլանավորումը գործնականորեն «իրականացման» պլանավորումն է և դիտարկվում է որպես հեռանկարային պլանի բաղկացուցիչ մաս:

Ընթացիկ ֆինանսական պլանը սովորաբար կազմվում է մեկ տարի ժամկետով: Տարեկան ֆինանսական պլանը ներկայացվում է ամսական կամ եռամսյակային կտրվածքով:

Փաստացի հասույթի և կանխիկ դրամական միջոցների շարժի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ձեռնարկությունն իրականացնում է նաև օպերատիվ ֆինանսական պլանավորում: Դա պայմանավորված է նրանով, որ պլանային միջոցառումների ֆինանսավորումը կատարվում է ի հաշիվ ձեռնարկության ստացած միջոցների, ինչը պահանջում է ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման նկատմամբ ամենօրյա արդյունավետ վերահսկողություն:

Օպերատիվ ֆինանսական պլանավորումը ներառում է դրամարկղային պլանի, վճարման օրացույցի և կարճաժամկետ վարկի նկատմամբ պահանջի հաշվարկը:

Ինչպես արդեն ասվեց, արտադրական ձեռնարկության կառավարման հիմնական գործառնություններից են նրա գործունեության պլանավորումը և վերահսկողությունը: Շուկայական հարաբերությունների պայմաններում արտադրական կազմակերպությունների արդյունավետ կառավարմանը ներկայացվող հիմնական պահանջ է դառնում բոլոր ստորաբաժանումների գործունեության բյուջետավորումը:

Տնտեսագիտական գրականության մեջ, մասնավորապես նաև հայ տնտեսագետների իրատարակումներում, «բյուջետավորում հասկացություն» ասելով շատ հաճախ պատկերացնում են զանձապահական բյուջետավորումը, առավելապես պետության հիմնական ֆինանսական գործունեության ֆինանսական կարգավորումը: Մինչդեռ միջազգային պրակտիկայում բյուջետավորումն ընդունվում է որպես ձեռնարկության ֆինանսական գործընթացի կառավարման տարր, իրենից ներկայաց-

նույն է դրամական միջոցների ու ֆինանսական արդյունքների պլանավորման, հաշվառման և վերահսկողության մեթոդաբանություն: Որպես ներֆիրմային պլանավորման գործընթաց՝ բյուջետավորումը շուկայական տնտեսության պայմաններում ձեռք է բերում նոր դեր՝ կապված այն բանի հետ, որ պոտենցիալ ներդրողները ֆինանսավորում կարող են կատարել միայն մանրակրկիտ կերպով կշռադատելով գործունեությանը հատուկ բոլոր հնարավոր ռիսկերը՝ փնտրելով և քննարկելով բազմաթիվ տարբերակներ:

Առանձին տնտեսավարող սուբյեկտի դեպքում բյուջեն քննարկվում է որպես հաշվառման մեթոդ, որը հնարավորություն է տալիս փաստացի արդյունքները համեմատել պլանային ցուցանիշների հետ, ինչպես նաև որոշումների կայացման արդյունավետ գործիք, որի միջոցով ղեկավարությունը ի գործ է դառնում նպատակային կերպով օգտագործել սեփականատերերի ունեցվածքը:

Բյուջետավորումը տնտեսագետների համընդհանուր կարծիքով բնութագրվում է որպես ֆինանսական պլանավորման, եկամուտների ու կատարվող ծախսերի հաշվառման, կառավարման բոլոր մակարդակներում ստացվող և կանխատեսված ֆինանսական ցուցանիշների վերլուծության տեխնոլոգիա:

Այսպիսով՝ հեղինակների մեծամասնության կարծիքով բյուջեն սահմանվում է որպես ձեռնարկության գործունեության ֆինանսական պլան: Սակայն արդյունավետ կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ֆինանսական, այլև հաշվարկի ելակետային տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Ընդհանրացնելով բյուջետավորման վերաբերյալ տեսական և գործնական եզրահանգումները՝ բյուջետավորումը պետք է սահմանել որպես տնտեսավարող սուբյեկտի առանձին ստորաբաժանումների տեխնիկատնտեսական և ֆինանսական ցուցանիշների համաձայնեցված և միասնական գործունեության կառավարման համակարգ:

Կարելի է նաև ընդգծել, որ բյուջետային պլանավորումը ձեռնարկության գործունեության պլանների կոլեկտիվ մշակումն է գալիք ժամանակաշրջանի համար, որի արդյունքում տնտեսական գործունեության բոլոր միջոցառումները ներկայացվում են բյուջեների տեսքով՝ ըստ ձեռնարկության կառուցվածքային ստորաբաժանումների (ֆինանսական պատասխանատվության կենտրոնների):

Հարկ է նշել, որ հետազոտողների մեծամասնության կարծիքով բյուջեն՝ որպես ձեռնարկության տնտեսության կառավարման գործիք, հնարավորություն է տալիս կառավարել ոչ միայն ֆինանսները, այլև կարգավորել ինչպես ձեռնարկությունների ներսում առաջացող, այնպես էլ արտաքին միջավայրի հետ ծագող հարաբերությունները:

Բյուջետավորման տեղն ու դերը ֆինանսական պլանավորման համակարգում ավելի ցայտուն կերպով արտահայտվում են նրա գործառույթներում:

Տեսականորեն բյուջետավորմանը վերագրվում են հետևյալ գործառույթները.

- պլանավորում,
- համագործակցություն և կոորդինացում,
- խթանում և վերահսկողություն:

Ամբողջականացնելով արտադրական ձեռնարկություններում բյուջետավորման իրականացման վերաբերյալ փորձը՝ կարելի է առանձնացնել բյուջետավորման հինգ հիմնական սկզբունքներ.

1. նպատակների համաձայնեցում, որը ենթադրում է կառավարման «ներքևից վերև» մոդելի կիրառում՝ նկատի ունենալով, որ ավելի ցածր մակարդակում կանգնած ղեկավարներն ավելի լավ են տիրապետում իրավիճակին: Այնուհետև՝ բյուջեները ավելի բարձր աստիճանի ղեկավարների հետ համաձայնեցնելուց հետո, պրոցեսը փոխում է իր ուղղությունը, սկսում է կիրառվել «վերևից ներքև» մոդելը,
2. բյուջետավորման օղակների գործունեության կոորդինացում սահմանելով առաջնայնությունները, ինչը հնարավորություն է տալիս սահմանափակ ռեսուրսներն օգտագործել առավել շահավետ ուղղություններով,
3. համաենթակայություն, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր ստորաբաժանում պլանավորում և պատասխանատվություն է կրում միայն այն տնտեսական և ֆինանսական ցուցանիշների համար, որոնց վրա կարող է ազդեցություն ունենալ,
4. պատասխանատվության ուղղակիություն, որը նախատեսում է յուրաքանչյուր ստորաբաժանմանը վերապահել իր բյուջեի վերահսկողության գործընթացն անհրաժեշտության դեպքում կոորդինացնող միջոցառումներ իրականացնելու լիազորությամբ,
5. նպատակների հստակություն, որը ենթադրում է, որ բյուջեի հաստատման ժամանակ սահմանված բազային մեծությունները սկզբունքորեն մնում են անփոփոխ պլանավորվող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս չկա բյուջետավորման գործընթացի իրականացման միասնական համակարգ, որը հնարավորինս կիրառվեր բոլոր տիպի ձեռնարկություններում: Գործնականում այդ համակարգերը, բազմաթիվ գործոններով պայմանավորված և ճյուղային պատկանելությունից ու ձեռնարկությունների գործունեության բնույթից կախված, տարբեր են: Սակայն բյուջետավորմանը վերաբերող գրականությունում առանձնաձևում են երկու տիպի բյուջետավորման համակարգեր՝ մեկը արտադրական ձեռնարկությունների, մյուսը ոչ արտադրական կազմակերպությունների համար:

Ի տարբերություն երկրորդի՝ արտադրական ձեռնարկություններում կապիտալի պտույտի ցիկլն առավել ամբողջական է: Այստեղ առկա են արտադրության ու վաճառքի ապահովման, գործընկերների հետ հաշվարկների իրականացման գործընթացները, որոնց միայն մի մասն է բնորոշ ոչ արտադրական ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին:

Արտադրական ձեռնարկությունների բյուջետավորման առանձնահատկություններից է նաև այն, որ այստեղ առաջանում է բյուջետային գործընթացի այնպիսի բարդ սեգմենտ, ինչպիսիք են արտադրական հաշվառումը և գործունեության պլանավորումը: Այստեղ է, որ առավել ամբողջական կերպով արտահայտվում են բյուջետավորման՝ որպես կառավարչական հաշվառման տեխնոլոգիայի հիմնական սկզբունքները՝ ներառելով նաև տեխնիկական վերահսկողությունն ու պլանավորումը:

Սովորաբար բյուջետավորման տեխնոլոգիան դիտարկվում է որպես ոչ միայն ֆինանսական գործիք, այլև ցանկացած բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի աշխատանքի արդյունավետության բարձրացման և կառավարման միջոց: Այս տեսանկյունից այն ավելի ցայտուն է երևում արտադրական ձեռնարկություններում: Կառավարչական հաշվառումը բյուջետավորման համակար-

զը դիտում է որպես տնտեսավարող սուբյեկտի կազմի մեջ մտնող իրարից տարբեր գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատանքի համակարգում՝ ընդհանուր խնդրի կատարման նպատակով: Այս տեսանկյունից բյուջետավորման տեխնոլոգիան անփոխարինելի է արտադրական ձեռնարկությունների համար, քանի որ այն հնարավորություն է տալիս միավորել տեխնիկական, տնտեսական, ֆինանսական պլանավորումը և գործունեության վերլուծությունը: Ձեռնարկությունը դիտվում է որպես մեկ ամբողջական «օրգանիզմ», որի անդամների աշխատանքը կարգավորվում է միասնական «ուղեղի»՝ բյուջետային հանձնաժողովի կողմից:

Սովորաբար բյուջետավորման ընդհանուր համակարգի հիման վրա արևմտյան տնտեսագետների կողմից արտադրական և առևտրային գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության համար մշակված են բյուջեների մասնավոր համակարգեր, քանի որ գործնականում բյուջետավորման հիմնական առանձնահատկություններից մեկը միասնական մեթոդի բացակայության մեջ է:

Տեսականորեն բյուջետավորումը կարող է դիտարկվել որպես ֆինանսական գործիք և կառավարման տարր: Առաջինը ելնում են այն բանից, որ տնտեսավարող սուբյեկտի ներսում ցանկացած գործընթաց հանգում է ֆինանսներին և պայմանավորված է ֆինանսներով: Այդ իսկ պատճառով ֆինանսական միջոցների կառավարմամբ հնարավոր է ամբողջական վերահսկողություն իրականացնել տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ: Բացի այդ, ձեռնարկությունում կազմվող ֆինանսական պլանները հնարավոր է համադրել կառավարության կողմից սահմանված ֆինանսական հաշվառման փաստաթղթերի հետ, ձևավորել բոլոր ձեռնարկությունների համար միասնական համակարգ, համեմատելի դարձնել տարբեր ձեռնարկությունների համանման ցուցանիշները:

Երկրորդ տեսանկյունով ֆինանսներին ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակներում վերագրվում է որոշիչ դեր՝ մասամբ անտեսելով դրանց ձևավորման և օգտագործման արդյունավետության գործում տնտեսավարող սուբյեկտի տեխնիկաարտադրական պլանավորման, մարքեթինգային, կադրային քաղաքականության դերը և ֆինանսների հետ փոխադարձ կապը: Ի վերջո, բյուջետավորման հիմնական նպատակն է ձեռնարկությունում ձևավորել կառավարման արդյունավետ համակարգ՝ միավորելով տարբեր մակարդակների օղակների գործունեությունը:

Միաժամանակ նկատի է առնվում, որ բյուջետավորման համակարգի բնութագրական գիծը մնում է կատարվող հաշվարկների բազմազանությունը, ինչը հնարավորություն է տալիս ընտրել ձեռնարկության զարգացման պլանի օպտիմալ տարբերակը:

Գործառնական բյուջետավորումն ավարտվում է եկամուտների և ծախսերի հաշվեկշռի բյուջեի կազմմամբ, որը արտացոլում է ձեռնարկության ֆինանսական ռեսուրսներն ու դրանց օգտագործման ուղղությունները:

Հաշվի առնելով բյուջետավորման գործընթացի կարևորությունը՝ նպատակահարմար է այն կազմակերպել ըստ առանձին պատասխանատվության կենտրոնների, որպիսիք, ըստ արևմտյան տնտեսագետների, ձեռնարկության այն ստորաբաժանումներն են, որոնց կառավարիչները պատասխանատվություն են կրում ձեռնարկության որոշակի ռեսուրսների կառավարման համար:

Այսպիսով՝ ժամանակակից ներֆիրմային պլանավորումը և կառավարումը, որը

հիմնված է բյուջետավորման համակարգի վրա, իրենից ներկայացնում է ձեռնարկության ստորաբաժանումների գործունեության նպատակային, հետևողական, հիմնավոր ու հավասարակշռված պլանների ամբողջություն: Ավելացնենք նաև, որ այն որոշակի սկզբունքներով սահմանափակված գործողությունների համակարգ է, որը թույլ է տալիս նշակել ձեռնարկության զարգացման համաչափ և արդյունավետ փաստաթուղթ առանց անտեսելու տնտեսվարող սուբյեկտի սեփականատերերի, պետության և շահագրգիռ անձանց ձեռնարկության հետ երկարատև համագործակցության շահերը:

Ի վերջո, արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հիմնական բյուջեն բաղկացած է բազմաթիվ անկախ բյուջեներից, որոնք իրար հետ գտնվում են սերտ փոխկապվածության մեջ, և դրանցից որևէ մեկի փոփոխությունը բերում է մյուսների, ինչպես նաև հիմնական բյուջեի փոփոխության:

Գործնական և տեսական գրականության մեջ չնչին տարբերություններով հիմնական բյուջեն ներկայացվում է հետևյալ բաժիններով.

1. վաճառքի բյուջե,
2. արտադրության բյուջե,
3. ուղղակի նյութական ծախսումների բյուջե,
4. ուղղակի աշխատանքային ծախսերի բյուջե,
5. օժանդակ արտադրամասի բյուջե,
6. արտադրական պաշարների բյուջե,
7. վարչական և վաճառքների ծախսերի բյուջե,
8. ներդրումների բյուջե,
9. դրամական հոսքերի բյուջե,
10. կանխատեսված ֆինանսական արդյունքների բյուջե,
11. կանխատեսված եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ,
12. կանխատեսված հաշվապահական հաշվեկշիռ:

Եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն իրենից ներկայացնում է նախկին ֆինանսական պլանի շուկայական էկոնոմիկային հարմարեցված տարբերակը: Այն բաղկացած է երեք բաժիններից.

- Եկամուտներ և մուտքեր:
- Ծախսեր և հատկացումներ:
- Փոխհարաբերություններ բյուջեի հետ:

Եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռը կարող է ավելի ամբողջական երևալ եկամուտների ու ծախսերի կանխատեսման ստուգողական աղյուսակի հետ միասին: Դրանով ներկայացվում է նաև կոնկրետ եկամուտների և դրանց հաշվին իրականացվելիք ծախսերի միջև գոյություն ունեցող կապերի նախատեսվող դրսևորումը՝ միաժամանակ ստուգելով հաշվեկշռի համամասնությունների պահպանվածությունն ու միջոցառումների՝ եկամուտներով ապահովվածությունը:

Եկամուտների և ծախսերի կանխատեսման ելակետային կարևոր ցուցանիշ է իրացումից հասույթի պլանը: Այն ձեռնարկության եկամուտների հիմնական աղբյուրն է: Իրացումից հասույթն իրենից ներկայացնում է դրամական այն գումարը, որն իրացված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց մուտք է լինում բանկային հաշիվներին կամ դրամարկղ: Գործնականում հասույթի ստացումը և ար-

տաղրանքի իրացումը կարող է չհամընկնել, քանի որ, տնտեսական պայմաններից ելնելով, ապրանքները ոչ միշտ են իրացվում կանխիկ դրամով. հաճախ դրանց դիմաց գումարը մուտք է լինում ապրանքն առաքելուց որոշակի ժամանակ հետո: Տարբեր երկրների հարկային օրենսդրությամբ՝ համախառն հասույթի ճանաչման հարցում կան տարբերություններ: ՀՀ-ում, ըստ ՀՀՀՍ 18 ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ պահանջները.

- կազմակերպությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհարաբերությունների մեծ մասը,
- կազմակերպությունը չի պահպանում սեփականության իրավունքից բխող կառավարման մասնակցություն, վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն,
- հնարավոր է ճշգրտորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված եկամուտները կհոսեն կազմակերպություն,
- գործարքի հետ կապված ծախսերը հնարավոր է ճշգրիտ չափել:

Կանխատեսված հաշվապահական հաշվեկշիռը տնտեսարող սուբյեկտի ակտիվների և պասիվների վիճակի արտացոլումն է: Այն կազմվում է՝ ելնելով բյուջետային ժամանակաշրջանի սկզբի հաշվապահական հաշվեկշիռից՝ հաշվի առնելով հաշվեկշռի բոլոր հոդվածների հետ կապված փոփոխությունը: Կազմելու տեխնոլոգիայի առումով կանխատեսված և փաստացի հաշվապահական հաշվեկշռի ձևերի միջև ոչ մի տարբերություն չկա:

Արտադրական կազմակերպության բյուջետավորման գործընթացը և համապատասխան բյուջեները ներկայացվում են կոնկրետ գծապատկերների տեսքով, որպիսիք արտացոլվել են երրորդ բաժնի վերջում բերված հավելվածների միջոցով:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են միկրոմակարդակում ֆինանսական պլանավորման ելակետային ցուցանիշները:
2. Բնութագրել ֆինանսական պլանի տեսակները:
3. Ի՞նչ է նշանակում արտադրական կազմակերպության բյուջետավորում, և ինչպիսի՞ խնդիրներ է լուծում այն:
4. Որո՞նք են արտադրական կազմակերպության ֆինանսական պլանի ցուցանիշները, ցույց տալ դրանց միջև կապը:
5. Ֆինանսական պլանի ցուցանիշները ինչպիսի՞ ազդեցություն են ունենում հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքի վրա:

ԳԼՈՒԽ 16

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՆԱՆԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

16.1. ՍՆԱՆԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում տնտեսավարող սուբյեկտները նպատակամղված են ապահովել ֆինանսական կայունության ցանկալի մակարդակ, որը կարևոր պայման է նոր ներդրումներ ներգրավելու և գործընկերային հարաբերություններում անհրաժեշտ վարկանիշ ձևավորելու համար: Սակայն շուկայական հարաբերությունների տարերայնությունը և շատ հաճախ ոչ պլանային զարգացումը հանդես են գալիս որպես սնանկացման հիմնական պատճառներ: Ակնհայտ է, որ սնանկացումը միանգամից չի դրսևորվում, և որպես առաջին ահազանգ՝ կարելի է ընդունել տնտեսավարող սուբյեկտի ոչ բարվոք ֆինանսական վիճակը, ինչը չկանխելու դեպքում վրա է հասնում սնանկացումը:

Հարկ է նշել, որ ըստ Վան Խորնի և ամերիկյան մի շարք տնտեսագետների՝ կազմակերպությունների ոչ բարվոք ֆինանսական վիճակ ձևավորվելն իր մեջ պարունակում է որոշակի անորոշություն, քանի որ ֆինանսական դժվարությունները, իրենց բարդության աստիճանից կախված, կարող են լինել միանգամայն տարբեր: Այն դեպքում, երբ կազմակերպությունը չի կարողանում կատարել ընթացիկ պարտավորություններն իր գործընկերների հանդեպ, այն կարող է ընդունվել որպես տեխնիկապես անվճարունակ, ինչը կարող է կրել ժամանակավոր բնույթ, քանի որ գործնականում այդպիսի անվճարունակությունը հնարավոր է կանխել: Այսպիսով՝ անվճարունակությունը ենթադրում է միայն դրամական միջոցների ժամանակավոր պակաս: Ըստ մեկ այլ բնութագրության՝ անվճարունակություն նշանակում է կազմակերպության պարտավորությունների գերազանցումը նրա ակտիվներին, կամ սեփական կապիտալը ընդունում է բացասական արժեք: Տվյալ դեպքում իրավիճակն ավելի է բարդանում, քանի որ շատ հնարավոր է, որ վերջնական արդյունքում տեղի ունենա կազմակերպության վերակազմակերպում կամ լուծարում:

Սնանկացումը տնտեսավարող սուբյեկտի փաստաթղթերով հաստատված անընդունակությունն է վճարել իր պարտքային պարտավորությունները և միջոցների բացակայության պատճառով ֆինանսավորել ընթացիկ գործունեությունը:

Սնանկացման հիմնական հայտանիշ է հանդիսանում պարտքերի վճարման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում կազմակերպության պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու անընդունակությունը: Այդ ժամկետը լրանալուց հետո պարտատերը իրավունք ունի դիմել տնտեսական դատարան պարտապան կազմակերպությանը սնանկ ճանաչելու հայցով: Այս առումով նշենք, որ օրենսդրորեն սնանկացման հայտանիշները պարտադիր ստանում են իրենց ամրագրումը: ՀՀ-ում «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքում նույնպես սահ-

մանվել են սնանկությունը ախտորոշող համապատասխան հայտանիշները:

Սնանկացման նախադրյալները բազմազան են, որոնք հանդիսանում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի բազմաթիվ գործոնների փոխներգործության արդյունք:

Արտաքին գործոնները բազմազան են: Դրանցից տնտեսականը կապված է երկրի տնտեսական ճգնաժամային իրադրության, արտադրության ընդհանուր անկման, արժեզրկման, ֆինանսական համակարգի անկայունության, ռեսուրսների գնի բարձրացման, շուկայի իրադրության (կոնյունկտուրայի) փոփոխության, գործընկերների սնանկացման և անվճարունակության հետ: Տնտեսավարող սուբյեկտների անվճարունակության պատճառներից մեկը կարող է լինել պետության ոչ ճիշտ ֆիսկալ քաղաքականությունը: Հարկման բարձր մակարդակը կազմակերպության համար կարող է ուժերից վեր լինել:

Քաղաքական գործոնի պատճառ են հանդիսանում հասարակության քաղաքական անկայունությունը, պետության ներտնտեսական վատ քաղաքականությունը, տնտեսական կապերի խզումը, սպառման շուկաների կորուստը, արտահանման և ներմուծման պայմանների փոփոխությունները, ձեռնարկատիրական գործունեության ոլորտներում օրենսդրության անկատարությունը և պետական գործառույթներով կարգավորվող այլ դրսևորումներ, միջազգային մրցակցության ուժեղացումը՝ կապված գիտատեխնիկական առաջադիմության զարգացման հետ:

Ժողովրդագրական գործոնը, որը պայմանավորված է ազգաբնակչության կազմով, թվաքանակով, ազգի բարեկեցության մակարդակով, որոնք որոշում են պահանջումների մեծությունն ու կառուցվածքը, ինչպես նաև բնակչության այս կամ այն ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վճարունակ պահանջարկը:

Կազմակերպության սնանկացման ներքին գործոնները բավականին ընդգրկուն են և բազմաբնույթ: Նշենք դրանցից հետևյալները.

- սեփական շրջանառու կապիտալի պակասը՝ որպես ոչ արդյունավետ առևտրատարական գործունեության կամ ներդրումային քաղաքականության հետևանք,
- տեխնիկայի, տեխնոլոգիայի և արտադրության կազմակերպման ցածր մակարդակը,
- կազմակերպության արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության, նրա արտադրական հզորության իջեցումը, կորուստները, սեփական կապիտալի օտարումը,
- անավարտ շինարարության, անավարտ արտադրության, արտադրական պահուստների, պատրաստի արտադրանքի գերնորմատիվային մնացորդի առաջացումը, որի հետ կապված՝ դանդաղում է կապիտալի շրջանառելիությունը, և առաջանում է կապիտալի պակաս, ինչը կազմակերպությանը ստիպում է ներգրավել նոր պարտքեր, որն էլ կարող է սնանկացման արագացման պատճառ հանդիսանալ,
- շրթայական չվճարումների պատճառով կազմակերպության մոտ անվճարունակության առաջացումը, ինչը երկարաձգվելու դեպքում կարող է նույնպես դառնալ սնանկացման պատճառ,
- արտադրանքի սպառման շուկաների ուսումնասիրման մարքեթինգային գործունեության ցածր մակարդակը, պատվերների կառավարման ոչ ճկուն մեխանիզմների առկայությունը, որի հետևանքով տեղի է ունենում վաճառքի ծավալի կրճատում, ինչը նույնպես սնանկացման լուրջ ահազանգ է,

• կազմակերպության շրջանառության մեջ տնտեսական շահութաբերությունից բարձր տոկոսային ծախսերով միջոցների ներգրավումը, որը ավելացնում է ֆինանսական ծախսերը և ավելի է մեծացնում վարկատուներից կախվածությունը: Սնանկացումը, որպես կանոն, հանդիսանում է ներքին և արտաքին գործոնների համատեղ գործողության հետևանք: Շուկայական հարաբերություններով, կայուն տնտեսական և քաղաքական համակարգերով զարգացած երկրներում տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը 1/3–ով կապված է արտաքին գործոններից և 2/3–ով՝ ներքին գործոններից:

Շուկայական տնտեսություն վարող երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում կարող են անցնել սնանկացման հետևյալ փուլերը՝

- սնանկացման առաջացում,
- սնանկացման աճի արագացում,
- սնանկացման աճի դանդաղում,
- սնանկացման հասունացում,
- վերջնական սնանկացում (անկում):

Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման փուլերի և դրանց վրա ազդող գործոնների վերաբերյալ տնեսագետների դիրոքորոշումներում ելակետ են ընդունվում տնտեսավարող սուբյեկտների գործունեության փուլերը և ստորև ներկայացվող հետևյալ հիմնական գործոնները՝

- արտադրության գործոնների փոփոխականները,
- պահանջարկի փոփոխականը,
- դուստր և սատարող ճյուղերը,
- մրցակցությունը ճյուղային տնտեսավարող սուբյեկտների միջև,
- երկրի քաղաքականությունը տնտեսության ոլորտում,
- պատահաբար ազդող երևույթներ,
- տնտեսության ճյուղերի սեփականաշնորհման աստիճանը:

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մեջ շատ հաճախ են այնպիսի դեպքերը, երբ նրանց հաշվեկշիռը դառնում է ոչ իրացվելի, և ծագում են անվճարունակության մի շարք այլ հայտանիշներ: Հարկ է նշել, որ հետևողական չլինելու դեպքում անվճարունակությունն անմիջապես կարող է սնանկացման պատճառ դառնալ: Անվճարունակության (սնանկության) առաջացման պատճառները որքան էլ բազմաբնույթ են և տարատեսակ, այնուամենայնիվ, տվյալ հարցի առնչությամբ պետական իշխանական մարմինների կողմից լուծում պահանջող խնդիր պետք է հանդիսանա հետևյալը.

- արդյո՞ք կազմակերպության անվճարունակությունը մտացածին է,
- եթե կազմակերպությունն իրոք անվճարունակություն է դրսևորում, ապա ինչպիսի՞ ժամկետում կարելի է այն կանխել՝ վերահաստատելով նրա բնականոն գործունեությունը,
- եթե անվճարունակությունը կրում է շարունակական բնույթ և տանում է սնանկության, ապա ինչքանո՞վ են ռեալ ֆինանսական առողջացման ծրագրի մշակումն ու իրագործումը,
- համապատասխան միջոցառումների ձեռնարկումից հետո, եթե հնարավոր չէ

փրկել կազմակերպությունը սնանկացումից, ապա անհրաժեշտ է իրականացնել վերջինիս վերակազմակերպում կամ լուծարում, որի դեպքում էլ ակնհայտ էական նշանակություն է ստանալու կայացվող որոշումների նպատակահարմարությունը:

Կազմակերպությունների անվճարունակությունը որոշելու համար շատ հաճախ օրենսդրորեն սահմանվում և գործնականում կիրառվում է սահմանափակ ցուցանիշների խումբ՝ ընթացիկ իրացվելիության, սեփական շրջանառու կապիտալով ապահովվածության և վճարունակության վերականգնման հնարավորության: Մասնավորապես այդպիսի մոտեցման փորձ առկա է Ռուսաստանի Դաշնությունում:

Հաշվեկշռի կառուցվածքն անբավարար, իսկ կազմակերպությունը անվճարունակ ճանաչելու համար հիմք է հանդիսանում հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությունը՝

- ընթացիկ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանի վերջում նորմատիվայինից ցածր է: Այս գործակիցը Ռուսաստանի Դաշնությունում 2 է, Բելառուսի Հանրապետությունում՝ 1.7, Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն չկա որևէ ամրագրում: Ուղղակի նշենք, որ հաշվապահների միության կողմից աուդիտորական նպատակներով երաշխավորվում է 2 նվազագույն արժեքը.
- սեփական շրջանառու միջոցների բավարարության գործակիցը հաշվետու տարվա վերջում նորմատիվայինից ցածր է, որը Ռուսաստանի Դաշնությունում 0.1 է, Բելառուսի Հանրապետությունում՝ 0.3, Հայաստանի Հանրապետությունում՝ 0.1:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը որոշելու համար առավել կիրառելի է հետևյալ բանաձևը՝

$$Q_{\text{ըի}} = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ} - \text{ալիք ժամանակաշրջանի ծախսեր}}{\text{Ընթացիկ պասիվներ} - \text{ալիք ժամանակաշրջանի եկամուտներ}}:$$

Ռուսաստանի Դաշնությունում ընթացիկ պասիվներից հանվում են օգտագործման ֆոնդերն ու սպասվող ծախսերի և եկամուտների ռեզերվները:

Սեփական շրջանառու կապիտալով ապահովվածության գործակիցը հաշվարկում է հետևյալ կերպ՝

$$Q_{\text{սշկապ.}} = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ} - \text{ընթացիկ պարտավորություններ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}}:$$

Եթե ընթացիկ իրացվելիության գործակիցը նորմատիվայինից ցածր է, իսկ սեփական շրջանառու կապիտալի բաժինը ընթացիկ ակտիվների մեջ նորմատիվայինից փոքր է, բայց նկատվում է այդ ցուցանիշների աճի միտում, ապա գործնականում կարևոր նշանակություն է ստանում վճարունակության վերականգնման գործակիցի հաշվարկումը վեցամսյա ժամանակահատվածում: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$Q_{\text{վլ}} = (Q_{\text{ըի1}} + 6/T (Q_{\text{ըի1}} - Q_{\text{ըի0}})) / Q_{\text{ըի}} \text{ (նորմ),}$$

որտեղ $Q_{\text{ըի1}}$ –ն և $Q_{\text{ըի0}}$ –ն համապատասխանաբար իրացվելիության գործակցի փաստացի արժեքներն են հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ,

$Q_{\text{ըի}}$ –ն (նորմ) ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվային արժեքն է, 6–ը՝ վճարունակության վերականգնման ժամանակաշրջանն է ամիսներով, T–ն՝ հաշվետու ժամանակաշրջանն է ամիսներով:

Եթե հաշվարկված վճարունակության վերականգնման գործակիցը՝ $Q_{վլ} > 1$, ապա կազմակերպությունը առաջիկա վեց ամսում վճարունակությունը կարգավորելու իրական հնարավորություն ունի, և, հակառակը, եթե $Q_{վլ} < 1$, ապա կազմակերպությունը առաջիկա վեց ամիսների ընթացքում իր վճարունակությունը վերականգնելու բավարար հնարավորություններ չունի:

Ենթադրությունը, որ կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքը անբավարար է ճանաչված, իսկ կազմակերպությունը՝ անվճարունակ, արվում է այն ժամանակ, երբ նրա վճարունակությունը վերականգնելու իրական հնարավորությաններ չկան: Երբ հաշվեկշռը անբավարար է, այսինքն՝ $Q_{ըի}$ -ն և $Q_{սշբ}$ -ն նորմատիվայինից ցածր են, սակայն սահմանված ժամկետներում վճարունակությունը վերականգնելու հնարավորություն կա, ապա կարող է կազմակերպությունը անվճարունակ ճանաչելու վերաբերյալ վեց ամսով հետաձգման որոշում կայացվել:

Հաշվեկշռը անբավարար ճանաչելու հիմքերի բացակայման դեպքում, երբ $Q_{ըի}$ -ն և $Q_{սշբ}$ -ն մեծ են նորմատիվայինից, սակայն երբ $Q_{վլ} < 1$, ապա կազմակերպությունը սնանկ ճանաչելու որոշում չի ընդունվում, սակայն նկատի ունենալով կազմակերպության վճարունակությունը կորցնելու իրական սպառնալիքները՝ այն պետք է դրվի հատուկ հաշվառման կազմակերպությունների սնանկացման գործերով զբաղվող համապատասխան մարմնում: Այդպիսի փորձ արդեն իսկ առկա է Ռուսաստանի Դաշնությունում, և, կարծում ենք, որ ժամանակն է նաև, որպեսզի մեր հանրապետությունում ևս ցուցաբերվի նմանատիպ մոտեցում: Տվյալ դեպքում տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կարող է դառնալ առավել նպատակային և արդյունավետ:

Եթե կազմակերպությունը ճանաչվում է անվճարունակ, իսկ նրա հաշվեկշռի կառուցվածքը՝ անբավարար, ապա մինչ փորձաքննական եզրակացությունը տնտեսական դատարան ներկայացնելը կազմակերպությունից վերցվում են լրացուցիչ տեղեկություններ, և նրա արտադրատեխնիկական գործունեության վերաբերյալ կատարվում է առավել խոր վերլուծություն, որը նպատակ է հետապնդում ընտրել հետևյալ երկու տարբերակներից մեկը.

- իրականացնել վերականգնակերպական միջոցառումներ նրա վճարունակությունը վերականգնելու նպատակով,
- իրականացնել լուծարային միջոցառումներ գործող օրենսդրությանը համապատասխան:

Այն երկրներում, որոնցում գործում է պետպատվերի մեխանիզմը, կազմակերպության անվճարունակության վերլուծությունն առաջին հերթին իրականացվում է՝ ելնելով կազմակերպությանը բաշխված պետպատվերի վճարման գծով պետության՝ նրա հանդեպ ունեցած պարտավորությունից: Այդպիսի պարտավորության առկայությունը հաստատող փաստաթղթերի հիման վրա կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների գումարը պակասեցվում է պարտքերի չափով:

Պետք է նշել, որ տնտեսավարող սուբյեկտների սնանկացման որոշման չափանիշների ներկայացված համակարգն այնքան էլ կատարյալ չէ: Այս մեթոդով երբեմն հնա-

¹ Донцова Л.В., Никифорова Н.А., Анализ бухгалтерской отчетности, М., ДИС, 1998, с. 10.

րավոր է սնանկ ճանաչել նույնիսկ բարձր շահութաբերությամբ աշխատող կազմակերպությանը, եթե այն շրջանառության մեջ մեծ չափով փոխառու միջոցներ է օգտագործում: Բացի այդ, ընդունված չափանիշների նորմատիվային նշանակությունը տնտեսության տարբեր ոլորտների համար չի կարող նույնը լինել, քանի որ յուրաքանչյուր ոլորտ ունի կապիտալի իրեն բնորոշ կառուցվածքը: Հաշվի առնելով ֆինանսական կայունության ցուցանիշների բազմազանությունը, դրանց գնահատականների տարբերությունը և սնանկացման ռիսկի գնահատման հետ կապված դժվարությունները՝ հայրենական և արտասահմանյան տնտեսագետներից շատերը առաջարկում են հաշվարկել ֆինանսական կայունության ինտեգրացված բալային գնահատական և դրանով էլ կատարել հետազոտվող կազմակերպությունների վարկանշումը:

Տվյալ մեթոդիկայի էությունն այն է, որ կազմակերպությունը ընդգրկվում է կոնկրետ խմբում՝ ելնելով ֆինանսական կայունության ցուցանիշների փաստացի մակարդակից և յուրաքանչյուր ցուցանիշին տրվող բալային արժեքից: Առաջարկվող ցուցանիշների համակարգի և դրանց վարկանշային գնահատականների հիման վրա կառուցվել է դասակարգման համակարգ, որը բաղկացած է վեց խմբից: Դրանք հետևյալն են¹.

- Առաջին կարգի կազմակերպություն, որն ունի ֆինանսական կայունության լավ պաշար, ինչը թույլ է տալիս վստահ լինել փոխառու միջոցների վերադարձման մեջ:
- Երկրորդ կարգի կազմակերպություն, որը դրսևորում է պարտքային ռիսկի որոշակի մակարդակ, բայց որպես ռիսկային դեռ չի դիտարկվում:
- Երրորդ կարգի կամ բարդույթով կազմակերպություն, որում միջոցների կորստի ռիսկ չկա, բայց առկա են անհուսալի դեբիտորական պարտքեր:
- Չորրորդ կարգի կազմակերպություն, որն ունի սնանկացման բարձր ռիսկ, եթե նույնիսկ այն ձեռնարկել է ֆինանսական առողջացման միջոցներ: Այդպիսի կազմակերպություններում պարտապանները վտանգում են իրենց միջոցները:
- Հինգերորդ կարգի կազմակերպություն, որը բարձր ռիսկային է և գործնականում անվճարունակ է:

Օգտագործելով այս չափանիշները՝ հաջորդ քայլում որոշվում է կազմակերպության կոնկրետ խումբը՝ միագումար կամ ինտեգրացված բալային արժեքի հիման վրա, ինչն էլ կազմակերպության հետագա որոշումներ կայացնելու առումով դառնում է ելակետային:

16.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՍՆԱՆԿԱՑՄԱՆ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Տնտեսական աճի կայուն տեմպեր և զարգացման իրատեսական պայմաններ ապահովելու գործընթացում կարևոր նշանակություն ունի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայուն գործունեությունը: Սակայն գործնականում շատ հաճախ են այն դեպքերը, երբ տնտեսավարող սուբյեկտները տարբեր պատճառներով հայտնվում են ֆինանսական ճգնաժամում, որը զերակշիռ դեպքերում դառ-

¹ «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենք՝ ընդունված ԱԺ-ի կողմից 17.12. 2003թ., հոդված 3:

նում է անվճարունակության կամ էլ վերջնական սնանկացման պատճառ: Բոլոր դեպքերում ֆինանսական դժվարություններ ունեցող կազմակերպությունները՝ որպես գործընկերներ, կայուն գործունեություն իրականացնողների համար առաջացնում են մի շարք բարդություններ: Այդ պատճառով է, որ անհրաժեշտություն է առաջանում գործնականում օրենսդրական ճանապարհով կարգավորել անվճարունակություն (սնանկություն) դրսևորող կազմակերպությունների ապագա վիճակը, իրատեսորեն գնահատել դրանց հետագա գործունեության հնարավորությունները:

Բոլոր անցումային փուլ ապրած երկրներում, առանց բացառությունների, սկզբնական շրջանում գրեթե բացակայել են անվճարունակության (սնանկության) կարգավորման օրենսդրական հիմքերը, ինչն էլ հանդիսացել է ծանր ֆինանսական վիճակում հայտնված կազմակերպությունների թվաքանակի աճի ավելացման գլխավոր պատճառ: Դա պայմանավորված է եղել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական մի շարք գործոններով:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում անվճարունակության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովը 1996 թ. դեկտեմբերի 12–ին ընդունեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը: Ավելորդ չէ նշել, որ Հայաստանի Հանրապետությունում անվճարունակության կարգավորմանն առնչվող առավել իրատեսական օրենքը, որոշակի թերություններով հանդերձ, ընդունվել է միայն 2003 թ. դեկտեմբերի 17–ին՝ «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենքը, ընդ որում արդեն 2004 թ. նոյեմբերի 24–ին այն ենթարկվեց փոփոխությունների և լրացումների:

Օրենքի նոր տարբերակը, որի գործողությունը տարածվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, սահմանում է պարտապանին անվճարունակ ճանաչելու կամ պարտապանի կողմից սեփական անվճարունակությունը հայտարարելու հիմքերն ու կարգը, անվճարունակ ճանաչված պարտապանի ֆինանսական առողջացման և լուծարման ընթացակարգը ու դրանց մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

«Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքով պարտապանը կարող է անվճարունակ ճանաչվել միայն դատարանի վճռով, եթե ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները հետևյալ նախատեսված հատկանիշների առկայության դեպքում¹.

- երբ սնանկության գործը հարուցվում է պարտատիրոջ կողմից, պարտատերը ճանաչվում է սնանկ, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող վճարային պարտավորությունների 30–օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված հատկանիշներն առկա են.
- երբ սնանկության գործը հարուցվում է պարտապանի կողմից, պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե վճռի կայացման պահին ի վիճակի չէ կատարել իր

դրամական պարտավորությունները, կամ եթե նրա գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար:

Գործնականում սնանկության վարույթում գտնվող ոչ բոլոր գործերի վերաբերյալ է կայացվում լուծարման վերջնական որոշում, որովհետև սնանկության վիճակում գտնվող կազմակերպությունների նկատմամբ օրենքով կարող են կիրառվել ֆինանսական առողջացման ծրագրեր: Ֆինանսական առողջացման ծրագիրը վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների համալիր է, որի ժամկետը օրենքով սահմանվում է մեկ տարի, ընդ որում այդ ժամկետը դրական միտումների դեպքում կարող է երկարաձգվել:


Ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող նախատեսել պարտատերերի պահանջների բավարարման այլ հերթականություն, հակասել ՀՀ օրենսդրությանը և խախտել այլ անձանց շահերը:

Լինում են դեպքեր, երբ ֆինանսական առողջացման ծրագիրը դադարեցվում է ժամկետից շուտ: Դրա պատճառներն են մասնավորապես նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտումը, պարտապան կազմակերպության ֆինանսական դրության էլ ավելի վատթարացումը: Հարկ է նշել, որ ցանկացած դեպքում ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ձախողվել, որովհետև խոշոր պահանջներ ունեցող հինգ ապահովված և հինգ չապահովված պարտատերերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան վաղաժամկետ դադարեցման որոշում կայացնելու և կազմակերպությունը վերջնական լուծարելու մասին շահավետ վճիռը ստանալու համար: Ահա այս դեպքերում է, որ էական նշանակություն կարող են ձեռք բերել լուծարումից առաջ վերակազմակերպման, վերամիավորման դեպքում կայացվող որոշումները: Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ, կառավարիչը պետք է դատավորին ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

Դատավորը ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ստանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին:

Լուծարման վերաբերյալ վճիռ կայացնելուց հետո (ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում) կառավարիչը օրենքով պահպանման ենթակա բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև արխիվայինները, պարտավոր է հանձնել ՀՀ պետական արխիվ, ինչպես նաև պետական գրանցման ռեգիստր է ներկայացնում լուծարման և գործունեության դադարեցման բոլոր պահանջվող հիմքերը: Դրանց հիման վրա պետական գրանցման պահին պարտապան կազմակերպությունը կհամարվի լուծարված:

Վերոնշյալ ոսումնասիրության և վերլուծության հիման վրա հնարավոր է ամբողջացնել Հայաստանի Հանրապետությունում անվճարունակության և սնանկացման գործընթացը ստորև բերվող թիվ 15.1 գծապատկերի տեսքով.



Գծապատկեր 16.2.1. Անվճարունակության և սնանկացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

16.3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒԿ ԿԱՅՄՑՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կազմակերպությունների որոշակի մասը օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հաճախ հայտնվում է ֆինանսապես դժվար վիճակում: Գործնականում «ֆինանսապես դժվար վիճակ» արտահայտությունը իր մեջ պարունակում է բավականին անորոշություն, քանի որ կազմակերպություններում ֆինանսական դժվարությունները տարբերվում են իրենց բարդության աստիճանով: Ծանր վիճակում հայտնված կազմակերպություններից ոչ բոլորին է հաջողվում ֆինանսական առողջացման ծրագրերի կամ պետական օժանդակության միջոցով հաղթահարել դժվարությունները և վերականգնել իրենց բնականոն ֆինանսատնտեսական գործունեությունը: Պարզ է, որ նման դեպքերում անորոշությունը վերացնելու լավագույն լուծումներ են համարվում վերակազմակերպումը և լուծարումը:

Գործնականում սնանկությունը կարող է լինել կամավոր կամ հարկադրական, ինչն էլ պայմանավորում է վերջինիս վերաբերյալ ընդունվող որոշումների տարատեսակությունը: Կամավոր սնանկության դեպքում պարտապանը պարտատերերի հետ միասին ինքն է հայտարարում իր սնանկության մասին, իսկ պարտատերերի հետ համաձայնության չգալու դեպքում՝ սեփական անվճարունակությունը ճանաչելու հայցապահանջով դիմում է դատարան: Հարկադրական սնանկության դեպքում դատարանի կողմից որոշումը ընդունվում է պարտատերերի, ինչպես նաև այլ լիազորված պետական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Սնանկացումը համալիր կազմակերպարավական ընթացակարգ է, որը կիրառվում է իրենց պարտավորությունները կատարելու անընդունակություն հանդես բերող տնտեսավարող սուբյեկտների համար: Սնանկության ընթացակարգի էությունը հանգում է կազմակերպության որպես տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի լուծարմանը և նրա պարտատերերի պահանջները բավարարելու նպատակով գույքի վաճառքին: Լուծարման ենթակա կազմակերպությունների շարքին են դասվում այն առևտրային կազմակերպությունները, որոնց տնտեսական գործունեությունը վնասաբեր է, կամ նրանք ի վիճակի չեն մարելու կուտակված պարտքերը: Սակայն այդ վիճակից մինչև կազմակերպությունն օրենսդրորեն սնանկ ճանաչելն անհրաժեշտ է անցնել երկար ճանապարհ: Իրավաբանական առումով սնանկությունը սկսվում է դատարանի համապատասխան որոշման ընդունումից հետո:

Պետական կառավարման մարմինների տեսանկյունից սնանկությունը պարտապան կազմակերպության գործունեության կարգավորման ծայրահեղ ներգործության բացառիկ միջոցառում է: Մինչև սնանկացման հարցը բարձրացնելը պարտատերերը պետք է փորձեն իրենց պարտքը հետ ստանալ բոլոր այն սովորական եղանակներով, որոնք կապված չեն պարտապան կազմակերպության լուծարման հետ: Միայն այն դեպքում, երբ այդ միջոցառումները և փորձերն արդյունք չեն տալիս, կարելի է սկսել սնանկացման գործընթացը:

Սնանկացման դեպքում գույքը «անարդյունավետ» սեփականատիրոջից անցնում է այլ անձի, որը, ստանալով «պարտքերից մաքրված» գույք, կարող է հանդես գալ արդյունավետ սեփականատիրոջ դերում (խոսքն այն մասին չէ, որ նոր սեփականատերը այլևս չի սնանկանա, սակայն, ի տարբերություն նախկին սեփականատիրոջ, նորը հանդես է գալիս առանց պարտքերի մեկնարկային պայմանի):

Աճուրդներում սնանկ ճանաչված տնտեսավարող սուբյեկտի վաճառվող արտադրամիջոցների զգալի մասն ունի ընդհանուր կիրառական նշանակություն և կարող է օգտագործվել տնտեսության ամենատարբեր ոլորտներում: Այդպիսիք կարող են լինել շենքերը և շինությունները, տարածքները, հողը, արժեթղթերը, գույքի և սարքավորումների բազմաթիվ տեսակներ: Նոր սեփականատիրոջ հանդես գալու հետևանքով հաճախ փոխվում է վաճառվող գույքի ճյուղային պատկանելիությունը, մասնավորապես կարող է տեղի ունենալ արտադրության ծավալների անկում կամ լճացում, գոյատևող ճյուղերից գույքը անցնում է զարգացող այն ճյուղերը, որոնց ապրանքների նկատմամբ առկա է բարձր պահանջարկ:

Որոշակի պայմաններում պարտատերերը, ընդհանուր համաձայնությամբ, կարող են որոշում կայացնել պարտապան կազմակերպության կամավոր լուծարման վերաբերյալ: Այդպիսի որոշում կայացվում է բացառապես այն դեպքում, երբ համակարգված հետազոտությամբ պարզվում է, որ կազմակերպության հետագա գործունեությունը կարող է ավելի ծանրացնել ֆինանսական վիճակը և առավել փոքրացնել պարտքի վերադարձման հնարավորությունները: Նման դեպքերում պարտավորությունները կարող են զգալիորեն գերազանցել պարտապան կազմակերպության ակտիվները, որը հենց լուծարման գործընթացում առաջ կբերի լրացուցիչ դժվարություններ: Բայց նույնիսկ եթե պարտատերերը գնում են կազմակերպության լուծարման միջոցով պարտքային պարտավորությունների ստացմանը, ապա առավել արդյունավետ է, որպեսզի պարտապան կազմակերպությունն ինքը սեփական նախա-

ձեռնությամբ դիմի դատարան՝ ինքնալուծարման որոշում կայացնելու և այն օրենքով հաստատելու համար: Մինչ այդ քայլը իրագործելը ոչ պաշտոնական ձևով բուլոր հնարավոր տարբերակների դեպքում պարտքի վերադարձման վերաբերյալ պարտապանի և պարտատերերի միջև անհրաժեշտ է ձեռք բերել համաձայնություն: Կամավոր նախաձեռնությամբ լուծարման դեպքում ընդունված մոտեցում է սեփականության իրավունքի փոխանցումը: Պարտքի մասնակի մարումներ կարող են կատարվել, եթե դատարանի որոշմամբ պարտապան կազմակերպության ակտիվները ձևական փոխանցվեն լիազորված այլ անձի, որն էլ, իրացնելով այդ ակտիվները, համամասնորեն՝ նախապես ոչ պաշտոնական համաձայնության պայմաններին համապատասխան, մարում է պարտատերերի պարտքային պարտավորությունները: Կամավոր համաձայնությամբ լուծարման որոշում գործնականում կարող է կայացվել միայն սահմանափակ թվով պարտատերերի առկայության դեպքում: Ինչպես այս, այնպես էլ վերը ներկայացված երկու որոշումները ևս ցանկալի է, որպեսզի արժանանա հայ գործարարների ուշադրությանը:

Բոլոր այն դեպքերում, երբ որպես վերջնական որոշում է կայացվում լուծարումը, ապա կարևոր նշանակություն է ստանում պարտապանի գույքի վաճառքի կազմակերպման գործընթացը:

Պարտապանի գույքի վաճառքը կարող է իրականացվել դատավորի թույլտվությամբ հրապարակային սակարկությունների (մրցութային վարույթների) կամ ուղղակի գործարքով, որի իրականացման իրավունքը վերապահված է լիազոր կառավարչին: Ընդ որում վաճառքի գործընթացը կարող է սկսվել միայն լուծարման մասին համապատասխան որոշում կայացնելուց հետո, իսկ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման դեպքում՝ ըստ այդ ծրագրով նախատեսված կարգի: Մրցութային վարույթի անցկացման դեպքում գործարքից 40 օր առաջ պետք է տեղեկատվություն ներկայացվի դատավորին վաճառվող գույքի գտնվելու վայրի, դրա նկարագրի, մեկնարկային գնի, մրցութային աճուրդի անցկացման օրվա վերաբերյալ:

Մրցութային վարույթի ընթացքում դատարանի կողմից հատուկ նշանակված մարմինը՝ մրցութային կառավարիչը, համախմբում է կազմակերպության ակտիվները, այնուհետև վաճառում է գույքը և ստացված միջոցներից օրենքով սահմանված հերթականությամբ բավարարում է այդ պահանջները: Կառավարչի գործողությունների հսկողությունը իրականացնում է ինչպես դատարանը, այնպես էլ հատուկ ստեղծված մարմինները՝ պարտատերերի ժողովը կամ խորհուրդը: Այդ մարմիններում պետության ներկայացուցիչը մասնակցում է լուծարվող կազմակերպության պարտավորությունների կազմում պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտքերի համապատասխան: Աճուրդների կիրառման դեպքում ակտիվները վաճառվում են անենաբարձր գնով, և վճարվում են ընկերության պարտքերը: Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել աճուրդներին և կազմակերպությունը ձեռք բերելուց հետո որոշել՝ լուծարել՝ ընկերությունը, թե՞ այն մասերի բաժանելուց հետո վաճառել կամ վերակազմավորել: Այս մեթոդը հատկապես կարող է կիրառվել փոքր չափերի ընկերությունների համար:

Աճուրդների դեպքում լուծման ենթակա խնդիրներ են կազմակերպությունների համար առաջարկված խիստ ցածր մեկնարկային գինը, գնորդների սակավ թվաքանակը, մրցակցության բացակայությունը հատկապես միջին և խոշոր ընկերություն-

ների համար: Եթե ընկերությունը խոշոր է, ապա այն կարող է վաճառվել մաս–մաս, իսկ գնորդներից ստացված միջոցները կարող են կազմել կազմակերպության շուկայական արժեքի 20–30%–ը:

Այն դեպքերում, երբ լիազոր կառավարիչը նպատակամղված է պարտապան կազմակերպության գույքը վաճառել ուղղակի գործարքով, ապա պարտատերերի խորհրդի հավանության դեպքում միջնորդություն է ներկայացվում դատավորին, որի դրական որոշմամբ էլ հետագայում իրականացվում է այդ գործարքը:

Հրապարակային սակարկությունների կամ գույքի ուղղակի վաճառքով գործարքների միջոցով ստացված եկամուտները մուտքագրվում են պարտապան կազմակերպության հատուկ հաշվին, և օրենքով սահմանված կարգով այնուհետև իրականացվում է դրա բաշխումը:

Ինչպես նշել ենք, սնանկության դեպքում որպես լուծման ուղի կարող է ծառայել նաև վերակազմակերպումը: Այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գինը ավելի բարձր է, քան լուծարման դեպքում ձևավորվողը, ապա նպատակահարմար է իրականացնել վերակազմակերպում:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձի վերակազմակերպման պայմանները սահմանված են 63–րդ հոդվածի համապատասխան հինգ կետերում: Մասնավորապես, իրավաբանական անձի վերակազմակերպումը կատարվում է նրա հիմնադիրների կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշման հիման վրա: Շատ հաճախ, երբ փոխհամաձայնեցման միջոցով պարտապանները փորձում են ետ ստանալ իրենց միջոցները, ապա կարող է իրականացվել նաև պարտապան կազմակերպության վերակազմակերպում: Այդ դեպքում դատարանը նշանակում է արտաքին կառավարիչ և նրան է հանձնարարում իրականացնել վերակազմակերպումը: Արտաքին կառավարիչը, որին նշանակման պահից փոխանցվում են գործերի կառավարման լիազորությունները, կազմում է բաժանիչ հաշվեկշիռ և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձանց կանոնադրությունների հետ միասին ներկայացնում է դատարան, ինչն էլ հիմք է ընդունվում նոր ստեղծվող իրավաբանական անձանց գրանցման համար: Այն դեպքերում, երբ խնդիր է դրվում իրականացնել սնանկ կազմակերպության միացման ձևով վերակազմակերպում, կարևոր հանգամանք է ընդունվում սնանկ կազմակերպության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման փաստը:

Վերակազմակերպման ծրագիրը գործնականում պետք է լինի արդար և իրատեսական, ինչը նշանակում է, որ այն մշակելիս անհրաժեշտ է հավասար չափով հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի շահերը, լինի եկամտաբեր և անպայման հաշվի առնի բանկային երկարաժամկետ և կարճաժամկետ վարկեր ներգրավելու հնարավորությունները: Տվյալ դեպքում մեծան ծրագրեր կազմելիս հնարավոր չէ գործընթացը իրականություն դարձնել, եթե չլինի ֆինանսապես ծանր վիճակում գտնվող կազմակերպության բոլոր պարտապանների աջակցությունը: Գործնականում չեն բացառվում այն դեպքերը, երբ քննարկման դրվեն և հաստատվեն մեկից ավելի վերակազմակերպման ծրագրեր:

Վերակազմակերպման դժվարություններից է կազմակերպության կապիտալի կառուցվածքի փոփոխությունը: Առաջին փուլում հարկ կլինի իրականացնել վերակազմակերպվող կազմակերպության ընդհանուր արժեքի գնահատում: Վստահված ան-

ծինք այդ խնդիրը լուծելու համար հիմնականում գնահատումներ կատարելիս օգտվում են եկամուտների կապիտալացման մեթոդից: Սակայն եկամուտների կանխատեսման բարդությունը և կապիտալացման ընդունված մակարդակի որոշելու դժվարությունը այդ գնահատականը ենթարկում են զգալի տատանումների: Փաստորեն, այդպիսի գնահատմամբ ստացվող արժեքը հանդես է գալիս որպես կազմակերպության իրական արժեքի կանխատեսում:

Հաջորդ փուլում էական փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել կապիտալի կառուցվածքում, որը հնարավորություն կընձեռի կրճատել ֆիքսված ժանկետներով վճարումների ծավալները և ապահովել ծածկման գործակցի ընդունելի մակարդակ: Որպես ֆիքսված ժանկետներով վճարումների ծավալների կրճատման արդյունավետ ուղի կարող է ծառայել վերակազմակերպվող կազմակերպության պարտավորությունների որոշակի մասի փոխարկումը այնպիսի բաժնետոմսերի, ինչպես նաև փոխառության պարտատոմսերի, որոնց դիմաց եկամուտները կվճարվեն միայն շահույթի առկայության դեպքում: Միաժամանակ կարող են փոփոխվել պարտքերի վճարման պայմանները: Եթե պարզվի, որ ապագայում վերակազմակերպվող կազմակերպությունը լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք կունենա, ապա վստահված անձը կարող է թույլատրել պարտքի և սեփական կապիտալի գործակցի նորմատիվային արժեքի շեղում այն պայմանով, որ հնարավոր լինի իրականացնել առավել ճկուն ֆինանսական քաղաքականություն: Ծրագրի ավարտական փուլը ներառում է նախկին արժեթղթերը նորերով փոխարինելու գործընթացը: Տվյալ դեպքում անհրաժեշտ է պահպանել պահանջների բավարարման հերթականությունը:

Հարկ է նշել, որ վերակազմակերպման ենթակա բաժնետիրական ընկերությունները, ըստ «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենքի 82–րդ հոդվածով նախատեսված պահանջների բավարարման հերթականության, վնասներ են կրում նաև բացարձակ առաջնահերթության սկզբունքի կիրառման պատճառով:

Գործնականում սնանկացման եզրին կանգնած կազմակերպությունների վերաբերյալ կայացվող որոշումներով ապահովում են լուծարվող կազմակերպությունների շահերի առավելագույն պաշտպանվածություն: Այս ընթացակարգը կարգավորող օրենքի շրջանակներում լիազոր կառավարչի կողմից ցուցաբերվող ցանկացած սուբյեկտիվ դրսևորումների դեպքում կվնասեն ոչ միայն պարտապանի, այլև պարտատերերի շահերը, չնայած օրենքով միտումնավոր գործողությունները քրեորեն պատժելի են: Ուստի, «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի ներկայումս գործող տարբերակն ունի լրացումների և բարեփոխումների կարիք:

Պիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ են պայմանավորված կազմակերպությունների սնանկացման առաջացման պատճառները:
2. Ի՞նչ գործոններ են կարևորվում սնանկացման գործընթացում:
3. Որո՞նք են աշխարհում գոյություն ունեցող սնանկացման գնահատման տեսամեթոդական հիմքերը:
4. Ինչպիսի՞ բնույթ ունի անվճարունակության (սնանկացման) գործընթացը ՀՀ–ում:
5. Ինչպիսի՞ վարկանշային դասակարգման մոտեցումներ են հայտնի միջազգային գործընթացում:

- 6. Ինչպե՞ս է կարգավորվում սնանկացման գործընթացը ՀՀ–ում:
- 7. Որո՞նք են սնանկացման առողջացման մոտեցումները:
- 8. Ի՞նչ է վերակազմակերպումը, նշել դրա պայմանները:


ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1. ՀՀ քաղաքային օրենսգիրքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 15 մայիսի, 1998 թ.:
- 2. ՀՀ օրենքը բաժնետիրական ընկերությունների մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 30 սեպտեմբերի, 1996 թ.:
- 3. ՀՀ օրենքը հարկերի մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 14 սեպտեմբերի, 1997 թ.:
- 4. ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 14 հունիսի, 1997 թ.:
- 5. ՀՀ օրենքը շահութահարկի մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 30 սեպտեմբերի, 1997 թ.:
- 6. ՀՀ օրենքը հաշվապահական հաշվառման մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 19 մայիսի, 1998 թ.:
- 7. ՀՀ քաղաքային օրենսգիրքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 10 օգոստոսի, 1998 թ.:
- 8. ՀՀ օրենքը ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 14 մարտի, 1992 թ.:
- 9. ՀՀ օրենքը սեփականատիրության մասին՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 31 հոկտեմբերի, 1990 թ.:
- 10. ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր, N 2(24), 29 հունվարի, 1999 թ.:
- 11. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան, Երևան, 1999 թ.:
- 12. Փոլ Սամուելսոն, Սիկրոտնտեսագիտություն (թարգմանություն անգլերենից), Երևան, 1997 թ.:
- 13. Ֆինանսներ և վարկ, ուսումնական ձեռնարկ պրոֆ. Լ.Բաղանյանի խմբագրությամբ, Երևան, «Չանգակ–97» 2003թ.:
- 14. Լ. Բաղանյան, Կարծաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպությունում, «Տնտեսագետ», Երևան, 2000թ.:
- 15. Լ. Բաղանյան, Ձեռնարկատիրական կազմակերպությունների ֆինանսներ, «Տնտեսագետ», Երևան, 2002 թ.:
- 16. Յու. Սուվարյան, Ռազմավարական կառավարում, Երևան, 1996թ.:
- 17. Թ.Թ. ըՏփոհՏՁ, Թ.Ժ խպվՏՁՖպՁ, ԽՏՐտՏՐՈՑՈՂՎօպ ԻՌվՈվրո, “ԿՈՑպՐ”, Ծ., 2004.
- 18. Ծ.Թ. ՀՏՎՈվՏՁՐՍՈՒ, թ.ծ.ըպսՏՃսՈճՏՁ, ՂՈվՈվրո Ռ ՍՐպՊՈՑ, Ծ., “ԹօրՔպպ ՏոՐՈճՏՁՂՈվՈպ”, 2006.
- 19. Կ.Լ. խցՍՔՈվ, Թ.Ը. ԽպտՏՁ, ՂՈվՈվրո, Ծ., “նՍվՏՎՈրՑ”, 2006.
- 20. Լ.Ը. ըսՈվՍ, ՂՈվՈվրՏՁօռ ՎպվպՊՁՎպվՑ, ցփպո.ՍցՐո, ԽՌպՁ, 1999.
- 21. ըՐպշսՌ Հ., ԾՈՒպՐո Կ., կՐՈվՓՌտօ ՍՏՐտՏՐՈՑՈՂՎօլ ԻՌվՈվրՏՁ, Ծ., 1997.
- 22. ԹՈվ–ղՏՐվ ժՁ.Խ., ձտՐՈՂՏպվՈպ ԻՌվՈվրՈՎՈ, Ծ., ՂՈվՈվրո Ռ թՑՈՑՐթՑՈՍՈ, 2000.
- 23. ըՐՐՍս/ոՈվՍ ԻՌվՈվրՏՁօռ ՎպվպՊՁՎպվՑ Ձ ՎՌսՎ ոՐճվպրպ, Ծ., 1998.
- 24. ՍՁՈվՊպՐ Թ.Ը., կՐՏրսՏՁՈ Թ.Կ., նՍՍվՏՎՈՍՈ տՐպՊտՐՈ՛ՑՈ՛, Ծ., 1997.
- 25. խՌրՈՓՈվ Լ.Թ., ըՐճվպրտսՈվ ՏրվՏՁՈ ցրտպլՈ, Ծ., 1992.
- 26. ԸրՑՈՆՏՁ Թ.Կ., ԸվՈսՈճ ցրՑՏռփՈՂՏրՑՈ ԻՌՈՎօ Ռ տՐՏՓպՊցՐօ, ըՂճՈվՎօպ ը ոՈվՍՐՏՑրՑՁՏՎ, Ծ., 1995.
- 27. ըՏՐՏՊՈվՈ ժ.Լ., ՂՈվՈվրո տՐպՊտՐՈ՛ՑՈ՛, Ծ., 1995.
- 28. ԺՐսՈՐՈ՛ Հ., ՂՈվՈվրո Ռ տՐպՊտՐՈ՛վՈՎՈՑպՖրՑՁՏ, Ծ., 1993.

29. ԽցջվյաՓՏՉՈ ժ.Թ., ԴնվնվրՏՉՏայ ցտրՈՉսպվնկա ՍՏՎտնվնկառ, Ծ., 1995.
30. ըսնվՄ Լ.Ը., ԼվՉպրՑՈՓՈՏվվոռ ՎպվյաՊՁՎպվՑ, ԽնկաՉ, 1995.
31. ըՏչՈՐՏՉ Թ.Թ., ԾպՑՏՊո ԻնվնվրՈՐՏՉՈվն՝ ՈվՉպրՑՈՓՈՏվվՏռ ՊայՑպսՖվՏրՑՈ տրպՊտրՈ՛ՑՈռ, Ծ., 1998.
32. ԽՏՉՈսպՉ Թ.Թ., ԴնվնվրՏՉոռ Ովնսնջ, Ծ., 1998.
33. ԽՏսնրր ը.ծ., ձտրՈՉսպվնկա ԻնվնվրՏՉՏռ ՊայՑպսՖվՏրՑՈ տրպՊտրՈ՛ՑՈ՛, Ծ., 1997.
34. ձրՑՑՍՈվ Թ.Ծ., ընջվպր–տսնվ. Ծ., 1994.
35. Դնվնվրո, տՏՊ ԲպՊ. ԽՏՉՈսպՉՏռ Ը.Ծ., Ծ., 1998.
36. ՄպրկաՎպՑ Ը.ժ., Դնվնվրո տրպՊտրՈ՛ՑՈ՛. Ծ., 1997.
37. ԴնվնվրՏՉոռ ՎպվյաՊՁՎպվՑ, տՏՊ ԲպՊ. ծ.Ղ.հնՎրՏվՏՉՈ, Ծ., 1999.
38. Դնվնվրո տրպՊտրՈ՛ՑՈռ, տՏՊ. ԲպՊՈՍՓՈկառ տրՏԷպրրՏՐՈ ծ.Թ.ԽՏսփնվՏռ, Ծ., 2001.
39. Խ.ծ. ՅցՍՈվՈ, Դնվնվրո ՍՏՎՎպրփպրՍՈւ տրպՊտրՈ՛ՑՈռ Ռ ՏՐչՈվնջՈՓՈռ, Ը.ը., Ծ., 1997.
40. ԸսնՎն՝ տրՈռոսն, տպրկաՉՏՊ ը ՈվչսնռըՍՏչՏ, Ծ., 1996.
41. թսցԼՉ Թ.Թ., ըննրՈՎՏՉ Շ.Ծ., ընջվպր տսնվ. ԿրչնվնջՈՓՈ՛ Ռ տսնվնրՏՉՈվնկա տրպՊտրՈ՛ՑՈ՛վնՎՈՑպսՖրՍՏռ ՊայՑպսՖվՏրՑՈ, “ԴնվնվրՏՉոռ ՎպվյաՊՁՎպվՑ”, ըռ., 1995.
42. մնոՏՐք Խ.Թ., ը՛ՊՁպՑՈՐՏՉՈվնկա ՊայՑպսՖվՏրՑՈ տրՏՎոթսպվվոլ տրպՊտրՈ՛Ցպռ ՅՏրրՈՐ, Ծ., 2001.
43. ԴնվնվրՏՉՏայ տսնվնրՏՉՈվնկա Ռ ՍՏվՑՐՏսՖ, տՏՊ.ԲպՊ. կՑցՍՍՈ Ռ ՊՐ., “ԼվԻՐՈ”, Ծ., 1996.
44. Դնվնվրո, ՊպվյաՉվՏայ ՏոՐՈքպվնկա Ռ ՍՐպՊՈՑ, ցփպռ., տՏՊ.ԲպՊ. ը.Խ. ԽպվփՈՍՏՉՈ Ռ ՊՐ., Ծ., 2000.
45. Դնվնվրո Ռ տրպՊտրՈ՛ՑվնՎՈՑպսՖրՑՉՏ, ցփպռ., տՏՊ.ԲպՊ. Ծ.ը. ՅՏՎՈվՏՉՐՍՏչՏ, Խկռ., “ընջվպր–տրպրր”, 2000.
46. Altman E.I., Financial Ratios, Discriminant Analysis and the Predisation of Corporate Bankruptcy. Journal of Finance, September 1968,
47. Fulmer John G. Jr., Moon James E., Gavin Thomas A., Erwin Miichael J., A Bankruptcy Classification Model For Small Farms. // Jornal of Commercial Bank Lending, July 1984,

III ԲԱԺՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


N 1. Բիզնես պլանի տիպերը



N 2. Չեռնարկության բիզնես պլանի կառուցվածքը

Գործող ձեռնարկության բիզնես պլանը
1. Աղմինիստրատիվ ամփոփում
2. Արտադրանքի (ծառայության) տեսակը
3. Մրցակցության նկարագիրը
4. Չեռնարկության բնութագիրը (տնտեսական պոտենցիալ)
5. Իրացման շուկայի գնահատումը
6. Մարքեթինգ և վաճառք
7. Արտադրության պլանը (նոր արտադրանք)
8. Չեռնարկության կառավարման վիճակը
9. Ռիսկի գնահատումը և ապահովագրությունը
10. Ֆինանսավորման ստրատեգիան
11. Պահանջվող դրամական ֆոնդեր
12. Ֆինանսական պլանը 12.1. Գործառնական բյուջեները 12.2. Ֆինանսական բյուջեները 12.3. Կապիտալի բյուջեները 12.4. Ընթացիկ ակտիվներ բյուջեները 12.5. Եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռը


N 3 Արտադրական կազմակերպության կապիտալի կազմը




N 4. Կապիտալի օպտիմալ կառուցվածքի հաշվարկ

N	Ցուցանիշներ	Տարբերակներ			
		I	II	III	IV
1.	Կապիտալի ընդհանուր արժեքը մլն դրամ	600	600	600	600
2.	Կապիտալի կառուցվածքի տարրերակներ, %	25	30	40	100
	2.1. Սեփական կապիտալ				
	2.2. Փոխառու կապիտալ				
3.	Շահաբաժնի նորման, %	10	10	10	10
4.	Նվազա ռոյն տոկոսադրույքը	18	18	18	–
5.	Շահութահարկի դրույքը	20	20	20	20
6.	Հարկային ճշ թտումը (1 – 02)	08	08	08	08
7.	Վարկի դրույքը հարկաչափով ճշ թտված (4 x 6) x %	14.4	14.4	14.4	–
8.	Կապիտալի բաղադրիչների ինը, %	2.5	10.08	8.64	10
	8.1. Սեփական կապիտալի (2.1 x 3 : 100)				
	8.2. Փոխառու կապիտալի (2.2 x 7 : 100)				
9.	Ընդհանուր կապիտալի արժեքը (CCK), (WACC, (8.1 x 2.1+ 8.2 x 2.2) : 100	8.795	8.46	5.99	10

N 5 Չեռնարկության կապիտալային բյուջեն



N 6. Կապիտալ ներդրումների աղբյուրների կազմը



N 7. Արտադրանքի արտադրության ու իրացման ծախսերի նախահաշիվ (բյուջե)

հազ. դրամ

Ծախսումների տարրերը	
1. Նյութական ծախսեր ընդամենը	328 000
այդ թվում`	
• հումք և հիմնական նյութեր	270 000
• օժանդակ նյութեր	30 000
• վառելիք և էներգիա	20 000
• այլ նյութական ծախսեր	8 000
2. Աշխատանքի վարձատրության ծախսեր	65 000
այդ թվում`	
• աշխատավարձ	60 000
• խրախուսման և փոխհատուցման ծախս	2 000
• նյութական օգնություն	3 000
• այլ նյութական վճարումներ	
3. Հարկային հատկացումներ	25 000
• բյուջեին	23 000
• սոցիալական մարմիններին	2 000
4. Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք	45 000
5. Այլ ծախսումներ	12 000
<hr/>	
6. Ընդամենը ծախսումներ արտադրության վրա	475 000
7. Ծախսերի դուրս գրում ոչ արտադրական հաշիվներին	13 000
8. Անավարտ արտադրության փոփոխություն	8 000
9. Արտադրանքի արտադրական ինքնարժեքը (6 – 7 – 8)	454 000
10. Կառավարչական ծախսեր	16 000
11. Կոմերցիոն ծախսեր	31 000
12. Արտադրանքի լրիվ ինքնարժեքը (9 + 10 + 11)	501 000
13. Չիրացված արտադրանքի տարեսկզբի մնացորդը լրիվ ինքնարժեքով	45 000
14. Չիրացված արտադրանքի տարեվերջի մնացորդը լրիվ ինքնարժեքով	6 500
15. Իրացվող արտադրանքի լրիվ ինքնարժեքը (12 + 13+ 14)	499 000
16. Արտաիրացումային ծախսեր	11 000
17. Գործառնական ծախսեր	16 000
18. Արտակարգ ծախսեր	–
19. Կազմակերպության ընդհանուր ծախսումներն ու ծախսերը	526 000

N 8. Իրացումից հասույթի պլանի հաշվարկ (իրացման բյուջե)


1. Նյութական ծախսեր	328 000
2. Աշխատանքի վարձատրության ծախսեր	65 000
3. Սոցիալական վճարներ և չփոխհատուցվող հարկեր	25 000
4. Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք	45 000
5. Այլ ծախսումներ	12 000
6. Ընդամենը ծախսումներ սովորական գործունեության վրա (1 + 2 + 3 + 4 + 5)	475 000
7. Ծախսերի դուրս գրում ոչ արտադրական հաշիվներին	13 000
8. Անավարտ արտադրության մնացորդի փոփոխություն	+ 8 000
9. Արտադրանքի արտադրական ինքնարժեքը	454 000
10. Կոմերցիոն ծախսեր և կառավարչական ծախսեր	47 000
11. Արտադրանքի լրիվ ինքնարժեքը	501 000
12. Թողարկվող արտադրանքի արժեքը պայմանագրային բացթողման գներով (P ¹ = 30%) 11 x 35% (11 x 1.3 x 1.2)	782 000
13. Չիրացված արտադրանքի տարեսկզբի մնացորդը ինքնարժեքով	4 500
14. Չիրացված արտադրանքի տարեսկզբի մնացորդը գործող գներով (13 x 11) (782 000 : 501 000 = 1.56)	7 020
15. Չիրացված արտադրանքի տարեվերջի մնացորդը ինքնարժեքով	6 500
16. Չիրացված արտադրանքի տարեվերջի մնացորդը գործող գներով (16 x 1.56)	10 140
17. Իրացումից հասույթը գործող գներով (12 + 14 – 16) x 1.1	778 880
18. Այլ եկամուտներ	3 600
19. Այլ ծախսեր	2 480
20. Ընդամենը հասույթ (եկամուտ) (17 + 18 – 19)	780 000

N 9.


Իրացումից հասույթի և այլ եկամուտների բաշխման պլան

N	Ցուցանիշներ	Պումարը հազ. դրամ
1.	Իրացումից հասույթը առանց ԱԱՀ–ի	650.000
2.	Իրացված արտադրանքի ինքնարժեքը	501.000
3.	Այլ յորժառնական եկամուտներ	3.600
4.	Այլ յորժառնական ծախսեր	2.480
5.	Այլ արտաիրացումային եկամուտներ	–
6.	Այլ արտաիրացումային ծախսեր	–
7.	Համախառն շահույթը (1 + 3 + 5 – 2 – 4 – 6)	150 120
8.	Շահութահարկ	300 24
9.	Զուտ (չբաշխված) շահույթ (7 – 8– 9)	120 096
10.	Կուտակման ֆոնդեր (66.0 %)	6 000
11.	Պահուստային ֆոնդեր (10 %)	79 868
12.	Սպառման ֆոնդեր (29 %)	34 828

N 10. ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՊԼԱՆ



N 11. Դրամական հոսքերի շարժը



N 12. Չեռնարկության վճարային հաշվեկշիռը

Դրամական միջոցների շարժը բանկային հաշիվներով և դրամարկով


Եկամուտներ և մուտքեր
1. դրամական միջոցների մնացորդ բանկային հաշիվներում
2. միջոցների սպասվող մուտք
2.1. ապրանքների դրամով վաճառքից հասույթ
2.2. բարտերով ստացվող ապրանքների իրացումից հասույթ
2.3. ոչ ընթացիկ ակտիվների և նյութական արժեքների իրացումից հասույթ
2.4. ավանսային մուտքեր
2.5. գործառնական եկամուտ
2.6. արտաիրացումային եկամուտ
2.7. կապալային վճարներ
2.8. մուտքեր լիզինգից
2.9. մուրհակներով ստացված միջոցներ
2.10. ժամանակավոր ֆինանսական օգնություն
2.11. արժեթղթերի վաճառքից հասույթ
2.12. բանկային փոխառություն
2.13. արժույթի վաճառքից հասույթ
2.14. բյուջետային հատկացում
2.15. այլ մուտքեր
Ընդամենը մուտքեր (1+2)

Ծախսեր և հատկացումներ
1. առաջնահերթ վճարումներ
2. հարկային վճարումներ
3. մուծումներ պետական արտաբյուջետային ֆոնդերին
4. վճարումներ ձեռնարկության հայեցողությանը
4.1. աշխատանքի վարձատրության
4.2. ստացվող նյութական արժեքների դիմաց
4.4. վարկերի մարում և տոկոսներ
4.5. մուրհակների մարում
4.6. շահաբաժինների վճարում
4.7. կապալառուների հաշիվների մարում
4.8. այլ վճարումներ
Ընդամենը ծախսեր
Մուտքերի գերազանցում ծախսերից Ծախսերի գերազանցում մուտքերից Տարբերվելով դրամական միջոցների կանխատեսվող մնացորդը

N 13 Դրամական մուտքերի և վճարների դասակարգումը

Գործունեության տեսակը	Մուտքեր	Վճարումներ
1. Ընթացիկ (որ ծառայական կամ հիմնական)	<ol style="list-style-type: none"> 1. Արտադրանքի – ծառայությունների իրացումից 2. Ոչ ընթացիկ ակտիվների – այլ ույթի վաճառքից 3. Գնորդներից ստացված կանխավճարներ 4. Բյուջետային – այլ նպատակային ֆինանսավորում 5. Անհատույց ստացումներ 6. Վարկեր – փոխառություններ 7. Այլ մուտքեր 	<ol style="list-style-type: none"> 1. Մատակարարների հաշիվների վճարում 2. Անձնակազմի վարձատրություն 3. Հաշվարկներ բյուջեի հետ 4. Մուծումներ արտաբյուջետային ֆոնդերին 5. Առհաշիվ անձանց վճարումներ 6. Ավանսների հատկացում 7. Ֆինանսական ներդրումներ 8. Պարտքի հիմնական ումարի – տոկոսների մարում 9. Այլ վճարումներ
1. Ինվեստիցիոն (ներդրումային)	<ol style="list-style-type: none"> 1. Ոչ ընթացիկ ակտիվների – անավարտ շինարարության վաճառքից 2. Անհատույց ստացումներ 3. Բյուջետային հատկացում – այլ նպատակային ֆինանսավորում 4. Վարկեր – փոխառություններ 5. Ֆինանսական ներդրումներ դիմաց շահաբաժիններ 6. Այլ մուտքեր 	<ol style="list-style-type: none"> 1. Նյութերի ձեռքբերում, աշխատանքի վարձատրություն 2. Կապալառուների ավանսային վճարումներ 3. Շինարարությանը բաժնային մասնակցության վճարներ 4. Երկարատև ֆինանսական ներդրումների դիմաց շահաբաժինների վճարում 5. Երկարատև բնույթի ֆինանսական ներդրումներ 6. Սարքավորումների ձեռքբերում – այլ ծախսեր
1. Ֆինանսական	<ol style="list-style-type: none"> 1. Բյուջետային – այլ նպատակային ֆինանսավորում 2. Վարկեր – փոխառություններ 3. Շահաբաժիններ – տոկոսներ կարճատև ֆինանսական ներդրումների համար 4. Արժեթղթերի վաճառքից եկամուտ 5. Այլ մուտքեր 	<ol style="list-style-type: none"> 1. Ավանսների հատկացում 2. Կարճատև ֆինանսական ներդրումներ 3. Ստացված վարկերի տոկոսների վճարում – մարում

N 14. Չեռնարկության ֆինանսական ռեսուրսների ձևավորումը և օգտագործումը



N 15. Ուղղակի հաշվարկի եղանակով շահույթի պլանավորման գծապատկեր

Արտադրանքի (ծառայության, աշխատանքի) միավորի գինը	<p>Թողարկման ծրագիրը</p> <p>Ա - արտադրանքի</p> <p>Բ - արտադրանքի</p> <p>Գ - արտադրանքի</p> <p>Այլ արտադրանքի</p>	
Արտադրանքի (ծառայության, աշխատանքի) միավորի ինքնարժեքը		
Արտադրանքի (ծառայության, աշխատանքի) ծավալը		
Արտադրանքի (ծառայության, աշխատանքի) իրացումից շահույթը ? Բ չ Գ - ? Զ ի		
Չիրացված արտադրանքի (ծառայության, աշխատանքի) ծավալը տարեսկզբի մնացորդը	Ինքնարժեքով	
	Գնով	
	Շահույթը	
Չիրացված արտադրանքի (ծառայության, աշխատանքի) ծավալը տարեվերջի մնացորդը	Ինքնարժեքով	
	Գնով	
	Շահույթը	
<p>Ամբողջ տեսականու իրացումից շահույթի պլանը</p> <p>[$U_2 + U_{12} - U_{22}$]</p>	<p>Իրացումից շահույթ</p> <p>Պլանային տարում</p> <p>Ա - արտադրանք</p> <p>Բ - արտադրանք</p> <p>Գ - արտադրանք</p> <p>Այլ - արտադրանք</p>	

N 16. Ընթացիկ ակտիվների ձևավորման բյուջեի գծապատկեր

Ընթացիկ ակտիվների ձևավորման բյուջեն

Ընթացիկ ակտիվների պլանային պահանջը

1. Պաշարներ.
 - հումք, նյութեր, գնովի կիսաֆաբրիկատներ
 - անավարտ արտադրություն
 - պատրաստի արտադրանք և ապրանքներ
 - այլ պաշարներ և ծախսումներ
2. Դեբիտորական պարտք
3. Դրամական միջոցներ
4. Այլ ընթացիկ ակտիվներ

Այդ թվում ներդրում մինչև 1 տարի ժամանակով
Ընդամենը
այդ թվում

- ընթացիկ ակտիվների կայուն մասը
- ընթացիկ ակտիվների փոփոխուն մասը


Ընթացիկ ակտիվների ֆինանսավորման աղբյուրներ

1. Սեփական կապիտալ
2. Երկարատև վարկեր և փոխառություններ
3. Կարճատև վարկեր և փոխառություններ
4. Հաստատուն կրեդիտորական պարտք (կայուն պասիվներ)
5. Այլ աղբյուրներ


Ընդամենը
այդ թվում

- զուտ շրջանառու կապիտալը
- ընթացիկ ֆինանսավորման ծավալը
- ընդհանուր կրեդիտորական պարտքը

N 17. Շրջանառու կապիտալի կազմը



N 18. Ընթացիկ ակտիվների ծածկման աղբյուրները



N 19. Բաժնետիրական ընկերության համախմբված բյուջեի գծապատկեր

Բաժնետիրական ընկերության համախմբված բյուջեն

Եկամուտներ
1. Սեփական միջոցներ 1.1. դրամական մնացորդ բանկային հաշիվներում և դրամարկում 1.2. գործունեության բոլոր ոլորտների իրացումից հասույթ 1.3. հասույթ այլ իրացումից 1.4. գործառնական եկամուտների ու ծախսերի դրական տարբերություն 1.5. արտաիրացումային եկամուտների և ծախսերի տարբերություն 1.6. այլ սեփական միջոցներ
2. Փոխառու միջոցներ 2.1. բանկի երկարատև վարկեր 2.2. բյուջետային վարկեր 2.3. փոխառություններ 2.4. մատակարարների վարկեր 2.5. բանկի կարճատև վարկեր 2.6. այլ փոխառու միջոցներ
3. Ներգրավված միջոցներ
4. Այլ եկամուտներ
Ընդամենը եկամուտներ Կրեդիտորական պարտքի գերազանցում դեբիտորականին
Ընդամենը եկամուտներ և մուտքեր

Ծախսեր
1. Ընթացիկ ծախսեր 1.1. արտադրանքի թողարկման ծախսեր 1.2. տրանսպորտային ծախսեր 1.3. կոմերցիոն ծախսեր 1.4. այլ ծախսեր
2. Վճարումներ բյուջեին
3. Վճարումներ արտաբյուջետային ֆոնդերին
4. Պարտավորությունների մարում (բանկ, բյուջե, մատակարար և այլն)
5. Հատկացումներ սեփական դրամական ֆոնդերին
6. Շրջանառու միջոցների լրացում և ան
7. Այլ ծախսեր
Ընդամենը ծախսեր
Դեբիտորականին պարտքի գերազանցում կրեդիտորականից
Ընդամենը ծախսեր և հատկացումներ
Բյուջեի դեֆիցիտը

N 20. Արտադրական կազմակերպության եկամուտների
և ծախսերի հաշվեկշիռը (ֆին. պլան)

N	Ցուցանիշներ	Բազիսային տարի	Ընթացիկ տարի		վճարում	N	Ցուցանիշներ	վճարում	վճարում	վճարում	վճարում
			Սահիդատուկյոյի ցուցանիշ	Սահիդատուկյոյի ցուցանիշ							
Ա	Եկամուտներ և մուտքեր										
1.	ԱՄԲ					Բ	Ծախսեր և հատկացումներ				
2.	Այլ թվում հարկ					11.	Կապիտալ ներդրումներ, այդ թվում՝				
3.	Հաճախում չափույթ - ապրանքային արտադրանքի իրացումից - ոչ պարունակային արտադրանքի իրացումից - ինվեստիցիոն գործունեությունից - ֆինանսական գործունեությունից - ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք						- տեխնիկական վերազինման և վերանորոգման համար - ոչ արտադրական շինությունների համար				
4.						12.	Երջանատու կապիտալի լրացում և աճ				
5.						13.	Հատկացումներ սպասման ֆուդին				
6.						14.	Երկարատև ֆինանսական ներդրումներ				
7.						15.	Երկարատև վարկերի մարում				
8.						16.	Վարկային տոկոսների վճարում				
9.						17.	Հատկացումներ պատուտների և շահագրգիռներ				
10.						18.	Այլ ծախսեր և հատկացումներ				
11.						19.	Ընդամենը ծախսեր և հատկացումներ				
20.	Փոփոխություններ և մուտքեր ա) փոփոխություններ և մուտքեր այդ թվում - ԱՄԲ - անցիդային հարկ - շահութահարկ - այլ մնացորդներ										
21.	Ստացումներ բյուջեից - կապիտալ ներդրումների համար - շրջանառու կապիտալի լրացման համար - այլ ծախսերի համար										
22.	Ընդամենը եկամուտներ, մուտքեր և բյուջետային ֆինանսավորում										

ԲԱԺԻՆ 4

ՎԱՐԿԸ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 17

ՎԱՐԿԸ, ԲԱՆԿԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.1. ՎԱՐԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Վարկը ընդհանուր առմամբ տնտեսական այնպիսի հարաբերություն է, որն առաջանում է արժեքը (բնաիրային և դրամական ձևով) մեկ անձի, կազմակերպության, պետության կողմից վերադարձելիության ու վճարելիության սկզբունքներով ուրիշին ժամանակավոր օգտագործման հանձնելու ընթացքում: Դրա էությունը, ձևերն ու դերը որոշվում են հասարակության տնտեսական կառուցվածքով:

Կապիտալիստական արտադրության, բնականաբար, շուկայական տնտեսության պայմաններում վարկը արտահայտում է փոխատվական կապիտալի շարժումը և արտացոլում է փոխառուի և փոխատուի միջև դրամական հարաբերություններ ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հաշվին դրանց նկատմամբ ժամանակավոր պահանջները բավարարելու հիմքի վրա:

Վարկի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ կապիտալի շրջապտույտի ընթացքում ձեռնարկությունների ու կազմակերպությունների մոտ առաջանում է ժամանակավորապես ազատ դրամական կապիտալ, մյուսների մոտ նույն պահին զգացվում է լրացուցիչ կապիտալի պահանջ: Այդպիսի վիճակ ստեղծվելու գլխավոր պատճառները հետևյալն են՝

1. Հիմնական կապիտալի շրջապտույտը ավարտվում է մի քանի տարվա ընթացքում, այն մաշվում է աստիճանաբար, մասնակիորեն մաշվելու և լրիվ վերականգնում իրականացնելու միջակայքում հաշվարկված մաշվածքը կազմակերպությունների մոտ մնում է ժամանակավոր դրամական ձևում:
2. Շրջանառու կապիտալի նյութական կրողները (ընթացիկ ակտիվները) արտադրվող ապրանքների արժեքի մեջ մտնում են միանգամից և շրջապտույտի ու իրացման արդյունքում փոխհատուցվում են ամբողջությամբ, իսկ հունքի, նյութերի, վառելիքի և այլ ընթացիկ ակտիվների գնումները կատարվում են ոչ թե իրացումից անմիջապես հետո, այլ որոշակի ժամանակ անց, ընդ որում մեծ խմբաքանակներով՝ պատճառ դառնալով ժամանակավորապես ազատ դրամական միջոցների առաջացման:
3. Աշխատավարձի վճարումները սովորաբար կատարվում են որոշակի պարբերականությամբ, դրանց ստացման և ծախսվելու ժամանակները չեն համընկնում, որի հետևանքով էլ առաջանում են ժամանակավոր դրամական մնացորդներ:

Ժամանակ առ ժամանակ ձեռնարկություններում և կազմակերպություններում իրադրությունը փոխվում է: Ազատ դրամական միջոցներ ունեցողները հանգամանքների բերումով դառնում են ժամանակավոր պահանջ ներկայացնողներ: Օրինակ՝ պատրաստի արտադրանքի իրացումից հասույթը ստացվել է, բայց ձեռնարկությունը դեռևս կարիք չունի նյութական արժեքների ձեռքբերման, աշխատավարձ վճարելու, որոշ հարկեր մարելու և հատկացումներ կատարելու: Կարճատև ժամանակ անց հնարավոր է, որ նշված պարտավորությունները մարելու անհրաժեշտություն առաջանա, իսկ ազատ դրամական միջոցները չբավարարեն, կարիք առաջանա ներգրավելու լրացուցիչ դրամական միջոցներ: Այս երևույթը շարունակական կրկնվող է, որի հետևանքով հասարակության մասշտաբով գոյանում է դրամական միջոցների ժամանակավորապես ազատ որոշակի գումար և դրա դիմաց համապատասխան պահանջ՝ ձևավորելով վարկի առաջարկ ու պահանջարկ:

Բնականաբար, ձեռնարկությունները, կազմակերպությունները, քաղաքացիները այդ գումարներն առաջարկում են այլ գործարարների, որոնք վարկավորման միջոցով մտցնում են շրջանառության մեջ՝ հետապնդելով շահույթի ստացման նպատակ:

Ժամանակավորապես ազատ միջոցների հավաքագրման և շրջանառության մեջ դնելու գործընթացն առաջացնում է տարբեր բնույթի փոխատվական հարաբերություններ՝ պահանջ դնելով համապատասխան միջնորդ կազմակերպությունների ստեղծման: Պատմականորեն դրանցում գլխավոր դերակատարությունը ստանձնել են բանկերն ու պետությունը: Այստեղից էլ վարկը հանդես է գալիս տարբեր ձևերով, որոնցից հիմնականները հետևյալն են՝ առևտրային, բանկային, սպառողական և պետական:

Առևտրային վարկը գործում է արտադրական ու առևտրային կազմակերպությունների միջև և միմյանց տրվում է վաճառված ապրանքների դիմաց վճարումը հետաձգելու ճանապարհով: Վարկի այս ձևի օբյեկտը վերարտադրության գործընթացի մեջ գտնվող ապրանքային կապիտալն է, այն դեպքում, երբ բանկային վարկն ունի դրամական ձև, իսկ օբյեկտը վերարտադրության ընթացքում ժամանակավորապես ազատված դրամական փոխատվական կապիտալն է: Առևտրային վարկի պահանջարկն ու առաջարկը անմիջապես կախվածության մեջ են արտադրության և ապրանքաշրջանառության ծավալների փոփոխությունից: Առևտրային վարկը մեծ դեր է կատարում ապրանքների իրացումը արագացնելու և կապիտալի շրջապտույտը խթանելու գործում: Այս վարկի գործողության արդյունքում տեղի է ունենում կապիտալի ժամանակավոր վերաբաշխում գործող ձեռնարկատերերի միջև. այն ավելանում է փոխառուի, պակասում՝ վարկավորողի մոտ: Այս առումով բանկային վարկը սահմանափակումներ չունի, գործող կապիտալիստների միջև կապիտալի վերաբաշխում չի կատարվում, գործողության շրջանակները շատ լայն են. բանկերում կենտրոնացված ազատ դրամական կապիտալը ազատորեն տեղափոխվում է արտադրության ճյուղերի և տնտեսության ոլորտների միջև:

Առևտրային ու բանկային վարկերին զուգահեռ գործում են նաև սպառողական ու պետական վարկերը: Սպառողական վարկերը տրվում են ոչ միայն ապրանք արտադրող և առևտրային կազմակերպությունների, այլև բնակչության մյուս խավերի կողմից անձնական օգտագործման ապրանքներ գնելու պահին, հատկապես երկարատև օգտագործման քանկարժեք կուլտուր-կենցաղային օգտագործման և տնտե-

սական գործածության ապրանքների առք ու վաճառքի դեպքերում, երբ արժեքի վճարումը հետ է ընկնում գործարքի կատարումից, ինչը առաջարկը վճարունակ պահանջարկին գերազանցելու հետևանքն է: Այս վարկի ձևը նպաստում է ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնմանը:

Պետական վարկը վարկի հատուկ ձև է, երբ որպես փոխառու է հանդես գալիս պետությունը, իսկ ինքը՝ վարկը, ընդունում է պետական փոխառությունների թողարկման տեսք: Սովորաբար պետական վարկը ծառայում է բյուջեի դեֆիցիտի ծածկման նպատակներին: Ջուզահեռաբար վարկային հարաբերություններ կարող են առաջանալ ոչ միայն երկրների ներսում, այլև նրանց միջև՝ միջազգային վարկերի ձևով: Գործնականում կոնկրետ պետության կամ միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների միջոցով մի երկիր վարկավորում է մյուսին, մեծամասամբ դրամական ձևով (արժույթով):

Պետական վարկը՝ որպես վարկի առանձնահատուկ ձև, իրենից ներկայացնում է մի կողմից պետության՝ ի դեմս նրա իշխանության ու կառավարման մարմինների, և մյուս կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որտեղ պետությունը միաժամանակ կարող է հանդիսանալ փոխառու, փոխատու և երաշխավոր: Վարկային հարաբերությունների դասական ձևն այն է, երբ պետությունը հանդես է գալիս միջոցների փոխառուի դերում: Երաշխիքի դեր կատարելու պետության պարտավորությունները, ի տարբերություն առաջին երկուսի, չեն հանգեցնում կենտրոնացված դրամական ֆոնդերի փոփոխության:

Որպես դրամական հարաբերություն՝ պետական վարկը գտնվում է դրամական երկու տիպի հարաբերությունների՝ ֆինանսների ու վարկի միջև, նրան հատուկ են այդ երկուսի հատկանիշները: Որպես ֆինանսական համակարգի օղակ՝ վարկի այդ ձևը սպասարկում է պետության դրամական կենտրոնացված ֆոնդերի ձևավորմանն ու օգտագործմանը: Որպես վարկի ձև՝ տարբեր է ֆինանսական դասական հասկացություններից, օրինակ՝ հարկերից՝ կամավորական բնույթը (թեև պատմությանը հայտնի են դեպքեր ու տնտեսակարգեր, որտեղ այդ պահանջը չի պահպանվել), շարժման առաջընթաց ու հետընթաց ուղղությունները և այլն:

Պետական վարկին հատուկ են ֆինանսների երկու ֆունկցիաները՝ բաշխման և վերահսկողության:

Ինչպես նշվեց, պետական վարկը հիմնականում ծառայում է պետական բյուջեի պակասուրդը ծածկելու և պետական հատուկ նշանակության պահանջների բավարարման նպատակներին: Այդպես է նաև Հայաստանի Հանրապետությունում:

Դեֆիցիտը և հավելուրդը բյուջեի եկամուտների և ծախսերի փոխհարաբերության չափանիշներն են: Կառավարության ծախսերը կատարելու համար օգտագործվող միջոցները՝ պետական բյուջեի եկամուտները, հիմնականում գոյանում են հարկերից: Անցած տասը տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած պարտավորությունները եղել են եկամուտներից ավելի, ինչը կառավարությանը ստիպել է ռեսուրսներ փոխառել պարտավորությունները կատարելու համար, որի արդյունքում գոյացել է պետական պարտքը:

¹ Տվյալները բերված են ՀՀ պետական բյուջեի համառոտ ուղեցույցներից, Եր–ան, 2003–2006թ.:

Պետական պարտքն իրենից ներկայացնում է կառավարության և կենտրոնական բանկի պարտավորությունների ընդհանուր գումարը, ներառյալ տրված երաշխիքների, տարբեր օրենսդրական ակտերի կիրառման և պայմանագրերի հետ կապված պարտավորությունները:

Պետական պարտքն ունի ներքին ու արտաքին կողմ: Ներքին պարտքի գոյացումը կապված է պետական պարտատոմսերի, հատկապես կարճաժամկետ (ՊԿՊ), թողարկման ու տեղաբաշխման հետ: Հանրապետության պետական ռազմավարությունը նախատեսում է այսուհետև շարունակել ներքին պետական պարտքի նվազեցման, ժամկետայնության երկարացման, պետական պարտատոմսերի շուկայի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդման և թափանցիկության ապահովման կուրսը:

2006թ. սկզբին հանրապետության ներքին պետական պարտքի ծավալը կազմել է 51.3 մլրդ դրամ (ներառյալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը բացված վարկային գծի դիմաց տրամադրված արժեթղթերը): Նախորդ տարվա նույն ժամկետին այդ պարտքը եղել է 46.4 մլրդ դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2006թ. սկզբի դրությամբ եղել է 1100 օր, նախորդ ժամկետում՝ 753 օր, միջին եկամտաբերությունը՝ համապատասխանաբար 7.3 և 9%: 2006 թ. համար նախատեսվել է բյուջեով 6.2 մլրդ դրամի սպասարկման ծախս և 7 մլրդ դրամի դեֆիցիտի ֆինանսավորում: 2006 թ. վերջին ներքին պետական պարտքի ծավալը կհասնի մոտ 58.0 մլրդ դրամի:

Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները և տրամադրման արտաքին երաշխիքները) 2006 թ. սկզբին կազմել է 1099.2 մլն ԱՄՆ դոլար: 2006 թ. ընթացքում արտաքին պետական պարտքի (ԱՊՊ) գծով նախատեսվում է ստանալ 107.9 մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ, նախատեսվում է ԱՊՊ գծով սպասարկել 50.2 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և մոտ 10.9 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճար: Ելնելով դրանից՝ 2006 թ. վերջին ՀՀ ԱՊՊ-ն կկազմի 1157.0 մլն ԱՄՆ դոլար: 2007–2008 թթ. նախատեսվում է ստանալ համապատասխանաբար 125.6 և 172.3 մլն ԱՄՆ դոլար և միաժամանակ կատարել 32.3 և 38.9՝ մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում:

Արտաքին վարկային պարտավորությունների տարեկան միջին կշռված տոկոսադրույքը 2005թ. կազմել է 0.9%, երբ կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում այն հասնում է մոտ 10%–ի: Հիմնական պատճառը պարտավորությունների մոտ 94%–ը արտոնյալ պայմաններով լինելն է: Պարտքի սպասարկման բոլոր ցուցանիշները գտնվում են նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

Վարկի, մասնավորապես բանկային կազմակերպման ու արդյունավետ իրականացման նպատակով յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններին համապատասխան ձևավորում է կոնկրետ բանկային համակարգ և դրա գործունեության օրենսդրական դաշտ ու խաղի կանոններ:

Բանկերի, բանկային վարկի ու բանկային գործունեությունը լուսաբանվում են հաջորդ երեք գլուխներում:

Բանկային համակարգը վարկային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքի առաջատար օղակն է: Համակարգի գլխավոր խնդիրն է կուտակված

կապիտալը ուղղել այն ոլորտները, որտեղ դրանց նկատմամբ պահանջ կա: Բանկային համակարգի միջոցով է գործում կապիտալը տնտեսության առանձին ճյուղերի ու ոլորտների միջև բաշխելու շուկայական մեխանիզմը, և տեղի ունենում շահույթի նորմայի համահարթումը:

Բանկային համակարգը տվյալ երկրում գործող բանկերի ամբողջությունն է: Այդ համակարգում իր խնդիրներով ու գործառնություններով առաջնային տեղը գրավում է կենտրոնական բանկը, քանի որ նա է որոշում երկրի դրամավարկային քաղաքականությունը: Առևտրային բանկերը փաստորեն անկախ են, բայց նրանք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգում և ենթարկվում են ինչպես օրենսդրությամբ նախատեսված, այնպես էլ ԿԲ կողմից սահմանված կարգավորման և վերահսկման կանոններին:

ՀՀ կենտրոնական բանկը ստեղծվել է ԽՍՀՄ ԿԲ–ի հայկական գրասենյակի բազայի վրա և իր հիմնական գործառնությունները ձեռք է բերել 1993 թ. ՀՀ արժույթը՝ դրամը մտցնելուց հետո: Ինչպես բոլոր կենտրոնական բանկերը, այնպես էլ ՀՀ ԿԲ–ն պետական է, բայց ունի տնտեսական ինքուրույնություն:

17.2. ԲԱՆԿԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄԸ

«Բանկ» և «բանկային գործ» հասկացություններն իրենց լիարժեք դրսևորումն են ստանում տնտեսավարման շուկայական մեթոդների պայմաններում, որին բնորոշ են սեփականության տարբեր ձևերի, ֆինանսական շուկայի բազմազան կառույցների, և, ընդհանուր առմամբ, կայացած ֆինանսական շուկայի, տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության և պատասխանատվության սկզբունքների, կառավարման ապակենտրոնացված համակարգի և շուկայական տնտեսությանը բնորոշ այլ գործոնների առկայությունը:

Բանկը կարելի է դիտարկել որպես ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույց, որին բնորոշ է տնտեսության մեջ ձևավորված ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքումն ու դրանց հետագա տեղաբաշխումը վարկերում, արժեթղթերում և այլն: Այլ կերպ ասած՝ բանկերը կատարում են ֆինանսական միջնորդի դեր դրամական միջոցների ժամանակավորապես ավելցուկ և դրանց նկատմամբ ժամանակավոր պահանջ ունեցող անձանց միջև: Դրանով նրանք նպաստում են դրամաշրջանառության գործընթացի կազմակերպմանը, տնտեսության տարբեր ճյուղերին և ոլորտներին վարկային ռեսուրսներով ապահովմանը, ինչն էլ վերջին հաշվով անդրադառնում է տնտեսության արդյունավետության, և, հետևաբար, բնակչության կենսամակարդակի վրա:

Բանկերը մատուցում են բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց (օրինակ՝ ֆինանսական խորհրդատվություն, երաշխիքների տրամադրում, ակրեդիտիվների բացում և սպասարկում և այլն): Ընդ որում՝ առևտրային բանկերի միջև մրցակցության անընդհատ խորացումը՝ մի կողմից, ոչ բանկային ֆինանսական կառույցների աստիճանական ձևավորումն ու զարգացումը՝ մյուս կողմից, ստիպում են բանկերին անընդհատ մշակել և ներդնել նոր՝ ժամանակակից ֆինանսական ծառայություններ: Ֆինանսական ծառայությունների տեսականու

անընդհատ ընդլայնումը բանկային և ոչ բանկային հաստատությունների կողմից տանում է դեպի դրանց գործունեության ոլորտների հստակ սահմանագծերի վերացման: Նման պայմաններում տարբեր ֆինանսական կառույցների գործունեության շրջանակների, գործառնությունների և իրավասությունների կարգավորումը պահանջում է համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում, որը հնարավորություն կտա սահմանել յուրաքանչյուր կառույցի տեղն ու դերը ֆինանսական շուկայում, նրա իրավասություններն ու գործառնությունները, ինչպես նաև յուրաքանչյուր տիպի կառույցի համար՝ նրա գործունեության կարգավորման և վերահսկման մեխանիզմը:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի գործունեությունը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (ընդունված 30.06.1996թ.): Տվյալ օրենքը սահմանում է ՀՀ տարածքում ձևավորվող և գործող բանկերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարեցման, բանկային գործունեության վերահսկողության կարգն ու պայմանները:

Համաձայն նշված օրենքի՝ բանկն իրավաբանական անձ է, որը սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնում է բանկային գործունեություն (հոդված 4, կետ 1): Այնուհետև օրենքը մեկնաբանում է «բանկային գործունեություն» հասկացությունը: «Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով» (հոդված 4, կետ 2):

Այստեղ դրսևորվում է առևտրային բանկերի հիմնական տարբերությունը ֆինանսական մյուս կառույցներից. բանկն ավանդառու կազմակերպություն է: Նրան և միայն նրան է վերապահված հաճախորդներից ավանդներ ընդունելու (կամ նման առաջարկությամբ հանդես գալու) իրավունքը: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ առևտրային բանկերը տեղաբաշխում են ավանդներն իրենց անունից և իրենց ռիսկով: Այսինքն՝ ավանդը վերադարձնելու պատասխանատվությունն ու ռիսկը լիովին կրում է բանկը:

Համաձայն օրենքի 34-րդ հոդվածի՝ ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը սահմանված կարգով կառող են իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

- ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,
- տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),
- բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,
- մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,
- թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ,
- իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կա-

ռավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային կամ լիազորագրային կառավարում),

- գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ,
- գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, արժեթղթեր և այլ արժեքներ,
- մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,
- ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն և այլն: Բանկերը չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն (եթե օրենքով այլ բան սահմանված չէ):

Առևտրային բանկերի դասակարգումը կատարվում է՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

1. **Ըստ կազմակերպարավական ձևի** բանկերը լինում են բաժնետիրական, փայտիրական և կոոպերատիվ: Բաժնետիրական են հանդիսանում բաժնետիրական ընկերությունների ձևով ստեղծված բանկերը, որոնց կանոնադրական կապիտալը բաժանված է նախապես սահմանված քանակով և անվանական արժեքով բաժնետոմսերի: Փայտիրական են հանդիսանում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ձևով ստեղծված բանկերը, որոնց կանոնադրական կապիտալը բաժանված է հիմնադիր փաստաթղթերով նախապես որոշված փայերի: Կոոպերատիվ բանկը կոլեկտիվ սեփականության վրա հիմնված բանկ է, որի յուրաքանչյուր անդամ ունի 1 ծայրի իրավունք՝ անկախ բանկի կանոնադրական կապիտալի մեջ նրա ունեցած մասնաբաժնից:
2. **Ըստ ստեղծման օրենսդրական հիմքերի** բանկերը լինում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ: Ռեզիդենտ են համարվում ՀՀ օրենսդրությամբ համապատասխան ստեղծված բանկերը, ինչպես նաև նրանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ տարածքում կամ նրա սահմաններից դուրս: Ոչ ռեզիդենտ են համարվում արտասահմանյան պետությունների օրենսդրությամբ համապատասխան ստեղծված և ՀՀ սահմաններից դուրս գտնվող բանկերը, ինչպես նաև նրանց մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, այդ թվում՝ ՀՀ տարածքում գտնվողները:
3. **Ըստ կանոնադրական կապիտալի պատկանելության**՝ ռեզիդենտ բանկերը կարող են լինել.
 - հայրենական բանկեր, որոնց կանոնադրական կապիտալը ձևավորվում է միայն ՀՀ ռեզիդենտների միջոցների հաշվին,
 - օտարերկրյա բանկեր, որոնց կանոնադրական կապիտալը ձևավորվում է միայն ոչ ռեզիդենտների միջոցների հաշվին,
 - համատեղ բանկեր:
4. **Ըստ գործունեության ոլորտների**՝ բանկերը լինում են մասնագիտացված և ունիվերսալ: Մասնագիտացման հիմքում կարող են ընկած լինել հետևյալ չափանիշները:

- Ֆունկցիոնալ մասնագիտացում, երբ բանկերի գործունեությունը կողմնորոշված է դեպի իր հաճախորդներին հիմնականում մասնագիտացված ծառայությունների մատուցումը: Ըստ այս չափանիշի՝ կարող են տարբերվել իննովացիոն, ներդրումային, խնայողական, հիփոթեքային և այլ բանկեր:
- Ճյուղային մասնագիտացում, երբ բանկերը սպասարկում են հիմնականում տնտեսության որևէ ճյուղը (գյուղատնտեսություն, շինարարություն, արտաքին առևտուր և այլն):
- Ըստ հաճախորդների մասնագիտացում, երբ բանկը սպասարկում է հիմնականում որոշակի կարգի հաճախորդների (ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց և այլն):
- Մունիցիպալ բանկեր, որոնց գործունեությունը սահմանափակվում է հիմնականում որոշակի տարածաշրջանի սպասարկմամբ:

Ունիվերսալ համարվում են այն բանկերը, որոնք իրականացնում են օրենսդրությանը համապատասխանող բոլոր բանկային գործառնությունները, և նրանց գործունեության մեջ չկա հստակ ընդգծված որևէ բնագավառ կամ նախապատվություն:

17.3. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ առևտրային բանկերի գործունեության պետական կարգավորումն ու վերահսկումը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը: Կենտրոնական բանկի իրավական վիճակը, իրավասությունները, հիմնական և մյուս խնդիրները, կառուցվածքը և կառավարումը, տարբեր մարմինների հետ (պետական մարմիններ, առևտրային բանկեր և այլն) նրա փոխհարաբերությունները և ԿԲ–ի գործունեությանն առնչվող այլ հիմնահարցեր սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 30.06.1996թ. (այսուհետև՝ Օրենք):

Համաձայն Օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (հոդված 1, կետ 1): Ուշագրավ է այն հանգամանքը, որ տարբեր, այդ թվում և արդյունաբերապես զարգացած երկրներում, կենտրոնական բանկերի կազմակերպարավական հիմքերը միատեսակ չեն: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ֆրանսիայում, Դանիայում և Նիդեռլանդներում կենտրոնական բանկի կապիտալն ամբողջությամբ պատկանում է պետությանը, ԱՄՆ–ում՝ Դաշնային պահուստի համակարգի անդամ բանկերին, Իտալիայում՝ բանկերին և ապահովագրական ընկերություններին, Ճապոնիայում՝ պետությանը (55%) և մասնավոր անձանց (45%):

Իր խնդիրներն իրագործելու նպատակով կենտրոնական բանկը կարող է իր անունից՝

- կնքել պայմանագրեր, ձեռք բերել իրավունքներ, ստանձնել պարտավորություններ, այդ թվում՝ վերցնել վարկեր.
- հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող.
- Օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ:

Իր խնդիրներն իրականացնելու ընթացքում կենտրոնական բանկն անկախ է ՀՀ

պետական մարմիններից: Կենտրոնական բանկը և կառավարությունը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե այդպիսիք չեն ստանձնել:

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է (հոդված 4, կետ 1): Այդ խնդրի իրագործումը պայմանավորված է արդյունավետ դրամավարկային քաղաքականության մշակմամբ և իրագործմամբ: Ուստի կենտրոնական բանկը մշակում, ներկայացնում է հաստատման և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը: Սակայն միայն դրամավարկային քաղաքականության իրագործումը բավարար չէ տնտեսության մեջ կայուն գների ապահովման համար: Դրա համար անհրաժեշտ է նաև տնտեսության աշխուժացում, արդյունավետ հարկաբյուջետային, ներդրումային քաղաքականությունների մշակում և իրագործում:

Բացի իր հիմնական խնդրից, կենտրոնական բանկն ունի նաև այլ խնդիրներ: Դրանց են դասվում.

- ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը,
- ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը (հոդված 5, կետ 1):

Եթե կենտրոնական բանկի խնդիրները հակասում են նրա հիմնական խնդրին, ապա առաջնությունը տրվում է հիմնական խնդրի իրագործմանը:

Կենտրոնական բանկի ողջ գործունեությունն ուղղված է իր հիմնական և մյուս խնդիրների իրագործմանը: Դրանից ելնելով՝ կենտրոնական բանկի գործունեությունը դրսևորվում է հետևյալ հիմնական գործառնություններում.

1. Կենտրոնական բանկն իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը: Այդ գործունեությունը կատարվում է անվճար, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Կենտրոնական բանկը հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն:

Որպես կառավարության ֆինանսական գործակալի՝ ԿԲ-ի իրավասության մեջ մտնում է կառավարության լիազորված մարմնի կողմից թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի բաշխման, գրանցման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հիմնական գումարի, տոկոսների կամ սահմանված այլ վճարումների իրականացման գործառնությունները: ԿԲ-ն հանդիսանում է կառավարության լիազորած մարմնի թողարկած պարտատոմսերի կենտրոնական պահառու: ԿԲ-ն կառավարության ֆինանսական գործակալն է նաև պետական բյուջեի և ներքին ու արտաքին պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունների, ինչպես նաև վճարային և ԿԲ խնդիրներին չհակասող այլ գործառնությունների գծով:

ԿԲ-ի կողմից կառավարությանը մատուցվող ֆինանսական խորհրդատվությունն այն է, որ պետական բյուջեի նախագծի կազմման գործընթացում կենտրոնական բանկն իր դիրքորոշումն է ներկայացնում այդ փաստաթղթին առնչվող հարցերի վերաբերյալ: Մասնավորապես՝ դա վերաբերում է նախատեսվող ներքին և արտաքին պետական փոխառություններին, դրանց աղբյուրներին, ծավալներին, ժամկետներին և պայմաններին, փոխառու միջոցների նպատակներին և օգտագործման ուղ-

ղություններին: ԿԲ–ն պաշտոնական եզրակացություն է ներկայացնում կառավարությանը պետական բյուջեի նախագծի վերաբերյալ:

3. Կենտրոնական բանկը լիցենզավորում է բանկերը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը:

Առևտրային բանկերին բանկային գործունեության լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև այդ լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին:

Կենտրոնական բանկը սահմանում է բանկերի գործունեության հիմնական և այլ տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը, հնարավոր վնասները ծածկելու համար միջոցների պահուստավորման կարգը, բանկային կապիտալի հաշվարկման կանոնները: ԿԲ–ն սահմանում է բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ինչպես նաև դրանց կազմման և ներկայացման կարգը: Բանկերի գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է կենտրոնական բանկին: Վերջինս օրենքով նախատեսված դեպքերում կարող է բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել:

4. Կենտրոնական բանկը վարկեր է տրամադրում բանկերին՝ որպես վերջին ատյանի վարկատու: Վարկերը տրամադրվում են ԿԲ–ի կողմից սահմանված կարգով, վեց ամիսը չգերազանցող ժամկետով: Բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է սահմանվել մինչև մեկ տարի: Վերջին ատյանի վարկատուի կարգավիճակով հանդես գալու գործառույթը ենթադրում է, որ ոչ սնանկ, սակայն կարճաժամկետ իրացվելիության խնդիրներ ունեցող առևտրային բանկերը կարող են ստանալ համապատասխան ռեսուրսներ ԿԲ–ից՝ շուկայականից ավելի խիստ պայմաններով: Միևնույն ժամանակ, ԿԲ–ն հնարավորություն է տալիս առևտրային բանկերին մշտապես ներդնել ավելցուկային միջոցները ԿԲ–ում՝ ֆինանսական շուկայի ամենացածր տոկոսադրույքներով, եթե բանկերն այդ միջոցների վերաբերյալ այլ որոշում չեն կայացրել: Բացի բաց շուկայական գործառնություններից, ՀՀ ԿԲ–ն վերջին ատյանի վարկատուի իր գործառույթը իրականացնում է նաև շուկայում՝ հանդես գալով որպես ամենակարճ ժամկետայնությամբ միջոցներ տրամադրող և ներգրավող: Այս գործառնությունների ընթացքում ԿԲ–ն հանդես է գալիս որպես ֆինանսական շուկայի մասնակիցներից մեկը և իր գործողություններով չի խոչընդոտում ազատ մրցակցային հարաբերությունների ձևավորմանը:

5. Կենտրոնական բանկը կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը:

6. Կենտրոնական բանկը տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները:

7. Կենտրոնական բանկն իրականացնում է դրամավարկային և բանկային վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը:

Դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Համաձայն Օրենքի 6–րդ հոդվածի՝ յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեն հաստատվելուց հետո 10 օրվա ընթացքում, ԿԲ–ն Ազգային ժողով է ներկայացնում և օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակում է առաջիկա տարվա դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Այն իր մեջ ներառում է.

- տնտեսական իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումը՝ կապված ՀՀ սոցիալ–տնտեսական զարգացման և պետական բյուջեի ցուցանիշների հետ.
 - շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի և վարկային ներդրումների առավելագույն սահմանաքանակը.
 - տոկոսադրույքների և փոխարժեքի մակարդակը.
 - դրամավարկային կարգավորման մեթոդները.
 - Օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված այլ անհրաժեշտ դրույթներ:
- Դրամավարկային քաղաքականության միջոցով դրամական զանգվածի, հետևաբար նաև գների մակարդակը կենտրոնական բանկը կարգավորում և կառավարում է դրամավարկային քաղաքականության հետևյալ գործիքների կիրառմամբ՝
- բաց շուկայական գործառնություններ,
 - պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխություն,
 - հաշվարկային փոխարժեքի փոփոխություն:

Բաց շուկայական գործառնությունները ենթադրում են կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկայում պետական և այլ հուսալի արժեթղթերի առք ու վաճառք, ինչպես նաև ԿԲ–ի կողմից կարծաժամկետ (մինչև մեկ տարի մարման ժամկետով) արժեթղթերի թողարկման հնարավորություն՝ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով:

Պարտադիր պահուստավորման նորմատիվի միջոցով կենտրոնական բանկը կարգավորում է դրամի նկատմամբ առաջարկը, ինչպես նաև բանկերի վարկավորման հնարավորությունները: Այսպես՝ նորմատիվի մեծացումը փոքրացնում է դրամի նկատմամբ առաջարկը և վարկային ռեսուրսների տրամադրման հնարավորությունները և հակառակը:

Կենտրոնական բանկի ավանդային և վարկային գործառնությունները: Ինչպես և առևտրային բանկերը, կենտրոնական բանկը ևս ընդունում է ավանդներ և ստանում է վարկեր:

Կենտրոնական բանկը կարող է ՀՀ դրամով կամ արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ավանդներ ընդունել կամ նյութական արժեքներ ի պահ ընդունել միայն ՀՀ պետական մարմիններից և բանկերից, օտարերկրյա պետությունների կենտրոնական և այլ բանկերից, միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից:

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելու նպատակով կարող է միջազգային ֆինանսական կազմակերպություններից, այլ պետությունների կառավարություններից, կենտրոնական և առաջնակարգ այլ բանկերից ստանալ վարկեր (հոդված 9, կետ 1, 2):

Կենտրոնական բանկի կառավարումը: Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը կենտրոնական բանկի նախագահն է: ԿԲ նախագահը պատասխանատու է ԿԲ խնդիրների իրագործման համար:

ԿԲ նախագահը և նրա տեղակալը նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ ՀՀ նախագահի առաջարկությամբ՝ յոթ տարի ժամկետով:

¹ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 27.10.2001թ., հոդվ. 4:

² Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 21.11.2001 թ., հոդվ. 1, երրորդ պարբերություն:

Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը ԿԲ խորհուրդն է: ԿԲ խորհուրդը կազմված է ԿԲ նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: ԿԲ խորհրդի անդամներին նշանակում է ՀՀ նախագահը՝ հինգ տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը ԿԲ հատուկ կառուցվածքային ստորաբաժանում է, որը բաղկացած է հինգ անդամից՝ ներառյալ գլխավոր վերստուգիչը: Գլխավոր վերստուգիչին և վերստուգիչ խմբի անդամներին ԿԲ նախագահի առաջարկով նշանակում և աշխատանքից ազատում է ԿԲ խորհուրդը: ԿԲ վերստուգիչ խումբը հաշվետու է ԿԲ խորհրդին:

Արժույթային կարգավորում և վերահսկողություն: Համաձայն Օրենքի 48–րդ հոդվածի՝ Կենտրոնական բանկը հանդիսանում է ՀՀ արժույթային գործակալը և լիազորված է իրականացնելու արժույթային քաղաքականություն:

Կենտրոնական բանկը սահմանում է արտարժույթային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:

Կենտրոնական բանկն ազատված է բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և մաքսային վճարումներից: Կենտրոնական բանկի նկատմամբ սնանկացման վարույթ հարուցվել չի կարող:

17.4. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱՎԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է բանկային գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը: Առևտրային բանկերն իրականացնում են տնտեսության մեջ տեղ գտնող վճարումները, հավաքագրում են ազգաբնակչության խնայողությունները, տնտեսության ազատ դրամական միջոցները և դրանք կրկին ուղղում են ընդլայնված վերարտադրության նպատակներին: Լիցենզավորման հատուկ ընթացակարգի գործողության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև բանկային գործառնություններում առկա ռիսկերով և այն ազդեցությամբ, որ դրանք ունեն տնտեսության մեջ վճարունակ պահանջարկի մակարդակի վրա: Ուստի կազմակերպությունները, որոնք իրականացնում են բանկային գործունեություն, պետք է կարգավորվեն և վերահսկվեն կենտրոնական բանկի կողմից, ստանան բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և գրանցվեն վերջինիս կողմից:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկային, ներդրումային, ապահովագրական և այլ գործունեության բնագավառներում բաժնե-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 30.06.1996թ., հոդվ. 20:
² Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան որոշումները 21.02.1995թ–ից մինչ– 19.02.2002թ. ընկած ժամանակահատվածում ներկայացված են Հավելված 1–ում:
³ ՀՀ կենտրոնական բանկի 16.10.2002թ. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրի ներկայացման» կար ղ, «Հայաստանի Հանրապետության տարածքում որժող բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձ–ը» հաստատելու մասին N 316–Ն որոշում:

տիրական ընկերությունների ստեղծման կարգի և իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով և իրավական ակտերով¹: Իսկ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նշում է, որ բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ստեղծման և գործունեության վերակազմակերպման ու լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով²:

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունների վերաբերյալ դրույթներով¹, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1–ը² (Կանոնակարգ 1):

Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելու նախապայման է բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը: Ըստ Կանոնակարգ 1–ի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիայի տրամադրման փուլերն են.

- լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,
- բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը,
- բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանությունը: Առևտրային բանկի ստեղծման նախաձեռնությունը պատկանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնք շահագրգռված են բանկի հիմնադրումով և պատրաստ են մասնակցություն ունենալ բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանության համար նախաձեռնող անձանց կողմից ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում համապատասխան միջնորդագիրը, ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը, բանկի գործունեության տնտեսական ծրագիրը, բանկի մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր:

Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացմանը հաջորդող առնվազն երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, տնտեսական գործունեությունը հիմնավորող (նկարագրող) փաստաթուղթ է: Տնտեսական ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ ընդհանուր դրույթներ, բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը, ֆինանսական գործառնությունները և գործունեության հիմնական ուղղությունները, ակտիվների ու պասիվների մոտավոր կազմը և կառուցվածքը, եկամուտների և ծախսերի պլանային հաշվարկն առաջին երեք ֆինանսական տարիներին:

Ստեղծման ժամանակ ներկայացվող բանկի գործունեության տնտեսական ծրագրի և հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրի³ միջև տարբերությունը բխում է այն հանգամանքից, որ առաջին դեպքում նախաձեռնող անձինք ներկայացնում են բանկային ծառայությունների շուկա մուտք գործելու մասնագիտական պատրաստակամության մասին, մինչդեռ գործող բանկերը ներկայացնում են

հաջորդ ժամանակաշրջանում բանկի զարգացման ծրագիր:

Նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո կենտրոնական բանկը նախնական հավանություն տալու համար քննում է դրանք և օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում կայացնում է որոշում: Նախատեսված փաստաթղթերը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվում են կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտի, եռօրյա (աշխատանքային) ժամկետում՝ իրավաբանական վարչության կողմից, ու տրվում են եզրակացություններ՝ ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունն օրենքներին և այլ իրավական ակտերին, տնտեսական ծրագիրը սահմանված ձևին համապատասխանելու մասին:

Տնտեսական ծրագիրը և բանկային վերահսկողության դեպարտամենտի և իրավաբանական վարչության եզրակացությունները քննարկվում են կենտրոնական բանկի վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովի եզրակացությունը ոչ ուշ, քան միջնորդագիրը ստանալու 25-րդ օրը ներկայացվում է կենտրոնական բանկի խորհրդի քննարկմանը:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել միջնորդագիրը, եթե ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը հակասում է օրենքներին, տնտեսական ծրագիրը չի համապատասխանում կենտրոնական բանկի հաստատած ձևին, կամ այն անիրատեսական է: Միջնորդագիրը կարող է մերժվել նաև, եթե, գործելով ծրագրին համապատասխան, բանկն ի վիճակի չի լինի բնականոն բանկային գործունեություն իրականացնել, քանի որ բանկը չունի արհեստավարժ գործադիր մարմին, առկա են ներդրումների ծագման ոչ օրինական լինելը հաստատող ապացույցներ, ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն:

Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը: Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը. գրացման դիմում, բանկի կամ օտարերկրյա բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը բանկի կամ մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու և բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ, ստեղծվող բանկի կամ մասնաճյուղի ղեկավարների կենսագրական տվյալները, բանկի կանոնադրությունը կամ օտարերկրյա բանկի կողմից հաստատված օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրությունը, ղեկավարների ցուցակը, գործադիր տնօրենի (վարչության նախագահի) և գլխավոր հաշվապահի վավերացված ստորագրությունների նմուշները, տեղեկանք բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ, հիմնադիր իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը, քաղվածք տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, իրավաբանական անձ մասնակցի հիմնադիր փաստաթղթերը, բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման փաստաթղթի պատճենը:

Կանոնակարգով նախատեսված ամբողջական և բավարար փաստաթղթերը ստանալու պահից օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ գրանցվում է բանկը կամ օտարերկրյա բանկի մասնա-

ծյուղը, կամ մերժվում է դրանց գրանցումը:

Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու դեպքում բանկը համարվում է գրանցված: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել գրանցման միջնորդագիրը, եթե ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, ներկայացվել են ոչ ամբողջական կամ ոչ բավարար փաստաթղթեր:

Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը գրանցվում է միայն կենտրոնական բանկում բացված համապատասխան հաշվում բանկերի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափով (50 մլն դրամ) միջոցների առկայության դեպքում: Ընդ որում, կուտակման հաշվի միջոցները համարվում են սառեցված և չեն կարող տիրապետվել, տնօրինվել և օգտագործվել մինչև կենտրոնական բանկում բանկի կանոնադրության գրանցումը կամ մերժումը:

Բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը: Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում բանկը պարտավոր է լիցենզիա ստանալու համար դիմել կենտրոնական բանկ: Դիմումը ստանալուց մեկամսյա ժամկետում գրանցված բանկին կենտրոնական բանկը տալիս է լիցենզիա, եթե բավարարվել են հստակ պայմաններ: Դրանք են. կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափի լրիվ համալրումը, բանկային գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը և դրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են կենտրոնական բանկի սահմանած պահանջներին և բանկի գործունեության տնտեսական ծրագրին, ստեղծվել են բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը, բանկի ղեկավարներն ունեն սահմանված կարգով ստացած որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականներ և անցել են կենտրոնական բանկի խորհրդի կամ վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովի նիստում հարցազրույց:

Բանկի, բանկի մասնաճյուղի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջներից է այն, որ դրանք պետք է ունենան սեփականության իրավունքով բանկին պատկանող կամ վարձակալությամբ վերցված առանձնացված տարածք: Տարածքի վարձակալության պայմանագիրը սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 5 տարի ժամկետով: Բացի այդ, բանկը, բանկի մասնաճյուղը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը պետք է ունենան հիմնական դրամապահոց՝ իրենց նախադրամապահոցով կանխիկ դրամի և արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության համար:

Կենտրոնական բանկը կարող է մերժել բանկին լիցենզիայի տրամադրումը, եթե բանկը գրանցվելուց հետո բանկի ղեկավարների կողմից իրականացվել են ապօրինի, վարկաբեկիչ գործողություններ, փոփոխվել են բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք կամ նրանց ֆինանսական դրությունը:

Բանկին լիցենզիայի տրամադրումը ենթադրում է, որ գրանցվել են նաև բանկի

կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցությունները և բանկի ղեկավարները:

Բանկային գործունեության լիցենզիան կենտրոնական բանկի կողմից բանկերին և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերին տրվող՝ բանկային գործունեություն իրականացնելու թույլտվությունը հավաստող փաստաթուղթ է: Այն տրվում է անժամկետ:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված վարկի անհրաժեշտությունը հասարակության մեջ:
2. Վարկի ի՞նչ ձևեր ու տեսակներ կան զարգացած երկրներում, դրանցից որո՞նք են գործում ՀՀ-ում և ի՞նչ մակարդակով:
3. Բնութագրել վարկի չորս հիմնական տեսակները՝ պետական, առևտրային, սպառողական ու բանկային:
4. Ի՞նչ է առևտրային վարկը, ինչպիսի՞ ուղղվածություն և գործիքներ ունի:
5. Ի՞նչ է նշանակում պետական վարկ: Ինչպե՞ս է կատարվում սպասարկումը. ցույց տալ դրա վիճակը ՀՀ-ում:
6. Ի՞նչ է նշանակում առևտրային բանկ, և ինչպե՞ս է կատարվում բանկերի դասակարգումը:
7. Որո՞նք են կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և խնդիրները:
8. Ի՞նչ ընթացակարգով են ձևավորվում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը:

ԳԼՈՒԽ 18

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՍԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, այնպես էլ առևտրային բանկերը, իրենց գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները հավաքագրում են պասիվային գործառնությունների միջոցով: Դրանց շարքին դասվում են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավումը, սեփական բաժնետոմսերի թողարկումը, կազմակերպությունների կողմից բանկում բանկային հաշիվների բացումը և այլն:

Բանկերի պասիվային գործառնությունները ստորաբաժանվում են երկու խմբի. գործառնություններ, որոնց արդյունքում ձևավորվում են բանկի սեփական միջոցները կամ կապիտալը, և գործառնություններ, որոնց արդյունքում ձևավորվում են բանկի ներգրավված միջոցները կամ պարտավորությունները: Ընդ որում, հանդիսանալով ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույց, որի հիմնական խնդիրը հաճախորդների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ներգրավումն է և դրանց հետագա տեղաբաշխումը, առևտրային բանկերի պասիվների կառուցվածքը էապես տարբերվում է այլ տնտեսավարող սուբյեկտների պասիվներից: Միջազգային ստանդարտներով ընդունված է համարել, որ սեփական միջոցները պետք է կազմեն բանկի ընդհանուր պասիվների 8–12%–ը: Եթե այս ցուցանիշը բանկում գերազանցում է 12%–ը, ուրեմն բանկը անարդյունավետ է գործում, իսկ եթե ցածր է 8%–ից, բանկը համարվում է խիստ ռիսկային և վտանգավոր:

Աղյուսակ 18.1.1.

ՀՀ առևտրային բանկերի պասիվները 2005թ. դրությամբ (հազ. դրամ)

Բանկի անվանումը	31.12.04	31.12.05	Տես. կշիռը համակարում (%)
1	2	3	4
HSBC (Էյչ–Էս Բի–Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	66.643.832	71.167.953	15.78
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	38.253.512	54.327.266	12.04
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	33.093.030	41.711.242	9.25
ՀԱՅԻՆԱՅՐԲԱՆԿ ՓԲԸ	39.670.454	41.450.947	9.19
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ	27.478.682	34.765.538	7.71
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	24.338.490	24.513.860	5.43
ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՆԲԱՆԿ ԿԲ	24.395.645	35.433.853	7.85
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	17.876.967	24.072.262	5.34
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	13.091.090	19.384.463	4.30
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	11.336.595	16.788.228	3.72

1	2	3	4
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	13.005.226	12.426.209	2.75
ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ	10.747.648	14.310.097	3.17
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	11.021.853	8.262.085	1.83
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	9.303.202	8.601.414	1.91
ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	6.346.971	6.766.143	1.50
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	5.914.505	9.461.160	2.10
ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ ՓԲԸ	5.862.072	7.208.479	1.60
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ	0	5.959.127	1.32
«ԻԹԲ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԷՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	4.970.346	5.241.598	1.16
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	5.316.063	3.970.842	0.88
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	1.328.682	5.290.382	1.17
ԸՆԴԱՄԵՆԸ	369.994.865	451.113.147	100.00

Բանկային ռեսուրսների ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը սկսենք սեփական ռեսուրսներից:

18.1.1. ԱՌԷՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ինչպես արդեն նշվեց, առևտրային բանկի ընդհանուր ռեսուրսների կազմում սեփական միջոցները զբաղեցնում են ընդամենը մոտ 1/10–ը:

Բանկային կապիտալը կատարում է 3 հիմնական գործառույթ՝ պաշտպանիչ, օպերատիվ և կարգավորող:

Կապիտալի պաշտպանիչ գործառույթը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Նախ՝ բանկը՝ որպես ֆինանսական շուկայի սուբյեկտ, իր եկամուտը ստանում է ռիսկային գործառնությունների իրականացման, բազմաբնույթ ռիսկերի համալիր կառավարման արդյունքում: Իսկ ռիսկերի առկայությունն իր հետ առաջ է բերում կորուստների առաջացման հավանականություն (ընդ որում՝ որքան բարձր է ռիսկը, այնքան մեծ է կորստի հավանականությունը): Եվ երկրորդ՝ առևտրային բանկերն իրենց գործունեությունն իրականացնում են հիմնականում ներգրավված միջոցների հաշվին: Այսինքն՝ միջոցների ճնշող մեծամասնությունը, որոնցով բանկը դիմում է ռիսկային գործառնությունների, պատկանում են ոչ թե բանկին, այլ բանկի հաճախորդներին: Նման պայմաններում բանկում պետք է ձևավորվի յուրատեսակ մի ֆոնդ, որի հաշվին փոխհատուցվեն բանկի ռիսկային գործառնությունների արդյունքում առաջացող հավանական կորուստները: Որպես այդպիսին հանդես է գալիս բանկի կապիտալը: Սակայն դա ամենևին էլ նշանակում, որ բանկի ողջ կապիտալն ուղղվում է վնասների ծածկմանը: Բանկը համարվում է «առողջ» այնքան ժամանակ, քանի դեռ չի ծախսվել նրա հիմնական կապիտալի 50%–ը և ավելին (հիմնական կապիտալի մեջ ներառվում են կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստը և չբաշխված շահույթը): Հակառակ դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ, և նրա նկատմամբ կիրառվում են համապատասխան ընթացակարգով սահմանված քայլեր:

Ի տարբերություն ոչ բանկային հաստատությունների՝ առևտրային բանկերում

կապիտալի օպերատիվ գործառույթը համարվում է երկրորդային: Այն իրենից ներկայացնում է միջոցների հատկացումը հողի, մեքենաների, սարքավորումների, այլ ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման նպատակով:

Բացի ֆինանսական գործառնությունների համար բավարար հիմք և բանկի հաճախորդների համար հուսալի երաշխիք հանդիսանալուց, բանկի սեփական միջոցները կատարում են նաև կարգավորող գործառույթ: Դա պայմանավորված է այն օրենքներով, կանոնակարգերով և այլ ենթաօրենսդրական ակտերով, որոնք հնարավորություն են տալիս պետական մարմիններին (մասնավորապես՝ կենտրոնական բանկին) վերահսկողություն սահմանել բանկային գործառնությունների, հատկապես դրանցում պարունակվող ռիսկերի մակարդակի նկատմամբ: Բանկային կապիտալի մեծությունն այն հիմնական չափորոշիչն է, որից ելնելով՝ կարգավորվում է ինչպես առանձին ակտիվային գործառնությունների (օրինակ՝ վարկավորման), այնպես էլ բոլոր ռիսկային գործառնությունների առավելագույն սահմանաչափը: Դա է վկայում նաև այն փաստը, որ բանկերի գործունեության գնահատման, ռեյտինգավորման համակարգերում կարևորագույն ցուցանիշների շարքին դասվում է կապիտալի համարժեքությունը (կապիտալի մեծությունը պետք է համարժեք լինի բանկի կողմից ստանձնված ռիսկերի մակարդակին): Դժվար չէ նկատել, որ կարգավորող գործառույթի հիմքում ընկած է նույն պաշտպանիչ գործառույթը:

Այժմ դիտարկենք բանկային կապիտալի կառուցվածքը՝ քննության առնելով այն ձևավորող տարրերն առանձին-առանձին:

Կանոնադրական կապիտալ: Հանդիսանում է բանկի, ինչպես նաև ցանկացած այլ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ելակետը: Կախված բանկի կազմակերպարավական տեսակից՝ այն կարող է դրսևորվել որպես բաժնետոմսերի իրացումից կամ բաժնեմասերի դիմաց կատարվող ներդրումից ձևավորված գումար: Այլ կերպ ասած՝ կանոնադրական կապիտալը ձևավորվում է բանկի մասնակիցների կողմից կատարվող ներդրումների, ընդ որում՝ բացառապես սեփական միջոցներով կատարվող ներդրումների հաշվին: Կանոնադրական կապիտալը չի կարող ձևավորվել ի հաշիվ բանկային վարկի: Կանոնադրական կապիտալի մեջ չեն կարող ընդգրկվել բանկի ներգրավված միջոցները, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ կազմակերպությունների դրամական միջոցները:

Բանկի կանոնադրական կապիտալը հայտարարվում է այն հիմնադրելիս և ամրագրվում նրա կանոնադրությամբ (հայտարարված կանոնադրական կապիտալ): Փաստացի համալրված կանոնադրական կապիտալը ձևավորվում է բանկի մասնակիցների ներդրումներից և հավասար է.

- ՍԴԸ կամ կոոպերատիվ բանկի մասնակիցների բաժնեմասերի դիմաց ներդրված գումարին,
- ԲԸ հանդիսացող բանկի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարին:

Բանկի կանոնադրական կապիտալն արտահայտվում է փողով: Արտարժույթով ներդրված միջոցները հաշվառվում են երկակի գնահատմամբ՝ ՀՀ դրամով և արտարժույթով, ներդրման օրվա ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքով: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և նոր ստեղծվող բանկերի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես ՀՀ դրամով: Մինչև 2005թ. հունիսի 28-ը բանկերի կանոնադրական կապիտալի արտարժույթով համալրված մասը վե-

րազնահատման ենթակա չէ:

Կանոնադրական կապիտալի մեջ ներդրված միջոցներին համամասնորեն՝ բանկի յուրաքանչյուր մասնակից ստանում է շահաբաժին: Շահույթի անբավարարության դեպքում արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինները վճարվում են գլխավոր պահուստի հաշվին:

Արգելվում է բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալից կատարել նվազեցումներ՝ շահաբաժիններ բաշխելու նպատակով:

Բանկը չի կարող իր բաժնետերերին շահաբաժիններ բաշխել, եթե դրանք բաշխելու պահին բանկի կրած կորուստները հավասար են կամ գերազանցում են այդ պահին բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

Բանկը չի կարող իր բաժնետոմսերը գեղչել, գնել, հատուցմանը կամ այլ կերպ դրանք ձեռք բերել, ինչպես նաև դրանք գրավ ընդունելով՝ վարկ տրամադրել:

ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանին համաձայն՝ կանոնադրական կապիտալը բաղկացած է հետևյալ ենթահոդվածներից.

- Անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսեր:
- Լրացուցիչ վճարված կապիտալ–արտոնյալ բաժնետոմսերի հավելավճարներ:
- Անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր:
- Լրացուցիչ վճարված կապիտալ–սովորական բաժնետոմսերի հավելավճարներ:
- Կանոնադրական հիմնադրամ կոոպերատիվ և ՍՊԸ հանդիսացող բանկերի համար:

Գլխավոր պահուստը ստեղծվում է բանկի տրամադրության տակ մնացած շահույթից՝ չնախատեսված ծախսերի փոխհատուցման, և շահույթի անբավարարության պայմաններում արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարման նպատակով: Օգտագործվում է՝ համաձայն ՀՀ ԿԲ և բանկի կանոնադրությամբ սահմանված կարգերի:

Վերազնահատման պահուստը բաղկացած է երեք ենթաբաժիններից.

- Հիմնական միջոցների (բացառությամբ շենքերի և շինությունների) վերազնահատման պահուստ: Այստեղ ընդգրկվում է հիմնական միջոցների (բացառությամբ շենքերի և շինությունների) պարբերաբար վերազնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Վերազնահատումը կատարվում է բանկի կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերազնահատման ժամանակ տվյալ խմբի բոլոր հիմնական միջոցները պետք է վերազնահատվեն:
- Հաշվեկշռի կոնսոլիդացիայի ընթացքում առաջացած արտարժույթային տարբերությունների պահուստ: Այստեղ ընդգրկվում է բանկի և նրա արտասահմանյան մասնաճյուղերի հաշվեկշիռների կոնսոլիդացիայի ընթացքում արտարժույթի փոխանակման արդյունքում առաջացած չիրացված շահույթը կամ վնասը:
- Շենքերի և շինությունների վերազնահատման պահուստ:

Եկամուտների պահուստներ: Այստեղ արտացոլվում է բանկի տրամադրության տակ մնացած չբաշխված շահույթը/վնասը: Բաղկացած է երկու ենթաբաժիններից.

- Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս: Այստեղ ընդգրկվում են ընթացիկ ֆինանսական տարվա զուտ շահույթը կամ վնասը, որը մնում է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժիններ վճարելուց հետո:
- Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի/վնասի կուտակում: Այստեղ ընդգրկվում են նախորդ ֆինանսական տարիների զուտ շահույթը կամ վնասը, որը մնացել է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժիններ վճարելուց հետո:

Այլ պահուստներ: Այստեղ ընդգրկվում է բանկի կողմից ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը կամ վնասը:

Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր: Բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելը անհրաժեշտ է տվյալ բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար. ընդ որում, բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից երկու ամսվա ընթացքում իրացնել դրանք (ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին», հոդված 37):

Աղյուսակ 18.1.1.1.

ՀՀ առևտրային բանկերի սեփական կապիտալը 31.12.2005թ. դրությամբ
(հազ. դրամ)

ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Սեփական կապիտալ	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վերա-նահատման պահուստ	Կուտակված շահույթ
HSBC (Էյջ-Էս Բի-Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	6.299.271	2.437.600	365.640	- 84.966	3.580.997
ԱՐԴՇԻՆԻՆԿԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	8.876.118	3.020.024	248.891	1.145.274	4.461.929
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	8.995.487	1.296.366	461.773	2.901.937	4.335.410
ՀԱՅԽՆԱՅՔԲԱՆԿ ՓԲԸ	8.747.957	7.526.235	138.596	340.683	742.443
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ	5.566.532	2.333.338	171.674	181.227	2.880.293
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	3.424.709	1.908.950	167.650	238.850	1.049.259
ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՆԲԱՆԿ ԿԲ	7.186.314	1.519.256	4.000.000	217.791	1.449.267
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	4.204.718	654.536	15.262	68.914	3.466.006
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	3.215.133	2.799.850	9.552	10.101	395.630
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	3.957.899	1.769.885	49.783	0	2.138.231
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	3.232.567	2.028.408	501.837	372.272	330.050
ԱՌԷԿՍԻՍԲԱՆԿ ՓԲԸ	2.910.779	2.497.247	5.828	168.336	239.368
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	2.908.777	3.560.143	14.846	430.718	-1.096.930
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	2.955.577	3.522.056	29.217	0	-595.696
ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	3.843.544	3.538.471	52.075	0	252.998
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	2.574.430	2.400.000	70.000	0	104.430
ԿԱՍԿՈՂ ԲԱՆԿ ՓԲԸ	4.568.424	5.270.000	0	0	-701.576
ԱՐՄԱԿԻՍԲԱՆԿ ՓԲԸ	2.924.811	3.000.000	0	-49.615	-25.574
«ԻԹԲ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	3.072.132	2.965.517	13.823	0	92.792
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	2.475.680	2.790.000	133.500	216.112	-663.932
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	3.040.952	3.400.000	0	0	-359.048
ԸՆԴԱՄԵՆԸ	94.981.811	60.297.882	6.449.947	6.157.634	22.076.347

Սեփական միջոցների չափը յուրաքանչյուր բանկի համար պայմանավորված է մի շարք գործոններով.

1. Բանկի կողմից իրականացվող ակտիվային գործառնությունների բնույթը: Բանկի կողմնորոշումը դեպի առավել ռիսկային գործառնությունները պահանջում են համեմատաբար խոշոր չափերի սեփական միջոցներ:
2. Բանկի կողմից սպասարկվող հաճախորդների առանձնահատկությունները: Այսպես՝ հաճախորդների կազմում խոշոր վարկերի պահանջարկ ներկայացնող ձեռնարկությունների գերակշռությունը ակտիվային գործառնությունների միևնույն ծավալի դեպքում պահանջում է սեփական միջոցների առավել խոշոր չափեր, քան այն բանկը, որը կողմնորոշված է դեպի մանր վարկառուների սպասարկումը, քանի որ առաջին դեպքում մեկ վարկառուի գծով ռիսկը կլինի ավելի մեծ, որը սահմանափակման ենթակա ցուցանիշ է:
3. Վարկային ռեսուրսների շուկայի զարգացվածության աստիճանը և ԿԲ–ի կողմից իրականացվող վարկային քաղաքականությունը: ԿԲ վարկային քաղաքականության լիբերալացումը մեծացնում է առևտրային բանկի մատչելիությունը վարկային ռեսուրսների նկատմամբ և իջեցնում է բանկին անհրաժեշտ սեփական միջոցների սահմանը: Վարկային քաղաքականության կոշտացումն անբավարար զարգացած շուկայի պայմաններում առաջ է բերում սեփական միջոցների անընդհատ աճի անհրաժեշտություն:

18.1.2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ակտիվային գործառնությունների համար պահանջվող դրամական ռեսուրսների 90%–ից ավելին բանկերն ապահովում են ներգրաված միջոցների հաշվին: Ավանդաբար, ներգրավված միջոցների հիմնական մասը կազմում են ավանդները (դեպոզիտները), այսինքն՝ դրամական այն միջոցները, որոնք բանկ են ներդրվել հաճախորդների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, պահվում են համապատասխան հաշիվներում և տնօրինվում՝ համաձայն այդ հաշիվների համար սահմանված կարգի և բանկային օրենսդրության:

Միաժամանակ, սկսած անցյալ դարի 60–ական թվականների կեսերից, նկատվում է բանկային պարտավորությունների մեկ այլ հատվածի, այսպես կոչված՝ ոչ դեպոզիտային միջոցների արագ աճ, որոնք բանկը ստանում է վարկերի տեսքով, դրամական շուկայում սեփական պարտատոմսերի թողարկման և վաճառքի միջոցով և այլն:

Ներգրավված միջոցների դեպոզիտային և ոչ դեպոզիտային հատվածների միջև առկա են էական տարբերություններ.

1. Դեպոզիտային միջոցների ներգրավման նախաձեռնությունը պատկանում է հաճախորդին, մինչդեռ ոչ դեպոզիտային միջոցների ներգրավման դեպքում որպես նախաձեռնող կողմ հանդես է գալիս բանկը:
2. Դեպոզիտային միջոցների ներգրավման դեպքում բանկը գործ ունի կոնկրետ հաճախորդի հետ, մինչդեռ ոչ դեպոզիտային միջոցների ներգրավումը միջնորդավորված է տարբեր արժեթղթերով կամ բանկային վարկերով, որոնք կոնկրետ ֆիզիկական և իրավաբանական անձանց բանկի համար դարձնում են անտեսանելի:

3. Դեպոզիտային միջոցները ներգրավվում են համեմատաբար ավելի փոքր գումարներով, քան ոչ դեպոզիտային միջոցները: Այդ պատճառով դեպոզիտային գործառնությունները հաճախ անվանում են մանրածախ, իսկ ոչ դեպոզիտային գործարքները՝ մեծածախ գործարքներ (մնաց դասակարգում կատարվում է Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում):
4. Դեպոզիտային միջոցները ներգրավվում են համեմատաբար երկար ժամանակահատվածով: Ոչ դեպոզիտային միջոցների ներգրավման միջին ժամանակահատվածն ավելի կարճ է: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ ոչ դեպոզիտային միջոցների ներգրավմանը բանկը դիմում է հիմնականում կարճաժամկետ իրացվելիության խնդիրներ լուծելու համար: Լրացուցիչ ռեսուրսների ներգրավման խնդիրն այստեղ երկրորդային բնույթ ունի:
5. Դեպոզիտային միջոցները ներգրավվում են համեմատաբար ավելի ցածր տոկոսադրույքներով: Ոչ դեպոզիտային միջոցների միջին տոկոսադրույքները, որպես կանոն, ավելի բարձր են:

Աղյուսակ 18.1.2.1.

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունները 31.12.2005թ. դրությամբ
(հազ. դրամ)

Բանկի անվանումը	31.12.04	31.12.05	Տես. կշիռը համակարգում (%)
HSBC (Եյժ-Էս Բի-Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	61.211.471	64.808.682	18.21
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	32.818.353	45.451.148	12.76
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	27.065.697	32.715.755	9.18
ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ ՓԲԸ	36.324.058	32.702.990	9.18
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ	23.516.732	29.199.006	8.19
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	21.835.178	21.089.151	5.92
ՀԱՅԳՅՈՒԴՓՈՒՄԲԱՆԿ ԿԲ	18.356.229	28.247.539	7.93
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	14.735.346	20.039.173	5.62
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	10.100.202	16.169.330	4.54
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	8.393.660	12.830.329	3.60
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	10.120.410	9.193.642	2.58
ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ	7.585.713	11.399.318	3.20
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	8.082.679	5.353.308	1.50
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	7.393.891	5.645.837	1.58
ՊՐՈՍԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	3.095.273	2.922.599	0.82
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	4.540.960	6.886.730	1.93
ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ ՓԲԸ	4.496.476	2.640.055	0.74
ԱՐՄՍՎԻՄԲԱՆԿ ՓԲԸ	0	3.034.316	0.85
«ԻԹԲ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԷԿՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	1.876.722	2.169.466	0.61
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	3.933.006	1.495.162	0.42
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	206.338	2.249.430	0.63
ԸՆԴԱՄԵՆԸ	305.688.393	356.302.966	100.00

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ «բանկային ավանդ է համարվում անձին տրամադրված այն դրամական գումարը, որի տրամադրման պայմանները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին, և որը չի տրամադրվել այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ կամ որպես գույք, գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու, աշխատանք կամ ծառայություն մատուցելու հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց» (հ. 5):

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 902-րդ հոդվածի՝ բանկային ավանդի (դեպոզիտի) պայմանագրով մի կողմը (բանկը), ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանից:

Բանկային ավանդի պայմանագիրը կնքվում է ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու (ցպահանջ ավանդ) կամ ավանդը պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու (ժամկետային ավանդ) պայմանով:

Անկախ ավանդի տեսակից՝ բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել քաղաքացու առաջին իսկ պահանջով: Իրավաբանական անձանց ներդրած ավանդներն առաջին իսկ պահանջով ստանալու կամ արգելելու դրույթը կարգավորվում է իրավաբանական անձի հետ կնքվող բանկային ավանդի պայմանագրով:

Ավանդը ժամկետից շուտ ստանալու դեպքում, ինչպես նաև պայմանադրված ժամկետը գերազանցող ժամանակահատվածի համար ավանդի նկատմամբ տոկոսների վճարման պայմանները և չափը սահմանվում են բանկային ավանդի պայմանագրով:

Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել քաղաքացիների հետ կնքված բանկային ավանդի պայմանագրով սահմանված տոկոսների չափը: Իրավաբանական անձանց ավանդների նկատմամբ տոկոսների միակողմանի փոփոխման հնարավորությունը կամ արգելումը պետք է պարտադիր կերպով ներառվի նրանց հետ կնքվող բանկային ավանդի պայմանագրում:

Բանկն իրավունք ունի փոփոխել ցպահանջ ավանդների համար վճարվող տոկոսների չափը, եթե բանկային ավանդի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

Բանկ ներդրված ավանդի գումարի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտքագրվելու հաջորդ օրվանից մինչև դրա ելքագրման նախորդ օրը:

Բանկերը պարտավոր են պարտադիր ապահովագրության միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ կերպ, ապահովել քաղաքացիների ավանդների վերադարձը: Իրավաբանական անձանց ավանդների վերադարձի պայմանները սահմանվում են բանկային ավանդի պայմանագրով:

Ավանդը կարող է ներդրվել բանկ որոշակի՝ երրորդ անձի անունով: Երրորդ անձի կողմից կարող են մուտքագրումներ կատարվել ավանդատուի անունով արդեն իսկ բացված և գործող ավանդային հաշվի վրա:

Ժամանակակից բանկերի կողմից առաջարկվող ավանդները բավականին բազմազան են, և դրանց թվաքանակն անընդհատ աճում է: Դա պայմանավորված է հաճախորդների ներգրավման բնագավառում բանկերի միջև անընդհատ խորացող մրցակցությամբ, ինչը ստիպում է անընդհատ ընդլայնել հաճախորդներին մատուցվող ծառայությունների տեսականին: Ավանդները տարբերվում են՝ կախված ժամկետներից, մուտքային և ելքային գործառնությունների պայմաններից, վճարվող տոկոսներից և այլ բնութագրիչներից: Վերջին տարիների ընթացքում ավանդների առանձին տեսակների միջև հստակ սահմանագիծը վերացել է, առաջ են եկել «հիրբրիդային» հաշիվներ, որոնցում զուգակցվում են ավանդի առանձին տեսակների առանձնահատկությունները:

Առևտրային բանկերում ավանդային պորտֆելի կառավարումն իրականացվում է հետևյալ հիմնական բնութագրիչներով.

- ավանդի տոկոսադրույքը,
- ավանդի ժամկետը,
- ավանդի տոկոսների հաշվարկման, հաշվեգրման և վճարման կարգը,
- ավանդի արժույթը,
- հաճախորդների խումբը (ֆիզիկական կամ իրավաբանական անձ),
- ավանդի մուծման նվազագույն չափը,
- ավանդի վրա լրացուցիչ մուտքագրումներ կատարելու հնարավորությունը (սա հիմնականում վերաբերում է խնայողական ավանդներին) և այլն:

Ինչպես արդեն նշվեց, ավանդներն, ըստ ժամկետայնության, բաժանվում են 2 մեծ խմբի՝ ցպահանջ և ժամկետային:

Ցպահանջ ավանդները բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

- չունեն սահմանված որոշակի ժամկետ,
- դրամական միջոցների մուտքագրումը և ելքագրումը կարող են կատարվել ժամանակի ցանկացած պահին, ընդ որում՝ լրիվ կամ մասնակի,
- ավանդային հաշվով գործառնությունները կարող են կատարվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով,
- ավանդի գծով սահմանվող տոկոսադրույքը բավականին ցածր է (միջազգային պրակտիկայում ընդունված է տարեկան 0.5–1.5%): Երբեմն այս ավանդների գծով ընդհանրապես եկամուտ չի վճարվում:

Բանկի տեսանկյունից, ցպահանջ ավանդի առավելությունն այն է, որ դրանք հանդիսանում են էժան (երբեմն նույնիսկ՝ անվճար) ռեսուրս բանկի համար, ինչպես նաև ձևավորում են որոշակի նստվածք, ինչը հնարավորություն է տալիս որոշ չափով լուծել իրացվելիության խնդիրները:

Ժամկետային ավանդները բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

- ավանդն ունի կոնկրետ ժամկետ, որն ամրագրվում է բանկային ավանդի պայմանագրով,
- ավանդի տոկոսադրույքը համեմատաբար բարձր է,
- ավանդի գծով լրացուցիչ մուծումներ և մասնակի ելքագրումներ հնարավոր են միայն պայմանագրով սահմանված դեպքերում: Այդ ավանդները չեն կարող ծառայել որպես վճարման միջոց:

Յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է սահմանում իր կողմից ներգրավվող ավանդների կազմն ու հիմնական բնութագրիչները՝ ելնելով ձևավորված մրցակցային իրավիճակից, բանկի զարգացման ռազմավարությունից և այլն:

Առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման աղբյուրներից են նաև բանկային հաշիվների բացումը և վարումը:

Բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավոր է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել բանկին տրամադրվող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները:

Գործառնությունների իրականացման իր ընթացակարգով միջոցների ներգրավման այս տարբերակը նման է ցպահանջ ավանդին:

Յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է սահմանում բանկային հաշվի բացման և սպասարկման իր պայմանները և սակագները:

Որոշակի դեպքերում բանկը կարող է վարկավորել հաճախորդի բանկային հաշիվը, այսինքն՝ վճարումներ կատարել հաշվից՝ դրանում միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում: Սակայն նման գործառնություններ կատարվում են միայն առաջնակարգ հուսալիություն ունեցող հաճախորդների համար, քանի որ ռիսկայնության մակարդակն այստեղ բավականին բարձր է:

Հարկ է նշել, ներկայումս պետությունը երաշխավորում է ֆիզիկական անձանց ավանդների և բանկային հաշիվների փոխհատուցումը: 2004թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ պարտադիր երաշխավորման են ենթակա ֆիզիկական անձանցից ներգրաված բոլոր տեսակի դրամային և արտարժութային ավանդներն ու հաշիվները: Օրենքում մանրամասն շարադրված են պարտադիր երաշխավորման օբյեկտները, ավանդների փոխհատուցման առավելագույն սահմաններն ու մեխանիզմը, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի ներգրավված միջոցներից երաշխավորման հիմնադրամին հատկացումներ կատարելու կարգը: Նման իրավական ակտի ընդունումն ուղղված է մի կողմից՝ բանկային համակարգի կայունության և հուսալիության ամրապնդմանը, մյուս կողմից՝ ՀՀ առևտրային բանկերի նկատմամբ ազգաբնակչության վստահության ամրապնդմանը:

Բանկային հաշվի և բանկային ավանդի, ինչպես նաև բանկային հաշվով գործառնությունների և հաճախորդների վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է բանկային գաղտնիք և կարող է տրամադրվել միայն հաճախորդներին կամ նրանց ներկայացուցիչներին:

Պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց բանկային գաղտնիք համարվող տեղեկատվություն կարող է տրամադրվել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Աղյուսակ 18.1.2.2.

ՀՀ առևտրային բանկերում հաճախորդներից ներգրավված միջոցները
31.12.2005 թ. դրությամբ

ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մնացորդը, հազ. դրամ	Տես. կշիռն ընդհ. պարտավորություններում (%)
HSBC (Էյչ–Էս Բի–Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	60.812.358	93.75
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	41.246.700	90.75
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	24.639.037	75.31
ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ ՓԲԸ	25.372.254	77.58
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ	19.672.612	67.37
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	10.384.087	49.24
ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՆԲԱՆԿ ԿԲ	10.776.530	38.15
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	10.728.589	53.54
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	14.870.305	91.97
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	8.997.451	70.13
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	6.011.773	65.39
ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ	10.229.658	89.74
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	3.998.345	74.69
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	3.682.811	65.23
ՊՐՈՍԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	2.470.504	84.53
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	2.713.505	39.40
ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ ՓԲԸ	2.259.362	85.58
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ	911.787	30.05
«ԻԹՔ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	1.181.752	54.47
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	1.336.526	89.39
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	435.851	19.38
ԸՆԴԱՄԵՆԸ	262.731.797	73.74

Առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման տարբերակ են հանդիսանում ավանդային սերտիֆիկատների տրամադրումը, կորպորատիվ պարտատոմսերը

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 25.12.2001թ. թիվ 30–Ն որոշմամբ հավանություն ստացած «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը», Ներածություն, առաջին պարբ.:

² Փոփոխությունները կատարվել են ՀՀ ԿԲ խորհրդի 13.03.2001թ. թիվ 67, 30.07.2003թ. թիվ 260 որոշումներով:

րի թողարկումը և այլն: Ավանդային սերտիֆիկատը թողարկող բանկի կողմից տրամադրվող գրավոր վկայական է, որը հավաստում է ավանդատուի կողմից որոշակի դրամական ներդրումների կատարման փաստը և վերջինիս իրավունք է տալիս ստանալ ներդրված գումարը սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ համապատասխան տոկոսադրույքների հետ միասին: Ավանդային սերտիֆիկատի վրա նշվում են սերտիֆիկատի համարը, տրման ամիս–ամսաթիվը, ներդրված միջոցների վերադարձի ժամկետը, սերտիֆիկատի արժեքը, տոկոսադրույքը, եկամտի գումարը, թողարկող բանկի անվանումն ու հասցեն և նրա պարտավորությունը ներդրված միջոցներն ու հասանելիք եկամուտները սահմանված ժամկետում ավանդատուին վերադարձնելու մասին: Ավանդային սերտիֆիկատը տրամադրվում է իրավաբանական անձանց:

Բանկային ռեսուրսների համալրման համեմատաբար նոր տարբերակ է «ռեպո» համաձայնագրերի կիրառումը: Դա մի գործարք է, որն իրենից ներկայացնում է արժեթղթերի վաճառք՝ որոշ ժամանակահատվածից հետո դրանք հետզհետե կայանալով: Արժեթղթերի վաճառքի և հետզհետե գների միջև տարբերությունը կազմում է վարկի տոկոսը: Ռեպո համաձայնագիր կարող է կնքվել բանկի և ձեռնարկության, բանկի և մեկ այլ բանկի, բանկի և կենտրոնական բանկի միջև: Այս գործարքները, որպես կանոն, իրականացվում են բարձր իրացվելիությամբ և հուսալիությամբ օժտված արժեթղթերով. օրինակ՝ պետական պարտատոմսերով:

18.2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՎՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18.2.1. Առևտրային բանկերի վարկային գործառնությունները

Վարկային ռիսկը բոլոր երկրների բանկերում առկա խնդիրների հիմնական աղբյուրն է, ուստի բանկերի համար կարևոր է հստակ պատկերացնել վարկային ռիսկը ճանաչելու, չափորոշելու, հսկելու և կառավարելու անհրաժեշտությունը¹: Բանկերի վարկային գործառնությունների կարգավորմանն ուղղված կենտրոնական բանկի հիմնական փաստաթղթերն են «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը և «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը»:

1995թ. դեկտեմբերի 19–ին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ առաջին անգամ հաստատված վարկերի դասակարգման կարգն անցած ժամանակաշրջանում ենթարկվել է էական փոփոխությունների: Ներկայումս գործում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1999թ. ապրիլի 23–ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը, որը կրկին ենթարկվել է փոփոխությունների²:

Կարգը լրացնում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2001թ. դեկտեմբերի 25–ի

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 25.12.2001թ. թիվ 30–Ն որոշմամբ հավանություն ստացած «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը», Բաժ. Սահմանում:

թիվ 30–Ն որոշմամբ հավանության արժանացած «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը», որը նախատեսված է բանկերին աջակցելու վարկային ռիսկի կառավարման քաղաքականության, մեթոդների, ընթացակարգերի և տեղեկատվական համակարգերի մշակման գործում: Բացի այդ, մեթոդական ուղեցույցում ներկայացված դրույթները Կենտրոնական բանկի համար հիմք են յուրաքանչյուր բանկի վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը գնահատելիս:

Մեթոդական ուղեցույցը նպատակ է սահմանում այն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք բանկերին անհրաժեշտ է ունենալ և կիրառել վարկային ռիսկի կառավարման ընթացքում, ինչպես նաև այն նվազագույն չափանիշները, որոնք բանկը պետք է կիրառի վարկային պորտֆելը ամբողջությամբ և առանձին վարկերի գծով ռիսկայնությունը վերահսկելու համար:

Մեթոդական ուղեցույցի համաձայն՝ վարկը փոխառուին միջոցներ կամ միջոցներին փոխարինող ֆոնդեր (հաշվեկշռային կամ հետհաշվեկշռային) տրամադրելու համաձայնություն է՝ ապահովությամբ կամ առանց ապահովության, երբ փոխառուն պարտավորվում է ցպահանջ կամ ֆիքսված ժամկետում վերադարձնել փոխառնված գումարը, ինչպես նաև վարձավճարը և/կամ տոկոսագումարը: Վարկային ռիսկը փոխառուի գծով ռիսկն է, որը չի կարողանում մարել կամ կատարել իր պայմանագրային պարտավորությունը, և որի արդյունքում բանկը ֆինանսական կորուստներ է կրում¹:

Բանկերի վարկային ռիսկի կառավարման համակարգերի ստեղծման և գնահատման համար նախատեսվող սկզբունքների վերաբերյալ հրապարակվել են տարբեր նյութեր, որոնք հեղինակվել են միջազգային և մասնավոր կազմակերպությունների, գիտական հաստատությունների կողմից: Մեթոդական ուղեցույցի համաձայն՝ կենտրոնական բանկը կենտրոնանում է այն սկզբունքների վրա, որոնք առավել բնութագրական են Հայաստանի բանկային համակարգին: ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշմամբ՝ ներքոհիշյալ սկզբունքները և ընթացակարգերը պետք է հաստատվեն և գործնականում կիրառվեն հայկական բանկերի կողմից՝

- Ա. Վարկավորման խելամիտ գործընթաց.
- Բ. Վարկային փաստաթղթերի փաթեթի ստանդարտներ.
- Գ. Վարկերի մոնիտորինգ և վերահսկման ընթացակարգեր.
- Դ. Վարկերի մարման գործընթաց.
- Ե. Առանձին վարկերի գնահատում:

Վարկավորման արդյունավետության բարձրացման ուղղությամբ կարևոր է բանկի կողմից վարկավորման գործընթացի նախաձեռնումը: Բանկը պետք է հստակ պատկերացնի իր նպատակային շուկան, տեղյակ լինի փոխառուի կամ գործընկերոջ մասին, առաջարկվող վարկի նպատակին և մարման աղբյուրներին: Ի վերջո բանկի կողմից վարկավորման գործընթացի կազմակերպման հիմքում պետք է ընկած լինեն վարկավորման ընդհանուր սկզբունքները (ժամկետայնությունը, վերադարձելիությունը, ապահովվածությունը, վճարելիությունը և նպատակայնությունը):

Բանկի կողմից վարկավորման գործընթացը պետք է ներառի վարկային հայտի նախնական ուսումնասիրության, դիմելու գործընթացը կազմակերպելու, վարկու-

¹ St'u Banks, small and medium enterprises: к сотрудничеству взаимному успеху. Руководство для МСП и банков. Проект TACIS по распространению технической информации, Люксембург, Офис офиц. изд. Европейского Сообщества, 1997, с. 15.

նակության վերլուծության, վարկի վերաբերյալ որոշում կայացնելու, վարկերի ձևակերպման և մոնիտորինգի իրականացման փուլերը:

Վարկերի տրամադրման գործընթացի էական կողմը փոխառուի վարկունակության գնահատումն է: Վարկային հայտի բավարարման որոշման վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Ուշագրավ են Ֆրանկֆուրտի համալսարանի (Գերմանիա) 1992թ. անցկացված հետազոտությունները, որոնք բացահայտեցին այն էական գործոնները, որոնք ազդում են վարկ տրամադրելու որոշումը ձևավորելիս:

Այդ հետազոտության համաձայն՝ բանկերը նկատելի աստիճանով հենվում են ամենամյա ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վրա: Այն 31% ցուցանիշով առավել ծանրակշիռ գործոնն է վարկի ճակատագիրը որոշելիս: Շուկաների, պատվիրատուների և մատակարարների մասին տեղեկատվության վերլուծությանն ընկնում է 16%–ը, վարկի ապահովության ուսումնասիրմանը՝ 15%–ը: Որոշման կայացման մեջ վարկառու կազմակերպությունում կառավարման որակի ազդեցությունը 11% է: Սակայն վերջինի կարևորությունը կարող է աճել, քանի որ կառավարչական սխալները հիմնական պատճառն են կազմակերպությունների սնանկության հարցում: Ֆինանսական պլանավորումը և արդյունաբերության հատվածի վերլուծությունը համարվում են առավել նվազ կարևոր գործոնները, և յուրաքանչյուրն ունեն միայն 8% ազդեցություն: Այնպիսի համեմատաբար բարդ գործիքներ, ինչպիսիք են ընթացիկ (հաշվարկային) հաշիվների տվյալների վերլուծությունը, դեռևս քիչ են կիրառվում (3%), թեև փորձը և տեսությունը ցույց են տալիս, որ կազմակերպության հաշիվների դինամիկան կարող է նախանշել ճգնաժամը: Այլ գործոններին բաժին է ընկնում 8%–ը¹:

Վարկային հայտի գրավչությունը բանկերի համար որոշվում է փոխառուի ընդունակությամբ կատարել վարկային պայմանագրի պայմանները: Վարկային հայտերի գրավչության համեմատության համար անհրաժեշտ է ունենալ քանակական գնահատականներ, որոնք կարող են այդ հայտերը միանշանակ բնութագրել:

Բանկի համար վարկային հայտի վարկանիշն իրենից ներկայացնում է դրանց գրավչության գնահատումը, որը կապված է վարկառուի նախագիծն իրագործելու հնարավորությունների հետ: Վարկանիշը գրավչությունը բնութագրելու թվային մեծությունն է:

Վարկային հայտի վարկանիշը գնահատելու համար մշակվել են տարբեր մեթոդներ: Ընդհանուր առմամբ դրանք նախատեսում են քայլերի հետևյալ հաջորդակարգությունը.

- հավաքվում են վարկային հայտի հնարավոր բոլոր ցուցանիշները,
- մշակվում է դրանց քանակական չափման մեթոդը, և որոշվում են թույլատրելի նշանակության սահմանները,
- թեստային իրավիճակների մեթոդով որոշվում են բոլոր ցուցանիշների համար կշռային գործակիցները,
- հաշվարկվում է վարկանիշը՝ որպես վարկային հայտի ցուցանիշների նշանակությունների և դրանց կշռային գործակիցների արտադրյալների գումար:

Ընտրելով ցուցանիշները, որոնց հիման վրա որոշվելու է վարկային հայտի վարկանիշը՝ անհրաժեշտ է ձգտել, որպեսզի դրանք բավարարեն հետևյալ պահանջները.

¹ Հաստատվել է ՀՀ կառավարության 01.06.2005թ. թ. 777–Ն որոշմամբ:

- մատչելիությունը (ցուցանիշի նշանակության որոշման ծախսերի ցածր մակարդակ),
- օբյեկտիվությունը (այդ նշանակությունները որոշող սուբյեկտից անկախությունը),
- հավաստիությունը (սխալների համարյա բացակայությունը և տեղեկատվության շեղումները),
- անկախությունը (տեղեկատվության կրկնման բացակայությունը ցուցանիշների միջև),
- օպերատիվությունը (գործողությունը կատարելու և դրա արդյունքներն արձանագրելու միջև փոքր ժամանակահատվածը),
- քանակապես չափելիությունը:

Եթե ցուցանիշը չի բավարարում թվարկված պահանջները, անհրաժեշտ է այն դետալացնել կամ հրաժարվել դրա օգտագործումից:

Թեև ցուցանիշները մեծաքանակ են, դրանք բոլորը կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին: Ներքին ցուցանիշները բնութագրում են վարկավորման օբյեկտը և սուբյեկտը, նախագիծը և կատարողին (փոխառուին): Արտաքինները նկարագրում են նախագծի իրականացման կախվածությունը արտաքին մակրոտնտեսական ազդեցություններից: Ցուցանիշների ամբողջությունը համակողմանիորեն բնութագրում է կոնկրետ վարկային հայտի գրավչությունը բանկի համար:

Դիտարկենք վարկային հայտի ցուցանիշները:

Արտաքին ցուցանիշների մեջ հիմնականներն արտաքին այն ցուցանիշներն են, որոնք բնութագրում են նախագծի իրականացման կախվածությունը մակրոտնտեսական պայմանների փոփոխությունից: Այդ ցուցանիշներն են.

1. Հարկային բարեփոխումների նկատմամբ զգայունությունը: Մասնավորապես ՀՀ 2006–2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի¹ երրորդ գլուխը նվիրված է եռամյա ժամանակահատվածի պետական բյուջեների եկամուտների քաղաքականության առանձնահատկություններին, որտեղ նախատեսվում են նաև հարկային քաղաքականության բարեփոխումներ: Եթե այս ցուցանիշը նշանակալի է նախագծերում, որոնք հաշվի են առնում որոշակի հարկային արտոնություններ, իսկ նշված ծրագրով նախատեսվում է արտոնությունների վերացում, ապա այն վերացնում է վարկային հայտի մեջ արտացոլված բոլոր հաշվարկները:

2. Օրենսդրության փոփոխությունների նկատմամբ զգայունությունը: Օրինակ՝ որևէ արտադրանքի արտադրության մենաշնորհի մտցնելը հարցականի տակ է դնում համապատասխան նախագծերի իրականացումը:

3. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ազդեցությունը նախագծի իրականացման վրա դրսևորվում է հետևյալ կերպ. բանկային տոկոսի հաշվարկային դրույքի բարձրացումը և, որպես հետևանք, վարկի տոկոսի դրույքի բարձրացումը սղաճային գործընթացի հետ միասին կարող են հանգեցնել նախագիծն ավարտելու անհնարինության:

4. Արժուքային ռիսկերի նկատմամբ զգայունությունը: Նախագծի տնտեսական արդյունավետությունը, որը հենվում է ներմուծվող հումքի և կիսաֆաբրիկատների վերանշակման վրա, կարող է բացասական դառնալ դրամական միավորի փոխարժեքի կտրուկ անկման դեպքում:

Նախագծի զգայունությունը թվարկված գործոնների նկատմամբ արտացոլվում է «տվյալ նախագծի շահութաբերության ներքին նորմայի փոփոխությունը իրարձրծությունների վատատեսական զարգացման պայմաններում» ցուցանիշի մի-

ջոցով: Դրա որոշման համար ընտրվում է իրադարձությունների զարգացման վատագույն սցենարը, և հաշվարկվում է շահութաբերության ներքին նորմա, որը ցույց է տալիս նախագծի իրագործելիությունը վատագույն պայմաններում: Զգայունության ցուցանիշը հաշվարկվում է որպես վատագույն սցենարով հաշվարկված ցուցանիշի հարաբերություն նախագծայինին: Վերջինը բանկին հնարավորություն է տալիս տեսնել նախատեսվող վարկի թույլ տեղերը և ի վերջո վարկային պորտֆելը դարձնել ավելի կայուն մակրոտնտեսական իրավիճակի փոփոխությունների նկատմամբ:

Վարկային հայտի գրավչության ներքին ցուցանիշները, որոնք բնութագրում են նախագիծը, օրինակ, կարող են լինել հետևյալները.

1. Նախագծի տնտեսական արդյունավետությունը: Արտահայտվում է շահութաբերության ներքին նորմայի՝ զեղչման դրույքի սահմանային նշանակության միջոցով, որի դեպքում զեղչված եկամտաբերությունը հավասար է ծախսերի զեղչված արժեքին: Վերջինը գործարար նախագծի հիմնական բնութագիրն է, որը որոշում է դրա նկատմամբ հետաքրքրությունը:

2. Փոխհատուցելիության ժամանակահատվածը: Հաշվարկվում է տարիների թվով, որոնք անհրաժեշտ են նախագծի եկամուտների հաշվին ներդրումները փոխհատուցելու համար: Վարկավորման ժամկետը կարելի է սահմանափակել այդ ժամանակահատվածով:

3. Մրցունակությունը: Գնահատվում է փորձագիտական եղանակով համանման նախագծերի համեմատական վերլուծությամբ կամ շուկայավարման հետազոտության արդյունքներով և որոշվում է հետևյալ ցուցանիշներով.

- ամրության պաշար (ինքնարժեքի հարաբերությունը շուկայում արտադրանքի միջին գնի նկատմամբ),
- հաստատուն ծախսերի բաժինը (միավոր արտադրանքի հաստատուն ծախսերի հարաբերությունը ընդհանուրին),
- գործի տեխնոլոգիայի մակարդակը՝ տեխնոլոգիայի և արտադրանքի կենսական փուլը,
- պետական կառույցների օժանդակությունը, սոցիալական նշանակությունը:

4. Ինքնածախսածածկման ժամանակահատվածի սկիզբը (արտաքին աղբյուրներից նախագծի ֆինանսավորման դադարեցումը): Միջանկյալ հսկիչ գործոն է, որի հիման վրա ընտրվում է վարկավորման օպտիմալ սխեման, որոշվում է ամիսների քանակությամբ:

5. Վարկի և տոկոսների մարման աղբյուրը: Ավանդականին զուգահեռ (նախագծի իրագործումից շահույթը) կարող են լինել նաև այլ աղբյուրներ՝ լրացուցիչ փոխառություններ, որոշ այլ արդեն իրագործված նախագծերից շահույթը, կապիտալի ավելացումը և այլն:

Ներքին ցուցանիշները, որոնք բնութագրում են վարկավորման սուբյեկտը, հետևյալներն են.

1. Վարկի ապահովությունը: Ներկայումս դա փոխառուին ներկայացվող գլխավոր պահանջներից է: Վարկավորման մասին որոշում կայացնելիս հնարավոր են վարկի և տոկոսների ապահովությամբ ծածկման տարբերակներ: Ապահովությունը բնութագրվում է երկու ցուցանիշներով.

- ծածկման աստիճանը (ապահովության հարաբերությունը վարկի մեծությանը կամ ապահովության շուկայական արժեքի բավարարությունը),
- իրացվելիությունը (արագ իրացման հնարավորությունը):

2. Փոխառուի վարկային պատմությունը: Այն ցույց է տալիս վարկավորման գործընթացի նկատմամբ վարկառուի պատասխանատու վերաբերմունքի աստիճանը և, բնականաբար, նախորդ վարկային պայմանագրերի պայմանների պահպանումը:

3. Փոխառուի գործարար համբավը («goodwill»): Դա հարկային և մյուս պետական մարմինների հետ ձևավորված հարաբերությունների ամբողջությունն է: Գործարար համբավը փոխառուի հուսալիության ցուցանիշ է: Գործարար համբավը կարելի է որոշել փորձագիտական եղանակով՝ հաշվի առնելով ընդհարումների առկայությունը կամ բացակայությունը:

4. Փոխառուի հիմնադրման կազմակերպարավական տեսակը՝ հաշվի առնելով հիմնադիր փաստաթղթերի առանձնահատկությունները, ընկերության գոյության ժամկետը, նրա կառավարման մարմինների կառուցվածքը, հիմնադիրների քանակը: Դիտարկվում է հետևյալ ցուցանիշները գնահատելիս.

- գործադիր մարմինների լիազորությունների մակարդակը,
- ֆինանսաարդյունաբերական կամ այլ խմբերին պատկանելությունը:

5. Փոխառուի ֆինանսական դրությունը և ֆինանսական կայունությունը:

6. Փոխառուի զարգացման հեռանկարները պետք է հաշվի առնեն փորձագիտորեն, առանձին ցուցանիշի՝ շուկայի տարողունակության հավելածի կանխատեսումով:

Թվարկված ցուցանիշների միջոցով բնութագրվում է վարկային հայտի գրավչությունը բանկի համար:

Վարկավորման մասնագետը վարկառուի վերաբերյալ որակական գնահատականը պետք է արտահայտի քանակական պարամետրերով ռիսկի մակարդակի համալիր ցուցանիշի հաշվարկման միջոցով: Ներկայացվող մեթոդի համաձայն՝ ռիսկի գնահատումը իրականացվում է «ռիսկի կատեգորիան» համալիր ցուցանիշի կիրառումով: Ռիսկի գնահատումն իրականացվում է հետևյալ ուղղություններով (ցուցանիշների խմբերով).

- «Ֆինանսական վերլուծություն»: Գնահատվում է փոխառուի վարկային ռիսկը՝ հաշվի առնելով ֆինանսական դրությունը, վարկային պատմությունը և դրամական հոսքերը:
- «Ապահովության գնահատում»: Գնահատվում է ապահովության իրացվելիությունը և տվյալ ապահովության առկայության և պահպանման վերահսկողության հնարավոր մակարդակը:
- «Կազմակերպական կառուցվածք»: Ներառում է սեփականության ձևի, կառավարման գնահատումը:
- «Շուկայի գնահատում»: Ներառում է տնտեսության ճյուղի գնահատումը, շուկայում կազմակերպության բաժինը և մրցակցության մակարդակը:

Տվյալ մեթոդի համաձայն՝ ռիսկի կատեգորիայի հաշվարկը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ.

- իրականացվում է ցուցանիշների գնահատում բալերով,
- որոշվում է ենթախմբերի արդյունքները (ըստ ենթախմբերի ցուցանիշների արդյունքները (բալերով) և կշռային գործակիցների արտադրյալները գումարելու միջոցով),

- որոշվում է խմբերի արդյունքները (ենթախմբի ցուցանիշների մեծությունների և կշռային գործակիցների արտադրյալները գումարելու միջոցով),
- իրականացվում է խմբերի վերջնական արդյունքների գումարում,
- ստացված մեծություններից (բալերով) կախված՝ ներկայացված աղյուսակների միջոցով որոշվում է ռիսկի կատեգորիան:

Ռիսկի կատեգորիան հաշվարկելու ցուցանիշների խմբերը և կշռային գործակիցները բերված են թիվ 18.2.1.1. աղյուսակում:

Աղյուսակ 18.2.1.1.

Ռիսկի կատեգորիան բալերի և ռիսկի մակարդակին համապատասխան

Բալերի ընդհանուր թիվը	Ռիսկի կատեգորիան	Գնահատումը
Մինչ– 20	I	Ռիսկի նվազագույն մակարդակ
21–ից մինչ– 40	II	Ռիսկի ցածր մակարդակ
41–ից մինչ– 60	III	Ռիսկի ընդունելի մակարդակ
61–ից մինչ– 80	IV	Ռիսկի բարձր մակարդակ
81 – ավելի	V	Ռիսկի շատ բարձր մակարդակ

Աղյուսակ 18.2.1.2.

Ռիսկի կատեգորիան հաշվարկելու ցուցանիշների խմբերը և դրանց կշիռները

Ցուցանիշների խմբերը	Կշիռը
Ֆինանսական վերլուծություն	0.40
Ապահովության մահատուն	0.25
Կազմակերպական կառուցվածք	0.20
Շուկայի մահատուն	0.15

«Ֆինանսական վերլուծություն» ցուցանիշների խումբ: Տվյալ խումբը ներառում է աղյուսակում արտացոլված ենթախմբերը:

Աղյուսակ 18.2.1.3.

«Ֆինանսական վերլուծություն» խմբի ենթախմբերը և դրանց կշիռները

Ենթախմբերը	Կշիռը
Ֆինանսական դրությունը	0.7
Շրջանառությունները	0.2
Վարկային պատմությունը	0.1

«Ֆինանսական դրությունը» ցուցանիշների ենթախումբ: Ֆինանսական դրության օգտագործվող ցուցանիշները և դրանց գնահատականները բալերով բերված են թիվ 18.2.1.4. աղյուսակում:

Բացարձակ իրացվելիության գործակիցը (Գ1) բնութագրում է պարտավորություններն անմիջապես մարելու ընդունակությունը և որոշվում է որպես դրամական

միջոցների, կարճաժամկետ արժեթղթերի գումարի հարաբերությունն առավել ժամկետային պարտավորությունների՝ բանկերի կարճաժամկետ վարկերի, կարճաժամկետ փոխառությունների և կրեդիտորական պարտավորությունների գումարին:

Աղյուսակ 18.2.1.4.

Ֆինանսական դրության ցուցանիշները և դրանց գնահատումը բալերով

Ֆինանսական դրության ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի նշանակությունը	Բալը	Կշռային որժակիցը
Բացարձակ իրացվելիության որժակից (Գ ₁)	0.2–ից ավելի 0.15–ից մինչ– 0.2 0.1–ից մինչ– 0.15 0.05–ից մինչ– 0.1 0.05–ից ցածր	10 30 50 70 90	0.05
Ծածկման միջանկյալ որժակից (Գ ₂)	0.8–ից ավելի 0.5–ից մինչ– 0.8 0.4–ից մինչ– 0.5 0.2–ից մինչ– 0.4 0.2–ից ցածր	10 30 50 70 90	0.40
Ընթացիկ իրացվելիության որժակից (Գ ₃)	1.8–ից ավելի 1.5–ից մինչ– 1.8 1.0–ից մինչ– 1.5 0.8–ից մինչ– 1.0 0.8–ից ցածր	10 30 50 70 90	0.10
Դեբիտորական – կրեդիտորական պարտավորությունների շրջանառելիության հարաբերության որժակից (Գ ₄)	10–ից ավելի 5–ից մինչ– 10 1.0–ից մինչ– 5 0.5–ից մինչ– 1.0 0.5–ից ցածր	10 30 50 70 90	0.10
Սեփական – փոխառու միջոցների հարաբերության որժակից (Գ ₅)	1.5–ից ավելի 1.0–ից մինչ– 1.5 0.8–ից մինչ– 1.0 0.4–ից մինչ– 0.8 0.4–ից ցածր	10 30 50 70 90	0.10
Արտադրանքի շահութաբերության – ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույթի հարաբերության որժակից (Գ ₆)	10–ից ավելի 5–ից մինչ– 10 1.0–ից մինչ– 5 0.5–ից մինչ– 1.0 0.5–ից ցածր	10 30 50 70 90	0.2

Ծածկման միջանկյալ գորժակիցը (Գ₂) բնութագրում է տնտեսական շրջանառությունից դրամական միջոցներն արագ ազատելու և պարտավորությունները մարելու կազմակերպության ընդունակությունը: Գ₂–ը որոշվում է որպես դրամական միջոցների, կարճաժամկետ ֆինանսական ներդրումների գումարի և կարճաժամկետ պարտավորությունների գումարի հարաբերություն:

Ընթացիկ իրացվելիության գորժակիցը (Գ₃) կազմակերպության վճարունակությունն ընդհանրացնող ցուցանիշ է, որի հաշվարկին համարիչում ընդգրկվում են ընթացիկ բոլոր ակտիվները, այդ թվում՝ նյութական:

Դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների շրջանառելիության հարաբերության գործակիցը (Գ₄) համալիր ցուցանիշ է, որը բնութագրում է դրամական միջոցների շրջանառությունը, դեբիտորների վճարային կարգապահությունը, կրեդիտորների հետ փոխհարաբերությունները, կազմակերպության գործարար համբավը: Գործակիցը որոշվում է որպես դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների շրջանառելիությունների (օրերով) հարաբերություն: Գ₄-ը որոշվում է նաև որպես դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների միջին մեծությունների հարաբերություն:

Սեփական և փոխառու միջոցների հարաբերության գործակից (Գ₅): Կազմակերպության ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշներից է և որոշվում է որպես սեփական միջոցների և ներգրավված բոլոր պարտավորությունների գումարի հարաբերություն:

Արտադրանքի շահութաբերության և ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հարաբերության (Գ₆) գործակիցը բնութագրում է արտադրության արդյունավետությունը և դրա բավարարությունը պարտավորությունները սպասարկելու համար: Գ₆-ը որոշվում է որպես արտադրանքի շահութաբերության և ԿԲ վերաֆինանսավորման դրույքի հարաբերություն:

«Շրջանառություններ» ցուցանիշների ենթախումբ: Հաշվարկվում է միջին եռամսյակային շրջանառությունների հարաբերությունը վարկի մեծության (Շ) նկատմամբ հետևյալ բանաձևով.

$$\bar{\text{Շ}} = (\text{Շ}_1 * 0.7 + \text{Շ}_2 * 0.3) / 4, \text{ որտեղ}$$

Շ₁ – ը հաշվարկային հաշվի միջին ամսական շրջանառություններն են,

Շ₂ – ը մյուս բանկերում ունեցած հաշիվների միջին ամսական շրջանառություններն են,

4 – ն վարկի դիտարկվող մեծությունն է:

«Շրջանառություններ» ցուցանիշի նշանակությունները գնահատվում են բալերով՝ ըստ ներկայացված աղյուսակի:

Աղյուսակ 18.2.1.5.

«Շրջանառություններ» ցուցանիշի բալերը

Շրջանառությունների հարաբերությունը վարկի ումարին 101.0–ից մինչ– 1.5	Բալը
3–ից ավելի	10
1.5–ից մինչ– 3	30
1.0–ից մինչ– 1.5	50
0.5–ից մինչ– 1.0	70
0.5–ից փոքր	90

«Վարկային պատմություն» ցուցանիշների ենթախումբ: Գնահատվում է փոխառուի վարկային պատմությունը վերջին երեք տարիների ընթացքում (կամ փոխառուի ընկերության գոյության ժամանակահատվածի ընթացքում): Վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության դեպքում որոշվում է փոխառուի ստացած վարկերի ընդհանուր գումարը հիմնական բանկում (որտեղ բացվել է հաշվարկային հաշիվը) և մյուս բանկերում: Հաշվարկվում է ստացված վարկերի գումարի հարաբերությունը դիտարկվող վարկի գումարի նկատմամբ: Այդ հարաբերության

նշանակությամբ որոշվում է «Վարկային պատմություն» ցուցանիշի գնահատականը բերված աղյուսակում արտացոլված բալերով:

Աղյուսակ 18.2.1.6.

«Վարկային պատմություն» ցուցանիշի բալերը

Ստացված վարկերի ումարի հարաբերությունը վարկի ումարին	Բալը
3–ից ավելի	10
2–ից մինչև 3	30
1.5–ից մինչև 2	50
0.5–ից մինչև 1.5	70
0.5–ից փոքր	90

«Ապահովության որակը» ցուցանիշը: Վարկի տրամադրման պարտադիր պայմաններից է վարկի գծով փոխառուի պարտավորությունների ժամանակին և լիարժեք կատարելու ապահովության առկայությունը: Ընդ որում, ապահովությունը վերլուծվում է իրացվելիության աստիճանի և բանկի կողմից գրավի առարկայի վերահսկման մակարդակի տեսանկյուններից: Պայմանական ցուցանիշները, որոնք օգտագործվում են գրավի առարկան գնահատելիս, և դրանց բալերը ներկայացված են բերված աղյուսակում:

Աղյուսակ 18.2.1.7.

Ապահովության տեսակները և դրանց բալերը

Ապահովության տեսակը	Բալը
Անշարժ ույք	10
Գրասենյակային կահույք – տեխնիկա	35
Արդյունաբերական սարքավորում	50
Առ–տրի սարքավորում	30
Արդյունաբերական արտադրանք	65
Ավտոտրանսպորտ	35
Պարենային ապրանքներ	75
Արտարժութային – դրամային ավանդներ	0
Արժեթղթեր	20
Իրավաբանական անձի երաշխավորություն	90
Ֆիզիկական անձի երաշխավորություն	100

Որքան ցածր է բալը, այնքան նախընտրելի է բանկի համար տվյալ ապահովության տեսակը: Վարկային ռիսկերի նվազեցման նպատակով կարող են միաժամանակ օգտագործվել վարկի վերադարձման ապահովման մի քանի տեսակներ: Չափանիշի գնահատման համար դուրս է բերվում ապահովության որակի

գնահատման միջին թվաբանականը՝ կշռված գրավի առարկայի գնահատման արժեքներով:

«Կազմակերպական կառուցվածքը» ցուցանիշների խումբը: Տվյալ խումբը ներառում է աղյուսակում բերված երեք ենթախմբերը:

Աղյուսակ 12.2.1.8.

«Կազմակերպության կառուցվածքը» խմբի ենթախմբերը

Ենթախմբերը	Կշիռը
Սեփականության ձևը	0.2
Կառավարման ձևը	0.3
Ղեկավարի տիպը	0.5

«Սեփականության ձևը» ենթախմբի շրջանակներում կարող են դիտարկվել «պետական կազմակերպություն», «վերակազմավորված պետական կազմակերպություն», «առևտրային կազմակերպություն (ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ)», «փոքր և միջին ձեռնարկություն» և «անհատ ձեռներեց» ցուցանիշները, որոնցից յուրաքանչյուրին կարող են տրամադրվել որոշակի բալեր: Իսկ «Կառավարման ձև» և «Ղեկավարի տիպ» ենթախմբերի շրջանակներում կարող են դիտարկվել բանկի կողմից ընտրված ցուցանիշներ:

«Շուկայի գնահատումը» ցուցանիշների խումբը: Տվյալ խումբը ներառում է թիվ 18.2.1.9. աղյուսակում բերված երեք ենթախմբերը:

Աղյուսակ 18.2.1.9.

«Շուկայի գնահատումը» խմբի ենթախմբերը և դրանց կշիռները

Ենթախմբերը	Կշիռը
Տնտեսության ճյուղը	0.3
Շուկայում մասնաբաժինը	0.4
Մրցակցության մակարդակը	0.3

«Տնտեսության ճյուղը» ենթախմբի ցուցանիշները: Տվյալ ենթախմբի ցուցանիշները և համապատասխան բալերը բերված են 18.2.1.10. աղյուսակում: Ենթախմբի ցուցանիշների գծով աղյուսակում արտացոլված բալերի մեծությունները պայմանական են, ուստի առևտրային բանկերը փորձագիտական եղանակով կարող են սահմանել այդ մեծությունները՝ ելնելով այս կամ այն ճյուղի կազմակերպություններին արդեն տրամադրված վարկերի համապատասխան գնահատականներից:

Աղյուսակ 18.2.1.10.

«Տնտեսության ենթախումբը» ենթախմբի ցուցանիշները և դրանց բալերը

Ցուցանիշները	Բալերը
Էլեկտրաէներգետիկա	25
Քիմիական	100
Մեքենաշինություն	50
Սննդի արդյունաբերություն	50
Տրանսպորտ	100
Շինարարություն	100
Գյուղատնտեսություն	100
Առ-տուր	50
Այլ	75

«Շուկայում մասնաբաժինը» ենթախումբ: Տվյալ ենթախմբի ցուցանիշները և դրանց բալերը բերված են թիվ 18.2.1.11. աղյուսակում:

Աղյուսակ 18.2.1.11.

«Շուկայում մասնաբաժինը» ենթախմբի ցուցանիշները և դրանց բալերը

Ցուցանիշները	Բալերը
Մինչ- 5%	100
5-ից մինչ- 24%	75
25-ից մինչ- 50%	50
51%-ից ավելի	25
Մենաշնորհ	0

Կազմակերպության շուկայում ունեցած մասնաբաժինը գնահատելիս պետք է հաշվի առնել այն շուկան, որտեղ գործում է տվյալ կազմակերպությունը: Ընդ որում, շուկան գնահատվում է երկու չափանիշներով՝ ըստ արտադրանքի իրացման տարածքի (մայրաքաղաք, մարզեր) և ըստ արտադրանքի տեսակների:

«Մրցակցության մակարդակը» ենթախումբ: Տվյալ ենթախմբի ցուցանիշները և դրանց բալերը բերված են աղյուսակում:

Աղյուսակ 18.2.1.12.

«Մրցակցության մակարդակը» ենթախմբի ցուցանիշները և դրանց բալերը

Ցուցանիշների անվանումը	Բալերը
Մենաշնորհ	0
Ցածր մակարդակ	25
Միջին մակարդակ	50
Բարձր մակարդակ	75
Շատ բարձր մակարդակ	100

Մրցակցության մակարդակը որոշելիս գնահատվում են այն մրցակիցները, որոնք գործում են նույն շուկայում, որը որոշվել էր նախորդ ցուցանիշը գնահատելիս:

Մեթոդի օգտագործումը կարող է հնարավորություն տալ համալիր գնահատել վարկի ռիսկի մակարդակը վարկավորման որոշում կայացնելիս: Ընդ որում, մեթոդը հնարավորություն է ընձեռում արտաքին միջավայրի փոփոխության պայմաններում փոփոխել նաև կշռային գործակիցները:

Ֆիզիկական անձանց վարկունակության գնահատումը էապես տարբերվում է կազմակերպություն հանդիսացող փոխառուների գնահատումից:

Սպառողական վարկերը բանկերի կողմից տրամադրվող վարկերի առավել եկամտաբեր տեսակներն են: Մինևույն ժամանակ դրանք ունեն առավելագույն ռիսկի աստիճան, քանի որ ընտանիքի և առանձին մարդու ֆինանսական դրությունն աշխատանքը կորցնելու դեպքում կարող է ավելի արագ վատթարանալ, քան կազմակերպության ֆինանսական դրությունը: Ֆիզիկական անձի վարկունակությունը գնահատելիս օգտագործվում են վերլուծության ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդներ: Որոշում կայացնելիս հաշվի են առնվում հաճախորդի վարկունակության վրա ազդող տարբեր գործոններ: Մեծ ուշադրություն է հատկացվում եկամտի չափին և կայունությանը, ընթացիկ ծախսերը, տոկոսը և հիմնական պարտքը մարելու բավարարությանը: Եթե տնօրինվող եկամուտը (ամսական ընդհանուր եկամուտը՝ հանած ամսական բոլոր ծախսերը) փոքր է պարտքը սպասարկելու ամսական գումարից (տոկոսներ՝ գումարած հիմնական պարտքը), ապա հաճախորդի հայտը մերժվում է: Հաճախորդի վարկունակությունը գնահատվում է որպես շատ լավ, եթե պարտքը սպասարկելու գումարը կազմում է տնօրինվող եկամտի 60%–ը: Սակայն, բացի վարկառուի ֆինանսական դրությունից, մեծ նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են նրա բնավորությունը, ընդունակությունները (մասնավորապես սեփական ծախսերը պլանավորելու), տարիքը, առողջությունը, ընտանեկան դրությունը, կրթությունը, զույքը և այլն:

Անհատական վարկառուի վարկունակության գնահատման առավել հայտնի մոդելը վարկային սկորինգն է:

Հաճախորդի բնութագրերը գնահատվում են բալերով, բալերը գումարվում են, ստացված վարկանիշը համեմատվում է շեմային նշանակության հետ:

Վարկանիշի ծայրահեղ նշանակությունը որոշվում է վիճակագրական տվյալների հիման վրա և պարբերաբար վերանայվում է: Տվյալ մոդելում հաշվի առնվող առավել կարևոր գործոններն են տարիքը, ընտանեկան դրությունը, խնամքի տակ գտնվողների թիվը, բնակելի անշարժ զույքը, եկամուտները, հաշիվները բանկերում, զբաղվածության տևողությունն ընդհանրապես և տվյալ աշխատանքում, տվյալ տեղանքում բնակության տևողությունը, մյուս ֆինանսական հաստատությունների երաշխավորագրերը:

Այդպիսի գնահատման հիմնական նախապայմանն այն է, որ դիտարկելով նախկինում վարկ ստացած մարդկանց մեծ խմբերը՝ բանկը կարող է որոշել այն ֆինանսական, տնտեսական և շարժառիթային գործոնները, որոնք ազդում են վարկի մար-

¹ St'u Rose Peter S. Commercial Bank Management: producing and selling financial services. – USA: IRWIN, 1994. P. 257–258

ման վրա: Ավելին՝ ենթադրվում է, որ նույն այդ գործոնները, ոչ նշանակալի ճշգրտումներով, որոշում են վարկերի վերադարձելիությունը նաև ապագայում: Այս ենթադրությունը կարող է դառնալ սխալ տնտեսական կամ այլ գործոնների փոփոխությունների դեպքում: Վերջինը պատճառներից մեկն է, որ անընդհատ ստուգվում և վերանայվում են վարկունակության գնահատման համակարգերը:

Մեթոդի հեղինակ Դ.Դյուրանը նշում է, որ առաջարկված մոտեցումը կարող է օգնել գնահատել սովորական վարկառուի հուսալիությունը, սակայն առանձնահատուկ դեպքերում մեթոդի կանխատեսումների վրա հենվել չի կարելի: Դյուրանը բացահայտել է գործոնների խումբ, որը թույլ է տալիս որոշել վարկային ռիսկի աստիճանը սպառողական վարկեր տրամադրելիս: Նա միավորները հաշվարկելիս օգտագործում է հետևյալ գործակիցները.

- տարիքը. 0.001 բալլ` 20 տարուց ավելի յուրաքանչյուր տարվա համար (առավելագույնը` 0.3),
- սեռը. կին` 0.4, տղամարդ` 0 բալլ,
- բնակության ժամկետը. 0.042 բալլ` տվյալ տեղանքում բնակության յուրաքանչյուր տարվա դիմաց (առավելագույնը` 0.42 բալլ),
- մասնագիտությունը. 0.55 բալլ` ցածր ռիսկով, 0` բարձր, և 0.16` մյուս մասնագիտությունների գծով,
- ճյուղում աշխատանքը. 0.21 բալլ` հանրային հատվածի ձեռնարկություններում, պետական հիմնարկություններում, բանկերում, բրոկերային ընկերություններում աշխատանքի դիմաց,
- զբաղվածությունը. 0.059 բալլ` տվյալ կազմակերպությունում աշխատանքի յուրաքանչյուր տարվա դիմաց (առավելագույնը 0.59 բալլ),
- ֆինանսական ցուցանիշներ. 0.45 բալլ բանկային հաշվի առկայության համար, 0.35` անշարժ գույք տիրապետելու, 0.19` կյանքի ապահովագրության պոլիսի առկայության դեպքում:

Կիրառելով նշված գործակիցները` Դյուրանը որոշեց այն սահմանը (1.25 բալլ), որով բաժանվում են «լավ» և «վատ» վարկառուները: Հաճախորդը, որը հավաքում է 1.25 բալլից ավելի, կարող է գտնվել չափավոր ռիսկի խմբում, իսկ 1.25 բալլից քիչ հավաքողը համարվում է բանկի համար ոչ ցանկալի:

Վարկային սկորինգի գործակիցներ կարող են դիտվել նաև հաճախորդի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են հաճախորդի մասնակցությունը գործարքին (միջոցների որքան մեծ մասնակցություն է բերում հաճախորդը, այնքան բարձր է նրա վարկանիշը), վարկի նպատակը, ընտանեկան դրությունը (նախապատվությունը տրվում է երեքից պակաս երեխա ունեցող ընտանիքին), առողջական վիճակը, կրթությունը, տարեկան զուտ եկամուտը, բանկային հաշվի միջին մնացորդը, վարկի ժամկետը (երկարաժամկետ վարկերն ավելի ռիսկային են և, հետևաբար, նվազեցնում են գնահատականը): Հարկ է հաշվի առնել նաև այն, որ բնակության և աշխատանքի վայրի հաճախակի փոփոխությունները լրացուցիչ առիթ են վարկառուի կայունության և հուսալիության մեջ կասկածելու համար:

Օրինակ` բանկը ֆիզիկական անձ վարկառուների վարկունակությունը գնահատելու համար կարող է կիրառել վարկային սկորինգի հետևյալ համակարգը (տե՛ս թիվ 18.2.1.13 աղյուսակը)¹:

Աղյուսակ 18.2.1.13.

Ֆիզիկական անձանց վարկունակության գնահատման վարկային սկորինգի համակարգի օրինակ

Հաճախորդի բնութա իրը	Բա- լերը	Հաճախորդի բնութա իրը	Բա- լերը
1. Հաճախորդի տարիքը. մինչ– 30 տարի, մինչ– 50 տարի, 50 տարուց ավելի	5 8 6	6. Մասնա խտություն,աշխատանքի վայրը. կառավարիչ, որակավորված բանվոր, առանց որակավորման բանվոր, ուսանող, թոշակառու, որժազուրկ	9 7 5 4 6 2
2. Խնամակալության տակ տնվողները. չկա, մեկը, երեքից քիչ, երեքից ավելի	3 3 2 1	7. Ընթացիկ աշխատանքում զբաղվա- ծության տ–ողությունը. մեկ տարուց քիչ, երեք տարուց քիչ, վեց տարուց քիչ, վեց տարուց ավելի	3 4 7 9
3. Բնակարանային պայմանները. սեփական բնակարան, վարձակալում է, այլ (բնակվում է ընկերնե- րի, ընտանիքի հետ)	10 4 5	8. Բանկում առկայությունը. ընթացիկ – խնայողական հա- շիվների, ընթացիկ հաշվի, խնայողական հաշվի, չկա	6 3 2 0
4. Ընթացիկ հաշվում բնակության տ–ողություն. մինչ– 6 ամիս, մինչ– 2 տարի, մինչ– 5 տարի, 5 տարուց ավելի	2 4 6 8	9. Երաշխավորա լրերի առկայությունը մեկ, երկուսից ավելի չկա	3 5 1
5.Հաճախորդի տարեկան եկա- մուտը մինչ– 1200 ԱՄՆ դոլար, մինչ– 2400 ԱՄՆ դոլար, մինչ– 3600 ԱՄՆ դոլար, 3600 ԱՄՆ դոլարից ավելի	2 5 7 9		

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ բալերի առավելագույն քանակությունը հավասար է 67–ի, իսկ նվազագույնը՝ 22–ի: Ենթադրենք, որ նախկինում տրամադրված վարկերը վերլուծելով՝ բանկը հաշվարկել է, որ 40–ից պակաս վարկանիշով նախկինում տրամադրված վարկերը բանկի համար եղել են խնդրահարույց: Այդպիսով՝ կարելի է դուրս բերել այն «հատման սահմանը», այսինքն՝ վարկի վարկանիշի այն նշանակությունը, որի դեպքում վարկի տրամադրումը բանկի կողմից մերժվում է (տես թիվ 18.2.1.14 աղյուսակը):

Վարկերի տարբերակման համակարգը սկորինգի մեթոդի կիրառման պայմաններում

Բալերի քանակությունը (հաճախորդի վարկային սկորին ք)	Վարկի ժով ընդունվող որոշումը
Մինչ– 40	Վարկի տրամադրումը մերժել
40–ից մինչ– 45	Տրամադրել վարկ 300 ԱՄՆ դոլարի չափով
45–ից մինչ– 50	Տրամադրել վարկ 500 ԱՄՆ դոլարի չափով
50–ից մինչ– 55	Տրամադրել վարկ 700 ԱՄՆ դոլարի չափով
55–ից մինչ– 60	Տրամադրել վարկ 900 ԱՄՆ դոլարի չափով
60–ից մինչ– 65	Տրամադրել վարկ 1200 ԱՄՆ դոլարի չափով
65–ից ավելի	Տրամադրել վարկ 1500 ԱՄՆ դոլարի չափով

Չարկ է ընդգծել, որ վարկանիշի սահմանային նշանակությունը բանկի կողմից պետք է անընդհատ ենթարկվի վերանայման՝ վարկավորման գործընթացի արդյունքներին համապատասխան: Ակնհայտ է նաև, որ տրամադրվող վարկերի մեծությունները կարող են աճել, եթե միջին տարեկան եկամուտները երկրում աճեն: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ հատման բարձր սահմանի ընդունումը կարող է պատճառ դառնալ, որ բանկերը կունենան կորուստներ չտրամադրված վարկերի ձևով:

Վարկային սկորինգի առավելությունն այն է, որ այն թույլ է տալիս հաշվի առնել միանգամից բազմաթիվ գործոններ: Այդպիսի գնահատումը փորձագիտական մեթոդի դեպքում սահմանափակված է մարդկային ուղեղի ոչ միանշանակ ամբողջ տեղեկատվությունը վերլուծելու ընդունակությամբ: Մյուս կողմից, փորձագիտական մեթոդն առավել հարմարեցված է տնտեսական միջավայրի ընթացիկ և ապագա փոփոխությունները հաշվի առնելուն: Փորձառու վարկային մասնագետը պետք է կարողանա շտապ ուշադրության արժանացնել վարկառուի վարկունակության վրա շրջակա միջավայրի փոփոխությունները և գնահատել դրանց հնարավոր ազդեցությունները: Վարկային սկորինգի մեթոդը նման դեպքերում, որպես կանոն, նվազ արդյունավետ է: Վերջինի թերությունը դրսևորվում է նրանում, որ այն հենվում է նախորդ ժամանակաշրջանների վիճակագրական տվյալների վրա, որոնք կորցրել են իրենց արդիականությունը և ճշմարտացիությունը՝ կախված տեղ գտած փոփոխությունների հետ:

Գործնականում կարող է կիրառվել վարկային սկորինգի և փորձագիտական մեթոդի համադրումը: Վարկային սկորինգի մեթոդով կարող են որոշվել ակնհայտորեն անհուսալի և ակնհայտորեն հուսալի հաճախորդները: Այն ֆիզիկական անձինք, որոնց բալային գնահատումն ընկել է այդ երկու չափանշային նշանակությունների միջև, ենթարկվում են լրացուցիչ վերլուծության ավելի մեծ քանակությամբ տեղեկատվության և վերլուծության գնահատման մեթոդների կիրառումով:

Ինչպես ցույց է տալիս փորձը, տեղական բանկերին բնորոշ է այն, որ տեղ է գտել նկատելի «չեղում» վարկունակությունը գնահատելու գործընթացում: Հիմնականում հաշվի է առնվում ապահովության գործոնը: Այն նույնիսկ գերազնահատվում է:

Գործնականում բանկերն ունենում են ժամկետանց վարկեր, որոնց գծով գրավի համապատասխան առարկայի տնօրինումը կատարվում է դատական վճիռների հիման վրա: Ժամկետանց պարտավորությունների դիմաց գրավի առարկաների իրա-

ցումը կատարվում է ՀՀ կառավարության 09.04.2002թ. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից աճուրդի անցկացման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 363 որոշման համաձայն:

Սույն կանոնակարգի համաձայն՝ աճուրդն անցկացվում է բաց հրապարակային սակարկությունների միջոցով: Աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք սահմանված կարգով պարտավոր են վճարել աճուրդի ներկայացված գույքի գնի 5%–ի չափով նախավճար: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը ենթակա է վերադարձման: Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը:

Աճուրդը հայտարարվում է չկայացած, եթե աճուրդին չի ներկայացել ոչ մի գնորդ, աճուրդի ընթացքում վաճառվող գույքի մեկնարկային գնի հավելում չի կատարվել, աճուրդում հաղթող անձը չի մուծել գնման գինը: Հայացած աճուրդից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում անցկացվում է կրկնակի աճուրդ: Ընդ որում, յուրաքանչյուր կրկնակի աճուրդ անցկացնելու դեպքում վաճառվող գույքի նախնական գինն իջեցվում է 10%–ով:

Երկրորդ և հետագա յուրաքանչյուր կրկնակի աճուրդում գույքը չվաճառվելու դեպքում գույքը տվյալ աճուրդի մեկնարկային գնով առաջարկվում է պահանջատիրոջը: Եթե պահանջատերը հրաժարվում է գույքը ստանալուց, ապա աճուրդային գործընթացը շարունակվում է:

Եթե գույքի գինը գերազանցում է դատական ակտով որոշված պարտքի չափը, ապա պահանջատերը մինչև պայմանագրի կնքումը և գույքի հանձնումը պարտավոր է պարտապահին վճարել հանձնվող գույքի գնի և դատական ակտով որոշված պարտքի միջև եղած տարբերությունը:

Ի տարբերություն բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցի և վարկունակության գնահատման մեթոդների, որոնց միջոցով բանկերը կառավարում են վարկային պորտֆելի որակը՝ վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի գործողությունը բանկերի գործունեության վրա ունի կարևոր առանձնահատկություն: Տվյալ կարգի միջոցով միայն ձևավորվում և օգտագործվում է վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստը: Նշված կարգի համաձայն վարկի ռիսկի խմբի գնահատման հիմնական չափանիշը տոկոսների և վարկի հիմնական գումարի մարման գծով ժամկետանց պարտավորությունների առաջացումը և վարկային պայմանագրի վերաձևակերպումն է: Այսինքն՝ ռիսկի գնահատման կարգը հենվում է վարկի որակի անկման և ռիսկի մակարդակի բարձրացման արդեն տեղ գտած փաստի վրա: Ընդ որում բացակայում են հնարավորությունները բանկի վարկային պորտֆելում կարգավորել ռիսկային վարկերի մասնաբաժինը ապագայում:

Ուշադրության արժանի է այն, որ եթե համատեղ հաստատված (1995թ. դեկտեմբերի 19–ին՝ ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԲ նախագահի կողմից) կարգը նվիրված էր բանկերի կողմից տրամադրված միայն վարկերի դասակարգմանը, ապա 1999թ. ապրիլի 27–ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 63 որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի թիվ 214–Ա հրամանով կրկին համատեղ հաստատվեց «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը (այսուհետ՝ Կարգ): Այդուհետ դասակարգվում են նաև բանկերի դեբիտորական պարտքերը:

Կարգի նպատակներն են՝ շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանել համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով, ինչպես նաև բանկային գործունեությունը կարգավորող տնտեսական նորմատիվների հաշվարկման համար օգտագործվող բանկի ընդհանուր կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացումը:

Կարգի նպատակներից ելնելով՝ բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ ակտիվների և հատուկ պահուստ՝ խնդրահարույց ակտիվների համար: Ակտիվների հնարավոր կորուստների համար պահուստավորումն իրականացվում է ըստ ակտիվների դասակարգման չափանիշների: Կարգով սահմանվում են ակտիվների դասակարգման օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներ:

Նույն կարգի իմաստով վարկեր և դեբիտորական պարտքեր՝ ակտիվներ են համարվում բանկի հաշվին (ռիսկով) տեղաբաշխված վարկերը (օվերդրաֆտ, վարկային քարտեր, ներդրված ավանդներ՝ (բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), ֆակտորինգի, ֆինանսական լիզինգի, բանկային երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահանջները), բանկի ռիսկով այլ գործառնությունների գծով (արժեթղթերում ներդրումներից՝ միայն մուրհակների) ստացվելիք գումարները, մատուցված ծառայությունների գծով ստացվելիք գումարները, տրված կանխավճարները, նախավճարները, այլ ընթացիկ ակտիվները և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները:

Ակտիվների դասակարգումը ակտիվների խմբավորումն է հետևյալ 5 դասերի՝

1) ստանդարտ, 2) հսկվող, 3) ոչ ստանդարտ, 4) կասկածելի, 5) անհուսալի: Ակտիվների դասակարգման չափանիշներն ամփոփված են աղյուսակում:

Աղյուսակ 18.2.1.15.

Ակտիվների դասակարգման չափանիշները

Ակտիվի դասը	Օբյեկտիվ չափանիշ	Սուբյեկտիվ չափանիշ
Ստանդարտ	Ակտիվն աշխատող է – տնվում է սպասարկման ընթացքում՝ համաձայն պայմանա թի: Կար ի իմաստով պայմանա իր է համարվում սկզբնական պայմանա իրը (ներառյալ յրավի պայմանա իրը)	Համապատասխանում է ստանդարտ ակտիվին տրված սահմանմանը
Հսկվող	Չաշխատող է մինչ– 90 օր	Համապատասխանում է հսկվող ակտիվին տրված սահմանմանը
Ոչ ստանդարտ	Չաշխատող է 91–180 օր	Համապատասխանում է ոչ ստանդարտ ակտիվին տրված սահմանմանը
Կասկածելի	Չաշխատող է 181–270 օր	Համապատասխանում է կասկածելի ակտիվին տրված սահմանմանը
Անհուսալի	Չաշխատող է 271 – ավելի օր	Համապատասխանում է անհուսալի ակտիվին տրված սահմանմանը

Բանկերն առնվազն 30 օրը մեկ անգամ պետք է միաժամանակ դասակարգեն բոլոր ակտիվները: Դասակարգումը հիմնված է օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների վրա:

Օբյեկտիվ չափանիշն ի վերջո ակտիվը որպես ոչ աշխատող դիտարկելն է: Կարգի համաձայն չաշխատող են այն ակտիվները, որոնց.

- հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից, կամ
- տոկոսային վճարները կապիտալացվել են (գումարվել են չմարված փոխառվության (վարկի) գումարին), կամ
- վճարման պայմանները վերանայվել կամ էլ փոխանցվել են նոր փոխառվության գումարին:

Այն ակտիվները, որոնց համար սահմանված չեն մարման նախապես որոշված ժամկետներ (օվերդրաֆտները և այլ գործիքները), համարվում են չաշխատող ակտիվներ, եթե 90 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն հաշվեգրված տոկոսները մարելու համար: Ընդ որում տոկոսների դադարեցման համար չաշխատող ակտիվների գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվում պարտքի հիմնական գումարի գծով փոխառուի չմարված պարտավորության գումարը և ոչ թե վերջինիս ժամկետանց մասը:

Սուբյեկտիվ չափանիշները հիմնված են բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության դատողությունների և մասնագիտական կարծիքի վրա:

Կարգի համաձայն, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում առկա են տարբերություններ, ապա բանկի համար առաջնային է առավել խիստ չափանիշը:

Բանկի ստանդարտ ակտիվների պորտֆելն իրենից ներկայացնում է համախառն և խնդրահարույց ակտիվների տարբերությունը: Ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդիրներ չեն առաջացնում: Կարգի համաձայն, որպես կանոն, ստանդարտ ակտիվներին բնորոշ են հետևյալ հայտանիշները.

- փոխառուի ֆինանսական դրությունը կասկած չի հարուցում,
- առկա է ակտիվը մարելու (սպասարկելու) փոխառուի բավարար ունակությունը:

Ստանդարտ ակտիվներն ունեն բավարար ապահովվածություն ինչպես հիմնական գումարի, այնպես էլ տոկոսային պարտքի գծով: Ստանդարտ ակտիվների գծով ձևավորվում է միայն ընդհանուր պահուստ:

Հսկվող են դասակարգվում այն ակտիվները, որոնք անբողջությամբ համապատասխանում են ստանդարտ ակտիվների սահմանմանը, սակայն դրանց հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:

Հատկանշական է «հսկվող ակտիվի» կիրառման նշանակությունը հատկապես բանկերի կողմից տրամադրվող վարկերի սպասարկման գործընթացի վրա: Այն ինտեգրվել է մինչ այդ կիրառվող (նախկինում ակտիվի «ստանդարտ» դասակարգումից հետո անմիջապես հաջորդում էր «ոչ ստանդարտ» դասակարգումը) սահմանումների ընդհանուր համակարգում: Ժամկետանց ակտիվների նկատմամբ 90 օր ժամկետից ուշացումով «հսկվող ակտիվի» կիրառումը առաջացրել է այն հետևանքը, որ ակտիվների մյուս սահմանումների և այդպիսիք մնալու 90–օրյա ժամկետներ

րի պահպանման դեպքում ընդհանուր առմամբ երկարացվել է այդ ակտիվները բանկի հաշվեկշռում մնալու տևողությունը: Այդ ժամկետը նախկին 181 օրվա փոխարեն «հսկվող ակտիվների» կիրառումով ներկայումս կազմում է 271 օր: Նշված փաստի պատճառը թերևս այն է, որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվի է առնվել վատորակ ակտիվների գծով բանկերի կողմից իրականացվող, այդ թվում իրավական բնույթի գործողությունների ժամանակատարության հանգամանքը, որը դուրս է բանկերի իրավասությունից առաջին հերթին զուտ ժամկետների առումով և ամբողջությամբ ենթարկվում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության հանրապետությունում գործող օրենսդրությանը:

Ոչ ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կախված փոխառուի ֆինանսական վիճակից կամ նրա պարտքը մարելու ունակությունից: Ոչ ստանդարտ ակտիվների մեջ ներառվում են.

- ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով.
- սեփական կապիտալի և ներգրավված միջոցների միջև հարաբերակցության անբավարար աստիճան ունեցող փոխառուի վարկերը.
- այն ակտիվները, որոնք փոխառուն չի կարող մարել նախնական պայմանավորվածության համաձայն, և որոնք փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների և դրանց շուրջ բանակցությունների առարկա են:

Կարգի համաձայն՝ ոչ ստանդարտ ակտիվներն ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարելը: Ոչ ստանդարտ ակտիվներին դասվում են նաև այն ակտիվները, որոնց հետ կապված է սովորականից ավելի մեծ ռիսկ՝ կապված փոխառուի ընթացիկ ֆինանսական տեղեկատվության կամ գրավի վերաբերյալ համարժեք փաստաթղթերի բացակայության հետ:

Ոչ ստանդարտ ակտիվի դասակարգումը պարզելու համար հաշվի են առնվում նաև գործոններ, ինչպիսիք են ակտիվի սպասարկման պայմանների շարունակական վերանայումները, փոխառուի կողմից ավելի նպաստավոր պայմաններով ակտիվի մարման վերաբերյալ առաջարկով հանդես գալը, ոչ համարժեք գրավի առկայությունը:

Կասկածելի ակտիվներն ունեն ոչ ստանդարտ ակտիվների բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Կասկածելի ակտիվների դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է, բայց կորուստների չափերը պարզ չեն, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք կարևոր և հատուկ գործոններով, որոնք կարող են բարելավել այս ակտիվի վիճակը: Այսպիսով՝ այս ակտիվի դասակարգումը՝ որպես անհուսալի, հետաձգվում է մինչև վերջինիս հետ կապված հանգամանքների հստակեցումը:

Անհուսալի ակտիվներն անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվներն են, որոնց հաշվառումը հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:

Ընդհանուր պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է,

որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով՝ ընդհանուր պահուստին կատարվող հատկացումների հաշվին: Վերջիններս ճանաչվում են որպես ծախս բանկի «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում՝ ելնելով ակտիվների գծով ապագա, բայց դեռևս չպարզաբանված կորուստների առաջացման հավանականությունից:

Հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող հատկացումների հաշվին: Վերջիններս նույնպես ճանաչվում են որպես ծախս բանկի «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում՝ ելնելով վերոհիշյալ ակտիվների գծով պարզաբանված կորուստների առաջացման հավանականությունից:

Զճանաչված տոկոսային եկամուտը հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով կուտակված, սակայն դեռևս փաստացի չհավաքագրված տոկոսին հակակշիռ գրանցված պահուստն է: Այն ձևավորվում է ակտիվը չաշխատող դասակարգելիս նրա գծով արդեն իսկ հաշվեգրված տոկոսների և հետագայում դրանց հաշվեգրումների չափով պահուստին կատարվող հատկացումների հաշվին:

Կարգի համաձայն՝ ապահովվածություն չունեցող (բլանկային) են դասվում այն ակտիվները, որոնք բավարարում են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

- ապահովված չեն գրավով, առնվազն նախորդ հաշվետու և ընթացիկ ժամանակաշրջանում շահույթով աշխատած իրավաբանական անձի երաշխավորությամբ կամ երաշխիքով, բյուջետային երաշխիքով,
- ապահովված չեն փոխառուի ֆինանսական վիճակը բնութագրող բավարար տեղեկատվությամբ,
- ապահովված չեն փոխառության վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ (գործարար ծրագիր, պայմանագրեր և այլն), ինչպես նաև այլ հիմնավոր փաստաթղթերով,
- չեն հանդիսանում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման համար կատարված կանխավճար կամ առհաշիվ տրված գումար:

Տոկոսների կապիտալացումը գործընթաց է, որի արդյունքում չվճարված տոկոսները, պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը գումարվում են ակտիվի չմարված մասին:

Վերանայված պայմաններով են այն ակտիվները, որոնք, պայմանագրի համաձայն, վերաֆինանսավորվել են, կամ որոնց մարման ժամկետները կամ մյուս պայմանները վերանայվել են, գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքների, կամ էլ պայմանները վերանայվել են փոխառուի համար առավել նպաստավոր ուղղությամբ, որը պայմանավորված է նրա վատ ֆինանսական դրությամբ և նրա պարտքը մարելու կարողությամբ:

Իսկ վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են, որոնց մարումն իրականացվել է նոր ստանձնված պարտավորությունների աղբյուրների հաշվին:

Երկրի տարածքում գործող յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար: Այդ պահուստների մեծությունը ճշգրտվում է ակտիվների յուրաքանչյուր դասակարգման ամսաթվին: Բանկերն առնվազն 30 օրը մեկ անգամ

պետք է միաժամանակ դասակարգեն բոլոր ակտիվները, ընդ որում դասակարգման օր պետք է լինի նաև հաշվետու ամսվա վերջին բանկային օրը:

Բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ ակտիվների գումարի 1%–ի չափով: Բանկերը ձևավորում են նաև հատուկ պահուստ՝ յուրաքանչյուր հսկվող ակտիվի 10, ոչ ստանդարտ ակտիվի 20, կասկածելի ակտիվի 50 և անհուսալի ակտիվի 100%–ի չափով:

Բանկերը պարտավոր են մշակել վարկերի ու դեբիտորական պարտքերի (ակտիվների) դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման ներքին կանոնակարգ՝ հիմնական կարգի դրույթներին համապատասխան: Այդ ներքին կանոնակարգով բանկերն ինքնուրույն, առանց ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության միջամտության, կարող են ավելացնել հատկացումները ընդհանուր պահուստին՝ ստանդարտ ակտիվների համար մինչև 2%–ը, իսկ հատուկ պահուստին հսկվող ակտիվի համար մինչև 15, ոչ ստանդարտ ակտիվի համար՝ մինչև 25 և կասկածելի ակտիվի համար՝ 70%–ը:

Կարգի համաձայն, եթե ակտիվը ճանաչվում է անհուսալի, այն նույն օրվա ընթացքում պետք է դուրս գրվի բանկի հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին, և բանկը շարունակում է այն հաշվառել հաշվեկշռի ծանուցման հաշիվներում:

Կարգով սահմանված չափսատող ակտիվները, այդպիսին դասակարգվելուց սկսած, պետք է հաշվառվեն ոչ կուտակային մեթոդով, ինչը նշանակում է, որ այն տոկոսը, որը կուտակվել է, բայց չի հավաքագրվել, այլևս չի կարող գրանցվել որպես տոկոսային եկամուտ: Այդ ակտիվների գծով հաշվեգրված տոկոսները պետք է գրանցվեն «չճանաչված տոկոսային եկամտի (և կամ) տուժանքի» հաշվին: Տոկոսի հաշվեգրումը շարունակվում է, սակայն այն այդուհետ չի գրանցվում որպես տոկոսային եկամուտ մինչև դրա վճարումը:

Այն տոկոսները, որոնք արդեն հաշվեգրվել են, սակայն չեն հավաքագրվել մինևույն (հաշվետու) ժամանակաշրջանի ընթացքում, պետք է «տոկոսային եկամուտներ» հաշվից փոխանցվեն «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվին:

Իսկ այն տոկոսները, որոնք հաշվեգրվել են նախորդ ժամանակաշրջանի ընթացքում, սակայն չեն հավաքագրվել, ճանաչվում են որպես ծախս՝ գրանցվելով «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվին:

Չափսատող ակտիվի նկատմամբ հաշվեգրման սկզբունքը վերականգնվում է միայն ժամկետանց հիմնական գումարի և տոկոսների, ինչպես նաև տուժանքներն ամբողջությամբ մարելու դեպքում:

Հաշվեգրված, բայց դեռևս չգանձված տոկոսները, որոնք գրանցվում են «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվում, ենթակա են հաշվեկշռից դուրսգրման՝ համապատասխան ակտիվը անհուսալի ճանաչելու պահին: Հաշվեկշռից դուրս գրելուց հետո բանկը հաշվառում է դրանք ծանուցման հաշիվներում և կարող է շարունակել տոկոսների և տուժանքների հաշվեգրումը:

¹ ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 237–Ն որոշումը լրացվել է փոփոխությունների է ենթարկվել 24.12.2004 թ., թիվ 357–Ն, 11.03.2005թ., թիվ 101–Ն, 26.04.2005թ., թիվ 195–Ն որոշումներով:

² Տե՛ս «Բանկերի – բանկային րոժուներության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված է 30.09.1996, հոդ. 35, կետ 2:

Կարևոր է ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվների և տոկոսների դուրսագրման կարգը: Այդ հաշիվներում հաշվառվող ակտիվների դիմաց վճարում կամ փոխհատուցում ստանալիս հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված ակտիվը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «հատուկ պահուստ» հաշվի հետ: Վերականգնված ակտիվը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան ակտիվի հաշվի հետ:

Ընդ որում, ակտիվների հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս բանկն ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է եկամուտների հաշվին:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող տոկոսների դիմաց վճարում ստանալիս հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված տոկոսը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «տոկոսային եկամուտ» հաշվի հետ: Վերականգնված տոկոսը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

Նույն հաշիվներում հաշվառվող ակտիվները և տոկոսները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից այն դեպքում, երբ բանկի կողմից զիջվել են ակտիվը կամ տոկոսը, կամ երբ ակտիվի և տոկոսների նկատմամբ պահանջի իրավունքի գծով լրացել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը:

18.2.2. Առևտրային բանկերի ներդրումային գործառնությունները

ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեությունը ներկայումս կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004թ. սեպտեմբերի 20–ի թիվ 237–Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 2–ի երկրորդ գլխի պահանջներով¹: Այս փաստաթղթով և համապատասխան օրենքով բանկերին արգելվում է առանց կենտրոնական բանկի նախագահի նախնական համաձայնության իրականացնել գործարքներ կամ գործառնություններ, որի արդյունքում բանկի մասնակցությունը մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4,99% և ավելի է, այդպիսի մասնակցությունը գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 15%–ը, բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում նման մասնակցությունների ընդհանուր գումարը գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 35%–ը²: Նման սահմանափակման պատճառը պետք է տեսնել կենտրոնական բանկի կողմից բուն բանկային գործունեությունից միջոցների տարերային հեռացումը կանխարգելելու մեջ:

Երբ վարկային ներդրումները գործող բանկերի հիմնական եկամտաբեր ակտիվներն են, որոնց որակը հույժ կարևոր է դրանց հաջող գործունեության համար, և դրանով կարող են բացատրվել 1995 թ. հետո առ այսօր վարկերի և դեբիտորական պարտքերի համատեղ դասակարգման և պահուստի ձևավորման խնդիրների լուծ-

¹ Տե՛ս ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2005թ. որոշումության տարեկան ծրագիրը, էջ 8: Ներկայացվել է Ազ Կային ժողովին «ՀՀ 2005թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Ըստ նույն արդյուրի՝ 2003թ. արժեթղթերով՝ րծարքների ծավալը կազմել է 37,4 մլրդ դրամ, իսկ 2004թ. առաջին կիսամյակում՝ 42,3 մլրդ դրամ:

մանն ուղղված շարունակական անդրադարձերը, ապա բանկերի ինվեստիցիոն գործունեության կապակցությամբ բնորոշ է այն, որ «Հայաստանի արժեթղթերի շուկայում շրջանառվող հիմնական գործիքներն են պետական պարտատոմսերը և կորպորատիվ բաժնետոմսերը: Կատարված գործարքների գերակշիռ մասն իրականացվել է պետական պարտատոմսերով: Մասնավորապես, 2003թ. ընթացքում պետական պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է մասնագիտացված անձանց կողմից կատարված գործարքների ընդհանուր ծավալի 99%–ը, իսկ 2004թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 98%–ը»¹: Նշված է գլխավոր պատճառը, որ «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների ձևավորման և օգտագործման» կարգը 1998թ. սեպտեմբերին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատվելուց հետո առ այսօր գործում է առանց փոփոխությունների:

Կարգը շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանում է ինվեստիցիոն արժեթղթերում բանկերի ներդրումների դասակարգման, դրանց հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ու օգտագործման հարցերը:

Կարգի նպատակներով ինվեստիցիոն արժեթղթեր են համարվում բաժնետոմսերը, ոչ պետական պարտատոմսերը, ներդրումներն այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում:

Ըստ ժամկետայնության այդ արժեթղթերը կարգը ստորաբաժանում է՝

- ժամկետային արժեթղթերի, որոնք ունեն մարման ամրագրված ժամկետներ,
 - անժամկետ արժեթղթերի, որոնք չունեն մարման ամրագրված ժամկետներ:
- Կարգը արժեթղթերը ստորաբաժանում է նաև ըստ նպատակայնության: Դրանք են.
- վերավաճառքի նպատակով ձեռք բերված արժեթղթերը. այն բոլոր ժամկետային և անժամկետ արժեթղթերն են, որոնք ձեռք են բերվել վերավաճառքի նպատակով և արագ կարող են վերածվել բարձրիրացվելի ակտիվների,
 - վաճառքի համար նախատեսվող արժեթղթերը. այն բոլոր արժեթղթերն են, որոնք ձեռք բերողը նտադիր չէ վաճառել մոտակա (կարճատև) ժամանակահատվածում, սակայն դրանք կարող են վաճառվել և սովորաբար չեն պահվում մինչև մարման ժամկետի ավարտը (ժամկետային արժեթղթեր) կամ պահվում են մեկ տարուց պակաս ժամկետով (անժամկետ արժեթղթեր),
 - մինչև մարման ժամկետի ավարտը պահվող արժեթղթերը և անժամկետ արժեթղթերը. այն ժամկետային արժեթղթերն են, որոնք ձեռք բերողը նտադիր է պահել մինչև մարման ժամկետի ավարտը, ինչպես նաև այն անժամկետ արժեթղթերն են, որոնք պահվում են երկարատև ժամանակահատվածում (լրացուցիչ շահույթ ստանալու, արժեթուղթ թողարկողի վրա ներազդելու և/կամ վերահսկելու նպատակով):

Բացի այդ, կարգի համաձայն, բաժնետոմսերը ստորաբաժանվում են նաև ըստ գնահատման եղանակի՝ գնանշվող և չգնանշվող բաժնետոմսերի: Գնանշվող բաժնետոմսերը ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսաներում, ինչպես նաև արժեթղթերի շուկայի կարգավորում և վերահսկում իրականացնող պետական լիազորված մարմնի կողմից սահմանված ցանկում ընդգրկված օտարերկրյա ֆոնդային բորսաներում պարբերաբար գնանշվող բաժնետոմսերն են: Գնանշվող բաժնետոմսերը պետք է բավարարեն հետևյալ չափանիշները միաժամանակ՝

- բաժնետոմսերի լիստինգի մեջ ներառումը ոչ պակաս, քան մեկ ֆոնդային բորսայում կամ բորսայական գործառնություններ իրականացնող հաստատությունում,
- նախորդ եռամսյակի տվյալներով՝ բորսայում տվյալ բաժնետոմսի միջին ամսական նվազագույն շրջանառությունը կազմում է մեկ միլիոն դրամ,
- բաժնետոմսերի գնանշման հրապարակումը:

Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ ձևավորվում է այն բաժնետոմսերի, ոչ պետական պարտատոմսերի և այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում ներդրումների նկատմամբ, որոնք, լինելով ժամկետային կամ անժամկետ, պահվում են մինչև մարման ժամկետը: Պահուստը չի ձևավորվում վերավաճառքի նպատակով ձեռք բերված կամ վաճառքի համար նախատեսվող ինչ-պես ժամկետային, այնպես էլ անժամկետ արժեթղթերի գծով: Պահուստը չի ձևավորվում նաև նշված ժամկետային և անժամկետ արժեթղթերի գծով ստացվելիք գումարների (գեղչատոկոս, հավելավճար, շահաբաժիններ) համար:

Ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կատարվում են թիվ 18.2.2.1. աղյուսակում նշված չափերով:

Աղյուսակ 18.2.2.1.

Արժեթղթերի դասակարգումը և պահուստին կատարվող մասհանումների համապատասխան չափերը

Արժեթղթերի դասակարգումն ըստ դրանց մարման ժամկետը լրանալուց հետո ժամկետանց օրերի	Պահուստին կատարվող մասհանումների սահմանաչափերը տոկոսներով
1. Արժեթղթերի ձեռքբերման պահին	Ոչ ռիսկային՝ 2%
2. Արժեթղթի մարման ժամկետը լրանալու պահից մինչև՝ 60-րդ օրը ներառյալ	Ռիսկային՝ 2–20%
3. Արժեթղթի մարման օրվան հաջորդող 61-րդ օրվանից մինչև՝ 90-րդ օրը ներառյալ	Միջին ռիսկային՝ 20–70%
4. Արժեթղթի մարման օրվան հաջորդող 91-րդ օրվանից մինչև՝ 180-րդ օրը ներառյալ	Բարձր ռիսկային՝ 70–100%
5. Արժեթղթի մարման օրվան հաջորդող 181-րդ օրվանից	Անհուսալի՝ 100%

Ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները, աղյուսակում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են ինքնուրույնաբար՝ ելնելով դրանց մարման ժամկետի ավարտից հետո ժամկետանց օրերի թվից և թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից:

¹ Թողարկողի ֆինանսական կայունությունը բնութագրող Q որժակցի մեծությունը սահմանվում է կախված թողարկողի շրջանառու ակտիվների ($Ա_2$) – ընդհանուր ակտիվների ($Ա_ը$) հարաբերակցությունից հետո՝ $Q = 1$, եթե $Ա_2/Ա_ը > 0.5$, $Q = 0.7$, եթե $0.5 > Ա_2/Ա_ը > 0.3$, $Q = 0.5$, եթե $Ա_2/Ա_ը < 0.3$:

Ընդ որում, գնանշվող բաժնետոմսերի պահուստին մասհանումները կատարվում են ըստ թողարկողի բաժնետոմսերի ամբողջ պորտֆելի գծով՝ դրա շուկայական միջին արժեքը հաշվեկշռային միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում: Տվյալ թողարկողի բաժնետոմսի հաշվեկշռային միջին արժեքը որոշվում է որպես դրանց ձեռքբերման փաստացի արժեքների միջին կշռված մեծություն: Թողարկողի բաժնետոմսի միջին շուկայական արժեքը որոշվում է որպես նախորդ եռամսյակի ընթացքում բորսայում տվյալ բաժնետոմսի շրջանառության ծավալներով կշռված առջ ու վաճառքի միջին գին:

Պահուստին կատարվող մասհանումների գումարը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$U_{(1)} = (ՅԱ - ՇԱ) \times \text{Ք} - ՆՊ,$$

որտեղ՝

$U_{(1)}$ – ը պահուստին կատարվող մասհանումների գումարն է.

ՅԱ – ն բաժնետոմսերի հաշվեկշռային միջին արժեքն է.

ՇԱ – ն բաժնետոմսերի միջին շուկայական արժեքն է.

Ք – ն տվյալ թողարկողի արժեթղթերի քանակն է.

ՆՊ – ն տվյալ բաժնետոմսի պորտֆելի գծով նախկինում ձևավորված պահուստի մեծությունն է:

Ընդ որում, եթե $U_{(1)}$ –ը բացասական մեծություն է, ապա այդ գումարի չափով նվազեցվում է նախկինում ձևավորված պահուստը:

Չգնանշվող բաժնետոմսերի՝ ներդրումների պահուստին մասհանումները կատարվում են յուրաքանչյուր թողարկողի բաժնետոմսերի կամ ներդրման ամբողջ գումարի գծով՝ դրանց ընթացիկ արժեքը հաշվեկշռային միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում:

Չգնանշվող բաժնետոմսերի հաշվեկշռային միջին արժեքը որոշվում է որպես նախորդ եռամսյակում դրանց ձեռքբերման արժեքների միջին կշռված մեծություն: Յուրաքանչյուր թողարկողի չգնանշվող բաժնետոմսի ընթացիկ արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta^2_1 = \frac{(\text{ը} - \text{ը}) \times \text{Պ}}{\emptyset},$$

որտեղ՝

$\Delta U_{(1)}$ – ը տվյալ թողարկողի մեկ բաժնետոմսի ընթացիկ արժեքն է.

Ա – ն թողարկողի ակտիվների հանրագումարն է.

Պ – ն թողարկողի պարտավորություններն են.

Ք – ն տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակն է.

Գ – ն արժեքի ճշտման գործակիցն է, որը բնութագրում է թողարկողի ֆինանսական կայունությունը՝:

Ներդրումների ընթացիկ արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta U_{(2)} = (Ա - Պ) \times Ն (\%) \times Գ,$$

որտեղ՝

Ն (%) – ն կանոնադրական հիմնադրամում ներդրումն է տոկոսային արտահայտությամբ:

Պահուստին կատարվող մասհանումների գումարը որոշվում է հետևյալ բա-

նաձևերի միջոցով՝

ա) չգնանշվող բաժնետոմսի համար.

$$U_{(2)} = (ՀԱ - ԸԱ_{(1)}) \times Բ - ՆՊ,$$

որտեղ՝

U₍₂₎ – ը պահուստին կատարվող մասհանումների գումարն է.

ՀԱ – ն բաժնետոմսի հաշվեկշռային միջին արժեքն է.

ԸԱ – ն տվյալ թողարկողի մեկ բաժնետոմսի ընթացիկ արժեքն է.

ՆՊ – ն տվյալ բաժնետոմսի գծով նախկինում ձևավորված պահուստի մեծությունն է:

Ընդ որում, բացասական մեծության դեպքում այդ գումարի չափով նվազեցվում է

նախկինում ձևավորված պահուստը:

բ) ներդրումների համար.

$$U_{(3)} = ՀՆ - ԸՆ - ՆՊ,$$

որտեղ՝ ՀՆ – ն ներդրումների հաշվեկշռային արժեքն է.

ԸՆ – ն ներդրումների ընթացիկ արժեքն է.

ՆՊ – ն տվյալ ներդրման գծով նախկինում ձևավորված պահուստի մեծությունն է:

Կրկին՝ բացասական մեծության դեպքում այդ գումարի չափով նվազեցվում է նախկինում ձևավորված պահուստը:

Չգնանշվող բաժնետոմսերի և ներդրումների գնահատումն ու պահուստի մեծության ճշտումը բանկերն իրականացնում են ինքնուրույնաբար, իրենց կողմից ընտրված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ թողարկողի ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով:

Կարգի համաձայն՝ ժամկետային արժեթղթերն անհուսալի են ճանաչվում ժամկետանց դառնալու 181 օրը, ինչպես նաև այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել: Անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել կամ լուծարվել է առանց իրավահաջորդության:

Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի միջոցներն օգտագործվում են միայն անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման համար: Եթե տվյալ արժեթղթի գծով ձևավորված պահուստի միջոցները չեն բավարարում դրանց արժեքի դուրսգրման համար, ապա այդ տարբերության չափով կատարվում է լրացուցիչ մասհանում պահուստին, և այնուհետև անհուսալի ճանաչված արժեթղթերի արժեքը դուրս է գրվում պահուստի միջոցների հաշվին:

Անհուսալի ճանաչված արժեթղթերը դուրս են գրվում «Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվի միջոցներից՝ Կարգի համաձայն, դրանց անհուսալի դառնալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

Այն գումարները, որոնք, Կարգի համաձայն, հաշվեգրվել են բանկի եկամուտների, սակայն չեն մարվել նախատեսված ժամկետներում, դուրս են գրվում դրանց ժամկետանց դառնալու օրվանից հաշված 90-րդ օրը կամ անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման օրը:

Թողարկողի անվճարունակության հետևանքով անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրումը բանկի հաշվեկշռից չի համարվում այդ պարտավորության անվավեր ճանաչում: Հաշվեկշռից դուրս գրված անհուսալի արժեթղթերը դուրսգրման պահից սկսած առնվազն հինգ տարի հաշվառվում են բանկի համապատասխան ծա-


նուցման հաշիվներում և այդ ընթացքում չմարվելու դեպքում միայն կարող են դուրս գրվել նաև ծանուցման հաշիվներից: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ պարտապանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է:

Կարգի համաձայն՝ անհուսալի ճանաչված և պահուստի հաշվին հաշվեկշռից դուրս գրված արժեթղթերի գծով պարտավորությունների լրիվ կամ մասնակի մարման դեպքում վերականգնված գումարներն ամբողջությամբ հաշվեգրվում են բանկի տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտներին:

Այսպիսով՝ բանկերի ակտիվների որակի կարգավորմանն ուղղված թվով չորս փաստաթղթերի փաթեթը միավորող մոտեցումների ընդհանրությունն արտացոլվել է թիվ 1 գծապատկերում: Գծապատկերը ցույց է տալիս, որ բանկերի ակտիվային գործունեությունը կարգավորող փաստաթղթերից յուրաքանչյուրի իրական ազդեցությունը այդ գործունեություն վրա տեղ է գտնում ժամանակի միջոցով:

Գծապատկեր 1

Բանկերի ակտիվների որակի կարգավորման փաստաթղթերի տեղը ժամանակի մեջ



Գծապատկերում փաստաթղթերից յուրաքանչյուրի տեղադրումը ժամանակի ո-

որոշակի հատվածում կրում է պայմանականություն, քանի որ դժվար է պատկերացնել, որ վարկերը տրամադրելիս բանկերը չեն փորձում գնահատել այդ վարկի համապատասխան կարգի համաձայն դասակարգման հետևանքները բանկի գործունեության արդյունքների վրա, կամ այս կամ այն վարկը սահմանված կարգով փաստացի դասակարգելիս վերջինս չի անփոփոխում որոշակի կուտակվող փորձի մեջ, որն ունենում է հստակ և ուղղակի անդրադարձ բանկի կողմից ապագայում վարկեր տրամադրելու գործընթացը կազմակերպելիս:

Սակայն նշված փաստաթղթերը բանկի գործունեության վրա իրենց ազդեցությունը թողնում են գծապատկերում բերված որոշակիությամբ, որտեղ միակ իրական գործոնը և չափորոշիչը ժամանակն է, և ներկայի ակտիվային գործունեության ուրակն իր անխուսափելի գնահատականն ամրագրում է որոշակի ժամանակ անց, կամ մոտ ապագան լինելու է ոչ այնքան հեռավոր անցյալի անհրաժեշտ հետևանքը:

Այստեղից է, որ բանկի ակտիվային գործունեության կարգավորմանն ուղղված փաստաթղթերից յուրաքանչյուրը դառնում է այն նախադրույթների, մոտեցումների և սկզբունքների ամրագրումը, որոնք տեղ են գտնում օրենսդրական ու ենթօրենսդրական միջոցներով, հենվում և ազդում են գործնականի վրա, որտեղ փաստաթղթերի որակն ամբողջությամբ կախված է գործնականի դրսևորման բազմազանությունը հնարավորինս հաշվի առնելուց և ընդհանրացնելուց:

Փիտեղիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են առևտրային բանկերի պասիվային գործառնությունները և ի՞նչ նպատակ են նրանք հետապնդում:
2. Ներկայացնել բանկային կապիտալի գործառնությունները, կազմը, կառուցվածքը, ինչպես նաև կապիտալի ձևավորման հիմնական եղանակները:
3. Որո՞նք են առևտրային բանկերի ներգրավված միջոցները: Ներկայացնել դեպոզիտային և ոչ դեպոզիտային միջոցների հիմնական տարբերությունները:
4. Բացատրել բանկային ավանդի էությունը, առանձնահատկությունները: Տալ ավանդների դասակարգման հիմնական չափանիշները և ավանդային պորտֆելի կառավարման մեխանիզմները:
5. Բացատրել բանկային հաշվի էությունը, առանձնահատկությունները:
6. Բացատրել առևտրային բանկերի կողմից ոչ դեպոզիտային միջոցների ներգրավման եղանակներն ու մեխանիզմները:
7. Ներկայացնել առևտրային բանկերի ակտիվային գործառնությունները:
8. Ներկայացնել վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների գծով պահուստների ձևավորման կարգը առևտրային բանկերում:
9. Ներկայացնել ինվեստիցիոն արժեթղթերի գծով պահուստների ձևավորման կարգը:

ԳԼՈՒԽ 19

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

19.1. ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

19.1.1. Ռիսկերի էությունը, դասակարգման առանձնահատկությունները

Ռիսկը ինչ–որ բան չստանալու վտանգն է կամ այդ վտանգն առաջացնող պայմանների ձևավորման հավանականությունը: Օրինակ՝ հաճախորդի կողմից իրեն տրամադրված վարկի երկարաձգումը, դեպոզիտների ծավալի աննախադեպ արտահոսքը, բանկի բաժնետոմսերի գնի կամ շահույթի նվազման հավանականությունը, տոկոսադրույքների փոփոխությունը մոտ ապագայում և այլն:

Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ՝ լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, իր գործունեության ընթացքում դիմում է որոշակի ռիսկի: Սակայն ռիսկը արտադրական և ֆինանսական գործունեության բնագավառներում միանգամայն տարբեր են: Այդ տեսանկյունից էլ տարբերում են ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկեր: Բանկը՝ որպես ֆինանսական շուկայի սուբյեկտ, իր մեջ կենտրոնացնում է ֆինանսական ռիսկերի մի ողջ համակարգ: Հենց այդ ռիսկերի օպտիմալ կառավարումն էլ հանդիսանում է բանկային գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը և բանկային շահույթի ստացման առաջնային գրավականը: Այսինքն՝ բանկն իր եկամուտների մեծ մասը ստանում է այն ռիսկերի ստանձնման հաշվին, որը բանկի հաճախորդները չեն կարող կամ չեն ուզում ստանձնել: Տնտեսական անկայունությունը՝ մի կողմից, բանկային վարկերի վատ որակը (այսինքն՝ այն հանգամանքը, որ տրամադրված վարկերի զգալի մասը չի վերադարձվում կամ վերադարձվում է ժամկետի խախտումով)՝ մյուս կողմից, ստիպում են բանկիրներին առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացնել բանկային ռիսկերի հնարավոր գնահատման, վերահսկման և կառավարման վրա:

Ռիսկերի կառավարումն իր մեջ ընդգրկում է հետևյալ փուլերը.

- ռիսկերի ճիշտ ընթացում,
- ռիսկերի վերաբերյալ տվյալների հավաքագրում,
- ռիսկերի քանակական և որակական գնահատում,
- ընդունելի սահմաններում ռիսկերի կառավարում:

Ռիսկերի արդյունավետ կառավարումը, փաստորեն, տարբեր ռիսկերի կիրառման կոորդինացման նկատմամբ զլոբալ ռազմավարական մոտեցում է՝ ցանկալի արդյունքների ձեռքբերման նպատակով:

Ռիսկերի կառավարման գործընթացում անհրաժեշտ է հստակ պատկերացնել, թե տվյալ կազմակերպության համար որն է առաջնային՝ առավելագույն շահույթի ստացումը, թե ռիսկն ընդունելի մակարդակի վրա պահելը: Օրինակ՝ առևտրային բանկերը ձգտում են առավելագույնի հասցնել շահույթը՝ ռիսկն ընդունելի մակարդակի վրա պահելով, իսկ ՀՀ ԿԲ–ն ձգտում է նվազագույնի հասցնել ռիսկը՝ շահույթն ընդունելի մակարդակի վրա պահելով:

Ըստ ռիսկի գործունեության միջավայրի և ազդեցության ոլորտի՝ բանկային ռիսկերը կարելի է ստորաբաժանել երկու խմբի՝ արտաքին և ներքին:

Արտաքին ռիսկեր

Արտաքին ռիսկերի խմբում ներառվում են բանկի գործունեության ընթացքում առաջացող այն ռիսկերը, որոնք կապված չեն բանկի ներքին աշխատանքների, գործունեության կազմակերպման հետ, սակայն կարող են էապես անդրադառնալ բանկի ֆինանսական գործունեության արդյունքների վրա: Այս խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- երկրի,
- քաղաքական,
- սոցիալական,
- շուկայական,
- տարերային աղետների,
- տնտեսական,
- մակրոտնտեսական,
- ֆինանսական,
- օրենսդրական,
- փոխանցման,
- ճյուղային և այլն:

Երկրի ռիսկը որոշվում է՝ ելնելով տվյալ երկրի սոցիալ–տնտեսական զարգացվածության մակարդակից, համաշխարհային տնտեսական համակարգում նրա զբաղեցրած տեղից և դերից: Այս ռիսկի գնահատումը կարևորվում է արտերկրի հետ գործառնություններ իրականացնելիս (թղթակցային հաշիվների բացում, միջազգային փոխանցումներ և այլն):

Քաղաքական ռիսկը պայմանավորված է երկրում քաղաքական իրավիճակի կտրուկ վատթարացման, պատերազմների և տարածքային վեճերի առաջացման հավանականությամբ:

Սոցիալական ռիսկը պայմանավորված է քաղաքացիական պատերազմներով, գործադուլներով և այլն:

Շուկայական ռիսկն առաջանում է շուկայական տոկոսադրույքների, գների, փոխարժեքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում:

Տարերային աղետների կամ ֆորս–մաժորային ռիսկը պայմանավորված է անկանխատեսելի, անհաղթահարելի աղետների առաջացման հավանականությամբ: Այս ռիսկի կառավարման հնարավորությունը տարերային աղետներից ապահովագրումն է:

Տնտեսական ռիսկը պայմանավորված է համախառն ազգային արդյունքի նվազմամբ կամ աճի ցածր տեմպերով, ապրանքների գների կտրուկ աճով, արտահանման եկամուտների նվազմամբ և այլն:

Մակրոտնտեսական ռիսկը պայմանավորված է երկրում տնտեսական հարաբերությունների խախտման և անբարենպաստ ֆինանսական գործոնների առաջացմամբ:

Ֆինանսական ռիսկի առաջացումն արդյունք է արտաքին պարտքի և համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի խզման:

Օրենսդրական ռիսկը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, օրենսդրական պահանջների խախտումներով և այլն:

Փոխանցման ռիսկն առաջանում է արտարժույթի անհրաժեշտ ծավալի բացակայությունից, արտաքին առևտրի, ներդրումների և վճարային հաշվեկշռի ռիսկերից, պարտավորությունների կատարումից հրաժարման, պայմանագրի պահանջների վերանայման և այլնի հետևանքով:

Ճյուղային ռիսկն առաջանում է տվյալ ճյուղի ցածր եկամտաբերության կամ եկամտաբերության մակարդակի կտրուկ նվազման, նախագծերի վերանայման և այլնի հետևանքով:

Ներքին ռիսկեր

Ներքին ռիսկերն առաջանում են բանկի գործունեության ընթացքում և պայմանավորված են նրանց կողմից իրականացվող գործարքներով:

Բանկային գործունեության ընթացքում առաջացող ներքին ռիսկերը դասակարգվում են հետևյալ խմբերի.

1. հաշվեկշռային ռիսկ, որն իր հերթին ստորաբաժանվում է՝
 - բանկի ակտիվային գործառնություններով պայմանավորված ռիսկեր,
 - բանկի պասիվային գործառնություններով պայմանավորված ռիսկեր:
2. հետհաշվեկշռային ռիսկ,
3. բանկի կողմից ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման հետ կապված ռիսկեր,
4. բանկի կողմից ֆինանսական ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկեր:

Հաշվեկշռային ռիսկերի խմբում ընդգրկվում են.

- վարկային,
- արժեթղթերի,
- ներդրումային,
- կապիտալի կառուցվածքի և այլ ռիսկերը:

Հետհաշվեկշռային ռիսկերի խմբին դասվում են.

- ֆինանսական երաշխիքների,
- գրավների,
- հավատարմագրային գործառնությունների և այլ ռիսկերը:

Բանկի կողմից ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման հետ կապված ռիսկերի խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- տոկոսային,
- անվճարունակության,
- արտարժույթային,
- իրացվելիության:

Բանկի կողմից ֆինանսական ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկերի խմբում ընդգրկվում են.

- գործառնական,
- տեխնոլոգիական,
- անվտանգության,
- նորամուծության,
- ռազմավարական,
- հաշվառման,

- վարչական,
- կազմակերպչական:

Գործառնական ռիսկերն իրենց մեջ ներառում են բանկի ծառայությունների գնե-
րի փոփոխության և ընթացիկ ծախսերի ավելացման հետ կապված ռիսկեր:

Տեխնոլոգիական ռիսկերին դասվում են տեխնոլոգիական գործառնությունների
հետ կապված համակարգչային ցանցի կամ այլ տեխնոլոգիական սարքավորումնե-
րի խափանման, փաստաթղթերի կորստի և այլ ռիսկեր:

Անվտանգության ռիսկերը կապված են բանկի տարածքի անվտանգության, ներ-
քին հակահրդեհային անվտանգության և նմանատիպ այլ ռիսկերով:

Նորամուծության ռիսկերը նախագծային, նոր գյուտերի հետ կապված ռիսկերն
են: Դա իր մեջ ներառում է նորամուծության սխալ ընտրության ռիսկը, նորամուծու-
թյան համար սխալ ժամանակ ընտրելու ռիսկը և այլն:

Ռազմավարական ռիսկը բանկի ղեկավարության վարած ոչ ճիշտ քաղաքակա-
նության արդյունքում նախատեսված եկամուտներ չստանալու ռիսկն է, որի պատ-
ճառը կարող է լինել ռիսկի թույլատրելի մակարդակը գերազանցելը, ռիսկի աստի-
ճանի սխալ գնահատումը և այլն: Սա բանկի սխալ որոշման ռիսկն է, գործարքների
ժամկետների ոչ ճիշտ որոշման և այլ ռիսկերը:

Հաշվառման ռիսկերը կապված են ոչ ճիշտ կամ ոչ ժամանակին հաշվառման հետ:
Դա չհաշվառված թղթակցությունների պատճառով առաջացած խաբեության ռիսկն է:

Վարչական ռիսկերը հիմնականում կապված են վճարման և այլ փաստաթղթերի
կորստի հետ: Վարչական ռիսկերը սերտորեն կապված են բանկային չարաշահում-
ների հետ:

Կազմակերպչական ռիսկերը կապված են բարձրակարգ մասնագետների բացա-
կայության, ֆինանսական տեղեկատվության բացակայության և նմանատիպ այլ
պատճառների հետ:

19.1.2. Ռիսկերի գնահատումը և կառավարումը

Ռիսկերի դասկարգումը հստակ պատկերացնելուց հետո անհրաժեշտ է բացա-
հայտել դրանց աստիճանը:

Ռիսկը բնորոշվում է երեք աստիճանով՝

- բարձր
- չափավոր
- ցածր:

Ռիսկի բարձր աստիճանը վկայում է այն մասին, որ բանկային ներդրումներն ամ-
բողջությամբ հավասար են կորստի:

Չափավոր ռիսկը ծագում է այն ժամանակ, երբ բանկը կորցնում է հիմնական
պարտքի միայն մի մասը, և ռիսկը դեռևս գտնվում է թույլատրելի սահմաններում:

Ցածր ռիսկն աննշան ռիսկն է, որը թույլ է տալիս բանկին ստանալ կայուն շահույթ:

Ռիսկերը գնահատելիս կարելի է ցուցաբերել երկու մոտեցում՝ ընդհանուր և մաս-
նավոր: Երկու դեպքում էլ հաշվարկի համար հիմք է հանդիսանում տվյալ բանկի
թույլատրելի ռիսկի չափի և սպասվելիք կորուստների միջև գոյություն ունեցող
կախվածության որոշումը:

Ընդհանուր կամ համալիր մոտեցումը բանկի համախառն ռիսկն է նրա գործունեության ամբողջ ոլորտում: Ընդհանուր ռիսկը կարելի է հաշվել ինչպես պարբերաբար, այնպես էլ բանկի գործունեության ցուցանիշների կտրուկ վատթարացման դեպքում:

Մասնավոր մոտեցումը բանկի առանձին գործարքի ռիսկն է: Մասնավոր ռիսկը որոշվում է յուրաքանչյուր գործարքի համար առանձին եղանակով:

Բանկային ռիսկերի կառավարումը բանկային ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր գործողությունների համակարգ է, որը ներառում է ռիսկերի կանխատեսում, նրանց հնարավոր չափերի և հետևանքների որոշում, ռիսկերի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման միջոցառումների իրականացում:

Ռիսկերի արդյունավետ կառավարումը ենթադրում է ռիսկերի կառավարման հիմնավորված քաղաքականության մշակում և իրագործում: Այդ քաղաքականությունը պետք է ներառի հետևյալ առանցքային բաժինները.

1. Ռիսկերի կառավարման նպատակը (նպատակները): Որպես կանոն, դրանք ընդհանուր են բոլոր բանկերի համար և վերջին հաշվով հանգում են ռիսկերի և շահութաբերության ընդունելի (օպտիմալ) հարաբերակցության հաստատմանը:
2. Ռիսկերի կառավարման խնդիրները: Այս բաժնում պետք է բացահայտվի, թե ռիսկերի վերը մշված տարբերակների իրագործման համար ինչպիսի խնդիրներ պետք է լուծվեն: Դրանք հիմնականում հետևյալն են.
 - ռիսկերի բնորոշում և դասակարգում,
 - ռիսկերի առաջացման աղբյուրների պարզում,
 - ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար որոշակի սահմանաչափի հաստատում,
 - ենթադրվող կորուստների ծավալների գնահատում,
 - հնարավոր կորուստների փոխհատուցման աղբյուրների բացահայտում, հիմնավորում, գնահատում:
3. Ռիսկերի կառավարման համար պատասխանատու անձինք և մարմինները: Որպես կանոն, ռիսկերի կառավարման համար վերջնական պատասխանատվությունը կրում է բանկի խորհուրդը:
4. Ռիսկերի կառավարման մեթոդները: Դրանք կախված են տվյալ բանկի առանձնահատկություններից և հնարավորություններից: Ռիսկերի կառավարման հիմնական մեթոդների շարքին են դասվում.
 - Դիվերսիֆիկացում կամ տարբերակում: Կարող է լինել ըստ ֆինանսական գործիքների, տարածքային տեղաբաշխման, արժույթի տեսակների, տնտեսության ճյուղի կամ կազմակերպությունների, տոկոսադրույքների, ժամկետների և այլ չափանիշների.
 - Ծածկույթի առկայություն (երաշխիք, գրավ, ակտիվներ և այլն).
 - Ապահովագրություն.
 - Մարքեթինգ և կանխատեսումներ.
 - Նորմատիվների և ճեղքվածքի կառավարում:
5. Ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ հիմնական միջոցառումների մշակում: Այստեղ մանրամասն սահմանվում են ռիսկերի կառավարման յուրաքանչյուր փուլում նախատեսվող միջոցառումները, դրանց իրագործման ժամկետները և պատասխանատուները:

6. Ռիսկերի կառավարման սկզբունքային հիմնադրույթները տնտեսական իրավիճակների հնարավոր փոփոխությունների պայմաններում: Սա նշանակում է, որ ռիսկերի կառավարման քաղաքականությունը պետք է մշակվի ոչ թե մեկ, այլ մի քանի այլընտրանքային տարբերակներով՝ պայմանավորված տնտեսության մեջ ակնկալվող փոփոխությունների հնարավոր միտումներով, ներառյալ նաև ֆորս-մաժորային իրավիճակները:

7. Ռիսկերի կառավարման նկատմամբ կիրառվող վերահսկողության մեխանիզմները: Այստեղ ընդգրկվում են ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումների վերահսկման կարգը, պարբերականությունն ու մեխանիզմները:

Բանկերի կողմից ռիսկերի կառավարման գործընթացը կոչվում է հեջավորում կամ հեջինգ: Հեջինգը հնարավոր կորուստների գծով ռիսկը նվազագույնին հասցնելու գործընթացն է:

Իր գործունեությունն իրականացնելիս բանկը պետք է ստանձնի այնպիսի ռիսկեր, որոնք ի վիճակի լինի հետագայում ճիշտ գնահատել և արդյունավետ կառավարել: Բանկային ռիսկերի կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- կանխատեսել հնարավոր կորուստները կամ այդ կորուստների առաջացման աղբյուրները,
- ռիսկերի նվազեցման տնտեսական խթանում,
- ռիսկերի կառավարման քաղաքականության և մեխանիզմների հստակությունը,
- ղեկավարների և աշխատակիցների պատասխանատվությունը և պարտականությունը,
- բանկի բոլոր ստորաբաժանումների և ծառայությունների կողմից ռիսկերի կորուստի նվազեցման վերահսկում:

Ռիսկերի կառավարման գործընթացի վերջնական և կարևոր փուլը ռիսկերի ծագման կանխարգելումը կամ դրանց նվազեցումն է: Օրինակ՝ վարկային ռիսկերի կանխարգելման և նվազեցման միջոցներից են երաշխիքները, զրավը, վարկերի և դեպոզիտների ապահովագրման ինստիտուտը, փոխառուի վճարունակության գնահատումը և այլն:

Այն դեպքերում, երբ հնարավոր չէ ռիսկերն ամբողջությամբ կանխել, ուժի մեջ է մտնում նրանց կարգավորման վերջին միջոցը՝ փոխհատուցումը, որը ներառում է.

- բանկի կողմից ծախսերի հաշվին ձևավորվող պահուստաֆոնդը,
- ծախսերի հաշվին համապատասխան կորուստների դուրսգրումը,
- վարկի տոկոսների կուտակման դադարեցումը:

Հարկ է նշել, որ ռիսկերը, որպես կանոն, հանդես են գալիս որոշակի փոխկապակցվածությամբ: Այսինքն՝ ռիսկի որոշակի տեսակի առաջացումը և ոչ զրազետ կառավարումը կարող են հանգեցնել նաև այլ տեսակների առաջացմանը: Օրինակ՝ վարկային ռիսկը կարող է առաջ բերել հետագայում իրացվելիության, իսկ վերջինս՝ անվճարունակության ռիսկ: Դա է պատճառը, որ ցանկալի արդյունքների ստացման նպատակով ռիսկերի կառավարումը պետք է դիտարկել ոչ թե առանձին-առանձին, այլ միասնական և համակարգված ձևով:

Այժմ ներկայացնենք բանկային գործունեության համար առավել բնորոշ և կառավարման տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության արժանի ռիսկերի տեսակները և դրանց կառավարման առանձնահատկությունները:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն բանի հավանականությունն է, որ բանկի ակտիվների, մասնավորապես՝ վարկային պորտֆելի մեծությունը կնվազի, վարկերի արժեքը կփոքրանա և կհավասարվի զրոյի: Քանի որ առևտրային բանկերն իրենց գործունեությունը կազմակերպում են հիմնականում ներգրավված միջոցների հաշվին, տեղաբաշխված գումարների կորուստը բանկին կանգնեցնում է բավականին լուրջ խնդիրների և դրանց լուծման անհրաժեշտության առջև: Ի տարբերություն ռիսկի մնացած ձևերի՝ վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունն ու կոնկրետ միջոցառումները մշակվում են այնպես, որ կանխարգելեն կամ ի սկզբանե նվազեցնեն վարկային ռիսկը, այլ ոչ թե ներազդեն դրա վրա, երբ այն արդեն առկա է: Եթե շուկայական, ինչպես նաև իրացվելիության ռիսկերը ենթակա են կառավարման դրանց առաջացմանը և ներգործությանը զուգահեռ, ապա վարկային ռիսկի առաջացումն անհրաժեշտ է հնարավորինս կանխել կամ մեղմացնել հենց սկզբից՝ վարկի տրամադրման պահին: Վարկային ռիսկի կառավարումն այստեղ հիմնականում դրա գնահատման մեջ է, որը պետք է կատարվի նախքան վարկի տրամադրումը: Վարկային պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում վարկային ռիսկի կառավարումն իր մեջ կներառի միայն բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը՝ վարկի նպատակային օգտագործման, ինչպես նաև վարկի գումարի և տոկոսագումարների ժամանակին և լրիվ մարման բնագավառում:

Վարկային ռիսկի կառավարումը ենթադրում է նախ և առաջ վարկային պորտֆելի դիվերսիֆիկացում՝ ելնելով մի շարք չափանիշներից: Դիվերսիֆիկացումը կատարվում է.

- ըստ տնտեսության ճյուղերի կամ ոլորտների,
- ըստ տարածաշրջանների,
- ըստ վարկերի տեսակների,
- ըստ հաճախորդների խմբերի և այլն:

Վարկային պորտֆելի կազմն ու կառուցվածքը սահմանելու նպատակով անհրաժեշտ է սահմանել հետևյալ հարաբերակցությունները (կամ դրանց ընդունելի միջակայքերը).

- առևտրային վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ,
- սպառողական վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ,
- ապահովված վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ,
- խոշոր վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ,
- ըստ տարածաշրջանների տրամադրված վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ,
- ըստ հաճախորդների տրամադրված վարկերը՝ ընդհանուր վարկերի նկատմամբ:

Վարկային պորտֆելի որակը գնահատվում է հետևյալ հիմնական ցուցանիշներով.

- վարկերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստաֆոնդի մեծությունը,
- ժամկետանց վարկերի հարաբերությունն ընդհանուր վարկերին,
- ժամկետանց վարկերի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին,
- դուրս գրված վարկերի հարաբերությունն ընդհանուր վարկերին և այլն:

Ստացված ցուցանիշներն իրատեսորեն գնահատելու համար անհրաժեշտ է.

- դրանք համեմատել բանկի նախորդ ժամանակահատվածների նույնանուն ցուցանիշների հետ,
- դրանք համեմատել այլ բանկերի միևնույն ժամանակահատվածի նույնանուն ցուցանիշների հետ:

Այսպիսով՝ վարկային ռիսկը կառավարելու նպատակով բանկը պետք է ունենա վարկերի դիվերսիֆիկացված պորտֆել, որպեսզի ապահովագրի իրեն հնարավոր չվճարումներից և նվազագույնի հասցնի չվերադարձվող գումարի ծավալը: Վարկային պորտֆելի վերը նշված ցուցանիշների և վարկերի որակի հիման վրա վարկային բաժնի աշխատակիցները գնահատում են առկա իրավիճակը և մշակում հետագա վարկերի տրամադրման քաղաքականությունը՝ ելնելով վարկային պորտֆելի որակը լավացնելու, վարկային ռիսկը նվազեցնելու տեսանկյունից:

Վարկային ռիսկի առաջացման աղբյուր կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները.

- գրավի առկայությունը կամ դրա բացակայությունը,
- տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը հաճախորդի վճարունակության վրա,
- ֆորս– մաժորային իրավիճակների առաջացումը,
- օրենսդրական փոփոխությունները,
- հաճախորդի գործունեության ոլորտում մրցակցության խորացումը,
- տնտեսությունում տիրող ընդհանուր իրավիճակը, տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները,
- մեկ հաճախորդին տրամադրվող վարկի առավելագույն չափը և այլն:

Ժամանակակից պայմաններում վարկի ռիսկայնության աստիճանի նվազեցման առավել գործուն և իրատեսական տարբերակը գրավի առկայությունն է: Վարկային ռիսկի գնահատումը գրավով ապահովվածության տեսանկյունից որոշվում է գրավով ապահովված վարկերի և ընդհանուր վարկերի գումարների հարաբերակցությամբ: Բնականաբար, որքան բարձր է վարկային պորտֆելում գրավով ապահովված վարկերի տեսակարար կշիռը, այնքան ցածր է տվյալ վարկային պորտֆելի ռիսկայնության աստիճանը:

Այն դեպքերում, երբ վարկային պայմանագիրը կնքվում է սահող տոկոսադրույքի պայմանով, տոկոսադրույքը կարող է բարձրացվել բանկի կողմից այնքան, որ հաճախորդն ի վիճակի չլինի մարելու վարկի տոկոսները: Տոկոսադրույքների փոփոխության հետևանքով առաջացող վարկային ռիսկը գնահատելու համար որպես հիմք վերցվում է այն առավելագույն տոկոսադրույքը, որը վարկառուն կարող է վճարել: Դրանից ցածր տոկոսադրույքով տրամադրված վարկերի ողջ գումարը պետք է բաժանվի ողջ վարկային պորտֆելի մեծությամբ: Գոյություն ունի նաև երկրորդ մոտեցումը. առավելագույն տոկոսադրույքը գերազանցող վարկերի ընդհանուր գումարը բաժանվում է վարկային պորտֆելի ընդհանուր մեծության վրա:

Բանկի կողմից յուրաքանչյուր առանձին դեպքում վարկի տրամադրմանը պետք է նախորդեն հաճախորդի վարկունակության մանրամասն ուսումնասիրումն ու բացահայտումը: Ընդ որում, բանկը պետք է գնահատի հաճախորդի վարկունակությունը ոչ միայն ներկա ժամանակահատվածի համար, այլև կանխատեսի նրա ֆինանսական վիճակի կայունությունը հեռանկարում:

Տոկոսադրույքի փոփոխության (տոկոսային) ռիսկ

Տոկոսային ռիսկը բանկի կողմից կորուստներ կրելու հավանականությունն է՝ պայմանավորված շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով: Այն արտահայտվում է ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսագումարների ավելացմամբ կամ տեղաբաշխված միջոցներից ստացող եկամուտների նվազմամբ: Նկատի ունենալով, որ բանկերի եկամուտների և ծախսերի հիմնական մասը կազմում են տոկոսային եկամուտները և ծախսերը, ակնհայտ են դառնում տվյալ ռիսկի ներգործության աստիճանը և կառավարման կարևորությունը:

Տոկոսային ռիսկը կարող է լինել չորս տեսակի.

- Ժամկետների անհամապատասխանության ռիսկ: Այս ռիսկն առաջ է գալիս, երբ ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների վերանայման (վերազնահատման) ժամկետները չեն համընկնում: Համաձայն միջազգային փորձի՝ եկամտաբերության կորի ռիսկին և այս ռիսկին բաժին է ընկնում տոկոսային ռիսկի 20–25%–ը:
- Բազիսային ռիսկ: Այս ռիսկը կապված է տոկոսադրույքների կառուցվածքի փոփոխության հետ: Այն ի հայտ է գալիս, երբ բանկի ներգրավված և տեղաբաշխված տոկոսադրույքներն ունեն կառուցվածքային տարբերություն: Տվյալ ռիսկն առաջանում է տարբեր տեսակի տոկոսադրույքների ապագա փոփոխությունների անորոշության հետևանքով: Բազիսային ռիսկը կտրուկ աճում է, երբ բանկը միջոցներ է ներգրավում բազիսային տոկոսադրույքով, իսկ տեղաբաշխում փոփոխվող տոկոսադրույքով և հակառակը: Այս ռիսկը կարող է նաև հանդես գալ, երբ ներգրավված և տեղաբաշխված միջոցները կապված են տարբեր բազիսային տոկոսադրույքների հետ: Համաձայն միջազգային փորձի՝ այս ռիսկին բաժին է ընկնում տոկոսային ռիսկի 50–65%–ը:
- Օպցիոնային ռիսկ: Այս ռիսկն առաջանում է ժամկետից շուտ փոխառուների կողմից փոխառությունները մարելու կամ ավանդատուների կողմից ավանդները հետ վերցնելու հետևանքով: Այս ռիսկին բաժին է ընկնում տոկոսային ռիսկի 20–25%–ը:
- Եկամտաբերության կորի ռիսկ: Այս ռիսկն առաջանում է տարբեր ժամկետայնությամբ միևնույն ֆինանսական գործիքի եկամտաբերության սիրելի փոփոխության հետևանքով: Օրինակ՝ կարճաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը կարող է նվազել ավելի արագ, քան երկարաժամկետինը: Այս ռիսկը տարբերվում է ժամկետների անհամապատասխանության ռիսկից, որտեղ տոկոսադրույքները տարբեր են միևնույն մարման ժամկետ ունեցող տարբեր ֆինանսական գործիքների համար:

Այսպիսով՝ տոկոսային ռիսկը պայմանավորված է ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ բանկի կախվածության աստիճանով և տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ բանկի զգայուն ակտիվների և զգայուն պարտավորությունների անհամապատասխանությամբ:

Տոկոսային, և, ընդհանրապես, շուկայական ռիսկի կառավարման առանձնահատկությունն այն է, որ դրա ազդեցությունը կարող է լինել ինչպես բացասական, այնպես էլ դրական: Այսինքն՝ այս ռիսկի ճիշտ կառավարման արդյունքում բանկը ոչ միայն հնարավոր կորուստներ չի կրի, այլև կստանա լրացուցիչ եկամուտ:

Տոկոսային ռիսկը արտահայտվում է տոկոսադրույքների ճեղքվածքի միջոցով.

$$\text{GAP} = \text{RSA} - \text{RSL},$$

որտեղ՝

RSA –ն տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներն են, RSL –ը տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորություններն են:

Տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն են համարվում այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնք տոկոսադրույքները դիտարկվող ժամանակահատվածում ենթակա են փոփոխման: Դրանք են պատկանում.

- այն պարտավորությունները, որոնք սահմանվող ժամանակահատվածում ենթակա են կատարման, և այն ակտիվները, որոնք սահմանվող ժամանակահատվածում ենթակա են մարման,
- սահող տոկոսադրույքներով ակտիվներն ու պարտավորությունները,
- մասնակի կամ միջանկյալ վճարումների ձևով ակտիվներն ու պարտավորությունները (օրինակ՝ վարկի գծով մարվող կամ ավանդների գծով վճարվող ամենամսյա տոկոսագումարները):

Բանկի տոկոսային ռիսկը կարող է լինել.

- զրոյական, երբ տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվները հավասար են տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորություններին,
- բացասական, երբ տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորությունները գերազանցում են տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներին, այս դեպքում.
 - եթե տոկոսադրույքներն աճում են միևնույն չափով, ապա բանկի տոկոսագումարների վճարման ծախսերն աճում են ավելի արագ, քան ակտիվների դիմաց ստացվող եկամուտները: Արդյունքում բանկի զուտ տոկոսային եկամուտը նվազում է,
 - եթե տոկոսադրույքները նվազում են միևնույն չափով, ապա ավելի ցածր տոկոսադրույքով վերագնահատվում են առավել շատ պարտավորություններ, քան ակտիվներ: Արդյունքում բանկի զուտ տոկոսային եկամուտն աճում է,
- դրական, երբ տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվները գերազանցում են տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորություններին, այս դեպքում.
 - եթե տոկոսադրույքներն աճում են միևնույն չափով, ապա տոկոսային եկամուտներն աճում են ավելի արագ, քան տոկոսային ծախսերը, արդյունքում բանկի զուտ տոկոսային եկամուտն աճում է,
 - եթե տոկոսադրույքները նվազում են միևնույն չափով, ապա բանկի տոկոսային եկամուտները նվազում են ավելի արագ, քան տոկոսային ծախսերը, արդյունքում բանկի զուտ տոկոսային եկամուտը նվազում է:

Տոկոսային ճեղքվածքի կառավարումը կարող է իրականացվել ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ (սպեկուլյատիվ) եղանակներով: Պասիվ եղանակի դեպքում բանկն ապահովագրում է իր զուտ տոկոսային եկամուտները շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների ազդեցությունից: Այդ նպատակով բանկն աշխատում է ապահովել զրոյականին մոտ տոկոսային ճեղքվածք: Ակտիվ եղանակի դեպքում կատարվում է շուկայական իրավիճակի, մասնավորապես տոկոսադրույքների

հնարավոր փոփոխությունների կանխատեսում, ինչի հիման վրա բանկը կառավարում է իր տոկոսային ճեղքվածքը՝ մեծացնելով զուտ տոկոսային եկամտի ծավալը:

Այսպիսով՝ տոկոսային ռիսկը հիմնականում ի հայտ է գալիս այն դեպքում, երբ ակտիվների և պարտավորությունների մարման կամ տոկոսադրույքների վերանայման ժամկետները չեն համընկնում:

Տոկոսային ռիսկի վրա ազդում են շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը, տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ծավալների փոփոխումը և այլն:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը պայմանավորված է ապագայում արտարժույթի փոխարժեքի փոփոխության միտումների անորոշությամբ, այսինքն՝ այլ արտարժույթների նկատմամբ ազգային արժույթի գնի հարաբերակցությամբ: Արտարժութային ռիսկ կարող է առաջանալ, երբ արտարժութային դիրքը (արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև տարբերությունն է՝ հաշվի առնելով նաև հետհաշվեկշռային անավարտ գործարքների՝ սփոթ, սվոպ, ֆորվարդ և ֆյուչերս, նկատմամբ պահանջները և պարտավորությունները) բաց է:

- Բանկերի արտարժութային դիրքը կարող է լինել.
 - Ջրոյական (փակ), երբ արտարժութային ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար են:
 - Բաց, երբ արտարժութային ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար չեն.
 - Կարճ դիրք. երբ արտարժութային ակտիվները փոքր են արտարժութային պարտավորություններից: Այս դեպքում, եթե տվյալ արտարժույթի փոխարժեքն աճում է, ապա բանկը պետք է ավելի շատ դրամ ծախսի իր արտարժութային պարտավորությունների կատարման համար և հակառակը:
 - Երկար դիրք. երբ արտարժութային ակտիվները գերազանցում են արտարժութային պարտավորությունները: Այս դեպքում, եթե տվյալ արտարժույթի փոխարժեքն աճում է, ապա բանկը պետք է ավելի քիչ արտարժույթ ծախսի իր դրամային պարտավորությունները կատարելու համար և հակառակը:
 - Համախառը դիրք. հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:
 - Ջուտ դիրք. հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի հանրագումար՝ հաշվի առնելով տվյալ դիրքի նշանը՝ կարճ կամ երկար:

Արտարժույթի ռիսկը կառավարվում է համապատասխան նորմատիվների միջոցով: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված է արտարժույթի տնօրինման նորմատիվ, որի տնտեսագիտական մեկնաբանությունը և գործողության մեխանիզմը տրվում են բանկային գործունեության նորմատիվների բաժնում:

Իրացվելիության ռիսկ

Անընդմեջ իրագործելով իր գործունեությանը բնորոշ գործառույթները՝ կապված դրամական միջոցների ներգրավման և դրանց տեղաբաշխման հետ՝ բանկն անընդհատ կարիք ունի իրացվելի միջոցների, այսինքն՝ այնպիսի ակտիվների, որոնք հնա-

րավոր լինի արագ և հեշտ վերածել դրամական միջոցների՝ բանկի համար աննշան ռիսկով կամ առանց ռիսկի:

Այսպիսով՝ բանկի իրացվելիությունը որոշակի ակտիվային միջոցի՝ դրամի ձևով օգտագործման կամ որպես այդպիսին՝ նրա արագ փոխարկման հնարավորությունն է, երբ տվյալ միջոցը կրում է իր անվանական արժեքի աննշան կորուստ կամ պահպանում է այն անփոփոխ: Իրացվելիության հետ կապված գործում է 2 հիմնական ցուցանիշ՝ ժամանակ և զին:

Իրացվելիության տնտեսագիտական էությունը հետևյալում է. բանկը համարվում է իրացվելի, եթե նրա կանխիկ միջոցների և այլ ակտիվների գումարը, ինչպես նաև այլ աղբյուրներից դրամական միջոցների արագ ներգրավման հնարավորությունը բավարար են ֆինանսական և այլ պարտավորությունների ժամանակին մարման և շահավետ գործարքների կնքման համար: Բացի դրանից, ցանկացած արտառոց իրավիճակներում (օրինակ՝ դեպոզիտների աննախադեպ արտահոսք) բանկը պետք է ունենա բավարար չափով իրացվելի պահուստ, որը հնարավորություն կտա ապահովել բանկի կայունությունն ու վճարունակությունը:

Իրացվելիության կառավարման տեսությունը առաջացել և զարգացել է առևտրային բանկերի կազմակերպման և զարգացման հետ մեկտեղ: Սկզբնական փուլում բանկային իրացվելիության հարցն ուներ երկու տեսական մոտեցում:

Առաջին մոտեցումը հիմնվում էր նրա վրա, որ բանկի ակտիվների կառուցվածքն ըստ ժամկետի պետք է խստորեն համապատասխանի նրա պասիվների կառուցվածքին: Դա բացառում էր բանկի կողմից իր իրացվելիության կառավարման հարցում ակտիվ քաղաքականության ցուցաբերումը: Այս տեսության հիման վրա մշակվեց, այսպես կոչված, «ոսկյա բանկային օրենքը», համաձայն որի բանկի ֆինանսական պահանջների մեծությունն ու ժամկետները պետք է համապատասխանեն նրա պարտավորությունների չափերին ու ժամկետներին:

Երկրորդ մոտեցումը հիմնված է նրա վրա, որ ոչ մի, նույնիսկ ամենահզոր առևտրային բանկ ի վիճակի չէ ապահովագրել իրեն տնտեսական ճգնաժամերից, անվերադարձ վարկերից և այլն: Յետևաբար, բանկն անընդհատ պարտավոր է հոգ տանել իրացվելիության ապահովման մասին իր ակտիվների և պասիվների կառավարման միջոցով:

Իրացվելիության ապահովումը ակտիվների կառավարման միջոցով հիմնվում է հետևյալ պնդումների վրա.

1. Առևտրային բանկը կարող է պահպանել իր իրացվելիությունը, եթե նրա ակտիվները տեղաբաշխված են կարճաժամկետ վարկերում և ժամանակին մարվում են վարկառուների կողմից:
2. Առևտրային բանկը կարող է լինել իրացվելի, եթե նրա ակտիվները կարելի է արագ վաճառել ներդրողներին կամ գրավադրել դրամական միջոցների ստացման նպատակով: Այս պնդմանը համապատասխանող իրացվելի ռեսուրսների աղբյուր են հանդիսանում արժեթղթերի առանձին տեսակները, որոնք կարելի է հեշտությամբ փոխարկել դրամի:
3. Առևտրային բանկերի իրացվելիությունը կարելի է մեծացնել, եթե վարկերի մարման գծով կատարվող վճարումների ժամանակացույցի հիմքում դրվեն վարկառուի ապագա եկամուտները: Յետևաբար, բանկերի իրացվելիության

վրա կարելի է ներգործել՝ փոփոխելով վարկերի և ներդրումների մարման ժամկետների կառուցվածքը:

Իրացվելիության ապահովումը պասիվների կառավարման միջոցով՝ ենթադրում է դրամական միջոցների ներգրավում փոխատվական հիմունքներով:

Անդրադառնալով իրացվելիության հիմնախնդիրների լուծմանը բանկի ակտիվների և պասիվների փոխհամաձայնեցված կառավարման միջոցով, առևտրային բանկերը ստիպված են անընդհատ հավասարակշռություն ապահովել բանկի շահութաբերության և իրացվելիության միջև:

Ամփոփելով նշվածը՝ կարելի է եզրահանգել, որ իրացվելիության ռիսկը հավանականությունն է այն բանի, որ բանկը չի ունենա բավականաչափ դրամական միջոցներ իր պարտավորությունները մարելու կամ հաճախորդների պահանջմունքները բավարարելու համար: Բանկը, որը բախվել է իրացվելիության հիմնախնդրի հետ, ստիպված կլինի շտապ ներգրավել միջոցներ բավականին բարձր տոկոսադրույքներով, որը, վերջին հաշվով, հանգեցնում է նրա շահույթի նվազմանը: Իրացվելի միջոցների անբավարարությունն անմիջապես նկատվում է հաճախորդների կողմից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Այդ իսկ պատճառով իրացվելիության ռիսկի վատ կառավարումը կարող է հանգեցնել բանկի անվճարունակությանը:

Գործնականում բանկերը հազվադեպ են կանգնում իրացվելիության լուրջ հիմնախնդրի առջև, քանի որ նախ՝ այս ցուցանիշը խստորեն կառավարվում է կենտրոնական բանկի կողմից, և երկրորդ՝ այս հիմնախնդիրը հեշտությամբ լուծվում է միջբանկային շուկայում իրացվելի միջոցների փոխառության ճանապարհով:

Իրացվելիության ռիսկը կառավարվում է իրացվելիության նորմատիվների և իրացվելիության (կամ ժամանակային) ճեղքվածքի միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նորմատիվները դիտարկվում են ՀՀ բանկային գործունեության տնտեսական նորմատիվներին վերաբերող համապատասխան բաժնում:

Ինչ վերաբերում է իրացվելիության ճեղքվածքին, ապա այն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածի կտրվածքով մարման ենթակա բանկի պահանջների և այդ նույն ժամանակահատվածում վճարման ենթակա բանկի պարտավորությունների տարբերությունը: Խոսքը վերաբերում է պայմանագրային գործարքներին, որտեղ հաստատագրված են ինչպես մարման, այնպես էլ վճարման ժամկետները: Ցպահանջ միջոցները տվյալ հաշվարկներին մասնակցում են ռիսկայնության համապատասխան կշիռներով կամ գործակիցներով: Եթե այդ տարբերությունը (այսինքն՝ ճեղքվածքը) դրական է, ապա դիտարկվող ժամանակահատվածում բանկն իրացվելիության խնդիր չունի: Զրոյական ճեղքվածքը (որը, գործնականում, շատ քիչ է հավանական) ևս բանկի համար կարելի է դիտարկել որպես ընդունելի տարբերակ: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ տվյալ ժամանակահատվածում կա-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 1993թ. տարեկան հաշվետվություն», ՀՀ կենտրոնական բանկի տեղեկա-իր, Ե., 1994, էջ 6:

² Տե՛ս նույն տեղում, էջ 9:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 9, 10:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 1993թ. տարեկան հաշվետվություն», ՀՀ կենտրոնական բանկի տեղեկա-իր, Ե., 1994, էջ 13, 14:

տարվող ցանկացած անկանխատեսելի գործառնություն (օրինակ՝ ավանդների ժամկետից շուտ ստացում) կարող է արդեն լուրջ խնդիրներ առաջ բերել բանկի համար: Բացասական ճեղքվածքը, բնականաբար, ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում բանկն ունի իրացվելիության խնդիր: Այդ խնդիրը բանկերը հիմնականում լուծում են բարձրիրացվելի ակտիվների իրացման կամ միջբանկային շուկայում կարծաժամկետ փոխառությունների ներգրավման միջոցով:

Հարկ է նշել, որ իրացվելիության ճեղքվածքի հաշվարկը ռիսկի այս տեսակի կառավարման բնագավառում բանկին լիարժեք ճշգրտություն ապահովել չի կարող: Դա բացատրվում է նրանով, որ ցանկացած պայմանագրային գործարքի գծով ժամկետի տեսանկյունից կարող է խախտում դիտարկվել, օրինակ՝ վարկի մարումը սահմանված ժամկետից շուտ կամ ուշ, ավանդների ստացումը ժամկետից շուտ և այլն: Դրան անհրաժեշտ է ավելացնել նաև ցպահանջ պարտավորությունների գծով կատարվող գործառնությունների կատարման տարբեր հավանականությունները: Ուստի, իրացվելիության ռիսկի կառավարման այս մեթոդն ավելի շուտ կողմնորոշիչ և կանխարգելիչ բնույթ է կրում՝ հնարավորություն տալով բացահայտել դիտարկվող ժամանակահատվածում իրացվելի միջոցների դեֆիցիտի, ինչպես նաև հնարավոր ավելցուկային իրացվելիության փաստը: Ավելացնենք, որ առևտրային բանկերում ավելցուկային իրացվելիության գրանցումը ևս համարվում է ոչ ցանկալի, քանի որ վկայում է ռեսուրսների տեղաբաշխման բնագավառում բանկի ունեցած պրոբլեմների մասին, ինչն էլ իր հերթին նվազեցնում է բանկի եկամուտների և, վերջին հաշվով սպասվելիք շահույթի ծավալը: Դրանով են պայմանավորված առևտրային բանկերում ակտիվների օպտիմալ կառուցվածքի սահմանման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ինչի արդյունքում ընդունելի իրացվելիության պայմաններում բանկերն ապահովում են շահութաբերության ցանկալի մակարդակ:

19.2. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ստեղծման պահի և բանկային գործունեության ինքնուրույն կարգավորումը սկսելու հարցը չի արժանացել առանձնակի ուշադրության: Այս առումով նպատակահարմար է միայն արձանագրել իրավական բնույթ ունեցող այն գլխավոր փաստերը, որոնց արդյունքում սկսվում է արդեն զուտ հայկական բանկային համակարգի գործունեության ժամանակաշրջանը:

Անկախության հռչակումից հետո հիմնարար է այն, որ 1993թ. ապրիլի 27–ին ընդունվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Հայաստանի Հանրապետության բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքները:

Բանկային գործունեության առաջին հիմնական օրենքների կիրարկման սկզբի դրությամբ հայկական դրամական միավորի շրջանառության մեջ չգտնվելու հանգա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

մանքը պահանջում է հակիրճ անդրադարձ այն իրավիճակի արտացոլման ուղղությամբ, որ ստեղծվել էր հայկական դրամական միավորի շրջանառման պահի դրությամբ: Վերջինս այն իրական ելակետն է, որի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սկսվեց տեղական բանկերի գործունեության տնտեսական կարգավորման շարունակական գործընթացը:

«Տևական տնտեսական և տրանսպորտային շրջափակումների, հումքային, վառելիքաէներգետիկ ռեսուրսների անբավարարության հետևանքով կրճատվեցին արտադրության ծավալները, վատթարացան ձեռնարկությունների ֆինանսատնտեսական ցուցանիշները, խորացավ լարվածությունը սպառողական շուկայում, առաջացան գերարժեզրկման միտումներ»¹:

1993թ. դրամավարկային քաղաքականության վրա էական ազդեցություն ունեցան արտաքին գործոնները, հատկապես Ռուսաստանի Դաշնության դուրս գալը միասնական ռուբլու գոտուց: Դրությունն ավելի սրվեց նախկին միութենական մի շարք հանրապետությունների կողմից սեփական դրամական միավորին անցնելու, դրանց փոխանակման կուրսերը չկանոնակարգելու պատճառով, ինչը առաջացրեց ֆինանսական և վճարահաշվարկային տարբեր բարդություններ²: Վիճակը գերլարվածության հասավ 1993թ. նոյեմբերի կեսերին, երբ Ղազախստանն ու Ուզբեկստանը նույնպես որոշեցին դուրս գալ ռուբլու գոտուց: Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվեց սեփական դրամանիշը՝ դրամը, առանց բավարար նախապատրաստական աշխատանքների, դրամի կայունությունն ապահովող տարադրամային անհրաժեշտ պահուստների և սպառողական շուկայի լարվածությունը մեղմացնելու ապրանքային պաշարների բացակայության պայմաններում: Արդյունք չտվեցին նաև այդ հարցի շուրջ բանակցությունները Միջազգային վալյուտային ֆոնդի, տարբեր երկրների հետ³:

ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծված դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովը դրամաշրջանառության ոլորտում առկա դժվարությունները հաղթահարելու, այլ հանրապետություններից շրջանառությունից դուրս եկող դրամանիշերի ներհոսքը կանխելու, դրամաշրջանառության համակարգը կառավարելի դարձնելու, տնտեսությունը կայունացնելու և բնակչության սոցիալական պաշտպանվածությունն ապահովելու նպատակով որոշեց 1993թ. նոյեմբերի 22-ից Հայաստանի Հանրապետության տարածքում դադարեցնել ԽՍՀՄ պետբանկի և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի 1991–1992թթ. նմուշի դրամանիշերի շրջանառությունը: Փոխանակման փոխարժեք ընդունվեց 1:200 հարաբերակցությունը: 1994թ. մարտի 21-ից հանրապետությունում դրամափոխանակումը համարվում է ավարտված, իսկ մարտի 1-ից բոլոր հաշվարկները կատարվում են միայն դրամով⁴:

Մինևույն ժամանակ 1993թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տարածքում գործել են 50 առևտրային բանկեր իրենց 123 բաժանմունքներով և մասնաճյուղերով՝ 1.5 մլրդ ռուբլի կանոնադրական կապիտալի ընդհանուր գումարով: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած 100 մլն ռուբլի (նախկին 40 մլն ռուբլու փոխարեն) մվազագույն պահանջի կիրառման արդյունքում 1993թ. ընթացքում բան-

¹ Տե՛ս «Բանկերի – բանկային ուղծունեության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված է 30.09.1996, հոդ. 44, կետ 2:

կերի կանոնադրական կապիտալը գումարային արտահայտությամբ աճել էր շուրջ 6.4 անգամ և 1994թ. հունվարի 1–ի դրությամբ կազմել էր արդեն 9.6 մլրդ ռուբլի⁵: Թիվ 19.2.1 աղյուսակում արտացոլվել է դրամափոխանակման ընթացքում գործող առևտրային բանկերի կանոնադրական կապիտալի վերահաշվարկը ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 19.2.1.

Դրամափոխանակման ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր և բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն մեծությունների վերահաշվարկը ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով

		Բանկի նվազա- ույն կապիտալը	Բանկային համակար ղ ընդհանուր կապիտալը
1.	Ռուբլիներով	100.000.000,0	9.600.000.000,0
2.	Դրամափոխանակման 200:1 հա-րաբերակցությամբ վերահաշվու-մից հետո, ՀՀ դրամ	500.000,0	48.000.000,0
3.	ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքները մեկ ԱՄՆ դոլարի ¹ նկատմամբ.		
3.1.	22.11.93 թ. 1 ԱՄՆ դոլար = 14,50 ՀՀ դրամ	34.482.76 ԱՄՆ դոլար	3.310.344.82 ԱՄՆ դոլար
3.2.	22.12.93 թ. 1 ԱՄՆ դոլար = 77,00 ՀՀ դրամ	6.493.51 ԱՄՆ դոլար	623.376.62 ԱՄՆ դոլար
3.3.	31.12.93 թ. 1 ԱՄՆ դոլար = 75,00 ՀՀ դրամ	6.666.67 ԱՄՆ դոլար	640.000.0 ԱՄՆ դոլար
3.4.	22.01.94 թ. 1 ԱՄՆ դոլար = 96,00 ՀՀ դրամ	5.208.33 ԱՄՆ դոլար	500.000.0 ԱՄՆ դոլար
3.5.	22.02.94 թ. 1 ԱՄՆ դոլար = 162,00 ՀՀ դրամ	3.086.42 ԱՄՆ դոլար	296.296.30 ԱՄՆ դոլար
3.6.	22.03.94 թ. 1 ԱՄՆ դոլար = 213,70 ՀՀ դրամ	2.339.72 ԱՄՆ դոլար	224.613.94 ԱՄՆ դոլար

Աղյուսակի տվյալների համաձայն, եթե դրամափոխանակման սկզբին՝ 1993թ. նո-յեմբերի 22–ի դրությամբ, 100 մլն ռուբլու կանոնադրական կապիտալի նվազագույն մեծության պահանջի վերահաշվարկման արդյունքում այդ պահանջի դրամային հա-մարժեքը կազմել է 500 հազ. դրամ, իսկ բանկային համակարգի ընդհանուր կապի-տալի մեծությունը՝ 48 մլն դրամ, որոնք ԱՄՆ դոլարի փոխարժեքով համապատաս-

¹ Բանկերի կապիտալի – հատկապես կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները նա-բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի հիմնական մոտեցումներից են:

² ՀՀ ԿԲ 20.09.2004թ. թիվ 237–Ն որոշումը փոփոխությունների – լրացումների է ենթարկվել 24.12.2004 թ. թիվ 357–Ն, 11.03.2005 թ. թիվ 101–Ն – 26.04.2005 թ. թիվ 195–Ն որոշումներով:

խանաբար կազմել են շուրջ 35 հազ. ԱՄՆ դոլար և մոտ 3.3 մլն ԱՄՆ դոլար, ապա դրամափոխանակման ավարտին՝ 1994թ. մարտի 22–ի դրությամբ, այդ օրվա պաշտոնական փոխարժեքով վերահաշվարկման արդյունքում նվազագույն կապիտալի պահանջի մեծությունն արդեն կազմում է մոտ 2.3 հազ. ԱՄՆ դոլար, իսկ բանկային համակարգի կապիտալի ընդհանուր մեծությունն ընդամենը 224.6 հազ. ԱՄՆ դոլար:

Ակնհայտ է նման իրողության անհամատեղելիությունը ինչպես ավանդատուների շահերի պաշտպանության, այնպես էլ կայուն, հուսալի և ճկուն բանկային համակարգի ստեղծման ու զարգացման խնդիրների իրագործման հետ: Ուստի պատահական չի եղել ՀՀ կենտրոնական բանկի վարչության կողմից արդեն 1994թ. մարտի 30–ին «Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի մասին» թիվ 10 որոշման ընդունումը, որը նորանկախ հանրապետության սեփական դրամական միավորի շրջանառության պայմաններում բանկերի գործունեության տնտեսական կարգավորմանն ուղղված առաջին փաստաթղթերից է:

Բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի սահմանման հիմնախնդրի կարևորման վկայությունն է նաև այն, որ նշված որոշումը մոտ երկու ամսով նախորդել է ՀՀ կենտրոնական բանկի վարչության 1994թ. մայիսի 26–ի «Հայաստանի Հանրապետության բանկերի գործունեության կարգավորման տնտեսական նորմատիվների և դրանց խախտումների դեպքում պատժամիջոցների սահմանման մասին» թիվ 37 որոշմանը: 1994 թ.–ից առ այսօր հիմնական տնտեսական նորմատիվների համակարգը ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար կատարելագործվել է (1994–2003թթ. ընթացքում հիմնական տնտեսական նորմատիվների և դրանց փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումներն արտացոլված են թիվ 2 հավելվածում):

Սակայն մինչև դրամափոխանակումը հանրապետությունում թեկուզ ռուբլու գոտում գտնվելու պայմաններում իրականացվել է բանկերի գործունեության տնտեսական կարգավորում: Դեռևս ԽՍՀՄ–ում, երբ ազատականացվեց բանկային գործունեության դաշտը, առաջացավ բանկերի գործունեության նորմատիվային կարգավորման անհրաժեշտություն: Բանկային գործունեության կարգավորման առաջին տնտեսական նորմատիվները սահմանվեցին 1989 թ. ԽՍՀՄ պետբանկի կողմից: Դրանք էին՝

- բանկի սեփական միջոցների և պարտավորությունների հարաբերակցությունը (նվազագույնը 4:20՝ պետական և 1:12՝ կոոպերատիվ բանկերի համար).
- քաղաքացիներից ներգրավված միջոցների և սեփական միջոցների հարաբերակցությունը (1:1).
- մեկ փոխառուին տրամադրվող վարկի առավելագույն չափը (սեփական միջոցների չափով պետական և 50 %-ի չափով կոոպերատիվ բանկերի համար).
- իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը (1:1):

Ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկումը, հեռանկարային զարգացման ծրագրերի մշակումը, վարկերի և մյուս եկամտաբեր ակտիվների որակի կառավարումը, ֆիզիկական անձանց ավանդների պարտադիր երաշխավորումը տեղ են գտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության

հիմնական տնտեսական նորմատիվների գործողության ընդհանուր պայմաններում և բխում են տնտեսական նորմատիվների բովանդակությունից և դրանց սահմանաչափերի ընձեռած հնարավորություններից: Ելնելով նրանից, որ «Հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող միևնույն տեսակի լիցենզիա ունեցող բոլոր բանկերի համար, ...»¹, կազմվել է թիվ 2 զծապատկերը, որտեղ արտացոլվել են բանկերի գործունեության տնտեսական կարգավորմանն ուղղված գործող փաստաթղթերը ժամանակի առումով:


Կենտրոնական բանկը կարող է վերանայել բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ, իսկ բանկերի կանոնադրական հիմնադրամի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը վերանայելիս կենտրոնական բանկը սահմանում է նաև այն ժամկետը, որի ընթացքում բանկերը պարտավոր են լրացնել այդ նվազագույն վերանայված չափերը, ընդ որում նշված ժամկետը չի կարող երկու տարուց պակաս լինել: Մյուս տնտեսական նորմատիվների նկատմամբ, բացառությամբ պարտադիր պահուստների նվազագույն չափի, որի գծով խստացման մասին կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ է մտնում անմիջապես կամ այդ որոշմամբ սահմանված ավելի ուշ ժամկետներում, կիրառման ժամկետներ չեն սահմանվում, և միայն կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը խստացնելու դեպքում նորմատիվների նոր սահմանաչափերն ուժի մեջ են մտնում ընդունման պահից վեց ամիս հետո, իսկ ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում կենտրոնական բանկի սահմանած պահից:

Բանկերի կապիտալն այն սկզբնաղբյուրն է, որի շուրջ կառուցված են բանկերի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների գործող համակարգը¹, դրանց ներկա և ապագա գործողությունը և այն ընդհանուր պայմանների ձևավորումն ու զարգացումը, որի շրջանակներում բանկերը կատարում են իրենց ակտիվային և պասիվային գործառնությունները:

Հիմնական տնտեսական գործող նորմատիվների միջև կապի բացահայտման նպատակով կազմվել է թիվ 19.2.2. աղյուսակը, որտեղ արտացոլվել են օրենքով և ՀՀ ԿԲ խորհրդի 2004թ. սեպտեմբերի 20–ի թիվ 237–Ն որոշմամբ հաստատված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը²:

Գծապատկեր 2

Բանկային գործունեության տնտեսական կարգավորման հիմնական փաստաթղթերի տեղը ժամանակի մեջ



¹ Տե՛ս ՀՀ 2005թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը, էջ 36:

ՀՀ ԿԲ–ի կողմից հաստատված և զործող հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը

Հիմնական տնտեսական նորմատիվները	Սահմանաչափերը
Բանկի կանոնադրական կապիտալի նվազա-ույն չափը	50 մլն դրամ
Բանկի ընդհանուր կապիտալի նվազա-ույն չափը 01.07.2005թ–ից: ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 195–Ն որոշման համաձայն 28.06.2005թ–ից	5,0 մլն ԱՄՆ դոլար 2.400.000.000 դրամ
ՀՀ ԿԲ–ի խորհրդի թիվ 357–Ն որոշման համաձայն նոր ստեղծվող բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազա-ույն չափը	5.000.000.000 դրամ
Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվները	
Ընդհանուր կապիտալի – ռիսկով կշռված ակտիվների -ումարների միջ– նվազա-ույն հարաբերակցությունը՝ Ն ₁ նորմատիվ	12%
Հիմնական կապիտալի – ռիսկով կշռված ակտիվների -ումարների միջ– նվազա-ույն հարաբերակցությունը՝ Ն ₂ նորմատիվ	8%
Բանկի իրացվելիության նորմատիվները	
Բանկի բարձրիրացվելի ակտիվների – ընդհանուր ակտիվների -ումարների միջ– նվազա-ույն հարաբերակցությունը՝ Ն ₁ նորմատիվ	20%
Բանկի բարձրիրացվելի ակտիվների – ցպահանջ պարտավորությունների միջ– նվազա-ույն հարաբերակցությունը՝ Ն ₂ նորմատիվ	80%
Մեկ փոխառուի -ծով ռիսկի առավելա-ույն չափը՝ Ն ₃ նորմատիվ	Չպետք է -երազանցի ընդհանուր կապիտալի 20%–ը
Խոշոր փոխառուների -ծով ռիսկի առավելա-ույն չափը՝ Ն ₃ նորմատիվ	Չպետք է -երազանցի ընդհանուր կապիտալի 500%–ը
Բանկի հետ կապված մեկ անձի -ծով ռիսկի առավելա-ույն չափը՝ Ն ₄ նորմատիվ	Չպետք է -երազանցի ընդհանուր կապիտալի 5%–ը
Բանկի հետ կապված բոլոր անձանց -ծով ռիսկի առավելա-ույն չափը՝ Ն ₄ նորմատիվ	Չպետք է -երազանցի ընդհանուր կապիտալի 20%–ը
Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազա-ույն չափը ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 195–Ն որոշման համաձայն 10.06.2005թ–ից	Ներ-րավված միջոցների 6 % 8 %
Արտարժույթի տնօրինման նորմատիվներ.	
Առաջին արտարժույթային խմբի համախառն դիրքի – բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը 01.10.2005թ–ից	15 %
Երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթների արտարժույթային դիրքը	Չի կարող -երազանցել ընդհանուր կապիտալի 5%–ը
Ըստ առանձին արտարժույթների բաց դիրքը 01.10.2005թ–ից	Չի կարող -երազանցել ընդհանուր կապիտալի 10%–ը
Բանկի պարտատերերի -ծով ռիսկի առավելա-ույն չափի նորմատիվ	Չի սահմանվում

Այլ հավասար պայմաններում՝ գործող կանոնակարգ 2–ի միայն ընդհանուր և հիմնական կապիտալների համարժեքության նորմատիվների սահմանաչափերի գործողությունը հաշվառելու, ակտիվներն ամբողջությամբ ռիսկային ընդունելու պայմաններում պայմանական բանկի ակտիվների ընդհանուր սահմանները ներկայացնելու նպատակով կազմվել է աղյուսակը:

Աղյուսակ 19.2.3

Պայմանական բանկի ակտիվների սահմանները ընդհանուր կապիտալի համարժեքության գործող նորմատիվների սահմանաչափերի պայմաններում

	2005թ. հունիսի 1–ի դրությամբ – դրանից հետո			
	Հաշվարկված ըստ համա- մասնությունների		Բացարձակ մեծությամբ մլն ԱՄՆ դոլար	
	Ն ₁	Ն ₂	Ն ₁	Ն ₂
Նվազա ույն հարաբերակցությունը	12%	8%	12%	8%
ԱԿՏԻՎ				
Ընդամենը	8,33		41,65	
ՊԱՍԻՎ				
Հիմնական կապիտալ	0,67		3,35	
Լրացուցիչ կապիտալ	0,33		1,65	
Ընդհանուր կապիտալ	1,00		5,00	
Ներդրված միջոցներ	7,33		36,65	
Ընդամենը	8,33		41,65	

Աղյուսակի հաշվարկային տվյալների համաձայն՝ պայմանական բանկի ակտիվներն ամբողջությամբ ռիսկային դիտելու պայմաններում բանկը յուրաքանչյուր միավոր ընդհանուր կապիտալի դիմաց կարող է ունենալ 8,33 միավոր ակտիվներ, որը կարող է տեղ գտնել 7,33 միավոր միջոցներ ներգրավելու դեպքում: Կամ պայմանական բանկը 5,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի փաստացի ընդհանուր կապիտալի առկայության դեպքում կունենա 41,65 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ակտիվներ, որը կարող է տեղ գտնել 36,65 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներգրավման ծավալների դեպքում:


Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների և տնտեսական կարգավորման գործող մյուս բաղկացուցիչների հիմքում ուղղակիորեն կամ անուղղակի առաջին հերթին ընկած է բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը, որի և մյուս տնտեսական նորմատիվների միջև կապն արտացոլված է թիվ 3 գծապատկերում:

Նկատի ունենալով, որ 2004թ. «ընթացքում համակարգը նոր բանկերով չի համալրվել, և 2004թ. վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 առևտրային բանկեր ..., «Հայկապ» բանկ ՓԲԸ–ն ... տարեվերջին տեղափոխվել է ընդհանուր վերահսկողության դաշտ»¹:

Գծապատկեր 3.

Ընդհանուր կապիտալի և հիմնական տնտեսական մյուս

Նորմատիվների միջև կապը պաշտոնական տվյալների հետ



ՀՀ բանկային համակարգի 2004թ. տվյալների համաձայն՝ միավոր ընդհանուր կապիտալի դիմաց ներգրավվել են 4,58 միավոր միջոցներ, և այս պայմաններում համակարգի ակտիվները միավոր ընդհանուր կապիտալի նկատմամբ կազմել են 5,58 միավոր, այն դեպքում, երբ 5,0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր կապիտալի միավորի դիմաց կարող են ներգրավվել 7,33 միավոր միջոցներ: Այդուհանդերձ հաշվարկում հաշվի չի առնվել ակտիվների ոչ ռիսկային դիտվելու հանգամանքը: Վերջինն արդեն վերաբերում է բանկերի իրացվելիության նորմատիվների գործողությանը: Բանկային համակարգի 65 մլրդ դրամ ընդհանուր կապիտալը հնարավորություն է ստեղծում ներգրավել 476,45 մլրդ դրամ միջոցներ կամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց 470 դրամ պայմանական փոխարժեքով՝ 1,0 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի միջոցներ և բանկային համակարգում ունենալ ակտիվներ 541,45 մլրդ դրամի կամ 1,15 մլրդ ԱՄՆ դոլարի չափով:

Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և ընդհանուր կապիտալի համարժե-

քության նորմատիվների սահմանաչափերը, իրենց որոշակիությամբ առաջին հերթին լինելով կոնկրետ բանկի գործունեության առավելագույն սահմանների կարգավորման միջոց, միևնույն ժամանակ նախանշում են ամբողջ բանկային համակարգի գործունեության ընդհանուր սահմանները, որտեղ այս նորմատիվների կոնկրետությունը պետք է փոխկապակցվի երկրում ժամանակավորապես ազատ դրամական միջոցների փորձագիտական գնահատականների հետ:

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 237–Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 2–ում նախորդի համեմատությամբ բանկերի ընդհանուր՝ **Ն₂¹** և ընթացիկ՝ **Ն₂²** իրացվելիության նորմատիվների սահմանաչափերը և դրանք հաշվարկելու բանաձևերը չեն կրել փոփոխություններ: Պահպանվել են նաև հաշվարկին մասնակցող տարրերը: Բանկի իրացվելիության և ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվների միջև կապի տեսանկյունից կարևոր է «բարձր իրացվելի ակտիվների» և «ռիսկով կշռված ակտիվների» նույնության աստիճանը: Վերջինների ամբողջությամբ համընկնումը կապիտալի համարժեքության նորմատիվների հետ միասին իրացվելիության **Ն₂¹** նորմատիվը դարձնում է բանկի գործունեության սահմանները նախանշող նորմատիվ: Գործող կանոնակարգ 2–ի համաձայն՝ պահպանվում են դրանց տարրերի միջև տարբերությունները: Դրանց պայմանական նույնության դեպքում այս նորմատիվի ազդեցությունը կարող է լինել մինչև 20%–ի չափով:

Թիվ 19.2.4. աղյուսակում համամասնությունների և բացարձակ մեծությունների միջոցով, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի համարժեքության **Ն₁¹** նորմատիվի սահմանաչափերի հիման վրա հաշվարկվել է ընդհանուր իրացվելիության **Ն₂¹** նորմատիվի ազդեցությունը պայմանական բանկի ակտիվների սահմանների վրա:

Աղյուսակի հաշվարկային տվյալների համաձայն, եթե ակտիվներն ամբողջությամբ ռիսկային ընդունելու դեպքում բանկի ակտիվները կարող են կազմել 8,33 միավոր, ապա **Ն₂¹** նորմատիվի միաժամանակյա գործողության արդյունքում կապիտալի համարժեքության նորմատիվն արդեն կազմելու է շուրջ 15% ($(1:6,67) \times 100\%$), որը նշանակում է, որ բանկը կարող է կրկին դիմել միջոցների ներգրավման՝ արդեն 1,66 միավորի չափով, ինչը նշանակում է, որ միավոր ընդհանուր կապիտալի դիմաց համարժեքության և ընդհանուր իրացվելիության նորմատիվների գործող սահմանաչափերը բանկերին ընձեռում են հնարավորություն ունենալ ոչ թե 8,33, այլ 10,0 միավոր ակտիվներ կամ 9,0 միավոր ներգրավված միջոցներ: Իսկ 10,0 միավոր ակտիվների դեպքում **Ն₂¹** նորմատիվի 20% սահմանաչափի կիրառման դեպքում կրկին **Ն₁¹** նորմատիվը կազմելու է 12,5%, այսինքն՝ այս դեպքում անգամ դեռևս չեն խախտվում ՀՀ ԿԲ–ի կողմից սահմանված այս երկու նորմատիվները:

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 20.09.2004թ. թիվ 237–Ն որոշմամբ հաստատված «Բանկերի յործունեության կարավորումը, բանկային յործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2–ը, կետ 52:

Աղյուսակ 19.2.4.

Պայմանական բանկի սահմանային ակտիվները ընդհանուր կապիտալի և իրացվելիության նորմատիվների սահմանաչափերի գործողության արդյունքում

	Պայմանական բանկը	
	ըստ համա- մասնություն- ների	բացարձակ մեծությամբ, մլն ԱՄՆ դոլար
	ԱԿՏԻՎ	
Ընդհանուր իրացվելիության Ն ² նորմատիվը	20%	20%
Բարձրիրացվելի ակտիվներ	1,66	8,33
Ամբողջությամբ ռիսկային ակտիվներ	6,67	33,32
Ընդամենը	8,33	41,65
	ՊԱՍԻՎ	
Ընդհանուր կապիտ. համարժեքության Ն ¹ նորմատիվը	12%	12%
Ընդհանուր կապիտալ	1,00	5,00
Ներ-րավված միջոցներ	7,33	36,65
Ընդամենը	8,33	41,65

Ընթացիկ իրացվելիության Ն² նորմատիվի՝ բարձրիրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների 80% սահմանաչափի գործողությունը աղյուսակի հաշվարկային տվյալների կիրառման պայմաններում նշանակում է, որ եթե 1,66 միավոր բարձրիրացվելի ակտիվներն ընդունենք ցպահանջ պարտավորությունների նկատմամբ նորմատիվով սահմանված առավելագույն սահման, ապա ընդհանուր ներգրավված միջոցների մեջ ցպահանջ պարտավորությունները կարող են կազմել շուրջ 2,075 միավոր, որը կազմում է ներգրավված միջոցների 28,3%–ը:

Ընդհանուր ներգրավման մեջ ցպահանջ պարտավորությունների սահմանային մասնակցության հետադարձ եղանակով հաշվարկումը ցույց է տալիս, որ իրացվելիության նորմատիվների միջոցով բանկի գործունեության համամասնության պարզումը հանգեցնում է նրան, որ Ն² նորմատիվը որպես այդպիսին ներառված է Ն¹ նորմատիվի մեջ: Բանկի իրացվելիության նորմատիվներից միայն Ն² նորմատիվն ունի բանկի գործունեության սահմանային մեծություններն ուղղակի նախանշելու հատկանիշ:

ՀՀ ԿԲ–ի թիվ 237–Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 2–ում ի լրումն Ն³¹ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի, ավելացել է Ն³² խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը: Երբ այս շարքի առաջին նորմատիվի ընդհանուր կապիտալի 20%–ը չգերազանցելու սահմանաչափը նշանակում է, որ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի ավելացման ներկա պայմաններում մեծանում

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 05.11.2002թ. թիվ 347–Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների՝ ործունեության կարավորումը, վարկային կազմակերպությունների՝ ործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգի 14–ը, կետ 12:

Են բանկերի կողմից հնարավոր տրամադրվող մեկ վարկի բացարձակ մեծությունները, արդեն կարող են տրամադրել մինչև 1,0 մլն ԱՄՆ դոլարի մեծությամբ վարկեր, և այս նորմատիվի միջոցով փորձ է կատարվում տրոհել թվով հինգ վարկերի վրա ընդհանուր կապիտալը կորցնելու բանկի ռիսկը, և ի վերջո այս նորմատիվը չունի ազդեցություն բանկային գործունեության առավելագույն սահմանները նախանշելու վրա, ապա Ն³² նորմատիվը Ն³¹ նորմատիվի միաժամանակ գործողությամբ սահմանում է այն, որ խոշոր վարկերը բանկերում ի վերջո կարող են լինել թվով 25–ը: Այս նորմատիվի կիրառումը պարունակում է բանկերի եկամտաբեր ակտիվներում որոշակի համամասնություն ներմուծելու տարր, սակայն դա ամբողջությամբ չի կատարվում: Քանի որ անգամ այս նորմատիվի գործողությունը բանկերին չի սահմանափակում տրամադրել ավելի փոքր ծավալով վարկեր, և, ի վերջո, վարկային պորտֆելի առավելագույն մեծությունը գործնականում հանդիպելու է կապիտալի համարժեքության Ն¹ նորմատիվի գործողությամբ պայմանավորված սահմաններին: Այլ հավասար պայմաններում կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների գործող սահմանաչափերը բանկերին թույլատրում են ունենալ 6,67 միավոր կամ 80% եկամտաբեր ակտիվներ, իսկ Ն³² նորմատիվի գործողությունը նշանակում է, որ 6,67 միավոր ակտիվներում խոշոր վարկերի ընդհանուր մեծությունը կարող է լինել 5,0 միավոր:

Ինչպես Ն³¹, այնպես էլ Ն³² նորմատիվը հետապնդում են ընդհանուր կապիտալի նկատմամբ բանկերի առավել ռիսկային, հատկապես խոշոր վարկային գործունեության կարգավորման նպատակ և չունեն բանկային գործունեության առավելագույն սահմանները նախանշելու հատկություն, քանի որ արդեն իսկ ներառված են կապիտալի համարժեքության և ընդհանուր իրացվելիության նորմատիվների կողմից սահմանաչափային գործողությամբ նախանշված սահմանների մեջ:

Բանկի հետ կապված անձանց Ն⁴¹ և Ն⁴² նորմատիվները, ուղղված լինելով այդ անձանց գծով բանկի գործունեության վրա ռիսկերի հնարավոր նվազեցմանը և կապված լինելով առաջին հերթին բանկի ընդհանուր կապիտալի հետ, կրկին չեն կրում բանկի գործունեության առավելագույն սահմանները նախանշելու հատկություն, իսկ Ն⁴² նորմատիվի կոնկրետ սահմանաչափը նշանակում է, որ ի վերջո բանկի հետ կապված անձինք կարող են մասնակցել բանկի ակտիվային գործառնություններին մինչև 1,0 մլն ԱՄՆ դոլարի չափով, այսինքն՝ բոլոր դեպքերում բանկերն իրենց գործունեության նպատակներով դեռևս կորցրած չեն լինի իրենց ընդհանուր կապիտալի 80%–ը:

Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվն առաջին հերթին ունի երկրի դրամավարկային քաղաքականությանը մասնակցության նշանակություն, և այն ևս չունի բանկային գործունեության ընդհանուր սահմանները նախանշելու հատկանիշ և կրում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվների գործողության միջնորդավորված ազդեցությունը, երբ ներգրավված միջոցները ակտիվների և ընդհանուր կապիտալի տարբերությունն են:

Եթե արտարժույթային դիրքը «...բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժույթային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների միջև ե-

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 05.11.2002թ. թիվ 347–Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների յործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների յործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգի 14–ը, կետ 10:

ղած տարբերությունն է»¹, ապա կազմվել է աղյուսակը, որտեղ բանկի արտարժութային փակ դիրքի պայմաններում ներգրավումն ու տեղաբաշխումն ամբողջությամբ արտարժույթով լինելու ենթադրությամբ Ն¹ և Ն² նորմատիվների սահմանաչափերի գործողության պայմաններում փորձ է կատարվել հաշվարկել պարտադիր դրամային պահուստավորման հաշվարկային մեծությունը:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի հաշվարկային տվյալները, արտարժութային փակ դիրքի պայմաններում պայմանական բանկը 7,33 միավոր կամ 36,65 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտավոր է 33 ԿԲ–ում պարտադիր պահուստ ձևավորել մոտ 0,59 միավոր կամ շուրջ 2,93 մլն ԱՄՆ դոլարի չափով: Ի վերջո, այս նորմատիվի ազդեցությունն ուղղված է բանկի հաշվեկշռի երկու կողմերի՝ ակտիվների և պասիվների միջև արժութային կամ արտարժութային ընդհանուր հավասարակշռության որոշակիորեն պահպանմանը՝ անկախ տվյալ բանկի նույն հաշվեկշռի ընդհանուր ծավալներից:

Թեև գործող օրենսդրությամբ վարկային կազմակերպություններն ուղակիորեն ներառված չեն բանկային համակարգի մեջ, սակայն 33 2005թ. դրամավարկային քաղաքականության «33 բանկային համակարգի զարգացումը» բաժինն ամփոփվում է վարկային կազմակերպություններին նվիրված տվյալներով, այսինքն՝ վերջինս 33 կենտրոնական բանկի կողմից դիտվում է որպես բանկային համակարգի բաղկացուցիչ մաս:

Աղյուսակ 19.2.5.

Պարտադիր պահուստի հաշվարկային մեծությունը պայմանական բանկի արտարժութային փակ դիրքի, կապիտալի համարժեքության և ընդհանուր իրացվելիության նորմատիվների գործողության պայմաններում

	Պայմանական բանկը	
	ըստ համամասնությունների	բացարձակ մեծությամբ, մլն ԱՄՆ դոլար
	ԱԿՏԻՎ	
Բարձրիրացվելի ակտիվներ, այդ թվում՝ 33 ԿԲ–ում պարտադիր պահուստ (ներ թավման 8%–ը)	1,66 0,59	8,33 2,93
Մյուս ակտիվներ	6,67	33,32
Ընդամենը	8,33	41,65
	ՊԱՍԻՎ	
Ընդհանուր կապիտալ	1,00	5,00
Ներ թավված միջոցներ	7,33	36,65
Ընդամենը	8,33	41,65

Կանոնակարգ 14–ի¹ համաձայն՝ վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը բերված են աղյուսա-

կում: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ բանկերի համեմատությամբ վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները նկատելիորեն ավելի քիչ են: Մասնավորապես, բացակայում են իրացվելիության նորմատիվները, պարտադիր պահուստավորումը, և դետալացված չեն մեկ փոխառուի և բոլոր փոխառուների հետ կապված նորմատիվները:

Աղյուսակ 19.2.6

Վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները և սահմանաչափերն ըստ տիպերի

	Խնայողական միություններ	Վարկային միություններ	Լիզին-ային կազմակերպություններ	Ֆակտորին-ային կազմակերպություններ	Ունիվերսալ վարկային կազմակերպություններ
Կանոնադրական կապիտալի նվազա-ույն չափը	50 մլն դրամ	50 մլն դրամ	100 մլն դրամ	150 մլն դրամ	150 մլն դրամ
Ընդհանուր կապիտալի նվազա-ույն չափը	50 մլն դրամ	100 մլն դրամ	200 մլն դրամ	250 մլն դրամ	300 մլն դրամ
Ընդհանուր կապիտալի – ռիսկով կշռված ակտիվների ումարների միջ- նվազա-ույն հարաբերակցությունը՝ Ն ¹ նորմատիվ	2%	6%	8%	10%	10%
Մեկ փոխառուի ժողով ռիսկի առավելա-ույն չափը՝ Ն ³ նորմատիվ	10%	20%	20%	20%	20%
Արտարժութային համախառն դիրքի – վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի միջ- առավելա-ույն հարաբերակցությունը	30%	30%	30%	30%	30%

Իսկ վարկային կազմակերպությունների իրացվելիությանն առնչություն ունի հետևյալը. «Վարկային կազմակերպության միջև մարումը մեկ ամիս մնացող (այդ թվում՝ ցպահանջ) ակտիվների և միջև մարումը մեկ ամիս մնացող (այդ թվում՝ ցպահանջ) պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը պետք է լինի նվազագույնը 120%»¹:

Աղյուսակի վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվների, ակտիվների և պարտավորությունների միջև հարաբերակցության պահանջի հիման վրա կազմվել է աղյուսակը, որտեղ կատարվել է պայմանական վարկային կազմակերպության յուրաքանչյուր տիպի (խմբի) գործունեության հնարավոր սահմանների հաշվարկներ՝ համամասնություններով և բացարձակ մեծություններով:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, վարկային կազմակերպություն-

ների բոլոր տիպերը կարող են ունենալ մոտավորապես նույն ծավալի ակտիվներ: Բացառություն են վարկային միությունները, որոնց Խ¹ նորմատիվի և ընդհանուր կապիտալի 100,0 մլն դրամ սահմանաչափերի պահանջներն այս կազմակերպությանը ի վերջո հնարավորություն են տալիս ներգրավել ոչ թե 2,45–2,7 մլրդ դրամ, այլ մոտ 1,6 մլրդ դրամ ծավալով փոխառություններ:

Աղյուսակ 19.2.7.

Պայմանական վարկային կազմակերպության յուրաքանչյուր տիպի գործունեության հնարավոր սահմանները

	Խնայողական միություններ		Վարկային միություններ		Լիզինային կազմակերպություններ		Ֆակտորինային կազմակերպություններ		Ունիվերսալ վարկային կազմակերպություններ	
	Համամ.	մլն դրամ	Համամ.	մլն դրամ	Համամ.	մլն դրամ	Համամ.	մլն դրամ	Համամ.	մլն դրամ
	ԱԿՏԻՎ									
Ընդամենը	50.0	2500.0	16.66	1666.0	12.5	2500.0	10.0	2500.0	10.0	3000.0
	ՊԱՍԻՎ									
Ն11 նորմատիվ	2%		6%		8%		10%		10%	
Ընդհանուր կապիտալ	1.0	50.0	1.00	100.0	1.0	200.0	1.0	250.0	1.0	300.0
Փոխառություններ	49.0	2450.0	15.66	1566.0	11.5	2300.0	9.0	2250.0	9.0	2700.0
Ընդամենը	50.0	2500.0	16.66	1666.0	12.5	2500.0	10.0	2500.0	10.0	3000.0
Ակտիվների հարաբերությունը պարտավորություններիին	102,4%		106,38%		108,69%		111,11%		111,11%	

Աղյուսակում հաշվարկային ճանապարհով ստացված մեծությունների արդյունքներով միջին վարկային կազմակերպությունը կարող է ունենալ առավելագույնը 2,433 մլրդ դրամ ակտիվներ, որը գործող 9 վարկային կազմակերպությունների դեպքում կազմելու է մոտ 21,9 մլրդ դրամ:

Փիտեղիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրել ռիսկի էությունը և դրսևորման առանձնահատկություններն առևտրային բանկերում:
2. Դասակարգել ռիսկերի առանձին տեսակները՝ տալով դրանց բնորոշ առանձնահատկությունները:
3. Ինչպե՞ս են կառավարվում և զնահատվում ռիսկերը:
4. Ի՞նչ բան է վարկային ռիսկը, և ինչպե՞ս է այն կառավարվում:
5. Ի՞նչ բան է տոկոսային ռիսկը, և ինչպե՞ս է այն կառավարվում:
6. Ի՞նչ բան է իրացվելիության ռիսկը, և ինչպե՞ս է այն կառավարվում:
7. Որո՞նք են բանկային գործունեության տնտեսական նորմատիվները, և ինչպե՞ս են դրանք կառավարվում:

ԳԼՈՒԽ 20

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

20.1. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ֆինանսական վերլուծությունը՝ որպես կառավարչական գործունեության առանձին տեսակ, նախորդում է ֆինանսական հարցերի գծով որոշումների կայացմանը՝ հանդիսանալով այդ որոշումների ընդունման համար անհրաժեշտ փուլ և պարտադիր նախապայման:

Ֆինանսական վերլուծությունը կարելի է ներկայացնել երկու կարևորագույն կտրվածքով՝ ներքին և արտաքին: Դասակարգման հիմնական չափանիշը, հիմնական տարբերիչ առանձնահատկությունն այստեղ հանդիսանում է վերլուծության սուբյեկտը: Ներքին վերլուծությունն իրականացվում է բանկի աշխատակիցների (անձնակազմի) կողմից, մինչդեռ արտաքին (դիստանցիոն) վերլուծությունն իրականացնում են արտաքին միջավայրի սուբյեկտները, ինչպիսիք են վերահսկողության մարմինները, կոնտրազենտ բանկերը, բանկի հաճախորդները և շահագրգռված այլ անձինք: Արտաքին վերլուծությունը կարող է լինել միանգամայն տարբեր՝ կախված վերլուծության համար օգտագործվող տեղեկատվության բնույթից և խորության աստիճանից: Եթե ներքին վերլուծությունն ընդգրկում է բանկի գործունեության բոլոր բնագավառները և պահանջում առավել ամբողջական և բազմակողմանի տեղեկատվություն, ապա վերլուծության արտաքին սուբյեկտներին մատչելի է այդ տեղեկատվության առավել սահմանափակ, ընդհանուր հրապարակման ենթակա տվյալները (բացառությամբ վերահսկող մարմնի): Արտաքին ֆինանսական վերլուծությունների համար օգտագործվող ֆինանսական հաշվետվությունների շարքն են դասվում.

- բանկի հաշվապահական հաշվեկշիռը,
- բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը,
- բանկի դրամական հոսքերի վերաբերյալ հաշվետվությունը,
- բանկային գործունեության տնտեսական նորմատիվների հաշվարկը և այլն:

Հաշվետվությունների արտաքին օգտագործողները բաժանվում են մի քանի խմբերի: Առաջին խմբում ընդգրկվում են այն սուբյեկտները, որոնց շահերն ուղղակիորեն առնչվում են բանկի գործունեության արդյունքների հետ: Դրանց են պատկանում.

Բանկի բաժնետերերը: Այս խմբի ներկայացուցիչներին հետաքրքրում են բանկի զարգացման (ներառյալ ռազմավարական զարգացման) միտումները, բանկի կառավարման արդյունավետությունը, բանկի ակտիվային գործառնությունների եկամտաբերությունն ու ռիսկայնությունը, շահաբաժինների վճարման քաղաքականությունը և այլն:

Բանկի վարկատուները: Սրանց հետաքրքրում է բանկի գործունեության հեռանկարը՝ առավելապես կարծաժանկետ կտրվածքով: Վարկատուների համար կարևոր է ոչ այնքան բանկային գործառնությունների եկամտաբերությունը, որքան բանկի իրացվելիությունը՝ կապված պարտավորությունների ժամանակին և լրիվ ծավալով մարման հետ:

Բանկի հաճախորդները: Բանկի հաճախորդներին հետաքրքրում է նախ և առաջ բանկային ծառայությունների տեսականին և որակը: Որպես ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության օգտագործող՝ բանկի հաճախորդներին հետաքրքրում են բանկի կայունությունն ու հուսալիությունը:

Վերլուծական տեղեկատվությունից արտաքին օգտվողների երկրորդ խումբը ներկայացնում են այն սուբյեկտները, որոնց ֆինանսական վիճակն ուղղակիորեն կապված է բանկի գործունեության արդյունքների հետ: Դրանք հանդիսանում են որպես միջնորդ բանկի և վերը նշված՝ առաջին խմբի սուբյեկտների միջև կամ օգտագործում են վերլուծական տեղեկատվությունը կառավարման և վերահսկողության գործառույթների իրականացման նպատակով: Դրանց թվին են դասվում.

1. Կենտրոնական բանկը՝ որպես ՀՀ բանկային համակարգի գործունեությունը կարգավորող և վերահսկող մարմին: Իր գործունեությամբ ՀՀ կենտրոնական բանկը կոչված է ապահովելու ՀՀ բանկային համակարգի բնականոն գործունեությունը, կայունությունը և հուսալիությունը:

2. Առևտրական ընկերությունները:

3. Վիճակագրական և տեղեկատվական ծառայությունները, ռեյտինգավորման գործակալությունները և այլն:

Բանկի գործունեության վերլուծության և արդյունավետության գնահատման նպատակով օգտագործում են ցուցանիշների որոշակի համակարգ: Այդ ցուցանիշները ստորաբաժանվում են երկու խմբի՝ բացարձակ և հարաբերական: Ներկայացնենք սկզբում բացարձակ ցուցանիշները:

1. Առևտրային բանկի կապիտալի մեծությունը

Բանկի կապիտալը՝

- կատարում է պաշտպանիչ գործառույթ՝ բանկային գործունեությամբ պայմանավորված ժամանակավոր վնասները ծածկելու նպատակով,
- հանդիսանում է բանկի ձևավորման և սկզբնական գործունեության անհրաժեշտ նախապայման (մինչև ավանդների հավաքագրումը),
- հանդիսանում է բանկի նկատմամբ հաճախորդների հուսալիության երաշխիք,
- ապահովում է միջոցներ բանկի կազմակերպական ընդլայնման, նոր ծառայությունների, ծրագրերի մշակման և ներդրման, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրման նպատակով,
- հանդես է գալիս որպես բանկի աճի կարգավորիչ լծակ:

Ասվածից հետևում է, որ որքան մեծ է բանկի կապիտալը (հիարկե, կապիտալի և պարտավորությունների միջև ընդունելի հարաբերակցության պայմաններում), այնքան այն հուսալի է:

2. Առևտրային բանկի ակտիվների մեծությունը

Ցույց է տալիս բանկի տնօրինության տակ գտնվող միջոցները և ներկայացնում առևտրային բանկի մասշտաբները: Որքան մեծ է ակտիվների ծավալը, այնքան խոշոր և հզոր է համարվում բանկը: Ընդ որում, բացի ակտիվների մեծությունից, այստեղ շատ կարևոր է դիտարկել նաև ակտիվների կառուցվածքը:

3. Բանկի կողմից ներգրավված միջոցների մեծությունը

Այստեղ դիտարկվում են ներգրավված միջոցների ծավալը, կազմն ու կառուցվածքը: Առանձնակի ուշադրության է արժանի ավանդային պորտֆելի վերլուծությունն ըստ ժամկետների, սուբյեկտների, արժույթների և այլն: Ներգրավված միջոցների, և, մասնավորապես, ավանդային պորտֆելի մեծությունն արտացոլում է տվյալ բանկի հանդեպ հաճախորդների վստահության աստիճանը, բանկի իմիջը և այլն: Միջբանկային վարկերի մեծ տեսակարար կշիռը ներգրավված միջոցների կազմումն ցույց է տալիս, որ բանկն ունի կարճաժամկետ իրացվելիության խնդիրներ:

4. Վարկային պորտֆելի մեծությունը

Իրենից ներկայացնում է բանկի կողմից տրամադրված վարկերի հանրագումարը: Սակայն միայն այս ցուցանիշը չի կարող հիմք հանդիսանալ տվյալ բնագավառում բանկի գործունեությունը լիարժեք գնահատելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել նաև վարկային պորտֆելի որակը:

Բանկերի գործունեության վերլուծության և գնահատման բացարձակ ցուցանիշներին են դասվում նաև բանկի եկամուտները, ծախսերը և շահույթը: Ընդ որում, և եկամուտները, և ծախսերը ներկայացվում են դասակարգված՝ տոկոսային եկամուտներ, տոկոսային ծախսեր, ոչ տոկոսային եկամուտներ, ոչ տոկոսային ծախսեր, հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներին, ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներին կատարված մասհանումների վերադարձ:

Շահույթը բանկի գործունեության ֆինանսական արդյունքն է, որն արտահայտում է բանկի ստացած եկամուտների գերազանցումը բանկի կատարած ծախսերի նկատմամբ: Այն հիմք է հանդիսանում բանկի գործունեության հետագա ընդլայնման, նրա կապիտալի մեծացման համար, ինչն էլ իր հերթին նպաստում է բանկի ֆինանսական կայունության և հզորության ամրապնդմանը: Չբաշխված շահույթն իրենից ներկայացնում է բանկի տրամադրության տակ մնացած շահույթի գումարը՝ հարկերը և այլ պարտադիր վճարները մոլծեղուց և բաժնետերերին շահաբաժիններ վճարելուց հետո:

Վերը նշված բացարձակ ցուցանիշները կարող են բնութագրել բանկի գործունեությունը միայն մասնակիորեն: Ընդ որում, դրանք պարտադիր պետք է դիտարկվեն միայն դինամիկ կտրվածքով: Բանկի գործունեության արդյունավետության վերաբերյալ ամբողջական և խորն պատկերացում կազմելու նպատակով գործնականում կիրառվում է հարաբերական ցուցանիշների համակարգը:

Բանկի գործունեության արդյունավետությունը բնութագրող հարաբերական ցուցանիշներին են դասվում բանկի շահութաբերության ցուցանիշները: Դրանց թվին են պատկանում.

- 1. *Բանկի շահութաբերությունն ըստ սեփական (բաժնետիրական) կապիտալի – ROE (Return on equity):*

ROE = հարկումից հետո զուտ շահույթ/սեփական (բաժնետիրական) կապիտալ

Իրենից ներկայացնում է հարկումից հետո ստացված զուտ շահույթի հարաբերությունը բաժնետիրական կապիտալին: Ցույց է տալիս, թե որոշակի ժամանակահատվածի (օրինակ՝ մեկ տարվա) կտրվածքով որքանով արդյունավետ են օգտագործվել

բանկի սեփականատերերի կողմից ներդրված գումարները: Այս ցուցանիշը բացահայտում է սեփականատիրոջ կողմից ներդրված միավոր գումարից ստացվող շահույթի մեծությունը: Դա, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրում է բանկի մասնակիցներին (հիմնադիրներ, բաժնետերեր, փայատերեր):

Ներկայացնենք տվյալ ցուցանիշը ՀՀ առևտրային բանկերի կտրվածքով:

Աղյուսակ 20.1.1.

ՀՀ առևտրային բանկերի կապիտալի շահութաբերությունը 31.12.05թ. դրությամբ (%)

ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չուտ շահույթ/կապիտալ (միջին) (ROE)	
	31.12.05	30.09.05
HSBC (Էյջ-Էս Բի-Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	45.14	45.79
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	34.65	36.28
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	25.07	25.11
ՀԱՅԽՆԱՅՐԱՆԿ ՓԲԸ	16.84	27.59
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ	24.27	25.78
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	24.84	24.31
ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՆԲԱՆԿ ԿԲ	14.98	18.09
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	28.86	32.10
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	6.46	22.79
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	24.51	24.14
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	9.86	11.32
ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ	6.17	6.49
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	-6.58	-15.23
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	6.01	7.66
ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	7.29	6.53
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	1.94	0.55
ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ ՓԲԸ	3.66	6.31
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ	-0.59	-2.10
«ԻԹԲ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	2.57	2.84
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	-49.66	-71.25
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	-18.18	-29.20
ԸՆԴԱՄԵՆԸ	15.63	16.76

2. Բանկի շահութաբերությունն ըստ ակտիվների – ROA (Return on assets):

ROA = հարկումից հետո Չուտ շահույթ/բանկի ընդհանուր ակտիվներ

Իրենից ներկայացնում է հարկումից հետո ստացված Չուտ շահույթի հարաբերությունը բանկի ընդհանուր (կամ եկամտաբեր) ակտիվներին: Ցույց է տալիս ակտիվ-

Ների միավորի հաշվով ստացված շահույթը և բնութագրում է բանկի կառավարիչների աշխատանքի արդյունավետությունը (թե որքանով հաջող են լուծում նրանք ակտիվներից զուտ շահույթի ստացման խնդիրը):

Ներկայացնենք տվյալ ցուցանիշը ՀՀ առևտրային բանկերի կտրվածքով:

Աղյուսակ 20.1.2.

ՀՀ առևտրային բանկերի ակտիվների շահութաբերությունը 31.12.05թ. դրությամբ

(%)

ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Զուտ շահույթ/ակտիվներ (միջին) (ROE)	
	31.12.05	30.09.05
HSBC (Էյչ–Էս Բի–Սի) ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	4.27	4.38
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	4.53	4.54
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ	4.40	4.34
ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ ՓԲԸ	2.17	2.98
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ	3.99	4.18
ԱՐՑԱԽ ԲԱՆԿ ՓԲԸ	2.73	2.56
ՀԱՅԳՅՈՒՂՓՈԽԲԱՆԿ ԿԲ	3.47	4.31
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ ՍՊԸ	5.09	5.66
ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ	1.24	4.58
ԻՆԵԿՈՐԲԱՆԿ ՓԲԸ	5.95	5.77
ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ ՓԲԸ	2.60	2.94
ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ ՓԲԸ	1.65	1.83
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ ԲԲԸ	-1.76	-3.89
ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՓԲԸ	1.85	2.24
ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ ՍՊԸ	3.63	3.18
ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	0.63	0.18
ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ ՓԲԸ	1.63	2.48
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ	-0.38	-1.36
«ԻԹԲ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ	1.73	1.96
ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ՓԲԸ	-26.82	-34.94
ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ	-13.76	-24.41
ԸՆԴԱՄԵՆԸ	3.01	3.15

3. Զուտ տոկոսային մարժա:

Զուտ տոկոսային մարժա = տոկոսային մարժա/բանկի ընդհանուր (եկամտաբեր) ակտիվներ

Իրենից ներկայացնում է վարկերից և ներդրումներից ստացված տոկոսային եկամ-

տի և ներգրավված ավանդների ու այլ պարտավորությունների դիմաց կատարված տոկոսային ծախսերի տարբերության հարաբերությունը բանկի ընդհանուր (կամ եկամտաբեր) ակտիվներին: Սահմանում է բանկի տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի միջև տարբերության չափը (տոկոսային մարժա), որը ձեռք է բերվել բանկի ղեկավարների կողմից՝ բանկի եկամտաբեր ակտիվների նկատմամբ մանրագին վերահսկողության և առավել էժան ռեսուրսների որոնման պայմաններում:

4. Զուտ ոչ տոկոսային մարժա:

Զուտ ոչ տոկոսային մարժա = ոչ տոկոսային մարժա/բանկի ընդհանուր (եկամտաբեր) ակտիվներ

Դա բանկի ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի տարբերության (ոչ տոկոսային մարժա) հարաբերությունն է բանկի ընդհանուր (կամ եկամտաբեր) ակտիվներին: Ոչ տոկոսային մարժան սահմանում է տոկոսադրույքով չպայմանավորված եկամուտների (օրինակ՝ կոմիսիոն վճարներ բանկային ծառայությունների դիմաց) և ծախսերի (օրինակ՝ աշխատավարձ, բանկային սարքավորումների վերանորոգում և տեխնիկական սպասարկում, կոմիսիոն վճարներ՝ բանկին մատուցած ծառայությունների դիմաց) տարբերությունը: Բանկերի մեծամասնության մոտ ոչ տոկոսային մարժան բացասական մեծություն է: Սակայն առևտրային բանկերի միջև մրցակցության անընդհատ խորացումը ստիպում է բանկերին տոկոսային եկամուտ ապահովող ավանդական բանկային ծառայություններին զուգահեռ անընդհատ մշակել և ներդնել նոր՝ ժամանակակից բանկային ծառայություններ, ինչը հանգեցնում է առևտրային բանկերի ոչ տոկոսային եկամուտների անընդհատ ավելացմանը:

5. Բանկի գործառնական շահույթի զուտ մարժա:

Գործառնական շահույթի զուտ մարժա = (գործառնական եկամուտներ – գործառնական ծախսեր)/բանկի ընդհանուր (եկամտաբեր) ակտիվներ

Շահութաբերության այս ցուցանիշը կարելի է բաղդատել երկու բաղկացուցիչ մասերի՝ ակտիվների գծով ստացվող միջին տոկոսային շահույթ և ակտիվների գծով ստացվող միջին ոչ տոկոսային շահույթ: Վերջին տարրը ձևավորվում է ի հաշիվ տարբեր ծառայությունների մատուցման ժամանակ գանձվող կոմիսիոն վճարների:

6. Մեկ բաժնետոմսի հաշվով ստացված զուտ շահույթ:

Մեկ բաժնետոմսի հաշվով ստացված զուտ շահույթ = հարկումից հետո զուտ շահույթ/հասարակ բաժնետոմսեր

Դա հարկումից հետո զուտ շահույթի հարաբերությունն է շրջանառության մեջ գտնվող հասարակ բաժնետոմսերին: Իրենից ներկայացնում է բանկի բաժնետերերին կատարած վճարումների ճշգրիտ գնահատականը՝ ելնելով բանկի կողմից իրացված բաժնետոմսերի քանակից:

7. Շահույթի տարբերություն կամ սփրեդ:

Շահույթի տարբերություն = (տոկոսային եկամուտներ/եկամտաբեր ակտիվներ) – (տոկոսային ծախսեր/ծախսատար պարտավորություններ)

Այս ցուցանիշի միջոցով գնահատվում է, թե որքանով հաջող է բանկն իրագործում միջնորդի դերը դրամական միջոցների ներգրավման և տեղաբաշխման բնագավառում: Այն ցույց է տալիս նաև, թե որքանով խորն է մրցակցությունը բանկի կողմից մատուցվող ծառայությունների շուկայում: Մրցակցության ուժեղացումն ու խորացումը, սովորաբար, բերում է ակտիվների գծով ստացվող միջին եկամուտների և պասիվների գծով կատարվող միջին ծախսերի միջև տարբերության կրճատմանը: Այլ հավասար պայմաններում դա հանգեցնում է բանկի շահույթի նվազմանը:

8. Ակտիվների եկամտաբերության բազա:

Ակտիվների եկամտաբերության բազա = եկամտաբեր ակտիվներ/բանկի ընդհանուր ակտիվներ

Ցույց է տալիս եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում: Նկատի ունենալով, որ բանկի ընդհանուր եկամուտների զգալի մասը ապահովվում է տոկոսային եկամուտների հաշվին՝ այս ցուցանիշն էական կարևորություն է ձեռք բերում: Սակայն բանկերի միջև մրցակցության անընդհատ խորացումը՝ մի կողմից, վարկային պորտֆելի որակի անընդհատ վատացումը, ժամկետանց վարկերի տեսակարար կշռի ավելացումը՝ մյուս կողմից, ստիպում են առևտրային բանկերին որոնել եկամուտների ստացման այլընտրանքային տարբերակներ՝ «ծանրության կենտրոնը» տոկոսային եկամուտներից տեղափոխելով դեպի ոչ տոկոսային եկամուտների ստացումը: Բացի դրանից, եկամտաբեր ակտիվների չափից դուրս ավելացումը բանկի ընդհանուր ակտիվներում նպատակահարմար չէ: Դա մի կողմից մեծացնում է ակտիվների ռիսկայնության աստիճանը, մյուս կողմից բացասաբար է անդրադառնում բանկի իրացվելիության վրա: Իսկ բանկն, ինչպես հայտնի է, պարտավոր է ապահովել եկամտաբերության և իրացվելիության օպտիմալ զուգակցում առաջնությունը տալով իրացվելիությանը:

20.2. ԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՅՏԻՆԳՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԵՒՆԱՆԻՋՄՆԵՐ

Առևտրային բանկերի, ինչպես և ցանկացած առևտրային կազմակերպության գործունեության վերջնական նպատակը շահույթի ստացումն է: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում գնահատել բանկերի գործունեությունը, կատարել շահույթ ապահովող գործոնների վերլուծություն, բացահայտել շահույթի և շահութաբերության մակարդակի վրա բացասաբար ազդող գործոնները՝ դրանք շտկելու նպատակով, և միաժամանակ խթանել այն գործոնների զարգացումը, ո-

րոնք նպաստում են այդ ցուցանիշների աճին: Բանկերի գործունեության գնահատման ժամանակ պետք է հստակ սահմանել, թե տվյալ բանկն ինչպիսի նպատակներ է դրել իր առջև՝ գնահատումը ճիշտ ուղղությամբ տանելու նպատակով: Դա պայմանավորված է նրանով, որ տվյալ երկրի բանկային համակարգում կարող են գործել տարբեր մասնագիտացում ունեցող բանկեր, որոնց ընթացիկ նպատակները, հետևաբար նաև գնահատման չափանիշները, կարող են խիստ տարբեր լինել:

Բանկերի գործունեության գնահատման գործիքներ են հանդիսանում բանկային ռեյտինգները: «Ռեյտինգ» բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է գնահատական, պատկանելություն ունի դասի, խմբի, կատեգորիայի: Ռեյտինգները, հանդիսանալով համալիր տնտեսական ցուցանիշ, հնարավորություն են տալիս.

- գնահատել առևտրային բանկերի ֆինանսական վիճակը և կատարել բանկերի հուսալիության համեմատություն,
- առանձնացնել պրոբլեմային բանկերը,
- ընդունել համապատասխան և պատշաճ կառավարչական որոշումներ,
- արագ և արդյունավետ կերպով ընտրել հուսալի բանկ:

Նման գնահատականով շահագրգռված սուբյեկտներ են հանդիսանում բանկերը, բանկերի հաճախորդները և բանկային վերահսկողության մարմինները: Բանկերի շահագրգռվածությունը պայմանավորված է մյուս բանկ-կոնտրագենտների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալով, ինչպես նաև սեփական հեղինակության ամրապնդմամբ (եթե տվյալ բանկի անունը գտնվում է ռեյտինգավորման ցուցակի վերին տողերում): Եթե բանկն ունի համապատասխան ստորաբաժանում կամ բարձր որակավորում ունեցող արհեստավարժ վերլուծաբաններ, ապա մրցակից բանկերի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը հնարավոր է օգտագործել առավելագույնս արդյունավետությամբ: Ինչ վերաբերում է բանկի հաճախորդներին, ապա վերջիններիս մեծ տեղեկատվությունն ավելի քիչ է հրապուրում: Դա բացատրվում է նրանով, որ նրանց մեծ մասը չունեն համապատասխան գիտելիքներ և մասնագիտական որակավորում՝ վերը նշված տեղեկատվությունը պահանջվող կտրվածքով վերլուծելու և հետևություններ անելու համար:

Ռեյտինգի կազմման գործընթացն իրենից ներկայացնում է բանկերի միասնական ցուցակի կազմում, որտեղ բանկերը դասակարգված են ըստ որոշակի ցուցանիշների, իսկ վերջիններս կազմվում և հաշվարկվում են մասնագետների կողմից սահմանված մեթոդներով և կարգով:

Ռեյտինգները կառուցվում են երկու եղանակով.

- վիճակագրական վերլուծության հիման վրա,
- ֆինանսական գործակիցների հիման վրա:

Վերջին եղանակն առավել լայն կիրառություն ունի և կազմվում է երկու հիմնական մոտեցմամբ.

- հաշվապահական,
- փորձագիտական:

Հաշվապահական մոտեցման դեպքում կատարվում է բացառապես պաշտոնապես հրապարակվող տեղեկատվության վերլուծություն, և դիտարկվում են միայն քանակական գործոնները: Գնահատման մեծ մեխանիզմի պայմաններում տեսադաշտից դուրս են մնում այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են բանկի կադրային քաղաքականու-

թյունը, մենեջմենթի որակը, հանցագործ կառույցների հետ բանկի ունեցած կապերը և այլ կարևոր գործոններ, որոնք թվական արտահայտությամբ չեն ստանում, սակայն էապես անդրադառնում են բանկի գործունեության արդյունավետության վրա: Հաշվապահական մոտեցման դեպքում վերլուծությունն իրականացվում է հետևյալ փուլերով.

- ընտրվում են այն բանկերը, որոնց ֆինանսական վիճակն անկայուն է, կամ նրանց հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունն անարժանահավատ է,
- հաշվարկվում են բանկի հաշվեկշռի առանձին հոդվածների փոխկապակցվածություններն արտահայտող ցուցանիշները,
- հաշվարկվում է հուսալիության վերջնական գնահատականը: Որպես կանոն, դա կատարվում է հաշվարկված գործակիցները միմյանց գումարելու ճանապարհով՝ յուրաքանչյուրը դիտարկելով որոշակի կշռով:

Ստացված արդյունքի որակը պայմանավորված է նրանով, թե որքան խորությամբ և համալիր է գնահատվել բանկի ֆինանսական վիճակը, և որքանով հիմնավորված և ճշգրիտ է բանկի հուսալիության վերջնական գնահատականը:

Փորձագիտական գնահատման ժամանակ վերլուծության է ենթարկվում ցանկացած հասանելի տեղեկատվություն, ընդ որում՝ կատարվում է ինչպես քանակական, այնպես էլ որակական գործոնների վերլուծություն: Գնահատման այս մեխանիզմի կիրառման պայմաններում մեծ նշանակություն ունեն վերլուծաբանի փորձն ու հմտությունը: Փորձագիտական մոտեցման ժամանակ օգտագործվում են հետևյալ գործոնները.

- բանկի գործունեության ընդհանուր հարցեր՝ հիմնադիրները, կանոնադրական կապիտալը, հաշվեկշռի արժույթը, արտոնագրեր, թղթակցային հաշիվներ և այլն,
- բանկի գործունեության վերաբերյալ կոնկրետ տվյալներ՝ ձևավորման պատմությունը, մասնաճյուղերի առկայությունը և բաշխվածությունը, բանկի հեղինակությունը, գործունեության առանձին ուղղություններին վերաբերող տվյալներ և այլն,
- իրացվելիության, կապիտալի համարժեքության, շահութաբերության և այլ ֆինանսական ցուցանիշների հաշվարկ:

Հարկ է նշել, որ փորձագիտական եղանակի կիրառումը չպետք է բացառի հաշվապահական եղանակը կամ հակառակը: Առավել որակյալ արդյունք ստանալու նպատակով անհրաժեշտ է ապահովել այս երկու եղանակների համադրումը՝ առավելագույնս օգտագործելով յուրաքանչյուր եղանակի առավելությունները:

Ռեյտինգներում օգտագործվող ցուցանիշների թիվը կարող է խիստ տարբեր լինել: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն մեթոդը, որտեղ օգտագործվում են անհամեմատ ավելի շատ ցուցանիշներ, առավել ճշգրիտ մեթոդ է: Իհարկե, այդ դեպքում վերլուծությունը կատարվում է առավել խորությամբ, փոխարենը բարդանում է առանձին ցուցանիշների միջև փոխադարձ կապերի բացահայտման, հաշվարկման մեխանիզմը: Բացի այդ, որքան բարդ է համակարգը, այնքան այն դժվարկառավարելի է, և մեծ է հաշվարկներում սխալվելու հավանականությունը:

Ռեյտինգների կառուցման վրա բացասաբար կարող են անդրադառնալ ներկայացվող տվյալների (մասնավորապես՝ հաշվետվության) անարժանահավատությունը, ցուցանիշների համակարգի անհիմն ընտրությունը և ռեյտինգների կառուցման երկարաձգվող ժամանակը:

20.3. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐՈՆ

Ռեյտինգները, հանդիսանալով բանկերի գործունեության համալիր գնահատման գործիք, լայն տարածում ունեն ողջ աշխարհում: Չնայած զարգացման համընդհանուր միտմանը՝ տարբեր երկրներում բանկերի գործունեության գնահատման համակարգերն էապես տարբերվում են միմյանցից, քանի որ տարբեր են ֆինանսական համակարգերի զարգացման աստիճանները, վարկային կազմակերպությունների առանձնահատկությունները, տեխնոլոգիական և կադրային ռեսուրսների որակն ու ծավալը, տնտեսության առանձնահատկություններն ու զարգացման մակարդակը:

Ներկայացնենք միջազգային պրակտիկայում առավել հայտնի և լայն տարածում ունեցող ռեյտինգավորման համակարգերից մի քանիսը՝ տալով դրանց համառոտ նկարագիրը:

CAMELS

1980–ական թվականներին, երբ ԱՄՆ–ի բանկային համակարգում շարունակվում էր խոր ճգնաժամը, համապատասխան մասնագետների կողմից մշակվեց բանկերի գործունեության գնահատման մի համակարգ, որն այժմ լայն ճանաչման է արժանացել աշխարհի գրեթե բոլոր բանկերի ղեկավարների կողմից: Քանի որ բանկային գործունեությունը համարվում է բարձր ռիսկային, այդ համակարգը նպատակաուղղված էր գնահատել ոչ միայն առևտրային բանկի գործունեության արդյունավետությունը, այլև ռիսկայնությունը: Այն իրենից ներկայացնում է CAMELS վերլուծական համակարգը, որի անվանումն առաջացել է կապիտալի համարժեքություն (Capital adequacy), ակտիվների որակ (Asset quality), ղեկավարություն (Management), շահույթ (Earnings), իրացվելիություն (Liquidity) և զգայունություն (Sensitivity) անգլերեն տերմինների սկզբնատառերից: Մեթոդի էությունը նշված 6 գործոնների վերլուծության արդյունքում բանկի հուսալիության գնահատման մեջ է: Հարկ է նշել, որ այս մեթոդիկան անընդհատ կատարելագործվում է՝ իր մեջ ներառելով համաաշխարհային ֆինանսական շուկաներում առաջացող նոր ռիսկերը: Օրինակ՝ զգայունություն գործոնը մեթոդիկայում ընդգրկվել է միայն վերջերս՝ 1997 թվականին, որը, հաշվի առնելով ժամանակի պահանջը, գնահատում է շուկայական ռիսկերի նկատմամբ բանկի զգայունությունը:

Համաձայն այս մեթոդիկայի՝ բանկերի կողմից ռիսկերի կառավարումը գնահատվում է 5–բալանի համակարգով՝ 1–ից մինչև 5՝ աճողական կարգով բնութագրելով բանկի հուսալիությունը (ԱՄՆ–ում ընդունված է գնահատման հակառակ սանդղակը): Գնահատականները պետք է կազմվեն ինչպես քանակական (ֆինանսական ցուցանիշների վերլուծություն), այնպես էլ որակական ցուցանիշների հիման վրա և ի վերջո պետք է արտացոլեն ղեկավարման ամբողջ մակարդակը: Յուրաքանչյուր տարրի գնահատականը հաշվարկվում է որպես տարրի կազմում ընդգրկված հարաբերակցությունների միջին թվաբանականի (օբյեկտիվ գնահատական) և սուբյեկտիվ կարծիքի գնահատականի միջին թվաբանական: CAMELS–ով հաշվարկված ամփոփ գնահատականը ձևավորվում է վեց տարրերի միջին թվաբանական արդյունքով:

Ներկայացնենք վերջում ստացված ամփոփ գնահատականների համառոտ մեկնաբանությունը:

Ուժեղ` 5 (strong): Այս գնահատականը ցույց է տալիս, որ բանկն արդյունավետ է կառավարում բոլոր տիպերի հիմնական ռիսկերը, ներառյալ նոր ծառայություններով և շուկայում տեղի ունեցող փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Բանկի խորհուրդը և ղեկավարությունը ռիսկերի կառավարման ակտիվ մասնակիցներ են և վարում են ճիշտ քաղաքականություն՝ ապահովելով ռիսկերի մոնիտորինգ, անհրաժեշտ վերլուծություն և համարժեք արձագանքում փոփոխվող պայմաններին: Հնարավոր է ունենալ աննշան դիտողություններ տվյալ բանկի ընդհանուր քաղաքականության վերաբերյալ, սակայն դրանք չեն հանգեցնի նյութական կորուստների: Ռիսկերի կառավարումը տվյալ դեպքում արդյունավետ է և կայուն:

Լավ` 4 (satisfactory): Այս գնահատականը ցույց է տալիս, որ բանկի ռիսկերի կառավարումը հիմնականում արդյունավետ է, սակայն նկատվում է նրա չնչին վատթարացում: Չնայած նրան, որ այս գնահատական ունեցող բանկերը կարող են ունենալ չնչին դժվարություններ ռիսկերի կառավարման հարցում, այդ ռիսկերը ժամանակին նկատվել են և կվերացվեն: Ընդհանուր առմամբ, տվյալ բանկի ռիսկերի կառավարումը կարելի է համարել կայուն և արդյունավետ:

Բավարար` 3 (fair): Այս գնահատականը տրվում է այն բանկերին, որոնց ռիսկերի վերահսկման ընթացակարգերը բարելավման կարիք ունեն, որպեսզի ղեկավարման օղակը կարողանա հայտնաբերել, հսկել և համարժեք կերպով կառավարել առաջացող ռիսկերը:

Սահմանային` 2 (marginal): Այս գնահատականը ստացող բանկերին չի հաջողվում գտնել, հսկել և կառավարել կարևորագույն ռիսկերը, որի պատճառով նրանք կարող են կրել զգալի նյութական վնասներ: Ընդհանրապես, այդպիսի իրավիճակներն արտացոլում են նաև ղեկավարման օղակի համարժեք և նպատակաուղղված հսկողության բացակայությունը: Այս իրավիճակը պահանջում է շտապ շտկման գործողություններ ղեկավարության կողմից:

Անբավարար` 1 (unsatisfactory): Այս գնահատականը ցույց է տալիս բանկի կողմից ռիսկերը հայտնաբերելու, հսկելու և կառավարելու արդյունավետ մեխանիզմների հիմնովին բացակայությունը: Այս բանկերը գտնվում են խոր ճգնաժամի մեջ և պետք է իրավիճակը շտկելու համար անհապաղ միջոցներ ձեռնարկեն:

UBPR (Uniform Banking Performance Report)

1980–ական թվականներին ԱՄՆ–ի Ֆեդերալ ռեզերվային համակարգի, Դրամաշրջանառությունը կարգավորող մարմնի, Դեպոզիտների ապահովագրության ֆեդերալ կորպորացիայի համատեղ ուժերով մշակվեց բանկերի գործունեության համեմատական վերլուծության UBPR ռեյտինգավորման համակարգը: Վերոհիշյալ մարմինները հաշվարկում են UBPR–ի մեջ ընդգրկված ցուցանիշները բոլոր բանկերի համար, որոնց նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ֆեդերալ մակարդակով: Յուրաքանչյուր եռամսյակ UBPR հաշվետվությունները ուղարկվում է այդ բանկերին: UBPR հաշվետվությունը պարունակում է հետևյալ տվյալները բանկի վերաբերյալ.

- տեղեկատվություն յուրաքանչյուր բանկի ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ ընթացիկ եռամսյակի և նախորդ երեք տարիների կտրվածքով,

- բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը, լիզինգային գործառնությունները, դրանց ռիսկայնության աստիճանը,
- կապիտալի ձևավորման աղբյուրները:

Բանկերի գործունեության համեմատական վերլուծությունը (ԲԳՅՎ) նախատեսված է բանկի գործունեությունը վերահսկող և բանկերի կառավարման մարմինների համար: Այն նպատակ ունի ներկայացվող բազմաթիվ ցուցանիշների միջոցով օգնել և կողմնորոշել վերոհիշյալ մարմիններին՝ բանկի ֆինանսական վիճակի գնահատման գործում: ԲԳՅՎ–ն ցույց է տալիս կառավարչական որոշումների և տնտեսական պայմանների ազդեցությունը բանկի գործունեության և նրա հաշվեկշռի վրա: ԲԳՅՎ–ում պարունակվող տվյալները կարող են օգտագործվել բանկի եկամտունեքի, իրացվելիության, կապիտալի համարժեքության, ակտիվների որակի և կառավարման գնահատման համար: Ռեյտինգային համակարգը հնարավորություն է տալիս գնահատել.

- բանկի ընթացիկ իրավիճակը,
- բանկի ֆինանսական գործունեության միտումները,
- համեմատել մի բանկի գործունեությունը մեկ այլ բանկի հետ,
- ստանալ առևտրային բանկի ֆինանսական վիճակի ամբողջական պատկերը,
- կատարել կանխատեսումներ:

ԲԳՅՎ–ում ներկայացված են տվյալների 3 տարատեսակ, որոնք նախատեսված են բանկի ֆինանսական վերլուծության մեջ օգտագործելու համար.

- բանկի անհատական ցուցանիշները,
- տվյալ խմբում ընդգրկված բանկերի միջին ցուցանիշները,
- բանկի «դիրքը» իր խմբի բանկերի մեջ՝ տվյալ ցուցանիշի գծով:

Բանկերը բաժանվում են խմբերի, որպեսզի հնարավորություն տրվի հաշվարկել խմբի միջին ցուցանիշները: ԲԳՅՎ–ում խմբի միջին ցուցանիշները բնութագրում են նմանատիպ բանկերի գործունեությունը: Այս ցուցանիշները կարող են չափանիշ հանդիսանալ առանձին բանկերի ցուցանիշները գնահատելու համար:

Գոյություն ունեն բանկերը խմբերի բաժանելու տարբեր եղանակներ: Օրինակ՝ ըստ ակտիվների մեծության, կապիտալի մեծության, մասնաճյուղերի թվաքանակի, աշխատողների թվաքանակի և այլն: Հայաստանում բանկերը բաժանվում են խմբերի ըստ նրանց վերջին 12 ամիսների ակտիվների միջին մեծության: Խմբերի տարանջատելու սահմանաչափերը վերանայվում են ելնելով բանկային համակարգի զարգացման միտումներից:

ԲԳՅՎ հաշվետվությունը տրամադրվում է բանկին, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս՝ համեմատել իր ցուցանիշները խմբի միջին ցուցանիշների հետ և հետևություններ անել իր գործունեության այս կամ այն բնագավառի վերաբերյալ:

ԲԳՅՎ–ն բաղկացած է 8 մասից: Առաջին մասն իրենից ներկայացնում է բանկի հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների (կապիտալ, ակտիվներ, եկամտաբերություն, իրացվելիություն) և դրանց աճի տեմպերի ամփոփ վերլուծությունը: Հետագա մասերը պարունակում են այդ նույն ցուցանիշների առավել խոր և մանրակրկիտ վերլուծություն:

Ֆեդերալ ռեզերվային համակարգն այլ ռեյտինգ է օգտագործում բանկային հոլդինգների վերահսկողության համար՝ BOPEC.

1. Bank Subsidiaries (դուստր բանկեր):
2. Other Subsidiaries (այլ բանկեր):
3. Parent Company (հիմնադիր ընկերություն):
4. Earnings (եկամտաբերություն):
5. Capital (կապիտալ):

Առանձին գնահատվում է մենեջմենթի եռաստիճան ռեյտինգը:

CAEL

CAEL ռեյտինգավորման համակարգը հանդիսանում է ժամանակակից CAMELS–ի դիստանցիոն տարբերակը: Այն չի ներառում M` «կառավարում» գործոնը: Մնացած գործոնները վերլուծվում են 19 տարբեր գործակիցների օգնությամբ: Ի-հարկե, ստացված արդյունքներն իրենց ճշգրտության աստիճանով կզիջեն CAMELS–ին, սակայն գնահատման այս տարբերակն ունի իր առավելությունները: Մասնավորապես.

- գնահատման գործընթացը բավականաչափ արագ է կատարվում,
- հնարավոր է այն իրականացնել բավականին հաճախ,
- գնահատման մման համակարգը քիչ ծախսումներ է պահանջում:

SCOR, SEER

Ներկայումս բանկերի դիստանցիոն վերլուծության կազմակերպումը դարձել է առավել ճշգրիտ` շնորհիվ զարգացած մաթեմատիկական ապարատի: Սկսած 2000 թվականից լայն տարածում է ստացել SCOR (Statistical CAMELS OFF–site Rating) վիճակագրական համակարգը: Որպես նախնական տվյալներ` այստեղ օգտագործվում են բանկային հաշվետվությունները: SCOR համակարգը թույլ է տալիս 4–6 ամիսների ընթացքում բավականին ճշգրիտ գնահատել բանկի գործունեության վատթարացման հավանականությունը: Իսկ առավել երկար ժամանակահատվածի` երկու տարվա կտրվածքով կանխատեսումներ անելու համար 1993 թվականին ԱՄՆ–ի Ֆեդերալ ռեզերվային համակարգը մշակել է SEER (System for Estimating Examination Ratings) մեթոդիկան: Ռուսաստանում այն առավել հայտնի է իր նախկին անվանումով` FIMS (Financial Institutions Monitoring System): Սկզբունքային տարբերությունը SCOR–ից այն է, որ այստեղ, բացի բանկային հաշվետվություններից, օգտագործվում են նաև տարբեր ռեյտինգների և դրանց բաղկացուցիչների արժեքները: SEER–ի շրջանականերում հաշվարկվում է երկու վերջնական ցուցանիշ` սպասվող ռեյտինգը և ռիսկայնության մակարդակը: Այսպիսով` այս համակարգը հանդիսանում է նաև սնանկության կանխատեսման մոդել:

PATROL

Ռեյտինգավորման այս համակարգը կիրառվում է Իտալիայում` սկսած 1993 թվա-

¹ Տե՛ս «ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հուսալիության մահատումն իրականացնելիս CAMELS համակար ի մեթոդիկայում օտար ժողովող ցուցանիշները»` առաքված ՀՀ տարածքում որոնող բանկերին` ՀՀ կենտրոնական բանկի նախաահի 17.09.1998թ. թիվ 132–19/717 կից` րությամբ, Բանկային տեղեկա իր 1, Ե., 1999, էջ 347–350:

² Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 26.08.2003թ. «Բանկերի ցուցանիշների ամփոփ մահատականի նվազա ույն չափերը սահմանելու մասին» թիվ 296–Ն որոշումը, կետ 1:

³ Տե՛ս «Բանկերի սնանկության մասին» ՀՀ օրենքը` ընդունված 06.11.2001թ., հոդվ. 2, կետ 1):

⁴ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 26.10.2004թ. թիվ 255–Ն որոշում, կետ 10 – ՀՀ ԿԲ խորհրդի 12.08.2003թ–ի թիվ 281–Ն որոշում, կետ 12:

կանից: Այստեղ տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսանում բանկի կանոնակարգված հաշվետվությունը, որի հիման վրա հաշվարկվում են 5 բաղկացուցիչներ.

- կապիտալի համարժեքություն,
- շահութաբերություն,
- վարկերի որակը,
- կազմակերպումը և կառավարումը,
- իրացվելիությունը:

Այս համակարգը կազմված է հիմնականում նույն սկզբունքներով, ինչ որ CAMELS–ը:
ORAP

Սկզբունքորեն այլ դասակարգում է կիրառվում ORAP (Organization and Reinforcement of Preventive Action) ֆրանսիական ռեյտինգավորման համակարգում: Այստեղ 14 ցուցանիշներ բաժանվում են 5 խմբի.

- պրուլենցիալ գործակիցներ՝ կապիտալ, իրացվելիություն և այլն,
- հաշվեկշռային և արտահաշվեկշռային գործունեություն՝ ակտիվների որակը, վերահսկելի վարկեր և այլն,
- շուկայական ռիսկ,
- եկամուտներ,
- որակական գործոններ՝ բաժնետերեր, ներքին վերահսկողություն և կառավարում:

ORAP–ը որպես տեղեկատվության աղբյուր օգտագործում է Ֆրանսիական բանկի և Բանկային հանձնաժողովի տվյալների բազան, բանկերի արտաքին աուդիտորների և վերահսկողություն իրականացնող այլ մարմինների տվյալները և այն տեղեկատվությունը, որը ստացվում է եվրոպական այլ պետությունների բանկային վերահսկողություն իրականացնող մարմինների հետ կնքված համաձայնագրերից:

BAKIS

1997 թվականից Գերմանիայի Կենտրոնական Բանկի (Deutsche Bundesbank) կողմից կիրառվում է BAKIS (BAKred Information System) գործակցային վերլուծության համակարգը, որը ներառում է 47 գործակից.

- 19 գործակից՝ վարկային ռիսկի գծով,
- 16 գործակից՝ շուկայական ռիսկի գծով,
- 2 գործակից՝ իրացվելիության ռիսկի գծով,
- 10 գործակից՝ բանկային գործառնությունների շահութաբերության գծով:

Նշված բոլոր ցուցանիշներին վերագրվում են հավասար կշռային գործակիցներ:

RAST

¹ Տե՛ս ԲԳ ԿԲ խորհրդի 13.12.2002թ. «Անվճարունակ բանկերի – վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձ–ավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգի 7–ը – «Անվճարունակ բանկի – վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձ–ը հաստատելու մասին» թիվ 402–Ն որոշումը, կետ 4:

² Կարի համաձայն՝ ՔԱՄԵԼՍ–նահատականը հաշվարկվում է որպես բանկի կապիտալի համարժեքության (Զ), ակտիվների որակի (Ա), կառավարման (Մ), եկամտաբերության (Ե), իրացվելիության (Լ) – շուկայական ռիսկի նկատմամբ գայունության (Ս) կամ ՔԱՄԵԼՍ–ի տարրեր՝ կարի համաձայն հաշվարկված նահատականների միջին թվաբանական:

³ Տե՛ս ԲԳ ԿԲ խորհրդի 26.10.2004թ. թիվ 255–Ն որոշմամբ հաստատված «ԲԳ տարածքում որոնող բանկերի ցուցանիշների ամփոփ նահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման – հրապարակման» կարգը, կետ 3:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Նիդեռլանդների փորձը, որտեղ վարկային կազմակերպությունների հուսալիությունը որոշելու համար մանրամասն ուսումնասիրվում են ինչպես անմիջապես բանկային գործունեությունը բնութագրող ցուցանիշները, այնպես էլ մակրոտնտեսական ինդիկատորներ, որոնք ազդեցություն են ունենում ողջ բանկային համակարգի վրա (ՀՆԱ–ի աճի տեմպը, արդյունաբերական արտադրության աճը, գործազրկության մակարդակը, եվրոյի փոխարժեքը և այլն): 1999 թվականից Նիդեռլանդներում կիրառվում է բանկերի գործունեության գնահատման RAST (Risk Analysis Support Tool) համակարգը, որը բաղկացած է հետևյալ փուլերից.

- կազմակերպության գործունեության ընդհանուր նկարագրություն և ֆինանսական վերլուծություն՝ հաշվետվությունների և կատարված հետազոտությունների հիման վրա,
- կազմակերպության բաղադրատունն առանձին խոշոր ենթաբաժինների,
- առանձին ենթաբաժինների կառավարման և ռիսկի գնահատում,
- ստացված արդյունքների ամփոփում և հաշվետվությունների կազմում (ընդ որում՝ առանձին ստորաբաժանումներին վերագրվում են տարբեր կշռային գործակիցներ՝ կախված կազմակերպության ընդհանուր բյուջեում նրանց զբաղեցրած տեսակարար կշռից):

20.4. ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ (CAMELS)

Դեռ 1998 թ. սեպտեմբերի 17–ին ՀՀ կենտրոնական բանկը հանրապետության տարածքում գործող բանկերին առաքել է «ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հուսալիության գնահատումն իրականացնելիս CAMELS համակարգի մեթոդիկայում օգտագործվող ցուցանիշները»¹:

Իսկ մինչև 2005թ. հունվարի 1–ը գործել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2003թ. օգոստոսի 12–ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 281–Ն որոշմամբ սահմանված կարգը:

Ներկայումս գործում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004թ. հոկտեմբերի 26–ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգը» նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 255–Ն որոշմամբ հաստատված կարգը:

Նշվածներին զուգահեռ ՀՀ ԿԲ խորհրդի 2002թ. նոյեմբերի 18–ի «Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի նվազագույն չափ սահմանելու մասին» թիվ 367–Ն որոշմամբ 2002թ. նոյեմբերի 28–ից բանկերի այդ գնահատականի նվազագույն չափ է սահմանվել 3 միավորը, որը գործել է մինչև 2003թ. օգոստոսի 26–ի համաձայն թիվ

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի – ՀՀ ֆինանսների – էկոնոմիկայի նախարարության 23.04.1999թ. համատեղ հաստատած «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման – հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 66 որոշումը: Ներառված են ՀՀ ԿԲ–ի 13.03.2001թ. թիվ 67, 30.07.2003թ. թիվ 260 որոշումները, կետ 2.4:

296–Ն որոշման ընդունումը, որի համաձայն՝ նույն տարվա սեպտեմբերի 6–ից ՀՀ ԿԲ–ն սահմանել է «... ամփոփ գնահատականի հետևյալ նվազագույն չափերը.

ա) երկու միավոր՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը անվճարունակ ճանաչելու համար,

բ) երեք միավոր՝ ... տարածքում գործող բանկերի ստեղծվող մասնաճյուղերի գրանցման միջնորդագրի մերժման համար, բանկի նկատմամբ ավելի խիստ տնտեսական նորմատիվների սահմանման և բանկերի նկատմամբ պատժամիջոցների կիրառման համար»²:

Ամփոփ գնահատականների նշանակությունն այն է, որ «Բանկը համարվում է անվճարունակ, եթե ... բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, ...»³: Բացի այդ, ինչպես թիվ 281–Ն (գործել է մինչև 2005թ. հունվարի 1–ը), այնպես էլ թիվ 255–Ն (գործում է 2005թ. հունվարի 1–ից) որոշումների համաձայն՝ բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը 2 (երկու) միավորից ցածր լինելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ⁴: Միաժամանակ, կանոնակարգ 7–ի համաձայն, ՀՀ օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը 3 (երեք) անվա ժամանակահատվածում 3 (երեք) անգամ խախտելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ⁵:

ՔԱՄԵԼՄ²–ի և դրա տարրերի գնահատումը, ըստ գործող կարգի, իրականացվում է 1–5 բալային համակարգով, որտեղ լավագույն գնահատականը 5–ն է, իսկ վատագույնը՝ 1–ը: Ընդ որում, եթե բանկի ընդհանուր կապիտալի միջին ամսական մեծությունը փոքր է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն ընդհանուր կապիտալի չափից, ապա բանկի կապիտալի համարժեքության Ք տարրի գնահատականը հավասար է 1–ի, իսկ եթե ընդհանուր կապիտալը բացասական մեծություն է, ապա «Ք», «Ա», «Ե», «Լ», «Ս» տարրերի այն բաղադրիչ հարաբերակցությունները, որոնց հաշվարկին մասնակցում է ընդհանուր կապիտալի մեծությունը, գնահատվում են 1 (մեկ): Միաժամանակ, եթե բանկի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը բացասական մեծություն է, ապա «Ե» տարրի գնահատականը հավասար է 1–ի:

Բացի այդ, ըստ նախկին կարգի՝ յուրաքանչյուր տարրի համար հաշվարկվում էին օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականներ, որոնց միջինը այդ տարրի գնահատականն էր, և ՔԱՄԵԼՄ–ի տարրերի սուբյեկտիվ գնահատականը ձևավորվում էր դրանց օբյեկտիվ գնահատականների ճշգրտման՝ վերահաշվարկման միջոցով հաշվի առնելով ըստ կարգի համապատասխան տարրերը պայմանավորող գործոնները:

Գործող կարգի համաձայն՝ ՔԱՄԵԼՄ–ի յուրաքանչյուր տարրի (բացառությամբ «Մ» տարրի) գնահատման համար հաշվարկվում են բաղադրիչ հարաբերակցություններ, և յուրաքանչյուր հարաբերակցության հաշվարկի ընթացքում կիրառված ցուցանիշները ճշգրտվում են՝ հաշվի առնելով գործող կարգով սահմանված համապատասխան գործոնները և դրանց ամենահավանական քանակական ազդեցությունը հաշվարկվող բաղադրիչ հարաբերակցությունների վրա: Ընդ որում, յուրաքանչյուր տարրի ճշգրտված բաղադրիչ հարաբերակցությունների գնահատականների միջին թվաբանականը տվյալ տարրի գնահատականն է: Ըստ գործող կարգի՝ այլևս չեն տարբերակվում օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականներ:

Գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի հաշվարկման կարգի գլխավոր տարբերիչ հատկանիշը նախորդ համանուն կարգից այն է, որ «ՔԱՄԵԼԱ–ի յուրաքանչյուր տարրի ... գնահատման համար հաշվարկվում են բաղադրիչ հարաբերակցություններ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից, ...»³: Բանկերն իրենք են հաշվարկում բաղադրիչ հարաբերակցությունները, այնուհետև ճշգրտում են այդ հաշվարկներով ստացված գնահատականները, և հաշվարկման ու ճշգրտման արդյունքում ստանում են միջին թվաբանական, որն էլ ի վերջո կազմում է բանկի գնահատականը: Ցուցանիշների ամփոփ գնահատումը կատարվում է ամսական կտրվածքով, և այս ցուցանիշների ամսական ամփոփ գնահատականները (ՔԱՄԵԼԱ) հաստատվելուց հետո ՀՀ կենտրոնական բանկը եռօրյա ժամկետում բանկերին է տրամադրում իրենց անհատական ամփոփ ցուցանիշը: ՔԱՄԵԼԱ գնահատականը կարող է կազմվել նաև բանկերում ստուգումների արդյունքում:

Գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի տարրերից կապիտալի համարժեքության՝ «Ք» տարրին անդրադառնալու նպատակով կազմվել է աղյուսակը, որտեղ արտացոլվել են նախորդ և գործող կարգերի համաձայն այս տարրի գնահատականի հաշվարկման նախատեսված ցուցանիշները, դրանց սահմանումները, ցուցանիշի միջակայքն ու դրանց համապատասխանող գնահատականները:

Աղյուսակի համաձայն՝ մինչև 01.01.2005թ., անզամ առանց սուբյեկտիվ գնահատականների հաշվառման, կապիտալի համարժեքության օբյեկտիվ միջին գնահատականը կարող էր կազմել ընդամենը 3,3 միավոր: Այսպիսի գնահատականի ձևավորման գլխավոր պատճառը Ք4–Ք7 ցուցանիշների գնահատականը առավելագույնը 2 միավոր սահմանելն է: 2005թ. հունվարի 1–ից հետո այս ցուցանիշները բանկի գնահատման հաշվարկին կարող են մասնակցել, եթե բանկը խախտել է նորմատիվների գծով սահմանաչափը:

Կարևոր են Ք1 ցուցանիշի միջակայքերը և դրանց համապատասխան գնահատականները կոնկրետ բանկի տեսանկյունից: Երբ նորմատիվային ընդհանուր կապիտալը բանկի փաստացի ընդհանուր կապիտալն է, հատուկ պահուստը «հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստն է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին»¹, չաշխատող ակտիվներում հսկվող ակտիվները՝ 20, ոչ ստանդարտ ակտիվները՝ 50, կասկածելի ակտիվները՝ 100%, իսկ ռիսկային, միջին ռիսկային և բարձր ռիսկային արժեթղթերն ընդգրկվում են համապատասխանաբար 20, 70 և 100% կշիռներով, ապա ի վերջո ստացվում է, որ խոսք է գնում, ըստ էության, միայն փաստացի ընդհանուր կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի միջև հարաբերակցության մասին: 5 միավոր գնահատական կարող է ստանալ միայն այն բանկը, որի փաստացի ընդհանուր կապիտալը 2,5 անգամ գերազանցում է սահմանված նվազագույն չափը:

Կապիտալի համարժեքության «Ք» տարրի օբյեկտիվ գնահատականի ցուցանիշները մինչև 01.01.2005թ. և դրանից հետո

Ցուցանիշ	Ցուցանիշի սահմանումը	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը մինչ- 01.01.2005թ.	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը 01.01.2005թ. հետո	Փոփոխությունը
Ք1	(Նորմատիվային ընդհանուր կապիտալ + հատուկ պահուստ – չաշխատող ակտիվներ) / Ընդհանուր կապիտալի նվազա-ույն չափ	$\rho_1 \geq 250\% = 5$ $250\% > \rho_1 \geq 150\% = 4$ $150\% > \rho_1 \geq 125\% = 3$ $125\% > \rho_1 \geq 100\% = 2$ $\rho_1 < 100\% = 1$	$\rho_1 \geq 250\% = 5$ $250\% > \rho_1 \geq 150\% = 4$ $150\% > \rho_1 \geq 125\% = 3$ $125\% > \rho_1 \geq 100\% = 2$ $\rho_1 < 100\% = 1$	Անփոփոխ
Ք2	Ընդհանուր կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ	$\rho_2 \geq 20\% = 5$ $20\% > \rho_2 \geq 16\% = 4$ $16\% > \rho_2 \geq 12\% = 3$ $12\% > \rho_2 \geq 8\% = 2$ $\rho_2 < 8\% = 1$	$\rho_2 \geq 20\% = 5$ $20\% > \rho_2 \geq 16\% = 4$ $16\% > \rho_2 \geq 12\% = 3$ $12\% > \rho_2 \geq 8\% = 2$ $\rho_2 < 8\% = 1$	Անփոփոխ
Ք3	Հիմնական կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ	$\rho_3 \geq 16\% = 5$ $16\% > \rho_3 \geq 12\% = 4$ $12\% > \rho_3 \geq 8\% = 3$ $8\% > \rho_3 \geq 4\% = 2$ $\rho_3 < 4\% = 1$	$\rho_3 \geq 16\% = 5$ $16\% > \rho_3 \geq 12\% = 4$ $12\% > \rho_3 \geq 8\% = 3$ $8\% > \rho_3 \geq 4\% = 2$ $\rho_3 < 4\% = 1$	Անփոփոխ
Ք4	Մեկ փոխառուի ծով ռիսկ	$30\% \geq \rho_4 > 20\% = 2$ $\rho_4 > 30\% = 1$	$30\% \geq \rho_4 > 20\% = 2$ $\rho_4 > 30\% = 1$	01.01.2005թ. հետո ներառվում է, եթե խախտվել է նորմատիվը
Ք5	Բոլոր խոշոր փոխառուների ծով ռիսկ	$400\% \geq \rho_5 > 200\% = 2$ $\rho_5 > 200\% = 1$	$600\% \geq \rho_5 > 500\% = 2$ $\rho_5 > 400\% = 1$	01.01.2005թ. հետո նոր նորմատիվ: Ներառվում է, եթե խախտվել է այդ նորմատիվը
Ք6	Բանկի հետ կապված բոլոր անձանց պարտավորությունների հանրա-ուժմար / Ընդհանուր կապիտալ	$60\% \geq \rho_6 > 50\% = 2$ $\rho_6 > 60\% = 1$	$30\% \geq \rho_6 > 20\% = 2$ $\rho_6 > 20\% = 1$	01.01.2005թ. հետո նորմատիվի նոր չափ: Ներառվում է, եթե խախտվել է այդ նորմատիվը:
Ք7	Բանկի հետ կապված մեկ անձի պարտավորությունների հանրա-ուժմար) / Ընդհանուր կապիտալ	$7\% \geq \rho_7 > 5\% = 2$ $\rho_7 > 7\% = 1$	$7\% \geq \rho_7 > 5\% = 2$ $\rho_7 > 7\% = 1$	Անփոփոխ

Հաջորդ՝ Ք2 ցուցանիշը ընդհանուր կապիտալը ռիսկով կշռված ակտիվներին հարաբերակցությամբ 1^{1} նորմատիվն է, որի գծով 3 միավոր գնահատականը նախատեսվում է, երբ բանկի այս նորմատիվը գտնվում է 12–16%–ի միջակայքում, ավելի փոքր ընդգրկումով միջակայքերը փաստորեն այս նորմատիվի գծով բանկի խախտումներն են, իսկ 5 միավոր գնահատական է նախատեսվում 20%–ին հավասար կամ մեծ լինելու դեպքում, որը նշանակում է, որ բանկը փաստորեն անբողջությամբ չի օգտագործում այս նորմատիվով բանկերին տրված իրավունքը միջոցներ ներգրավելու առումով:

Մյուս՝ Ք3 ցուցանիշը 1^{2} նորմատիվն է, որի գծով գնահատականները, բնականաբար, այլ միջակայքերի շրջանակներում որպես ելակետ ունեն այս նորմատիվի նվազագույնը 8% հարաբերակցությունը:

Ք տարրի բոլոր ցուցանիշների օբյեկտիվ գնահատականների հիմքում (Ք1 ցուցանիշի գծով մասնակիորեն) ընկած են համապատասխան հիմնական տնտեսական նորմատիվները, ընդ որում փոխառուներին վերաբերող ցուցանիշները նվազեցման իմաստով հաշվարկին մասնակցում են, երբ բանկն արդեն խախտել է այդ նորմատիվները:

Ամփոփ գնահատականի տարրերից ակտիվների որակի՝ «Ա» տարրի ցուցանիշները (տե՛ս 24.4.2 աղյուսակը) արտացոլում են դրանց սահմանումները, միջակայքերը և համապատասխան գնահատականներն ըստ նախկին և գործող կարգերի:

Երբ այս բաժնի հարաբերակցությունների միջոցով վերահսկողների կողմից գնահատվում է բանկի ակտիվների որակը դրանց եկամտաբերության, կենտրոնացվածության և այլ ռիսկերի միջոցով՝ պայմանավորված վերջիններիս արժեքի կորստի հնարավորության տեսանկյունով, ապա, ինչպես հետևում է թիվ 24.4.2 աղյուսակից, մասնավորապես Ա1 ցուցանիշի գծով 3 միավոր օբյեկտիվ գնահատականը ձևավորվում է ընդհանուր ակտիվների նկատմամբ հետհաշվեկշռային հողվածների և դասակարգված ակտիվների գծով պահուստների հանրագումարի հարաբերակցության 4–6% միջակայքի առկայության դեպքում, իսկ 5 միավորը՝ 2%–ից փոքր լինելու դեպքում:

Կարևոր է ընդհանուր ակտիվների նկատմամբ ոչ եկամտաբեր ակտիվների հարաբերակցության Ա3 ցուցանիշը, որի գծով, եթե 3 միավոր օբյեկտիվ գնահատականը ձևավորվում է փաստորեն եկամտաբեր ակտիվների 60–70%–ի միջակայքում, ապա 5 միավորի 80%–ի միջակայքը նշանակում է, որ եթե 20% այս եղանակով որպես ոչ եկամտային մնացած ակտիվից հանվեն 20% բարձր իրացվելի ակտիվները, ապա բանկի պարզապես բնականոն գործունեության ապահովման (հիմնական միջոցներ, գույք և այլն) նպատակով բանկի տնօրինած ակտիվները պետք է կազմեն ընդհանուր ակտիվների զրո տոկոսը:

Իսկ ակտիվների ճյուղային կենտրոնացման Ա7 ցուցանիշի գծով օբյեկտիվ գնահատումը որոշակիորեն մտնում է հակասության մեջ բանկերի մասնագիտացման հետագա խորացման հնարավոր միտման հետ, և, այսպիսով, բանկերը պարզապես պետք է ապահովեն ունիվերսալություն, որը կարող է արդարացված լինել ընդհանուր տնտեսական նկատառումներով:

Ակտիվների որակի «Ա» տարրի օբյեկտիվ գնահատականի ցուցանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի սահմանումը	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը մինչ- 01.01.2005թ.	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը 01.01.2005թ. հետո	Փոփոխությունը
Ա1	Չաշխատող ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ	$Ա1 \leq 2\% = 5$ $2\% < Ա1 \leq 4\% = 4$ $4\% < Ա1 \leq 6\% = 3$ $6\% < Ա1 \leq 8\% = 2$ $Ա1 > 8\% = 1$	$Ա1 \leq 2\% = 5$ $2\% < Ա1 \leq 4\% = 4$ $4\% < Ա1 \leq 6\% = 3$ $6\% < Ա1 \leq 8\% = 2$ $Ա1 > 8\% = 1$	Անփոփոխ
Ա2	Չաշխատող վարկեր / Վարկային ներդրումներ	$Ա2 \leq 3\% = 5$ $3\% < Ա2 \leq 6\% = 4$ $6\% < Ա2 \leq 10\% = 3$ $10\% < Ա2 \leq 15\% = 2$ $Ա2 > 15\% = 1$	$Ա2 \leq 3\% = 5$ $3\% < Ա2 \leq 6\% = 4$ $6\% < Ա2 \leq 10\% = 3$ $10\% < Ա2 \leq 15\% = 2$ $Ա2 > 15\% = 1$	Անփոփոխ
Ա3	Ոչ եկամտաբեր ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ	$Ա3 \leq 25\% = 5$ $25\% < Ա3 \leq 35\% = 4$ $35\% < Ա3 \leq 45\% = 3$ $45\% < Ա3 \leq 55\% = 2$ $Ա3 > 55\% = 1$	$Ա3 = 20\% = 5$ $20\% < Ա3 \leq 30\% = 4$ $30\% < Ա3 \leq 40\% = 3$ $40\% < Ա3 \leq 50\% = 2$ $Ա3 > 50\% = 1$	Միջակայքերը նվազեցված են 5 տոկոսային կետով:
Ա4	Պահուստ / Չաշխատող ակտիվներ	$Ա4 = 10\% = 5$ $10\% < Ա4 \leq 15\% = 4$ $15\% < Ա4 \leq 20\% = 3$ $20\% < Ա4 \leq 50\% = 2$ $Ա4 > 50\% = 1$	$20\% < Ա4 \leq 50\% = 2$ $Ա4 > 50\% = 1$	Հանվել են ներառյալ 3 միավորից բարձր միջակայքերը:
Ա5	Ռիսկով կշռված խոշոր ներդրումների հանրա-ումար / Ընդհանուր կապի-տալ	$Ա5 \leq 100\% = 5$ $100\% < Ա5 \leq 200\% = 4$ $200\% < Ա5 \leq 300\% = 3$ $300\% < Ա5 \leq 400\% = 2$ $Ա5 > 400\% = 1$	$Ա5 \leq 100\% = 5$ $100\% < Ա5 \leq 200\% = 4$ $200\% < Ա5 \leq 300\% = 3$ $300\% < Ա5 \leq 400\% = 2$ $Ա5 > 400\% = 1$	Անփոփոխ
Ա6	Խոշոր ներդրումների հանրա-ումար / Ընդհա-նուր ներդրումներ	$Ա6 \leq 30\% = 5$ $30\% < Ա6 \leq 40\% = 4$ $40\% < Ա6 \leq 50\% = 3$ $50\% < Ա6 \leq 60\% = 2$ $Ա6 > 60\% = 1$	$Ա6 \leq 30\% = 5$ $30\% < Ա6 \leq 40\% = 4$ $40\% < Ա6 \leq 50\% = 3$ $50\% < Ա6 \leq 60\% = 2$ $Ա6 > 60\% = 1$	Անփոփոխ
Ա7	Ակտիվների ճյուղային կենտրոնացման աստի-ճանը	$Ա7 \leq 0,15 = 5$ $0,15 < Ա7 \leq 0,25 = 4$ $0,25 < Ա7 \leq 0,4 = 3$ $0,4 < Ա7 \leq 0,6 = 2$ $Ա7 > 0,6 = 1$	$Ա7 \leq 0,15 = 5$ $0,15 < Ա7 \leq 0,25 = 4$ $0,25 < Ա7 \leq 0,4 = 3$ $0,4 < Ա7 \leq 0,6 = 2$ $Ա7 > 0,6 = 1$	Անփոփոխ

Երբ Ա4 ցուցանիշի գծով միջակայքերն ընդհանրապես չեն նախատեսում 2 միավորից բարձր միավոր ունեցող գնահատական, ապա անզամ ամենասուբյեկտիվ դիրքորոշման դեպքում բանկերի Ա տարրի գծով առանց ճշգրտումների հաշվարկված գնահատականը կարող է կազմել միայն 4.57 միավոր:

Ամփոփ գնահատականի մյուս՝ եկամտաբերության «Ե» տարրը կազմող ցուցանիշների միջոցով, բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի հաշվարկման կարգի համաձայն, գնահատվում է բանկի եկամուտ ստանալու և ծախսերը կառավարելու ունակությունը (տես թիվ 20.4.3. աղյուսակը):

Աղյուսակ 20.4.3.

Եկամտաբերության «Ե» տարրի օբյեկտիվ գնահատականի ցուցանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի սահմանումը	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը մինչ- 01.01.2005թ.	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը 01.01.2005թ. հետո	Փոփոխությունը
Ե1	Ջուտ շահույթ / Ընդհանուր ակտիվներ	Ե1≥6%=5 6%>Ե1≥4%=4 4%>Ե1≥1%=3 1%>Ե1≥0%=2 Ե1<0%=1	Ե1≥6%=5 6%>Ե1≥4%=4 4%>Ե1≥1%=3 1%>Ե1≥0%=2 Ե1<0%=1	Ամփոփոխ
Ե2	Ջուտ շահույթ / Ընդհանուր կապիտալ	Ե2≥24%=5 24%>Ե2≥16%=4 16%>Ե2≥6%=3 6%>Ե2≥0%=2 Ե2<0%=1	Ե2≥24%=5 24%>Ե2≥16%=4 16%>Ե2≥6%=3 6%>Ե2≥0%=2 Ե2<0%=1	Ամփոփոխ
Ե3	Ջուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվներ	Ե3≥15%=5 15%>Ե3≥12%=4 12%>Ե3≥6%=3 6%>Ե3≥0%=2 Ե3<0%=1	Ե3≥15%=5 15%>Ե3≥12%=4 12%>Ե3≥6%=3 6%>Ե3≥0%=2 Ե3<0%=1	Ամփոփոխ
Ե4	Ջուտ որժառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվներ	Ե4≥9%=5 9%>Ե4≥6%=4 6%>Ե4≥3%=3 3%>Ե4≥0%=2 Ե4<0%=1	Ե4≥9%=5 9%>Ե4≥6%=4 6%>Ե4≥3%=3 3%>Ե4≥0%=2 Ե4<0%=1	Ամփոփոխ
Ե5	(Ջուտ տոկոսային եկամուտ + ոչ տոկոսային եկամուտ) / Ոչ տոկոսային ծախսեր	Ե5≥175%=5 175%>Ե5≥150%=4 150%>Ե5≥125%=3 125%>Ե5≥100%=2 Ե5<100%=1	Ե5≥175%=5 175%>Ե5≥150%=4 150%>Ե5≥125%=3 125%>Ե5≥100%=2 Ե5<100%=1	Ամփոփոխ

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ Ե1 ցուցանիշի գծով 3 միավոր օբյեկտիվ գնահատականը ձևավորվում է ըստ ակտիվների շահութաբերության 1–4% միջակայքում, իսկ 5 միավորը՝ 6%–ի դեպքում: Դրան զուգահեռ, ըստ կապիտալի շահութաբերության 6–12% միջակայքը տալիս է 3 միավոր, իսկ 24 և ավելի տոկոս մակարդակը՝ 5 միավոր: Այսինքն՝ 5 միավորի համար ըստ կապիտալի շահութաբերությունը պետք է 4 անգամ գերազանցի 3 միավորի շահութաբերության մակարդակը, իսկ ակտիվներով շահութաբերության դեպքում՝ 6 անգամ:

Թեև ցուցանիշների գնահատման գործող կարգի «Ե» տարրի ցուցանիշների սահմանումները և միջակայքերը մնացել են ամփոփոխ, գործող և նախկին կարգերի զլխավոր տարբերությունը վերաբերում է նրան, որ այս տարրը բանկերն իրենց

հաշվարկում պետք օգտագործեն մեկ միավորի չափով, եթե բանկի այդ ժամանակահատվածում չբաշխված շահույթը բացասական մեծություն է, այսինքն՝ խիստ օբյեկտիվ հիմքերով կենտրոնական բանկը վնասաբեր բանկին թույլ չի տալիս հաշվարկի մեջ ներառել Ե3–Ե5 ցուցանիշների հնարավոր ավելի մեծ միավորները:

Ցուցանիշների ամփոփ գնահատականի իրացվելիության «Լ» բաժնի հարաբերակցությունները բնութագրում են բանկի ունակությունը առանց կորուստների և ժամանակին բավարարելու հաճախորդների պահանջները, կառավարելու իրացվելիության հնարավոր տատանումները (տե՛ս թիվ 20.4.4. աղյուսակը):

Աղյուսակ 20.4.4.

Իրացվելիության «Լ» տարրի օբյեկտիվ գնահատականի ցուցանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի սահմանումը	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը մինչ- 01.01.2005թ.	Ցուցանիշի միջակայքը - դրա համապատասխան գնահատականը 01.01.2005թ. հետո	Փոփոխությունը
L1	Բարձրիրացվելի ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ	$h1 \geq 30\% = 5$ $30\% > h1 \geq 25\% = 4$ $25\% > h1 \geq 20\% = 3$ $20\% > h1 \geq 15\% = 2$ $h1 < 15\% = 1$	$L1 \geq 30\% = 5$ $30\% > L1 \geq 25\% = 4$ $25\% > L1 \geq 20\% = 3$ $20\% > L1 \geq 15\% = 2$ $L1 < 15\% = 1$	Անփոփոխ
L2	Բարձրիրացվելի ակտիվներ / Ցպահանջ պարտավորություններ	$h2 \geq 100\% = 5$ $100\% > h2 \geq 90\% = 4$ $90\% > h2 \geq 80\% = 3$ $80\% > h2 \geq 70\% = 2$ $h2 < 70\% = 1$	Չի նախատեսվում	Հանվել է
L2	Բարձրիրացվելի ակտիվներ / (Ցպահանջ պարտավորություններ + խոշոր պարտավորություններ)	$h5 \geq 175\% = 5$ $175\% > h5 \geq 150\% = 4$ $150\% > h5 \geq 125\% = 3$ $125\% > h5 \geq 100\% = 2$ $h5 < 100\% = 1$	$L2 \geq 100\% = 5$ $100\% > L2 \geq 90\% = 4$ $90\% > L2 \geq 80\% = 3$ $80\% > L2 \geq 70\% = 2$ $L2 < 70\% = 1$	Նախորդ կար ի L 5 ցուցանիշն է, որի միջակայքերը նոր կար ու վ նկատելիորեն մեղմացվել են:
L3	Ցպահանջ – մինչ- 29 օր մարման ժամկետով ակտիվներ / Ցպահանջ – մինչ- 29 օր մարման ժամկետով պարտավորություններ	$h3 \geq 140\% = 5$ $140\% > h3 \geq 120\% = 4$ $120\% > h3 \geq 100\% = 3$ $100\% > h3 \geq 80\% = 2$ $h3 < 80\% = 1$	$L3 \geq 140\% = 5$ $140\% > L3 \geq 120\% = 4$ $120\% > L3 \geq 100\% = 3$ $100\% > L3 \geq 80\% = 2$ $L3 < 80\% = 1$	Անփոփոխ
L4	Մինչ- 180 օր մարման ժամկետով ակտիվներ / Մինչ- 180 օր մարման ժամկետով պարտավորություններ	$h4 \geq 140\% = 5$ $140\% > h4 \geq 120\% = 4$ $120\% > h4 \geq 100\% = 3$ $100\% > h4 \geq 80\% = 2$ $h4 < 80\% = 1$	$L4 \geq 140\% = 5$ $140\% > L4 \geq 120\% = 4$ $120\% > L4 \geq 100\% = 3$ $100\% > L4 \geq 80\% = 2$ $L4 < 80\% = 1$	Անփոփոխ

Աղյուսակից հետևում է, որ բանկի կողմից L1 ցուցանիշի կամ L_2^1 տնտեսական նորմատիվի պահպանումը տալիս է բանկի կողմից իր գնահատականի 3 միավոր: Մինևույն ժամանակ L1 ցուցանիշի գնահատականի 5 միավոր ձևավորելու համար ընդհանուր ակտիվների նկատմամբ բանկը պետք է ունենա բարձրիրացվելի ակտիվների 30 և ավելի տոկոս: Սակայն այս դեպքում բանկը չի կարող 5 միավոր ստանալ ակտիվների որակը բնութագրող Ա3՝ ընդհանուր ակտիվների նկատմամբ ոչ եկամտաբեր ակտիվների հարաբերակցության ցուցանիշի գծով:

Գործող կարգով հանվել է «Լ» տարրի L2 ցուցանիշը, որն ըստ էության $U_2^{2'}$ հիմնական տնտեսական նորմատիվն էր: Այժմ L2–ն իրենից ներկայացնում է նախորդ L5 ցուցանիշը, որի միջակայքերի գծով նոր կարգը նախատեսում է զգալի մեղմացումներ, մասնավորապես, ինչպես ցպահանջ պարտավորությունների, այնպես էլ խոշոր պարտավորությունների նկատմամբ կենտրոնական բանկը թուլյատրում է 3 միավոր գնահատական, եթե բարձրորակվելի ակտիվները կազմում են դրանց հանրագումարի ընդամենը 80 և ավելի տոկոսը:

Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի հաջորդ՝ շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության «Ս» տարրի հիման վրա գնահատվում է բանկի շուկայական ռիսկին ենթարկվածությունը (տե՛ս թիվ 20.4.5. աղյուսակը):

Աղյուսակ 20.4.5.

Շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության Ս տարրի օբյեկտիվ գնահատականի ցուցանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի սահմանումը	Ցուցանիշի միջակայքը – դրա համապատասխան գնահատականը մինչ– 01.01.2005թ.	Ցուցանիշի միջակայքը – դրա համապատասխան գնահատականը 01.01.2005թ. հետո	Փոփոխությունը
U1	Համախառն արտարժութային դիրք / Ընդհանուր կապիտալ	$U1 < 15\% = 5$ $20\% \leq U1 < 15\% = 4$ $25\% \leq U1 < 20\% = 3$ $30\% \leq U1 < 25\% = 2$ $U1 > 30\% = 1$	$U1 \leq 10\% = 5$ $10\% < U1 \leq 15\% = 4$ $15\% < U1 \leq 20\% = 3$ $20\% < U1 \leq 25\% = 2$ $U1 > 25\% = 1$	Փոփոխված է նոր կանոնակարգի 2–ին համապատասխան
U2	Համախառն արտարժութային դիրք (առանց ածանցյալների) / Ընդհանուր կապիտալ	$U2 < 15\% = 5$ $20\% \leq U2 < 15\% = 4$ $25\% \leq U2 < 20\% = 3$ $30\% \leq U2 < 25\% = 2$ $U2 > 30\% = 1$	$U2 \leq 10\% = 5$ $10\% < U2 \leq 15\% = 4$ $15\% < U2 \leq 20\% = 3$ $20\% < U2 \leq 25\% = 2$ $U2 > 25\% = 1$	Փոփոխված է նոր կանոնակարգի 2–ին համապատասխան
U3	II խմբի արտարժութային դիրք / Ընդհանուր կապիտալ	$U3 \leq 2\% = 5$ $3\% \leq U3 < 2\% = 4$ $5\% \leq U3 < 3\% = 3$ $6\% \leq U3 < 5\% = 2$ $U3 > 6\% = 1$	$U3 \leq 2\% = 5$ $2\% < U3 \leq 3\% = 4$ $3\% < U3 \leq 5\% = 3$ $5\% < U3 \leq 6\% = 2$ $U3 > 6\% = 1$	Փոփոխված է նոր կանոնակարգի 2–ին համապատասխան
U4	II խմբի արտարժութային դիրք (առանց ածանցյալների) / Ընդհանուր կապիտալ	$U4 \leq 2\% = 5$ $3\% \leq U4 < 2\% = 4$ $5\% \leq U4 < 3\% = 3$ $6\% \leq U4 < 5\% = 2$ $U4 > 6\% = 1$	$U4 = 2\% = 5$ $2\% < U4 \leq 3\% = 4$ $3\% < U4 \leq 5\% = 3$ $5\% < U4 \leq 6\% = 2$ $U4 > 6\% = 1$	Փոփոխված է նոր կանոնակարգի 2–ին համապատասխան
U5	Հիմնական միջոցներ / Հիմնական կապիտալ	$U5 \leq 20\% = 5$ $20\% < U5 \leq 30\% = 4$ $30\% < U5 \leq 50\% = 3$ $50\% < U5 \leq 70\% = 2$ $U5 > 70\% = 1$	$U5 \leq 10\% = 5$ $10\% < U5 \leq 15\% = 4$ $15\% < U5 \leq 25\% = 3$ $25\% < U5 \leq 35\% = 2$ $U5 > 35\% = 1$	Նկատելիորեն նվազեցված են միջակայքերը
U6	Տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ զայուն ակտիվների – պարտավորությունների տարբերություն / Ընդհանուր կապիտալ	$U6 \leq 20\% = 5$ $40\% \leq U6 < 20\% = 4$ $60\% \leq U6 < 40\% = 3$ $80\% \leq U6 < 60\% = 2$ $U6 > 80\% = 1$	$U6 \leq 20\% = 5$ $40\% \leq U6 < 20\% = 4$ $60\% \leq U6 < 40\% = 3$ $80\% \leq U6 < 60\% = 2$ $U6 > 80\% = 1$	Անփոփոխ

Բանկերի կողմից «Ս» տարրի գնահատման համար հաշվարկվում են Ս1–Ս6 ցուցանիշները, և արտարժույթի տնօրինման նորմատիվի յուրաքանչյուր խախտման դեպքում, ինչպես ըստ արտարժույթի խմբերի, այնպես էլ ըստ առանձին արտարժույթների, «Ս» տարրի գնահատականը պետք է նվազեցվի 0.5 միավորով, ընդ որում «Ս» տարրի գնահատականը չի կարող նվազեցվել 1–ից:

Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի վերջին՝ կառավարման «Ս» տարրը, կարգի համաձայն, արտացոլում է բանկի գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով բանկի կառավարման մարմինների հնարավոր ռիսկերը կառավարելու ունակությունը և ներքին հսկողության համակարգերի արդյունավետությունը: Ենթադրվում է, որ վերահսկողը պետք է հաշվի առնի այս կամ այն հարցի կարևորությունը: Ընդ որում, «Ս» տարրի գնահատականը հաշվարկվում է բանկի կառուցվածքին, տեղեկատվության բավարարությանը և փոխանակման արդյունավետությանը, անկախ որոշումներ ընդունելուն, ակտիվների և պասիվների կառավարմանը, անձնակազմի մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը և ուրիշ այլ՝ թվով 30 հարցերին տրվող պատասխաններին համապատասխան բալերի միջոցով:

Քանի որ բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի հաշվարկները, ըստ գործող կարգի, կատարվում են բանկերի կողմից, ապա առանձնահատուկ նշանակություն են ստանում այն գործոնները, որոնց միջոցով գնահատման յուրաքանչյուր տարր ենթարկվում է ճշգրտման, և ճշգրտված բաղադրիչ հարաբերակցությունների միջին թվաբանականը դառնում է տվյալ տարրի գնահատականը:

Այստեղ նախկին և գործող կարգերի միջև գլխավոր տարբերությունը վերաբերում է նրան, որ նախկին՝ կենտրոնական բանկի վերահսկողների «սուբյեկտիվ կարծիքի» միջոցով վերջնական գնահատականի հաշվարկման փոխարեն գործող կարգը նախատեսում է բանկերի ինքնուրույն հաշվարկման գործընթաց յուրաքանչյուր տարրի ինչպես բաղադրիչ հարաբերակցությունների, այնպես էլ դրանք ճշգրտող գործոնների գծով, որին զուգահեռ կենտրոնական բանկն իր ստուգումների միջոցով ևս կազմում է ցուցանիշների ամփոփ ՔԱՄԵԼՍ գնահատականը:

ՀՀ տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի ՔԱՄԵԼՍ համակարգի վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ ամփոփումները.

- ներկայումս գործող գնահատականների հաշվարկման կարգը բանկերին ստիպում է առաջին հերթին գնահատման բաղադրիչ հարաբերակցություններին մասնակցող տարրերն անընդհատ պահել ուշադրության կենտրոնում, և ավելին՝ յուրաքանչյուր գործարք փորձաքննել այս կամ այն բաղադրիչի մեծության հնարավոր փոփոխության տեսանկյունից, որը խիստ դրական է, քանի որ գնահատականների այս կարգով ներդրվում և ամրապնդվում են բանկի գործունեության բոլոր ուղղությունների միասնականության, ինչպես նաև բանկերի սեփական գործունեության նկատմամբ անընդհատ ու շարունակական ինքնագնահատման սկզբունքները,

- գնահատման այս համակարգի հիմքում ընկած են, առաջին հերթին, կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը, ընդ որում կենտրոնական բանկը հիմնականում 3 միավոր գնահատականի միջակայքերն ամրագրել է հենց այդ նորմատիվների սահմանաչափերի

նկատմամբ, որով բանկը հաստատում է, որ 3 գնահատականը ընդամենը հետագա գործունեության նվազագույն նախապայման է,

- կարգի գործողության արդյունքում կենտրոնական բանկի պահանջների՝ բաղադրիչների հարաբերակցությունների և ճշգրտման միջոցով բանկերն իրենց ինքնագնահատականներով ընդամենը հաստատում են, որ ենթակա չեն ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվների կիրառման, կարող են մասնաճյուղեր գրանցելու միջնորդություններ ներկայացնել կամ պարզապես չենթարկվել անվճարունակության գործընթացի: Այսինքն՝ ցուցանիշների ամփոփ գնահատականների կիրառման արդյունքում, եթե անգամ վերջիններիս գնահատականը 5 է կամ դրան մոտ, չեն ստանում այլ՝ որակական փոփոխության հնարավորություն: Կարևոր է նաև բաղադրիչ հարաբերակցությունների միջակայքերի տարբեր տարրերի գծով մեկը մյուսին չբացառելը,
- բանկերի ցուցանիշների ամսական ամփոփ գնահատականները չհրապարակելու դրդապատճառներն ի վերջո կարող են ընդունելի լինել, սակայն ՀՀ բանկային համակարգի վերջնականապես կայացած լինելու վկայական կարող են դառնալ հանրապետության տարածքում գործող բանկերից յուրաքանչյուրի ամփոփ գնահատականների պաշտոնական հրապարակումները:

20.5. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՅԵՆԱԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ առևտրային բանկերի սնանկացման ընթացակարգը սահմանվում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 06.11.2001թ.: ՀՀ Ազգային ժողովի կողմից: Համաձայն այդ օրենքի՝ բանկը համարվում է անվճարունակ, եթե

- ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50%-ը և ավելին կամ
- բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները կամ
- գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից կամ դ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանած պարտադիր պահուստավորման նորմատիվը: Խախտման պարբերականությունը սահմանում է ԿԲ խորհուրդը, և պետք է միևնույնը լինի ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար:

Վերը նշված կետերից որևէ մեկի առկայության դեպքում կենտրոնական բանկի խորհուրդը կարող է որոշում ընդունել բանկն անվճարունակ ճանաչելու վերաբերյալ: Ընդ որում, նման որոշում կայացնելու բացառիկ իրավունքը պատկանում է ԿԲ խորհրդին, և այդ որոշումը հետագայում դատական կարգով բողոքարկման ենթակա չէ:

Բանկի անվճարունակության փաստը հաստատագրելուց հետո ԿԲ-ն կարող է կիրառել երկու մոտեցում.

- նշանակել ժամանակավոր ադմինիստրացիա և հաստատել բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը,
 - բանկի սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան:
- Բանկի սնանկությունը կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի

կողմից հաստատված նրա անվճարունակությունն է: Այսինքն՝ «սնանկ» և «անվճարունակ» հասկացությունները համարժեք չեն: Բանկի անվճարունակության մասին որոշումն ընդունում է ԿԲ խորհուրդը, իսկ սնանկության մասին՝ դատարանը:

Որպես կանոն, բանկի ֆինանսական վիճակի վատթարացման և անվճարունակության բացահայտման պայմաններում ԿԲ-ն տվյալ բանկի նկատմամբ սահմանում է ժամանակավոր ադմինիստրացիա: Ներկայացնենք այդ մարմնի հիմնական դերը, իրավասությունները և գործունեության ընթացակարգը:

Ժամանակավոր ադմինիստրացիան կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին և անդամներին նշանակում է Կենտրոնական բանկը: Ադմինիստրացիայի հիմնական խնդիրներն են.

- բանկի վերակազմավորման միջոցով նրա ավանդատուների և այլ պարտավորությունների բավարարումը,
- բանկի ակտիվների մի մասը կամ բանկն ամբողջությամբ վաճառելու միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը,
- բանկի ակտիվները հնարավորին չափ կարճատև ժամանակահատվածում հավաքագրումը,
- բանկի կանոնադրական կապիտալի ավելացմանը կամ փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրագործումը,
- բանկի պարտավորությունների փոխանցումն այլ անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- բանկային գործունեության լիցենզիայի մեկ տարատեսակի փոխարինումը մեկ այլ տարատեսակի՝ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կարգով և պայմաններով,
- այլ միջոցառումներ:

Ժամանակավոր ադմինիստրացիան իր գործունեությունը կազմակերպում է բանկի ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան, որը հաստատվում է կենտրոնական բանկի կողմից: Ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի կառավարման բոլոր մարմինների բոլոր լիազորությունները դադարեցվում են և փոխանցվում ադմինիստրացիայի ղեկավարին:

Ժամանակավոր ադմինիստրացիայի գործողությունը դադարում է հետևյալ երկու դեպքերում.

1. եթե ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված ժամկետի ընթացքում այս մարմինն իրագործել է իր խնդիրները,

2. եթե ԿԲ-ի դիմումի համաձայն՝ դատարանը որոշում է կայացրել բանկը սնանկ ճանաչելու մասին:

Իր առջև դրված խնդիրների իրագործումը ժամանակավոր ադմինիստրացիան ապահովում է բանկի ֆինանսական առողջացման ծրագրի համաձայն, որը ադմինիստրացիայի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ԿԲ խորհուրդը: Այդ փաստաթուղթն, ըստ էության, հանդիսանում է ժամանակավոր ադմինիստրացիայի գործողության ուղեցույցը: Ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի.

- բանկի ֆինանսական վիճակի գնահատականը,

¹ Տե՛ս Банковское дело: стратегическое руководство, М., 1998, с. 11.

- բանկի մասնակիցների և այլ անձանց մասնակցության եղանակները բանկի ֆինանսական առողջացմանը. դա նշանակում է, որ այստեղ պետք է ներկայացվեն այն տարբերակներն ու մեխանիզմները, որոնց միջոցով բանկի մասնակիցները (հիմնադիրներ, բաժնետերեր, փայատերեր) և այլ անձինք կարող են ներդրումներ կատարել բանկում,
- բանկի պահպանության ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումները,
- լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումները,
- վարկերի և դեբիտորական պարտքերի վերադարձմանն ուղղված միջոցառումները,
- բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխմանն ուղղված միջոցառումները,
- ընթացիկ իրացվելիության և հիմնական կապիտալի բավարար մակարդակի, այլ տնտեսական նորմատիվների վերականգնմանն ուղղված միջոցառումները:

Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից բանկը դուրս է գալիս հիմնական տնտեսական նորմատիվների կարգավորման դաշտից:

Այն դեպքերում, երբ ֆինանսական առողջացման ծրագրով չի հաջողվում վերականգնել բանկի ֆինանսական կայունությունը, կամ բանկի անվճարունակության չափանիշներից որևէ մեկի հայտնաբերման դեպքում կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում և որոշում է կայացնում բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին, սովյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից հնգօրյա ժամկետում ԿԲ–ն դատարան է ներկայացնում բանկը սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմում՝ միաժամանակ տալով լուծարային կառավարչի թեկնածությունը: Դատարանի կողմից ԿԲ–ի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշում կայացնելու պահից լուծարային կառավարիչն են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները:

Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հաջորդականությամբ.

1. ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձ,
2. այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ կամ ավանդ են տրամադրել բանկի ադմինիստրացիայի նշանակումից հետո,
3. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների բանկային ավանդները,
4. երրորդ կետում չընդգրկված բանկային հաշիվները,
5. բանկերի այլ պահանջները,
6. աշխատանքային գործունեության ընթացքում բանկի աշխատակիցների առողջությանը կամ կյանքին պատճառված վնասների հետ կապված պահանջները
7. բանկի աշխատակիցների աշխատավարձը (բացառությամբ բանկի ղեկավար-

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 11.11.2003թ–ի թիվ 385–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում որոնող բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը», լուխ 11, կետ 2:

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենս իրքը՝ ընդունված 05.05.1998թ., հոդվ. 3, կետ 2:

³ Տե՛ս «Բանկերի – բանկային որոնումեության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 30.06.1996թ., հոդվ. 421:

⁴ Տե՛ս «Բանկերի – բանկային որոնումեության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 30.06.1996թ., հոդվ. 3:

ների),

8. պետբյուջեի նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումներ,

9. պարտատերերի այլ պահանջները:

Բանկի հետ կապված անձանց նկատմամբ պարտավորությունները մարվում են վերջում: Միևնույն խմբում ընդգրկված պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Յուրաքանչյուր խմբի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ խմբի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո: Այն դեպքերում, երբ լուծարային միջոցները չեն բավարարում որևէ խմբի բոլոր պարտատերերի պահանջները լրիվ բավարարելու համար, ապա դրանք բավարարվում են համամասնորեն:

Լուծարային կառավարիչն իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հրապարակում մամուլում, հաշվետվություն է ներկայացնում դատարան, պատճենը՝ կենտրոնական բանկ:

Լուծարման ընթացակարգում գտվող բանկի հետ բոլոր գործառնությունները կատարվում են հատուկ լուծարային հաշվի միջոցով: Այդ հաշիվը բացում է լուծարային կառավարիչը ՀՀ տարածքում գործող բանկերից որևէ մեկում, դատարանի կողմից բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում: Լուծարային հաշվին հաշվեգրվում են բանկի բոլոր դրամական միջոցները, ինչպես նաև բանկի լուծարային միջոցների իրացումից ստացված գումարները: Բացի այս հաշվից, լուծարման ընթացակարգում գտնվող բանկն ուրիշ այլ հաշիվ ունենալ չի կարող:

Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային կառավարիչը կազմում է լուծարման հաշվեկշիռ և այն հաստատելու դիմումով ներկայացնում դատարան: Դատարանը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում հաշվեկշիռը հաստատելու մասին: Այդ որոշումը ստանալու պահից եռօրյա ժամկետում կենտրոնական բանկը լուծարվող բանկը հանում է գրանցումից, ինչի արդյունքում բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած:

«Բանկային գործի զարգացմանը զուգընթաց հաջողության հասնելու հիմնական գործոններից մեկը, էլ ավելի մեծ չափով, դառնալու է ռազմավարական պլանավորումը: Երբեմն ռազմավարական պլանավորումն ավելին չէ, քան տարեկան բյուջեի կազմումը, և իրենից ներկայացնում է ավելի շուտ ոչ թե նպատակ, այլ այն ձեռք բերելու միջոց: Դա տեղ է գտնում հիմնականում այն պատճառով, որ անընդհատ՝ նորանոր օրենսդրական և նորմատիվ ակտերի ի հայտ գալու պայմաններում մենեջմենթը օպերատիվ մակարդակի վրա բախվում է նոր՝ էլ ավելի բարդ ու կարևոր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Նման իրավիճակում բանկի ղեկավարների գործողություններն առաջին հերթին ուղղված են իրենց կառավարման արդյունավետությունն ուժեղացնելու համար անհրաժեշտ լիազորություններ ստանալուն: ... Նման գործողությունների պատճառները հեշտ է հասկանալ, սակայն նման ռազմավարությունը դժվար թե ընդունակ է դեպի լավը փոխել իրավիճակը»¹:

Կարևոր են ընդհանրապես ձեռնարկատիրական գործունեության, այդ թվում՝ բանկային գործունեության հեռանկարային ծրագրերի մշակման նկատմամբ վերաբերմունքի՝ առաջին հերթին տնտեսական նպատակահարմարության դիրքերից և

այդ հիմքի վրա օրենսդրական ու ենթաօրենսդրական ամրագրումների գնահատականները:

Այս դիրքերից հեռանկարային զարգացմանն անդրադարձի անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զարգացման ծրագրերը մշակելիս ըստ ՀՀ կենտրոնական բանկի պետք է «խուսափել խիստ վերացական միտումներ և ազդեցություններ նկարագրելուց (օրինակ՝ խուսափել «Միջազգային շուկաները արագ են զարգանում, և բանկը պետք է ներդնի նոր տեխնոլոգիաներ» և այլ նման արտահայտություններից՝ փոխարենը ընդունելով հետևյալ տարբերակը. «Միջազգային պրակտիկայում արագ զարգացող էլեկտրոնային բանկային ծառայությունների ներդրումը ազդելու է բանկի անվտանգության և հաճախորդների շահերի պաշտպանության վրա, ուստի բանկը նախատեսում է ներդնել ...»): Խուսափել երևույթներ նկարագրելուց՝ առանց ներկայացնելու բանկի վրա հնարավոր ազդեցությունը»¹: Երբեմն, միզուցե նաև հաճախակի, բանկերն իրենց հեռանկարային ծրագրերի մշակմանը մոտենում են ձևական դիրքերից, այնքանով, որքանով վերջիններիս կազմումը և ապա ՀՀ կենտրոնական բանկ ներկայացումը նախ և առաջ օրենսդրական պահանջ է:

Երբ ձեռնարկատիրական գործունեության ֆիզիկական և իրավաբանական անձ մասնակիցներն իրենց կանքով և ի շահ իրենց ձեռք են բերում քաղաքացիական իրավունքներ և ազատ են իրենց իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս², ապա միայն ձեռնարկատիրական գործունեության անմիջական մասնակիցն է որոշում հեռանկարային ծրագիրը մշակելու նպատակահարմարությունը: Եվ երբ հեռանկարային զարգացման ծրագրի կազմումը հետևում է վարկի պահանջից կամ այլ պատճառներից, ապա խնդիրը ստանում է այլ երանգ, քանի որ անհնար է, որ բանկի մասնակիցները կամ ղեկավարները բանկային գործունեություն գան առանց տեղյակ լինելու մյուս բնագավառների խնդիրներին: Վերջիններս բանկային գործունեություն են մտնում, որպես կանոն, ոչ բանկային գործունեության որևէ տեսակի կամ տեսակների մասին նկատելի գիտելիքներով ու ձևավորված հարուստ կենսափորձով և հաճախ էլ հենց այդ ոլորտներում ստեղծած դրամագլուխներով: Իսկ այդ նախորդ փորձը ոչ թե հուշում, այլ նույնիսկ թելադրում է, որ «ազատությունը» սեփական գործունեության մասին գրավոր նյութ ստեղծելու մեջ չէ, այլ ընդհակառակը: Եվ այստեղ նույնիսկ ազդեցություն չեն ունենում անգամ այս կամ այն գործի ապագան կանխատեսելու օտարերկրյա դրական փորձի մասին շարունակական հիշեցումները:

Սակայն «Բանկերը պարտավոր են կենտրոնական բանկի սահմանած ձևով, հաճախականությամբ և կարգով կենտրոնական բանկ ներկայացնել իրենց հեռանկարային զարգացման ծրագրերը»³: Այս հոդվածը օրենքում ավելացվել է 2001թ. նոյեմբերի 21–ին: Օրենքում այս հոդվածի ավելացումը կախված է եղել հենց հեռանկարային հարցերին գրավոր ու փաստաթղթային անդրադարձ չունենալու բանկերի «անտարբերությունը» հաղթահարելու նպատակով:

Մինչ նշված հոդվածի ավելացումը ինչպես նախկին, այնպես էլ ներկայումս գործող խմբագրությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 11.11.2003թ. թիվ 385–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում որոնող բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրերի ներկայացման մասին» կար ղ, կետ 8:

² Տե՛ս *Банковское дело: стратегическое руководство*, М., 1998, с. 14:

ուղղակիորեն նշվում է, որ այս «... օրենքի հիմնական խնդիրը բանկային համակարգի զարգացումը, ... ապահովելն է»⁴: Այսինքն՝ առկա է հիմքը, որպեսզի կենտրոնական բանկը՝ որպես իր այս խնդիրն իրագործելու միջոց, օգտագործի նաև բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի որոշակի պարբերականությամբ ներկայացումը: Եթե այս հողվածի ավելացման պատճառը գտնվում է իրավական բնույթ ունեցող այն նրբության մեջ, երբ գործողությունն առաջանում է օրենքի ուժ ստացած կոնկրետ դրույթի առկայությունից, ապա արդեն զուտ տնտեսական առումով պարզաբանում է պահանջում «բանկի հեռանկարային զարգացումը»:

Բանկերի հեռանկարային զարգացման խնդիրները գտնվել են ՀՀ կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում: Վերջին տարիներին, մասնավորապես 2002թ. հոկտեմբերի 16–ին, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրերի ներկայացման մասին» կարգը, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը» հաստատելու մասին» թիվ 316–Ն որոշումը, իսկ արդեն 2003թ. նոյեմբերի 11–ին ընդունվել և ներկայումս գործում է նույնանուն թիվ 385–Ն որոշումը:

Համաձայն կարգի՝ բանկերի հեռանկարային ծրագրերն ամբողջական փաստաթուղթ են, որի խնդիրներն են.

ա) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, ներդրողներ, բանկի ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի փաստաթուղթ, որով կարող են գնահատվել բանկի գործունեության բնույթը և առանձնահատկությունները բանկային ծառայությունների շուկայում,

բ) օգնել բանկի ղեկավարներին պարզաբանել, հստակեցնել և հետազոտել բանկի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները և ծառայել ղեկավարներին որպես հիմք, որով կարող են գնահատվել բանկի փաստացի գործունեության արդյունքներն ու արդյունավետությունը,

գ) օգնել բանկին հետևողականորեն իրականացնել նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող երեք տարիների ընթացքում:

Եթե նախորդ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 316–Ն որոշման համաձայն՝ հեռանկարային զարգացման ծրագրերը բանկերի կողմից պետք է կենտրոնական բանկ ներկայացվեին մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա դեկտեմբերի 15–ը, ապա ներկայումս գործող կարգի համաձայն՝ այդ ծրագրերը բանկերի կողմից ներկայացվում են մինչև օրացուցային տարվա փետրվարի 15–ը: Ծրագրերը ներկայացնելու ժամկետների փոփոխությունը կապված է այն հանգամանքի հետ, որ բանկերն ընթացիկ տարվա դեկտեմբերի 15–ին ծրագիրը ներկայացնելիս հարկադրված են եղել կանխատեսել նաև նույն օրացուցային տարվա համարյա ամբողջ վերջին եռամսյակը, քանի որ դեկտեմբերի 15–ի ժամկետը նշանակում է, որ կազմման աշխա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության (2005) դրամավարկային քաղաքականության ծրագիրը, Ե., 2005, էջ 39:

² Աղբյուրն օ՝ տա՝ ործում է «Стратегическая ориентация и миссия банка» բառակապակցությունը:

³ Տե՛ս Банковское дело: стратегическое руководство, с. 18.

⁴ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 11.11.2003թ.–ի թիվ 385–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում՝ ործող բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրի ձևը», լույս 4:

տանքները պետք է սկսել մեկ կամ երկու ամիս առաջ: Իսկ օրացուցային տարվա փետրվարի 15–ի ժամկետը բանկերին լիարժեք հնարավորություն է տալիս ունենալ նախորդ տարվա փաստացի տվյալները և վերլուծություններն ու համեմատությունները կատարել այդ հիմքի վրա: Այս դեպքում անպատասխան է մնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հեռանկարային ծրագրերը դրամավարկային քաղաքականության բանկային համակարգին վերաբերող կանխատեսումներում օգտագործելու հարցը: Այսպես, օրինակ՝ ՀՀ 2005թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի 2005թ. հունվարի 27–ի թիվ 35Ա որոշմամբ:

Սակայն՝ հեռանկարային ծրագրերի առնչությամբ կարևոր է մնում այն, որ հեռանկարային զարգացման ըստ էության իրատեսական, գնահատելի, համահունչ և կոնկրետ ծրագիրը ոչ թե անհրաժեշտ և նույնիսկ անխուսափելի նախապայման է բանկային գործունեության դաշտում հաջող ու շարունակական գործունեություն իրականացնելու համար, այլ այն ընդամենը «օգնում» և «ծառայում» է շահագրգիռ անձանց և բանկի ղեկավարներին: Այստեղ է, որ բանկերը հեռանկարային ծրագրերի վերաբերյալ ունեն իրենց ուրույն կարծիքը, որն առանց առանձնապես բարձրաձայնվելու իր արտացոլումն է գտնում ծրագիր ներկայացնելու օրենսդրական պահանջը կատարելու էականից մինչև ձևական ընկած բանկերի վերաբերմունքով ու մոտեցումներով:

Իսկ երբ ընդամենը «Ծրագիրը կարող է օգտագործվել կենտրոնական բանկի կողմից բանկի ռազմավարական կառավարման մակարդակը գնահատելու նպատակով»¹, այն պայմաններում, երբ նույն բանկերն իրենց փաստացի գործունեությունը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնահատվում են շատ ավելի խիստ ամփոփ ցուցանիշների միջոցով, ապա բանկերի հեռանկարային զարգացման ծրագիրը ստանում է ավելի շուտ ուսումնադաստիարակչական բնույթ, որի նշանակությունը ևս ոչ մի դեպքում չի կարող թերագնահատվել:

Ամփոփիչ է կարծիքը, ըստ որի՝ «Սովորաբար նույնիսկ շատ լավ բանկերում, անկախ դրանց չափերից, հարկ եղած ուշադրություն չի տրվում ռազմավարական մոտեցումների (աղբյուրն օգտագործում է «րՑՐՈՑաչՌփպրՍԱպ ՉՌՊպՎՌպե բառակապակցությունը), իրենց գործունեության խնդիրների և նպատակների մշակմանը»²: Միաժամանակ այսօր արդյունավետ գործող օտարերկրյա բանկերը տարեկան բյուջեի կազմման վրա հենված պլանավորումից անցում են կատարում ռազմավարական կառավարման ընդհանուր արարողակարգերի շրջանակներում պլանավորմանը: Ռազմավարական կառավարումը և պլանավորումն իրենցից ներկայացնում են բանկի նպատակների և վերջինիս ունեցած ռեսուրսների միջև համապատասխանության պահպանման կառավարչական գործընթաց շուկայական իրավիճակի և պետական կարգավորման անընդհատ փոփոխության պայմաններում:

Տարբերում են ռազմավարական կառավարման և պլանավորման մի քանի հիմնական գաղափարներ: Առաջին հիմնական գաղափարը վերաբերում է բանկի ռազմավարական ընկալմանը, այն է կազմակերպության կողմից ապագայի, գործունեության ուղղությունների և գլխավոր ռազմավարության նկարագրությունը: Երկրորդ

¹ Տե՛ս նույն տեղում, լուխ 9, կետ 2:

հիմնական գաղափարը վերաբերում է բանկի կողմից իր ստորաբաժանումների՝ որպես ռազմավարական միավորների ընկալմանը, այսինքն՝ բանկը ստորաբաժանումները դիտում է որպես իր կազմի մեջ մտնող ինքնուրույն ձեռնարկություններ, որոնցից յուրաքանչյուրի գծով, ապագայի տեսանկյունից, որոշում է կայացնում զարգացնելու կամ նույնիսկ վերացնելու մասին: Երրորդ հիմնական գաղափարը վերաբերում է բանկի ստորաբաժանումներից յուրաքանչյուրի կողմից ապագա շահույթի հնարավոր ճշգրիտ գնահատման մեջ շուկայի աճի փոփոխությունների և բանկի՝ այդ շուկայում զբաղեցրած դիրքի հաշվառմանը: Վերջին՝ չորրորդ հիմնական գաղափարը վերաբերում է բանկի յուրաքանչյուր առանձին ստորաբաժանման գործունեության ռազմավարական պլանավորմանը:

Ռազմավարական կառավարման և պլանավորման հիմնական գաղափարները առաջադրվում են այն տեսանկյունից, որ բանկերն իրենք են անդրադառնում իրենց հեռանկարային զարգացման հիմնախնդիրներին: Կարելի է համադրել ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի պահանջներն այդ ընդհանուր գաղափարների հետ:

Բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձևում իրենց արտացոլումը չեն ստանում երկրորդ և չորրորդ գաղափարները: Դժվար է սպասել, որ կենտրոնական բանկը սկսի փորձել ազդել բանկի կառուցվածքի ձևավորման ու կատարելագործման վրա: Սակայն այս ուղղությամբ իր կարևոր նշանակությունը կունենա 2004թ. կենտրոնական բանկի մշակած «Բանկերի կորպորատիվ կառավարման հայեցակարգը», որի գլխավոր նպատակն է լինելու հստակեցնել բանկի կառավարման տարբեր մարմինների իրավասությունները, սահմանել յուրաքանչյուրի պատասխանատվության ոլորտները: 2005թ. նախատեսվում է Հայաստանի բանկերի միության հետ քննարկումների արդյունքում ձևավորված հայեցակարգի վերջնական տարբերակը օրենքի նախագծի տեսքով ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը¹:

Բանկերի կողմից ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրի ձևի կառուցվածքի վերաբերյալ որոշակի ճշգրտում է պահանջում «բանկի առաքելությունը»: Տնտեսագիտական գրականության մեջ շրջանառվում է «Բանկի ռազմավարական կողմնորոշումը և առաքելությունը»² բառակապակցությունը: Ընդ որում, մշվում է, որ «Բանկի ռազմավարական առաքելությունն» իրենից ներկայացնում է «Գոյություն ունեցող և հեռանկարային բանկային ծառայությունների և գործառնությունների, ինչպես նաև գործունեության այն ոլորտների սահմանումը, որտեղ բանկը մրցակիցների նկատմամբ արդեն հասել է առավելությունների, և այն ոլորտների սահմանումը, որտեղ բանկը ակնկալում է ձեռք բերել կայուն մրցակցային առավելություն, ինչպես նաև ընտրված երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրականացման հաջորդականության սահմանումը»³:

Վերջինին զուգահեռ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկի հեռանկարային զարգացման ձևում արտացոլված է, որ «Ներկայացվում է բանկի առաքելությունը՝ հեռանկարային նպատակը, որի համար գոյություն ունի բանկը: Առաքելությունը պետք է արտացոլի բանկի երկարաժամկետ կտրվածքով դերը, տեղը և առանձնահատկությունները բանկային ծառայությունների շուկայում»⁴: Եթե զուտ բովանդակային առումով գրականության մեջ օգտագործվող և հեռանկարային զարգացման ծրագրի համապատասխան գլխում արտացոլված մտտեցումներն ընդհա-

նուր առմամբ համադրելի են, և դա առաջին հերթին վերաբերում է երկարաժամկետ նպատակների առաջադրմանը, ապա որոշակիորեն հարց է առաջանում թե որն է գործունեության առաջնային շարժառիթը, և դեռևս միակ բացատրությունը մնում է շահի ստացումը: Եթե, ի տարբերություն ձեռնարկատիրական գործունեության մյուս տեսակների, բանկային գործունեության օրենսդրական սահմանումը միջնորդավորում է շահույթի ստացման գլխավոր նպատակը, և այդ միջնորդավորման հիմքում ընկած է տասնյակ և հարյուրհազարավոր ավանդատուների կամ հաշվետերերի միջոցների հաշվին շահույթ ստանալու գործունեության կազմակերպումը, ապա վերջինս բանկային գործունեության իսկապես կարևոր առանձնահատկությունն է:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի նկատմամբ ներկայացվող պահանջները՝ որպես առաջիկա եռամյա ժամանակահատվածի բանկերի գործունեության տնտեսական կարգավորման միջոց, անընդհատ կրել են փոփոխություններ: Մասնավորապես, երբ համեմատվում է ներկայումս գործող կարգի համաձայն կազմման ենթակա ծրագրերի կառուցվածքը նախորդ համանուն կարգով հաստատված ծրագրերի կառուցվածքի հետ, ապա գործող ծրագրում ավելացել է «Բանկերի նկարագիրը» գլուխը: Բացի այդ, ծրագրի ձևերի համեմատությունը ցույց է տալիս է, որ կենտրոնական բանկի կողմից դրվում են ծրագրի հիմնավորվածության և կոնկրետության խստացող արդարացի պահանջները: Այսուհետ բանկերը պետք է վերլուծեն նախորդ մեկ տարվա կանխատեսումների և փաստացի ցուցանիշների շեղումների (եթե շեղումը կազմում է կանխատեսված ցուցանիշի 10% և ավելին) պատճառները:

Հեռանկարային զարգացման ծրագրերի տնտեսական՝ ապագային ուղղված կարգավորման տեսանկյունից ամփոփումների նպատակով կազմվել է թիվ 4 հավելվածը, որտեղ արտացոլվել են նախկին և գործող կարգերին համաձայն ներկայացվող ծրագրերին կցվող աղյուսակների ցանկերը:

20.6. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Շուկայական տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը պլանավորման և կանխատեսման արդյունավետ համակարգերի ներդրումն ու գործարկումն է: Բանկային համակարգում պլանավորման և կանխատեսման արդյունավետ մեխանիզմների կիրառումն առանձնահատուկ կարևորություն ունի նախ՝ դրամական հոսքերի կառավարման և վերահսկման, ապա՝ շուկայական իրավիճակի հնարավոր փոփոխությունների պայմաններում ճկուն քաղաքականության մշակման տեսանկյունից: Անընդհատ խորացող մրցակցությունն ու բանկային գործառնությունների եկամտաբերության աստիճանական նվազումը ստիպում են առևտրային բանկերին ներդնել ֆինանսական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ժամանակակից գործիքներ, մեխանիզմներ և կառավարման համակարգեր, որոնք բանկային մենեջմենթը բարձրացնում են որակապես նոր մակարդակի:

Բյուջետային կառավարումը կամ բյուջետավորումը բյուջեների միջոցով բանկի օպերատիվ կառավարման համակարգ է ըստ ֆինանսական պատասխանատվության կենտրոնների (ՖՊԿ), որը հնարավորություն է տալիս հասնել սահմանված

նպատակներին՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման միջոցով: Բյուջետային կառավարման ներդրումն առևտրային բանկերում հնարավորություն է տալիս բանկը դիտարկել որպես միասնական, ամբողջական համակարգ, իրականացնել ակտիվների և պասիվների, եկամուտների և ծախսերի, դրամական հոսքերի հաշվեկշռված, համակարգված, փոխհամաձայնեցված կառավարում: Բյուջետավորումը կարելի է ներկայացնել մաս որպես որակյալ և օպերատիվ կառավարչական որոշումների ընդունման համակարգ:

Բյուջեն որոշակի ժամանակահատվածի կտրվածքով ֆինանսական ցուցանիշների միջոցով արտահայտված ծրագիր է, որը կազմվում է՝ ելնելով բանկի ռազմավարական կողմնորոշիչներից (նպատակներից)՝ դրանց առավել արդյունավետ տարբերակով հասնելու համար: Հետևաբար, բյուջետավորումը կարելի է ներկայացնել որպես բանկի ռազմավարության իրագործման գործիք: Այս տեխնոլոգիայի միջոցով ապահովվում է անընդհատ կապը ռազմավարական նպատակների և դրանց ձեռքբերմանն ուղղված պլանների միջև: Բանկի ռազմավարությունը գործողության մեջ է դրվում հենց բյուջետավորման միջոցով: Բյուջեների կազմումը նպաստում է հետևյալ կառավարչական խնդիրների լուծմանը.

- բանկի ֆինանսական վիճակի կանխատեսում,
- ծրագրային ցուցանիշների և դրանց փաստացի արդյունքների համեմատական վերլուծություն,
- բացահայտված շեղումների գնահատում և վերլուծություն:

Բյուջետավորումը չի կարելի դիտարկել որպես բյուջեների մեխանիկական միասնություն: Բանկում տարբեր բյուջեների առկայությունը դեռևս չի մշանակում, որ այստեղ ներդրված է բյուջետային կառավարման համակարգ: Բյուջետավորումը՝ որպես կառավարչական տեխնոլոգիա, իր մեջ ներառում է բանկային գործունեության առանձին կողմերը բնութագրող ցուցանիշների միջև փոխադարձ կապերի և ազդեցության բազմակողմանի դրսևորման առավել բարդ մեխանիզմներ:

Բյուջետավորման միջոցով բանկի կառավարման գործընթացում պետք է ընդգրկված լինեն հնարավորին չափ շատ ղեկավարներ և պատասխանատվության տարբեր մակարդակներով օժտված աշխատակիցներ:

Բյուջետավորման համակարգի մշակումը սկսվում է բանկի ֆինանսական կառուցվածքի նախագծմամբ և եկամուտների ու ծախսերի հոդվածների սահմանմամբ: Այնուհետև եկամուտների և ծախսերի այս կամ այն հոդվածները կցվում են համապատասխան մասնագետներին և ղեկավարներին, որոնք լրացնում են այդ հոդվածները պլանավորման և հաշվառման ժամանակ: Այսպիսով՝ սահմանվում են բյուջետավորման գործընթացի մասնակիցների կազմը և նրանց դերն այդ գործընթացում:

Բյուջետավորման տեխնոլոգիայի կարևորագույն տարրերից մեկը ուղղակի և անուղղակի ծախսերի, հաստատուն և փոփոխուն եկամուտների և ծախսերի տարանջատումն է: Այս աշխատանքի արդյունքը հանդիսանում է եկամուտների և ծախսերի հոդվածների խմբավորումը, սակայն պայմանավորված ոչ թե պլանավորման և վերահսկման նպատակներով, այլ պլանավորման և հաշվառման միատեսակ տեխնոլոգիաներով:

- Բյուջետավորման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից.
- պլանավորում,

- հաշվառում,
- բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողություն,
- բյուջեների վերլուծություն:

Բյուջեների ամբողջությունը հնարավորություն է տալիս բանկի ղեկավարությանը պատկերացում կազմել բանկի ապագա գործունեության մասին: Բյուջետավորման ներդրումը հնարավորություն է տալիս.

- կատարելագործել ռեսուրսների օգտագործման գործընթացը, դրանց տեղաբաշխումը կատարել առավել օպտիմալ ձևով,
- ժամանակին ճշգրտել սահմանված նպատակներին հասնելու համար նախկինում հաստատված պլանները (օրինակ՝ իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովում, վճարունակության և շահութաբերության ապահովում և այլն),
- ընդհանուր առմամբ՝ կոորդինացնել բանկի գործունեությունը,
- նախորդ ժամանակահատվածների բյուջեների հիման վրա ձեռք բերել համապատասխան փորձ,
- ստորին օղակի մենեջերներին՝ գիտակցել իրենց տեղն ու դերը բանկում,
- համեմատել ցանկալի և ձեռք բերված արդյունքները, բացահայտել դրանց անհամապատասխանության պատճառները:

Բյուջետավորման գործընթացի հիմքը կազմում է բանկի ֆինանսական կառուցվածքը: Այն առաջին հերթին պետք է արտացոլի բանկի գործունեության կառուցվածքն ու հիմնական ոլորտները, ուղղությունները: Եթե բանկն իրականացնում է այնպիսի գործառնություններ, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է շահույթի առանձին աղբյուր, ապա դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա իր առանձին բյուջեն: Դա անհրաժեշտ է, որպեսզի ճիշտ գնահատվեն գործունեության յուրաքանչյուր տեսակի արդյունքները, ապահովվի դրանցից յուրաքանչյուրի արդյունավետ կառավարումը:

Նախքան բյուջեի մշակումն անհրաժեշտ է սահմանել, թե բանկի գործունեությունն ինչպիսի ֆինանսական ցուցանիշների ձեռքբերմանն է ուղղված, որ ցուցանիշներն են համարվում արդյունավետ գործունեության ինդիկատորներ պլանավորվող ժամանակահատվածի համար: Այդ ցուցանիշները պետք է կապված լինեն ռազմավարական նպատակների հետ և սահմանվեն հնարավորին չափ հստակ: Վերոհիշյալ ցուցանիշների ընտրությունը ցույց է տալիս ղեկավարության կողմից մշակված ռազմավարությունը և բանկի գործունեության գերակա ուղղությունները:

Ֆինանսական ցուցանիշները պետք է լինեն հավասարակշռված, քանի որ շատ հաճախ բանկերում մի ցուցանիշի լավացումն ուղեկցվում է մեկ այլ ցուցանիշի վատացմամբ (օրինակ՝ իրացվելիություն և շահութաբերություն): Եվ վերջապես, այդ ցուցանիշները պետք է ներկայացնեն ողջ համակարգը, ընդգրկեն ֆինանսական կառուցվածքի բոլոր տարրերը:

Նպատակային ֆինանսական ցուցանիշների և սահմանափակումների հաշվեկշռված համակարգը կազմում է բյուջետավորման առանցքը, կմախքը, որի հիման վրա հետագայում մշակվում են բյուջեները:

Բյուջետային կառավարման գործընթացում ձևավորվում են առևտրային բանկի երեք հիմնական բյուջեները.

- դրամական հոսքերի բյուջեն, որն ուղղված է իրացվելիության կառավարմանը,

- Եկամուտների և ծախսերի բյուջեն, որն ուղղված է արդյունավետության կառավարմանը,
- կանխատեսվող հաշվեկշիռ, որն անհրաժեշտ է բանկի ակտիվների արժեքը գնահատելու և կառավարելու համար:

Գործնականում հաճախ հանդիպում է այն մոտեցումը, որ բյուջետավորումն ու պլանավորումը համարժեք հասկացություններ են: Այսինքն՝ բյուջետավորումը դիտարկվում է սոսկ որպես բանկի ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված կարճաժամկետ օպերատիվ պլանների համակարգ: Սակայն բյուջետավորման հիմնարար սկզբունքներից և կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ այն ոչ թե պլանավորման, այլ կառավարման համակարգ է: Իսկ ցանկացած կառավարչական գործընթաց իր մեջ ներառում է պլանավորման, կազմակերպման, վերահսկողության, հաշվառման և կարգավորման գործառնություններ: Որպես կառավարման համակարգ՝ բյուջետավորումն ապահովում է անհրաժեշտ նախադրյալների, խթանների, խրախուսման մեխանիզմների առկայությունը՝ հաստատված պլանների կատարման համար: Այսինքն՝ պլանավորմանը զուգահեռ՝ բյուջետավորումը ներառում է նաև կառավարման այս օղակի տրամաբանական շարունակությունը:

Բյուջետավորումը կրում է անընդհատ բնույթ: Ինչպես ցանկացած կառավարչական գործընթաց՝ բյուջետավորումը ևս պետք է իրականացվի անընդհատ: Ինչպես հայտնի է, ցանկացած պլան հաստատման պահին արդեն իսկ վերանայման կարիք ունի: Դա կապված է անընդհատ փոփոխվող պայմանների և պլանավորման չափանիշների հետ: Փոխվում են նաև մեր պատկերացումները, իրավիճակի գնահատման չափանիշները և այլն: Այս ամենը պահանջում է անընդհատ փոփոխություններ, ճշգրտումներ մտցնել պլանային առաջադրանքներում: Ուստի հաստատված պլանը միայն հիմք է պլանավորման աշխատանքների հետագա շարունակության նպատակով:

Ֆինանսական կառուցվածք: Ֆինանսական պատասխանատվության կենտրոններ:

Ֆինանսական կառուցվածքի ձևավորման նպատակն է սահմանել բյուջետավորման գործընթացում առանձին տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների մասնակցության մեխանիզմը, ինչպես նաև այդ ստորաբաժանումների միջև փոխհարաբերությունների համակարգում արմատավորել շուկայական հարաբերությունների առանձին տարրեր:

Բանկի ֆինանսական կառուցվածքը բյուջետային ստորաբաժանումների՝ ՖՊԿ-երի ամբողջությունն է: Անվանումից արդեն իսկ բխում է, որ յուրաքանչյուր բյուջետային միավոր օժտված է իր ռեսուրսների տնօրինման բնագավառում որոշակի իրավասություններով, ինչպես նաև իր գործունեության արդյունքների համար հստակ պատասխանատվությամբ: Դա իր հերթին հնարավորություն է տալիս բացահայտել առանձին ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը, մշակել աշխատակիցների խրախուսման համակարգեր (ինչը հանդիսանում է բյուջետավորման առավելություններից մեկը):

Տարբեր հեղինակների աշխատություններում, ինչպես նաև տարբեր առևտրային բանկերում, ՖՊԿ-երի դասակարգումը կատարվում է տարբեր եղանակներով: Համաձայն ամենատարածված և գործնականում կիրառելի տարբերակի՝ ՖՊԿ-ն ստո-

րաբաժանվում է 2 խմբի՝ եկամուտների կամ շահույթի կենտրոններ և ծախսերի կենտրոններ: Նման դասակարգման հիմքում դրվում է տվյալ ստորաբաժանման գործունեությամբ պայմանավորված՝ եկամուտների կամ ծախսերի առաջացման, ձևավորման գաղափարը:

Այսպես՝ շահույթի կենտրոնները բանկում այն ստորաբաժանումներն են, որոնք զբաղվում են ռեսուրսների տեղաբաշխմամբ, և այն ստորաբաժանումները, որոնք եկամուտները պայմանավորված չեն ռեսուրսների տեղաբաշխմամբ: Առաջին խմբին դասվում են վարկավորման բաժինը, արժեթղթերի բաժինը: Երկրորդ խմբին դասվում է, օրինակ, հաճախորդների սպասարկման բաժինը և այլն: Առաջին խմբի ստորաբաժանումներն անվանում են տեղաբաշխման կենտրոններ, իսկ երկրորդ խմբի ստորաբաժանումները՝ սպասարկման կենտրոններ: Առաջին խմբի ստորաբաժանումները բանկին ապահովում են տոկոսային եկամուտ, իսկ երկրորդ խմբի ստորաբաժանումները՝ ոչ տոկոսային եկամուտ, և հիմնականում՝ կոմիսիոն վճարների տեսքով:

Ծախսերի կենտրոնները ևս ստորաբաժանվում են երկու խմբի՝ ներգրավման կենտրոններ և ապահովման կենտրոններ: Որպես ներգրավման կենտրոն՝ առաջին հերթին, հանդես է գալիս բանկի ավանդային բաժինը: Սակայն որպես ներգրավման կենտրոն կարող են ծառայել սպասարկման կենտրոնները: Օրինակ՝ հաճախորդների սպասարկման բաժինը ապահովում է կոմիսիոն եկամուտներ հաճախորդների հաշվարկադրամարկղային սպասարկումից, սակայն այն միաժամանակ զբաղվում է հաճախորդների կողմից ավանդների ներգրավմամբ: Ապահովման կենտրոններն այն ստորաբաժանումներն են, որոնք եկամուտ չեն բերում, սակայն իրենց գործունեությամբ նպաստում և անհրաժեշտ պայմաններ են ստեղծում եկամտաբեր ստորաբաժանումների գործունեության համար: Դրանց շարքն են դասվում, օրինակ, կադրերի բաժինը, տնտեսական և տրանսպորտային ծառայությունները, հաշվապահությունը, ավտոմատացման և բանկային տեխնոլոգիաների բաժինը, անվտանգության ծառայությունը, իրավաբանական բաժինը և այլն:

ՖՊԿ-երի վրա հիմնված բյուջետավորման տեխնոլոգիայի ողջ տրամաբանությունն այն է, որ յուրաքանչյուր ՖՊԿ այստեղ հանդես է գալիս որպես համեմատաբար ինքնուրույն տնտեսական միավոր՝ օժտված որոշումների կայացման լայն իրավասություններով և գործունեության արդյունքների համար զգալի պատասխանատվությամբ: Իսկ բանկի գործունեության շրջանակներում առանձին ստորաբաժանումների միջև հաստատված փոխհարաբերությունները ձևավորվում են շուկայական հարաբերություններին բնորոշ տարրերի և մեխանիզմների հիման վրա: Արդյունքում հնարավորություն է ստեղծվում առավել իրատեսորեն գնահատել յուրաքանչյուր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, որը հետագայում պետք է հիմք հանդիսանա խրախուսման մեխանիզմների մշակման և իրագործման համար:

Բյուջետավորման մեթոդները

Բյուջեների կազմման բնագավառում գոյություն ունի 3 մոտեցում, որոնք կարող են կիրառվել դրանց պլանավորման, համաձայնեցման և հաստատման փուլերում: Դրանից ելնելով՝ տարբերում ենք բյուջետավորման 3 հիմնական մեթոդ՝ «ներքևից վերև», «վերևից ներքև» և «իտերատիվ կամ կոմբինացված»:

«Ներքևից վերև» մոտեցման դեպքում բյուջեն կազմվում է՝ ելնելով ստորաբաժա-

նուճանների կողմից մշակված պլաններից և նախագծերից, որոնք փոխանցվում են վեր` ողջ բանկի գծով ընդհանրացված արդյունքային ցուցանիշներ ստանալու համար: «Վերևից ներքև» մոտեցման դեպքում բյուջեն կազմվում է` ելնելով բանկի ղեկավարության կողմից մշակված նպատակային ցուցանիշներից: Իտերատիվ մոտեցման դեպքում բյուջետավորման գործընթացը ներառում է մի քանի փուլ: Սկզբում տեղեկատվությունը (ռազմավարական կողմնորոշիչները) ղեկավար օղակներից փոխանցվում է ստորաբաժանումներին, այնուհետև` վերջիններիս կողմից լրամշակվելուց հետո, կրկին փոխանցվում է վեր (այսպես մի քանի անգամ` մինչև վերջնական բյուջեի ստացումը):

«Վերևից ներքև» մեթոդի առավելությունն այն է, որ բանկի ղեկավարությունն առավել լավ է տեղեկացված բանկի ռազմավարական և մարտավարական զարգացման պլանների մասին, քան ստորին օղակների կառավարիչները: Հետևաբար, այն ի վիճակի է իջեցնել յուրաքանչյուր ստորաբաժանմանը բյուջեի առանձին հոդվածների գծով այնպիսի պլանային առաջադրանքներ, որոնք կարտացոլեն բանկի իրական պլանները: Այս մեթոդով բյուջեի պլանավորումը պետք է ուղղված լինի առաջին հերթին բանկի հիմնադիրների, սեփականատերերի պահանջների բավարարմանը: Եթե այս սկզբունքը չի բավարարվում, ապա կորում է մեթոդի առավելությունը: «Վերևից ներքև» մեթոդի թերությունն այն է, որ բանկի ղեկավարությունը չի կարող պատկերացնել և հաշվի առնել բանկի առանձին ստորաբաժանումների գործունեության առանձնահատկությունները, ինչի արդյունքում վերջիններիս իջեցված ցուցանիշները կատարման տեսանկյունից կարող են լինել ոչ իրատեսական: «Վերևից ներքև» մեթոդը կիրառվում է բյուջեի կենտրոնացված ձևավորման ժամանակ:

«Ներքևից վերև» մեթոդի առավելությունն այն է, որ ֆինանսական պատասխանատվության կենտրոնների կառավարիչները կարող են ներդնել իրենց փորձն ու գիտելիքները պլանների մշակման գործընթացում` առավել խորը տիրապետելով իրենց բնագավառի առանձնահատկություններին: Մեթոդի թերությունն այն է, որ ստորաբաժանումների մակարդակով մշակված պլանային ցուցանիշները հաճախ կարող են փոփոխվել ղեկավարության կողմից, ինչը ոչ բավարար հիմնավորվածության պայմաններում կարող է առաջ բերել ստորին օղակների մենեջերների դժգոհությունը: Դա առաջ է բերում վերջիններիս անտարբեր վերաբերմունքը բյուջետավորման հետագա գործընթացում: Մյուս թերությունն այն է, որ հաճախ ՖՊԿ մենեջերների մոտ բացակայում է կորպորատիվ նպատակների ըմբռնումը, կապը ստորաբաժանման զարգացման պլանի և բանկի ռեսուրսային հնարավորությունների միջև:

Նկատի ունենալով վերը նշված մեթոդների առավելություններն ու թերությունները` գործնականում լայն կիրառություն է ստացել բյուջետավորման կոմբինացված մեթոդը, համաձայն որի` սկզբում «վերևից» իջեցվում են նպատակային ֆինանսական ցուցանիշները, այնուհետև «ներքևի» մակարդակում ձևավորվում է բյուջեների ողջ համակարգը, ընդհուպ մինչև բյուջեների վերջնական տարբերակները` եկամուտների և ծախսերի բյուջե, դրամական հոսքերի բյուջե, կանխատեսվող հաշվեկշիռ: Դրան հետևում է կազմված բյուջեների վերլուծությունը և դրանց համապատասխանությունը ղեկավարության կողմից սահմանված նպատակային ցուցանիշների հետ: Եթե կազմված բյուջեներն ապահովում են սահմանված ցուցանիշների ձեռքբերումը, ապա դրանք ներկայացվում են ղեկավարությանը` հաստատման: Հաստատ-

վելուց հետո դրանք նախագծից վերածվում են պարտադիր կատարման ենթակա փաստաթղթի և ուղարկվում բոլոր մեներջերներին՝ կատարման և վերահսկման նպատակով: Իսկ եթե ներկայացված նախագծերը չեն ապահովում ցանկալի ցուցանիշների ստացումը, ապա բանկի ղեկավարության կողմից հանձնարարական է իջեցվում այլընտրանքային տարբերակների մշակման վերաբերյալ: Այս գործընթացը կարող է շարունակվել այնքան, մինչև ներկայացվեն բյուջեի ընդունելի տարբերակները, որոնք այնուհետև կհաստատվեն և կընդունվեն ի կատարումն:

Բյուջեները, որպես կանոն, կազմվում են տարեկան, եռամսյակային և ամսական կտրվածքով: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար գոյություն ունի բյուջեների 2 տեսակ՝ կանխատեսվող կամ պլանային, որը հանդիսանում է օպերատիվ կառավարման հիմնական ֆինանսական կողմնորոշիչը, և իրական, որը կազմվում է որոշակի ժամանակահատված անց՝ գործունեության իրական արդյունքների հիման վրա: Պլանային բյուջեները կազմվում են հետևյալ սխեմայով: Տարեկան բյուջեի հիման վրա մշակվում են առավել ղետալացված եռամսյակային, իսկ վերջիններիս հիման վրա՝ առավել խորացված ամսական բյուջեները: Իրական բյուջեները կազմվում են հակառակ հաջորդականությամբ: Բյուջետային կառավարման գործընթացում անհրաժեշտ է հնարավորության սահմաններում մոտեցնել այս երկու բյուջեները:

Բյուջետավորման համակարգը կարող է հանգեցնել ցանկալի արդյունքների և գործել արդյունավետ ստորև ներկայացվող նախադրյալների առկայության դեպքում:

- Բյուջետավորումը պետք է կատարվի բանկի ֆինանսական կառուցվածքի հիման վրա, ինչի հիմքը կազմում են ֆինանսական պատասխանատվության կենտրոնները:
- Բյուջետավորումը պետք է ուղեկցվի խրախուսման համակարգերի լայնամասշտաբ կիրառմամբ:
- Անհրաժեշտ է հստակ սահմանել ՖՊԿ ղեկավարների իրավասությունը և պատասխանատվությունը վերջնական արդյունքների համար: Հնարավորության սահմաններում այս մոտեցումը պետք է տարածվի բյուջետավորման գործընթացում ընդգրկված բոլոր աշխատակիցների նկատմամբ:
- Առանձին հողավածների գծով առաջադրանքները պետք է սահմանվեն՝ ելնելով ելակետային իրավիճակից, փաստացի ձեռքբերումներից, բանկի ուժեղ և թույլ կողմերից՝ հաշվի առնելով նաև բանկի եկամուտների ավելացման և ծախսերի կրճատման հնարավորությունները:
- Անհրաժեշտ է կատարել իրավիճակային վերլուծություն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերի առաջացման հավանականությունը և համարժեք քայլերի ձեռնարկման հնարավորությունը:
- Բյուջեների կազմման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել սեփականատերերի շահերը, տնտեսական և ներդրումային չափանիշները և սահմանափակումները:
- Օպերատիվ ֆինանսական պլանավորման գործընթացը պետք է կրի անընդհատ բնույթ: Գործնականում հաճախ կիրառվում է սահող պլանների մեթոդը:
- Բյուջետային կառավարման գործընթացում հնարավորության սահմաններում ցանկալի է կիրառել բազմատարբերակային մոտեցումը: Այսինքն՝ բյուջետա-

վորման բաժնի կողմից մշակվում և հաստատվում է տվյալ ժամանակաշրջանի բյուջեի օպտիմալ տարբերակը, այնուհետև՝ հռեռեստեսական տարբերակը՝ հանգամանքների անբարենպաստ զարգացման դեպքում, և լավատեսական տարբերակը՝ հանգամանքների բարենպաստ զարգացման դեպքում:

- Բյուջետավորման գործընթացին պետք է մասնակցեն հնարավորին չափ շատ մասնագետներ:

Բյուջետավորման գործընթացի արդյունքում ձևավորվում է տեղեկատվություն բանկի գործունեության արդյունքների, ինչպես նաև պլանային առաջադրանքներից դրանց շեղումների չափի և պատճառների վերաբերյալ: Բացահայտվում են բանկի եկամուտներն ու ծախսերը, ընդ որում, ինչպես ողջ բանկի կտրվածքով, այնպես էլ ըստ առանձին ՖՊԿ-երի և գործունեության ուղղությունների: Հնարավորություն է ստեղծվում գնահատել յուրաքանչյուր ՖՊԿ աշխատանքի արդյունավետությունը, հաշվարկել բանկային ծառայությունների ինքնարժեքը և այլն:

Բյուջետավորման համակարգի մշակումն ու ներդրումը պետք է հիմնված լինեն շուկայի խորը ուսումնասիրության, հաճախորդների պահանջումների բացահայտման, մրցակիցների վարքագծի ուսումնասիրության վրա:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ նպատակով և ինչպիսի՞ց ցուցանիշների միջոցով են կատարվում առևտրային բանկերի գործունեության վերլուծությունն ու գնահատումը:
2. Ներկայացնել բանկերի գործունեության վերլուծության և գնահատման բացարձակ ցուցանիշները:
3. Ներկայացնել բանկերի գործունեության վերլուծության և գնահատման հարաբերական ցուցանիշները:
4. Ներկայացնել առևտրային բանկերի ռեյտինգավորման էությունը և մեխանիզմները:
5. Որո՞նք են բանկերի գործունեության գնահատման համակարգերը զարգացած երկրներում: Տալ այդ համակարգերի համառոտ նկարագիրը:
6. Բանկերի գործունեության գնահատման ինչպիսի՞ համակարգեր են կիրառվում ՀՀ բանկային համակարգում: Տալ դրանց համառոտ նկարագիրը:
7. Ներկայացնել առևտրային բանկերի սնանկացման և առողջացման ընթացակարգերը:
8. Ներկայացնել բանկի հեռանկարային զարգացման ծրագրի նպատակը և էությունը:
9. Ներկայացնել առևտրային բանկերի բյուջետավորման առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 21

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

21.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրական հարաբերություններն ունեն պատմական խոր արմատներ: Ապահովագրության միջոցով իրացվում են տարբեր անբարենպաստ երևույթներից ու պատահարներից ապահովագրական պաշտպանության հասարակական և առևտրական պահանջմունքները:

Ապրանքային արտադրության և դրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել յուրաքանչյուր սեփականատիրոջ գույքային շահերի ապահովագրական պաշտպանվածության ապահովումը: Նյութական ու ոչ նյութական բարիքների պաշտպանությունն առանձին վերցրած մեկ սեփականատիրոջ ուժերով ապահովելը տնտեսապես շահավետ չէ և ոչ էլ հնարավոր է: Արտակարգ բնույթի իրադարձությունների և պատահարների վրա հասնելու հավանականությունը կանխորոշում է նյութական վնասի փոխհատուցման նպատակով մասնագիտացված կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը: Միայն ապահովագրության հիման վրա է հնարավոր պաշտպանել նյութական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացներում ծագող կոլեկտիվ և անձնական շահերը:

Հասարակական վերարտադրության ոլորտում ապահովագրության կարևոր դերը նախատեսում է պետության տիպին և տնտեսական զարգացածությանը համապատասխան ապահովագրական ծառայության առկայությունը:

Շուկայական տնտեսության պայմաններում ավանդաբար օգտագործվող բնական (տարերային) բնույթի երևույթներից (երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ և այլն) և տեխնոգեն ռիսկերից (հրդեհ, վթար, պայթյուն և այլն) պաշտպանության ապահովագրություններին զուգընթաց կտրուկ աճում է ֆինանսական ու վարկային պարտավորությունների խախտման, գործընկերների անվճարունակության, արժույթի կուրսի տատանումների և այլ տնտեսական գործոնների գործողության հետևանքով ձեռնարկատիրությանը զբաղվողների շահույթի և իրական եկամուտների կորստի ապահովագրման պահանջը:

Քաղաքացիների կյանքի, առողջության, աշխատունակության և նյութական բարեկեցության ապահովագրումը նույնպես անխզելիորեն կապված է նրանց տնտեսական շահերի հետ և իրացվում է գույքային, անձնական և սոցիալական ապահովագրության ծառայությունների միջոցով:

Որպես հասկացություն՝ ապահովագրությունն իրենից ներկայացնում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց գույքային շահերի պաշտպանության տնտեսական հարաբերությունների ոլորտ, որտեղ որոշակի իրադարձություններ (ապահովագրական դեպքեր) տեղի ունենալու պարագայում նրանց իսկ կողմից կատարված վճարումների հաշվին ձևավորված նպատակային ֆոնդից տրվում է վնասի ապահովագրական փոխհատուցում:

Ապահովագրությունն իրացվում է պայմանագրային հարաբերությունների միջոցով: Ապահովագրական պայմանագիրը կնքելու շահագրգիռ կողմերի փոխգործոլությունը տեղի է ունենում ապահովագրական շուկայում:

Ապահովագրական շուկան դրամական հարաբերությունների այն ոլորտն է, որտեղ առք ու վաճառքի օբյեկտ է առանձնահատուկ ապրանքը՝ ապահովագրական ծառայությունը, և ձևավորվում են դրա առաջարկն ու պահանջարկը:

Ապահովագրական փոխհարաբերությունների հիմնական մասնակիցներն են՝

1. Ապահովադիրներ. իրավաբանական ու ֆիզիկական անձինք, որոնք ունեն ապահովագրական շահ և ապահովագրողի հետ մտնում են փոխհարաբերության մեջ օրենքի ուժով կամ երկկողմ պայմանագրով ձևակերպվող համաձայնության հիման վրա: Կնքված պայմանագրի հավաստումը ապահովագրվողին տրվող ապահովագրական վկայագիրն է (պոլիսը):

2. Ապահովագրողներ. ցանկացած կազմակերպարական ձևի իրավաբանական անձինք, որոնք կազմավորվել են ապահովագրական գործունեություն իրականացնելու համար և ստացել են ապահովագրական գործարքներ կատարելու պետական թույլտվություն (լիցենզիա):

3. Ապահովագրական գործակալ. իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը գործում է ապահովագրողի անունից և նրա հանձնարարությամբ:

4. Ապահովագրական բրոքեր. իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով գրանցված է որպես ձեռնարկատեր և իրականացնում է միջնորդական գործունեություն իր անունից և ներկայացնում է ապահովադրի կամ ապահովագրողի շահերը:

Ապահովագրությունը հասարակության տնտեսական հարաբերությունները կարգավորող կարևոր օղակներից մեկն է, որը հանդես է գալիս մի շարք այլ տնտեսական կատեգորիաների հետ համատեղ: Շուկայական հարաբերություններ ունեցող երկրներում ապահովագրությունը տնտեսության զարգացման կարևոր ռազմավարական հատվածներից է, որի միջոցով ապահովվում է բոլոր տնտեսավարող սուբյեկտների սոցիալ-տնտեսական կայունությունը, ինչպես նաև երաշխավորվում է նրանց պաշտպանվածությունը հնարավոր կորուստներից:

Ապահովագրության տնտեսական էությունը դրսևորվում է նրա առջև դրված խնդիրների և դրանց իրականացման հասկացությունների միջոցով, որոնք արտահայտում են որոշակի տնտեսական հարաբերություններ:

«Ապահովագրություն» տնտեսական կատեգորիայի հիմնական բնութագրիչ գործոնները հետևյալն են.

1. Վերաբաշխման հարաբերությունների առկայությունը,
2. Ապահովագրական ռիսկի առկայությունը և դրա գնահատման չափորոշիչները,
3. Ապահովագրական փոխհարաբերության ձևավորումը ապահովագրողների և ապահովագրվողների միջև,
4. Անհատական և խմբային ապահովագրական շահերի համատեղումը,
5. Բոլոր ապահովագրողների պատասխանատվությունը վնասի փոխհատուցման առումով,
6. Վնասի փոխհատուցման սահմանափակությունը,
7. Վնասի վերաբաշխումը տարածության և ժամանակի մեջ,

8. Ապահովագրավճարների վերադարձելիությունը,

9. Ապահովագրական գործունեության ինքնաձախսածածկումը:

Անցումը շուկայական տնտեսության հասարակական վերարտադրության գործընթացում ապահովագրության դերը էականորեն բարձրացնում է: Նշանակալիորեն ընդլայնվում է ապահովագրական ծառայությունների ոլորտը, և նվազում են բոլոր նակարդակների բյուջեների ծախսերը տարերային աղետների կանխման և դրանց բացասական հետևանքների վերացման ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ֆինանսների էությունը՝ որպես տնտեսական կատեգորիա, պայմանավորված է դրամական միջոցների ֆոնդերի ձևավորման և օգտագործման գործընթացում ծագող տնտեսական հարաբերություններով: Ապահովագրության էությունը նույնպես պայմանավորված է դրամական միջոցների ֆոնդերի ձևավորմամբ ու օգտագործմամբ: Եթե ֆինանսների համար միշտ անհրաժեշտ են դրամական հարաբերություններ, և բնութագրական է դրամական միջոցների ֆոնդերի ձևավորումը, ապա ապահովագրությունը կարող է լինել նաև բնեղեն ձևով: Ապահովագրության էության առումով ելակետային է վնասի սահմանափակ բաշխումը շահագրգիռ կողմերի միջև: Որպես դասական օրինակ է հանդես գալիս փոխադարձ ապահովագրումը: Բացի այդ, ապահովագրությունը միշտ կապված է ապահովագրական պատահարի հանդես գալու հետ, այսինքն՝ ապահովագրության համար պարտադիր գործոն է դառնում պատահարների ի հայտ գալու հավանական բնույթը:

Ապահովագրական ֆոնդի միջոցների օգտագործումը պայմանավորված է ապահովագրական պատահարների առաջացմամբ և հետևանքներով: Եթե պետական բյուջեի եկամուտները ձևավորվում են ի հաշիվ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտադիր և անհատույց վճարների՝ հարկերի և տուրքերի, իսկ բյուջեի միջոցների օգտագործումը կատարվում է հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան, ապա ապահովագրության դեպքում տեղի է ունենում վնասի վերաբաշխում ինչպես տարածքային միավորների, այնպես էլ ժամանակի առումով:

Այնքանով, որ ապահովագրությունը նույնպես հիմնված է վերաբաշխման հարաբերությունների վրա, որոնք դրսևորվում են այդ ֆոնդի ձևավորման և օգտագործման գործընթացում, ընդգծվում է ապահովագրություն և ֆինանսներ կատեգորիաների միասնությունը՝ չանտեսելով վերջինիս առանձնահատկությունները:

Այսպիսով՝ հանդես գալով դրամական ձևով, ամրագրելով այդ հարաբերությունները իրավական փաստաթղթերով՝ ապահովագրությունը դրսևորում է այնպիսի գծեր, որոնք վերջինիս մոտեցնում են ֆինանսներ և վարկ կատեգորիաներին՝ մշտապես պահպանելով իրեն բնորոշ առանձնահատկություններն ու ֆունկցիաները:

Ապահովագրության ֆունկցիաները հետևյալն են.

1. Դրամական միջոցների մասնագիտացված ապահովագրական ֆոնդի ձևավորումը,
2. Դրամական միջոցների խնայողությունը և կուտակումը,
2. Վնասի փոխհատուցումը և քաղաքացիների նյութական բարեկեցության ապահովումը,
4. Ապահովագրական պատահարի նախագուշացումը և սպասվելիք կորուստների նվազեցումը,
5. Վերահսկողությունը:

Ապահովագրության տեղն ու դերը դրսևորվում են նրա ֆունկցիաներով և ճյուղային կառուցվածքի միջոցով: Այսպես, օրինակ՝ գույքային ապահովագրությունը երաշխավորում է իրավակազմակերպական տարբեր ձևերի և ձեռնարկատիրական զանազան գործունեություն իրականացնող կազմակերպությունների ապահովագրված գույքին տարերային աղետների պատճառով վնասի վերականգնումը, անձնական ապահովագրության դեպքում՝ աշխատողների կորսված աշխատունակության վերականգնումը, իսկ պատասխանատվության ապահովագրման ժամանակ՝ երրորդ անձի գույքի և առողջական վիճակի վերականգնումը:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության հիմնական նպատակն է ապահովագրել սեփականության բոլոր ձևերի և գործարարների եկամուտները համապատասխան ռիսկերից:

Տնտեսության մեջ ապահովագրության դրսևորման ոլորտներն առանձին դեպքերում որոշվում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Օբյեկտիվ գործոնները պայմանավորված են արտակարգ և անկանխատեսելի բնական իրադարձությունների հավանականությամբ: Ֆիզիկական անձանց, ձեռներեցների կյանքի, պետական ինստիտուտների գույքի և այլ նյութական արժեքների պաշտպանությունը ապահովելու համար պետության կողմից մտցվում է պարտադիր ապահովագրություն: Սովորաբար դա ընդգրկում է պետության համար խիստ կարևոր տնտեսական ու սոցիալական ոլորտները:

Ապահովագրության այն օբյեկտները, որոնք չեն ընդգրկվում պարտադիր ապահովագրության շրջանակներում, կարող են ներառվել կամավոր ապահովագրության ոլորտում: Վերջինիս զարգացման համար, բացի օբյեկտիվ գործոններից, կարևորվում են նաև սուբյեկտիվ գործոնները: Դրանք հետևյալն են.

1. Քաղաքացու կամ ձեռներեցի կողմից տարերային աղետներից և հասարակական վտանգներից ապահովագրման անհրաժեշտության ընկալումը,
2. Ֆիզիկական անձանց և ձեռներեցների ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահությունը,
3. Երկրում ապահովագրական ծառայությունների գրավչությունը և կազմակերպական մակարդակը:

Ամեն դեպքում չպետք է անտեսվի նաև շուկայական հարաբերությունների պայմաններում քաղաքացիների և ձեռներեցների ապահովագրության անհրաժեշտությունը գիտակցելուն զուգընթաց նրանց մի մասի բավարար վճարունակ չլինելը: Գործարքը հաճախ ցանկալի է, բայց չկա վճարելու հնարավորություն: Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկայի սահմանափակության հիմնական պատճառը դա է, թեև պակաս ազդեցություն չունեն նաև ապահովագրական ընկերությունների կապիտալի թույլ բազան, սպասարկման ցածր կուլտուրան, ապահովագրական շուկայի ենթակառուցվածքների թերզարգացածությունը:

21.2. ՈՉ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համաձայն «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 54–րդ գլխի 958 հոդվածի՝ գույքային ապահովագրության պայմանագրով ապահովագրողը պարտավորվում է պայմա-

նագրով համաձայնեցված վճարի դիմաց պայմանագրով նախատեսված դեպքի տեղի ունենալու պարագայում ապահովագրվողին կամ այլ անձին՝ ում օգտին կնքվել է պայմանագիրը, հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված վնասները՝ պայմանագրով որոշված գումարի սահմաններում:

Ապահովագրության դասական բոլոր սկզբունքները ընդհանուր առումով կիրառելի են գույքային ապահովագրության բոլոր տեսակների նկատմամբ: Նշենք դրանցից հետևյալները.

1. ապահովագրական շահի առկայությունը, այսինքն՝ ապահովագրվողն ունի իրավաբանորեն հիմնավորված ֆինանսական շահագրգռվածություն այն առումով, որ ապահովագրված է,
2. բարձր ազնվությունը, այսինքն՝ և ապահովագրողը, և ապահովագրվողը պետք է միմյանց նկատմամբ լինեն ազնիվ պայմանագրի դրույթներն իրականացնելիս,
3. փոխհատուցումը, երբ ապահովագրվողը իրավունք ունի ապահովագրական պատահարի հետևանքով ստանալ վնասի փոխհատուցում, այլ ոչ թե շահույթ,
4. փոխհատուցման իրավունքը մեղավոր անձից ապահովագրական ընկերությանը փոխանցումը,
5. տուգանքը, կրկնակի ապահովագրության դեպք բացահայտվելիս փոխհատուցման գործընթացում ապահովագրական ընկերությունների միջև հաշվարկային հարաբերությունների առկայությունը,
6. անուղղակի պատճառներ, այսինքն՝ ապահովագրական ընկերության իրավունքն է վնասը փոխհատուցել միայն այն ապահովագրական պատահարի դեպքում, որը նշված է ապահովագրական պոլիսում:

Գույքային ապահովագրության նպատակն է վնասի փոխհատուցումը:

Վերջինիս զլխավոր սկզբունքն այն է, որ ապահովագրվողը ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում պետք է բերվի այնպիսի ֆինանսական վիճակի, ինչպիսին ունեցել է մինչ այդ պատահարը: Ուստի առաջանում է ապահովագրական գույքի արժեքի գնահատման և ապահովագրավճարների մեծության որոշման խնդիր:

Ապահովագրական արժեքը այն գումարն է, որի սահմաններում ապահովագրողը, համաձայն կնքված պայմանագրի, կրում է պատասխանատվություն: Գույքային ապահովագրությունում ապահովագրավճարի առավելագույն մեծությունը գնահատվում է ապահովագրական պատահարի առաջացման պահին գույքային ապահովագրության շահի արժեքով: Այդ իրադրությանը պետք է ցուցաբերել պատշաճ ուշադրություն: Գույքի ապահովագրման դեպքում ապահովագրման առարկա դիտարկվում է ոչ թե գույքը, այլ այն պահպանելու սեփականատիրոջ շահը:

Ապահովագրության դասական կոնցեպցիան այն է, որ ապահովագրության գումարը չպետք է գերազանցի ապահովագրական արժեքը: Հակառակ դեպքում առաջանում է իրավիճակ, երբ հաճախորդը շահագրգռված է հակաօրենսդրական գործողություններով ստանալ գույքի իրական արժեքը գերազանցող ապահովագրական փոխհատուցում:

Գործնականում ապահովագրության բնագավառում հանդիպում են բազմակի ապահովագրման դեպքեր: Բազմակի ապահովագրումը տեղի ունի, եթե ապահովագրվում է նույն ապահովագրական շահը նույն վտանգի նկատմամբ միևնույն փուլում մի քանի ապահովագրական ընկերություններում: Բազմակի ապահովագրությունը,

մի շարք երկրների օրենսդրություններին համապատասխան, չի արգելվում, բայց բոլոր դեպքերում միազումար ապահովագրման ծավալը չպետք է գերազանցի ապահովագրության արժեքը: Տվյալ դեպքում յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն, համաձայն կնքված ապահովագրական պայմանագրի, կատարում է վնասի համամասնական փոխհատուցում:

Տուգանքը ապահովագրական ընկերության իրավունքն է առաջարկել ապահովագրվողի առաջ պատասխանատու այլ ընկերություններին իր հետ համամասնական սկզբունքով կիսելու ապահովագրվողի վնասի փոխհատուցման ծախսերը: Տուգանք հաշվարկվում է պոլիսներով ձևավորված ապահովագրական գումարի հիման վրա՝ ելնելով յուրաքանչյուր պոլիսի բաժնից: Այդ սկզբունքը օգտագործվում է վնասի մասնակի և համամասնական ապահովագրման դեպքերում: Տուգանքի հնարավորությունը առաջանում է հինգ պայմանների առկայության դեպքում.

1. Երկու և ավելի ապահովագրական պոլիսների գոյություն,
2. Ապահովագրական պոլիսներով նույն ապահովագրական շահերի ծածկում,
3. Պոլիսներով վնասի առաջացման պատճառ համարվող ընդհանուր վտանգի ծածկում,
4. Պոլիսների ապահովագրական միևնույն օբյեկտին վերաբերում,
5. Յուրաքանչյուր պոլիսի պատասխանատվությունը վնասի փոխհատուցմանը:

Գույքային և պատասխանատվության ապահովագրությունների պայմանագրերը հաճախ նախատեսում են ապահովագրվողի սեփական մասնակցությունը վնասի որոշակի մասի ծածկմանը: Սեփական մասնակցության ձևերը տարբերվում են համամասնական ապահովագրումից կամ էվերիջից նրանով, որ ոչ մի ձևով կախված չեն ապահովագրական գումարի և արժեքի միջև հաշվարկային հարաբերակցությունից: Ապահովագրվողի սեփական մասնակցությունը վնասի ծածկմանը ապահովագրողին ազատում է փոքր ծավալի վնասների փոխհատուցման պարտավորությունից: Այն ձեռնտու է նաև ապահովագրողին, քանի որ ապահովում է նրան ապահովագրական հավելավճարների արտոնյալ պայմաններ: Սեփական մասնակցության ամենապարզ ձևն այն է, որ ապահովագրվողը իր վրա է վերցնում ցանկացած վնասի որոշակի տոկոսը: Օրինակ, եթե վնասը կազմում է 1.5 մլն դրամ, իսկ ապահովագրվողի սեփական մասնակցության բաժինը 20% է, ապա ապահովագրողը պետք է փոխհատուցի ընդամենը 1.2 մլն դրամ ($1.5 - (1.5 \cdot 20\% / 100\%)$):

Սեփական մասնակցության մյուս ձևը՝ ֆրանշիզը, օգտագործվում է, երբ ապահովագրվողը մասնակցում է վնասի փոխհատուցմանը որոշակի գումարով: Ֆրանշիզը պայմանագրով որոշված վնասի այն գումարն է, որը ենթակա չէ փոխհատուցման ապահովագրողի կողմից:

Կորստի դեպքում վճարման ենթակա գումարի սահմանափակման համար օգտագործվում է նաև ապահովագրողի պատասխանատվության լիմիտը: Այն մտցվում է պայմանագրի պայմանների մեջ և կարող է սահմանվել ապահովագրվող գույքի տարբեր ձևերի համար: Օրինակ՝ տնային գույքի ապահովագրման դեպքում ապահովագրողը սահմանափակում է շատ թանկարժեք իրերի ապահովագրական ծածկումը որոշակի տոկոսով՝ գույքի ընդհանուր արժեքի ֆիքսված գումարի չափով: Այդպես է լիմիտավորվում կազմակերպության դրամարկղում կանխիկի ապահովագրության ծածկումը:

Գոյություն ունեն վնասի փոխհատուցման դրամական, վերանորոգման, վերականգնման և փոխարինման ձևեր:

Ապահովագրական պայմանագրի բովանդակությունը ապահովագրողին իրավունք է տալիս ընտրել վնասի փոխհատուցման այս կամ այն ձևը: Հաճախ օգտագործվում է փոխհատուցման դրամական ձևը: Բայց որոշ դեպքերում ապահովագրական ընկերություններին ձեռնտու է նաև վնասի փոխհատուցման բնեղեն ձևերը, օրինակ՝ ավտոմեքենաների և անշարժ գույքի ապահովագրության դեպքում:

Հաճախորդը ապահովագրական փոխհատուցում ստանալու համար պատահարի մասին պետք է տեղյակ պահի ապահովագրողին հաստատված ժամկետում և սահմանված ձևով: Ժամկետի պահպանումը շատ կարևոր է գույքային ապահովագրությունում, քանի որ ուշացնելու դեպքում դժվար է որոշել կորստի նախասկզբնական չափերը: Ապահովագրվողը պետք է ձգտի ապացուցել կրած վնասի իրական մեծությունը: Առևտրային ապահովագրությունում մեծ ծավալների դեպքում պարտադիր կատարվում է վնասի փորձագիտական հետազոտում: Դրա համար ներգրավվում են փորձագետներ, որոնք կարող են նույնիսկ չափստել տվյալ ապահովագրական ընկերությունում:

Գույքային ապահովագրության ամենատարածված տեսակը հրդեհից ապահովագրությունն է: Այս դեպքում ապահովագրման օբյեկտ կարող են լինել շենքերը, շինությունները, անավարտ արտադրությունը, փոխանցող մեխանիզմները, ուժային, աշխատանքեմանները, սարքավորումները, արտադրանքը, հումքը, նյութերը, ապրանքները, վառելիքը, տնային ունեցվածքը և այլ ակտիվներ: Ապահովագրման պայմանագիրը կարող է կնքվել ինչպես ամբողջ ունեցվածքի, այնպես էլ նրա մի մասի համար:

Ապահովագրության հիմնական ռիսկերը ավանդաբար համարվում են հրդեհը, կայծակը, պայթյունը և այլն: Որպես լրացուցիչ ռիսկեր դիտվում են.

1. Տարերային աղետները, մասնավորապես երկրաշարժերը, հրաբուխները, ստորերկրյա կրակը, ամպրոպը, փոթորիկը, ցունամիները, քամիները և այլն,
2. Հարևան կառույցից ջրի ներթափանցումը,
3. Վթարները ջեռուցող, ջրամատակարարող, սանհանգուցային և հակահրդեհային ցանցերում,
4. Ապակիների ջարդվելը,
5. Երրորդ անձանց հակաիրավական գործողությունները,
6. Հրդեհից հետո արտադրությունում ընդմիջումը կամ դրա հետ կապված շահույթի կորուստը:

Եթե ապահովագրական պայմանագրում այլ բան չի նախատեսվում, ապա չեն փոխհատուցվում այն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով առաջանում են հետևյալի արդյունքում.

- բոլոր բնույթի ռազմական գործողությունները, քաղաքացիական պատերազմը կամ դրա հետևանքները, ազգային խռովությունները, գործադուլները, պետականացումը, աքսորը, ռազմական կամ քաղաքացիական մարմինների կողմից գույքի բռնագանձումը և ոչնչացումը,
- ատոմային պայթյունը, ռադիոակտիվ վարակը,
- ինքնահրդեհումը,

- շենքի կամ նրա առանձին մասերի այլ չնախատեսված պատճառներով քանդվելը և այլն:

Պատմականորեն տարբերում են գույքի վերականգնողական, գործող (մնացորդային կամ զուտ), վաճառքի, հաշվեկշռային, շուկայական արժեքները:

Գողության դեպքերի ապահովագրությունում որպես օբյեկտ համարվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը, իսկ ապահովադիրներ՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք: Գողության բնորոշումը տրվում է «Քրեական օրենսգրքի» դրույթներին համապատասխան: Տարբեր երկրներում գոյություն ունեն գողունի որոշման կոնկրետ մոտեցումներ, որը պայմանավորված է ազգային քրեական օրենսդրության առանձնահատկություններով: Օրինակ՝ Իտալիայում «գողություն» հասկացությունը միավորում է 24 հանցագործություն:

Արտադրական գործընթացի ընդհատման հետ կապված՝ վնասների փոխհատուցման համար կիրառվում է ապահովագրության հատուկ ձև, որը անվանվում է արտադրությունում ընդհատումներից, պարապուրդներից վնասների ապահովագրություն: Այդպիսի վնասների պատճառներ կարող են լինել.

- հրդեհները կամ իրադարձությունները, որոնք կապված են ապահովադիր գույքի կորստի հետ,
- վթարները և տեխնիկական անսարքությունները,
- տարերային աղետները,
- հասարակական–քաղաքական իրադարձությունները,
- առևտրային գործոնները:

Դեռ վաղ ժամանակներից բեռների փոխադրման ժամանակ առաջացող հիմնական ռիսկեր դիտվել են բեռների վնասվելը, փչանալը, գողացվելը և տեղ չհասնելը: Ժողովրդատնտեսական շահերի տեսանկյունով բեռների ապահովագրությունը բաժանվում է հետևյալ տեսակների՝

- արտահանվող բեռների ապահովագրություն,
- մերմուծվող բեռների ապահովագրություն,
- ներքին փոխադրումների ապահովագրություն,
- տրանզիտ փոխադրումների ապահովագրություն:

Գույքային ապահովագրության հաջորդ ձևը ավտոտրանսպորտի ապահովագրությունն է, որը ՀՀ-ում առայժմ իրականացվում է կամավոր սկզբունքով: Ապահովագրման օբյեկտ են ինքնագնաց տրանսպորտային միջոցները, որոնք ենթակա են պետական հաշվառման (թեթև մարդատար, բեռնատար ավտոմեքենաները, ավտոբուսները, մոտոցիկլետները, տրակտորները):

Գիտատեխնիկական առաջընթացի արագացման տեմպերը, արտադրության կապիտալատարության աճը, ներքին առևտրի շրջանառությունում տեխնոլոգիական սարքավորումների տեսակարար կշռի ավելացումը պահանջ առաջացրին ապահովագրել տեխնիկական ռիսկերի հետևանքները: Տեխնիկական ռիսկերի ապահովագրությանը վերաբերում են ապահովագրության հետևյալ հիմնական տեսակները.

- շինմոնտաժային աշխատանքների ապահովագրությունը,
- արտադրության ոլորտում մեքենաների ապահովագրությունը,
- շարժական հարմարանքների ապահովագրությունը,
- էլեկտրական սարքավորումների ապահովագրությունը:

Շինմոնտաժային ռիսկերի ապահովագրությունը ապահովագրության բարձր մասնագիտացված ձև է, քանի որ չի կարող միասնական մոտեցում լինել տարաբնույթ օբյեկտների ռիսկերի գնահատման առումով, նույնիսկ նույն ճյուղի համար: Մի շարք զարգացած երկրներում ապահովագրության այս ձևը կրում է պարտադիր բնույթ:

Տեխնիկական ռիսկերի ապահովագրության մյուս երեք ձևերի կիրառման դեպքում մեքենաների, շարժական հարմարանքների, էլեկտրոնային սարքավորումների ապահովագրությունը կատարվում է գույքի ապահովագրության մեխանիզմներով:

Գույքային ապահովագրության հաջորդ տեսակը անշարժ գույքի սեփականության իրավունքի ապահովագրությունն է: Տարբերվում են անշարժ գույքի գործարքների և դրա նկատմամբ սեփականության իրավունքի հաշվառման (գրանցման) երկու մոդելներ:

Առաջին մոդելի դեպքում պետությունը գրանցում է անշարժ գույքի սեփականության իրավունքը, տալիս է համապատասխան սերտիֆիկատ և երաշխավորում է այդ իրավունքը ձեռք բերողին, որ վերջինիս սեփականության իրավունքը ոչ մի դեպքում չի կարող վերացվել: Եթե հետաքննությամբ պարզվի, որ գործարքը կատարվել է օրենսդրական խախտումներով, ապա պետությունը տուժող կողմին տալիս է փոխհատուցում, այնուհետև պատժում մեղավոր անձանց:

Երկրորդ մոդելի դեպքում պետության ֆունկցիան սահմանափակվում է միայն գործարքի գրանցմամբ: Եթե դատարանի որոշմամբ սեփականությունը վերադարձվում է նախկին տերերից որևէ մեկին, ապա տուժող է հանդիսանում վերջին սեփականատերը, որը կորցնում է ինչպես այդ սեփականությունը, այնպես էլ դրանում ներդրված իր դրամական միջոցները: Հենց այդպիսի համակարգ գործում է ԱՄՆ-ում, որտեղ մասնագիտացված ապահովագրական ընկերությունները ապահովագրում են սեփականության իրավունքը:

Ապահովագրության հաջորդ տեսակը ծովային ապահովագրությունն է: Գործնականում դա տրանսպորտային ապահովագրության հիմքն է և ընդգրկում է լայն շրջանակներ:

Գույքային ապահովագրության տարածված տեսակներից մեկը ավիացիոն ապահովագրությունն է, որը համալիր ճյուղ է և իր մեջ ներառում է հետևյալ ենթաճյուղերը.

- Ավիացիոն ընկերության ռիսկերի ապահովագրություն,
- Ավիացիոն արտադրանքի պատասխանատվության ապահովագրություն:

Ավիաընկերությունում պատասխանատվության ապահովագրությունը լայն տարածում է ստացել մի շարք զարգացած երկրներում: Ըստ օրենքի՝ այդ երկրներում ավիափոխադրողները պարտավոր են ապահովագրել իրենց պատասխանատվությունը երրորդ անձանց առջև՝ նրանց հասցրած վնասի փոխհատուցման համար: Օրենսդրությամբ սահմանվում են ապահովագրության պարտադիր ձևեր և դրանց համար պատասխանատվության սահմանաչափեր: Միջազգային ավիագործընթացներում ավիացիոն ապահովագրությունը, ավիափոխադրումների և դժբախտ պատահարներից ուղևորների պարտադիր ապահովագրությունները միավորվում են մեկ պոլիսում՝ ապահովագրության ընդհանուր սահմանաչափով:

Գույքային ապահովագրությունում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական կազմակերպության գույքի ապահովագրությունը: Այն նախատեսում է.

- գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրություն (բացառությամբ սերմերի),

- մշակովի գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրություն,
- գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն,
- շենքերի, շինությունների, փոխանցող հարմարանքների, ուժային, աշխատամեքենաների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների, գույքի, արտադրանքի, հումքի, նյութերի, բազմամյա տնկարկների ապահովագրություն:

Գյուղատնտեսական մշակաբույսերի համար ապահովագրական իրադարձություններ համարվում են երաշտի, անբավարար ջերմության հետևանքները, ինչպես նաև հիվանդությունները, հրդեհը և վնասատուները:

Գյուղատնտեսական կենդանիների համար ապահովագրական իրադարձություններ համարվում են տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, հրդեհի և այլ դժբախտ դեպքերի հետևանքով կենդանիների սատկելը որոշակի հասակում (օրինակ ոչխարի և այծի համար վեց ամիս հասակը, խոզի համար չորս ամիսը, ծիերի, ուղտերի, ավանակի և մյուս խոշոր եղջերավոր անասունների համար մեկ տարի):

Գյուղատնտեսական նշանակության հիմնական միջոցների համար ապահովագրական իրադարձություն համարվում են ջրհեղեղի, քամու, անձրևի, կայծակի, երկրաշարժի, հրդեհի և այլ տարերային աղետների, ինչպես նաև բնակլիմայական պայմանների հետևանքներով դրանց քանդվելը:

Պատասխանատվության ապահովագրությունը ներկայումս բավականաչափ զարգացած ու հեռանկարային տեսակ է:

Բիզնեսի աշխարհում ամենատարբեր գործունեություններին վերաբերող գործարքներն իրենց մեջ կրում են պատասխանատվության որոշակի ռիսկ: Բնականաբար, առաջանում է հասարակական պատասխանատվության անհրաժեշտություն, քանի որ արտադրամասերից մեկի կամ ընկերության անձնակազմի թերի աշխատանքի հետևանքով կարող է տեղի ունենալ հրդեհ կամ պայթյուն, վթար, զոհվեն մարդիկ, վնաս պատճառվի շրջակա միջավայրին և այլն:

Բոլոր զարգացած երկրներում գործատուները, որոշակի բացառություններով, պարտավոր են իրենց պատասխանատվությունը ապահովագրել օրենքի առաջ:

Որպես ապահովագրության առանձին ձև՝ ոչ կյանքի ապահովագրությունում (գույքային ապահովագրությունում) հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության ապահովագրությունը, որն ընդգրկում է ներքին և արտաքին ռիսկերը:

Ձեռնարկատիրական գործունեությունը մշտապես ուղեկցվում է բազմատեսակ ռիսկերով, որոնք փոխգործողության մեջ են այն կորուստների մաթեմատիկական սպասման հետ, որպիսիք կարող են տեղի ունենալ ընդունված որոշման արդյունքում:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական հասկացվում է այն ռիսկը, որը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության բոլոր ձևերում և կապված է արտադրանքի արտադրության, ապրանքների ու ծառայությունների իրացման, ապրանքադրամական և ֆինանսական գործառնությունների, առևտրի, ինչպես նաև գիտատեխնիկական նախագծերի կատարման գործընթացների հետ:

Ձեռնարկատիրությունը միշտ առնչվում է տնտեսական կոնյունկտուրայի անորոշության հետ, որը բխում է ապրանքների, դրամի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունից, արտադրության գործոններից, կապիտալի առաջարկի բազմատարբերակ ոլորտներից, միջոցները ներդնելու նախընտրելիությունից և այլն: Ձեռնարկատիրական ռիսկն ունի օբյեկտիվ հիմք՝ բխում է ձեռնարկատիրա-

կան գործունեություն իրականացնող կազմակերպության արտաքին միջավայրի անորոշությունից: Արտաքին միջավայրն իր մեջ ներառում է օբյեկտիվ տնտեսական, սոցիալական և քաղաքական պայմաններ, որոնք ոչ միշտ է հնարավոր կանխատեսել ընդունելի ճշտությամբ:

Ձեռնարկատիրական ռիսկի առկայությունը հանդես է գալիս որպես տնտեսական ազատության հակադարձ կողմ և դրա դիմաց յուրահատուկ վճար: Մի ձեռներեցի ազատությունը միաժամանակ զուգորդվում է մյուս ձեռներեցների ազատությամբ: Շուկայական հարաբերությունների խորացումը ավելի է շեշտում անորոշությունը և ձեռնարկատիրական ռիսկը վերահսկելու անհրաժեշտությունը: Ուստի նպատակահարմար է օգտագործել տարբեր միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան որոշակի աստիճանով կանխատեսել ռիսկային իրավիճակի առաջացումը և նվազեցնել այդ ռիսկի մակարդակը: Անհրաժեշտ է նշել, որ ձեռնարկատերը իրավունք ունի մասնակիորեն ռիսկը տեղափոխել տնտեսության այլ սուբյեկտների վրա, բայց ամբողջությամբ նա չի կարող խուսափել դրանից: Ճշմարտացիորեն ընդունվում է, որ ով ռիսկի չի գնում, նա չի հաղթում, ուստի տնտեսական շահույթի ստացման համար տնտեսավարող սուբյեկտը պետք է գիտակցաբար ընդունի ռիսկային որոշումներ:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում տնտեսական և քաղաքական զարգացումներն առաջ են բերում ռիսկի նոր ձևեր, որոնք դժվար է որոշել և գնահատել քանակապես: Բիզնեսը, ազգային շրջանակներից դուրս գալով, առաջացնում է բարդ ֆինանսական և արտադրական փոխադարձ հարաբերություններ: Առաջ է գալիս «դոմինոյի էֆեկտը», որը մի ընկերության սնանկացման դեպքում շարունակաբար վատթարացնում է դրա հետ կապված այլ ընկերությունների ֆինանսական վիճակը:

Ձեռնարկատիրական ռիսկերը դասակարգելիս նախ և առաջ անհրաժեշտ է տարբերակել դրանք որոշակի խմբերի վերագրող հիմնական հատկանիշերը.

1. ըստ առաջացման ոլորտի,
2. ըստ ժամանակի տևողության,
3. ըստ ռիսկի աստիճանի,
4. ըստ հետևանքների բնույթի:

Ըստ առաջացման ոլորտի՝ ձեռնարկատիրական ռիսկերը կարելի է ստորաբաժանել ներքինի և արտաքինի: Ներքին ռիսկերի առաջացման աղբյուրը արտաքին միջավայրն է: Ձեռնարկատերը չի կարող ներագդել դրա վրա, այլ միայն կարող է կանխատեսել և հաշվի առնել իր գործունեության ընթացքում:

Արտաքին ռիսկերին վերաբերում են այնպիսիները, որոնք անմիջականորեն կապված չեն ձեռնարկատիրոջ գործունեության հետ (օրենսդրության մեջ չնախատեսված փոփոխությունները, քաղաքական ռեժիմի անկայունությունը և այլն):

Ներքին ռիսկերի աղբյուրը հենց ձեռնարկատիրական գործունեությունն է: Այդ ռիսկերն առաջանում են անարդյունավետ կառավարման, սխալ մարքեթինգային քաղաքականության, ինչպես նաև ներքին չարաշահումների դեպքում: Դրանցից հիմնականներն են կադրերի ռիսկը, որը կապված է արհեստավարժության և ձեռնարկության խորհրդատուների բնորոշ գծերի հետ:

Ժամանակի երկարատևության տեսանկյունով ձեռնարկատիրական ռիսկերը կարելի է բաժանել կարճաժամկետի և մշտականի: Կարճաժամկետների խմբին վերա-

բերում են այն ռիսկերը, որոնք սպառնում են ձեռնարկատիրոջը ժամանակի հայտնի փուլի ընթացքում: Օրինակ՝ տրանսպորտային ռիսկը, որի դեպքում վնասներ կարող են առաջանալ բեռնափոխադրման ժամանակ կամ կոնկրետ գործարքի գծով չվճարման ռիսկը:

Մշտական ռիսկերին վերաբերում են այնպիսիները, որոնք անմիջականորեն սպառնում են ձեռնարկատիրական գործունեությանը տվյալ աշխարհագրական կամ տնտեսության որոշակի ճյուղում, օրինակ՝ երկրում չվճարումների ռիսկը անկատար իրավական համակարգի դեպքում կամ շենքերի, շինությունների քանդման ռիսկը սեյսմովտանգ տարածաշրջանում:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը ասելով հասկացվում է ձեռնարկատիրական գործունեությունից վնասների, սպասվող եկամուտների չստացման, լրացուցիչ ծախսերի կատարման ռիսկերի ապահովագրումը, որոնք կարող են առաջանալ կամ գործընկերների, կամ ձեռնարկատիրոջ գործունեության հետ կապ չունեցող հանգամանքների պատճառով: Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության օբյեկտ համարվում են ապահովադրի նյութական շահագրգռվածությունը, որը կապված է ձեռնարկատիրական գործունեության հետ:

Վերարտադրության գործընթացում, միջոցների շրջապտույտի փուլերով պայմանավորված, տարբերում են ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության հետևյալ ձևերը.

1. դրամական,
2. արտադրական,
3. ապրանքային:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը ներառում է ապահովագրության բոլոր հիմնական մոտեցումները: Փաստորեն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բոլոր տնտեսավարող սուբյեկտների մոտ սպասվող շահույթի չստացումը կամ այլ արտադրատնտեսական վնասները, որոնք պայմանավորված են ներքին գործոններով, կարելի է նվազեցնել ապահովագրության միջոցով:

Դիտարկելով ձեռնարկատիրական ռիսկերի ձևերի բազմազանությունը՝ կարելի է հետևություն անել, որ ձեռնարկատիրական ռիսկեր կատեգորիան չունի հստակ սահմաններ, և դրանց վերագրումը ապահովագրության այս կամ այն ճյուղին հնարավոր չէ, իսկ որպես առանձին ճյուղ ներկայացնելը կլինի չհիմնավորված: Ուստի, պետք է ընդունել այն իրողությունը, որ ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը բնութիվով ոչ կյանքի ապահովագրության ձևերից է:

Գույքային ապահովագրության պայմանագիր: Գույքային ապահովագրության պայմանագրի հետ կապված հիմնական գործընթացները հետևյալն են.

1. Ապահովագրության հայտարարության ձևակերպումը,
2. Ապահովագրության կանոնների և պայմանների ժամուցումը, կողմերի իրավունքների և պարտավորությունների համաձայնեցումը,
3. Ապահովագրության պայմանագրի կնքումը,
4. Ապահովագրավճարի փոխհատուցումը,
5. Ապահովագրության պայմանագրի դադարումը:

Գույքի ապահովագրության կամավոր պայմանագիրը հիմնականում կնքվում է ա-

պահովադրի գրավոր հայտարարության դեպքում: Այդ հայտարարությունը պետք է պարունակի ապահովագրվող օբյեկտի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Հայտարարության հետ միաժամանակ ապահովադիրը ներկայացնում է գույքի սեփականության վկայականը, ինչպես նաև կոնկրետ գույքի օբյեկտների խմբերը, չափման միավորը, քանակը, դրանց իրական արժեքը և ցանկալի ապահովագրական գումարը:

Պայմանագիրը կնքելիս ապահովադիրը պարտավոր է ապահովագրողին իրազեկել իրեն հայտնի պատճառների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի առաջացման հավանականության և դրա առաջացումից հնարավոր վնասների չափերի մեծության որոշման համար, եթե այդ պատճառները հայտնի չեն ապահովագրողին: Եթե պայմանագիրը կնքելուց հետո բացահայտվի, որ ապահովադիրը ապահովագրողին տրամադրել է կեղծ տեղեկատվություն, ապա ապահովագրողը իրավունք ունի չեղյալ համարել այդ պայմանագիրը:

Հայտարարություն տալուց հետո ապահովադիրը իրավունք չունի ավելացնել ռիսկի աստիճանը կամ թույլատրել դրա աճը առանց ապահովագրողին գրավոր տեղեկացնելու: Եթե ապահովադիրը ապահովագրում է գույք, որն արդեն ապահովագրված է այլ կազմակերպություններում, ապա նա պարտավոր է գրավոր ձևով ապահովագրողին հայտնել այդպիսի ապահովագրության պայմանների, նրանով առաջացած պարտավորությունների, ապահովագրական գումարի մասին և այլն:

Գույքի ապահովագրության պայմանագիրը կնքվում է սահմանված ձևով ապահովագրողի կողմից ապահովագրվող օբյեկտի պարտադիր զննելուց և համապատասխան փաստաթուղթ կազմելուց հետո, որը ստորագրում են մասնակից երկու կողմերը:

Ապահովագրողն իրավունք ունի ստուգել ապահովագրված գույքի վիճակը, ինչպես նաև ապահովադրի կողմից իրեն հայտնած տեղեկատվությունը: Նա կարող է մասնակցել ապահովագրված գույքի փրկմանը և պահպանմանը, ինչպես նաև տրամադրել գրավոր փաստաթուղթ վնասի նվազման մասին, ինչը պարտադիր է ապահովադրի համար:

Ապահովագրողը կարող է չվճարել ապահովագրական փոխհատուցումը, եթե, ըստ ապահովագրման կանոնների կամ պայմանագրի պայմանների, ապահովագրական պատահարի փաստը չի հաստատվել համապատասխան մարմինների կողմից: Եթե ապահովագրության կանոնները նախատեսում են պայմանագրի կնքումը գույքի վկայագրի հիման վրա, ապա վերջինս կցվում է հայտարարագրին և դառնում պայմանագրի անբաժանելի մասը:

Ապահովադիրը պարտավոր է պատասխանել ապահովագրողի բոլոր հարցերին և տալ ամբողջական տեղեկատվություն ապահովագրվող գույքի ռիսկի աստիճանը որոշելու համար: Դա անհրաժեշտ է, քանի որ հայտարարությունում նշվում են ապագա ապահովագրական պայմանագրի հիմնական տնտեսական ցուցանիշները: Դրանք են.

- գույքի ապահովագրական արժեքը,
- դրա ապահովագրական գումարը,
- ապահովագրական ֆրանշիզը:

Ապահովագրման պայմանագիրը լրացնում է ապահովագրողը, կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են պայմանագրում կատարել որոշ ճշգրտումներ: Կողմերի միջև տարաձայնություն չլինելու դեպքում նրանք ստորագրում են ապահովագրական պայմանագիրը և կնքում կնիքով:

Վնասի որոշումը գույքային ապահովագրությունում: Գույքային ապահովագրությունում կարևոր հիմնահարց են վնասի գումարի որոշումը և ապահովագրական փոխհատուցման կատարումը: ՀՀ օրենսդրության հիման վրա կանոնակարգվում են ապահովագրական փոխհատուցման կարգն ու պայմանները:

Ապահովագրական փոխհատուցում տալու որոշում ընդունելու հիմք է հանդիսանում ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալը: Դա հաստատվում է հետևյալ փաստաթղթերով.

1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի հայտարարությամբ,
2. Ոչնչացված (զոդացված) կամ վնասված գույքի անվանացանկով,
3. Գույքի ոչնչացման վերաբերյալ ապահովագրական ակտով:

Ապահովագրական ակտը փաստաթուղթ է, որը կազմվում է սահմանված կարգով և հաստատում է ապահովագրական պատահարի փաստը, պատճառները և հանգամանքները: Միայն ապահովագրական ակտի հիման վրա հնարավոր է հաշվարկել ապահովադրի գույքին հասցված վնասի գումարը, ապահովագրական փոխհատուցման մեծությունը և որոշել ապահովադրի փոխհատուցում ստանալու իրավունքը:

Ապահովագրական ակտը կազմվում է ապահովագրողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից երեքօրյա ժամկետում:

Անհարժեշտության դեպքում ապահովագրողը հետաքննում է ապահովագրական պատահարը՝ ելնելով իրավապահ մարմինների, հրշեջ պահպանության և այլ համապատասխան ծառայությունների ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությունից: Ապահովագրողն իրավունք ունի ինքնուրույն բացահայտել ապահովագրական պատահարի պայմաններն ու պատճառները:

Ապահովագրական փոխհատուցումը որոշվում է վնասի գումարի և պայմանագրի հիման վրա ու արտահայտում է ապահովադրին փոխհատուցման ենթակա վնասի լրիվ կամ մասնակի մեծությունը:

Համամասնական ապահովագրության դեպքում ապահովագրական փոխհատուցումը որոշվում է ապահովագրական գումարին և արժեքին համամասնորեն, այսինքն՝ փոխհատուցվում է գույքի ապահովագրական արժեքին համապատասխանող փաստացի վնասի բաժինը:

Առաջին ռիսկի համակարգի դեպքում ապահովադրին փոխհատուցվում է ամբողջ վնասը ապահովագրական գումարի սահմաններում՝ ոչ ավելի ապահովագրական արժեքից: Երբ վնասը փոքր է ապահովագրական արժեքից, փոխհատուցվում է ամբողջ վնասը: Եթե վնասի գումարը ավելի է ապահովագրական արժեքից, գերազանցող մասը չի փոխհատուցվում, և ռիսկը մնում է ապահովադրի վրա:

21.3. ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կյանքի ապահովագրությունը՝ որպես ապահովագրության ձև, Եվրոպայում առաջացել է 17–18–րդ դարերում: Պատմականորեն հենց անգլիացիներին է վերագրվում գիտական մոտեցման հիման վրա կյանքի ապահովագրության իրականացումը: 1740 թ. Անգլիայում ստեղծվել է առաջին մասնագիտացված ապա-

հովվագրական ընկերությունը կյանքի ապահովագրության ոլորտում: Ներկայումս կյանքի ապահովագրությունը հանդիսանում է չափափաս մարդկանց բյուջեի անբաժանելի մասը: Օրինակ՝ ԱՄՆ-ում 20-րդ դարի վերջին ընտանիքների 78%-ը ունեցել է կյանքի, իսկ 74%-ը՝ ավտոմեքենայի ապահովագրության պոլիսներ:

Կյանքի ապահովագրություն ասելով ընդունված է հասկանալ ապահովագրողի կողմից ապահովագրավճարների երաշխիքի դիմաց ապահովագրական պայմանագրով նախատեսված պատահարի դեպքում որոշակի փոխհատուցում տալու փոխհարաբերությունները:

Ապահովագրման ռիսկը կյանքի ապահովագրության դեպքում մարդկանց կյանքի երկարակեցությունն է: Ռիսկը համարվում է ոչ թե մահը, այլ նրա առաջացման ժամանակը: Այդ պատճառով էլ ապահովագրվող ռիսկն ունի երեք հավանական մոտեցումներ.

1. երիտասարդ հասակում կամ կյանքի միջին տևողությունից վաղ մահանալու հավանականությունը,
2. մահանալու կամ որոշակի փուլ ապրելու հավանականությունը,
3. մինչև ծերություն ապրելու հավանականությունը՝ ունենալով բավականաչափ երկարակեցություն, որը պահանջում է առանց աշխատանքային գործունեությունը շարունակելու պարբերաբար ստանալ եկամուտներ:

Ելնելով վերոնշյալ երեք հավանական տարբերակներից՝ առաջանում են կյանքի ապահովագրության բազմաթիվ տեսակներ:

Կյանքի ապահովագրության հիմնական սկզբունքներից մեկը ապահովագրական շահի առկայությունն է: Ապահովագրության ցանկացած պայմանագիր կարող է կնքվել միայն ապահովադրի մոտ տվյալ օբյեկտի առումով ապահովագրական շահի առկայության պայմաններում: Այդ սկզբունքը առաջին օրենսդրական ձևակերպումն ստացել է Անգլիայում:

Գործնական կյանքը ցույց է տալիս, որ գոյություն ունի ապահովագրական ընկերությունների կողմից կնքվող ապահովագրական պայմանագրի բազմազանություն: Ապահովագրության այս ճյուղը շատ արագ արձագանքում է ֆինանսական շուկայում տեղի ունեցող փոփոխություններին: Բայց և այնպես, բոլոր կնքվող ապահովագրական պայմանագրերն ունեն որոշակի տիպային բնութագրեր, որոնք մշակվել են ապահովագրության ամբողջ պատմության ընթացքում:

Կյանքի ապահովագրության տարբերակման հիմնական չափանիշները հետևյալն են.

1. ապահովագրության օբյեկտը,
2. ապահովագրության առարկան,
3. ապահովագրության ծածկման գործողության տևողությունը,
4. ապահովագրության ծածկման ձևը,
5. ապահովագրավճարների տեսակները,
6. կնքվող պայմանագրի ձևը:

Ըստ օբյեկտի՝ տարբերվում են կյանքի ապահովագրության հետևյալ տեսակները.

- կյանքի սեփական հարաբերության պայմանագրերը, երբ ապահովագրվողը և ապահովադիրը նույն անձն է,

- այլ անձի կյանքի հետ կապված ապահովագրությունը, երբ համաապահովագրվողն ու ապահովագրողը տարբեր անձինք են,
- կյանքի համատեղ ապահովագրության պայմանագրերը առաջինի կամ երկրորդի մահվան սկզբունքով:

Կյանքի ապահովագրության առարկայից կախված՝ տարբերվում են.

1. ապահովագրություն մահվան դեպքում,
2. ապահովագրություն երկարակեցության դեպքում,
3. խառը ապահովագրություն:

Ըստ ապահովագրավճարների տարբերվում են.

1. միաժամանակյա ապահովագրավճարներով պայմանագրեր,
 2. պարբերաբար կատարվող ապահովագրավճարներով պայմանագրեր:
- Ըստ ապահովագրման ծածկման գործողության ժամկետի տարբերվում են.

1. ցմահ ապահովագրություն,
2. կյանքի ապահովագրություն ժամանակի որոշակի փուլի համար:

Ապահովագրման ծածկման գործողության ժամկետի որոշման չափորոշիչը ցույց է տալիս ոչ միայն ժամանակային գործոնը, այլև ռիսկի յուրահատկությունը, որն իր վրա կրում է ապահովագրողը: Առաջին դեպքում ապահովագրական իրադրության առաջացման հավանականությունը հավասար է մեկի, և ապահովագրողի ռիսկն այն է, թե երբ տեղի կունենա ապահովագրական պատահարը, տվյալ պայմանագրով պարբերաբար կատարվող ապահովագրավճարների պայմաններում որքան գումար նա կարող է կուտակված լինել ապահովագրական պահուստում:

Երկրորդ դեպքում ապահովագրական իրադարձության հավանականությունը կախված է նրանից, թե ինչպիսին կլինի ապահովագրման առարկան՝ երկարակեցությունը, մահը, թե երկուսը միասին: Այդ դեպքում ապահովագրողի կողմից ապահովագրական երաշխիքի տրամադրումը մահվան հավանականության բարձրանալուն գուզընթաց կլինի ավելի թանկ:

Կյանքի ապահովագրության պրակտիկայում ընդունված է տարբերակել պոլիսների երեք հիմնական տեսակ.

1. Կյանքի ժամկետային ապահովագրություն, երբ կյանքի ապահովագրումը կատարվում է մահվան դեպքից՝ ժամանակի որոշակի փուլի համար,
2. Կյանքի ցմահ ապահովագրություն, երբ կյանքի ապահովագրումը կատարվում է կյանքի ամբողջ տևողության համար,
3. Կյանքի խառը ապահովագրություն, երբ տեղի է ունենում կյանքի ապահովագրումը և մահվան, և ժամանակի որոշակի փուլում ապրելու համար:

Կյանքի ապահովագրության պայմանագիրն իրենից ներկայացնում է օրինական ձևով ապահովագրողի և ապահովագրողի միջև կնքված համաձայնություն, ըստ որի՝ կոնկրետ պատահարի երկրորդի կողմից տրվելիք փոխհատուցման պայմանով առաջինը պարտավորվում է ապահովագրավճարի տեսքով մուծել որոշակի գումար: Այդ պայմանագիրը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- պայմանագիրը երկկողմանի է, այսինքն՝ նախատեսում է երկու կողմերի համաձայնության առկայություն,
- առաջարկի պայմանագիր է, քանի որ ապահովագրողը մշակում է պայմաններ և կանոններ ապահովագրության համար ինքնուրույն, իսկ ապահովագրողը, ծա-

նոթանալով այդ առաջարկին, ընդունում կամ մերժում է նախապատրաստված պայմանագիրը, բայց չի մասնակցում դրա ընդհանուր դրույթների մշակմանը:

Կյանքի ապահովագրության պայմանագիրը այլ ճյուղի ապահովագրական պայմանագրերից տարբերում են հետևյալ 4 հիմնական հատկանիշներով.

1. որպես կանոն, երկարաժամկետ պայմանագիր է՝ 5–15 տարի ժամկետով կամ էլ ապահովադրի կյանքի ողջ տևողության համար,
2. ապահովագրական գումարի պայմանագիր է, ըստ որի՝ վճարվում են նախապես պայմանավորված ապահովագրական գումարները, քանի որ մարդու կյանքի արժեքը, պատճառված վնասը հնարավոր չէ ստույգ չափել,
3. տվյալ պայմանագրի համար վճարումների առումով չկան սահմանափակումներ,
4. ապահովագրողը, ըստ էության, նախապես գիտի և կարող է գնահատել ապահովագրական պատահարի արժեքը, ինչպես նաև դրա առաջացման հավանականությունը: Հետազոտության միջոցով ձեռք բերված տվյալները ապահովագրողին հնարավորություն են տալիս ձևավորել ոչ թե տեխնիկական պահուստներ, այլ այսպես կոչված «մաթեմատիկական պահուստներ»:

Կյանքի ապահովագրության պայմանագիրը նույնպես պարտադիր ձևով ունի գրավոր տեսք:

Ապահովագրական պոլիսները պարունակում են հետևյալ հիմնական ռեկվիզիտները.

1. գլխավոր մաս, որում բերվում են ապահովագրական ընկերության անվանումը, գլխամասի հասցեն, հեռախոսը և այլն,
2. ներածական մաս, որտեղ նշվում է, որ կողմերը կնքում են ապահովագրական կոնկրետ տեսակի պայմանագիր, որը հիմնված է հայտարարության վրա,
3. ընդհանուր պայմաններ, որոնցում նշվում են ապահովագրական ռիսկերը, տրամադրված երաշխիքների տեսակները և կողմերի փոխադարձ պարտավորությունները,
4. պոլիսի անհատական մաս, որտեղ գրանցվում են պոլիսի համարը, հաճախորդի մասին տեղեկատվություն, ապահովագրական գումարը, ապահովագրական պատահարները, որոնց դեպքում պետք է վճարվի ապահովագրական փոխհատուցումը, ապահովագրավճարը, վճարման ձևը, կարգը, պայմանագրի գործողության ժամկետները,
5. հատուկ պայմաններ,
6. ապահովագրական գումարի վճարման պայմանները,
7. պայմանագրի կատարման պայմանները,
8. պայմանագրին իրավական ուժ տալը,
9. կողմերի ստորագրությունը:

Գործնականում լայն տարածում ունի դժբախտ պատահարներից ապահովագրությունը, որի հիմնական նպատակն է ապահովադրի առողջությանը կամ կյանքին դժբախտ պատահարից հասցված վնասի փոխհատուցումը:

Ժամանակակից պայմաններում դժբախտ պատահարներից ապահովագրումը ապահովադրի և նրա ընտանիքի անդամների համար երաշխավորում է համալիր պաշտպանվածություն տնտեսական բացասական հետևանքների, անաշխատունակության կամ մահվան դեպքում:

Դժբախտ պատահարներից պարտադիր ապահովագրությունը իրականացվում է 3 ուղղություններով: Այն սոցիալական ապահովագրության համակարգի տարրերից մեկն է և ծածկում է արտադրական վնասվածքների և պրոֆեսիոնալ հիվանդությունների ռիսկերը: Դրա գործողության շրջանակները սահմանափակվում են աշխատատեղերում, աշխատանքային ժամերին տեղի ունեցող դժբախտ պատահարների հետևանքներով: Ապահովագրության այս տեսակի էական առանձնահատկությունն այն է, որ ապահովագրավճարները ամբողջությամբ մուծում է գործատուն:

Արտադրությունում դժբախտ պատահարներից պարտադիր ապահովագրությունը գործում է համարյա բոլոր զարգացած երկրներում և նպաստում է ազգաբնակչության սոցիալական պաշտպանվածության բարձրացմանը: Սակայն մեր հանրապետությունում այդպիսի համակարգ դեռևս չի ձևավորվել:

Տվյալ պարագայում ապահովադիրներ են բոլոր գործատուները, իսկ ապահովագրված՝ վարձու աշխատողները: Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքը երաշխավորում է.

- ժամանակավոր անաշխատունակության դեպքում՝ ամբողջ աշխատավարձի չափով փոխհատուցում,
- աշխատողի մահվան դեպքում՝ միաժամանակյա փոխհատուցում նվազագույն աշխատավարձի 60–ապատիկի չափով,
- հաշմանդամ դառնալու կամ ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում՝ ամսական վճարներ ապահովադիրին,
- բժշկական օգնության, դեղորայքի և այլ լրացուցիչ ծախսերի վճարում:

Դժբախտ դեպքերից պարտադիր ապահովագրության մյուս ուղղությունը պետական այն ծառայողների պարտադիր ապահովագրությունն է, որոնց պրոֆեսիոնալ գործունեությունը կապված է դժբախտ պատահարի բարձրացված ռիսկով աշխատանքային պարտականություններ կատարելու հետ:

Դժբախտ դեպքերից պարտադիր ապահովագրության երրորդ ուղղությունը վերաբերում է օդային, երկաթուղային, ջրային, միջազգային ու զբոսաշրջության երթուղիների, ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների ապահովագրությանը: Ապահովագրությամբ ծածկվում է ուղևորության հետ կապված դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ վնասվածք ստանալու ռիսկը:

Ապահովադիրներ են ուղևորները, որոնք ապահովագրության համար վճարում են տոմս գնելիս: Այդ տարիքները սահմանվում և վերահսկվում են պետական մարմինների կոմիտե:

Ապահովագրության ոլորտում գոյություն ունի նաև դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրությունը, որը նույնպես դրսևորվում է մի քանի կազմակերպական ձևով: Այս դեպքում պոտենցիալ ապահովադիրները բնութագրվում են ակտիվ ապրելակերպով: Ապահովագրումը երաշխավորում է պաշտպանվածություն դժբախտ պատահարի դրսևորվելուց: Դժբախտ պատահար ասելով ընկալվում է հանկարծակի և չնախատեսված արտաքին ազդեցությունը ապահովագրվողի օրգանիզմի վրա, որի հետևանքով տեղի է ունենում առողջության ժամանակավոր կամ մշտական կորուստ, ինչպես նաև մահ:

Դժբախտ պատահարներից ապահովագրման տարիքները որոշվում են ռիսկային ապահովագրման համար կիրառվող մոտեցումներով: Քանի որ դժբախտ պատահար

հարձակումներից ապահովագրությունը մտնում է վնասի կամ ռիսկային ապահովագրության դասի մեջ, ապա տարիֆների հիմքում դրվում է ապահովագրական ռիսկը բոլոր ապահովագրողների միջև բաշխելու սկզբունքը, որի դեպքում հաշվի է առնվում մասնագիտությունը, առողջության վիճակը, ապահովագրողի տարիքը:

Արտասահման ուղևորվող քաղաքացիների ապահովագրությունը պատասխանատվության բարդ և կոմպլեքս ձև է, որը հնարավոր չէ որակել միանշանակորեն: Չնայած ավանդաբար ընդունված է այն դասել դժբախտ պատահարներից ապահովագրությանը, դրանում առկա են և գույքային, և անհապաղ օգնության ապահովագրության տարրեր: Այս ձևի հիմնական բովանդակությունը բժշկական ծախսերի փոխհատուցումն է, որի պահանջը կարող է առաջանալ արտասահմանյան ուղևորության ընթացքում հանկարծակի հիվանդության կամ դժբախտ պատահարի դեպքում: Ի տարբերություն բժշկական ապահովագրության՝ այստեղ փոխհատուցման ենթակա են միայն այն ծախսերը, որոնք առաջանում են որպես հանկարծակի հիվանդանալու կամ դժբախտ պատահարի հետևանք, իսկ պոլիսը գործում է միայն տվյալ տարածքում: Արտասահմանյան ուղևորության մեկնող ուղևորների ապահովագրությունը ծածկվում է միայն արտասահմանյան պետություններում և չի տարածվում մշտական բնակության վայրի վրա:

Արտասահման ուղևորվող քաղաքացիների ապահովագրության կազմակերպումը հնարավոր է երկու սկզբունքով՝ փոխհատուցման և ծառայությունների մատուցման: Առաջին դեպքում անհապաղ օգնության տարրը բացակայում է: Ապահովագրողը ուղևորության ընթացքում ոչ միայն ինքնուրույն է վճարում բժշկական ծառայությունների համար, այլև իր վրա է վերցնում դրանց կազմակերպումը: Հայրենիք վերադառնալով՝ նա ներկայացնում է փաստաթղթեր և ապահովագրողից ստանում է փոխհատուցում այն ծախսերի համար, որոնք ներառված են ապահովագրական ծածկույթում: Լայն տարածում ունի ծառայությունների մատուցման ձևը: Ուղևորությունից առաջ հաճախորդը հայրենական ապահովագրական ընկերության հետ կնքում է ապահովագրական պայմանագիր, որը նրան երաշխավորում է պայմանավորված բժշկական ծախսերի վճարում, ինչպես նաև համապատասխան ծառայությունների մատուցում: Ապահովագրական պոլիսում նշվում են ծառայությունների օպերատիվ կենտրոնների հեռախոսահամարները, որոնցից որևէ մեկով ապահովագրողը պարտավոր է հայտնել հիվանդության կամ դժբախտ պատահարի մասին: Այդ պահից սկսած՝ ապահովագրողի օգնություն ցույց տալու պարտավորությունը ստանձնում է օպերատիվ կենտրոնը:

Բժշկական ապահովագրություն: Ազգաբնակչությանը հիվանդության դեպքում սոցիալական օգնություն տրամադրելն ունի հարուստ ավանդույթներ: Ռեռես Հիմ Չոռնում և Հիմ Չունաստանում գործել է ապահովագրության այս ձևը՝ որոշակի սահմանափակումներով: Սկզբում տարածված է եղել հիվանդանոցային ապահովագրությունը, հատկապես Անգլիայում և Գերմանիայում: Հենց Գերմանիայում է 1883 թ. ընդունվել առաջին պետական օրենքը աշխատողների պարտադիր հիվանդանոցային ապահովագրության մասին: Հետագայում այն տարածում է ստացել աշխարհի մի շարք երկրներում:

Տարբերվում են պարտադիր և կամավոր հիմունքներով բժշկական ապահովագրությունները: Պարտադիր բժշկական ապահովագրությունը երկրում բնակչության սոցիալական պաշտպանվածության կարևոր տարրերից է, որը լուրջ դեր է կատարում

րում առողջության պահպանման և բժշկական օգնության կազմակերպման համար: Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնական նպատակը ապահովագրավճարների հավաքագրման ու կապիտալացման միջոցով քաղաքացիների բոլոր խավերին օրենսդրորեն հաստատված պայմաններով և երաշխավորված չափերով օգնություն տրամադրելն է:

Պարտադիր բժշկական ապահովագրությունը Արևմուտքում հիմնված է արտաբյուջետային ոչ պետական ապահովագրական ֆոնդերի վրա՝ ի հաշիվ վարձու աշխատողների պարտադիր ապահովագրավճարների և պետության կողմից գործատուներին մասնակի սուբսիդավորման:

Պարտադիր բժշկական ապահովագրությունում օգտագործվում է 2 մեթոդ: Գերմանիայում և Յուլանդիայում գործում է ծառայությունների մատուցման սկզբունքը: Դա նշանակում է, որ հիվանդը սպասարկվում է անվճար, ինչպես պետական առողջապահության համակարգ ունեցող երկրներում: Այդ դեպքում հիվանդը պարտավոր է ներկայացնել միայն ապահովագրության փաստը հաստատող պոլիսը: Բելգիայում, Ֆրանսիայում և Լյուքսեմբուրգում գործում է այլ սկզբունք՝ ծախսերի փոխհատուցման սկզբունքը: Այդ երկրներում ապահովագրողը պարտավոր է սկզբում ինքը վճարել բժշկական ծառայությունների համար, հետագայում դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխհատուցվում են հիվանդանոցների կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Դանիայում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում, առողջապահությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանց հատուկ հարկի առկայության:

Հանրապետությունում «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թ. դեկտեմբերի 26-ին, որը 2002 թ. նոյեմբերին ենթարկվել է փոփոխությունների: Այդ օրենքի ընդունումով հանրապետությունում սոցիալական ապահովագրության ոլորտի միջոցների գոյացման միակ աղբյուրը միասնական սոցիալական հարկն է: Առաջիկայում կրնդունվի նաև օրենք պարտադիր բժշկական ապահովագրության մասին, որը կլրացնի այս ճյուղում առկա բացը:

Կամավոր բժշկական ապահովագրություն (ԿԲԱ): Կամավոր բժշկական ապահովագրությունը հետապնդում է այն նույն սոցիալական նպատակը, ինչ պարտադիրը՝ քաղաքացիների ապահովագրման ֆինանսավորման ուղիով բժշկական օգնության երաշխիքի տրամադրում: Այն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. ԿԲԱ-ն, ի տարբերություն պարտադիրի, համարվում է ոչ թե սոցիալական, այլ առևտրային ապահովագրություն: Այն դասվում է կյանքի ապահովագրության ոլորտին:
2. ԿԲԱ-ն ՊԲԱ համակարգի լրացում է, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ստանալ պարտադիր բժշկական ապահովագրության ծառայությունների սահմանաչափերից ավելի փոխհատուցում՝ ծառայությունների կամ դրամական ձևով:
3. ՊԲԱ-ն օգտագործում է ապահովագրության բացարձակ, իսկ ԿԲԱ-ն՝ համեմատականության սկզբունքը: Ըստ ԿԲԱ պայմանագրի՝ ապահովագրողը ստանում է բժշկական ծառայության այն ձևերը և չափերը, որի համար վճարվել է ապահովագրավճարը:

4. ԿԲԱ ծրագրերին պետությունը չի մասնակցում, իրացվում են յուրաքանչյուր քաղաքացու կամ կոլեկտիվի պահանջներն ու հնարավորությունները:

Բժշկական ապահովագրության հիմնական ձևերը, հիվանդության առաջացման տնտեսական ու բժշկական վերականգնողական բնույթի հետևանքների, ապահովագրական ծածկույթի ծավալի, ապահովագրական տարիֆի և այլ հանգամանքների հետ կապված, տարբեր են:

Կամավոր բժշկական ապահովագրության առարկա են դժբախտ պատահարի կամ հիվանդության դեպքում ապահովադրին բժշկական օգնության անհրաժեշտությամբ պայմանավորված ծախսերը:

21.4. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ապահովագրական գործընթացներում պատմականորեն իրենց զարգացումն են ապրել ապահովագրական ռիսկի վերաբաշխման երկու հիմնական ձևերը՝ համատեղ ապահովագրությունը և վերաապահովագրությունը: Թվում է, թե երբ ապահովադրի կողմից առաջարկվող պատասխանատվության չափերը մեծ են ապահովագրողի կապիտալի հնարավորություններից, ապահովագրողը պետք է հրաժարվի նման գործարքներից: Սակայն ժամանակի ընթացքում այդ խնդիրը ստացել է իր լուծումը ռիսկի վերաբաշխման նշված ձևերի կիրառմամբ:

Ժամանակի առումով առաջինը կիրառվել է համատեղ ապահովագրությունը՝ որպես ապահովագրողների ապահովագրական ռեզերվների կուտակման միջոց, թեև հետագայում՝ վերաապահովագրության հանդես գալով, համատեղ ապահովագրությունը աստիճանաբար զիջել է իր դիրքերը: Բայց ամեն դեպքում դա լայն տարածում ունի Արևմուտքում, օրինակ՝ հենց անգլիական ապահովագրական շուկայում: Համատեղ ապահովագրությունը խոշոր գույքային ռիսկերի վերաբաշխման մեթոդներից մեկն է, թեև հազվադեպ է կիրառվում պատասխանատվության ապահովագրությունում: Այդ մեթոդի իրացումը պարզ է և կարող է կիրառվել շատ իրադրությունների համար՝ չնայած նրան, որ մեծ վնասների հավանականության դեպքերում ապահովագրողները վճարումներ կատարում են առանձին, միջնորդը խոշոր ռիսկի տեղաբաշխման համար ստիպված է կապվել մեծ քանակի ապահովագրողների հետ, որոնցից յուրաքանչյուրը հանձն է առնում փոխհատուցել միայն իրեն բաժին ռիսկի ծավալին համարժեք վնասի գումարը:

19-րդ դարի վերջերին ապահովագրության պրակտիկան ապահովագրողներին և ապահովադիրներին ցույց տվեց, որ կոոպերացման ավելի կատարելագործված ձև է վերաապահովագրությունը: Առաջին վերաապահովագրական ընկերությունը ստեղծվել է 1846 թ. Քյոլնում, քիչ ավելի ուշ՝ Մյունխենյան վերաապահովագրական ընկերությունը: Ռուսաստանում այդպիսի ընկերություն ստեղծվել է 1895 թ., որը սկզբում զբաղվել է ապահովագրական գումարի կամ փոխհատուցման ռիսկը իր վրա վերցնելով:

Վերաապահովագրությունում օգտագործվում է «ցեսիս» հասկացությունը, ինչը ռիսկի երկրորդային տեղաբաշխումն է կամ առաջին ապահովագրողից (անվանում են ցեդենտ) երկրորդ ապահովագրողին (անվանում են վերաապահովագրող կամ ցեսիոներ) ռիսկի լրիվ կամ մասնակի փոխանցման գործընթացը: Ռիսկի հետագա

փոխանցման դեպքում երկրորդ ապահովագրողը կոչվում է ռետրոցեդենտ, իսկ նրանից ռիսկ ընդունողը՝ ռետրոցեսիոներ:

Փոխանցված վերաապահովագրական շահը կրում է ալիմենտ, իսկ ստացվածը՝ «կոնտրալիմենտ» անվանումը:

Վերաապահովագրությունն ունի կարևոր իրավաբանական առանձնահատկություն: Պատասխանատվությունը ապահովագրման ռիսկի առունով ապահովադրի առաջ ամբողջությամբ կրում է առաջին ապահովագրողը, չնայած որ պայմանագիրը վերաապահովագրված է:

Վերաապահովագրությունում կիրառվում է կոմիսիոն պարզևատրման համակարգ: Կոմիսիան ապահովագրավճարի այն մասն է, որը ներառված է տարիֆային դրույքի մեջ և մնում է ցեդենտի մոտ, քանի որ վերջինս պատասխանատու է ապահովադրի առաջ ապահովագրական լրիվ գումարի չափով և սպասարկում է ամբողջ ապահովագրական պայմանագիրը: Հետագայում, ռիսկի և ապահովագրավճարի մի մասը այլ ապահովագրողի փոխանցվելով, ինքը մնում է որպես միջնորդ՝ իրեն պահելով կոմիսիոն պարզևավճարը:

Ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) վերաապահովագրությունը պատմականորեն համաշխարհային ապահովագրական շուկայում առաջացել է առաջինը: Այդ մեթոդի էությունն այն է, որ առաջին փոխհատուցող ապահովագրական ընկերություն-ցեդենտը ռիսկերը վերաապահովագրելիս վերաապահովագրողի հանդեպ չի ունենում երկարաժամկետ պայմանագրային պարտավորություն:

Վերաապահովագրության պայմանագրային էությունն այն է, որ վերաապահովագրման հարաբերությունների մասնակիցների միջև կնքվող վերաապահովագրության երկարաժամկետ պայմանագրով ապահովագրող-ցեդենտը փոխանցում, իսկ վերաապահովագրողը ընդունում է բոլոր այն ռիսկերը, որոնց չափերը ճշգրիտ սահմանվում են վերաապահովագրման պայմանագրով:

Վերաապահովագրության ժամանակ վերաապահովադիրը վերաապահովագրողին որպես կանխավճար փոխանցում է ստացված ապահովագրավճարի մի մասը: Դրանով վերաապահովագրողը մասնակիորեն իր վրա է վերցնում ապահովագրական վճարումների հավաքագրմանը մասնակցելու պատասխանատվություն, ուստի վերաապահովագրության գործառնությունների և վերաապահովագրողների վճարունակության գնահատման հարցերը երկուսի համար էլ հավասարապես կարևոր են:

Ապահովագրողների միություններ: Ապահովագրողների միությունները ստեղծվում են կամավորության սկզբունքով՝ նպատակ հետապնդելով կողողինացնել ընկերությունների գործունեությունը, պաշտպանել իրենց անդամների շահերը և իրականացնել համատեղ ծրագրեր: Այդ միություններն իրավունք չունեն անմիջականորեն զբաղվել ապահովագրական գործունեությամբ: Ապահովագրական շուկայի համեմատաբար ոչ մեծ ծավալի պայմաններում պետությունն ունի նրա բոլոր մասնակիցների նկատմամբ վերահսկողություն հաստատելու հնարավորություն: Ապահովագրական շուկայի մասշտաբների ընդլայնմանը զուգընթաց նվազում են պետական կարգավորման հնարավորությունները: Անհրաժեշտություն է առաջանում վերահսկողական ֆունկցիայի մի մասը փոխանցել ինքնակարգավորվող կազմակերպություններին, որոնք միավորում են ապահովագրական շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցներին:

Բազմաթիվ երկրներում գործում են ապահովագրական ինքնակարգավորվող կազմակերպություններ, որոնք մի կողմից պաշտպանում են ապահովագրական շուկայի մասնակիցների շահերը, իսկ մյուս կողմից հաստատում և վերահսկում են վարքագծի որոշակի կանոններ և սկզբունքներ: Դրանց թվին են դասվում ազգային և տարածաշրջանային ապահովագրական միությունները: Որպես օրինակ կարող ենք բերել Ծովային ապահովագրության միջազգային միությունը, որի կազմի մեջ մտնում են ծովային ապահովագրությամբ զբաղվող ապահովագրական ընկերությունների ազգային միությունները:

Ապահովագրողների միավորման կարևոր ձև են Փոխադարձ ապահովագրական միությունները (ՓԱՄ), որոնք ստեղծվում են ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը ապահովելու նպատակով: ՓԱՄ–երը ներկայացնում են ինքնուրույն ընկերությունների ժամանակավոր միավորումներ, որոնց միջոցով լուծվում են որոշակի խնդիրներ մասնակիցների կամավոր համաձայնության հիմքի վրա:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ՓԱՄ–երի բազմապիսի ձևեր: Օրինակ՝ Գերմանիայում գործում են Ավիափոխադրումների գերմանական օդային ՓԱՄ–ը, Ատոմային հրթիռների ռիսկերի ապահովագրման գերմանական ընկերությունը:

Ռուսաստանի դաշնությունում լայն տարածում ունեն տարածաշրջանային ՓԱՄ–երը, որոնք ստեղծվում են տարածաշրջանային ապահովագրական շուկայի ծավալները մեծացնելու և տարածաշրջանում ապահովագրավճարների ավելի մեծ մասնաբաժին ունենալու նպատակով:

Արևմտյան ՓԱՄ–երը աշխատում են ճկուն ռեժիմով: Դրանց մասնակիցները պատասխանատվություն են կրում պայմանագրով նախատեսված ընթացիկ պարտավորությունների շրջանակներում: Նշենք նաև, որ տարբեր երկրներում ծածկման ծավալները տարբեր են, որը պայմանավորված է տվյալ երկրի օրենսդրությամբ և գոյություն ունեցող ավանդույթներով:

21.5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Ապահովագրական համակարգը, հանդիսանալով ֆինանսական համակարգի կարևոր օղակներից մեկը, օբյեկտիվորեն պետք է առնաձեռնա իր ֆինանսական կայունությամբ: Դա կարող է տեղի ունենալ, եթե միազումար արդյունքում ֆինանսապես կայուն լինեն այդ համակարգը ձևավորող բաղադրիչները: Ուստի անհրաժեշտ է իմանալ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության հաստատման և վճարունակության գնահատման խնդիրները:

Ապահովագրական կազմակերպության ֆինանսական մոդել է նրա հաշվապահական հաշվեկշիռը: Հաշվեկշռի ակտիվում ներառվում են ապահովագրական ընկերության գույքը, նրա սեփական միջոցները: Հիմնական ակտիվային հոդվածներ, որոնք ներկայացնում են ապահովագրողի ներդրումները, համարվում են հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, ինվեստիցիաները, ապահովագրական պահուստներում վերաապահովագրողների բաժինը, դեբիտորական պարտքը, դրամական միջոցները:

Միջոցների գոյացման աղբյուրների կառուցվածքում առանձնացվում են պասիվի երկու հիմնական բաժինները՝ սեփական կապիտալը և ներգրավված միջոցները: Ապահովագրական ընկերության սեփական կապիտալի կազմը նման է ցանկացած տնտեսավարող սուբյեկտի կապիտալի կազմին և իր մեջ ներառում է կանոնադրական կապիտալը, պահուստային կապիտալը, չբաշխված շահույթը, նպատակային ստացումները և ֆինանսավորումը: Սեփական կապիտալի ձևավորման հիմնական աղբյուրներ են հիմնադիրների ներդրումները, շահույթից մասհանումները և ինվեստիցիոն գործունեությունից եկամուտները, ինչպես նաև արժեթղթերի լրացուցիչ էմիսիայից ներգրավվող միջոցները:

Ներգրավված միջոցների կառուցվածքը պայմանավորված է ապահովագրական բիզնեսի յուրահատկությամբ, իսկ դրանց գոյացման հիմնական աղբյուրները հետևյալն են.

- ապահովագրական պահուստները, որոնք ձևավորվում են ի հաշիվ ապահովագրողների ապահովագրավճարների և նախատեսված են ապագա ապահովագրական վճարների համար և կազմում են ներգրավված միջոցների ամենամեծ բաժինը,
- ապահովագրական, համատեղ ապահովագրության և վերաապահովագրության գործառնությունների մասով կրեդիտորական պարտավորությունները,
- կրեդիտորական պարտավորությունները այն գործառնությունների մասով, որոնք անմիջականորեն կապ չունեն ապահովագրական գործունեության հետ:

Ապահովագրական ընկերության ֆինանսական արդյունքը ընդհանուր ձևով որոշվում է որպես նրա կողմից ստացված եկամուտների և կատարված ծախսերի տարբերություն: Չնայած այդ ամենին՝ ապահովագրական ընկերությունների եկամուտները և ծախսերը կառուցվածքային առումով դրսևորում են ապահովագրական գործին բնորոշ յուրահատկություններ:


Ապահովագրական ընկերության բոլոր եկամուտները բաժանվում են երեք խմբի.

1. եկամուտներ ապահովագրական գործառնություններից,
2. եկամուտներ ինվեստիցիոն գործունեությունից,
3. այլ եկամուտներ, որոնք ուղղակիորեն կապված չեն ապահովագրական գործունեության իրականացման հետ:

Ըստ ժամանակի իրականացման հատկանիշի՝ ծախսերը կարող են լինել միաժամանակյա և ընթացիկ:

Ապահովագրողի ծախսերը ձևավորում են ապահովագրական ծառայության ինքնարժեքը, որը հաշվի է առնվում ֆինանսական արդյունքի և հարկային բազայի որոշման դեպքում:

Ապահովագրական ընկերության ֆինանսական արդյունքը ապահովագրողի արտադրաֆինանսական գործունեության արդյունքն է և հաշվարկվում է ժամանակի որոշակի փուլում որպես եկամուտների և ծախսերի տարբերություն: Ստացված շահույթը ենթակա է հարկման՝ համաձայն շահութահարկի մասին գործող օրենքի: Ֆինանսական արդյունքի հաշվարկման գործընթացը կարող է ներկայացվել ստորև բերվող գծապատկերով.



Ապահովագրական ծառայությունների ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերը					
Հատկացումներ պահուստներին ապահովագրական պատահարներից վնասները ֆինանսավորելու համար	Վճարների փոխատուցման ծախսերը ստ վերապահովագրական պայմանագրի	Ըստ վերապահովագրական պայմանագրի կոմիսիոն պարգևատրման ծախսեր	Գործերի վարձան ծախսեր	Հիմնական միջոցների վարձակալության ծախսեր	Ապահովագրական գործունեության հետ կապված այլ ծախսեր

↓

Հավասար է

↓

Ապահովագրողի ֆինանսական արդյունք

↓

Հանել

Մասհանումներ պահուստներին	Եկամուտներ փայտածանակցություններից	Եկամուտներ արժեթղթերից	Շահութահարկի արտոնություններ
---------------------------	------------------------------------	------------------------	------------------------------

↓

Հավասար է

↓

Շահութահարկի հաշվարկման հարկվող բազան

Գծապատկեր 21.1. Ֆինանսական արդյունքի հաշվարկման գործընթացը ապահովագրական ընկերությունում

Ապահովագրությունում շահույթը դիտարկվում է ոչ միայն որպես իրական ֆինանսական արդյունք, այլև այսպես կոչված «նորմատիվային շահույթ», որն էլ տարիֆների հաշվարկում ներառվում է ապահովագրական ծառայության արժեքի մեջ: Ապահովագրական ընկերությունների նորմատիվային շահույթը այն շահույթն է, որը ստացվում է ապահովագրական գործառնություններից և ներառվում է բրուտոտո հավելավճարի կազմում:

Ապահովագրական ընկերությունների ֆինանսական գործունեության գնահատման համար, բացի շահույթից, օգտագործվում են նաև այլ բացարձակ և հարաբերական ցուցանիշներ: Բացարձակ ցուցանիշներից են.

- ապահովագրության ընդունված ձևերի քանակությունը,
- ապահովագրության կնքված պայմանագրերի թիվը,
- ապահովագրության ընդհանուր գումարը,
- ապահովագրավճարների ծավալը,
- միագումար վճարումները,
- եկամուտների և ծախսերի ծավալը,
- ապահովագրական պահուստների ծավալը,
- զուտ ակտիվների ծավալը:

Հարաբերական ցուցանիշներից են.

- շահութաբերությունը,
- ըստ ապահովագրության ձևերի վճարների մակարդակը,
- ծախսերի մակարդակը,
- ապահովագրական և ոչ ապահովագրական գործունեությունից շահույթի հարաբերությունը:

Վերոնշյալ ցուցանիշները հնարավորություն են ընձեռում գնահատել ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակը:

Ապահովագրական ընկերության ֆինանսական կայունություն ասելով հասկացվում է բոլոր պարտավորությունները ունեցած ամբողջ գույքով և միջոցներով կատարելու կարողությունը:

Ապահովագրական ընկերության ֆինանսական կայունությունը ապահովվում է բավարար կանոնադրական կապիտալով, որը համարժեք է ապահովագրական պատահարներին բաժին ընկնող պարտավորություններին: Որպես ապահովագրողի ֆինանսական կայունության չափորոշիչ ընդունված է համարել պարտավորությունները կատարելու համար ապահովագրական պահուստների և ազատ սեփական միջոցների բավարարությունը: Ֆինանսական կայունության առումով ամենակարևոր ցուցանիշը ապահովագրողի վճարունակությունն է:

Ապահովագրական ընկերության վճարունակություն ասելով հասկացվում է ժամանակի ցանկացած պահին պարտավորությունները կատարելու նրա կարողությունը:

Ըստ ապահովագրավճարների պարտավորությունները կատարելու ֆինանսական ապահովվածության՝ ապահովագրողի համար կարևորվում են ապահովագրական պահուստները, ինչպես նաև պարտավորություններից ազատ սեփական միջոցները, որոնք ընդունված է անվանել մաքուր ակտիվներ: Վերջիններիս նշանակությունն այն է, որ ապահովագրական պահուստների միջոցները բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են ծածկվել այլ ակտիվների

հաշվին: Ապահովագրական ընկերության վճարունակության գնահատումը կարող է նույնացվել սեփական ազատ միջոցների բավարարության չափերի գնահատմանը, որոնք ակտիվների հետ միասին օգտագործվում են ապահովագրական պարտավորությունների կատարման համար (տես ստորև ներկայացվող զծապատկերը):

Վճարունակության մարժան	Ակտիվներ	Մաքուր ակտիվներ
Պարտավորություններ		Ակտիվներ, որոնք ծածկում են ապահովագրական պահուստները

Գծապատկեր 21.2. Վճարունակության պայմանը ապահովագրական ընկերություններում

Ապահովագրողի ակտիվների գերազանցումը պարտավորություններին խոսում է վճարունակության մարժայի առկայության մասին, որը անհրաժեշտ է ապահովագրական պահուստների անբավարար լինելու դեպքում պարտավորությունները փոխհատուցելու համար:

21.6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրապետության անկախացումից հետո՝ անցած տասնամյակում, ապահովագրական շուկայի զարգացման և ապահովագրական ընկերությունների ստեղծման գործընթացի համար բնութագրական են տարերայնությունը և պետության կողմից դրանց գործունեության թույլ վերահսկողությունը: 1991–1996 թթ. հանրապետության ապահովագրական շուկայում տեղի ունեցավ գործող ապահովագրական ընկերությունների թվաքանակի կտրուկ աճ, դրանց թիվը հասավ 82–ի: Ստահոգիչ էր հատկապես ապահովագրական ընկերությունների լիցենզավորման գործընթացը, որը սկսեց որոշ չափով կանոնակարգվել 1993 թ. ՀՀ ֆինանսների նախարարի ապրիլի 12–ի թիվ 28 հրամանով՝ «ՀՀ տարածքում գործող ապահովագրական գործունեությանը զբաղվելու ժամանակավոր կարգ»–ով: 1996 թ. հունիսին ապահովագրության ոլորտում կուտակված հիմնահարցերի լուծման նպատակով ֆինանսների նախարարության կազմում ստեղծվեց առանձին կառուցվածքային ստորաբաժանում՝ ապահովագրական տեսչություն:

Հանրապետությունում ապահովագրական գործի զարգացման համար կարևոր դեր խաղաց 1996 թ. նոյեմբերի 19–ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա էլ 1996 թ. նոյեմբերի 29–ին ընդունվեց «ՀՀ տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության թիվ 368 որոշումը:

Ներկայումս կարելի է նշել, որ ՀՀ-ում ավարտվել է ապահովագրական հարաբերությունների կարգավորման օրենսդրական դաշտի ձևավորման առաջին փուլը:

2003 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործում էր 25 ապահովագրական ընկերություն, այդ թվում՝ 11 ՍՊԸ, 13 ՓԲԸ, 1 ԲԲԸ և 5 ապահովագրական բրոքեր, այդ թվում՝ 3 ՍՊԸ և 2 անհատ ձեռներեց:

Հանրապետության ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալի կառուցվածքում գերակայող մասը բաժին է ընկնում կանոնադրական կապիտալին՝ 93%, 5.4%-ը՝ ֆինանսատնտեսական գործունեության շահույթն է: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ապահովագրական շուկայի տարեկան ցուցանիշների՝ 2001 թ. դրությամբ ապահովագրական գործունեության շահույթը կազմել է 237.031 հազ. դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է 31.4%-ով: 1997 և 1998 թթ. ապահովագրական գործունեությունը եղել է վնասաբեր: Ապահովագրական ընկերություններին վերաբերող ընդհանուր միտումները բերված են բաժին II, թիվ 4.2.2. աղյուսակում:

Հայկական ապահովագրական ընկերությունների պարտավորությունների հիմնական մասն ունի ապահովագրական բնույթ: Հայկական ապահովագրական ընկերությունները վերաապահովագրում են ստանձնած ապահովագրական պարտավորությունների 90–98%-ը, որը գլխավորապես պայմանավորված է ավիացիոն և բեռների ապահովագրության մեծ ծավալներով և դրանց գրեթե 100 տոկոսանոց վերաապահովագրությամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ ապահովագրական համակարգում հավաքագրված ապահովագրավճարների հանրագումարը 2000 թ. արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 0.13%-ը, իսկ մեկ շնչին ընկնող ապահովագրավճարների ծավալը՝ 350 դրամ: Այս նույն ցուցանիշները 1999 թ. համար կազմել են՝ համապատասխանաբար՝ 0.1% և 285 դրամ, իսկ 1998 թ. համար՝ 0.09% և 228 դրամ: Ակնհայտ է, որ զարգացած երկրների համեմատ նշված ցուցանիշների մակարդակը չափազանց ցածր է (ԱՄՆ-ում մեկ շնչին ընկնող ապահովագրավճարների ծավալը կազմում է 3000 ԱՄՆ դոլար):

Հայկական ապահովագրական ընկերությունների կողմից հիմնականում իրականացվում են ապահովագրության հետևյալ տեսակները.

- դժբախտ դեպքերից ապահովագրություն,
- բեռների ապահովագրություն,
- բժշկական ապահովագրություն,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ապահովագրություն,
- փոխադրամիջոցների ապահովագրություն,
- երրորդ կողմի հանդեպ փոխադրամիջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն,
- ավիացիոն ռիսկերի ապահովագրություն,
- շինմոնտաժային ռիսկերի ապահովագրություն,
- շինարարների մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն,
- գրավի ապահովագրություն, ֆինանսական ռիսկերի ապահովագրություն:

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական գործունեության իրավական դաշտի ձևավորումը նպաստեց քաղաքակիրթ ապահովագրական շուկայի առաջացմանը, որի շնորհիվ ներկա ժամանակահատվածում մեր հանրապետության ապահովագրական շուկայում ստեղծված վիճակը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

1. օրենսդրությամբ հավասար պայմաններ են ստեղծվել ապահովագրական շուկայի սուբյեկտների ձևավորման, գործունեության և զարգացման համար,
2. ապամոնոպոլացվել է ապահովագրական գործը,
3. օրենսդրորեն կարգավորվել է ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովումը,
4. ապահովագրական ընկերությունների և ապահովագրական բրոքերների արտոնագրում և գրանցում,
5. ապահովագրական գործունեության նկատմամբ պետական վերահսկողության սահմանում և պետական կառավարման մարմնի առկայություն,
6. ապահովագրական, վերաապահովագրական և ֆինանսատնտեսական գործունեության տարեկան աուդիտի անցկացում ու նրանց հաշվետվությունների, ապահովագրական գործարքների հաշվառման ձևերի ու ցուցանիշների սահմանում,
7. Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկայի թափանցիկությունը արտասահմանյան կապիտալի համար,
8. ապահովագրական սուբյեկտների կողմից ապահովագրողների, բրոքերների, վերաապահովագրողների ազատ ընտրություն:

Ելնելով ապահովագրական գործի կազմակերպման միջազգային փորձից, նկատի ունենալով հանրապետության ներկա տնտեսական իրավիճակը, իրավական դաշտում առկա թերությունները և ապահովագրական ընկերությունների ֆինանսական թույլ կարողությունները՝ անհրաժեշտ է ապահովագրական շուկայի զարգացման ուղղությամբ լուծել հետևյալ խնդիրները.

1. մշակել ՀՀ ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացման ռազմավարությունը,
2. իրականացնել ապահովագրական շուկան ֆինանսական շուկայի այլ հատվածների հետ ինտեգրացմանն ուղղված մոտեցումները և ձևավորել դրա անհրաժեշտ նախադրյալները,
3. մշակել միջազգային ապահովագրական շուկայի հետ ազգային ապահովագրական շուկայի ինտեգրացման քաղաքականությունը,
4. իրականացնել համալիր միջոցառումներ ապահովագրական բիզնեսի և կարգավորման ու վերահսկողության ոլորտների որակյալ կադրերի պատրաստման ու վերապատրաստման ուղղությամբ,
5. հստակեցնել ապահովագրական գործունեության պետական կարգավորման քաղաքականությունն ու դրա գերակայությունները:

ՀՀ ապահովագրական համակարգում կատարվող բարեփոխումները սերտորեն կապված են հանրապետության տնտեսական և սոցիալական ոլորտներում իրականացվող համակարգային ու ինստիտուցիոնալ բարեփոխումների հետ, քանի որ ապահովագրությունը՝ իրեն բնորոշ ֆինանսական հարաբերություններով, գործունեության մեխանիզմներով, հանդես է գալիս որպես ազգային անվտանգության չափազանց կարևոր բաղադրամաս և ծառայում է ազգային, պետական խնդիրների լուծմանը:

ՀՀ ապահովագրության ոլորտում անհրաժեշտ է նաև պարտադիր ապահովագրության տեսակների ներդրումը: Հարկ է նշել, որ պարտադիր ապահովագրության տեսակները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն, և դրանց նպատակը բնակչության շահերի պաշտպանությունն է: Այդպիսի ապահովագրության տե-

սակներից են ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության, հրդեհից և բնական աղետներից շենքերի և շինությունների, գործատուի պատասխանատվության, ծերության, հաշմանդամության, հիվանդություններից, գործազրկությունից ապահովագրությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացած երկրներում կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների միջոցները՝ ապահովագրական պահուստները, տվյալ երկրում ներդրումների իրականացման կարևոր աղբյուր են, ուստի ՀՀ-ում ևս կյանքի ապահովագրության համար անհրաժեշտ է պետական մակարդակով ստեղծել համապատասխան նախադրյալներ՝ կապված սոցիալ-տնտեսական կայունության, տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովման հետ:

Հանդիսանալով ֆինանսական շուկայի առանձին օղակ՝ ապահովագրությունը մեծ ազդեցություն ունի տնտեսության իրական հատվածի վրա և նպաստում է ֆինանսական շուկայի այլ հատվածների կայունության պահպանմանը:

Ներկա փուլում ՀՀ օրենսդրությունը արգելում է բանկային և ապահովագրական գործունեության համատեղումը, չնայած մի շարք երկրներում բանկերը և ապահովագրական մարմինները զբաղվում են գործունեության այս երկու տեսակներով միաժամանակ: Այնուհանդերձ հանրապետությունում որդեգրված միջազգային չափանիշներին համապատասխանող քաղաքականությունը արդարացված է նրանով, որ ոչ բոլոր ֆինանսական հաստատություններն են ի վիճակի միաժամանակ կառավարել ռիսկերի այս խոշոր բաղկացուցիչ մասերը: Ապահովագրական շուկայի զարգացման ցածր մակարդակը ներկայումս ՀՀ-ում սահմանափակում է նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների և, հատկապես, փոխատվական կապիտալի ու արժեթղթերի շուկայի զարգացումը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված ապահովագրության անհրաժեշտությունը և ի՞նչ դեր է կատարում հասարակությունում:
2. Ո՞րն է ապահովագրության տնտեսական բովանդակությունը և օրենսդրորեն ինչպե՞ս է կարգավորվում:
3. Որո՞նք են ապահովագրության տեսակները, և ովքե՞ր են մասնակից կողմերը:
4. Ի՞նչ է նշանակում ոչ կյանքի ապահովագրություն, որո՞նք են օբյեկտներն ու տեսակները:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում կյանքի ապահովագրությունը և ինչպիսի՞ տեսակներ ունի:
6. ՀՀ-ում ինչպե՞ս է կազմակերպվում ապահովագրության գործընթացը:
7. Ի՞նչ է նշանակում վերաապահովագրություն: Ովքե՞ր են մասնակիցները, և ինչ տնտեսական պարտավորություններ են ծագում տվյալ գործընթացում:
8. Ինչո՞վ է գնահատվում ապահովագրական կազմակերպության գործունեությունը, և ի՞նչ ֆինանսական մոդել գոյություն ունի:
9. Ինչպիսի՞ վիճակում է ապահովագրական գործը ՀՀ-ում, և ի՞նչ զարգացման հեռանկարներ կան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ կառավարության աշխատակազմի «Պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ, Երևան, 1998թ.:
2. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 30.06.96թ.):
3. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 30.06.96թ.):
4. ՀՀ օրենքը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկացման մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 23.10.2001թ.):
5. ՀՀ օրենքը «Բանկային գաղտնիքի մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 07.10.96թ.):
6. ՀՀ օրենքը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 24.11.2004թ.):
7. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի մեթոդիկան» (ՔԱՄԵԼՍ):
8. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը:
9. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը»:
10. Լ. Բաղանյան, Բանկային գործի հիմունքներ, ուսում. ձեռն., Երևան, «Տնտեսագետ», 2003թ.:
11. Ս. Նահապետյան, «ՀՀ բանկային օրենսդրություն», Երևան, «Տիգրան Մեծ», 2003թ.:
11. Ա.Ս.Սուքիասյան, Առևտրային բանկերի գործունեության տնտեսական կարգավորման արդի հիմնախնդիրները, Մենագրություն, Երևան, «Տնտեսագետ», 2005թ.:
12. Ա.Սուվարյան, Դ.Սահակյան, Ռ.Սահակյան, Բյուջետավորումը որպես առևտրային բանկերի ֆինանսների օպերատիվ և արդյունավետ կառավարման միջոց, «Տնտեսական կայունացման և զարգացման հիմնախնդիրները», ԵՊՏԻ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 18-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2003թ.:
13. կՏԱՈՂՈՑԿԱՌ Պա՛ջԿԱՖՎՏԻՑԻ ռՈՎՍՏՉ ԸՐՎԱՎՈՒՐ (IV ՍՉՈՐՑՈՍ 2005 չՏՊՈ), ԼԸ «ԸՀ-ԽԸ», ԺՐԿՉՈՎ, 2006չ.
14. ըՈՎՍՏՉԻՍՈՒՐ ՐՈՐՑԿՎՈ ՀՏՐՐՈՒՐ, ԺՈՐՑՏԱՖՈՒՐ ՍՎՈՅՈ ՈՈՎՍՈՐՈ, 2. 3-Լ ՑՏՎՈԼ, Ծ., 1995.
15. ԺՏԱՈՎ Ա.Ժ.Ի. Ռ.ՊՐ., ԺԿՎՖՀՐ, ՈՈՎՍՏՉՐՍՏԿ ՊԿՍՏ Ռ ՊԿՎԿԶՎՏ-ՍՐԿՊՈՑՎՈՒՐ ԽՏԱՌՑՈՒՍՈ, ԽԿՐ. Ր ՈՎՅԱ., Խ., 1991.
16. ՀՏՊՁԿՐ ԽԿՐՏՁ ԾՈՏԱԿՐ, ԺՈՉՈՊ Ժ., “ԹՈՎ-ՂԾԾ”, ԽՏՉՐԿՎԿՎՎՕԿ ՊԿՎՖՀՐ Ռ ՈՈՎՍՏՉՐՍՏԿ ՊԿՍՏ, ԽԿՐ. Ր ՈՎՅԱ., Ծ., 2000.
17. ՀՏԾԾ Կ., ըՈՎՍՏՉՐՍՈՒՐ ՎԿՎԿՊՁՎԿՎՑ, ԽԿՐ. Ր ՈՎՅԱ., Ծ., “ԺԿՍՏ”, 1995.
18. ըՈՎՍՏՉՐՍՈՒՐ ԽՏՐՑԻԿԱՖ, Ծ., «ԽԿԾԼԾՁՆԽ», 1994.
19. ըՈՎՍՏՉՐՍՏԿ ՊԿՍՏ: ՐՑՐՈՑԿՅՈՒՓԿՐՍՏԿ ՐԾՍՏՉՏՊՐՑՉՏ, Ծ., ԼԾՊ. ԸԿ “ԽՏՎՐՈՍՑ-ՈՈՎՍՈՐ”, 1998.
20. ԺՐՏՐՍՈՎ Թ., ԽՏՉՐԿՎԿՎՎՕՐ ՍՏՎԿՐՒՓԿՐՍՈՒՐ ՈՈՎՍ: ԾՈՐՈՉԱԿՎՈԿ Ռ ՏԿՐՈՓՈՐ, Ծ., “ԹՐԿ ՊՍ՝ ՉՈՐ”, 1993.
21. ԾՈՐՍՈՒՓԿՎՍՏ Շ., ԶԿՎՍՏՅՆՈՒՐ Ռ ՏՐՀՈՎՈՂՈՓՈՒՐ ՐՈՏՑՑ ՈՈՎՍՈ, ՑԿՏՐՈՒՐ Ռ ԽՐՈՍՑՈՒՍՈ, Ծ., ԿԿԿ ԼԾՊՈՑԿԱՖՐՑՉՏ ԽՏՎՐՈՍՑՈՒՎՅՏՉՈՒՐ ԽՏՎՍՈՎՈՒՐ: “ԺԿՍՈ”, 1998.
22. ԾՈՍ-ԺՏՑՎ Ժ., ըՈՎՍՈ ՎՈ ՐՈՉՉՈՉՈՒՔՈՒՐՐ ՐՕՎՍՈԼ, Ց. 1-2, Ծ., “ՂՈՎՈՎՐՈ Ռ ՐՑՈՑՈՐՑՈՒՍՈ”, 1994.
23. ըԾՉՈՍՖՊ ը., ԶԿՎՈՍՈ ՈՈՎՍՏՉՐՍՏՅՏ ՊԿՍՈ, Ծ., “ԺԼԽ”, 1994.
24. ԾԿՐՍՈՐՏՉ Թ.Ժ., ՂՈՎՈՎՐՍՏՕՐ ՈՎՈՍՈՅ 2 ՍՏՎԿՐՒՓԿՐՍՏՎ ՈՈՎՍԿ, Ծ., “ԼՎԻՐՈ-Ծ”, 1995.

ԲԱԺԻՆ 5

ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ՎՃԱՐԱՅԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ԳԼՈՒԽ 22

ՀՀ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

22.1. ՓՈՂԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

22.1.1. Մետաղական փողեր: Թղթադրամներ և վարկային դրամներ

Փողերի առաջացումը ոչ թե պատահական, այլ օրինաչափ երևույթ էր՝ պայմանավորված մարդկային պատմության զարգացման օբյեկտիվ ընթացքով:

Փողերը ծագել են նախնադարյան համայնական հասարակարգի քայքայման անցումային ժամանակահատվածում: Աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանման՝ բարբարոս զանգվածներից խաշնարածների առանձնացման հետևանքով անասունները վերածվում են փոխանակման գլխավոր առարկաների: Վերջինիս վառ ապացույցն են փողերի լատինական և հին ռուսական անվանումները: Այսպես՝ փողերի լատինական անվանումը՝ «pecunia», առաջացել է «pecus» – անասուն բառից, ինչպես և ռուսերեն «ՑՏՉՈՐ» բառը, որը ձևավորվել է թուրքական «տավար»՝ անասուն բառից:

Դեռևս հին հույն ողբերգակ Յոմերոսը (մ.թ.ա. VIII–VII դդ.) որպես արժեչափ կիրառում էր ցլերին: Օրինակ՝ ոսկյա զենքն ու զրահը գնահատվում էր 100 ցլերով: Անասունների թիվը հաշվառվում էր գլխաքանակով՝ լատինական «caput» բառով, ինչն էլ հիմք հանդիսացավ ժամանակակից «կապիտալ» և «կապիտալիզմ» բառերի առաջացման համար: Ժամանակակից Գերմանիայի տարածքում մ.թ.ա. I հազարամյակում գործում էին, այսպես կոչված, «կովե փողերը»: Ուշագրավ է այն փաստը, որ մի շարք պետություններում փողի գործառույթներն իրականացնում էին որոշ ապրանքատեսակներ:

Այսպես՝ հյուսիսային ժողովուրդների մոտ (Հյուսիսային Ամերիկա, Ալյասկա, Սիբիր) արժեչափի գործառույթն իրականացնում էր եղջերուն, այլ ազգությունների մոտ՝ շաքարը, փղոսկրը, մորթին, ափիոնը և այլն: Հին Մեքսիկայում, Հունդուրասում, Նիկարագուայում որպես մանր փողեր ծառայում էին կակաոյի հատիկները, Պերուի և Բոլիվիայի որոշ տարածաշրջաններում՝ պղպեղը, Ամերիկայի մեծ մասում՝ ծխախոտի տերևները, իսկ Մոնղոլիայում՝ աղյուսաթեյը: Աֆրիկայի շատ ցեղերի մոտ փողերի գործառույթն իրականացնում էր մեկ շիշ ռոմը: Հանրահայտ ճանապարհորդ

Պրժևալսկին 1 ոչխարի դիմաց «վճարում էր» 12–15, իսկ մեկ ուղտի դիմաց՝ 120–150 աղյուս: Իսկ հասարակածային Աֆրիկայում, Գվինեայում և Ռուսիայում արժեչափի և վճարաչափի գործառույթն իրականացվում էր ստրուկների միջոցով: Սպարտայում, Սենեգալում որպես փողեր կիրառվում էին երկաթաթիթեղները: Եգիպտոսի փարավոնները Սիրիայից որպես տուրք գանձում էին արծաթե օղակներ և երկաթե աղյուսներ:

Անհայտ է անտիկ աշխարհի մետաղական փողերի առաջացման ճշգրիտ վայրը: Այդուհանդերձ պատմաբանները գտնում են, որ առաջին դրամները հայտնվել են Չինաստանում մ.թ.ա. XII դարում, իսկ այնուհետև՝ մ.թ.ա. VII դարում, համաձայն Հերոդոտոսի, փոքրասիական Լիդիա պետությունում՝ Հիզես թագավորի տիրապետության տարիներին: Լիդիական փողերը ձուլվում էին էլեկտրից, այսինքն՝ ոսկու և արծաթի բնական համաձուլվածքից: Որո՞նք էին մետաղական դրամների շրջանառության բնորոշ առավելությունները վերոնշյալ ժամանակաշրջանում: Նախ՝ մետաղական փողերը զրեթե երբեք չէին վնասվում կամ մաշվում, ինչի շնորհիվ դրանց կարելի էր կուտակել և պահել երկար ժամանակ: Բացի այդ, դրանք հեշտությամբ բաժանվում էին առավել փոքր մասերի՝ դրանով իսկ օժանդակելով մանր առևտրային գործարքների իրականացմանը:

Առաջին ոսկյա մետաղադրամները ձուլվել են լիդիական մեկ այլ թագավոր՝ Քրեզի տիրապետության տարիներին՝ մ.թ.ա. VI դարում: Իսկ նույն ժամանակահատվածում Չինաստանում, Հնդկաստանում և Սիրիայում սկսում են ձուլվել բրանզե և պղնձե մետաղադրամներ:

Աստիճանաբար հիմնական դրամական մետաղները ձուլվում են ոսկուց և արծաթից, իսկ պղինձն ու բրոնզը սպասարկում են միայն մանր առևտրական գործարքները տեղական շուկայի շրջանակներում: Ուշագրավ է ոսկու և արծաթի հարաբերակցության էվոլյուցիան: Անտիկ ժամանակներում այն տատանվում էր 1:10–ից մինչև 1:16–ի սահմաններում, իսկ XX դարի սկզբներին՝ 1:38–1:39:

Փողերի աստիճանական տարածման գործընթացն առավել ակնառու դարձնելու նպատակով համառոտակիրոբեն դիտարկենք այդ ժամանակվա պատմաաշխարհագրական քարտեզը:

Հին Հունաստանի դրամները

Մ.թ.ա. VII–VI դարերում Հին Հունաստանի քաղաքների մեծ մասում սկսում են ձուլվել փողեր, որոնք ունեցել են տարբեր անվանումներ՝ տալանտ, մինա, ստատեր, դրահմա, օբոլ և այլն: Այդ տարիներին գործում էր հունական դրամական երկու համակարգ: Առաջինը հիմնված էր ոսկյա ստատերների վրա, մասնավորապես՝ Միլեթյան (մ.թ.ա. VII–Vդդ.), Ֆոկեյան (մ.թ.ա. VI–Vդդ.) և Պարսկական (մ.թ.ա. VI–IVդդ.) համակարգերը: Իսկ երկրորդ դրամական համակարգին են վերաբերում Եգինյան, Էֆբեյան, Կորինֆյան համակարգերը (մինչև մ.թ.ա. IV դար): Վերոհիշյալ մետաղական համակարգերը ստեղծվել էին Հունաստանում և հելենական երկրներում:

Բացի ոսկյա և արծաթյա դրամներից, Հին Հունաստանում ձուլվում էին նաև պղնձյա դրամներ՝ լեպտաներ:

Հռոմեական կայսրության դրամները

Առաջին հռոմեական փողերը ձուլվել են պղնձից և բրոնզից մ.թ.ա. 338թ. և անվանվել են ասսեր: Առաջին մետաղադրամները, որոնք ծանրակշիռ դեր ունեցան Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների տնտեսական կյանքում, հռոմեա-

կան արծաթե դենարիներն էին: Վերջիններիս կշիռն էապես կայունանում է հռոմեական կայսր Ներոնի (մ.թ. 54–68թթ.) կողմից իրականացված դրամական բարեփոխումների արդյունքում: Սակայն աստիճանաբար դենարիների որակը սկսում է վատանալ, և մ.թ. II դարում դրամցում արծաթի քանակությունը պակասում է շուրջ 2 անգամ: Հռոմեական դրամական համակարգը, որը հենվում էր Հուլիոս Կեսարի ոսկե դրամների, իսկ ավելի ուշ՝ ոսկյա սոլիդոսների վրա, գոյատևեց շուրջ 12 դար՝ մինչև 1203 թվականի Կոնստանդնուպոլսի թալանումը:

214թ. սկսվում են առավել խոշոր և ծանր արծաթե դրամների (4,7–5,3գ) հատումները, որոնց անվանում են անտոնինիաներ՝ ի պատիվ հռոմեական կայսր Մարկ Ավրելիոս Անտոնինոսի: Մ.թ. III դարի կեսերին անտոնինիաները շրջանառությունից դուրս են հանում դենարիներին, իսկ վերջիններս վերածվում են գրեթե պղնձե մետաղադրամների, քանի որ իրենց մեջ պարունակում էին արծաթի քիչ քանակություն:

Բյուզանդական դրամներ

Արծաթե դրամների, կամ, այսպես կոչված, հեքսագրամների ծուլումը Բյուզանդիայում բուռն կերպով սկիզբ է առնում մ.թ. 615 թվականին՝ բյուզանդական Հերակլես կայսրի տիրապետության տարիներին: Այնուհետև առաջ են գալիս ոսկյա բյուզանդական «նոմիզմները» կամ, ինչպես դրանց ներկայումս ընդունված է անվանել, «սոլիդները»: Վերջիններիս վրա մի կողմից պատկերված է կայսրի, իսկ մյուս կողմից՝ Քրիստոսի դիմապատկերները:

Բյուզանդական փողերը արևմտանվրոպական մետաղադրամների հետ առավել լայնամասշտաբ շրջանառության մեջ են գտնվել մ.թ. XI–XII դարերում:

Արևելքի դրամներ

Արևելքի հանրահայտ դրամների շարքին են դասվում Արաբական խալիֆաթի դիրհեմները՝ հիմնված հունական «դրահմ» փողի անվան վրա: Դիրհեմները ծուլվում էին խալիֆաթի տարածքի տարբեր կենտրոններում՝ Միջին Ասիայի քաղաքներում, Իրանում, Փոքր Ասիայում և Աֆրիկայում: Տարբեր դինաստիաների անվանումների հետ կապված՝ տարբերում էին աբբասիդյան, օմայյադյան և այլ դիրհեմներ, որոնք բոլորն ունեին մեկ ընդհանուր անվանում՝ քուֆիական փողեր («քուֆի») VII դարում Իրաքի ալ Քուֆե քաղաքում առաջացած նամակի յուրահատուկ ձև):

Այդ տարիներին պակաս կարևոր նշանակություն չունեին նաև սասանյան դրահմաները IV–VII դդ., որոնք, այնուամենայնիվ, իրենց շրջանառության ծավալներով գիջում էին դիրհեմներին:

Արևմտանվրոպական դրամներ

Արևմտանվրոպական դրամների շարքում առանձնանում էին գերմանական պֆենիգները, անգլո–սաքսոնյան պեննինները, Հունգարիայի, Չեխիայի դենարիները: Վերջիններս ծուլվում էին արծաթից՝ շուրջ 1,5 սմ տրամագծով, և դրանք բոլորը տարբերվում էին միմյանցից: Գերմանական փողերի մեծ մասը կշռում էին 1,2 գ, իսկ անգլո–սաքսոնյանները՝ 1,3–1,5 գ: Այնուհետև շրջանառության մեջ սկսում են ակտիվանալ ֆրիսլանդական պֆենիգները, հատկապես ներկայիս Նիդեռլանդների և Բելգիայի տարածքներում:

V–VI դդ. նշանավորվել են որպես ոսկու ուժգին ներհույք ֆրանկների երկիր: Հիմնականում խոսքը վերաբերում էր հռոմեական ոսկուն, որը մուտք էր գործում ռազմական ավարի տեսքով: Սակայն աստիճանաբար հռոմեական փողերը դուրս են գա-

լիս շրջանառությունից, և սկսվում է արծաթե, իսկ ավելի ուշ՝ ոսկե մետաղադրամների ծուլման գործընթացը: Անգլիայում ոսկեդրամների առաջին ծուլումը կատարվել է Յենրիխ III–ի, իսկ Գերմանիայում՝ Ֆրիդրիխ II–ի տիրապետության տարիներին: Սակայն ոսկու զանգվածային ծուլումը Գերմանիայում սկիզբ է առնում XIV դարից սկսած: Մինչ այդ շրջանառության մեջ էին գտնվում իտալական ֆլորինը և դուկատը:

Հայաստանի դրամներ

Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին դրամները վերաբերում են մ.թ.ա. VI–V դդ.: Դրանք Աքեմենյան, Միլթեյան և Աթենյան արծաթե դրամներ են: Մետաղադրամները Հայաստանում մեծ տարածում են գտել հելլենիստական դարաշրջանի (մ.թ.ա. IV դարի երկրորդ կես) սկզբից: Միջազգային առևտրի շնորհիվ Ալեքսանդր Մակեդոնացու (մ.թ.ա. 336– 323թթ.) արծաթե դրամները Փոքր Ասիայից և Միջագետքից թափանցում էին հայկական շուկաներ:

Մ.թ.ա. III դ. հայ արքաները՝ Արշամը, Քսերքսեսը, Արդիսարեսը Ծոփքում մետաղադրամներ էին հատում: Սրանք առաջին հայկական դրամներն էին: Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանից (մ.թ.ա. 189 թ.– մ.թ. 6 թ.) մեզ են հասել համեմատաբար մեծ թվով դրամներ: Միջազգային շրջանառություն հայկական դրամները կատարել են Տիգրան Մեծի գահակալության (մ.թ.ա. 95–55թթ.) տարիներին: Դրանք թողարկում էին ինչպես Հայաստանում (Արտաշատ, Տիգրանակերտ), այնպես էլ Սիրիայի (Անտիոք, Դամասկոս) քաղաքներում: Արաբական խալիֆայության կողմից Հայաստանը նվաճելուց (VII դ. երկրորդ կես) հետո դրամաշրջանառությունը կատարվում էր Օմայանների տոհմի, իսկ ավելի ուշ՝ Աբբասյանների դրամներով: Շրջանառության մեջ Արաբական խալիֆայության դրամները հանդես են եկել հիմնականում արծաթե դիրհեմներով և պղնձե ֆելսերով:

X դ. վերջից արծաթե դիրհեմները իրենց տեղը զիջում են բյուզանդական ոսկե դրամներին: Վերջիններս տարածաշրջանում հանդես են գալիս համաշխարհային դրամի դերում: Զուգահեռ շրջանառության մեջ սկսում են թափանցել սելջուկ տիրակալների մետաղադրամները:

XIII դ. 30–ական թվականներից սկսած՝ Հայաստանի դրամաշրջանառության մեջ թափանցում են մոնղոլական տիրակալների դրամները: Նրանց հիմնական թողարկումները եղել են արծաթե դիրհեմներն ու երկդիրհեմները և սակավաթիվ պղնձե ֆելսերը:

Հետագայում դրամաշրջանառությունը Հայաստանում սպասարկվում էր թուրքական ծագման մահմեդական տոհմերի դրամներով:

XVI դ.–ից սկսած՝ Հայաստանում դրամաշրջանառությունը սպասարկվում է հիմնականում իրանական շահերի դրամներով:

XVII դ.–ում շրջանառությունում նկատվում է արևմտաեվրոպական թալերների զանգվածային թափանցում:

Թղթային դրամանիշերը ստորաբաժանվում են 2 տեսակների.

1. պետական, որոնք թողարկվում են զանձապետարանների կողմից (զանձապետական տոմսեր),
2. վարկային կամ բանկային, որոնք կոչվում են բանկային տոմսեր կամ բանկնոտներ (bank notes).

Գանձապետական տոմսերն ընդունված է անվանել ուղղակի թղթադրամներ ի տարբերություն բանկնոտների, որոնք իրենց էությանը համալրում են վարկային փո-

ղերի շարքը:

Պատմականորեն թղթային դրամանիշերը ծագել են վարկային փողերից ավելի ուշ, քանի որ բանկնոտներն առաջացել են վարկային հարաբերությունների զարգացմանը համընթաց:

Թղթադրամները համարվում էին «լիարժեք» դրամանիշեր, քանի որ առավել հարմար էին շրջանառության տեսանկյունից, ինչն էլ հիմք հանդիսացավ մետաղական փողերից թղթադրամներին անցնելու համար: Ուստի, շրջանառության մեջ թղթադրամների երևան գալը պայմանավորված էր ապրանքադրամական հարաբերությունների համեմատական զարգացմամբ և թղթային դրամանիշերի նկատմամբ վստահության բարձրացմամբ:

Թղթադրամների առաջացման պատմությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է մ.թ.ա. I դարին, իսկ առաջին թղթային փողերը եղել են կաշվե փողերը: Այդ տարիներին Չինաստանում հայտնվեցին սպիտակ եղջերվի մորթուց կարված առաջին «թղթադրամները», որոնք քառանկյուն էին և իրենց վրա կրում էին մի շարք տարբերանշաններ ու կնիքներ: Դրանք օժտված էին տարբեր գնողունակությամբ և պարտադիր կարգով (ընդհուպ մինչև մահվան սպառնալիքի տակ) շրջանառվում էին բոլոր ոլորտներում: Այդ ժամանակաշրջանում թղթադրամների ծագումը կապված էր Չինգիզ խանի թռռան` Խուբիլայա խանի անվան հետ:

Թղթադրամների լայն տարածումը սկիզբ է առնում 17-րդ դարից: Ինչպես նշում էր անգլիական դասական տնտեսագիտական տեսության ներկայացուցիչ Ադամ Սմիթը, թղթադրամները պետք է դիտարկվեն որպես շրջանառության առավել էժանագին գործիքներ թեկուզ այն պարզ պատճառով, որ տրիլիոնավոր դոլարների, մարկերի, ֆրանկների և այլ դրամական միավորների հասնող ապրանքաշրջանառության մասշտաբները երբեք չէին կարող ապահովվել ոսկու կողմից: Դա էր պատճառը, որ անցումը թղթադրամների կտրուկ ընդարձակեց ապրանքաշրջանառության շրջանակները:

ԱՄՆ-ում թղթադրամներն առաջին անգամ հայտնվեցին շրջանառության մեջ 1690թ., Ֆրանսիայում` 1571թ., իսկ Ռուսաստանում` 18-րդ դարում` Եկատերինա II-ի տիրապետության տարիներին:

Գոյություն ունեն թղթադրամների թողարկման մի շարք պատճառներ.

- պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն իրականացնելու համար,
- պատմական որոշակի ժամանակահատվածներում (պատերազմներ, բնական աղետներ, հեղաշրջումներ և այլն) թղթադրամների նկատմամբ պահանջարկի կտրուկ բարձրացման պատճառով,
- պետության վճարային հաշվեկշռի խրոնիկ պակասուրդի պատճառով,
- մետաղադրամների մաշվածության, կորստի և այլ տեխնիկական պատճառներով:

Թղթադրամները թողարկվում են գանձապետարանների կողմից և հենվում են պետության վերաբաշխման գործառույթի վրա: Իսկ դա նշանակում է, որ թղթադրամների թողարկումն իրականացվում է` ելնելով պետբյուջեի պակասուրդից, այլ ոչ թե ապրանքային շրջանառության պահանջարկից:

Վարկային փողերը ծագում են փողի` որպես վճարման միջոցի, գործառույթի հիման վրա, երբ դրանք հանդես են գալիս որպես պարտավորություն, իսկ վերջինս էլ

պետք է մարվի նախասահմանված ժամկետում իրական փողերի միջոցով:

Վարկային փողերն անցել են զարգացման հետևյալ ուղին. մուրհակներ, բանկ-նոտներ, չեկեր (վճարագրեր), էլեկտրոնային փողեր:

Պատմականորեն վարկային փողերի առաջին դրսևորումները սկզբում եղել են մուրհակները, իսկ այնուհետև՝ բանկնոտները: Դրանք ծագել են պարտքային պարտավորությունների շրջանառության հիման վրա: Ինչպես նշում էին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, մուրհակների տրամադրումը հնարավորություն է տալիս ապրանքը վերածել վարկային փողերի, իսկ մուրհակների հաշվառումը վերոհիշյալ փողերը վերածում է այլ փողերի կամ բանկնոտների:

Սկզբնական շրջանում բանկնոտներն ունեին կրկնակի ապահովվածություն. առևտրային կամ ապրանքային երաշխիք, քանի որ դրանք թողարկվում էին առևտրային մուրհակների հիման վրա, և ոսկե երաշխիք, քանի որ ապահովվում էր նրանց ազատ փոխանակումը ոսկով: Այդպիսի բանկնոտներն անվանվում էին դասական և օժտված էին բարձր իրացվելիությամբ և կայունությամբ:

Այսպիսով՝ բանկնոտն իրենից ներկայացնում է անժամկետ պարտքային պարտավորություն, որն ապահովվում է տվյալ պետության կենտրոնական բանկի հասարակական երաշխիքով: Ժամանակակից բանկնոտն, ըստ էության, կորցրել է վերը հիշատակված հանրահայտ երկու երաշխիքները. կենտրոնական բանկերի կողմից վերահաշվառվող ոչ բոլոր մուրհակներն են ապահովված ապրանքներով, և բացակայում է դրանց փոխանակումը ոսկով: Ներկայումս բանկնոտը շրջանառության մեջ է մտնում պետության բանկային վարկավորման, առևտրային և մասնագիտացված բանկերի միջոցով տնտեսության վարկավորման, ինչպես նաև տվյալ երկրի բանկնոտներով արտարժույթի փոխանակման ճանապարհով:

Ժամանակակից պայմաններում կենտրոնական բանկերի կողմից թողարկվող բանկնոտները հանդես են գալիս որպես ազգային փողեր տվյալ պետության ամբողջ տարածքում:

Վարկային փողերն օժանդակում էին կապիտալի կենտրոնացման ու համակենտրոնացման գործընթացին, բաժնետիրական գործի զարգացմանը, ինչն էլ, իր հերթին, որոշակի հիմքեր ստեղծեց մոնոպոլիաների ձևավորման ու զարգացման համար: Վարկային փողերի մյուս տեսակներին հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ պարագրաֆներում:

22.1.2. Բիմետալիզմ և մոնոմետալիզմ: Միջազգային արժութային համակարգեր

Դրամական համակարգը տվյալ պետության դրամաշրջանառության կազմակերպման ձևն է, որը ձևավորվել է XVI–XVII դդ.: Այն ստորաբաժանվում է 2 խոշոր խմբի.

1. Մետաղական շրջանառության համակարգ, որը հիմնվում է իրական փողերի (ոսկեդրամների, արծաթե դրամների) վրա, իսկ շրջանառվող բանկնոտները հեշտորեն փոխակերպվում են իրական փողերի:
2. Թղթադրամային և վարկային շրջանառության համակարգ, որի դեպքում շրջանառության մեջ են գտնվում թղթադրամները (զանծապետական տոմսերը) կամ վարկային փողերը (բանկնոտները, մուրհակները և այլն):

Մետաղական դրամաշրջանառության համակարգում գործում էր դրամական համակարգի երկու տեսակ՝ բիմետալիզմն ու մոնոմետալիզմը:

Բիմետալիզմը (BIMETALLISM) դրամական համակարգ է, որի դեպքում համընդհանուր համարժեքի դերն իրականացնում են 2 տեսակի մետաղներ՝ արծաթը և ոսկին: Այս դեպքում երկու մետաղներից էլ ազատ կերպով ձուլվում էին դրամներ, և թույլատրվում էր դրանց անսահմանափակ շրջանառություն: Շուկայում միևնույն ապրանքների գծով սահմանվում էին երկու տեսակի գներ:

Բիմետալիզմը լայն տարածում ստացավ XVI–XVII դդ., իսկ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ XIX դարում: 1865թ. Ֆրանսիան, Բելգիան, Շվեյցարիան և Իտալիան փորձեցին պահպանել բիմետալիզմը՝ «Լատինական դրամական միություն» կոչվող միջազգային համաձայնության հիման վրա, ըստ որի՝ թույլատրվում էր դրամների ազատ հատում (ձուլում) ոսկուց և արծաթից՝ պահպանելով դրանց միջև 1:15,5 հարաբերակցությունը: Այդուհանդերձ, երկմետաղական դրամական համակարգը չէր համապատասխանում տնտեսության զարգացման պահանջներին, իսկ կապիտալիզմի զարգացումը պահանջում էր կայուն փողեր, միասնական համընդհանուր համարժեք, և աստիճանաբար բիմետալիզմն իր տեղը զիջեց մոնոմետալիզմին:

Մոնոմետալիզմը (MONOMETALLISM) դրամական համակարգ է, որի դեպքում մեկ մետաղը (ոսկին կամ արծաթը) ծառայում է որպես համընդհանուր համարժեք և դրամաշրջանառության հիմք: Արծաթե մոնոմետալիզմը գործում էր Ռուսաստանում՝ 1843–1852 թթ., Յնդկաստանում՝ 1852–1893 թթ., Յուլանդիայում՝ 1847–1875 թթ.:

Պատմությանը հայտնի են փողային ստանդարտների հետևյալ տեսակները.

1. փողի ստանդարտի բացակայություն և ապրանքափոխանակության (բարտերի) օգտագործում,
2. միջմետաղական ստանդարտ (որպես փողեր օգտագործվում էին անասուններ, մորթեղեն և այլն),
3. մետաղական մոնետարիզմ (որպես փողեր օգտագործվում էին զանազան մետաղների, օրինակ՝ ոսկու, արծաթի, երկաթի, բրոնզի, պղնձի կտորներ),
4. ոսկեդրամի ստանդարտ կամ ոսկեվարկային մոնետարիզմ,
5. ոսկեծուլակտորների ստանդարտ,
6. ոսկեդեղնադրամի ստանդարտ,
7. ոսկու ապամոնետարիզացում, որին կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

Ոսկե մոնոմետալիզմը (ստանդարտը)՝ որպես դրամական համակարգ, առաջին անգամ ձևավորվեց Մեծ Բրիտանիայում XVIII դարի վերջին: Այնուհետև՝ XIX դարում այն տարածվեց աշխարհում. Գերմանիայում՝ 1871–1873 թթ., Շվեդիայում, Նորվեգիայում և Դանիայում՝ 1873 թ., Ֆրանսիայում՝ 1876–1878 թթ., Ավստրիայում՝ 1892 թ., Ռուսաստանում և Ճապոնիայում՝ 1897 թ., ԱՄՆ-ում՝ 1900թ.: Գրեթե ողջ XIX դարը և XX դարի սկիզբը ոսկին կենտրոնական տեղ էր զբաղեցնում միջազգային արժույթավարկային համակարգում:

Ոսկե մոնոմետալիզմի տարատեսակները երեքն են.

- ոսկեդրամի ստանդարտ, որի պայմաններում բանկերի կողմից իրականացվում էր ոսկեդրամների ազատ հատում (այն գոյատևեց ընդհուպ մինչև XX դարի սկզբները),

- ոսկե ձուլակտորների ստանդարտ, որի պայմաններում ոսկին կիրառվում էր միայն միջազգային հաշվարկներում (այն գոյատևեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը),
- ոսկե դեղքային (արտարժութային) ստանդարտ, որի պայմաններում ոսկու հետ համատեղ միջազգային հաշվարկներում օգտագործվում էին ոսկու ստանդարտի համակարգի անդամ պետությունների ազգային արժույթները: Այն հայտնի է նաև որպես Գենուեզյան արժութային համակարգ (այն գոյատևեց 1922թ. մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը):

Ոսկու ստանդարտը սկսեց իր գործունեությունը 1821թ., երբ նապոլեոնյան պատերազմների ավարտին Բրիտանական կայսրությունը ֆուլունտ ստեռլինգը դարձրեց փոխարկելի ոսկու նկատմամբ: Նրա օրինակին հետևեց նաև Միացյալ Նահանգները: Ոսկեդրամի ստանդարտը իր զագաթնակետին հասավ 1880–1914թթ.: Իրավաբանորեն այս համակարգն ամրագրվեց 1867թ. Փարիզյան նստաշրջանում, ուր ոսկին ճանաչվեց որպես համաշխարհային միակ փող:

Ոսկու ստանդարտի գոյության պայմաններում էմիսիոն բանկի մետաղական պաշարը ծառայում էր որպես փողերի ապահովման երաշխիքային ֆոնդ: Պարտադիր ոսկու ծածկույթի առկայությունը հնարավորություն էր ընձեռում իրականացնել կոշտ վերահսկողություն կանխիկ փողերի բացթողնման նկատմամբ: XX դարի 30–ական թվականներին համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին (1929–1933թթ.) երկրների մեծ մասում ոսկու ստանդարտի վերացումից հետո մետաղական պաշարը դադարեց հանդես գալ որպես էմիսիայի սահմանափակիչ, վերակողմնորոշվեց և վերածվեց միջազգային վճարումների երաշխիքային–ապահովագրական ֆոնդի: Բացի թանկարժեք մետաղներից, կենտրոնական բանկերը պահպանում են նաև խոշոր արտարժութային պահուստներ՝ իրենց ազգային արժույթի փոխարժեքի (կուրսի) պահպանման նպատակով՝ արտարժութային շուկայում գործառնությունների (ինտերվենցիաների) իրականացման օգնությամբ:

Ոսկու ստանդարտը բնութագրվում էր ոսկյա փողերի շրջանառությամբ և ոսկու հետ թղթային և վարկային փողերի ազատ փոխանակմամբ:

Դասական ոսկու ստանդարտը գոյատևեց մինչև 1914 թվականը՝ Առաջին համաշխարհային պատերազմը: Այն օժտված էր երկու հիմնական առանձնահատկություններով: Նախ՝ երկիրը համարվում էր ոսկե ստանդարտային, եթե նրա կենտրոնական բանկը երաշխավորում էր ոսկու ազատ առքն ու վաճառքը հաստատագրված գներով, համախառն դրամաշրջանառության պայմաններին համապատասխան: Այնուհետև, տվյալ երկրի ռեզիդենտներին ազատ իրավունք էր վերապահվում արտահանել կամ ներմուծել ոսկի: Այս երկու պայմանները համատեղ ձևավորում էին վճարային հաշվեկշռի կարգավորման զուտ հաստատագրված փոխանակման մեխանիզմը: Հաստատագրված փոխանակային փոխարժեքները ձևավորվում էին այն գների հարաբերակցությամբ, որոնցով կենտրոնական բանկերը պարտավորվում էին գնել կամ վաճառել ոսկին: Ոսկու ազատ արտահանումն ու ներմուծումը ստեղծում էին դրամական միջոցներ, որոնց շնորհիվ կարգավորվում էին արտարժույթների ակտիվների ու պասիվների միջև եղած տարբերությունները՝ հաստատագրված փոխանակային փոխարժեքներով: Այս տեսանկյունից ոսկու ստանդարտը դրսևորվեց որպես արտադրության, արտաքին տնտեսական կապերի, դրամաշրջանառության,

վճարային հաշվեկշիռների և, ընդհանուր առմամբ, միջազգային հաշվարկների տարերային կարգավորիչ:

Ուշագրավ է այն փաստը, որ ոսկեդրամի ստանդարտի բուռն տիրապետության տարիներին միջազգային գրեթե բոլոր հաշվարկներն իրականացվում էին արտարժույթով արտահայտված փոխանցովի մուրհակներով (տրատտաներով), իսկ ոսկին հանդես էր գալիս միայն որպես երկրի միջազգային հաշվարկների հաշվեկշռի պասիվային սալդոյի վճարման միջոց: Աստիճանաբար ոսկեդրամի ստանդարտն իրեն սպառեց, քանի որ չէր համապատասխանում կարգավորվող շուկայական տնտեսության պահանջներին և աճող տնտեսական կապերի պահանջներին: Առաջին համաշխարհային պատերազմը նշանավորվեց համաշխարհային արժույթային համակարգի ճգնաժամով, և ոսկեդրամի ստանդարտը դադարեց հանդես գալ որպես դրամական և արժույթային համակարգ:

Ոսկյա դրամի ստանդարտը որոշակի առունով մնան է ոսկյա ձուլվածքի ստանդարտին, որը ներդրվեց Եվրոպայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և այլն) և հնարավորություն էր ընձեռում ոսկու հետ արժեմշանների փոխանակում՝ ոսկու ստանդարտ ձուլվածքին համապատասխան գումարի ներկայացմամբ:

Գեմուեզյան միջազգային տնտեսական նստաշրջանը 1922թ. ամրագրեց անցումը ոսկեդրամային ստանդարտին: Շրջանառության մեջ հայտնվեցին, այսպես կոչված, «դևիզները» կամ միջազգային հաշվարկների համար նախատեսված արտարժույթային դրամական միջոցները:

Ոսկեդրամային ստանդարտը գործում էր հետևյալ հիմնարար սկզբունքներով.

- Համակարգի հիմքում ընկած էին ոսկին և դևիզները: Այդ տարիներին 30 երկրների դրամական համակարգերը հենվում էին ոսկեդրամային ստանդարտի վրա: Այդուհանդերձ, միջպատերազմական ժամանակահատվածում պահուստային արժույթի կարգավիճակն այդպես էլ պաշտոնապես չամրագրվեց որևէ արտարժույթով:
- Պահպանվեցին ոսկե պարիտետները: Ոսկու հետ արտարժույթների փոխարկումը սկսեց իրականացվել ոչ միայն անմիջականորեն, այլև անուղղակի, միջնորդավորված կերպով՝ այլ արտարժույթներով, ինչը Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով տնտեսապես թուլացած պետություններին թույլ տվեց տնտեսել ոսկու պաշարները:
- Վերականգնվեց ազատ տատանվող արժույթային փոխարժեքների ռեժիմը:
- Արժույթային կարգավորումը սկսեց իրականացվել ակտիվ արժույթային քաղաքականության, միջազգային նստաշրջանների, խորհրդատվությունների ընթացքում:

Թեև ազատ տատանվող արժույթային փոխարժեքների ռեժիմի վերականգնման շնորհիվ 1922–1928թթ. նկատվեց արժույթային որոշակի կայունություն, սակայն դա երկար չտևեց 30–ական թվականների հանկարծահաս համաշխարհային ճգնաժամի պատճառով: Այն տևեց 1929–1936թթ., որի ընթացքում արժույթային ճգնաժամը միաձուլվեց համաշխարհային տնտեսական և դրամավարկային ճգնաժամերի հետ: Մի շարք արտարժույթների փոխարժեքները նվազեցին 50–85%–ով, իսկ շուրջ 25 պետություններ, այդ թվում՝ Գերմանիան, Ավստրիան, Թուրքիան, դադարեցրին բոլոր արտաքին վճարումները: Արդյունքում ձևավորվեց «տաք փողերի» հսկայական

զանգված, այսինքն՝ դրամական կապիտալներ, որոնք հուսալի թաքստոց կամ սպեկուլյատիվ գերշահույթներ ստանալու մղումներով տարերայնորեն տեղաշարժվում էին մեկ երկրից դեպի մյուսը:

Երկու համաշխարհային պատերազմների ընթացքում ընկած ժամանակահատվածում պետությունների մեծ մասը աստիճանաբար սկսեց հրաժարվել ոսկու ստանդարտից: Առաջինը համակարգից դուրս եկան ագրարային և գաղութային երկրները (1929–1930թթ.): Նրանց օրինակին հետևեցին Գերմանիան, Ավստրիան և Մեծ Բրիտանիան 1931թ.: Վերջինս, օրինակ, դուրս եկավ ոսկու ստանդարտի համակարգից վճարային հաշվեկշռի վատթարացման և ապրանքների արտահանման ծավալների կտրուկ կրճատման հետևանքով երկրի պաշտոնական ոսկու պաշարների նվազման պատճառով:

1933թ. ապրիլին գնանկման (դեֆլյացիայի) բարձր տեմպերի հետևանքով ոսկու ստանդարտից հրաժարվեց ԱՄՆ-ը, ինչի արդյունքում արձանագրվեցին զանգվածային սնանկացումներ՝ խաթարելով երկրի դրամավարկային համակարգը: Իսկ բուրից երկար «դիմադրեց» Ֆրանսիան՝ մինչև 1936թ.:

Զնայած երկրների ներքին դրամաշրջանառության համակարգում նկատելիորեն կրճատվեցին բանկոտների փոխանակումը ոսկով, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կենտրոնական բանկերի միացյալ համաձայնությամբ պահպանվեց ոսկու հետ արտարժույթների արտաքին փոխարկելիությունը, և արդյունքում առաջատար երկրների ազգային արժութային համակարգերի հիման վրա ստեղծվում են արժութային բլոկներ կամ զոնաներ:

Արժութային բլոկը երկրների համախումբ է, որոնք գտնվում են տնտեսական, արժութային, ֆինանսական կախվածության մեջ մեկ առաջատար պետությունից: Վերջինս թելադրում է միջազգային տնտեսական հարաբերություններում մեկ միասնական քաղաքականության հիմնադրույթները, իսկ բլոկի մեջ ընդգրկված երկրներին օգտագործում է որպես էժան հումքի ձեռքբերման աղբյուրներ և կապիտալի ներդրման շահավետ ոլորտներ: Արժութային բլոկը բնորոշվում է ներքոբերյալ հատկանիշներով.

- բլոկի անդամ երկրների ազգային արժույթները ամրագրվում են բլոկի առաջատար պետության արտարժույթին,
- բլոկի անդամ պետությունների կողմից միջազգային հաշվարկներն իրականացվում են բլոկի առաջատար պետության (հեգեմոնի) արտարժույթով,
- բլոկի անդամ երկրների արժութային պահուստները պահպանվում են բլոկի առաջատար պետությունում:

Այդ տարիներին ձևավորվեցին 3 հիմնական արժութային բլոկներ.

- ստեռլինգային,
- դոլարային,
- ոսկե արտարժութային:

Ստեռլինգային բլոկը ձևավորվեց 1931թ., որի կազմի մեջ մտան ազգերի Բրիտանական համերաշխության անդամ պետությունները (բացի Կանադայից և Նյուֆաունդլենդից), ինչպես նաև Զոնկոնգը, Եգիպտոսը, Իրաքը և Պորտուգալիան: Ավելի ուշ համակարգին անդամակցեցին Դանիան, Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան, ճապոնիան (դե ֆակտո), Զոնաստանը, Իրանը:

ԱՄՆ–ի կողմից կառավարվող դոլարային բլոկը ստեղծվեց 1933թ.: Նրանում ընդգրկվեցին Կանադան, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի այն երկրները, ուր իշխում էր ամերիկյան կապիտալը:

1933թ. հունիսին Լոնդոնի միջազգային տնտեսական նստաշրջանի ընթացքում ոսկեդրամի ստանդարտը վերականգնել ցանկացող պետությունները ստեղծեցին ոսկե արտարժութային բլոկը՝ հանձնիս Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Շվեյցարիայի, իսկ ավելի ուշ՝ նաև Իտալիայի, Չեխոսլովակիայի և Լեհաստանի: 1936թ. Ֆրանսիայի կողմից ոսկու ստանդարտից դուրս գալու կապակցությամբ ոսկու բլոկը դադարեցրեց իր գործունեությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով վերացան մնացած երկու արժութային բլոկները:

Ներկայումս էլ որոշ տնտեսագետներ հակված են ոսկու ստանդարտի վերականգնմանը՝ ներկայացնելով վերջինիս հետևյալ առավելությունները. վերածնափոխված ոսկու ստանդարտը վճարային հաշվեկշռի կարգավորման մեխանիզմը կմիավորի ոսկյա ձուլվածքի ստանդարտի հետ, արժութային պահուստները բաղկացած կլինեն բացառապես ոսկուց, արտարժույթների գները թռիչքաձև փոփոխությունների չեն ենթարկվի, իսկ արժութային համակարգը կգործի մեխանիկորեն և պասիվ կերպով, ոսկու ստանդարտը կհարթեցնի արժութային հարաբերություններում առկա կոնֆլիկտային տարրերը՝ ներդաշնակեցնելով բոլոր ազգային տնտեսություններն ու տնտեսական քաղաքականությունները: Այդ հիմնահարցերի լուծման բանալին հաստատագրված փոխանակային դրույքների մեխանիզմն է:

Թղթադրամային և վարկային փողերի համակարգը նախատեսում էր պետության էմիսիոն բանկերի կողմից թողարկվող բանկնոտների շրջանառություն և նույնպես խարսխվում էր ոսկու դեֆիցիտ ստանդարտի վրա: Փաստորեն, Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Գեներեզյան արժութային համակարգի փլուզմանը հաջորդեց Բրետտոն–Վուդսի արժութային համակարգը:

Երկրորդ համաշխարհային արժութային համակարգը պաշտոնապես հաստատվեց 1944թ. հուլիսի 1–22–ին ԱՄՆ–ի Բրետտոն–Վուդս քաղաքում (Նյու Յեմփշիր նահանգ) անցկացվող ՄԱԿ–ի միջազգային արժութաֆինանսական նստաշրջանում: Վերջինիս հիմնական նպատակներն էին լայնածավալ ազատ առևտրի վերականգնումը, հաստատագրված արժութային փոխարժեքների համակարգի հիման վրա միջազգային փոխանակության համակարգի կայուն հաշվեկշռվածության պահպանումը:

1944 թ. Բրետտոն–Վուդսի համաշխարհային ֆինանսական նստաշրջանի շրջանակներում պահուստային արտարժույթի կարգավիճակը առաջին անգամ հաստատագրվեց ԱՄՆ դոլարով և անգլիական ֆունտ ստեռլինգով: ԱՄՆ–ի տնտեսական գերապատվությունը և նրա մրցակից–պետությունների դիրքերի թուլացումը Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով պայմանավորեց դոլարի համաշխարհային տիրապետության սկիզբը: Պահուստային արժույթը տնտեսապես առաջատար երկրի ազգային արժույթի հատուկ կատեգորիա է, որն իրականացնում է միջազգային վճարային և պահուստային միջոցի գործառույթ, հիմք է ծառայում մյուս երկրների արժութային պարիտետի և փոխարժեքի սահմանման համար և լայնորեն կիրառվում է այլ երկրների արժույթների փոխարժեքների կարգավորման նպատակով արժութային ինտերվալների իրականացման համար:

Բրետտոն—Վուդսի համաձայնագիրը նախատեսեց ոսկու՝ որպես համաշխարհային արժութային համակարգի անկյունաքարի օգտագործման 6 հիմնական եղանակ.

1. պահպանվեցին արտարժույթների ոսկե պարիտետները (տարբեր երկրների ազգային արժույթների հարաբերակցությունը ոսկու գնահաշվով),
2. ոսկին շարունակեց հանդես գալ որպես միջազգային վճարային և պահուստային միջոց,
3. երկրների կենտրոնական բանկերը պահպանում են իրենց արժույթների փոխարժեքները առաջատար արտարժույթի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ արտարժութային ինտերվենցիաների օգնությամբ,
4. արտարժույթների փոխարժեքների փոփոխությունն իրականացվում է արժենվազման (դևալվացիայի) և արժեբարձրացման (ռևալվացիայի) միջոցով,
5. հենվելով իր ոսկու պաշարների և տնտեսական բարձր ներուժի վրա (ԱՄՆ-ը տիրապետում էր ոսկու համաշխարհային պաշարների շուրջ 70%-ին)՝ ԱՄՆ-ը դոլարը հավասարեցրեց ոսկուն, որպեսզի պահպանի դոլարի՝ որպես գլխավոր պահուստային արտարժույթի կարգավիճակը,
6. ԱՄՆ գանձապետարանը ազատ կերպով փոխանակում էր ԱՄՆ դոլարը ոսկով՝ 1934թ. սահմանված պաշտոնական գնով:

Այսպիսով՝ Միացյալ Նահանգների անուղղակի ճնշման ներքո սկսվեց դոլարի ստանդարտի ժամանակաշրջանը, և հաստատվեց մենաշնորհային արժութային հեգեմոնիա, որը նեղեց հիմնական մրցակից հանդիսացող բրիտանական ֆունտ ստեռլինգը: Դա էր պատճառը, որ Բրետտոն—Վուդսի արժութային համակարգը հաճախ սկսեցին անվանել ոսկեդոլարային ստանդարտի համակարգ:

Դրամական համակարգի շրջանակներում ձևավորվեցին երկու նոր կազմակերպական կառույցներ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը և Ջարգացման և վերականգնման միջազգային բանկը:

Սակայն ԱՄՆ-ի ոսկու պաշարների կրճատման հետևանքով նրա դիրքերը արտաքին շուկայում սկսեցին էապես թուլանալ: Բացի այդ, առաջանում են նաև որոշակի հիմնախնդիրներ՝ կապված միջազգային իրացվելիության հետ, քանի որ միջազգային առևտրի աճող ծավալների համեմատությամբ ոսկու արդյունահանումը թերակատարվում է: Եվ արդյունքում դոլարի՝ որպես պահուստային արտարժույթի նկատմամբ վստահությունը նվազում է՝ ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի խոշոր պակասորդի պատճառով: Երևան են գալիս ֆինանսական նոր կենտրոններ՝ հանձինս Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի: Հստակորեն դրսևորվում է Բրետտոն—Վուդսի համակարգի ներքին հակասությունների վրա հիմնված տարիմաստությունը (պարադոքսիզմը), որը հայտնի է նաև որպես Տրիֆենի պարադոքս (դիլեմա), ըստ որի՝ ոսկեդոլարային ստանդարտը պետք է համատեղի 2 հանդիպակաց պահանջներ.

1. Առանցքային արտարժույթի էմիսիան պետք է համահարաբերակցի երկրի ոսկու պաշարների փոփոխությանը: Առանց պարտադիր ծածկույթի առկայության գերալանային էմիսիան կարող է խախտել առանցքային արտարժույթի՝ ոսկու փոխարկման գործընթացը և առաջ բերել անվստահություն նրա հանդեպ:
2. Առանցքային արտարժույթը պետք է թողարկվի այնպիսի քանակությամբ, որպեսզի ապահովի միջազգային գործարքների աճող քանակության սպասարկման համար միջազգային դրամական զանգվածի աճը: Այդ պատճառով

առանցքային արտարժույթի էմիսիան պետք է էապես գերազանցի երկրի ոսկու պաշարները:

Արդյունքում՝ 1971–1973 թթ. դոլարը դադարեց հանդես գալ որպես համաշխարհային միակ պահուստային արտարժույթ:

1960–70–ական թվականներին քայնասկանների կողմից առաջարկված արժույթային կարգավորման Բրետտոն–Վուդսի համակարգը խաթարվեց, և անմիջապես ակտիվացան նեոդասականները: Նրանց մի մասը մատնանշում էր ոսկու դերի բարձրացման և ընդհուպ մինչև ոսկեդրամի ստանդարտի վերականգնման անհրաժեշտությունը:

Մոնետարիստները կողմ էին շուկայական կարգավորման մեխանիզմին՝ ի վնաս պետական միջամտության, հնչում էին վճարային հաշվեկշռի ավտոմատ ինքնակարգավորման գաղափարներ, առաջարկվում էր մտցնել լողացող արժութային փոխարժեքների ռեժիմ: Նեոքայնասկանները նույնիսկ փորձեցին վերականգնել Քեյնսի կողմից նախկինում առաջարկված և մերժված համաշխարհային միակ արտարժույթի՝ բանկորի ստեղծման գաղափարը: 1943թ. ապրիլին Քեյնսը իր «Միջազգային քլիրինգային միության պլան» աշխատության մեջ առաջարկում էր թողարկել միջազգային փողեր՝ «բանկոր» անվանմամբ: Թեև բանկորն արտահայտվելու էր ոսկով, այդուհանդերձ այն պետք է ստեղծվեր առանց ոսկու նախնական ներդրման: Ոսկին կարող էր փոխարկվել բանկորով, սակայն հակառակ գործարքը բացառվում էր: Ցանկացած միջազգային գործարք պետք է իրականացվեր բանկորով: Փաստորեն, վերջինս վերածվում էր անկանխիկ հաշվարկների միջազգային փողերի: Այս առաջարկը մերժվեց Բրետտոն–Վուդսի նստաշրջանում:

Բրետտոն–Վուդսի դրամական համակարգին փոխարինելու եկավ 1976թ. Քինգստոնում (Յամայկա) Արժույթի միջազգային հիմնադրամի անդամպետությունների կողմից հաստատված համաշխարհային երրորդ արժութային համակարգը, որի անկյունաքարը հանդիսացավ լողացող փոխանակային փոխարժեքների և բազմարժութային ստանդարտի ներմուծումը: Անցումը ճկուն փոխանակային փոխարժեքներին նպատակ էր հետապնդում տարբեր երկրներում սղաճի տեմպերի արդյունավետ կառավարման, վճարային հաշվեկշռների հաշվեկշռվածության, ինչպես նաև երկրների կենտրոնական բանկերի կողմից ներքին անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման հնարավորությունների ընդարձակում:

Ջամայկայի արժութային համակարգը բնորոշվեց հետևյալ հատկանիշներով.

- համակարգը հենվում էր ոչ թե մեկ, այլ մի քանի առանցքային արտարժույթների վրա,
- վերացվեց ոսկու դրամական պարիտետը,
- միջազգային հաշվարկներում որպես հիմնական վճարամիջոցներ սկսեցին հանդես գալ ազատ փոխարկելի արտարժույթը, SDR–ը (Special Drawing Right – փոխառելիության հատուկ իրավունք) և Արժույթի միջազգային հիմնադրամի պահուստային դիրքերը,
- վերացվեցին արժութային փոխարժեքների տատանման սահմանները, և արտարժույթի փոխարժեքը սկսեց սահմանվել առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ,
- երկրների կենտրոնական բանկերը պարտավոր չեն միջամտել արժութային շու-

կաների աշխատանքին՝ իրենց ազգային արժույթների հաստատագրված պարիտետների պահպանման նպատակով, սակայն նրանք կարող են իրականացնել արժութային ինտերվենցիաներ՝ արժութային փոխարժեքների կայունացման նպատակով,

- յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում արժութային փոխարժեքի ռեժիմ, սակայն արգելվում է այն արտացոլել ոսկու միջոցով:

Ջամայկայի արժութային համակարգում կարևորվեցին SDR–ի՝ որպես պաշտոնական պահուստային ակտիվների միջազգային վճարաչափի դերն ու նշանակությունը: SDR–ի ստեղծման հիմնական սկզբունքները մշակվեցին 1968թ. սեպտեմբերի 29–ին Ռիո դե ժանեյրոյում Արժույթի միջազգային հիմնադրամի տնօրենների խորհրդի նիստի շրջանակներում: 1969թ. SDR–ը արտահայտվեց ոսկով հետևյալ հարաբերակցությամբ. 1 ունցիա ոսկին = 35 SDR, այսինքն՝ 1SDR = 1\$: 1 SDR = 1–35 ունցիա ոսկի արժեքը պահպանվեց մինչև 1971թ. հուլիսը: 1971թ. դոլարը դադարում է փոխանակվել ոսկով՝ հաստատագրված փոխարժեքով:

1971թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարն արժենվազում է ոսկու նկատմամբ, որի արդյունքում 1 SDR–ը հավասարվում է 1,08571\$: 1973թ. դարձյալ դոլարն արժենվազում է ոսկու նկատմամբ: Այդ պատճառով 1974թ. որոշում է կայացվում SDR–ն արտահայտել արտարժույթների զամբյուղով: Այդ ժամանակահատվածում զամբյուղի մեջ մտնում են 16 երկրների արտարժույթներ, իսկ 1981թ. հունվարի 1–ից արտարժույթների թիվը զամբյուղում նվազում է՝ հասնելով 5–ի.

$$1 \text{ SDR} = 0.54\$ + 0.64\text{DM} + 34\text{Y} + 0.74\text{FF} + 0.071 \text{ ֆունտ:}$$

SDR–ի համակարգի մասնակիցներ կարող են լինել միայն ԱՄՆ անդամ պետությունները: SDR–ի էմիսիան իրականացվում է ԱՄՆ–ի հատուկ հաշիվներում վարկային գրառումների տեսքով: Սակայն SDR–ի էմիսիայի պահից ի վեր այն այդպես էլ չվերածվեց միջազգային գլխավոր վճարամիջոցի և պահուստային արտարժույթի: Որպես միջազգային վճարամիջոց՝ SDR–ը կիրառվում է միայն միջպետական գործառնությունների սահմանափակ շրջանակներով՝ ոչ զգալի ծավալներով:

Ջամայկայի արժութային համակարգի գործունեության ընթացքում դրսևորվեցին մի շարք հակասություններ: Լողացող արժութային փոխարժեքների ներդրման հետ կապված սպասումներն արդարացան մասնակիորեն: Փաստորեն, պահպանվեց դոլարային ստանդարտը, թեև պաշտոնապես դոլարը ներկայումս չունի պահուստային արտարժույթի կարգավիճակ: Դա պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

- Բրետտոն–Վուդսի արժութային համակարգի ժամանակներից ի վեր շատ երկրների կառավարությունների և մասնավոր անձանց մոտ պահպանվել էին դոլարային զգալի պաշարներ:
- Եվրոդոլարային շուկաները ստեղծում են դոլարներ՝ անկախ ԱՄՆ վճարային հաշվեկշռի՝ այդպիսով համաշխարհային արժութային համակարգը մատակարարելով անհրաժեշտ քանակությամբ դրամական միջոցներով:

Ջամայկայի անկայուն արժութային համակարգին հաջորդեց Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրների սեփական միջազգային (տարածաշրջանային) արժութային համակարգը՝ նշանավորելով չորրորդ համաշխարհային արժութային համակարգը:

Եվրոպական արժութային համակարգը ստեղծվել է 1979թ. մարտի 13–ին: Այն իր

առջև դրեց մի շարք նպատակներ, մասնավորապես՝ տնտեսական ինտեգրացման իրականացում, եվրոպական կայուն արժույթային տարածաշրջանի ստեղծում, դոլարային ներխուժումներից եվրոպական շուկայի պատնեշում, ինչպես նաև ԵՏՀ անդամ պետությունների սոցիալ-տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների ներդաշնակեցում:

Եվրոպական արժույթային համակարգը՝ որպես միջազգային արժույթային չորրորդ համակարգ, բնութագրվում է տնտեսական ինտեգրացման շրջանակներում եվրոպական արտարժույթների գործունեության հետ կապված տնտեսական հարաբերություններ՝ արժույթային փոխարժեքների կայունացման և ինտեգրացման գործընթացների խթանման նպատակներով:

ԵԱՀ ակտիվ անդամներ են Բելգիան, Լյուքսեմբուրգը, Դանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, Իռլանդիան, Իսպանիան, Պորտուգալիան և Յունաստանը: Ի տարբերություն Ջամայկայի արժույթային համակարգի՝ Եվրոպական արժույթային համակարգը հենվում էր էքյույի (ECU – European Currency Unit – Եվրոպական արժույթային միություն) վրա:

Էքյուն հիմնված էր Եվրամիության անդամ պետությունների ազգային արժույթների «զամբյուղի» հիման վրա, և նրա էմիսիան սկսեց իրականացվել 1979թ. մարտի 13-ից: Պետք է նշել, որ էքյուն չունեց նյութական դրամական կամ բանկոտային տեսք: Չնայած որ 1987թ. բելգիական զանձապետարանը թողարկեց սահմանափակ քանակությամբ հորելյանական 50 ոսկե և 5 արծաթե էքյուներ (համապատասխանաբար՝ 55\$ և 6\$ արժողությամբ):

Էքյուն, ի տարբերություն SDR-ի, ապահովված էր ոչ միայն մի խումբ երկրների համապարտ պարտավորությամբ, այլև իրական ակտիվներով՝ ոսկով և ԱՄՆ դոլարով: Նույնիսկ այդ նպատակով ստեղծվում է համատեղ ոսկու հիմնադրամ՝ ԵԱՀ անդամ երկրների ոսկու պաշտոնական պահուստների 20%-ի չափով: Բացի այդ, էքյուն լայնորեն շրջանառվում էր ոչ միայն պաշտոնական միջպետական, այլև մասնավոր հատվածում:

Էքյուն այդ տարիներին իրականացնում էր հետևյալ գործառույթները՝ հանդես գալով որպես՝

- Եվրամիության անդամ պետությունների արժույթների փոխարժեքների որոշման հիմք,
- արժույթային միավոր միջազգային ֆինանսարժույթային, վարկային կազմակերպություններում և համատեղ ֆոնդերում,
- արժույթային ինտերվենցիաների իրականացման ժամանակ միջպետական հաշվարկների իրականացման միջոց,
- միասնական գյուղատնտեսական զների արտարժույթ,
- վարկերի և փոխառությունների արտարժույթ:

ԵԱՀ-ի շրջանակներում արժույթային փոխարժեքների ռեժիմը հիմնված էր համատեղ լողացող արժույթային փոխարժեքի քաղաքականության վրա՝ «Եվրոպական արժույթային օձի» տեսքով: «Արժույթային օձն» իրենից ներկայացնում է կոր, որը բնութագրում է ԵԱՀ երկրների ազգային արժույթների փոխարժեքների համատեղ տատանումների ամպլիտուդան տվյալ արժույթային խմբավորման մեջ չմտնող այլ արտարժույթների փոխարժեքների նկատմամբ:

Բացի այդ, ԵԱՀ–ում իրականացվում էր միջպետական տարածաշրջանային արժույթային կարգավորում՝ վճարային հաշվեկշիռների պակասորդի ծածկման նպատակով կենտրոնական բանկերի կողմից վարկերի տրամադրման ճանապարհով:

Եվրոպական տնտեսական և արժույթային միությունը ստեղծվել է երեք փուլերով:

Առաջին փուլն ընդգրկեց 1990 թվականի հունիսի 1–ից մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31–ը, որի ընթացքում իրականացվեցին մի շարք նախապատրաստական միջոցառումներ Եվրամիության վերակազմավորման ուղղությամբ: Մասնավորապես, Եվրամիության ներսում վերացվեցին կապիտալների ազատ տեղաշարժման գրեթե բոլոր սահմանափակումներն ու արգելքները, առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց Եվրամիության ներսում ֆինանսատնտեսական զարգացման ցուցանիշների ներդաշնակեցմանը (գնաճի ցածր տեմպեր, պետական ֆինանսների առողջացում, ազգային արժույթների փոխարժեքների կայունացում):

Միասնական արժույթային համակարգի ձևավորման երկրորդ փուլում (1994 թվականի հունվարի 1–ից մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31–ը) կատարվեցին կոնկրետ աշխատանքներ եվրոյի ներդրման ուղղությամբ: Այս փուլի ամենազլխավոր կազմակերպական բնույթի միջոցառումը, թերևս, Եվրոպական արժույթային ինստիտուտի ստեղծումն էր, որը դրսևորվեց որպես Եվրոպական կենտրոնական բանկի իրավահաջորդ:

1994–1998թթ. ընթացքում ընդունվեցին մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք ուղղակիորեն արգելեցին պետական հատվածի գործունեության ֆինանսավորումը կենտրոնական բանկերի կողմից, վերացվեցին ֆինանսավարկային հաստատությունների միջոցներից պետական հատվածի ձեռնարկությունների և կազմակերպությունների արտոնյալ ներթափանցման իրավունքները, ինչպես նաև կենտրոնական բանկերի կողմից պետական պարտքերի մարման պրակտիկան:

1998 թվականի մայիսի 2–ին Եվրամիության խորհրդի նստաշրջանը ձայների մեծամասնությամբ հաստատեց եվրոյին անցում կատարող պետությունների ցուցակը (12 պետություններ՝ Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա և Հունաստան): Եվրամիության այն անդամ պետությունները, ովքեր պատրաստ չէին եվրոյին անցում կատարելու («pre ins»), ժամանակավորապես դուրս մնացին վերոհիշյալ որոշումից:

Միասնական արժույթային համակարգի ստեղծման երրորդ փուլը սկսվեց 1999 թվականի հունվարի 1–ից: Այդ պահից սկսած՝ եվրոն հաստատվեց որպես համընդհանուր արժույթ, և սկսվեց եվրոյի ու Եվրամիության անդամ երկրների ազգային արժույթների միջև փոխանակային փոխարժեքների ձևավորման գործընթացը: Եվրոն ամբողջությամբ փոխարինեց Եվրամիության նախկին հաշվարկային միավորին՝ էքյույին 1:1 հարաբերակցությամբ: Հաջողությամբ սկսեց իր գործունեությունը կենտրոնական բանկերի եվրոպական համակարգը, իսկ Եվրոպական կենտրոնական բանկը սկսեց օգտագործել եվրոն Եվրամիության անդամ երկրների միասնական դրամավարկային քաղաքականության գլխավոր ուղղությունների մշակման ասպարեզում: Եվրոյով իրականացվող ֆինանսական գործարքները կատարվեցին հետևյալ տրամաբանությամբ.

Առևտրային և մասնագիտացված բանկերի համար՝ մեծածախ բնույթի գործարքներն ու բաց շուկայական գործառնությունները սկսեցին իրականացվել եվրոյով

1999 թվականի հունվարի 1–ից, իսկ բանկային մանրածախ գործառնությունները՝ 2002 թվականի հունվարի 1–ից:

Պետական մարմինների համար՝ 1999 թվականի հունվարի 1–ից պետական պարտքային պարտավորությունները սկսեցին թողարկվել եվրոյով:

Ձեռնարկությունների և կազմակերպությունների համար՝ խոշոր ընկերակցություններն ու միջազգային շուկաներում հաջողակ դիրք գրավող կազմակերպություններն իրենց գործառնությունները սկսեցին իրականացնել եվրոյով 1999 թվականի հունվարի 1–ից:

Մասնավոր անձանց համար՝ առօրյա գործառնությունները եվրոյով սկսեցին իրականացվել 2002 թվականից:

22.2. ՀՀ ԴՐԱՄՇ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ապրանքային արտադրության ձևավորմանը զուգընթաց հասարակության տնտեսական կյանքն ընթացել է փոդային և ապրանքային հոսքերով, որոնք մշտապես ուղեկցվել են շրջանառության մեջ եղած փողի քանակի, եկամուտների, թողարկվող արտադրանքի ծավալի, գների և ինֆլյացիայի վրա ազդեցությունը արտահայտող խնդիրների առաջացմամբ: Փողը դարերի ընթացքում գտնվել է դրամավարկային ու ֆինանսական համակարգերի մասին տնտեսագիտական տեսությունների հիմքում: Այն հասարակության կյանքում իր դերով մարդկանց առօրյա գործունեության կարևոր կողմերից մեկն է: Դա է, որ իր առեղծվածներով հանդերձ պայմանավորում է մարդկանց բարեկեցության մակարդակը, քաղաքակրթության բարիքներից օգտվելու հնարավորությունը:

Փողը գրեթե միշտ վճարման միջոց է, փոխանակվում է ապրանքների ու ծառայությունների հետ, վճարվում է պարտքերի դիմաց՝ դրսևորվելով որպես գործարքների կատարման համար օգտակար առանձնահատուկ ակտիվ: Բնականաբար, փողի էությունը լավագույնս բացահայտվում է իր կատարած գործառնությունների միջոցով, որպիսիք են.

1. փողի կուտակման կամ խնայողության միջոցի գործառնությոնը,
2. փողը որպես արժեչափ հանդես գալը,
3. փողի շրջանառության միջոցի դեր կատարելը:

Փողի խնայողության միջոց լինելու գործառնությոնը գործնականում դրսևորվում է այն ժամանակ, երբ առօրյա գնումներ կատարելու գործարքները ժամանակային առումով հետաձգվում են, տեղափոխվում ավելի ուշ ժամկետների: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս կուտակել, ստեղծել գնողունակության որոշակի պաշար և ծառայեցնել գործունեության հետագա կարգավորման նպատակներին: Տեսականորեն, թեև փողը կուտակման լավագույն միջոցը չէ արժեզրկման ենթակա լինելու պատճառով, սակայն մարդիկ հետագա գնումներ կատարելու և ծախս իրականացնելու նպատակով միշտ էլ շահագրգռված են փողային կուտակումների մեջ:

Արժեչափի դերում գտնվելիս փողը հնարավորություն է առաջացնում զնահատել պաշարների, դրամական հոսքերի և այլ արժեքների մեծությունը, տնտեսական գործառնությունները:

Որպես շրջանառության միջոց փողը հնարավորություն է ստեղծում և նպաստում է ապրանքների ու ծառայությունների վաճառքի և գնման ծախսերը կրճատելուն, պակասեցնում է գործարքի կատարման ժամանակը, թույլ է տալիս խուսափել բարտերային փոխանակության հետ կապված շուկայական բարդ գործառույթների ծախսերից ու դժվարություններից:

Հասարակության տնտեսական–քաղաքական զարգացման ծրագրեր մշակելու, վերարտադրողական գործընթացները զնահատելու և կարգավորելու համար բավական չէ միայն պարզել փողի էությունն ու գործառույթները: Կարևոր է նաև որոշել կոնկրետ իրավիճակին համապատասխան շրջանառության համար անհրաժեշտ փողի զանգվածը, նրա կազմը և կառուցվածքը, որը ծառայում է արտադրության ծավալի աճի ապահովմանը, բնակչության կարիքների բավարարմանը ինֆլյացիայի ծրագրային մակարդակը պահպանելու համար: Կոնկրետ պահի դրությամբ շրջանառության մեջ եղած փողի զանգվածը կոչվում է փողի առաջարկ և դրսևորվում է որպես իրացվելի ակտիվների ամբողջություն: Գործարքների կատարման համար կարող են օգտագործվել փողի տարբեր տեսակներ, ինչը, կոնկրետ նպատակահարմարության համապատասխան, կարգավորվում է պետության կողմից՝ ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի:

Փողի առաջարկը ձևավորող ակտիվները բնութագրվում են մասնակցության և իրացվելիության տարբեր աստիճանով: Փողի քանակի մեջ նախ պետք է առաջին հերթին ընդգրկել կանխիկ փողի տեսքով ակտիվները, ինչը շրջանառության մեջ թողարկված թղթադրամների ու մետաղադրամների ամբողջությունն է: Դրանք, ըստ էության, բնութագրվում են չնչին արժեքով, հատկապես թղթադրամները, և փողի դերը դրանց վերապահվում է պետության կողմից, ուստի հաճախ անվանվում են «օրենքով փողեր»: Իհարկե, այդ փողերին զուգահեռ փողի դեր կարող են կատարել իրենց սեփական արժեքն ունեցող որոշակի ապրանքներ: Նման փողերը կոչվում են ապրանքային փողեր, որոնց առավել տարածված օրինակ են ոսկին ու արծաթը:

Շրջանառության մեջ փողի դեր կատարող ակտիվների հաջորդ կարևորագույն խումբն ունի ավանդային դրսևորում՝ չեկային ավանդներ, չեկային հաշիվներ, ցպահանջ ավանդներ և այլն, ավանդներ, որոնցից միջոցները կարող են ուղղվել գործարքների դիմաց երրորդ անձանց վճարումներ կատարելուն:

Շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածը տրոհվում է մի քանի ագրեգատների: Ժամանակակից շուկայական տնտեսություններում դրանք հետևյալն են՝

1. Դրամական բազա (M0)– ընդհանուր գումարով ընդգրկում է շրջանառության մեջ եղած կանխիկ փողը, այդ թվում նաև կազմակերպությունների դրամարկուներում եղածը:
2. Դրամական ընդհանուր բազա (M1)–շրջանառության մեջ եղած կանխիկ զանգվածը (M0)՝ գումարած բնակչության ու կազմակերպությունների ցպահանջ ավանդներն ու ճանապարհային չեկերը: Այսինքն՝ այն ամենը, ինչը սպասարկում է ընթացիկ դրամաշրջանառությունը:
3. Փող ընդհանրապես (M2)– ընթացիկ շրջանառությունը սպասարկող փողի զանգված՝ գումարած բնակչության ու կազմակերպությունների երկարատև խնայողությունները (ավանդները):
4. «Փող լայն իմաստով» (M3)– փողի ընդհանուր զանգված՝ գումարած կազմակերպությունների միջոցները հաշիվներում և կապիտալ ներդրումների ֆինանս-

սավորման աղբյուրները: Որոշ մոտեցումներում այս ազդեցատը կարող է ներառել նաև բանկերում պահվող ոչ փողային իրացվելի ակտիվները: Դա կարող է դրսևորվել նաև M4 ազդեցատի միջոցով:

Ամեն դեպքում շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը գործունային ցուցանիշ է, կախված է շուկայական տնտեսության բնականոն գործունեությունը ապահովող շրջանառության ծավալից ու փողի շրջանառության արագությունից:

Գործնականում գոյություն ունի կանխիկ և ոչ կանխիկ (անկանխիկ) դրամաշրջանառություն: Կանխիկ դրամաշրջանառությունը տեսականորեն կարող է ձևակերպվել որպես փողի շարժում իր գործառույթների կատարման ընթացքում կամ փողի շարժում ապրանքների, ծառայությունների ու աշխատանքների իրացմանը սպասարկելու գործընթացում:

Կանխիկ դրամաշրջանառության շրջանակներում շրջանառության մեջ գործում են կանխիկ փողերը՝ կատարելով երկու գործառույթ՝ վճարելամիջոցի և շրջանառության միջոցի: Կանխիկ փողերը օգտագործվում են ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարելու, ապրանքային շարժի հետ չառնչվող հաշվարկներ կատարելու՝ աշխատավարձ, պարգևատրում, կենսաթոշակ, նպաստ, ապահովագրական մուծումներ և փոխհատուցում, արժեթղթերի հետ գործարքներ, շահաբաժիններ և բազմաթիվ այլ վճարումներ: Կանխիկ դրամական շարժը միշտ իրականացվում է փողի տարբեր տեսակների միջոցով՝ բանկնոտ, մետաղադրամ, վարկային այլ գործիքներ (մուրհակ, չեկ, կրեդիտային քարտ): Գործնականում զրեթե բոլոր երկրները փորձում են հնարավորինս սահմանափակել կանխիկ դրամաշրջանառությունը այնքանով, որ դա սողանցքներ ունի ֆիզիկական ու իրավաբանական անձանց պետական վերահսկողությունից խուսափելու առումով:

Անկանխիկ հաշվարկները տեղի են ունենում արժեքների շարժին կանխիկ փողի չմասնակցելու պայմաններում: Դրանց բաժինը սովորաբար լայն առումով դրամաշրջանառության մեջ բարձր է: Սակայն՝ Զայաստանի Զանրապետությունում հնարավոր չէ որոշել նույնիսկ մոտավոր մակարդակ՝ այդ բնագավառը պլանավորման չտրվելու և վիճակագրական հաշվետվությունների մեջ ըստ ապրանքային գործառույթությունների կանխիկ հաշվարկները լրիվ չներառելու պատճառով:

Անկանխիկ հաշվարկների բարձր տեսակարար կշիռը դրամաշրջանառության ճիշտ ու գրագետ կազմակերպման վկայությունն է ցանկացած երկրում: Կանխիկ ու անկանխիկ դրամաշրջանառության միջև կա սերտ կապ և փոխպայմանավորվածություն: Փողը մշտապես շրջանառության մի ոլորտից անցնում է մյուսը՝ ձևավորելով ընդհանուր դրամական պտույտ, որում գործում են միասնական փողերը:

Կոնկրետ իրադրության և ժամանակաշրջանի կտրվածքով շրջանառության միջոցի գործառույթը կատարելու համար անհրաժեշտ մետաղական փողի քանակությունը հավասար է ապրանքային գների գումարի և փողի պտույտների թվի հարաբերությանը: Այն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Դք = \text{Ապրանքային գների գումար} / \text{Շրջապտույտի արագություն}$$

$$Դք = (S \rho_i q_i) / V q:$$

Վարկային փողերի ի հայտ գալով՝ շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը ստանում է հետևյալ տեսքը՝

(վաճառվող ապրանքների մեծի ունար՝ հանած ապառիկ վաճառքը + պարտքային պարտավորությունների դիմաց վճարումների ունար – փոխադարձ մարվող վճարումների ունար)

$$\text{Դք} = \frac{\text{Դրամի շրջապտույտի արա ություն (պտույտների միջին թիվ)}}{\text{...}}$$

Դրամական զանգվածը, ի վերջո, գնողունակ, վճարային և կուտակվող միջոցների այն ամբողջությունն է, որը սպասարկում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց, ինչպես նաև պետությանը վերաբերող տնտեսական կապերին:

01.07.06 դրությամբ շրջանառության մեջ գտնվող կանխիկի (կուպյորային կառուցվածքի) 3.8%-ը՝ մետաղադրամներ են, 96.2%-ը՝ թղթադրամ: Թղթադրամների առավելագույն մասը՝ 31.9%-ը բաժին է ընկնում 10 000 դրամանիշերին, 22.4%-ը՝ 5 000 դրամանիշերին, 27.5%-ը՝ 20 000 դրամանիշերին, 8.4%-ը՝ 1 000 դրամանիշերին: Ըստ տարիների՝ կառուցվածքային փոփոխություններն այնքան էլ մեծ չեն (տես աղյուսակ 22.1):

Աղյուսակ 22.1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տվյալներով՝ փողի զանգվածը 1998–2006 թթ. բնութագրվում է հետևյալ տվյալներով.

Ցուցանիշներ	1998	1999	2000	2001	2002	31.08.2006	
							Տոկոսով 1998թ. նկատմամբ
1. Փողի զան վածը (3 + 4 + 5)	97075	110690	151653	172218	185202	395745	407.7
2. Դրամային զան վածը	57537	56288	76722	85033	107407	252470	438.8
3. Շրջանառության մեջ կանխիկ դրամը	41370	42610	59486	65027	74980	162132	391.9
4. Ցպահանջ ավանդներ	11308	9617	11909	13581	21954	64698	572.1
5. Ժամկետային խնայողություն – արտաբանական ավանդներ	44398	58842	80259	93609	88267	93286	210.1
6. ՀՆԱ	955385	987444	1031338	1175877	1356983	2636184	275.9
7. Շրջանառության մեջ կանխիկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ	4.33	4.32	5.77	5.53	5.53	6.15	142.0

Աշխարհին հայտնի է դրամական համակարգի երկու տիպ՝

- Մետաղական շրջանառության համակարգ, որը հիմնված է իսկական փողի վրա (ոսկյա և արծաթյա), կատարում է փողի բոլոր հինգ ֆունկցիաները, իսկ զուգահեռաբար փոխանակվում է իսկական փողերով:
- Թղթավարկային շրջանառության համակարգ, որի պարագայում իսկական փողերը դուրս են մղվում արժեհիշերի կողմից, իսկ շրջանառության մեջ գտնվում են թղթադրամները կամ վարկային փողերը:

Մետաղային դրամական համակարգի ժամանակ առաջանում են երկու տիպի համակարգեր՝ բիմետալիզմ (երկմետաղային) և մոնոմետալիզմ (միամետաղային): Մոնոմետալիզմ համակարգում համընդհանուր արժեչափի դերը պատկանում է մեկ մետաղի, որպիսին կարող է լինել և արծաթը, և ոսկին: Արծաթե մոնոմետալիզմ գոյություն է ունեցել Ռուսաստանում 1843–1852 թթ., Յնդկաստանում՝ 1852–1893 թթ., Չինաստանում՝ մինչև 1935 թ., ոսկյա մոնոմետալիզմ՝ Ռուսաստանում 1897 թ. սկսած: Գոյություն ունի ոսկյա մոնոմետալիզմի ստանդարտի երեք տեսակ՝ ոսկեդրամային, ոսկեհամաձուլվածքային, ոսկեդևալային: Ոսկեդրամայինը բնութագրվում է նրանով, որ գոյություն ունի ազատ դրամահատում, բանկային տոմսերը անարգել փոխանակվում են ոսկով, արգելված է ոսկու տեղաշարժը երկրների միջև: Այդ ստանդարտը նախատեսում է էմիսիոն կենտրոններում ոսկու պաշարի առկայություն: Առաջին համաշխարհային պատերազմը հանգեցրեց շատ երկրներում ոսկեդրամային ստանդարտի վերացմանը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում մտցվեց ոսկեձուլվածքային ստանդարտ, որի պայմաններում բանկոտները փոխանակվում էին ոսկու ձուլակտորով: Գերմանիայում, Դանիայում, Նորվեգիայում ներդրվեց ոսկեդևալային ստանդարտը, որի դեպքում բանկոտները փոխանակվում էին դևալով, այսինքն՝ արտասահմանյան երկրների արտարժույթային վճարելամիջոցներով: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը (1929–1933 թթ.) հանգեցրեց նրան, որ հաստատվեց թղթադրամավարկային փողի համակարգը, որի դեպքում իշխող դիրքը պատկանում է երկրի էմիսիոն կենտրոնի կողմից թողարկվող բանկոտներին:

Դրամական համակարգն ունի կոնկրետ տարրեր ու գործիքներ, որոնցով ապահովվում է դրամական շրջանառության ընթացքը: Դրանք են դրամական միավորները, գնի մասշտաբը, փողի տեսակները, էմիսիոն համակարգը, դրամաշրջանառությունը կարգավորող պետական ապարատը և այլն:

Դրամական միավորը օրենսդրական կարգով սահմանված դրամանիշ է, որով չափվում և գներով արտահայտվում է ապրանքների ու ծառայությունների արժեքը: Երկրների մեծ մասում գործում է բաժանման տասնորդական համակարգը. 1 դոլար = 100 ցենտ, 1 ռուբլին = 100 կոպեկ, 1 դրամը = 100 լումա և այլն:

Գնի մասշտաբը միջոց է դրամական միավորը մետաղի քանակությամբ արտահայտելու համար, այնքանով, որքանով վարկային փողերը չունեն սեփական արժեք և հանդես են գալիս իրական փողի անունից: Ներկայումս գնի մասշտաբը կորցրել է իր տնտեսական նշանակությունը, թեև ոչ վաղ անցյալում կարևոր բաղադրիչ էր, ուներ ակտիվ դեր: ԽՍՀՄ-ում 1961 թ. սկսած ռուբլու ոսկյա պարունակությունը սահմանվել էր 0967412 գրամ մաքուր ոսկի: Փողի տեսակները, որոնք հանդիսանում են օրինական վճարամիջոց, վերաբերում են վարկային փողին ու բանկոտներին, ինչպես նաև թղթադրամին (գանձարկղային տոմս):

Էմիսիոն համակարգը ծառայում է դրամաշրջանառության կարգավորմանը և դրամավարկային քաղաքականության իրականացմանը և, ըստ էության, ներկայացնում է շրջանառության մեջ դրամանիշերի թողարկման սահմանված օրենսդրական կարգը: Սովորաբար էմիսիոն գործարքները իրականացնում է Կենտրոնական բանկը՝ թողարկելով և շրջանառության մեջ մտցնելով բանկային տոմսեր, գանձարկային թղթադրամներ, նաև մետաղադրամ: Բանկային տոմսերի էմիսիան իրականացվում է երեք ուղիով՝ վարկային հիմնարկներին ռեսուրսների հատկացում, գանձապետարանին պետական արժեթղթերով ապահովված վարկերի հատկացում, բանկնոտների բացթողնում օտարերկրյա արժույթով փոխանակելու ճանապարհով: Դրամաշրջանառության կարգավորումը կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկն է: Ներառում է միջոցառումների այն ամբողջությունը, որով կարգավորվում է շրջանառության մեջ դրամական զանգվածի աճը, այսինքն՝ այն սահմանաչափերի որոշումը, որոնց ուղղված է լինելու կենտրոնական բանկերի գործունեությունը: Գործնականում կենտրոնական բանկն է, որը, պետական մարմինների հետ համաձայնեցված, որոշում է շրջանառության մեջ դրամական զանգվածի ավելացման գումարը կոնկրետ չափորոշիչների շրջանակներում:

Ցանկացած երկրի դրամական համակարգ, լինելով ազգային, գործում է միջազգային դրամական համակարգի շրջանակներում ենթարկվելով ու ղեկավարվելով բոլորի համար ընդունելի համարվող չափորոշիչներով ու կանոնակարգերով: 1944 թվականից սկսած մինչև 1973 թ. ՄԱԿ–ի Բրետտոն–Վուդսյան (ԱՄՆ) կոնֆերանսի որոշմամբ միջազգային դրամական համակարգն իրենից ներկայացնում է յուրահատուկ միջպետական ոսկու դեֆիզային ստանդարտ: Դրա գլխավոր ուղենիշներն էին.

- Ոսկին կատարում է համաշխարհային փողի ֆունկցիա երկրների միջև և հանդես է գալիս որպես վերջնական հաշվարկի միջոց, հասարակական հարստության համընդհանուր առարկայացնող:
- Ոսկուց բացի, միջազգային վճարային շրջանառության մեջ օգտագործվում են ԱՄՆ դոլարը և անգլիական ֆունտ ստեռլինգը:
- ԱՄՆ դոլարը փոխանակվում էր ոսկով՝ ըստ նախատեսված համամասնության: Ոսկու գինը ձևավորվում էր ԱՄՆ–ի պաշտոնական զնի հիման վրա և մինչև 1968 թ. դրանից չի շեղվել:
- Ազգային դրամանիշերի միավորները կենտրոնական բանկերի միջոցով ազատորեն փոխանակվում էին դոլարով, իսկ դոլարի միջոցով՝ ոսկով միջազգային արժույթային ֆոնդի սահմանած համամասնությամբ:

Որպես արժեքների էտալոն՝ դոլարը օգտագործելու վրա հիմնված դրամական համակարգը 1971–73 թթ. ենթարկվեց կրախի (սնանկացման): 1971 թ. սկսած՝ դոլարի՝ ոսկով փոխանակելը դադարեցվեց: Պահուստային արժույթի դերը ստանձնեցին գերմանական մարկը, ճապոնական իենը և էքյուն: Բրետտոն–Վուդսյան դրամական համակարգին փոխարինելու եկավ Ջամայկայի դրամական համակարգը, որը ձևակերպվեց միջազգային արժույթային ֆոնդի կողմից (ՄԱՖ) 1976 թ.: Ըստ այդ համակարգի.

- ԱՄՆ դոլարը պահպանում է իր կարևոր դերը միջազգային հաշվարկներում և այլ երկրների արժույթային պահուստներում:
- Ոսկին մնում է որպես պետության պահուստ և օգտագործվում է այլ երկրների դրամական միավորներ ձեռք բերելու համար:

Ժամանակակից դրամական համակարգը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- վերացվել է դրամական միավորների ոսկու պաշտոնական պարունակությունը,
- անցում է կատարվել ոսկով չփոխանակվող վարկային փողի, որը շատ քիչ է տարբերվում թղթադրամից,
- վարկային փողին զուգընթաց որոշ երկրներում դրամական շրջապտույտի մեջ զուգահեռաբար գործում է թղթադրամը՝ գանձարկղային տոմսերի տեսքով,
- պետությունները վարկավորման, ինչպես նաև ոսկու և արժույթի պահուստի պաշտոնական աճի դիմաց թողարկում են բանկնոտներ,
- դրամական շրջապտույտի մեջ գերազանցում են անկանխիկ համակարգերը:

Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը՝ որպես համաշխարհային մաս, կազմակերպվում և գործում է միջազգային պահանջներին համապատասխան՝ հիմնվելով հայաստանյան առանձնահատկությունների վրա:

Հայաստանի դրամական համակարգը գործում է 1993 թ. նոյեմբերից, երբ ազգային էմիսիոն բանկը ստանձնեց արժույթ թողարկելու գործառույթը: Հանրապետության պաշտոնական դրամական միավորը (արժույթը) դրամն է: Օրենքով դրամի և ոսկու միջև հարաբերակցություն չի սահմանված: Դրամի պաշտոնական կուրսը արտասահմանյան դրամական միավորների նկատմամբ որոշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից և հրապարակվում է մամուլում: Գների ֆիքսված մասշտաբը բացակայում է: Օրինական վճարային ուժ ունեցող փողի տեսակներն են բանկնոտները և մետաղադրամները, որոնք ապահովվում են հանրապետության կենտրոնական բանկի բոլոր ակտիվներով: Էմիսիա կատարելու, նրանց շրջանառություն կազմակերպելու, շրջանառությունից հանելու բացառիկ իրավունքը պատկանում է կենտրոնական բանկին: Հայաստանի կենտրոնական բանկի վրա դրված են այդ ոլորտի հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ արժույթի՝ հայկական դրամի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում և կարգավորում: Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարելամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ թողարկելը և դրանք շրջանառությունից հետ կանչելն ու հանելը կենտրոնական բանկի մենաշնորհն են: Թողարկված և շրջանառությունից չհանված դրամանիշերը նրա անվերապահ պարտավորություններն են և ապահովված են իր բոլոր միջոցներով:
- Կենտրոնական բանկը կազմակերպում և ապահովում է թղթադրամի թողարկումը և մետաղադրամի անվտանգ պահպանումը, ինչպես նաև օրենքներով ու այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ դրանց ոչնչացումը:
- Կենտրոնական բանկը սահմանում է ՀՀ օրինական վճարելամիջոց հանդիսացող թղթադրամի և մետաղադրամի անվանական արժեքը, չափը, կշիռը, պատկերներով ու մակագրություններով էսքիզը, պաշտոնական ու վճարունակության հատկանիշները:
- Կենտրոնական բանկն իր կողմից սահմանված կարգով անվճար փոխանակում է ներկայացված թղթադրամն ու մետաղադրամն առանց գումարային սահմանափակումների:
- Կենտրոնական բանկն իրականացնում է նաև հուշադրամների թողարկում: Ներկայումս թողարկված են և շրջանառության մեջ են գտնվում բարձրարժեք մե-

տաղներից պատրաստված ավելի քան 15 անուն հուշադրամներ, որոնք նվիրված են պատմական հայտնի անձանց, ազգային հուշարձաններին, պատմական վայրերին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին և ՀՀ–ում կայացած միջազգային միջոցառումներին:

Կենտրոնական բանկը օպերատիվ վերահսկողություն է սահմանում և հետևում դրամաշրջանառության ընթացքին՝ ժամանակ առ ժամանակ ցուցաբերելով կոնկրետ միջամտություն: Այդ նպատակին են ծառայում պահուստային ֆոնդերը: Տվյալ բնագավառում պահուստային ֆոնդն իրենից ներկայացնում է շրջանառության մեջ բաց չթողնված բանկնոտների և մետաղադրամի պաշար, որոնք կարևոր նշանակություն ունեն դրամարկղային ռեսուրսների կենտրոնացված կարգավորումը կազմակերպելու համար: Կանխիկ դրամի մնացորդը դրամարկղում լիմիտավորվում է, և երբ փաստացի մնացորդը լիմիտը գերազանցում է, ավելցուկը շրջանառու դրամարկղից անցնում է պահուստային ֆոնդին: Պահուստային ռեզերվի օբյեկտիվ անհրաժեշտությունը բխում է հետևյալից՝

- տնտեսության լրացուցիչ կարիքները կանխիկ դրամով բավարարելուն,
- շրջանառության մեջ առանձին բանկնոտների պիտանելիության կորստի դեպքում նորով փոխարինում,
- դրամական զանգվածի պարտադիր կուսյուրային կառուցվածքի պահպանման ապահովում,
- դրամանիշների փոխադրման ու պահպանման ծախսերի խնայում:

Կանխիկ դրամը շրջանառության մեջ բաց է թողնվում էմիսիոն թույլտվության հիման վրա, փաստաթուղթ, որն իրավունք է տալիս շրջանառու դրամարկղը համալրել պահուստային ֆոնդի հաշվին: Այդ փաստաթուղթը տրվում է ՀՀ ԿԲ վարչության կողմից կառավարության էմիսիոն սահմանային ծավալի շրջանակներում:

Դրամաշրջանառության բնականոն ընթացքը և դրամի կայունությունը ենթարկվում են բազմազործոն ազդեցությունների և կարող են ունենալ շեղումներ, որպիսիք բացառելու կամ մեղմելու համար կարևոր դեր ունի ԿԲ–ի դրամավարկային քաղաքականությունը: Փողի նկատմամբ տնտեսության պահանջարկի և առաջարկի էական տարբերությունները կարող են առաջացնել ինֆլյացիա:

Ինֆլյացիան դրամական համակարգի ճգնաժամային վիճակն է, որի գլխավոր հատկանիշը շրջանառության ոլորտի թղթադրամներով գերհագեցվածությունն է: Դա հետևանք է թղթադրամի չափից դուրս բացթողնման կամ ապրանքային զանգվածի կրճատման: Վերջին հաշվով ինֆլյացիան արտահայտում է դրամի, ոսկու կամ ազատ փոխարկելի արտարժույթի նկատմամբ արժեզրկում, ինչն ուղեկցվում է գների աճով և իրական աշխատավարձի անկմամբ: Այն երբեմն ընդունում է երկարաձիգ և խրոնիկ բնույթ: Ինֆլյացիայի նախնական պատճառը տնտեսության ոչ համամասնական զարգացումն է, վարկային խոշոր չափերի էմիսիան, դրամաշրջանառության օրենքի խախտումը: Պատճառները առավելապես ներքին են և բխում են պետական ֆինանսների ճգնաժամից՝ բյուջեի դեֆիցիտ, պետական պարտքի աճ, դրամի էմիսիա, վարկային փողի զանգվածի մեծացում, դրամի շրջապտույտի արագության իջեցում: Արտաքին գործոնները անդրադառնում են անուղղակիորեն և գլխավորապես

¹ Տե՛ս 1995 թ. ՀՀ կենտրոնական բանկի հաշվետվություն, էջ 33-34:

կապված են միջազգային ճգնաժամերի հետ:

Տնտեսագետները տարբերում են ինֆլյացիայի երկու տեսակ՝ ծախսերի և պահանջարկի ինֆլյացիաներ: Ծախսերի ավելացման հետ կապված ինֆլյացիան գների բարձրացումը կապում է միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի (ինքնարժեքի) աճով: Դա գլխավորապես պայմանավորված է աշխատավարձի բարձրացումով, հումքի, նյութերի, այլ ընթացիկ ակտիվների թանկացումով: Պահանջարկի ինֆլյացիան սովորաբար բացատրվում է առաջարկի նկատմամբ ամբողջական պահանջարկի գերազանցումով, մի առանձնահատուկ վիճակի առաջացմամբ, երբ տնտեսությունը (հասարակությունը) փորձում է ծախսել ավելի շատ, քան ի վիճակի է արտադրել, քանի որ արտադրական ոլորտը հնարավորություն չունի ավելացնել արտադրանքի իրական ծավալը՝ պահանջարկի ավելցուկը հասցնում է գների բարձրացման:

Հայաստանի Հանրապետությունում ինֆլյացիան դրսևորվել է ազգային դրամը շրջանառության մեջ մտցնելու պահից սկսած: Առաջին իսկ տարում (1993 թ.) տարեկան ինֆլյացիան կազմել է 1089.6%: Այդպիսի ընթացքը ՀՀ-ում անսպասելի համարել չի կարելի: Դա հետևանք էր դրամական ռեֆորմի վատ նախապատրաստման ու սխալներով անցկացման և առավելապես ստեղծված տնտեսական վիճակով: Տնտեսավարման կենտրոնացված պլանային համակարգից շուկայական տնտեսական հարաբերություններին անցման տվյալ փուլում ձևավորման սաղմնային վիճակում էր գտնվում շուկայական հարաբերություններին համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը: Դեռևս գերիշխող էր պետական սեփականության վրա գործող ձեռնարկությունների բաժինը, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը հիմնականում կատարվում էր էմիսիոն աղբյուրների հաշվին: Անկայուն էր նաև բանկային համակարգը, որի գործունեությունը կանոնակարգված չէր: Այս պայմաններում դրությունը շտկելու նպատակով ՀՀ ԿԲ-ն մշակեց և իրականացրեց դրամավարկային քաղաքականության առաջին ծրագիրը: Մակրոտնտեսական իրավիճակի պահանջներին համապատասխան կենտրոնական բանկը առաջնորդվեց «կառավարվող փոխարժեք» քաղաքականության սկզբունքով: Ջուզահեռաբար սահմանվեցին դրամական զանգվածի, դրամական բազայի, բանկային համակարգի և ԿԲ-ի զուտ ներքին ակտիվների, ԿԲ-ի կողմից կառավարությանը հատկացվող զուտ վարկերի, պետական բյուջեի պակասուրդի և արտաքին պարտքի առավելագույն և ԿԲ-ի զուտ պաշտոնական արժույթային պահուստների նվազագույն սահմանաչափերը: Այդ ամենը նպաստեց ինֆլյացիայի զսպմանը, և 1995 թ. սպառողական գների ինդեքսի աճը կազմեց 32.2%՝ 1994 թ. արձանագրված 17.61%-ի դիմաց:

Տնտեսությունում իրացվելիության կարգավորման նպատակով մինչև 1996 թ. վերջը ԿԲ-ն հիմնականում կիրառում էր արտարժույթային ինտերվենցիաները, որոնցով հարթում էին ինչպես պետական բյուջեի պակասուրդի ծածկման նպատակով ստացվող արտաքին ֆինանսավորման տատանումները, այնպես էլ փոխարժեքի վայրիվերումները: Ավանդային սակարկությունների և արժույթային ինտերվենցիաների օպտիմալ զուգակցման միջոցով ակտիվացավ հանրապետություն կապիտալի հոսքը: Դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման մեխանիզմները կատարելագործելու նպատակով 1999 թ. վերջից ԿԲ-ն հստակեցրեց դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ռեպո գործառնությունների տոկոսադրույքների միջոցով ազդակների հաղորդման մեխանիզմը: Դրա-

մավարկային քաղաքականության մշակման և իրականացման անցած կարճ ժամանակահատվածում ընդհանուր առմամբ հաջողվեց ձեռք բերել մակրոտնտեսական կայունություն, թեև դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք դժվարացնում են դրամավարկային քաղաքականության իրականացումը:

Ինֆլյացիայի իրավիճակը բնութագրվում է մի շարք հատկանիշներով, որոնցով էլ տարբերակվում է ինֆլյացիայի տեսակը, առաջացման պատճառները, հետևանքները, որոշվում այն զսպելու նպատակով մշակվող միջոցառումների ամբողջությունը: Տեսականորեն ընդունվում են ինֆլյացիայի հետևյալ տեսակները¹.

1. թաքնված ինֆլյացիա (փողի քանակի ավելցուկային աճ, ապրանքների դեֆիցիտ),
2. խրոնիկական (զների 3–4% աճի տարեկան կայուն տեմպերի պահպանում),
3. ինֆլյացիայի գալարապտույտ աճ (զների մինչև 100% աճ),
4. իրացվելիության թակարդ (ներդրումային չափազանց ցածր ակտիվություն, վարկի բարձր տոկոսադրույք):

Ինֆլյացիայի դեմ պայքարի ընդունված հիմնական մեթոդները երկուսն են՝ դրամական ռեֆորմ և հակաինֆլյացիոն քաղաքականություն:

Դրամական ռեֆորմը անցկացվում է միանվագ, մասնակիորեն, կամ լրիվությամբ վերակառուցվում է դրամական համակարգը: Ռեֆորմի անցկացումն ունի տարբեր մեթոդներ՝

- **Նուլիֆիկացիա** – արժեզրկված դրամանիշերը հայտարարվում են չեղյալ, շրջանառության մեջ են մտցվում նորերը,
- **ռեստավրացիա** (վերականգնում) – վերականգնվում և հաստատվում է դրամական միավորի ոսկու նախկին պարունակությունը (1960–1962 թթ),
- **դևալվացիա** – դրամական միավորի ոսկու պարունակությունը պակասեցվում է կամ ազգային դրամի կուրսը իջեցվում է ոսկու, արծաթի և արտարժույթի նկատմամբ,
- **դեմոնիացիա** (զրոները ջնջելու մեթոդ) – հնի համեմատությամբ նոր հարաբերակցությամբ թողարկում է նոր դրամանիշերը, զները, աշխատավարձը, դրամանիշերի մնացորդները հաշիվներում ու դրամարկում, հաշվեկշիռը վերահաշվարկվում են նույն հարաբերակցությամբ:

Հակաինֆլյացիոն քաղաքականությունը տնտեսության կարգավորման ուղղությամբ պետության կողմից իրականացվող միջոցառումների ամբողջությունն է, որն ուղղված է ինֆլյացիայի դեմ պայքարին: Աշխարհում ընդունվում է երկու հիմնական մոտեցում՝ դեֆլյացիոն քաղաքականություն և եկամուտների քաղաքականություն: Դեֆլյացիոն քաղաքականությունը ներառում է հետևյալ միջոցառումները.

- դրամական պահանջի կարգավորում դրամավարկային և հարկային մեխանիզմի միջոցով,
- պետական ծախսերի կրճատում,
- դրամական զանգվածի սահմանափակում,
- հարկային բեռի ծանրացում,
- վարկի տոկոսադրույքների բարձրացում,

¹ Աղյուսակի ելակետը թիվ 1 հավելվածի տվյալներն են:

- առանձին արտադրությունների մրցակցային խրախուսում հարկային բեռը թեթևացնելու ճանապարհով:
Եկամուտների քաղաքականությանը վերաբերում է հետևյալը.
- վերահսկողություն գների վրա,
- վերահսկողություն աշխատավարձի նկատմամբ՝ հասանելիք աշխատավարձի սառեցում կամ աճի սահմանափակում,
- մասնակի կամ լրիվ ինդեքսավորում:

Հակահինֆլացիոն միջոցառումների հիմնական դերակատարողները երկրի կառավարությունն ու կենտրոնական բանկն են: Կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականության գործիքներն օգտագործվում են ըստ անհրաժեշտության: Դրանք են գործառնությունները բաց շուկայում, առևտրային բանկերի ավանդների պարտադիր պահուստավորումը, վերաֆինանսավորման քաղաքականությունը:

Գործառնություններ բաց շուկայում նշանակում է փողի զանգվածի կարգավորում, ինչը զլխավորապես հիմնված է պետական արժեթղթերի, բանկային հոժարագրերի և այլ վարկային պարտավորությունների գնման ու վաճառքի մեխանիզմի վրա:

Պարտադիր պահուստավորման քաղաքականությունը երկրի դրամավարկային կարգավորման առավել կարևոր ու գործուն գործիք է, որով ԿԲ–ն ազդում է բանկերի կանխիկ դրամի ռեսուրսների և վարկային հնարավորությունների վրա: Այն գործնականում փողի շուկայի վրա պետության ազդեցության ուղղակի վարչական մեթոդ է:

Վերաֆինանսավորման քաղաքականությունը ԿԲ–ի դրամավարկային քաղաքականության իրականացման ամենակարևոր գործիքներից է, որը հիմնված է առևտրային բանկերի կողմից նախկինում հաշվի առնված պարտատոմսերի վերահաշվառման վրա՝ մուրհակից պահվում է զեղչ կամ հաշվառման տոկոս, դրանով իսկ ազդում է վարկավորման ծավալի վրա: Բարձրացումը նշանակում է «թանկ» փողերի կոչտ, իսկ նվազեցումը «էժան» փողերի քաղաքականություն՝ վերջին հաշվով հանգեցնելով վարկերի սահմանափակման կամ վարկային էքսպանսիայի:

Դրամավարկային քաղաքականության արդյունավետության համար կարևոր դերակատարություն ունի նաև ԿԲ–ի կայունացման ֆոնդերի պաշարների վիճակը, որոնք չափազանց անհրաժեշտ են արտասահմանյան արտադրության ապրանքների գնումները և վարկային գործառնությունները սպասարկելու համար: Պաշտոնական պահուստները ներառում են ոսկով ազատ փոխարկելի արտարժույթի պաշարները: Կարևոր է նաև երկրի պաշարային դիրքը արտարժույթի միջազգային հիմնադրամում:

Այդ ամենի ամբողջությունն իր դրական ազդեցությունն է թողնում ազգային արժույթի փոխարժեքի կայունացման վրա, ինչը ՀՀ օրինակով երևում է ստորև բերվող տվյալներով: Առաջին տարիների արժեզրկման բարձր տեմպերին 1998 թ. փոխարինել է արժույթի կարգավորվող–չափավոր ինֆլացիան:

Աղյուսակ 22.2*

ՀՀ-ում ազգային արժույթի փոխարժեքի (դրամ/ ԱՄՆ դոլար)
աճի տեմպերի դինամիկան

Տարիները	Աճի տեմպերը
1995թ.՝ 1994 թ. նկատմամբ	227.7
1996թ.՝ 1995 թ. նկատմամբ	106.7
1997թ.՝ 1996 թ. նկատմամբ	116.6
1998թ.՝ 1997 թ. նկատմամբ	102.8
1999թ.՝ 1998 թ. նկատմամբ	101.7
2000թ.՝ 1999 թ. նկատմամբ	105.6
2001թ.՝ 2000 թ. նկատմամբ	102.1
2002թ.՝ 2001 թ. նկատմամբ	103.6
2003թ.՝ 2002 թ. նկատմամբ	96.8
2004թ.՝ 2003 թ. նկատմամբ	88.3
2005թ.՝ 2004 թ. նկատմամբ	90.7

22.3. ԿԲ-Ի ԴՐԱՍԱԿԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Կենտրոնական բանկերի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գլխավոր խնդիրը դրամական միավորի կայուն գնողունակ ուժի պահպանումն ու դրամական հաշվարկների և վճարումների սահուն համակարգի ապահովումն է: Միևնույն ժամանակ, կենտրոնական բանկերի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը հանդիսանում է պետության ընդհանուր տնտեսական կարգավորման բաղկացուցիչ կարևոր մասերից մեկը՝ ուղղված գործազրկության և արտադրության ճգնաժամային անկումների իսպառ կամ մասնակի վերացմանը: Դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի և ծավալի կարգավորման միջոցով:

Բանկային պրակտիկայում հայտնի են դրամավարկային քաղաքականության հետևյալ հիմնական ձևերը.

1. Ռեստրիկցիոն (կոշտ, կասեցնող) դրամավարկային քաղաքականություն կամ «թանկ փողի» քաղաքականություն:
2. Էքսպանսիոնիստական (փափուկ, խթանող) դրամավարկային քաղաքականություն կամ «էժան փողի» քաղաքականություն:
3. Միջանկյալ կամ «ոսկե միջինի» դրամավարկային քաղաքականություն, որն իրենից ներկայացնում է վերոհիշյալ երկու ձևերի յուրովի համակցում:

Ռեստրիկցիոն դրամավարկային քաղաքականությունն ուղղված է առևտրային և մասնագիտացված բանկերի վարկային և այլ ակտիվային գործառնությունների ծավալի սահմանափակմանը, պայմանների խստացմանը և տոկոսադրույքների մակարդակի բարձրացմանը: Վերջինիս իրականացումը սովորաբար ուղեկցվում է հարկերի ավելացմամբ, պետական ծախսերի կրճատմամբ և այլ միջոցառումներով, որոնք ուղղված են ինֆլյացիայի կանխմանն ու շատ դեպքերում՝ նաև վճարային հաշվեկշռի առողջացմանը: Այսպիսով՝ ռեստրիկցիոն դրամավարկային քաղաքականությունն օգտագործվում է ինչպես ինֆլյացիոն երևույթների դեմ պայքարելու նպատակներով, այնպես էլ ուղղված է գործարար ակտիվության պարբերաշրջանային տատանումների հարթեցմանը:

Դրամավարկային քաղաքականության այս ձևը, որպես կանոն, ուղեկցվում է վարկավորման և այլ ակտիվային գործառնությունների մասշտաբների ընդլայնմամբ, շրջանառության մեջ գտնվող փողի քանակի հավելաճի նկատմամբ վերահսկողության թուլացմամբ, հարկային դրույքների կրճատմամբ, տոկոսադրույքների մակարդակի օպտիմալացմամբ:

Ե՛վ ռեստրիկցիոն, և՛ էքսպանսիոնիստական դրամավարկային քաղաքականությունները կարող են ունենալ ինչպես հանրնդիանուր, այնպես էլ սելեկտիվ բնույթ: Չանընդհանուր դրամավարկային քաղաքականության իրականացման դեպքում կենտրոնական բանկի միջոցառումները տարածվում են բանկային հաստատությունների բոլոր տեսակների վրա, իսկ սելեկտիվի դեպքում՝ միայն առանձին ֆինանսավարկային հաստատությունների կամ էլ բանկային գործունեության որոշակի տեսակների վրա: Սելեկտիվ դրամավարկային քաղաքականությունը կենտրոնական բանկին հնարավորություն է ընձեռում ընտրանքային ներգործություն կատարել որոշակի ուղղություններով: Նրա գործնական իրականացման դեպքում օգտագործվում են ներգործության հետևյալ գործիքները՝ հաշվառման և վերահաշվառման գործառնությունների սահմանաչափերի հաստատումը (օրինակ՝ ըստ առանձին ճյուղերի, տարածաշրջանների և այլն), առևտրային և մասնագիտացված բանկերի կողմից իրականացվող գործառնությունների առանձին տեսակների լիմիտավորումը, որոշակի մարժայի սահմանումը զանազան ֆինանսավարկային գործառնությունների իրականացման դեպքում՝ ըստ վարկառուների տարբեր կատեգորիաների (վարկերի առանձին տեսակների տրամադրման պայմանների կանոնակարգումը, վարկային առաստաղների սահմանումը և այլն):

Բացի այդ, երբեմն տարբերում են նաև «լայն» և «նեղ» դրամավարկային քաղաքականությունները:

«Նեղ» դրամավարկային քաղաքականության իրականացման դեպքում օպտիմալ արժութային փոխարժեքը ձեռք է բերվում արժութային շուկայում ներդրումների (ներխուժումների), հաշվառման քաղաքականության և կարճաժամկետ տոկոսադրույքների վրա ազդող այլ գործիքների օգնությամբ: Իսկ «լայն» դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի վրա ներգործելու միջոցով սղաճի արդյունավետ կառավարման ճանապարհով:

Այսպիսով՝ մակրոտնտեսական մակարդակով դրամավարկային քաղաքականությունն իրենից ներկայացնում է կենտրոնական բանկի (որոշ երկրներում՝ ֆինանսների

նախարարության սերտ աջակցությամբ) նպատակամղված գործունեություն՝ համապետական խնդիրների լուծման նպատակով: Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության միջոցառումների ամբողջությունն ընդգրկում է դրամաշրջանառության և վարկի ոլորտները: Դրա միջոցով նախ և առաջ որոշվում են կանխիկ և անկանխիկ էմիսիայի սահմանները՝ երկրորդ մակարդակի բանկային հաստատությունների վարկային, դեպոզիտային և այլ գործառնությունների կարգավորման ճանապարհով:

Դրամավարկային քաղաքականության տվյալ ձևի և, հետևապես, առևտրային ու մասնագիտացված բանկերի գործունեության կարգավորման համապատասխան գործիքների ընտրությունն իրականացվում են տվյալ երկրի կենտրոնական բանկի կողմից՝ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համար:

Բանկային գործառնությունների կարգավորման մեխանիզմը կախված է երկրում բանկային գործունեության կազմակերպման ձևերից, կենտրոնական բանկի տեղից, դերից և նրա կողմից իրականացվող գործառնություններից, նրա «անկախությունից» և այլ գործոններից: Այն իր մեջ ներառում է ինչպես կանխիկ և անկանխիկ բանկային գործառնությունների կարգավորման մեթոդներն ու գործիքները, այնպես էլ դրամական զանգվածի, մակրո- և միկրոմակարդակներով բանկային տոկոսադրույքների և բանկային իրացվելիության դինամիկայի վերահսկողության կոնկրետ ձևերը:

Գոյություն ունեն բանկերի գործունեության վրա ներգործության կամ դրամավարկային քաղաքականության իրականացման երկու հիմնական մեթոդներ.

1. ուղղակի կամ վարչական,
2. անուղղակի կամ տնտեսական:

Ներգործության վարչական մեթոդներն են առևտրային և մասնագիտացված բանկերի քանակական կամ որակական պարամետրերի նկատմամբ կենտրոնական բանկի կողմից սահմանվող ուղղակի սահմանափակումները, սահմանաչափերը և արգելքները: Ներգործության վարչական մեթոդների օգտագործման դեպքում լայնորեն կիրառվում են հետևյալ գործիքները.

- բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունների առանձին տեսակների քվոտավորում (քվոտա՝ թույլատրված, սահմանված նորմա),
- տարբեր տեսակի վարկերի տրամադրման և վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափերի կամ առաստաղների սահմանում,
- մասնաճյուղերի, բաժանմունքների և ներկայացուցչությունների բացման սահմանափակումներ,
- կոմիսիոն միջնորդադրամների, ծառայությունների սակագների չափերի լիմիտավորում,
- բանկերի կողմից իրականացվող գործառնությունների անվանացանկի որոշում:

Բանկային գործառնությունների կարգավորման և համախառն դրամաշրջանառության կառավարման տնտեսական մեթոդները հիմնականում ներգործում են անուղղակի կերպով և չեն նախատեսում ուղղակի արգելքների կամ լիմիտների սահմանում:

Գործնականում հայտնի են կառավարման տնտեսական մեթոդների 3 հիմնական տեսակներ.

1. հարկային մեթոդներ,
2. նորմատիվային մեթոդներ,

3. Ճշգրտող մեթոդներ:

Յարկային մեթոդների օգտագործումը ֆինանսական մարմինների առանձնաշնորհն է, իսկ մյուս երկու մեթոդները կիրառում է կենտրոնական բանկը:

Ներգործության նորմատիվային մեթոդները ենթադրում են այնպիսի գործիքների օգտագործում, ինչպիսիք են վարկային ռեսուրսների կարգավորման ֆոնդ կատարվող հատկացումները, իրացվելիության և բանկային կապիտալի նորմատիվային գործակիցները, որոնք սահմանվում են տնտեսական նորմատիվների տեսքով (տե՛ս գլուխ 19.2):

Տնտեսական մեթոդներն առավել բնորոշ են շուկայական տնտեսությանը, ուր միկրոտնտեսական մակարդակով ինքնակարգավորման գործընթացների զարգացումը ենթադրում է երկրորդ մակարդակի յուրաքանչյուր բանկային հաստատության կողմից ինքնուրույն գործունեության հիմնական ուղղությունների ընտրություն, որի արդյունքներն ու արդյունավետությունն էլ որոշում են տվյալ բանկի կարգավիճակը, վերջինիս ունեցած դերը երկրի բանկային համակարգում: Այս հանգամանքն էլ հենց խթան է հանդիսանում մրցակցության զարգացման համար:

Այսպիսով՝ դրամավարկային կարգավորման իրականացման անուղղակի մեթոդները (գործիքները) հիմնականում երեքն են.

1. Կենտրոնական բանկի կողմից առևտրային և մասնագիտացված բանկերի պարտադիր պահուստների նորմաների փոփոխությունը:
2. Դիսկոնտային (վերահաշվառման) և վերաֆինանսավորման քաղաքականության իրականացումը:
3. Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունները բաց շուկայում:

Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական տնտեսական գործիքներից մեկը պարտադիր պահուստային պահանջների նորմատիվների սահմանումն է, երկրորդ մակարդակի յուրաքանչյուր բանկային հաստատության համար պահուստային—թղթակցային հաշվի բացումը, ինչպես նաև այդ հաշվի վրա միջոցների մնացորդների նվազագույն մեծության սահմանումը:

Նվազագույն պահուստները կատարում են երկու հիմնական գործառնություններ: Նախ՝ որպես իրացվելի պահուստներ ծառայում են որպես առևտրային բանկերի պարտավորությունների ապահովում՝ իրենց հաճախորդների ավանդների գծով: Շերտավորելով և պարբերաբար փոփոխության ենթարկելով պարտադիր պահուստային նորմաները՝ կենտրոնական բանկը նվազագույն թույլատրելի մակարդակի վրա է պահպանում առևտրային և մասնագիտացված բանկերի իրացվելիության աստիճանը: Բացի այդ, դրանք նպաստում են կարճաժամկետ վարկերի տոկոսադրույքների տատանումների թուլացմանը, քանի որ առևտրային և մասնագիտացված բանկերը պարտադիր պահուստավորման գծով իրենց պարտավորությունները կատարում են ոչ թե ամեն օր, այլ հաշվարկային (սովորաբար՝ երկշաբաթյա) ժամանակահատվածում՝ միջին օրական մեծության հիման վրա:

Նվազագույն պահուստների երկրորդ և առավել կարևոր գործառնության համաձայն՝ դրանք ծառայում են որպես կենտրոնական բանկի կողմից կիրառվող գործիք՝ երկրում դրամական զանգվածի ծավալի կարգավորման համար: Պահուստային միջոցների նորմատիվի փոփոխության միջոցով կենտրոնական բանկը կարգավորում է

առևտրային բանկերի ակտիվային գործառնությունների մասշտաբները (հիմնականում նրանց կողմից տրամադրվող վարկերի ծավալը) և հետևապես՝ նրանց կողմից դեպոզիտային էմիսիայի իրականացման հնարավորությունները: Բանկերը կարող են ընդարձակել վարկային գործառնությունները, եթե կենտրոնական բանկում նրանց պարտադիր պահուստները գերազանցում են սահմանված նորմատիվը: Եթե շրջանառության մեջ գտնվող կանխիկ և անկանխիկ փողերի զանգվածը գերազանցում է անհրաժեշտ պահանջարկը, ապա կենտրոնական բանկը, որպես կանոն, իրականացնում է վարկային ռեստրիկցիայի քաղաքականություն՝ մեծացնելով պարտադիր հատկացումների նորմատիվները, այսինքն՝ կենտրոնական բանկում միջոցների պահուստավորման տոկոսադրույքը: Դրանով իսկ նա պարտադրում է բանկերին կրճատել իրենց ակտիվային գործառնությունների ծավալները: Կառավարելով պահուստային նորման՝ կենտրոնական բանկը միաժամանակ ներգործում է առևտրային և մասնագիտացված բանկերի շահութաբերության մակարդակի վրա՝ մեծացնելով կամ փոքրացնելով ռեսուրսների արժեքը, վարկերի և դեպոզիտների ծավալը: Փոփոխելով վարկադեպոզիտային էմիսիայի չափերը՝ կենտրոնական բանկը կառավարում է դրամական զանգվածի փոփոխության տեմպերն ու դինամիկան:

Պարտադիր պահուստավորման քաղաքականություն իրականացնելու դեպքում կենտրոնական բանկն անմիջական մուլտիպլիկատիվ կապ է ստեղծում պահուստների և շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի միջև: Պարզագույն տեսքով այն կարելի է ներկայացնել $M = kB$ բանաձևով, որտեղ M -ը դրամական զանգվածի ծավալն է, B -ն՝ պահուստավորման միջոցները, k -ն՝ բազմարկիչը (մուլտիպլիկատոր): Վերջինս արտահայտվում է հետևյալ կերպ.

$$k = \frac{c + I}{c + r} ,$$

որտեղ c -ն դրամական զանգվածի հարաբերությունն է դեպոզիտներին: Դրամական բազմարկիչն ապահովում է անհրաժեշտ կապ պահուստների և դրամական զանգվածի փոփոխությունների միջև:

1999 թվականի ապրիլից առ այսօր ՀՀ-ում գործում է պարտադիր պահուստավորման նոր մեխանիզմը, համաձայն որի՝ և՛ դրամով, և՛ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է միայն ՀՀ դրամով՝ 8% դրույքաչափով: Այս միջոցառմամբ ՀՀ կենտրոնական բանկը նպատակ ուներ բարձրացնել դրամական զանգվածի կառավարելիությունը՝ կապված արտարժույթային դեպոզիտների աննախադեպ արագ տեմպերով աճի և, այսպես կոչված, տնտեսության «դոլարիզացիայի» գործընթացի ծավալների մեծացման հետ:

Վարկադեպոզիտային էմիսիայի մեծությունը և, ընդհանուր առմամբ, դրամական էմիսիայի մեծությունը ուղիղ համեմատական են առևտրային և մասնագիտացված բանկերի կողմից ներգրավված ավանդների ու դեպոզիտների չափին և հակադարձ համեմատական՝ կենտրոնական բանկի կողմից սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվին:

Թեև պարտադիր պահուստավորման նորմաները սովորաբար օգտագործվում են պահուստների նկատմամբ բանկերի պահանջարկի ամրապնդման համար, այդուհանդերձ շատ երկրներ դրանք օգտագործում են որպես ինքնուրույն գործիքներ:

Կենտրոնական բանկի պարտադիր պահուստային պարտավորությունների հիմնադրամը չպետք է շփոթել առևտրային բանկերի պահուստային հիմնադրամի հետ: Վերջինս ստեղծվում է բանկերի գործունեությունից առաջացած վնասները ծածկելու և անհուսալի պարտքերը մարելու նպատակով: Սովորաբար հատկացումները պահուստային հիմնադրամին կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ բանկի շահույթից:

ՀՀ կենտրոնական բանկում պահուստավորման են ենթակա առևտրային բանկերի կողմից դրամով և արտարժույթով ներգրավված միջոցները, իսկ պահուստավորումը կատարվում է.

- դրամով ներգրավված միջոցների դիմաց՝ դրամով,
- ազատ փոխարկելի արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց՝ դրամով,
- այլ արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց՝ դրամով:

Դիսկոնտային քաղաքականությունը դրամավարկային կարգավորման կարևոր գործիք է, որի հիմնական ուղղությունները մշակվում են կենտրոնական բանկերի կողմից: Դիսկոնտային քաղաքականությունն իրականացվում է պաշտոնական տոկոսադրույքների 2 հիմնական տեսակների սահմանման և վերանայման միջոցով.

1. Դիսկոնտավորման դրույքները՝ պետական արժեթղթերի վերահաշվառման և վարկերի տրամադրման նպատակով:
2. Վերաֆինանսավորման տոկոսադրույքները՝ ֆինանսավարկային հաստատությունների և կառավարության վարկավորման նպատակով:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը կամ կենտրոնական բանկի կողմից առևտրային ու մասնագիտացված բանկերին կամ կառավարությանը տրամադրվող վարկային ռեսուրսների վճարաչափի մակարդակն ավելի բարձր է դիսկոնտային տոկոսադրույքից, քանի որ բանկերի վարկային գործառնությունները (լոմբարդային, բլանկային, կոնտոկորենտային և այլն) ավելի թանկ են գնահատվում, քան առևտրակոմիսիոն գործառնությունները (օրինակ՝ արժեթղթերի գնումը): Այդ է պատճառը, որ առևտրային բանկերը ձգտում են ստանալ վարկեր կենտրոնական բանկից միայն այն բանից հետո, երբ արդեն օգտագործվել են բոլոր հնարավորությունները արժեթղթերի վերահաշվառման գծով:

«Վերաֆինանսավորում» ասելով հասկանում են երկրորդ մակարդակի բանկային հաստատությունների կողմից դրամական միջոցների ստացում կենտրոնական բանկից: Վերջինիս առավել տարածված ձևերից են, օրինակ, առևտրային բանկերի պորտֆելներում գտնվող մուրհակների վերահաշվառումը կամ բաց շուկայում իրականացվող գործառնությունները:

Վերաֆինանսավորման իրականացման միջոցով կենտրոնական բանկը մի կողմից իրագործում է իր վերջին ատյանի վարկատուի գործառույթը, այսինքն՝ հանդես է գալիս որպես բանկային և ֆինանսական համակարգերի անխափան գործունեության ապահովման երաշխիք, իսկ մյուս կողմից վերածվում է միջբանկային շուկայի մասնակցի: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ եթե սկզբնական շրջանում վերաֆինանսավորման քաղաքականությունը կիրառվում էր միայն որպես դրամավարկային քաղաքականության գործիք, ապա ժամանակակից պայմաններում այն դրևսևորվում է որպես պետության բանկային և ֆինանսական համակարգերի անխափան գործունեության, ինչպես նաև վարկային համակարգի իրացվելիության կարգավորման երաշխիք:

- վերաֆինանսավորման վարկերը դասակարգվում են ըստ որոշակի չափանիշների.
- ըստ ապահովվածության՝ դիսկոնտային և լոմբարդային վարկեր,
- ըստ վարկերի տրամադրման մեթոդների՝ ուղղակի վարկեր և աճուրդային եղանակով տրամադրվող վարկեր,
- ըստ տրամադրման ժամկետների՝ կարճաժամկետ («օվերնայթ»), միջնաժամկետ՝ մինչև 3 ամիս ժամկետով (լոմբարդային վարկեր), և երկարաժամկետ՝ մինչև 1 տարի ժամկետով («կայուն» վարկեր),
- ըստ ֆինանսական շուկայի վրա ներգործության աստիճանի՝ ռեպո գործառնություններ արժեթղթերի շուկայում և լոմբարդային վարկեր միջբանկային շուկայում:

Պաշտոնական տոկոսադրույքների բարձրացումը դժվարացնում է առևտրային բանկերի հնարավորությունները վարկային ռեսուրսների ձեռքբերման գործում: Պաշտոնական տոկոսադրույքներն անուղղակիորեն ներգործում են շուկայական տոկոսադրույքների վրա: Վերջիններս ինքնուրույնաբար սահմանվում են բանկերի կողմից՝ վարկային ռեսուրսների շուկայի պայմաններին համապատասխան, և գտնվում են կենտրոնական բանկի ուղղակի վերահսկողությունից դուրս:

Լոմբարդային վարկը բանկերի համար ծառայում է որպես վարկային հնարավորություն և ուղղվում է իրացվելիության խիստ կարճաժամկետ խնդիրների լուծմանը: Տոկոսադրույքը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից՝ տվյալ երկշաբաթյա ժամանակահատվածի համար: Ավանդը բանկերի համար ավելցուկային իրացվելիության եկամտաբեր օգտագործման հնարավորություն է: Ավանդի տոկոսադրույքը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից՝ տվյալ երկշաբաթյա ժամանակահատվածի համար:

Կոշտ, ռեստրիկցիոն դրամավարկային քաղաքականություն վարելու ընթացքում կենտրոնական բանկերն ինդեքսավորում են պաշտոնական տոկոսադրույքների մեծությունը՝ սահմանելով յուրատեսակ «հավելավճարներ» դրանց սովորական մակարդակի նկատմամբ, խստացնում են մուրհակների և այլ արժեթղթերի «որակի» նկատմամբ ներկայացվող պահանջները, սահմանափակում են պայմանադիր կողմերի հնարավորությունները, մտցնում են վերահաշվառման սահմանաչափեր:

Դիսկոնտային և վերաֆինանսավորման քաղաքականությունների տոկոսադրույքների հաստատումը հանդիսանում է ամենակարևոր, բայց միևնույն ժամանակ՝ ամենաբարդ պահը այս գործիքների կիրառման հարցում: Ընդհանրապես, առկա է որոշակի ռիսկ, որ մշտական հնարավորությունների չափից ավելի օգտագործումը կարող է նպաստել շուկայի թերզարգացմանը: Դա առավել հավանական է դառնում, երբ կենտրոնական բանկը վարում է բավականին նեղ «միջանցքի» քաղաքականություն (լոմբարդային և դեպոզիտային մեխանիզմների ներդաշնակ կիրառություն, որի արդյունքում շուկայական տոկոսադրույքները հաստատվում են որոշակի միջակայքում, և բաց շուկայական գործառնությունների միջոցով տոկոսադրույքներն արդեն կարգավորվում են այդ միջակայքում):

Դիսկոնտային և վերաֆինանսավորման տոկոսադրույքների սահմանման առումով խիստ կարևոր են նաև կապիտալի հաշվի ազատականացման աստիճանը և փոխարժեքի ռեժիմը: Այսպես՝ կապիտալի բարձր մոբիլության դեպքում փոխարժեքը խիստ կախված է վարվող դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղություններից: Այդ պատճառով նեղ «միջանցքի» դեպքում, որը նպատակ է հետապնդում հարթելու շուկայական տոկոսադրույքները, որպես կանոն, լողացող փոխարժե-

քի ռեժիմի պայմաններում փոխարժեքը կունենա առավել փոփոխուն վարքագիծ, քան տոկոսադրույքները: Կապիտալի առավել մոբիլության պայմաններում դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս պետք է հաշվի առնել ոչ միայն ներքին գործոնները, այլև միջազգային ֆինանսական շուկայում տիրող իրավիճակը:

Դիսկոնտային քաղաքականության սահմանված ուղղությունների իրականացման դեպքում կենտրոնական բանկը կարող է օգտագործել բանկերի գործունեության կարգավորման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեթոդներ: Դա իրականացվում է բազային տոկոսադրույքների սահմանման (հաշվառման գործառնությունների, լրմբարդային և բանկային վարկերի գծով), ինչպես նաև կենտրոնական բանկի կողմից վերահաշվառվող արժեթղթերի չափերի և ձևերի նկատմամբ քանակական սահմանափակումների իրականացման միջոցով:

Բաց շուկայում կենտրոնական բանկերն իրականացնում են արժեթղթերի առք ու վաճառքի պաշտոնական գործառնություններ: Որպես բանկային գործունեության կարգավորման գործիք՝ բաց շուկայում կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնություններն ունեն հետևյալ մեխանիզմը. երբ կենտրոնական բանկը առևտրային բանկերից գնում է արժեթղթեր, ապա համապատասխան գումարները մուտք են գործում նրանց պահուստաթղթակցային հաշիվների վրա, այսինքն՝ մեծանում է նվազագույն պահուստների մեծությունը, և, հետևապես, առաջանում է ակտիվների ընդարձակման հնարավորություն: Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին արժեթղթեր վաճառելու դեպքում, ընդհակառակը, նրանց կողմից պահուստավորված միջոցները նվազում են, իսկ ընդհանուր առմամբ բանկային համակարգում տեղի է ունենում վարկային ռեսուրսների կրճատում, որն անմիջականորեն արտացոլվում է ընդհանուր դրամական զանգվածի վրա: Այդպիսով, կարգավորելով արժեթղթերի առաջարկն ու պահանջարկը, կենտրոնական բանկը ներգործում է ոչ միայն առևտրային և մասնագիտացված բանկերի պահուստների մեծության և նրանց վճարունակության, այլև դրամական զանգվածի համախառն ծավալի վրա:

Ի տարբերություն մյուս տնտեսական գործիքների՝ բաց շուկայում կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գործառնություններն արագ ճշգրտող ազդեցություն են գործում առևտրային բանկերի իրացվելիության մակարդակի և դրամական զանգվածի դինամիկայի վրա:

Կենտրոնական բանկերի կողմից իրականացվող շուկայական գործառնությունները սովորաբար լինում են ուղղակի (միակողմանի) կամ հակադարձ:

Ուղղակի գործառնությունն իրենից ներկայացնում է սովորական գնում կամ վաճառք: Հակադարձ գործառնությունն իրականացվում է արժեթղթերի առք ու վաճառքի տեսքով՝ նախասահմանված փոխարժեքով, հակադարձ գործարքի պարտադիր իրականացմամբ: Հակադարձ գործառնություններն իրենց ճկունության շնորհիվ մեծ տարածում են ստացել, և ներգործության այդ գործիքը վերածվել է ամենահանրահայտի: Հակադարձ գործառնություններն իրենց հերթին բաժանվում են ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների: Ռեպո գործառնությունների դեպքում կենտրոնական բանկը գնում է պետական արժեթղթերը (վարկ), իսկ հակադարձ ռեպոյի դեպքում՝ վաճառում (դեպոզիտ):

Բաց շուկայում հակադարձ գործառնությունները, որպես կանոն, իրականացվում են պետական արժեթղթերի գնման վերաբերյալ կենտրոնական բանկի և առևտրա-

յին բանկերի միջև համաձայնության կնքման ճանապարհով՝ 1–2 ամիս հետո նրանց հակադարձ վաճառքի պարտավորությամբ՝ նախասահմանված գնով: Այդ դեպքում բաց շուկայական գործառնություններն իրականացվում են պարբերաբար՝ շաբաթվա միևնույն օրը, որպեսզի կենտրոնական բանկի կողմից պետական արժեթղթերի նոր խմբաքանակների գնումը համընկնի արժեթղթերի հակադարձ վաճառքի հետ: Այս գործառնություններին կարող են մասնակցել միայն այն առևտրային և մասնագիտացված բանկերը, որոնց համար կենտրոնական բանկում բացված են հատուկ արտահաշվեկշռային հաշիվներ՝ արժեթղթերի պահպանման ու հաշվառման գծով:

Ի տարբերություն միակողմանի բաց շուկայական գործառնությունների՝ ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններն առավել արդյունավետ և լայնորեն կիրառվող գործիքներ են, և չնայած դրանք սովորաբար կնքվում են կարճ ժամկետով, հնարավորություն են տալիս գործարքի հիմքում օգտագործել տարբեր ժամկետայնության արժեթղթեր, որի արդյունքում բարձրանում է արժեթղթերի իրացվելիությունը՝ իր հերթին աջակցելով երկրորդային շուկայի զարգացմանը:

Դրամական շուկայում ձևավորված իրավիճակից կախված՝ հնարավոր է աճուրդային սակարկությունների երկու խոշորացված տարբերակների կիրառում: Ըստ առաջին տարբերակի՝ կենտրոնական բանկը նախապես հայտարարում է տոկոսադրույքի մեծությունը, որին համապատասխան՝ պատրաստ է առևտրային և մասնագիտացված բանկերին տրամադրել դրամական միջոցներ՝ նրանցից գնելով պետական արժեթղթեր: Առևտրային և մասնագիտացված բանկերը որոշում են արժեթղթերի այն քանակությունը, որ մտադիր են վաճառել կենտրոնական բանկին և վերջինիս ներկայացնում են իրենց հայտերը: Կենտրոնական բանկը տեսակավորում է այդ հայտերը, խմբավորում, գումարում և, ելնելով վարկային ռեսուրսների նկատմամբ տնտեսության պահանջարկի գնահատումից, սահմանում է համամասնություն, ըստ որի՝ բանկերի հայտերը կարող են ամբողջությամբ կամ մասամբ բավարարվել: Օրինակ՝ եթե առևտրային բանկերի հայտերում նշված է, որ նրանք պատրաստ են համապատասխան տոկոսադրույքով կենտրոնական բանկին վաճառել 100 մլն դրամ արժողությամբ արժեթղթեր, իսկ կենտրոնական բանկի գնահատականի համաձայն՝ տնտեսությունը կարիք ունի 50 մլն դրամի լրացուցիչ վարկային ռեսուրսների (կամ առաջարկվող գումարի 50%–ի), ապա, համապատասխանաբար, իրացվում է գումարի 50%–ը: Այս տարբերակը հաջողությամբ կիրառվում է դրամական շուկայի համեմատաբար կայուն իրավիճակի պայմաններում:

Իսկ դրամական շուկայի անկայուն իրավիճակի պայմաններում օգտագործվում է աճուրդային սակարկությունների երկրորդ տարբերակը: Այս դեպքում կենտրոնական բանկի կողմից գնվող պետական արժեթղթերի տոկոսադրույքը նախապես չի հայտարարվում: Առևտրային և մասնագիտացված բանկերն իրենք են իրենց հայտերում նշում վաճառվող արժեթղթերի ընդհանուր արժեքը և այն տոկոսադրույքը, որ նրանք պատրաստ են վճարելու: Հայտերի վերլուծությունից հետո, հաշվի առնելով դրամավարկային քաղաքականության նպատակները, կենտրոնական բանկը սահմանում է տոկոսադրույքների նվազագույն սահման, որին համապատասխան՝ գնում է բանկերի արժեթղթերը:

Պետք է նշել, որ շուկայական հակադարձ գործառնությունների շնորհիվ կենտրոնական բանկերը հնարավորություն են ստանում ոչ միայն ընդարձակել

առևտրային և մասնագիտացված բանկերի վարկային և այլ ակտիվային գործառնությունների ծավալները՝ բանկային սեկտոր ներմուծելով լրացուցիչ ռեսուրսներ, այլև սահմանափակել վարկային ներխուժումների ծավալները՝ հետ գնելով դրամական միջոցները:

Բաց շուկայում կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գործառնությունների հիմնական օբյեկտ են հանդիսանում առաջին հերթին պետական արժեթղթերը, ինչպես նաև, որոշ դեպքերում, մի շարք մասնավոր պարտավորություններ: Այն երկրները, որոնց պետական պարտքի գումարը մեծ է, բաց շուկայում գործառնություններն իրականացնում են հիմնականում ֆինանսների նախարարությունների և այլ կառավարական հաստատությունների արժեթղթերով: Այդ գործառնությունների իրականացման սկզբունքն այն է, որ դրամավարկային կարգավորման տվյալ գործիքը շահագործման փուլ է մտնում բավականին լայն ծավալներով ու անհրաժեշտ արագությամբ՝ հետ չմնալով տնտեսական իրավիճակի փոփոխություններից:

Բաց շուկայում կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գործառնությունները, դիսկոնտային, վերաֆինանսավորման (տոկոսադուրյքների) ու պարտադիր պահուստային նորմաները կարգավորող վարվող քաղաքականությունը համապատասխան մարմինների անուղղակի միջամտություն է, որի հետևանքով այդ մարմիններն ի վիճակի են միայն մասնակի վերահսկողություն իրականացնել, այլ ոչ թե ընդհանրապես տնտեսության բացթողումներն ու թերությունները միանգամից վերացնել: Շուկայական հարաբերությունների պայմաններում արդյունավետ կարգավորող արդյունքների հնարավոր է հասնել միայն կառավարության բյուջետային և հարկային քաղաքականության հետ դրամավարկային քաղաքականության սերտ կոորդինացման միջոցով:


Բաց շուկայական գործառնությունները կարող են իրականացվել երկու ձևով՝ պարբերական, որի ժամանակ կենտրոնական բանկը նախօրոք հայտարարում է այն մասին, որ պատրաստվում է սակարկություններ անցկացնել, և որի մասնակիցներն ունեն հավասար պայմաններ, և ոչ պարբերական, որոնք իրականացվում են կենտրոնական բանկի կողմից՝ առանց որոշակի պարբերականության՝ կախված խիստ կարճաժամկետ անհրաժեշտությունից: Ոչ պարբերական բաց շուկայական գործառնություններն, իրենց հերթին, կարող են անցկացվել երկու եղանակով: Առաջինը ոչ պարբերական ծրագրավորված գործառնություններն են, որոնք գրեթե նույն պարբերական գործառնություններն են, միայն այն տարբերությամբ, որ իրականացման պահն անհայտ է, և երկրորդ եղանակը ոչ պարբերական երկկողմանի գործառնություններն են, որոնց անցկացման մասին չի հայտարարվում ոչ գործարքի կնքումից առաջ, ոչ էլ հետո:

Բաց շուկայում կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունները հետապնդում են երկու հիմնական նպատակ: Ընթացիկ նպատակը դրամական հոսքերի շարժման սեզոնային, տարածաշրջանային և տարերային փոփոխությունների հետ կապված դրամաշրջանառության լարվածության թուլացմանը հնարավորին չափով օժանդակություն ցուցաբերելն է: Իսկ երկրորդ՝ գլխավոր և երկարաժամկետ նպատակը տնտեսության համամասնական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, աճի բարձր կայուն տեմպերի, զբաղվածության բարձր մակարդակի և գների կայունության ապահովումը: Բաց շուկայում իրականացվող

գործառնությունները մեկուսացված չեն կենտրոնական բանկի կողմից իրականացվող մյուս կարգավորող գործառնություններից և առաջին հերթին՝ դիսկոնտային քաղաքականությունից: Գործառնությունների միջև եղած փոխադարձ կապն առավել ակնառու է դրսևորվում, երբ բաց շուկայում իրականացվող գործառնություններն օգտագործվում են դիսկոնտային և վերաֆինանսավորման տոկոսադրույքների փոփոխության համար հող նախապատրաստելու նպատակով: Բաց շուկայում արժեթղթերի վաճառքը կարող է օգտագործվել վարկերին «կոշտ» բնույթ տալու համար, որի արդյունքում բանկերը ստիպված լինեն լրացուցիչ վարկի պահանջարկի դեպքում դիմել կենտրոնական բանկ: Բաց շուկայում այդպիսի գործառնությունները սովորաբար անվանում են «տոկոսադրույքներին արդյունավետություն հաղորդելու միջոց»:

Այսպիսով՝ բաց շուկայում իրականացվող գործառնություններն իրենց էությանը ճշգրտող գործառնություններ են, որոնք որոշակի չափով սահմանափակում են տնտեսական պարբերաշրջանային տատանումների շրջանակները (ամպլիտուդան): Դրանք առաջատար տեղ են զբաղեցնում կենտրոնական բանկերի կողմից իրականացվող կարգավորող միջոցառումների շարքում, իսկ բյուջեի բացի և պետական պարտքի մեծացմանը համընթաց մեծանում է նաև դրանց՝ որպես կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականության գործիքի դերն ու նշանակությունը:

Դրամական զանգվածի ծավալի կարգավորման ընդհանուր գործընթացը, որն իրականացվում է կենտրոնական բանկի կողմից, կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով (զծապատկեր 22.1.).



Գծանկար 22.1. Դրամական զանգվածի ծավալի կարգավորման մոդելը

ԳԼՈՒԽ 23

ՀՀ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

23.1. ԱՆԿԱՆՏԻԿ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ապրանքային արտադրության և շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տիպի ձեռնարկությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև նրանց ու բնակչության միջև փողային հարաբերություններն ունեն դրամական հաշվարկի բնույթ: Այդ փոխհարաբերությունները հիմնված են դրամի շրջանառության միջոցի և վճարելամիջոցի գործառույթների վրա:

Դրամական հաշվարկի կարևոր մասն է գործարքի մասնակիցներից մեկի՝ մյուսին կատարվող վճարումը, այսինքն՝ վճարը: Դրամական բոլոր վճարների ամբողջությունը ամփոփվում է «դրամական կամ վճարման շրջանառություն» հասկացության մեջ: Երկրի վճարման շրջանառության մեջ ներառվում են իրացվող արտադրանքի և ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև կատարվող վճարումների, ինչպես նաև ֆինանսավարկային համակարգի միջոցով դրամական միջոցների ստացման ու վերադարձման հետ կապված բոլոր դրամական հաշվարկները, ներառյալ կազմակերպություն – բնակչություն փոխհարաբերությունները (բյուջեի եկամուտների ձևավորում, բյուջետային հատկացումներ և տրանսֆերտներ, վարկային ռեսուրսների ձևավորում, վարկերի հատկացում և վերադարձ, վճարումներ բնակչությանը՝ աշխատավարձ, կենսաթոշակ, նպաստ, թոշակ, այլ վճարներ, քաղաքացիների միջև փոխհարաբերություններ և այլն):

Հաշվարկների կազմակերպումն ունի կարևոր սոցիալ–տնտեսական նշանակություն: Դրանք ճիշտ և ժամանակին կատարելը կազմակերպություններին հնարավորություն է տալիս բարեհաջող ավարտել շրջանառու կապիտալի շրջապտույտը, դրանց ապրանքային ձևից դրամականին անցումը (Ա–Փ), ինչպես նաև գնորդ կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում ձեռք բերվող ապրանքանյութական արժեքների դիմաց անխափան վճարելու (Փ–Ա), մյուս պարտավորությունները մարելու: Այնքան, որքան յուրաքանչյուր կազմակերպություն միաժամանակ և մատակարար է, և տարբեր բնույթի, հատկապես ընթացիկ ակտիվների գնորդ, ուստի մատակարարների ու գնորդների միջև հաշվարկների ճիշտ կազմակերպումը վճռական դեր ունի յուրաքանչյուր կազմակերպության գործունեության բնականոն ընթացքի և շրջանառու կապիտալի անխափան շրջապտույտի գործում: Հաշվարկների ու վճարումների ճիշտ կազմակերպումն ու իրացումը, ի վերջո, ցանկացած կազմակերպության ծախսերի փոխհատուցման ու դրամական կուտակումների ձևավորման հիմնական գրավականն են:

Գործնականում յուրաքանչյուր առևտրային ձեռնարկություն, կազմակերպություն, որն ունի սեփական շրջանառու միջոցներ և ինքնուրույն հաշվեկշիռ բանկում, պետք է բացի հաշվարկային հաշիվ: Բոլոր բյուջետային, հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունների համար բացվում են ընթացիկ հաշիվներ: Այդ

հաշիվներից կատարվում են հաշվի տիրոջ բոլոր դրամական պարտավորությունների գծով անկանխիկ վճարումները, ինչպես նաև տրվում է կանխիկ դրամ, կամ կատարվում են կանխիկ վճարումներ: Այդ հաշիվներին են մուտք լինում բոլոր կարգի ստացումները՝ արտադրանքի և ծառայությունների իրացումից հասույթը, այլ աղբյուրներից դրամական հոսքերը:

Բանկի միջոցով կատարվող ձեռնարկությունների և կազմակերպությունների բոլոր հաշվարկները բաժանվում են երկու հիմնական խմբի՝

1. Հաշվարկներ ապրանքային գործառնությունների կամ բեռնաշրջանառության գծով: Այսինքն՝ բոլոր այն հաշվարկները, որոնք իրականացվում են ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև իրացվող արտադրանքի, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների հետ կապված:
2. Հաշվարկներ ֆինանսական պարտավորությունների գծով կամ ըստ ոչ ապրանքային գործառնությունների: Դրանց վերաբերում են բյուջեին կատարվող վճարումները, բանկային վարկերի ստացումը և վերադարձը, ներհամակարգային փոխանցումները, ապահովագրական մուծումները, բյուջեից ստացվող ֆինանսավորումը, տրանսֆերտները և այլն:

Երկրի վճարման շրջանառության մեջ սովորաբար ավելի մեծ է արտադրանքի և ծառայությունների իրացման շրջանառությունը, այսինքն՝ ըստ ապրանքային գործառնությունների հաշվարկները: Ապրանքային գործառնություններով պայմանավորված հաշվարկների համակարգի հիմնական սկզբունքները հետևյալն են.

- ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև ըստ ապրանքային գործառնությունների՝ արտադրանքի, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց վճարումները կատարվում են առանց կանխիկ դրամի մասնակցության՝ բանկային համապատասխան հաշիվներում գրանցումներ կատարելու ճանապարհով (բացառությամբ փոքր և օրենքով չարգելված վճարումների),
- հաշվարկներն իրենց ճնշող մասով իրականացվում են բանկի միջոցով և նրա վերահսկողությամբ,
- յուրաքանչյուր վճարում կատարվում է վճարողի համաձայնությամբ, որպես կանոն, ապրանքները առաքելուց, ծառայությունները մատուցելուց և աշխատանքները կատարելուց հետո,
- վճարումներն իրականացվում են վճարողի սեփական միջոցների, բանկային վարկերի հաշվին կամ փոխադարձ պահանջների հաշվանցման միջոցով:

Ապրանքային գործառնություններով պայմանավորված բոլոր հաշվարկները խմբավորվում են նաև ըստ հետևյալ հատկանիշների.

1. Ըստ վճարումը կատարելու տեղի: Վճարումը կարող է տեղի ունենալ գնորդի գտնվելու վայրում. վճարային փաստաթղթերը մարվում են գնորդին սպասարկող բանկի համապատասխան հաշվից և ապա փոխանցվում են մատակարարին սպասարկող բանկում նրա համապատասխան հաշվին: Մյուս դեպքերում վճարումը տեղի է ունենում մատակարարի հաշիվը գտնվելու բանկում: Նշանակում է՝ նախ փոխանցվում և ապա վճարվում է:

2. Գնորդը և մատակարարը մեկ կամ երկու բանկային հիմնարկի (բաժանմունքի) կողմից սպասարկվելու հանգամանքի. այդ առումով տարբերվում են նույնաքաղաքային և այլաքաղաքային հաշվարկները:

3. Ըստ հաշվարկի ամբողջ գումարը համապատասխան հաշվից լրիվ դուրսգրման կամ հանդիպակաց պահանջները հաշվանցելու հանգամանքի՝ չհաշվանցված մասը վճարելու:

Միաժամանակ, տնտեսական գործունեության իրականացման ընթացքում կազմակերպությունները առնչվում են ներքին ու արտաքին հաշվարկների հետ:

Ներքին հաշվարկները կապված են աշխատողների աշխատավարձի և այլ վճարումների, ներդրողներին շահաբաժինների հատկացման հետ: Արտաքին հաշվարկները արտացոլում են մատակարար-գնորդ ֆինանսական փոխհարաբերությունները՝ կապված արտադրանքի մատակարարման, ծառայությունների մատուցման, հումք, նյութեր և այլ ակտիվներ ձեռք բերելու, հարկերի վճարման, վարկերի ստացման և մարման և այլնի հետ:

Ապրանքային գործառնությունների հետ կապված հաշվարկները իրականացվում են վճարումների հետևյալ տեսակներով.

- վճարման հանձնարարագրերով,
- պլանային վճարումների կարգով,
- վճարման պահանջագիր-հանձնարարագրերով,
- ակրեդիտիվներով,
- հաշվարկային չեկերով,
- փոխադարձ պահանջների հաշվանցմամբ,
- մուրհակներով,
- բարտերային գործարքներով:

Ապրանքներ մատակարարող և գնորդ կազմակերպությունների, ինչպես նաև հարկ վճարողների, վարկ ստացողների ու բանկերի միջև հաշվարկների հիմնական մասը կատարվում է առանց կանխիկ դրամով միջնորդավորման, նրանց հաշիվներում հաշվապահական գրանցման միջոցով: Նման մոտեցումը բավականաչափ շահավետ է շրջանառության ծախսերի կրճատման շնորհիվ: Բացի այդ, պետությունը հնարավորություն է ստանում վերահսկելու կատարվող տնտեսական ու հաշվարկային գործառնությունների օրինականությունը, տնտեսավարող սուբյեկտների համար դժվարանում է կատարված շրջանառությունը հարկումից թաքցնելը: Հայաստանի օրենսդրությունը, մասնավորապես քաղաքացիական օրենսգիրքը, խստագույնս չի տարանջատում անկանխիկ հաշվարկների կիրառման ոլորտը կանխիկից, բայց և այնպես նախապատվությունը տալիս է անկանխիկին:

Գործարքի մեջ մտնող կողմերի միջև անկանխիկ հաշվարկները կազմակերպվում են միջնորդի միջոցով, որն իր վրա է վերցնում համապատասխան հաշիվներով գումարներ դուրս գրելու և մուտք անելու բոլոր արարողությունների կատարումը: Այդպիսի միջնորդ կարող է լինել բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, որտեղ հաճախորդը բացում է իր հաշիվը: Բանկերը շահագրգռված են իրենց մոտ հաշիվ բացելու հարցում, քանի որ իրավունք ունեն ժամանակավորապես օգտագործել նրանցում եղած գումարը (միջոցները): Հաճախորդներն իրենք են ընտրում սպասարկող բանկը՝ ղեկավարվելով նրանց հուսալիությանը և գործարքների կատար-

ման արագությամբ, սպասարկման կուլտուրայով և այլն: Նրանց փոխհարաբերությունները ամրագրվում են կնքվող պայմանագրով:

Ստացվող դրամական միջոցները հաճախորդների հաշվին բանկը պարտավոր է մուտք անել համապատասխան վճարման փաստաթուղթը ստանալու հաջորդ օրը: Հաշվում եղած դրամական միջոցները բանկի կողմից դուրս են գրվում հաշվի տիրոջ կարգադրությամբ, նույնպիսի ժամկետներում: Առանց հաճախորդի կարգադրության բանկը նրա հաշվից գումար կարող է դուրս գրել միայն դատարանի, հարկային տեսչության որոշումներով և օրենքով սահմանված մյուս դեպքերում: Բանկն իրավասու չէ որոշել և վերահսկել հաճախորդի միջոցների ծախսման ուղղությունները կամ որևէ կերպ սահմանափակել իր հայեցողությամբ հաշվում եղած միջոցներին տնօրինելու իրավունքները: Հաշվին ներկայացվող բոլոր պահանջագրերը բավարարվում են հերթականության կարգով, այսինքն՝ ավելի վաղ պահանջները վճարվում են ավելի շուտ:

Երբ ներկայացված պահանջները միանգամից բավարարել հնարավոր չէ, սահմանվում է հաշվին ստացվող մուտքերին համապատասխան նրանց վճարման հատուկ կարգ: Այնուհանդերձ, առաջին հերթին մարվում են կատարման թերթիկով քաղաքացիների օգտին հայցերը, ապա՝ աշխատավարձի վճարման գումարները, ֆինանսական պարտավորությունները, դատական մարմինների որոշմամբ կոնտրազենտների օգտին գումարները և այլ վճարումները: Միևնույն հերթին վերաբերող պահանջները մարվում են օրացուցային հերթականությամբ:

Տնտեսական գործարքների իրականացման հաշվարկներում առավել տարածված կիրառություն ունեցող հաշիվը հաշվարկային հաշիվն է: Այդպիսի հաշիվ բացվում է մի շարք հատկանիշներով կազմակերպությունների համար, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, վարում են ավարտուն հաշվապահական հաշվառում, ինքնուրույն հարկ վճարողներ են, բանկերի հետ մտնում են վարկային փոխհարաբերությունների մեջ: Այլ կերպ՝ նման հաշվի տնօրինողներն ունեն լիակատար տնտեսական ու իրավական անկախություն: Հաշվարկային հաշիվ բացելը ուղեկցվում է մի շարք փաստաթղթերի ներկայացմամբ՝ դիմում, տեղեկանք կազմակերպության պետական գրանցման մասին, ստեղծման մասին հիմնադիր պայմանագրի պատճեն, իր կանոնադրությունը, ղեկավարի և գլխավոր հաշվապահի լիազորությունները հաստատող փաստաթուղթ, նրանց ստորագրություններով քարտ, հաշվառման կանգնած լինելու մասին տեղեկանք հարկային տեսչությունից, կենսաթոշակային ֆոնդից և վիճակագրական մարմնից և կնիքի քաղվածքը:

Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների համար բանկերը բացում են ընթացիկ հաշիվներ:

23.2. ՀՀ ՎՃԱՐԱԴԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի փլուզումը անխուսափելի դարձրեց նախկինում գործող միասնական վճարահաշվարկային ու բանկային համակարգի քայքայումը, ինչը Հայաստանի Հանրապետության նորաստեղծ կենտրոնական բանկի առջև ծառայող մի շարք հիմնախնդիրներ՝ մասնավորապես՝ հանրապետությունում ձեռնարկությունների և

կազմակերպությունների փոխադարձ հաշվարկների գծով մեծ չափերի հասնող չվճարումները, միջբանկային հաշվարկները կարգավորող իրավական դաշտի բացակայությունը, բանկային համակարգի տեխնիկական թերհագեցվածությունը, էներգետիկ ճգնաժամը, փոստային առաքումների կաթվածահար վիճակը և այլն:

ՀՀ ԿԲ–ի կողմից 1993–96 թթ. հսկայական աշխատանք է կատարվել վերոհիշյալ հիմնախնդիրները լուծելու, նոր պայմաններին ու վիճակին համապատասխան վճարահաշվարկային հարաբերությունների ստեղծման, միջբանկային կապերի վերականգնման և վճարահաշվարկային գործընթացների կատարելագործման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում կատարվող գործարքների տարածքային անհավասար բաշխվածությունից ելնելով՝ բարեփոխումները իրականացվել են երեք փուլով՝ հետևյալ առաջնահերթությամբ.

1. վճարահաշվարկային արարողությունների կարգավորում տարբեր քաղաքներում (միջբանկային փոստի «ներդրում», քլիրինգային համակարգի ստեղծում),
2. նույնաքաղաքային վճարումների համակարգի ստեղծում,
3. միջտարածաշրջանային վճարահաշվարկային արարողակարգերի կարգավորում:

Ելնելով «ՀՀ Կենտրոնական բանկի» մասին ՀՀ օրենքի պահանջներից՝ ՀՀ ԿԲ–ն վճարահաշվարկային համակարգի ձևավորման ու զարգացման գործում ստանձնեց շատ ակտիվ դեր, նրա կողմից իրականացրած շարունակական քայլերը եղել են տրամաբանորեն փոխկապակցված, բխել են միջազգային փորձից, և հաշվի են առնվել Հայաստանի առանձնահատկությունները:

Վիճակը բարդ էր նաև նրանով, որ ԽՍՀՄ–ի քայքայումից հետո չէին գործում առևտրային բանկերի միջբանկային վճարումների նախկին կառուցվածքները, միջմասնաձյուղային շրջանառության ավանդական կառուցվածքները չէին կարող արդյունավետ լինել նոր իրավիճակում: Վճարահաշվարկային համակարգն առավել խորացված էր ապրանքային գործառնություններով պայմանավորված հաշվարկներում, հիմնականում մատակարարված ապրանքների դիմաց վճարումների առաքման և ստացման գործընթացների ձգձգումների, երբեմն դրանց կորստի, արտասահմանյան գործընկերների հետ կապված վճարային կառուցվածքների ոչ հստակության ու անարդյունավետության պատճառով:

Կոնկրետ իրադրությունից ելնելով՝ բազմաթիվ փորձեր են արվել համապատասխան պետական կառույցների միջոցով ճշտելու այն ժամկետները և ձևերը, որոնց դեպքում հնարավոր կլիներ կարգավորել փաստաթղթերի միջբանկային առաքումները կապի և փոստի ծառայությունների միջոցով: Մշակվեցին փաստաթղթային առաքումների իրականացման համապատասխան կառուցվածքներ և միջբանկային համաձայնագրեր, որոնց համաձայն՝ 1994 թ. մարտից ՀՀ կենտրոնական բանկի ինկասացիոն ծառայության միջոցով վերականգնվել են փաստաթղթերի ամենօրյա առաքումները Երևան քաղաքում գտնվող բանկերի և նրանց մասնաձյուղերի միջև, իսկ նույնբերից՝ ՀՀ ամբողջ տարածքում: Նշված միջոցառումների արդյունքում հնարավոր դարձան կարճ ժամանակում ապահովել առնվազն շաբաթը երկու անգամ հանրապետության բոլոր շրջաններից փաս-

տաթղթերի միջբանկային առաքումները, բարձրացնել առաքումների ապահովությունն ու հուսալիությունը:

Փաստաթղթային առաքումների բարելավումից և կանոնակարգումից հետո անհրաժեշտություն է առաջացել շտապ միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքում վճարումների կարգավորման համար, քանի որ Երևանում էր կենտրոնացված առևտրային բանկերի գլխամասերի 90%-ից ավելին, ինչպես նաև այստեղ էր կենտրոնացված վճարումների շուրջ 70%-ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առևտրային բանկերը միջբանկային հաշվարկներն իրականացնում էին կենտրոնական բանկում ունեցած թղթակցային հաշիվներով՝ միջբանկային վճարումների ապահովման գծով բոլոր վճարային փաստաթղթերը, այդ թվում հաճախորդների վճարային փաստաթղթերի համապատասխան օրինակները, ներկայացվում էին կենտրոնական բանկ, և ապահովվում էին դրանց յուրաքանչյուրի առանձին-առանձին մշակումը և գործարքների ձևակերպումները: Արդյունքում օրական մշակվում էր մի քանի տասնյակ հազար փաստաթուղթ: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջբանկային վճարումների մեծ մասը հավաքական վճարային հանձնարարություններ էին, որոնք բաղկացած էին ստացող հաճախորդների բազմաթիվ վճարումներից՝ հետևաբար մեկ փաստաթղթի սխալի պատճառով վերադարձվում էր ամբողջ փաթեթը: Բանկերը ստիպված էին թղթակցային հաշիվներում պահել բավականին միջոցներ, քանի որ հաշվարկները իրականացվում էին համախառն սկզբունքներով: Հաշվի առնելով այդ ժամանակ բանկային համակարգի ֆինանսական անկայուն վիճակը՝ հաշվարկների իրականացման համար կենտրոնական բանկը վարկեր չէր տրամադրում: Վիճակն ավելի էր բարդանում կապված ՀՀ կենտրոնական բանկում հաշվարկների ավտոմատացման բավականին ցածր մակարդակով և էներգետիկ ճգնաժամի հետևանքներով:

Այս պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի կողմից (1994 թ. մայիս) ներդրվեց միջբանկային հաշվարկների քլիրինգային համակարգը: Հաշվի առնելով այն, որ միջազգային բանկային պրակտիկայում կային խնդրի լուծման տարբեր ձևեր և հիմնականում օգտագործվում էին դասական այպես կոչված «նետինգի» կամ փոխհաշվանցումների (երկկողմանի կամ բազմակողմանի) մեխանիզմները՝ անհրաժեշտ էր գտնել Հայաստանի տվյալ իրավիճակին առավելագույնս համապատասխանող լուծումներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջբանկային վճարումների իրականացման համար կենտրոնական բանկին սովորաբար անհրաժեշտ է միայն գլխամասային բանկերի գծով վճարային տեղեկատվությունը, հետևաբար յուրաքանչյուր գլխամասային բանկ քլիրինգային սեանսներին պատրաստում էր փաստաթղթերի փաթեթ՝ ծրարներ յուրաքանչյուր բանկի համար առանձին: Յուրաքանչյուր ծրար ուներ փաստաթղթերի ցանկ և ծրարի վրա ընդհանուր գումարի նշում: Սեանսների ընթացքում բանկերի ծրարների հիման վրա յուրաքանչյուր բանկ պատրաստում էր ամփոփ վճարային հաձնարարություն և ներկայացնում էր կենտրոնական բանկ: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգում նախատեսված էր «քլիրինգային արդյունքի» ապահովում, անհրաժեշտ էր, որպեսզի բանկերի ներկայացրած վճարային փաստաթղթերի գծով հաշվարկներն իրականացվեն միաժամանակ և որոշակի ժամերի՝ քլիրինգային սեանսների ընթացքում:

Նոր համակարգը նման էր դասական քլիրինգին, սակայն հաշվի էր առնում Հա-

յաստանի բանկային համակարգի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները, միաժամանակ ֆինանսական ռիսկերը առավելագույնս նվազեցնող մի մեխանիզմ էր, որի ներդրմամբ պարզվեցին ու հեշտացվեցին կենտրոնական բանկի և առևտրային բանկերի աշխատանքները կապված թղթային վճարային հանձնարարականների մշակման ծավալների և ժամկետների կրճատման հետ, նվազագույնի հասցվեցին սխալները: Ընդ որում, բանկերը կարող էին քլիրինգային սեանսի ժամանակ ներկայացնել տվյալ պահի դրությամբ իրենց թղթակցային հաշվի մնացորդից ավել գումարի վճարային հանձնարարություններ, քանի որ, համաձայն նոր մեխանիզմների, բանկերի փոխադարձ դիրքի հաշվանցման ժամանակ հաշվի էին առնվում բանկերի հանդիպակաց վճարումները: Այն դեպքում, եթե հանդիպակաց վճարումները և բանկի թղթակցային հաշիվներում առկա միջոցները չէին բավարարում ամբողջ ծավալով վճարումների իրականացման համար, մերժվում էր բանկի ներկայացված վճարային փաստաթղթերի փաթեթներից մեկը կամ մի քանիսը: Ընդ որում, բանկը ինքնուրույն էր որոշում վճարային փաթեթների նախապատվելիությունը: Նշված պատճառով մերժված փաթեթները կարող էին ներկայացվել հաջորդ քլիրինգային սեանսին: Օրվա մեջ սովորաբար իրականացվում էր 2–3 քլիրինգային սեանս: Համակարգի ներդրումով շատ կարճ ժամանակում զգալիորեն բարելավվեցին միջբանկային վճարումները, արագացան հաշվարկները:

Վերը թվարկած միջոցառումների արդյունքում հնարավոր եղավ որոշակիորեն բարելավել իրավիճակը: Սակայն դեռևս գոյություն ունեին այլ բնույթի լուրջ խնդիրներ: Մասնավորապես, մասնաճյուղերի լայն ցանց ունեցող և վճարումների հիմնական ծավալը ապահովող նախկին պետական մասնագիտացված բանկերի մասնաճյուղերի միջև հաշվարկները իրենց անկատարության հետևանքով ստեղծում էին լուրջ հիմնախնդիրներ գլխամասային բանկերի համար, քանի որ չկար հստակ վերահսկողություն մասնակիցների կողմից վճարումների իրականացման նկատմամբ, և ամենավտանգավորն այն էր, որ գործող գծապատկերի դեպքում հնարավոր էր մասնաճյուղերի միջոցով իրականացնել վճարումներ՝ առանց հաշվի առնելու գլխամասային բանկի կենտրոնական բանկում ունեցած թղթակցային հաշվում միջոցների առկայությունը: Բանկերն ունեին նաև փոխադարձ թղթակցային հաշիվներ: Փաստորեն, բանկերի մասնաճյուղերի կողմից վճարային փաստաթղթերը անմիջապես ներկայացվում էին մյուս բանկի համապատասխան մասնաճյուղին, վերջինս, իր հերթին, դրանց հիման վրա գումարները հաշվեգրում էր շահառուի հաշվին և հետո միայն համապատասխան տեղեկատվություն էր ուղարկում իր գլխամասային բանկ՝ նշված գումարները մյուս բանկի գլխամասից ստանալու համար: Այդ ընթացքում շահառուն կարող էր օգտագործել իր հաշվում հաշվեգրված միջոցները: Փաստորեն, դեռևս չստանալով միջոցները իրենց հաշվում, բանկերի մասնաճյուղերը շահառուներին տրամադրում էին անվերահսկելի «վարկ»: Այս պարագայում առաջացան հսկայական չափերի հասնող փոխադարձ պարտավորություններ 4 խոշոր բանկերի միջև, ինչը կարող էր լուրջ համակարգային ճգնաժամի վերածվել:

Վերը թվարկած խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ էր անցնել միջբանկային հաշվարկների հիերարխիկ համակարգի, որի ժամանակ բանկերի մասնաճյուղերից վճարումների իրականացման դեպքում պետք է ապահովվեին միջոց-

ների փաստացի տեղափոխություններ համապատասխան գլխամասային բանկերի կենտրոնական բանկում ունեցած թղթակցային հաշիվներում: Դա ճիշտ է, որոշ չափով երկարացվում էին վճարումների իրականացման ժամկետները, սակայն մի քանի անգամ նվազում էին ֆինանսական ռիսկերը բանկային համակարգում, և շատ կարճ ժամանակամիջոցում կարգավորվեցին բանկերի փոխադարձ պարտք ու պահանջները:

Ինչ վերաբերում էր վճարումների ժամկետների կրճատմանը, ապա այդ նպատակով մշակվեց այսպես կոչված «նույնաքաղաքային» վճարումների մեխանիզմը, որով փորձ էր արվում կարգավորել նույն քաղաքում և շրջանում գտնվող բանկերի մասնաճյուղերի միջև հաշվարկները: Առաջարկվող գծապատկերը հնարավորություն էր տալիս, պահպանելով հաշվարկների հիերարխիկ մեխանիզմը, դրանով իսկ նվազեցնելով ֆինանսական ռիսկերը, միաժամանակ առավել կրճատել այն տեղեկատվության քանակը, որն անհրաժեշտ էր ուղարկել գլխամասային բանկեր և կենտրոնական բանկ: Միաժամանակ փորձ արվեց վճարման տեղեկատվության ուղարկման ժամանակ օգտագործել էլեկտրոնային միջոցները: Այդ նպատակով 1994 թ. կենտրոնական բանկի, մասնաճյուղերի ցանց ունեցող խոշոր առևտրային բանկերի և նրանց մասնաճյուղերի միջև հաստատվեց էլեկտրոնային կապ՝ օգտագործելով «FVG» կազմակերպության կողմից ստեղծված հեռագրային գծերի վրա հիմնված համակարգը:

Մասնաճյուղը, համեմատելով իր գլխամասի տրամադրած ամփոփ տվյալները և մյուս մասնաճյուղից ստացված փաստաթղթերը, ապահովում էր միջոցների փաստացի հաշվեգրումը հաճախորդների հաշիվներին: Սահմանված էին հստակ ժամկետներ և բանկերի պատասխանատվություն այդ ժամկետների խախտման համար: Մշակվեցին տեղեկատվություն փոխանցման էլեկտրոնային համապատասխան ֆորմատներ՝ համակարգերի համեմատելիության ապահովման համար: Նշված միջոցառումների արդյունքում հնարավոր եղավ կարճ ժամանակում որոշակիորեն բարելավել իրավիճակը այս բնագավառում: Օգտագործելով կապի վերը նշված միջոցները՝ խոշոր առևտրային բանկերը հնարավորություն ունեցան օրական 2–3 անգամ էլեկտրոնային ճանապարհով ստանալ կենտրոնական բանկում իրենց թղթակցային հաշվի վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ, հաշվի առնելով Երևանից դուրս գտնվելու հանգամանքը (Գյումրի և Ստեփանակերտ), երկու առևտրային բանկերի և կենտրոնական բանկի միջև սկսվեց փորձնական էլեկտրոնային վճարումների իրականացումը: Վերջինիս ներդրումով զգալիորեն կրճատվեցին նշված տարածաշրջաններից վճարումների ժամկետները, իսկ այդ փորձը հետագայում օգտագործվեց ամբողջ երկրի տարածքում էլեկտրոնային վճարումների ներդրման համար:

Հաշվի առնելով թվարկած միջոցառումների արդյունավետությունը՝ հետագայում հիերարխիկ համակարգի անցկացվեց նաև ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործընթացը, համաձայն որի՝ պետական բյուջեի եկամուտների հաշիվները կենտրոնացվեցին ՀՀ կենտրոնական բանկում, և պետական բյուջեի եկամուտներին հասցեագրվող բոլոր միջոցները անմիջապես ուղղվում էին այդ հաշիվներին: Մինչ այդ տարբեր բանկերի մասնաճյուղերում կային պետական բյուջեի եկամուտների բազմաթիվ հաշիվներ: Կատարված փոփոխությունների արդյունքում

կտրուկ բարձրացան պետական բյուջեի մուտքերի նկատմամբ վերահսկողության մակարդակը և միջոցների փոխանցման արագությունը:

Վերը թվարկած ընթացիկ միջոցառումները զգալիորեն մեղմեցին վճարահաշվարկային համակարգի խնդիրները, և հնարավորություն ստեղծվեց մտածելու ռազմավարական խնդիրների մասին:

Այդ պայմաններում պահանջվում էին խնդրի կարգավորման արմատական լուծումներ, որի համար մշակվեցին ռազմավարական ծրագրեր, որոնք նպատակ ունեին գծանշելու ՀՀ վճարահաշվարկային համակարգի հեռանկարային զարգացման ուղիները և դրանց իրականացման քայլերը: 1994 թ. վերջերին ՀՀ կապի նախարարության հետ համատեղ մշակվեց միջբանկային համակարգչային ցանցի (հետագայում կոչվեց CBANet Հայաստանի կենտրոնական բանկի համակարգչային ցանց) նախագիծը: Միաժամանակ մշակվեցին այդ ցանցի հիման վրա միջբանկային էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրման ուրվագծերը: Նշվածը ներկայացվեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը (USAID)՝ համակարգերի կառուցման գործում հնարավոր տեխնիկական և ֆինանսական օժանդակություն ստանալու ակնկալիքով: Հաշվի առնելով ներկայացված հիմնավորումների արդիականությունը և ներկայացման որակը՝ 1995 թ. ստացվեց վերջինիս համաձայնությունը, և 1995–1996 թթ. ընթացքում սկսվեցին CBANet միջբանկային համակարգչային ցանցի ներդրման աշխատանքները, բանկերի և նրանց մասնաճյուղերի միացումները համակարգին:

Վերոնշյալը, ինչպես նաև արդեն ներդրված հաշվարկների հիերարխիկ համակարգը, այն անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների հիմնական մասն էին, որոնք հնարավորություն տվեցին համապատասխան ծրագրային համակարգի մշակումից հետո ապահովել էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրումը: Այնուհետև վերը նշված աշխատանքների շրջանակներում սկսվեցին ուսումնասիրությունները Հայաստանում բանկերի, դրանց մասնաճյուղերի, հաճախորդների հաշվեհամարների միասնական կողավորման համակարգի ստեղծման շուրջ:

Նախկինում գործող կողավորման համակարգը նախատեսված էր խորհրդային բոլոր հանրապետությունների համար, միասնական էր և ընդգրկում էր միայն բանկերի կողերը: Խորհրդային Միության փլուզումից հետո հրատապ դարձավ նոր՝ ինքնուրույն կողավորման համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Պետք է ասել, որ գրեթե բոլոր զարգացած երկրներում գործում են բանկերի, նրանց մասնաճյուղերի և հաճախորդների հաշիվների համարների կողավորման միասնական (համապետական) համակարգեր:

Կողավորման միասնական համակարգի շնորհիվ լուծվում են մի շարք կարևոր խնդիրներ, որոնց թվում են.

- տեղեկատվության մշակման ժամկետների կրճատումը,
- վճարային փաստաթղթերում լրացվող տվյալների քանակի կրճատումը,
- համակարգի աշխատանքների ավտոմատացումը,
- ամբողջ համակարգի հուսալիության բարձրացումը,
- տվյալների էլեկտրոնային մշակման պարզեցումը,
- նվազագույնի են հասցվում այնպիսի տիպիկ բանկային ռիսկերը, որոնք առաջանում են փաստաթղթերի կորստի և սխալ հասցեագրման պատճառով:

Նման համակարգեր կառուցելիս անհրաժեշտ է, որ այն հնարավորին չափ անկախ լինի արտաքին գործոնների ազդեցությունից: Այդ խնդիրը լուծելու համար պետք էր, որ համակարգն ունենար երկու մաս, որոնցից մեկը լիներ հաստատուն, մյուսը՝ փոփոխական: Դա հնարավորություն կտար համակարգից դուրս որևէ փոփոխության դեպքում (օրինակ՝ հաշվային պլանի փոփոխություն) խուսափել ամբողջ համակարգը փոփոխելու անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով միջազգային փորձը, մասնավորապես EBS–200 եվրոպական բանկային ստանդարտը, մշակվեց և ներդրվեց հաշվեհամարների կողավորման հետևյալ սկզբունքը՝

- 3 միջ՝ բանկի կող (տրամադրում է ԿԲ–ն),
- 2 միջ՝ տվյալ բանկի մասնաճյուղի կող (որոշում է բանկը),
- 6 միջ՝ հաճախորդի հաշվեհամար (կառուցվածքը որոշում է բանկը),
- 1 միջ՝ ստուգիչ միջ,
- 4 միջ՝ լրացուցիչ միջեր, որոնք չեն մասնակցում ստուգիչ միջի ձևավորմանը և պարտադիր չեն լրացման համար:

Ներկայումս էլեկտրոնային վճարումների համակարգում կիրառվող հաղորդագրությունները կոչված են սպասարկելու հետևյալ ոլորտները՝

- բանկերի հաճախորդների և միջբանկային վճարումներ,
- բյուջետային վճարումներ,
- պետական արժեթղթերի հետ կապված վճարումներ:

Նկատի ունենալով վերոնշյալը՝ սկսվեցին ուսումնասիրվել միջազգային պրակտիկայում առկա նմանատիպ համակարգերը, և փորձ արվեց մշակել մի քանի տարբերակ ՀՀ տարածքում միջազգային վճարումների համակարգի ներդրման նպատակով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առավել զարգացած և միջազգային բանկային պրակտիկայում տարածուն գտած համակարգը 1973 թ. գործող S.W.I.F.T. համակարգն է, որի աշխատանքների հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- վճարային գործառնությունները իրականացվում են առանց փաստաթղթերի թղթային եղանակով փոխանցման և հնարավորին չափ ռացիոնալ,
- էլեկտրոնային հաղորդակցման միջոցների օգտագործման շնորհիվ. բանկերի միջև տեղեկատվության փոխանակումը բավականին արագ է,
- նվազագույնի են հասցված այնպիսի տիպիկ բանկային ռիսկերը, որոնք կապված են փաստաթղթերի կորստի, վճարումների սխալ հասցեագրման, վճարային հանձնարարագրերի կեղծման հետ և այլն,
- անվտանգության հստակ համակարգերի շնորհիվ բացառվել է չարտոնված մուտքը համակարգ:

Այսօր S.W.I.F.T–ից օգտվում են 6000–ից ավելի կազմակերպություններ, աշխարհի 189 երկրներից, այդ թվում 3000–ից ավելի բանկեր, որոնք հնարավորություն են ստացել, անկախ իրենց աշխարհագրական դիրքից, համագործակցել միմյանց հետ օրվա ցանկացած ժամի՝ տարեկան 365 օր:

S.W.I.F.T. համակարգն այսօր ունի հաղորդակցության սեփական ցանց, որին կարելի է միանալ միայն որոշակի ստանդարտացված սարքավորումների միջոցով: Փոխանցումներն իրականացնելու համար S.W.I.F.T–ն մշակել է ունիվերսալ ստանդարտ ֆորմատներ յուրաքանչյուր հաղորդագրության համար:

Հաշվի առնելով առևտրային բանկերի ցանկությունը՝ ՀՀ կենտրոնական բանկն ի սկզբանե ունեցավ անչափ կարևոր դեր S.W.I.F.T. համակարգին հայաստանյան բանկերի անդամակցության գործում: Անդամակցության գործընթացի շրջանակներում ստեղծվեց S.W.I.F.T. օգտագործողների ազգային ասոցիացիա:

Տարիների ընթացքում հանրապետության վճարահաշվարկային համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն ու բարեփոխումները հստակեցրին նոր վճարային գործիքները և միջոցները: Հարկ է նշել, որ չնայած այդ ամենին՝ ՀՀ-ում իրականացվող վճարումների ընդհանուր ծավալում դեռևս բարձր է կանխիկ վճարումների տեսակարար կշիռը: Ներկայումս, թեև մանրածախ ապրանքաշրջանառության մեջ և որոշ տեսակի ծառայությունների դիմաց վճարման ժամանակ երբեմն օգտագործվում են քարտերն ու չեկերը, այնուամենայնիվ, կանխիկը այստեղ զգալիորեն գերակշռում է: Կանխիկը զգալի կիրառում ունի նաև մեծածախ ապրանքաշրջանառության մեջ, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների միջև տեղի ունեցող այլ գործառնություններում:

ՀՀ տարածքում իրականացվող վճարումներում կանխիկի լայնորեն կիրառումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Լինելով պարզագույն վճարային գործիք՝ «կանխիկ փողը» մինչև հիմա էլ տնտեսավարող սուբյեկտների համար համարվում է ամենագերադասելի գործիքը օպերատիվ և հուսալի վճարումներ իրականացնելու համար: Անկանխիկ վճարումների լայն կիրառմանը խոչընդոտում են ինչպես կանոնակարգող օրենսդրական դաշտի բացակայությունը, բնակչության կողմից վճարային համակարգին վերաբերող բանկային կանոնակարգվող ակտերին անտեղյակ լինելը, բանկերի կողմից վճարման ժամկետների ձգձգումը, բանկային համակարգի տեխնիկապես թերհագեցվածությունը, նորագույն տեխնոլոգիաների ներդրման համար բանկերի սահմանափակ ֆինանսական հնարավորությունները, այնպես էլ տնտեսական, սովորութային, սոցիալական և պատմական բազմաթիվ գործոններ:

Ընդհանուր վճարումների ծավալում կանխիկ վճարումների բարձր տեսակարար կշիռը խթանում է սովետրային տնտեսության զարգացումը և խոչընդոտում է ՀՀ կենտրոնական բանկի հետ կապված ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման կարևորագույն խնդիրների լուծմանը: Մասնավորապես.

1. Բանկային համակարգից դուրս կատարվող կանխիկ վճարումների ուղղումը բանկային համակարգ, այսինքն՝ կանխիկ եղանակով իրականացվող նպաստների, թոշակների, կոմունալ վճարների, էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների, ՀՀ պետական բյուջե ուղղված վճարումների, տնտեսական այլ վճարումների ՀՀ բանկային համակարգի միջոցով իրականացումը:
2. Այնպիսի տեխնոլոգիաների մշակումը, որոնք թույլ կտան վերը նշված, ինչպես նաև այլ տիպի վճարումները կատարել ՀՀ բանկային համակարգի միջոցով, անկանխիկ ձևով՝ կիրառելով նոր անկանխիկ վճարման միջոցներ ու գործիքներ:

Այդ առումով կարևոր քայլ էր ՀՀ մաքսային տարածքներում մաքսային տուրքերի, ակցիզային և այլ հարկերի բանկային համակարգի միջոցով վճարման արարողակարգի ներդրումը, որի համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձինք ՀՀ-ում ապրանքներ ներմուծելիս պետական բյուջե կատարվող վերոնշյալ

վճարումներն իրականացնում են ոչ թե մաքսավորների, այլ մաքսատներում/մաքսակետերում տեղակայված բանկերի մասնաճյուղերի (գործառնական գրասենյակների) միջոցով: Բացի այդ, ՀՀ էներգետիկայի նախարարության համակարգում ներդրվել են համապատասխան մեխանիզմներ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց գանձումները բանկային համակարգի միջոցով հավաքագրման համար: Վերոհիշյալ միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարելավվել է մաքսային մուծումների և էլեկտրաէներգիայի ու գազի դիմաց վճարումների իրականացման աշխատանքների որակը, բարձրացել է հսկողությունը հավաքագրվող միջոցների նկատմամբ, ինչպես նաև մի քանի անգամ կրճատվել են վճարումների իրականացման և դրանք պետական բյուջե կամ այլ համապատասխան հաշիվներին մուտքագրման ժամկետները:

Միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող անկանխիկ վճարման միջոցները և գործիքները բավականին բազմազան են և բաժանվում են չորս հիմնական խմբի՝

- կրեդիտային գործիքներ (վճարման հանձնարարական, հաշվից միջոցների ուղղակի դուրսգրման հանձնարարական, “standart order”),
- դեբետային գործիքներ (չեկ, վճարման պահանջագիր, ուղղակի դեբետագրում “direct debit”),
- ապրանքակարգադրական փաստաթղթերի կցմամբ վճարման միջոցներ (փաստաթղթային ակրեդիտիվ, փաստաթղթային ինկասո և այլն),
- վճարային քարտեր:

Չնայած որ միջազգային բանկային պրակտիկայում անկանխիկ վճարումներում նկատվում է մշակման համար բարձր ծախսեր պահանջող թղթային վճարման գործիքների կրճատման միտում, այդպիսի գործիքներով իրականացվող վճարումների ծավալները դեռևս զգալի մաս են կազմում և որոշակի ժամանակ այդպիսին կմնան: Աշխարհում արագորեն զարգանում են էլեկտրոնային վճարումները, և ընդլայնվում է հատկապես պլաստիկ քարտերի կիրառումը փոքրածավալ վճարումներում, և մոտ ապագայում հավանական է, որ վերջիններս գերակշռող մաս կազմեն «մանրածախ», անկանխիկ վճարումների համակարգում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում անկանխիկ վճարումներին, ապա վերջիններս իրականացվում են գերազանցապես վճարման հանձնարարականներով, ինչպես նաև վճարման պահանջագրերով, չեկերով և պլաստիկ քարտերով:

Կրեդիտային վճարումների և, մասնավորապես, վճարման հանձնարարականներով իրականացվող վճարումների գերակշռող դիրքը պայմանավորված է ՀՀ բանկային համակարգում առկա ավանդույթներով, ի տարբերություն դեբետայինների, կրեդիտային գործիքներով իրականացվող վճարումների համեմատաբար բավարար կանոնակարգվածությամբ:

1996–2003 թթ. քարտային բիզնեսը ՀՀ–ում ստացել է իր զարգացումը, ավելացել է ինչպես սպասարկված և տրամադրված քարտերի ծավալը, այնպես էլ տեսականին և քարտային ծառայություններ մատուցող բանկերի քանակը, սկսել են ձևավորվել առանձին բանկերի POS և ATM մեքենաների լոկալ ցանցեր: Տրամադրված և սպասարկված քարտերի հիմնական մասը կազմում են միջազգային քարտերը, սակայն

դրանց ճնշող մեծամասնությունը HSBC բանկի թողարկած HSBC debit card քարտերն են (նախկինում՝ GlobalAccess), որոնք կանխիկացման քարտեր են և հիմնականում օգտագործվում են Հայաստանում HSBC բանկի ATM մեքենաներից կանխիկի հանելու համար: Այնուամենայնիվ, գնալով մեծանում է տեղական քարտերի տեսակարար կշիռը ՀՀ տարածքում տրամադրված և սպասարկված քարտերի կառուցվածքում:

Ներկայումս ՀՀ տարածքում քարտերը կիրառվում են հիմնականում կանխիկացման համար՝ արտասահմանցիների կողմից ATM մեքենաներով կամ կանխիկացման կետերում կանխիկ դրամ կամ արտարժույթ ստանալու նպատակով, իսկ ՀՀ քաղաքացիներին տրամադրված քարտերը վերջիններիս կողմից օգտագործվում են արտասահմանյան ուղևորության ժամանակ, սակայն աստիճանաբար ստեղծվում և մեծանում են նաև դրանցով վճարումների ծավալն ու քանակը, քանի որ մեծանում է նաև Հայաստանում քարտեր սպասարկող առևտրային և այլ կազմակերպությունների քանակը: Ինչ վերաբերում է Հայագորբբանկի, Կրեդիտ–Երևան և Հայէկոնոմբանկի կողմից թողարկած լոկալ քարտերին, ապա դրանք հիմնականում տրամադրվում են այդ բանկերի աշխատակիցներին կամ հաճախորդներին՝ որպես աշխատավարձային քարտեր, և վերջիններիս կողմից կիրառվում են աշխատավարձը կանխիկացնելու, ինչպես նաև սպասարկման ոլորտի և առևտրի կետերում ոչ մեծ ծավալներով անկանխիկ ձևով վճարումներ կատարելու համար:

Այնուամենայնիվ, չնայած կատարված դրական տեղաշարժերին, վճարային քարտերը թե թողարկող և սպասարկվող քարտերի ու կատարվող գործարքների քանակով և ծավալով, եթե այդ բնագավառում ընդգրկված բանկերի և սպասարկման կետերի թվով լուրջ դեր չեն խաղում ՀՀ ընդհանուր վճարահաշվարկային համակարգում:

23.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎՃԱՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԵՐԸ

Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է, որի հարյուրերորդական բաժանումը լուման է: Հայկական դրամը ISO ստանդարտներում ստացել է AMD տառային և 051 թվային կոդը: ՀՀ արժույթը շրջանառության մեջ է դրվել 1993 թ. նոյեմբերին, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքը կազմել է 14.50, 01.01.1997 թ. դրությամբ՝ 435.07, 01.03.2003 թ.՝ 586.42, 01.07.2006թ.՝ 418.79 հայկական դրամ:

2006 թ. հունիսի 30–ի դրությամբ շրջանառության մեջ է գտնվել 144.3 մլրդ հայկական դրամ, ինչը կազմում է համախառն ներքին արդյունքի 5.5%–ը: Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի մեծ քանակի առկայությունը ցույց է տալիս այդ վճարային գործիքի լայն տարածումը հանրապետությունում: Կանխիկ դրամը հաճախակի է օգտագործվում հատկապես փոքրածավալ վճարումներ կատարելիս: ՀՀ–ում աշխատավարձերի, թոշակների վճարումները կատարելու համար հիմնականում օգտագործվում է կանխիկ դրամը: Թողարկվել և շրջանառության մեջ են գտնվում հետևյալ անվանական արժեքով դրամներ՝ թղթադրամ՝ 10, 25, 50, 100, 200,

500, 1000, 5000, 20000, 50000 դրամ, և մետաղադրամ՝ 10, 20, 50, լուճա 1, 3, 5, 10, 20, 50, 100, 200, 500, 25000 դրամ:

Թղթադրամների տպագրությունը և մետաղադրամների պատրաստումը կատարվում են այն կազմակերպությունների կողմից, որոնք ընտրվել են կենտրոնական բանկի կողմից հայտարարված մրցույթով: 2006 թ. հունիսի 30–ի դրությամբ շրջանառության մեջ կանխիկ փողի դրամական զանգվածը կազմել է 144,3 մլրդ, որից թղթադրամ՝ 139.0 մլրդ, մետաղադրամ՝ 5.3 մլրդ:

Գործնականում հնարավոր չէ ճշգրիտ որոշել ՀՀ–ում կանխիկ դրամով կատարված վճարումների ծավալը և քանակը: Միայն դրամական զանգվածի M1 ցուցանիշի մեջ դրանց ծավալով կարելի է դատել տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո թուլացավ Հայաստանի Հանրապետության բանկերի վճարային համակարգը, անկանխիկ ձևով վճարումներն իրականացնելու դժվարություններ ստեղծվեցին: ՀՀ–ում տնտեսավարող սուբյեկտների համար տնտեսավարման առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու, հաշվարկներում ու վճարումներում կանխիկ և անկանխիկ դրամի տարբերությունը վերացնելու, ինչպես նաև դրամական միջոցները բանկերում պահելու նպատակով 1994 թ. հանվեց Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների կողմից կանխիկ միջոցների ազատ տնօրինման արգելքը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են տարվում շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալը նվազեցնելու՝ նաև ի հաշիվ անկանխիկ վճարումների ծավալի աճի՝ օգտագործելով վճարումների ժամանակակից էլեկտրոնային եղանակները, մասնավորապես BANKAIL էլեկտրոնային վճարումների համակարգը, պլաստիկ քարտերը և այլն:

Հաշվարկներ վճարման հանձնարարագրերով: Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացածության և գոյություն ունեցող օրենսդրական այժմյան դաշտի պայմաններում անկանխիկ վճարումների առավել մեծ մասն իրականացվում է վճարման հանձնարարագրերի միջոցով: Դրանք օգտագործվում են ինչպես ապրանքային գործառնություններով պայմանավորված (վճարում ստացված ապրանքների ու ծառայությունների դիմաց, կանխավճարի, կրեդիտորական պարտքերի մարման, վարձակալական վճարի մուծում և այլն), այնպես էլ ոչ ապրանքային գործարքների հետ կապված հաշվարկներում (վճարում բյուջեին, արտաբյուջետային հիմնադրամներին, վարկերի ստացում, մարում և տոկոսների վճարում, մուծումներ կանոնադրական կապիտալին, արժեթղթերի ձեռքբերում և այլն): Հաշվարկի կատարման նախաձեռնողը վճարողն է, որը ձևակերպում է վճարման հանձնարարագիր, ինչը նրա կարգադրությունն է սպասարկող բանկին որոշակի գումար իր հաշվից դուրս գրելու և ստացողի հաշվին փոխանցելու մասին:


Վճարողի կողմից հանձնարարագիրը կազմվում է հատուկ բլանկի վրա և պարունակում է վճարումը ապահովելու համար նախատեսված բոլոր ռեկվիզիտները: Որպես կանոն, այն բանկին ներկայացվում է 4 օրինակից, որոնցից առաջին օրինակը մնում է վճարողի բանկում և հիմք է ծառայում նրա հաշվից գումարը դուրս գրելու համար, երկրորդ և երրորդ օրինակները ուղարկվում են միջոցներ ստացողի սպասարկող բանկին, որտեղ երկրորդ օրինակի հիման վրա կատարվում է միջոցների մուտքագրում, իսկ երրորդ օրինակը կցվում է հաշվի քաղվածքին, չորրորդ օրինակ–

կը վերադարձվում է վճարողին հանձնարարագիրը ստանալու մասին նշումով՝ որպես կատարման ընդունելու տեղեկանք: Վճարման հանձնարարագրի գործողության տևողությունը, դուրսգրման պահից սկսած, 10 օր է:

Վճարման հանձնարարագրերով հաշվարկներ կատարելու առանձնահատուկ կարգ է սահմանված այն կազմակերպությունների համար, որոնք դրամական փոխանցումներ են կատարում առանձին քաղաքացիներին որպես աշխատավարձ, կենսաթոշակ, հեղինակային հոնորար: Նման դեպքերում հաշվարկների մեջ ներքաշվում են փոստային հիմնարկները: Վճարողի դուրս գրած հանձնարարագրում որպես ստացող նշվում է մոտակա փոստի բաժինը: Կապի կազմակերպությունների օգնությամբ տնտեսավարող սուբյեկտները միաժամանակ հնարավորություն ունեն իրենց բանկային հաշվին փոխանցելու կանխիկ առևտրային հասույթը: Դրա համար լրացնում են փոստային փոխանցման համապատասխան բլանկ, իսկ կապի ձեռնարկությունը փոստային փոխանցման գումարի չափով դուրս է գրում վճարման հանձնարարագիր, որի հիման վրա բանկը նրա հաշվից նույն գումարով փոխանցում է կատարում ստացողի հաշվին:

Եթե վճարման հանձնարարագրերը կրում են մշտական բնույթ, իսկ ապրանքները մատակարարվում կամ ծառայությունները մատուցվում են կայուն չափերով, հնարավորություն է առաջանում հաշվարկել ոչ թե ըստ առանձին մատակարարումների, այլ գնորդի հաշվից մատակարարի հաշվին պարբերաբար գումար փոխանցելու ճանապարհով՝ ըստ նախօրոք պայմանավորված ժամկետների ու չափերի: Այդպիսի դեպքերում վճարողը նախապես բանկին հանձնում է վճարման հանձնարարագիր առաջիկա ժամանակաշրջանի պլանային վճարումների համար: Որոշակի ժամկետներում կողմերը ստուգում և համեմատում են փոխադարձ հաշվարկները, տարբերությունը հաշվի է առնվում հաջորդ վճարումներում: Պլանային վճարումները լայն կիրառություն են ստացել գազ, էլեկտրաէներգիա, քարածուխ օգտագործող արտադրական կազմակերպություններում, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների՝ իրենց մշտական մատակարարների հետ հաշվարկներում:

Վճարման հանձնարարագրերով հաշվարկների փաստաթղթաշրջանառությունը պատկերված է 22.1 գծապատկերում: Կողմերը գտնվում են միևնույն բնակավայրում և սպասարկվում են նույն բանկի կողմից:



Գծապատկեր 22.1.Վճարման հանձնարարագրերով հաշվարկների փաստաթղթաշրջանառությունը

1. Գնորդի ներկայացուցիչը մատակարարի պահեստում ընտրում է անհրաժեշտ արտադրանքը և պատրաստում առաքման:
2. Գնորդի ներկայացուցիչը հայտնում է իր կազմակերպությանը վճարում կատարելու անհրաժեշտության մասին:
3. Գնորդի հաշվապահությունը դուրս է գրում վճարման պահանջագիր:
4. Հանձնարարագիրը հանձնվում է բանկ՝ ինկաստ:
5. Բանկը կատարում է հանձնարարությունը:
6. Բանկը մատակարարին տեղեկացնում է վճարումը կատարված լինելու մասին ներկայացնելով քաղվածք հաշվարկային հաշվից:
7. Մատակարարը թույլ է տալիս գնորդին տանել վճարված ապրանքները:

1996 թ. ՀՀ տարածքում իրականացված անկանխիկ վճարումների ծավալի 98.4%-ը և քանակի 95.9%-ը կազմել են կրեդիտային փոխանցումները:

Կրեդիտային փոխանցումները մինչև վերջերս կարգավորվում էին միայն բանկ-հաճախորդ պայմանագրով: 1996 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առաջարկով կնքվեց առաջին միջբանկային համաձայնագիրը, և ստեղծվեց միջբանկային արբիտրաժ, որը բանկերի կողմից լիազորվեց լուծելու վճարումների հետ կապված միջբանկային վեճերը: Համաձայնագրով սահմանվեցին ՀՀ տարածքում վճարումների կատարման առավելագույն ժամկետները, ուշացումների և սխալ վճարումների համար տուգանքների հաշվարկման և գանձման կարգը, կողմերի պարտավորությունները և պատասխանատվությունը:

1996 թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց ՀՀ-ում վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների իրավական դաշտը:


Չնայած ներկայումս հաճախորդների կողմից փոխանցման հանձնարարականները բանկերին ներկայացվում են 100%-ով թղթային եղանակով, այնուամենայնիվ, վերոհիշյալ օրենքը նախատեսում է նաև հաճախորդների կողմից բանկերին էլեկտրոնային և մյուս եղանակներով հանձնարարականների ներկայացման հնարավորությունները:

Հաշվարկներ վճարման պահանջագրերով-հանձնարարագրերով: Անկանխիկ հաշվարկների այս ձևը ինկաստյով հաշվարկների պարզեցված տարատեսակն է, որի պարագայում մատակարարի բանկն իր հաճախորդի հանձնարարությամբ պարտավորվում է գնորդից ստանալ վճար կամ նրա հոժարագիրը (ակցեպտ): Մատակարարի բանկը (էմիտենտ բանկ), ստանալով իր հաճախորդի հանձնարարագիրը, դրա կատարմանը ներգրավում է գնորդի բանկին: Ինկասային հանձնարարագիրն ուղեկցվում է նրա բովանդակությունը բնութագրող և մանրամասնող մի շարք փաստաթղթերով: Գնորդի բանկի կողմից հանձնարարության կատարումը կարող է տեղի ունենալ փաստաթղթերը անմիջապես ներկայացնելուն պես վճարելու կամ վճարելու մասին գնորդի համաձայնությունը ակցեպտի տեսքով ստանալու միջոցով: Գնորդից ստացված դրամական միջոցները կատարող բանկը անհապաղ հանձնում է մատակարարի բանկին, որն էլ արտացոլում է մատակարարի (հաճախորդի) հաշվին: Երբ վճարը կամ ակցեպտը չի ստացվում, կատարող բանկը տեղեկացնում է պատճառների մասին: Էմիտենտ բանկն իր հերթին այդ մասին տեղյակ է պահում հաճա-

խորդին և նրանից հարցում է անում իր հետագա գործառնությունների մասին: Եթե այդ ցուցումները սահմանված ժամկետին չստացվեն, կատարող բանկը իրավասու է փաստաթղթերը վերադարձնել էմիտենտ բանկին:

Ըստ գործող կարգի՝ վճարման պահանջագիր–հանձնարարագրերը դուրս են գրվում մատակարարի կողմից ապրանքների առաքումից հետո երեք օրինակից և առաքման փաստաթղթերի հետ միասին ուղարկվում են գնորդի բանկին, որը բոլոր երեք օրինակները հանձնում է գնորդին՝ իր մոտ պահելով միայն առաքման փաստաթղթերը: Այդ փաստաթղթերը բանկ ստացվելուց և գնորդին հանձնվելուց երեք օրվա ընթացքում գնորդը պարտավոր է վերադարձնել բանկ և հայտնել իր որոշումը տվյալ փաստաթղթի վերաբերյալ: Վճարումից լրիվ կամ մասնակի հրաժարվելու դեպքում գնորդն այդ մասին տեղեկացնում է իրեն սպասարկող բանկին: Այդ դեպքում վճարման պահանջագիր–հանձնարարականը առաքման փաստաթղթերի հետ միասին վերադարձնում է անմիջական մատակարարին՝ տեղեկացնելով գնորդի վճարումից հրաժարվելու մասին: Վճարումից հրաժարվելու մասին տեղեկությունը պարտադիր պետք է պարունակի գնորդի պատճառաբանությունը: Հրաժարման ավանդական պատճառաբանություն են հանդիսանում՝ «ապրանքը պատվիրված չէ», «առաքված է ժամկետից շուտ», «նշանակված է չհամաձայնեցված գին», «առաքված է սխալ հասցեով» և այլն: Վճարելու մասին համաձայնություն տալուց հետո վճարման պահանջագիր–հանձնարարագիրը վճարողը ձևակերպում է ստորագրություններով ու կնիքով և բոլոր օրինակները հանձնում է սպասարկող բանկին: Առաջին օրինակը հիմք է ծառայում վճարողի հաշվից միջոցները դուրս գրելու համար և գործարքը կատարելուց հետո մնում է սպասարկող բանկում: Երկրորդ օրինակը ուղարկվում է մատակարարի բանկին՝ որպես ապացույց միջոցները մատակարարի հաշվին փոխանցելու մասին: Երրորդ օրինակը առաքման փաստաթղթերի հետ միասին վերադարձվում է վճարողին:

Վճարման պահանջագիր–հանձնարարագրով հաշվարկի փաստաթղթաշրջանառության կառուցվածքը ցույց է տրված գծապատկեր 22.2–ում.



Գծապատկեր 22.2. Պահանջագիր–հանձնարարագրի ձևով հաշվարկի փաստաթղթաշրջանառությունը


1. արտադրանքի առաքում,
2. վճարման պահանջագիր–հանձնարարագրի դուրսգրում առաքման փաստաթղթերի հիման վրա,
3. փաստաթղթերի փոխանցում վճարողի բանկին,
4. ստացված փաստաթղթերի հանձնում վճարողին որոշում կայացնելու համար,
5. փաստաթղթերի վերադարձում վճարողի հոժարագրով,
6. վճարողի հաշվից միջոցների դուրսգրում,
7. փաստաթղթերի հանձնում ՀՎԿ,
8. թղթակցային հաշվից միջոցների դուրսգրում,
9. կրեդիտային ավիզոյի փաստաթղթի երկրորդ օրինակի հետ միասին ուղարկում մատակարարի բանկին,
10. մատակարարի բանկի թղթակցային հաշվին միջոցների մուտքագրում,
11. հաղորդում մատակարարի բանկին միջոցներ ստացվելու մասին,
12. միջոցների մուտքագրում մատակարարի հաշվարկային հաշվին,
13. մատակարարին իր հաշվարկային հաշվից քաղվածքի տրամադրում վճարման պահանջագիր–հանձնարարագրով միջոցներ ստացվելու դեպքում:

Հաշվարկներ չեկերով: Չեկերով հաշվարկները Հայաստանի Հանրապետությունում դեռևս լայն կիրառություն չեն ստացել: Վճարման համախառն շրջանառության մեջ նրանց բաժինը չի անցնում մեկ տոկոսից, իսկ չեկերի միջին շրջանառելիությունը 30–35 օր է: Հաշվարկներում չեկերի օգտագործումը ենթադրում է կոնտրագենտների բարձր վստահություն և պարտաճանաչություն: Հայաստանի տնտեսությունը, դեռևս գտնվելով շուկայական հարաբերությունների կայացման փուլում նման պահանջների չի բավարարում:

Ընդհանուր տեսքով հայկական հաշվարկային չեկերն իրենցից ներկայացնում են վճարողի (չեկ տվողի) հրամանը իրեն սպասարկող բանկից վճարողի հաշվում եղած միջոցների հաշվին չեկի տնօրինողին կատարել վճարում չեկում նշված գումարի չափով: Բավականաչափ լայն կիրառություն ունեն դրամական չեկերը: Դրանց օգնությամբ ձեռնարկություններն ու կազմակերպություններն իրենց հաշվարկային հաշվից կանխիկ միջոցներ են ստանում աշխատավարձ վճարելու, գործուղման ծախսերը հոգալու, տնտեսական կարիքները բավարարելու և գյուղմթերքներ գնելու նպատակով: Չեկ տվողն ու չեկի տնօրինողը դրամական չեկերի պարագայում նույն անձն է, դրանով հնարավոր չէ վճարում կատարել ապրանքների ու ծառայությունների դիմաց, այդ փաստաթղթի գործողության ժամկետը չափազանց կարճ է:

Ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարելու համար կիրառվում են հաշվարկային չեկերը: Դրանք լիակատար երաշխիք ունեն ժամկետին վճարում կատարելու համար: Չեկերի մաքուր բլանկները հաճախորդը ստանում է իրեն սպասարկող բանկում: Տալուց առաջ բանկը դրանցում նշում է անհրաժեշտ ռեկվիզիտները՝ բանկի անվանումը և նրա կոդերը, չեկ տվողի անունը և նրա հաշվի համարը: Չեկի հակառակ երեսին ցույց է տրվում այն սահմանային գումարը, որի համար կարող է չեկ դուրս գրվել:

Չեկի տնօրինողը պետք է չեկը բանկ վճարման ներկայացնի տրված պահից 10 օրվա ընթացքում: Փաստաթղթաշրջանառության կառուցվածքը հետևյալն է.



Գծապատկեր 22.3. Չեկերով հաշվարկների փաստաթղթաշրջանառությունը

1. բանկին չեկ ստանալու համար դիմումի ներկայացում,
2. վճարողի հաշվարկային հաշվից միջոցների դուրսգրում և չեկերով հաշվարկների առանձին հաշվին գրանցում,
3. վճարողին չեկերի մաքուր բլանկի հատկացում,
4. հաղորդում ՀՎԿ չեկերը վճարելու համար գումար դեպոնացված լինելու մասին,
5. դեպոնացված միջոցները վճարողի բանկի թղթակցային հաշվից դուրսգրում, գրանցում ՀՎԿ-ի հատուկ հաշվին,
6. ապրանքի հանձնում գնորդ-վճարողին,
7. վճարող-չեկ տվողի չեկի դուրսգրում և մատակարարին հանձնում՝ միաժամանակ ստանալով ապրանքը,
8. չեկի տնօրինողի կողմից չեկի բանկ ինկասո փոխանցում,
9. չեկի հանձնում ՀՎԿ,
10. վճարողի բանկի հատուկ հաշվից չեկերով գումարի դուրսգրում և գրանցում մատակարարի բանկի թղթակցային հաշվին,
11. չեկերի ռեեստրը մատակարարի բանկ փոխանցում,
12. միջոցների գրանցում մատակարարի հաշվարկային հաշվին:

Հայաստանի Հանրապետությունում կատարվող անկանխիկ հաշվարկների 0.9%-ը իրականացվում է չեկերով: ՀՀ տարածքում իրականացվող անկանխիկ վճարումներում չեկերով կատարվող գործարքները մեծ ծավալներ չեն կազմում, ինչը պայմանավորված է մանրածախ առևտրում կանխիկի գերակայությամբ, նախկինում չեկերով կատարվող գործառնություններում առկա որոշ չարաշահումներով, օրենսդրական դաշտի անկատարությամբ և մինչև 1996 թ. հուլիսը գործող արգելքով, համաձայն որի՝ բանկերը կարող էին տրամադրել չեկեր միայն իրավաբանական անձանց: Դրանով է պայմանավորված թե դուրս գրված չեկերի փոքր քանակը, թե մեկ չեկով դուրս գրված միջին գումարը:

ՀՀ-ում թողարկվող չեկերը մշակվում են ձեռքով: Միկրոկոդավորում առայժմ չի կիրառվում, ինչը պայմանավորված է չեկերով գործառնությունների փոքր քանակով: Ներկայումս աշխատանքներ են տարվում հաշվարկներում չեկերի կիրառման ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես մշակման գործընթացում են գտնվում «Չե-

կերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (բացի այդ, աշխատանքներ են տարվում բյուջետային որոշ հարկատեսակների մուտքագրումը բյուջե հատուկ չեկերի միջոցով իրականացնելու ուղղությամբ):

Հաշվարկների ակրեդիտիվային ձևը, ըստ էության, գնորդի կողմից լիակատար երաշխիք ապահովելու եղանակ է առաքված ապրանքների հաշիվները, պահանջագրերը, մուրհակները ժամանակին վճարելու մասին: Հետևաբար, այս ձևը առավելապես պաշտպանում է մատակարար–վաճառող կազմակերպության շահերը: Կարելի է ակրեդիտիվը ներկայացնել բանկի կողմից հաճախորդ–վաճառողի պատվերով՝ որպես բանկի դրամական պարտավորություն: Այն բանկի և հաճախորդ վճարողի միջև ինքնուրույն գործարք է, առանձնացված է առք ու վաճառքի պայմանագրից և բանկային ծառայության իրացման ձև է:


Անկանխիկ հաշվարկներում օգտագործվում է ակրեդիտիվի երկու տեսակ՝

1. դրամական կամ շրջաբերական, որոնցով վճարումները չեն պայմանավորված առևտրային փաստաթղթերի ներկայացմամբ,
2. փաստաթղթային (ապրանքային), որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների գծով հաշվարկներում:

Գործնականում ակրեդիտիվը բացվում է վճարողի կողմից մատակարարից ապրանքները առաքման համար պատրաստ լինելու տեղեկությունը ստանալուն պես: Դրա համար վճարողն իրեն սպասարկող բանկին ներկայացնում է դիմում: Ակրեդիտիվը նախատեսված է միայն մեկ մատակարարի հետ հաշվարկ կատարելու համար, ունի նախապես որոշված գումար և գործողության ժամկետ:

Նախ և առաջ բացվում են ծածկված (դեպոնացված) և չծածկված (երաշխավորված) ակրեդիտիվներ: Առաջին դեպքում էմիտենտ բանկը վճարողի հաշվարկային հաշվից դուրս է գրում և փոխանցում է մատակարարի բանկին լրիվ ակրեդիտիվի չափով, որտեղ դեպոնավորվում է առանձին հաշվեկշռային հաշվին: Դեպոնավորումը կարող է կատարվել նաև էմիտենտ բանկի գնորդի ստացած վարկի հաշվին: Հծածկված ակրեդիտիվը չի նախատեսում միջոցների նախնական դեպոնավորում: Վճարումները կատարվում են վճարողի հաշվարկային հաշվի միջոցներից, իսկ միջոցների պակասի դեպքում էմիտենտ բանկը երաշխավորում է վճարել իր սեփական միջոցներից: Սակայն ակրեդիտիվի այս տեսակը կարող է կիրառվել, եթե էմիտենտ բանկը կատարող բանկում ունի թղթակցային հաշիվ, որից որպես վճարում դուրս են գրվում միջոցները:

Ապրանքները գնորդին առաքելուց հետո մատակարարն իր բանկին ներկայացնում է հաշվարկային գործարքը կատարելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ հաշիվների ռեեստրը, առաքման և ակրեդիտիվի պայմաններով նախատեսված այլ փաստաթղթերը: Ակրեդիտիվային ձևի ժամանակ փաստաթղթաշրջանառությունը ներկայացված է 22.4 գծապատկերում.



Գծապատկեր 22.4. Հաշվարկների ակրեդիտիվային ձևի փաստաթղթաշրջանառությունը

1. հաղորդում ապրանքները առաքման պատրաստ լինելու մասին,
2. ակրեդիտիվ բացելու դիմումի ձևակերպում և հանձնում բանկ,
3. բացված ակրեդիտիվի գումարի դուրսգրում վճարողի հաշվարկային հաշվից և արտացոլում վճարողի բանկի արտահաշվեկշռային հաշվում,
4. ակրեդիտիվ բացելու փաստաթղթերի հանձնում ՀՎԿ,
5. ակրեդիտիվի գումարի դուրսգրում վճարողի թղթակցային հաշվից,
6. կրեդիտային ավիզոյի փոխանցում ակրեդիտիվ բացելու վճարողի դիմումի հետ միասին,
7. մատակարարի բանկի թղթակցային հաշվին միջոցների գրանցում,
8. փաստաթղթերի հանձնում մատակարարի բանկին,
9. մատակարարի բանկում «Ակրեդիտիվներ» առանձին հաշվում միջոցների ամրագրում,
10. մատակարարին տեղեկացում իր անունով ակրեդիտիվ բացելու մասին,
11. ապրանքի առաքում գնորդին,
12. մատակարարի կողմից բանկի հաշիվ ռեեստրների հանձնում,
13. միջոցների մուտքագրում մատակարարի հաշվին,
14. հաշվարկային փաստաթղթերի ուղարկում գնորդի բանկին,
15. միջոցների դուրսգրում արտահաշվեկշռային հաշվից,
16. հաշվարկային փաստաթղթերի հանձնում վճարողին:

Հաշվարկներ քլիրինգի կիրառմամբ: Քլիրինգը անկանխիկ հաշվարկների ինքնուրույն ձև է: Այն ծառայում է որպես պահանջի չափերի պակասեցման հնարավորություն տվող եղանակ և իրենից ներկայացնում է նրանց փոխադարձ պահանջների հաշվանցում: Քլիրինգը կարող է օգտագործվել հաշվարկային հարաբերությունների ամենատարբեր մակարդակներով:

Պահանջների հաշվանցման էությունն այն է, որ կոնտրագենտների փոխադարձ պահանջները մարվում են, իսկ վճարումները կատարվում են միայն տարբերության մասով՝ ընդգրկելով երկու կամ մի խումբ մասնակիցներ: Անցկացման ժամանակի

առուևով կարող են լինել միանվագ և մշտական հաշվանցումներ: Կատարման տեխնիկայի առուևով ամենապարզը երկու մասնակիցների փոխադարձ պահանջների պատահական հաշվանցումն է: Քլիրինգը առավել մասսայականություն ու կիրառման լայն շրջանակ ունի միջբանկային հաշվարկներում:

Միջբանկային վճարահաշվարկային փոխհարաբերություններում շատ կարևոր դերակատարում ունեն առևտրային բանկերը: Նրանք կարող են բացել և վարել այլ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերը բավականաչափ արդյունավետ են, և բանկերի վճարունակության տեսանկյունից նպատակահարմար չէ բացել և վարել տարաբնույթ թղթակցային հաշիվներ՝ ուստի բանկերն իրենց կամ իրենց հաճախորդների վճարային գործարքներն իրականացնելիս հիմնականում օգտագործում են ՀՀ կենտրոնական բանկում ունեցած թղթակցային հաշիվները: Ինչ վերաբերում է առևտրային բանկերի փոխադարձ թղթակցային հաշիվներին, ապա վերջիններս առավելապես օգտագործվում են բանկերի կարճաժամկետ վճարունակության խնդիրների լուծման նպատակով միջբանկային վարկային շուկայի գործառնությունների ձևակերպման համար:

ՀՀ-ում իրականացվող վճարումների զգալի մասը կատարվում է կենտրոնական բանկում գործող միջբանկային հաշվարկների համակարգերով՝ համախառն և զուտ սկզբունքներով: ՀՀ կենտրոնական բանկում գործում են համախառն թղթային վճարումների և համախառն էլեկտրոնային վճարումների համակարգեր, ինչպես նաև զուտ հաշվարկների «քլիրինգային» համակարգը: Համախառն հաշվարկների համակարգերով վճարումները կատարվում են ՀՀ կենտրոնական բանկում վճարողի թղթակցային հաշվում բավարար միջոցների առկայության դեպքում: Վճարողի հաշվում բավարար միջոցներ չլինելու դեպքում (օվերդրաֆտ սովորաբար չի տրամադրվում) վճարողի ներկայացրած հանձնարարականը մերժվում է: Հաշվարկը կատարվում է նույն օրը և համարվում է վերջնական ու անվերադարձելի: Վճարվող զումարը անմիջապես հաշվեգրվում է կենտրոնական բանկում բանկի թղթակցային հաշվին: Չկա հերթերի մեխանիզմ, և վճարումների իրականացման նախապատվելիությունը որոշում է վճարման հանձնարարականը ներկայացնող բանկը:

Համախառն թղթային եղանակով վճարումների համակարգով վճարումների իրականացումը հատկապես վերջին տարիներին ունեցել է կտրուկ նվազում՝ էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրման և այս բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան տարիֆային քաղաքականություն վարելու արդյունքում: Մասնավորապես, 1996–2000 թթ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների կառուցվածքում թղթային վճարումները ծավալային մասով 72%-ից նվազել են 38%-ի, իսկ քանակային մասով՝ 25%-ից մինչև 3%-ի: Թղթային եղանակով վճարումների նվազումը շարունակվում է և առաջիկայում պետական արժեթղթերի հաշվարկների ավտոմատացված համակարգի ներդրման արդյունքում էլ՝ ավելի կնվազի, քանի որ ներկայումս այս տիպի վճարումներում մեծ տեղ են զրավում հատկապես պետական արժեթղթերի հետ կապված վճարումները:

Այնուամենայնիվ, ներկայումս ՀՀ վճարահաշվարկային համակարգերից ամենա-

¹ Տե՛ս www.arca.am/arm/index.php

զարգացածը և արդյունավետը CBANet միջբանկային համակարգչային ցանցն է և վերջինիս հիման վրա գործող միջբանկային էլեկտրոնային վճարումների համակարգը: Ընդ որում, համակարգերը ի սկզբանե միջբանկային վճարումների կարգավորման նպատակով ստեղծվելով հանդերձ ունեն շատ ավելի լայն ընդգրկում, քանի որ շատ բանկեր և գանձապետական համակարգը իրենց մասնաճյուղերի միջև վճարումները նույնպես իրականացնում են վերը նշված համակարգերով:

ՀՀ կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցը՝ ՄՀՑ, նախատեսված է ապահովելու տեղեկատվության արագ և հուսալի փոխանցումը առևտրային բանկերի և կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և իրենց մասնաճյուղերի, ՀՀ գանձապետարանի և նրա բաժանմունքների, ինչպես նաև ՀՀ տարածքում գտնվող տարբեր ֆինանսական ինստիտուտների միջև: ՄՀՑ-ի հիմքի վրա կառուցված են այնպիսի միջբանկային ավտոմատացված կիրառական համակարգեր, ինչպիսիք են.

- էլեկտրոնային վճարումների միջբանկային համակարգը,
- պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման, առք ու վաճառքի և հաշվարկների միջբանկային համակարգը,
- արտարժույթի առք ու վաճառքի, պետական արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների իրականացման համակարգը,
- տեղեկատվական միջբանկային ընդհանուր համակարգը և էլեկտրոնային փոստը:

ՄՀՑ-ն բանկերին հնարավորություն է տալիս կառուցել այնպիսի բաշխված բանկային ավտոմատացված համակարգ, որը կընդգրկի գլխամասը և բանկի բոլոր մասնաճյուղերը և, բացի այդ, կապահովի մասնաճյուղերի փոխադարձ գործունեությունը բանկի տվյալների մշակման ընդհանուր կենտրոնի հետ ինչպես on-line ռեժիմում, այնպես էլ էլեկտրոնային փոստով:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվող հաշվարկները կատարվում են համախառն սկզբունքով: Ներկայումս էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվում են ՀՀ դրամով կրեդիտային փոխանցումներ: Համակարգը բանկերին հնարավորություն է տալիս հարցումների միջոցով տեղեկանալ ՀՀ կենտրոնական բանկում տվյալ պահի դրությամբ իրենց թղթակցային հաշիվների մնացորդների, ինչպես նաև էլեկտրոնային քաղվածքների հաշվով կատարված գործարքների մասին:

23.4. ԲԱՆԿԱՅԻՆ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Արդեն ասվել է, որ տնտեսության զարգացման գործում բացառիկ կարևոր դեր ունի երկրի բանկային և վճարահաշվարկային համակարգերի արդյունավետ կազմակերպումը: Բնականաբար, վճարահաշվարկային համակարգերի զարգացումը, այդ թվում պլաստիկ քարտերի կիրառումը, չէր կարող լուրջ ուշադրության չարժանանալ ՀՀ-ում: ՀՀ-ում առաջին բանկային քարտերը թողարկվել են դեռևս 1990-ական թվականներին HSBC Armenia բանկի կողմից: Այն գործում էր Global Access ցանցում: Քանի որ շուկայական տնտեսությունը ենթադրում է մրցակցային պայքար, ուս-

տի մի շարք բանկեր և սկսեցին թողարկել և սպասարկել պլաստիկ քարտեր: Ստեղծվեցին տարբեր քարտային համակարգեր՝ «ACARD», «Davidunion», «Armekonomkard»: Այդ քարտերի միջոցով հիմնականում իրականացվում էին դրանք թողարկող բանկերի աշխատակիցների աշխատավարձային ծրագրերը, և չկային լուրջ խթաններ մեծ ֆինանսական ներդրումներ կատարելու՝ հզոր պրոցեսինգային կենտրոններ ստեղծելու համար: Այդ հանգամանքը ակնհայտ դարձրեց ԶՀ–ում մեկ միասնական վճարային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

«Արմենիան քարտ» միասնական վճարային համակարգը հիմնադրման օրվանից անընդհատ զարգանում է և ընդլայնում իր կողմից մատուցվող ծառայությունների փաթեթը: Եթե 2002 թվականը խորհրդանշական էր համակարգի կայացման, իսկ 2003 թվականը՝ միջազգային վճարային համակարգերին ինտեգրման առումով, ապա 2004 թվականը կարելի է ներկայացնել որպես նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման տարի: Մասնավորապես համակարգի քարտապանները, օգտագործելով ինտերնետային դաշտի հնարավորությունները, նախադրյալ հանդիսացան իրականացնելու կոմունալ վճարները, ձեռք բերելու իզի քարտերի վերալիցքավորման քարտեր, ինտերնետից օգտվելու ժամային և շուրջօրյա քարտեր: Ներկայումս համակարգում գործում է նաև ինտերնետ վճարումների համակարգը, որի միջոցով գործարքները կատարվում են համակարգում գրանցված առևտրի ու սպասարկման վիրտուալ կետերում: Կարևոր է նաև առանց օպերատորի միջամտության քաղաքային հեռախոսահամարով քարտային հաշվի մնացորդի հարցման ծառայության ներդրումը: Թեև այն հիմնադրվել է 10 առևտրային բանկերի մասնակցությամբ, 01.01.2006 թ. դրությամբ մասնակից բանկերի թիվը հասել է 16–ի:

Տնտեսության զարգացմանը զուգընթաց ամբողջ աշխարհում գլոբալացման միտումը պահանջում էր, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն ինտեգրվեր միջազգային վճարահաշվարկային համակարգերին: Բացառություն չէր կազմում նաև պլաստիկ քարտը, մասնավաճ որ այն լիովին հիմնված է միջազգային փորձի վրա: Բացի դրանից, Հայաստանում զբոսաշրջության զարգացումը հանգեցրեց միջազգային քարտերի սպասարկման, ինչպես նաև մեր երկրի գործունյա բնակիչների արտասահմանում սպասարկման անհրաժեշտությանը: Սակայն միջազգային քարտային վճարային համակարգերին ինտեգրման գործընթացը դանդաղեց, քանի որ հավաստագրման հարցումն իրականացվում էր միայն արտասահմանյան պրոցեսինգային կենտրոնների միջոցով: Բացի այդ, պրոցեսինգային կենտրոններին կատարվող կոմիսիոն վճարները շատ բարձր էին, կապի որակը՝ ցածր: Ակնհայտ էր, որ պահանջվում էր մի «միջնորդ» պրոցեսինգային կենտրոն, որի միջոցով հնարավոր կլիներ իրականացնել հավաստագրման հարցումը: Այդ միջնորդ պրոցեսինգային կենտրոնը հանդիսացավ «Արմենիան քարտ» ՓԲԸ–ն:

Ընկերությունը հանդիսանում է MasterCard Europe միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ և պրոցեսինգային ծառայություններ մատուցող կենտրոն (Member Service Provider), Visa համակարգի համար պրոցեսինգային ծառայություններ մատուցող կենտրոն (Third Party Processor)¹:

Ներկայումս համակարգի մեջ մտնող բանկերից «Հայէկոնոմբանկը», «Զարգաց-

¹ Դեղինակների հետազոտությունները ՀՀ պլաստիկ քարտերի շուկայում:

² Դեղինակների հետազոտությունը «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ–ում:

ման Հայկական բանկը», «Անելիք բանկը», «Հայներարտբանկը», «Արդշինհիմնվեստբանկը», «Ինելկոբանկը», «Պրոմեթեյ բանկը» և «Արցախ բանկը» թողարկում ու սպասարկում են «MasterCard» (MasterCard Gold, MasterCard Business, MasterCard Standart և Cirrus/Maestro): «Հայգյուղփոխբանկը», «Կոնվերս բանկը» և «Յունիբանկը» թողարկում և սպասարկում են «Visa Card» (Visa Gold, Visa Business, Visa Classic և Visa Electron):

Միջազգային կազմակերպությունների կողմից «ԱրՔա» համակարգում պարբերաբար անցկացվել են մոնիտորինգներ, որոնց արդյունքները գնահատվել են բավարար:

Այսպիսով՝ մեր հանրապետությունում մեծ հաջողությամբ գործում է «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը, որի միջոցով իրականացվում է ինչպես «ԱրՔա» լոկալ վճարային քարտերի, այնպես էլ միջազգային վճարային քարտերի (Master Card, Visa Card) թողարկումն ու սպասարկումը, և վստահորեն կարող ենք ասել, որ ի դեմս նրա՝ ՀՀ-ում գոյություն ունի արդեն կայացած միասնական վճարային համակարգ:

Հանրապետությունում քարտային գործի զարգացման մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները: Մասնավորապես՝ 2001թ. նկատմամբ 2005 թ. ընթացքում շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերի քանակն աճել է 18.84 անգամ 2956-ից հասնելով 55697-ի: 2002 թ. սկսած շրջանառության մեջ այլևս տեղական (բացի «ԱրՔա» քարտերից) քարտեր չեն եղել: 2000 թ. նկատմամբ 2005 թ. շրջանառության մեջ եղած Visa քարտերի քանակի աճը կազմել է 140.57 անգամ՝ 447-ից հասնելով 62839-ի, MasterCard քարտերի աճը՝ 12.09 անգամ՝ 488-ից հասնելով 5901-ի, իսկ միջազգային այլ քարտերի աճը՝ 2.3 անգամ՝ 5537-ից հասնելով 12749-ի: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում շրջանառության մեջ գտնվող պլաստիկ քարտերի քանակը 2000-2005թթ. ընթացքում աճել է 16.87 անգամ՝ 8129-ից հասնելով 137186-ի:

Քարտերի քանակի նման աճը հիմնականում պայմանավորված է «ԱրՔա» միասնական վճարային համակարգի ներդրմամբ և հաջող գործունեությամբ:

2001 թ. նկատմամբ 2005 թ. «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների քանակն աճել է 45.74 անգամ՝ 22370-ից հասնելով 1023304-ի: Պայմանավորված «ԱրՔա» քարտերի թողարկմամբ՝ 2002 թ-ին 2001թ-ի նկատմամբ տեղական այլ քարտերով կատարված գործառնությունների քանակը նվազել է 11.46 անգամ՝ 100743-ից իջնելով 8787-ի, իսկ 2003 թ. սկսած այդ քարտերով այլևս գործառնություններ չեն կատարվել: 2000 թ. նկատմամբ 2005 թ. Visa քարտերով կատարված գործառնությունների քանակն աճել է 22.64 անգամ՝ 30559-ից հասնելով 692100-ի, MasterCard քարտերով կատարված գործառնությունների քանակը՝ 20.64 անգամ՝ 4357-ից հասնելով 89937-ի, իսկ միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների քանակը՝ 2.85 անգամ՝ 132601-ից հասնելով 379151-ի: Ընդհանուր առմամբ, 2000 թ. նկատմամբ 2005 թ. պլաստիկ քարտերով կատարված գործառնությունների քանակն աճել է 10.08 անգամ՝ 216131-ից հասնելով 2184492-ի:

Այս աճը ևս հիմնականում պայմանավորված է «ԱրՔա» միասնական վճարային

¹ Տե՛ս «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 17.3, 03.07.2002 թ.:

համակարգի գործունեությամբ:

2000 թ. նկատմամբ 2005 թ. բանկոմատների քանակն աճել է 10.54 անգամ՝ 11–ից հասնելով 116–ի, POS տերմինալների քանակը՝ 6.95 անգամ՝ 141–ից հասնելով 981–ի, իմպրինտերների քանակը նվազել է 1.23 անգամ՝ 94–ից հասնելով 76–ի:

Կանխիկացման և սպասարկման ենթակառուցվածքի ընդլայնումը ևս հիմնականում պայմանավորված է «ԱրՔա» միասնական վճարային համակարգի հաջող գործունեությամբ:

31.03.2006 թ. դրությամբ ՀՀ–ում պլաստիկ վճարային քարտեր թողարկող և սպասարկող բանկերը բերված են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 22.2

ՀՀ–ում գործող բանկերի կողմից տրամադրվող և սպասարկվող քարտերի տեսակները

N	Բանկի անվանումը	Տրամադրվող – սպասարկվող քարտերի տեսակները							
		ArCa		Master Card		Visa		Այլ քարտեր	
		տրամ.	սպաս.	տրամ.	սպաս.	տրամ.	սպաս.	տրամ.	սպաս.
1.	Անելիք բանկ	+	+	+	+				
2.	Արդշինինվեստբանկ	+	+	+	+				
3.	Հայներարտբանկ	+	+	+	+				
4.	Հայէկոնոմբանկ	+	+	+	+				
5.	Զար-ացման հայկական բանկ	+	+	+	+				
6.	Կոնվերս բանկ*	+	+			+	+		+
7.	HSBC բանկ Հայաստան**	+	+	+	+			+	+
8.	Գյուլփոխո մուքյան բանկ	+	+			+	+		
9.	Արցախ բանկ	+	+	+	+				
10.	«ԻԹԲ» Միջազային առ–տրա–յին բանկ	+	+						
11.	Յունիբանկ	+	+			+	+		
12.	Ինեկո բանկ	+	+	+	+				
13.	Մելլաթ բանկ	+	+						
14.	Պրոմեթեյ բանկ	+	+	+	+				
15.	Կասկադ բանկ	+	+						
16.	«ԲՏԱ» ինվեստ բանկ	+	+						
17.	Առեկսիմբանկ					+	+		
18.	Հայխնայբանկ					+	+		

* – Այլ քարտեր՝ **DINERS CLUB, AMEX**

** – Այլ քարտեր՝ **HSBC debit card**

Բերվածից հետևում է, որ ներկայումս ՀՀ–ում պլաստիկ վճարային քարտերի միջոցով հիմնականում իրականացվում են աշխատավարձային ծրագրեր, ընդ որում գերակշիռ մասը կազմում են «ԱրՔա» և Visa քարտերով իրականացվող աշխատավարձային ծրագրերը¹: Այն կազմակերպվում է հետևյալ մեխանիզմով². քարտերով

աշխատավարձ վճարող կազմակերպությունը աշխատակիցների աշխատավարձի գումարի չափով բանկին ներկայացնում է վճարման համձնարարական՝ աշխատակիցների ցուցակով (ցուցակում նշվում են կազմակերպության անվանումը, աշխատակիցների ազգանուն–անունը, քարտային հաշիվների համարները և յուրաքանչյուր աշխատակցի առձեռն ստանալիք գումարը), որպեսզի այդ գումարը տվյալ կազմակերպության հաշվարկային հաշվից բաշխվի աշխատակիցների քարտային հաշիվներին: Ցուցակը բանկ է ներկայացվում թղթային տեսքով և մագնիսական կրիչով: Թղթային տեսքով ներկայացված ցուցակը պետք է ստորագրված լինի կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից և կնքված լինի կազմակերպության կլոր կնիքով: Ցուրաքանչյուր բանկային օր՝ մինչև ժամը 10⁰⁰ և 17⁰⁰ քարտապանների քարտային հաշիվներին կատարված մուտքերի հիման վրա ձևավորվում է ֆայլ և CBANet ցանցով ուղարկվում «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոն, որտեղ էլ արդեն քարտապանների հաշիվներին մուտքագրված միջոցները գործառնական օրը փակելուց հետո արտացոլվում են «ԱրՔա» համակարգում, և քարտապաններն արդեն կարողանում են օգտագործել դրանք: Իսկ եթե տվյալ կազմակերպության հաշվարկային հաշիվը գտնվում է բանկի որևիցե մասնաճյուղում, ապա նրա համար գլխամասային բանկում բացվում է տարանցիկ հաշիվ, որտեղից էլ հաշվարկային հաշվից աշխատավարձի վճարման նպատակով փոխանցված միջոցները բաշխվում են քարտային հաշիվներին: Բյուջետային կազմակերպությունների դեպքում բացվում է միայն տարանցիկ հաշիվ, և տարանցիկ հաշվից քարտային հաշիվներին միջոցների բաշխումը կատարվում է ի հաշիվ նրանց գանձապետական հաշվից փոխանցված միջոցների: Քարտերով աշխատավարձ ստանում են և՛ պետական, և՛ ոչ պետական կազմակերպությունները: Պետք է նշել, որ պլաստիկ քարտերի շուկայում մեծ ակտիվություն առաջացրեց քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին օրենքի ընդունումը (հոդված 17, կետ 3–րդ), համաձայն որի՝ քաղաքացիական ծառայողներին վճարումները տրվում են անկանխիկ, նրանց հայեցողությամբ տրվում են չեկերով կամ նրանց նշած բանկային հաշվին դրամական փոխանցումներով: Պայմանավորված հենց այս հանգամանքով՝ մի շարք պետական մարմիններ անցան աշխատանքի վարձատրության քարտային համակարգին (ՀՀ նախագահի, Կառավարության, Ազգային ժողովի աշխատակազմերը, բազմաթիվ նախարարություններ, Հարկային պետական ծառայությունը, Մաքսային պետական կոմիտեն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Քաղաքացիական ծառայողների խորհուրդը և այլն), քանի որ աշխատավարձի վճարման քարտային համակարգը կազմակերպություններին տալիս է հետևյալ առավելությունները.

- պլաստիկ քարտերի միջոցով աշխատավարձի վճարումը կազմակերպություններին հնարավորություն է տալիս կրճատելու ծախսերը և խնդիրները՝ կապված կանխիկ փողի ստացման (բանկից), տեղափոխման և պահպանման հետ, ինչպես նաև խուսափելու բանկերից կանխիկ միջոցների տրամադրման համար գանձվող միջնորդավճարներից,
- վերանում են կազմակերպությունում աշխատավարձի վճարման օրերին առաջացող անհարմարությունները (հերթեր, աղմուկ, աշխատողների աշխատանքից կտրվելը),
- վերանում է չվճարված աշխատավարձի գծով դեպոնացման խնդիրը,

- պլաստիկ քարտերով աշխատավարձի վճարումը հնարավորություն է տալիս զգալիորեն հեշտացնելու հաշվապահության աշխատանքը և կրճատելու գանձապահների քանակը և նրանց վճարվող գումարները,
- հնարավորություն է ստեղծվում կորպորատիվ քարտերի օգտագործման համար,
- մասնաճյուղային ցանց, տարբեր մարզերում ներկայացուցչություններ ունեցող կազմակերպությունների (նախարարությունների, գերատեսչությունների) համար հնարավորություն է ստեղծվում աշխատավարձի վճարումն իրականացնել կենտրոնացված կարգով և խուսափել աշխատավարձի գումարների մի շարք մարզեր փախադրման հետ կապված անհարմարությունից և ծախսերից:

Թեև հանրապետությունում տարեցտարի ընդլայնվում է կանխիկացման և սպասարկման ցանցը, այնուամենայնիվ, այն դեռևս հեռու է բավարար լինելուց, քանի որ հատկապես սպասարկման ենթակառուցվածքը հիմնականում կենտրոնացած է Երևան քաղաքում և հատկապես նրա կենտրոնական հատվածում, և այդ կետերը մատչելի են քարտապան բնակչության ոչ լայն զանգվածների համար:

Պետք է նշել, որ ներկայումս բավականին հաջողությամբ իրականացվում է նաև տարբեր բուհերի ուսանողների կրթաթոշակների քարտերի միջոցով վճարումը (Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, Երևանի Ճարտարապետության և Հինարարության պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան և այլն): Այն իրականացվում է միայն ուսանողների համար թողարկվող ArCa Junior քարտերի միջոցով: Ուսանողական քարտերը ուսանողների համար առավել գրավիչ դարձնելու նպատակով պարբերաբար անցկացվում են բոնուսային ծրագրեր՝ ըստ կատարված գործարքների քանակի և ծավալի («Հայէկոնոմբանկ»):

Հայաստանի Հանրապետությունում քարտային գործառնությունները զարգացնելու, բանկային համակարգ նոր ռեսուրսներ ներգրավելու և սոցիալական ոլորտ ուղղված պետական միջոցների օգտագործման արդյունավետության ու դրանց նկատմամբ վերահսկողության մակարդակը բարձրացնելու առումով կարելի է պետական իշխանությունների (ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզպետարաններ), տեղական ինքնակառավարման մարմինների, բանկերի և պրոցեսինգային ընկերությունների («ԱրՔա» պրոցեսինգային կենտրոն) հետ համատեղ մշակել մի ծրագիր, որը հնարավորություն կտա բնակչության սոցիալական տարբեր խմբերին ուղղվող նպաստներն ու օժանդակությունը տրամադրել քարտային համակարգի միջոցով:

Այս ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բանկային համակարգ ներգրավել նոր հաճախորդներ, ընդլայնել բանկային համակարգից օգտվող տարբեր սոցիալական խմբերի շրջանակները, և, վերջին հաշվով, հնարավոր կլինի բանկային համակարգ ներգրավել հսկայական ռեսուրսներ, հետևաբար, կրճատել կանխիկ շրջանառությունը, բարձրացնել այդ գումարների նկատմամբ վերահսկողության մակարդակը:

Գործնականում բանկերը պետք է իրականացնեն քարտերի սպասարկումը (հաշիվների բացում, վարում), կատարեն փոխհատուցումների հաշվառումը, տրամադր-

րեն քաղվածքներ քարտերով կատարված գործարքների վերաբերյալ:

Սպասարկող կազմակերպությունների մեջ կարող են մտնել բոլոր այն անձինք, որոնք իրականացնում են պետության կողմից սոցիալական նպաստներ և փոխհատուցումներ ստացող բնակչության սպասարկումը (ներհանրապետական միջքաղաքային, ներքաղաքային տրանսպորտ, կոմունալ ծառայություն, բուժհաստատություններ, առողջարաններ, դեղատներ): Այս հաստատություններում պետք է իրականացվեն պետական օժանդակություն ստացող բնակչության սոցիալական տարբեր խմբերի սպասարկումը և փոխհատուցումների հաշվառումը, հետագայում տարբեր տեսակի և չափերի պետական օժանդակություն ստացող բնակչության օրենքով և նորմատիվային ակտերով սահմանված կարգով արտոնյալ պայմաններով սպասարկումն իրականացրած կազմակերպությունները կարող են ստանալ իրենց փոխհատուցումը պետական բյուջեից:

Պրոցեսինգային կենտրոնն իրականացնելու է տեղեկատվության կուտակումը, գործարքների թույլտվությունը և համակարգի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումը: Պրոցեսինգային կենտրոնը համակարգի մասնակից բանկերի համար կարող է իրականացնել նաև քարտերի պատրաստումը և անհատականացումը:

Նախատեսվում է, որ առաջիկայում քարտային համակարգ հնարավոր կլինի ներգրավել բնակչության հետևյալ սոցիալական խմբերին՝

- ա. կենսաթոշակառուներ,
- բ. նպաստառուներ (ՀՀ–ում աղքատության ընտանեկան նպաստներ և միանվագ օժանդակություն ստացողները, մինչև 2 տարեկան երեխաների նպաստ և հղիության ու ծննդաբերության նպաստ ստացողները, գործազրկության նպաստ ստացողները),
- գ. անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցողներ,
- դ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ստացողներ,
- ե. վարձատրվող հասարակական աշխատանքներ կատարողներ,
- զ. հաշմանդամ դարձած զինծառայողներ և զոհված զինծառայողների ընտանիքներ,
- է. պետության կողմից սոցիալական աջակցություն ստացող սոցիալական այլ խմբեր:

Հարկ է նշել, որ առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների արտոնություններին վերաբերում են՝

1. ԱՊՀ միջպետական համաձայնագրով՝ միջքաղաքային երթևեկության արտոնությունները,
2. ներհանրապետական միջքաղաքային տրանսպորտային արտոնությունները,
3. ներքաղաքային տրանսպորտային արտոնությունները,
4. կոմունալ ծառայությունների դիմաց ստացվող ամսական դրամական օգնությունը,
5. պետպատվերի շրջանակում անվճար բուժօգնությունը և բուժսպասարկումը,
6. դեղորայքի անվճար կամ զեղչերով ձեռքբերումը,

7. անվճար պրոթեզավորումը, վերականգնողական պարագաներով ապահովումը,
8. հեռախոսի, ռադիոյի և աղբահանության համար հատկացվող զեղչերը,
9. այլ արտոնություններ:
 - Ի վերջո հնարավոր կդառնա բանկերի միջոցով հասնել նրան, որ
 - ընդլայնվեն հաճախորդների առաջարկվող ծառայությունների շրջանակը և քանակը,
 - իրականացվի ծառայությունների «խաչաձև» վաճառք,
 - ավելանա էժան ռեսուրսների ծավալը (հաշիվների դրական մնացորդը),
 - մեծանա միջնորդավճարների ծավալը անկանխիկ գործարքների շրջանակների և ծավալների հաշվին (POS տերմինալներ):

Դեռանկարում իրականացման շրջանակներում թողարկված քարտերը որպես վճարման միջոց ընդունող սպասարկման կետերում (դեղատներ, առողջարաններ, ատամնաբուժարաններ և այլն) քարտերով գործառնությունները խթանելու առումով հնարավոր կլինի POS տերմինալների ծրագրային ապահովումն իրականացնել այնպես, որպեսզի սպասարկվեն ծրագրի շրջանակներից դուրս թողարկված քարտեր ևս (ArCa, MasterCard, VisaCard): Տրանսպորտային միջոցներում կարող են տեղադրվել հատուկ POS տերմինալներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու գործարքներ առանց քարտը նրա միջով անցկացնելու որոշակի հեռավորության վրա:

Անհրաժեշտ է նշել, որ պլաստիկ քարտերով հաշվարկների ընդլայնումն հնարավոր է միայն միկրոպրոցեսորային քարտերի միջոցով, որովհետև այս քարտերն իրենցից ներկայացնելու են բազմաֆունկցիոնալ անհատական հաշվառման վճարային գործիքներ և քարտապաններին հնարավորություն են տալու օգտվելու տարբեր նպաստներից և փոխհատուցումներից, ինչպես նաև օգտվելու ամենատարածված վճարային քարտերով (օրինակ՝ «ArCa classic») առաջարկվող ծառայությունների փաթեթից (կանխիկացում, անկանխիկ գործարքներ առևտրի և սպասարկման կետերում, ինտերնետային վճարումներ և այլն): Միկրոպրոցեսորային քարտերը հնարավորություն են տալիս իրականացնելու գործարքներ off-line ռեժիմում, ունեն տեղեկատվության պահպանման շատ մեծ հնարավորություններ, ունեն զեղծարարություններից պաշտպանվածության ամենաբարձր մակարդակը և օգտագործման մինչև 10 տարվա տևողություն:

Ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են նրան, որ թողարկված քարտը կարող է հանդիսանալ բացառիկ գործիք տարբեր տեսակի նպաստներ և փոխհատուցումներ ստացող բնակչության փաստացի սպասարկման հաշվառման իրականացման և կազմակերպությունների միջոցների երաշխավորված փոխհատուցման համար: Այն կարող է օգտագործվել տրանսպորտում, առևտրի և սպասարկման կետերում, բուժհաստատություններում, առողջարաններում, դեղատներում, կոմունալ վճարներ իրականացնելու և այլ նպատակներով:

Հայաստանի Հանրապետությունում քարտային գործի զարգացման առումով կարևոր է կանխավճարային քարտերի ներդրումը: Կանխավճարային քարտերը բանկի կողմից նախապես թողարկվող քարտեր են, որոնցով գործառնություններն իրականացվում են քարտի ակտիվացման ժամանակ կամ նախապես որոշված գոր-

ծառնությունների սահմանաչափի շրջանակներում: Այս քարտերով վարկային գծի տրամադրում չի նախատեսվում: Հատկանշական է այն, որ կանխավճարային քարտերը չեն նախատեսում քարտապանի տվյալների գրառումը և լայն հնարավորություններ ստեղծում նրա կիրառման համար:

Գործնականում կանխավճարային քարտերը կարող են կիրառվել հետևյալ նպատակներով՝

- նվերների տրամադրման համար,
- մրցանակների տրամադրման համար,
- դրամական միջոցների անվտանգ տեղափոխման համար,
- ճանապարհորդությունների համար:

Նվերների համար նախատեսված քարտերը կարող են օգտագործվել բնակչության կողմից տարբեր առիթներով դրանք միմյանց նվիրելիս, ինչպես նաև տարբեր կոլեկտիվների (կազմակերպությունների) կողմից իրենց աշխատակիցներին պարգևատրումներ (նվերներ) հատկացնելու, տարբեր հաղորդաշարերին (հեռուստա-, ռադիո-), տարբեր միջոցառումներին մասնակցող հյուրերին (որպես հովանավորների կողմից տրվող նվերներ) նվիրելու համար և այլն:

Մրցանակների համար նախատեսված քարտերը մեծ չափերով կարող են օգտագործվել տարբեր վիճակախաղերի մասնակիցներին դրամական շահումների տրամադրման ժամանակ:


Հայաստանի Հանրապետությունում քարտային գործառնությունները զարգացնելու առումով կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև տվյալ երկրի սահմաններում և սահմաններից դուրս դրամական միջոցների անվտանգ տեղափոխման համար նախատեսված կանխավճարային քարտերը: Առաջին դեպքում կարող են օգտագործվել տեղական շրջանառության քարտերը («ԱրՔա»), իսկ երկրորդ դեպքում միջազգային շրջանառության քարտերը (Cirrus/Maestro, MasterCard, VisaCard):

Հաճախ են այն դեպքերը, երբ անհրաժեշտություն է առաջանում հանրապետությունից մեկնելու կամ ճանապարհորդելու երկրի սահմաններում, սակայն ժամանակ չի լինում ձեռք բերելու անձնական տվյալներով պլաստիկ վճարային քարտ՝ ճանապարհորդության ընթացքում տարբեր տեսակի վճարումներ իրականացնելու համար: Այդ դեպքերի համար կարող են օգտագործվել ճանապարհորդությունների համար նախատեսված «ակնթարթային» թողարկման պլաստիկ վճարային քարտերը, որոնցով քարտապանին կարող են տրամադրվել նաև ապահովագրական և տուրիստական ծառայություններից օգտվելու հնարավորություններ ևս: Հաշվի առնելով մեր երկրի տարածքի ոչ մեծ լինելու հանգամանքը՝ կարծում ենք, որ այս ծրագրի իրականացումը «ԱրՔա» քարտերի միջոցով կլինի ոչ նպատակահարմար, ուստի այն հնարավոր է իրականացնել միայն թողարկվող միջազգային քարտերի միջոցով (Master Card, Visa Card), քանի որ նրանք քարտապանին հնարավորություն են տալիս սպասարկվելու ողջ աշխարհով մեկ:

Կանխավճարային քարտերի ներդրումը կարող է նպաստել Հայաստանի Հանրապետությունում պլաստիկ վճարային քարտերի շուկայի զարգացմանը, ընդ որում, ելնելով շուկայի պահանջից, թվարկված քարտերից յուրաքանչյուրի ֆունկցիոնալ հնարավորությունները կարող են սահմանափակվել միայն կանխկազմման կամ առևտրի ու սպասարկման կետերում վճարումներ իրականացնելու հնարավորու-

թյունով կամ տալ այդ հնարավորությունները միաժամանակ:

Ձեռչային համակարգի ներդրումը պլաստիկ վճարային քարտերի համակարգ կարող է իրականացվել նաև Co-branded ծրագրի շրջանակներում. բանկը և զեղչային քարտեր թողարկող կազմակերպությունը (Euro 26, ETN, IAPA) կարող են համաձայնության գալ համատեղ թողարկելու պլաստիկ վճարային-զեղչային քարտեր: Այս քարտերի ետևի մասում պետք է լինի քարտապանի նկարը, իսկ քարտի երեսի կողմում՝ բանկի անվանումը և զեղչային կազմակերպության ապրանքանիշը (լոգո): Այս ծրագիրը կարող է իրականացվել ըստ ստորև բերվող գծապատկերի.



Գծապատկեր 22.5. Բանկի և զեղչային քարտեր թողարկող կազմակերպության կողմից համատեղ վճարային-զեղչային քարտերի թողարկումը

Նմանատիպ համակարգի ներդրումը ևս բխում է կողմերի շահերից, քանի որ մի կողմից մեծանում են բանկի կողմից թողարկվող որոշակի քարտերի սպառողական հատկանիշները, նրանց օգտագործումը դարձնում ավելի նպատակահարմար և շահավետ, իսկ մյուս կողմից զեղչային քարտ թողարկող կազմակերպությունը վճարային-զեղչային քարտերի թողարկումից ստանում է եկամուտ բանկի հետ նախապես ձեռք բերված համաձայնության չափով և ընդլայնում իր հաճախորդների շրջանակն ու քանակը:

Ընդհանուր առմամբ զեղչային համակարգի ներդրումը քարտապաններին հնարավորություն կտա զեղչերով (միջազգային պրակտիկայում զեղչերի տոկոսադրույքը տատանվում է 3–50% սահմաններում) սպասարկվելու՝

- հյուրանոցներում, առողջարաններում,
- ռեստորաններում, սրճարաններում, ժամանցի վայրերում,
- առևտրի ու սպասարկման կետերում,
- բուժհաստատություններում, հիվանդանոցներում,
- տուրիստական ընկերություններում,
- վարձույթով մեքենաների տրամադրման կազմակերպություններում,
- զեղեցկության սրահներում և այլն:

Նույն մոտեցմամբ կարելի է իրականացնել նաև տուրիստական ընկերությունների հետ Co-branded քարտերի թողարկումը: Այս դեպքում քարտապանները հնարավորություն կարող են ստանալ օգտվելու նաև հետևյալ ծառայություններից՝


- զեղչերով ավիատոմսերի և տուրիստական ուղեգրերի ձեռքբերում,
- զեղչված գներով հյուրանոցներում նախօրոք համարների պատվիրում,

- ուղեկցում մինչև օդանավակայան և դիմավորում օդանավակայանում,
- մեքենաների տրամադրում մինչև օդանավակայան և օդանավակայանից մինչև անհրաժեշտ հասցե (Երևան քաղաքում անվճար),
- զեղչերով մեքենաների վարձույթ և այլն:

Այդ նոտեցումը կարելի է կիրառել նաև ապահովագրական ընկերությունների հետ հաշվարկներում: Այս դեպքում քարտապանները կարող են հնարավորություն ստանալ օգտվելու նաև՝

- կյանքի և առողջության ապահովագրությունից (նաև նրանց ընտանիքի անդամները),
- ճանապարհորդության ընթացքում առողջապահական ծախսերի ապահովագրությունից,
- ճանապարհորդության հետաձգման և չիրականացման ապահովագրությունից,
- ուղեբեռի կորստի ապահովագրությունից,
- և այլն:

Ճանապարհորդությունների համար կարելի է իրականացնել Co-branded (համատեղ) քարտերի թողարկումը ապահովագրական և տուրիստական ընկերությունների հետ միաժամանակ՝ ըստ հետևյալ գծապատկերի՝



Գծապատկեր 22.6. Co-branded քարտերի թողարկումը տուրիստական և ապահովագրական ընկերությունների հետ միաժամանակ

Նմանատիպ քարտերով հաշվարկների իրականացումը համապատասխանում է բոլոր մասնակիցների շահերին, մասնավորապես՝

Բանկերի համար՝

- բանկի հեղինակության բարձրացում, նոր հաճախորդներ (քարտապաններ) ներգրավելու հնարավորություն,
- եկամուտների աճ՝ կապված այս քարտերի տարեկան սպասարկման վարձերի գանձման, կանխիկացման ժամանակ միջնորդավճարների ստացման և օգտա-

գործված վարկային միջոցների (օվերդրաֆտի) դիմաց ստացվող տոկոսավճարների հաշվին,

- քարտային հաշիվների դրական մնացորդի աճ:

Ապահովագրական ընկերությունների համար՝

- ընդլայնվում են նրանց հաճախորդների շրջանակը և քանակը,
- աճում են եկամուտները՝ ի հաշիվ ստացված ապահովագրավճարների (ապահովագրավճարները կատարվում են բանկի կողմից):


Տուրիստական ընկերությունների համար՝

- ընդլայնվում է նրանց հաճախորդների շրջանակը և քանակը
- աճում է եկամուտների ծավալը՝ ի հաշիվ մատուցված ծառայությունների, վաճառված տոմսերի ու ուղեգրերի:

Հայաստանի Հանրապետությունում պլաստիկ վճարային քարտերով գործառնությունները խթանելու, պլաստիկ քարտերի շուկան զարգացնելու նպատակով կարևոր են տարբեր առիթներով որոշակի ժամանակահատվածի կամ որոշակի խումբ քարտապանների և հնարավոր (պոտենցիալ) քարտապանների շրջանակներում անցկացվող միջոցառումները: Օրինակ՝ Նոր տարվա կապակցությամբ բանկի կողմից թողարկվող քարտերը մեկ ամսվա ընթացքում կարող են տրամադրվել մինչև 50% զեղչով կամ մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածում որոշակի քարտերի տեսակներ կանանց կարող են տրամադրվել անվճար, կամ սոցիալական որոշակի խմբերին աշխատավարձային ծրագրի իրականացման շրջանակներում քարտերի տրամադրումը կարող է կատարվել զեղչերով (մանկավարժներ, գիտության, արվեստի ներկայացուցիչներ) և այլն:

Նման և այլ կարգի միջոցառումներ կարելի է իրականացնել տարբեր առիթներով, և այս միջոցառումների ժամանակ բանկի կողմից կատարվող ծախսերի (չստացված եկամուտ) նպատակահարմարությունը պետք է դիտել բանկի գովազդային քաղաքականության իրականացման շրջանակներում, և այս տրամաբանության շրջանակներում է, որ կարևորվում է նման միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Քարտային գործում լրացուցիչ եկամտի աղբյուր կարող է հանդիսանալ առանձին կազմակերպությունների գովազդի ապահովումը՝ քարտերի վրա նրանց արանքանիշը (լոգո) պատկերելու միջոցով: Դա կարելի է իրականացնել ըստ հետևյալ գծապատկերի.



Գծապատկեր 22.7. Պլաստիկ քարտերի միջոցով գովազդի կազմակերպումը

Այս համագործակցությունը բխում է երկու կողմերի շահերից. բանկի համար՝ կապված է մեծ ծախսերի հետ, նրան ապահովում է լրացուցիչ եկամուտներով, իսկ կազմակերպությունը հնարավորություն է ստանում բանկի քարտապանների շրջանակում (և ոչ միայն) իրականացնելու իր գովազդը:

Միջազգային պրակտիկայում մեծ տարածում ունեն տրանսպորտային միջոցներ-

րից օգտվելու դիմաց վճար կատարելու հնարավորությամբ քարտերը, մասնավորապես դա սկզբնական շրջանում Հայաստանի Հանրապետությունում կարելի է իրականացնել մետրոպոլիտենի փոխադրումների դիմաց վճարումներ իրականացնելիս:

Նման քարտերի թողարկումը համապատասխանում է 2 կողմերի շահերին, մասնավորապես՝

Բանկերի համար՝


- բարձրանում են թողարկվող քարտերի սպառողական հատկանիշները,
- հնարավորություն է ստեղծվում սուր մրցակցության պայմաններում հաղթող դուրս գալու համար,
- հնարավորություն է ստեղծվում ավելացնելու քարտային հաշիվների դրական մնացորդը, քանի որ քարտապաններն այլևս ստիպված չեն լինի տրանսպորտից օգտվելու համար գումար կանխիկացնել,

• բանկը ստանում է միջնորդավճար այդ քարտերով կատարվող գործարքներից:

Մետրոպոլիտենի համար՝


- կրճատվում են կանխիկի հետ կապված խնդիրները և ծախսերը (կանխիկի տեղափոխում, անվտանգության ապահովում, տոմսավաճառների հաստիքի կրճատում),
- բարձրանում է մետրոպոլիտենի սպասարկման մակարդակը, և պայմաններ է ստեղծվում այն առավել հարմարավետ դարձնելու համար:

Միջազգային պրակտիկայում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում, լայն տարածում ունեն ֆուտբոլային ակումբների հետ համատեղ թողարկվող քարտերը (Co-branded): Այս քարտերի թողարկումից ձևավորված դրամական միջոցների մի մասը հատկացվում է տվյալ ֆուտբոլային ակումբին (այդ մասին կողմերը նախապես ձեռք են բերում համաձայնություն): Նման քարտերի թողարկումը Հայաստանի Հանրապետությունում բանկին հնարավորություն կտա ընդլայնելու իր հաճախորդների շրջանակը ի հաշիվ տարբեր ֆուտբոլային ակումբների երկրպագուների և բարձրացնելու քարտերի սպառողական հատկանիշները, իսկ ֆուտբոլային ակումբներն այդ քարտապանների համար իրենց խաղերի տոմսերի վաճառքը կարող են իրականացնել զեղչերով և կողմերի համաձայնությամբ տալ այլ առավելություններ ևս: Այս ծրագիրը կարելի է իրականացնել ըստ հետևյալ գծապատկերի:



Գծապատկեր 22.8. Ֆուտբոլային ակումբների հետ համատեղ պլաստիկ քարտերի թողարկումը

մանը կարող է նպաստել նաև միջազգային պրակտիկայում լայն տարածում ունեցող այսպես կոչված «բենզինային» քարտերի ներդրումը: Դրանք իրենց քարտապաններին հնարավորություն են տալիս նախապես որոշված բենզալցակայանների ցանցից լիցքավորելու իրենց մեքենաները անհրաժեշտ վառելիքով: Բանկի և բենզալցակայանների միջև համագործակցությունը կարելի է իրականացնել ըստ հետևյալ գծապատկերի.



Գծապատկեր 22.9. Բանկի և բենզալցակայանների միջև համագործակցությունը պլաստիկ քարտերի բնագավառում

Ինչպես երևում է գծապատկերից, նման համագործակցությունը բանկի և բենզալցակայանների ցանցի միջև համապատասխանում է կողմերի շահերին, քանի որ բենզալցակայանները հնարավորություն են ստանում ընդլայնելու իրենց շրջանառության ծավալներն՝ ի հաշիվ բանկի քարտապանների, իսկ բանկն այդ քարտերի սպասարկումից ստանում է կոմիսիոն վճար:

Այս քարտերի շրջանառությունը խթանելու համար կարող է կիրառվել պարզևատրումների համակարգ, համաձայն որի՝ որոշակի ծավալի և որոշակի քանակությամբ գործարքներ կատարած քարտապանները կոնկրետ ժամանակահատվածի համար հնարավորություն կստանան անվճար լիցքավորելու իրենց մեքենան որոշակի քանակությամբ բենզինով (դիզելային վառելիքով): Օրինակ՝ մեկ անսվա ընթացքում 100 լիտր և ավելի բենզին (դիզելային վառելիք) լիցքավորած քարտապանները կարող են ստանալ 5 լիտր անվճար լիցքավորելու հնարավորություն:

Անհրաժեշտ է նշել նաև այն, որ նման քարտերի շրջանառությունը տարբեր կազմակերպություններին հնարավորություն կտա բարձրացնել ծառայողական մեքենաների՝ վառելիքի լիցքավորման համար նախատեսված միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության մակարդակը շնորհիվ կատարված գործարքների վերաբերյալ ստացվող քաղվածքների:

Ներկայումս տաքսիների, երթուղային տաքսիների և ավտոբուսների զգալի մասը լիցքավորվում է գազով, ուստի կարելի է թողարկել պլաստիկ քարտ, որը հնարավորություն կտա իրականացնել գազի լիցքավորում:

Գիտատեխնիկական նվաճումների ներկայիս մակարդակը հնարավոր դարձրեց նաև Հայաստանում ներդնելու պլաստիկ վճարային քարտերի միջոցով ինտերնետ վճարումների համակարգը, որով գործառնությունների անվտանգության մակարդակը շատ բարձր է, վճարումների իրականացման հնարավորությունները՝ շատ լայն («ԱրՔա» ցանց վճարային համակարգ): Մասնավորապես ներկայումս այս դաշտի միջոցով հնարավոր է իրականացնել կոմունալ վճարումներ, ձեռք բերել իզի քարտերի վերալիցքավորման և «Արմինկոյի» ինտերնետային քարտեր, կատարել գործարքներ վիրտուալ խանութներում, իրականացնել փոխանցումներ քարտային մեկ

հաշվից մյուսը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շատ տարածված են ապառիկ ապրանքներ ձեռք բերելու համար տրամադրվող վարկերը և առևտրային մանր ու միջին վարկերը՝ կարևոր է քարտերի միջոցով ստացված այդ վարկերի մարման ծրագրային ապահովման իրականացումը՝ բանկոմատների և ինտերնետ դաշտի միջոցով: Դա հնարավորություն կտա բանկին և քարտապան-վարկառուներին խնայել և՛ ժամանակ, և՛ միջոցներ՝ կապված վարկի և նրա տոկոսների մարման հետ և այդ գործընթացը դարձնել ավելի հարմարավետ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մեծ չափերով զարգացում է ապրում բուքմեյքերական գրասենյակների գործունեությունը (Եվոֆուտբոլ, Վիվարո, Տոտո): Այս առումով բանկերի և նրանց միջև համագործակցությունը հնարավորություն կտա բանկային համակարգ ներգրավել նոր ռեսուրսներ, բարձրացնել քարտերի սպառողական հատկանիշները, իսկ բուքմեյքերական գրասենյակների ծառայություններից օգտվողների համար սպասարկումը կդառնա ավելի հարմարավետ, քանի որ նրանք ստիպված չեն լինի կանխավճարային քարտեր ձեռք բերելու, ինչպես նաև վաստակած միջոցները վերցնելու համար այցելել նշված գրասենյակներ: Դրա համար պարզապես անհրաժեշտ է բանկի, պրոցեսինգային ընկերության և բուքմեյքերական ընկերությունների հետ համատեղ մշակել մի մեխանիզմ, որը հնարավորություն կտա բանկի քարտապաններին բուքմեյքերական գրասենյակներում ներդրումներ կատարել քարտային հաշվի մնացորդի սահմաններում՝ օգտագործելով ինտերնետ դաշտի հնարավորությունները, ինչպես նաև վաստակած գումարները հաշվեգրելու քարտային հաշիվներին:

Հաշվի առնելով այն, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում զարգացում է ապրում բջջային հեռախոսակապի ծառայությունը, և կան նախադրյալներ դրա հետագա զարգացման համար (երկրորդ օպերատորի մուտքը Հայաստան, սուր մրցակցային պայքար)՝ կարևոր է բանկի, պրոցեսինգային ընկերության և բջջային հեռախոսակապի ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ համատեղ մեխանիզմի մշակումը, որը հնարավորություն կտա քարտապաններին կատարել գործառնություններ (բացառությամբ կանխկացման), ինչպես նաև կատարված գործարքների վերաբերյալ էլեկտրոնային քաղվածքներ (կարճ հաղորդագրությունների տեսքով) ստանալ բջջային հեռախոսների միջոցով, մասնավորապես՝

- ստանալ տեղեկատվություն քարտային հաշվի մնացորդի վերաբերյալ SMS հաղորդագրությունների տեսքով,
- կատարել կոմունալ վճարումներ,
- վճարել հեռախոսի վարձը (աբոնենտային վճար, ըրպեմեյթ, միջքաղաքային խոսակցությունների վճար և բջջային SIM քարտերի աբոնենտային և խոսած ըրպեմեյթի վճար),
- ձեռք բերել իզի (ալո) քարտերի վերալիցքավորման քարտեր,
- կատարել քարտային հաշվից հաշիվ փոխանցում,
- կատարված գործարքների վերաբերյալ ստանալ տեղեկատվություն SMS հաղորդագրությունների տեսքով,
- և այլ հնարավորություններ, որոնք հանարավոր կլինի իրականացնել ինտեր-

նետ դաշտի միջոցով:

Ընդհանուր առմամբ, ինտերնետ դաշտը շատ լայն հնարավորություններ է տալիս քարտային գործը զարգացնելու, ինչպես նաև քարտերի միջոցով սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու համար և այս առումով կոնկրետ ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է ուսումնասիրել այս ծառայությունների բնագավառում միջազգային փորձը, մասնավորապես այնպիսի վճարահաշվարկային համակարգերի փորձը, ինչպիսիք են CyberPlat, Assist, RBS (Runet Business Systems), նիսԼՁ, Sim MP, AlfaPay, ինչպես նաև INTERNET և MOBILE banking համակարգերը:

Հայաստանի Հանրապետությունում քարտային գործառնությունները խթանելու առումով կարևոր է տարբեր բանկոմատների և POS տերմինալների ծրագրային ապահովումը, որը հնարավորություն կտա մեկ բանկոմատի և POS տերմինալի միջոցով սպասարկելու տարբեր միջազգային վճարային համակարգերի քարտեր (Visa, MasterCard, AmEx, Diners Club և այլն): Դա հնարավորություն կտա միավորելու տարբեր բանկերի կանխիկացման և սպասարկման ցանցը՝ ի նպաստ քարտապանների: Արդյունքում, օրինակ, MasterCard քարտապանը հնարավորություն կունենա գումար կանխիկացնելու VisaCard թողարկող և սպասարկող բանկի բանկոմատներից և սպասարկվելու նրա առևտրի ու սպասարկման կետերում:

23.5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԱՎՃԱՐԱՅԻՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՒՆՆԵՐԸ

Միջազգային առևտրային գործարքները պարտադիր կերպով ուղեկցվում են արտասահմանյան գործընկերոջ հետ համապատասխան պայմանագրի կնքմամբ, որը տնտեսավարող սուբյեկտների կողմից միջազգային առևտրային գործարքները կարգավորող միակ փաստաթուղթն է: Գործարքների իրականացումը պահանջում է որոշակի իրավական նորմերի կիրառում: Որոշ երկրների ազգային օրենսդրությունները պահանջում են գրավոր պայմանագրերի պարտադիր առկայություն:

Ապրանքի առաքման բազային պայմանները ըստ պայմանագրի հետևյալն են.

- առաքման նախապատրաստման հետ կապված ծախսեր,
- ներքին փոխադրման համար բեռնման ծախսեր,
- ապրանքի փոխադրման ծախսեր ուղարկման կետից մինչև հիմնական փոխադրման միջոցները,
- արտահանման կետում հիմնական փոխադրամիջոցների վրա բեռնման ծախսեր,
- միջազգային փոխադրամիջոցներով ապրանքի փոխադրման ծախսեր,
- ապրանքի պահպանման ծախսեր,
- բեռնաթափման ծախսեր, նշանակման վայրից ապրանքի գնորդի պահեստ տեղափոխման ծախսեր,
- մաքսային տուրքերի և վճարների հետ կապված ծախսեր:

Վաճառողի կողմից կատարված ծախսերը ներառվում են ապրանքի գնի մեջ: Առաքման պայմանները կոչվում են բազիսային, քանի որ դրանք սահմանում են ապրանքի գնի բազիսը և ազդում են գնի մակարդակի վրա:

Միջազգային առևտրային հարաբերություններում կիրառվող վճարման ձևերը և

եղանակները բազմազան են և պայմանավորված են ինչպես տվյալ երկրի սովորույթներով ու գործող օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային առևտրային կանոններով ու համաձայնագրերով: Սովորաբար վճարման ձևերը և եղանակները նախօրոք համաձայնեցվում են ապրանք կամ ծառայություն մատուցող և ձեռք բերող կողմերի միջև, այնուհետև ֆիքսվում նրանց կողմից կնքվող պայմանագրում: Միջազգային առևտրային գործարքներում ընդունված են վճարման հետևյալ ձևերը:

Փոխանցում: Բանկային փոխանցումը բանկի հանձնարարականն է իր թղթակից բանկին՝ վճարել կամ այլ բանկի հանձնարարել վճարելու որոշակի գումար բենեֆիցիարին (վաճառողին) իր հաճախորդ՝ գնորդ-հանձնարարագրողի խնդրանքով և վերջինիս հաշվին:

Վաճառողը տրամադրում է ապրանքը և ապրանքային փաստաթղթերը անմիջապես գնորդին, իսկ գնորդն՝ իրականացնում է վճարը պայմանագրով սահմանված ժամկետում՝ կարգադրելով իր բանկին կատարել համապատասխան փոխանցումը: Գնորդի բանկը, ընդունելով իր հաճախորդ-գնորդի վճարային հանձնարարագիրը, իր անունից ներկայացնում է վաճառողի բանկին բանկային վճարային համաձայնագիր: Վաճառողի բանկը հանձնարարագրի հիման վրա կատարում է վճարում վաճառողի օգտին:


Այս կարգի գործարքներում բանկերի մասնակցությունը, վճարման այլ ձևերի համեմատ (ինկասո, ակրեդիտիվ), չնչին է, քանի որ նրանք պատասխանատու չեն ոչ ապրանքի առաքման, ոչ էլ փաստաթղթերի փոխանցման և ստուգման համար, այլ իրականացնում են միայն գումարի փոխանցումը հանձնարարագրում նշված ժամկետների համաձայն: Վճարման այս ձևը ձեռնտու է գնորդին, քանզի նա վճարում է ապրանքը ստանալուց հետո, սակայն վաճառողի համար պարունակում է չվճարման կամ վճարի ուշացման ռիսկը: Ուստի, այս ձևը ցանկալի է կիրառել միայն այն դեպքերում, երբ մատակարարը և գնորդը ճանաչում և վստահում են միմյանց:

Միջազգային բանկային պրակտիկայում կիրառվում է փոխանցման այլ ձև՝ պայմանագրով նախատեսված չափով կանխավճար դեռևս չառաքված ապրանքի համար: Սովորաբար կանխավճարը կազմում է ողջ գումարի 15–30%–ը, սակայն կարող է կազմել նաև 100%: Կանխավճարով փոխանցումը ձեռնտու չէ գնորդին, քանզի ապրանքը չառաքելու դեպքում առկա է կանխավճարի կորստի (չվերադարձի) ռիսկը:

Վճարում բաց հաշվով: Բաց հաշվով վճարումը այնպիսի վճարում է, որի ժամանակ վաճառողն առաքում է ապրանքը առանց որևէ վճարման երաշխիքի, իսկ գնորդն իրականացնում է վճարումը պայմանագրով սահմանված ժամկետներում (սովորաբար ամիսը մեկ անգամ, եռամսյակը մեկ անգամ կամ կիսամսյակը մեկ անգամ): Քանի որ վաճառողը ոչ մի վճարման երաշխիք չունի, ուստի այդ ձևի վճարումները կատարվում են կամ այն ֆիրմաների միջև, որոնք վաղեմի գործընկերներ են և իրականացնում են փոքր քանակությամբ կանոնավոր առաքումներ, կամ հիմնական ֆիրմայի և նրա դուստր ձեռնարկությունների միջև: Վճարումը բաց հաշվին իրենից ներկայացնում է առևտրային վարկի մի տեսակ: Որոշ երկրներում (Ավստրիա, Գերմանիա, Շվեյցարիա) վաճառողի ռիսկը նվազեցնելու համար, երբ կիրառվում է վճարում բաց հաշվով, օգտագործվում է սեփականության իրավունքի փոխանցման վերապահում, որն իրենից ներկայացնում է հատուկ պայմանագիր, համաձայն որի՝ մինչև ապրանքի դիմաց լիակատար վճարումը վաճառողը ապրանքի

սեփականատեր է:

Բաց հաշվով վճարումը իրականացվում է գնորդի կողմից իր բանկին հանձնարարագրի ներկայացման միջոցով և կատարվում է ստորև ներկայացվող գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 22.10. Բաց հաշվով վճարման գործընթացը

Չեկ: Չեկը վճարային փաստաթուղթ է, որը չեկ դուրս գրողի հրամանն է իրեն սպասարկող բանկին՝ վճարել չեկի վրա նշված գումարը չեկատիրոջը:


Ջարգացած երկրներից շատերն ունեն իրենց ազգային չեկային օրենսդրությունը և այլ նորմատիվ ակտեր, որոնք կանոնակարգում են չեկային գործառնությունները և այդ գործառնություններում ընդգրկված կողմերի իրավունքներն ու պարտավորությունները: 1931 թ. Ժնևյան կոնվենցիան հաստատել է «Չեկերի համընդհանուր օրենքը», որը ստորագրվել է մի շարք եվրոպական պետությունների կողմից: Նրանք պարտավորվել էին իրենց ազգային չեկային օրենքներում հետևել այդ օրենքի դրույթներին: Մի շարք անգլո-ամերիկյան երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, չեկերի և մուրհակների համար հիմք է ծառայել 1882 թ. անգլիական օրենքը «Փոխանցելի մուրհակների մասին», որն իր հետագա զարգացումն է ստացել ԱՄՆ-ում: 1992 թ. Ռուսաստանի դուման հաստատել էր «Դրույթներ չեկերի մասին» օրենքը: Որոշ զարգացած երկրներում չեկերը լայնորեն կիրառվում են հաշվարկներում, օրինակ՝ 1993 թ. տվյալներով ԱՄՆ-ում չեկերով իրականացվող տարեկան վճարումները կազմել են ընդհանուր անկանխիկ վճարումների քանակի 80.4, ծավալի 12.6, Ֆրանսիայում տարեկան դրանք կազմել են ընդհանուր անկանխիկ վճարումների քանակի 49.1, ծավալի 4.6, Կանադայում՝ համապատասխանաբար 58.7 և 98.8%-ը: Այլ երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Ճապոնիան, այդ գործարքը լայն տարածում չի գտել:

Միջազգային առևտրային գործարքներում կիրառվում են հաճախորդի, ինչպես նաև բանկային չեկեր: Հաճախորդի չեկերը այն չեկերն են, որոնք դուրս են գրվում ֆիզիկական, իրավաբանական անձանց կողմից իրենց սպասարկող բանկի վրա:

Բանկային չեկերն այն չեկերն են, որոնք դուրս են գրում բանկերը իրենց թղթակից բանկերի կամ բաժանմունքների վրա:

Հաճախորդների չեկերով վճարումներն իրականացվում են հետևյալ կերպ. գնորդը ապրանքների դիմաց դուրս է գրում չեկ և տրամադրում է վաճառողին: Վաճառողը չեկը ներկայացնում է իրեն սպասարկող բանկ, որն էլ թղթակցային բանկերի մի-

ջոցով այն ներկայացնում է վճարման գնորդի (չեկ դուրս գրողի) բանկ: Գնորդի հաշվին միջոցների առկայության դեպքում բանկն իրականացնում է չեկի դիմաց վճարումը: Բանկը պատասխանատու չէ ներկայացված չեկի վճարման համար, եթե հաճախորդի հաշվին չկան բավարար միջոցներ և օվերդրավտ չի նախատեսված: Այս չեկերով վճարումներն իրականացվում են ըստ գծապատկեր 22.11.–ի



Գծապատկեր 22.11. Չեկերով վճարման գործընթացը

Չեկերի վճարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով միջազգային առևտրում կիրառվում են հաճախորդի չեկեր երաշխավորված բանկի կողմից: Չեկերի երաշխավորումը կատարվում է երկու եղանակով.

1. չեկի վրա բանկի կողմից համապատասխան գրառմամբ (բանկի կողմից ակցեպտված չեկեր),
2. չեկեր՝ կցված երաշխիքային քարտի կիրառմամբ (օրինակ՝ եվրոչեկեր), որի առկայության դեպքում միայն չեկը կարող է ընդունվել որպես վճարման միջոց:

Բանկային չեկերի կիրառման դեպքում այն բանկը, որը դուրս է գրել չեկը, պատասխանատու է այդ չեկի վճարման համար: Քանի որ այս չեկերը ավելի ապահով են վճարման հուսալիության տեսակետից, այդ պատճառով միջազգային առևտրում դրանք ավելի լայնորեն են կիրառվում, քան հաճախորդի չեկերը: Այս չեկերով վճարումներն իրականացվում են հետևյալ կերպ. գնորդն իրեն սպասարկող բանկին ներկայացնում է հանձնարարություն վաճառողի անունով որոշակի գումարի չեկի դուրսգրման վերաբերյալ: Դուրսգրվելիք չեկին համապատասխանող գումարը դեբետագրվում է հաճախորդի հաշվից, որից հետո բանկը դուրս է գրում բանկային չեկ վաճառողի երկրում իր թղթակից բանկի վրա: Չեկն ուղարկվում է վաճառողին, որը ներկայացնում է իրեն սպասարկող բանկին, վերջինս էլ թղթակցային բանկերի միջոցով չեկը ներկայացնում է վճարման այն բանկին, որի վրա այն դուրս է գրված:

Վաճառողի համար չեկով վճարումը պարունակում է չվճարման ռիսկ, քանի որ չեկի դուրսգրումը դեռ վճարում չէ, և վաճառողը կարող է համոզվել չեկի վճարունակության մեջ միայն վճարող բանկից չեկի դիմաց վճարումը ստանալուց հետո: Այդ պատճառով միջազգային առևտրային գործարքներում ոչ բանկային չեկերը կիրառվում են միայն այն դեպքում, երբ կողմերը վստահում են միմյանց, հակառակ դեպ-

քում կարող են կիրառվել առաջնակարգ բանկերի կողմից երաշխավորված ոչ բանկային չեկեր կամ առաջնակարգ բանկերի վրա դուրս գրված բանկային չեկեր:

Մուրհակ: Մուրհակը առանց որևէ պայմանի դրամական պարտավորություն պարունակող փաստաթուղթ է (սահմանված ձևով կազմված պարտքի պարտավորության տարատեսակ է, որը տալիս է անվիճելի իրավունք պահանջելու մուրհակուն նշված գումարի վճարումը մուրհակի մարման ժամկետի լրանալուն պես): Տնտեսական գործարքներում մուրհակը օգտագործվում է մի քանի հարյուրամյակ: Գոյություն ունեն ոչ միայն ազգային օրենսդրություններ, այլև մուրհակին վերաբերող միջազգային համաձայնություններ, որոնցով կանոնակարգվել է մուրհակի միջազգային շրջանառությունը, ինչն արտացոլվել է 1930 թ. մի շարք եվրոպական երկրների կողմից ստորագրված Ժնևյան կոնվենցիայով հաստատված «Մուրհակների համընդհանուր օրենքով»: Կոնվենցիան ստորագրած երկրները պարտավորվել էին իրենց ազգային մուրհակի օրենքներում հետևել այդ օրենքի դրույթներին:


Մուրհակը առևտրային վարկի ամենահարմար և տարածված ձևերից է, որը տրվում է տնտեսավարող անձանց կողմից առանց բանկի միջամտության: Այս պարագայում մուրհակը ոչ միայն վարկավորման, այլև վճարման գործիք է, ինչը նվազեցնում է կանխիկ փողի պահանջարկը: Քանի որ մուրհակը շրջանառու գործիք է, այսինքն՝ կարող է փոխանցվել մեկ անձից մյուսին, այն կարող է որպես վճարման գործիք օգտագործվել մի քանի գործարքներում, մարել մի քանի պարտավորություններ: Որպես արժեթուղթ՝ մուրհակը կարող է հանդես գալ արժեթղթային տարբեր գործարքներում (առք ու վաճառքի, գրավի և այլն): Որոշ երկրներում մուրհակները լայնորեն կիրառվում են սպառողական վարկերի տրամադրման ժամանակ: Օրինակ՝ Ֆրանսիայում բանկային հանկարգով տարեկան վճարվում է 160 մլն, Իտալիայում՝ 72 մլն մուրհակ:

Ըստ վճարման ժամկետների՝ մուրհակները լինում են.

- Ըստ ներկայացման, երբ վճարը պետք է իրականացվի մուրհակի ներկայացնելուն պես, ինչը սահմանվում է «Վճարել ըստ ներկայացման» արտահայտությամբ: Կարող են սահմանվել ներկայացման նվազագույն և առավելագույն ժամկետները, վերջիններիս բացակայության դեպքում մուրհակը վճարման կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ դուրսգրման օրվանից սկսած:
- Ներկայացման օրվանից որոշ ժամանակ հետո. վճարը պետք է իրականացվի մուրհակի ներկայացնելուց նշված ժամկետից հետո, ինչը սահմանվում է «Վճարել ներկայացումից (այսքան) ժամանակ հետո» արտահայտությամբ:
- Դուրսգրման օրվանից որոշ ժամանակ հետո. վճարը պետք է իրականացվի մուրհակի դուրս գրումից որոշ ժամանակ հետո, ինչը սահմանվում է «Վճարել մուրհակի դուրսգրումից (այսքան) օր հետո» արտահայտությամբ:
- Որոշակի օրը. այս դեպքում մուրհակի վրա նշվում է վճարման կոնկրետ օրը:

Մուրհակները լինում են երկու տեսակ՝ հասարակ և փոխանցելի: Հասարակ մուրհակը պարտապանի (գնորդի) ստորագրությամբ գրավոր պարտավորությունն է պարտատիրոջը՝ նշված ժամկետում վճարել վաճառողին որոշակի գումար: Հասարակ մուրհակը կարող է փոխանցվել երրորդ անձին փոխանցագրի միջոցով: Հասարակ մուրհակով վճարումը իրականացվում է ըստ 22.13. զծապատկերի: Վաճառողը առաքում է ապրանքը, իսկ գնորդը դուրս է գրում հասարակ մուրհակ և փոխանցում է այն վաճառողին, մարման ժամկետը լրանալիս վաճառողը իր բանկի միջոցով այն


ներկայացնում է գնորդին վճարման:



Գծապատկեր 22.13. Հասարակ մուրհակով վճարման փաստաթղթաշրջանառություն

Փոխանցելի մուրհակը պարտատիրոջ գրավոր, անվերապահ հրամանն է պարտապանին՝ սահմանված ժամկետում վճարել մուրհակում սահմանված գումարն այն անձին, որի անունով դուրս է գրված մուրհակը: Առանց պարտապանի ստորագրության մուրհակը հանդիսանում է պարտատիրոջ հանձնարարականը պարտապանին և կոչվում է տրատտա: Միայն ստորագրելով մուրհակը՝ տրատտը իր վրա է վերցնում պարտավորություն՝ ժամանակին վճարելու մուրհակը: Փոխանցելի մուրհակում ի սկզբանե մասնակցում են երեք կողմեր՝ մուրհակ դուրս գրողը, վճարողը և այն անձը, ում օգտին դուրս է գրված մուրհակը, վերջինս կարող է մուրհակը մեկ այլ անձի փոխանցել փոխանցագրով:

Փոխանցելի մուրհակով վճարումը կատարվում է ըստ գծապատկեր 22.14 –ի.



Գծապատկեր 22.14. Փոխանցելի մուրհակով վճարման փաստաթղթաշրջանառությունը

Ենթադրենք՝ վաճառողն ունի որոշ պարտավորություններ «Ա» ֆիրմայի նկատ-

մամբ և, միաժամանակ, պետք է առաքի ապրանքը գնորդին: Վաճառողն առաքում է ապրանքը և «Ա» ֆիրմայի անունով միաժամանակ ուղարկում է գնորդի վրա դուրս գրված տրատտա: Գնորդն ակցեպտավորում է մուրհակը և փոխանցում այն վաճառողին, վաճառողն փոխանցում է մուրհակը «Ա» ֆիրմային:

«Ա» ֆիրմայի կողմից մուրհակը կարող է օգտագործվել տարբեր կերպ.

1. «Ա» ֆիրման կարող է պահել մուրհակը իր մոտ մինչև մարման ժամկետը և այնուհետև ներկայացնել այն գնորդին՝ վճարման: Այս դեպքում մուրհակը մարվում է, և բացառվում են դրա հետ կապված հետագա գործողությունները:
2. «Ա» ֆիրման իր հերթին որոշում է մինչև մուրհակի մարման ժամկետը մարել իր այլ պարտավորությունները: Այդ դեպքում «Ա» ֆիրման մուրհակը փոխանցագրով փոխանցում է իր պարտատիրոջը, որը մուրհակը վճարման կներկայացնի գնորդին:
3. «Ա» ֆիրմային մինչև մուրհակի մարման ժամկետը լրանալը անհրաժեշտ են միջոցներ: Այդ դեպքում նա կարող է վաճառել այն բանկին հաշվառման տոկոսադրույքով (հաշվառել բանկում): Բանկը կարող է պահել իր մոտ մուրհակը և ներկայացնել այն վճարման գնորդին կամ հաշվառել կենտրոնական կամ մի այլ բանկում:

Մուրհակները լայնորեն կիրառվում են առևտրային գործարքներում ինչպես ինքնուրույն վճարման գործիք, այնպես էլ այնպիսի վճարման ձևերում, ինչպիսիք են ինկասոն և ակրեդիտիվը: Դա պայմանավորված է նրանով, որ մուրհակատիրոջ իրավունքները պաշտպանված են մուրհակների օրենսդրությամբ, և շատ երկրներում գործում են մուրհակային դատարաններ, որոնցում արագացված և հեշտացված է մուրհակների հետ կապված բողոքարկման ընթացակարգը: Առավել ապահով են համարվում հայտնի ֆիրմաների, ինչպես նաև առաջատար բանկերի կողմից ակցեպտավորված մուրհակները:

Գնորդի համար մուրհակների կիրառման առավելությունն այն է, որ գնումը իրականացվում է հետաձգված վճարմամբ, իսկ վաճառողը կարող է մուրհակը հաշվառել բանկում (իսկ այն երկրներում, որտեղ գործում է մուրհակի օրենքը, այդ օրենսդրությամբ և պարզեցված դատավարությամբ պաշտպանված են վաճառողի իրավունքները գնորդի կողմից մուրհակի դիմաց չվճարման դեպքում):

Ինկասո: Ինկասոն վաճառողի (արտահանողի) հանձնարարությունն է իր բանկին անմիջականորեն կամ այլ բանկի միջոցով ստանալ գնորդից (ներմուծողից) որոշակի գումար կամ հաստատում, որ գումարը կվճարվի որոշակի ժամկետի ընթացքում:

Ինկասոն լայն տարածում է գտել միջազգային առևտրում: Այն օգտագործվում է ինչպես կանխիկ եղանակով վճարումներում, այնպես էլ ապառիկ եղանակով (առևտրային վարկի պայմաններով) հաշվարկներում:


Փաստաթղթերը, որոնցով իրականացվում են ինկասոյի գործառնությունները, ստորաբաժանվում են երկու խմբի.

- Ֆինանսական փաստաթղթեր՝ փոխանցելի և հասարակ մուրհակների, չեկեր, վճարային ստացականներ և նման այլ փաստաթղթեր, որոնք օգտագործվում են վճարը ստանալու համար:
- Առևտրային փաստաթղթեր՝ առևտրային հաշիվներ, տրանսպորտային փաստաթղթեր, սերտիֆիկատներ, ապահովագրեր և այլ ոչ ֆինանսական սեփական-

նության իրավունքի փաստաթղթեր:

Յայտնի են ինկասոյի հետևյալ տեսակները՝ զուտ և փաստաթղթային:

Ջուտ ինկասոն ընդգրկում է միայն ֆինանսական փաստաթղթերի ինկասո և իրականացվում ստորև ներկայացվող սխեմայով.




Գծապատկեր 22.15. Ջուտ ինկասոյի փաստաթղթաշրջանառություն

Վաճառողը, շրջանցելով բանկը, ուղարկում է ապրանքը և առևտրային փաստաթղթերը անմիջապես գնորդին, և գնորդը, ստանալով դրանք, դառնում է ապրանքի սեփականատերը մինչև վճարի կամ ակցեպտի իրականացումը: Էմիտենտ բանկը ինկասո իրականացնող բանկին ներկայացնում է միայն չեկը վճարման կամ փոխմուրհակը ակցեպտի/վճարման: Դա չի երաշխավորում մատակարարին գումարի ստացումը, ուստի այս ձևը ցանկալի է կիրառել միայն այն դեպքերում, երբ մատակարարը և գնորդը ճանաչում ու վստահում են միմյանց:

Փաստաթղթային ինկասոն ընդգրկում է ինչպես առևտրային (հաշիվ–ապրանքագրեր, տրանսպորտային փաստաթղթեր, սերտիֆիկատներ և այլն), այնպես էլ առևտրային և ֆինանսական փաստաթղթերի ինկասո:

Փաստաթղթային ինկասոյի միջոցով իրականացվող գործարքները կատարվում են ըստ ստորև ներկայացվող 22.16 գծապատկերի.



Գծապատկեր 22.16. Փաստաթղթային ինկաստի փաստաթղթաշրջանառություն

Փաստաթղթային ինկաստի թերությունն այն է, որ բանկերը գործում են որպես ինկաստ իրականացնող զործակալներ և մատուցում են զուտ «փոստային» ծառայություն պարտավորվելով միայն ստուգել ներկայացված փաստաթղթերի արտաքնապես համապատասխանությունը ինկաստ հանձնարարագրում նշվածներին: Ինկաստ իրականացնող բանկը պարտավորվում է փաստաթղթերը գնորդին հանձնել և չի կրում ոչ մի պատասխանատվություն գնորդի կողմից վճարը իրականացնելու համար: Ռիսկերը, որոնք պարունակում է վճարման այս ձևը, ավելի քիչ են, քան «բաց հաշվով» վճարումներում (վաճառողի համար) և կանխիկ վճարումներում (գնորդի համար):

Վաճառողի համար առավելությունն այն է, որ.

- մինչև վճարը. ակցեպտը նա ապրանքի սեփականատերն է,
- վճարման այս ձևը ավելի էժան է, քան ակրեդիտիվը,
- բանկերն իրենց բաժանմունքներով և թղթակցային ցանցով նվազեցնում են միջազգային հաշվարկների հետ կապված խնդիրները,
- ակցեպտավորված մուրհակները կարելի է հաշվառել բանկում կամ գրավ դնել: Վաճառողի համար թերությունն այն է, որ.

- գնորդը կարող է ուշացնել վճարը,
- գնորդը կարող է անվճարունակ գտնվել կամ հրաժարվել վճարելուց/ակցեպտից, և վաճառողի կողմից կպահանջվեն հավելյալ ծախսեր ապրանքը վերադարձնելու կամ այլ գնորդ գտնելու համար:

Գնորդի համար առավելությունն այն է, որ.

- նա ազատվում է ակրեդիտիվի բացման հետ կապված ռիսկերից և ծախսերից,
- վճարումը հետաձգված է, և նա կարող է վճարել, երբ բեռը տեղ կհասնի, կամ երբ կգա մուրհակի վճարման ժամկետը:

Փաստաթղթային ակրեդիտիվը միակողմանի պարտավորություն է, որն իր վրա է վերցնում բանկը հաճախորդ–հրամանագրողի (գնորդի) հանձնարարությամբ՝ հօգուտ բենիֆիցիարի (վաճառողի), և վճարումը իրականացվում է միայն բենիֆիցի-

արի կողմից իր բանկի միջոցով ակրեդիտիվով նախատեսված առևտրային և ֆինանսական փաստաթղթերի ներկայացման դեպքում: Ակրեդիտիվը միջազգային առևտրում լայն տարածում է գտել: Այն օգտագործվում է ինչպես կանխիկ եղանակով վճարումներում, այնպես էլ ապառիկ եղանակով հաշվարկներում: Փաստաթղթային ակրեդիտիվի միջոցով իրականացվող գործարքները կատարվում են հետևյալ հաջորդականությամբ (տե՛ս գծապատկեր 22.17)。

1. Կողմերը՝ վաճառողը (արտահանողը) և գնորդը (ներմուծողը), պայմանագիր են կնքում (1), որտեղ նշվում է, որ ապրանքի դիմաց վճարումները պետք է կատարվեն փաստաթղթային ակրեդիտիվի միջոցով: Ակրեդիտիվը բացվում է ներմուծողի հանձնարարությամբ՝ դիմումի հիման վրա, որտեղ փաստորեն կրկնվում են պայմանագրի բոլոր այն պայմանները, որոնք վերաբերում են վճարումների կարգին:

Պայմանագրում հիմնականում նշվում են.

- բանկի անվանումը, որում բացվում է ակրեդիտիվը,
- ակրեդիտիվի տեսակը,
- ծանուցող և կատարող բանկի անվանումը,
- բանկային գանձումների կարգը,
- վճարման պայմանները,
- փաստաթղթերի ցուցակը, որոնց դիմաց կատարվում է վճարումը,
- ակրեդիտիվի գործողության, առաքման ժամկետները և այլն:

2. Պայմանագիրը կնքելուց հետո վաճառողը ապրանքը նախապատրաստում է առաքման, որի մասին տեղյակ է պահում գնորդին (2):

3. Ծանուցումը ստանալուց հետո գնորդն իր բանկին դիմում—հանձնարարական է ուղարկում ակրեդիտիվի բացման համար, որտեղ նշվում են բոլոր անհրաժեշտ պայմանները (3): Գնորդը, որը հանձնարարական է տալիս ակրեդիտիվի բացման համար, կոչվում է հրամանագրող: Ակրեդիտիվ բացող բանկը, որը կոչվում է նաև էմիտենտ բանկ, գործում է հրամանագրողի հրահանգների հիման վրա:


4. Ակրեդիտիվը բացելուց հետո, ուր էմիտենտ բանկը նշում է, թե ինչ կարգով պետք է կատարվի միջոցների հաշվեգրումը, այդ փաստաթուղթը ուղարկում է վաճառողին, որը կոչվում է բենիֆիցիար, ուն օգտին այն բացվել է (4):

Էմիտենտ բանկը ակրեդիտիվը ուղարկում է բենիֆիցիարին, որպես կանոն, վերջինիս սպասարկող բանկի միջոցով, որի խնդիրն է ակրեդիտիվը ծանուցել բենիֆիցիարին: Այսպիսի բանկը կոչվում է ծանուցող բանկ:

5. Ակրեդիտիվը ստանալուց հետո ծանուցող բանկը ստուգում է ակրեդիտիվի ճշտությունը և հանձնում բենիֆիցիարին (5): Շատ դեպքերում ծանուցող բանկը էմիտենտ բանկի կողմից նշանակվում է որպես ակրեդիտիվը կատարող բանկ, այսինքն՝ լիազորվում է կատարել վճարում կամ ակցեպտավորում:

6. Ստանալով ակրեդիտիվը՝ բենիֆիցիարը այն համեմատում է պայմանագրի պայմանների հետ: Եթե բենիֆիցիարը համաձայն է իր օգտին բացված ակրեդիտիվի պայմանների հետ, ապա նա սահմանված ժամկետում իրականացնում է ապրանքի առաքումը (6), և բեռնափոխադրողից ստանալով տրանսպորտային փաստաթղթերը (7), ակրեդիտիվով պահանջվող այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է իր բանկին: Տարածայնությունների հայտնաբերման դեպքում բենիֆիցիարը կարող է տեղեկացնել իր բանկին:

- 7. Վաճառողի բանկը ստուգում է բոլոր փաստաթղթերը, ապա դրանք ուղարկում է էմիտենտ բանկին՝ վճարման, ակցեպտավորման կամ նեոգացիայի՝ կից նա՝ մականում ցույց տալով, թե ինչ կարգով պետք է կատարվի հասույթի հաշվեգրումը (8):
- 8. Ստանալով փաստաթղթերը՝ էմիտենտ բանկը ստուգում է դրանք, որից հետո վճարման ենթակա գումարը փոխանցում է վաճառողի բանկին (9), դեբետագրում գնորդի հաշիվը և փաստաթղթերը ուղարկում գնորդին, որը տնօրինում է ապրանքը (10): Բենիֆիցիարի բանկը հասույթը հաշվեգրում է բենիֆիցիարի հաշվին (11):



Գծապատկեր 22.17. Փաստաթղթային ակրեդիտիվի փաստաթղթաշրջանառությունը

Հաշվարկների ակրեդիտիվային ձևի հիմնական թերությունը ակրեդիտիվային հաշվարկներում ներգրավված կողմերի համար համարվում է նախ՝ բանկերի միջև փաստաթղթերի շարժի ձգձգումը, երկրորդ՝ ակրեդիտիվի բարձր արժեքը: Գործառնությունների իրականացման համար բանկերը գանձում են կոմիսիոն վճարներ՝ կախված ակրեդիտիվի գումարի չափից: Այդպիսի բանկային ծախսերը բանկերի կողմից գանձվում են համաձայն բանկերում գործող ակրեդիտիվի գումարի չափի: Դրանք բանկերի կողմից գանձվում են համաձայն բանկերում գործող ակրեդիտիվին վերաբերող սակագների: Ակրեդիտիվ բացելու դեպքում հրամանագրողը պարզ և հստակ նշում է, թե ում հաշվին պետք է կատարվեն ակրեդիտիվի հետ կապված ծախսերը՝ գնորդի⁶, թե՞ վաճառողի:

Երաշխիքներ: Միջազգային առևտրային գործարքներում ինչպես ներմուծողին, այնպես էլ արտահանողին դժվար է գնահատել հակառակ կողմի իրական գործառնական և ֆինանսական հնարավորությունները: Ելնելով դրանից՝ ինչպես արտահանողները, այնպես էլ ներմուծողները ձգտում են իրենց շահերի լրացուցիչ ապահովմանը, ընդ որում այնպիսի ապահովմանը, որն ընդհանրապես կվերացնի վնասների կրումը և հնարավորություն կտա արագորեն բավարարել պարտատերերի պահանջները այն գործընկերների նկատմամբ, որոնք չեն կատարել իրենց պարտավորությունները:

Երաշխիքը բանկի, ֆինանսական կազմակերպության կամ պետության պարտավորությունն է որևէ գործողության կամ գործառնության համար՝ վճարել այն դեպքում, երբ երրորդ կողմը հրաժարվում է որոշակի պարտավորությունների կատարումից:


Նման ապահովումը տրվում է բանկերի կողմից միակողմանի գրավոր պարտավորության տեսքով, որը կոչվում է բանկային երաշխիք: Այն կարելի է անվանել նաև երաշխիքային նամակ, քանի որ հաճախ հանդես է գալիս նամակի տեսքով, որը հասցեագրված է այն կողմին, որի օգտին տրվել է (բենիֆիցիարին):

Այսպիսով՝ երաշխիքը կարելի է բնութագրել որպես երաշխավորող բանկի պարտավորություն, որը նա ստանձնում է որևէ անձի հանդեպ այլ անձի հանձնարարությամբ, վերջինիս բենիֆիցիարի հանդեպ ունեցած պարտավորության լրացուցիչ ապահովման համար: Երաշխիքի տրամադրմամբ բանկը պարտավորվում է վճարել ըստ բենիֆիցիարի առաջին պահանջի, եթե կատարվել են երաշխիքի տեսքով նշված պայմանները: Երաշխիքի իրացումը կատարվում է այն պահին, երբ երաշխավոր բանկը կատարում է բենիֆիցիարի հանդեպ իր պարտավորությունները (նրան որոշակի գումարի վճարման ճանապարհով): Երաշխիքը ինքնուրույն պարտավորություն է՝ անկախ հիմնական պարտքի հետ կապված հարաբերություններից կամ պարտքատիրոջ և հիմնական պարտապանի միջև կնքված պայմանագրից: Երաշխիքը ենթարկվում է այն երկրի օրենսդրությանը, որի բանկի կողմից այն դուրս է գրվել:

Երաշխիքային գործարքների մասնակից կողմերն են.

- պրինցիպիալը՝ այն անձը, որի հանձնարարությամբ տրվում է երաշխիքը, և որի պարտավորություններն ապահովվում են տվյալ երաշխիքով.
- երաշխավորողը՝ այն բանկը, որն իր վրա է վերցնում պարտավորություն տվյալ երաշխիքով.
- բենիֆիցիարը՝ այն անձը, որի օգտին տրված է երաշխիքը:

Միջազգային պրակտիկայում կիրառվում են ուղղակի երաշխիքներ և փոխերաշխիքներ: Ուղղակի երաշխիքների դեպքում երաշխավոր բանկն իր վրա պարտավորություն է վերցնում անմիջապես բենիֆիցիարի հանդեպ:



Գծապատկեր 22.18. Երաշխիքային գործարքների փաստաթղթաշրջանառություն

Փոխերաշխիքում որպես երաշխավորող հանդես է գալիս բենիֆիցիարի բանկը կամ վերջինիս երկրում գտնվող այլ բանկ՝ պրինցիպալի բանկի հանձնարարությամբ: Պրինցիպալի բանկը փոխերաշխիքը ներկայացնում է թղթակից բանկին և խնդրում նրա երաշխավորությունը հօգուտ բենիֆիցիարի՝ իր լրիվ պատասխանավությամբ:

Գծապատկեր 22.19. Հանձնարարականով երաշխիքի փաստաթղթաշրջանառությունը

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է դրամի պատմական դերը և գոյության պայմանը:
2. Դրամին ի՞նչ ֆունկցիաներ են հատուկ շուկայական տնտեսության պայմաններում, բնութագրել դրանք:
3. Ի՞նչ է նշանակում դրամաշրջանառություն և դրամական համակարգ: Ցույց տալ մասնակիցներին ու անհրաժեշտ գործիքները:
4. Ո՞րն է դրամաշրջանառության օրենքը, ի՞նչ է նշանակում դրամական զանգված և ի՞նչ բաղադրիչներից է կազմված:
5. Ի՞նչ դեր ունի ՀՀ ԿԲ–ն հանրապետության դրամաշրջանառության կարգավորման և դրամի կայունության ապահովման գործում:
6. Ի՞նչ է նշանակում անկանխիկ հաշվարկ և վճարահաշվարկային համակարգ:
7. Որո՞նք են անկանխիկ հաշվարկների կազմակերպման սկզբունքներն ու տեսակները:
8. Նկարագրել ՀՀ վճարահաշվարկային համակարգի ձևավորման գործընթացը:
9. Որո՞նք են ՀՀ տարածքում կիրառվող վճարամիջոցները և հաշվարկի ձևերը:
10. Ի՞նչ ձևերով ու մեթոդներով են կազմակերպվում ՀՀ միջազգային հաշվարկավճարային փոխհարաբերությունները:

¹ Ըստ «FORBES» ամսագրի, նոյեմբեր–դեկտեմբեր, 2006, N1:

Գրականություն

1. Ֆինանսներ և վարկ, ուսումնական ձեռնարկ, Լ.Յ.Բաղանյանի խմբագրությամբ, Եր., 2003:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
3. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, Երևան, 1996թ.:
4. «ՀՀ բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, Երևան 1996թ.:
5. «Վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցման մասին» ՀՀ օրենք, Երևան, 1997թ.:
6. ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները, 1999–2005թթ.:
7. ՀՀ կենտրոնական բանկի «Վիճակագրական տեղեկագիր», 1999–2005թթ.:
8. «ՀՀ բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1996թ.:
9. «Հայաստանի Հանրապետության վճարահաշվարկային համակարգը», ՀՀ կենտրոնական բանկ, 1997թ.:
10. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկային լրատու», 2000 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՎԵՐՈՎ*

Հավելված 1.

Փոխարժեք անվանական, դրամ/ԱՄՆ դոլար (ժամանակահատվածի միջին)

Եռամսյակային

I-94	176.41
II-94	297.71
III-94	322.92
IV-94	393.91
I-95	405.07
II-95	408.80
III-95	407.95
IV-95	401.70
I-96	402.67
II-96	407.12
III-96	415.23
IV-96	428.72
I-97	465.48
II-97	495.31
III-97	502.51
IV-97	499.78
I-98	499.42
II-98	502.89
III-98	503.31
IV-98	513.84
I-99	538.68
II-99	539.87
III-99	539.12
IV-99	522.59
I-00	527.46
II-00	536.22
III-00	542.79
IV-00	551.63
I-01	550.52
II-01	552.23
III-01	504.22
IV-01	563.33
I-02	567.15
II-02	579.93
III-02	562.87
IV-02	583.46
I-03	583.59
II-03	586.42
III-03	577.49
IV-03	564.56
I-04	565.23
II-04	551.14
III-04	518.99
IV-04	498.45
I-05	477.03
II-05	448.69
III-05	452.68
IV-05	452.34
I-06	450.95
II-06	443.90

Հավելված 2.

ՀՆԱ-ի, արտահանման, պետական եկամուտների, արտաքին պարտքի

սպասարկման ցուցանիշները ՀՀ–ում 2005 թվին

միլիոն դոլար

ՀՆԱ	5 776
Արտահանում	1 337
Պետբյուջեի եկամուտներ	888
Արտաքին պարտքի սպասարկում	61.8
Մարում	5.0
Տոկոսավճար	11.8

հավելված 3

2005 – 2007 թթ. հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2005թ. փաստացի		2006թ. ծրագիր		2007թ. ծրագիր	
	մլրդ դրամ	ՀՆԱ %	մլրդ դրամ	ՀՆԱ %	մլրդ դրամ	ՀՆԱ %
Ընդամենը եկամուտներ	374.7	16.7	412.4	17.2	490.2	16.8
Ընդամենը ծախսեր	417.5	18.6	482.2	20.1	557.8	19.1
Պակասուրդ	42.8	1.9	69.8	2.9	68.5	2.3
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2 244.0	–	2400.7	–	2922.4	–

2005 – 2007 թթ պետական բյուջեների եկամուտները և կառուցվածքը

	2005թ. փաստացի		2006թ. ծրագիր		2007թ. ծրագիր	
	դրամ	%	դրամ	%	դրամ	%
Հարկային եկամուտներ և պետական տուրք	313.2	87.3	365.6	83.8	458.9	93.8
Ոչ հարկային եկամուտներ	21.5	6.0	20.9	4.8	12.2	2.5
Կապիտալ գործառնություններից ստացվող եկամուտներ	12.6	3.5	13.0	3.0	4.1	0.8
Պաշտոնական տրանսֆերտներ	11.5	3.2	36.6	8.4	15.1	3.1

2005 – 2007 թթ. պետական բյուջեների ծախսերը և կառուցվածքը

Ցուցանիշներ	2005թ. փաստացի		2006թ. ծրագիր		2007թ. ծրագիր	
	մլրդ դրամ	ՀՆԱ %	մլրդ դրամ	ՀՆԱ %	մլրդ դրամ	ՀՆԱ %
Ընթացիկ ծախսեր	329.1	14.7	332.2	13.8	401.9	13.8
Կապիտալ ծախսեր	75.3	3.4	133.0	5.5	135.8	4.6
Վարկավորում հանած մարում	13.1	0.6	17.0	0.7	21.4	0.7

հավելված 4

	2000	2001	2002	2003	2004	2005	2006 (բյուջետային տեսություն)
Անվանական ՀՆԱ							
– մլրդ դրամ	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2244.0	2578.0
– մլն դոլար	1911.6	2118.5	2376.3	2807.1	3576.6	4902.8	6138.0
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (դոլար)	593	659.3	739.9	874.1	1112.8	1523.7	1776
Գնաճ (միջին տարեկան), %	-0.8	3.1	1.1	4.7	7.0	0.6	2.1
Փոխարժեք ԱՄՆ դոլար (միջին տարեկան) դրամ	539.5	555.1	573.4	578.8	533.5	457.7	420.0
Արտաքին առևտրաշրջանառություն (մլն դոլար)	1185.2	1219.3	1492.3	1965.1	2073.6	2775.7	X
Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդ (մլն դոլար)	-278.4	-200.5	-148.0	-190.6	-161.6	-193.3	X
Արտաքին պետական պարտք (մլն դոլար)	858.7	905.4	1025.5	1097.7	1182.9	1099.2	1257.1
Արտաքին պետական պարտք ՀՆԱ%	44.9	42.7	43.2	39.1	33	22.4	20.5
Միջին ամսեկան անվանական աշխատավարձ, դրամով	21658.1	24322.0	27214.0	34046.0	43445.0	52060.0	X
Միջին ամսեկան անվանական աշխատավարձ, դոլարով	40.1	43.8	47.5	58.8	81.4	113.7	X
Աշխատավարձի իրական աճ, %	X	8.9	10.7	19.6	19.2	19.2	X
Բնակչության դրամական եկամուտներ, մլն. դրամով	698373.7	753468.3	853448.4	1163637.2	1343185.0	1454879.6	X
Բնակչության դրամական ծախսերը, մլն դրամով	686983.0	747851.3	828052.4	1158887.7	1334489.5	1405138.6	X

Ժամկետը	1 USD/ դրամ	1 EUR/ դրամ	1 RUR / դրամ
Հունվար 2004	568.94	722.1	19.7
Փետրվար 2004	563.84	721.83	19.77
Մարտ 2004	562.19	687.84	19.72
Ապրիլ 2004	558.54	666	19.51
Մայիս 2004	557.45	659.07	19.17
Հունիս 2004	546.83	656.25	18.84
Հուլիս 2004	527.99	653.7	18.14
Օգոստոս 2004	519.24	636.38	17.74
Սեպտեմբեր 2004	514.46	629.54	17.61
Հոկտեմբեր 2004	506.62	627.04	17.4
Նոյեմբեր 2004	503.16	650.13	17.55
Դեկտեմբեր 2004	483.44	643.8	17.27
Հունվար 2005	501.8	663.98	18.01
Փետրվար 2005	473.26	613.68	16.88
Մարտ 2005	469.06	627.23	17.07
Ապրիլ 2005	450.02	576.93	16.17
Մայիս 2005	454.69	580.68	16.32
Հունիս 2005	455.81	551.99	15.96
Հուլիս 2005	435.75	525.82	15.2
Օգոստոս 2005	457.44	569.83	16.16
Սեպտեմբեր 2005	453.26	558.14	16.01
Հոկտեմբեր 2005	446.27	534.63	15.6
Նոյեմբեր 2005	461.68	540.77	16.02
Դեկտեմբեր 2005	446.39	536.56	15.57
Հունվար 2006	453.72	549.59	15.98
Փետրվար 2006	451.21	536.85	16.01
Մարտ 2006	452.8	541.01	16.18
Ապրիլ 2006	451.25	545.74	16.29
Մայիս 2006	443.43	572.65	16.49
Հունիս 2006	418.08	525.17	15.43
Հուլիս 2006	417.4	529.76	15.51
Օգոստոս 2006	397.45	505.48	14.82
Սեպտեմբեր 2006	386.09	491.22	14.41
Հոկտեմբեր 2006	382.75	479.62	14.2

ԱՊՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՎՁՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԸ

Պետությունները	2005թ. ՀՆԱ (մլրդ ԱՄՆ դոլար)	2006թ. սպասվող ՀՆԱ (մլրդ ԱՄՆ դոլար)	2005թ. ռազմական ծախսեր (մլն ԱՄՆ դոլար)	2005թ. ՀՆԱ–ում ռազմական ծախսերի մասնաբա- ժինը	2006թ. ռազմական ծախսեր (մլն ԱՄՆ դոլար)	2005թ. ՀՆԱ–ում ռազմական ծախսերի մասնաբա- ժինը
Ադրբեջան	12.55	15.907	313	2.49	600	+3.77
Հայաստան	4.927	4.902	127	2.95	150	+3.05
Բելառուս	27.8	34.242	268.5	0.96	462	+1.34
Վրաստան	6.485	6.973	77.6	1.2	243.95	+3.5
Ղազախստան	55.124	59.7	448	0.8	604.4	+1.01
Ղրղզստան	2.11	2.654	30.06	1.42	34.57	-1.3
Մոլդովա	3.286	3.5	9.5	0.4	10.3	-0.3
Ռուսաստան	668.6	855.438	19100	2.85	23414	+2.74
Տաջիկստան	1.924	2.531	42	2.18	43.02	-1.7
Թուրքմենստան	14.653	15.635	80	0.54	82.86	-0.53
Ուզբեկստան	14.02	15.561	736	5.2	809.2	5.2
Ուկրաինա	80.75	98.9	1127	1.4	1745	+1.76

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Լ. Յ. Բաղդասարյան, Կ. Յ. Աբգարյան, Ա. Բ. Սալմազյան,
Յու. Դ. Ալավերդյան, Ա. Վ. Մաթևոսյան, Կ. Ա. Միքայելյան,
Ս. Ս. Սուքիասյան, Դ. Ա. Սահակյան, Խ. Ա. Մխիթարյան,
Պ. Դ. Եսայան

+

ՖԻՆԱՆՍՆԵՐ,
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՎԱՐԿ

Դասագիրք
տնտեսագիտական մանագիտությունների
ուսանողների համար

,

ԵՎ ՎԱՐԿ

Հրատարակչության տնօրեն՝
Խմբագիր՝
Գեղարվեստական խմբագիր՝
Վերստուգող սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորումը՝

Է. Ս. Մկրտչյան
Մ. Վ. Մնացականյան
Ա. Ա. Բաղդասարյան
Ն. Ն. Փարսադանյան
Լ. Շ. Հովսեփյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափեր՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 41.5 տպ. մամուլ: Գինը՝ պայմանագրային:

■

«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28,
ֆաքս՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am
Գրախանութ՝ Երևան, Խանջյան փող. 29, հեռ.՝ 54 06 07, էլ. կայք՝ www.book.am

